Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

373[ЕЛАГИЧАЙ]
Р-45

20984

2010

[illegible]

[illegible] 1870:

370
1925-25

586
10730

2002

ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈԴՈՐԵԱՆ

373 [Մանուշ-Ա]
Թ-45

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
ИМЕНИ А. МЯСНИКЯНА
ԱՆՈՒՆԻ ՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՄՈՒՐԱՏԵԱՆ

ԵՒ

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԱՑ

ԵՒ

ՄԽԻԹԱՐԵԱՆ ԱԲԲԱՑԻՑ

ԳՐԵԱԼ ԴԻՄԱԹՆԱԲԱՐ

ԻՍ. ՎԱՐԴԱՊԵՏԷ ԹԷՈԴՈՐԵԱՆ

ՏՊԱԳՐԵԱԼ

ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԱՄԲ

Պ. Ի. ՆԱՏԻՐԵԱՆԻ

1003
14881

Ի ՓԱՐԻԶ
1866=ՌՃԺԵ

ՀԱՍՈՐ Ա

8388

ՆՈՒԷՐ

ԱՌ ՊԱՐԱՆ ՊՕՂԱՍ ՌԱՄԱՆԱՍ ՆԱՏԻՐԵԱՆ
ՊԱՏԻՒԱՒՈՐ ԱՑՐ ՈՐ Ի ՌԱԻՍԱՑ ՏԷՐՈՒԹԵԱՆ,
ՈՐՄ ԱՐԺԱՆ ԻՑԷ ՁԱՑՍ ԳՈՐԾՆ ԻՄ ՆՈՒԻՐԵԼ,
ՈՉ ԱՊԱՔԷՆ ԱՋԳԱՍԻՐԻԴ Է ՎԱՑԵԼ,
ՈՐ ԿԱՐԵԿԻՑ ԵՂԵՐ ԻՆՑ Ի ՆԵՂՈՒԹԵԱՆՆ,
ԵՒ ՕԺԱՆԴԱԿ Ի ԾԱԽՍ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆՆ,
ԸՆԿԱՂ ԸՆԿԱՂ ՁԱՑՍ Ի ՀԱՃՈՒԹԻՒՆ ԿԱՄԱՑ,
ԵՒ ՑԱՆՄՈՌԱՑ ՑԻՇԱՏԱԿ ՓՈՑՈՑ ՇՆՈՐՀԱՑ.

ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈԴՈՐԵԱՆ.

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Յարգի պատմութիւնն ազգիս Հայոց՝ յիրաւի ունի տեղի և պատմութիւնն հիմնադրութեան և մատակարարութեան Մուրատեան փարժարանին և անցեալ նորին, ոչ իբրեւ գործառնութիւն ինչ հատարակ դպրոցի մեջ, որ բազում անգամ չունի ինչ նշանակութիւն, և ոչ այնպիսի ազգային դպրոցի հիմնադրութիւն որ ի մի կամ ի միւս կողմն աշխարհի կարէ լինել և յառաջանալ խաղաղութեամբ և խնդութեամբ արտի. այլ իբրեւ գործնական փորձ և հզօր ապացոյց ինչ, թէ յայսմիսի դարուս ազգային բարոյական և մտաւորական լուսաւորութեանն պատճառք և խափանարարք զինչ և որպիսի անձինք եղեն, և թէ զինչ խրատ զգուշութեան պարտ է առաջ ունել։

Գրութիւնն ժամանակակից պատմութեան գժուարինինչ յամենեցունց առհատարակ վկայեալ է. քանզի գրեթէ անկարելի է համաձայնել միշտ զարդարութիւնն ընդ մարդկային ակնածութեանն. սակայն պատմագիր ոք որ նուիրեալ է զկեանս իւր արդարութեան և ճշմարտութեան, և որ այլ փոխարէն ի մարդկանէ չէ տեսեալ մինչեւ ցութսուն և երեք ամեայ հասակի իւրում, բայց եթէ ապերախտութիւն և անիրաւութիւն, յիրաւի արժանի է առաւել իսկ վստահութիւն, թէ սուտչատ և ճշմարտախօս պարտ է լինել։

Զայս այսպէս հաստատիմ արարեալ հատարակաց, և յուսացեալ ի հաւանութիւն նոցին մտաց, բուռն հարկանեմ գրել զպատմութիւնս։

Որ միանգամ մշանջեան ինչ յիշատակ բարեաց թողուցու ազգի կամ աշխարհի, նորա գործոցն և ջանից պատմութիւն ոչ եւս անձին ուրուք առանձին յիշատակարան է, սակաւուց արդեօք օգտակար ի գիտութիւն, այլ մանաւանդ ազգային և համաշխարհական իսկ պատմութեան մասն կարեւոր, և հմտութիւն նորին անհրաժեշտ իմն հարկաւ պիտանի, և այնոցիկ որ ի բարին վայելիցեն, և այնոցիկ որ բարւոյն արդիւնարարք սահմանեալ իցեն ի բնէ և ի կամաց բարերարին։

Զայն պարտ յանձին կալեալ և իմ, որ քան զամենայն որ բարերաստիկ զոյց անձնանուէր վաստակովքս զամենայն ջան ի գործ առնելով յանթերի կատարումն կամաց հանգուցելոյն Սահռէլի Մուրատայ, յօգուտ ազգին իմոյ սիրեցելոյ, մտադիր սիրով և զգուշաւոր խնամով և անակնառու ճշգրտութեամբ ի գրի հարկանել կամեցայ զպատմութիւն Մուրատեան վարժարանին, զոր և յաջողեաց ինձ տէր ածել հաստատանել մինչեւ յօրս յայս, յերիս հատորս զամենայն բովանդակելով, հանդերձ նամակաւոր և բազմապատիկ և վաւերական հաւաստեօք իրացն ճշմարտութեան, բայց այնպիսիսաւ զգուշաւոր ոճով, զի և ճշմարտութիւն մի՛ աքօղեալ մնասցէ մինչեւ խոպառ ի խաւար մթութեան, և միանգամայն մինչդեռ վաստակք բարերարին և անձանց բերեխրաց արժանաւոր գրուատեաք ի սմա հաշակեսցին, մի՛ հարկ լիցի հրատարակել առաջի ժամանակակից մարդկան և ապագայից զամենայն անարժան գնացս խոխանչաց և հակառակորդաց ազգային բարւոյն, որ ի սկզբանէ և այսր ընդդէմ կգրեցան հատատութեան և բարգաւաճելոյ Մուրատեան վարժարանին։

Ի կրկին մասունս զգիրս զայս տրոհեցի։ Յառաջնում նախակարգեալ զպատմութիւն կենաց առաջնորդի գրոյս իբրեւ

վատակաւորի ի հատատութիւն Մուրատեան վարժարանին, և պաշտպանի նմին. ի նոյն յարեցի զպատմութիւն կենաց Եդուարդ Ռաֆայէլի, իբրեւ սկզբնահօր և նախաշաւղի Ռաֆայէլեան և Մուրատեան վարժարանաց. ապա զպատմութիւն կենաց Սամուէլ Մուրատի, իբրեւ հետեւողի նախընթաց բարերարին և գերազանցողի նմին։ Եւ ի նոյն յարեցի զպատճառս մեծափարիք տենչմանն որով տենչացաւ առնել ազգի իւրում զյաւերժական զոյս օգուտ բարեաց, և թէ զիարդ կոտակաւն զնոյն սահմանեաց, և թէ որպիսի՛ և ո՛րքան անց.ք անցին ի Հնդիկս մինչեւ ցաւանդումն հրիտակին ի ձեռս Մխիթարեան միաբանութեան Վենետկոյ։

Իսկ յերկրորդումն կարգեցի ընդարձակ զվէպս կառուցման և մատակարարութեան Մուրատեան վարժարանին ի Պատաւիոն և ի Փարիզ, և զանցից նորին մինչեւ ցամն 1855։ —

Թէպէտ և այս առաջին մասն պատմութեանս ամբ ինչ յառաջ ոպեալ հրատարակեցաւ, բայց պակասելով յայն կամաց և ակամայ ինչ ինչ ի կարեւորաց, և լսելով զզանգատն ընթերցողաց զնորապիսս տառիցն իբրեւ զդժուարընթեռնելեաց, հարկ համարեցայ վերստին տպել զայս հին սովորական տառիւք, հանդերձ յաւելուածով յառաւել իմն տեղեկութիւն։

Թէպէտ և ոմանք ի մերազնեայց ցանկային առնել իմ զպատմութիւնս յաշխարհիկ լեզու, այլ չներէին ինձ կրկին պատճառք, մի՝ զի նամականուոյն որ ի սմին իբր նիւթ պատմութեան և հաւատիք ճշմարտութեան, գոլով ի գրոց մեր բարբառ, և միւս, չունելով հասարակաց ազգիս մի աշխարհիկ լեզու, այլ բազում և զանազան ի միմեանց, փոսն այնորիկ ի գրոց մեր բարբառ արարի զպատմութիւնս, բայց չանացայ որչափ մարթ էր ի պարզ գրաբառ, որում ծանօթ է ազգն մեր հասարակ և ընդ ամենայն տեղիս։

Ակնուանիմ զի ոչ սակաւ խրատս խոհականութեան և ճըշ-

մարիս ազգասիրութեան քաղեցեն յերկասիրութենէ սասի մոտդիր վերծանողք, և այս ինձ շատ գրեցի մարդկօրէն ի հատուցումն փոխարինի վաստակոցն զորս վաստակեցի ընդ ամ քառասուն և չորս, օգնականութեամբ շնորհացն Աստուծոյ, որում միայնոյ վայելեն ամենայն փառք յազգաց մինչեւ յազգս։ —

ՍԱՐԳԻՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԹԷՈՂՈՐԵԱՆ,
Երբեմն Օրոնակալ Մխիթարեան միաբանութեան, և Վերատեսուչ Ռաֆայելեան և Մոռրատեան վարժարանաց որք ի Վենետիկ, ի Պատուհոն և ի Փարիզ.

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

ՎԱՐՈՒՑ ԵՒ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ

ՍԱՐԳՍԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԹԷՈԴՈՐԵԱՆ

ՀՈՐ ԻՆՔՆ ԻՍԿ ԳՐԵԱՑ ՑԱՄԻՆ 1864.

ՅԻՇԱՏԱԿ Ա.

Ի վտարանդութեան իմում, յոր վարեցին զիս վիշտք և արկածք որ ի սուտ եղբարց, պատապարեալ ի բնակութեան, ուր յանձանձանք ասպնջականին թեթեւացուցանեն զանձկութիւնս, և նպաստ ի կարեկից բարեկամէն մատուցանի աշխատութեանս (*), առնում ի գրել կարճ ի կարճոյ և առանց անապարծութեան զգլխաւոր անցս կենաց իմոց։

Թէպէտ և չեմ ես մի յերեւելի արանց, որոց պատմութիւն վարուց արժան իսկ է և կարեւոր ընդ գրով արկանել, առ ի թողուլ զայն յետնոց յիշատակ, սակայն կարծեմ ես, թէ աշխատութիւն իմ որ ի գործս հասարակաց ազգիս, և անցք որք անցին ընդ իս, ոչ աւելորդ և անարժան ի՛ցէ առնել նոյնպէս, և զայս առ ի խրատ բարերարաց և յօրինակ ազգասիրաց թողուլ։ Առ ի խրատ բարերարաց, թէ ո՛րպէս պարտ է նոցա զաւանդ իւրեանց արգասաւոր առնել, տեսանելով

(*) Ընակեալ ի տան Պարոն Միքայէլ Մանուկեանի, և նպաստեալ ի Պարոն Բոսֆանոս Նաւթքեանէ։

ի ամին զվիրապու

կամաց հանգուցեալ բարերարին. և յորինակ ազգատիրաց, թէ զիարդ պարտին նոքա յօգուտ ազգին աշխատիլ, և թէ զինչ ապա անտի ակն ունել, տեսանելով զոգւով չափ աշխատութիւն իմ, և զապաշնորհութիւն նոցին։ . . .

Կամիցին արդեաք ընթերցողք պատմութեանս գիտել զուսան իմ և զգիարդս։ Ահա զեկուցանեմ նոցա զայն, սկսեալ անդրատին ի մանկութենէս։

Ազգատոհմք իմ բնակեն ի բազում ժամանակաց հետէ ի Բաղէշ քաղաք, ի գաւառի Բզնունեաց որ ի մեծն Հայս։

Սահակ անուն Թորոսեանց հայր իմ առնու կին զդուստր վաճառականի ուրումն, որ ի նմին քաղաքի, անուն նորին Եղիսաբեթ, յորմէ ծնանիմ ես յամին 1783, յամսեան ապրիլի, և յաւուր Զատկի, և մկրտիմ ինքին տէր և անուանիմ Յարութիւն։

Հաստատեալ իմ ի տունէ, խնամ տանի ինձ կին հօրեղբօր իմոյ, չունելով նորա զաւակ. և այնչափ ընտերացեալ իմ ընդ նմա՝ մինչև զնա մայր ճանաչել, և կոչել, և իրաւամբք, քանզի մայրօրինակ ոսոխէ զիս նա և գայթակղութեամբ սնուցանէ։

Իրրև ի լեզու գամ ես ուսուցանէ ինձ նա աղօթս, զոր ինչ ինքն գիտէր, և ոչ ապայ ինձ կերակուր մինչև չաղօթէի ես ընդ առաւօտս առաւօտս, և զգուշացուցանէ զիս ի սուտ խօսելոյ, և հանելոյ ի բերանոյ իմմէ յիշոցս ինչ։

Եւ իրրև հասի ես ի տիս ութն ամաց՝ եդ զիս հայր իմ ի դպրոց, ի տան քահանայի միոյ, ուսանել իմ անդ կարդալ և գրել, թէպէտ և ինքն անճանօթ էր այնմ, ընդ որ ցաւէր և մեղադրէր զհայր իւր, որ ոչ միայն անփոյթ լեալ էր զայնմանէ, այլ և արգելեալ էր նմա զայն։

Զամս հինգ պարապեցայ ես յայն։ Ընթերցուածոցդ իմ էին Սաղմոս, Ժամագիրք և Շարական։ Շաբաթեալ հօր իմոյ ընդ այնչափ գիտութիւն իմ զաւարճանայր ի միտս իւր, լսելով զընթերցուածս իմ յեկեղեցւոջ. վասն որոյ յարուցանէր զիս ընդ արշալոյս և ածէր յեկեղեցին հանապազօր։

Երբեմն հասի ես ի տխուր երկոտասան ամաց եղ զիս հայր իմ յարուցեալ դերձակութեան. և այն ինչ յառաջադէմ լինէի ես յայն, ահա եկին հասին ի վերայ իմ հոգք և ցաւք միանգամայն։ Քանզի ի ժամանակի անդ անկեալ ժանտախտ ի քաղաքի մերում, յորմէ մեռան անձինք բազումք, և յորմէ ընդունեցաւ և հայր իմ. և մինչդեռ ի հոգս և ի ցաւս էի ես, հասին ինձ և այլ հոգք և ցաւք։ Քանզի տուեն յորում բնակէաք մեք յամաց հետէ անկեալ ընդ վիճակ յընտանեաց մերոյ, որ հրամանաւ քաղաքապետին եհան զմեզ բռնութեամբ անտի։

Կալեալ զձեռանէ հիւանդապին հօր իմոյ ժողովեցաք ի տան դրացւոյ մերոյ, ուստի այն ինչ յանիշտակեալ էր ժանտախտն անձինս երկուս։ Ի նմին աւուր ընդունեցաք և ես յախտէ անտի։ Յետ երից աւուրց ընդունեցան անտի և կրտսեր եղբայր և քոյր իմ, և յետ եօթն աւուրց մեռաւ հայր իմ նախ, ապա կրտսեր եղբայր և քոյր իմ հետ զհետէ. ես միայն փրկեցայ յօրհասէն անտի ողորմութեամբն Աստուծոյ։

Թէպէտ և ունէի ես հօրեղբայր մի, այլ ծերացեալ էր նա և անգործ։ Վասն նորա և մայր իմ վաճառեցին զզարդս իւրեանց և արծաթովն այնուհետև գնեցին փոքրիկ տուն մի մեզ ի բնակութիւն, յորում բնակեցաք զամս երեք հանդերձ կարօտութեամբ։

Հոգացեալ արդեաք մեր իմոյ զապագայ վիճակէ մերմէ, կամեցաւ կրկին ամուսնանալ ընդ առն միոյ բաւականի յօժանդակութիւն ինձ և եղբօր իմոյ կրտսերոյ։

Թէպէտ և յակնկալութենէ իւրմէ ոչ վրիպեցաւ մայր իմ, զի խնամ կալեալ զինէն առն նորա յանձնեաց ի ձեռս իմ զգործարան ներկարարութեան իւրոյ, և մանակից արար զիս շահուն որ անտի, սակայն յօժարութիւն արտի իմոյ առաւել առ գրագիտութիւն էր քան առ շահավաճառութիւն։

Ի ժամանակի անդ տեսեալ իմ ի խանութի ուրեք փոքրագիր Նարեկ մի տպեալ ի Վենետիկ, գնեցի զայն երեք դահեկանիւ և ընթեռնուի հանապազ, թէպէտ և ոչ հասկանայի զամենայն բան որ ի նմին։

Տէր Սահակ Սերբիեան եղբօրորդի հանուց իմոյ, գնացեալ

նորա երբեմն ի Մուշ քաղաք և ծանօթացեալ անդ հռոմէական գաւառն քահանայի միոյ համոզի անտի ընդունել զդաւանութիւն Հռոմայ։ Դարձեալ նորա ի Բաղէշ՝ քարոզէ ոմանց առանձին զՀռոմէական գաւառութիւն իբրեւ միայնակ միջոց փրկութեան հոգւոյ, թէպէտ և անձինս չորս հաղիւ ասանայ իւր անդ ժողովուրդ։

Գնացեալ նորա ապա ի Պոլիս և հանդիպեալ Հ. Միքայէլ վարդապետի Զամչեան խնդրուտ լինի անտի բուն իսկ ճշմարտութեան, թէպէտ և անագան, ընդ որ ցաւէր և յիշէր բազում անգամ։ . . . Դարձեալ նորա անտի ի Բաղէշ փոխէ զառաջին կարծիս իւր, խրատեալ ի Հ. Միքայէլէ Զամչեան։

Անդեալ նորա ի Պոլսոյ քանի մի հայերէն մատեանս ապեալ ի Վենետիկ, զետեղէ ի պատուհան սենեկի իւրոյ, որով համբաւ գիտնական քահանայի ստացաւ ի Բաղէշ քաղաքիս, վասն որոյ գնայի ես առ նոս յաճախ ուսանել ինքանէ ինչ։

Տեսեալ նորա զեռանդն ցանկութեան իմոյ առ գրոցիս թիւն խրատս ետ ինձ գնալ ի Վենետիկ ի վանս Ս. Ղազարու, ուր միայն կարէի ես հասանել ցանկութեանս իմում, և խոստացաւ ածել զիս ընդ որդւոյ իւրում մինչև ի Պոլիս, և անտի յղել զմեզ ի Վենետիկ ձեռամբ Մխիթարեան Հարց որք անդ։

Ընդ այս խրատս և խոստումն նորա այնչափ ուրախացայ ես մինչև ոչ այլ ինչ խորհէի այնուհետեւ և ոչ այլ իմիք մնայի, բայց ժամուն մեկնելոյ ի Բաղէշ քաղաքէ գնալ ի Պոլիս և անտի ի Վենետիկ։

Ահա մերձենայ ցանկալի ժամն այն, զի մեկնի անտի Տէր Սահակ հանդերձ որդւով իւրով գնայ ի Մուշ, և բան կալնու ընդ իս մեկնել և իմ անտի յետ քանի մի աւուրց գնալ առ նա, և անտի ի միասին գնալ ի Պոլիս։

Իբրեւ խորհէի ես զտանել պատեհութիւն ինչ գնալոյ ի Մուշ քաղաք, ահա գոլ զայն, զոտեսիմբութիւնն, որ ի վանս արքայն Կարապետի, և որ կատարի ի Վարդավառի։

Եւ իբրեւ պատրաստեցայ ես գնալ անդ իբրեւ յուխտ, հօրեն իմ կամեցաւ յանձնել ինձ բեռիս ինչ կարմիր կտա-

ւոյ ի վաճառել իմ զայն անդ, ուր տարեալ վաճառի բազում ինչ։

Հրաժարեցայ ես յանձն առնուլ զայն, ասելով թէ չպատշաճէր այն դիտաւորութեանս իմում, ուխտադնացութեանս։ Հաւանեալ նորա բանից՝ կասեցաւ ի կամաց իւրոց անտի։

Թողեալ իմ զնոր հանդերձս ի տան, և կալեալ առ իս երեք դահեկան միայն՝ ելի ի ճանապարհ յամսեան յուլիսի ի 1803 ամի, և ի քաղաքս Հասակիս։

Երբեւ ելի արտաքոյ քաղաքին՝ դարձուցեալ զաչս իմ ինձ ասացի. «Բարեաւ մնաս, Բաղէշ քաղաք, տեսի՛ց զքեզ արդեօք միւսանգամ, թողեցի՛ն ոսկերք իմ ի հող քո, թէ ի հող այլոյ քաղաքի։»

Ժամն ինչ ճանապարհորդեալ կարաւանաւ՝ օթեւանեցայ ընդ երեկս առ եղբարս Մեղրապետոյ. ի վաղիւ անդր մեկնեալ անտի՝ հասի ի Մուշ քաղաք ի միջօրէի, ուր գտի զՏէր Սահակ Սէրմիեան, որոյ տեսեալ զիս ուրախացաւ յոյժ, և ընկալաւ ի տան տապնջականի իւրոյ։ Զաւուրս երկուս կացեալ իմ անդ, ելի ապա ի վանս սրբոյն Կարապետի, ուր հասեալ էին ուխտաւորք և վաճառականք հանդերձ զանազան վաճառօք, և ինքեանեալք ի վանս և արտաքոյ նորին ընդ վրանօք, և ուր կալայ ես օթևան առ վաճառականի ուրումն բաղիշեցւոյ։

Զաւուրս երկուս կացեալ իմ անդ՝ դարձայ անդրէն ի Մուշ քաղաք, առ Տէր Սահակ։ Ի դարձին իմում անտի՝ քաղաքակից վաճառականն այն կամէր յանձնել ինձ գումար ինչ արծաթոյ հասուցանել իմ զայն ի ձեռս պարտատեառն իւրոյ որ ի Բաղէշ քաղաքի, կարծելով նորա զդարձն իմ անդ անխափան. հրաժարեցայ ես յանձն առնուլ զայն, պատճառելով զերկիւղն յաւարակաց որ ի ճանապարհին յայն, առանց ծանուցանելոյ նմա զդիտաւորութիւն իմ։ . . .

Յետ երից աւուրց դարձին իմոյ ի Մուշ՝ փութացոյց զիս Տէր Սահակ մեկնիլ իմ անտի գնալ ի Կարին և անդ ապատել նմա, կասկածելով զինդրակէ յղելոյ յազգականացս ի դարձուցանել զիս յետս. և կասկածել նորա ոչ վայրապար.

քանզի ի յամենս դառնալ ի Բաղէշ՝ սկսանին ազգականքն իմ հոգալ և կասկածել զդարձէն իմոյ անդ, և մասնաւորապէս քոյրն իմ որ սիրէր զիս յոյժ, և որ առաքէ զտարդ իւր զհետ իմ ի Մուշ, որոյ դնացեալ և չգտեալ զիս անդ՝ դառնայ յետս տրտմութեամբ. զի երեք տուրբք յառաջ մեկնեալ էի ես անտի։

Զաւուրս վեց ճանապարհորդեալ իմ կարաւանաւ՝ հասէ ի Կարին քաղաք և իջևանեցայ ի տան ուրուսի յանձնարարութեամբ Տէր Սահակայ Սերվիեանի։

Ազգականքն իմ մինչև անդ ի Կարին գրեցին առ սմն ի ծառայից իւրեանց ի համոզել զիս յետս դառնալ. որ թէպէտ չանացաւ, այլ ոչ կարաց զիս համոզել։

Յետ աւուրց ինչ եհաս անդ ի Կարին և Տէր Սահակ հանդերձ որդւով իւրով Յովհաննէսիւ և զաւուրս քանի մի կացեալ մեր անդ ի միասին՝ և ապառեալ ելանելոյ կարաւանին մեկնեցաք անտի յելս օգոստոսի 1803 ամի, և զաւուրս քառասուն ճանապարհորդեալ հասաք ի Պոլիս։

Յետ քանի ինչ աւուրց ժամանելոյ մեր ի Պոլիս յանդիման արար զմեզ Տէր Սահակ Սերվիեան Հարց Մխիթարեանց, Միքայէլ վարդապետի Զամչեան և Գէորգ վարդապետի Հիւրմիւզեան, հօրեղբօր վերջնոց երկուց Հիւրմիւզեանցս Արքեպիսկոպոսաց։ Հայեցեալ նոցա ի մեզ քննական իմն ակամբ և հարցեալ զտիս մեր՝ ասացին թէ չկարէին ընդունել զիս իբրև ուսանող, անցեալ գոլով հասակի իմոյ, այլ իբրև աշխատաւոր եղբայր։ Իսկ զորդին Տէր Սահակայ կարէին ընդունել իբրև ուսանող, գոլով նորա ի մանուկ հասակի։

Այսպիսի պատասխանեօք արձակեցին զմեզ նոքա։ Եկեալ մեր ի նոցանէ լի տրտմութեամբ դարձաք ի բնակութիւն մեր, թէպէտ և ոչ յուսահատութեամբ, քանզի յուսայր տակաւին Տէր Սահակ միջնորդութեամբ ոմանց ընդունել տալ և զիս իբրև ուսանող։ Իբրև ի դերեւ էլ այն յոյս նորա յամառեալ նոցա ի չկամութիւն իւրեանց, չկամեցաւ յայնժամ և որդին Տէր Սահակայ գնալ ի վանս նոցա միայն, այլ ինքն, եթէ կամէին ընդունել և զիս իբրև ուսանող։

Տրամեալ Տէր Սահակայ ընդ անյաջողութիւն դիտաւորութեան իւրոյ՝ հոգայր զվիճակաց մերոց։ Զաւուրս ինչ ասա և անդ իտուն ծանօթից իւրոց բնակեցոյց զմեզ. ապա խորհրդով և միջնորդութեամբ Սահակայ վարդապետի կուսինացւոյ եդ զիս առ Գեր. Ստեփաննոս Աւգերեան իբրեւ փոքրաւոր. իսկ զորդին իւր կալաւ առ իւր ի բնակութեան որ ի սուրբ Գէորգ եկեղեցին։

Ծանօթացեալ որդւոյն նորա անդ լատին քահանայի միոյ՝ կամի ուսանել անտի զԽոտոլ լեզուն։ Զարմացեալ լատին քահանային ընդ յիշողութիւն նորա՝ պատմէ զոյն լատին Եպիսկոպոսին, և միջնորդութեամբ նորին տուաքէ զնա ի Հռովմ յաշակերտութիւն Ծաւալոցին։

Հաճոյ եղեալ իմ Գեր. Ստեփաննոս Աւգէրի՝ տուաքէր զիս հանապազօր առ Տէր Կղեմէս անուն դաղատացի ոմն յաշակերտաց Ծաւալոցին, ուսանել իմ անտի նախ զհայերէն քերականութիւն, ապա զաստուածաբանութիւն. քանզի կամէր ձեռնադրել զիս քահանայ և ընդ ձեռամբ իւրով ունել։

Թէպէտ ես յայնժամ ոչ ցանկայի քահանայութեան, այլ հայերէն քերականութեան, և զոյն ուսուցանել ինձ Տէր Կղեմէս դաղատացին և աշակերտ Ծաւալոցին չէր բաւական. թէպէտ ցանկայի ես ուսանել զոյն ի Հայր Մկրտիչ վարդապետէ Աւգերեան, այլ նա հապիւ ուրեմն հանդիպէր ի տան եղբօր իւրոյ։ Խնդրէի ես ի նմանէ շարադրութիւն ինչ, և տայր ինձ նա օրինակք նամականւոյ, ընդ որ զմայլեալ շնորհակալ լինէի նմա յոյժ։ Տեսեալ նորա զեռանդն իմ առ գրագիտութիւն, կամէր առաքել զիս ի Վենետիկ ի վանս իւրեանց, այլ ակնածէր յեղբօրէ իւրմէ ի Գեր. Ստեփաննոս Աւգերէ։

Իրաւզած եղեալ այնր կամաց նորին Սահակ վարդապետ կուսինացին՝ հաղորդեաց ինձ զոյն ի ծածուկ, և ասաց՝ թէ ցորչափ ի տան անդ կայցեմ ես դժուարին լիցի ինձ այն։

Մանուցեալ իմ զայս Տէր Սահակայ Սէրվիեանի, ասաց ինձ նա եկանել իմ ի տանէ անտի և բնակել ընդ իւր առ ժամանակ մի։ Սրարի ես այնպէս, թէպէտ և խնդրեաց Գեր. Ստեփաննոս

Աւգէր դարձուցանել առ իւր անդրէն, այլ ես ոչ կամեցայ դառնալ անդ։

Բնակեցայ ես ընդ Տէր Սահակայ զամիսս իրրեւ երիս, մեալով հանդիպել ցանկութեանս։

Յաւուր միում մինչդեռ արտաքոյ էի ես բնակութեանս՝ գնայ անդ Հ. Մկրտիչ Աւգերեան իրրեւ յայց Տէր Սահակայ, և հարցանէ զվիճակէ իմմէ։ Յայնժամ պատեհ գտեալ նորա գանգատի ընդ չկամութիւն Մխիթարեանց չառաքելով զիս ի վանս իւրեանց իրրեւ ուսանող, և լինել պատճառ անպտղութեանս իմոյ։ Խորհուրդ տայ նմա Հ. Մկրտիչ Աւգերեան առաքել զիս ի վաղիւ անդր առ Հ. Միքայէլ Զամչեան, ի տան Սերոբէ աղայի ի Բերա։

Դարձեալ իմ ի բնակութիւնս և լուեալ զայս ի Տէր Սահակայ ուրախացայ յոյժ յոյժ, և առ ինդութեանս և անհամբերութեանս չկարացի ննջել զայն գիշեր։

Յարուցեալ ի վաղիւ անդր գնացի առ Հայր Միքայէլ Զամչեան, որոյ տեսեալ զիս եհարց թէ ուր էի ես և յինչ պարապէի։ Ասացի ցնա, թէ յածէի այսր և անդր կորուսանելով ի զուր ժամանակս իրրեւ զամս երկու, ապա վրիպելոյ յակնկալութենէ անտի իմոյ։

Ասաց ինձ նա գնալ իմ առ Հ. Գէորգ Հիւրմիւզեան և ասել ի նմանէ զկարեւորն զոր խորհեալ և որոշեալ էին զվիճակէ իմմէ, և արձակեաց զիս քաջալեր բանիւք։

Ելեալ իմ անտի գնացի վաղվաղակի առ Հայր Գէորգ Հիւրմիւզեան ի տան եղբօր նորա, որոյ տեսեալ զիս զնոյն բան եհարց ցիս, և ես զնոյն բան ասացի ցնա։

Ասաց ինձ նա աղօթս առնել և պատրաստ լինել, զի առաջին պատեհաւ նաւու ունէր առաքել զիս ի Վենետիկ ի վանս իւրեանց իրրեւ ուսանող։

Ելեալ իմ ի նմանէ լի ինդութեամբ դարձայ ի բնակութիւնս և պատմեցի զայն Տէր Սահակայ. որոյ ուրախացեալ ասաց, ահա հանդեաւ ինքն յամենայն հոգոց։

Յետ քանի մի աւուրց ազդ արար ինձ Հ. Գէորգ Հիւրմիւզեան, թէ կայր նաւ մի գնալ ի Թրեստ յորոյ վերայ ունէր

առաքել զիս անդ և անտի ի Վենետիկ, և թէ կային գնալ ընդ իս և երկու աշխատաւոր եղբարք։

Գնացի ես տեսանել զնաւն և իմանալ զօր ելանելոյ նորին ի ճանապարհ։ Փոքրիկ էր նաւն այն, և օրն ելանելոյ նորին դեռ անորոշ. վասն այնորիկ գնայի ես հանապազօր հարցանել և իմանալ զայն, և այնպէս իրրեւ աւուրս քսան։ Եւ իրրեւ որոշեցաւ այն՝ տարեալ զարկղն իմ եդի ի նմին, և հարցի զժամ ելանելոյ նորին ի ճանապարհ. ասացաւ ինձ թէ ընդ երեկս ի մուտս արեւու։

Դարձայ ես ի բնակութիւնս և ծանուցի զայն Տէր Սահակայ. ասաց նա ճաշել մեր և գնալ անդ ի միասին յուղարկել զիս աղօթիւք։ Ճաշեցաք մեք զայն օր կանուխ, և ելեալ գնացաք ի նաւն։ Հասեալ մեր ի տեղին ուր կայր նաւն և չտեսեալ զայն անդ տարակուսեցաք յոյժ յոյժ։

Խնացեալ տաճկաց ոմանց որք անդ կային զտարակուսանս մեր՝ հարցին ցմեզ, զնաւն խնդրէք, ահա գնայ նա։ Տեսեալ մեր զայն զի գնայր յաջող հողմով՝ շուարեցաք, ոչ գիտելով զինչ առնել։

Տեսեալ երկու տաճիկ նաւակավարաց զմեզ յայն վիճակ՝ քաջալերեցին զմեզ խոստանալով հասուցանել զմեզ առ այն։ Մատաք մեք ի նաւակ նոցա ալեկոծեալ մտաք և տագնապեալ սրտիւ։ Թէպէտ և նաւակավարք ամենայն զօրութեամբ լարեանց վարէին զնաւակն, բայց թերավարժ գոլով յամբ ընթանայր այն։ Այլ ըստ բաղդին իմոյ դադարեալ յաջողակ հողմոյն կասեցաւ նաւն յընթացից իւրոց, և այնպէս հասաք մեք առ այն հանդէպ Սամաթիոյ։

Ելեալ մեր ի նաւն իմացաք զհոգն Հ. Մկրտչի Աւդէրեան որ զինէն. զի գնայ նա անդ յուղարկել զմեզ, և ընդ յամել և պակասել իմ անդ հոգայ յոյժ, և այնպէս գնայ ի Սամաթիա։

Արարեալ Տէր Սահակայ աղօթս ճանապարհորդութեան բաժանեցաւ յինէն և գնաց ելանել ի Սամաթիա դառնել անդ զՀ. Մկրտիչ Աւդէրեան և հանդուցանել զնա ի հոգոյ որ զինէն։

Ահա այսպիսի եղեն անցք կենաց իմոց մինչև ցՊօլիս, և մինչև ցմեկնիլն իմ անտի։

Զաւուրս քառասուն ծանրանաւէտ հասաք ի Թրեստ, ուր զաւուրս երեսուն կացուք յարգելանոց ժանտախտին, և անտի գրեցաք թուղթ առ Գեր. Ստեփաննոս Ագոնց ի Վենետիկ, ծանուցանելով նմա զժամանել մեր անդ ողջ և անվնաս. և ընկալաք ինքեանք պատասխանի, որ ունի օրինակ զայս.

„ Մարելի որդւոցս ի Քրիստոս Յարութենի, Մկրտչի և
„ Կարապետի ողջոյն և Առաւծային օրհնութիւն։

„ Ընկալաք զթուղթ ձեր, որով և իմացեալ զանվնաս յաջո-
„ ղութիւն ճանապարհորդութեան ձերոյ, շնորհ ունիմք քա-
„ բերաբ խնամոց Տեառն, որ պահեաց զձեզ անվտանգ ի տա-
„ ռապարին ուղևորութեան ձերում, զորոյ զվիշտն յուսամ
„ մոռանալ ձեզ փութով, ի պատապարիլն ձեր այսր առ մեզ
„ Առաւծով։ Վասն որոյ ի լրանալ աւուրց նագարանի ձե-
„ րոյ փութապէս անդրանդաղ եղանել ի ճանապարհ, յոր
„ առաջնորդեացին ձեզ Պարոն Յարութիւն և Տիրացու Ստե-
„ փանն, առ որս գրեալ եմք հոգալ զամենայն պէտս ձեր.
„ որպէսզի ըստ կարգադրութեանն նոցա։

„ Ողջ լերուք։

„ Ի Վենետիկ. 21 օգոստ. 1805.

„ Ն. Ծ. ՍՏԵՓԱՆՆՈՍ Վ. ԱԳՈՆՑ
„ Աբբահայր և Աբբեպիսկոպոս Սիւնեաց. „

Եկեալ մեր յարգելանոցն՝ անտի իջևանեցաք ի տան Պարոն Յարութենի Նալբանտեան Տրապիզանցւոյ, և շրջեցաք ի քաղաքի յայն առաջնորդութեամբ տիրացու Ստեփաննի Զամչեան որ ած զմեզ տեսանել և զմեզ բաժանեալ Մխիթարեանց,

որ ի Թրեատ էր յայնժամ, և որոյ Աբրայն Գեր. Առուսածատուր Պապիկեան, որ ընկալաւ զմեզ քաղաքավարութեամբ, ըստ սովորութեան իւրոյ։

Զաւուրս երկուս կացաք մեք ի Թրեատ՝ մեծով պատեհութեան նաւու գնալոյ ի Վենետիկ. և զաւուրս իրրեւ երիս նաւարկեալ հասաք անդ երեկս ի մուտս արեւու. վասն այնորիկ կացաք զայն գիշեր ի նաւին։ Ի վաղիւ անդր եկեալ անտի գնացաք նաւակաւ ի քաղաքն, ուր յետ քննելոյ մաքսաւորաց զարկեցաք մեր և զգրպանս՝ մնաք ի նաւակ վանաց, յորում կային քանի մի տնձինք ի միաբանից։ Իրրեւ կէս ժամ նաւարկեալ՝ հասաք ի վանս սրբոյն Վ. աղտրու, ի ցանկացեալ մեք տեղին։

Եկեալ ի նաւակէն ածին զմեզ նախ ի սեղանատուն ի ճաշել. ապա յանդիման արարին զմեզ Գեր. Աբրային Սահակեանս Ագոնցի, զորոյ համբուրեալ իմ զաջն մատուցի նմա զյանձնեալն ինձ ի Հ. Մկրտչէ Աւգէրեան զշարս ինչ մարգարտի։ Տեսեալ նորա զայն եհարց ցիս թէ զիարդ անցուցեալ էր իմ զայն առանց տեսանելոյ մաքսաւորաց։ Ասացի ցնա զհնարսն, եցոյց նա զարմանս ընդ ճարտարութիւնս։ . . .

Ցանձնեաց զիս նա Վերակացուի նորընծայից Հ. Յովսեփայ տիգրանակերցւոյ, որոյ ածեալ զիս ի նորընծայարան կարգեաց ի թիւս նորընծայից, որք էին քսան և չորս և զանազան տիոք, յորս ոչ ոք առաւել տիոք քան զիս. ի քսան և երկու ամաց էի ես յայնժամ։

Ահա առաջին յիշատակ անցից կենաց իմոց, սկսեալ ի 1783 ամէն մինչեւ ցամն 1805, որք լինին ամք քսան և երկու, զամս երկու ի Հռոմապարհի և ի Պոլիս անցուցեալ։

ՅԻՇԱՏԱԿ Բ.

Նոր իմն կեանս սկսանիմ ես առատնար ունել, յաւուրն չորիցս գնալ յեկեցին աղօթել, երկիցս ի սեղան հաստակաց ճաշել, և զոր ինչ առաջի դնել անխտիր և անտրտունջ ուտել, կամաց և հրամանի վերակացուին անպատճառ հնազանդել, օր ըստ օրէ և անխափան վարժապետին համարս տալ, և ընդ զանազան գաւառս, հասակս և բնաւորութեամբ ընկերս իրրեւ ընդ եղբարս կենցաղավարիլ։ Թէպէտ և այսպիսի կեանք և յայնմ հասակիս ծանր էին ինձ, այլ թեթեւ եղեն յաչս իմ, վասն սիրոյ մեր բնիկ լեզուին, յորմէ ծնանի և սէր ազգին։

Ահա այսպիսի հանգամանաւք կեցեալ իմ ի նորընծայարանի անդ զամիս եօթն՝ վարժեցայ ի քերականն վերլուծութիւն, և ի պարզ շարադրութիւն, և տեղեկացայ զբոլոր ընտիր մատենագրաց Հայկազեանս լեզուին, զորոց վարժապետն մեր վարկ ունէր և ուսանէր մեզ։

Յետ երից ամաց կալոյ իմ ի նորընծայարանի անդ աշխարհական զգեստիւք և հին անուամբ, Յարութիւն, ընկալայ զքեմ կրօնաւորական, և զնոր անուն Սարգիս, և այս հանդէս կատարեցաւ յաւուր ոսնի ընծայման տերբ Աստուածածնի, որ ի 21 ն ցեմբերի 1805 ամի։ Եւ ահա մեռա, ի նոր իմն անցս կենացս։

Յերկուս դաս բաժանին նորընծայք վանաց. առաջին դասն զամս հինգ ի նորընծայարանի կացեալ ուսանի զհայերէն քերականութիւն, զճարտասանութիւն, հանդերձ Հայ գրականութեամբ, և սկզբամբք Լատին լեզուի. ապա փոխադրի ի վարժարանն, և անդ եւս զամս հինգ կացեալ, ուսանի զբնագանցութիւն, և զբնագիտութիւն, հանդերձ Խոսալ. և Գաղղ լեզուաք... և անդ մեծագոյն մասն անտի մտանի

յուխտ կրօնաւորութեան, անդամ լինի միաբանութեան, և ապա ուսանի զԱստուածաբանութիւն, հանդերձ կրթութեամբ օտար լեզուաց։

Յետ եօթն ամաց կալոյ իմ ինքնընծայարանի եղեւ փոխադրութիւն առաջին դասուն ի վարժարանն ուր փոխադրեցայ և ես ընդ նմին, և ուր վարժեցայ զվերոյիշեալ գիտութիւնս ըստ կարի իմում, և առաւելապէս զնուիրումն անձինս ի լուսաւորութիւն ազգին մերոյ կարօտելոյ, յիշելով միշտ զարտասուչ զայս բանս Ներսէսի Շնորհալւոյ թէ՝

„ Քանզի ուր մեր վարժարանք ի թագաւորական պատրաս-
„ տեալ հրամանաց, և կամ յոյս փառաց և պարգևաց յա-
„ ռաջացելոցն յիմաստս, որ մանաւանդ մանկաբարոյիցն են
„ առաւելագունի պատճառ փութոյ կրթութեան։ „

Եւ յետ տարւոյ և կիսոյ կալոյ իմ ի վարժարանն՝ մոռի ես յուխտ կրօնաւորութեան, յաւուր ոճնի ամենասուրբ Երրորդութեան, օր խորհրդական և պատնհութիւն խորհրդաւոր։ Ի խնճոյս ուրախութեան և յերգել անդ զշարական արբոյն Սարգսի զօրավարին, ի բարեմաղթութիւն ուխտաւորին, գուշակեն ոմանք զբարի ինչ անսի, զարգիւնս վաստակոց նորա, զոր վայելելոց էր Միաբանութիւն, այլ ոչ գուշակեն նոքա զապաշնորհութիւն միաբանութեան որ առ վաստակաւորն այն ապա։ . . .

Ամ մարդկային կարճատեսութեան և ապաշնորհութեան։

Ի հրահանգս Աստուածաբանութեան, ինքնածութեան նորին, որ աշխատասիրութիւն էր Հայր Մկրտչի Աղէքեան, խելամուտ եղէ ես բազում ինչ ճշմարտութեան. քանզի յառաջ բերեալ և անաչառ քննեալ նորա անդ զարտարողութիւնն Յոյն և Լատին եկեղեցեաց, հնագոյն և անխախտ արտարողութիւն զՀայաստանեայց եկեղեցւոյ համարի։ Իսկ ի հանգանակս հաւատոյ ոչինչ զանազանութիւն գտանէ նա. և զայս Աստուածաբանութիւն ուսուցանէր մեզ վարժապետ մեր հրամանաւ Գեր. Աբրոյին։

Տեսեալ իմ յայն զայս ամենայն՝ խորհրդածէի և զարմա-

նայի յոյժ ի միտս իմ, զի ճանաչելով Մխիթարեան միաբանութեան զճշմարտութիւն, տակաւին խորշէր ի ծոցոյ հարազատին իւրոյ, և զիմէր ի զկրկս օտարին, հանդերձ խելթիւ տակաւութեան և հալածանաց անտի, չճանաչելով իմ զաղգեցութիւն տիրոյ ընտանեաց և զանկնածութիւն յօտարաց հզօրագոյն քան զճշմարտութիւն։ . . .

Ով ինքնակար ազդեցութիւն և ընդունայն անկնածութիւն։ . . .

Թողից տանել զանիրաւ զրպարտութենէ նորին ապա տանանարդ վրէժխնդրութեան։ . . .

Յամին 1809 և յաւուր տօնի Պենտեկոստէի ընկերաց ես զկարգ յանհանոյութեան, ի Գեր. Սահակեանս Արքայէն, և ի վարդիս անդր մատուցի զառաջին պատարագն։

Յամին 1810 յաւարտել դասուն մերոյ զբնթացս ուսման իւրոյ եղեւ հրաման ի Գեր. Արքայէն երանել մեր ի վարժարանէն, և բնակիլ ընդ միաբանսն որ ի վանս։

Զեւ էին անցեալ անտի ամիսս երկուս՝ կարգեցայ ես ի պաշտօնս երկուս, հանդերձապետութեան և գրագետութեան։ Թէպէտ և ես ոչ ցանկայի պաշտաման, այլ գրագիտութեան միայն, այլ հրաման էր ի Վեհէն, պարտ էի կատարել զայն և կատարեցի զամն եօթն, հանդերձ գոհութեամբ։

Հանդերձատուն վանաց մթին ինչ տեղեակ էր յատակ, և ամենայն ինչ խոկեալ կայր անդ. մեծացուցի ես զպատուհանս նորին, և ի կարգի եղի զամենայն ինչ։

Ի ժամանակի անդ պակասելով ի վանս դերձակ եղբօր, ես ձեւէի և կարէի զզգեստս միաբանից, ծանօթ գոլով իմ արդէն արուեստի դերձակութեան։

Ի գրատան վանաց հայերէն գրչագիր մատեանքն ընդ Եւրոպացի տպագրեալ մատեանսն էին եղեալք. զատի ես զայն անտի, սենեակ մի առանձին, թանգարան անուամբ, պատրաստեցի, և փոխադրեցի անդ զհայերէն գրչագիրսն։ Ինքին սենեակի եղի և զհայերէն տպագրեալ մատեանսն որք ի վանս, և որք յայլ ուր։ Ամենապէս և զչքնաղագիրս ինչս։

Յայնմ ժամանակի պարապէի ես և ի պատրաստութիւն սաստուածպրանական քննութեան յառնել Պատրիարքի Վենետկոյ. յանդի պարտ իմն եդեալ է այն ի վերայ Միսրանութեան։ Քննեալ իմ անդ և գտեալ քաջ՝ ընկալայ վկայութիւն անտի, զոր և ունիմ առ իս։

Երբեւ հանդերձեալ ես ի հոգոյ անտի, յաւելաւ ինձ և այլ հոգ, յանձնեցաւ ինձ և այլ ինչ պաշտօն, առ անտեսութիւն, երբեւ օգնական անտեսին։

Զմիայր ինձ այնուհետեւ ժամանակ պարապելոյ ի գրագիտութիւն, ի ցանկալին իմ, միայր ինձ միայն մխիթարութիւն թարթափումն ի մատեանս գրոցն, ի կարդաւորել զայնս, և ուսումնական խօսակցութիւն ընդ դասակցին իմոյ, ընդ Հ. Արսէնի Բագրատունւոյ, զոր յորդորէի միշտ պարապիլ ի գրաւոր աշխատութիւն, և որում օժանդակէի ըստ կարի իմում հոգալով ինչ ինչ մատեանս, որոց պէտս ունէր նա յաշխատասիրութիւն իւր։ . . .

Եւ այսպէս անցուցեալ զկեանս իմ զամս վեց յետ եկանելոյ ի վարժարանէն։

Ի 1816 ամի տուաւ ինձ վարդապետական իշխանութիւն ի Գեր. Սոնիփանոս Ագոնցէն, հանդերձ վկայական գրով և հաստատակաց կնքով, որ ունի օրինակ զայս.

“ Յիսուսի Քրիստոսի ծառայ Սոնիփանոս վարդապետ
“ Ագոնց Արքեպիսկոպոս Սիւնեաց, ողորմութեամբ բանին
“ Աստուծոյ՝ և յարոգ աւետարանի նորա՝ համօրէն Քրիս-
“ տոսաէր եղբարց՝ որք միանգամ զգիրս յայն արկանիցեն,
“ ողջոյն և խաղաղութիւն։

“ Ըստ հրամանի փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ
“ մերոյ՝ որ եկն վարդապետ ճշմարտութեան, և եցոյց մեզ ճա-
“ նապարհ կենաց և փրկութեան, և զնոյն հրամայեաց առնել
“ աշակերտացն՝ ասելով՝ Գնացէք այսուհետեւ աշակերտեցէք
“ զամենայն հեթանոս, ուսուցանելով զանոսիկ, և որ խնամ
“ հոգեշնորհ առաջնորդք և վարդապետք, առ ի յաստուածոյ

“ առեալ զիշխանութիւնն վարդապետան բանին Աստուծոյ՝
“ փոխաբերել յարժանաւոր և յընդունակ աշակերտս ։
“ Յորոց և առաքելաշնորհ Լուսաւորիչն սուրբն Գրիգո-
“ ր իսս ընկալեալ զնոյն իշխանութիւն, աշակերտաց զազգս
“ գլխովին յԱստուածդիտութիւն ։ Ապա զիւր իշխանու-
“ թիւնն յորդիսն փոխանցեալ, ի սուրբն Արիստակէս, և
“ ի սուրբն Վրթանէս, և նոքա ի յաջորդս, հասանէ մինչև
“ ի սուրբն Ներսէս, և ի Ներսիսէ ի սուրբն Խահակ, և յԽա-
“ հակայ ի մեծն Մերուժ, և ի Մեսրոպայ ի Թարգմանիչս, և
“ անտի ի նոցին յաջորդս, մինչև եկն ետուս ի Ներսէս
“ Ակնեցին ։

“ Եւ ի նորին աշակերտ Յովհաննէս Բրկութն Ասանցին,
“ և ի նորին աշակերտ Յովհաննէս Բուժիկն ։ Եւ ի նորին
“ աշակերտ Խաչատուր Վարդապետ Բաղիշեցին, և ի նորին
“ աշակերտ Վարդան վարդապետ Բաղիշեցին, և ի նորին
“ աշակերտ Մարգար վարդապետ Թէոդուպոլսեցին ։ Եւ ի նո-
“ րին աշակերտ Գերյարդոյ Մխիթար վարդապետ Սեբաս-
“ տացի յԱբրահայր և յԱռաջնորդ և ի կառուցող Միա-
“ բանութեան միանձանց Հայոց խմբելոց ի Վենետիկ քաղաք
“ ի կղզի սրբոյն Ղազարու ։

“ Եւ ի նորին աշակերտ և յաջորդ Ստեփաննոս վարդա-
“ պետ Մելքոնեան Կոստանդնուպոլսեցին, որոյ աշակերտ
“ և յաջորդ ես Ստեփաննոս վարդապետ Ագոնց և Աբրահայր
“ նորին Մխիթարեանն, հաւանութեամբ առաջնակային
“ վարդապետաց մերոյս կրօնի, ետու զնոյն իշխանութիւն
“ վարդապետական Սիրելւոյ մերում Հայր Սարգիս կրօնա-
“ ւորի Թէոդորոսեան Բաղիշեցւոյ, որ բաց ի լինելոյն մար-
“ զեալ բազմամեայ կրթութեամբ ի կրօնաւորական դռվելի
“ վարս, վարժեալ էր եւս ուսմամբ ի գպրաման մերում
“ գրագրում ամս, յիմաստասիրական և յաստուածաբանական
“ գիտութիւնս, և յուսումն սուրբ գրոց, որ և ի հան-
“ դիսական քննութեան զաստուածաբանական խնդրոց յա-
“ ռանի Պատրիարքական Աթոռակալին Վենետկոյ և յօրինա-
“ ւոր վիճաբանութիւնս զուսս կատարեալ, որով և արժա-

“ նացաւ ընդունել զայս իշխանութիւն ըստ կանոնաց սրբոց
“ Հարց ։

“ Վասն որոյ վկայեմք նամակաւս զի Հայր Սարգիս վար-
“ դապետս պարտաւանդեալ կրօնաւորական ուխտիւք ընդ-
“ հնազանդութեամբ Մեծաւորի իւրոյ, և հետեւող աւետա-
“ բանին Քրիստոսի Տեառն մերոյ, ունի զկատարեալ իշխա-
“ նութիւն քարոզելոյ, ուսուցանելոյ և մեկնելոյ զսուրբ
“ աւետարանն Քրիստոսի և զայլ սուրբ գիրս յամենայն տե-
“ ղիս, ըստ մտաց սրբոց վարդապետաց Կաթուղիկէ եկեղեց-
“ ւոյ, հրամանաւ և հաճութեամբ ուղղափառ առաջնորդացն
“ վիճակաց, յորս գտանի, ըստ կանոնի սրբոյ եկեղեցւոյ, և
“ ըստ տեառն հրամանի՝ զձրի առեալն՝ ձրի բաշխելով ։

“ Զայս արարեալ՝ արժանացի ինքն, որպէս և ընդունողք
“ իւր, լսել զձայն երանական ի Քրիստոսէ, եթէ ազնի՛ւ ծա-
“ ռայ՝ բարի և հաւատարիմ, որովհետեւ ի սակաւուդ հա-
“ ւատարիմ ես, ի վերայ բազմաց կացուցից զքեզ, մտա՛ւ
“ յուրախութիւն տեառն քո ։

“ Այսր ամենայնի ստուգութեան վկայ լինի նամակս վկա-
“ յական, զոր վասն հաստատութեան ստորագրեմ իմով
“ ձեռամբ, և կնքեմ կնքով միաբանութեանս մերոյ ։

“ Գրեցաւ ի Վենետիկ ի վանս Հայոց
“ ի կղզւոջ սրբոյն Ղազարու,
“ Յամի Տեառն 1816. ի յունվարի 28.

“ ՍՏԵՓԱՆՆՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԱԳՈՆՑ
“ Արքեպիսկոպոս Սիւնեաց
“ և ընդհանրական Աբբայ
“ Մխիթարեան միաբանութեանն
“ որ ի Վենետիկ ։

“ Հ. ԽԱՉԱՏՈՒՐ Վ. ՍԻՄԷԼԵԱՆ
“ Ատենադպիր. ”

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.С.Р. Публичная Библиотека
7/31 1922
Именная Мясникяна
Ա. ՍՅԱՍՆԻ ՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Ցեռ այսորիկ ցանկայի ես առաքելութեան ի հայրենիս իմ ի Հայաստան, և անդ ոչ ի քարոզութիւն ուղղափառութեան, ուր գիտէի և գիտացի հանդերձ հաւատեաք զի ոչ գոյր բնաւ ինչ կարօտութիւն, այլ ի վարժապետութիւն մանկանց ազգիս, ուր գիտէի և քաջիկ ծանեայ զի գոյր յոյժ կարօտութիւն։

Մինչդեռ այսու ցանկութեամբ կայի ես, ահա ել ինձ վիճակ այլոյր առաքելութեան, թէպէտ և ոչ օտար ցանկութեանս, վասն որոյ յոժարութեամբ յանձն առի զառաքելութիւնն զայն, և ահա յաւելուն և այլ յիշատակք անցից կենաց իմոց, զորս ունիմ գրել ի սմին կարգաւ և ընդարձակ հանդերձ հաւատեաք։

ՑԻՇԱՏԱԿ Գ.

ՆԱԽԱՇԱՒԻՂ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

Ի պատմել զբարերարութենէ ուրուք՝ արժան է նախ զպատճառն ծանուցանել, թէ ուստի՛ շարժեալ նորա արար զբարերարութիւնն զայն, ապա տալ տեղեկութիւն զորպիսութենէ բարերարին այնորիկ և զհանգամանաց նորին հանդերձ հաւատեաք։

Յամենայն գործս մարդկային խառն են բարիքն և չարիքն, ուրախականքն և տրտմականքն, և ընտրութիւն նոցին ի կամս մարդոյ է ապաստան. և ապացոյց այսմ՝, ահա բարերարութիւնն ազգայնոցս ոմանց որք ի Հնդիկս սրարեալ երթեմն Մ. միաբանութեան որ ի Վենետիկ, և չարիքն որք անտի։

Քանզի կամի Մխիթարեան միաբանութիւն արծաթովք այնուիկ կառուցանել դպրոց մի յուսումն և ի կրթութիւն աշխարհիկ մանկանց ազգին իւրոյ. բայց Աբրայն նորա Սուլթանոս Մելքոնեան այր ինքնակամ և յամառ յոյժ ի կարծիս իւր հակառակի կամաց միաբանութեան. և այն այնչափ՝ մինչեւ յերկուս բաժանել զմիաբանութիւն իւր, որով և դայթագղութիւն և վնաս ազգին։ Որպէս և ի բարերարութենէն Սամուէլի Մուրատոյ, և որում պատճառք գոռոզութիւն և նախանձ Գէորգ Հիւրմիւզ Աբրային, զոր և ցուցից ի ամին կարգաւ։

Բաժանեալքն ի միաբանութենէ Վենետկոյ հաստատեն ի Թրեատնոր իմն Միաբանութիւն, և առաքեն զոմանս անտի իւրեանց քարոզիչք ի Պոլիս, որք և որսան անդ և գայլ քանի մի անձինս, յորոց մի լինի Հ. Անանիա Ճամբազեան, այր ճարտար և համոզկեր, զոր և գործակալ իւրեանց անդ կարգեն, և ձեռամբ նորին ատի և անտի վաշխիւ արծաթ ժողովեն ի կառուցումն դպրոցին վասն աշխարհիկ մանկանց. և վասն այնորիկ առաքեն երկուս անձինս յորսացելոց անտի, զՀ. Նիկողայոս Բուզայեան կոստանդնուպոլսեցի, և զՀայր Պօղոս Մեհերեան Աշեցի, ի Հնդիկս ի խնդիր նպաստից յազգայնոցս որք անդ։

Ճանապարհ արարեալ նոցա ընդ ծով և ընդ ցամաք բազում տառապանաք հասանեն ի Մատրաս Հնդկաց, և ժողովին ի Պարան Միքայէլէ Տէր Յովհաննեան, որոյ տուեալ նոցա սենեակ մի ի տան իւրում, նպաստս մի հում մաղ և բանջար, ատէ. Եփեսջիք և կերիջիք, եթէ ապրել կամիջիք։ Միանգամ եւեթ յեօթնեկի հրաւիրէ զնոսա Աղա Եդուարդ Ռաֆայէլ Ղարամեան ճաշել ընդ իւր։

Կեցեալ նոցա անդ այնպիսի կենաք առուրս ինչ, և ոչ ուստեք նպաստ ինչ գտեալ, ատէ ցնոսա Աղա Եդուարդ՝ դիտասջիք զի ոչ զք յազգայնոցս ատի նպաստաւոր լիցի զիտաւորութեան ձերում, բայց յիւրմէ, և այն այսու պայմանաք. «Եթէ մին ի ձէնջ, Հ. Նիկողայոս, առեալ տարցէ զերկոսին որդիս իւր, զԱզիքսանդր և զՅովհաննէս, ի Լոնտրա,

“ և թնամ կալցի նոցա զամն հինգ մինչեւ աւարտեցին նոքա
“ զուսումն իւրեանց ի դպրոցի Անգղիացւոց, և ինքն ուսուցէ
“ նոցա զհայերէն լեզու. և միւսն, Հ. Պօղոս, կացեալ ասէն
“ ի տան իւրում, ուսուցէ զհայերէն լեզու կրտսեր որդ
“ ւոյ իւրոյ Լուիգի, և երկուց դստերաց իւրոց, յայնժամ
“ նպաստ ինչ լիցի ինքն ի կատարումն գիտաւորութեան
“ նոցա։ ”

Յանձն առնուն նոքա զպայմանն և կատարին զպտրոս պաշտաման իւրեանց լիովին։

Ահա պատճառն ուստի շարժինս առնել զրարերարութիւնն զայն։

Մնայ ինձ արդ տալ տեղեկութիւն զորպիսութենէ Բարբարարին և զհանգամանաց նորին, և առ այս յառաջ բերից զինքնագիր աղգարանութիւն նորա, զպատուիրանագիր նորա որ առ որդիս իւր, և զնամականին որ առ այլ ոմանս, և և զհրիտակ նորա, թողեալ կուակաւ վասն դպրոցի ազգատանեկաց ազգին Հայոց։

Պատմեն ազգաբանութեան Եղուարդայ Ռաֆայէլի Զարաբեան։

“ Գոհանամ ի Տեառնէ զի ես ժամանակ և կարողութիւնն
“ բաւական խորհել ի վերայ նախնեաց իմոց, վասն այսորիկ
“ ի վերջն տարւոյս ըստ սովորութեանն իմոյ հարկաւոր վար-
“ կայ շարել ի վերայ թղթոյ զյիշատակ նոցա, որչափ միտքն
“ իմ ձգտէր և աւանդութեամբ լուեալ էի, այսու գիտաւորու-
“ թեամբ զի յառապայն ծանիցեն որդիք իմ թէ յորմէ՛ իցեն
“ սերեցեալք կամ ո՛յք իցեն նախնիք իւրեանց. վասն զի
“ ի կատարեալ հասակի իմոյ ես յոյժ բաղձայի գիտել յաւել
“ քան զայն զոր գիտեմ այժմ. վասն այնորիկ թող ինձ
“ թէ որդիք իմ ես ցանկանայցեն գիտել։

“ Այսու մտածութեամբ սկիզբն առեալ իմոյ հաւուն իմոյ
“ սկսայ գրել ազգատոհմութիւնն իմ մինչեւ ցորդիսն իմ,
“ այսինքն, մեծ հաւ մեր որ է հաւ հաւու իմոյ սնուանեալն

“ Խաչիկ Ղարամանց ծնեալն ի գեօղն Արբանէլ ի գաւառին
“ Նախիջեւանու որպէս ընթերցեալ է իմ ի Առաքել պատ-
“ մագրի ի 250, թղթահամարն զոր գրէ այսպէս, “ Եւ Դաւիթ
“ “ եպիսկոպոսն որ էր ի Շամքոռու ձորէն, և ի ցեղէ իշխա-
“ “ նաց՝ զոր Ղարամանց կոչեն ։ ” —

“ Այսու մտածելի է թէ ցեղն Ղարամանց ազնիւ ի՞նչ լեալ
“ ի Հայս և ցեղ մեր ի՞նչ է. քանզի ոչ է իմ լուեալ մինչեւ ցայ-
“ սօր այլ ցեղ Ղարամանց յազգի իմում, և հաւատի ոչ
“ գիտեմ թէ ի ժամանակի աւերման աշխարհին Հայոց ի թա-
“ գաւորէն Պարսից մեծին Շահպասայ և վարելոյ ազգս մեր
“ ի Նորն Ջուղայ մերձ մայրաքաղաքին Սպահանու և բնակե-
“ ցուցանելոյ անդ, ոչն մեծ հաւ մեր ընդ նոսա եկեղցին
“ ի՞նչ է, թէ առ յապայն գայ և բնակի անդ, ի նորն Ջուղայ,
“ և յետ բնակութեանն իւրոյ անդ, ծնանի որդի մի և անու-
“ անէ Ղարամ, և ամուսնացուցանէ ընդ մի ի գաղթից
“ իւրում ընտանւոյ անուանեալ Բէկիա, և Ղարամ ծնանի
“ որդի մի և դստեր երկուս, անուն որդւոյն կոչէ Խաչիկ
“ Ղարամնց որ է հաւ իմ ։

“ Եւ յայսմ միջոցի իրրեւ յամին 1650, մեռանի Ղարամ և
“ կին նորա, և որդի Ղարամին կոչեցեալն Խաչիկ գոլով ի հա-
“ տակի պատանեկութեանն և անտէրունչ ծախէ ամենայն
“ առացուածս հօր իւրոյ և աղքատանայ և նեղեցեալ ի չքա-
“ ւորութենէ ելեալ գնայ ի Հնդիկս, և բազմաչան աշխատա-
“ նօք չրչի ի պանդխտութիւն ի Մանիլայ, ի Զին, ի Բանկա-
“ լայ, և յայլ տեղիս մինչեւ թիւն 1690, զոյգ ինչ յաւելի
“ կամ պակաս ։

“ Եւ աջողութիւն գտեալ գառնայ ի հայրենիս իւր իրրեւ
“ զՄ թուման հարստութեամբ, և ամուսնացեալ անդ ընդ մի
“ ի գաղթացն ազգայ Ֆրանտենց անուանեալ Խանումչան,
“ և ծնանի ուստերս երիս և դստերս եկուս, անուն ուստե-
“ րացն երիցսուն կոչէ Ռաֆայէլ, երկրորդին Ստեփաննոս և
“ կրտսերն Յովհաննէս ։

“ Եւ ամուսնացուցանէ երէց որդին իւր կոչեցեալն Ռաֆայէլ
“ որ է հայր իմ ընդ դստեր Յովհաննէս Խօջամալին, Զախա-

„ թուականեն կոչեցեալ Նանաջան, սա Նանաջան ունելով մայր
„ անուանեալ Մէրրան սերեցեալ ի ցեղէն Եէրիմանենց որ էր
„ դուստր Յարութիւն Եէրիմանին։

„ Եւ հաւ իմ խաչիկ յետ ամուսնացուցանելոյ որդին իւր
„ Ռաֆայէլ առաքէ ի Հնդիկս ի Մատրաս, ի հպատակութիւն
„ աներոյ իւրոյ Յովհաննէս Խոջամալին, որպէս զպաշտպա-
„ նութեամբ նորա յառաջացի ի գործ վաճառականու-
„ թեան։

„ Յայսմ միջոցի մեռանի հաւ իմ Խաչիկն Ղարամենց
„ ի Ջուղայ իրրեւ ամաց ինսունից, և յետ փոքր միջոցի կին
„ նորա Խանումջան, և տեսեալ մայրենի հաւուն իմոյ
„ Յովհաննէս Խոջամալին թէ չեղեւ ծնողդ դատեր իւրոյ,
„ յետս առաքէ հայրն իմ ի Ջուղայ իրրեւ յամին 1730. և
„ գնացեալ հօր իմոյ անդ ի Ջուղայ ծնանի ուստերս երկու և
„ դուստր մի։

„ Երէց որդին իւր անուանեալ Լուսիս փոխի յատուցս
„ ինորաբողրոջ հասակի, և կրտսերն անուանեալ Հէդվարթ
„ որ եմ ես, և դուստր իւր անուանէ Մադլինայ որ է քոյր
„ իմ, և յամին 1745, վախճանի հայր իմ Ռաֆայէլ ինորն
„ Ջուղայ, և թաղի ընդ հարս իւր, և մայրն տեսեալ թէ է
„ այրեացեալ և անտէրունչ մնացեալ, և զոլով ի վտանգի
„ աշխարհն այն՝ առաքէ զիս ի Հնդիկս, յանձն արարեալ
„ հօր իւրոյ Յովհաննէս Խոջամալին, և յետ փոքր միջոցի
„ գալստեան իմոյ պատրաստի մայր իմ ընդ քեռն իմում և
„ երթալ գայ ի Հնդիկս, և բնակի ընդ հօր իւրում։

„ Եւ ի հասանելն իմ ի Հնդիկս, հաւն իմ եդ զիս ի դպրա-
„ տուն Գաղղիացւոց ի Փոնթիշէրի, և վախճանեցաւ ինքն յա-
„ մին 1760, յամսեան յունվարի չորրորդին։

„ Յայսմ միջոցի պատահեցեալ պատերազմ ի մէջ Անգղի-
„ ացւոց և Գաղղիացւոց՝ պաշարեցեալ էր Փոնթիշէրի յԱնգ-
„ ղիացւոց։ Մայրն իմ կամելով ազատել զիս ի վտանգէն,
„ նոյն թուոջ օգոստ. 14-երրորդին առաքեաց զիս ի դուրս
„ ասա ի երթալ ի Գուդնուրուբ։ Պատահեցայ այլ իմն մեծի
„ վտանգի. քանզի ի ճանապարհի հասին ի վերայ իմ զոգք

„ և Մարաթացք առ ի կողոպտել զիս. ի լուսանալ հնգետա-
„ սաներրորդ աւուր ամսեան օգոստոսի հարին սրոք զձախու-
„ ձեռն իմ, և կողոպտեցին զամենայն ինչս իմ և թողին զիս
„ իբրեւ մեռեալ ի ճանապարհի որ էի ի ամենց ԺՁից։

„ Անդ ձկնորք տեսեալ զիս և գթացեալ ի վերայ իմ
„ առեալ տարան զիս ի Փոնթիշերի. և տեսեալ մօր իմոյ կոծ-
„ մեծ արար ի վերայ իմ և ի վերայ անխոհեմ մտածութեանն
„ իւրոյ, զի եթող զիս անպատրաստ եկանել ի Փոնթիշէրու։

„ Յայսմ միջոցի սատակացեալ պատերազմն, Անգղիացիք
„ տիրեցին Փոնթիշէրի որ ի թուին 1761, յունվարի 6երրոր-
„ դին. և վասն կորուսանելոյ քաղաքին, կորուսաք և մեք
„ առն և ամենայն ստացուածս մեր եղբարացաք, զորս
„ փոքր, աւուրքք յառաջ հարուստ էաք և մեծատուն, և
„ եկեալ բնակեցաք ի Մատրաս։

„ Տեսեալ տարաբախտութիւնն տան իմոյ սկսայ վատա-
„ կիլ և վաճառականութիւն առնել ի Զին, ի Մանիլայ,
„ ի Բանկալայ և յայլ տեղիս, մինչեւ տեսեալ իմ թէ Բարե-
„ բարն օրհնեաց զվաստակ իմ, ամուսնացայ յամին 1772,
„ ընդ դստեր Ջահուկեցի Զորհացկերէնց Ստեփան Մանուէլին՝
„ անուանեալ Մարիամ, և ծնայ ուստերս երիս, և դստերս
„ երկուս. ուստերք Աղեքսանդր, Յովհաննէս, և Լուսիկ, և
„ դստերք Աննա, և Աննա Մարիամ, զորս ազատեմ ի Տեառնէ
„ շնորհել ոգս իմաստութիւն, որպէս զի զարդանայցեն իմաս-
„ տութեամբ բարի վարուք ի փառս Աստուծոյ և ի մխիթարու-
„ թիւն ինձ, բաւ է։

„ Ի Մատրաս 1784 դեկտեմբերի 31.

„ Վերջն տարւոյս.

„ Քրիստոսի ծառայ

„ ՀԷԴՎԱՐԹ ՌԱՖԱՅԷԼ, Ղ.ԱՐԱՄԵՆՑ.“

Պատճէն պատուհիրանագրոյ Աղայ Հէրվարբրայ Ռաֆայէլի Ղարամեանց առ որդիս իւր Աղեքսանդր և Յովհաննէս ի ժամանակի մեկնելոյ նոցա ի Պատրասէ գնալ ի Լոնդրա ընդ Հ. Նիկողայոսի վարդապետի Բոզգայեան.

„ Իմ Սիրելիք, Թանկ որդիք, Աղեքսանդր Ռաֆայէլ
„ Ղարամեանց, Յովհաննէս Խօջամալ Ղարամեանց։

„ Հոգիք,

„ Աղաչեմ Ամենակարող բարի Աստուած բարեբախտու-
„ թեամբ Սրբուհի կուսին, և մանաւորապէս առաջնորդու-
„ թեամբ Ռաֆայէլի հրեշտակապետին, զի տացէ և աջողեսցէ ձեզ անվնաս և բարի նաւահանգիստ, յատկապէս իմաստութիւնն, Աստուածպաշտութիւնն, և առաքինութիւն, զան փառաց իւր, և միխիթարութիւնն պարծանք ծնողաց ձեր Ամէն։

„ Բարիոք գիտէք որդիք, կամ ժամանակով գիտելոց էք, զան բարութեանն ձեր յանձն առինք զրկել մեզ ի տեսուն ձեր, և առնել բազումն ծախս և նեղութիւնն, միայն առաջանալ ձեր յուսում և յիմաստութիւնն որով կախեալ կայ մարդոյ վախճան բարին։

„ Զան որոյ Սիրելի որդիք, աղաչեմ որպէս բարեկամ և պատուիրեմ որպէս հայր, զի ընկալնուք խորհուրդ և պատվէր իմ սիրով և հնազանդութեամբ, զի է պատուէր Տեառն, ամենայն որդիք հնազանդ լինեն ծնողաց, և ծնողք սիրեն որդիքն իւրեանց. որովհետև կատարեմ ես առաջադոյն պատուիրանին, որ նախ պարտն ձեր էր, որչափ և դուք պարտ էք կատարել կամն իմ և հնազանդ լինել պատուիրանացս, որ այլ ինչ չէ բայց զան բարութեանն ձեր, ուստի պիտի կատարէք, որպէս լաւ որդիք։

„ Այս է պատուէր իմ.

„ 1. Նախ լինէք երկիւղած Տեառն, որ սոխա կախեալ

“ կայ ամենայն սկիզբն իմաստութեանն, ընդ որ լինէք պինա և
“ հաստատուն ի հաւատս ձեր ուղղափառ կաթողիկէ և հռով-
“ մէական, ընդ որում ծնեալ էք, որ հաստատ եմ գոլ
“ ճշմարիտ ։

“ 2. Հնազանդ լերուք Հայր Նիկողայոս վարդապետին,
“ որ է կարգեալ վարպետ, և ուսուցիչ ձեր, առ ի Կրթել
“ ձեզ ի հաւատս ձեր, և ուսել բարեվարք կրթութեանն, և
“ ընդ նմին ուսուցանել ձեզ ի լեզուս մեր հայկազեան որ է
“ սեփական լեզուն ձեր. զի էք ծնեալ հայք, և պարտ էք
“ գիտել լեզուն ձեր, ընդ որ երդմամբ ձեզ ասեմ, զի
“ գուցէ, Տէր մի՛ արասցէ, չգիտանալ լեզուն ձեր ոչ հանա-
“ չեմ ձեզ որդիք իմ. առ այս հաստատութեանն բարիոք
“ տեսանէք զտալ ձեզ վարպետ հայի, ընդ որ բախտավարիք
“ գտանել վարպետ որպէս Հ. Նիկողայոսն. վասն որոյ պարտ-
“ տաւոր էք պատուել, սիրել, հնազանդ լինել, և շնորհա-
“ կալ լինելով ուսանիլ, զամենայն զոր ինչ պատուիրէ ձեզ,
“ և ոչ լինել երախտամոռ յերախտիս և ի վատակն նորա
“ ի ձեզ ։

“ 3. Մատր Վուիլիամ Ռասն կարգեալ է վերատեսիչ ձեր,
“ և դնելոց է ձեզ ի դպրատուն ինկլիզի առ ի ուսանել և
“ սովորել լեզուն նոցա, գիրն և աշխարհօրէն ուսումն. ուս-
“ տի պարտ էք զգուշանալ և լսել խրատուց ինկլիզի վար-
“ պետին, որպէս և հրամանին Մատր Ռասին ։

“ 4. Որդիք, որովհետև Բարերար Աստուածն ձրի շնոր-
“ հեալ է ձեզ ժամանակ, բախտաւոր էք, զի ունիցիք վար-
“ պետք և ուսուցիչք զանազան, պարտ է զոհութեամբ ձեր
“ ստեղծողին, հետևէ մաքերանիզ բանէք ջանք առէք,
“ շուտով սովորել, զոր ինչ վարպետքն ձեզ ցուցանեն, որ
“ մարդ դառնայք և Պարոն, որ ձեր հօր լինի պարծանք և
“ մխիթարութիւն. չլինի վատակն իմ առնէք ունայն, և
“ ծաղր զիս առնուցուք ի մէջ հասարակաց, յատկապէս
“ ազգին մեր, զի ոչ ոք է արարեալ, զոր ես առնեմ ձեզ,
“ վասն ապագայ բարութեան ձեր. գուցէ Տէր մի՛ արասցէ,
“ չլինէք ընդունակ ուսմանց և խմաստութեանն, լինիմ ես

“ անպարտ, և զուք պարտաւորեալ, վասն որ զամենայն
“ ըստ ինձէն զոյն չեմ խնայել ի ձեզ անել։

“ 5. Զոլ ձեզ ի փոքր հասակի, կարելի է զուցէ մոռացումն
“ ձեզ չգիտել ընտանիքն ձեր. ուստի հարկաւոր տեսի ցու-
“ ցանել գրովս, որ է՛ք որդիք սեփական հօրն ձեր Հեղփար-
“ թի, ունէ՛ք մայրն ձեր կենդանի, անուանեալ Մարիամ,
“ որ է՛ք զարգացեալ ի սուրանց Նորա կաթիւն զոլ յաւել
“ երախտիք ունենալ ի վերայ ձեզ քան զայլ մարք, որ միայն
“ ծնանին, բայց ոչ կաթամբ իւրեանց կերակրեն. վասն որոյ
“ ի մտաց յաւիտենական ի կեանս ձեր յիշատակի ունենէ՛ք,
“ վասնակն և երախտիքն Նորա ի ձեզ, զի պատուէ՛ք և մե-
“ ծարէ՛ք որ արժան զիտի Մայրն ձեր ծնել ձեզ և կերակ-
“ րել կաթամբն իւր։

“ 6. Որդիք, կրկնեմ ձեզ զգուշացուցանել, որ է՛ք Ազգով
“ հայք, ոչ երբէ՛ք մոռանալ ազգն ձեր կամ լեզուն, որ
“ բնական բնութեամբ և բարի ուսմանց օրէնքով ամենայն
“ մարդ պիտի սիրէ ազգն իւր և օգնական լինի Նորա պայ-
“ ծառութեանն. զիտաւորութեանս մին արդարև ձեզ ասեմ
“ Նէրսէս ձեզ աղաչելն, և ջանալ ձեզ լինել խնամատուն վասն
“ ապագայ ձեր ազգին օգնութեանց համար, որ և աղաչեմ
“ Աստուած լինէ՛ք պիտանի ազատութեան Նորա բանիւ կամ
“ գործով։

“ 7. Աղաչեմ և պատուիրեմ Սիրելիք, լինէ՛ք հեզ, խոհեմ
“ և առաքինի ընդ դպրատանն որ լինէ՛ք հետեւէ սիրով, հա-
“ մեղ և ատարով կալն ընդ միւս աշակերտսն և ուսանէ՛ք որ
“ է սովրէ՛ք շուտով, զսան որ վարպետն ասայ, չլինի զգուի
“ վարպետն, թէ սոքա գլուխ չոր են, և պիտի փետով գոր-
“ ծածել, և ձեր վերայ զութն պակասի. վերջապէս աղաչեմ
“ Աստուած որ զուք հնազանդ և լսուկ լինէ՛ք վարպետացն
“ ձեր, հայր Եպիսկոպոսին և ինկլիզի վարպետին, որ ես
“ ամօթանք չկրեմ։

“ 8. Հանարն որ է լիասրն ձեր չարէրին տուի ձեզ հետեւ-
“ զութեամբ բանացանէ՛ք և պահէ՛ք, ինչ կորի կամ փոսրվի,
“ գրէ՛ք պահեցէ՛ք որ ես խնդրեմ, ես ամենայն ծախքն ձեր

„ թէ ուտելիք, ագանելիք, և այլ հարկաւորութիւնն որ ցան-
„ կանէք վայրապատէն խնդրեցէք. Մատր Ռասն լցուցայ
„ անհոգս լինէք, և հարկաւորութիւննն տեսնի ձեր խնդիրքն
„ իրաւի այ, կուայ, կամ Մատր Ռասին կասէ տայ։ Բայց
„ պատուիրեմ սիրելիք չլինէք շուայլ, և անպատշաճ փող
„ վատնել, որ յետոյ փոշմանութիւն լինի, այլ կէք տարփօվ
„ որ է էքինոմիով, մինչև մեծանէք, բան սովորէք, և կա-
„ րողանէք վաստակել. այնուհետև ես ցուց կուամ որպէս
„ է հարկն խարջելոյ, զգուշ լերուք։

„ 9. Պատուիրեմ քեզ որդի Յովհաննէս, լինես հնազանդ
„ մեծ եղբօրն քո, և հետևես լինել որպէս նա ընթերցող
„ գրոց և ուսմանց որ սիրելի ինձ լինես, և խնդրեմ Ռաֆայէլ
„ որդւոյս որ սիրես և ուսուցանես եղբայրն քո, և լինէք
„ ընդ միմեանց սէր և խնամարկեալ։

„ 10. Սիրելի որդիք, պատուէր մի տամ և յետինն, որ լինէք
„ երկիւղած Աստուծոյ, և հնազանդ ծնողացն և վարպե-
„ տացն, պատուէք ծերոց, սիրէք ընկերն ձեր, լինէք
„ գթութիւն և ողորմութիւն ի տնանկաց և աղքատաց, ոչ
„ երբէք խօսի սուտ լեզուն ձեր, և ոչ առնուք ի բերան
„ ձեր խօսք աղտեղի, կամ անպատշաճ, ոչ լինի աչք ձեր
„ ագահ կամ շուզուկ, ձեռն ձեր լինի անարատ և ոչ յա-
„ փշտակող, ոտն ձեր դնայ հանապազ ուղիղ և արդար,
„ հեռի լինի սիրտն ձեզ զամենայն բան զարշ և աղտեղի։
„ Ականջն ձեր ոչ թոյլ տայք լսել բան անառակ և տգեղ,
„ և շունչ ձեր առնու հոտ անմաքուր, յատկապէս լինէք
„ հեռի վատ ընկերակցութենից։

„ Պահելով պատուէրն իմ որդիք գտանէք գանձ յերկինս,
„ և վարձք յաշխարհի առանց թշուառ տրտմութեան, բաւ է։

„ Ի Մադրաս. 17 սեպտեմբերի. 1785.

„ Ձեր տեսուն ծնողոյ կարօտ հայր

„ ՀԵԴՎԱՐԹ ՌԱՖԱՅԷԼ ՂԱՐԱՄԵԵՆՑ.„

ՊատՃեն նամակի Աղայ Հեղինարի Թոքայեղի Ղարամանեան առ Մխիթարեան Մխիթարեանս որ ի Թրեստ.

“ Գերապատուելիք Տեարց մերոց, Հարցդ և Եղբարցդ
“ Մխարանաց Մխիթարեանց, որ էք ի Թրեստ։

“ Գերապատուելեացդ, Շնորհեալ յամին Տեառն 1783,
“ սեպտեմբերի Հերրորդէն, օրհնութեան թուղթն, հանդերձ
“ փաքէթ հինգ Ասուածածնի գրոցովքն, առ իս եհաս
“ անցեալ թուին՝ սեպտեմբեր 15երրորդին, ընդ որում
“ հրամայեցեալ էր՝ բաժանելն գրոց, կատարեցի։ Բայց
“ հոգւով ցաւիմ ի ձեզ յայտնել որ մայրս իմ ոչ եղիտ բաղդ
“ կարդալ զօրհնութիւնն ձեր, զի էր բարձեալ ի կեանսն
“ երկնից ինոյն թուին յուլիսի 20, որ և աղաչեմ զԳերպար-
“ գելեացդ, զի հանդիսիւ պաշտօն և Պատարագ մատուցա-
“ նիցէք վասն հոգւոյն Պատուելի Մօրս իմոյ տիկին Կանա-
“ ջանին, որ և կատարէք Շնորհ գիտեմ։

“ Հաւատի լուեալ էինք զհալածուածն մեծ ի յարեւելս.
“ ուստի հաստատուն եղեւ մեզ ի գալոցն Հայր Նիկողայոս
“ Բուզայեան և Հայր Պօղոս Մեհերեան պատմելով ի մեզ զոր-
“ պիսութիւնն. յիրաւի յոյժ ցաւիմ սրտով, տեսանելով
“ զտառապելութիւնն ազգիս մեր, և զթշուառութիւն ազգի-
“ տութեանն, որ ոչինչ բան, զրդռէ նախանձ մեր առ միա-
“ բանութիւնն, բայց վիճմունքն հաւատոց ընդ միմեանս
“ եղբարց, որով վատակն մեր ձրի վատնեմք և տամք տաճ-
“ կաց, և վաղճան բանին՝ ոչինչ շահիմք, բայց թէ ամօթանք,
“ նախատինք և աղքատութիւն։

“ Ահ ազգք անիմաստք բաւական լերուք անմտութեանն
“ ձեր, միաբանութիւն, և նախանձաւոր լերուք վասն տառա-
“ պելութեան մեր, և վատակն մեր տացուք վասն զտանե-
“ նելոյ զպիտութիւնն որում է զուան արիութեան, և աղա-
“ տութեան։

“ Հաւատի գիտեմ, որ գրելոյս շահիմ ոչինչ, բայց

“ յաւելով մաչիմ. զի որպէս խել համարէ ուսոյ խոնարհ-
“ հութեամբ ընդունելով զքրիստեական գրոցս, և համարձա-
“ կիմ ասել զփոքր ինչ ի Գերազանց կարդացողացն մերոց,
“ որք են ի յեկեղեցիս մեր, վասն որ ի յաշխարհականս ոչ
“ գոյ կարդացողութիւն, ոչ ներհակիմ խոստովանելոյ, զի
“ պարտին նախ՝ հաւատն Յիսուսի ուղղաբար քարոզել,
“ և տալ զգիրքս սուրբ, բայց ճանաչեմ և գիտեմ զի ունիմք
“ բուսական։ Արդ պարտ է լոյս ածել զգրեանս, զորս խնթէ
“ զառիթ նախանձ ազգասիրութեան, գիտութեան, և արիս-
“ ութեան, և այլն։

“ Գիտեմ, զի պատասխան տացեն, թէ ո՞վ զք եռուն մեզ
“ զծախան, զի ոչ արարաք. այլ յայտնի ի գիս գիտեմ, զի
“ ի Հնդկացս եկ բազում արծաթ ի մի և ի միւս կողմն եկե-
“ զեցած, վասն տպագրութեան գրոց պատմութեան, և
“ և վաղճան տեսաք ոչինչ, բայց զԱղմոս, և զժամագիրք։
“ Աղաչեմ զԳերյարգելեացդ չգիտիցէք զիս գոլ Լութերեան,
“ այլ եմ ուղղափառ, բայց կամիմ և ցանկամ լինել ուղղա-
“ փառ՝ որպէս Մակարէեանք թէ աշխարհօրէն չասեմ Ամե-
“ բիկեանք. բաւ է։

“ Ի փոքր հասակի իմում յետ եկանելոյ ի դպրատանէ
“ Փոնթիշերու, եղէ ընթերցեալ զպատմութիւն Հռովմայեց-
“ ւոց Ֆրանկոսի լեզուաւ, որ հեղինակն է Մուսի Ռօլէն,
“ 16 հատոր, և ունէի ի սրտի իմում զուխտ առ ի լոյս
“ ածել զբարբառն մեր, վասն որ տեսանէի զօգուտն ընթեր-
“ ցողաց, այսինքն, թէ՛ սահմանի կառավարութեան, թէ՛
“ միաբանութեան, և թէ՛ ազգասիրութեան, և այլն, որպէս
“ հաւատման եմ որ Գերյարգելիքդ կարդացեալ լինիք, և
“ հաւանիք դիտաւորութիւնս իմ, զի յոյժ օգտակար լինի
“ թարգմանութիւնն այն վասն ազգիս մեր։

“ Վասն որոյ ձիգ ժամանակաց գրեալ էի առ Վենետիկ
“ ի վանս ձեր, և ակնկալեալ սպասէի դառնել զլուծմունքն
“ իմոյ դիտաւորութեան, որոյ հակադարձն եղև յոյսն իմ,
“ յետ դառնելոյ զպատասխանն, ընդ որս թողեալ էի որպէս
“ մոռացեալ. և յետ այնորիկ ի գալն Հարքն Նիկողայոս և

„ Պօղոսին՝ խօսակցութիւն եղեւ վասն բանին այն, բորբոքե-
„ ցին ինձ առնուլ ի միտ ընդ որ վարկեցեալն եղէ ի գլխոյս,
„ յորոց խոստանալով ինձ անխափան զթարգմանութիւնն և
„ զտպելն այն պատմութեանն, ընդ որ լինի և կատարի
„ ի Թրեան, որպէս խոստացմամբ՝ դաչինս հաստատեցին ընդ
„ իս, զորոյ օրինակն գրոյն՝ անխափան առ ձեզ առաքեցեն։

„ Զօրութիւն բանիս այս է, որ վասն թարգմանութեանն և
„ տպոյն պատմութեանն Հռոմայեցւոց, որք են 16 հատոր
„ գիրք ի բարբառս մեր, եառ այժմ ի ձեռն վերոյասացեալ
„ վարդապետացն Նիկողայոսին և Պօղոսին ութն հազար
„ ռուբի, որ տրին հիգ հազարն, իմ տուեցեալն է, երկու
„ հազարն, օգնական եղեւ Պարոն Միքայէլ տէր Յովհան-
„ նեանն, հազար ռուբին Պարոն Յովհաննէս տէր Յակոբեանն,
„ որ եղեւ տացեալ բոլոր ութն հազար ռուբի տուին՝ շահի
„ վարի, մինչեւ ի Փուրթկալ Լիզբոն, հարիւրին քսան,
„ ի վերայ նաւուն, որ կոչի Սակրամէնթօ, որ յետ Աստու-
„ ծոյ անվնաս Լիզբոն հասանելէն տուաւ բանայ տալն, մօտ
„ տան հազար ռուբի, սկիզբն լինի ինոյն ժամու հաւանու-
„ թիւնն ձեր ի կատարումն թախանձանացն իմոց, թարգմա-
„ նութիւնն և տիպն՝ նօտր, որ է մեծ գրերով, որ Աստուծով
„ ի կատարումն առաջին հատորոյն ընդ հասանելոյն ինձ և
„ իմ գտանելոյս, խոստանամ տալ ձեզ յաւելի հինգ հազար
„ ռուբի, և թողեալ լինի բոլոր վճռաւի շահն, վասն օգնու-
„ թեան ի վանս ձեր. բայց գործ մի շնորհեալ լինի ինձ և մին
„ Պարոն Միքայէլին, մին Պարոն Յովհաննէսին։

„ Գիտեմ այսպէս, 1500 գործն այն, որ լինի գիրք
„ 24,000, փոքր յաւել կամ պակաս։ Տպագրութեան թուղթն,
„ կազմ, և այլն, և ծախն լինի 15,000 ռուբի առակ, որ այժմ
„ հաստատութեամբ ունէք, և ունելոց էք, ի վճառումն.
„ միայն կամիմ զի լինի 50 ռուբի, մին հատոր գործն, որ է
„ 16 գիրքն լինի 75,000 ռուբի, օգնութիւն մեծ գիտեմ լի-
„ նել ի վանդ. ուստի կարեւոր է բոլորն հրամայէք ոչ մոռա-
„ նալ ի վճառս, բայց անխափան կէցեն, հաստատ լինիմ և
„ անկասկած։

«Արդեաք կատարի սովաւ ցանկութիւնն, որ էր օգնու-
«թիւն գտանել ընդ մեզ, և ցանկութիւնն իմ որ էր՝ լոյս
«ածել ի բարբառս մեր զպատմութիւնն այն. ուստի գտա-
«նեմք մխիթարութիւն ի յերկուս կողմս։ Եւ յետ այնորիկ՝
«մինչ լինի կատարումն իմոյ փափաքին ընդ ձերոյ արդեամբն՝
«յոյս ունիմ, եթէ Տէրն կեանք պարգևեսցէ՝ զիս օգնական
«լինել, և միշտ հաւատարիմ առ ձեզ կենալս, ընդ ամենայն
«զորս ինձանէ գուցէ կարեւոր ոչ խնայեմ, անհոգս լերուք։

«Բայց եթէ, գուցէ, որ եւս գուք ոչ տայցէք հաւանու-
«թիւնն, ինոյն ժամու փութանակի թարգմանութիւնն, որ
«ձգէք ի ձիգ ժամանակն, զայն ոչ լինի ընդունելի ինձ,
«յայնժամ հրաման իմ է առ Հայր Նիկողայոսն, միայն
«առաքէ ի ձեզ ռուբի չորս հազարս 4000, երկուսն ի կողմա-
«նէ իմմէ, և երկուսն ի կողմանէ պարոն Միքայէլին, սակս
«վանքիդ ձրի օգնութիւն. յայնմ հետէ էլ ոչինչ չուզէք
«յինէն, և յումեքէն։

«Թէպէտ գիտաւորութիւնս իմ, այլ ինձ գտիմ լինել
«ընդ Գերյարգելեացդ որպէս ընտանի, որ զայս սահմանադ-
«րութիւնս ընդունելի եղեւ որ Հայր Նիկողայոսն լինի
«վարպետ որդւոցս իմոց, և գնալ և մնալ ընդ նոսա առ
«Լոնդոն. քանզի կամիմ զի որդիք իմ մնանել ի յուսում-
«նարան, և վարժել զլեզուս ինկլիզի, ընդ ապահովութեան
«Գերյարգելւոյն՝ լինիմ անհոգս, առ ի հաւատն և ի լեզուն
«մեր սեպհական։

«Վասն որոյ աղաչեմ զԳերյարգելեացդ զի լիցի ի կամս
«ձերոյ հաճոյ զյառաջադրութիւնս իմ, մանաւանդ, եթէ
«Տէրն կամիցի, և զարգացուցէ զորդիքն իմ, շնարհքն
«իւր, իմաստնացուցէ, լինի արդիւնք ձեր ի վերայ որդւոց
«իմոց, և նոքա ձեզ ճանաչեն որպէս Հայրք, ընդ որս դի-
«տեմ ի կարծիս իմ, ունենայք կենդանի զանձ և օգնական
«ի վանքիդ, քան զանուն և մեռեալ ժանկն, և արծաթ, որ
«կամիք ի մեզմէ օգնութիւն և այլն. բաւ է ձերում խոհեմու-
«թեան։

«Արդեաք պարծիմ գտանել զշնորհ ձեզէն, և լինիլ որ-

„ պէս ընտանի, թոյլ տուք Գերյարգելիքդ ինձ խօսել՝ փոքր
„ ինչ համարձակաբար, և չունիմ ինչ գաղտնի ի ձէնջ
„ ոչինչ։

„ Տարակուսելով յաւիմ բաժանմանն ձեր ի Վենետիկ վան-
„ քէն որ է աթոռ Գերագունեղի և մշտնջենաւոր յիշատակի
„ Արքայհօրն մեր Մխիթար հանճարեղ վարդապետին, և լու-
„ սաւորիչ դրոց և լեզուին մերոյ հայկազնեաց, ընդ որ բա-
„ զում կրօք և հեծութեամբ, Արդեամբ և Ջանիւք հաստա-
„ տեաց զվանքդ և եթող աշակերտք մխիթար լինելով, թէ
„ ահա՛ բուսանի յեռ իւրոյ բազում բարիք, վասն օգուտ
„ ազգիս իւր, և ոչ գիտէր հակադարձն լինելոյն ի փոքր ժա-
„ մանակի։

„ Ահ Գերագունեղ Հայր, որովհետեւ գիտեմ, որ ոչ է
„ հնարին յարուցումն առնուլ և դալ անձնաւորապէս միա-
„ բանել զաշակերտքն քոյ և սահմանադրել զբարի կարգա-
„ ւորութիւնն։ Այլ հաւատի լինիմ զոլ քեզ արժանաւո-
„ րեալ ի վերատին Անմահին տեսուն, ուրեմն միաբան լեր
„ ընդ մեզ աղաչելով առ երկնային թագաւորն և զբարեխօ-
„ սութիւնն Սուրբ Կուսի Մօրն, զի առաքեսցէ զհոգի խաղա-
„ ղութեան և միաբանութեան ընդ քոյինսն. Ամէն։

„ Աղաչեմ, առ Գերյարգելիքդ, ներեցէք զիս, բայց խոս-
„ տովանիմ, գրել ձեզ արտասուօք և դառնութեամբ, մտա-
„ ծելով զթշուառութիւնն Ազգիս, որ պատճառ մերոյ ողոր-
„ մելութեան, և ծառայութեան իմէջ ամենայն ազգաց,
„ ճանաչեմ անմիաբանութիւնն մեր, ուստի է պատիժ։

„ Ինչ և որ իցէ՝ յերես անկեալ՝ ձեզ աղաչեմ, Ջանացէք
„ խաղաղութիւն, և միաբանութիւն ընդ Արքայ հայր Սուրբ
„ փաննոսին, զուցէ տանել փոքր ինչ, ի յանսահման կառա-
„ վարութիւնն նորա փոյթ ոչ է, զի այր հաստակի է, և յեռ
„ նորա՝ յառաջ քան զընտրելն, այլ Արքահայր ժողով-
„ մամբ՝ տուք կարգաւորութիւն, և սահման կառավարու-
„ թեան, որ յայսմ օրինակ գտանէք ի պատմութիւնն եկեղե-
„ ցական բազումս, և կրկնեմ թողութիւն, վասն որոյ
„ եթէ ոչ լինէի ձեզ ճկամեանդ, ոչ ցաւէի, և ընդ նոյն ոչ

“ համարձակէի, որ ըստ յայսմ սարսափ, գրեալ եմ ի Վենե-
“ տիկ Հայր Սուքիասին, որ անիսափան ընթերցումն լինի առ
“ Աբրահամայրն, ընդ որ յուսով ակնկալեմ, կատարի ցան-
“ կութիւնն իմ, որ է միաբանութիւնն ձեր. Ամէն,

“ Ամուսինն իմ Տիկին Մարիամն և բոլոր ընտանեաք խո-
“ նարհութեամբ զՆՋս համբուրեն Գերյարգելեացդ՝ և աղաչեն
“ զօրհնութիւնն ձեր։ Ընդ որ ես ողջունեմ խոնարհութեամբ
“ ամենայն միաբանացդ և խնդրեմ միշտ ամենայն ժամ ընդ
“ իս կալնուլ որպէս բարեկամ, և հաւատարիմ տանն ձեր,
“ վասն որոյ միշտ յիշեցիք զիս ի սրբոյ Պատարագի և ի յա-
“ ղօթս ձեր, և ես հանապազ.

“ Անամ ՉԵՐՄԵՌԱՆԴ

“ Չերին Պատուականութեանն

“ Մադրաս. յամի Տեառն 1785.
“ Սեպտեմբերի 10երրորդէն.

“ Հնազանդ ծառայ

“ ՀԵԴՎԱՐԹ ՌԱՖԱՅԷԼ ՂԱՐԱՄԵՆՑ. ”

Պատճէն նամակի Օղայ Հեդվարդ Սաֆայէլի Ղարամեան առ Հ. Նիկողայոս վարդապետ Բռազայեան ի Լոնդրայ.

“ Վերապատուելի Տեառն տեառն Հայր Նիկողայոս Բռա-
“ զայեան վարդապետ Մխիթարեան։

“ Վերապատուելի Հայր.

“ Խոտորակին գրեալ էիր վասն որդւոցս թէ՝ զի եթէ ոչ
“ էիր ընդ նոսա մուտցեալ լինէին զլեզուն սեպհական.
“ անելիքայ գիտեմ զի թէ չէիր ընդ նոսա մուտցեալ էին

“ զայն. յայսմ մասին բարեպէս հանաչեմ զերախտիս քոյ և
“ շնորհակալ եմ զքէն զոր հանապազ յիշեմ և ոչ մոռա-
“ նամ երբէք ։

“ Դարձեալ խնդրեմ ի հայրութենէդ և ծանուցանեմ վն-
“ բասաւորութեանդ զռամկական առակս թէ ի կիսակա-
“ տար տան ոչ բնակին շինօղքն, այլ հողմն և անձրեւ տա-
“ պալեն զայն, և ընդունայն լինին վաստակք շինողացն և
“ ծախեալ գրամն, վասն որոյ աղաչեմ զհայրութիւնդ, զի
“ կատարելագործեսցես զկիսակատար տունն, և ապա զար-
“ դիս իմ ի ձեռս իմ յանձնեսցեն Արքեալ հայկական բա-
“ ռիւք և բարի վարուք ։

“ Յայնժամ յուսամ ի Տէր, զի զտցես զիս երախտագէտ
“ քան ցանկութեան քոյ, և մեծապէս շնորհակալ լինելով
“ զքէն. և ակն ունիմ ի վախճան բանիս յետ փոքր ինչ ժա-
“ մանակի տեսցես զերախտագիտութիւնն ։ Այժմ կոխեալ
“ կայ զքէն զի յանձնեսցես ինձ զորդիս իմ, որպէս և ցան-
“ կամ ես ։

“ Պարոն Ալիէմ Ռասն Գրեալ էր ինձ թէ փոխարկէ զոր-
“ դիս իմ ի դպրատուն մեծ, զի ուսցին ազատական իմաս-
“ տութիւնն. քանզի կամք իմ այս է, զի որչափ զանազան
“ գիտութիւնս բաղձան մանկունկս քան կարողութեան մտաց
“ իւրեանց և ցանկութեան իւրաքանչիւրոց և յոր գիտու-
“ թիւնն բաղձան և ձգտին միտք նոցա պարտիք թողուլ
“ նոցա հետեւել այնց գիտութեանց. վասն զի ոչ կամիմ
“ խնայել յինչս իմ վասն ուսման և իմաստութեանն նոցա,
“ յատկապէս Սիրելի որդին իմ Աղէքսանդր զորմէ ամենե-
“ քեանդ վկայէք թէ ունի կարողութիւն ուսանել զամենայն
“ զոր ինչ յառաջ արկցի նմա առ ի ուսանիլ ։

“ Տիրութիւն և ամօթ համարիմ ինձ եթէ խնայեցեմ յինչս
“ վասն յառաջանալոյ նորա, և մանաւանդ ի գրեալ տեսրա-
“ կիւղ. զի ամ ճանաչեմ զի որդիք իմ հնազանդ են և սիրեն
“ զքեզ. զիարդ կարես թողուլ զսուտ, զի ի թղթի քում բն-
“ թերցեալ իմ զոր գրես, թէ Պարոն Ալիէմ Ռասն ցանկայ
“ տանել զորդիս իմ օտար աշխարհ յետ երանելոյ նոցա

“ ի դպրատանէն։ Թէպէտ նա ինքն չէր ինձ գրեալ, այլ եթէ
“ պատահեցի որպէս և գրեալ էիր, ինդրեմ զի մի բաժա-
“ նեցիս ի նոցանէ յամենայն տեղիս և ի ճանապարհս, այլ
“ ընդ նոցա լիցիս մինչեւ ի վախճան յորում յանձնեցիս
“ ինձ զորդիս իմ։

“ Եւ ճանաչեմ Պարոն Ալիէմ Ռասն որպէս աղնիւ և կա-
“ տարեալ ուշիմ և խորագէտ, վասն որոյ խորհիմ թէ զամե-
“ նայն զոր ինչ կամի առնել վասն որդւոցս է բարութիւնն և
“ և հաւատարիմ բարեկամութիւնն ընդ իս առանց ունելոյ
“ ակնկալութիւն ինչ յինէն, որպէս և բարւոք գիտես, զի
“ այրն այն չունի կարօտութիւն յինէն։

“ Որովհետեւ Վ. Հ. աս օտարական գոլով Ֆանայ և վաս-
“ տակի վասն որդւոց իմոց, ուրշափ եւս առաւել Հայրու-
“ թիւնդ պարտիս Ֆանալ ընեելովդ ի մեր աղնեայ և ուխտեալ
“ լինիլ հայր մանկանց, եւս առաւել զի մանկունքն սիրելի
“ են քեզ, կամիմ ասել թէ են իրրեւ զաստուածային որդիս,
“ զիարդ թողուլ կամիս զսոսա և մնասանդ ի հասակի ալէ-
“ կածութեանն ի բաց թողուլ զքեզ նոսին։

“ Այս ինչ գիտեմ, զի եթէ ես ապերախտ գոլով գրեալ
“ լինէի քեզ թէ թողցես և եկցես անտի, կարծեմ թէ ոչ հա-
“ ւանէիր գրածիս և ոչ թողուիր զմանկունս, բայց եթէ թո-
“ ղուիր զնոսա պարտաւոր լինէիր առաջի Աստուծոյ և
“ ուխտի քոյ, որպէս և գրեալ է՝ թէ եթող զՅն հանապա-
“ տի և գնաց զհետ կորուսելոյն։ Վասն որոյ աղաչեմ
“ զվերապատուութիւնդ որպէս և հաւատացեալ եմ քեզ զի
“ կացցես մնացես ընդ նոսա և խնամեացես զնոսա իրրեւ
“ զբիր ակն մինչեւ ոտցես ի ձեռս իմ, քանզի շատն գնաց
“ և քիչն մնաց։

“ Եւ յուսայի թէ յայսմ ամի գալոց էի ի Ամասիոյ, բայց
“ անյաջողութիւնն արգել եւ ինձ վասն առեւտրոյ Մանի-
“ լու։ . . . Բայց յուսամ ամենաբարին Աստուած զի առաջ-
“ նորդեացէ և աջողեացէ զգալն իմ այդր ի գալ տարւոջ կամ
“ թէ յայսմ ամի, վասն զի տաղտկացեալ եմ յաշխարհէն
“ Հնդկաց, զի ոչ հաւատ ոչ յոյս և ոչ սէր գտանի, և մա-

«Նաւանդ յազգի մերում։ Պարտիս հաւատ գրելոցս, զի
«ասա ոչ եմ ծնալոց, և ահա յայսմ ամի տեսանելոց ես
«զպատուական և զսիրելի կրտաւր գուստրն իմ զԱնեայ
«Մարիամ, որ յետ փոքր աւուրց եկանելոց է ասել։ . . .

«Գիտեմ Վ. զի ասես, ոչ էր բաւական երկուան յաւել
«ի վերայ միւս եւս, և ձանձրանաս յինէն. այո Վ. եթէ լի-
«նէիր ի տեղի իմում դու եւս առնէիր որպէս, և ոչ ամբաս-
«տանէիր զիս, և հակադարձն գոսէիր. վերջապէս Վ. ոչ
«կարես զերծուցանել անձն քոյ յինէն, զի գիտեմ ի սկզբա-
«նէ թէ հոգիք Բուզայեան և Ղարամեան շաղկապեալ են և
«ոչ բաժանին մինչեւ ի մահ, բաւ է գիտութեանդ։

«Բարեաւք գիտեմ զի ասես ինձ թէ Հեղմարդ, որովհետեւ
«անբաժան եմք Ղարամեանք և Բուզայեանքս, վասն էր
«ոչ քաղցրացուցանես և մխիթարես զիս ըստ ցանկութեան
«սրտի իմոյ, որ այս էր երկրորդ բնաբան գրեցելոյդ ի տետ-
«բակիդ, թէ ասացեմ գրան վասն Հաստատելոյ զպրա-
«տան մանկանց ի Թրեստ, և այսու նոքա ապառնացին
«ի պարտուց և լինիցի հաստատութիւն վանացն Թրեստու։

«Բարեաւք ասես, և ես պատասխանեմ. զինչ է որ խնդրե-
«ցեր յինէն վասն անձին քոյ և ես խնայեցի. ոչ ինչ, այլ
«յօժար սրտիւ որպէս ընտանի ճանաչելոյս առատաձեռնեալ
«եմ հայրութեանդ, և առատաձեռնելոց եմ, այլ վասն
«Թրեստեանցն չունիս պատճառ ինչ ամբաստանելոյ զիս,
«զի իրաւապէս էր ի սրտի իմում յառաջացուցանել ըստ
«կարեաց իմոց զվանս Թրեստու որպէս և քաջ գիտես, զի
«թուեցի ի ձեռս քոյ ուսիս ութ հազար, և խառացայ
«ասել եւս յաւելի հինգ հազար, զի թարգմանեցին և
«ապեցին զպատմութիւն Հռոմայեցւոց, և թողի զվաճառ
«գրեանց վասն օգնութեան նոցա. ուր է զիրքն, վասն զի
«ահա չորք ամք անցին յորս լուր ինչ ոչ ունիմ զոյնմանէ։

«Կամիմ հարցանել Վ. երանելոյդ թէ զի՞նչ առնեն
«Թրեստեանքն. եթէ ինքեանք վանական գոլով փոխին
«ի վաստակոց առ ի թարգմանել զգիրս որ է դրած նոցա,
«զիա՞րդ հրաւիրես զիս ասել նոցա եւեւս գրամ, զի բազում

“ քրոտամբ և վատատեղք գտեալ եմ, և վասն ոյր վտխճանի
“ տացից։

“ Զգիտեմ եթէ Թրեատեանքն ճանաչեն զիս իրրեւ զմի
“ ի յոգդէ Հայոց որք տան բաղում ինչս Էջմիածնայ և Երու-
“ սաղեմայ, և ոչ զայլ ինչ գտանեն բայց միայն Աստուած
“ զքեզ օրհնէ, որք սխալին, զի չեմ իրրեւ զնոսա, այլ ճա-
“ նաչեմ, զի գործք իմ օրհնելոց են զիս. վասն զի եթէ գ-
“ գրա ի փոքուն չեղեն հաւատարիմ, և ոչ հաստատին բաղձա-
“ նաց իմոց, զիւրդ հրաւիրեա զիս տալ գոցա այլ եւս փող
“ վասն գպրատուն չինելոյ։

“ Զիւրդ զի զայդ գրես զայսպիսիս, զի այս եւս այնպէս
“ լինիցիւր ի յոգս, որպէս ապաստրութիւնն գրոց Հռոմա-
“ յեցւոց, որում ծաղր եղէ ազգին իմում և միշտ ասին թէ
“ վարդապետներն Հեղվարթին փողն լաւ կերան. բայց ոչքա
“ որպէս ռամիկք, և նոքա որպէս իմաստունք սխալին, սա-
“ կայն պահանջեցից զփողն իմ ի ժամանակի իւրում,
“ բաւ է։

“ Ի կողմանէ յայսմանէ տրտնջեմ զքէն Հ. Նիկողայոս.
“ զի պարտ էր քեզ զքոյայինն օտար համարել և ոչ տալ
“ նոցա զփողն, զի այնու փողով զմին յեղբարց քոց կարէիր
“ բերել առ քեզ այդր թարգմանել և տալ, որպէս Հուզայե-
“ ցին այն որ այդր տպագրեալ է զգրեանն. եթէ զայդ արա-
“ րեալ էիր, մեծապէս մխիթարէիր զիս և լցուցանէիր զվա-
“ զեմի բաղձանս իմ. դարձեալ Վերապատուութիւնդ խոս-
“ տացար ինձ թէ զմի հատորն ի դրոցն թարգմանելոց եմ. և
“ զայդ եւս ոչ արարիր։

“ Դարձեալ այժմ բան մեր առ Կոստանդնուպօլսեցիսն է.
“ մի թէ ոչ խոստացայ նոցա տալ յիսուն հազար ռուբիս
“ կամ որչափ և իցէ կէս գնոցն երկրին զոր գնեցին ի Կայ-
“ սերէն լինիլ տէր կէս գնոցն և թողուլ նոցա ցամն հինգ
“ զրոլոր եկամուտն երկրին. զի կամք իմ չէր դաղտնի ի նո-
“ ցանէ և ի քէն, զի յետ հնգից ամաց թէ՛ ես և թէ՛ որդիք
“ իմ, եթէ ոչ ունէաք կարողութիւն ինչ անտի եւեւս հինգ
“ ամս շնորհէաք նոցա զեկամուտն և կամ հնգետասան ամս,

«եթէ աջողութեան գտնալ լինէի ի Տեառնէ, այլ ոչ հաճեցան
«գրեցելոց իմոց. բայց կամէին տալ հարիւր հազար Ռուբիս
«և ոչ ունել իրաւունս ի վերայ երկրին. որպիսի՞ խնդիր էր
«նոցա զոր ոչ գիտեմ, և զիա՞րդ կարէի առնել զայդ ընդդէմ
«արդարութեանն։

«Վերջապէս այժմ թողի զամենայն համարումս որ ընդ
«նոսա, այլ յիշելով զդրեալդ ի տետրակի վասն շինութեան
«դպրատանն հաւատիս ճանաչեմ որ գրեալդ արդար է և
«դրած մեծ ունիլ դպրատուն մանկանց ազգի մերոյ։ Ես
«ի վաղուց հետէ ունելով դիտաւորութիւն առնելոյ բարիս
«ազգին իմում ըստ կարեաց իմոց, և այժմ յորդորեալ գո-
«յով ի քէն լինելով դառնալոյ արդեաց իմոց, կամիմ զի
«միխիթարութիւն մեզ երկոցունցս լինիցի զի լիցիս պատճառ
«սկսանեն։

«Խորհուրդ իմ այս է և ունիմ իմոմ առնել զայս ինչ,
«այսինքն դնել յիսուն հազար ռուբի ի ձէնքի միում Ինկըլ-
«թէռայ, Հոլանդայ, կամ ուր և իցէ խորհրդոմդ և Տէր
«յաջողեսցէ, զի եկամուտ յիսուն հազարից որչափ և իցէ,
«որով կամիմ շինել փոքրիկ դպրատուն մի և լիցիս գո-
«դպրապետ կամ Ռէքթօր ի դպրատան յայնմիկ և ունիցիս
«զմի յեղբարց քոց ընդ քեզ, և որչափ բաւեսցէ այնու շա-
«հումն ազգայոց զայնքան աշակերտս ունիցիս ազգէ հայոց
«միջակօրէն կացուցեալքդ և ոչ որպէս զառաջ ազնուական-
«նաց, զի ուսցին հայերէն, լատիներէն և զլեզու տեղւոյն
«յորում է դպրատունն։ Այժմ այսպէս յառաջադրութիւնս
«իմ և յուսամ զի կատարեսցի ի ժամանակի քոյ զայս և եթ
«գիտասցիր Վ. Հ.։

«Գրեալ եմ բարեկամ պարոն Ռէյլէմ Գասին՝ զի տարե-
«կան ծախն Վերապատուելոյդ ոչ խնայեսցէ տալ բաւա-
«կանապէս մինչև գալուստն իմ։

«Զայս եւս ծանիր զի յառաջ քան զկնքել թղթոյս,
«լսեր առի ի Մանիլու ուր մեծապէս փնտռելոց է առեւտուր
«մեր, սակայն մի՛ երկրայիր, թէ ի խոստմանց իմոց զոր
«խոստացայ ի թղթիս յետս գալոց եմ. զոր ինչ յառաջադ-

“ բնալ եմ եթէ Տէր կամեցի և կենդանի մնայից կատարե-
“ լոյ եմ ։

“ Վարիամ Տիկին իմ և Անենայ դուստրն իմ ընդ սիրելի
“ փոքրիկ Լուսնա որդւոյս Առաջամ առողջ են, և համբուրեալ
“ սրբագործեալ ամ քոյ, և նոա Վ. Հ. Գօրոն սիրով ողջոյն
“ մատուցանէ, հայրաբարեանդ ։

“ Ողջ կեր յամայր ամն ։

“ Եմ և մնամ միշտ

“ Ի Մադրաս, յամին 1789. ի 1 փետրվարի ։

“ Ի. ծառայ

“ ՀԵՂՎԱՐԹ ՌԱՖԱՅԷԼ ՂԱՐԱՄԵՆՑ ։ ”

*Գաւառն թղթոյ Աղայ Հեղվարթ Ռաֆայելի առ Հ. Նիկողա-
յոս Բուզպեան ի Լոնդոն.*

“ Վերապատուելի խոհեմաբարդ Հ. Նիկողայոս Բուզպեան
“ վարդապետ Մխիթարեան ։

“ Ոչ ըստ սովորութեանն գրեմ քեզ Վերապատուելի
“ ի հասանել գրերոցդ առ իս գրեալդ ի սկիզբն յունվարի յա-
“ ռաջիկայ թուիս զարձակն և զեռաչաձեւն ուրախ արար զիս,
“ այլ յետ ի տարակուսանս մի և միւս կերպիւ մտածելոց և
“ թարգմանելոցս մինչեւ յառաջագրեցի լուծմունք գտանել
“ ակամաւս, այլ որպէս քաջ գիտես զի տրամութիւնն ոչ
“ գոյ միայնակ, այլ հետեւականաք, կամեցաւ ամենաբարի
“ Տէրն գալ տեսութիւն ի տուն իմ և վերացուցանել սիրելի
“ և պատուական ամուսին իմ Վարիամ Տիկին ի անցեալ
“ օգոստոսի 13ին. ընդ ում տուողի կենաց փառս մատուցա-
“ նեմք և հնազանդիմք երկնային վճռոյն ։

“ Միայն այս մխիթարէ մեզ որ եմք ի քառասնեայ օր
“ ազմանց, զի գոտաւ մահ բարի ամենայն պատրաստութեամբ
“ և Ջերմեռանդ հնազանդութեամբ ի կամաց Տեառն առն-
“ դեաց հոգի իւր ի ձեռն առողին. և եմք յուսացեալ թէ
“ հանդչեալ ի կեանս յաւիտենական ի ուրախ դասուցն։

“ Ներկայ յանձն առնեմ քեզ Վերապատուելի, որդիք նո-
“ նորա զի որով կերպիւ հարկ է իմացանել և մխիթարել նո-
“ ցա։ Փոխեմ զի կոծ բազում առնեն, այլ ոչ օգնեն մեր
“ իւրեանց, բայց եթէ աղօթիւք և պատարագաւ ընդ որ
“ հարկն է հրամայեա առնել։ . . .

“ Առանց ոչինչ երկրայութեան տեսանես զիս ի գալու
“ մայիսի յունիսի ամսոյն, զի հաստատ գրեալ եմ Բանկալայ
“ տեղ առնուլ ի մի նաւից Կումպանուն որ գիպող են
“ ի Մադրաս գալոյ յառաջիկայ յունվար ամսոյն, ընդ որում
“ ճանապարհորդեմ առ ձեզ անխափան եթէ Տէր կամեցի
“ փոքրիկ Լուիզոնն։ Աղաչեմ աղօթեա վասն հոգւոյն մերոյ
“ հանգուցելոյն, և անվնաս նաւահանգիստ մեզ, բաւ է։

“ Այսպէս գիտեմ Աստուծով թէ Վերապատուելի Հայր
“ Պօղոս մինչեւ այժմ անփորձ հասած լինի Օգէնդ, ի գրի
“ քում մատուցանես ողջոյն մեր, և Աննէ որ գրի Վ. . . . .

“ Բազում ունիմ ասելոց լսելոց և խորհրդակցելոց ընդ քեզ
“ Վերապատուելի, վասն որոյ աղօթեաց ի Տէր զի տայցէ մեզ
“ ժամանակ և կեանք և ուրախ գիպուած ի միմեանց, յուսամ
“ ի Տէր զի մխիթար առնէ սիրտ երկոցքիս, յաւել յոյսանէ
“ մեամ պատրաստական և Ջերմեռանդ. ի Մադրաս, սեպ-
“ տեմբերի երրորդ, յամի 1790։

“ Վերապատուելի, Յուսամ միոյին գաղափարն ի ձեռն
“ Վերապատուելոյդ հասեալ լինի, ներկայ չունիմ ինչ գրե-
“ լոյ, բայց ուրախ լինիս, զի տեսանես զիս փութով ընդ ձեզ
“ եթէ Տէր կամեցի, որ հաստատեալ եմ երանել ի . . . նաւն
“ որ ի 15 փետրվարի անխափան երանելոց է։ Աղաչեմ ամե-
“ նաբարի Աստուած առաջնորդէ հանապարհ բարի և խաղա-
“ ղութեան։

“ Այլ եւս մին լուր ասամ Վ. որպէս ընդ մեզ ընտանի, զի

„ երէց գուսար իմ Անանն Բարերարն աստՁնորդից պատկիլ
„ ընդ Պարոն Սամուէլ Մկրտիչ Մուրատեանն, յուսամ
„ ամենաբարի Աստուած զի բարի և անխոչնդոտելի լինի։
„ Թողում ինձ տեղակալ յիշեալ Պարոն Սամուէլն, որ
„ աներկայութեան իմ Պարոն գրէ և կատարէ կամՁ իմ առ
„ Վ. ընդ ում ճանաչես զիս կենդանի, եթէ Տէր բառնայ զիս
„ աշխարհէս։ . . .

„ Մնամ

„ Վերապատուութեանդ

„ Մադրաս. յունվարի 29. 1791.

„ Պատրատուկան մտերիմ ոգաստուր

„ ՀԵԳՎԱՐԹ ՌԱՖԱՅԷԼ ՂԱՐԱՄԵՆՑ.“

Պատճէն հրիտակի դպրոցին թողեալ կտակաւ յԱղայ Հեղվարդ Ռաֆայէլ Ղարամեան.

„ Ի բերդն սուրբ Գէորգայ. 31 դեկտեմբեր. 1789.

„ Կարգադրութիւն և միաք գլխոյ գումարի ողորմութեան,
„ որ այժմ գտանի ի հաշուագիրս իմ. (7310 հուն) (65,000 ֆ.)
„ և որ պարտի անայլայլաբար ի գործ դնել ի ժառանգաց
„ իմոց կամ ի Կտակակատարաց, սովին յեռագոյ եղանա-
„ կաւ և կերպիւ։

„ Որ ինչ գումար միանգամ գտանի ի գլուխ անդ գրամոցն
„ առնելեաց գիցի ի գանձատան Ֆօմիխանիայի, առեալ ինմա-
„ նէ մուրհակ պարտաւորութեան հատուցման շահուն, և
„ այս շահ յատկացուցի վասն թարգմանութեան ի հայ բար-
„ բառ. Հռովմէական պատմութեան ի 16 հատորս որ յութ
„ ծալս, նաև և Հնախօսութեան ի 13 հատորս որ յութ ծալս,
„ Էրկոցունց գործոց Պարոն Ռօլլէնի։

„ Արդէն վասն այսր վախճանի առաքեալ եմ յամին 1785
„ ի վանս Հայոց կրօնաւորաց ի Թրեատ, ընդ գործադրու-
„ թեամբ Վ. Հ. Նիկողայոսի Բուզայեան ութ հազար ռուբի,
„ զորոյ արդիւնս ցարդ ոչ տեսի։ Վասն որոյ բովանդակ
„ շահն յառաջ եկեալ ի գումարէ ասացեալ գլխոյն տացի
„ վասն նոյն վախճանի, մինչեւ ցկատարումն վերոյասացեալ
„ երկոցունց գործոց։

„ Եւ յետ այնորիկ ասացեալ շահն դարձուցի և մերձե-
„ ցուցի ի գլուխ դրամոց դպրատան միոյ վասն աղքատանն
„ կանց Հայոց այնչափ թուով որչափ բաւական լիցի այնու
„ եկամտիւ շահուն զի մանկունք և վարժապետք նոցին կարի-
„ ցեն կեալ վայելչապէս։ Եւ այս են իմ կամք, զի Վերա-
„ պատուելի Հայր Նիկողայոս Բուզայեան կարգեցի ուղղիչ
„ և գործադիր վերոյասացեալ երկոցունց գործոց դպրա-
„ տանն զամենայն ժամանակս կենաց իւրոց, և տացի նմա
„ իշխանութիւն կարգելոյ զյաջորդ իւր, առնել և կատարել
„ զասացեալ կարգադրութիւն իմ։

„ Վկայեն ձեռքն իմ ի վերոյգրեալ առթն և ի տարին։

„ ՀԵԴՎԱՐԹ ՌԱՖԱՅԷԼ ՂԱՐԱՄԵԱՆՑ. „

Ըստ պայմանացն կատարէ Հ. Պօղոս Վ. Մեհերեան զպարտս պաշտաման իւրոյ ի Մադրաս հանդերձ նեղութեամբ և ունձկութեամբ, նեղեալ նորա յոյժ ի սատանիկ ազգէն, և ի ոչիս բարուց Հեզվարթ Ռաֆայէլի. և ատի այնչափ մինչեւ կարօտիլ մխիթարութեան այլուստ ի Պարոն Սամուէլ Մուրատէ, որ յամաց հետէ գնացեալ էր անդ ի խնդիր բախտի, և հանդիպի այնմ գործունէութեամբ իւրով, և որ խոստանայ նմա ասելով այսպէս. „ Զի եթէ յաջողեցէ ինձ Տէր ի գործս
„ իմ, նպաստս ես եղէց ազգին քոմում, և այն այնչափ՝ որչափ
„ ոչ լցէ ուրուք երբէք արարեալ նմա ցաւուրս իմ։ „

Եւ ահա պատճառ, վասն որոյ շարժի և նստանել զբարեբարութիւնն զայն մեծ ապա, և զայն յարդիւնս ածել՝ ինձ յետնոյս ահմանի ի վերուստ, հանդերձ վշտաք և տառապա-

նաքև վտարանդիւք յապաշնորհաց իրրեւ ի վարձս վաստակոց արդեաք ։ . . .

Իրրեւ կամի Հ. Պօղոս Մեհերեան դառնալ յԵւրոպայ խընդրէ յԱղայ Հեդվարթ Ռաֆայէլէ հոգալ զկարեւոր պէտս ճանապարհի իւրոյ ։ Վարձէ նա վասն նորա Հոլանտացի նաւ մի, և ծանուցանէ նմա զայն այսպէս. “Ահա վարձեցի վասն քո “նաւ և վարձ նորին հազար ռուբի, զոր պարտիս հատու- “ցանել ինձ պատարագք լսոյ դիտաւորութեանս իմում ։ ”

Լուեալ զայն Հ. Պօղոսի ասէ. “Վա՛յ ինձ յետ այսչափ “ամաց աշխատութեանս ոչ եղէ արժանի ծախուց ճանա- “պարհի իմոյ. եթէ պատահեցէ ինձ մահ ի ծովու, հոգիս “պարտապա՛ն մնացէ քեզ ։ ”

Ասէ ցնա Ադա Հեդվարթ. “Ոչ՝ յայնժամ ազատ լիցիս “դու ի հատուցմանէ անտի ։ ”

Ահա այսպիսի հանգամանաք մեկնի Հ. Պօղոս Մեհերեան ի Մատրասէ, ի 1790 ամի, յետ հինգամեայ նեղութեան և անձկութեան իւրոյ անդ ։

Զամիս իրրեւ երկու նաւարկեալ Հ. Պօղոսի հասանէ ի հրուանդան Բարեյուսոյ և ի մուտս այնր հարկանի նաւ զքարի և խորտակի. ի լուզ անցեալ նորա ելանէ ի ցամաք, և անտի այլ նաւաւ գնայ ի Հոլանտայ, և գրէ թուղթ առ Հայր Նիկողայոս Բուզայեան ի Լոնտոն, ծանուցանելով զվիճակ իւր և զկամս գնալոյ առ նա ի Լոնտոն ։

Առնէ պատասխանի Հ. Նիկողայոս թղթոյ Հ. Պօղոսի ի Հոլանտայ, տալով նմա խորհուրդ գնալ անտի ուղղակի ի Վենետիկ ի վանս սրբոյն Ղազարու և խնդրել թոյլութիւն յԱբրայէն ընդ սխալանս իւր իրրեւ զզատրեալ ի միաբանից Թրեատու. զնոյն և ինքն ունէր առնել յետ քանի մի ամաց. զի խնայեալ նորա զանխոհեմ գնացս Թրեատու միաբանութեան՝ տարակուսի ընդ հաստատութիւն նորին ։

Անտացեալ Հ. Պօղոսի խորհրդոյ նորա՝ գնայ անտի ի Վենետիկ ի վանս և խնդրեալ թոյլութիւն յԱբրայէն, հանդիպի այնմ և առաքի յարդոյչ ի Կարին ։

Խմացեալ Հեղվարդ Ռաֆայէլի թէ կրտսեր զուտոր էր զոր առաքեալ էր ի Լոնդոն յուսումն, յարի յոյժ յաղանդն Անգղիացւոց եկեղեցւոյ, ասելի յոյժ ի խղճէ մտաց, և խորհի գնալ ի Լոնդոն հանել զնա ի դպրոցէ անտի և գնել ի դպրոց ազգաբնակ տղէկանց։

Մինչդեռ յայսմ խորհրդի լինի՝ վախճանի կին նորա Մարիամ. յայնժամ փութայ նա ամուսնացուցանել զերէց զուտոր իւր և երանել ի ճանապարհ գնալ ի Լոնդոն։

Փեսայացուցանէ նա զՍամուէլ Մկրտիչ Տուրան ի զուտոր իւր Աննայ։

Յետ այնորիկ առնէ զկտակիւր, և կարդէ կտակատարս անձին նոցա, երկու Անգղիացի, և երկու Հայ, զՄիքայէլ Տէր Յովհաննեան, և զՍամուէլ Տուրան, զփեսայ իւր, զոր և տեղակալ իւր թողու, յանձնելով ի ձեռս նորա զտուն և զամենայն ստացուածս իւր։

Իբրեւ զամենայն ինչ ի կարգի դնէ, երանէ՝ ի ճանապարհ գնալ յԵւրոպայ ի Լոնդոն, հանդերձ կրտսեր որդւով իւրով Լուիզիւ, և Հնդիկ սպասաւորաւ միով, յամսեան փետրվարի 1791 ամի։

Նաւարկեալ զամիս իբրեւ երկուս և հասեալ ի հրուանդան Բարեյուսոյ հիւսիսադանայ, ասկս Ոչտութեան և փառաբերութեան միանգամայն. քանզի ի նաւի անդ ի մէջ ճանապարհորդաց գտանի կին մի ծննդական, որոյ սենեակ լինի ինքնայարկ նաւին։ Խնդրէ նաւապետն ի Հեղվարթ Ռաֆայէլէ փոխանակել զսենեակ իւր ընդ սենեկի ծննդական կնոջն այնորիկ, կարօտելով նորա օգտաւոր սենեկի որ ի վերնայարկ նաւին։ Ոչ կամի ընդ այն Հեղվարթ Ռաֆայէլ, ասելով թէ վարձ սենեկի իւրոյ առաւել էր քան զնորայն։

Ասէ ցնա նաւապետ, եթէ, հատուցի նմա առաւելն այն վարձ։

Յայնժամ հաւանի Հեղվարթ Ռաֆայէլ, և փոխանակէ զսենեակ իւր։

Յայնմ հետէ արհամարհեալ լինի նա ի նաւապետէն, չամ-

պելով նորա եւս ընդ նմա գլխի ի սեղանի անդ, որ նախատինք մեծ են առ Անգղիացիս։

Ընդ այն նախատինս չկարացեալ նորա տանել՝ հիւանդացեալ ի տխրութենէ անտի, և մեռանի իսկ աւուրբ միով յառաջ քան զժամանել ի Նաւահանգիստ Լոնտոնի։ Արհամարհութիւն նաւապետին առ նա այնչափ լինի՝ մինչեւ չկամի նա պահել զմարմին նորա ի նաւի անդ օր մի, առ ի հանել զայն ի ցամաք և ի տալ հողոյ, այլ արկանէ զայն իսկոյն ի ծով ի կեր ձկանց։

Ահա արդարք ոչուութեան և փառասիրութեան միանգամայն։ . . .

Զանգռանելի կիրս Հեղվարթայ ռաֆայէլի որ ի զէպս յայս, և յայլ բազում զէպս պատմեցին ինձ ընտանիք և որդիք իսկ նորա ի Մատրաս և ի Լոնտոն, հանդերձ ցաւօք սրտի։ Եւ այսոքիկ կրից սեպհական ժառանգ լինի երէց որդի նորա Աղեքսանդր Ռաֆայէլ, զոր բազում անգամ յանդիմանեն եղբարք նորա, ասելով ցնա այսպէս. «Արդարեւ փառասէր «և կծծի բարուքդ նման ես յոյժ հօր մերում։» Որոց առնէր նա պատասխանի պարծանօք ինն. «Այո՝ հարազատ որ- «դի եմ ես հօր իմոյ։» Եւ զայս բանս նոցա առ միմեանս ականջօք իմովք լուայ ես ի նոցանէ միանգամ և երկիցս։

Առ տեղեաւս յիշատակութիւն և քննութիւն իմ ընդ այս՝ են ի զգուշութիւն ընթերցողաց պատմութեանս, զի մի՛ իբրեւ զապերախտս զքս բամբասիցեն, բարեբարին միաբանութեան կծծի անուն տալով իմ ուրեք յընթացս պատմութեանս, այլ գիտացեն զատացեալն եղբարց նորա յիշատակեալ եմ ես անդ, իսկ զփառասիրութիւն և զբարեբարութիւն նորա յիշատակեցից և քննեցից յայլ ուրեք։

Լուեալ զայն ողէտալի մահ որդւոց նորա և Հ. Նիկողայոսի Բուզայեան ի Լոնտոն, լան և ի սուգ լինին ամենեքեան։ Նոյնպէս և զուսար նորա և փեսայն ի Մատրաս, որ և գրէ թուղթս առ ժառանգս հանգուցելոյն, առաքելով նոցա գօրինակ կտակի նորա, և հրաւիրելով զնոսա ի Մատրաս ի ժա-

ռանգել զհայրենի ստացուածս իւրեանց, և առ Հ. Նիկողայոս Բուզայեան առաքելով զօրինակ հրամանի դպրատանն, և հրաւիրելով զնա ի Մատրաս առ ի խարհել և ի գործ դնել զդպրոցն ազգաս մանկանց, ըստ զիտաւորութեան հանգուցեալ բարերարին, և խոստանալով յաւելուլ ի գումարն յայն զտասանորդն որ ի ժառանգութենէ կնոջ իւրոյ, առ ի փութով կատարումն տալ կամաց հանգուցելոյն։

Թէպէտ և յօժարին նոքա գնալ ի Մատրաս, սակայն կամի Հ. Նիկողայոս Բուզայեան նախ ի Վենետիկ գնալ, ապա ի Մատրաս. և այն, վասն երից պատճառաց. առաջին, ի հաստատել զանդամակցութիւն իւր ընդ միաբանութեան. երկրորդ՝ ի թարգմանել տալ զգործն Ոսկէնի, որ առաջին էր ի ցանկութիւնս բարերարին և ի պայմանս հաստատութեան դպրոցին. և երրորդ՝ ի փոխանցել զիրաւունս ուղղչութեան իւրոյ յԱրքայն միաբանութեան ի յաջորդս նորին. զի եթէ զէպ ինչ պատահէր նմա ի ճանապարհի Հնդկաց, մի լիցի ինչ խափան գործոյն։

Ահա վասն այսր երից պատճառաց գնայ ի Վենետիկ հանդերձ Ռաֆայէլեան պատանեաք, և մնայնի անդ զամենայն ինչ ըստ ցանկութեան իւրում և նախահայեաց տեսութեան, կալով ի Վենետիկ իրրեւ տարի մի, և այց առնելով Հռովմայ և այլ վանաց Իտալիոյ. ապա դառնայ ի Լոնդոն, զիտաւորութեամբ գնալոյ ի Մատրաս, ըստ հրաւիրանաց Սամուէլ Մուրատի։

Բայց ազգաբանդր Ռաֆայէլ ամ յամ ձգելով զայն՝ անցանեն ամք երկուտասան, և օրհաս մահու հասեալ Հայր Նիկողայոսի՝ խափանի երթ նոցա անդ, և յապաղի հաստատութիւն դպրոցին։

Փոխանակ հինգամեայ պարտուց խնամածութեան պաշտաման Հ. Նիկողայոսի՝ ի Լոնդոն, զամս քսան վարէ նա զայն անդ, սկսեալ ի 1785 ամէն մինչեւ ցամն 1805, յորում ամի վախճանի նա ի Լոնդոն, և թաղի յանկեան ինչ, ի պարտիզի ուրեք Հռովմէական Անդրիացւոյ . . . և փոխանակ օժանդակութեան ի սանից իւրոց առ կառուցումն դպրոցին, խափան

և արդելք անտի լինի, մանաւորաբար յԱղեքսանդր Ռաֆայէլէ, սակս փառասէր բարուց իւրոց, զոր յիշատակեցից ապա։

Թողից ասել զանմխիթար կենաց Հայր Նիկողայոսի, որ ի վերջին ամս ծերութեան իւրոյ ի պանդխտութեան անդ ի Լոնդոն. և այսմ պատճառ՝ անպատեհ գնացք Աղեքսանդր Ռաֆայէլի, ընդ որ գանգատի ամխիթար ծերունին, ասելով ցնա բազում անգամ. «Մի՛ այդպէս վարիր ընդ իս Աղեք-
«սանդր, զի ոչ բարի լիցի քեզ ընդ այդ։»

Ահա վարձք և հատուցումն քսանամեայ ջանից և աշխատութեան նորա որ ի գործ Ռաֆայէլեան դպրոցին, և ահա գուշակ և յայտարար մեծի ջանից և քառասնամեայ աշխատութեան յաջորդի նորին, որ ի գործ Մուրատեան վարժարանին, որոց հատուցումն ի տեառնէ ակնուսին նոքա։

Կացեալ Հ. Դաւթի զամս չորս ի Լոնդոն առ Պարոն Աղեքսանդր Ռաֆայէլի, և իբրև չկարացեալ այլ եւս կալ առնուրա անդ, հանէ ի նմանէ կամայ և ակամայ գումար ինչ արծաթոյ, և մեկնեալ անտի գնայ ի Պօլիս, և ծախէ զայն։

Առաքէ ապա Գեր. Արբայն և զայլ ոք ի միաբանից իւրոց զՀ. Յարութիւն Աւգերեան առ Պարոն Աղեքսանդր ի Լոնդոն, իբրև մխիթար նմա, գուշակելով զոհաճութիւն նորա որ ընդ գնացս Հ. Դաւթի Ճերմակեան, միանգամայն և յորդորիչ ածելոյ զնա ի վանս։

Կացեալ և Հ. Յարութենի Աւգերեան առ Պարոն Աղեքսանդր Ռաֆայէլի ի Լոնդոն զամս չորս, թէպէտ և նեղութեամբ, այլ համբերէ նա ակնկալութեամբ ածելոյ զնա ի վանս, և հասանէ այնմ. քանզի շարժի նա ի վախճանի գնալ ի վանս, և գնայ անդ ընդ Հ. Յարութենի Աւգերեան։

ՅԻՇԱՏԱԿ Գ.

Այսուհետեւ իբրեւ ակամաստեա և ակամեջալուր և գործա-նեայ ինախաշաւիղ պատմութեան։ Արդ՝ յամենան սեպտեմ-բերի ի 1816 ամի եկն եհաս ի վանս արբոյն Ղ. ազարու Պարոն Աղէքսանդր Ռաֆայէլ Ղարամեան։ Ընկալաւ զնա միաբա-նեան Միաբանութիւն իբրեւ զեղբայր իւր, և իբրեւ զորդի Բարերարին իւրոյ, հանդերձ ամենայնութեամբ բազում բա-նից հասարակաց, որում ճեայր յամաց հետէ։

Առաջին գործ նորա եղեւ ի վանս՝ հաստատումն որդիական և ամենայն պարտուց իւրոց. զի ետ նա միաբանութեան գու-մար ինչ արծաթոյ ի մշանջենաւոր պատարագս, վասն հոգ-ւոց ծնողաց իւրոց ըստ մարմնոյ և ըստ հոգւոյ միանգամայն, վասն հոգւոց Հայր Նիկողայոսի դասախօսակի իւրոյ, և Պա-ղոսի դասախօսակի քէրց իւրոց և կրտսեր եղբօրն, անվարձ ճեացելոյ ի հօրէ իւրմէ յաւելելոյ ի նմանէ։

Ահա բարերարութիւն նորա առ միաբանութիւն։ . . .

Երկրորդ՝ տպագրել ետ նա ծախիւք իւրովք զպատմու-թիւն Հռոմայեցւոց և զՇնախօսութիւն, զգործ Ռօլլինի, ի կատարումն կամաց հանգուցեալ հօր իւրոյ, Աղայ Հեղինարթ Ռաֆայէլի, որ ի կտակի իւրում թողեալ էր պայմանս զհրա-տակն զայն վասն աղքատ մանկանց ազգին, և զայն պայմա-նաս, դառնել զծախսն նոցին ապա յարծաթոյ հրատակին։

Թէպէտ և պատմութիւն Հռոմայեցւոց թարգմանեալ էր արդէն ի Հ. Վրդանիսէ Ասկերեան, բայց ոչ ի Գազղիացի բնագրէն, այլ Յիտալացի թարգմանութենէն, և զայն պարտ էր բաղդատել ընդ բնագրին։ Ոչ զի՝ զատ ի միաբանութենէն որ յանձն առնէր զաշխատութիւնն այն, բաց ի Հ. Մանուէլէ Զախչախեան, և յինէն։

Ընթեռնուի ետ զհայերէն թարգմանութիւնն, և բաղդատէր նա զայն ընդ բնագրին, յորում տեսանէր նա զանազանու-

թիւն կամ պակասութիւն ինչ, առէր ինձ նշան դնել անդ, յուղղել իւր զայն ապա։ Զաւուրս բազում պարապեցաք մեք ի ձանձրալի աշխատութիւնն յայն, և առաւել ևս Հայր Մանուէլ, թէպէտ և ուրեք ուրեք դժուարիմաց արար զիմաստս բանիցն։

Իսկ հնախօսութիւնն տակաւին չէր թարգմանեալ, և զոր կամէր նա տպագրել տալ միանգամայն։ Յորդորեցի և համոզեցի ևս զՀ. Արսէն Անթիմոսեան յանձն առնուլ զաշխատութիւնն զայն կարեւոր։ Թէպէտ և յանձն էառ նա զայն յօժարութեամբ և սկսաւ թարգմանել անտի քանի մի թերթ, զոր տեսեալ պարոն Աղեքսանդրի ուրախ եղեւ յոյժ, հանդերձ շնորհակալութեամբ առ իս. այլ ըստ բաղդին մերոյ, ուրախութիւնն ի տրտմութիւն, և շնորհակալութիւնն ի դժգոհութիւն փոխեցան ապա. քանզի գնայ Հ. Արսէն առ Պարոն Աղեքսանդր և յայտնէ նմա զչկամութիւն իւր ընդ աշխատութեանն այն։ Զարմացեալ Պարոն Աղեքսանդրի ընդ յեղյեղութիւն ընութեան նորա խառնի և տրտմի յոյժ. և պատմեաց ինձ զանկարծելի լուրն այն, հանդերձ տժգոհութեամբ ընդ ընտրութիւնն իմ այն։

Հանդարտեցուցի ես զխռովեալ միտս նորա, և յուսացուցի զնա գարման տանել այնմ։ Խօսեցայ ես անդէն ընդ Հայր Գաբրիէլի Աւէտիքեան, որ Աթոռակալ էր ի ժամանակին միանգամայն և վերակացու վարժարանացս, և խնդրեցի ինամել յանձնել զաշխատութիւնն զայն աշակերտաց իւրոց, Հիւրմիզեան հարազատաց, ծանօթացելոց ըստ բաւականին Գաղղիացւոյ բարբառոյ։

Հաւանեցաւ նա կատարել զինդիրն իմ, յանձնելով նոցա զաշխատութիւնն զայն։ Եւ նոքա, մանաւորապէս կրտսեր եղբայրն, Հ. Եդուարդ, երկայնամիտ բնաւորութեամբ և անխոնջ աշխատութեամբ իւրով սկսաւ թարգմանել և աւարտեաց զայն հանդերձ ընտիր հայկաբանութեամբ, և հարազատ թարգմանութեամբ, ի պատիւ և ի յանդիմանութիւն վարժապետին իւրոյ Հայր Արսէնի վարդապետի Բագրատունեաց։

Պատմութիւն Հռոմայեցւոց սկսաւ ի տիպ արձանանալ հանդիսիւ և ներբողինիւ, և խնճոյիւք ուրախութեան, թէ պէտ և ապա յաւելաւ և յայն առիթ ինչ տրտմութեան . . . քանզի Պարոն Աղեքսանդր Ռաֆայէլ ասաց միտրանութեան, թէ կամի ինքն առ ժամն ծախիւք իւրովք տպագրել տալ զմատեանն առ ի բառնալ զիսափսն կառուցման զգրոցին. քանզի ըստ պատուիրանի կուակին պարտ էր նախ զմատեանն տպել, ապա զդպրոցն կառուցանել։ Յորժամ կուարեցի պատուէրն տէր, արծաթ հրիտակին եկն ի Կոստանդնուպէլն, յայնժամ առնայր ինքն զարծաթ իւր անտի։

Այսպէս իմացեալ և հաստատեալ միտրանութեան տպագրեաց զմատեանն, և ըստ իրաւանց եդ ի ճակատ մատենից զանուն հանգուցեալ Բարերարին։

Տեսեալ զայն Պարոն Աղեքսանդրի՝ ասաց թէ պարտ էր զանուն իւր դնել անդ, տալով իւր զծախս տպագրութեան նոցին։ Ի յիշեցուցանել նմա միտրանութեան զպատուէր Կուակին և զիրաւունս Բարերարին, յայտնեաց նա յայնժամ զկամս իւր և զցանկութիւն, զբաժանել արծաթոյ հրիտակին ի մէջ ժառանգաց բարերարին, և ապա յաւելուլ ի բաժին իւր յայն և այլ գումար մի արծաթոյ և հատատել զդպրոցն յանուն իւր միայն։

Եւ ահա բնաւորութիւն փառասիրութեան նորա։ . . .

Ի ցուցանել միտրանութեանս զժուարութիւն ընդ այն, յամառեցաւ նա ի կամս իւր յայն, և այնչափ մինչեւ վճարէր առ ի նեմնել բարեկամութիւն ընդ միտրանութեան, եթէ չզիջանէր առ կամաց նորա։

Տեսեալ իմ զընդունայն և զվերատակար ընդդիմութիւն միտրանութեան, հաւանեցուցի զգլխաւորսն անտի զիջանել կամաց նորա. և յասել Հ. Մանուէլի թէ խարդախութիւն և անիրաւութիւն էին այն արարք Աղեքսանդրի, ասայի ցնա յայտնել հատարակաց զճշմարտութիւնն ճարտարութեամբ իմն յառաջարանի անդ մատենից, որպէս և արար նա զայն ապա։

Այսչափ ինչ տեղեկութիւն առեալ զհանգուցեալ Աղայ

Հեղվարթ Ռաֆայէլէ, իբրեւ զնախաակիզքն հիմնադրէ և զնախահօրէ դպրոցի աղքատ մանկանց ազգիս, շատ լիցի։

Տաց ապաքէն տեղեկութիւն և զհանգուցեալ ԱղաՍամուէլ Մկրտիչ Մուրատեանէ, իբրեւ զգերազանց հետեւողէ նախատպին այնորիկ, աներոջ խրատ, Աղայ Հեղվարթ Ռաֆայէլի, որ և լիցի տիրապէս սկիզբն պատմութեան վարժարանին։

Են են և այլ երեք յիշատակք անցեալ կենաց, որք լիցին յընթացս պատմութեան Մուրատեան՝ Ռաֆայէլեան, և Հայկազեան վարժարանաց, և որովք եօթն լինին յիշատակք անցեալ կենաց իմոց յամս եօթանասուն և եօթն։

ԿԱՏԱՐԵՑԱՆ

ՆԱԽԱՇԱՒԻՂ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՔՍ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՄՈՒՐԱՏԱԵՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՀԻՄՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

ԳԼՈՒԽ Ա.

Մագուրմի և ծնունդ Աղա Սամուէլի Մուրատեայ. — Երբ նորա ընդ հօրն ի Փերբուվարատին, և անտի ի Վենետիկ. — Ուղեւորելն ի Հնդիկս. — Փեսայանալ Աղա Եղուարդեայ, և կարգի ի նմանէ կտակակատար. — Թողբ նորա առ Հայր Նիկողայոս Բռազայեան. — Կտակն և փոխառելն յատուցս.

Բարեացապարտ հայրն որբոց և աղքատաց ազգիս և յաւէրժ յիշատակաց արժանին Աղա Սամուէլ Մկրտիչ Մուրատեան ծնաւ յԵդեսիա, որ է Թոդաթ, յամի Տեառն 1760։ Հայր նորա Աղա Մկրտիչ Սարուհ Մուրատեանց՝ բնիկ Շուռաթեցի էր ծննդեամբ, և մայրն Բէկզատէ տիկին՝ դուստր Միքայէլի Լազեանց Եդեսիացի։

Նախահայր ազգատոհմիս Մուրատ Աղամալեան կարգեալ էր ի Շահաբասայ արքայէն Պարսից վերակացու գաղթականութեան Հայոց վարելոց ի նմանէ յամին 1606 ի հինն Ջուղայէ

յԱսպահան, և Մէլիք անուամբ պատուեալ։ Սորա որդի էր Աղաճան, սորա Աղամալ, սորա Խաչիսիմոս (կամ Սարում), և սորա Մկրտիչ Սարում՝ Հայր մերոյն Սամուէլի։

Այն ինչ յարբունս հասանէր պատանին Սամուէլ, Հայր նորա չուեաց զնաց ընտանեաքն հանգերձ ի Կոստանդնուպոլիս՝ իբրեւ ի խնդիր գործոյ և վաճառաշահութեան։ Սակայն իբրեւ եռեսուեթէ ոչ լաւ իւրոցն ըղձից և ընդարձակութեան մտացն յաջողէ նմա անդանօր, եթող զընտանին ի մայրաքաղաքին Օսմանեանց, և առեալ զերկոսին որդիս իւր զԿարապետ և զՍամուէլ, էանց յաշխարհն Վաճառաց ի քաղաքն Փեթրոսվարատին, ուր էին ի ժամանակին քանի մի տունք Հայոց։

Անդ ծանօթացեալ ընդ հոգելից տուն Հ. Կարապետի Վարդապետի Մարտիրոսեան ի միաբանութենէ Մխիթարեան Հարց որ ի Վենետիկ, յանձն արար առ ժամն ի խնամս դաստիարակութեան նորա զորդիս իւր ի վարժս հայ քերականութեան։ Եւ ի հնգամեայ ժամանակի կալոյ պատանեացն անդանօր՝ այնչափ բարւոք յանձանձեալ խնամեցան նոքա ի պատուական առաջնորդէ անտի իւրեանց, զի յամենայն կեանս իւրեանց զոգութեամբ մեծաւ խօսէին զնմանէ։

Բայց հօր պատանեացն Պ. Մկրտչի Մուրատայ չդադարեալ և անդ յաջողութիւն բաղդի, խորհեցաւ գնալ ի Հնդիկս, ուր երթեալն էր երբեմն վաճառականութեամբ։ Եւ ընկալեալ ի Հ. Կարապետէ գիր յանձնարարական առ Գեր. Սուրբանոս Մելգոնեան Աբբայ վանաց սրբոյն Ղազարու, ուղեւորեցաւ յամին 1775 երկոքեանքն որդւովք իւրովք հանդերձ ի Վենետիկ։ Անդ գտեալ հիւրասէր ապանջակատութիւն՝ մտերմացաւ ընդ միաբանս վանացն։ Եւ յետ առուրց ինչ անց ի Թրեատ, և անտի յԱղեքսանդրիա և ի Հնդիկս. բայց հասեալ ի Սուրաթ հիւանդացաւ և վախճանեցաւ. և թաղեալ անդէն որդւոցն զհայրն՝ մտին ի նաւ և անցին ի Մասրատ առ բարեկամ հօրն իւրեանց Աղա Գրիգոր Շէհրիմեան։

Սորա ժողովեալ զերկոսին պատանիսն առ իւր, յետ սակաւ աւուրց առաքեաց զԿարապետ ի Կալկաթա առ վաճառա-

կան ումն ի ծանօթից իւրոց հանդերձ գրով յանձնարարութեան. իսկ զՍամուէլ առ իւր կալաւ ի վարժս վանականութեան. և նա իւրովն զգաստ և եռանդուն գործունէութեամբ ժրացեալ յառաջադէմ գոսա ի սակաւ ժամանակի։

Քանզի վանական մարգարտի երթեւեկեալ նորա ի Սինէացւոց աշխարհ՝ շահի բաւական արծաթ, իրրեւ քսան և հինգ հազար ռուբի, և այն ի սակաւ ինչ ժամանակի։

Տեսեալ Աղայ Եդուարդ Ռաֆայէլի զյառաջադիմութիւն Պարոն Սամուէլ Մուրատի ի վանականութեան նորա՝ վարկ մեծ կալնու զնմանէ, և զնէ ի մոր փեսայացուցանել զնա ի դուստր իւր Աննա։

Զնոյն խորհուրդ տայ նմա և Հ. Պօղոս Մեհերեան։

Ի ժամանակի մահուան կնոջ Աղա Եդվարդայ Ռաֆայէլի և որոշելոյ նորա զդուստր իւր ամուսնացուցանել և գնալ ի Լոնդոն՝ Պարոն Սամուէլ Մուրատ ի Սինէացւոց աշխարհ լինի։ Գրէ առ նա Աղա Եդուարդ Ռաֆայէլ և կոչէ զնա ի Մադրաս, և փեսայացուցանէ զնա ի դուստր իւր Աննա, այլ և կարգէ զնա իւր կատակատար միանգամայն և գործակալ ամենայն ընչից իւրոց, և ապա երանէ ի նաւ գնայ ի Լոնդոն։

Ի վախճանել Աղա Եդուարդայ Ռաֆայէլի ի Հանապարհի անդ, և ի լսել զայն Պարոն Սամուէլ Մուրատի, սկսանի սա այնուհետեւ գրել թուղթս առ Հ. Նիկողայոս Բուզայեան ի Լոնդոն, ապով նմա ծանօթութիւն զկատակէ հանգուցելոյն, և հրաւիրելով զնա ի Մադրաս, առ ի խորհել և ի գործ դնել զկամս հանգուցելոյն, զկառուցումն դպրոցին, և առ Պարոն Աղեքսանդր և առ Պարոն Յովհաննէս Ռաֆայէլեան ի լրումն ցանկութեան իւրում, ըստ հետեւեալ օրինակացդ։

*Պատճէնք թղթոց Աղայ Սաւռէլի Մոռրատայ առ Հ. Նիկողա-
յոս Վ. Բուզայեան.*

„ Գերյարգոյ Տեառն Հայր Նիկողայոսի Բուզայեան վար-
„ դապետի Մխիթարեան ի Լոնդոն ։

„ Ի Յունվարի 19 և ի 26ին զրեցի յարգութեանդ զամե-
„ նայն ինչ զորս կարի ի կարողութենէ մերմէ ։ Այժմ այս
„ ինչ կամիմ ծանուցանել յարգութեանդ, զի ողորմած հոգի
„ Աղայ Հեդվարթն խօսի ի ներ կուակին ի վերայ հաշուի
„ մոյ ողորմածութեան և յառաջադրութեան իւրոյ, զոր
„ գրեալ էր յառուկ թղթի առելով. „ Զոր ինչ ի յայսմ հաշ-
„ „ ուի գաւմարեալ գտանիցի՝ կամք իմ են զի դնիցի ի դան-
„ „ ձարանն Կաւմպանու, և տարեկան եկամուտն տացի
„ „ թարգմանել և տալ ի հայ բարբառ Հռոմէական պատ-
„ „ մութիւն 16 հատոր ին-օքթաւօ, և Հնոց պատմութիւն
„ „ 13 հատոր, ին-օքթաւօ՝ ի Պարոն Ռոլէնէ տրարե-
„ „ ցեալ ։ „ —

„ Որպէս (ասէ) միջնորդութեամբ վերապատուութեանդ,
„ յառաջագոյն տուեալ է վասն գործոյս 8000 ռուբի. այժմ
„ եւս միջնորդութեամբ յարգութեանդ, յետ աւարտելոյ գոր-
„ ծոյս, վերայիշեցեալ հաշուէն զոր ինչ քանակութեամբ
„ եկամուտ որ ելցէ՝ տացի վասն շինութեան կամ հատա-
„ տութեան դպրատան՝ միջնորդութեամբ և գործածութեամբ
„ յարգութեանդ, և դպրատունն լինիցի ի ներքոյ պաշտպա-
„ նութեան քո ի կենդանութեան քում, և յետ այնու կա-
„ րեւ նշանաւորել տիրէ.քթոր կամ գործածող կամ պաշտ-
„ պանիչ վասն դպրատան ։

„ Որպէս օրինակ գրեցելոյն եդի ի գրիս Անգլիական լեզ-
„ ու երկրայելով թէ մի լիցի խմացուած բանիս ոչ իցեմ *
„ գրեցեալ հայկական բանիւ կատարելապէս, որպէս զի հայ-
„ րութիւնն քոյ այդր առաւելապէս ծանիցես զիմացուած
„ նորա, վերջապէսորոյդ գրեցելոյ ողորմած հոգոյն ի հաշուի

“ անդ գտանին 7309 հուն 32 ֆանամ 27 կաշ զոր ի կատակա-
“ կատարացս ձեռնադրեցեալ հաստատեցաք պատուելի Կոս-
“ տումն ընդ ի վերայ բանիս յառաջադրութեանն գրոյն, որ
“ եղեւ իբրեւ մատն կտակի ողորմած հոգոյն։

“ Վասն որոյ, Վ. Հայր, յոյժ հարկաւոր տեսանեմ զգա-
“ լուստ յարգութեանդ. քանզի նախ գալստեամբ քով բարիս
“ առնես զաւակաց ողորմած հոգւոյն՝ բերելով զնոսա ընդ
“ քեզ. երկրորդ՝ վասն վերոյասացեալ գրամոցն կարգադրե-
“ լոյ սատ։ Քանզի եթէ այդր գնիցի Կումպանումն, միայն
“ 100ին 4 և կամ 5 եկամուտն լինի. և եթէ սատ, 100ին 9։

“ Եւ յետ սորա, որպէս յառաջագոյն գրեալ եմ յարգու-
“ թեանդ, այժմ եւս գրեմ. զոլով մի ի կոտակակատարաց և
“ մի ի ժառանգաց ողորմած հոգւոյն, ի կողմանէ իմմէ բար-
“ գել ի վերայ 7309 հունի տասանորդս ժառանգութեան
“ իմոյ, որ լինի իբրեւ 3000, կամ 3200 հուն, ժառանգու-
“ թիւնն իմ ի կողմանէ ամուսնոյս՝ զոլով 30, կամ 32,000 հուն.
“ ես խոստումս այս առնեմ վասն բարութեանն օրինաւոր եղ-
“ բարց և քեռ իմոյ, որպէս զի հայրութիւնն քո մի՛ հեռաս-
“ ցիս ինոցանէ։ Եւ երկրորդ, որպէս գրեցի հայրութեանդ
“ յառաջագոյն վասն կատարելոյ զկամս և զկարծիս օրինա-
“ ւոր հօր իմոյ, զոր ի ձեռն մահուան ոչ ժամանեաց
“ բաղձանացն։

“ Այսպէս ուրեմն ո՛րչափ պարտին օրինաւոր եղբարքն իմ,
“ նախ վասն կատարելոյ զկամս և զկարծիս ծնողաց իւրեանց.
“ և երկրորդ՝ վասն վարձատրելոյ յարգութեանդ զոր նոր
“ կայն միջոցաւ ապահով եղեր նոցա իբրեւ հայր։

“ Վասն օրինաւոր քեռ իմոյ և սիրելի Լուսին ոչ կարեմ
“ ասել, բայց վասն սիրելեաց իմոց Աղեքսանդրի և Յովհան-
“ նէսի ոչ երկրայիմ թէ հեռեւելոց են կարծեաց իմոց բան
“ վկայելոյ հայրութեանդ՝ թէ բարի զաւակք են. յատկապէս
“ եղբայրն իմ աղեքսանդր որ հնգապատիկ ունի ժառանգու-
“ թիւն քան զայլսն, որպէս ի կտակի ողորմած հոգւոյն կա-
“ րէք տեսանել այդր։ Զի ամենայն ստացուածս իւր 16 բա-
“ ժին է արարեալ. 6 բաժին դնել ի գանձարանի թագաւո-

՝՝ բութեանն Անկլիացոց, որպէս զի եկամուտն սիրելի Աղեք-
՝՝ սանդրն վայելեցէ. և 10 բաժին հաւասար բաժանեցի
՝՝ ի մէջ հնդեսին զաւակացն, և ամենայն ստացուածք ողոր-
՝՝ մած հոգւոյն գումարին դոյզն ինչ աւելի կամ պակաս
՝՝ իբրեւ 270,000 հուն, ազատ յամենայն ծախուց, կրուանալ
՝՝ համարեցեալ գրամոց և այլն։

՝՝ Վասն որոյ թուի ինձ, Վերապատուելի, թէ գալուստն
՝՝ քո ոչ է ունայն լինելոց, այլ պատշաւոր, նախ վասն բարու-
՝՝ թեանն սիրելի մանկանց ողորմած հոգւոյն՝ զորս եօթնամեայ
՝՝ ժամանակ Վերապատուութիւնդ ճգնեցեր վասն նոցա, ոչ
՝՝ ունայնանան վաստակք յարդութեանդ. և երկրորդ, վասն
՝՝ բարութեան հասարակ ազգիս Հայոց, զորս ոչ երկբայիմ
՝՝ թէ ըստ կարծեաց իմոց յաջողելոց է։

՝՝ Վերջապէս, Վերապատուելի Հայր զամենայն ինչ գրեցի
՝՝ յարգութեանդ զոր ինչ միտք իմ՝ ձգտէր, և այլն թողուլ
՝՝ Վերապատուելոյդ մտածել և առնել զայն որ արժանն է։

՝՝ Յետ ամենայնի զայս եւս ծանիր Վ. եթէ Մատր Բոյէճն
՝՝ ներհակեցի վասն մանկանց զալոյն ատա, ոչինչ փոյթ է
՝՝ մանկանցն. վասն զի եւ և Զարուն Միքայէլն զոլով յազգէ
՝՝ հանգուցելոյն և 2, ի չորից կուակակատարաց նորա՝ յատ-
՝՝ կապէս ծառայ քոյ օրինաւոր որդի հանգուցելոյն և մի
՝՝ ի ժառանգաց նորա՝ կամիմք զի մանկունքդ եկեցեն ատա,
՝՝ վասն որոյ առանց իւիք խորոյ կարեն գալ, քանզի համա-
՝՝ բուիք կամ վօթօվ մինչեւոյն եմք. մանկունքն կարեն ան-
՝՝ կանել ի կարծիս նոցա կամ մեր։

՝՝ Հաւատի է զի Մատր Կօրարն որ ատա է ունի կարծիս
՝՝ մանկանց այդր պահելոյ. հաւատամ թէ Մատր Բօհէմն եւս
՝՝ ի նոյն կարծիս է լինելոց և ունի իրաւունս նկատմամբ
՝՝ կտակի ողորմած հոգւոյն, քանզի վասն մանկանցն յատկա-
՝՝ պէս ոչինչ գրէ և երեւելապար՝ ամենայն որ պարտի մտածել
՝՝ որպէս յարգութիւն քոյ գրեցեր մեզ թէ ինչ էր վախճան
՝՝ դիտաւորութեանն ողորմած հոգւոյն վասն զաւակացն փո-
՝՝ խադրելոյն այդր. երեւի թէ իցէր վասն ուսումն մանկանցն
՝՝ վասն որոյ ոչ կարեմք մեղադիր լինել նոցա՝ քանզի նեղքին

„ դիտաւորութեանն մեր ոչ ճանաչեն թէ վասն ինչ պատ-
„ ճառի կամիմք գալուստ նոցա ։

„ Վասն որոյ եթէ Մատր Բօհէմն ներհակեցի կարեւ մանն-
„ կունն հաւանեցուցանել հաւանել կարծեաց մերոց և
„ ածել առ մեզ . զայս եւս գրեցէց վասն զի կարէ լինել զի
„ մանկունն անհնազանդ երեւելով յաչս Մատր Բօհէմին մի
„ թէ խնայեացէ ծախս ճանապարհին ի ձէնջ , վասն որոյ կա-
„ րէք այլուստէք գտանել վասն ծախուց ճանապարհին
„ զրամն զոր հարկաւորիք և տալ փոխադարձական զիր
„ ի վերայ մեր մեք ստոյ հատուցանելոյ ։

„ Ողջ լեր յամայր ամս ։

„ Ի Մատրաս .

„ Ի թուին 1792 . փետրվարի 1 .

„ Խ. Ծ. ՍԱՄՈՒԷԼ ՄԿՐՏԻՉ ՄՈՒՐԱՏԵՆՑ . „

„ Վերապատուելի Տեառն Տեառն Հայր Նիկողայոս Բու-
„ զայեան Վարդապետ միթիթարեան ի Լոնդոն .

„ . . . . . .

. . . . . .

„ Վերապատուելի՝ գրեա թէ որովհետեւ եղբարք իմ չուզին
„ կախումն և հարկաւորութիւն ի քէն , և վասն զոլոյգ այդր
„ անդործ և պարապ ծանուցեր Գեր . Աբրային և հրաման նո-
„ ցա էր զի գնացես փութով ի Վենետիկ ։ Ի վերայ յայսմ մասին
„ գրեցելոյդ պատասխանին իմ այս եղիցի հայրութեանդ , որ-
„ պէս հաճոյ թուեցի հօրդ , սակայն տուր ինձ հրաման
„ վասն խոնարհ կարծեացս յառաջարկման , բայց այսու յա-
„ ռաջարկութեամբս մի լիցի հօրդ ի հերուն հետէ հայրու-
„ թեանդ խոստացելոյս ի միտ առնել զոր խոստացայ զաս-
„ տանորդս ժառանգութեանն ամուսնոյ իմոյ հայրութեանդ
„ ընծայել եթէ գայցես ստոյ ընդ եղբարցս քան զի յամե-
„ լով Հօրդ գաղտահամբդ՝ փոխեցի ես զնոյն դիտաւորու-
„ թիւնն իմ ։

“ Եւ այս յառաջարկութիւնն իմ նորոգ ինչ է, որգոն.
“ եթէ վերապատուութիւնն քոյ բարեոք խոկաս, ժամանակս
“ ի ժամանակս միշտ պատահեալ է ի Հնդիկս հարուստ անձ-
“ ինք գտանել ի մէջ ազգիս, յատկապէս ի գաւառութենէս
“ մերմէ, որպէս էին ի ժամանակի իմում հանգուցեալք
“ Միքայէլ Տէր Յովան և Յովհաննէս Շէրիմանն. և ոչ երկ-
“ բայիմ այսուհետեւ եւս ժամանակս ի ժամանակս գտանե-
“ լոց են։

“ Մինթէ ոչ թուի Հօրդ՝ մին ի միաբանից ձերոց ասա գտա-
“ նիլն յոյժ հարկաւոր է վասն հասարակաց բարութեանն և
“ օգտի։ Քանզի այնքան որ ես հասկացեալ եմ, ի վախճանել
“ վերոյիշեցելոցս (յատկապէս Պարոն Միքայէլին) եթէ վե-
“ բապատուութիւնդ ասա գտանէիր, նշանաւոր ինչ բարիք
“ առնէր հանդուցեալն վասն հասարակաց օգտի, և այն լի-
“ նէր նմա պտուղ բարեաց ի միջոյ բազմամեայ վաստակոց և
“ աշխատանացն։

“ Սակայն այժմ ոչ թէ միայն այդպիսի բարութենէ
“ զրկեալ տեսանեմ զորր և աղքատ մանկունս հասարակու-
“ թեանն, որ ցաւ է ամենայն մտածողաց, այլ և եւս ցաւ
“ է՝ զի տեսանեմ զրաղմամեայ վաստակս և աշխատանս
“ այնպիսի բարւոյ առն ի կորուստ մատնեալ ի ձեռս ան-
“ միտաց։

“ Վասն որոյ եթէ հաճոյ թուեցի Հօրդ գալ ընդ եղբայրս
“ ասա, յոյժ բարի առնես. իսկ եթէ ոչ լիցի Հայրութեանդ
“ յոժարութիւն գալոյ, գոնէ յորդորեաջիր զԳերյարդելի
“ Աբրահամն՝ մին ի միաբանութենէն ձերմէ միշտ պահել
“ ասա. քանզի արք և կանայք այժմ գրեթէ 15 անձինք
“ գտանին ասա ի մերոյ գաւառութենէս, և ողորմութեամբն
“ Աստուծոյ մեծ մասն ի ոտանէ հարուստք են և տեսլիք գե-
“ ռահաս գաւակաց, և ամենեքեան հարկաւոր ուսուցչի
“ ի լեզուս մեր։

“ Եթէ մին ի միաբանութենէդ գտանիցի ասա և ուսուցէ
“ զմանկունս մեր, ոչ հաւատամ թէ ծնողք նոցա ունայնա-
“ ձեռն թողուցուն զայնպիսի անձն. և զայլն թողում Հայ-

“ բութեանդ խորհել՝ այն որ արժան է, և վիանգամայն նե-
“ բուցն խնդրեմ, եթէ անպատեհ ինչ երևեսցի Հօրդ յա-
“ ռաջարկութիւնն իմ, բաւ է։ . . . . . .

. . . . . .

. . . . . .

“ Վ. դրեա թէ հանգուցեալն 50,000 ռուբի ինձ խոստա-
“ ցաւ, և 26,000 ռուբի եթող վասն դպրատան, և այն կախ և
“ մթին և դժուարին եղանակաւ. որոյ վասն կրկնեմ զառա-
“ ջարկութիւնն իմ։

“ Նախ՝ գիտես, Վերապատուելի, մեք ազգս Հայոց
“ զուրկք ի յուսմանց և գիտութեանց, թէ և ի պանդխտու-
“ թեան շրջելով և տարաշխարհիկ լինելով ասա և անդ ինչս
“ շահիմք և փոքր մի տաշեցեալ ի մէջ այլ ազգաց՝ ուժով շա-
“ հեցեալ ընչից և հարստութեանն մերոյ ի մէջ գիտնոց զատ-
“ տանիմք, սակայն տաշումն այն ոչ զոլով դեռաբողբոջ
“ ժամանակի, այլ ի քարացեալ և կարծրացեալ սիրտ, ոչ
“ լինիմք ըստ բաւականին կատարեալ. որոյ ազագաւ ահա
“ 21 ամք եղեն յորմէ հետէ եկի ի Հնդիկս, աշօքս նշմարեցի
“ զրպուսն և վասն բազմաց մերազնէից մերձ ի մերձ եղելոյ
“ լուայ քանդումն և աւերումն և ի կորուստ մատնիլ ստաց-
“ ուածոց նոցա. զորս եթէ ընդ գրով արկանեա, միլիոն մի
“ սակոյ լինին։

“ Որոյ պատճառաւ եթէ ի միտանութենէն ձերմէ որ կա-
“ տարեալ ատ գոտանիցի, կարէ օգնել այնպիսեաց, և
“ մի թողուլ առ ոչինչս վատնել ստացուածոցն, մինչև
“ ողորմեցի Տէր և աջողեցէ ազգիս ունել ոյժս գիտութեան։

“ Գրութեամբս կամիմ ասել. թէպէտ հանգուցեալն մեր
“ բաղդաւորութեամբ բազմաց մերազնէից բազումն գիտէր,
“ սակայն գիտութիւնն այն ոչ զոլով հիմնաւոր, ոչ միայն
“ ընդ այդ այդպէս արար, այլ բաժանումն էարկ ի մէջ զաւա-
“ կայն. պատճառ ետ նոցա օտարանալ ի յազգէն և ի յընտա-
“ նեացն, և ընդ այլազգիս ընտելանալ, և զկտակ իւր այն-
“ պիսի եղանակաւ գրեաց զոր չէր արժան գրել. որոյ ազա-
“ գաւ ահա եօթն ամք եղեն յորմէ հետէ վախճանեցաւ, դեռ

„ Եւս ոչ կարացաք կատարել զդիտումն կոտակին, և զզաւակս
„ Նորա բան խնդրոյ իւրում՝ բերել առ առ մեզ . . . .
. . . . . .
. . . . . .
„ Թուի ինձ եթէ կատարեալ ոք խորհրդատու ունիցէր ոչ առ-
„ նէր այնպէս, վասն որոյ Վ. Հայր, եթէ դրութիւնս ուղիղ
„ դատես մի զանց առնուցուս ընդ առաջարկութիւնս, բաւէ .

„ Ողջ լեր յամայր ամս

„ Ի Մադրաս, 1798. հոկտեմբ. 15.

„ Խոնարհ ծառայ

„ ՍԱՄՈՒԷԼ ՄԿՐՏԻՉ ՄՈՒՐԱՏԵՆՑ. „

Եւ յետ մահու Հ. Նիկողայոսի Բուզոյեան գրէ թուղթ Պարոն Սամուէլ Մուրատ առ Պարոն Ալէքսանդր Ռոֆոյէլ ի Վենետիկ, որ ունի օրինակ զայս .

„ Սիրելի եղբայր Պարոն Ալէքսանդրի Ղազամեանց .

„ Սիրելի եղբայր .

„ Պարոն Կօրէրնին գրածէն տեղեկացայ Վ. Հ. Նիկո-
„ զայոսին առ Ասուած փոխիլն, և ապաչեմ զի Տէր ողոր-
„ մեացի հոգւոյ նորին և յաւիտենական հանգիստ պարգ-
„ եւեսցէ նմա : . . . . . .
. . . . . .
. . . . . .

„ Ազրմնած հոգի Վ. Հ. Նիկողայոսն իւր թուին 1800 տեսակ.
„ 17էն գրումն գրել էր վասն օգնութիւն ինչ առնելոյ միա-
„ նութեանն իւրեանց, և գրել էր թէ զգործն Եւսեբիոս
„ Պօմբուլիսին ունին ի պատրաստի, առ որ պիտին 2000 հուն,
„ վասն ծախուց տպագրութեանն. որոյ 2000 հուն ծախսն
„ ես յոժարիմ տալ, ընծայելով զտպեալ գործն միաբանու-
„ թեանն նոցա, միայն ընդունելով 10 հատոր կամ ձեռ-

“ ի տպեցեալ գործոյն իբրեւ հատուցումն 2000 հունին յինէն
“ տուեցելոց, եթէ գործն այն տպիցի ի յիշատակ ծնողաց
“ իմոց, այսինքն բարեյիշատակ հօր իմոյ ի տէր Ննջեցելոյ
“ Եռօթէցի Սարուսի որդի տղայ Մկրտչին Մուրատեանց, և
“ հանգուցեալ մօր իմոյ Թօխաթեցի Լազեանց Միքայէլի
“ դստեր Բէկզատէ տիկնոջ։

“ Եւ որովհետեւ լատիներէն եւս պարտի գրել զյիշատակ
“ ծնողաց, հարկաւոր է ծանուցանել նոցա զի ես ի լեզու
“ Անգղիացոց Samuel-Makertich Moorat, այսու կերպիւ
“ տորագրեմ զանունն իմ. ի լատիներէնն այնպէս պարտին
“ առնել, զի ընթերցողքն ծանիցեն թէ գործն այն ի յի-
“ շատակ հօր իմոյ տպեցաւ, և ոչ այլոյ Մկրտչի Մուրա-
“ տեան։

“ Նաեւ յոյժ հարկաւոր տեսանեմ վասն ազգի մերում
“ անթերի և կատարեալ բառգիրք մի Ինկլիզեւարէն Հայե-
“ ւար և ի Հայեւարէն Ինկլիզեւար. և նմանապէս արայ տպեց-
“ ման ծախսն եթէ լինիցի փոքր աւելի կամ պակաս
“ 2000 հուն, ես յօժարիմ տալ, ընծայելով զտպեցեալ
“ գործն միաբանութեանն նոցա, միայն ընդունելով 10 հա-
“ տոր կամ ձեռք, ըստ Պօմբուլիոսին՝ տարատի, որպէս զի
“ զայն եւս տպեսցեն ի յիշատակ ծնօղաց իմոց ի վեր անուա-
“ նելոց։

“ Եւ հաւատամ թէ բառգրքիս առաւել վաղ լինին օգտե-
“ ցեալք, քանզի թուի ինձ թէ առաւել վաղ վաճառեն յատ-
“ կապէս ասա ի Հնդիկս։ Վասն որոյ, սիրելի եղբայր իմ
“ Աղէքսանդր, եթէ փոքր նեղութիւն յանձն առեալ փութա-
“ պէս գրեցես նոցա վաղվաղակի ի գործ դնել և ի լոյս ընծայել վերոյիշեալ երկոսին գրեանսն, մեծ օգնութիւն լինի Մխիթարեան միաբանութեանն, մեծ վարձք եղբայրութեանդ, և մեծ ուրախութիւն ինձ։

“ Նմանապէս Վ. Հ. Նիկողոսյան գրեալ էր, թէ նաեւ
“ ունին ի պատրաստի ընդհանուր աշխարհագրութիւն, ստ
“ որ պիտին 4000 հունք վասն տպման. և որովհետեւ ես
“ ունիմ ի մտի նաեւ վասն բարեյիշատակ անելիս և բարե-

“ պաշտ զոնքանչիս յիշատակ ինչ թողուլ յայսմ աշխարհի,
“ եթէ եղբայրութիւնն ձեր հաճի զկէս ծախս տպեցման այդ
“ աշխարհագրութեանն, այսինքն 2000 հուն, ես հաստատա-
“ նեմ. իսկ միւս կէսն, այսինքն 2000 հուն, եղբայր Աղեք-
“ սանդր հատո՛, որպէս զի տպեսցի այն վասն յիշատակի
“ ձերոյ հարազատի և իմոյ օրինաւոր ծնողացն. և զտպեցեալ
“ գործն ընծայեցեալ լինիցի Մխիթարեան միաբանութեանն,
“ ի վերոյիշեալ երկոսին գրեանց սարսափ։

“ Ես զայս մտածութիւնս իմ վաղագոյն գրելոց էի Վ. Հ.
“ Հ. Նիկողայոսին և եղբայրութեանդ, եթէ զանազան գրագ-
“ մուանք և նեղութիւնքն աշխարհայինք թողացուցանէին
“ զիս. իսկ որովհետև այժմ եղէ ձեռնահաս գրելոյ, յոր-
“ դորեմ զքեզ, եղբայր իմ սիրեցեալ, զի մի՛ կասիցիս ի գրե-
“ ցելոցս. նախ զի մշանջենաւոր յիշատակ լինին ծնողաց
“ մերոց, երկրորդ՝ զի երախտապարտ եմք Մխիթարեան
“ միաբանութեանն, և այսու մեծ օգնութիւն լինի նոցա
“ ի ժամանակի նեղութեան իւրեանց, և դուք երախտագէտ
“ համարեալ լինիք, և այլն։

“ Ես ի կենդանութեանն Վ. Հ. Նիկողայոսին գրեցի նմա,
“ որպէս զի խորհրդատրեսցէ Գերյարգելի Աբրահօրն առ
“ ի պահել առ վարդապետ մի հանապազ. որ պատասխանել
“ էր ինձ թէ գրելոց է Աբրային. սակայն մինչև ցայժմ էլ
“ ոչինչ չէսեցի այդ մասին, և ոչ տեղս մարդ արեւաց, որ
“ յոյժ տխուր եմ. քանզի եթէ յետ Հ. Պօղոսին ասի գնա-
“ լոյն այս 15 տարի միջոցումն՝ յոր մեծամեծ փոփոխութիւնք
“ եղեն ի մէջ մեր ազգին, եթէ վարդապետ մի գտանէր տեղս՝
“ կարէր մեծամեծ բարութիւնս առնել միաբանութեան իւ-
“ րեանց. և այժմ ետս ես այն հաւատումն եմ որ յոյժ հար-
“ կաւոր է տեղս անձն մի ի միաբանութենէ Մխիթարեան
“ Հայոց. և երկրայ չեմ որ ներկայութեամբ այդպիսի անձին
“ միոյ բազում բարիս պատճառեն մեզ, և մեծ օգնութիւն
“ Մխիթարեան միաբանութեան։

“ Վասն որոյ, սիրելի եղբայր իմ Աղեքսանդր, խնդրեմ զի
“ սաստիկամբ գրեսցես Գերյարգելի Աբրահօրն զի անխափան

„ անձն մի առաքեցէ, ասա վասն երկուց կողմանց բարու-
„ թեանց։ Մեծ վարձք կլինի եղբայրութեանդ։ . . .

„ Մնամ եղբայրութեան ձերում

„ Ի Մասրաս. 1805 սեպտ. 1.

„ Խոնարհ ծառայ

„ ՍԱՄՈՒԷԼ ՄԿՐՏԻՉ ՄՈՒՐԱՏԵՆՑ. "

Թէպէտ և ցաւի Պարոն Աղեքսանդր Ռաֆայէլ ընդ կրբուսաս Հ. Նիկողայոսի Բուզայեան, սակայն ոչ փոխէ նա զանպատեհ գնացս իւր և ընդ նորայն, չծանուցանելով միաբանութեան զմահ նորին զամս ինչ, մինչեւ յայլուսաս իմանալ զայն, և չպատասխանելով թղթոյ Գեր. Աբրային, մինչեւ հարկաւորիլ նորա առաքել զոք ի միաբանից իւրոց առ նա ի Լոնտոն, և որ անհաւատ թուիցի արդեօք, արգելու նա զառաքեալն, զՀ. Դաւիթ Ճերմակեան, գրել թուղթ առ Գեր. Աբրայն, մինչեւ ի միասին գրել առ նա զայն, այլ թէ երբ, չորոշէ և չառնէ նա զայն։

Խորհի Հ. Դաւիթ անցանել անտի ի Հնդիկս, զոր և ապդառնէ Պարոն Սամուէլ Մուրատի ի Մասրաս գրով Պարոն Յովհաննու Ռաֆայէլի ի Լոնտոն, որում առնէ պատասխանի Սամուէլ Մուրատ, հանգերձ մեղադրանօք որ զգնացից Աղեքսանդր Ռաֆայէլի, օրինակ զայս.

„ Սիրելի եղբայր Պարոն Յովհաննէս Ղարամենց.

„ Գրես թէ ի Վենետկոյ Հայր մի եհաս այդր ի միաբանու-
„ թենէն Մխիթարեան, անուանեալ Հայր Դաւիթ Կէրմա-
„ կեան, և յանձն առնես խնամս տանել նմա եթէ գալուսս
„ նորա որոշեացի ի Հնդիկս. որոյ վասն միամիտ լեր, եղբայր,
„ ամենայն ինձնէ կարելին չեմ խնայելոց միշտ, ի մոռ իմ
„ ունելով զպիտանաւորութիւն միաբանութեան նոցին վասն
„ ազգիս Հայոց։

„ Եւ ի վերոյիշեցեալ 1805, սեպտ. 1 էն Պարոն Աղեք-
„ սանդրին և եղբայրութեանդ ի միասին գրած գրումն
„ խնդրեցի պարոն Աղեքսանդրէն որ գրի Վենետիկ ասա-
„ ցեալ Մխիթարեան հարցն վասն հանդուցեալ Վ. Հ. Նիկո-
„ զայոսի ինձ առաջարկած գրեանց ապեցմանն։ . . .

„ Մինչեւ ցայժմ և ոչ արժան վարկաւ մատնաչափ գրով
„ ծանուցանել ինձ՝ զգրեցեալս իմ կատարէ կամ ոչ. զի
„ եթէ ոչ՝ գիտելով զայն՝ գոնէ այլոց ուրուք գրէի, որպէս
„ զի կատար հասուցանէին զայն։ Իսկեր այսպիսի զանցա-
„ ռութեան պարոնին ինչ մտածեմ և առ ի՞նչ որոշեմ չգի-
„ տեմ. քանզի պարոնի արարողութիւնն ամենայն խոհական
„ և բնական մտածութենից զուրս ա։ . . . . . .

„ Մնամ

„ Քոյդ յոյժ խոնարհ ծառայ

„ Ի Մարսա. 1808. 18 հոկտեմբ.

„ ՍԱՄՈՒԷԼ Մ. ՄՈՒՐԱՏԵՆՑ. ”

Այսպէս ահա յուսահատ եղեալ Աղա Սամուէլի ի գործադրութենէ Ռափայէլեան հրիտակին, խորհէր ըստ վաղնջուց ցանկութեան իւրում ինքնին յիւրոցն գոյից առնել ազգայնոց իւրոց բարիս մշանջենաւոր։ Սմին իրի և գրէր նամականեր բազում առ Մխիթարեան միաբանութիւնն ի Վենետիկ, յորս խնդրէ առաքել զոք առ ինքն ի Մարսա ի դաստիարակութիւն որդւոց իւրոց և այլոց ազգայնոց որ ի Հնդիկս, և ի խորհրդակցութիւն յաղագս գործոյն մեծի զոր ցանգ երկնէր ի մտի իւրում յօգուտ ազգիս Հայոց, եւս և յաղագս ապագրութեան պէտքս ուսումնական և աշխարհագրական և և պատմական գրեանց, որպէս տեսաւ ի կանխագիր յիւր նամականերն։

Եւ զի ոչ լոկ բանք էին ասացեալքն՝ արդեամբք իսկ յայտ արար այրն վսեմախոհ. քանզի եթող ազգին հրիտակ մեծագուսար արծաթոյ՝ աւանդելով զայն ի ձեռն կատակատարաց

իւրոց, զի խորհրդով և միջնորդութեամբ Մխիթարեան միաբանութեան գործադրեացեն։ Եւ այս է պատճէն բանիցն, որ վեցերորդ մասն է հանրական կտակի իւրոյ։

«Եւ իմ հաշուագրքումն մին որբոց աղքատաց և անանուն կաց հաշիւ ունեմ. իմ ստացուածքիցն մին հարիւր և յիսուն հազար հուն հանեն և տանեն նոյն հաշիւն. և յետ ստացեալ հարիւր յիսուն հազար հունն ստացեալ հաշիւն տանելէն, զոր ինչ որ ստացեալ հաշուումն տալիքս գումարի՝ ստացեալ գումարի բոլորն թողման ամ Հայոց ազգի որբ և աղքատ մանկանց դպրատան շինութեան համար, որ ըստ խորհրդոյ և միջնորդութեան Վենետիկի Հայոց միանձանց՝ ուր մի կողմն Եւրոպիոյ որ աջողակ համարեն գետին գնեն, և ստացեալ գետնի եկամուտն քանի մանկանց տարեկան ծախուցն որ բաւական առի, այնքան Հայոց ազգէն որբ և աղքատ մանկունք ստացեալ դպրատանն ձրիապէս ուսումն և լեզուք ուսանեն և դառնան իւրեանց հայրենիքն։

«Եւ պարտականութիւն չլինի ստացեալ դպրատանն ուսանողաց վերայ քահանայ լինելոյ. բայց եթէ ոմանք իւրեանց ազատ կամաւն յօժարեացին քահանայութեան, լինիցին։

«Եւ եթէ ոմանք հարուստ անձինք ևս ազգէս Հայոց կամեացին զմանկունս իւրեանց վերոյասացեալ դպրատանն ուսուցանել, կարող ան՝ զծախսն հատուցանելով. քանզի գիտաւորութիւն իմ վասն այս դպրատան շինութեան է վասն աղքատ մանկանց ուսուցանելոյ. այսինքն վասն նոցա որոց հարքն չքաւորք են. վասն չկարելոյ նոցա զծախսն դպրատան հատուցանել՝ զանց առնեն ոմանք մանկանց իւրեանց, և անմեղ մանկունքն այնոքիկ մնան զուրկք ի յամենայն ուսանց և գիտութեանց, և որոյ վասն գրեթէ ըստ մեծի մասին անտերունչ ազգս Հայոց ազգաք են։

«Եւ յուսամ յԱստուած, զի և այլք հարուստ անձինք

«յազգէս Հայոց՝ յեռ ճաշակելոյ զքաղցրութիւն ուսման
«դպրատանն զորս իմով միջնորդութեամբ ակամի, և նոքա
«իմոց շաւղացն հետեւեսցեն, և այնու կարելի լինիցի ախռել
«ի մէջ ազգիս, եթէ ոչ բոլորովին՝ գոնէ ըստ մասին, զլոյս
«գիտութեան և իմաստութեան. և անտերունչ ազգս զարթ-
«նուցու ի քնոյ թմրութեան և անհոգութեան։

«Եւ վասն կառուցանելոյ զդպրատունն և ի գործ դնելոյ
«զտարեկան եկամուտս գնեցեալ գեռնոցն, և յաղագս տե-
«ատկաց ուսման և լեզուաց զորս կամիմ զի ուսանիցին ման-
«կունքն ի յիշեալ դպրատան, և վասն որպիսի կարգաւ և
«կանոնիւ առաջնորդացանելոյ զդպրատունն և որպիսի վարե-
«լոյ ընդ նա, զկարծիս իմ յատուկ գրեցեալ ներփակեցի
«ի յայսմ, թողեալ հպատակ ուղղութեան՝ եթէ աղալոցեալ
«լինիցիմ՝ կատակատարացն իմոց և հարց Մխիթարեանց,
«որոց միջնորդութեամբ կամիմ զի կառուցի դպրատունն,
«զսխալանս կարծեաց և կարգաւորութեան իմոյ ուղղել. իսկ
«եթէ կարծիս և կարգաւորութիւնն իմ ուղիղ դատեսցին,
«այնու ձեւով առաջնորդեն։ Եւ այսքան առ այս։»

Բարեացապարտ այրն ազգասէր ի վերայ երախտեացն իւրոց ի նմին կտակի սահմանեաց և զայս, զի եթէ զբ ի ժառանգաց իւրոց և յազգակցաց անորդի ելցէ յաշխարհէս, ստացուածք նորա յաւելեալ խառնեսցին ի հրատակն կարգեալ ի դատարակութիւն որբոց և աղքատաց ազգիս։ Դարձեալ և նախատես խորհրդով հոգացեալ զանկորուստ պահպանութիւն և զանթերի հատուցումն իրաւանց որբոց և աղքատաց ազգիս, պատուիրեաց ի կտակին զի գործադրութիւն բանից իւրոց և կամաց եղիցի ըստ ամենայնի և յամենայն դէպս ըստ օրինաց և կարգաց պետութեանն Անգղիոյ, և ոչ այլոց որ և իցէ ազգաց. և միանգամայն խնամ կալաւ ոչ միայն զգուշացուցանել զորդիս իւր ի դատ վարելոյ ընդ միմեանս կամ ընդ այլ ժառանգորդս բարեաց որ ի կտակի իւրում, այլ և յորդորական բանիւ պատուէր ետ որդւոցն զի և յիւրեանց ստացուածոց հինգ առ հարիւր շահ տարեկան հանցեն ի բա-

ժին որբոց և աղքատաց ազգիս մերոյ՝ յաւելելով զայն ի հրիտակն ողորմութեան առատաձեռնեալ յինքենէ։

Իսկ ինքն Աղա Սամուէլ Մկրտիչ Մուրատոչ եւս յերկարակեաց լեալ յետ իւրոյ կտակին, որով անմահական թողոյր յիշատակ ազգիս և աշխարհի, փոխի յաստեացս ի յիսուն և վեցից ամաց հասակի, ի 20 ապրիլի յամին 1816։

ԳԼՈՒԽ Բ.

Թուղթ կտակագրատարաց Աղա Սամուէլի առ առաջնորդն Մխիթարեանց. — Ընտրութիւն գործակալաց Մխիթարեանց. — Ուղեւորել նոցա ի Հնդիկս. — Անցանել Աղայ Յովհաննէս Մուրատայ յԵշրոպէ. — Զկամուրջիւն Եդուարդայ Մուրատեան կատարելոյ զկտակ հօրն ի մասին հրիտակի դպրոցին. — Դարձ գործակալացն ձեռնուհայն ի Վենետիկ.

Իբրեւ անցանեն ամիսք հինգ զկնի փոխճանին Աղա Սամուէլի, որդիք նորին և կտակակատարք Պ. Պ. Եդուարդ և Յովհաննէս գրեն թուղթ առ առաջնորդ Մխիթարեան միաբանութեան՝ Ստեփանոս Արքեպիսկոպոս Ադոնց, ծրարեալ ինքեան և զօրինակ վեցերորդ յօդուածոյ կտակի հօրն իւրեանց, և խնդրեն յղել առ նոսա զոք ի միաբանից, ընդ որում խորհեացուք, ասէին, կատարումն տալ փութով կամաց կտակագրին որ այնչափ կարեւոր է յօգուտ ազգին։ Եւ այս է պատճէն նամակին, որոյ բնագիրն, որպէս և այլոց գրեթէ ամենայն թղթոց Մուրատեանցն՝ գաղղիարէն է։

« Գերապայծառ Տէր.

« Ի Մատրաս. 25 սեպտեմբեր. 1816.

« Ի ծանուցանել անդ Տէրութեանդ ցաւագին պտուիւ « զոխարագին մահ յարդոյ Հօր մերում՝, ի 20 ապրիլի այսր

„ տարեաց, պարտական համարիմք զանձինս յղել առ Մե-
„ ծութիւն ձեր զվկայեալ օրինակ յօդուածոցն իւրում կոտ-
„ կի, որ հայի ի մեծ և երեւելի հրիտակն, զոգցեա
„ 200000 փակատից, վասն հիմնարկութեան դպրատան
„ ի կրթութիւն հայկազունս մանկանց։

„ Եւ յանդի ի ձեռն ասացեալ կտակին բարեյիշատակ
„ Հայր մեր կացոյց զմեզ իւր կտակակատարս, Մեծութիւն
„ ձեր ունի զիւրաւ ի միտ առնուլ զհարկաւորութիւն՝ ուղղա-
„ կի կամ անուղղակի խորհրդակցութեան ի մէջ մեր, առ
„ ի ընդ հուպ կատարել զկամն կտակագրին։

„ Վաճառաշահ գործառնութիւնք մեր չթողով մեզ անցա-
„ նել յԵւրոպա, համարձակիմք հարկեցուցանել Մեծութիւն
„ ձեր յղել առ մեզ զմի ի Հարանց այսր միաբանութեանդ,
„ ունելով զիշխանութիւն առ ի ձէնջ, զի կարող լիցի ի հա-
„ տանել իւրում այսր խորհրդակցիլ ընդ մեզ ի վերայ գոր-
„ ծունեայ միջոցաց առ ի գործ դնել զաւաջարկութիւնն
„ այսչափ կարեւոր յօգուտ ազգին մերոյ։

„ Աղաչեմք զՄեծութիւնդ քաջ խորհել վասն սրին, զոր
„ պատիւ անձանց համարեցաք գրել Տէրութեանդ, չունելով
„ ինչ երկբայութիւն, թէ ոչ յանձին կալցի իւրով իմաստու-
„ թեամբ զեռս քաջայարմար եղանակ ի լնուլ զկամն յարգոյ
„ կտակագրին։

„ Յանձնելով զմեզ ի սուրբ աղօթս Տէրութեանդ, և յար-
„ գանօք համբուրելով զձեռս Ձեր, պատիւ անձանց համա-
„ րիմք լինել խորին յարգութեամբ,

„ Գերապայծառ Տէր,

„ Ձերումդ Մեծութեան

„ Ցոյժ խոնարհ և անձնանուէր ծառայք

„ ԵԴՈՒԱՐԴ ԵՒ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄՈՒՐԱՏԵԱՆ.„

Հասանէ թուղթն այն ի Վենետիկ ի 20 ապրիլի յամին 1817, յանեան և յառաջ նշանաւորի. զի տարեգարձ մահուան բա-

բերարին էր ամիսն և օրն ոչն, և յորում ժամանակի անդ գտանի Պ. Աղեքսանդրը, յորոյ անուն ուղղեալ էր գիրն, և խնամս նորին եւս ծանօթ էր նմա։

Եւ զի խանգայր նա ընդ փառան որ ի վեհանձնական բարեբարութենէ անտի յաճախէին անուան և ազգատոհմի քեռան իւրոյ հանգուցելոյ, մինչչև իւր ի գործ եղեալ զհրիտակ հօրն իւրոյ, անկանի ի տրտմութիւն, և զաւուրս երիս առ իւր կալնու զգիրն, ոչ ումեք ի միտանից անտի վանացն ի վեր հանելով զայն։

Ապ ուրեմն տխրեալ նորա յիրացն հարկէ անտի՝ խնդրէ յԱռաքնորդէ ուխտին ի ժողով գումարել զառաքեալսն իւր խորհրդականս, անդ յայտնէ նոցա զիրան, և զթուղթն ինքնին ընթեռնու։

Եւ իբրեւ տեսանէ խնդամտութիւն յոյժ երեւի ի դէմս բոլոց առհատարակ, անդէն ի վերայ ածէ և ասէ. «Սակայն «ցաւ է ինձ զի կատարումն այսր հրիտակի խափանեալ է յո- «բինացն Անդրիացւոց՝ մինչչեւ իցէ ի գործ եղեալ հրիտակ «հօրն իմոյ Եդուարդայ Ռաֆայէլի։»

Յայն նուազ ոչ ոք ի խորհրդականաց անտի ըմբռնի ի պատուիր բանիցն. վասն որոյ և յայլ իմն հնարս խափանածոյ մտաբերեալ՝ խնդրէ զի միաբանութիւնն զանձն իւր կարգեսցէ գործակալ ի կատարումն իրացն այնորիկ։

Բայց և այնմ ոչ հասանէ. քանզի գիտակ իսկ էր միաբանութիւնն ի փորձոյ, զի և ոչ զկատարմանէ հրիտակի հօրն իւրոյ փոյթ ինչ էր նմա, մանաւանդ զի ի նոյն աւուրս հնարիմաց անձնասիրութեամբ յինքն շրթեալ զփառս անուան հօրն՝ յիւր անուն տուեալ էր տպագրել զՀռովմայեցւոց պատմութիւնն։

Յայնժամ և եւս համակեալ ի տխրութիւն՝ չմարթէր թաքուցանել զվէրս սրտին, և առաջի ամենեցուն անպատրաստ մխանօք ասէպ ասէպ յեղյեղելով միմնջէր զաւետարանականն զրան, զոր Յովհաննէս Մկրտիչ զՔրիստոսէ ասացեալն է.

«Ահա գառն է աճել և ինձ մեղմանալ։»

Իսկ միաբանութիւնն որոշէ իւր գործակալ առաքելի ի Մարգրաս Հնդկաց զՀ. Սարգիս Վ. Թէոդորեան։ Նորա առաջարկութեամբն և խնդրով տայ նմա օգնական զՀ. Սուքիաս Վ. Սմանլեան, որ և յետ եօթն ամաց կարգի Առաջնորդ միաբանութեանն։

Ընդ որ առաւել եւս գժգոհեալ Պ. Ազիքանդրի, ոչ եւս յապաղէ ի Վենետիկ, այլ յետ մեկնելոյ գործակալացն, մեկնի գնայ և ինքն ի Լոնդոն, ոչ սակաւ ցրտացեալ ի սիրոյ անտի զոր առ միաբանութիւնն ցուցանէր։

Առնէ միաբանութիւն պատասխանի թղթոյ Մուրատեանց, որ ունի օրինակ զայս

„ Յիսուսի Քրիստոսի ծառայ Սոնիանոս վարդապետ
„ Ազոնց, կամօքն Աստուծոյ և իշխանութեամբ առաքելու-
„ կան Աթոռոյ Արքեպիսկոպոս Սիւնեաց և ընդհանրական
„ Արքայ Մխիթարեան միաբանութեան։ Յորմէ ժամանեալ
„ հացէ գիր օրհնութեան և երկնաւոր միխիթարութեան
„ Ազնուական Հարազատացդ Աղայ Եղուարդայ և Աղայ
„ Յովհաննէսի Մկրտիչ Մուրատեան։

„ Այսու նամակաւ հոգեւորական ողջունի յայտ առնեմք
„ Ազնուական Պարոնացդ, զի մեր մեր գիր ձեր գրեալ
„ ի Մարտաստ գաղղիարէն ի 25 սեպտեմբերի անցեալ տար-
„ ւոյ, ժամանեաց առ մեզ ի 23 ապրիլի տարւոյս 1817, յո-
„ բում ցաւագին լուր վախճանի Բարեպաշտոն Հօր ձերոյ
„ Աղայ Սամուէլի մեծապէս ցաւեցոյց զմեզ և զՄիաբանու-
„ թիւնս մեր սակս պակասելոյ յազգէս այնպիսի առն սիրել-
„ ւոյ և բարեկրթի, զորոյ զգումիլի հանդամանսն ոչ ի համբա-
„ ւոյ միայն գիտէաք, այլ և յակամատես վկայութենէ
„ երկուց վարդապետաց, Հ. Նիկողայոսի և Հ. Պօղոսի։

„ Սակայն հրամանի վերին տեսչութեանն հնազանդեալք՝
„ միխիթարիմք և այսու, զի լուսահոգի բարեպաշտոն Պարոնն
„ եթող զկնի իւր զՀարազատս եղբարս ոչ միայն հաւատա-

“ բիմ կասկածասաբս , այլ և արժանաւոր ժառանգս եթէ
“ մեծութեանն և եթէ բարեպաշտութեանն ։

“ Ծանեաք ի բանից նամակի ձերոյ , այլ և ի վեցերորդ
“ հատուածոյ կտակի լուսահոգի Պարոնին , զբարի կամս նո-
“ բա և զկարգաւորութիւնն , սակս հիմնարկելոյ զօրինաւոր
“ դպրատուն մի ընդ մերով առաջնորդութեամբ վասն ուսու-
“ ցանելոյ զորբ և զաղքատ մանկունս Հայոց , և թէ՝ վասն
“ գործադրութեան այսպիսի օգտակար պատուիրանի նորա
“ հարկաւոր համարիք բերան ի բերան խօսել ընդ մեզ ։ Այլ
“ քանզի ասէք , չէ մարթ ձեզ անցանել այսր ՅԵրուսա՝ սակս
“ արգելման գործառնութեանց ձերոց , հարկ է ի մէնջ առա-
“ քել զոք այդր , հանդերձ կարեւոր իշխանութեամբ առ
“ ի կատարումն իրացդ ։

“ Արդ՝ միաբան խորհրդով յանձն առեալ մեր զկարգաւո-
“ րութիւն հաստատ կտակակատարացդ , սոխպիմք առաքել
“ ատի երկուս ի վարդապետաց մերոց , տեղեակս և յօժարա-
“ միտս ի կատարումն այսպիսի ծանր առաջարկութեան . զորս
“ առանց կորուսանելոյ զժամանակն անվրէպ դնեմք ի ճանա-
“ պարհ ըստ յաջողելոյ Տեառն , որպէս զի օգտակար կամք
“ բարեյիշատակ Աղայ Հօր ձերոյ վաղագոյն կատարեսցին ։

“ Այսչափ ի ժամուս համառօտիւ ծանուցանելով Ագնուա-
“ թեանդ ձերում , յաջորդ թղթով որոշակի եւս ապդ առ-
“ նեմք ձեզ վասն վարդապետացն և զելանել նոցա ի ճանա-
“ պարհ ։

“ Ի կամել ձեր առաքել զիր առ մեզ , զհասցէն ունիք դնել
“ ըստ օրինակին զոր յառանձին թերթի նշանակեմք , և
“ եղեալ զայն յայլում պահարանի առաքել ի Լոնդոն առ
“ վաճառականն զորոց անուանս տեսանէք ի թերթիս ։

“ Արդ մաղթելով յամենաբարի Տեառնէ զմշտնջենաւոր
“ հանգիստ վասն լուսահոգի Աղայ Հօր ձերոյ , հայցեմք
“ միանգամայն զերկայն և զերջանիկ կեանս ձեզ Ագնուական
“ ժառանգացդ և բոլանդակ ընտանեաց ձերոց , որոց բարի
“ կամացն և Լանիցն յաջողութիւն պարգեւեսցէ բարեբարն
“ Աստուած ի մշտնջենաւոր պարծանս ազգին Հայոց ։

„ Աղչ լերուք անպակաս բարօրութեամբ ի մխիթարութիւն
„ մեր և համօրէն Միաբանութեանս, ունելով զմեզ,

„ Զերում Աղնուութեան

„ Նուաստ աղօթարար ծառայ Ատուծոյ

„ Իվենեարիկ. 12 մայիսի. 1817.

ՍՏԵՓԱՆՆՈՍ Վ. ԱՊԻՄՆՑ

„ Արքեպիսկոպոս Միւռնեաց և Աբբայ Հայր. „

Տայ Միաբանութիւն գործակալաց իւրոց զիր գործակալութեան, հանդերձ Յայտարարութեամբ ինչ, որ ունին օրինակ զայս.

„ Յիսուսի Քրիստոսի ծառայ Ստեփաննոս վարդապետ
„ Ապոնց, կամաքն Ատուծոյ և իշխանութեամբ առաքելական
„ Աթոռոյ Արքեպիսկոպոս Միւռնեաց և ընդհանրական Աբբայ
„ Մխիթարեան միաբանութեան.

„ Այսու վաւերական գրով յայտ առնեմք ամենեցուն, թէ
„ երկոքին վարդապետք մեր, Հ. Սուքիաս Սոմալեան և Հայր
„ Սարգիս թէոդորեան, որք ըստ խնդրոյ երկուց եղբարց
„ Պ. Եդուարդի և Պ. Յովհաննէսի Մկրտիչ Մուրատեանց,
„ առաքին ի Մարսաս Հնդկաց, ունին ի մէնջ զօրինաւոր
„ իշխանութիւն խօսելոյ ընդ վերոյիշեալ Պարոնաց կտակա-
„ կատարաց հանգուցեալ Աղայ Սամուէլ Մկրտիչ Մուրա-
„ տի, յաղագս բարեպաշտական դիտաւորութեան և գրա-
„ մոյն զոր նոյն հանգուցեալ Աղայ Սամուէլն թողեալ է վասն
„ հաստատելոյ զդպրատուն յուսումն որք և աղքատ մանկանց
„ Հայոց։

„ Ուստի նախայիշատակեալ երկու վարդապետքն մեր ու-
„ նին իշխանութիւն խորհրդակցելոյ ընդ կտակատարաց
„ Պարոնաց յաղագս եղանակի և կարգաւորութեան գպրա-
„ տանն, ըստ տեղեկութեան զոր տուաք նոցա, այլ և ընդու-

„ նելոյ և կարգադրելոյ զգլուխս դրամոցն, որոց եկամուտք
„ կարգեալ են ի պէտս դպրատանն. և զոր ինչ երկոքին վար-
„ դապետք մեր հաճեացին և հաստատեացեն միաբան խորհրդ-
„ դով՝ ընդունելի է մեզ։

„ Սակայն եթէ ի կենցաղական ինչ պատահմանէ (զոր հայ-
„ ցեմք ի բարեխնամ տեսչութենէն Աստուծոյ հեռի առնել)
„ դէպ լիցի պակասել միում ի նոցանէ օրհասական վախճա-
„ նաւ, զնոյն իշխանութիւն համարեցի ունել ճնացեալ վար-
„ դապետն, և հաւատարիմ կացցեն ամենայն խորհեալքն և
„ դաշնադրեալքն ընդ կտակակատար Պարոնացն։ Եւ ի հաս-
„ տատութիւն ամենայն ասացելոցս ստորագրեմք մերով յա-
„ տուկ ձեռամբ, և կնքով հաստատեմք։

„ Տեսողացն ընդունելի լիցի ի փառս Աստուծոյ։

„ ՍՏԵՓԱՆՆՈՍ Վ. ԱԳՈՆՑ
„ Արքեպիսկոպոս Սիւնեաց
„ Եւ Ընդհանրական Աբբահայր.

„ Հ. ԽԱՉԱՏՈՒՐ Վ. ՍԻՄԷԼԵԱՆ
„ Գործակալ վանացս.

„ Գրեցաւ ի Վենետիկ ի վանս սրբոյն Ղազարու,
„ Յամի Տեառն 1817. ի յունիսի 10։ ”

Պատճէն Յայտարարութեան.

„ Բազումք ի բարեսէր Պարոնաց Հայկազեան Ազգիս տե-
„ սանելով զանխնամ տգիտութիւնն որ տարածեալ կայր ընդ
„ ազգն ողջոյն, փափաքէին և խորհէին բազում անգամ առ-
„ ի դարման հասարակաց տգիտութեանն հիմնարկել զդպրո-
„ ցատունն կարգաւորեալ, յորում մանկունք Հայոց, մանա-
„ ւանդ աղքատաց, կարիցեն վարժիլ ի գանազան ուսմունս։

„ Այսպիսի օգտակար գործառնութեան կամեցաւ առաջին
„ լինել Պ. Եղուարդ Ղարամեան որ ի Մատրաս, թողեալ
„ յատուկ կտակաւ զգլուխ ինչ դրամոց, և յանձնելով

„ ի կամս Հ. Նիկողայոսի վարդապետի Բուզայեան, որ ի միա-
„ բանից Մխիթարեանց սրբոյն Ղազարու ի Վենետիկ, որպէս
„ զի ըստ ժամանակին հոդասցի ի գործ դնել զհիմնարկու-
„ թիւն դպրատանն, որպէս և ուր պատշաճ համարեսցի։

„ Սակայն անցին բազում ամք, և կամք Պ. Եդուարդին
„ Ցաց անգործ, պատճառաւ այլ և այլ կարծեաց կտակա-
„ կատարաց և ժառանգաց հանգուցեալ Պ. Եդուարդին,
„ թէպէտ և Հ. Նիկողայոս վարդապետն և Միաբանութիւն
„ սրբոյն Ղազարու յորդորէին զնոսա ի գործադրութիւն կա-
„ մաց Պ. Եդուարդին, մոռացիր յանձն առեալ զհոգս և
„ զաշխատութիւն այնպիսի մեծ գործոյ։

„ Յանցանել բազում ժամանակաց, յամին 1817, ի 23 ապ-
„ րիլի եհաս գիր ի Մատրասէ գրեալ ի 25 սեպտեմբերի 1816,
„ որով Պ. Եդուարդ և Պ. Յովհաննէս որդիք Պ. Սամուէլի
„ Մկրտիչ Մուրատեան, իրրեւ ժառանգք և կտակակատարք
„ բարեպաշտ Հօր իւրեանց, ծանուցանէին Գերապայծառ
„ Արքեպիսկոպոսի և Արբայի Միաբանութեան Ստեփաննոս
„ վարդապետի Ագոնց զկարգաւորութիւն Հօր իւրեանց վասն
„ հիմնարկութեան դպրատանն, և խնդրէին առաքել առ նո-
„ սա զոք ի վարդապետաց ասոյ առ ի խօսել բերան ի բերան,
„ և անյապաղ փութով ի գործ դնել զկամս Հօր իւրեանց։

„ Այս գիր նախայիշեալ Պարոնացն եհաս առ մեզ ձեռամբ
„ Պ. Աղեքսանդրի Ռաֆայէլ Ղարամեան, որ յայնմ ժամա-
„ նակի դտանէր ի Վենետիկ։ Վասն այսր բազում անգամ
„ խորհուրդ արարեալ միաբան ժողովով, և զամենայն պարա-
„ գայս իրացն մանրախոյզ կշռադատեալ՝ յանձն էառ Միա-
„ բանութիւնս կատարել զկամս վերոյիշեալ Պարոն կտակա-
„ կատարացն, որոշելով առաքել առ նոսա երկուս գործա-
„ կալս, զՀ. Սուքիաս վարդապետ Սամուէլեան և զՀ. Սարգիս
„ վարդապետ Թէոդորեան, որոց տուաւ ի ձեռս վաստակ-
„ կան գիր գործակալութեան, ստորագրեալ և կնքեալ ըստ
„ կանոնաց, որպէս և այլ թուղթք գրեցան առ նախայի-
„ շատակեալ կտակակատարսն յառաջնորդէ Միաբանու-
„ թեանս։

„ Սակայն առ ի հաստատութիւն ամենայն բանից այսո-
„ ցիկ և ի բարձումն որ և իցէ թեթեւ երկբայութեան, լաւ
„ համարեցաք տալ ի ձեռս նախաստացեալ վարդապետացն
„ զայս գիր ստորագրեալ յամենայն միաբանից եղելոց ի Մե-
„ նաստանիս, և կնքեալ հաստատակաց կնքով, զի յայտնի
„ լիցի ամենայն տեսողաց՝ թէ բոլոր Միաբանութիւնս համա-
„ խոհ կամաք հաւանեալ է ի սոյն առաջարկութիւն, և ոչ
„ եթէ ոմանց սակաւուց խորհուրդ է կամ ընտրութիւն։

„ Տեսողացն ընդունելի լիցի ի փառս Աստուծոյ։

„ Գրեցաւ ի Վենետիկ ի վանս սրբոյն Ղազարու,
„ Յամի Տեառն 1817, ի 15 յունիսի։

„ ՍՏԵՓԱՆՆՈՍ Վ. ԱԳՈՆՑ
Արքեպիսկոպոս և Աբբայ
Հաստատեմ.

„ Հ. ԳԱԲՐԻԷԼ Վ. ԱԻԵՏԻՔԵԱՆ Աբեղակալ
„ Հաստատեմ.

„ Հ. ԽԱՉԱՏՈՒՐ Վ. ՍԻՄՄԷԼԵԱՆ Գործակալ
„ Հաստատեմ.

„ Հ. ԱՆՏՈՆ Վ. ՍԻՄՄԷԼԵԱՆ
„ Հաստատեմ.

Հ. ԻԳՆԱՏԻՈՍ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ
„ Հաստատեմ.

„ Հ. ՄԱՆՈՒԷԼ Վ. ՋԱԽՋԱԽԵԱՆ
„ Հաստատեմ.

„ Հ. ՑԱՐՈՒԹԻՆ Վ. ԱԻԳԵՐԵԱՆ
„ Հաստատեմ.

„ Հ. ՍՈՒՔԻԱՍ Վ. ՍՈՄԱԼԵԱՆ
„ Հաստատեմ.

„ Հ. ՅԱԿՈՎԲՈՍ Վ. ՃԷԼԱԼԵԱՆ
„ Հաստատեմ.

„ Հ. ՍՊԱՊԻՍՆ Վ. ՊՈՒՐԻՍԵԱՆ
„ Հաստատեմ.

„ Հ. ՄԱՏԱԹԻԱ Վ. ՓԻՍՔԻՒԼՃԵԱՆ
„ Հաստատեմ.

„ Հ. ԱՐՍԷՆ Վ. ԱՆԹԻՄՈՍԵԱՆ
„ Հաստատեմ.

„ Հ. ՍԱՄՈՒԷԼ Վ. ՍԱՄՍԱՐԵԱՆ
„ Հաստատեմ.

„ Հ. ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈՂՈՐԵԱՆ
„ Հաստատեմ.

„ Հ. ՎԱՐԴԱՆ Վ. ՅՈՎՍԷՓԵԱՆ
„ Հաստատեմ.

„ Հ. ԱՆԱՆԻԱ ՃԷԼԱԼԵԱՆ
„ Հաստատեմ.

„ Հ. ԵՓՐԵՄ ՍԵԹԵԱՆ
„ Հաստատեմ.

„ Հ. ԵՂԻԱԶԱՐ ՏԻԻԶԵԱՆ
„ Հաստատեմ. ”

ԿՆԻՐ

Տայ նոցա և ընծայական թուղթ առ Մուրատեանս, օրինակ զայս.

„ Ազնուական եղբարց Պ. Եղուարդի և Պ. Յովհաննէսի
„ ողջոյն բազում ասուածային օրհնութեամբ։

„ Զհետ երկուց նամակաց զոր առաքեցաք առ Ազնուա-
„ թիւն ձեր, ի 12 մայիսի և ի 2 յունիսի տարւոյս, այս երբ-

„ բորդ է զոր անձամբ մատուցանեն ձեզ երկոքին գործա-
„ կալք Միաբանութեանս, Հ. Սուքիաս Վարդապետ Սմա-
„ լեան, և Հ. Սարգիս Վարդապետ Թէոդորեան, որոց դէմ
„ յանդիման հանդիպումն՝ յուսամք թէ զուարթացուցէ
„ զսիրտ Ազնուական Պարոնացդ, մանաւանդ իբր ի կենդա-
„ նութիւն նորոգեցէ զբարեացապարտ լուսահոգի Հայր ձեր
„ Աղայ Սամուէլ՝ յիշատակաւ կենցաղոգուտ կամաց նորա։

„ Ոչինչ երկբայիմք, թէ այսոքիկ գործակալ վարդա-
„ պետքս հաւատարմութեամբ և անձանձիր աշխատութեամբ
„ կատարեցեն զպաշտօնն իւրեանց. նոյնպէս ի ձեր բարեսէր
„ կամաց գտանիցեն զարժանաւոր ընդունելութիւն, որպէս
„ զի խնդութեամբ տանել կարիցեն զվիշտս դժուարակիր գոր-
„ ծոյն յոր կարգեալ են, և զարդիւնս քրտնաջան վաստակոց
„ իւրեանց տեսանիցեն ի մշտնջենաւոր օգուտ Արամեան
„ ազգիս։

„ Ակն ունիմք ի Տէր՝ թէ երկոցունց կողմանց, ձեր և նոցա
„ համաշունչ գոլով ի մի կամս բարեշինութեան ազգին, վաղ-
„ վաղակի զկատարումն տացեն ձերն Ջանք և մերն գործակ-
„ ցութիւն, և արդիւնք երկաքանչիւրոցն առատացին յօրհ-
„ նութենէ Տեառն, որոյ է աճեցուցանել զտնկեալն ի Պօ-
„ ղոսէ և զարբուցեալն յԱպողոսէ, ըստ առակաւոր բանի
„ Տարսոնեան վարդին։

„ Ողջ լերուք ընդ ամենապահ Աջով բարեբարին, և երկ-
„ նաւոր օրհնութիւնն հանդիցէ հանապազ ի վերայ Ազնուա-
„ կան տան ձերոյ բարեհամբաւ պարծանաց ընդ յամայր
„ ամս, ունելով միշտ

„ Ձերում Ազնուական տէրութեանդ,

„ Ի Վենետիկ. 10 յունիսի. 1817.

„ Ազօթարար ծառայ Աստուծոյ

„ ՍՏԵՓԱՆՈՍ Վ. ԱԳՈՆՑ

„ Արքեպիսկոպոս Միխիթեանց և Աբբայ. „

Տայ նոցա եւս առանձին ինչ հրահանգս, օրինակ զայս.

„ Ա. Թէ իշխանութիւն մատակարարութեան Մուրատեան
„ վարժարանին լիցի միայն և միշտ ի ձեռս Մխիթարեան միա-
„ բանութեան որ ի Վենետիկ, ցորչափ կայցէ և ուր գտանի-
„ ցի նոյն միաբանութիւն։

„ Բ. Թէ Միաբանութիւնն ոչ տացէ կտակատարացն զհաշիւ
„ մատակարարութեան հրիտակին։ „

Մեկնեալ գործակալաց ի վանաց ի 16 յունիսի յամին 1817, զամիս եօթն ուղեւորեալ ընդ ծով և ընդ ցամաք բազում նեղութեամբ և տառապանօք, հասանեն ի Մադրաս ի 6 ապրիլի յամին 1818, յետ զամիս երիս պանդխտելոյ ի Լոնդոն չարաբաղդութեամբ՝ ապասելով պատնիշնաւու գնացելոյ ի Հնդիկս, և հանդերձելով զկարեւոր պէտս ճանապարհին։

Հասեալ նոցա ուր ուրեմն ի դէմ եղեալն տեղի, և մինչչեւ եղեալ զոսս ի ցամաք՝ անդէն իսկ ի նաւին լսեն զչուել գնալ միոյ ուրումն ի կտակակատարաց յԵւրոպա։ Ընդ այն լուր անկարծելի սասանի յոյս ակնկալութեան նոցա, և սկսանին վարանել ընդ աջողակ ելս գործոյն, որոյ վասն զայնքան և զայնպիսի ճանապարհ հատեալ անցեալ էին՝

Այն վարանք տարակուսի փոխին ի տագնապ և ի տրտմութիւն մեծ՝ յորժամ այն ինչ մտեալք ի տուն կտակակատարացն Մուրատեանց, փոխանակ նախկին ողջունի զայս լսեն լսեն ի բերանոյ Անանայի տիկնոջ Սամուէլի Մուրատայ՝ եթէ,
„ Վայրապար է գալուստդ ձեր, զի մին յորդւոց ոչ է առ,
„ և Եդուարդ ոչ ունի կարողութիւն կատարումն տալոյ իրաց
„ հրիտակին։ „

Զնոյն լսեն առաւելեւն հանդերձ և ի Պարոնաց Դանիէլէ Բարումեանց, և ի Յովհաննիսէ Շէրիմանեան, որք անդ գտանին ի ժամուն, եթէ՝

„ Զիք և ոչ մի ինչ ակնկալութիւն բարեաց ի Մուրատեան
„ ժառանգացն, զի կծծութեամբ և անիրաւութեամբ գնան
„ դրա յամենայնի. և թէ՝ արդեանն նոքա ընդ այնպիսի

«գրութիւն Իւրեանց առ Առաջնորդ Մխիթարեան Մխիթա-
«նութեան, և այս այնչափ, զի ըստ նոցին իսկ բանից, և
«ըստ այլոց վկայից ապա, յորոց մի էր փեսայն նոցա
«Պ. Աբրահամ Ազանուր, եթէ հնար էր ումեք յետս անդրէն
«դարձուցանել առ նոսա զթուղթն զոր գրեցին, մտադիր
«սիրով տային Ռուփիս հարիւր հազար։

«Եւ թէ՝ մինչդեռ Մուրատեանք յուսահատեալ ի հնարից
«յետս կոչելոյ զգրութիւն Իւրեանց՝ մխիթարէին յանձինս
«յուսով թէ գուցէ չհասանիցէ իսկ թուղթն ի Վենետիկ և
«չառաքեսցի որ ի Հնդիկս, ժամանակաց առ նոսա պատաս-
«խանի ի միաբանութենէն, ընդ նմին և լաւ գալստեան գոր-
«ծակալաց։

«Տաղնապին նոքա այնուհետեւ ի հնարս հայթայթանաց
«անկանել, զի մի հանցին ի ձեռաց գործոյն սահմանեալ
«ի կառուցուն ազգային վարժարանին։ Այսու խորհրդով
«փութացաւ Յովհաննէս Մուրատ մեկնիլ ի Հնդկաց ան-
«ցանել յԵւրոպա հանդերձ կնաւ և դստերբ։»

Ահա զայս ամենայն լսեն գործակալքն ընդ հասանել անդ և ապա։

Սակայն Աննա Տիկին ապայ նոցա սենեակ մի բնակութեան ինեղքայարկի ասն իւրոյ, ուր և յանհնարին ներեալ առ-ապին ի գարշահոտութենէ փողոցին և ի խառն բազմութենէ պիծակաց զգիշերն զայն ողջոյն. քանզի անվարագոյր եւս էին մահիճքնոցա։ Եւ թէպէտ ի վաղիւ անդր տեսեալ զգէմս նոցա այսուցեալս ի խայթուածոց պիծակացն դնէ վարագոյր ի մահիճան, սակայն և այն պատատուն էր, և համարձակ անցս տայր պիծակացն ի վերայ հասելոց։

Ճշդիւր օրինակ ասպնջականութեանն, զոր գտանեն բարեպէս անդ, ուր հաճարէին վախճան լինել տառապանաց հոգւոյ և մարմնոյ։

Ի վաղիւ անդր գայ առ նոսա Պարոն Եդուարդ Մուրատ, և առեալ զգիրն ընծայութեան Առաջնորդի Մխիթարեանն հարեւանցի իմն տեսութեամբ վերծանէ, և ապա ծրարեալ անդրէն պահէ, ոչ ինչ բնաւ ասելով ցնոսա։

Յետ առուրց ինչ իրրեւ խօսս ի մէջ արկանեն ընդ Պարոն Եղուարդայ յազագս պատճառաց գալստեան իւրեանց, տայ նա պատասխանի ի մեծ զարմացումն երկոցունցն.

“ Այժմ չկարեմ ես խօսել ինչ ընդ ձեզ զկրացդ. քանզի “ գրեալ է առ իս քեռին իմ Աղեքսանդր Որափայէլ՝ մի՛ ինչ “ խորհել և խօսել մինչեւ եկեսցէ հասցէ նա ինքն այսր “ ի Լոնտոնէ։ ”

Այսչափ ինչ առնուա. իսկ առ ընտանիսն բացայայտագոյն եւս բանիւ ասացեալ էր եթէ “ Դուք է գալուստ վարդապե- “ տացն, զուր և ակնկալութիւն նոցա. անհնար է ինձ սահմա- “ նել ինչ վասն հրամանին՝ մինչչեւ փորձեալ զհանգամանս “ վիճակի մերոյ զամս ինչ. իբր զի եթէ չկարօտիցիմք մեք “ ընչից, խորհեսցուք զհրամանէն. ապա թէ ոչ, պարտիմք “ յանձանց պէտս պահել զայն, և տալին պայմանաւ թողեալ “ է հօր մերոյ զարծաթն, որպէս և կատարն վկայէ։ ”

Զայն լուեալ գործակալացն, վերստին ակնարկեն ուշի ու- շով ի կատարն, և ոչ գտանեն ըստ բանից նորա, այլ մանաւանդ զնորին հակառակն. այս ինքն, զի թէ որ յընտանեացն իւրոց անժառանգ մեռանիցի, ինչք նորա եւս յաւելցին ի հրամակ անդր սահմանեալ յօդուտ աղքատաց ազգին, այլոմքն հանդերձ։

Եւ իրրեւ ազդ լինի քննութիւնս այս յունկն Պ. Եղուարդայ՝ ասէ.

“ Ես յայն սակս ասացի զբանն, զի յուսահատեալ վարդա- “ պետացն թողցեն զիս և գնասցեն ի բաց։ Սակայն բնաւ զի՞ “ փոյթ է նոցա թէ գուցէ այնպիսի ինչ ի կատակին և կամ ոչ. “ ապաքէն մեզ անկանի քննել զկրան և ըստ կամս մեր տնօ- “ րինել զամենայն. համառօտ ասել, յանհնարիցն է մեզ հա- “ նել ի ձեռաց զայնքան գումար արծաթոյ. ապա թէ ոչ՝ մե- “ ռանիմք։ ”

Անցանեն սահին առուրք և ամիսք, և քեռի նորա Պարոն Աղեքսանդր չերեւի. վասն որոյ գործակալքն առաջի առնեն Պ. Եղուարդայ բանադնաց լինել ընդ նորա զկրացն. իսկ նա պատճառէ եթէ սպասեալ մնայցէ հրամանաց և հաւանու-

թեան յեղբօրէն, և ընթեռնու եւս յակամէն նոցա զգիրն յո-
բուամ պատուիրէր Պ. Յովհաննէս Մուրատ՝ մի՛ ինչ առնել
բնաւ մինչչեւ ընկալեալ յիւրմէ գրով զարժանն. և յաւելեալ
յընթերցումն ասէ.

«Տեսանէք ապաքէն զի ես չկարեմ առնել ինչ մինչչեւ գրեալ
«նորա առ իս. իսկ թէ ելրբ գրեսցէ, յետ տասնամեայ ժա-
«մանակի, եթէ եւս անդրադառն, ոչ ունիմ ասել, և ոչ երաշ-
«խաւոր լինել առ ձեզ. զուք ելրբ և կամիցիք՝ ելեալ գնա-
«ցէք ի բաց։»

Յայնժամ ասեն առքա ցՊ. Եդուարդ.

«Պարտ էր ձեզ, պարոն, յառաջագոյն միտքանել ընդ մի-
«մեանս մինչդեռ ատ էր հարազատն ձեր, և կամ տալ նմա
«լիակատար իշխանութիւն աւարտելոյ զգործն Յիտալիա ընդ
«միտքանութեան մերում։»

Իսկ նա փոխանակ յայտնելոյ նոցա եթէ եղբայրն իւր ու-
նելով ունի իշխանութիւն յիրա կատակին, որպէս և ինքն
առանձինն, (քանզի վաղու եւս տուեալ էր նոցա իրերաց
զայն իշխանութիւն հանդերձ վաւերական գրով և հաստա-
տութեամբ,) առնէ նոցա պատասխանի և ասէ.

«Զի՞ կայ իմ և ձեր. ինձ չէին բնաւ կամք կոչելոյ զձեզ
«այսր, այլ եղբայրն իմ և Անտոն Բարիկ պատճառք եղին
«գալստեանդ ձերում . . . այլ և ոչ կարծէաք բնաւ եթէ
«այսպէս հասեալ գայցէք փութանակի։ . . . Եւ զինչ վը-
«նաք իցեն. ահա տեսէք զՄատրա քաղաք։»

Ասէ Հ. Սարգիս Թէոդորեան.

«Մեք ոչ ցանկացաք երբէք զՄատրա տեսանել, և ոչ
«մեզէն ասկս անձանց ինչ շահու եկեալ եկաք այսր, այլ
«ի ձերոց հրաւիրանաց և ի հարկեցուցչէ գրութեանց վասն
«բարեաց կարօտելոյ ազգիս. արդ մեք զպարտս մեր լիուլի
«կատարեցաք. ազգին մեայ այսուհետեւ աշխատ լինել վասն
«իւրումն օգտի։»

Ընդ այս բան զայրացեալ Պարոն Եդուարդայ ասէ.

«Եւ ո՞վ իցէ շաղգն այն որ իշխեացէ յառաջ մատչել, և
«իրաւունս իմ ինչ պահանջել։ Մեք ոչ ճանաչեմք զնա, և ոչ

«զանուն անդամ նորին կամիմք յիշատակել։»

Յայնժամ յուսահատեալ գործակալացն՝ խնդրեն ի նմանէ յանձն առնել եղբօր իւրում զկատարումն գործոյն. և նա հաւանի, և պատուիրէ գործակալացն գրել և ծանուցանել առ վիարանութիւնն զհաւանութիւն իւր, ընդ նմին և զանյապաղ դարձն իւրեանց անդրէն ի Վենետիկ։

Զնոյն գրէ և ինքն գաղղիարէն առ առաջնորդ վիարանութեանն ի 11 յուլիսի 1818, օրինակ զայս.

«Գերապայծառ Տէր.

«Ի ծանուցանել անդ Ձերումդ մեծութեան զերջանիկ ժա-
«մանումն այսր Յարգոյապատիւ Հարանցդ, զոր մեծութիւն
«Ձեր ըստ գրելոյ մերոյ ի 25 սեպտեմբերի 1816, պարտք
«անձին համարեցաւ յղել յայսոսիկ կողմանս առ ի ընտ-
«դրան հաստատութեան զպրատանն Յոսեփա վասն կրթե-
«լոյ զհոյկորդուն մանկունս, համարձակիմ աղաչել զմե-
«ծութիւն ձեր վերստին ընթեռնուլ զայն թուղթ մեր, ուր
«ունի անդէն ի միտ առնուլ, թէ չունելով յայնժամ զիւ-
«տարութիւն անցանելոյ Յերոպա, ոչ ես և ոչ եղ-
«բայրն իմ Յովհաննէս, պարտական համարեցաք զանձինս
«առաքել զայն թուղթ առ Ձեզ վասն ունելոյ առատնար
«զոք ի կողմանէ ձերմէ առ ի աւարտել զսացեալ զոր
«ծառութիւնն։

«Ոչ երկմտիմ, գերապայծառ Տէր, թէ զկնի յայտարա-
«բութեանս չկամիցի մեծութիւն ձեր անմեղադիր առնել զիս
«բոլորովին վասն անակնկալ դիպուածոյն, որով հարկաւո-
«րիմ յամեցուցանել զկատարումն զանչափ ցանկացեալ
«առաջարկութեանս, որ է այնքան օգտակար ազգին Հայոց։

«Մեծութիւն Ձեր թերևս արդէն լուեալ է զմեկնելն եղբօր
«իմոյ Յովհաննու Յերոպա, որ ցայժմ ունի այդր լինել։
«Եղեալ է նա ի մեր, զկնի ամենայն բնակութեան
«Անգղիա, գնալ ի Վենետիկ, առ ի ընծայել անձամբ
«զյարգասին ուղերձս ձերումդ մեծութեան, վասն զիւրապոյն
«եւս միջոցաց ի հաստատել զդպրատունն խնդրեալ։

“ Երկրին Յարդոյապատիւ Հարքն, զորս բարեբաղդու-
“ թեամբ ունիմք առատանօր գրեթէ յերից ամաց հետէ, ու-
“ նին կամս մնանել ի նաւ առ ի դառնալ Եւրոպա ընդ
“ առաջին գումարտակի նաւաց։

“ Եւ պատիւ անձինս համարիմ լինել խորին յարգանաք,

“ Գերապայծառ Տէրութեանդ

“ Ի Մարրաս. 11 յուլիս. 1818.

“ Ամենախոնարհ ծառայ
“ ՀԵԴԻԱՐԹ Ս. ՄԱՍԻՍԱՏ. ”

Մինչդեռ գործակալքն երկոքին պատրաստէին ի շուտ, լսեն զի Եդուարդայ չէր ինչ գրեալ առ եղբայրն. և իրրեւ հարցանեն ցնա զիրաւն, ընդունին պատասխանի տարօրինակ և տարապայման անկեղծիկ.

“ Գրեցի, ասէ, այլ զհակառակն ամենեին։ ”

Ի նոյն աւուրս ընդունի Պ. Եդուարդ զիր յեղբօրէն իւրմէ ի Պարոն Յովհաննէ, յորում յետ առաջի առնելոյ զկանոնս ինչ դպրոցի միոյ ուր աշակերտքն յաւագի գծագրելով ուսանին զամենայն ի սուղ ժամանակի, պարտաւէր զգիտաւորութիւն և զգործ հօրն իւրեանց, իբր զի այնպէս յանխորհուրդս եթող հրիտակ մեծ ի պէտս անելութի և անեղան և վարատեալ ազգիս Հայոց. և յայն կնքէր զրանն, եթէ և ամենապոքրիկ իսկ մասն այնր հրիտակի շատ է վասն դպրոցի որք և ազգատ մանկանց ազգին։

Տեսեալ գործակալաց զայս ամենայն, և լուեալ զրանս ընտանեացն Մուրատեանց և ծանօթից նոցա ամենեցուն որ ի Մարրաս, զի խրատ տային մի՛ զրաչան վատակել ասէս իրացն, (քանզի մի ի կտակակատարաց անտի, իրրեւ լուաւ ասէին, զգալուստդ ձեր, աճապարեաց խոյս եւ ասէ, որպէս զի անչատմամբ կտակակատարացն անդարձ կացցէ մնացէ իրն. և մինչեւ որ ասա՝ ազազակէ համարձակ եթէ չեն նեմա

բնաւ կամք ի դուրս տալ զհրիտակն, և թէ՝ ոգեպահիկ է այն թողեալ նոցա ի հօրէն,) յուսահատ և ձեռնթափ լինին յամենայնէ, և սկսանին ի խնդիր լինել նաւու՝ երանել ի Մատրասէ և դառնալ ի Լոնտոն և անտի ի Վենետիկ ի վանս։

Ընդ այս խորհուրդ գործակալացն հաճի Պարոն Եդուարդ յոյժ յոյժ, և ինքնին առաջնորդէ նոցա գտանել նաւ պատրաստական, որպէս զի ժամ մի յառաջ երեալ մեկնեցին գնացին յիւրմէն ի բաց։ Եւ թէպէտ տիկին մայր նորին Աննա հակառակ կայ նմա, և հաւանեցուցանէ զգործակալն կալ մնալ անդէն այլ եւս տարի մի, զի թերեւս որդին իւր Յովհաննէս փութացի ի կատարումն կամացն հօրն, սակայն նոքա տեսանեն յետ ամսոց բազմաց զի վայրապար է յամել իւրեանց ի քաղաքին։

Յայն միջոց ժամանակի իմանայ Պ. Եդուարդ հնարիւք իմն զի ի հրահանգին տուելոյ ի Մխիթարեան միաբանութենէ առ գործակալն երկոսին եղեալ էր և այս պայման անտանելի արդարեւ, զի Միաբանութիւնն ոչ տացէ կտակակատարացն զհաշիւ մատակարարութեան հրիտակին։ Ընդ այս բան և եւս զայրացեալ Պ. Եդուարդայ՝ հարցանէ յաւուր միում ցգործակալն թէ որո՞վ իրաւամբ չկամի միաբանութիւնն տալ կտակակատարայ և ժառանգաց բարերարին զտարեկան հաշիւ ծախուց գպրատանն։

Պատասխանի տայ Հ. Սարգիս Վարդապետ Թէոդորեան և ասէ. «Այս է պահանջումն միաբանութեանս. իսկ ձեր կամքդ «զի՞նչ են, Պարոն.»

Ասէ Պ. Եդուարդ. «Իմ կամք այս են զի միաբանութիւնն «տացէ մեզ զհաշիւ ծախուց դպրոցին զոնէ միանգամ ի տար- «ւոջն։»

Յայնժամ ասէ ցնա Հ. Սարգիս. «Բարի է. ահա խոստա- «նամք մեք բանիւ և գրով զի միաբանութիւնն տացէ ձեզ «զհաշիւ ծախուց դպրոցին ոչ միանգամ ի տարւոջ, այլ և «երկիցս, ի հաճել զկամս ձեր լիովին. ապա ուրեմն տարա- «տեսջիք զգործն։»

Ասէ Պ. Եդուարդ հանդարտութեամբ. «Արդէն թողեալ

«Եմ ես աւարտել զայն եղբօր իմոեմ ընդ միաբանութեան
«ուղղակի ի Վենետիկ։»

Վասն որոյ և գրէ գիր առ Արքայն Գէր. Առեխանոս Ագոնց, օրինակ զայս.

«Գերապայծառ Տէր.

«Ի Մադրաս. 15 յունվար 1820.

«Պատիւ ունիմ ծանուցանելոյ Տէրութեանդ զմեկնիլն
«Վ. Վ. Հարց Սմիթի և Սարգսի դէպ յԵւրոպայ նաւաւ ընդ-
«կերութեանն անուն Դշխոյ Շառլոթ Վալէսեան։

«Հեռաւորութիւն եղբօրս խափան եղեւ ինձ ի հաստատել
«ինչ ընդ նոսա ի վերայ հիմնարկելի Դպրոցանն ի պէտս
«դաստիարակութեան մանկանց Հայոց։ Մեծութիւն Ձեր
«կարող է իրաւախոհ լինել զայդմանէ ընդ եղբօրս Յովհան-
«նու զոր այժմ կարծեմ ի Վենետիկ լինել։

«Պատիւ ունիմ լինել յարգութեամբ,

«Գերապայծառ Տէր,

«Քումդ մեծութեան

«Ամենախոնարհ և ամենահնազանդ ծառայ

«ՀԵԴՈՒԱՐԹ ՄՈՒՐԱՏ.»

Իրրեւ հասանէ ժամն մեկնելոյ գործակալացն ի Մատրաս՝ խնդրեն նոքա ի Հեդվարթայ զծախս ճանապարհի իւրեանց ի Լոնդոն մինչեւ ի Վենետիկ։

Ասէ նա նոցա, թէ գնացեալ խնդրիցեն զայն յեղբօրէ իւրմէ ի Յովհաննու ՅԵւրոպայ։

Ասեն ցնա գործակալքն, թէ յո՛ր կողմն Եւրոպիոյ գտեալ գնա խնդրիցեն ի նմանէ զծախսն զայն։ Եւ ի զլանալ Հեդ-վարթայ տալ նորա զայն, ասեն ցԱննա տիկին մայր նորա, թէ ունին առնուլ յարծաթոյ անտի զոր կամէր պարգեւել նո-

ցաւ յառաջ և զոր ի ձեռս իւրեանց պահէին դեռ, գուշակելով զժլատութիւն Հեգվարթայ։

Հարկաւորի Տիկին պարտաւորել զորդին իւր տալ զայն։ Եւ այնպէս մեկնին գործակալքն ի Մադրասէ ի 15 յունվարի յամին 1820, և զամիսս չորս նաւարկեալ բազում նեղութեամբ, սակս նեղին և յոռի սենեկաց իւրեանց անդ, մինչեւ միոյ ինոցանէ Հ. Սուլխասայ վարդապետի Սմայլեան, զրոմանգակ ճանապարհն տանջիլ ծանր ինչ խօթութեամբ. քանզի չգտանի ինաւի անդ այլ սենեակ, կալեալ զրոմանգակն ի ճանապարհորդաց յառաջագոյն. և զի կամի Հեգվարդ Մարտաս զմեկնիլ նոցա անտի յիւրմէ ժամ մի յառաջ, չսպասէ այլ նաւու, այն զի և զիւրային լինի վարձ նորին, ըստ ցանկութեան իւրում։

Նաւն այն հանդիպի ի կղզին որոյն Հեղինեայ, ուր եկեալ չրջին գործակալքն ժամս ինչ, և ուր տեսանեն ի հեռատանէ զմեծն Նապոլէոն, որ զգնայր ի պարտիզի անդ բանտի իւրում։

Ժամանեն գործակալքն ի Լոնտոն ի 18 մայիսի նորին ամի, և գնացեալ օթեվանին ինամին տանն, ուր երկու ամսք յառաջ բնակեալ էին զամիսս երիս, և ուր հանդիպի նոցա Աղէքսանդր Ռաֆայէլ ինամին իսկ աւուր և ժամու եւս հասանելոյ նոցա անդ, և հեգնէ նախ զընդունայն աշխատութիւն նոցա, չքակելով միաբանութեան յանձնել իւր զգործակալութիւնն այնորիկ։ Որում տան պատասխանի գործակալք, թէ միաբանութիւն զպարտս իւր կատարեաց, և ինքեանք զիւրեանցն։

Եւ ապա ասէ նոցա իբրեւ զլուր ինչ աւետեաց, զաղէտալի անցս Տիւզեանց, զգլխատումն նոցա և այլն։

Ընդ այն անակնկալ և սարսափելի լուրն ասասին գործակալք և ցաւին յոյժ յոյժ։

Ասէ ցնոսա Աղէքսանդր Ռաֆայէլ թէ չէք այսուհետեւ միաբանութեան ակնկալութիւն ինչ բարեաց ի Զօլանցի ազգայնոցս։

Ասէ ցնա Հ. Սարգիս, թէ ակնկալութիւն բարեաց միաբանութեան ի Տեառնէ եղեալ է, և լիցի միշտ։

Լուեալ Աղեքսանդրի զայն պատասխանին փոխէ զլեզուն իւր, և հրաւիրէ միանգամ և երկիցս զՀ. Սարգիսն առ իւր, խօսելով ընդ նմա մտերմաբար իբրեւ զառաջինն, յորժամ ի վանս էր, զբազում բարեաց հաստատակաց, և ցուցանելով զինքն յօժար և պատրաստ առնել զայն, եթէ քաջալերեսցի ինքն ի միաբանութենէն միջնորդութեամբ նորա։ Խոստանայ նմա Հ. Սարգիս առնել զամենայն ըստ կարի իւրում, որ յօգուտ հաստատակաց ազգին։

Կացեալ գործակալացն ի Լոնդոն աւուրս ինչ՝ անցանեն ի Փարիզ, և անտի ի Վենետիկ։ Զճանապարհայն հանդիպին նոքա Յովհաննու Մուրատի ի Միլան. զի իմացեալ նորա զհասանել նոցա անդ, առաքեալ կոչէ զնոսա առ իւր ի պանդոկի անդ բնակութեան իւրոյ, և հարցանէ ի նոցանէ զողջունէ մօր և եղբօր իւրոյ, և զընտանեաց իւրոյ առհաստատակ։ Իսկ զելից իրացն, վասն որոյ կոչեցեալ էին զնոսա ի Մատրաս, ոչ ինչ հարցանէ, այլ միայն, թէ ունի ինքն կամս գնալոյ ի Հռոմ, և անտի անցանել ի Վենետիկ։

ԳԼՈՒԽ Գ.

Ալևնա տիկին՝ այրի Աղա Սամուէլի Մուրատայ. — Թուղթ նորա առ որդին իւր Պ. Յովհաննէս Մուրատ. — Պատասխանի նորա առ նա՝ գրեալ ի Հռոմի կամ ի Միլանի. — Թղթակցութիւնք Յովհաննու Մուրատայ ընդ առաջնորդի Մխիթարեանց ի 1818 ամի մինչեւ ցամին 1820.

Ասեն տիկին՝ այրին Աղա Սամուէլի Մուրատայ և մի ի կուսակակատարաց նորին, տեսեալ զգնացս որդւոյ իւրոյ Եդուարդայ ընդ գործակալս միաբանութեան, և լուեալ թէ և կրտսեր որդին Յեւրոպա յայլ իրս պարապի և ոչ բնաւ ի կատարումն կամաց հօրն ի մասին հրխտակին ազգատոհ և որբոց, վշտանայ յոյժ ընդ այն, և ի մերձենալ ժամանակի

մեկնելոյ գործակալացն ի Մատրաէ առանց ինչ վճարելոյ, Ջանայ այլով ինչ ակնկալութեամբ պահել զնոսա անդ գոնէ և տարի մի եւս. վասն որոյ սկսանի հաւաքել առ նոսա գումար ինչ արծաթոյ, իբրեւ 50,000 Ֆրանք, վասն բարեպաշտական ինչ գործոյ զոր կամէր կատարել ձեռամբ նոցա։

Պահեն նոքա զայն արծաթ առ իւրեանս՝ իբրեւ առանց բայց ի լրանալ պայմանեալ ժամանակին, իբրեւ տեսանէ զի պատրաստին նոքա ելանել ի ճանապարհ, և չկամին այլ եւս սպասել անդ, առաջարկէ նոցա աղաչանօք զի գոնէ մին ի նոցանէ մնացէ վասն հոգեւոր միխիթարութեան իւրոյ։

Պատասխանի տան նմա նոքա, թէ առաքեալ են ի միաբանութենէ իւրեանց վասն բանի դպրատանն, և ոչ վասն այլ ինչ իրաց. վասն որոյ պարտ է նոցա այժմ դառնալ ի վանս իւրեանց. եթէ ունիցի նա պէտս տաներիցու, գրեսցէ ի վանս առ առաջնորդն և խնդրեսցէ ի նմանէ. և եթէ հաւանեսցի միաբանութիւնն՝ առաքեսցէ նմա զոք յիւրոցն։

Զայս ասացեալ՝ դարձուցանեն ինքնագլուխ արծաթն։

Լուեալ տիկնոջն զբանն զայնոսիկ, և տեսեալ զանշահախնդրութիւն նոցա, զարմանայ և ցաւի ընդ չյաջողել ակնկալութեան իւրոյ։ Ապա հարցանէ ցՀ. Սարգիս վարդապետ. «Եթէ խնդրեցիս ասէ իմիաբանութենէն զոք վասն հոգեւոր «միխիթարութեան իմոյ, և եթէ հաճեսցի միաբանութիւնն «կատարել զխնդրուածդ իմ, յանձն առնուցցուս զայն և «դարձցիս վերատին ի Մատրաս։» Իբրեւ ցուցանէ նմա Հ. Սարգիս զհաւանութիւն կամաց իւրոց, խոստանայ նմա Տիկինն 150,000 ռուփի, և զայն խոստումն իւր գրով եւս հաստատէ։

Իսկ ի մեկնել գործակալացն գրէ Աննա տիկին զիր մի առ որդին իւր Պարոն Յովհաննէս Մուրատ յԵրոպ, ցաւագին սրտիւ, մեղադրելով զնա զի պատճառ լինի խափանման գործոց, և հրամայէին ողորմութեան, և յանձնէ զդիրն զայն ի ձեռս Հ. Սարգսի, տալ որդւոյ իւրում։ Զայն թուղթ մատուցանէ Հ. Սարգիս Պ. Յովհաննու Մուրատայ անձամբ ի Միրան քաղաքի Խարբերդոյ։

Ընթերցեալ նորա զայն վեր ի վերոյ, ասէ. «Լուցուք «ի ձէնջ կենդանի ձայնիւ զլուր ընտանեացս և զայլոց։» Եւ ապա առնէ պատասխանի Յովհաննէս Մուրատ թղթոյ մօր իւրում օրինակ զայս.

. . . . . .

«Թուղթ Մայրութեանդ ժամանեալ ի ձեռս իմ միջնորդութեամբ Հօրն Սարգսի այնչափ զարմացոյց զիս, ըստ «այնմ մասին ասեմ որ ըստ կարծեաց ձերոց վկայութեան «ամենեցունց ամբաստան լինիք զինէն և զեղծօրէ իմմէ վասն «այնպիսի յանցանաց որ չարահամբաւ առնէ զմարդ և անիծանել տայ յապազայն զյիշատակ նորա. այսինքն, գրաւեալ սեփականել զայն որ ոչ վերսրերի առ ինքն, և այս զրկելով զկարօտեալս։

«Արդ՝ դու ես մայր իմ որ արկանես ի վերայ մեր զայսպիսի յանցանս, կամ թէ զայսպիսի կարծիս ունիս զմէնջ. «դու ասես որ կրեցեր զերկոսին զմեզ ինն ամեայ ժամանակս յարգանդի քում։ Այնուհետեւ ոչ եւս կարեմք յայլ «մարդկանէ ապասել անբարեբարի դատաստանի վասն այսորիկ, որ կենդանուն մեր զմեզ ի մահ դատապարտէ։ Բայց «զայս ծանուցեալ գիտասջիր, զի թէպէտ կարծիք մարդկան և «մանաւանդ այնոցիկ զորս դու ի վկայութիւն ածես, մեք առ «ոսն հարեալ ընդ տիրմն թաւալեմք. որովհետեւ խիղճ «մտաց մերոց զուտ և մաքուր լինելով իբրեւ զերկինս զոր «նշմարեմք ի վերոյ գլխոց մերոց, կարեմք պատասխանել «նոցա ըստ սարսափ դեպանին Կարթագինեցւոց. Ամ թշուառականք, ունիմք մեք դատաւոր զԱստուածն զայն՝ որ այն«պէս չարաչար պատուհասակոծ արար զնկուն խորհուրդս «և զչարակամութիւն ձեր, և այսօր ի հող և ի մոխիր դարձոյց զձեզ։

«Բայց առա՛ջ՝ ո՛վ մայր իմ, դու որ ինձանձու ոչ բերիս «ընդ այս, այլ համոզեալ ինձնզաւոր խորամանկութենէ «չարախոհից, և միանգամայն կոյր իմն խղճմտութեամբ

“ ընթռնեալ, ոչ յիշեա՝ զի ունիմք յերակս մեր զարիւն այնո-
“ րիկ որ պատուեաց զաւուրս քո, և իմեռանելն իւրում հա-
“ մարէր թողուլ զմեզ ի բազուկս այնորիկ զոր վաղ ուրեմն
“ սովորեցոյց ընդդրկել և ապահովս առնել զմեզ ընդ քեզ,
“ զինչ ինչ կարեմք ասել քեզ։ Ապաքէն ոչինչ։ Բնութիւնն
“ արձանացոյց զքեզ յանդիման մեր ի վեր քան զտիեզերս.
“ ի բարձանց անտի ուրեմն լսեմք զձայն քո և հեծեծեմք
“ լուութեամբ։ . . .

“ Բայց զինչ վրիպակ, ո՛վ բարձրացեալ ամենակարող
“ Աստուած բոլորից. զորպիսի՞ տիրագին խորհուրդս մատու-
“ ցանէ մեզ. իցե՞ն երբէ՛ք ժամանակք ի կենցաղս, յորում
“ պարտ իցէ զաւակաց մարտ դնել ընդ ծնողս իւրեանց՝ առ-
“ ի անապատաք կալ ի շաւիղս իմաստութեան և խոհականու-
“ թեան յոր նոքին զնոսա եդեալ առաջնորդեցին։

“ Զինչ խնդրես իմէնջ, ո՛վ մայր իմ. զի՞նչ. մի՞թէ կոյր
“ զկուրայն դնել ի ձեռս անձանց յաւէտ եւս կուրագունից,
“ և այնոցիկ զորս ոչ ճանաչեմք, զայնչափ կոյս գրամոց,
“ զոր հայր մեր յանձն արար ի ձեռս մեր ի գործ ողորմու-
“ թեան յօգուտ համօրէն ազգիս մեր օրհնել։ Մի՞թէ իցէ՞ այս
“ ինչ զոր պատուիրեաց մեզ առնել։

“ Աղաչեմ, ընթերցիր և վերստին ընթերցիր և հաղարիցս
“ կրկնեա ընթեռնուլ զայն կտակ զոր դու մեզ յանդիման
“ արկանես։ Եթէ միտք և խորհուրդ Հօր իմոյ էր երկու հա-
“ րիւր հազար հուն յաւելուլ ի գանձս վանացն Վենետկոյ,
“ որպէս դու համարիս, զիարդ ինքն անձամբ ոչ վճարեաց.
“ զի՞նչ պէտք էին չորան ամաց ժամանակի զայդ խորհելոյ,
“ ուր ի սուղ ժամանակի կարէր ի գործ դնել, այս ինքն և
“ եւս հարստացուցանել զմիաբանութիւն մի այնչափ հարուստ
“ արդէն՝ որչափ խորամանդ և բանարկու։ . . .

“ Գանե՛ցս արդեօք կարեկից եմ եղբօր իմում՝ տեսեալ
“ զնա ինոյն օրինակ վիշտս տառապանաց ընկղմեալ՝ յորում
“ ես փոքր ի շատէ զփորձն առի թղթովդ. բայց սակայն թե-
“ բեւս վշտագնութիւն եղբօր իմոյ նուազագոյն իցէ քան
“ զիմն, այնու զի մայր իւր վեց հազար մղոնաչափ տարակա-

“ յութեամբ ի բացեայ՝ ոչ խօսի առ նա որպէս առ իս, որ ոչ
“ խնայեաց գրել, ասելով. Գիտեա զի դու առաքես զիս
“ կենդանի ի գժոխս՝ և այլն, և այլն, և այլն. ուր և այս
“ իսկ և այլն՝ յի և սաստիկ է զօրութեամբ, զոր քաջ իմա-
“ նամ։ . . .

“ Ա՛հ մայր իմ, եթէ սիրտ իմ ոչ դժկամակէր, իշխէի
“ ասել թէ բնութիւնն իւրովքն օրինօք են լոկ մոռացածին
“ զառանցանք։

“ Եթէ որդին զոր նորոգ ստացար քեզ, և այն ասեմ որ
“ արար հատանել զիս ի սրտէ քումմէ, չկամեցաւ մնալ առ
“ քեզ, այնուհետեւ չէր պարտ քեզ զանգատել զինէն և
“ արգահատել զքեզ՝ զիս անիծանելով, այն զի և գրեցի
“ ի վանան կատարել զխնդիր քո, մնալոյ նմա այդր։ Իսկ այն
“ զոր կամէիր՝ թէ անձամբ գնացեալ ի վանս արարից զխընդ-
“ բեալդ, առ ի ժամն անկարելի էր առնել. քանզի թուղթ
“ քո եհաս առ իս ի Փարիզ ի խոր ձմերան։

“ Եւ թէպէտ ընդունիմ, թէ պարոն Սարգիսն արժանի
“ է ամենայն զոհից առնելոյ վասն նորա, բայց չկա-
“ րէի խորհիլ, նաեւ ի վտանգի կենաց գնել զիս, և զբր-
“ կել զորդիս ի մօրէ, որոյ փոխարէնն չէ այնքան դիւրին
“ առնալ։

“ Մի՛ արդեօք ազգական ինչ բանքս երեւեցին քեզ, որ-
“ պէս մանուկ որ զայրագնի ընդ բանս մօր իւրոյ. զի քաջ իսկ
“ իմանամ թէ բնութիւնն ուրքան վայրապար ծառայեաց մեզ
“ ի սրտի քում. որովհետեւ ըստ դիպաց ինչ զառաջինն հան-
“ դիպող քեզ այնպէս դիւթեալ հմայեաց զքեզ մինչեւ ի չիք
“ դարձուցանել յաչս քո զընտիր կապանս, որով ծնողք ու-
“ նին ակն ածել յանձինս նոցն իսկ անառակ զաւակաց.
“ այն որ առնէ նոցա զգալ իբր զձգումն էլէքտրական, զոր
“ ոչ կարեն նուազել, յորժամ ձեռնամուխ լինին զպատիւ
“ որդւոյն ապատել։

“ Բայց որ զիսն մխիթարէ այս է, թէ պակասութիւնք
“ որդւոց քոց ոչ արդելեն զքեզ խնդրել զայլ որդիս, որ և
“ այս ի մեծագոյն զովեստի մասին համարեալ է նոցա, զոր

“ այժմ այլ եւս բանս զգացողութեանց խնդ, յաւաղ բերեալ
“ քննեցուք զվիճակ վանացն, և զպարտաւորութիւնն զոր
“ եդ հայրն մեր ի վերայ մեր ։

“ Նախ զայս ասեմ, թէ եւ զայս տուրս համարիմ արա-
“ բեալ վասն չքաւոր և որբ մանկանց Ազգիս, որ ոչինչ կա-
“ պակցութիւն ունին ընդ վանաց. և յայսմ գործառնութեան
“ համարիմ, որպէս պարան է, զվանան իբրեւ մասն երկրոր-
“ դական գործակից ընդ մեզ ։

“ Բայց նաեւ ենթադրեալ թէ վանքն յայսմ կողմանէ՝ է
“ արժանի ամենայն հաւատարմութեան, այսու ամենայնիւ
“ մեք ոչ պարտիմք և ոչ կարեմք ի բաց դնել յայսմ զիրա-
“ ւունս անմիջական վերակացութեան և կառավարութեան
“ դպրոցիս այսորիկ, նա և ոչ հրաժարիլ ի ցուցանելոյ զտուն
“ Մուրատեան որպէս միայնակ հեղինակ, յորմէ կախեալի
“ կացութիւն և ընթացք տրամադրութեան և կառավարու-
“ թեան նորա, որով և ամենայն ինչ որք վերաբերին առ զե-
“ տեղումն դրամոցն և առ ապահովութիւն նորա, պարտի
“ ի գործ դնել ինամանէ և յանուն նորա ։

“ Իսկ ըստ երկրորդ տեսութեան որ վերաբերի առ ընթաց
“ ուսմանց դպրոցին, այսինքն ի կրթութիւն մանկանց և յու-
“ սումն հայկազեան լեզուին, զայն տամք վանացն ըստ ամե-
“ նայն արտօնութեանց՝ որք միանգամ համաձայնին վիճակի
“ իւրեանց. և այս է զոր կատակ հօր մերոյ ընձեռէ նոցա.
“ զայս անխիղճ վկայեմ առաջի երկնի և երկրի ։

“ Ահա այս է զոր հայրս իմ իմանայր յառնելն, և զայս
“ յայտ առնէ իւրն թողեալ կտակ. և այս է որ խիղճ մտաց
“ իմոց և գաստղութիւն իմ առաջնորդէ ինձ ի սրտի մտօք
“ ի գործ դնել, ուր ոչինչ այլ մտածութիւնք թելադրեսցեն
“ ի փոխել զխորհուրդս իմ, և այլ ազդ գործել ի շահ և
“ ի դիւրութիւն այլոց ։

“ Բայց տեսցուք և քննեսցուք այժմ թէ քո երեւակայեալն
“ ուրքան ներհակ է այժմու կացութեան այնր վանաց, և ներ-
“ հակ խոէային այնոցիկ որք աչօք իւրեանց տեսեալ են զվանան
“ և ձեռամբ շօշափեալ, որք և քաջ ճանաչեն քան թէ դու և ես.

“ այնպէս ասեմ, զի կացք և անկարգ ընթացք վարուց նոցա
“ ունի բնաւին հեռացուցանել ի մէնջ զխորհուրդ՝ տալոյ
“ ի ձեռս այնպիսեաց զայսչափ դումար դրամոց և հաւատալ
“ նոցա զվիճակ այնչափ որք մանկանց, որոց հայր մեր նոցա
“ եթող զժառանգութիւնս զայս։ Եւ յայսմ ոչինչ երկբայիմ
“ վկայ բերել ընդ այլս զեղբայրն քո զԱղեքսանդր, որոյ
“ զառաջինն կոյր զկուրայն ջերմեռանդ վառումն առ վանս՝
“ անդր քան զչափն, ամենեցունց և քեզ գիտելի է։ . . .

“ Միաբանութիւնն ասեմ Վենետկոյ այժմ ո՛չ է այն որպէս
“ էրն և որպէս կարծիւրն յառաջ, ըստ որում և խեղճ հայրն
“ մեր միամտութեամբ ի հեռուստ այսր համարէր և երեւա-
“ կայէր։ Այլ է այսօր բաղկացեալ իրր ի քսան անձանց,
“ որոց երբորդ մասն ձեւանայ ի ոդէտ և յանուանումն գա-
“ տարկապորտ երիտասարդաց, որոց գործ և պաշտամունք
“ ի վանս են երկրագործութիւն և խոհարանի պարապիլ,
“ բուժել զանասունս և վարել զծառայական գործառնու-
“ թիւնս, և այլն, և այլն, որք ոչ վայել են քահանայական
“ և վարդապետական վիճակի. յորոց ճշդիւ խօսելով միան
“ միայն հինգ կամ վեց անձինք սակաւ մի ընդունակք, յորոց
“ երկուքն էին այնոքիկ զոր տեսեր։

“ Քանզի ի վիտ առ զի սոքա էին ընտրելագոյնքն ի նոցանէ,
“ ըստ որում մեծաւորն եւս իւրեանց վկայէ այսպէս զսա-
“ ցանէ։

“ Արդ՝ նաեւ սոքա հինգ անձինք որք միայն ներկայացու-
“ ցանեն զմիաբանութիւնն զայն, միշտ և հանապազ են
“ ի գրգռութիւնս և յանհամաձայնութիւն ի մէջ իւրեանց.
“ ումն կամի փոխել զկացս վանաց, ումն թողուլ զկղզին զայն
“ և այլուր բնակիլ, ումն ի մարդաշատ քաղաքս խառնիլ ընդ
“ աշխարհականս, և այլն, և այլն։ Իւրաքանչիւր որ ձանձ-
“ րացեալ ի վիճակէ իւրեանց, հնարին պատրուակս. ումն
“ զելս գտանել ազատութեան, և ոմանք ոչ յագելով առատ
“ գոյիւքն զոր ունին, հնարին իրաւամբ կամ անիրաւութեամբ
“ յաւելուլ այլ եւս ի վերայ։ Եւ յայսմ ամենայնի խրատան-
“ չիւր որ ջանայ զիւր կամն և զդիւրութիւն յառաջ տանիլ։

“ որով և ձեւացեալ է այժմու վանք ասացեալս անիշխան և
“ անդլուխ։ . . .

“ Տե՛ս ահա զվիճակ բարոյական և ֆիզիզական վիճակեան
“ միաբանութեանն։ Արդ ապաքէն ենթադրեալ եւս թէ հայր
“ մեր յաստակապէս եղեալ իցէ ի կտակի իւրում զի տացուք
“ մեք ի ձեռս վանաց զտուրս զայս, զոր նա որոշեաց ի մշակն-
“ ջնաւորել զյիշատակ անուան իւրոյ հանդերձ պայծառու-
“ թեամբ Աղգիս, և այսպէս իսկ ճանաչելով զգիտաւորութիւն
“ հօր մերոյ, հարցանեմ զքեզ, կարիցե՞մք արդեօք դնել
“ ի ձեռս վանացն զդրամս, տեսանելով զնա յայսպիսի թշուա-
“ ռելի և անկարգ վիճակ։

“ Մի՞թէ խիղճ մտաց չոյ ներիցէ՞ քեզ առնել զայս։ Ոչ
“ արդարեւ։ Ուրեմն ո՞րչափ զգուշութիւնս պարտ է ունել մեզ
“ յայսմ, տեսանելով զայսպիսի կացութիւն վանացն, մինչ-
“ դեռ հայրն մեր ենթադրելով զվանս ի բարեկարգութեան
“ պայծառացեալ՝ այսպիսի տանձ եղեալ է ի վերայ նոցա,
“ տալով զերաստանակն ի ձեռս մեր։

“ Այդչափ տարակոյս գոլով քո, ո՛վ մայր իմ, ոչ զիտես
“ զվիճակ տեղւոյս. և դու կարծես թէ արդարութիւն այն է
“ միայն զի զդրամն հանցուք ի չտակաց մերոց, առանց
“ մտախոհ լինելոյ՝ թէ յորո՞ց ձեռս պարտ իցէ աւանդել զայն.
“ և թէ, հատուցումն դրամոց փոխանակ արդարութեան ո՞չ
“ լիցի մահապարտ իմն յանցանք։

“ Խորհեա՛ տակաւ մի. հայր մեր վասն այսորիկ կարողու-
“ թիւն տալով մեզ ի կտակի իւրում, մի՞թէ չէ՞ յայտնի զի ինքն
“ զերկրորդական եւս մտածութիւնս ունէր։ Մի՞թէ այն
“ մտածութիւնք ի յայժմու կացութեան վանաց ո՞չ երեւի
“ կատարեալ։ Արդեօք չէ՞ր ամենամեծ յանցանք, եթէ յայս-
“ պիսի պարագայի ունկն մատուցեալ շաղակրատից՝ ի զերեւ
“ հանցուք զվախճան խորհրդոյ հօր մերոյ։ Ուր եթէ մեք
“ զայս առնեաք, դու լինէիր առաջինն որ ամբաստանէիր
“ զմէնջ. վասն այսորիկ և ազազակ հաղարաւոր անմեղաց
“ մի՞թէ ո՞չ ածէին ի վերայ մեր զվրէժն երկնաւոր։

“ Ո՛վ մայր իմ, մեք ոչ կամիմք զայսպիսի արատ բերել

„ ի վերայ այնր անուան որով դու կոչիս։ Բաւական ժամա-
„ նակ ունիմ էս դեռ եւս. ահա այժմ եմ ի ճանապարհի
„ գնալոյ ի վանս. անդր հասեալ՝ քննելոց եմ զամենայն ինչ
„ անձամբ անձին, և այնու եղանակաւ յառաջ ընթացայց
„ յայս գործառնութեան, որով կարացից ըստ օրինի ի կա-
„ տար հասուցանել զխորհուրդ հօր իմոյ, և այսու ցու-
„ ցանելով զմեզ իւր արժանի որդիս՝ ցուցցուք միանգամայն
„ և քեզ արժանի։

„ Յուսամ՝ ո՛վ գորովագութ մայր իմ, զի այս թուղթ ցուց-
„ ցէ քեզ, թէ որդիք քո ոչինչ անիրաւին յայսմ, այլ
„ զպարտս իւրեանց կատարելով ակն ունին միխիթարել զքեզ։
„ Եա ոչ եմ փոխեալ, որպէս կարծեաց, այլ նոյնն եմ որ
„ ի հրաժարիլն ի քէն անկայ յոտս քո ի խնդրել զմայրական
„ օրհնութիւնդ։ Երանի՛ թէ յայս կէտս եւս կարող էի զնոյն
„ առնել և խնդրել ի քէն, զի փոխեացի գժկամակութիւն քո
„ ի յօրհնութիւնն, զոր քաջ ծանուցեալ գիտեմ թէ յարա-
„ ժամ կարեւոր է ինձ, զոր և յուսամ ընդ հուպ ժամանելս
„ արդեամբ ժառանգել։ . . .

„ Բարեւս կաց մայր իմ, և սիրեա՛ զորդին քո, որպէս ինքն
„ սիրէ զքեզ. և հաւատի լեր զի նա է և եղիցի մինչեւ ցվերջ-
„ ին կէտս կենաց իւրոց նոյն հնազանդ և կարեկիր որդի,

„ Ի Շամ. 13 սեպտ. 1820.

„ ՅՈՎՀԱՆՆԷՍ Ա. ՄՈՒՐԱՏԵԱՆ.„

Աւելորդ է արդեօք ի վերայ բանից այսր թղթոյ, զոր ուրեք եւեթ համառօտեցաք, երկարապատում խորհրդածութիւնս յաւելուլ։ Եւ զոր ի մէջ բերաք ասա՝ ըստ բաւականին յայտ առնէ զդիտաւորութիւն բարերարին վկայեալ ի ժառանգէն, և զհամարումն զոր ստացեալ էր ինքնին կամ ի թելադրելոյ այլոց՝ զանձանց և զվիճակէ Մխիթարեան միաբանութեան այնր ժամանակի։

Ահա այսքան և այսպիսի գնացք մեր ի կատարմանդ

բարերարին ընդ գործակալաց Մխիթարեան միաբանութեան հրաւիրելոց ի Վատրաս, և միւսոյն ընդ նոսա ըստ դիպաց իմն գնանապարհայն ի Միլան քաղաք։ Տեսցուք ապա զառաջն և ընդ միաբանութեանն յԵրոպայ, և զայս կարգաւ, սկսեալ ի սկզբանէ անտի, հանդերձ հաւատեօք։

Արդ մեկնեալ Յովհաննու Վարդապետի ի Վատրասայ ի 20 յունվարի յամին 1818, անցանէ նաւաւ ի Լոնդոն, և կացեալ անդ և ի Փարիզ իրրեւ տարի մի չծանուցանէ զոյն Մխիթարեան միաբանութեանն որ ի Վենետիկ, ապա ուր ուրեմն իմացեալ միաբանութեան զոյն այլուստ՝ գրէ առ նա գիր յաղաչանաբութեան, միանգամայն և զարմացման, յիշեցուցանելով նմա զպատճառն հրաւիրելոյ և գնալոյ գործակալաց իւրոց ի Վադրաս, և ըստ նորա զգալանէ իւրմէ յԵրոպայ, այսրէն հանդերձ, օրինակ զայս.

„ Պարոն.

„ Յայտնիկ առաւել քան զԱնգղիացւոյ ուսումնէ՝ թէ
„ եկեալ բնակիք ի Լոնդոն հանդերձ գերդաստանաւ ձերով։
„ Անհարթ եղեւ մեզ հաւատս ընծայել այսմ. քանզի գրեալ
„ էիք մեզ ի Վադրասէ ի 25 սեպտեմբերի 1816 ամի, եթէ
„ „ Ոչ ձեռնտու գոլով տարեւոյ փոփոխմանց մերոց հա-
„ „ նապարհ առնել մեզ յԵրոպա, համարձակիմ աղերսել
„ „ զՄեծութիւն ձեր յղել մեզ զմի ոմն ի հարց ուխտիդ։ „
„ Զկարացաք եւս հաւատալ, եթէ հասեալ ձեր ի Լոնդոն,
„ չիցէք հաճեալ իրազեկ առնել զմեզ երկրորդիւ գալստեանդ
„ ձերում՝ զհանգամանաց ազգատոհմիդ ի Վադրաս, և թէ
„ զինչ անցք անցանիցեն ընդ երկոսին Հարս մեր առաքեալս
„ անդր, սակս ազգային վարժարանի հրամայելոյ կուսակալ
„ Բարեյիշատակ Հօրն ձերոյ։

„ Մարթ ինչ իցէ մեզ ասել, եթէ կորուսեալ իցէ նամակն
„ Ձեր ուղղեալ առ մեզ։ Եւ մինչդեռ յայտնիկ ծփէաք կեղա-
„ կարծ խորհուրդս՝ ընկալաք ի 13 տարին ամոյ, զիր ի միաբան-
„ ներց մերոց ի Վադրաս, տուեալ ի 16 ապրիլի, որ զեկուցանէ
„ մեզ եթէ մեկնեալ է Ձեր երիւք ամօք յառաջ քան զժա-

«մանուն իւրեանց, և երթիր պատճառս դնել զկազդուրս
«մին Ձեր ի խօթութենէ օգտակարութեամբ։

«Ընդ այս լուր ցաւեաց մեզ յոյժ, սակայն ակն ունիմք
«եթէ յաջողեալ իցեն հնարքդ այդոքիկ ի կազդուրումն
«ցանկալի կենդանութեանդ, զնոյն պարտիմք և մեք մշտա-
«մրուռնչ աղօթիւք ի Բարձրելոյն, երախտապարտ զմեզ ճա-
«նաչելով առ Աստուծոյ Մուրատեան վասն այնչափ բա-
«րեացն որ առ Ազգն մեր։

«Նոքին թղթով ազդ առնեն մեզ եւս եթէ ի Լոնդոնէ ան-
«ցանելոց է ք ի Փարիզ, և անտի ի Վենետիկ։ Որ յաւուր
«անհամբեր սրտիւ ակնկալեալ մնամք այսմ երանելի պա-
«հու, և վիշտ մեծ է մեզ յապաղումդ Ձեր ցարդ։ Յոյս մի
«մեծ ունիմք եթէ յառաջիկայ գարնանի տեսցուք զՁեզ
«առ և ուրախացեալ սիրտիւցուք, ձեռն ի գործ արկցուք
«եւս ի կանգնումն ազգային վարժարանին, որում յոժա-
«րամիտք եմք ամենեքին։

«Քանզի անդէն իսկ ընդ առնուլն մեր, Պարոն, զյոր-
«ուածն կուակի Մեծարգոյ Հօրն ձերոյ հանգուցելոյ, և
«զթուղթն որ հրաւիրէր զմի ոմն ի մէնջ գնալ ի Մադրաս
«ի գործ վարժարանի, և ընդ առաքելս մերում անգր ի Մադ-
«րաս, ոչ մի և եթ այլ երկուս ի մերոցս Հարց յապահո-
«վութիւն երկարաձիգ ուղեւորութեանն, բուռ այս տարա-
«ծեցաւ ընդ ամենայն Եւրոպա և ընդ Արեւելս Համօրէն,
«և յոլով ուրեք բանս ի մէջ առեալ օրագիրք դրուատելով
«զվեհանձն առատաձեռնութիւն և զազնուամիտ զգածմունս
«արժանապատիւ Հօրն Ձերոյ։

«Նմին իրի և Պետութիւն քաղաքիս եւս մեզ զցուցակ կալ-
«ուածոցն վաճառելոց ընդ իւր ձեռն։ Եւ միարանութիւնս
«մեր նուիրեալ զերկուս ոմանս յԱնդամոցն իւրոց յայս եր-
«կարատեւ և դժուարին ուղեւորութիւն Արեւելեան Հընդ-
«կաց, ձեռն ի գործ առնէ տակաւ ի հաստատումն վարժարանին,
«սկիզբն առնելով կարգելոյ զկանոնս նորին և յօրինելոյ նա-
«խակրթական մատեանս նորանորս ի բարբառք գրաբարա-
«կրութիւն Հայկազեան մատենագրոյն։

„ Մնայ մեզ արդ փափաքել փոխադրութեան արծաթոյն
„ կարգելոյ յայդ ի կուակէն, առ ի կարող լինել յարդիւնս
„ ածել վաղվաղակի ցվերջին ուխտս կուակողին, յաւերժ յի-
„ շատակ Աղբանեանց գրոհի, որոյ գովութիւնքն և օրհնու-
„ թիւնքն մշտամնունչք յԱզգատոհմն Մուրատայ, մնան-
„ ասնդ ի բերանս ազգատոհմն մանկանցն իւրոց, այժմէն իսկ
„ եղանեն բարձրանան մինչև յերկինս ի փառս Արարչին և
„ ի մշտնջենաւոր պարծանս Ձեր և ի պատիւ։

„ Ակն ունելով երկարող պատասխանեայ առ ի ձէնջ և բա-
„ բերջանիկ պահու ցանկալեոյ դարտեանդ առ մեզ,

„ Մնամ

„ Ազնուութեան Ձերում

„ Ի Վենետիկ. 8. դեկտ. 1818.

„ Ազօթարար Ծառայ

„ ՍՏԵՓԱՆՆՈՍ Վ. ԱԳՈՆՑ

„ Արքեպիսկոպոս և Աբբայ. Մխի . . . „

Ապատեալ միարանութեան զամիս երիս և չընկալեալ պա-
տասխանի վերոյիշեալ թղթոյ իւրոյ ի Յովհաննես Մուրատէ,
գրէ առ նա այլ թուղթ, որում առնէ նա պատասխանի, օրի-
նակ զայս.

„ Գերապայծառ Տէր.

„ Ընկալայ զթուղթ Ձեր, գրեալ յ8 դեկտեմբերի անցե-
„ լոյն, և աղերսեմ ներումն շնորհել ինձ, զի ոչ ծանուցի
„ Ձեզ զայս ընդ հասանելն իմ յԵւրոպա, որպէս պարտական
„ էի։ Սակայն չպակասէի անշուշտ ի պարտուց առաքի, եթէ
„ կեղակարծ առողջութիւն իմ և կնոջ իմոյ, որ կարօտ է
„ իսոցս խնամոց, ոչ լինէր խարխաւն կառարման այլ ամենայն

„ պարտուց, եւս և այնմ զոր առ Ձեզ ունիմ և զոր մեծաւ
„ հաճութեամբ կատարէի արդեօք։

„ Ազգեցութիւնք զհետ եկեալք փոփոխութեանց այսչափ
„ զանազանեալ օդոց, որոց պատահեցաք ընդ ժամանելս
„ մեր յայսոսիկ կողմանս, ստիպեցին զմեզ կալ մնալ յայն-
„ պիսում վիճակի, յորում հարկ էր ի բաց դնել զայլ ամե-
„ նայն խորհրդածութիւն։ Բայց գոհութիւն Տեառն, բնա-
„ կութիւն մեր ի Փարիզ փոքր ի շատէ կազդուրեաց զառող-
„ ջութիւն մեր, թէպէտ և ոչ որչափ փափաքելին էր մեզ։
„ Սակայն ես ոչ անյոյս եմ, Գեր. Տէր, ի տեսանելոյ զկա-
„ տարումն ըղձից իմոց, զի հաւանեալ եմ թէ Աստուածա-
„ հաճոյ աղօթք Ձեր և մեծարգոյ Ուխտիդ ձերոյ մեծապէս
„ նպաստ լիցին և լսելի արասցեն զաղաչանս մեր Բարձրելոյն։

„ Եղեալ եմ ի մտի՝ Տեառն կամաք ուղեւորիլ Յիտալիա
„ յաւուրս յունիսի ամսեան և անդ ձմերել. վասն որոյ ակն
„ ունիմ գալ ընդ հուպ և անձամբ մատուցանել Ձեզ զմեծա-
„ բանս իմ։

„ Կինն իմ և զաւակս, հանդերձ ինեւ աղաչեն զՁեզ և
„ զմեծարգոյ միաբանութիւնդ, ընդունել զողջոյնս մեր, և ես
„ աղերսեմ ճանաչել զիս յաննենդ մտաց,

„ Գերապայծառ Տէր,

„ Փարիզ. 8 Ապրիլ. 1819.

„ Ամենախոնարհ ծառայ Ձեր

„ ՅՈՎՀԱՆՆԷՍ Ս. ՄՈՒՐԱՏ. „

Վերոյտուեալ պատճառք Յովհաննու Մուրատի ի պատաս-
խանին իւր, մեռոյ պատճառանք էին բոլորովին. քանզի ոչ
զանազանութիւն օդոց ազդէր ինչ նմա և կնոջ նորա, և ոչ
բնական ինչ հիւանդութիւն պատահէր նոցա ի Լոնդոն, այլ
բարոյական հիւանդութիւն, խենէշութիւն իւր, յորում ընկղմեալ՝ չմնայր նմա ժամանակ խորհելոյ զկարեւորացն, զորքա-
զան պարտուց իւրոց։ Եւ հաստատութիւն այսմ, բանք թղթոց
իւրոց որք առ եղբայր իւր ի Մադրաս, և վկայութիւնք քեռեաց

իւրոց Ռաֆայէլեանց, թէ քանի՛ և ո՛րպիսի խնդիրս թեմիս վարէր նա յայնժամ կեանս ի Լոնդոն և ի Փարիզ . . .

Թէպէտ այսմ ոչ անծանօթ լինի վիճաբանութիւնն, լուեալ զայն այլուստ, սակայն չիմանալոյն արարեալ՝ առնէ նմա պատասխանի քաղաքավարութեամբ. և իբրև տեսանէ թէ չպահէ նա երբէք զխոստումն իւր գնալ ի Վենետիկ և կատարել զկամս հօր իւրոյ, յայնժամ գրէ առ նա նամակ մի ազգականութիւնք յորում բովանդակին և խնամոք նամակացն զրելոց յառաջագոյն, օրինակ զայս .

„ Պարոն .

„ Ըստ ձերումդ առաջադրութեան յայտ առնելոյ մեզ վերջ-
„ նովին ձերով որ ի 24 օգոստոսի, եթէ հանդերձեալ էք գնալ
„ ի Լոնդոն առ ի պատրաստել յուղեւորութիւն Խուրշոյ յետ
„ սակաւ առուրց, զոր ամենայն սէր ունէաք տեսանել զձեզ
„ այրէն և ի կատարումն ածել զկամս արժանապատիւ հօրն
„ ձերոյ հանգուցելոյ : Այլ քանզի չերեւեցայք տակաւին,
„ ցաւ է մեզ ընդ այս յապաղումն անակնկալ՝ սակս բազմա-
„ պատիկ պատճառաց . և են այսոքիկ .

„ Ա. Եւ ոչ ի միում ի թղթոց ձերոց յայտ արարիք եթէ
„ տուեալ իցէ ձեզ ի տիկին մօրէն ձերմէ և յեղբօրէդ իշխա-
„ նութիւն լիուլի ի գործ արկանել զկամս հօրն ձերոյ Յերու-
„ պա . զի ի կատարել այսորիկ չհոգացուք այլ եւս զչուոյ
„ գործակալացն մերոց օրք ի Մատրաս :

„ Բ. Թղթովքն ձերով որ ի 11 օգոստոսի յորդորագոյնս առ-
„ նէիք զմեզ չկոչել յետս զգործակալս մեր ի Մատրասէ մինչ-
„ չեւ եկեալ խօսեալիք ընդ մեզ բանիւ բերանոյ : Այսու յայտ
„ մի այնպիսի կալաք եթէ մօտալուտ իցէ գալուստն ձեր
„ այստ, նոքին իրի և խոստացաք ձեզ բերանացի առնել բա-
„ նիցդ պատասխանի :

„ Սակայն յառաջ քան զայս երանաւէտ ժամ և հաստա-
„ տութիւն գործոյն, գործակալքն մեր գրեն մեզ ի 20 յու-
„ լիսի, եթէ ըստ յորդորանաց տիկին մօր ձերոյ յանձին կա-
„ լեալ են ճեալ ի Մատրաս այլ եւս ամ մի, և գաշինս կռեալ

„ են ընդ եղբօր ձերում հանդերձ իւրովն տարագրաւ չյա-
„ մեցուցանել զնոսա առաւել քան զսահմանեալն զայն ժա-
„ մանակ, զի չգոյր ինչ նոցա առնել անդ ի գործ պաշտա-
„ ման իւրեանց։ Ընդ այս լուր անկաք ի վարանս տարակուսի.
„ քանզի ըստ դաշանցն այնոցիկ անցեալ գոլով ժամադրու-
„ թիւնն, մեկնեալ են անշուշտ գործակալքն մեր ի Մարա-
„ ստայ, անդէտ գոլով խոտմանս մերում առ ձեզ։

„ Թող զի և յապաղումն ձեր և լռութիւնդ զոր կալայք
„ ընդ երկար ի կատարումն այսր գործոյ, երկեղուկս մեզ ար-
„ կանեն զի մի՛ միտս ինչ հացցէ պատուոյ մեծարգոյ Ազգա-
„ տոհմիդ, և օգտի Ազգիս։ Յօրէ անտի հռչակելոյ ընդ ամե-
„ նայն Եւրոպ և ընդ Ասիա համօրէն հրճուակի և արդարացի
„ համբաւոյ արժանապատիւ հօր ձերոյ, աշխարհ ամենայն և
„ մինչեւ իշխանք և մեծամեծք ակն ունէին տեսանել զարագ
„ կատարումն նորին. և արդ ի գերեւ ելեալ յուսոյ ակնկա-
„ լութեան նոցա, և անդէտք պատճառացն որ օր ի յօր առ-
„ նեն զայսպիսի գործ կարեւոր, սկսանին ի միտս կասկածում
„ լինել զմերումս և զձերմէ հաւատարմութենէ։

„ Այսոքիկ են ահա, Պարոն, գլխաւոր պատճառքն որովք
„ բերիմ ի գրութիւն առաջիկայիս, և աղաչել զձեզ յանուն
„ Ազգատոհմին ձերոյ, բովանդակ Ազգին, և մերոյս միաբա-
„ նութեան, զի հաճեսջիք յայտ առնել մեզ զերկոսին զայսա-
„ սիկ խնդիրս.

„ Ա. Եթէ ի՞նչ ձեր իշխանութիւն կարեւոր ի կատարումն
„ կամաց հօր ձերոյ։

„ Բ. Ե՞րբ չունիջիք հաւատեաւ յԽոտալիս։

„ Համարձակեցայ գրել ձեզ զայսոսիկ իբրեւ զհայր և իբրեւ
„ զբարեկամ։

„ Մնամ Ազնուութեանդ ազօթարար ծառայ Աստուծոյ

„ Ի Վենետիկ. յունվար 22. 1820.

„ ՍՏԵՓԱՆՆՈՍ Վ. ԱԳՈՆՑ

„ Արքեպիսկոպոս և Աբբայ Մխիթարեանց.“

Պարոն Յովհաննէս Մուրատ պատասխանի առնէ վերոյիշեալ թղթոյ առաջնորդին ի արհամարհանք օրինակ զայս .

„ Գերապայծառ Տէր .

„ Փարիզ . 20 փետր . 1820 .

„ Ի պատասխանի թղթոյ ձերոյ որ ի 22 անցեալ ամսոյ՝
„ ասեմ .

„ Ա. Թէպէտ և ունիմ զկատարեալ իշխանութիւն ի մօրէս
„ և յեղբօրէս ի լրումն խորհրդոց բարեյիշատակ Հօր իմոյ , որ
„ հային ի բարեգործական կառուցումն զորմէ է բանքս , սա-
„ կայն կարեւոր վարկայ յետ անցանելոյս յԵւրոպա՝ արկա-
„ նել ընդ որոշմամբ նոցա բաղում գլխաւոր մասունս որք
„ անծանօթ էին մեզ ի Հնդիկս , ուստի և յոյժ արտաքոյ սահ-
„ մանաց իշխանութեան իմոյ յայս գործ . վասն որոյ և
„ պատեմ որոշղական պատասխանեաց նոցա առ այս ։

„ Բ. Ունիմ ի մտի յուղի անկանել դէպ յԻտալիա մերձ
„ յելս ապրիլի ամենայն տամբ իմով . և այս փոփոխութիւն
„ յառաջարկութեան ճանապարհորդութեանս է միակ պատ-
„ ճառ յապազման ցամաքային շրջագնացութեանս ։

„ Արդ քանզի ես , Գեր. Տէր , լցի ցկամս ձեր , լուծանելով
„ զերկբայութիւնդ , ներեցէք ինձ նկատել ինչ ինչ ի մասին
„ միւսմ թղթոյդ , որ այնչափ առաւել զարմացուցանէ զիս ,
„ որչափ զի ոչ կարծեմ թէ ազիտութեան զրպարտդ ընդ-
„ ծայելի իցէ , յաղագս սատկութեան ասացուածին զոր
„ վարեն ։

„ Թէպէտ և հայրարար և բարեկամաբար խօսիք առ իս ,
„ ասէք բանս այնպիսիս , Գեր . Տէր , զորս ոչ կարծէի լսել
„ ոչ ի միոյն և ոչ ի միւսոյն ։ Աղէ , զինչ իմանայք ասելով ,
„ կասկածանս ոչ այնչափ օգտակարս հասարակաց շահու
„ ի կողմանէ իշխանաց և ազգաց . քանզի կառուցումն
„ տեղւոյ ազգութեան ոչ հասատանցաւ այնպէս գահամի-
„ ժարար որպէս ծանծաղ միաք նոցա տայր նոցա ակնկալել ։
„ Հանարէք զոմին լեզուաւ ասիցել զիս յայն ինչ , զոր խո-

„ հեմութիւնն իմ չներէ ինձ, կամ զի՞մ ինչ ցուցանել զկար-
„ ծեցեալ սխալումն ճառում բանիւք։ . . .

„ Ա՛հ, Գեր. Տէր, կեամք յայնպիսի լուսաւորեալ դարու
„ զի բանք այդպիսի ոչ ունին երբէք յարդիւնս ածել զայն
„ ինչ որում ցանկայք, այլ մանաւանդ ընդ հակառակն
„ նուաստ իմն ծանօթութիւն տան ինձ զիշխանացդ այդոցիկ
„ և զուարդաց, զորս յառաջ ածէք։ Ասեմ եւս թէ յիրաւի
„ դոքին կասկածանօք անձամբ զանձինս դատին։

„ Հաւատացէ՛ք միայն, ազաչեմ, Գեր. Տէր, թէ ոչինչ
„ փոյթ առնեմ զկարծեաց նոցա, որչափ և առ մեծս ինչ
„ ունիցիք դուք զայնս. և ի պարտուց անձին պակասեալ հա-
„ մարէի զիս, եթէ ոչ գեր ի վերոյ ամբառնայի զիս այդց
„ նուաստախոհ մտածութեանց, որք միայն անկ են մեծանուն
„ որերոյն որով կամիք պակուցանել զիս։

„ Արժանաւոր ժառանգս հօր իմոյ գիտեմ միաբանել զբա-
„ րերարութիւն ընդ խոհեմութեան։ Իմ պարտք չեն միայն կա-
„ տարել զհրամանս նորա իբրեւ զմոլի կամ զկոյր, այլ ամե-
„ նայն խնամովք և զգուշութեամբ, որք միայն հաստատեն
„ զբարերարութիւնն, յապահովացուցանելով զօգուտ այս-
„ պիսի գործառնութեանս և զտեւողութիւն։

„ Զեն աստ խնդիրք զշնչենոց. և ահա յանուն ազգատոհ-
„ միս զոր պատիւ ունիմ յանձն իմ երեւեցուցանել, յոր և
„ դուք ինքնին երդմնեցուցանէք զիս, և յանուն բոլանդակ
„ ազգին պարտ անձին զրեմ յայսմ վիճակի շարժիլ ամենայն
„ զգուշութեամբ զոր պահանջէ իրացն ծանրութիւն և իմոց
„ մտացս խիղճ. և այս խիղճ զոր ի հօրէս ունիմ՝ է իմ միայ-
„ նակ առաջնորդ։

„ Հաճեաց, Գեր. Տէր. ընդունել զյարգական ողջոյնս իմ։

„ ՅՈՎՀԱՆՆԷՍ Ս. ՄՈՒՐԱՏ.”

ԳԼՈՒԽ Գ.

Առեղծուել Հ. Յարութիւն Վարդապետի Աւգերեան ի Լոնդոն. — Պարոնայք Ինլիս և Միլչըլ. — Ողբակաւ գրութիւնք առաջնորդին Մխիթարեանց առ Պ. Յովհաննէս Մուրատ. — Երթ սորին ի Վենետիկ. — Եղանուագոր թուղթն առ Աբբայն Ստեփանոս. — Պատասխանի Աւետիքեան Հօրն առ այն.

Տեսակ միաբանութեան և ի բանից առաջ Պ. Յովհաննու Մուրատայ թէ, ոչ ունի տակաւին կամն պահելոյ զխոստումն իւր, զնալոյ Իտալիա յեկս ապրիլի, և մինչեւ ցյուլիս չերեւի նա անդ և չգրէ այլ եւս թուղթ, հարկ համարի առաքել զՀ. Յարութիւն Վարդապետ Աւգերեան ի Լոնդոն, զի գայցէ անդ զոր բարերար և օգնական, որ ուղղակի կամ անուղղակի յԵրոպայ կամ ի Հնդիկս խօսիցի ընդ կտակատարսն Աղայ Սամուէլի Մուրատայ, և առիպիցէ զնոսա կատարել զհրամակ հօր իւրեանց։ Սակայն առաջնորդն Մխիթարեանց չյայտնէ զայն խորհուրդ Պ. Յովանու Մուրատայ մինչեւ տեսանել զյաջողել նորին, այսինքն է գտանել զոր անդրդիպցի ի Լոնդոն իւր օգնական։ Եթէ իրի միանգամայն և մնալով տակաւին ելից կամացն նորա Պ. Յովհաննու Մուրատի, այլ ինն պատճառ տայ զնալոյ Աւգերեան Հօրն ի Լոնդոն, ի թղթին զոր գրէ առ Պ. Յովհաննէս Մուրատ օրինակ զայս.

« Պարոն.

« Առիպեալ ի թախանձանաց Ռաֆայէլեանց ի կանգնումն « վարժարանին իւրեանց, սահմանեցաք առաքել ի Լոնդոն « զմերս Հ. Յարութիւն Աւգերեան, խօսել ընդ նոսա զայս- « մանէ։ Զայս պատեհ կարեալ ուղղեմք զնա նախ ի Փարիզ,

„ որպէս զի անձամբ խօսակից լինիք ի կատարումն հրամանի
„ սրժանապատիւ հօր ձերոյ հանդուցելոյ ։

„ Տուեալ է նմա ամենայն իշխանութիւն կարեւոր առ այս-
„ ոմն իրի մարթ է և ձեզ, Պարոն, հաւատալ նմա հաւատ-
„ սեաւ զխորհուրդ մտաց ձերոց, որպէս զի մի՛ այլ եւս
„ անազանեցի յարդիւնս զալ բարերար կամաց հօրդ ձերոյ ։
„ Մաղթեմք ի Տեառնէ առատացուցանել ի վերայ ձեր և
„ ի վերայ համօրէն մեծապատիւ ազգատոհմիդ զամենայն
„ ազգ երջանկութեան և յաջողութեան ։

„ Մնամ Ազնուութեանդ Ազօթարար ծառայ Աստուծոյ

„ Վենետիկ . 6 յուլիս 1820 .

„ ՍՏԵՓԱՆՈՍ Վ. ԱԳՈՆՑ

„ Արքեպիսկոպոս և Աբբայ Մխիթարեանց . „

Յամենայն յուլիսի անցանէ Հ. Յարութիւն Վարդապետ Աւգերեան ընդ Փարիզ գնալ ի Լոնդոն, և հարցեալ զՊարոն Յովհաննէս Մուրատ առ իսուսանել և խօսել ընդ նմա զբանէ հրամանին, տեղեկանայ՝ զի մեկնեալ է նորա անտի և գնացեալ ի Միլան ։ Բայց հանդիպի անդ ի Փարիզ գործակալս միաբանութեանն հարց Սուքիասայ Սոմալի և Սարգսի Թէոդորեան, որոց առաքեալ ինչ յառաջ հասեալ անդր ի Լոնդոնէ, և յետ ամսաւուց հանդերձէին յառաջ վարել զճանապարհ իւրեանց և դառնալ ի Վենետիկ ։ Պատմէ նոցա զգնացս Պ. Յովհաննու Մուրատի ընդ Միաբանութեանն, և զնպատակ գնալոյ իւրոյ ի Լոնդոն, հանդերձ բազում յուսով և սրտապայման վստահութեամբ ։

Եւ ապա գնացեալ ի Լոնդոն գտանէ անդ յանձնարարական թղթովք և միջնորդութեամբ բարեկամաց զՊարոն Ինեխս, այր լաւագոյն և յօժարամիտ ի բարեգործութիւն առաջոց ինչ խորութեան կրօնի, որ և յանձն առնու զգաչուոն գործակա-

լութեանն և հաղորդէ զայն փեսային իւրում Պարոն Մինչի փաստաբանի ի Մարրաս, հանդերձ պայմանաւ, զի եթէ յաջողեացէ գործն՝ ընկալցի նա զսահմանեալ վարձ աշխատութեան իւրոյ. իսկ եթէ ոչ՝ հարիւր լիրայ ստէրլին միայն տացէ ի միաբանութենէն իրրեւ ի ծախս կարեւոր թղթոց և գրութեանց։

Թէպէտ և զայս այսպէս առնէր միաբանութիւնն ի ձեռն Աւգերեան Հօրն, եղեալ գոլով ի մտի թէ զնոյն պահանջեն պարտք պաշտաման իւրոյ ի գործակցութեան և ի խորհրդակցութեան կռակակատարացն ի լրումն կամաց Հանդուցելոյ Բարերարին, և յօգուտ հայկազն մանկուոյն, սակայն միանգամայն ոչ դադարէր ի գրելոյ թուղթս ազգականս առ Պարոն Յովհաննէս Մուրատ, որպէս, զի յորդորեացի փութալ ի կատարումն առաջարկութեանն մեծի։

Զմի եւեթ ի թղթոց անտի յառաջ բերիցս առատանօր, յորում և տեսցի յայտնապէս յեղանակ գնացից միաբանութեանն յայնմ ժամանակի ընդ ժառանգս բարերարին։

„ Աղնուազարմ և Պերճապայծառ Տէառնդ երանելոյ
„ կենաց խնդալ և ողջոյն շատ մեծարանաց։

„ Ի Վենետիկ. 22 դեկտ. 1820.

„ Շատապարիսմ լիցի Աղնուազարմ Տէրութեանդ, զի առ
„ ժամեան լուութիւն մեր այս՝ ոչ այլ ինչ գիտէր իւր պատ-
„ ճառս, քան թէ զի իրաղեկ էաք ճանապարհորդութեանդ
„ ձերում յԽուալական կողմանդ, և յետ առկայանալոյ ձեր
„ ի քաղաքամայրդ՝ ըստ աւանդ անհատ զողջութենէ ձերմէ ի խիտ
„ նամակաձեւոյ մերում գործակալին։ Այլ թէ ոչ՝ այս ինչ
„ հաւատի կացցէ արդարակորով իրաւախրութեանդ, զի
„ ոչ ժամանակաց երկայնութիւն, և ոչ բացարձակ վայրաց
„ հեռաւորութեամբ անջրպետութիւնդ ի մէնջ՝ զօրեցին և
„ կամ զօրեսցեն բնաւ ազատացուցանել զյիշատակ ցանկալի
„ սիրելութեանդ ի մտաց և ի սրտից մերոց։

«Եւ զիարդ այս. յորմէ հետէ արքայն և անեղծ կապանք
«անմահական կուակի բարեյիշատակ հանգուցեալ ծնողիդ
«յայսպիսի և յայնքան յոգակապ սիրոյ և ընտանեկցութեան
«զոգեալ պնդեցին զմեզ առ իրեարս, թէր արդեաք ազատ
«յանիրաւութենէն եղիցի ոճիր բամբասանաց ի մոռացօնս
«ածել մեզ զձեզ։ Եա աւանիկ չիք օր և ոչ ժամ, յորում
«խանդակաթ և կարօտագին յիշատակաւդ ոչ ոսիսիցիմք.
«և անշուշտ լիցի Տէրութեանդ՝ զի ոչ ստեմ յասելս, թէ ոչ
«այնչափ շնչեմք օր ըստ օրէ զկենդանական սիք կենցաղոյս,
«որչափ զուարթարար յիշատակաւդ արծարծեալ վառիմք
«ի նորատեղծ կենդանութիւն, մանաւանդ ես՝ ցրտահար
«ծերութեամբս տակայծեալ ճրագ։

«Սակայն այսուհետեւ անհնարին էր մեզ ի ծոցի ելեթ
«ամիսիսել ունել զդորսական իմաստս անմոռաց երախտա-
«գիտութեան որոց մերոց առ այսպիսի հրաշազարդ աւուրքդ
«տէրունական ոսնից Վենարարին և նորամուտ սկզբան տար-
«ուոյս, աւուրք՝ ոչ միայն արքութեամբն գերափառք, այլ և
«քաղաքական օրինաւորութեանցն յօրինուածովք ոսնեալ
«պայծառապէս։ Յորս եթէ կիրթ քաղաքավարութեան ելեթ
«օրէնք կամ շահ անձանց հարկաւորին զայլս ի շնորհաւորու-
«թիւն միմեանց և յօրհնաբան բարեմաղթութիւն, զմեզ ան-
«խառն ախորժակք սիրոյ և յարդանաց և ճշմարիտ զգայու-
«թիւնք արտից յորդորին ի նոյն։ Փանզի ո՞ւմ այլ այնպէս
«պարտական ես զանձն իմ դատիցիմ յերջանիկ աւուրս
«յայսոսիկ ի Հասարակութեանս զիմաց իբրեւ բերան Ազգին,
«երախտահատոյր ոսկեթել անկուածով և մեսաքահիւս
«նկարակերտութեամբ կենաց ցանկալեաց զերկայնաւուրսն
«յաւիտենից, բարեսացութեամբ հանել օրհնութիւնս և
«հիւսել ինքեթ ծաղկեալ, ո՞ւմ՝ քան թէ պերճափայլ քում
«Տէրութեանդ, այնմ՝ յորոյ ձեռն հանդերձեալ է երկրորդն
«ծագել լոյս Ազգիս զուարճացուցիչ մտաց, և երկրորդն
«կազմել փրկութիւն ի բռնաւոր վիրադէն ազգութեան,
«որպէս հոգւոյն ճառագայթեաց այժմ մեզ լոյս յերկնից
«ուեսաւոր զուարթնովք Տէրունական ծննդեանն։

«Սրտիս գութք և հաւակիս չափք, որ արդ եւս ութաբ-
«նամենի յաչս ապիտակութիւն յեցեալ կայ, իրաւունս տա-
«ցեն ինձ արդեօք՝ հայր դիս համարել մատաղերամ ման-
«կըտոյ Ազգիս։ Իսկ արդ՝ հայր ալեւորեալ հերոք և գող-
«գոլեն հաւակաւ ի գուռն հասեալ հանդերձելոյ կենցաղին,
«ուր այլ թողացում եւ զսրտիս խանթաղակութ զեղումն և
«զկատակ վերջին օրհնութեան, քան թէ երիցագունիդ քեզ և
«աւագիդ ի գաւառս եղբարց, որ հաչակելի բարերարութեան
«նախանձու՝ զմանկագունին ողորմ հիքութեան խնամն
«հայրարար ի քեզ ընկալար, յաւերժական յիշատակ բա-
«բեաց և անուն անթառամ անմահութեան ընդ երկնաւոր
«արձանացուցեալ։

«Եւ ես թէպէտ նուազեալ գտանիմ ի յուսոյ՝ բարգաւաճ
«ժամանակի պաղատութեան՝ նորոյ սկզբնաւորութեան
«մեծի այսր իրի հասանել, սակայն և սկզբանն եւեթ տեսող
«հանդիպեալ՝ ցնծամ ոչ չափաւորապէս, և հոգւոյ սկսամբ
«գտայ լինելոյն ասէն նկատեալ խայտամ. և իրրեւ
«զծերունին զայն իմ հասակակից, որ զանկեալ հասեալ
«փրկութեանն Իսրայէլի երեւումն յանկն արկեալ ցնծացու,
«համարձակաձայն կարդամ և ես առ տուողն շնչոյս, թէ
«Արդ այսուհետեւ արձակեա զիս ի խաղաղութիւն, զի տե-
«սին աչք իմ զփրկողն և զփրկութիւն Թորգոմական ժող-
«վրդեանս։

«Խնդրեմ արդ, իրրեւ միակ արժանի ժառանգաւոր այս-
«պիսի իմաստից սրտիս և օրհնութեանս, ընկալջիք զայդո-
«սիկ խսիրս ձեր, որպէս երբեմն Իսրայէլ մանուկ ի ծերուն-
«ոյ հօրէն. զի և ոչ նոր ինչ տեսանես ի սուս առ քեզ
«ասացեալ քան թէ զքոյոյ բարեսէր սրտիդ և զառաս մեծա-
«գործութեան ազնուական իմաստս։ Գանցի թէ արդարեւ
«զոյն իցեն և ուխտք սրտի քո և զոյն իմացուածք, ոչ առ-
«ժամայնք և հարեւանցիկք, այլ սերտեալք և ընդարոյզք,
«վկայեն մեզ բազմապատիկ նամակք ձեր առ մեզ. մանաւանդ
«զոր առ սիկին Մայրդ գրեցիք երբեմն, և եւս առաւել սե-
«կեղծ և սիրալիր մտերմութիւնդդ ցուցեալք այդր առ մեր

„ գործակալ, ընդ որոյ և շնորհս խոստովանիմք ձեզ անընդ-
„ պառելիս։

„ Եւ թէպէտ ցայժմ գաղղիարէն լինէին ի մէջ մեր երբ-
„ թեւեկք նամակաց, այլ քանզի մայրենիդ քո այս լեզու՝ որ-
„ պէս հաւատարմապէս ընդել է քում Տէրութեանդ, նոյնպէս
„ և ոչինչ ընդհատ իրաւամբք ախորժելի զոլ ծանուցաւ մեզ,
„ ի սոյն և մեք յօժարեցաք տալ խօսել սրտից մերոց առ քո
„ Տէրութիւնդ, իբրեւ զհայկական աշխարհին բարեաց առ-
„ թողի շնորհակալիս և զպարտաւոր ուղերձ՝ ընդիկ հայրենա-
„ կանաւն արձանացուցանել կամեցեալք, զի մի՛ յօտար լեզու
„ եւեթ զրաշխեալ մնայցէ, անծանօթ թերեւս յորոց պարտա-
„ պանք են յանմահ յաւիտեան զնոյն հնչեցուցանել օրհ-
„ նութիւն, և զնոյն ուղերձ ընծայել անհատական ձայնիւ
„ և անեղծ յիշատակաւ քում Պերճափայլ Տէրութեանդ և
„ համօրէն Մուրատեան հռչակելի զարմիդ։

„ Մատուցանել ապաչեմ և հաճելի ընծայել յինէն և ի դի-
„ մաց ուխտս դյարդական նուէրս ողջունի սիրելի տիկնոջ
„ ձերում և սիրատուն մատաղ զաւրկիդ և ամենայն
„ տանդ, և ճանաչել զիս միշտ յամենայնի պատրաստական
„ և յօժարական ի կամակատարութիւն։

„ Պերճապայծառ Տէրութեանդ

„ Ն. Ծ. Ամուծոյ և ազօթարար

„ ԱՏԵՓԱՆՈՍ Վ. ԱԳՈՆՑ.

„ Արքեպիսկոպոս և քնդհանրական Արքայ.“

Զպատասխանի թղթոյս գրէ Պարոն Յովհաննէս Մուրատ ի Հռոմէ. և ապա յետ զանազան շրջս կալոյ յԱնգղիա, ի Գաղղիա և յիտալիա, և յետ այնչափ խոստմանց առ միաբանութիւնն, բանագրատի որ ուրեմն գնալ ի Վենետիկ, ի փետրուարի 1821 ամին, և այն ի լրումն խոստման իւրոյ առ ճայր իւր՝ ան-

ձամբ գնալոյ ի վանս և խնդրելոյ ի միաբանութենէն զՀայր Սարգիս Թէոդորեան՝ իբրև տանելէց ի Մատրաս, որպէս երեւի ի բանից պատասխանւոյն առ մայր իւր տուեալ յամին 1820, զոր և կատարեաց և հանդիպեցաւ խնդրոյ իւրում։

Զաւուրս տասն միայն կացեալ ի Վենետիկ քաղաքի, և երկիցս եւեթ գնացեալ յայց միաբանութեան ի վանս, փութայ վաղվաղակի մեկնել անտի, պատճառեալ զխոնարութիւն օդոց քաղաքին, և այլ ինչ ինչ այնպիսի։ Բայց ճշմարտութեամբ՝ գի ոչ ունէր կամս կատարումն տալոյ սրբազան պարտուց իւրոց, և խորհրդակցելոյ ընդ միաբանութեանն զիրաց դպրոցին։

Սակայն միանգամայն կամեցեալ գրով խօսել ընդ սրբային, առաքէ առ նա գրուած մի, յորում ոչ միայն Ջանայ նուազել ըստ կարի զիրաւունս մատակարարութեան միաբանութեանն, այլ և համարի արդարացուցանել զանձն ընդ այնքան յապաղումն իրացն, կուտելով ի գլուխ միաբանութեանն զամենայն մեղադրութիւն, որպէս թէ շահասէր ոգւով գնացեալ էին գործակալքն ի Մատրաս՝ յափշտակել զգումար դրամացն, և այլ այսպիսի բանք։

Արժան համարիմք հրատարակել առտանօր զայն թուղթ նշանաւոր, և ապա յաւելուլ ինչ ինչ խորհրդածութիւնս զրանէից։

« Գերապայծառ Տէր.

« Վենետիկ. 24 փետր. 1821.

« Ահաւասիկ եմ ի Վենետիկ, և իբրև զմի ի կատակա-
« տարաց հանգուցեալ յարգելի հօր իմոյ՝ փութամ խօսել
« ընդ ձեզ յաղագս իրաց վերաբերելոց ընդ մեզ և ընդ ձեզ
« յետ ոգալի մահու նորին, և քննել զայն ըստ ամենայն
« մասանց։ Եւ համարիմ գրով առնել զայս, վասն զի այս-
« պէս դիւրին է տալ զամենայն առանց ինչ մոռանալոյ՝ յո-
« րոց կամիմքն յայտնել միանգամ։

“ Լուսահոգի հայրն իմ թողեալ է երեւելի հրիտակ վասն
“ հաստատելոյ զդպրատուն ողորմութեան միջնորդութեամբ
“ ձերով. վասն որոյ յետ հնդետասան և ոչ աւելի աւուրց
“ մահուն իւրոյ՝ առաքեցաք ձեզ ի Մատրաէ թուղթ մի ծա-
“ նուցանել ձեզ զոյս հրիտակ, աղաչելով առաքել մեզ զմի
“ յանդամոց միաբանութեանդ առ ի խօսել ընդ մեզ ուղղակի
“ ի վերայ յարմարագոյն եղանակի հաստատելոյ վախճանի իւ-
“ բում։ Փոխանակ միոյ զոր մեք խնդրեալ էաք, դուք յու-
“ զարկեցիք երկուս. բայց այնպիսի հրահանգաք, որք կան-
“ խաւ անօգուտ առնէին զերթն նոցա։ Ասասի եթէ գարձ նոցա
“ տհաճելի է, պարտիք մեզադրել, համարձակիմ ասել, Հա-
“ սարակութեանն, որոյ դուք գլուխ էք. պարտին մեզադրել
“ անձանց իւրեանց, և հոգւոյն որ տիրէր խորհրդականացն
“ կառավարչաց նոցա։ Այո՛, Գերապայծառ Տէր, Հասարա-
“ կութիւնդ է պատճառ անշահ և անվախճան ուղեգնացու-
“ թեան նոցա և գարձին որ առաւել անօգուտ եղեւ, որպէս
“ ցուցից զկնի։

“ Պարտ է անդուստ ի սկզբանէ խնդրել զնախնական
“ պատճառս ամենայն դիպուածոց աշխարհի։ Առաքելովդ
“ ի Հնդիկս զերկուս ի ձէնջ, յորոց տիրապէս զխնդիրս մեր։
“ Ոչ ամենեւին. և նոքին իսկ վկայեալ են. վասն զի մեք
“ խնդրեցաք զմի զոր առ ի խօսել ընդ մեզ, բայց ձեր երկու
“ գործակալքդ եկեալ են պահանջել ի մէնջ զհաստուցումն
“ հրիտակին, ուր չգոյր ինչ ամենեւին վասն ձեր։ Վասն
“ որոյ եթէ դանգատել կամէին, պարտէին ի վեց հազար
“ փարատաց հեռաւորութենէ դարձուցանել զաչս իւրեանց
“ ի վասն արքոյն Պարսից. քանզի անդանօր չէր օրէն երկ-
“ բայել ընդ պատասխանիսն, զոր կատակատարքն Պարսն
“ Մուրատի առնելոց էին առ այսպիսի պահանջումն. և եթէ
“ այս միայն էր վախճան Հասարակութեանդ, կարէր զանց
“ առնել մեկնել յինքենէ զերկուս յարգելի անձինս և արկա-
“ նել զնոսա ի վտանգ ծովու։

“ Այսու եղծանի ամենայն մեղադրութիւն արկեալ ի վե-
“ բայ կատակատարաց Պարսն Մուրատի։ Այսու լուծանի

“ ամենայն պարտականութիւն զոր մարթ էր դնել նոցա,
“ թէպէտ և հաճեցան նոքա յանձն առնուլ արդեամբք զամե-
“ նայն հեռեւանս նոցա, հաստատելով զամենայն ծախս զոր-
“ ծակալաց Հասարակութեանդ, սկսեալ յօրէ անտի մեկնե-
“ լոյ նոցա ի Վենետկոյ մինչեւ ցդարձ նոցին, որ լինի առաւել
“ քան զ100,000 Ֆրանք։ Բայց մատիցուք այժմ յայլ գլուխ
“ խնդրոյն։

“ Յանձն առեալ մեր զյաւէտ ստղոմանելի երաշխաւորու-
“ թիւն, ենթադրեմ թէ զեղծանելով մեր վստահութեամբ
“ յարգելի հօր մերոյ, և զան հատանելոյ ի մէնջ զհոգս և
“ զնեղութիւնս, որ կարէին ծագել մեզ անտի, գրեալ ինքեմք
“ ձեզ ճշմարտիւ առաքել զոմն զալ ընդունել զգումար հրի-
“ տակին։ Զինչ. ունէինք նաեւ յայնժամ մեղադրել զմեզ,
“ եթէ տեսանելով զպայմանն զոր ի ձեռն գործակալացդ ոչք
“ ընդունելոց էին զայն՝ եդեալ էք ի վերայ մեր, ոչ կամէաք
“ առնուլ յանձն, ոչ միայն տալ նոցա զայն, այլ և ոչ
“ ընդունել զոր և ինչ պահանջումն ի կողմանէ ձերմէ խառ-
“ նելոյ ի գործադրութիւն զխառաւրութեանց յարգելի հօր
“ մերոյ։

“ Եւ պայմանն այս ինչ էր, Գեր. Տէր, զի մեք չունկնիմք
“ բնաւ իրաւունս հաշիւ պահանջելոյ ի Հասարակութենէ ձեր-
“ մէ զմատակարարութենէ հրիտակին։ Զմոռանամ ի քնու
“ թիւն առանձին պարտուց՝ զոր տային իսկ պայմանաւ որ-
“ կանէր ի վերայ մեր վիճակն ժառանգի, վտակատարի
“ և խնամակալի այսր իրի։ Եոյնպէս զանց առնեմ ի հանդէս
“ հանել առատանօր զխառս զոր նայն մատուցանէ մեզ առ
“ ի քերել յանձնէ զամենայն ստիպս զոր մարթ իցէ արդեօք
“ արկանել զմեզ յաղագս այսր չկամութեան, ի պատճառս
“ հրաւիրանաց եղելոց առ անդամս Հասարակութեանդ զան
“ այսպիսի յայտնի վախճանի, որպէս ասացի, առանդելոյ
“ նոցա զգումար հրիտակին ընդ հատանել նոցա։

“ Սակայն հրաւիրանք այդպիսի չէ երբէք եղեալ. եղՀեր-
“ ուաքաղ է, և ոչ այլ ինչ։ Եւ սակայն՝ այն որ բաւական
“ էր արդարացուցանել զմեզ թշնամի լինել ամենայն միջ-

„ Նորդութեան ի կողմանէ Հասարակութեանդ, եղեալ եւ
„ թէ չկայր եղջերուաքաղդ այդ, ահա կայ այն ինքնին և
„ առանց այդր եղջերուաքաղի։ Զեզ թողում արդ, Գերա-
„ պայծառ Տէր, տեսանել յոր սահման գտանիմք Հասարա-
„ կութիւնն և մեք առաջի միմեանց։

„ Կամեցաւ Նախախնամութիւն գալ ինձ յԵրոպ. Նոյն
„ ինքն սահմանեալ էր լինել ինձ ատամնօր, մինչդեռ այս
„ գործակալութիւն կատարիւր ի Հնդիկս ամենապատիկ ան-
„ յարմարութեամբ։ Արդ քանզի ես կայի ի տեղիս՝ զոր դի-
„ տեալ էր հանդուցեալ հայրն իմ յարդելի, հարկաւ շար-
„ ժեցաւ եղբայրն իմ յիմ միջնորդութիւն թողուլ յայսոսիկ
„ պարագայս զկատարումն կամաց նորա։ Այս երաց զրե-
„ բան գործակալացդ ի բաղդ, Գեր. Տէր, և չիմանային թէ
„ զոհանալ արժան էր նոցա մնաւանդ զՏեառնէ, որ պա-
„ հեաց նոցա յոյս մի նոցին իսկ դիպուածով հեռաւորու-
„ թեան կուսակալատարաց Պարոն Մուրատի ի միմեանց.
„ զի թէ էի ես ի Հնդիկս, գործակալք ձեր գառնային, և
„ պարս իսկ էին գառնալ նոյնպէս. վասն զի նոքա առնելոց
„ էին զպարս իւրեանց, ճիշդ պահելով զհրահանգսն զոր
„ ունէին ի ձէնջ, և մեք առնելոց էաք զմերն, ուժգին հակա-
„ ռակելով, զի մի՛ ասացից թէ բարկութեամբ, ստարտի
„ պահանջման հասարակութեանդ, որով գնէր մեզ պայմանս,
„ և այնպիսիս։ . . .

„ Ներկայութիւն ամենայն կուսակալատարաց Պ. Մուրատի
„ ի Հնդիկս անդարձարար վճարեալ էր զամենայն խնդիր.
„ բայց հեռաւորութիւն միոյն ի նոցանէ ի կախ եթող զորո-
„ շումն որ լինելոց էր խիստ, և ոչ ի պատիս Հասարակու-
„ թեանդ, և միանգամայն՝ ծանր շահու իւրոյ, որովհետեւ
„ ինքն բառնալոց էր զծախս գործակալացդ։ Բայց զդուշաւո-
„ րութիւն կուսակալատարացն եւ նոցա քաղցրութեամբ վա-
„ րել ի գնացս իւրեանց, և այս գնացք զոր ես այժմ ցուցա-
„ նեմ առ ձեզ՝ են յայտնի հետեւանք այնորիկ։

„ Եկեցուք այժմ ի խնդիրն որ սրոշելոց է զայն մասն, որ
„ թէպէտ զառաջինն ոչ թուի կարեւոր առ իրն, յոյժ հար-

“ կաւոր է առ հեռաւանն ։ Ասեմ զինդիրն որ սահմանելոց
“ է մեզ զպաշտօն մեր և զընդարձակութիւն իշխանութեան
“ իւրաքանչիւր կողմանց գործակցաց այսր իրի ։

“ Քննեցէք , Տէր . Տէր , ծայրէ ի ծայր զկտակն յարգելի
“ հօր մերոյ ի բանի այսր գպրատան ։ Զիք ինչ օտար ի խոր-
“ հրդոց նորա , քան զհրամայել կուսակալատարաց իւրոց,
“ տալ զհրիտակն սահմանեալ վասն գպրատան ի ձեռս Հա-
“ սարակութեան ձերոյ ։ Նա ինքն յայտնապէս և որոշաբար
“ ցուցանէ զմտան զոր ձեզ հասանէ ունել յայնմ . կամի նա
“ զի գպրոցն կատուսցի միջնորդութեամբ ձերով , և բառն
“ զոր վարէ վասն ձեր , է միջնորդաբիւն . և որպէս զի լինիցի
“ միջնորդութիւն , հարկ է , Տէր . Տէր , ամենայն իրաք , թէ
“ իցէ կողմն մի ծայրագոյն ներգործող , այսինքն է՝ իրա-
“ ւամբք և իշխանութեամբ . քանզի միջնորդութիւն է պայ-
“ ման կրաւորական . և ապացոյցն է , զի եթէ մեք մեզէն կա-
“ տարեցուք զգիտաւորութիւն կամաց հանգուցեալ հօր
“ մերոյ , առանց ինչ մտան ունելոյ ձեր , նոյնպէս ընդմ-
“ զպարտս մեր . քանզի օգնեմք մարդկութեան տառապելոյ ,
“ և այս է միայնակ կամք նորա ։ Ահաւասիկ է մտան խղճի
“ մտաց ։

“ Քննեցուք այժմ զօրինական փաստս ։ Ներկիւղ և
“ առանց խուսափելոյ մատչիմ և յայս քննութիւն , թէպէտ
“ և անմիաբան ընդ խորհուրդս ողորմութեան , եթէ ըստ
“ ծագմանն , և եթէ ըստ ձեռինն որ ընդունելոց է զայն ։
“ Այս ձեռն ոչ է ձերդ , Տէր . Տէր , զիտեմ զայն , և ոչ իսկ
“ առ այդ կարդեալ է . բայց քանզի մեծ և սաստիկ փոյթդ՝
“ զոր կամիք ունել յայսմ՝ նոյնացուցանէ զձեզ ընդ առար-
“ կայս խնամոցդ , կարէք առ այժմ առ ձեզ դարձուցանել
“ զկանոնն ։

“ Մատչիմ ասացի յայս գլուխ , վասն զի խորհրդակցու-
“ թիւնք ազգայինք , զի այսպէս ասացից , յուզեալք ի Մատ-
“ բաս ի գործակալաց ձերոց առ ի հնարս դատանել ընդդէմ
“ կուսակալատարաց Պարոն Մաբրատի , վասն չկամիցոյ նոցա

«տեղի տալ պահանջմանց Հասարակութեանդ, այնպիսիք
«էին որ լիով արդարացուցանեն զմեկաբերութիւնս մեր՝ յա-
«ղագս հոգւոյն որ տիրէ նմա։

«Որ այն իշխանութիւն ի՛նչ է ի վերայ երկրի, աղէ՛ ասացէ՛ք,
«որոյ տեսեալ թէ կատարեմք մեք զբուն պատուէրս ողոր-
«մութեան հանդուցեալ հօր մերոյ, կարիցէ՞ տիրել զմեզ
«առնել զայն միջնորդութեամբ այլոյ, ո՞ր և իցէ, եթէ մեք
«կարեւոր դատեցուք զանց առնել զայդու միջնորդու-
«թեամբ, թէպէտ և ըստ քիմս խորհեցուք մեք զայն։ . . .
«Իսկ ապա ո՞ր այն յանդուգն իշխանութիւն, որ բռնադա-
«տեցէ զմեզ յայն, յորժամ ունիմք փաստս զօրաւորս առ
«այնպէս դատելոյ։ . . . Իշխանութիւն այդպիսի ոչ լինիցի
«խելի. քանզի և ոչ իսկ իշխանութիւն է, յորժամ ոչ ար-
«դարութեամբ ուղղի, և արդարութիւնն չկարէ կամել և
«չկարէ պահանջել ինչ՝ բայց միայն զնշանակեալ բարին, և
«ոչ երբէ՛ք զանձնական շահս, որք օտար են ի բուն նպատա-
«կէն, վասն որոյ և տապալիչք բարւոյն։

«Բայց մի՞ դիք, Գեր. Տէր, ցոր վայր հասանէ դիտակ-
«ցութիւն մերոյ իրաւանցս, որովհետեւ թէ և հանդուցեալ
«հայրն մեր յայսոսպէս հրամայեալ էր տալ զհրիտակն
«ի ձեռս Հասարակութեանդ, ոչ յանձն առնուաք եթէ այն-
«պէս ինչ հարկաւոր դատէաք. քանզի կտակակատար ոչ
«նշանակէ ինքնաշարժ մենքենայ գործարանաւոր։ . . . Ի ու-
«րեք, Գեր. Տէր, զի գործել ըստ մտաց կտակողին, բայց
«յայնպիսի պարագայս՝ որոց կտակողն չկարէր լինել նախա-
«տես, է հակառակ գործել, և է՛ ուրեք զի առ ի կատարել
«զհրամանս կտակողին՝ պարտ է զընդդէմսն գործել. վասն
«զի արժան է ոչ ի բառս կտակին կապիլ, այլ ի դիտաւորու-
«թիւնն՝ որում ցանկայր հասանել։ . . .

«Եւ ո՞ իշխեցէ հարցփորձ առնել իրաւանց իշխանու-
«թեան մերոյ յայսպիսի մանր քննութիւնս. և եթէ իցէ ոք
«այնպիսի, չէ՞ք երբէ՛ք ծանուցեալ նորա զՀայր իւր, կամ
«թէ յիշատակ Հօր նորա չունի ինչ ի կորուսանել։

«Ներեսջիք, Գեր. Տէր, եթէ ձանձրացուցի զերկայնմտու-

“ թիւնդ այսպիսի երկար գրութեամբ . մանաւանդ թողա-
“ թիւն արարէք բանից իմոց , որ ուրեք ուրեք խիստ են .
“ Շամարեցայ թէ առ ի խօսել զճշմարտութիւն՝ հարկ էր
“ ասել զամենայն , և չէք որ անշուշտ քան զձեզ արժանաւոր
“ իմանալոյ զայն :

“ Հաստատեալ այսպէս զգլուխս որ ձեզ երկրայսոքանք
“ թուէին , և զորս արժան էր ահմանել յառաջ քան զամե-
“ նայն , այժմ առաջի եդեալ ձեր զկարգաւորութիւնն՝ զոր
“ ընտրեալ եմք միաբան խորհրդով ի կառուցումն ասացեալ
“ դպրատանն , յորում՝ հայեցեալ ի նախապատուութիւնն
“ շնորհեալ ի հօրէ մերմէ Հաստատութեանդ և յանժխտելի
“ արդիւնս նորա , առաջի առնեմ ձեզ զործակից մեզ լինել
“ ի ձեռն նպաստից , զոր վիճակ ձեր և հմտութիւն մատու-
“ ցանէ թէ՛ ի մայրենի լեզու ուսանողացն , և եթէ յայլ մա-
“ սնս ուսմանց զորս Հաստատութիւնդ ունի բաւական-
“ նապէս առ ի կարող լինելոյ մատակարարել զնոցին դիտու-
“ թիւն :

“ Պանուցանեմ ձեզ նախ՝ թէ յետ ամենայն քննութեանց ,
“ հիւսիսային Գաղղիա թուի մեզ ի կողմանս Եւրոպայ յար-
“ մարագոյն ըստ ամենայն բանի ի կառուցումն դպրատանն
“ զոր խնդրեմք . իբրեւ զի եթէ մեք կամիցիմք թողուլ զՀրն-
“ դիկս , անշուշտ անդր փոխադրեացուք . և այնպէս զդպրոցն
“ մերձ լինի հակառութեան մերում : Բայց առ այժմ վախճան
“ այսր ընտրութեան այն է , զի մերձաւորութիւն տեղւոյն
“ դիւրութիւն տայ ներկայացուցչաց մերոց (որք բնակեալ-
“ բար լինիցին քեռիք մեր , հաստատակաց մեր բարեկամքն ,)
“ վասն որոյ և Մուրատեան տանն և Հաստատութեան
“ որոյն Ղազարու , հսկել ի վերայ տնտեսութեան և ընթա-
“ ցից ասացեալ դպրատանն :

“ Բնական նպաստք աշխարհին յորոց բղխեն ամենայն
“ օգուտք , դիտութիւնք նորա , կրօնք նորա , խմաստուն կա-
“ ռավարութիւն նորա , միով բանիւ՝ չէք ինչ որ տեղի տայէ
“ պատճառաց յեղծումն այսր ընտրութեան :

“ Թէ ուսանողացն զոր բերել ասացուք ի սկզբանէ , հա-

„ անիցէ ց25 կամ 30, մինչեւ յաջողումն այսր առաջին
„ փորձոյ քաջալերեսցէ զմեզ աճեցուցանել զայն, և յամենայն
„ նուազի տացուք մեք բերել նոցա յարեւելից ի ձեռն տէրու-
„ թեան Գաղղիոյ ։

„ Ինչք կարեւորք ի պահպանութիւն դպրատանն լինիցին
„ կալուածք գեանոյ, կամ թէ այլազգ՝ եթէ բարւոք թուես-
„ ցի ։ Բայց եթէ այսպէս և եթէ այնպէս, կարեւոր պէտքն
„ հաստատեցին ի Գաղղիա, որպէս զի պատահական ընդ-
„ հատումն ինչ ի քաղաքական իրակութիւնս մի՛ խափան լիցի
„ ընթացից դպրատանն ։

„ Ընդ վերադիտող դպրատան անուանեցին Արքեպիս-
„ կոպոսն վանաց արբոյն Ղազարու, և յաջորդ նորա, ըստ
„ անձնական և առանձին ընդունակութեան իւրեանց, և
„ ամենայն խնդիր որ ծագիցի ի մէջ վերադիտողաց յաղագս
„ այսր կամ այնր ի տեսչութեան դպրատանն, որոշեցի բազ-
„ մութեամբ թուոյ ։ Բայց Մուրատեան տունն ինքեան պահէ
„ միշտ զծայրագոյն իրաւունս յայն ամենայն որ հայի ի դպրա-
„ տունն, և ըստ ամենայն բանի ։

„ Այս են, Գեր. Տէր, հիմնական գլուխ կարգաւորու-
„ թեանն զոր ընտրեալ եմք, որ և թելադրեալք են յառաջից
„ այնր իմաստութեան՝ զոր յամենայն կեանս իւր եցոյց ազ-
„ նուական կտակողն, զոր ոգամք, որոյ և հայրութիւնն
„ ի վերայ որբոցն զորս որդեգրեաց, արդեամբք հաստատի
„ ի ժառանգս իւր, յորմէ հետէ վճարեցաւ և ի նոցանէ յետ
„ առանդելոյ նոցա զօրէն և զիմաստս այնորիկ ։

„ Առացի ի վերս անդր թէ զարձն գործակալացդ առաւել
„ անօգուտ է քան զճանապարհորդութիւն նոցա ըստ նպա-
„ տակին, և ահաւասիկ է պատճառս ։

„ Վերաբերութիւնքն հաստատեալք ընդ Մուրատեան տունն
„ և ընդ Հասարակութիւնդ, միայն թէ ըստ ուղիղ տեսու-
„ թեան հայեցեալք ի սկզբունս և ի յատկութիւնս նոցին, այն-
„ պիսի են՝ զի պահանջեն այսուհետեւ մերթ ընդ մերթ թէ
„ տնանք ներկայացուցեն զձեզ ի Հնդիկս ։ Այս տեսակք որով-
„ հետեւ անդ էին, կարէին մնալ զձեզ առ ժամանակ մի. բայց

„ թողցուք զայս քննութիւն։ Դուք՝ որոց այնչափ սիրելի
„ է բարիք ազգին, և բարիք առանց ինչ ձերոյ շահու, չպար-
„ տէիք, Գեր. Տէր, զամենայն ջանս ձեր ամփոխել ի գեղեց-
„ կացուցանել միայն զհորիզոն ձեր։ . . .

„ Է՞ ի Մատրաս հասուածս ինչ Հայոց, որոց մանկունք
„ զուրկ են յամենայն կրթութենէ ի մայրենի լեզու։ Այդ
„ ջերմ սիրումն զոր ունիք առ ազգային բարին, սիրումն՝ որ
„ տայր ձեզ բաժանել ի ծոցոյ ձերմէ քանս յանդամոց՝ եթէ
„ պէտք լինէին ի ծառայութիւն կատուցանելի դպրոցանն,
„ սիրումն որ տայ ձեզ զոյր ամենայն հեռացուցանել ի ձէնջ
„ զբազումս ի նոցանէ և առաքել յամենայն կողմանս Եւրո-
„ պայ, սիրումն՝ որ ոչինչ երկմտեցոյց զձեզ արկանել զեր-
„ կուան յամենայն վտանգս ծովու, կարէիք, Գեր. Տէր,
„ կարդել զերկոսին զնոսա ի բարի այնց ողորմելի բնակ-
„ չաց։ Եթէ այս պատճառ ոչ է յոյժ զօրաւոր յաչս ձեր,
„ կայր և այլ ինն։ Եթէ երկոքին անդամքդ մնային ի Մատ-
„ բաս, կատարէիք այնու, թէպէտ և յետ մահուան իւրոյ,
„ զկամս այնորիկ որ ի զուր խնդրեալ էր ի կենդանութեան
„ իւրում զշնորհս ունելոյ զոնէ զմի ոք առ իւր վասն ուսուցա-
„ նելոյ մանկանց իւրոց զմայրենի լեզուն։

„ Այս վախճան գիտեմ զի արտաքոյ էր յայնժամ կարո-
„ զութեան ձերում, քանզի յոյժ անադան էր. բայց այսու
„ ակն ածելով յիշատակի առն՝ որում դուք պարտիք զամե-
„ նայն յանուն ազգին, զոնէ ըստ մասին դարման տանէիք
„ յանցանացն, զոր Հատարակութիւնդ ունիցի միշտ առաջի
„ նորա, մինչդեռ ազգն՝ որոյ բարեացն փափաքէր, առնիցէ
„ քայլ մի ի ձեռն ձեր յարտայայտել զէր իւր և զյանկու-
„ թիւն հաճոյանալոյ այրոյ նորա, զորոյ զերախտիսն ոչ եր-
„ բէք կարասցէ ըստ բաւականին հանդուցել։ Բայց բարեբա-
„ տութիւն ձեր որ երեւի յամենայնի և ամենայն ուրեք,
„ հրաժարեաց լսել միայն այնմ ձայնի՝ որ առ նմա պարտէր
„ արքազան լինել։

„ Այս Գեր. Տէր, հրաշալի անդրդուութիւն ցուցէք յար-
„ համարհել զաղանչանս կնոջն, որ իւրովքն յիշեցուցանէր

„ ձեզ զաղաչանս առն իւրոյ, առ որ եղէք զուք անընկճելի,
„ և որ ի կողմանէ իւրմէ եղեւ առ ձեզ այսչափ ճոխաբար
„ առատաձեռն յաղագին։

„ Մնալով լսել ի ձէնջ զմտածութիւնդ, եթէ ունիցիք,
„ ի վերայ պարտեալեցն ի թղթի այսր, ունիմ պատիւ
„ լինել,

„ Գերապայծառ Տէր,

„ Ձեզառատ ծառայ

„ ՅՈՎՀԱՆՆԷՍ Ս. ՄՈՒՐԱՏ.”

Արդարեւ իսկ նշանակաւոր են յոյժ բանք այսր նամակի Պ. Յովհաննէս Մուրատայ, մանաւանդ այնու զի հանգերձ ճոխաբանութեամբն բովանդակէ և զիմաստս և զկարծիս կատարեալ կաթուղիկոսաց Ադա Սամուէլի Մուրատայ զդիտանէ բարերարին, զիշխանութենէն տուելոյ ինքեանց ի նմանէ, զպաշտամանէն զոր ունէին Մխիթարեանք ի մատակարարութեան զբարեգործութեանն, զաշխարհէն և զքաղաքէն ուր կամէին հաստատել զդպրատունն, և այլն և այլն։

Աւելորդ համարիմ ասել զի իրաւունս ունէր Պ. Յովհաննէս Մուրատ զայրանալոյ ընդ պայմանն եղեալ ի միաբանութենէն՝ չտալոյ ումեք հաշիւ վասն մատակարարութեան դրամոց դպրատանն ահմանելոյ ի պէտս որբոց և աղքատաց Ազգիս Հայոց առ հասարակ, և ոչ յապրուստ կամ ի վայելումն Մխիթարեանց՝ որպէս կասկածէին լսողք թէ կամիցի համարել միաբանութիւնն այնու պայմանաւ. թէպէտ և զարդարն ասելով՝ բուն գիտաւորութիւն միաբանիցն ոչ էր այն յայնժամ, քան լիցի, այլ զերծ լինել ի գլխացաւութենէ համարատուութեան և յամենայն հետեւանաց նորա։

Մեղադրութիւնքն զոր առնէ Պ. Յովհաննէս Մուրատ զորդակալացն երկուց՝ թէ որչափ անհիմն են և անտեղի՝ յայտնի է և ի գրելոցս մինչեւ ցայս վայր։ Ծախք ճանապարհի նոցա հարկաւ թէ հասին ի կէս միայն գումարին զոր դնէ. իսկ թէ երկուս ունեն առաքեաց միաբանութիւնն փոխանակ մոյ

յայտ խակ է, զի ոչ էր անկ Պ. Յովհաննու Մուրատայ յանցանս ինչ գրել զայն միաբանութեանն, որ հարկ համարեալ էր շառաքել ի հեռաւոր և ի մարդածախ աշխարհն Հնդկայ զմի ոք միայն յիւրոյն անդամոց անոք և անօգնական։

Իշխանութիւնն եւս զոր ունելոց էին կուսակալարարքն, և այժմ եւս ունին տակաւին՝ հակելոց ի վերայ անթերի կատարման կամաց հանգուցեալ բարերարին, անժխտելի է. բայց ի պատճառս այնչափ դժուարութեանց և յապարանաց և պատճառանաց զորս արարին մինչչեւ հանեալ ի ձեռաց զհրամանն, խիթալի յոյժ եղեւ այն միաբանութեանն. որ և զամենայն հնարս ի գործ էարկ՝ որպէս զի զերծ պահեցէ զմատակարարութիւն գպրատանն յանմիջական հակողութենէ կուսակալարաց։

Թէ օրշափ էին իրաւունք միաբանութեանն այսպէս վարելոյ՝ տեսցի յընթացս պատմութեանս. բայց և այս ճշմարիտ է զի պարտ էր միաբանութեանն այնպէս մատակարարել զհրամանն ողորմութեան՝ զի զոնէ յաչս արդարասէր անձանց ոչ գոցի յանցաւոր։ Այլ աւաղ, զի որպէս տեսցի յերկրորդի մասին այսր պատմութեան, միաբանութիւնն մեծապէս սխալեցաւ յինչ ինչ իրս, և արդարացոյց ըստ իմիք զկատարածանս և զամենայն մեղադրութիւնս Պ. Յովհաննու Մուրատայ։

Որ զինչ և իցէ վասն ապագային, աւ ժամն միաբանութիւն անխռովարար հայեցեալ յայն թուղթ Պ. Յովհաննու, և հետզհետէ տարեալ բանից գրութեանն՝ յանձն էառ զինչանել ի բաղում՝ պահանջանս նորա, աւ ի խոստաղութեամբ վճարել զիրսն՝ ի պատիւ յիշատակի հանգուցելոյ բարերարին, և շատ համարեցաւ բնրանացի ցուցանել զատութիւն ամբաստանութեանցն որ զիւրոյն։ Իսկ զրով պատասխանի տարար միայն բանից կարգաւորութեան նորա, օրինակ զայս.

„ Պարոն.

„ Վենետիկ. 1 մարտ. 1821.

„ Արամեանս խնդրեցեր ի մէնջ նշանակել քեզ զրով՝ թէ „ մեք ունիք ի մերոց տասն մարթին կարգել ի զանազան

„ գործս կամ պաշտամունս ազգային վարժարանին որ կանգ-
„ նելոյ է բուն կտակի հանգուցեալ Պարոն Սամուէլի Մու-
„ բատեան յարգելի հօր քո, պատրաստ եմք աւագիկ կատա-
„ բել զինդիրդ։

„ Երբեւ ի յինէս չափ միաբանս վանացս են անձինք զորս
„ միաբանութիւնն կարէ կարգել ի պաշտօն Առաջնորդի դըպ-
„ րոցին, որ միանգամայն լինիցի և երեսփոխան Գերապայ-
„ ծառ Արքայի ուխտիս, ի պաշտօն փոխանորդի կամ տեղա-
„ կալի և օգնականի առաջնորդին, ի պաշտօն հոգեւոր գաս-
„ տիարակի մանկանցն, և ի պաշտօն դաստուց պահան-
„ ջեալ լեզուաց և գիտութեանց, այսինքն հայ լեզուի, գաղ-
„ դիարէն լեզուի, հարստաբանութեան և բանաստեղծութեան,
„ ընդհանուր պատմութեան, սկզբանց մաթեմատիկայի, աշ-
„ խարհագրութեան, բնական պատմութեան, բնագանցական
„ և բարոյական իմաստասիրութեան, բնաբանութեան և տե-
„ սական քիմիայի։

„ Զբազումս ի պաշտամանց տուի մարթի կատարել մի ոք։
„ Յորժամ շնորհ արարեալ փութով առաքեցես մեզ զկա-
„ տարեալ և զմանրամասն բացատրութիւն կարգաւորու-
„ թեանդ՝ բուն որում յուսացուցեր, յայնժամ և Գերապայ-
„ ծառ Առաջնորդն մեր պարապով պատասխանի արասցէ
„ կարգադրութեանցդ և կանոնացդ։

„ Ունիմ պատիւ ողջունելոյ զՏէրութիւնդ ի կողմանէ Գե-
„ րապայծառ Հօրն և բոլոր միաբանութեանս, և լինելոյ յար-
„ գանօք և սիրով մեծաւ,

„ Պարոն,

„ Քո ամենախոնարհ և հնազանդ ծառայ

„ Հ. ԳԱԲՐԻԷԼ ԱԻԵՏԻՔԵԱՆ

„ Արքայական միաբանութեան Հայոց սրբոյն Լազարու

„ ի Վենետիկ։ „

Ահա այսպէս և այսչափ միայն պատշաճ համարի միաբանութիւնն առնել պատասխանի ի ժամուն վերոյիշեալ թղթոյ Պ. Յովհաննու Մուրատայ։ Թուի թէ համոզի Պ. Յովհաննէս և խոստանայ այլ գաղափար լուսոյն առաքել միաբանութեանն, և յառաջ քան զամիս վեց ձեռն ի գործ առնել իրացն։ Գնայ վերատին յայց միաբանութեանն, առ ի տալ նոցա զողջոյն հրաժարական, միանգամայն և ի լինուլ զխոստումն իւր որ առ մայր իւր, այս ինքն է խնդրել յԱբրայէն, զի ի գարձին իւրում ի Մատրաս տարցէ ընդ իւր զՇ. Սարգիս Թէոդորեան, իբրեւ տաներէց Մուրատեանց։

Հասեալ և այսմ խնդրոյ իւրում, հաւանելով ընդ այն Աբրային, խնդրէ ի Շ. Սարգսէ զի գրեալ ծանուցէ նա զայն մեր իւրում ի Մատրաս, և ինքն խոստանայ նմա գրել թուղթ առ նա ի Միլանէ և ի Փարիզէ, ծանուցանելով նմա ընտանեբար զճանապարհորդութիւն իւր և զառաջադրութիւնն վաղվաղակի գործադրութեան խոստմանն իւրոյ, և այնպէս հրաժարեալ ի միաբանութենէն անցանէ ի Փարիզ։

ԳԼՈՒԽ Ե.

Թղթակցութիւն Պ. Յովհաննէսի Մուրատեանց ընդ հօր Սարգսի Թէոդորեան յառաջ քան զերկրորդ ուղեւորութիւն նորին ի Հնդիկս. — Առաջարկել նորա Մխիթարեանց նոր իրաւն հնարս սկիզբն առնելոյ կատարման կոչակի հօրն. — Պատասխանի վերաբերութեանն. — Դադարել թղթակցութեան Մխիթարեանց ընդ Պ. Յովհաննէսի Մուրատեանց առ ժամանակս մի.

Պարոն Յովհաննէս Մուրատ մինչդեռ ի Վենետիկ էր՝ խոստացեալ էր Հ. Սարգսի Թէոդորեան գրել առ նա թուղթ, և գրեաց իսկ ի Ճիներբա քաղաքէ, յորում ասէր և զայս ինչ.

“ Զգացուցի մեր իմում զհաւանութիւն քո ի գալ ընդ իս
“ ի Մատրաս. և ոչ երկրայիմ թէ ըստ խոստմանց քոց յետ
“ 15 ամաց նաւեցուք ի միասին ի խաղաղական ափունս
“ Հնդկաստանի, ուր տեսցուք՝ ես զմայրս, և դու զայն որ
“ հաճեալ էր տալ քեզ զանուն՝ զոր գեղեցկագոյն ի ժա-
“ ռանգութիւնս իմ համարեալ է միշտ, և որում գիտացեալ
“ ես բարւոք արժանի լինել ի ձեռն միսիթարութեանցն զոր
“ մատուցեալ ես այնպիսւոյ արժանաւոր մեր յիմում բացա-
“ կայութեան։ ”

Եւ Հ. Սարգիս գրեալ առ նա պատասխանի յ17 ապրիլի՝ ասէր յետ այլոց քաղաքավար բանից.

“ Խնդամ ընդ այն զի արժանի եղեալ եմ մասին գեղեցիկ
“ ժառանգութեանդ. և առաւել ևս ուրախ եղէց յորժամ
“ պատահեցի ինձ արդեամբք ցուցանել զսկար ծառայու-
“ թիւնս իմ առ այնքան արժանաւոր մայր և մեծարոյ ազ-
“ գատոհմի։ ”

Վրէ նա ինքին ժամանակի և թուղթ մի առ Անտոն տիկին

ի Մատրաս, և ծրարել զայն ըստ ի վերոյիշեալ թղթին առ Պ. Յովհաննէս Մուրատ, զի ընթերցցի և ապա կնքեալ առաքեսցէ առ մայր իւր ի Մատրաս։ Եւ ասէր ի նամակին զՊարոն Յովհաննէս Մուրատայ.

«Այլ ես առատնոր, տիկին մայր, արդարեւ ասեմ քեզ, «յոյժ զարմացեալ եմ ընդ գեղեցիկ և չափաւոր մտութիւն «սիրելի որդւոյ քո Պարոն Յովհաննու, այսինքն է ընդ «խանդակաթ սէր և ընդ երկիւղած յարգութիւն մեծարա- «բանաց նորա առ արժանաւոր ծնողս իւր։ Քանզի եթէ քա- «նի փոյթ է նմա վասն բարեացապարտ յիշատակի հանդու- «ցեալ Աղայ հօր իւրոյ, և թէ զիարդ գուն գործէ նա յամե- «նայնի ի ձեր մխիթարութիւն, ոչ կարեմ պատմել։ զայս «խոստովանիմ զի այսոքիկ գովելի և նախանձելի առաքի- «նութիւնք նորա նախանձ արկեալ ինձ արծարծեցին զմիտս, «զի զոյգ ընդ նմին զորդիական բարբառ վերառին առ ձեզ «արձակեցից, և դարձեալ վայելեցից ի մայրօրինակ խնամս «ձեր, որոց ակն ունիմ հանդիպել ընդ հուպ, ի կատարել «Տերամբ առաջարկութեան խորհրդոց Պարոն որդւոյդ։

«Բայց ձեզ յուշ լիցի, տիկին և պատուելի մայր, վերջին «բանն զոր խօսեցայ ի ժամ բաժանման, և տա՛ս թէ զիարդ «արդարացաւ յամենայնի, թէ «Անհնար է մնալ ձեզ անմի- ««խիթար, եթէ չկարօտեալն և զարժանին մխիթարու- ««թեան մխիթարեսջիք։»

Սպառեալ միաբանութեանն զամիս վեց, և տեսեալ զի լոէ ի սպառ Պ. Յովհաննէս Մուրատ զկատարմանէ խոստման իւրոյ՝ վասն բանի սկզբնաւորութեան գպրատանն, և թէ չառնէ նա պատասխանի երկուց թղթոց Հ. Սարգսի գրելոց առ նա ի Փարիզ, գրէ առ նա դարձեալ թուղթ քաղաքաւա- րութեան, միանգամայն և ազդարարութեան։

Այլ իբրեւ տեսանէ զյամենայն պատասխանուոյ նորա, և կասկած առեալ թէ խոյս տուեալ էցէ նա ի Հնդիկս, ստիպի յանձնել զգաս ազգատոհմն Պարոն Ինեխի։ Միայն թէ մինչ- չեւ առաքեալ առ նա զիշխանութիւն գործակալութեանն որ-

չէ ի վանական ժողովի գրել յառաջագոյն առ նա և առ Պ. Յովհաննէս Մուրատ օրինակ գայս.

„ Պարոն.

„ Իվենեսիկ. 7 Նոյեմբ. 1821.

„ Յերկար ապատեալ պատասխանեաց թղթոցս առաքելոց „ առ ձեզ յետ մեկնելոյդ ասոի, յաղագս իրաց դպրատանն „ վաղուց կատակելոյ ի Պարոն Մուրատէն, կատարածեցաք թէ „ նամակք մեր չիցեն հասեալ առ ձեզ. վասն որոյ զվերջինն „ ի սեպտեմբերի յղեցաք ձեռամբ Պարոն Ատպետին Թուէվէ- „ զի, որ հաւատաւ մեզ զանշուշտ ժամանել նորին ի Ձմիռդ։ „ Այլ Քանզի մինչեւ ցայժմ չընկալաք ինչ պատասխանի, „ հարկաւ կախին զկատարմանէ ասացեալ իրիդ։ Տեսանել, „ Տէրութիւնդ զի հանգամանք իրացս ոչ եւս ներին մեզ յա- „ պաղել զլրումն գործոյն։ Վասն որոյ ճնամբ որոշ պատա- „ խանաց ըստ պահանջեալ ժամանակի երթեւեկի թղթոցս, „ որպէս զի զկատացուք ընտրել զարժանն ըստ յայտնի կա- „ մաց կատարիցին։

„ Ենիմ պատիւ լինել յարգանաց,

„ Պարոն,

„ Քո ամենախոնարհ ծառայ

„ ՍՏԵՓԱՆՆՈՍ Վ. ԱԳՈՆՑ

„ Ընդհանրական Աբբայ Միաբանութեան Հայոց

„ Սրբոյն Ղազարու.

Սոխպեալ իմն Պ. Յովհաննու Մուրատոյ ինչանական բանից վերոյշնեալ թղթոյ վիրաւորութեանն, առնէ նմին պատասխանի, պատճառս լռութեանն բերելով զհիւանդանալ նորածին զաւակի իւրոյ, օրինակ զայս.

„ Գերապայծառ Տէր.

„ Փարիզ. 22 Նոյեմբ. 1821.

„ Ընկալայ զամենայն թուղթս առաքեալս առ իս թէ ի ձէնջ,
„ և թէ ի Պ. Հ. Սարգսէն, յետ մեկնելոյ իմոյ ի Ճինէվրայէ.
„ բայց չեռու պատասխանի նոցին, զի յօրէ յօրմէ հասի
„ ի Փարիզ, ի սագնապի էի անդադար, եթէ՛ ընդ դիպուածն
„ որով աճեաց թիւ ընտանեացս, և եթէ՛ ընդ վտանգաւոր
„ անընդհատ հիւանդութիւնս նորածին մանկանս, զոր ան-
„ գլատին ի ծննդենէ իւրմէ մինչեւ ցայժմ հապիւ ընկալայ
„ երիցս անգամ ի գրանց մահու. և ի ժամուս իսկ յորում
„ խօսակցիմ ընդ ձեզ, հինգ բժիշկք ի վերայ կան սպրեցու-
„ ցանել զնա ի մահուանէ։ Այս հակիրճ բան շատ է ի նկարա-
„ գրել ձեզ զիմ վիճակ։

„ Զայս ամենայն դիտելով ձեր՝ չպարտիք այլ զարմանալ
„ ընդ լռութիւնս իմ մինչեւ ցայժմ. և այժմու գրելս է
„ ի պատճառս եղանակի վերջին թղթոյ ձերոյ որ ցուցանէ
„ ինձ զտհաճութիւն ինչ ձեր, զոր չկամիմ և չպարտիմ թո-
„ ղուլ երկարել։ Արդ տամ պատասխանի սմա, զի սա առա-
„ էել ուղղակի խօսի զիրաց դպրատան զոր խնդրեմք։

„ Կամիք զի հաղորդեցից ձեզ զկարգաւորութիւնն զոր ըն-
„ դունելոցս եմ յայսմ իրի. բայց յայտնի է ձեզ այն ման-
„ բամասն գնութեամբ, և լինիցի՝ եթէ յակն արկանիցէք
„ զգիրն իմ զոր առաքեցի առ միաբանութիւն ձեր մինչդեռ
„ էի ի Վենետիկ։ Ապա չմնայ այլ ինչ մեզ՝ բայց խորհել
„ ընդ միմեանս ի վերայ երկրորդական կարգադրութեանց, որ
„ ոչ ինչ ներգործեն առ իրն. բայց քանզի դուք խոստանայք
„ ծանուցանել ինձ զմտածութիւնս ձեր յաղագս այնց, ապա

„ չեմ արարէք ։ Մատուցեալ այժմ ի խնդիր ժամանակի
„ կառուցմանն, յոր կարի իմն թուէք փութալ, ասեմ թէ չէք
„ այնքան փափաքելի արտիս, որպէս տեսանել զկատարումն
„ դիտաւորութեանս. և խնդրեմ զի հաւատասջիք անկեղ-
„ ծարար, թէ ոչ միայն չդանդաղիմ և չվարանիմ, ոչ
„ միայն անհոգ չեմ ընդ կատարումն խորհրդոց ողբմած
„ հոգի յարգելի հօր իմոյ, այլ մանաւանդ յոյժ և կարի յոյժ
„ պատրաստ եմ ի յառաջուցանել զկամս նորա առանձնական
„ պարգեւատրութեամբք ի յաջողումն ազնուական մտածու-
„ թեանց նորա ։

„ Բայց համարիցիք թէ յիմ ձեռս միայն իցէ շարժել ա-
„ տանօր զպաշտօնեայն ըստ կամաց իմոց ։ Յորմէ հետէ
„ եկեալ եմ ի Փարիզ՝ արարի առաջարկութիւնս առ տէրու-
„ թիւնն, և յաճախ տեսութիւն արարի ընդ պաշտօնէի
„ արտաքին իրաղութեանց, այլ ցարդ չեղեւ ինձ առնուլ
„ պատասխանի ինչ որով շարժէի ի գործ ։ Տակաւին ի խօսել
„ կամք. և աներկմիտ լերուք, ընդ առնուլ զվերջին հաւա-
„ նութիւն նորա ընդ առաջարկութիւնս իմ՝ փութացայց
„ հատուցանել զգարտս՝ զոր դնեն ի վերայ իմ սիրտս և
„ խիղճ մտացս, և առանց վայրկեան մի կորուսանելոյ ծա-
„ նուցից ձեզ զայնս ։

„ Առ այժմ այսչափ ինչ եւեթ կարող եմ ասել ձեզ առ
„ ի հանդարտեցուցանել զձեզ ի վերայ արամադրութեանց
„ իմոց զորոց երկբայել թուիք, և այս հատուցանէ ինձ վայր-
„ կեան մի ցաւագին, զի գոզանամ զայն ի հայրական խնա-
„ մոցս ։

„ Մանաւանդ ինձ փութով զկարգաւորութիւնն, զոր
„ ի գէպ համարիք մանաւոր հանգամանաց իմոց կարգադ-
„ րութեան, և հաճեսջիք հաւատալ անշուշտ խոստմանու-
„ թեան անթերի յարգանացս, որով եմ,

„ Գեր. Տէր,

„ Ձեր անձնանուէր ծառայ

„ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄՈՒՐԱՏ. „

Յայնժամ իմիր առնու միտրանութիւնն թէ ի զուր է այնուհետեւ ակն ունել ինձմէ կատարման գործոյն, եւ ասէ՝ յորդ. եւ վայրապար յաւելուլ գրել առ նա եւ այլ թուղթ. այլ փութոյ առաքել առ Պարսն Ինձիս ի Լենաստն իշխանութիւն գործակալութեան, որով պահանջիցէ նա ի կառավարատարաց զհրիտակն ողորմութեան, կամ գոնէ յապահովեսցէ զայն ի գանձատունն տէրութեանն ի Մատրաս, մինչեւ ի գործ դիցի իրաւամբք եւ արդարութեամբ առնի Անդրկացւոց։

Իսկ Պ. Յովհաննես Մուրատայ յետ վերոյշնալ պատասխանւոյն անցուցեալ ժամանակ իւր ի Փարիզ այլ եւս ամ մի եւ աւելի, եւ տեսեալ թէ դադարեաց միտրանութիւնն գրել եւ հարցանել ինչ ինամոյ վասն բանի դպրատանն, գրէ ինքնին առ նա թուղթ նորանշան օրինակ զայս.

« Գերապայծառ Տէր.

« Փարիզ. 8 Հոկտ. 1822.

« Յետ ամենայն ջանից եւ հնարից ի կատարումն առաջին « խնդրոյս, որ յաղագս հրիտակի հանդուցեալ յորդելի « հօրս, զոր եւ պատիւ կարգոյ ծանուցանել ձեզ մինչեւ « ի Վենետիկ էի, ետուտ ի գերեւ եղի յամենայն ակնկալու- « թենէս. է՛ զի գաշնաւորութիւնքս ընդ գաղղիական տէրու- « թեանն մեծամեծ ընդդիմութիւնս յարուցին, եւ է՛ զի աղ- « մուկք արեւելից բան քաղաքական մասին խոշ անկան բարե- « յաժար կամաց տէրութեանն. եւ բաց յայսցանէ, թղթակ- « ցութիւնս ընդ Հնդկաց կրեաց յաղագս ումն անգիտելի, զի « յամէ հետէ անծանօթ մնացեալ եմ մինչեւ ցայժմ ի լրոց « ասն իմոյ։

« Արդ յայսպիսում սահմանի մեծաւ ցանկութեամբ վա- « ռեալ եմ սկիզբն ինչ առնել յառաջ քան զմեկնելս՝ իրաց « ինչ որ ի կատարումն կամաց հօրս առաջնորդեսցեն մեզ. « առաջի առնեմ ձեզ խորհուրդ մի՝ որ յետ ամենայնի եկն ինձ « ի միտս, որոյ եւ յոյժ հաւանական թուի յաջողումն, որպէս

“ զի սղնիցէք ինձ յայնր կատարումն։ Յանկամ բերել տալ
“ յարեւելից ի ձեռն ձեր վեց մանկունս յաղքատ տանց, եթէ
“ չզտանիցին որբք։ Երաշխաւորեմ ձեզ զծախս ճանապար-
“ հին և զայլոց պիտոյից մանկանցն։ Իբրեւ հասանիցին
“ ի Վենետիկ, առաքեսջիք այսր ընդ ծով կամ ընդ ցամաք,
“ և ապա ես տաց զնոսա ընդունել ի մի ի թագաւորական
“ վարժարանաց իբրեւ հասուածատուս։

“ Ի նմին ժամանակի առաքեսջիք ի Փարիզ երկուս ի ձե-
“ բայնոց որ առանձնակեաց կենաց վարեալ ի դրամոց հրա-
“ տակին, գնայցեն օր ըստ օրէ ի դպրոցն ըստ կարգեալ ժա-
“ մուց՝ դաս առել հայերէն։ Այսպէս, ըստ որում տեսա-
“ նէք, ի միասին ուսանին զհայերէն և զդպղիարէն, և
“ բարոյական գաստիարակութիւն նոցա խնամի ի վարժապե-
“ տաց վարժարանին և ձերայնոցն. որով և կամք հօր
“ ըստ մասին կատարի, կամ գոնէ ըստ ներելոյ ժամանա-
“ կին։

“ Սակայն այլ ճանապարհ քան զայս ոչ տեսանեմ
“ ես. քանզի այլք առ հասարակ առաջի առնեն մեզ բարե-
“ բինթաս գժուարութեանց զոր ոչ բաւեն գիւրել ամենայն
“ քննայողք մտածութիւնք և ամենայն փոստք յայսոն և յոչն
“ կշռեալք։ Եւ արդարեւ եթէ քաջ կշռեցիք, այս ճանապարհ
“ երեւի թերեւս գիւրին և խնայուն քան զամենայն, թէ և
“ իցեն և այլք հնարաւորք։

“ Եւ իբրեւ այդ յաջողեսցի, որպէս ոչինչ երկբայիմ, չգի-
“ տեմ ընդէ՞ր չկարիցեմք ընդարձակել ապա զառաջարկու-
“ թիւն խորհրդոցս, և առնել 12 մանկունս միանգամայն,
“ որոց իբրեւ մի ըստ մեծէ եղանիցեն ի դպրոցէն՝ յաջորդեա-
“ ցեն այլք։

“ Արդ տե՛ս, Գեր. Տէր, քննեա՛ հասուն խորհրդովք
“ զգրեալս, և զրեա ինձ զմտածութիւնդ։ Վերատին երկ-
“ բորդեմ ձեզ. այլ ամենայն առաջարկութիւն ի ժամուս
“ ընդունայն խորհուրդք թուին ինձ, և բաղում ամս առ-
“ ցուցանեմք տեսոյ ակնկալութեամբ առանց արդեամց,
“ մտաւանդ իբրեւ ես տեսի մեկնեցայց։ Վասն որոյ հաս-

„ տեսալ եմ իմոր թեթեւացուցանել գոնէ այսու հնարիւք
„ զպարտս խղճի մուացս, և այնպէս հաստատութեամբ եղեալ
„ եմ զայս ի մոր, մինչ զի յիմ վերայ միայն առնում զայս
„ ամենայն, և յիմոց ընչից կամիմ առնել՝ մինչեւ խոր-
„ խորհրդակցեալ միաբանեցայց ընդ ժառանգակցացս։

„ Եթէ ինձ դէպ լիցի մեկնել Յերուսղիոյ յառաջ քան զհա-
„ տանել մանկանցն, չէ ինչ փոյթ. թողում առ զհարկա-
„ ւոր զարման վասն 4 կամ 5 ամաց, և հաստատուն հրա-
„ մանս և հրահանգս, զի մի ինչ արգել լիցի խորհրդոցս։

„ Դարձեալ երկրորդեմ զաղաչարարութիւնս իմ՝ թէ այս
„ ճանապարհ թուի ինձ պարզ դիւրին և խոհական քան զա-
„ մենայն, թէ և գոցին և այլք հնարաւորք, և անյապաղ
„ միամ պատասխանւոյ։

„ Եհաս ինձ և դժբաղդութիւն յետ ամենայն ջանից կո-
„ րուանել զիմ սիրելի որդեակս զոր ոչ զաղաբեցից ի լալոյ
„ թէ և հարիւր ամս կեցից, և ի վերայ ակերաց նորա կամիմ,
„ Գեր. Տէր, կանգնել զյիշատակարանն զորոյ առաքեմ առ
„ ձեզ զուրուագիծն, առ ի մշանջենաւորել զյիշատակ նորա
„ ազգոյ օրինակաւ։

„ Այնս իմ հիւանդագին է, և տխուր, և ես և նա ի միասին
„ յանձն առնեմք զմեզ սուրբ աղօթիցդ։

„ Հաճեսջիք մատուցանել զյարգութիւնս մեր պատուա-
„ կան միաբանութեանդ և հաւատալ զիս բազում մնծա-
„ բանաք։

„ Գերապայծառ Տէր,

„ Ամենախոնարհ և բոլորանուէր ծառայ ձեր

„ ՅՈՎՀԱՆՆԷՍ Ս. ՄՈՒՐԱՏ.”

Թէպէտ և միաբանութիւնն արդէն ի նախընթաց պատա-
խանւոյ Պ. Յովհաննու Մուրատայ խնացեալ էր յայտնապէս
զբացարձակ շկամութիւն նորա ընդ կատարումն հրխտակին,
վասն որոյ և որոշեալ էր տալ իշխանութիւն գործակալու-

թեան Ինենիի ի պահանջել զայն, բայց քանզի Պ. Մուրատ Թաքուցանէր զայն ցայն վայր յառաջին պատասխանիս իւր, յօժարակամ և պատրաստ ցուցանելով զանձն միշտ ի լրումն արքային պարտուց իւրոց, և կամաց հանդուցեալ հօր իւրոյ, Թաքուցանէ ինամանէ և միտանութիւնն ցայն վայր՝ զորոշումն կամաց իւրոց, որ էր դատաստանաւ պահանջել զիրաւունս աղքատաց ազգին։ Բայց իբրև յայտնէ Պ. Յովհաննէս Մուրատ զկամն իւր վերոյիշեալ վերջին գրոցն իւրով, յայտնէ և միտանութիւնն զմիտս իւր վերջին պատասխանեաւն, յորում ասէ յետ այլոց ինչ քաղաքավարական բանից.

“ Այլինչ պակաս տխրութեամբ ընթերցաք զուրուագիծդ
“ նորոյ առաջարկութեան դպրոցին զորմէ մեր բանք են։
“ Յաղագս անդադար յառնելոյ դժուարութեան յերեսաց
“ արտաքին արգելմանց ի կանգնումն ազգային դպրատանն
“ կտակաւ պատուիրելոյ ի հօրէդ, ասէք՝ խորհել այժմ փորձ
“ ինն փորձելոյ յօտարազգի դպրոցի, և ըստ առանձնական
“ և նորահնար կարգաւորութեան։ Քաջ քննեալ զայս ձեր
“ ուրուագիծ, յոյժ օտար տեսանեմք զայն ի մտաց և ի կար-
“ գաւորութենէ կտակադրին, ուստի և արտաքոյ մերոց
“ պարտուցս։

“ Եթէ և դուք բարւոք քննիցէք զրուն պատճառս դժուա-
“ րութեանցն զոր ասէք ի թուղթս ձեր, գտցիք զայնս առա-
“ ւելապէս ի հնգամեայ յապաղմանէ կատարելոյ կտակին, և
“ յանհոգութեան անդ առ ազգարարութիւնս և առ հմտու-
“ թիւն միտանութեան միոյ, որ փորձ գոլով իւրում վիճակին
“ և այլոց, բաւական էր յընտրութիւն տեղւոյն, ժամանա-
“ կին, և այլոց հանգամանաց դպրատանն։

“ Ապա չմնայ մեզ այլ ինչ, բայց ազդել ձեզ համառօտիւ,
“ թէ ոչ դուք և ոչ մեք չպարտիմք բնաւ հեռանալ ի յայտնի
“ և ի հիմնական կարգաւորութեանց կտակին, զորս արդա-
“ րութիւն ամենայն օրինաց պահանջէ, և դիտէ հաստատել
“ իւրով իշխանութեամբն, առանց փոյթ ինչ առնելոյ արտա-
“ քին արգելմանց որք անհանջատ են յամենայն գործոց։ ”

Առեալ Պ. Յովհաննու Մուրատոյ զայն պատասխանի միտրանութեան՝ իրրեւ չիմանալոյն առնելով հարցանէր նախ զմեկնութիւն բառին արդարութիւն, և ապա ինքնին մեկնէր զայն. և երկրորդէր զյանցանս միտրանութեան, զի այնպիսի հրահանգս տուեալ էր գործակալաց իւրոց, որոց վասն չիմաստի գործն, և կնքէր զպատասխանի իւր ասելով վերատին ակնարկել ի Թուղթն իւր՝ զոր տուեալ էր ի Վենետիկ մինչդեռ ինքն էր ինքն, օրինակ զայս.

„ Գերապայծառ Տէր.

„ Ընկալայ այժմ զդիր Ձեր, զպատասխանի իմոյս գրելոյ
„ յ8 հոկտեմբերի անցելոյ, և այնքան թանգագին են վայր-
„ կեանքն, զի չկամիմ կորուսանել առ երկրորդել ձեզ
„ միւսանգամ զանցեալսն։ Խորհուրդն իմ զոր պատիւ կալայ
„ առաջի առնել ձեզ յաղագս դպրատան, թուի ձեզ կարի
„ օտարացեալ ի խորհրդոց հօր իմոյ. իրաւացի իսկ էր ասել
„ ցիս զայդ, որպէս և առնէք զայդ ասասիկ։

„ Բայց պարտ է մեզ տակաւին իմանալ քաջ զմիտս իրերաց։

„ Արդարութիւնն, Գերապայծառ Տէր, յաչս իմ նոյնանը-
„ շան է ընդ պարտուց, և վկայ ունիմ զխիղճ մտացս. զի այն
„ է իմ միայնակ առաջնորդ, զի անհնարին տեսանեմ ինձ
„ ուրանալ զմին առանց հրաժարելոյ և ի միւսմէն։

„ Սակայն արժան է քննել քաջ թէ զինչ իմանայք ձայ-
„ նիւս արդարութիւն. ապա թէ ոչ՝ յոյժ երկրայական մնայ
„ իրաքանչիւր բան իւրոց մտաց մեկնելով, և յայնժամ զինչ
„ լինիցի մեզ։ . . . Կամիմ ասել՝ թէ արդարութիւնն, որ-
„ պէս և այլ ամենայն սկզբունք, առնչական է, և յայնժամ
„ միայն է ճշմարիտ արդարութիւն, յորժամ ամենայն կա-
„ ցուցիչ հանգամանք նորա միացեալ գտանիցին. առանց
„ այդր աննշանական մնայ այդ բառ, և լինի բազում անգամ
„ ճանապարհ չարեաց. զի „ Որքն ապականել, հոգին կեցու-
„ „ ցանէ։ „

„ Ամենայն հանգամանքն, որոց փոքր ինչ

“ մեք, խաբէական թուի ձեզ։ . . . Հաւանիմ այդպէս առ-
“ գընել վայրիկ մի. բայց զինչ ծագէ այսր, Գէր. Տէր. . .
“ զի ոչ երբէք ջանացայք փարատել ի մէնջ զպատրանսն որ
“ զօրացեալ էին ի վերայ մեր. քանզի հարկիմ ասել համա-
“ ռօտելով եւեթ զհին քնեութիւնսն։

“ Միսրանութիւն ձեր չառաջարկեաց մեզ մինչեւ յայժմ և
“ ոչ մի ճանապարհ համձայն ընդ մերոյ պարուցս։ Եւ
“ անհաւասիկ սատանօր միացուցանելով զարդարութիւնն յոր
“ բողոքէք ընդ պարուցն որ այլազգարար կայ ի վերայ մեր,
“ համարձակիմ բողոքել ինոյն։

“ Առաջարկութիւնն զոր արարէք մեզ էր տալ ի ձեռս ձեր
“ զհրիտակն։ . . .

“ Աղէ առ վայր մի լերուք փոխանակ մեր, առէք ի ձեռն
“ զկտակ հօր իմոյ, և տեսէք, տա՞յ մեզ իշխանութիւն առնել
“ զայդ։ . . .

“ Ապաքէն ասիցէք թէ՝ ոչ. բողոքիմ յուղղութիւն ձեր և
“ յանուշաութիւն։

“ Արդ թէպէտ և խոստովանիմ անկեղծարար թէ անզգու-
“ շութիւնք և տարտամութիւնք ի մեր կողմանէ են ինչ. բայց
“ զկիսաւոր պատճառ յապաղման գործադրութեան կամաց
“ հօրս, է անխոհեմ պահանջումն միսրանութեան ձերոյ,
“ զոր չկարէաք և չկարիմք երբէք յանձն առնուլ։ Արդ այժմ
“ յորդորեմ միայն զձեզ, որովհետեւ իմ խորհուրդս հետի
“ թուի ձեզ ի մտաց կտակողին, ցուցանել ինձ ճանապարհ մի
“ որ ձեզ պատշաճ թուիցի։ Զէ երբէք անագան առ իրաւախոհ
“ լինել, թէ գոյ հնար. ապա փորձեացուք զայն ցորչափ յերկրի
“ տառ եմ. զիւրագոյն է իմանալ զմիտս իրերաց թղթակցե-
“ լով ի Փարիզէ ի Վենետիկ, քան ի Հնդկաստանէ յԵւրոպա։

“ Ջանացարուք մնանելոյ ի մտածութիւնս ձեր միսրանել
“ զպարտս մեր ընդ ձերոցդ, և վատահ լերուք ի բարեյաջո-
“ ղութիւնս իմ որոյ սահման է միայն անկարելին։ Լերուք
“ անխարդախ որպէս եաս եմ, Գէր. Տէր։ Համարձակիմ վա-
“ րել զայս բառ միայն յաղագս դժուարութեանցն զորս
“ պարտիք կշռել յերկաքանչիւր կողմանց։

„ Յանձն առնեմ զիմ օգուտ ի ձեռս ձեր, և այս օգուտ է
„ կատարումն պարտուցս, զորս հատանէ ձեզ երբեմն զիմաց-
„ բել նա հաճոյացողունից ձերոց եղանակաց։ Անշուշտ այդ-
„ պէս առնիցէք, եթէ ցանկայք տեսանել հուսկ ուրեմն զկա-
„ տարումն բարի գործոյս. ապա թէ ոչ՝ չհատանէք երբէք
„ յայն. զի ինձ անկ է անդրդուելի կալ ի վերայ այնր, որ
„ հաստատեալ է ինձ ի հօրէս, և բանն իմ լուսաւորէ զիս
„ յայսմ։

„ Այո՝ Գեր։ Տէր, թէպէտ և յանձամ առնում ես անփոր-
„ ձութիւն տա միտանութեամբ միով, սակայն հաստատեմ
„ ինձ առանց ձեւացութեան զարդարութիւնն որ անկ է ինձ,
„ յանդչելով ի դատաստան ծերունւոյ միոյ իմաստնոյ, հար-
„ տարի և սմենապորձի, որ ապաքէն ոչ թողոյր զինքն կու-
„ բորէն յառաջնորդութիւն խօթամոց։

„ Արդ ուրեմն, դարձեալ երկրորդեմ. առաջի աստ մեզ
„ ճանապարհ մի պարզ, դիւրին և անաչառ. և եթէ չիցէ
„ ի ձեռս իմ յաղագս հեռաւորութեան ընչից անդէն աս-
„ դեամբք յանձն առնուլ զայն, յորժամ կարելի ինչ դատի-
„ ցիմ, զոնէ զմիմեանց միտս իմացեալ լինիմք, և մեծ բանն
„ յայնժամ վճարեալ լինի. մնացորդն թեթեւ ինչ մնայ, և
„ ես երաշխաւորեմ ձեզ զկատարումն այնորիկ։

„ Փարիզ. 23 Նոյեմբ. 1822.

„ ՅՈՎՀԱՆՆԷՍ Ս. ՄՈՒՐԱՏ. „

Իսկ միտանութիւնն այնու գրով եւս քան զեւս հաստատի ի միտն՝ դադարեցուցանել ի սպառ զգրութիւնս իւր առ Պ. Յովհաննէս Մուրատ, յուսալով միայն յողորմութիւնն Աստուծոյ և յարդարութիւն անդղիական ատենին որ ի Մատրաս, ձեռամբ գործակալին իւրոյ Պարոն Ինիսի ի Լոնտոն. վասն որոյ և շտապ պատասխանի առ Պ. Յովհաննէս Մուրատ։

Ընդ այն խոհական լռութիւն միտանութեան դժուարի Պ. Յովհաննէս Մուրատ, և գրէ առ Հ. Սարգիս Թէոդորեան

թուղթ մի երկար, յորում երկրորդէ զառաջին մեղադրութիւնն, և այլ եւս ի վերայ յաւելու, և խնդրէ ինքանէ դատաստան առնել զգնացից իւրոց խղճի մտաք և համարձակութեամբ, իբրեւ առանձին ոք և ոչ միաբան վանաց, և յորդորէ զնա գնալ ընդ իւր ի Հնդիկս իբրեւ տաներէց և իբրեւ միջնորդ միաբանութեան առ նոսա և ի նոցանէ առ միաբանութիւնն։

Եւ Հ. Սարգիս առնէ նմա պատասխանի անաչառութեամբ, թէ լուութիւն միաբանութեանն էր ի չվշտացուցանել զնա ճշմարտութեամբն որ նմա յայտնի է, և ի նոցանէ լսելն խիստ թուելոց էր. և առ ի չկարդել ընդ նմա ի զուր՝ որ չվայելէ նոցա. և թէ առաջարկութիւն և պահանջումն միաբանութեանն ոչ այլ ինչ է՝ բայց կատարումն կամաց հօր նորա, որ յայտնի առանդեալ կայ ի կտակին, յորմէ նա հանապազ խնդրէ փափուստ տալ զանազան պատճառանօք. ուստի զնացք նորա ընդ միաբանութեանն չունի բնաւ արդարանալ։ Իսկ ինքն գնալ ընդ նմա ի Հնդիկս պատրաստ է, եթէ զպահանջեալ պայմանն կատարելոյ զկտակին լցցէ նա անթերի. ապա թէ ոչ՝ ոնոտի յուսով չկարեմ ասէ խաբել. զի այս ամենայն յապաղումն և տարտամութիւն իրաց և կարծեցեալ դժուարութիւնք ոչ այլ ինչ են, բայց ինքնասեղծ գաղափար նորա զոր զրով ետ, և մանաւանդ այն զոր ի մտի երկնէ հանապազ, այսինքն ի ապառ խաղ առնել զյուսով ամենեցուն։

Այն պատասխանի յօրինի նախ գաղղիարէն, և ապա թարգմանի ի հայ լեզու ի Հ. Արսէն Անթիմոսեան վարդապետէ Բագրատունւոյ, և ցուցանի Հ. Գաբրիէլի Աւետիքեան Աթոռակալ վարդապետի։ Որոյ տեսեալ զայն՝ ասէ. «Եթէ «ի դիմաց Հասարակութեանս էր, չէր արժան. բայց ի դի«մաց առանձնականի ուրուք արժան է. և եթէ ես էի, ասէ, «առաւել եւս խիստ առնէի պատասխանի։»

Զայրացեալ Պարոն Յովհաննու Մուրատայ՝ գրէ նմա վերատին ծանր ծանր նախատինս և թշնամանս, և ապերախտ կոչէ զնա առ Մուրատեան տունն, որ ի կողմանէ իւրմէ, կատարեալ է, ասէ, բարոյապէս զմեծ բարերարութիւնն, թէ և

կատակատարք կամիցին գրկել զորրան. և թէ վերջին գործ գառնութեան գործելոց էր ինքն պատուհասելով զնա, նմին ոչ ակն ածէր յաշխարհանէն. և կնքէր զթագրթ իւր սպառնալով նմա, թէ ոչ եւս պատասխանեսցէ թագրոց նորին։

Եւ այսպէս ինքնին վճարեաց Պ. Յովհաննէս իժանմանակին զամենայն՝ ինչ որ ընդ միարանութեանն, և ի սպառ եհատ զյոյս նորա յինքենէ եւս։ Զոր և կարեւոր համարեցաւ Հայր Սարգիս գրով ծանուցանել տիկնոջ Աննա Մուրատի ի Մատրաս, օրինակ զայս.

„ Արժանապատիւ և բարեպաշտօն տիկնոջ Աննա Ս. Մու-
„ րատի մայրապրի իմոյ ողջոյն շատ ի Քրիստոս։

„ Երկրորդ առնեմ զգիրս յետ առաջնոյն, զոր երկու ամսոք
„ յառաջ յ18 ապրիլի 1821 առաքեցի առ ձեզ ի ձեռն որդ-
„ ւոյդ Պարոն Յովհաննէս Մուրատի, և յուսամ թէ հա-
„ սեալ է ի ձեռսդ։ Այլ ասէզ, զի արդ այլափոխեալ պատիւ
„ բերիմ յայս գիր. յառաջնումն անդ խնդութիւնն շարժէր
„ զգրիչս, իսկ յայժմուս խորին տխրութիւն. զի ստիպիմ
„ գրել զայն ինչ՝ որում չէր բնաւ արժան ճշմարտել կամ
„ ի գիր անցանել, մանաւանդ յինէն։ Բայց համարիմ պատ-
„ վճարել զկրկին պարտս իմ, առ արդարութիւնն և առ
„ տիկին Մայրդ, ազգելով հասառօտ յունկն ճշմարտախնդ-
„ բութեանդ զեղելոցն ստուգութիւն, որում գիտեմ զի
„ կարօտիք, և հանդուցանելով զսիրտ ձեր ի վերայ իմ։

„ Ոչ կամիմ երկրորդել թէ զիարդ ձերոյ ակնարկու-
„ թեանդ հրաւիրանաւ կոչեցեալ եկաք այդր, և ուրպէս եղաք
„ ի միջի ձերում, և ուրպէս անդործ դարձաք այսրէն, յու-
„ սով սատ կատարումն տալոյ կամաց հանդուցեալ բարե-
„ բարին։

„ Զկամն և զգնացս Պարոն Եդուարդի ընդ մեզ՝ գիտէ ամե-
„ նայն որ ի Մատրաս, և քանզ եւս գիտէ տիկին Մայրդ. սակ-
„ ցիք և զՊարոն Յովհաննէսն՝ յոր այնչափ յուսայիք և յու-
„ սացուցանէիք զմեզ, և մեք կամեցաք յուսալ ցորքայր

“ մարթ էր և վայել իսկ պատուոյ կոտակատարի և մե-
“ բուամ պաշտամանս, առ ոչինչ գրեալ զառաջին գնացս
“ նորա ընդ մեզ, մինչև եկն ի Վենետիկ յամին 1821,
“ ի փետր. 19. և ահա յայնժամ սկսաւ ասանիլ յոյսն մեր.
“ զի փոխանակ խորհրդակցելոյ ընդ մեզ զկրաց դպրոցին
“ և ի գործ դնելոյ, զրով կամեցեալ խօսել ընդ մեզ, առա-
“ քեաց գրուած մի յորում ընդ հակառակն ջանայ խախտել
“ զիրաւունս գործակցութեան մերոյ գշնորհեալսն մեզ յայտ-
“ նապէս ի կոտակարքէն, զոր նա միջնորդութիւն եւեթ կո-
“ չէ, և պայման կրաւորական, և ապա համարի արդարա-
“ ցուցանել զանձն ընդ այնքան յապաղումն իրացն, կուսա-
“ լով ի գլուխ միաբանութեանս զամենայն մեղադրութիւն և
“ զնախատինս և զկշտամբանս, որպէս թէ շահատէր հոգւով
“ գնացեալ իցեմք յափշտակել զդումար դրամոցն, և անտա-
“ նելի պայման ի վերայ եդեալ իւրեանց, և ազգային աղմուկ
“ շարժեալ այդր ընդդէմ ինքեանց. մինչ զի թէ ինքն ի Մատ-
“ բաս դիպեալ էր՝ յոյժ բարկութեամբ և անարգանաք ար-
“ ձակելոց էր զմեզ, հանդերձ ճեռուք ծախուցն՝ զոր հանէ
“ յաւելի քան զ10,000 հուն. խրոխտալով ապառնայ ամե-
“ նայնի որ կամիցի խառնիլ յիրս իւր. զի թէ և ըստ ոչմաց
“ մերոց կամիցիմք, ասէ, տնօրինել զիրան, ՚ի այն իցէ որ մեզ
“ ընդդէմ դառնայցէ. կոտակատարք, ասէ, ոչ գործարա-
“ նաւոր մեքենայ նշանակէ։

“ Յետ այդր ճառում յառաջաբանութեան, առաջի առնէ
“ գաղափար մի դպրոցի, յորում զմիաբանութիւնն ոչ այլ
“ ինչ համարի և կարգէ, բայց միայն կրաւորական գործի
“ ինչ ասէ, և այն յիրս ինչ եւեթ։ Սկսանի ապա գործեալ
“ աղարտել զմիաբանութիւնն իրրեւ անձնատէր և ապերախտ,
“ այնու զի չեմք կամեցեալք մեք մնալ ի Մատրաս յաստ-
“ ցանել զՀայ մանկունս և կամ գոնէ վասն աղաչանաց
“ ձերոց։

“ Մխիթարեանքն անխոտորաբար հայեցեալ յայդ թուղթ
“ նորա, յանձն առ ի միտս իւր զինչանիլ ընդ նմա ի բարեում
“ զգահանիմունս իւր, առ ի խաղաղութեամբ վճարիլոյ զիրան

“ ի պատիւ յիշատակի հանգուցելոյն և ձեր և ամենայն
“ Մուրատեան տանդ, և շատ համարեցաւ ցուցանել նմա
“ զառութիւն ամրատանութեանցն։ Թուէր թէ համոզեցաւ,
“ և խոստացաւ այլ գաղափար լաւագոյն առաքել մեզ, և
“ իբրեւ ի վեց ամիս ձեռն ի գործ առնել իրացն սկզբնաւո-
“ րութեան։ Խնդրեաց ապա յինէն հաւանութիւն գալոց ընդ
“ իւր ի Մատրաս. զոր և եռու պայմանաւ, եթէ լաւ բանից
“ իւրոց փութով ի գործ դնիցէ զկտակ հօրն, յոր և յայնժամ
“ կրկին վստահացոյց զիս. հաւանեցաւ և միաբանութիւնն
“ նոքին պայմանաւ հաճել ընդ և յայսմ եւս՝ վասն բարեաց
“ ազգին։

“ Այսպէս հրաժարեալ ի մէնջ անց ի Փարիզ։

“ Մինչեւ ցայս վայր ընդ մեզ էր տակաւին բարի յոյսն,
“ հայելով յարտաքին յօժարակամութիւն նորա ի պատիւ
“ յիշատակի հօրն, և ի ծնողասիրութիւն նորա, զոր ոչ կար-
“ ծէաք թէ յամօթ արասցէ։ Սակայն անցին ամիսք, և նա
“ չգործեաց ինչ և ոչ գրեաց. հուսկ ուրեմն գրեաց թէ ամե-
“ նայն ջանքս ի գերեւ ելին. զի ի կողմանէ գաղղիական
“ տէրութեան, ուր կամէր կանգնել զդպրոցն, բազում դըժ-
“ ուարութիւնք յառնեն. և ապա՝ թէ խորհիմ առ այժմ վեց
“ մանկունս եւեթ մուծանել ի պատրաստական դպրոց ինչ
“ տէրութեան, և յիմմէ քսակէ ծախել իբրեւ ի յիշատակ
“ դեռածին մանկանս որ մեռաւ, և այսպէս փութամ կատա-
“ րել զպարտս։

“ Արդար պատասխանի միաբանութիւնն թէ խոստրել է
“ այդ ի կտակէն, զոր ամենայն իրաւունք աշխարհի ճանաչեն
“ և կարող են պահանջել։ Գրեաց յայնժամ Պ. Յովհաննէս
“ թէ պատճառ յայս ամենն հաւանելոյ իրացն դուք եղէք
“ ձերով անխոհեմ պահանջմամբդ, զոր բացատրեալ եմ
“ ի թղթի իմում զոր ի Վենետկոյ եռու ձեզ. արդ ուրեմն
“ դուք առաջի արարէք ինձ գաղափար որ ձեզ լաւագոյն
“ թուիցի. բայց պարտիք զանց առնել զրպարտամ կարեւորք
“ յաչս ձեր, որպէս զի համաձայն գոյիք ընդ պարտս մեր.
“ զի մինչեւ ցայժմ շարարիք և չիսանցայք ինչ համեմատ

“ վերոյ պարտուցս։ Իսկ թէ յանկարծ վասն հեռաւորութեան
“ դրամոցն չկարիցեմ և ոչ զայդ ձեր գաղափարդ ի գործ
“ դնել, չէ փոյթ. կարեւորագոյն բանն վճարեալ է, զի
“ իմանամք զմիտս միմեանց։

“ Հաստատաւ միաբանութիւնն թէ զինչ իմանայ պարտա-
“ իւր, և զինչ խնդրէ. վասն որոյ ոչ ինչ գրեաց առ նա։
“ Դժուարեալ նորա ընդ այս խոհեմական լռութիւն, գրէ
“ առ իս երկար, յեղյեղելով զառաջին մեղադրութիւնսն և
“ զթշնամանս, և այլս եւս ի վերայ յաւելով. և խնդրէ յի-
“ նէն դատաստան առնել զգնացից իւրոց ընդ խղճիւ և
“ համարձակութեամբ, իբրեւ առանձին ոք և ոչ միաբան վա-
“ նացս, և յորդորէ զիս գնալ ընդ իւր ի Հնդիկս, և այսու
“ յուսացուցանէ զիւրութիւն ինչ լինել կատարման իրացն.
“ և թէ և ի սպառ անօգուտ լինիցի, ասէ, գոնէ ոչ ինչ պա-
“ կաս պատուեցիս ի մէնջ ըստ ասոյնմանիդ. և այլ ինչ եւս՝
“ չգիտեմ զինչ շահս մեզ առաջի դնէ։

“ Կատեմս պատասխանի արդարախօսութեամբ, թէ լռու-
“ թիւն միաբանութեանն էր ի չվշտացուցանել զքեզ ճշմար-
“ տութեամբն՝ որ քեզ յայտնի է և ի նմանէ լսելն խիստ
“ թանելոց էր, և առ ի չկազել ընդ քեզ ի զուր, որ չվայելէ
“ նմա։ Սառաջարկութիւն և պահանջումն միաբանութեանն
“ ոչ այլ ինչ է, բայց կատարումն կամաց հօրդ որ յայտնի
“ առանդեալ կոյ ի կտակն, յորմէ գոնէ հանապազ խնդրես
“ փախուստ տալ զանազան պատճառանօք. ուստի գնացք
“ քո ընդ միաբանութեան չունի արդարանալ։ Իսկ գնալ ընդ
“ քեզ ի Հնդիկս պատրաստ եմ եթէ զպահանջեալ պայմանն,
“ կատարելոյ զկտակն, լցցես անթերի. ապա թէ ոչ՝ անուտի
“ յուսով չկարեմ խաբիլ. զի այս ամենայն յապաղումն և
“ տարտամութիւն իրաց և կարծեցեալ դժուարութիւնքդ ոչ
“ այլ ինչ են, բայց ինքնաստեղծ գաղափարդ քո զոր զրով
“ եռուր, և մանաւանդ այն զոր ի մտի երկնես հանապազ,
“ այս ինքն է ի սպառ խաղ առնել զյոյս ամենեցուն։

“ Ընդ այս ճշմարտախօսութիւն որում վկայէ տիկին
“ Մայրդ և Մատրոս բոխանդակ և համօրէն Եւրոպա՝ գայ-

“ բացեալ նորա, զրէ վերատին ծանր ծանր նախատինս
“ և թշնամանս և հայհոյանս. ընդ որս և ապերախտ կոչէ
“ զիս առ Աստուծոյ տուեալն, որ ի կողմանէ իւրմէ կատա-
“ բեալ է, ասէ, բարոյապէս զմեծ բարերարութիւնն, թէ
“ և մի՛ք կամիցիմ՛ք զրկել զորքն. և թէ՝ վերջին գործ դատ-
“ նութեան գործելոց էր ի պատուհասել զիս, եթէ չլինէր
“ յիս աշխատանս. և կնքէ զթուղթն կարծելով ապառնալ՝
“ թէ այլ ոչ եւս պատասխանեցից թղթոցդ։ Եւ ահա այս-
“ պէս ինքնին վճարեաց ընդ մեզ զամենայն ինչ, և ի ապառ
“ եհատ զյոյս մեր յինքնէ եւս։

“ Տեսանել միաբանութեան զայսպիսի ելս իրաց ի կողմանէ
“ երկոցուն Ժառանգաց և կտակակատարաց, զոր վաղուց
“ նախագուշակեալ էր, պարտական դատեցաւ զինքն ըստ
“ խղճի մտաց առաջի Աստուծոյ և մարդկան, զայս խնդիր
“ որոց և ազգատաց ազգին և զպատիւ բարեյիշատակ հան-
“ դուցելոյն յանձնել յանաչառ ատեան արդարութեան
“ Անգղիոյ. քանզի չմնաց ինչ այլ հնարք ձեռնարկելոյ։ Եւ
“ ես պարտ համարեցայ ծանուցանել զայս ամենայն տիկին
“ Մօրդ, զի գիտասցես ո՛ւմ արժան է մեզադրել, և մի՛ այլ
“ ընդ այլոյ ինչ լուեալ յայլուստ՝ այլ ազգ դատեսցիս զմիա-
“ բանութենէս և զինէն. այլ ունիցիս զատոյգ գիտութիւն
“ եղելոցն, թէ ո՛րպէս միաբանութիւնն և ես յամենայնի
“ առատ կամաք յանձն առաք ըստ պատշաճի մեծարանաց վա-
“ րիլ ընդ նմա և զիսորհուրդս քո լնուլ ճշմարտապէս, և
“ ո՛րպէս նա յամենայնի զհակառակն հատոյց մեզ, և կատ-
“ ցոյց զմեզ յառաջին խարհրդոց, և ի հակառակն եւ ձեռ-
“ նարկել. քանզի և անհնար է մեզ զառանձնական շահս
“ նախապատիւ դնել ազգային բարւոյն։

“ Առաքեցաք երկուս պատկերս զեղանկարս, ի փորրիկ յի-
“ շատակ սիրոյ և յարգանաց, մին առաքն Անան՝ վասն տիկին
“ Մօրդ. և միւսն առաքն Տիրամայրն՝ վասն դատերդ տիկնոջ
“ Մարիամ Թերեզայի. նոյնպէս մի մի ազօթ ագիրս, և նորա-
“ տիպ գրեաս քանի մի վասն բարեկամաց։

“ Բազմատատ և արդիւնաբեր ազգայն և օրհնութիւն մա-

„ տուցանել ձեզ Գերապայծառ Աբրահամն մեր, և համա-
„ դումար հարք և եղբարք միաբանութեանս, և մնաւանդ
„ Վ. Հ. Սուքիաս վարդապետն ։

„ Ողջոյն սիրոյ և յարգութեան մատուցանեմ մեծապա-
„ տիւ զաւակացդ և սիրելի թոռանց, և համօրէն ընտանեացդ
„ և բարեկամացս այդր եղելոց, և մնամ միշտ անկեղծ և որ-
„ դիական մեծարանօք

„ Տիկին Մօրդ

„ Նուաստ ծառայ

„ Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈՂՈՐԵԱՆ Կ. Մ.

ԳԼՈՒԽ Զ.

Վերատին թղթակցութիւնք Պ. Յովհաննէս Մոլրատի ընդ առաջնորդին Մխիթարեանց. — Վասիլեան Գ. Սոնիրանցի Ագոնց աբբեպիսկոպոսի և աբբայի. — Հայր Սարգիս Թէոդորեան հանգերձի ուղեւորել երկրորդ անգամ ի Հնդիկս.

Արդ ըստ բանից վերոյիշեալ թղթոյ Հ. Սարգսի գրելոյ առ տիկին Աննա Մուրատ, և ըստ վերագոյն յիշատակեալ բանից պատմութեանս, կացուցանէ միաբանութիւնն ի կոչմանէ իւրմէ զարծակալ զՊարոն Ճէմս Ինենիս Անդրիացի, և զընկեր նորա զՊարոն Լիթլի փոխանակեալս ի Լոնդոնն, և նոքա ի կոչմանէ իւրեանց կացուցանեն ի Մատրաս զարծակալ զՊարոն Մինչլն փոխանորդն, որ և փեսայ Պարոն Ինենիսի, առ ի յապահովել նախ զհրամանն ողորմութեան ազգին ի գանձատուն տէրութեան, և ապա իրաւասու լինել ընդ կուսակալատարն, և ի գործ դնել զայն ։

Մինչեւ փաստաբանն ծանուցանէ Պ. Եդուարդայ Մուրատի զկամս միաբանութեանն, և նա պատասխանէ նմա թէ պատրաստ են կտակակատարքն ի գործ դնել զկտակն, և թէ կամին հաստատել զկալուածն ի Լոնդոն։

Ծանուցանէ զայս միաբանութեան Պարոն Իննիս, և յաւելու թէ անոտի են կարծիք կտակակատարացն. քանզի չնեւրեն, ասէ, օրէնք Անգղիացւոց յերկրի նոցա դնել կալուածս ահմանեալս ի գործ ողորմութեան։

Լուեալ Պ. Յովհաննու Մուրատայ զայն ամենայն յեղբօրէն իւրմէ, երկնչի յօրինաց Անգղիացւոց. վասն որոյ սկսանի վերատին գրել առ միաբանութիւնն, և խնդրել ինամանէ զՀայր Սարգիս Թէոդորեան տանել ընդ իւր ի Հնդիկս, պահել կամելով այնու տակաւին զյարաբերութիւնն որ ի մէջ իւրեանց և միաբանութեան, և խափանելով զձեռնարկութիւն գործակալին Մխիթարեանց Իննիսի՝ և Մինչենի ի Մատրաս։ Վասն այնորիկ բաղում խնամով և չափաւորութեամբ գրէ գիր, հանդերձ թախանձանաք, և յաւելուածով Յիշելեաց ինչ, օրինակ զայս։

„ Գերապայծառ Տէր.

„ Լոնդոն. 1 գեկտ. 1823. „

„ Սրբազնագոյնն ի պատճառս թելադրէ ինձ զայս թուղթ.
„ զինչ և լինիցի պատասխանին ձեր, յուսամ թէ օրէն է
„ ինձ հաւատալ խղճիւս թէ պարտնակիցէ զիմաստս գլխոյն
„ միաբանութեան սրբոյն Ղազարու. և զմին իրի ազաչեմ՝
„ գրել տալ զայն հայերէն։

„ Զյիշեմ ինչ ի վերաբերութեանց տան իմոյ ընդ միաբա-
„ նութեանդ մինչեւ ցայսօր, յաղագս հրիտակի յարգելի
„ հօրս. զայս միայն ասեմ, զի ի մեր կողմանէ կարեմ հա-
„ ստատել թէ ամենայն դժուարութիւնք և արգելք ծագե-
„ ցան կամ ի թիւր իմացուածոց և կամ յայլ ինչ հանգամա-
„ նաց արտաքոյ մերոց կամաց, առանց ակնարկելոյ ի գնացս

“ ինչ ձերոց գործակալացն ի Հնդիկս, որ էին ի խափանումն
“ ամենայն ճանապարհաց իրաւախոհութեան, որպէս ամե-
“ նայն որք անաչառ պարտի վկայել.

“ Յետ այսորիկ իբրեւ միայն պատասխանի փոյթն զրպար-
“ տութեանց և նուաստ ստգոմանաց զորս կրեցաք, առեմ
“ առաջի Աստուծոյ և մարդկան թէ միաք մեր զհրամակէն
“ եղեն միշտ և են որպէս վայել է առն քրիստոնէի հաւատա-
“ ցելոյ յարդարութիւն Աստուծոյ որ քննէ զմիտս և զերիկա-
“ կամուն, և որպէս վայել է բարեհաճուն արանց որք իբրեւ
“ անդամք ընկերութեան ճանաչեն զնա իբրեանց իշխան և
“ դատաւոր յաշխարհի սոսա։

“ Ապա առելորդ է անշուշտ այսուհետեւ ասել, զի եթէ
“ իբրեւ զբազումս ի գերագոյն եղելոց քան զռամիկն՝ չարա-
“ խօսաց պատահեցաք և մեք, այնպիսիս և մեք համարիմք
“ զնոսա, և չարախօսք չեն և ոչ մի ինչ մասն ընկերու-
“ թեան։

“ Ասա զկայ առնում, Գեր. Տէր, և զոր ասացիս բաւական
“ համարիմ ի հաւանեցուցանել մարդկային բանի զանկեղծու-
“ թիւն և զանեղեալ միտս առն նմանուց, յամենայն իրս, յորս
“ վրիպակն կամ այլ որ և է հանգամանք առեղծեալ էին
“ պատճառս երկրայութեանց. զի այնուհետեւ յայտնի է և
“ անժխտելի իսկ որոց խորհին՝ եթէ պատճառք վերարե-
“ րութեանց որք կային ի սկզբանէ ի մէջ մեր և միաբանու-
“ թեանդ կան մինչեւ ցայժմ, և ոչ երբէք դադարեցան։

“ Արդարացի է ասել թէ իրն զոր կամիմք մարթէր կատա-
“ րել մինչեւ ցայժմ։ Բայց որ յապաղէ՝ ոչ չքանայ. և ար-
“ դարեւ հայեցեալ ի բնութիւն իրացս զորմէ մեր բանքս են,
“ համարձակիմ ասել՝ թէ յապաղումն ընդ որ ցաւիմք՝ բան
“ փոքրս ինչ մասին եւեթ մարթի ընծայել անհոգութեան։

“ Զպարտիք անդիտանալ, Գեր. Տէր, թէ ամենայն այս-
“ պիսի իր ի հարկէ յամր է, և ընդ դանդաղանաք և ընդ
“ քննութեամբ անկեալ. առ. որ չէ ինձ հարկ տալ ձեզ օրի-
“ նակ զբան հրամակի Պարոն Եղուարդայ Ռաֆայէլի։ Եւ
“ ոչ ինչ այլ ասեմ։

“ Այժմ պատիւ ունիմ ծանուցանել ձեզ՝ թէ որդի իսկ
“ մերձ եմ իմարձել նաև առ անցանելոյ ի Հնդիկս, հասուս-
“ տեալ ի մոի նաւել անշուշտ ի Մարտի։ Մայր իմ կարօտի
“ յոյժ հայ տաներիցս. և յանուն նորա խրատեւ այրոյ
“ Պարոն Սամուէլի Մուրատայ ընդ քո բերան խօսիմ առ հա-
“ տարկութիւն որդւոյն Ղազարու. որ ինչ մարթէր լինել
“ ի կենդանութեան հօրս, այնու զի հանդերձեալ էր նա
“ բարերար լինել ազգին, և միաբանութիւնդ օժանդակ նո-
“ ցա բարերարութեանն, ես կատարեմ զայն այժմ փառաք,
“ որովհետեւ նա զիւր գործն կատարեալ, և ձերդ ի կամս
“ ձեր է ապառաւն։ . . .

“ Արդ դիմեմ առ միաբանութիւնն Մխիթարեան վանս
“ հոգեւոր մխիթարութեանց այրոյ նորա՝ որոյ անուանն պար-
“ տի պատուական լինել ի միաբանութեանդ, որովհետեւ
“ յանձին ունի զա զանուանն միջնորդ լինելոյ հայ ազգին, և
“ արդեամբք իսկ կարգեալ է ի գործի բարերարդութեանն նո-
“ ցա։ որոյ անուանն զարձեալ յետ ամենայն դժուարութեանց
“ և արգելմանց՝ լինելոց է և լինիցի օրհնեալ յաւուր միում
“ յաղագէ անտի, և հասանիցէ ի դարս հեռաւորս։

“ Մինթէ հաճիկ իցէ ազդ առնել ձեզ, Գեր. Տէր, թէ զիարդ
“ յայժմու հանգամանս իրաց կարեւոր է յոյժ, թէ և չվարէի
“ ես զայս այժմու գնացս, զի մի ոք ի միաբանութենէդ գայցէ
“ կամակար ի Հնդիկս, և անդ ի սուրբ նախանձուէ շարժեալ՝
“ ի գործ արկանիցէ զամենայն հնարս որ ընդ ձեռամբ, ի միա-
“ բանել զամենայն կարծիս և զամենայն միտս, զոր և կարէ
“ այժմ, և ի ժողովել զպատուղ վաստակոցն։ . . .

“ Յաղթանակել ի վերայ դժուարութեանց գործ է ամե-
“ նայն գրիտանէից, ես առաւել որոց ուխտիս զնոցն գաս-
“ նեն։ Անկ իցէ նոցա լքանիլ այնու զի ոչ յաջողեցան
“ միանգամ, և այն մատամբ իւիք ի նոցա սխալմանէ, մինչ-
“ դեռ յանդիման տեսանեն զպատկն պայծառ և յաւիտե-
“ նական։ . . .

“ Եւ ո՞ իրիմտեսցի թէ ի գործն յոր հրաւիրի միաբանու-
“ թիւնդ յայսմ վայրի, տիրապէս աշխատելոյ ի փառս Ա-

“ տուծոյ . . . Զի՞նչ գործէր արդեօք Գերյարգելի Մխիթար
“ Աբբայն եթէ կենդանի էր . . .

“ Նորա առաքինութիւնք, Գերապայծառ Տէր, որոյ արժանի ժառանգ եւ, մանաւանդ երկայնմտութիւն նորա
“ ի դիւցազնական նեղիրման յօդուտ ազգին, այսքիկ միայն
“ և ոչ այլ ինչ պատճառք շարժեցին զյարգելի հայրս
“ ի դարձուցանել զաչսն առ միաբանութիւն արբոյն Ղազա-
“ ր՝ ի կամելն բարերարել ազգին։ Մինթէ զի թիւր ինչ
“ շաւղօք սկիզբն եղեւ, ուստի և ոչ յաջողեաց, համարձա-
“ կիմ եւս ասել, մինթէ զի թիւր ինչ կամ թէ և ուղիղ շաւիղ
“ ոչ յաջողեաց ճշմարտապէս, միաբանութիւն ձեր առաջի
“ ունելով զյիշատակ Մխիթարայ և զօգուտ այնքան ազգաց,
“ լքցէ զայն ի բաց, փոխանակեալ զայն ընդ հանգստեան
“ իւրում, մանաւանդ թէ ընդ անձնասիրութեան։

“ Ցանկայի գիտել, Գերապայծառ Տէր, թէ ունիցիմ ար-
“ դեօք խնամատարել զայդ ի պատասխանեայ թղթոյս՝ որում
“ մնամ. և սակայն ի կողմանէ միաբանութեանդ մի միայն
“ նուէրք լինելոց են. իսկ որ մեզն հասանէ՝ զայն մեք գի-
“ տեմք . . .

“ Արդ ծանուցանեմ այսու թղթովս զի ի շաւնուղղ յանձն
“ զինդիրս զոր առնեմ առնենդ մնաք, և ի կատարեալ հաւա-
“ նութեան մնացս՝ թէ տիրապէս բերի այս ի յաջողումն բա-
“ րերար կամաց հօրս, միաբանութիւնդ ինքնին անպատճառ
“ ամբարտակ յարուցանէ ընդդէմ ամենայն ճանապարհաց,
“ որք ի ձեռն նորա ինոյն առաջնորդեն։

“ Գիտեա՛, Գերապայծառ Տէր, զի միայն ներքին գիտակ-
“ ցութեամբ պարտուց վարիմ ի թղթիս. ունիմ և անձնասի-
“ րութիւն, բայց գիտեմ ուր արժան է թողուլ զայն։ Խո-
“ նարհեցայ եւ մինչեւ ի հերքել զդրպարտութիւնս՝ որք ոչ
“ երբէք արժանի են ուշադրութեան վեհ ոգւոյ. ի վերայ ան-
“ ցելոց իրաց միանգամայն հայեցայ անաչառ ակամբ, որ
“ նշան է ազատ և անպատրուակ սրտի. նաեւ աւելի ինչ
“ արարի, մուացեալ առ վայր մի թէ երխտաարդ եմ եւ
“ ընկեցեալ ի տեսիլ աշխարհի, և այր անփորձ, փորձեցի

“ խօսել ընդ ձեզ լեզու մի՝ յոր նկատողութեամբ վեր-
“ ճշմարտութեանց պարտիք ընդել լինել, որպէս զի յաջող-
“ ցայլ հաւանեցուցանել զձեզ ի խնդրուածս իմ ։

“ Մի՛ համարիք թէ կարօտութիւն տաներիցս սոխակաալ
“ իցէ զիս առնել զայս ամենայն ։ Եթէ այդ կարօտութիւն
“ միայն էր, յայլ դիւրագոյն հնարս ձեռնարկէի, որ և բնա-
“ կան խրոխտութեանս թեթեւ լինէր. հասարակաց խելքս
“ պարտի վկայել այդմ. աշխարհս ընդարձակ է և հնարք
“ մեր բազմապատիկ. բայց դարձեալ ասեմ, միայն ներքին
“ գիտակցութեամբ պարտուցս վարիմ. զայս ամենայն առ-
“ նեմ զի անարատ եղէց յաչս իմ, եթէ միտրանութիւնդ
“ բռնադատիցէ զիս զայս առաջին նուադ յայնպիսի մոա-
“ ծութիւնս մխել, որք եղծանիցեն զկատակ հօրս ըստ երկրոր-
“ դական մատանցն ի պահպանութիւն գլխաւորացն. իր որ
“ յայնմ հետէ լինի մեզ անհրաժեշտ պարտականութիւն ։
“ Սակայն չկարէք խղճիս մոաց չվկայել թէ ես յինէն կողմա-
“ նէ ջանամ առնել զամենայն ինչ առ ի խորշել յայդպիսի
“ հնարից. և հաստատեմ քրիստոնէական հաւատարմու-
“ թեամբ թէ ցանկամ խորշիլ յայնմանէ ։

“ Զոր է յաւելուլ, Գերապայծառ Տէր, թէ ես յոյժ հմուտ
“ համարիմ զձեզ գաղտնեաց մարդկային սրտի՝ առ ի կշռե-
“ լոյ զիզձս որդւոյ միոյ, որ մինչդեռ զայլոց կարեւորաց է
“ խնդիր՝ Ջանայ հոգալ միանգամայն զվերջին միտիթարու-
“ թիւնս զգրա կարէ տալ սիրելի մօր և առատոպեալ ողբոց.

“ զոր թէպէտ մաքթ էր այլուստ գտանել, բայց առաւել
“ հաճոյ լինիցին նմա, եթէ գայցեն ի վանաց արբոյն Ղուկա-
“ բու, որովհետեւ այր նորա եւս նախապատիւ արար
“ զայն։

“ Այս թուղթ զորոյ ունիմ զօրինակն, եղիցի արձան յի-
“ շատակի յաջողութեան Հանիցս ի արքազան իշխս յայսմիկ,
“ և կամ արդարացուցէ զմեզ առաջի յետնոց։ . . . Միա-
“ բանութիւն արբոյն Ղազարու մի՛ եւս ակնկալցի այլում
“ առաջարկութեան ի մէնջ, եթէ այս՝ որ է հետեւանք ինչ
“ յաղթանակի ի վերայ անձնասիրութեանս ի խոր խոցելոյ,
“ անպտուղ լինիցի. վասն զի ի տալ սորա վկայութիւն զիրգէ
“ մոացս առաջի միաբանութեանդ, յայտնի արասցէ ինձ
“ միանգամայն՝ թէ մի իմիք յայսմ հետէ արժան իցէ ինամանէ
“ ակնուանել։

“ Բազում յարգանաք յանձն առնեմ զիս ի սուրբ աղօթս
“ քո, և խնդրեմ, Գերապայծառ Տէր, զինչ և ծագիցի
“ ի գնացից սատի, հաւատալ թէ պահեմ ես առ անձն
“ քո զամենայն վարկումն, զամենայն յարգութիւն և զամե-
“ նայն կարելի մեծարանս, և թէ՝ ոչ դադարեցայց սորա-
“ գրել զիս

“ Ամենախոնարհ և ամենահնազանդ ծառայ

“ ՅՈՎՀԱՆՆԷՍ Ս. ՄՈՒՐԱՏ.”

“ Յ. Գ. Երկուցեալ թէ վիճակ ազգատոհմիս առ միաբա-
“ նութեամբդ չիցէ երբէք մինչեւ ցայժմ առաջի եղեալ նմա
“ որպէս պարտն է, և որպէս հուսկ ուրեմն պարտի երեւիլ,
“ յաւելում յայս թուղթ ՅԻՇԵԼԻՔ ինչ, որ լինիցի իբրեւ
“ յաւելուած։ Յայտնի առնեմ հակառակ ամենայն մակամբ-
“ ուծութեանց, թէ չիք իմ ասացեալ ինչ ի յիշելիսն անդ
“ առ ի վշտացուցանել զոք։ Յարգի յոյժ համարիմ զկարդդ,
“ Գերապայծառ Տէր, մինչ զի չիշխեի գործի առնուլ զքեզ
“ ի ձեռս, եթէ այնպիսի միտս ունէի. յատակ խոսեցայ, զի

“ այնպէս առ մեծ ինչ ունիմ զպատասխանիդ ձեր, որ չիւնե-
“ շոց է որոշողական, մինչեւ չկարեմ զանց առնել ինչ յաղ-
“ գարարութիւնս իմ ։

“ ՅԻՇԵԼԻՒ. — Երկու պարզ խնդիրք անդէն և անդ
“ առաջի լինին ամենայնի որ կամիցի քննել զառապարէզն յա-
“ ռում Մուրատեան տունն և միաբանութիւն սրբոյն Ղազա-
“ րու խաղացուցանեն զիւառս իւրեանց ի վիճի հրիտակի
“ Սամուէլի Մուրատեան՝ շնորհելոյ մանկանց Հայոց, յորում
“ հրիտակի միաբանութիւն սրբոյն Ղազարու անուանեալ է,
“ միջնորդ։ Դնեմ ես զխնդիրս զայսոսիկ հանդերձ պատա-
“ խանեաք, որք չեն զիւրք երեւակայութեան, այլ հետեւանք
“ անժխտելի գործոց. առասիկ են.

“ Հ. Որպէս շարժեցաւ Մուրատեան տունն յետ մահու
“ կուակողին ։

“ Պ. Որեւոց առ միաբանութիւն սրբոյն Ղազարու զեկու-
“ ցանել զհրիտակն, և ասիցել առաքել զոք ի Հնդկաստան,
“ առ ի խորհրդակցիլ ընդ նմա զհնարից գործադրութեան
“ մուայ կուակողին ։

“ Հ. Զինչ գործեաց միաբանութիւնն ։

“ Պ. Առաքեաց երկուս յիւրոցն ի Հնդկաստան ի պահան-
“ ջել զհատուցումն հրիտակին ։

“ Եւ ահա ոչ միաբանիմք, և յայտնի երեւի թէ ուստի՛ յա-
“ ռաջ գայ վրպակն ։ Եթէ յանիրաւութենէ եկելոյ յԱսիոյ,
“ թէ յանիրաւութենէ իմաստութեան հատուցելոյ յերդ
“ Ադրիականին ։ . . . Քաւ լիցի թէ հենդնիցեմ. անժխտելի
“ է թէ իմաստութիւնն է բնական ատրոգելիք ժողովոյ մարդ-
“ կան որք կացուցանեն զմի որ և է միաբանութիւն, քան թէ
“ անհատից ոմանց առանձնաւորաց ։ Զայս միայն կամիմ
“ ասել, զի թէ սուրբն Պօղոս ի քարոզելն յետ վերանալոյն
“ ի կայանս սրբութեան, ոչ ամօթ համարէր երկնչել ի թշնամ-
“ ւոյն և զգուշանալ, մարդկային իմաստութիւնն չպարտի
“ ամաչել խոստովանել զյանցանս իւր ։ Եկեսցուք այժմ
“ ի դիպուածական գործս ։

“ Հ. Զինչ էին զվաւոր մասունք կարգաւորութեան գոր-

“ ծոյն՝ առաջարկեալք յերկուց միաբանից անտի առ Մուրա-
“ տեան տունն ։

“ Պ. Ի մէջ այլոց իրաց, եւս՝ թէ ոչ ժառանգք Պարոն
“ Սամուէլի Մուրատեան և ոչ յաջորդք նոցա ունիցին բնաւ
“ իրաւունս համար պահանջելոյ ի միաբանութենէ արքոյն
“ Ղազարու զմատակարարութենէ եկամտից հրիտակին ։

“ Այսչափ հերիք է. բողոքեմ առ ամենայն ազգս և ազգին
“ ժառանգակիցս մեզ ի ժառանգութեան հօր իմոյ . . . թող
“ նոքա դատիցին զմեզ և դատապարտեսցեն, եթէ ի մեր յանց-
“ ուածոց միայն յայս հատաք այսօր, միաբանութիւնդ և տուն
“ իմ ։ Այսպիսի պահանջումն չէր արդեօք բաւական ի խզել
“ բոլորովին յայնմ հետէ և առ յաստս զամենայն կապ ի մի-
“ ջոյ մերմէ ։ . . . Աւելորդ է ինչանել յայլ մանր իրս. իւրա-
“ քանչիւր հարցումն դատանէր և զիւր պատասխանին ։

“ Արդ ահա այսպէս գործակալք միաբանութեանդ դար-
“ ձան յԵրուսաղէմ. յաւելցուք միայն՝ թէ Մուրատեան տունն
“ հատոյց զամենայն ծախս՝ եթէ զերթի և եթէ զդարձի,
“ մինչեւ ցվերջին ընդոնն . . . զդարձին ասեմ, զդարձին՝ որ
“ կատարեցաւ լոկ յամառութեամբ, մինչ դրեթէ առ ոտս
“ նոցա անկեալ աղաչէին մնալ և ապասել. զինչ փատաս
“ բանական ունիցին վասն դառնալոյն այսպէս յետ այնչափ
“ թախանձանաց ։ Յայդ վիճակ հասեալ էր միաբանութիւնդ
“ մինչ չկարէր թողուլ երկուս յինքեանէ ամս ինչ, կամ թէ
“ պէտք էր ամս տասն ։ Եթէ այնպէս է՝ զոր երաշխաւո-
“ րութիւն ունի տալ մեզ, և զիարդ կարէ պահանջել ի մէնջ
“ կոյր վստահութիւն, ուր՝ թէ և յիւրն կողմանէ ինքն ան-
“ խարդախ էր, փոքր ինչ դիպուած բնական կամ պատա-
“ հական, օրինակ իմն որպէս ի Կոստանդնուպոլիս դիպաւ
“ իւրոց միաբանից, կարէ եղծանել զբարոյական հաստա-
“ տութիւն հաստուցմանն ։

“ Սակայն խնդրոք ոչ եթէ զմիաբանութիւնն յայս վիճակ
“ հասեալ համարիմ. անձամբ ծանեալ ես զայն, և իմ տկար
“ ճանաչումս եգիտ ինձ անձինս խմասուն և զիտուն ։
“ Այլ ի խօսելս առ այդ անձինս, յորոց ազատ գտանիցին

“ բողոքեմ, և ի տեսանելս թէ մինչ անհնարաւոր կարծեն
“ առանձնաւորաց ոմանց ունել փորձ հաւասար միաբանու-
“ թեան մեզ, փոքր մի զկնի կամին վճռել ի մի գիծ գրչի,
“ թէ երկու անհատք որ ինոցա միաբանութենէն, այնպ. եւեթ
“ պատճառաւ զի նոցա են, որպէս թէ եկեղեցին չիցէ երբէք
“ ծնեալ հերետիկոս, միշտ իրաւունս ունէին, թէ ի պա-
“ հանջմունս իւրեանց, և թէ ի գնացս որ զկնի, ընդդէմ
“ արանց բազմաց ժողովելոց՝ որք էին գոնէ հաւասարք նո-
“ ցին. ի տեսանելն ասեմ զայս ամենայն՝ հեծեմ ընդ իմաս-
“ տութիւնն մարդկային, և տեսանեմ զիս հարկաւորեալ
“ հուսկ ուրեմն աղաղակել ընդ նախնի իմաստասիրին, թէ
“ ո՛վ տառապեալ մարդկութիւն։

“ Եթէ համարիցի ոք թէ նոքա երկոքին գործեցին ըստ թե-
“ լադրութեանցն որ ունէին, հարցանեմ, ո՞չ ապաքէն և
“ զգիրս սուրբս խեղաթիւրեցին ոմանք. այլ եթէ հուսկ ու-
“ բեմն հաւանեցուցէ ոք զիս, թէ այն պահանջմունք արդա-
“ բեւ ի միաբանութենէն էին, և թէ՝ դարձ նոցա հաճոյ եղեւ
“ նմա, յայնժամ առաւել դառնագինս երկրորդեցից, ո՛վ
“ տառապեալ մարդկութիւն.

“ ՅՈՎՀԱՆՆԷՍ Ս. ՄՈՒՐԱՏ. ”

Առեալ միաբանութեանն վերոյիշեալ թուղթ Պ. Յովհաննու Մուրատի, և մանր կշռեալ զամենայն հանգամանս իրացն, հաւանի վերատին զիջանել կամաց նորա, այն էր առաքել վերատին զՀ. Սարգիս Թէոդորեան ի Մատրաս, իբրեւ տանել-ցէ Աննայի տիկնոջ Մուրատեան, միանգամայն և բռելեայն գործակալ վասն բանի հրիտակի դպրատանն, առանց մոռանելոյ ի քննութիւն այլ բանից նորա և պատասխանի առնելոյ ամենայնի։ Եւ գրէ առ նա օրինակ զայս.

“ Աղնուական և բարեէր Պարոն.

“ Վենետիկ. 3 յունիս. 1824.

“ Զգաղղիարէն նամակ տէր Մեսրոպեանց, գրեալ ի Լոնդոն

“ ի 1 դեկտ. անցեալ տարւոյ, ընկալաք ի 23 նորին ամսոյ,
“ և ուշ եղեալ բուն նպատակի գրութեանդ տեսաք, զի
“ ցանկայք հանգուցանել զսիրտ տիկին մօր ձերոյ, ունելոյ
“ առ իւր զմի ոք ի մերոց վարդապետացս, ըստ բազմամեայ
“ փոխաքանաց նորա. և զպատասխանի այսմ ձերոյ առա-
“ ջարկութեան խնդրէք տալ հայերէն բանիւ առ ի վստա-
“ հութիւն թէ իմ բանք են և իմաստք։ Կարող էր տէրութիւնդ
“ վստահանալ, թէ որպէս ձեր գրեալն գաղղիարէն հաւա-
“ տարմութեամբ ծանուցանի ինձ, նոյնպէս հաւատարիմ էր
“ և իմ պատասխանի նովին լեզուաւ գրեալ, բայց կամիմ
“ հաճել նաեւ յայսմ զտէրութիւնդ։

“ Գովելի խնդիր և թախանձանք ամենասիրելի մօր ձերոյ,
“ զոր կոչէք գլխաւոր ի պատճառս յորդորիչս գրութեանդ,
“ արդարեւ յերկուց ամաց հետէ ունելոյ էր զիւր կատա-
“ րումն, եթէ տէրութիւնդ, զոր հայրաբար համարձակիմ
“ ասել, ըստ խոստման ձերոյ ձեռնարկեալ էր գոնէ ի սկզբ-
“ նաւորութիւն հրիտակի բարեյիշատակ հօր ձերոյ. վասն
“ որոյ ընդ յապաղումն այնպիսի խնդրոյ ոչ ես և ոչ միաբա-
“ նութիւնս ունիմք խիղճ ստգտանաց։

“ Իսկ թէ յապաղումն գործադրութեան հրիտակին յոր-
“ մէջ պատճառէ եկն յառաջ, արդեօք յանհոգութենէ՞ ինչ,
“ կամ ի վրիպանաց միոյ և միւսոյ կողմանն, և կամ թէ ոչ
“ բարւոք իմանալով զմիտս իրերայոյ, կամ ինքնին ի դժուա-
“ րութենէ իրացն, և կամ յարտաքին պարագայից, վայրա-
“ պար համարիմք մտանել յայս քննութիւն. և արտաքոյ
“ իսկ է գլխովին այժմու մեր նպատակի։ Զայս միայն յիշե-
“ ցուցանեմ տէրութեանդ, թէ ի ծագել տարաձայնութեան
“ ի մէջ երկուց կողմանց, եթէ ոչ լինէր երրորդ ոք իրաւա-
“ բար, վէճն ոչ դադարէր յաւիտեան. և ի մերում դիպուա-
“ ծի՝ եթէ ձեռամբ երկուց գործակալաց մերոց առաքելոյ
“ ի Մարսա՝ ոչ վճարեցաւ ինչ, եթէ տէրութիւնդ անձամբ
“ յԵւրոպա մօտ առ մեզ լինելով բազում ամս՝ ոչ վճարեցաւ
“ ինչ, մինթէ այժմ ներկայութեամբ միոյ անձին ի մէջ
“ իցէ՞ թէ վճարեսցին իրքն։ . . .

“ Վասն որոյ գալով յառաջիկայ մեր նպատակ, ոչ հրա-
“ ժարիմ ես և միաբանութիւնս կատարել զհայցուած տէ-
“ րութեանդ, միայն առ ի լրումն բազմամեայ բաղձանաց
“ ցաւագին մօր ձերոյ. և յայս վախճան եւեթ Հ. Սարգիս
“ վարդապետ մեր խոնարհեալ ի կամս միաբանութեանս,
“ յանձն առնու զաշխատութիւն առ ի սփոփել և հան-
“ դուցանել զսիրտ մայրապրի իւրոյ։ Եւ եթէ այս իցեն և
“ կամք տէրութեանդ, մնայ ծանուցանել մեզ վաղվաղա-
“ կի, ցուցանելով և զմիջոցն հարկաւորս վասն հանապար-
“ հին։

“ Յուսամ թէ առաւել քան զայս ոչ պիտի ասել առ
“ ի հաճութիւն տէրութեանդ, և կարօտագին տիկին մեր ձե-
“ րոյ. որոց ամենեցուն սիրով մատուցեալ զիմ հայրական
“ օրհնութիւն և զարեւմտեան ամենայն երջանկութեան
“ ի սկսանել նորոյ տարւոյս, հանդերձ միաբան աղօթիւք
“ հաստատութեանս,

“ Մնամ Տէրութեանդ

“ Նուաստ ծառայ և աղօթարար

“ ՍՏԵՓԱՆՆՈՍ Վ. ԱԳՈՆՑ

“ Աբբայ. ”

Եւ զի հիւանդ էր աբբայն ի ժամանակին, և ձեռնագիրն գժուարընթեռնելի, հարկ համարեալ էր Աթոռակալ նորին յաւելուլ ինքերոյ թղթոյն զայս ինչ.

“ Այլ է գրուցուած դողդոջուն մատանց Գերապայծառ
“ հօրն։

“ Հ. ԳԱԲՐԻԷԼ Վ. ԱԻԵՏԻՔԵԱՆ.

“ Աթոռակալ. ”

Պ. Յովհաննէս Մուրատ թէպէտ և հաճի ընդ այն պատա-

խանի, իբր զի հանդիպէր այնու խնդրոյն իւրում, սակայն չհաճի ընդ յիշատակութիւն երրորդի ուրումն, իրաւարարի ի խնդիրան. զոր և յառաջագոյն իսկ իմացեալ էր, զգործակալութիւն Գ. Ինենիսի ի Լոնտոն, և զհարցումն Մինչին փաստաբանի ի Մատրաս ի Գ. Եդուարդայ. վասն որոյ և Ջանայ խափանել զայն՝ խնդրելով զՀ. Սարգիս տանել ի Հնդիկս. և լուէ առ ժամն ըստ օրինակի միաբանութեանն, բաւականացեալ ընդ կատարումն խնդրոյ իւրոյ. վասն որոյ և առնէ պատասխանի այսպէս.

„ Գերապայծառ Տէր.

„ Լոնտոն. 23 փետր. 1824.

„ Նամակդ գրեալ՝ յՅ անցեալ ամսոյ՝ աւուրք ինչ են զի
„ եհաս առ իս, մինչդեռ կարի զբաղեալ կայի յառանին գործ-
„ ծառնութիւնս, որով և արդելայ վաղագոյն գրել զպա-
„ տասխանիս։ Վանուցանեմ զի ծնաւ ինձ դստրիկ մի, որ
„ առնցոյց զթիւ որդւոցս. և ասա ի գէպ է նկատել զայն ինչ
„ զոր տեսանեմ ի գրիդ, թէ գոյ միշտ երրորդ ումն իրա-
„ ւարար տարաձայնութեանց. կամ այլով բառիւք՝ կըշ-
„ ռիլ փոխարինաց յաշխարհի ասա որոյ նա միայն է դատա-
„ ւոր և իրաւարար։

„ Որովհետեւ պատասխանին զոր հաճեալ էիք առնել առ
„ խնդրուածս իմ՝ կատարէ ըստ իրին զդիտաւորութիւն
„ խորհրդոյս, զոհ համարիմ զանձն իմ և նմանող լինիմ օրի-
„ նակի ձերոյ, չխօսելով այլ առ ժամն։

„ Նաև որով մեկնելոց եմք՝ առագաստել ունի ի 17 մայի-
„ սի. մնամ ասա հօրն Սարգսի մեր յելս ապրիլի։ Աղաչեմ
„ զհատարակութիւնն մատուցանել նմա զհարկաւորն ի պէտս
„ իրաւացի ծախուց ճանապարհին մինչեւ առ իս, և առա-
„ քել առ իս զմուրհակն, և ես հատուցից ի հասանելս
„ ի Մատրաս. զի փոխանակութիւն դրամոց ի Հնդկաց այսր
„ ոչինչ ծանր է ի ժամուս, մինչ չժամանեմ հոգալ առաս-

“ Նոր գրամն ի պէտս իմոց իսկ ծախուց՝ առանց մեծի և անս-
“ հնարին կորստեան ։

“ Ընտանիք իմ ընդ իս աղաչեն զձեզ ընդունել զմեծարանս
“ յարգանաց մերոց, և յիշել զմեզ ի սուրբ աղօթս ձեր ։
“ Հանեաց եւս Թարգմանել զիմաստս մեր առ արժանապա-
“ տիւ աթոռակալդ, և առ համօրէն միաբանութիւնդ՝ և հա-
“ հաւատալ զիս,

“ Գերապայծառ Տէր,

“ Ամենախոնարհ և ամենահնազանդ ծառայ ձեր

“ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄՈՒՐԱՏ ։ ”

“ Յ. Գ. Եթէ առաջարկութիւն իմ ի Հնդկաստան հասու-
“ ցանելոյ անյարմար թուիցի, հաստակութիւնն կարէ քար-
“ շել առուտաւ յինէն ։ ”

Մինչչեւ ժամանեալ վերոյիշեալ թղթոյ Պ. Յովհաննու Մուրատայ ի վանս, վախճանի առաջնորդ միաբանութեանն Ստեփաննոս վարդապետ Ագոնց արքեպիսկոպոս և տրրայ, ի հասակի 84 ամաց, ի 29 յունվարի 1824 ամին ։ Վասն որոյ առնէ պատասխանի թղթոյն Վ. Հ. Գաբրիէլ Աւետիքեան տեղակալ վարդապետ, օրինակ զայս.

“ Յարգելի Պարոն.

“ Վենետիկ. 13 մարտ. 1824.

“ Հաճելի նամակ տէրութեանդ ուղղեալ առ Գերապայ-
“ ծառ Հայրն մեր ի 23 անցելոյ փետրվարի, ժամանեաց
“ ի 11 ամսոյս, մինչդեռ ես ինքն խորհի գրել առ տէրու-
“ թիւնդ և ծանուցանել մեծաւ ցաւովք՝ եթէ, ուրպէս յարդե-
“ լի ծերունին առանդեալ ի ձեռս տէրութեանդ իրր մատա-

“ եւ յիշատակ գյեռին դրուածս ակարացեալ մատանց իւ-
“ րոց եւ զօրհնութիւն իւր ի վերայ բոլոր ազգատոհմիդ, յանձն
“ առնելով մեզ մինչեւ ցյեռին շուն իւր ի գլուխ տանել
“ դիմեդրուածս ձեր ըստ փափաքանաց սիրելի տիկին մօր
“ ձերոյ եւ վասն մեծի ազգային բարւոյն, եթող զվշտալի և
“ զմահկանացու զայս կեանս, յարտասուս և ի սուգ տանս
“ ողջոյն և քաղաքիս, յերջանիկն փութալով ի 29 անցելոյ
“ յունվարի։

“ Հաճութեամբ մեծաւ իմացաւ միաբանութիւնս զծնունդ
“ սիրելի դստրկիդ, որոյ վասն և աղօթէ մնալ նմա միշտ անա-
“ վնաս և քաջասուն, զի ըստ թոռոյ զաւակացդ աճեցուցէ
“ և զփառս ազգատոհմիդ։

“ Նմանապէս և թիւ անձանց միաբանութեանս բազմանայ
“ այժմ, ոչ միայն ըստ ուսանող մանկանց յորոց կէսք եկին
“ հասին յայլ և այլ կողմանց արեւելից, և կէսք դեռ եւս
“ ի ճանապարհի են, այլ և ի պատճառս ժողովոյ վասն ընտ-
“ րութեան մեծի աբրային. որոյ վասն ծախք պիտոյիցն
“ եւս յաւելուն նեղքոյ և սրտաքոյ առաւել քան զսովորա-
“ կանն։

“ Դարձեալ և յուսալ քան զայս ամ հարկեցաք եւս նոր
“ ծախս առնել ի կառուցումն նորոյ տպարանի ամենայն
“ կազմութեամբ, որով բարդաւաճագոյն եւս յաջողեսցէ
“ հրատարակումն պիտանի գրեանց. մինչ զի համարիմ,
“ Պարոն, թէ տէրութիւնդ իբրեւ նախատես եղեալ այսոցիկ
“ ազգ առնէ ի յեռագրութեանն զհաճութիւն այժմէն քար-
“ շելոյ զհարկաւոր ծախս ճանապարհին մինչեւ ի Լոնդոն,
“ յոր հարկաւորեալ եմք։

“ Հ. Սարգիսն հատատուն ի խոսումն իւրում և յօժար
“ յօդուտ ազգին, և մանաւորապէս ի ծառայութիւն տէրու-
“ թեանդ, ըստ ազգասիրութեան ձերոյ և ըստ որոշելոյ միա-
“ բանութեանս՝ ուշ դնէ պիտոյից ճանապարհին, յուզի ան-
“ կանել ընդ հուպ, որով կարիցէ գտանիլ այդր ի կեսապ-
“ բեալ վերջին աւուրս ապրիլի. զորոյ և զերն ասի ոչ
“ զանց արասցուք վերասին ծանուցանել տէրութեանդ։

„ Մխաքանութիւնս ընդ իս ցանկայ բարերջանիկ վիճակի
„ ձերոյ և յաջողութեան ամենայն գործոց, մինչեւ հասեալ
„ այդր վարդապետիս մերոյ, բերանով եւս բացատանուցել
„ գյարգանս և զսէր, որովք պատիւ ունիմ լինելոյ

„ Սիրելի տէրութեանդ

„ Խոնարհ և բոլորանուէր ծառայ

„ Հ. ԳԱԲՐԻԷԼ Վ. ԱԻԵՏԻՔԵԱՆ

„ Տեղակալ. ,,

Իրրեւ մերձ լինին ուուրք մեկնելոյ Հ. Սարգսի թէոդորեան ի Վենետկոյ՝ գնալ ի Լոնդոն և անտի ի Մարդաս, ծանուցանէ զայն գրով Հ. Գաբրիէլ վարդապետ Ասիտիքեան տեղակալ, Պ. Յովհաննու Մուրատայ ի Լոնդոն, հանդերձ ապգարարութեամբ զիսիանակարգոյն առաքելոյ ի վերայ նորա. և այս պատճէն էր թղթոյն.

„ Պարոն.

„ Վենետիկ. 24 մարտի 1824.

„ Մերձ ի վերայ հասեալ ուուրց բաժանելոյ ի մէնջ Հօր
„ Սարգսի վարդապետի մերոյ, փութամ կատարել զխոս-
„ տացեալն իմ նախընթաց գրովս յ13 ամսոյս։ Յուսամք
„ թէ յաջողեցի նմա անկանել ի հանապարհ յետ երկուց
„ ուուրց։

„ Իսկ վասն հարկաւոր ծախուցն մինչեւ ի Լոնդոն՝ արա-
„ բաք ի վերայ ձեր մուրհակ փոխանակութեան ըստ հաճու-
„ թեան ձերոյ՝ լիրայ ստէրլին 50, ընդ ձեռն լամբարտո-
„ խին MM. les frères Schielin, և է թուղթն ստորագրեալ
„ յինէն զաղղիարէն և հայերէն գրով, որ այդր հասուցա-
„ նելի է առ վաճառականէն Նորա յետ տասն աւուր։ Աղաչեմ
„ զտէրութիւնդ առնել պատիւ ի հասուցումն դորա։

„ Ի ժամանել այդր վերոյգրեալ վարդապետին՝ անձամբ
„ ծանուցէ զամենայն զոր արժան է։ Եւ ես փափաքելով զի
„ և զձեզ դատիցէ ի ցանկալի առողջութեան, և յայտ արա-
„ բեալ զսիրալիր ողջոյն ամենայն վիարանիցս առ ձեզ և առ
„ տիկին, համարիմ ինձ պարտ ճանաչել զանձն իմ,

„ Պարոն,

„ Ամենախոնարհ և բոլորանուէր ծառայ ձեր

„ Հ. ԳԱԲՐԻԷԼ, ԱՌԵՏԻՔԵԱՆ

„ Արքեպիսկոպոս ընդհանրական. „

Ի 25 մարտի յաւուր ուրբաթի Աւետեաց սրբոյ Կուսին, հանդիպի և Յոբելեան՝ յիսնամեայ քահանայութեան Հ. Գաբրիէլի վարդապետի Աւետիքեան. որոյ վասն լինի խնջոյք ուրախութեան ինորընծայարանի, միանգամայն և վասն ճանապարհորդութեան Հ. Սարգսի Թէոդորեան։

Ապա գրին թուղթք ընծայութեան առ Պարոն Յովհաննէս Մուրատ և առ մայր նորա տիկին Աննա Ս. Մուրատեան, և զիր գործակալութեան վասն բանի հրատակին, որք ունին օրինակ զայս.

„ Պարոն.

„ Վենետիկ. 27 մարտի 1824.

„ Յառաջընթաց կրկին նամակաւս ծանուցի տէրութեանդ
„ զպատրաստութիւն և զերանելն ի ճանապարհ Հ. Սարգսի
„ վարդապետին մերոյ. իսկ զներկայ զայս նամակ պատշաճ
„ դատեցայ մատուցանել ձեզ նորուն իսկ ձեռամբ, որպէս
„ զի թիւ դողցես երից վկայից լրացի ի հաստատութիւն
„ այնր սիրոյ և բարեկամութեան, որով միաբանութիւնս մեր
„ շարժի միշտ ի կատարել զբանաւոր հաճոյս և զփափա-

“ քու�ն մեծարոյ Տանդ Մուրատեան, ոչ ինչ երկրայելով թէ
“ ի ձեր կողմանէ եւս փոխադարձ է սէրն և բարեկամու-
“ թիւն։ Ասոյ այս իմ դիր մի՛ կարծեսցի, ազաչեմ, յանձ-
“ նարարական վասն Հ. Սարգսին մերոյ, այլ ընկալարուք
“ զայն փոխանակ իմ, իբրեւ անձամբ իմով առաջի կացուցա-
“ նել տէրութեանդ զմեր պիտանի անձն, զի ինքնին ցուցա-
“ նիցէ զիւր պիտանութիւնն ի ծառայութիւն տան ձերոյ և
“ առ ազգային բարին։ . . .

“ Հ. ԳԱԲՐԻԷԼ ԱԻԵՏԻՔԵԱՆ
“ Ընդհանրական արոտակալ. ”

Եւ առ տիկին Աննա Ս. Մուրատեան օրինակ գայս.

“ Ազնուական և պարկեշտասէր տիկնոջ անուանի խաթունի
“ Յիսուսանդ ողջոյն և օրհնութիւն ի Տեառնէ բաղ-
“ մացի։

“ Ահաւասիկ առաջի քո կայ, և անձամբ մատուցանէ մայ-
“ բագրով սիրոյդ գայս նամակ զուարթարար, վարդապետն
“ մեր Հ. Սարգիս Թէոդորեան, սիրեցեալն ի քէն իբրեւ որ-
“ դի, զոր արտասուօք թողեր բաժանիլ այսի, և արտասու-
“ օք թախանձէիր դառնալ վերատին, և զոր երեք ամօք
“ յառաջ կամէիր ունել մօտ առ քեզ, եթէ այլ արտաքին
“ պատճառք ոչ խափանէին զդառնալ նորա։

“ Հաւատի առնեմք զպարկեշտութիւն քո, թէ որովհետեւ
“ միաբանութիւնս մեր ի սկզբանէ եղեւ ընտանի առ երկրքան-
“ չիւր տունս, Եղուարդեան և Մուրատեան, վասն այնորիկ
“ առաջնորդն միաբանութեանս Արհիեպատիս արքեպիսկո-
“ պոսն Ստեփաննոս Ագոնց յօժարեալ էր կատարել զբաղ-
“ ձանս բարեսէր տիկնոջդ, առաքելով վերատին զՀ. Սարգիս
“ վարդապետն, զայն վարդապետ, որ յայլ բաղում դարձս
“ միաբանութեանն պիտանի զորով, առաւել կամեցաք պա-
“ հել մինչեւ ցայժմ ի կատարումն հոգեւոր բաղձանաց

“ քոց, քան յայլ պաշտան և ի գործ կարգել զնա։ Քան-
“ զի յիշատակեմք միշտ, թէ երկու վարդապետք մեր ի տէր
“ հանգուցեալք, Հ. Նիկողայոս Բուզայեան և Հ. Պօղոս
“ Մեհերեան, որչափ սէր և խնամս կալան ի վերայ տանն
“ ողորմած հոգի Աղայ Եղուարդին, թէ ի Մատրաս և թէ
“ ի Լոնդոն։

“ Եմանապէս և ծերունի Հ. Կարապետ վարդապետն մեր
“ ի Վարսին քաղաքի ուրքան հայրական գութ և հոգածու-
“ թիւն արարեալ է ի վերայ ողորմած հոգի Աղայ Մկրտչին
“ Մուրատեան, և ի վերայ զեռահասակ որդւոցն Կարապետի
“ և Սամուէլի. որք և ի Վենետիկ եկեալ են և ականատես
“ եղեալ մեծատանին մերոյ, գտանելով բազում միխիթարու-
“ թիւն ի վիշտս իւրեանց։

“ Ահա այսքան վաղեմի ընտանութիւն՝ որպէս անջնջելի
“ պահէ ի միտս մեր զյիշատակ և զսէր երկուց
“ տանցդ, նոյնպէս ի ձեզ ի զաւակս նոցա պահէ և պահելոց
“ է զփոխադարձ սէրն և զհատուցումն մտերմութիւնն, որ է
“ ճշմարիտ և յատուկ կնիք երախտագէտ սրտի։ Ուստի ի հա-
“ տանել այժմ ողջամբ Հ. Սարգսի վարդապետի մերոյ ըստ
“ փափաքանաց տիկնոջդ, մեք ամենեքին իբրեւ անձամբ ներ-
“ կայ այդր՝ տեսանելիս զանպատմելի խնդութիւնն որ զեղեալ
“ առատանայ ի մայրախնամ սրտիդ և ի բոլոր ընտանիս ձեր,
“ որոց և մեք խնդակից լինիմք, և պաղատիմք հանապա-
“ զորդ աղօթիւք առ ամենողորմն Աստուած, զի զձեզ զա-
“ մենեսին պահեսցէ միշտ անփորձ յամենայն չարէ ըստ հոգ-
“ ւոյ և ըստ մարմնոյ, առաջնորդելով ամենեցուն յուղիղ
“ խորհուրդս և ի գործս ըստ կամաց իւրոց. որպէս զի թո-
“ ղեալ յաշխարհի զգովելի անուն և զյիշատակս ձեր, արժա-
“ նի լինիջիք մշտնջենաւոր և անանցանելի մեծութեան փա-
“ ռաց յերկինս։

“ Հանդերձն միտրան վարդապետաքս զողջոյն սիրոյ առաքեն
“ առ սիրելի որդեակդ Պարոն Հեդվարթն ընտանեաքն հան-
“ դերձ, և առ դուստրդ Մարիամ Թէրէզայ խաթունն, և
“ առ Պարոն Աբրահամ Աղանուրն. որք և ի բերանոյ Հայր

„ Սարգիս վարդապետի մերոյ տեղեկանայք զոր ինչ ցան-
„ կայք իմանալ ի վերայ ատուածապահ մենաստանիս, և
„ զանազան դիպուածոց կողմանցս Իտալիոյ։

„ Ողջ լերուք ընդ իսուսոք ամենազօր աչոյ Բարձրելոյն,
„ ի պարծանս Օրամեան ազգիս, և Մխիթարեան միաբանու-
„ թեանս, որում ծանիցես զիս,

„ Տիկին Բարեպաշտօն,

„ Խոնարհ տեղապահ

„ Հ. ԳԱԲՐԻԷԼ Վ. ԱԻԵՏԻՔԵԱՆ։ „

Տեսա և զիրն գործակալութեան Հ. Սարգսի վարդապետի Թէոդորեան ի Հ. Գաբրիէլ վարդապետէ Աւետիքեան իբրեւ ի տեղապահէ տրբային հաստատեալ ի Ներսիսեանէն, վախճանեալ գոլով յայնմ Ժամանակի Սահմանոսի վարդապետի Ագոնց Արքեպիսկոպոսի և Տրբայի միաբանութեանն, հանդերձ վերոյլիշեալ տաւչին զրով գործակալութեանն որ յանուն երկուց գործակալաց, և տուանձին Յայտարարութեամբ ի հաստատութիւն նորոգ տուեալ զրոյ գործակալութեան, և ի պէտս գործադրութեան՝ յորժամ հարկ իրացն պահանջիցէ՝ վասն բանի ինդրոյ հրիտակին. և այս պատճէն է յայտարար զրոյն.

ՅԱՅՏԱՐԱՐԱԿՈՒԹԻՒՆ

„ Այս վաւերական զրով յայտ առնեմք ամենեցուն
„ որք տեսանիցեն, թէ Հ. Սարգիս վարդապետ Թէոդորեան,
„ անդամ միաբանութեան մերոյ, զոր առաքեմք այժմ
„ վերատին, որպէս յառաջն առաքեալ էաք յամին 1817,
„ ի Հնդիկս ի կողմանս Մատրասու, ունի առ ի մէնջ իշխա-
„ նութիւն օրինաւոր՝ հոգալոյ զիրաւութիւնս վերաբերեալս
„ որ և իցէ եղանակաւ առ միաբանութիւն մեր։ Ասոր կա-

“ լոգ է ի պատահել այնպիսի իրաց՝ խօսել ընդ որոց պի-
“ տոյ է, խորհրդակցիլ, դաշնադրիլ, ընդունել, և կամ
“ պաշտպանել զիրաւունս միաբանութեանս, թէ ինքնին և
“ թէ ի ձեռն այլոց։ Եւ եթէ հարկն պահանջեսցէ, կարող է
“ կարդել զոք կամ զոմանս ի գործակալ այնպիսի իրաց։
“ Ա. ի հաստատութիւն այսոցիկ, առորագրեմք յատուկ
“ ձեռամբ տեղապահն և երիցագոյն վարդապետաք, և կնքեմք
“ հաստատակաց կնքով միաբանութեանս.

“ Հ. ԳԱԲՐԻԷԼ ԱԻԵՏԻՔԵԱՆ
“ *Տեղապահ.*

“ Հ. ՄԿՐՏԻՉ Վ. ԱԻԳԵՐԵԱՆ.

“ Հ. ԻԳՆԱՏԻՈՍ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ.

“ Հ. ԽԱՉԱՏԻՐ Վ. ՍԻՄԷԼԵԱՆ
“ *Քարտուղար.*

“ Տուաւ ի Վենետիկ ի վանս սրբոյն Ղազարու, ի 23 մար-
“ տի 1824։

ԳԼՈՒԽ Է.

Երկրորդ ուղևորութիւն Հ. Սարգսի Թէոդորեանի ի Հնդիկս. — Քերթուածք վանդրողականք յօրինեալք ի կրօնակցացն. — Երբ նորա ի Միլան և ի Թուրին, և անտի ի Փարիզ. — Տեսութիւնք ընդ Շահանի Զրպետեանի, ընդ Զօհրապեանի Յովհաննէսի վարդապետի և ընդ Գասպարեանցի Գրիգորի վարդապետի. — Բանք եղբոյրք ընդ Պ. Յովհաննէսի Մուրատայ ի Լոնդոն. — Մուտն ի նուռ ի Փորթսմէր. — Հասանելն ի Մատրաս Հնդկաց.

Ի 27 մարտի յամին 1824 յետ միջօրէի, մինչչեւ տուեալ Հ. Սարգսի Թէոդորեան զողջոյն հրաժարական հարց և եղբարց ուխտին յեկեղեցւոջ զկնի աղօթից ճանապարհորդութեան, որպէս սովորութիւն է վանացն, ժողովին ոմանք ի կրօնակցացն ի Հիւրանոցին և ընթեռնուն անդ բարձրաձայն՝ գրուածս քանի մի քերթողականս յօրինեալս ի զանազան անձանց, ի խրախոյս և ի բարեմաղթութիւն ճանապարհի և գործոց Հ. Սարգսի Թէոդորեան, որոց և այս օրինակք են.

Ի ԲԱՐԵՄԱՂԹՈՒԹԻՒՆ

ՀՆԴԿԱՑԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ

Վ. ՏԵԱՌՆ Հ. ՍԱՐԳՍԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԹԷՈԴՈՐԵԱՆ

ԽՐԱԽՈՅՍ.

Ոչինչ տրկար քան զմարդ երկիր անուցանէ,
Քերդողահայր մէնեան երգեաց շնչեալ սիրդ ի յերկնէ.
Նոյն շունչ այսօր ինձ ազդեաց
Տարփողել յունկն աշխարհաց,

Այնչ երկիր կլրէ հլզօր քան ըզմարդ ·
Զոր թէ ի լանջ պըղընձի Արիութիւն վառէ ի մարտ,
Զէ նա ի տիպ մահացուի,
Այլ անմահից ի կարգի ։

Սա զոխեզերս գեղապըսակ պճնեցոյց,
Հոյլ քաղաքաց ընդ եթեր ամբարտակեալ պերճ կանգնեցոյց ·
Վայրագասուն ազգ մարդկան
Ցիմաստ ի բան զօրացան ։

Նա պնդէ զՍիլս Առաքինեոյն յասպարէս,
Ըզհուր, ըզսուր, ըզտարերս յակըն զընել, կալ ի հանդէս ·
Եւ զկաց և զէր փուտ մարմին
Վառէ ի լոյս պըսակին ։

Որում ի սիրտ գութ գեղեցիկ մարդկութեան
Եւ սէր Ազգին բորբոքի, տեղւոյն պարծանք, պատիւ ինքեան,
Ո՞ր բոց նըմին է անանց,
Կամ ո՞ր պարիսպ անթափանց ։

Եւ մանաւանդ թէ տեսանէ առաջի
Ջնիզակակցացըն բանակ՝ ձայն ի խրախոյս հորդեալ ուղի,
Ջյաղթող արեան ճապաղիս
Պըսակ գիտէ վարդենիս ։

Արիական այս սիրտ հլզօր աւադիկ
Ըզքեզ զինեաց նահատակ ընդ լոյծ կոհակս ելեալ մարտիկ,
Ծագէ ի ծագ աշխարհի
Թափ անցանել ի վտանգի ։

Պըսակագիր քո կէտ արփին երկնաճեմ,
Լո՛ւր անտի զու զնախահարց երգեալ խրախոյս ձայնիս վըսեմ ·
Հայկ կառուցող հայրենեաց
Ըզքեզ որդի դաւանեաց ։

Պարթևեան արթուն և ցանկալին քո Սահակ,
Մխիթարայ զօրավարք՝ քեզ հարկանեն փողոց հռչակ.
Լէր դու կըցորդ անմահից,
Գահուն նոցա բարձակից։

Տե՛ս արդէն տե՛ս ի տըխուր դէմս հայրենեաց
Բաղցըր շաղեալ ըժըգալիս արդեզարով քո գըրուանաց
Եւ զլոյս առաւ քոց երկոց
Շուեմարանեալ յիւր ի ծոց։

Յուշ քեզ տարջի՛ր ըզհոգեշունչ զայն գըրուագ,
Թէ որ տանին ակրանեխ՝ լարով երթեան ողբանըւագ,
Գալով զայցեն ցնծալով
Լիաբերկ մեծ Նրայով։

Ի 27 մարտի 1824.

Երգեաց յանդգնարարութեամբ
Հ. ԱՐԱՔՆ ԱՆԹԻՄՈՍԵԱՆ.

Ի ԲԱՋՄԱԳՏԱՆԳ ՏԱՐԱԹԻՄՐՅԻՆ

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

Վ. ՀՕՐ ՍԻՐԵԼԻՈՅ ՍԱՐԳՍԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ՄԱՂԹԱՆՔ

Դուք ծովածուփ նաւապին
Ասեղք ամբուն պահապանք,
Ըզգաս ողջամբ ի տեղին
Դուք հասուցէք ամենքեան.
Ա՛հ, մի՛ զարմաւ բռնասցին
Ալիք անզուիթք հիւրասպանք։

Արդոյ նուագքն Տիւրէ,
Ընդքեզ հրմնեա զեկամարտ,
Ընդքեզ ժողովս այս մաղթէ,
Կացցես նաւուն դու ի ծայր.
Ընմբրբիկացն ի բացէ
Առնել խառիցն ըղդուպար։

Ընդառ մինչև ի Գանդէս,
Աշխարհածով ընդ ալիս,
Եւ ի նահանգս ի հրակէզ
Ածեալ՝ յաղթող թէ դարձցիս,
Զքեզ երդեցից դարձեալ ես,
Երդուեալ ի քնար տառեղիս։

Հ. ԵԴՈՒԱՐԴ ՀԻՒՄԻՒԶԵԱՆ.

ՑԱՆԶԵՆԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՍԱՒՐԲ ՂԱԶԱՐԱՒ ԱՌ ՈՎԿԻԱՆ.

Դու ովկիան հինաւուրց Տէր մեծազօր,
Որ քեզ ընուս զաշխարհի ծոց ըզբոլոր,
Ի միջակի նորին բազմեալ ի յանդորր,
Զլեռս զերկիր ի տես քոյին ահաւոր։

Տխուր երրեմն երեսք զուարթ նըշոդեն,
Երբ արեւուն ճանանչք ի քեզ ինջանեն.
Բայց սեւաթոյր թէ ամպ ըզբեւ բակ առեալ,
Սպառնաս օրհաս զուտս ի ձայն ահարկու։

Ըզվիսարդեան անդուլ կոծեա ծովափունս,
Եւ զվիթխարի շարժես լերանց դագաթունս.
Չի թէ երկինք ոչ զինջանին ի բարձանց,
Գանգեամ վանեամ զաշխարհս ամէն ի հիմանց։

Մինչեւ ապա հայրն ի վերին կամարաց
Կապոյտ բլրոքն անոյշ ի քեզ ակնարկեաց,
Դէմք խորշումեալ զօրէն վարդիկ վառեցան,
Աչք բարկացայտ ծիծաղախիտ փայլեցան։

Ահա քե՛զ յանձնեմ ըզծնունդ սիրոյ իմ ծոցիս,
Քոյին ձեռամբ խնամել զբթովք հաճեցիս.
Տարեալ անփորձ ուսուցեալ բերցես ինձ կրկին,
Տեսից զարձեալ յիմ մայրենի ի գրկին։

Երգեաց յանպատրաստից

Հ. ԱՂԵՔՍԱՆԴՐ ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ.

Ի ԲԱՐԵՄԱՂԹՈՒԹԻՒՆ

ՑԱՋՈՂԸՆԹԱՑ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԵԱՆ

ՀՕՐ ՅԵԱՌՆ ՍԱՐԳՍԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ՆՈՒԱԳ.

Եթէ յոյս աշխարհի ապաւինեալ ի լաստախայտ
Առ ի թողուլ յերկրի ճեռ զաւակաց պրտակազարդ,
Զամ մի տատանեցաւ ընդ լուծական կոհակս ծովուն
Մինչեւ յանխռովայոյզ եհաս զադար՝ շրջուն իւր տուն,

Մեր ակընկալութիւն՝ արձան կանգնել անեղծութեան,
Ընդ ուղեղնաց թողուլ առաքինեւոյդ զսիրոյդ կայան,
Փա՛ւ թէ դոյն օրինակ տատանեցի զամաց շրջան.

Այլ ամսովք զուզնաքեայ ի դաշնակից շնչել հողմոց,
Թեւք տուրան երագունք քաղցրաշնչիկ գարնայնոց,
Մինչ ի վայր հանդստեան պատրաստարիս անալէկոծ,

Գնա՛ յուսով անընդարձակ՝ ի սերմանել ըգքիրան արդեանց,
Գնա՛ յուսով, մի՛ թախծիր, զի սերմանես վաստակ անանց.
Ցորժամ դառնաս գրկալից՝ երեսք ծաղկին քեզ զբաղթուն,
Բարձեալ որայս հասկաթուռ՝ կթես յերկնէ շունչ գերարուն։

Երգեաց

Հ. ՊԵՏՐՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ։

Այսպիսեաք մաղթողական և քաջալեր բանիւք ելանէ Հայր Սարգիս Թէոդորեան ի ճանապարհ՝ գնալ ի Լոնտոն առ Պարոն Յովհաննէս Մուրատ և անտի նաւել ի Հնդիկս։ Յուղարկեն զնա ոմանք յեղբարց մինչեւ ի Վերոնա Իտալիոյ, այսինքն են Վ.Վ. Հարք Յակոբոս Ճելալեան, Արսէն Անթիմոսեան (Բազրատունի,) և Սամուէլ Սամարեան։ Եւ անտի զաւուրս հինգ ճանապարհորդեալ Հ. Սարգսի Թէոդորեան, հասանէ ի Միլան ի 1 ապրիլի, և չգտեալ անդ հասարակաց կառս որ երթիցէ ի Թուրին, առանձին ինչ կառաք գնայ։ Ապա յետ վեցօրեայ տարժանելի ուղեւորութեան ընդ ձիւնուլից և սառնապատ լերինս Ալպեանց հասանէ ի Լիոն ի 11 նորին ամսոյ. և ի վաղիւ անդր ելեալ նաւակաւ ի Շալոն, և զաւուրս չորս կառաք ճանապարհորդեալ՝ հասանէ ի Փարիզ ի 15 ապրիլի։

Ի սահմանագլխին որոնեալ մաքսաւորաց զարկղ նորա՝ առնուն զքանի ինչ գրեան գտեալս ի նմին. և քանզի անծանօթ էին լեզուիս Գաղղիացիքն՝ կնքեալ յանձնեն զայնոսիկ վաճառականի ոմանի, առաքել ի Փարիզ ի քննութիւն։ Վասն այսորիկ նախ զաւուրս եօթն մնայ Հ. Սարգիս մինչեւ հասանէ արկղն, և ապա զաւուրս երիս բազում տարապարտ աշխատութեամբ և ծախիւք հազիւ կարէ ի ձեռս բերել զնոսին։

Ի հասանելն ի Փարիզ երթեալ էր տեսանել զՊ. Շահան Չրպիտեան, որոյ յոյժ ուրախ եղեալ՝ ասէ այց առնէ նմա և հրաւիրէ զնա ճաշել ընդ իւր։ Դէպ լինի նմա յաւուր

միւսմ տեսանել զճանապարհայն և զտէր Յովհաննէս Զօհրապեան, և հազիւ կարողանայ ճանաչել զնա. քանզի յոյժ ծերացեալ էր և կորացեալ։ Ի քաղաքի անդ էր և տէր Գրիգոր Գապարաճեան, և տակաւին թափառեալ շրջէր անգործ, և տէրութեանն գթացեալ ինա վասն կորստեան ընչից՝ կարգեալ էր նմա յամսեան 60 ֆրանք. զտանէր և ֆրանք մի պատարագիս, և այնու շատացեալ՝ երջանիկ համարէր զանձն։

Ի 28 ապրիլի թողեալ զՓարիզ հասանէ ի Լոնդոն ի 1 մայիսի, ուր նախ երթեալ զտանէ զՊարոն Յովհաննէս Ռաֆայէլ՝ տեղեկանալ ի նմանէ զՊարոն Յովհաննէ Մուրատեան՝ թէ ուր և զիարդ լցէ նա։ Ասէ ցնա Պ. Ռաֆայէլ՝ թէ անհնարին տարակուսանաք և տրտմութեամբ պատեալ պաշարեալ կայ Պ. Յովհաննէս Մուրատ տակս հիւանդութեան կնոջ իւրոյ, որ չկամի զառնալ ի Հնդիկս, այլ խնդրէ կալ մնալ յԵրուսաղեմ այսորիկ խափանի սա, ասէ, ուզուց լինել յայսմ ամի։

Զկնի ժամուց ինչ հասանելոյն եղեալ գնան ի միասին առ Պ. Յովհաննէս Մուրատ, զոր զտանեն տառանձնացեալ ի փոքրիկ ինչ սենեկի թախծալին զիմաք։ Քաղաքավարութեամբ ինն ընկալեալ նորա զՀ. Սարգիս՝ բազմեցուցանէ առ իւր, և յետ հարցանելոյ զողջունէ միմեանց՝ յուզուց հանեալ սկսանի պատմել զցաւալից վիճակ իւր, և այժմ մնամ, ասէ, տարբինելոյ կողակցիս՝ զի դարձայց վաղվաղակի ի Մարսա։

Ապա առաջարկէ Հ. Սարգսի յառաջագոյն առաքել զնա ի Մարսա, ի միխիթարութիւն մեր իւրոյ. քանզի անհնար է ինձ, ասէ, այսուհետեւ զրով միխիթարել զնա, և կամ հաստատմացուցանել նմա զակամայ խափանումն իմ առ վասն տկարութեան կնոջս։ Բայց յոյժամ երթիցես դու անդր, հանգուցանես զմիտս նորա վասն իմ, և միխիթարես զնա փոխանակ իմ, վասն զի իրրեւ որդի ես նորա։ Եւ այլովք այսպիսի ողոր բանիւք Հանայ հաստատեցուցանել զՀ. Սարգիս անցանել յառաջագոյն քան զինքն ի Մարսա։ Իսկ նա զառաջինն ոչ ցուցանէ հաճութիւն ընդ առաջարկութիւնն, ասելով թէ պատշաճագոյն լիցի ի միասին գնալ։ Բայց իրրեւ կարի

շատ թախանձէ Պ. Յովհաննէս Մուրատ, և երդմամբ հաստատէ՝ թէ զկնի վեցից ամաց անհրաժեշտ հարկաւ դարձցի և ինքն ի Մատրաս, խոնարհեալ ի կամս նորա յանձն առնու գնալ միայն։ Ուրախացեալ նորա ընդ այն՝ վաղվաղակի տայ նմա տեղեակ մի ի տան իւրում, և յետ բաղումս որոնելոյ գտանէ նաև մի և խոտանոյ նմին ի փարձ 200 լիրայ ստէրլին, որ է 5000 Ֆրանք, և տայ Հ. Սարգսի ապատուոր զհնդիկ ծառայն իւր՝ որ խօսէր գաղղիարէն։

Բաղում անգամ զրոյցք լինին վասն դպրատանն, և Պարոն Յովհաննէս Մուրատ ահագին երդմամբ հաստատի առնէր թէ չունի ինքն բնաւ միտս չարութեան՝ սեփականելոյ զինչս որբոյ և աղքատաց աղջիս, զոր հայր իւր յօժարակամ թողեալ է նոցա որբազան կուսակաւն իւրով։ Իսկ պատճառ յապաղման նորին ցարդ՝ մերթ զեղբայր իւր ասէր, զի չառաքէր առ ինքն դրամ, գոնէ 40,000 լիրայ ստէրլին, առ ի հիմնարկել զդպրատունն ի Գաղղիա, և մերթ անձին իւրում մեզ դնէր՝ զի մինչդեռ էրն ի Մատրաս չորոշեայ ինչ ընդ այլ կուսակուսարան. բայց ամենայն խոսիւն և ընդդիմութիւն բարձցի, ասէր, յորժամ լիցուք մեք ի միասին ի Մատրաս. զի յայնժամ ոչ այլ ինչ մնայ՝ բայց վաղվաղակի առաքել զդրամն յԵւրոպ ի գործ դնել զայն։

Իբրեւ յուշ առնէ նմա Հ. Սարգիս զանպատշաճ գրութիւնս նորին առ միաբանութիւնն, որպէս թէ նա լեալ ելէ պատճառք յապաղման գործոյն, ասէ. «Պարտ է զանցեալսն մոռանալ։» Ապա պատուիրէ նմա չխօսել բնաւ զդպրոցէն ընդ եղբօր իւրում՝ մինչեւ եկեալցէ և ինքն անդր. և ոչ այսու շատացեալ, հաճատէ զվերջին զիր հանդուցելոյ արքային, ասելով թէ Հ. Սարգիս գնայ այս անգամ ի Մատրաս՝ միայն ի միխիթարութիւն մօր իւրոյ և ոչ վասն այլ ինչ իրաց, և տայ նմա հաստատել զայն ձեռամբ իւրով։

Եւ Հ. Սարգիս յաւելու զայս, թէ «Որովհետեւ գնամ ես «ի Մատրաս ի հրաւիրանաց ձերոց և վասն միխիթարութեան «մօր ձերոյ, վասն որոյ պարտիք հաստատեալ զամենայն «ծախսն իմ, եթէ ի գնալն, եթէ ի դառնալ, և եթէ ի կալն

«իմ անդ։» Եւ զայս տայ նմա ընդունել և հաստատել ձեռնագրով իւրով։

Ապա ասէ Պարոն Յովհաննէս. «Այսրիկ աւելորդ էին «եթէ էաք ի միասին. բայց քանզի գիտես, ասէ, զբնաւորու- «թիւն եղբօր իմոյ, զի յոյժ կասկածոտ է. և զի մի համարիս «ցի թէ գնաս դու անդր առ ի վիճել ընդ նմա վասն բանի «հրիտակին, առաքեցից առ նա զայս գիր, զի հանդարտեալ «սիրով վարեսցի ընդ քեզ, մինչեւ եկից և ես անդր. միով «բանիւ, ասէ, որովհետեւ կամիմք զի դու լիցիս մեզ միշտ «իբրեւ հայր և իբրեւ եղբայր, և կացցես ընդ մեզ մինչեւ «ցմահ, վասն այսորիկ պարտիմք բառնալ ի միջոյ զամենայն «առիթս ատելութեան և խռովութեան, որպէս զի կարաս- «ցուք սիրով և քաղցրութեամբ կալ մինչեւ ի սպառ։ Եւ «զի գրեցից առ եղբայր իմ, թէ որպէս պարտ իցէ ընդունել «և վարիլ ընդ քեզ, մի երկբայիր զի իբրեւ զիս սիրով ըն- «կալցի զքեզ, և իբրեւ զհայր յարգեսցէ զքեզ։»

Եւ յաւելեալ ի բանն ասէր. «Զթուղթ Գերապայծառին «ընթերցայ հաճութեամբ մեծաւ, բայց է ինչ մի ի նմին զոր «ոչ հասկանամ. զի՞նչ կամի ասել բանիւն, եթէ չէր եր- «բորդ որ իրաւարար, վէճն ոչ դադարէր յաւիտեան. միթէ «դատաստանաւ կամիք պահանջել ի մէնջ զպարտս խղճի «մտաց մերոց։»

Տայ նմա Հ. Սարգիս պատասխանի քաղցրութեամբ, թէ «Որովհետեւ զիս վասն այսր ոչ էք կոչեալ, վասն որոյ չկա- «միմ ասել ինչ և կամ խառնիլ ի խնդիրդ յայդ։» Եւ այս- պէս խափանէ զխօսն։ Յայտնէ թուեցաւ Հ. Սարգսի թէ չէր տակաւին լուեալ Պ. Յովհաննու Մուրատայ զիրս գործա- կալին Ինեխի. իբր զի բազում ժամանակք էին յորմէ հետէ չէր նորա ընկալեալ գիր յեղբօրէն։

Զայս ամենայն հանդերձ այլովք տեղեկութեամբք գրէ Հայր Սարգիս առ տեղապահ վարդապետն ի 25 մայիսի 1824 ամին։

Ապա տայ նմա Պ. Յովհաննէս Մուրատ Ֆրանքս քսան և հինգ իբրեւ ի կարեւոր պէտս ճանապարհին, ասելով թէ

«Զունիմ առ իս արծաթ աւելի քան զայս. և ես եւս կարօտ «եմ արծաթոյ։»

Տուեալ Հ. Սարգսի Թէոդորեան զհրաժարական ողջոյն Պարոն Յովհաննու Մուրատի՝ մեկնի ի Լոնտոնէ ի 25 մայիսի յամին 1824, և գնայ ի Փորթսմըթ նաւահանգիստ, և կացեալ անդ աւուրս երիս՝ մտանէ ինաւ ի 29 նորին ամսոյ, և զաւուրս երկոտասան նաւեալ հասանէ ի Մատերա կղզի, ուստի գրէ և թուղթ առ միաբանութիւն իւր ի Վենետիկ։

Նաւն որով գնայր՝ թէպէտ և չէր նաւ վաճառական ընկերութեան, սակայն կառուցեալ էր ի պէտս ուղեւորաց. վասն որոյ և ամենայն ինչ ըստ կարգի էր ի նմա. հաստակառոյց, պղնձապատ և արագընթաց. և էին ի նմին ուղեւորք իբրեւ հարիւր։

Մեկնեալ Հ. Սարգսի ի Մատերա կղզւոյ ի 14 յունիսի, և զաւուրս հարիւր անընդհատ նաւեալ՝ հասանէ ի դէմ եղեալ տեղին ի Մատրաս Հնդկաց ի 24 սեպտեմբերի նորին ամի 1824. և զկնի ժամուց ինչ ելեալ ինաւէն գնայ ի տուն Մուրատեանց։ Ընդունին զնա բազում քաղաքավարութեամբ և սիրով տիկին Աննա Մուրատեան և որդի նորա Պ. Եդուարդ, որում և մատուցանէ Հ. Սարգիս զթուղթ Պ. Յովհաննու Մուրատի, յորում գրէր նա նմա խրատս՝ թէ ո՛րպէս պարտ իցէ նմա վարել ընդ Հ. Սարգսի, ոչ որպէս յառաջնում նաւագին, այլ պատուով և ինչ ինչ զգուշութեամբք։

ԳԼՈՒԽ Ը.

Հիւանդանոց Հ. Սարգսի ի Մատրաս. — Լոր ընտրութեան Հ. Սոքիասի Սունձեանի յաբբայութիւն. — Փաստարանին Մինչին, և յաջորդ նորա Քանիտրին. — Նամակաւոր Հայր Սարգսի առ միաբանութիւնն զիրաց հրատակին. — Հասատատութիւն բանից նորա գրոյ Պ. Պօղոսի Լազարովիչ.

Յետ քանի մի աւուրց հասանելոյ անդր Հ. Սարգսի հիւանդանոց, և ի գիշերի միում ուշաթափեալ իբրեւ ժամս մինչ և անկեալ առ գրան սենեկին՝ կոչէ զոք յօգնութիւն։ Խուռվին յոյժ ընդ այն Անանա տիկին և Պարոն Եդուարդ, և փութան գտանեն տանել նմա ձեռամբ անդղլացի բժշկի իւրեանց, հանդերձ քաջալեր բանիւք։ Վասն որոյ յապաղէ Հ. Սարգիս գրել թուղթ ի Վենետիկ առ միաբանութիւնն և ծանուցանել նմա զժամանումն իւր ի Մատրաս. և միաբանութեանն կասկածեալ՝ գրէ գիր առ Պ. Յովհաննէս Մուրատ ի Լոնդոն, հարցանել ի նմանէ զրոյց զՀ. Սարգսէ, և նա ասէ տեղեկութիւն զողջամբ ժամանելոյ նորին ի Մատրաս։ Գրէ ապա և ինքն Հ. Սարգիս առ միաբանն ի Վենետիկ և հանդուցանէ զմիտս նոցա ընդ ողջամբ ժամանումն իւր ի Մատրաս, հանդերձ կարեւոր տեղեկութեամբք. յորում ասէր և զայս ինչ.

*«Լուայ զի գործակալն Մենիսի Մինչին փաստարանն ընդ-
«հանրական պատրաստեալ էր յայսոսիկ աւուրս պահանջել
«ի Մուրատեանց տիրուն որք և ազգաս մանկանց ազ-
«գիս. բայց ի լսել զմահ հանդուցեալ Գեղապայծառին մե-
«ծոյ՝ կասէ առ ժամն յառաջարկութենէ անտի. քանզի ոչ
«պատշաճ դատի ձեռնամուխ լինել ինչ յառաջ քան
«զվերատին հաստատութիւն գործակցութեան իւրոյ ինչ-*

«բոգ արքայէ միաբանութեանս. որոյ փառն և ինձ ազգ
«արար գրել ձեզ զի փութով առաքեցի նմա այն. ընդ
«նմին և իմ զկիր գործակալութեան, եթէ վերատին հաստա-
«տեալ առաքեսցի ինձ՝ բարւոք լինի։ . . . »

Ընկալեալ Հ. Սարգսի թուղթս ի Վենետկոյ, և լուեալ ինքսունց զընտրութիւն նորոյ արքայի միաբանութեանն, որ էր Հ. Սուքիաս վարդապետ Սմալեան, գրէ առ նա թուղթ շնորհաւորութեան և յարգանաց՝ ըստ պատշաճի, հանդերձ այլոքք ինչ կարեւոր տեղեկութեամբք, օրինակ զայս.

«Յարգոյամեծար և Գերապատիւ Աբրահոր մերում Ամենահամբոյր խոնարհական։

«Զուրախարար լուր արժանաւոր ընտրութեան Հօրդ հաստատակաց առեւտրականացին ինձ երկոքին նամականին Ձեր որք հետ զհետէ հասին այսր առ իս, ի 1, և 19 փետրվարի տարւոյս։

«Շնորհ յոյժ ունիմ Աստուծոյ որ շնորհեաց մեզ առաջնորդ զՅարգոյամեծար Հայրութիւնդ ընտրութեամբ աստուածախորհ միանձնից. որոց և ես ձայնակից եղեալ՝ հայցեմ մանաւորել և ինձ ընդ նոսա զշնորհաձիր և զհայրական օրհնութիւնդ, որ իբրեւ զմերձակացեալ որդիական յարգանաք և անթերի հնազանդութեամբ խոնարհեալ կամ ի բացարձակ վայրացս ի համբոյր աջոյդ սրբութեան, և ընդ նոսին մաղթեմ ձեզ ի Տեառնէ աւուրս ձիգս՝ առաւելեալ ամենայն խաղաղութեամբ և յաջողութեամբ ի պայծառութիւն Ազգիս և ի պարծանս միաբանութեանս։

«Ամենայն բարեկամք և ծանօթք մեր ասա լուեալ զարժանաւոր ընտրութիւն Յարգոյապատիւ Հօրդ խնդացին յոյժ, և առաւելապէս Անն խաթուն և ամենայն ընտանիք նորա Մուրատեանք և Աղանուրեանք, որք ցանկան առաքել ձեզ ընծայս՝ յորժամ գտանիցին պատեհութիւն. որք և ոչնչանին զձեզ բազում սիրով և խորին յարգանաք, հայցելով զշնորհա-

ձիր օրհնութիւն Գերապատիւ Հօրդ։ Անողջութիւն իմ չէ իրրեւ զառաջինն. քանզի օդ քաղաքիս ապականեալ է այժմ ի պատճառս անդարման և անպատշաճ աղքատաց, որք յամենայն կողմանց հաւաքին ի քաղաքս առ. պակասութեան ընձոյ, որ սակս երաշտութեան սակաւ է յոյժ յայսմ ամի։

«Պ. Պօղոս Լազարովիչն յ3 փետրվարի անցելոյ դարձաւ ի Մանիլայէ այսր, և բնակի ընդ մեզ ի միասին. որ և ցանկայ տպագրել տալ մատեան ինչ պիտանի յօգուտ ազգիս. յոյր սակս խնդրեաց յինէն զցանկ ոչ տպագրեալ գրենից, զի ընտրեացէ ինոցանէ զախորժելին ճաշակելեաց իւրոց։

«Նոյնպէս և Պ. Աբրահամ Աղանուր փոխաքի յոյժ զի տպագրեացի հանդերձ կարեւոր և Գեղեցիկ պատկերօք Արկածք Տելեմաքայ, որոյ վասն և խոստացաւ տալ 3000 ռուբի, որ առնէ 7500 ֆրանք. բայց չունելով իմ տեղեկութիւն թէ գոր ի տպագրելեացս ցանկացեալ իցեն տպագրել Կալկաթայի Հայք, զորոց գրեալ էիք անորոշաբար, ազաչեմ տեղեկացուցանել զիս զայսցանէ և զայլ նորոգ սկսելոց մատենից։

«Բարւոք լինի եթէ յամենայն պատեհս առաքեացի այսր գրեանս մեր, մանաւանդ նորոգ տպագրեալքն. քանզի բազումք ցանկան և ի խնդիր են նոցին։ . . .

«Դատն Լիբանանցւոց, զորմէ յառաջագոյն ծանուցի, առարտեցաւ յայտնիկ առուրս, սակայն ի վերս եղկելի քրիստոնայիցն. քանզի դատաւորքն որք առաւել նիւթական գրութեան օրինաց հետեւին՝ քան քննութեան իրացն ճշմարտութեան, ոչ ուղիղ դատեցան զընթացս սոցա յօրէնս, և վասն այնորիկ վճռեցին զի ամենայն ծախք օրինաց հատուցցին ի դրամագլխոյն ողորմութեան։ Բոլոր գումարն հանդերձ շահուքն հասանէր ց9000 հուն, որ է 32,000 ռուբի. և քանի՞ կարծիցէք թէ իցեն լեալ ծախք օրինաց, այսինքն անօրէն փաստաբանիցն. ահա 7000 հուն։ Եւ զի՞նչ այլ ինոց. ոչ աւելի քան զ2000 հուն, որ է 7000 ռուբի. և զայն եւս ի կամս Պ. Եդուարդայ Մուրատի արարին ապատան. եթէ նա պատշաճ դատիցի՝ տացէ նոցա, ապա թէ ոչ՝ կարասցէ պահել զայն ի ձեռին իւրում։

«Ահա այսպիսի իմն կատարածիւ կնքեցաւ գործ նոցա։ Աղաչեմ զԱստուած զի մի՛ տացէ մեզ զնոսն և ի խնդիր մեր տեսանել։ . . .

«Պ. Եդուարդ Մուրատ զայս նուագ առաւել իմն քաղաքավարութեամբ և սիրով վարի ընդ իս, ոչ միայն վասն ազգու և հզօր բանից յանձնարարական թղթոյն որ ի Պ. Յովհաննէ, այլ և վասն կարի իմն փոփոխութեան բարուց իւրոց. քանզի յոյժ հանդարտացեալ է. և յորժամ զրոյց լինի զգպրոցէն, ցուցանէ նա զինքն անշահասէր և փափաքող կատարման նորին. բայց ոչ գիտեմ եթէ որո՛վ ոգւով՝ կամի նա զի հաստատեսցի այն յԱնգղիա։ . . . Իսկ ես ոչինչ հակառակիմ բանից նորա, քանզի գիտեմ թէ բանք են այնոքիկ. յորժամ արդիւնասցին, գիտեմ ո՛րպէս պարտ է խօսել և վարել ընդ նոսա։»

Պ. Յովհաննէս Մուրատ թէպէտ և միայնակ պատճառ էր խափանման դարձին իւրոյ ի Հնդիկս, այլ զայն հիւանդութեան կնոջ իւրում տայր զառաջինն. բայց դրէ նա ապա առ եղբայր իւր Պ. Եդուարդ թէ առաջին և գլխաւոր պատճառ խափանման դարձին իւրոյ ի Մատրաս՝ է կառուցանելի դպրաւունն. վասն որոյ խնդրէ յեղբօրէ իւրմէ անցուցանել նմա յԵւրոպ գումար ինչ դրամոյ իբրեւ 40,000 լիրայ ստէրլին, զի կատարեցից ասէ զպարտս իմ, այլովքն հանդերձ։ Դարձեալ և ընդհանրական փաստաբանն Մինչըն, որ և գործակալ էր միաբանութեան ի Մատրաս, զպատճառս կասելոյն յառաջարկութենէն պահանջելոյ ի Մուրատեանց զիրաւունս ազգատաց ազգին՝ տայր վերստին հաստատութեան գրոյ գործակալութեան իւրոյ ինորոգ արքայէն, որպէս ի վեր անդր ասացաք. սակայն և այլ պատճառք էին կասելոյ նորա ի գործոյն. և այսոքիկ են. առաջին, զի բարեկամ էր Եդուարդայ Մուրատի, վասն որոյ չկամէր առնել ինչ ընդդէմ կամաց նորա. և երկրորդ, զի ունկաւ նմա վիճակ պաշտաման յատեանն Կալկաթայի, ուր հանդերձեալ էր գնալ ի մօտոյ. և վասն այսորիկ կամէր թողուլ զհոգս և զայն ի խնամս յաջորդին իւրոյ Հէրպերթ Փամիսընի, որում իբրեւ ընդհանրական

փառաբանի՝ անկանէր խնամ առնել հրիտակաց ողորմութեան։

Զառաջինն ազգ առնէ Հ. Սարգիս միաբանութեան իւրում՝ յանձնել միշտ Ննեիսի զհոգ հրիտակին, նորոգելով զգիր գործակալութեան նորա. բայց իրրեւ տեսանէ թէ փոխադրի Մինչեն փառաբանն ի Կալկաթա, և ի տեղի նորա յաջորդէ Բանիսլն, այր կաշառակուրծ և անխիղճ, ապա գրէ զի առաքեսցի առ ինքն օրինաւոր գիր գործակալութեան վասն հրիտակին։ Այս ամենայն յիշատակի մատեր ի թուղթս Հայր Սարգսի Թէոդորեան որք առ միաբանութիւնն, զորս և արժան համարի ի մէջ բերել առատաբար.

«Յարգելոյ և Գերապատիւ Աբրահամ միրում աջահամբոյր խոնարհական։

«Գիտելով չափ թէ ցանկալի է Գերապատուութեանդ ձերում տեղեկութիւն վիճակի տնձինս և հանգամանաց իրաց հասարակաց, կամիմ շահել զամենայն պատեհս թղթակցութեան։

«Լուեալ իսկ էք ցարդ զենուոյ պատճառս վերոյին խափանման դարձին ի Հնդիկս Պ. Յովհաննու Մուրատի։ Այլ ես այժմ ծանուցից ձեզ զարդիւնս պատճառացն որք ազդեցին յընտանիս նորա առաւ։ Այր նորա յետ բազում ողոց և լալեաց ի տան եհատ զյոյս իւր այլ ևս տեսանելոյ զնա. Նոյնպէս և եղբայր նորա և համօրէն ընտանիքն։

«Իսկ յաղագս գպրատանն, որ ըստ բանից իւրոց էր առաջին և գլխաւոր պատճառ խափանման դարձին, գրեալ էր թէ տէրութիւնն Գաղղիոյ խոստացեալ է նմա տեղի գպրատան ի մայրաքաղաքի անդ իւրում, և նաև մի զի տմի տմի բարձեալ բերիցէ մանկունս ի Պօլսոյ ի Մարսիլիա, և անտի ցամաքաւ ի Փարիզ կատաք, և այլ բազում առանձնաշնորհութիւնք. ուստի խնդրէր և երդմնեցուցանէր զեղբայր իւր զՊ. Եդուարդ Մուրատ անցուցանել առ Նա վաղվաղակի զուտաք ինչ գրանց, իրրեւ 40,000 լիրայ տէրլին, զի կատարեսցէ բգ-

պարտս իւր, և արժանի կացուցէ զինքն անուանն զոր կրէ, յառաջ քան զդառնալն ի հայրենիս իւր ի Մարտա։

«Ընդ այս ամենայն բանս թախանձանաց նորա թէպէտ և ոչ հաւանեցաւ բնաւ Պ. Եդուարդ Մուրատ, բայց կամեցաւ իրր հաճել զմիտս եղբօրն, մանաւանդ թէ՝ ըստ կարծեաց իւրոց՝ զերծանել յօրինաց ասի որ անդադար պատուիրէ նմա ի բաց տալ զիրաւունս որբոց և աղքատաց, և թէ այն միայն էր վախճան Պ. Եդուարդայ, այսինքն զերծանել ի իրաւութենէ օրինացս, և ոչ թէ կատարումն տալ կամաց կտակողին. կամեցաւ նա անցուցանել ի ժամուս գումար ինչ դրամոց ի Լոնտոն, յանուն լոմայափոխի Տէրութեանն Անգլիոյ, զի իրրև առանդ պահեցի անդ, մինչև վերատին պատուէր առաքեցի նմին՝ թէ առ ինչ պարտ էցէ ի կիր առնուլ զայն։

«Այսու հնարագիտութեամբ սկսաւ ի խնդիր լինել եւրոպեան փոխանակագրոյ, և ասէր ցիս և առ ամենեսեան՝ թէ քանի՞ փափաքելի էր նմա թէ հնար ինչ էր անցուցանել միանգամայն Եւրոպ զրովանդակ գումարն պատկանեալ դպրատան հօր իւրոյ, և թէ կարի անհանգիստ է ինքն՝ ունելով առ իւր զդրամն աղքատաց. քանզի իրրև զհուսկ ծախիչ համարի զայն արդար ստացուածոց իւրոց։ Եւ այնպէս առ արտաքս յամենայնի ցուցանէր զանձն անշահասէր և փափաքող կատարման կամաց հօր իւրոյ, բայց ինքեքս, որպէս ասացի, ըստ խելաց իւրոց կարծէր այնու զերծանել ի պահանջմանէ օրինաց տեղւոյս. թէպէտ և խոհականք և ճշմարիտ բարեկամք իւր ասացին նմա՝ թէ չիարէ ինքն այնու զերծանիլ ի պահանջմանէ օրինաց. որպէս և եղեւ իսկ։

«Քանզի ի 27 ամսոյս առաքեցաւ նմա հրամանագիր յընդհանրական փատարանէ տունեաց ի Քամիսարնէ, զի տարեալ զիցէ նա ի գանձատուն վճռատական ընկերութեան զբոլոր գումարն զրամոյ հրիտակի ողորմութեան, որ վասն դպրատան որ և աղքատ մանկանց ազգիս Հայոց։

«Ընդ այս հրամանն Քամիսարնի խուսկեալ և զայրացեալ Պ. Եդուարդայ Մուրատի, սկսաւ տիրոջոյ կամաց յայտնել

գնելոյն խորհուրդ իւր, մերթ մեղադրելով զհանգուցեալ հայրն իւր, զի թողեալ էր այնչափ մեծ գումար արծաթոյ վասն ողորմութեան, և մերթ անիծանելով զմիաբանութիւնս՝ զի պահանջէ ի նոցանէ զիրաւունս որբ և աղքատ մանկանց ազգիս. և այլ բազում բանս հայհոյութեան խօսեցեալ՝ ցուցանէ զչարաշահութիւն և զգարշելի արծաթասիրութիւն իւր, և այլն։ Սակայն այն ամենայն ի զուր. քանզի ի վախճանի խոնարհեցի նա յոչ կամաց՝ օտարացուցանել յիւրմէ զիրաւունս աղքատաց ազգիս։

«Զայս ամենայն տեսեալ և լուեալ իմ յանկանջսդուր և ի հաւատարիմ արանց՝ փութամ ծանուցանել ձեզ, նախ՝ զի մի՛ զիւրաւ հաւատս ընծայեցէք միաբանութիւնս անտի և խրատանգ բանից Պ. Յովհաննու Մուրատի. այլ որպէս յանձնեաց՝ յանձնեսցէ միշտ Պարոն Մնեխի զհոգ իրացս, նորոգելով զգիր գործակալութեան նորա, բառ որում գրեալ եմ յառաջագոյն, զոր և յուսամ թէ արարեալ իցէ ցարդ։

«Եւ երկրորդ, բառ խորհրդոյ նախատես և մտերիմ բարեկամաց միաբանութեանս՝ պարտ է ունել ինձ ասա առանձին և բացարձակ իշխանութիւն գործակալութեան, որպէս զի ի հարկաւորութեան կարացիս զգուշանալ իրաց Հասարակութեանս. և վասն այսորիկ առաքեցի օրինակ մի տպագրեալ գրոյ գործակալութեան, ոչ զնոյն թարգմանել, այլ զի բառ այնմ յօրինեալ զգիր գործակալութեանս՝ առաքեսջիք ինձ այսր վաղվաղակի։ Քանզի չիք այլ ինչ հնար հանելոյ ի ձեռաց սոցա զիրաւունս զայս աղքատաց ազգիս, եթէ ոչ խստութեամբ օրինաց, յորմէ միայն երկնչին սոքա և ոչ այլ ուստեք։ . . . Եւ զի չէ պարտ վատահիլ յանաչառութիւնն և ի պարտս ընդհանրական փոստարանին Քամիսարնի, քանզի այր արծաթատէր և կաշառակուրծ է նա, որպէս և տեսանի ի լուութենէ նորին և ի չպարտաւորելոյ զՊ. Եդուարդ Մուրատ առանգել զարծաթն աղքատաց ի գանձատուն տէրութեանս, ընդունելով ի սմանէ իբրեւ կաշառս ընծայս ինչ . . . բառ պատմելոյ նորին իսկ Պ. Եդուարդայ ընտանեաց իւրոց ի ծածուկ։

«Թողեալ զայլ լուրս տեղւոյս այլում պատեհի, կնքեմ

գիտութիւն, և ողջունեալ զհամբրէն Վ. հարս և եղբարս կրօնիս,

„ Մնամ Յարգոյապատուութեանդ ձերում

„ Ի Մատրաս. 10 յունիսի 1825.

„ Ն. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈՂՈՐԵԱՆ.”

„ Յարգոյամեծար և Գերապատիւ Աբրահօր մերում աջահամբոյր խոնարհական.

„ Ոչ ինչ յերկուանամ թէ ցարդ բաղում նամականի ուղղեալ ի ցէք առ իս ի Հնդիկս. և յիրաւի. քանզի եթէ մինչ ի ճանապարհորդութեան էի՝ կանխեցիք միթիթարել զիս կրկին և երեքկին գրովք, քանզի եւս ապա ի ժամանելս իմ այսր։ . . . Նա զի և յիշատակեալ իսկ էիք ի նամակի անդ ձերում՝ թէ ի պատրաստի են զանազան թուղթք օրհնութեան առ կարեւոր բարեկամս և ծանօթս ասա, զորս և առաջին պատեհաւ կամիք առաքել այսր ընդ պատրաստեալ արկեղս գրանց, որոց մնայի և մնամ օր ըստ օրէ, թէպէտ և չընկալայ մինչեւ ցայժմ և ոչ մի, և զարմացեալ անգիտանամ զպատճառս յամենալոյ նոցին։ Բայց առաւել զարմացայ յոյժամ լուայ՝ թէ ի 5 ամսոյս հասեալ էր այսր վերսին հաստատութիւն գրոյ գործակալութեան Պարոն Մինչընի։ Կասկածեմ՝ մի՛ արդեօք յանձնեալ իցէ ձեր զայն Պարոն Յովհաննու Ռաֆայէլի, յորմէ ի զուր է մնալ կարեւոր և հանգուցիչ յանձնարարութեան. քանզի մինչեւ ցայսօր ոչ եհաս ի ձեռս իմ արկղ գրենոյն իսոյ՝ զոր թողի ի մաքսատանն Լոնդոնի, յուսով գտանելոյ զայն միջնորդութեամբ նորա։

„ Զարդ և իցէ, գիտասջիք զի ի հնդեռասան ամսոց հետէ չունիմ ես ինչ լուր ի վանացս, զոր քաջ գիտէք՝ թէ քանի ծանր է հեռացելոյս ի ձէնջ։ Ես զամենայն թուղթս իմ ուղղեալ եմ ի վերայ Պարոն Խենթի ի Լոնդոն, և յուսամ զի հաս-

սեալ իցեն ի ձեռս ձեր ընթասիան։ Զէ հարկ երկրորդել յամենայն թուղթս իմ զվաճառելի գրենոյն, զորոց գիտէք զյարգութիւն և զկարօտութիւն յայսոսիկ կողմանս, մանաւանդ զանգղիարէն բառարանին։ . .

„Ոչ աւելորդ ինչ համարիմ վերսին երկրորդել միաբանութեանս, զի եթէ վասն բացարձակութեան վայրացս, և եթէ սակս չարաշահութեան խնամակալաց գործոյս, յոյժ կարեւոր համարին բարեկամք մեր ասա առաքել ինձ ընդհանուր և մասնաւոր կարողութիւն գործակալութեան, զորոց զօրինակն առաքեցի յառաջ՝ տպագրեալ ի լեզու Անգղիացւոց։ Այժմ զնոյն Պ. Պօղոս Լազարովիչն հոգացաւ ի հայ լեզու, զոր և օրինակեալ առաքեմ ընդ այսմ. և զոր հաստատեալ ձեր՝ առաքեսջիք ինձ այսր փութով։

„Բազում խոնարհութեամբ և սիրով ողջոյն մատուցանեմ համօրէն Վ. հարց և Պ. եղբարց սրբոյ Կրօնիս և Ճեամ միշտ

„Յարգոյապատուութեանդ ձերում

„Ի Մատրաս, 8 հոկտ. 1825.

„Ն. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՄՐԻՄԵԱՆ.”

„Յարգոյամեծար և Գերապատիւ Աբրահօր մերում աջահամբոյր խոնարհական.

„Զգրեալն Յարգոյամեծար Հօրդ որ յ30 յունիսի անցելոյ, ընկալայ ի 14 Նոյեմբերի տարւոյն. յորմէ լուեալ զքաջառողջ կենաց և զգեղեցիկ յառաջադիմութենէ ատուածապահ ուխտիս՝ հանդեաւ սիրտս իմ ի հոգոց, և փարատեցան կարծիքս յամելոյ նամակացդ յանկեան ուրեք։

„Ամօք ինչ յառաջ լուայ զի առաքեալ էր ի Նորոգ արքայէդ վերսին հաստատութիւն զրոյ գործակալութեան տ. ընդհանրական փաստաբան ատենիս՝ վասն բանի հրիտակին

Մուրատեան դպրատան. բայց յետոյ հետաքօտեալ տեղեկացայ՝ զի չեւ է հատեալ այն։ Այլ զինչ օգուտ ի հատանելոյն. քանզի առ թշուառութեան տառապելոյ ազգիս, չգտեալ բարենախանձ առն ուրուք ի պահանջել զիրաւունս որբոց և աղքատաց նորա՝ մնայ այն ընդ իշխանութեամբ և ի կամս գաշտոնէի հրիտակաց ողորմութեան. և զի որպէս յառաջագոյն գրեցի, այրն՝ որում ըստ օրինաց Անգղիացւոց հաւատացեալ է այսպիսի գործառնութիւն, է յոյժ շարաշահ և կաշառակուրծ ոք, ուստի և ելք իրացս կեղակարծ և կարի դանդաղանօք. մանաւանդ զի Պարոն Մինչրն, որոյ ներկայութիւն այսր թերեւս նպաստէր կողմանս, գնաց ի Կալկաթա՝ մնանել անդ յայլ պաշտօն։

«Յաղագս այսոցիկ և յաղագս այլ կարեւոր զգուշութեանց գրեցի ես առ Հատարակութիւնս առաքել ինձ այսր իշխանութիւն գործակալութեան, զոր յուսամ թէ հատատեալ և եղեալ է ցարդ ի ճանապարհ։

«Ցերեք փետրվարի տարւոյս յոյժ դառնութեամբ սրտի դարձան ի տեղիս իւրեանց լիրանանցի քահանայքն. քանզի ողորմելիքն թէ և կարի շատ ջանացան գոնէ զմնացեալ զայն փոքրիկ մասն դրամոյն, որ հազիւ ուրեմն յաւելաւ ի բերանոյ անիրաւ փատաբանից առնիս, գտանել, սակայն և զայն լաւակամութիւն Պարոն Հեդվարթայ զլացաւ նոցա։ . . .

«Ահա այսպիսի է անարատութիւն խղճի մտաց սորա, որով անպատկառ պարծի միշտ առաջի մարդկան։ . . .

«Զունելով այլ ինչ կարեւոր ի ժամուս, և այլն։

«Ի Մարտաս, 3 մարտի 1826.

«Նուաստ ծառայ

«Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈՂՈՐԵԱՆ.»

«Յարգոյամեծար և Գերապատիւ Արքահօր մերում աջահամբոյր խոնարհական։

«Ընկալայ յ18 մայիսի տարւոյս զգրեալն Յարգոյամեծա-

հօրդ ի 25 դեկտեմբերի անցելոյ, որով տեղեկացեալ զքաջառողջ կենաց աստուածապահ ուխտիս՝ միսիթարեցայ ոչ սակաւ։ Բայց զարմացայ զի չառնէք ինչ յիշատակութիւն զյառաջագոյն գրելոցս. մի՛ արդեօք չիցեն այնք հասեալ ի ձեռս ձեր, թէպէտ ես զամենայն թուղթս իմ ուղղեալ եմ ի վերայ Պարոն Ննեխի ի Լոնդոն։ Արդ աղաչեմ ծանուցանել ինձ՝ թէ քանի՛ թուղթքս հասեալ իցեն ի ձեռս ձեր։

„Գրեալ էիք թէ գործակալութեանս գիր վաղ ուրեմն նորոգեալ առաքեցաւ այսր, թէպէտ ես մինչեւ ցարդ չգտի այնպիսի ինչ, և ոչ ընդհանրական փաստաբանն Քամիտոնն եղիտ զիւրն, որում մնայ միշտ։

„Ուրախ եղէ յոյժ ընդ աւարտումն թարգմանութեան օգոստինեան մատենին, և փառք մեծ համարեցայ՝ զի գնացիւք գեռոյս հաճեցայք ուրախ առնել զքաղաքն Աստուծոյ. արդ վաղվաղակի ի տիպ արձանացի մատեանն բան պատշաճի և բան հաճութեան Յարգոյապատիւ և բազմարգիւն Թարգմանչին, արդեամբք և ծախիւք առն զորոյ անուանն այլ գրում ծանուցից։ . . .

„Բայց կարեւորագոյնն ի լուրս է, զի յայնչափ ամաց հետէ սպասեալ Պ. Յովհաննու Մուրատի հանդերձ տամբ իւրով դարձաւ ի Մատրաս յ19 յունիսի տարւոյս։ Աւելորդ համարիմ տարածել զանպատմելի ուրախութիւն իւրոցն, որ խառն եղեւ ընդ տխրութեան. այսչափ ինչ միայն ի ժամուս կարեւոր համարիմ ձեզ գիտել, զի եղեալ և հաստատեալ է սա ի մեր կանգնել զդպրատունն ի Գաղղիա՝ ի կողմանս Մարսիլիոյ, վասն յաջողակութեան նաւահանգստին և մօտաւորութեան Վենետկոյ։ Վասն այսորիկ գրեցի, ասաց, առ քեզ ինձ իմ Պ. Յովհաննէս Ռաֆայէլ՝ առաքել նմա յաջորդ նաւու 10,000 հուն, որ է 35,000 ռուբի, զի գնացեալ ի Մարսիլիա հանդերձ քանի մի վարդապետաք վանաց գնեցին գեռին և սկիզբն արասցեն գործոյն։

„Այսչափ ինչ լուայ ի բերանոյ Պ. Յովհաննու Մուրատի. այլ որպէս ինձ թուի՝ և ոչ միայն իւր վկայեն հաստատութեան

բանից իւրոց։ Ցաջորդ թղթովս թերեւս տեղեկացայց գաղտ-
փարի մոաց նորա և ծանուցից ձեզ։

„ Մնամ և այլն,

„ Ի Մատրաս. 29 յուլիսի 1826.

„ Նուաստ ծառայ

„ Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՎԴԻՐԵԱՆ. "

Ի հաստատութիւն բանից վերոյիշեալ թղթոց Հ. Սարգսի, ահա բանք թղթոյ Պ. Պօղոսի Լազարովիչ որ առ արքայն Մխիթարեան միաբանութեան.

„ Ազգասիրութիւն և յիշատակ հանգուցեալ Գեւոյս Աղա Սամուէլի Մուրատայ՝ ստիպեն զիս յաւելուլ ատանօր ինչ ինչ ազգարարութիւն յաղագս ուսումնարանի որ և աղքատ մանկանց ազգիս, առ որ տեսանեմ զմիաբանութիւնդ (Ներեսջիք աղաչեմ համարձակութեանս) անփոյթ յոյժ։

„ Գիտեմ զի ի կողմանէ ձերմէ կացուցեալ էք զՊարոն Ճէմս Ինեիս գործակալ ի Լոնտրա. և զի նա փոխանակ իւր կացուցեալ է զՊարոն Մինչին զընտանին իւր ատ ի Մատրաս, որում վիճակեցաւ երբեմն պաշտօն ընդհանրական փաստաբանի բարձրագոյն ատենի քաղաքիս, և ընդհանուր վերակացութեան և պահպանութեան ամենայն իրաց պատկանելեաց որբոց և աղքատաց, և այլն։ Բայց փոխադրեալ նորա ամաք ինչ յառաջ ատոր ի Կալկաթա՝ էանց պաշտօն նորա և իշխանութիւն գործակալութեան իւրոյ ի ձեռս Պարոն Քամիարին փաստաբանին, որ է այր անօրէն, ամբարիշտ, կաշառակուրծ և ի սպառ անկրօն. և այս պաշտօն որպէս երեւի՝ մնալոց է ի ձեռս նորա մինչեւ ցսատակումն իւր։ Զիարդ կարելի էցէ տեսանել զկատարումն գործոյս յառնէ որ կուրացեալ է ի սոցանէ կոչուաք։ . . .

«Արդ՝ վասն օգտի խղճալի որբ և աղքատ մանկանց ապրիս, զոր ինչ հարկ և կարեւորն է ձեզ գիտել՝ ահա ասվա ծանուցանեմ։

«Զկնի հատուցանելոյ զպատկանեալն ուսումնարանին և զպատկանեալսն մօր և քեռ իւրեանց, և այլոց որոց միանգամ պարտական են հատուցանել, եթէ հատուցին ամենեցուն արդարապէս, առաջինն գուցէ ունիցի 100,000 հուն, և երկրորդն 50,000 հուն, դրամագլուխ որ բերէ իրրեւ 8000 հուն ի տարեոջն. իսկ նոքա ծախեն միայն ի պէտս իւրեանց 30,000 հուն ի տարեոջն. Թող զգանազան ինաս և զծանր տակոսս զոր տան այլոց, և այլն, և այլն։ Երկրորդն սկսեալ ի 1821 էն մինչեւ յտարին ծախեալ է ի տարեոջն 26,000 հուն, որ լինի 234,000 ֆրանք, ուստի առաւել հաւանական թուի մեալ նորա և ոչինչ։

«Վասն այսորիկ հարկ է միաբանութեանդ վաղվաղակի կացուցանել ասա զայլ ոք բացարձակ գործակալ, զի ըստ ժամանակին գոնէ զդրամագլուխն զպրատան ապահովեցէ ի գանձարան Անդղիացւոց ընկերութեան. և վասն այսորիկ ըստ խորհրդոյ խահեմագունից և բարեկամաց միաբանութեանդ դրեցաւ ձեռամբ իմով օրինակն գաղտնի գործակալութեան դրոյ, վասն զգուշութեան ամենայն անակնուելի դիպուածոց, և զոր յուսամ մինչեւ յայժմ պատրաստեալ և եղեալ էք ի ճանապարհ՝ հատուցանել այսր ի Մատրաս։

«Ա.ռ ի յապահովել զդրամագլուխն չունի ինչ ծախս օրինաց, և եթէ լինիցի եւս՝ է յոյժ սակաւ, և առ ի չտալ ձանձրութիւն և հոգ միաբանութեանդ՝ խոստանամ ես զայն ի քսակէ իմմէ հատուցանել, և այլն։

«Անքեմ զթուղթս ըստ բնաբանին Տէրէնաս քարոզչին, աղաղակելով, Եւանդելի վաղ, եւանդելի վաղ։

«Ի Մատրաս. 10 յունիսի 1826.

«Պ. Պ. ԼԱԶԱՐՈՎԻՉ.»

ԳԼՈՒԽ Թ.

Ամուսնալի գժտութիւն Մուրատեան եղբարց ընդ միմեանս. — Կաշառել նոցա զընդհանրական փաստաբանին զՖաուիտրն. — Խրատ և խորհուրդ Պարոնայց Ա. Աղանուրի և Պ. Լազարոմիջի առ Մուրատեանս. — Ամօթեալ խորհուրդ ընդհանրական փաստաբանին. — Դարձեալ խնդիր Հ. Սարգիս զիր գործակալութեան վասն իւր յառաջնորդի միաբանութեանն.

Որպէս վերագոյն ասացաւ, ուրախութիւն և տխրութիւն ցանգ խառն էին ի Մուրատեանս. նմին իրի և յետ քանի մի աւուրց դառնալոյ Պ. Յովհաննու Մուրատայ ի Մարրաս, և բնակելոյ ընդ եղբօր իւրում Պ. Եդուարդայ՝ ի պարտիզի տան նորա, անկանի գժտութիւն ի մէջ նոցա, և ցայն վայր հասանէ՝ մինչեւ հապճեպ իմն և թանկագնոյ գնէ տուն Պ. Յովհաննէս Մուրատ, և գնայ բնակի անդ իւրովքն հանդերձ տառանձին։ Ի համոզել Հ. Սարգսի զնոսա ի խաղաղութիւն, տէր ցնա Պ. Յովհաննէս Մուրատ թէ ի բարութիւն աղքատաց ազգին եղեւ գժտութիւնն այն ի մէջ իւրեանց, զի կատարեսցէ ինքն առանց ակնածութեան յեղբօրէն զրան հրիտակի ողորմութեան, և թէ խօսեսցի ընդ նմա յայնոսիկ աւուրս և որոշեսցէ զայն փոխով. միանգամայն և յիշէ զմտերմական թուղթս միաբանութեանն որ առ ինքն, և ցաւի ընդ անհոգութիւն իւր որով չաւարտեաց զիրան մինչդեռ յԵւրոպ էր, և ունէր բացարձակ իշխանութիւն ի մօրէ և յեղբօրէ իւրմէ։

Սակայն անցանեն ամիսք վեց և աւելի, և չորոշէ նա ինչ, և չիսօսի բնաւ զայնմանէ ընդ Հ. Սարգսի՝ մինչեւ բռնադատի ի խառնվիմնէ օրինաց։

Բայց յառաջ քան զայն կամին եղբարքն երկոքին Մուրատեանք, մանաւանդ թէ շարժին ի գժտութենէ անտի պատահելոյ ի մէջ նոցա, քննել և գիտել՝ թէ ո՞րչափ ինչ ծախս էին իւրաքանչիւրն արարեալ, սկսեալ ի ժամանակէ անտի մտանելոյ նոցա ի ժառանգութիւն հօր իւրեանց. քանզի չէին զայն արարեալ երբէք՝ եթէ վասն ութամեայ բացակայութեան ի միմեանց, և եթէ վասն չլինելոյ ի մէջ նոցա ցայն վայր եղբայրական ինչ գժտութեան։ Եւ քննեալ զայն գտանեն զի ոչ միայն բովանդակ եկամուտքն ծախեալ էին, այլ և բազում ինչ ի դրամագլխոյ անտի ժառանգութեան իւրեանց։

Ընդ այն անհաւատալի իրս զարհուրեալ յիմարին. բայց փոխանակ զգաստանալոյ և չափաւորելոյ զտարապարտ ծախս իւրեանց՝ յայլ ևս խորհուրդ մտարերեն. քանզի խորհին զլանալ անիրաւութեամբ զօրինաւոր շահս դրամագլխոյ զբաղարատան հօր իւրեանց, ասելով՝ թէ հայր իւրեանց ի կենդանութեան իւրում չէ տուեալ շահս դրամոյ ողորմութեան. ապա և ինքեանք չեն պարտական տալոյ զայն։

Զայս գիւտ կրտսերն հնարի, և երէցն ուրախացեալ ընդ այն՝ համախոհ լինի նմա. և վասն այնորիկ՝ որպէս թէ սխալեալ ելցէ նոցա մինչեւ ցայն վայր՝ յաւելուլ շահս ի դրամագլուխս անդր հրիտակին ողորմութեան, ձեռներէց լինին ջնջել և իրաց հանել ի հաշուէմատեանէ իւրեանց զշահն։ Խափանէ զնոսա Պ. Աբրահամ Աղանուր ի յանդուգն ձեռնարկէ անտի, խելամուտ առնելով զնոսա նախ՝ զանարգանութեան իշխանութեան կտակագրի և կտակակատարաց, և ապա մեղմով իմն հաւակացուցանէ նոցա՝ թէ իրրեւ գրագիր հաշուէմատեանի նոնոցա՝ չկարէ ինքն ուրանալ զայն ի հարցափորձի անդ ատենի, որ լինելոց է ընդ այն անհրաժեշտ հարկաւ։

Եւ որպէս վերագոյն պատմեցաւ, ի հարցանել Հէրակլիթ Քա՛միսլենի ցՊ. Եդուարդ Մուրատ զբանէ հրիտակին, և ի տխրել զնա կատարեալ տալ նմին՝ լսեցուցանէ զնա Պ. Եդուարդ պատճառանաք բացակայութեան եղբօր իւրոյ, մանաւանդ թէ կաշառաք ընծայից։ Բայց ի դառնալ Պարոն

Յովհաննու Մուրատի ի Մատրաս, և ի չկատարել նորա զայն, մանաւանդ թէ ի չնորոգել զկաշառան ընծայից՝ ըստ սովորութեան, հարցանէ ցնա Ֆամիտըն վերատին՝ թէ ընդէր յապաղիցէ կատարել զայն, մինչ դարձեալ իսկ է եղբայրն իւր ի Մատրաս, և անցեալ են յետ այնորիկ ամիսք վեց. վասն որոյ յանդիմանէ զնա խիստ բանիւք ընդ պակասութիւն արքային պարտուցն։

Երկուցեալ Պ. Եդուարդայ ի բանից անտի, ի խորհուրդ մտանէ ընդ եղբօր իւրում՝ առ ի հնարս գտանել և զերծանել ի խստութենէ ընդհանրական փաստաբանին։ Եւ գտանեն նոքա ի խորհրդի անդ իւրեանց զայս հնարս. անցուցանել յԵւրոպ ի վերայ Գեռնայ իւրեանց Ռաֆայէլեանց գումար ինչ արծաթոյ իբրեւ ի հաշիւ արծաթոյն նոցա որ էր առ իւրեանս ի Մատրաս, և ասել ցընդհանրական փաստաբանն թէ արդէն անցուցեալ են ինքեանք զմասն արծաթոյ հրիտակին ողորմութեան յԵւրոպ առ քեռիս իւրեանց, և տուեալ նոցա իշխանութիւն խօսել ընդ Մխիթարեան միաբանութեան Վենետկոյ և կառուցանել զդպրոցն ըստ վերջին կամաց հանգուցեալ հօր իւրեանց։ Եւ արդարեւ իսկ անցուցանեն նոքա վաղվաղակի 11,000 լիրայ ստէրլին ի Լոնդոն յանուն քեռեայց իւրեանց, Պարոնայց Աղեքսանդրի, Յովհաննու, և Լուիզի միանգամայն։ Բայց չհաւատայ Ֆամիտըն բանից նոցա, և շրջակայնանայ ընդ այն պատասխանի, և ընդ այնչափ և այնպիսի գործս նոցա. այլ ապառնալով ապառնայ հանել ի ձեռաց նոցին զբովանդակ արծաթն հրիտակի ողորմութեան և առանդել զայն ի գանձատուն տէրութեան, մինչեւ ի գործ դիցի ըստ կամաց բարերարին։

Լուեալ նոցա զայն ի բերանոյ Ֆամիտընի, զարհուրին և տագնապին յոյժ. վասն որոյ և այլ հնարս խորհին գտանել՝ առ ի զերծանել ի ձեռաց նորա. և յետ բազում խորհրդոց և տրտակուանաց՝ թէ արդեւք ուստի իցէ նորա շարժեալ յայն խիստ պահանջումն, ի պարտուց պաշտամանն իւրոյ, — որում շատ էր այն պատասխանի նոցա, և կամ կուրացուցիչ կա-

շուն զոր եռուն և տային նա՝ նթէ բաւականանայր նա ընդ այն, — թէ ի բողոքելոյ Մխիթարեան միաբանութեանն։ . . .

Ի խորհրդի անդ ասրակուանաց նոցա գտանին Պարոն Ա. Աղանուր, և Պ. Պ. Լազարովիչ, և խրատ կարեւոր տան նոցա՝ ջանալ իրաւախոհ լինել ընդ միաբանութեան. տալ նմա զմտան ինչ հրիտակի ողորմութեան, և թողուլ ի կամս նորին զկառուցումն և զկարգաւորութիւն գպրատանն։ Ընդ այս խրատ նոցա թէպէտ և հաճի յոյժ երէց եղբայրն Պարոն Եդուարդ Մուրատ, բայց զիւրդ կարասցուք, ասէ, առնել զայս ի ժամուս. զի կարի հեռի է միաբանութիւնն ի մէնջ, և որ ասատ ասա մեզ՝ Հ. Սարգիս Թէոդորեան՝ շունի իշխանութիւն ասարելոյ ընդ մեզ զայն։ Զայս ասէր նա, քանզի երկնչէր յոյժ յօրինաց, և զի յուսայր ասկաւուք ասարել զայն։

Իսկ կրասերն, Պ. Յովհաննէս Մուրատ, բաղում անտեղութիւն և երկրայութիւն յառաջ բերեալ ընդ կատարել զայն միաբանութեանն՝ չհաճի բնաւ ընդ այն խրատ նոցա. զի վախճան կամաց նորա էր առնուլ զբովանդակ արծաթն հրիտակի ողորմութեան և գնալ յԵրոպ, և անդ ըստ կամս զինչպիտութեան իւրոյ վատնել զայն, որպէս և վատնեաց յառաջ նոսա նուագին առաւել քան զերկու միլիոն ֆրանքս։ Այսմ կամաց նորա խնդրուտ լինին ոչ միայն օտարք, այլ և իւրքն իսկ. և վասն այնորիկ զմտան զայն արծաթոյ 11,000 լիրայ ասէրլին, զոր անցուցանեն ի Լոնտոն, ասասքին առ Ռաֆայէլեանս իրրեւ ասանդ յանուն երից կուսակրաստրաց, զի մի յոյժամ գնայցէ նա անդր՝ կարողացի վատնել զայն ըստ ցանկութեան իւրում։

Իսկ նորա անհաւան լեալ խրատուց այլոց, յօրինէ ինքնատեղծ կարգաւորութիւն մի վասն անլինելի գպրատանն, զոր և բաց յեղբօրէ իւրմէ չցուցանէ այլոց ոմեք. յոյժ խնասասիրէ ամենայն ոք՝ թէ հակառակ էր այն կամաց կատարելոյ։ Այլ և ոչ Պ. Եդուարդ հաճի ընդ արհամարհանաք գնացս եղբօր իւրոյ ընդ միաբանութեանն, և վասն այնորիկ կամի զրել գիր առանձին առ Գեր. արքայն և աղաչել զնա լրումն տալ կամաց հօր իւրոյ, զի որպէս զիարդ և իցէ միա-

բանեացի ընդ գործակալս իւրեանց ընդ Ռաֆայէլեանն։ Թէ-պէտ և զանհնարութիւն գործոյն ինքնին խոստովանի բազմաց, սակայն կամի խափանել այնու, կամ թերեւս յամեցուցանել զձեռնարկութիւն միաբանութեանն որ կամէր յապահովել զհրատակն ողորմութեան որբ և աղքատ մանկանց ազգին։ Եւ յանձնէ նա զայն գիր Պ. Լազարովիչի յօրինել ի ծառուկ, քանզի կրտսերն չկամի և կամ անփոյթ լինի զայնմանէ։

Սակայն յետ այնր ամենայնի խորհրդոց, բանից և խրատուց ընտանեացն, որոշեն Մուրատեանք ի վախճանի և այլ փորձ փորձել. կրկին կաչառաք լուցուցանել դարձեալ զընդհանրական փաստաբանն Քամիսարն, խոստանալով տալ նմա միջնորդութեամբ հնդիկ գործակալի նորա 10,000 ռուբի, որ է 25,000 Ֆրանք. զմի մասն արծաթոյն յառաջագոյն հատուցանեն, և զմիւս մասն խոստանան յետոյ հատուցանել, և այնպէս լուցուցանեն զնա ի պահանջմանէ անտի իւրոյ որով կամէր յապահովել զհրատակն ողորմութեան։

Տեսեալ անօրինին Քամիսարնի թէ յօժար են Մուրատեանք տալ նմա զայնչափ գումար արծաթոյ առ ի զերծանել ի պահանջմանէ անտի ի ժամուն, կամի հանել ի ձեռաց նոցա և այլ մեծագոյն ինչ գումար՝ յուսացուցանելով զերծուցանել զնոսա ի պահանջանաց անտի հրատակին ողորմութեան։ Քանզի խորհուրդ անօրէն տայ նոցա այսպէս.

«Մատուցից ես, ասէ, իբրեւ ընդհանրական փաստաբան
«և իբրեւ պաշտպան հրատակին ողորմութեան՝ գանգատագիր
«մի յԱռեանն ընդդէմ կառավարարացդ Մուրատեանց,
«պահանջելով ի ձէնջ զկատարումն հրատակի ողորմութեան.
«բայց այնպիսի հնարիւք կազմեցից զգանգատագիրն, զի
«բոլորովին հակառակ իցէ օրինացն Անգղիացւոց. որով ոչ
«միայն մերժեցի գանգատագիր իմ յառնէ անտի, այլ և
«անվաւեր լիցի բուն իսկ հրատակն ողորմութեան որ ի կատ-
«կի Սամուէլի Մուրատայ. և այնպէս զերծանիցիք դուք
«ի տպատ ի պարտուց անտի հրատակին. բայց այսու պայմա-
«նաւ զի խոստացիք հատուցութեամբ, հանդերձ երաշխա-

«ուրուքեամբ, տալ ինձ յարծաթոյ անուի 1000,000 ռուբլի, «որ առնէ 250,000 ֆրանք։»

Ընդ այս խորհուրդ և առաջարկ Հէրպերթ Փամիսոնի հաճեալ հաւանի յոյժ Պ. Եդուարդ Մուրատ. իսկ Պ. Յովհաննէս Մուրատ չհաճի ընաւ ընդ այն, ունելով սկզբունս կրօնի, միանգամայն և ակնունելով գործադրել զկամս հօրն իւրոյ ըստ կամաց իւրոյ յԵւրոպ, ուր դառնալ վերստին դնէ իմոի, նա զի և կասկածէր ընդ յաջողել կարծեաց Փամիսոնի. վասն այսր ամենայնի չհաւանի նա ընդ այն, որով և տարաձայնութիւն և նորոգ գժտութիւն ի մէջ երկուց եղբարց, յորմէ բարութիւն արդեօք ծագեաց յետոյ ողորմութեամբն Աստուծոյ վասն աղքատաց ազգիս, որպէս ծանուցուք ապա ըստ կարգի բանից պատմութեանս։

Զայս ամենայն անցս, զհանգամանս Մուրատեան եղբարցն, և իրաց հրիտակին ողորմութեան, գրեալ ծանուցանէ Հայր Սարգիս Թէոդորեան միաբանութեանն իւրում, հանդերձ ուրախակցութեամբ ընդ արքեպիսկոպոսութիւն արքային իւրեանց, և այլ զանազան լրով և կարեւոր ազգարարութեամբ. և այս պատճէն էր թղթոյն.

«Աստուածապատիւ և Գերապայծառ Տեառն մերոյ Սուքիասոյ արքեպիսկոպոսի և ընդհանրական Արքայի ուխտիս ծնրադրական աջահամբոյր։

«Բազում խնդութեամբ որսի կարդացի յառաջնում աւուր սեպտեմբերի զդուարթարար նամակն Վ. Եհիդ, զգրեալն ի 14 յունվարի տարւոյս. ընդ որ ուրախացեալ գոհութիւն և փառս յոյժ մատուցի Աստուծոյ, որ շնորհեաց մեզ վերըստին առաջնորդ զարդարեալ հայրապետական փառաւք. վասն որոյ հայցեմ ի Տեառնէ շնորհել մեզ ընդ երկայն աւուրս զարհիապատիւ Հայրութիւնդ ի խնդութիւն և ի պայծառութիւն ուխտիս։

«Յաղագս ապարդութեան Տիլեմոքայ գրեալ էր Վ. Եհիդ՝ թէ ընդ հաւոյ ի մամուլ ածի, և զոր ցարդ կարծեմ աւար-

տեսալ. բարեղք լինի գրել այսի առ Նպատաւորն, գովելով գրարի ցանկութիւն նորա. և ապա ծանուցանել նմա զհաշիւ ծախուց տպագրութեան մատենին, թէպէտ ինքն խոստացեալ է լինձ 5000 ռուբլի հատուցանել ընդ այն։ Նոյնպէս և վասն օգուտինեան մատենին տպագրութեան, զորոյ զնպատաւորն խոստացայ ծանուցանել ձեզ, է Պարոն Յովհաննէս Մուրատ, առ որ պիտոյ է եւս գրել գիր այսի։ . . .

„ Տեսեալ Պարոն Եղուարդայ Մուրատի զնորոգ տպագրեալ մատեանս, և լուեալ ի բերանոյ բազմաց բազում գովութիւնս զմիտաբանութենէս, ցանկացաւ և ինքն տպագրել տալ մատեանս ինչ, բայց ի ժամուս ընտրեաց զընդհանուր պատմութիւն Պօսիւէի, և վասն այսորիկ խնդրեաց յինէն գրել ձեզ զի անյապաղ հրամայեսջիք ի տիպ արձանացուցանել զայն ծախիւք իւրովք. և ցանկայ, որպէս և եղբայր նորա, զի արձանագրեսցին ի ճակատս մատենիցն այսպէս.

„ Ամրեամբք և ծախիւք Պարոն Եղուարդայ Ս. Մուրատեան և Պարոն Յովհաննիսոյ Ս. Մուրատեան իշխանաց տան հանգուցեալ Հօր իւրեանց Աղա Սամուէլ Մկրտիչ Մուրատի. „

„ Բանիւք և արդեամբք յառաջնոց քան զնոսա Պարոն Լազարովիչ . . .

„ Թուղթք Գերապայծառ Հօրդ որ առ զանազան կարեւոր բարեկամս եւ ծանօթս տեղւոյս՝ չերեւեցան ցարդ, ընդ որ զարմանամ յոյժ։ Զերեւեցաւ նոյնպէս և յղեալ մուրհակ գործակալութեանս. ասէպ ասէպ յիշատակութիւն նորին ի թուղթս՝ ապաքէն ձանձրութիւն ինչ բերէ Գերապայծառին, վասն այսորիկ եդի ի մտի ոչ եւս առնել յիշատակութիւն ինչ զայնմանէ. ապայն կարեւորութիւն նորին զոր տեսանեմ եւ ասա օր ըստ օրէ՝ ասիպէ զիս զնոյն երկրորդել . . . .

„ Ահա յայսմ ասմանի են հանգամանք իրաց սոցա, և

ի սոյն հոռետեսութիւն կամաց կատարելոյ զպարոս Խրեանց. վասն այսորիկ ամենեքեան առ հատարակ, մանաւանդ Պարոն Ա. Աղանուր և Պ. Լազարովիչ, որք քաջ գիտակ են ամենայն ներքին և արտաքին իրաց նոցա, ցաւին ընդ այնչափ կորուստ իրաւանց արքոց և ազգաստաց ազգիս. մեղադրեն յոյժ միաբանութեանս, որպէս թէ նմա պատկանեալ գործն, և նա ոչինչ հոգ տանի՝ զոնէ յապահովել զայն ի ժամուս։ Եւ ահա վասն այսորիկ ծանուցանեմ ես հատարակութեանս նախ՝ թէ մի՛ յուսալ գործակցութեան Պարոն Ճէմս Խնիսի մեռոցէ. քանզի որպէս բազում անգամ գրեալ եմ, ընդհանրական փոստարանն, որում յանձն է հոգ իրացս՝ է այր յոյժ անիրաւ և կաշառաբեկ, ուստի և չիք բնաւ յոյս ելից իրացս։

«Երկրորդ, եթէ՝ վասն առանձին իրաւախոհ լինելոյ ընդ կամակատարն, և եթէ՝ վասն յապահովելոյ զհրիտակն ողորմութեան, պիտոյ է առ ի կողմանէ միաբանութեանս այլ ևս օրինաւոր և բացարձակ գործակալ իրակութեանս։ Եւ երրորդ, հաւատի առնեմ զմիաբանութիւնս՝ թէ չիք նմա անոտի բնաւ երկիւղ վնասու և կամ անոտի հոգոց, յորոց իրաւամբք զգուշանայ. քանզի եթէ գուսա որ ի Լոնդոն որ յանձն էառ զայնպիսի իմն պայման, ուր չէին նմա մերձ ոչ կամակատարքն և ոչ ինչք նոցա, ոչ ոք հրաշք ևս առաւել ի Մարսա, ուր ամենայն ինչ մօտ է և ընդ ձեռամբ։ Սակայն զիարդ և որպէս հանդոյ և կամք իցեն հատարակութեանս՝ արասցէ. քանզի ևս զայս ամենայն իրրեւ կարեւոր ինձ գրելի և նմա գիտելի ծանուցանեմ, և ոչ այլ ազգ։ . . .

«Զգաղափար կարգաւորութեան գպրոցանն և մերիսկի գործակալութեան Ռոմբայլեանց, զոր խոստացայ գրով առաքել, չկարացի ցարդ ի ձեռս բերել. միայն զքանակութիւն գրամոյն, 20,000 հուն (70,000 ռուբի, զոր) պիտակաւոր ի կառուցումն գպրոցան առաքեցին ի Լոնդոն՝ քաջ տեղեկացայ, և զի պատրաստեալ են նոյնչափ ևս առաքել անդր. իսկ զմնացեալ բոլանդակ գումարն գրամոյ եղեալ է ի մեծի կրոսերն, Յովհաննէս Մուրատ, ընդ իւր անցուցանել յԵրուսաղէմ. և երկոքեան Եղուարդ կամի՝ այն ասա պահել առ իւր։

Սակայն եթէ սատ մնացէ և եթէ այդը անցուացի, նոյնպէս հասարակութիւնս կարող է յապահովել զայն՝ եթէ կամիցի։ Միայն պարտ է ապասել մինչեւ բովանդակն կամ բաւական դումար դրամոյ անցցէ այդը. ապա թէ ոչ՝ ի դերեւ ելանէ առաջադրութիւնն ամենայն ուստեք։ . . .

« Բազում սիրոյ և յարգանաց ողջոյն մատուցեալ համբէն Վ. Հարց և Պ. եղբարց սրբոյ կրօնիս, մնամ միշտ

« Արհիապատուութեանդ ձերում

« Ի Մատրաս. 12 Դեկտ. 1826.

« Ն. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

ԳԼՈՒԽ Ժ.

Մահ Ինինի, և խորհուրդ Միխրարեանց՝ իրաւախոհութեամբ վարելոյ զիրս հրատակին. — Տագնապ Մուրատեանց յերեւան պահանջանաց ընդհանրական փաստաբանին. — Մինչեւ Պ. Պօղոսի Լազարովիչ ընդ Մուրատեանս և ընդ Հ. Սարգիս. — Բանագնացութիւնք սորին ընդ Պարոն Եղուարդայ Մուրատի յաղագս իրաւախոհութեան. — Եւ խագիծ դաշնագրին յօրինեալ ի Պ. Յովհաննէ. — Թուղթ Պ. Եղուարդայ առ ատաշնորդն Միխրարեանց.

Մինչեւ ցայն վայր չիասի ինչ բնաւ Հ. Սարգիս ընդ Մուրատեանս վասն բանի հրատակի գպրատանն, եթէ՝ առ ի պահել զգրով խոստումն իւր որ առ Պարոն Յովհաննէս Մուրատ ի Լոնտոն, և եթէ առ ի մնալ ելիցն որ ի գործակալութենէ Ինինի, զոր առնէր նա ձեռամբ Մինչրնի ընդհանրական փաստաբանին ի Մատրաս, և նորա թողեալ էր զոյն յաջորդի իւրում Քամիսարնի։ Դիտէ միայն զհանգամանս Մուրատեանց և զգնացս Քամիսարնի ընդ նոսա. զորս և ծանուցանէ միաբանութեան իւրում ի Վենետիկ, և ասիպէ զնա առաքել առ ինքն օրինաւոր զիր գործակալութեան, զի տեսանէր զանշահութիւն գործակալութեան Ինինի և իւրոցն ի Մատրաս։ Բայց իբրեւ ընդունի զիր յառաջնորդէ իւրմէ ի սկիզբն Դեկտեմբերի 1826, սկսանի այնուհետեւ խօսել ընդ Մուրատեանս վասն բանի հրատակի գպրատանն։ Եւ այս էր օրինակ թղթոյ առաջնորդին.

« Վ. Տեառն Հ. Սարգսի վարդապետի խնդալ.

« . . . Կարեւորագոյն ինչ է ասն զայս ծանուցանեմք, զի « Աստուծոյ վաճառակից Ինինի վախճանելոյ՝ հրաժարեաց «

„ ի գործակալութենէ Մուրատեան գպրոցին իրաց. և զայս
„ ծանոյց մեզ որպի Ինենիին թղթով իւրով, զոր կնքէ յայս.
„ Յուսամ զի մենատան Հայոց ի Վենետիկ՝ կարող լիցի
„ ձգել ի զգաստութիւն զՊարոն Մուրատն. թէպէտ ի գնա-
„ ցեալ նորա կասկածեմ, թէ բազում աշխատութիւն հատա-
„ նէ ձեզ առ առնել զայդ։ Քաջ հատու լեալ է առ առուգու-
„ թեան իրացն, որպէս մեք նախ քան զհնդեամ։

„ Առ այժմ հանդերձ հատարակութիւնս ի հոգոց, լցեալ
„ անթերի զամենայն պարտս իւր ի կատարումն իրին յօգուտ
„ ազգիս։ Յետ այսորիկ և ոչ ծագիւ մատին հպել անկ է։
„ Զայս առ ի զգուշութիւն գրեմք. և զոր առանց ի մեր հա-
„ նելոյ զգրեալքս, քննեա և տես թէ հնար իցէ իրաւախո-
„ հութեամբ վճարել զիրան, և ծանո՛ մեզ, և ոչ ինչ հոգա-
„ ցեալ ընդ անեռոյգս՝ պարապեալիր ի սոյգ՝ օգուտ մեր և
„ ազգիս։ . . .

„ Ի Վենետիկ. 22 օգոստ. 1826.

„ Աղօթարար ծառայ
„ ՍՈՒԽԻԱՍ ՍԱՄԱԼ
„ Արքեպիսկոպոս Սիւնի. և Արբայ. „

Զսոյն և Պ. Յովհաննէս Մուրատ զմտաւ ածէ, տեսեալ թէ չկամի եղբայր իւր յանձնել նմա զարծաթն զայն՝ առ ի գործ դնել ըստ կամաց իւրոց։ Վասն այսորիկ զղջանան երկոքին եւս ընդ գործն իւրեանց, այսինքն ընդ կաշառելն վերատին զՔամիտրն։ Ո՞չ ապաքէն օգտակար եւս լիցի մեզ, ասեն, խրատն այն Պ. Ա. Աղանուրի, և Պ. Լազարովչի, իրաւախոհ լինել ընդ Մխիթարեան միաբանութեանն, տալով նմա զերբորդ մասն միայն հրիտակին ողորմութեան, և զերծանելով յամենայն հոգոց և յերկիւղէ անզգամ Քամիտրնի և ի ապատնալեաց նորա։

Զայս խորհուրդ իւրեանց յայտնեն նոքա Պ. Լազարովչի,

և յանձնեն նմա տեղեկանալ ի ծածուկ՝ թէ ունիցի՞ արդեօք Հ. Սարգիս Թէոդորեան գիր գործակալութեան ի միաբանութենէ իւրմէ առ այն. և եթէ ունի, տեսցուք ասեն զվաւերականութիւն նորին, որպէս զի կարող լիցուք իրաւախոհ լինել ընդ նմա վասն բանի հրիտակին ողորմութեան. և եթէ յաջողեսցի այն և միջնորդութեամբ նորա առարտեսցի բանն, խոստանան նմա 10,000 հուն, որ է իբր 100,000 ֆրանք, հանդերձ խոստմամբ երախտագիտութեան։

Հարցեալ տեղեկանայ Պ. Լազարովիչն ի Հ. Սարգսէ զգրոյ գործակալութեան նորա, և խնդրէ ի նմանէ զայն առ ի ցուցանել Մուրատեանց, ծանուցանելով նմա զնպատակ նոցա, միանգամայն և յիշեցուցանելով հանգամանս նոցա՝ զորս յառաջ իսկ ծանուցեալ և գրեալ էր առ միաբանութիւնն, ըստ օրինակին զոր եդաք ի պատմութեանս յէջ 186։ Եւ ի ցուցանել Հ. Սարգսի գժուարութիւն ինչ և կասկածանս ընդ այն, հաւատի առնէ զնա Պ. Լազարովիչ գարձուցանել առ նա զկիրն հաւատարմութեամբ և անխափան, որպէս և առնէ իսկ։

Տեսանեն Մուրատեանք զգիր գործակալութեան Հ. Սարգսի, և շատանան լիովին ընդ վաւերականութիւն նորին. վասն որոյ և սկսանին այնուհետև խօսել և իրաւախոհ լինել ընդ նմա վասն բանի առարտման հրիտակի դպրատանն։

Եւ նախ Պ. Եդուարդ Մուրատեան գնայ առ Հ. Սարգիս ի տուն այգւոյ մօր իւրոյ, որ ի Մօնթ կոչեցեալ գեղջ, և խօսի ընդ նմա առանձին՝ յայտնելով նմա զխառութիւն ընդհանրական փաստաբանին Քամիտրնի և զանկարողութիւն իւրեանց ի հաստատելոյ զրոմանդակ հրիտակն ողորմութեան. միանգամայն և շարժէ զնա արտասուախառն բանիւք ի կարեկցութիւն, և աղաչէ ազատել զնոսա ի ձեռաց դաղանին Քամիտրնի. վասն որոյ ասիցէ զմայր իւր ինչանել ի քաղաքն, զի մօտ լիցի նոցա Հ. Սարգիս՝ խորհել և խօսել ընդ նմա զայնմանէ։ Եւ յետ քանի մի առաւոտ խօսի ընդ նմա նոյնպէս և յանդիման Լազարովիչի, զոր և միջնորդ առնու ի կողմանէ իւրեանց, և նա միջնորդէ այսպիսի բանիւք.

“ Վերապատուելի Հայր. ես իրրեւ փափաքող բարեաց
“ ազգիս և իրրեւ մտերիմ բարեկամ Մխիթարեան միաբա-
“ նութեան՝ յանկամ միջնորդ լինել կատարումն տալոյ բա-
“ բեպաշտական կամաց հանդուցեալ քեռւոյ իմոյ ։ ”

Պատասխանի տայ նմա Հայր Սարգիս այսպէս. “ Սիրելի
“ Պարոն, գոլելի է փափաքդ և բարի միջնորդութիւնդ.
“ մեք պատրաստ եմք միշտ ծառայել ազգիս և կատարել
“ զբարի կամս բարեպաշտից ։ ”

Յայնժամ խօսել սկսանի Պ. Եդուարդ Մուրատ և ասէ.

“ Յարգելի Հայր. զճշմարիտն խոստովանիմ քեզ. զոչ-
“ ցեալ եմ ես յոյժ թէ ընդէ՞ր յառաջագոյն ոչ կատարեցի
“ զպարտս իմ. բայց գիտէք զի ես յայնժամ այր երիտա-
“ սարդ և անփորձ էի, վասն որոյ և անմեղադրելի պարտիմ
“ լինել ։ Այժմ գիտեմ զի խելամուտ է՛ք հանդամանաց մերոց
“ փոքր ի շատէ. քանզի թէպէտ հայրն մեր թողեալ է մեզ
“ հարստութիւն մեծ, սակայն ընդ նմին և հոգ մեծ. վասն
“ այնորիկ ծախեալ եմք յօրէնս մինչեւ յարդ իրրեւ
“ 200,000 ռուբի, և տակաւին ծախեմք և նեղիմք անհնա-
“ րին յանօրէն Ֆամիլիարնէն, յաղագս բանի հրիտակին ողոր-
“ մութեան. վասն որոյ կամիմք այժմ իրաւախոհ լինել ընդ
“ միաբանութեանդ և տարտել զբան հրիտակին, զի զերծա-
“ նել կարասցուք ի ժանեաց գազանին ։ ”

Ապա հարցանէ ցՀ. Սարգիս թէ՝ ունիցի նա առ իւր զգիր
դարձակութեան իւրոյ ։ Պատասխանէ նա թէ այո՛, և հա-
նեալ ցուցանէ նմա ։ Ընթերցեալ նորա զայն՝ ասէ.

“ Յոյժ բարւոք և բաւական է վաւերականդ այդ, և ես
“ յայտնեալ եմ արդէն Պարոն Լաղարովչի զհանդամանս
“ մեր, և զդիտաւորութիւնն իմ ծանուցեալ եմ նմա. զնոյն
“ և քեզ այժմ, որովհետեւ հայր ես դու մեզ, յայտնեմ և
“ ծանուցանեմ ։

“ Արդ այժմեան վիճակ մեր չներէ մեզ տալ զբոլոր դա-
“ մարն հրիտակի ողորմութեան. վասն որոյ կամիմք տալ
“ միաբանութեանդ 125,000 հուն, որ է 437,000 ռուբի,
“ կամ 1,100,000 ֆրանք, և զծախս դրամախոհութեան ա-

«տի յԵւրոպ. և թողուլ զամենայն ինչ ի կամս և յիշխանու-
«թիւն միաբանութեանդ, զի ուր և որպէս հաճոյ և կամք
«իցեն նմա՝ կառուցէ և վարեցէ զդպրատունն։

«Միայն երկու ինչ են զոր խնդրեմք ի միաբանութենէդ.
«առաջին՝ տալ մեզ գիր լիուլի ազատութեան, և երկրորդ՝
«առեալ դրամին գետին գնել յանուն հանգուցեալ հօր
«մերոյ՝ վասն որք և աղքատ մանկանց ազգիս դպրատան
«շինութեան։»

Եւ յաղագս այսորիկ խնդրէ ի Պ. Լազարովչէ պատրաստել
զդաշնագիրն՝ ըստ գիտաւորութեան իւրում, և ժամանակ
որոշէ հաստատել զայն և առարկել զրանն։ Հ. Սարգիս այս-
չափ միայն ի ժամուն առնէ պատասխանի առաջարկութեան
նորա.

«Որպէս և զիարդ խիղճ մտաց ձերոց, և որչափ ինչ պա-
«տիւ և յիշատակ հանգուցեալ հօր ձերոյ պահանջէ ի ձէնջ,
«այնպէս և այնչափ արարէք. քանզի ամենայն ինչ, եթէ
«խիղճ մտաց և եթէ պատիւ, ձեր է ամենայն։»

Առ այս պատասխանի Հ. Սարգսի Թէոդորեան յաւելու
ասել Պ. Եդուարդ Մուրատ. «Հաւատամ ինձ, Հայր, զի ոչ
«առ ապահութեան ինչ այսպէս կամիմք առարկել զրան հրի-
«տակին ողորմութեան, այլ որպէս խոստովանեալ ասացի՝
«ապա չներելոյ մեզ այժմեան վիճակի մերոյ. բայց խոստա-
«նամ քեզ երդմամբ, զի եթէ յաջողեցէ ինձ Տէր, ոչ թո-
«ղից ես որդւոյ իմում զմնացեալ մասն ողորմութեան որոց
«և աղքատաց ազգիս, այլ ի կենդանութեանս դարձուցից
«նոցա զիրաւունս իւրեանց։»

Յայնժամ ասէ ցնա Հ. Սարգիս. «Եթէ այդ է պատճառն
«զոր ասացեր, և սոյն դիտաւորութիւնդ զոր խոստացար,
«յաջողեսցէ Տէր զգործս ձեր ի բարին։»

Հարցանէ Հ. Սարգիս Թէոդորեան զՊ. Եդուարդ Մուրատ
թէ ընդէ՞ր եղբայր իւր Պ. Յովհաննէս Մուրատ չիցէ եկեալ
անդր ըստ պատշաճի և ըստ հարկի իրացն. և թէ հանախո՞հ և
ի նոյն միտս իցէ նա ընդ նմա։ Պատասխանի տայ նմա Պարոն
Եդուարդ թէ պատճառ չգալոյ նորա անդր իցէ ծանրութիւն

գլխոյ նորա. իսկ յաղագս համախոհութեան նորա ընդ իս՝ մի երկբայիր բնաւ, ասէ. զի համախոհ է նա ընդ իս յայս բան։

Ի բանից ասոտի Հ. Սարգսի Թէոդորեան երկբայի արդեաք Պ. Եդուարդ ընդ կատարեալ հաւանութիւն նորա ընդ առաջարկութիւն իւր. վասն որոյ առնու առանձին զՊ. Լազարովիչ և վերստին հաստատէ զխոստումն իւր առ նա, զ10.000 հուն, և խնդրէ ինեմանէ՝ զի դիցէ նա զամենայն ջանս իւր ի գործ յաւարտել զբանն, և ի պահել զհամբաւ տան իւրեանց. և նա ոչ մոռացայց՝ ասէ՝ յաւիտեան զբարեկամութիւն վ ո, այլովքն հանդերձ։

Զայս խոստումն Պ. Եդուարդայ յայտնէ Պ. Լազարովիչ Հ. Սարգսի, և խոստանայ ի կողմանէ իւրմէ տալ զայն արծաթ Մխիթարեան միաբանութեան ի տպագրութիւն կարեւոր մատենից յօգուտ ազգին. քանզի, ասէ, չկամիմ և չցանկամ ես բնաւ շահել ինչ ի կողմանէ որբ և աղքատ մանկանց ազգին իմոյ։

Յետ երկուց աւուրց գրեալ պատրաստէ Պ. Լազարովիչ զդաշնագիրն ըստ մտաց Պ. Եդուարդայ Մուրատի, և նա տարեալ ցուցանէ զայն, եղբօր իւրում Պ. Յովհաննու. իսկ նորա շնաձեալ ընդ այն՝ ինքն յօրինէ նորոգ դաշնագիր ըստ մտաց իւրոց, բայց չկամի զի ձեռագիր իւր ի ձեռս այլոց անցցէ. վասն որոյ դարձուցանել տայ զայն ի տան իւրում Պարոն Լազարովչի, և ի ձեռն նորա առաքէ զայն Հայր Սարգսի Թէոդորեան յընթեռնուլ և ի դատել զայն ըստ կարծեաց իւրոց և ըստ ճանաչման

Տեսեալ և քննեալ Հ. Սարգսի զդաշնագիրն, դատանէ ինքն ինքեան բազում ինչ այլազգ և օտար ի մտաց և ի դիտաւորութենէ Պ. Եդուարդայ Մուրատի. վասն որոյ լուէ աւուրս ինչ, մինչեւ Պ. Եդուարդ ինքնին առաքեալ կոչէ զնա և հարցանէ զհաճութիւն նորա ընդ նորոգ յօրինեալ դաշնագիրն։ Արդ՝ պատասխանի տուեալ Հ. Սարգսի ասէ. «Պարոն, դու ասացեր «Թէ եղբայր քոյ համախոհ է ընդ քեզ յամենայնի ի բան

“ հրիտակին ողորմութեան. բայց ես զհակառակն տեսանեմ
“ ի գրութեան նորա ։ ”

Զառաջինն ևանայ Պ. Եդուարդ արդարացուցանել զանձն, միարանելով զգրութիւն եղբօր իւրոյ ընդ դիտաւորութեան իւրում. բայց իբրեւ ցուցանէ Հ. Սարգիս բան առ բան զներհակութիւն կամաց նոցա ընդ միմեանս, յայնժամ ակամայ խոստովանեալ նորա զճշմարտութիւնն, ասէ.

“ Կամք եղբօր իմոյ են զի յանձնեսցի ինքեան բովանդակ
“ արծաթն հրիտակին ողորմութեան, զի գնացեալ վերատին
“ յԵրուսաղէմ՝ ըստ կամաց իւրոց հաստատեսցէ զդպրատունն
“ աղքատաց ազգին. այլ ես, ասէ, չեմ յիմար՝ հաւատալ
“ նմա զայնչափ գումար արծաթոյ ։ ”

Ապա առեալ զդաշնագիրն՝ ասէ ցՀ. Սարգիս. “ Ասա՛
“ ինձ, Հայր, թէ զինչ ինչ աւելորդ և անպատշաճ համարիս
“ ի սմին, զի հանիցս ի բաց, և եթէ պակաս ինչ և պատշաճ՝ զի
“ յաւելից ի տոյն ։ ”

Եւ ի ցուցանել Հ. Սարգսի զի ոչ շատանայ ինքն ընդ խոստացեալն ի նմանէ 125,000 հուն, յաւելու Պ. Եդուարդ այլ եւս 25,000 հուն, որով լինի ընդ ամենայն 150,000 հուն, այն է 525,000 ռուբի, կամ 1,312,500 ֆրանք ։

Յայնժամ Հ. Սարգիս արբագրէ զդաշնագիրն ըստ կամաց և ըստ առաջարկութեան Պ. Եդուարդայ Մուրատի, և տարեալ ցուցանէ նմա զայն. ընդ որ հաճի նա յոյժ, բայց վերատին տանի ցուցանել զայն եղբօր իւրում Պ. Յովհաննու, որ առ ի խոտանել զառաջադրութիւն եղբօր իւրոյ՝ մերթ յամառեալ հակառակի արբագրութեանն Հ. Սարգսի, և մերթ նորոգ ինչ վերատին յաւելու ի դաշնագիրն ։

Եւ այնչափ ձանձրացուցանէ և յուսահատեցուցանէ զՊարոն Եդուարդ, մինչեւ դնէ նա ի մտի ազատ կացուցանել զնա ի պատասխանատուութենէ անտի հրիտակին ողորմութեան, այնպէս զի ինքն և մայր իւր առարուցին զայն. վասն որոյ և բազում անգամ ասէ ցՀ. Սարգիս՝ թէ ընդէ՞ր յառաջագոյն չեցէ նորա ասացեալ զի ունի զկիր գործակալութեան. քանզի եթէ իմացեալ էր իմ զայն, ասէ, յառաջ քան զհատանել

եղբօր իմոյ ի Մատրաս՝ աւարտէի զբան հրիտակին, ունելով բացարձակ իշխանութիւն աւարտելոյ զայն ընդ միաբանութեան։

Թէպէտ և ի զուր ասէր դրանն, զի չունէր յառաջ բնաւ կամն աւարտելոյ զայն, և յետոյ եւս՝ ոչ կամաւ, այլ ակամայ, բռնադատեալ յօրինաց, սակայն արար նմա Հ. Սարգիս արդարացի պատասխանի, թէ պահեալ է իմ զգրաւոր խոստումն առ Պ. Յովհաննէս Մուրատ ի Լոնդոն։

Այլ ի վախճանի՝ տեսեալ Պ. Յովհաննու զանդրդուելի կամն եղբօր իւրոյ և զհամախոհութիւն մօրն ընդ նմա, ակամայ կամաք զիջանի առաջադրութեանն նորա, և սկսանի այնուհետեւ խորհրդակցիլ ընդ նմա առ ի հաստատուն և օրինաւոր առնել զդաշն և զաւարտումն բանի հրիտակին. վասն որոյ և խելամուտ առնէ զնա տալ զրովանդակ դրամագլուխն ողորմութեան զթողեալն ի կտակագրէն։

Որում անուացեալ Պ. Եդուարդայ՝ առնէ այնպէս. ուստի յաւելուն ի վերայ 150,000 հունին՝ այլ եւս 33,323 հուն, որով ընդ ամենայն լինի 183,323 ասեղ հուն, որ է 640,500 ռուբլի, կամ 1,600,000 ֆրանք. շատ գրելով սեփականել անձանց զասանամեայ շահս դրամագլխոյն որ լինին նոյնչափ. թէպէտ և հանգուցեալ կտակագիրն պատուիրեալ էր ի կտակի իւրում՝ զի շահուքն հանդերձ հատուցին դրամագլուխք, և կտակակատարքն ի շահէ անտի մի՛ ինչ սեփականեսցին. որոյ վասն և թողեալ էր նոցա իւրաքանչիւր 5000 հուն՝ վասն աշխատութեան նոցա ի գործ կտակակատարութեան, և ժառանգութիւն միոյ միոյ յորդւոցն 4,000,000 ֆրանք։

Իսկ գործակալն միաբանութեան Հ. Սարգիս թէոդորեան ոչ խստութեամբ վարէր ընդ նոսա, զիրաւունս ազգաստաց ազգին իւրոյ ի նոցանէ կշիռ պահանջելով՝ ըստ յայտնի կամաց և պատուիրանաց կտակագրին, և ըստ անաչառ օրինաց Անգղիական ասենին, այլ կարելիս լինէր նեղութեան նոցա որ ի խստութենէ ընդհանրական փաստաբանին Քամիսարնի, և քաղցրութեամբ զիջանէր յամենայնի կամաց նոցա, զպատիւ և զպայծառութիւն տան բարերարին խորհելով. որպէս

և վկայէ Պ. Եդուարդ Մուրատ ի թուղթն իւր առ Գերապայծառ Սուքիաս Սոմալ, որ ունի օրինակ զայս.

„ Գերապայծառ Տէր.

„ Զայս գիր ի վաղուց կամիցիմ գրել ձեզ ըստ
„ քաղաքական օրինաց, ցնծալով ընդ արժանաւոր ընտրու-
„ թիւն ձեր յառաջնորդութիւն և ի հովուապետութիւն արդ-
„ ուխտիդ. բայց ի բազում գրաղանաց յապաղեցի մինչև
„ ցայսօր. վասն որոյ ստիպիմ սովաւ մաղթել ի Գերապայ-
„ ռութենէ ձերմէ զներողամտութիւն լիովին։

„ Մատրաս անուն թղթաբերնաւս եկանէ ասսի ի Լոնդոն.
„ փութամ համառօտիւ աւետել Գերապայծառութեան ձե-
„ ռում, զի օգնականութեամբն Աստուծոյ սկիզբն արարեալ
„ եմք ընդ Վերապատուելի Հայր Սարգիս Թէոդորեան վար-
„ դապետի խօսել, խորհրդակցել և աւարտել զգործառնու-
„ թիւնն վեցերորդ հատուածոյ կուակի հանգուցեալ հօր
„ մերոյ. և զկնի սակաւ առուրց յուսամ զլիով կատարումն
„ ծանուցանել ձերումդ Գերապայծառութեան, զոր ի ձեռն
„ Հայր Սարգիս վարդապետին ունի աւարտել. որ արդարև
„ ապացեալ Վերապատուելի Հայրն մեր ոչ իրրև ասնելոց,
„ այլ և իրրև մեր ամենեցուն հայր և միանգամայն հաւա-
„ տարիմ բարեկամ ասնն Մուրատեան է և կոչեցաւ յինէն և
„ ի մէնջ։

„ Աղեքսանդր որդին իմ քաջառողջ է և զարգանայ ձե-
„ ռովդ արժանաւոր ազօթիւք, և այս փութալի կատար-
„ ման առաջին ուսանող հայկական լեզուի յուսամ ինքն լի-
„ նել ի սոյն զպրոցի, և զայրբենարանն Հայրութիւն ձեր լցի
„ նուիրող նմա։

„ Պատէթի ընդհանուր պատմութիւնն որ կանխաւ խընդ-
„ բեալ եմ ի ձեռն Վ. Հ. Սարգիս վարդապետին՝ ապա-
„ զրել ի յիշատակ հանգուցեալ հօր իմոյ, յուսամ թէ մինչև
„ ցարդ պատրաստ է ի մամուլ ածել, և զծախսն ապարդու-

„ թեան նորին ունիմ անյապաղ առաջին պատեհութեամբն
„ հասուցանել ձեզ ։

„ Տիկին մայրն իմ առողջ է և ծերացեալ . մատուցանէ
„ ջիռնարհական աջահամբոյր իւր ձերումդ Գերապայծա-
„ ռութեան, և մաղթէ զաղօթս ։

„ Մնամ

„ Ձերումդ Արհիպապառուշ Հան

„ Ի Մարաս . 9 Մարտի 1827 .

„ Յոյժ խոնարհ ծառայ

„ ԵՂԻԱՐԴ Ս. ՄՈՒՐԱՏԵԱՆ . „

Ի վերայ այսր ամենայնի տեսաւ յայտնապէս թէ որպի-սի՛ էին գնացք և գործք Ժառանգաց և կտակակատարաց բարերարին ընդ գործակալի միաբանութեանն ։ Զի նախ՝ երկու եղբարքն ի միասին Եղուարդ և Յովհաննէս , յետ պատրաստելոյ և յատակ օրինակելոյ գաշնագրին և մուրհակի լուսի ազատութեան նոցա , կամին և առաջարկեն Հայր Սարգսի ձեռամբ Պ. Լազարովչի , զի պատրաստեսցի և այլ միւս եւս հաշիւ ի կրկին օրինակս՝ հաստատեալ յերկուց կողմանց , և կշիռ հաշուին այնորիկ փոքր ինչ առաւել լիցի քան զ150,000 հուն . քանզի կամին հանել ի վերջոյ յաւելեալ 33,323 հունէն՝ 15,000 հուն , վասն ողորմութեան Մարտասի աղքատաց , զոր արդէն միանգամ հանեալ էին անտի , և 5000 հուն , վասն ծախուց ճանապարհի երկուց գործակալաց միաբանութեան ի 1817 ամէն մինչև ցամն 1820 , և այլ քանի մի հազար հուն՝ վասն ծախուց ճանապարհի արդեօք Հ. Սարգսի Թէոդորեան՝ այլովքն հանդերձ . . . .

Զայս կամն և զառաջարկութիւնն նոցա չհաւանի Հայր Սարգիս կատարել , հակառակ արդարութեան , ընդդէմ իրաւանց աղքատաց ազգին իւրոյ , և անպատշաճ իւրում պաշտաման համարելով զայն ։

Ապա երէց եղբայրն Պ. Եդուարդ, որ միայն ի ներկայ խառութենէ ընդհանրական փաստաբանին երկնչէր և դողայր, Ջանայ յամենայն կողմանց, յօտարաց և յընտանեաց իւրոց կողոպտել և յափշտակել ինչ. և թէպէտ հաւանի առ երեսս ընդ բանաւոր առաջարկութիւն եղբօր իւրոյ Պարոն Յովհաննու՝ հաստատանել զբովանդակ դրամագլուխ հրատարակին, առ ի վաւեր առնել զդաշնագրութիւն և զաւարտումն գործոյն, սակայն ի ծածուկ յուսայ և Ջանայ միջնորդութեամբ Պ. Պօղոսի Լազարովիչ հաւանեցուցանել զՀայր Սարգիս՝ զի անցուցէ առ ինքն զգ ի վերջոյ յաւելեալ մասն արծաթոյն, 33,323 հուն, դաղտ յեղբօրէն, և գրեսցէ ի դաշնագրի անդ և ի մուրհակի ընդունելութեան թէ ընկալեալ իցէ ինքն զբոլոր գումարն. և ինքն Պ. Եդուարդ փոխարինեսցէ նոցա իւրաքանչիւր առանձինն պարգեւս ինչ։

Որում առնէ պատասխանի նախ Պ. Լազարովիչ, թէ չկարծէ ինքն զի զայնպիսի գործ յանձն առնուցու Հայր Սարգիս թէոդորեան, և ապա հաղորդէ նա զայն Հ. Սարգսի։ Իսկ նա անդէն ն. անդ հրաժարեալ ի բաց մերժէ զխորհուրդն ասելով թէ „Քաւ լիցի ինձ զայնպիսի անարգ և կրկին անիրաւ գործ „յանձին ունել. անարգ ասեմ, հայեցեալ ի գործ արքայական „պաշտաման իմոյ, յոր մնանէ չարաշահութիւն և վատթար „անձնասիրութիւն. և գործ կրկին անիրաւ, հայեցեալ յի„բաւունս որք և աղքատ մանկանց ազգիս, և եղբօր նորա. „զի եթէ կարող են նոքա հաստատանել զբովանդակ հրատակն „ողորմութեան, ընդէ՞ր, ասէ, զրկիցին որք և աղքատ ման„կունք ի մասնէ ժառանգութեան իւրեանց. և եթէ չեն նոքա „կարող հաստատանել, ընդէ՞ր զրկիցի եղբայր նորա ի մաս„նակցութենէ անտի, նա՝ որ առաւել պէտս ունի արծաթոյ, „ունելով աւելի զաւակս քան զնա, որ մի եւեթ ունի։ ,,

Իբրեւ ի դերեւ ելանէ Պ. Եդուարդ ի անտի յուսոյն և յընդունայն Ջանից, և չկարէ այնուհետեւ նուազեցուցանել զմիանգամայն խոստացեալ և զորոշեալ գումար արծաթոյ հրատակին, — քանզի մուծեալ և նշանակեալ լինի այն արդէն ի դաշնագրին և ի մուրհակի ընդունելութեան, — մնայ

միայն հաստատել զնոսին ի մեր առաջս. միանգամայն և ակն ածէ յեղբօրէ իւրմէ ի Պ. Յովհաննէ զի մի՛ խնայեալ նորա զներդաւոր խորհուրդ իւր՝ զժդմելոյն ընդ նմա. Չանոյ ազատել դոնէ ի պարտուց անտի խոստման իւրոյ որ առ. Պարոն Լազարովիչ՝ վասն աշխատութեան նորա ի գործ միջնորդութեանն, միանգամայն և ինչ մի կորզել անտի հանելով ի գումարէ անտի արծաթոյ հրիտակին։ Վասն որոյ կոչէ զՀայր Սարգիս առանձին, և առաջարկէ նմա զայն այսպէս.

„ Որովհետև որոշեալ էր, զառաջինն տալ միայն 125,000
„ հուն վասն հրիտակին ողորմութեան, խոստանամ տալ
„ Պ. Լազարովչի 10,000 հուն վասն աշխատութեան նորա
„ ի գործ միջնորդութեան և ի դաղտիարել զգրուածն, և
„ այլն. բայց քանզի յետոյ որոշեցաւ հաստատել զբոլոր
„ գումար գրամագլխոյն, վասն որոյ տացի նմա այն յարծա-
„ թոյ անտի հրիտակին ողորմութեան։ „

Կամեցեալ Հ. Սարգսի որչափ հնարաւոր և ի կարի իւրում էր՝ խաղաղութեամբ, քաղցրութեամբ և դիջմամբ վարել. միանգամայն և գիտելով յառաջագոյն դժխտաւորութիւն Պ. Լազարովչի, թէ չկամի նա զարծաթն զայն սեփականել, այլ վասն օգտի ազգին ծախել ի տպագրութիւն կարեւոր գրենոյ, հաւանի ընդ առաջարկութիւն Պարոն Եդուարդայ Մուրատի, բայց այսու պայմանաւ զի հաստատեցին կտակագրաւորքն միանգամայն ի մուրհակի անդ ընդունելութեան որ ի Պ. Լազարովչէ, թէ ըստ խոստման և ըստ հաճութեան հաւանութեան իւրեանց հանաւ այն գումար արծաթոյ և տուաւ նմա վասն աշխատութեան նորա։

Հաւանի Պ. Եդուարդ, և խոստանայ հաւանեցուցանել և զեղբայր իւր. և հանդիպեալ Պ. Լազարովչի ասէ ցնա.
„ Ահա հաւանեցուցի զՀ. Սարգիս հաստատել քեզ զխոս-
„ տացեալն յինէն 10,000 հուն. բայց պարտ է քեզ զար-
„ ձուցանել ինձ ի ծածուկ զկէս նորին, զ5000 հուն։ „
Թէպէտև Պ. Լազարովիչ ասէ ցնա բերանով թէ բարի է, այլ ի միտս իւր չհաճի ընդ այն. վասն զի կամի իմն ի քաջէ Մուրատեանց գտանել զարծաթն, որպէս զի ըստ հաճոյից իւրոց

անծրինեցէ զայն ապա, ասել կամ չասել զայն միտրանու թեան։

Այլ և յուսայր Պ. Եդուարդ զի ի հաստուցանել իւրում Հ. Սարգսի զարծաթ հրիտակին ընդ ժամանակս ժամանակս՝ ըստ առանձին և մասնաւորեան դաշինն, կերիցէ և անտի, — որպէս և առնէ ապա և միասի իրաւանց ազգաստաց ազգին, և որպէս տեսցի ի տեղոջ իւրում ըստ կարգի պատմութեանս, — և վասն այնորիկ լուէ նա ի ժամուն, իբրեւ հաստատելով ընդ որոշումն, և փութացուցանէ զկատարումն գործոյն, ստիպեալ յանելիւոյթ ձեռանէն Աստուծոյ՝ որ կամէր պաշտպանել և յապահովել զկրաւանս ազգաստաց իւրոց ըստ ժամանակին։

Զհանգամանս իրաց հրիտակին և գյաջող տրամադրութիւն նորին ծանուցանէ յառաջագոյն միտրանութեան իւրում ի Վենետիկ գրով՝ օրինակ զայս։

« Աստուածապատիւ և Գերապայծառ Տեառն մերոյ Սուքիասայ Արքեպիսկոպոսի և ընդհանրական Արքայի ծնրադրական աջահամբոյր։

« Զգրեալսն յԱրհիապատիւ հօրէդ ի 1 և ի 22 օգոստոսի անցելոյ՝ ընկալայ յ13 յունվարի ասլուոյս, որով լուեալ զքաջառողջ վիճակէ կենաց և զգեղեցիկ յառաջադիմութենէ Աստուածապահ ուխտս՝ ուրախ եղէ յոյժ։

« Յայս նուագ յապաղեցի զգրութիւնս, քանզի կամէի միանգամայն աւետարանել Արհիապատիւ հօրդ զյանկարի կատարումն բարեպաշտական կամաց հանգուցեալ Աղա Սամուէլ Մկրտիչ Մուրատի։ Քանզի որպէս պատուէր ընկալայ ի ձէնջ՝ ի տոյգ օգուտ մեր և ազգիս պարապիլ, ոչ երբէք անփոյթ արարի զձերումն խրատս, այլ ջանացայ յամենայնի որչափ մարթ էր և պատշաճ իսկ իմում ատիճանի և պաշտամանս՝ խաղաղութեամբ և իրաւախոհութեամբ զիրսն վճարել, մանաւանդ իբրեւ տեսի թէ ամենայն ակնկալութիւնք օգնականութեան որ ամենայն ոստիք՝ ի գերեւ ելին, և թէ ի սպառ

լքեալ ձեռնթափ եղեւ հասարակութիւնս ի ձեռնարկէ անտի իւրոյ և ասոի վտանգ կորստեան իրաւանց որբոց և աղքատաց ազգիս մերձ ի վերայ կայր, որպէս և նախընթաց թղթովս ծանուցի հասարակութեանս . . . ծանուցից և յաջորդ թղթովս զաւարտումն բանին, հանդերձ ամենայն հանգամանաւք . . . .

« Ի Մասրաս . 9 Մարտի 1827 .

« Ներսես ծառայ

« Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈՐԻՐԵԱՆ . »

ԳԼՈՒԽ ԺԱ.

Դժուարութիւնք յօրինուածոյ դաշնագրին իրաւախոհութեան ի կողմանէ Մուրատեանց. — Այլ և այլ հնարք ճոգս ի խափանել զիրսն. — Օրինակ դաշնագրին իրաւախոհութեան. — Մուրնակ ազատութեան. — Հաշուեգիր հրիտակին. — Մուերմակաւ դաշնագիր. — Պայմանաւոր գիր ընդունելոյ։

Որպէս վերագոյն ասացաք, յետ բազում փոփոխութեանց և կրկին գրութեան, ի վախճանի պատրաստին դաշնագիրն իրաւախոհութեան, և մուրհակքն ընդունելութեան արծաթոյ և ազատութեան Մուրատեանց. մնայ միայն օր և ժամ ամենանել ի հաստատանել զարծաթ հրիտակին, և ի հաստատել զգրուածն յերկուց կողմանց առաջի վկայից։

Ի 27 մարտի 1827, ժողովին ի գործատուն Մուրատեանց ի Մատրաս երեքին կատակատարքն, Անանա տիկին, և որդիք նորա Պարոնայք Եդուարդ և Յովհաննէս Մուրատեանք, և գործակալն Մխիթարեան միաբանութեան Հայր Սարգիս Թէոդորեան, և երեք վկայքն, Պարոնայք Յովհաննէս Շէհրիմեան, Առուեստատուր Յարութիւն Կարապետ և Պօղոս Լազարովիչ։

Բայց յառաջ քան զհաստատումն արծաթոյն՝ որ ի մուրհակս վճառական ընկերութեան, քան և զհաստատութիւն գրուածոցն, առաջարկեն Պ. Եդուարդ և Յովհաննէս Մուրատեանք Հ. Սարգսի Թէոդորեան թէ կամին նորա և այլ առանձին դաշնագիր մի հաստատել իմէջ նորա և իրենց, զոր և անուանեն դաշն մուերմական, և որոյ նպատակ և պայման այս լինի։ դի ի միջոցի տարւոյ մոյ չվաճառեցէ Հ. Սարգիս

Թէոդորեան դյանձնեալ մուրհակն վաճառական ընկերութեան որպէս զի մի՛ արար ինչ համբաւոյ և նուազութիւն վարկի տանն Մուրատեանց ծնանիցի անտի. այլ ընդ ժամանակս ժամանակս, յիւրաքանչիւր նուագի հատուցին նոքա նմա 100,000 ռուբլի պատրաստ դրամ կամ փոխանակագիր. և փոխանակ նորին դարձուցէ նա նոցա նոյնչափ արժողութեամբ մուրհակ վաճառական ընկերութեան, մինչև աւարտեցի բոլանդակն ի միջոցի տարւոյ միոյ. և եթէ չկարացին հատուցանել նմա զբոլանդակն յայն միջոց ժամանակի, կարող լիցի այնուհետեւ Հ. Սարգիս Թէոդորեան վաճառել այլոց զմնացեալ մուրհակս վաճառական ընկերութեան Անգղիացւոց. վասն այնորիկ կամին նոքա զի ի միաձայնութիւն իւրեանց՝ ծրարեցին մուրհակքն այնոքիկ ի պահարանի միում և կնքեցին կնքով իւրեանց և կնքովն Հ. Սարգսի. և յորժամ պիտոյ լիցի հանել անտի մուրհակ մի ի հատուցումն, առաջի երկուց կողմանց բացցի պահարանն և առաջի նոցա վերատին նոքին կնքովք կնքեցի, և պահեցի առ Հայր Սարգսի Թէոդորեան ի բնակարանի նորա։

Թէպէտ և իմանայ Հ. Սարգիս զգիտաւորութիւն Մուրատեանց, այլ հաւանի կամաց նոցա ի ժամուն, գիտելով չափ՝ թէ քանի՛ զգուշութեան պէտք էին նմա ի վարել ընդ նոսա։ Կամին եւս, զի դումարն այն արծաթոյ, 11,000 լիրայ ստերլին, զոր ամսաք յառաջ անցուցեալ էին ի Լոնդոն ի վերայ Ռաֆայէլեանց, և զորմէ վերագոյն յիշեցաք, անցուցի ի հաշիւս հրիտակին ողորմութեան, և Հ. Սարգիս տացէ նոցա փոխանակագիր ի վերայ Ռաֆայէլեանց, զի հատուցին նոքա, զարծաթն զայն Մխիթարեան միաբանութեան ի Վենետիկ։

Հաւանի Հ. Սարգիս և այնմ կամաց նոցա, բայց այսու պայմանաւ՝ զի ընկալցի ի նոցանէ և զայն 11,000 լիրայ ստերլին և պահեցէ ի ձեռին իւրում, մինչև լուիցէ ի միաբանութենէ իւրմէ զանխափան հատուցումն արծաթոյն, և յայնժամ դարձուցէ նոցա զմուրհակն, կալեալ ի ձեռին իւրում զարժէս նորին։ Հաւանին և կտակագրաւորքն այնմ պայմանի զորոշակի միաբանութեանն, և սկսանին ինքին ժամու յորի-

նել և պատրաստել զմեբմական դաշնագիրն, և զգիր պայմանին։

Եւ մինչդեռ յայն պատաղին նոքա, Պ. Եդուարդ ցուցանէ հարեւանցի իմն Հ. Սարգսի զմուրհակս վաճառական ընկերութեանն, զոր իբրեւ հատուցումն հրիտակի ողորմութեան յանձնելոց էին նմա. և ծրարեալ զայնոսիկ հապճեպով կնքէ կնքովն իւրեանց և դնէ ի վերայ գրասեղանոյն, և մնայ զի գիցէ և Հ. Սարգիս զկնիք իւր ի վերայ պահարանին, և ապա պահեսցէ։

Պ. Պօղոս Լազարովիչ, որ պարապի յայնժամ յօրինակել զգիր պայմանին, ազդ առնէ Հ. Սարգսի լռելեայն՝ թէ մուրհակքն չեն ստորագրեալք ի Մուրատեանց։ Ասէ ցնա Հայր Սարգիս. «Գիտեմ և ես, լուռ լեր, մինչեւ առարտեցի ըստ «կամաց իմոց գիր պայմանին զոր գաղափարեա. և զորմէ «չառնեն դոքա ինչ փոյթ, շտապեալք կարծեցեալ խարէ-«ութեամբ իւրեանց։»

Իբրեւ առարտի գրուածն այն, և յերկուց կողմանց լինի ընդունելի, յայնժամ ասէ ցնոսա Հ. Սարգիս. «Պարտ է այժմ «կատարումն տալ իրին կարգաւ և ըստ օրինի. վասն որոյ «կամիմ վերատին ակնարկել և քննել զմուրհակսն վաճա-«ռական ընկերութեան։»

Ասէ ցնա Պ. Եդուարդ Մուրատ. «Արդէն ցուցի ձեզ զայնս «ծրարեալ ի պահարանի՝ կնքեցի կնքով մերով առաջի ձեր. «ապա չմնայ այլ ինչ՝ բայց եթէ և կնքովն ձերով կնքել և «յանձնել ձեզ՝ ընդ հաստատել բովանդակ գրուածոցն։»

Ասէ ցնա Հ. Սարգիս. «Եւ զի՞նչ լինիցի եթէ վերատին «ակնարկեցցի յայն. զի գործառնութիւնս այս մեծ է, ասէ, «և կարի իմն զգուշութեան պէտք են։» Յայնժամ հարկադրի նա բանալ զպահարանն և ցուցանել նմա վերատին զմուրհակսն։

Առեալ Հ. Սարգսի ի ձեռս և քննեալ նախ զթիւս մուրհակացն և զգումար արծաթոյն, գտանէ զայն ուղիղ, ապա որոնէ ի սորեւ մուրհակացն և չգտանէ անդ ստորագրութիւն անուանց Եդուարդայ և Յովհաննու Մուրատեանց։ Ասէ

ցնոսա . “ Պարոնայք , մեռացեալ է՛ք սորագրել զսնեան “ ձեր իսորեւ մերհակացս ։ ” Ասեն . “ Սխալիս զու , ոհա “ սորագրութիւնք մեր յերկուս և յերիս տեղիս ինոսին . ” և ցուցանեն նմա զսորագրութիւն իւրեանց վասն ընդունելոյ ի համարակալէն վաճառական ընկերութեան զվաշխս մերհակացն ։

Ասէ ցնոսա Հ. Սարգիս . “ Այդ սորագրութիւնք ձեր են “ վասն ընդունելութեան վաշխից միայն , և ոչ վասն այլ ինչ “ վախճանի . այլ պարտ է ձեզ , ասէ , սորագրել անդ ջան- “ ուանս ձեր վասն նպատակի գործոյս՝ իբրեւ ի հատու- “ ցումն հրիտակի ողորմութեան թողլոյ ի հանդուցելոյ բա- “ ներարէն ։ ”

Յայնժամ ակնարկեալ երկուց եղբարց առ միմեանս՝ խօսին լռելեայն՝ թէ չկարացին թակարդել զՀ. Սարգիս . և ապա ասեն ցնա . “ Մեք իբրեւ առանդ կամիմք յանձնել քեզ զմերհակս վաճառական ընկերութեան , և ոչ իբրեւ ի հատու- “ ցումն արծաթոյ հրիտակին զոր հատուցուք ընդ ժամանա- “ նակս ժամանակս , ըստ առանձին և մտերմական դաշնադ- “ րութեանն . ուստի չէ հարկ , ասեն , զանուանս մեր սոռ- “ բագրել ի նոսա . մանաւանդ թէ և վտանգ է մեզ զայն “ առնել , եթէ անկանիցին ի ձեռս այլոց ։ ”

Ասէ ցնոսա Հ. Սարգիս . “ Յամենայնի հակառակութիւն “ խորհրդոց , բանից և գործոց միանգամայն տեսանեմ ես “ անդանօր ։ ” Եւ յիրաւի . քանզի բացեալ նախ զընդհա- նուր դաշնագիրն և զմերհակն ընդունելութեան արծաթոյ և ազատութեան Մուրատեանց՝ ընթեռնու յականջս նոցա զպայ- մանն որք ի նոսին , այսինքն զիրական և զպատրաստ դրա- մով հատուցումն հրիտակին . և ապա ասէ ցնոսա .

“ Զիարդ կարացից ես հաստատել ձեռամբ իմով զգրուածս “ զայսոսիկ և յանձնել ձեզ՝ մինչդեռ պայմանքն որք ի սոսին “ չեւ են առեալ զկատարումն արդեամբք . և զինչ առաւել “ արժէս ունիցին մերհակքն վաճառական ընկերութեան “ յանձնեալք ինձ , առանց սորագրութեան անուանց ձե- “ րոց՝ քան զպաթուղթ մի առօրեայ , իբրեւ զպաթուղթս

«այր աւուրս։ Կարծիցէ՞ք դուք, ասէ, թէ չունիմ ես
«բնաւ ծանօթութիւն այսպիսի պարդ և յայտնի իրաց։ . . .
«Եւ եթէ Մխիթարեան միաբանութիւնն յայսչափ հեռաւո-
«րութեան և յօտար պետութեան, առանց ինչ ապահովու-
«թեան իւրոյ՝ պարտապան զինքն կացուցէ գրով ընդունե-
«լութեան արծաթոյ հրիտակին, և ազատ զձեզ արասցէ յա-
«մենայն պահանջմանց գրով ազատութեան, միթէ գործս
«այս չիցէ՞ նմա վտանգաւոր։ . . .

«Իսկ դուք որ ասա էք, և արծաթ հրիտակին մօտ առ ձեզ
«և ի պահպանութեան ձերում՝ իսկ է, զատորագրութիւն
«անուանց ձերոց անհարկ և վտանգաւոր իսկ ձեզ համարիք.
«տեսանէք զհակառակութիւն խորհրդոց, բանից և գործոց
«ձերոց։ Թողից ասել զզեղծանելդ ձեր, ասէ, բարեմտու-
«թեամբ և կարի իմն կարեկցութեամբ իմով առ ձեզ։»

Զայս և առաւել քան զայն խօսի անդ համարձակութեամբ Հ. Սարգիս, և յայս կնքէ զբանս իւր.

«Եթէ իրրեւ առանց կամիք, ասէ, յանձնել ինձ զմուրհակս ընկերութեան, մինչեւ արասջիք ընդ ժամանակս ժամանակս զհատուցումն հրիտակին, ապա աւելորդ լինիցի հաստատութիւնք ընդհանուր դաշնադրին և մուրհակի ընդունելութեան արծաթոյ և ազատութեան կատարեալ բացդ. այլ շատ լիցին հաստատութիւնք առանձին կամ մասնաւոր դաշինն, և գրոց պայմանին որ վասն 11,000 լիրայից։»

Եւ ի չբաւականանալ նոցա այնու՝ ասէ ցնոսա Հ. Սարգիս. «Ապա ուրեմն հաստատեցէք զմուրհակն ընկերութեան։» Եւ յասել նոցա թէ «Զկարեմք մեք առնել զայդ;» ասէ ցնոսա Հ. Սարգիս. «Զկարեմ և ես զկամս ձեր կատարել։» Եւ զայս ասացեալ՝ առնու զամենայն գրուածն և եդանէ ի գործատանէ անտի նոցա, ասելով. «Փառեալ եմ ես «ի վերատաց ձերոց։»

Վրիպեալ Պարոնայցն Եղուարդայ և Յովհաննու ի հնարից անտի իւրեանց, և ընթերցանեալ ի ճշմարտութենէ բանից Հայր Սարգսի, կրաւեալք իմն ի խորհուրդ մտանելն առանձին. և

յետ միոյ ժամու եկեալ Պ. Եդուարդայ գնայ խնդրել զՀայր Սարգիս, և գտեալ զնա ի սենեկին Պ. Պօղոսի Լազարովիչ, ասէ ցնա. «Այժմ հաւանեցար սորագրել զանուանս մեր «ի մուրհակս անդ. ուստի հրամայեցէք գալ վերատին ի գոր- «ծատուն մեր՝ աւարտել զգործառնութիւն հրիտակին՝ հաս- «տատելով զբոլոր զրուածսն։» Զկամի Հ. Սարգիս գնալ անդր ասելով թէ տարնժամեալ է օրն, և ինքն վատառկեալ, և կամի դառնալ ի բնակութիւն իւր և հանգչել։

Թէպէտ և յորդորէ զնա Պ. Եդուարդ Մուրատ աւարտել զրանն ինքին աւուր, այլ նա չառնու յանձն, այլ թողու զայն առ վաղիւն։ Եւ այնպէս մինչդեռ կամի նա դառնալ ի բնակութիւն իւր ի տուն այգւոյ Աննայի տիկնոջ Մուրատեան, հրաւիրէ զնա Պ. Եդուարդ գնալ ճաշել ընդ նմա հանդերձ Պ. Պօղոսիւ Լազարովիչ։ Ընդունի նա զհրաւէրն. և ի ճաշել անդ ի միասին՝ ընկեն զինի ոսկի բաժակաւ ի յաջողութիւն աւարտման գործոյն՝ որ լինելոց էր ի վաղիւ անդր, և որում մնայր Պ. Եդուարդ մեծաւ ցանկութեամբ և անհամբերութեամբ։

Զվերոյիշեալ ոսկի բաժակն տայ ապա Պ. Եդուարդ ի վաճառ ընդ այլ արծաթեղինաց իւրոց. և գնեալ զայն Պարոն Աբրահամ Աղանուրի՝ տապէ յընծայ Գերապայծառ Սուքիասայ Սոմալեան ի վանս։

Ապա ի վաղիւ անդր ի 28 մարտի, վաղ քաջ ընդ առաւօտն, գրէ Պ. Եդուարդ տոմակ մի առ Պ. Պօղոս Լազարովիչ, յորում խնդրէ յորդորել զՀ. Սարգիս և փութացուցանել զնա ինչանել ի քաղաքն ի գործատուն իւրեանց հանդերձ գրուածովքն՝ յաւարտել զրան հրիտակին և ազատել զնա ի հոգոց անտի։

Ի 11 ժամու առաւօտուն գնայ Հ. Սարգիս ի քաղաքն ի գործատուն Մուրատեանց, և գտանէ անդ զերկոսին եղբարսն զԵդուարդ և զՅովհաննէս Մուրատ և զմայր նոցա զԱննա տիկին։ Ապա զան հետ զհետէ և երեքին վկայքն, որոց յանդիման սորագրեն Եդուարդ և Յովհաննէս զանուանս իւրեանց ի մուրհակն վաճառական ընկերութեան, և ծրա-

բեալ զնոսին ի պահարանի՝ կնքեն կրկին կնքովք՝ իւրեանցն և Հ. Սարգսի՝ըստ առաջին կամաց նոցա և հաւանութեան Հ. Սարգսի։

Յանձնեն նախ Պարոնայքն Եդուարդ և Յովհաննէս զծրարեալ և զկնքեալ մուրհակն վաճառական ընկերութեան ի ձեռս Հ. Սարգսի, և նա հաստատէ ձեռագրով և կնքով իւրով զընդհանուր և զառանձին դաշնադիրսն, և զմուրհակս ընդունելութեան արծաթոյ և ազատութեան նոցա հանդերձ գրով գործակալութեան իւրոյ և այլ հաւաստեաք որ ի միաբանութենէն իւրմէ. և նոքա երեքին կուսակալատարքն, Աննա տիկին և որդիք նորա Պարոնայք Եդուարդ և Յովհաննէս Մուրատեանք, զերկրորդ օրինակ գրուածոցն այնոցիկ հաստատեն ձեռագրով և կնքով իւրեանց և յանձնեն զայն ի ձեռս Հ. Սարգսի Թէոդորեան։

Հաստատեն զերկոսին օրինակս գրուածոցն և երեք վկայքն ստորագրութեամբք իւրեանց, և ապա մեկնին անտի յիւրաքանչիւր տեղիս։

Թէպէտ և պատշաճ և պարտ իսկ էր Հ. Սարգսի Թէոդորեան յետ աւարտելոյ գործոյն մեծի առնել անդ մաղթանս ի Տեառնէ, և հանգիստ յաւիտենական կարդալ վասն հոգւոյ հանգուցեալ Բարերարին Աղա Սամուէլի Մուրատայ, և տալ զօրհնութիւն ժառանգաց նորին հանդերձ գրկախառն համբուրիւ, այլ դժբախտութեամբ շփոթեալ նորա յանպատահ գնացից նոցին՝ զանց առնէ զպատշաճական գործոնն։

Ապա պահանջեն Պարոնայքն Եդուարդ և Յովհաննէս ի Հ. Սարգսէ Թէոդորեան զի երեքին գրուածքն, այսինքն ընդհանուր դաշնադիրն, մուրհակն ազատութեան, և հաշուէգիր հրիտակին ազատութեան, տպագրեացին ի վանս սրբոյն Ղազարու, և հաստատեացին յԱբրայէն և ի համօրէն վարդապետաց և ի քահանայից Մխիթարեան միաբանութեան։ Եւ Հ. Սարգիս առնէ ըստ ըղձից նոցա։ Եւ այս օրինակք են գրուածոցն.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՇՆԱԳԻՐ ԻՐԱՒԱԽՈՀՈՒԹԵԱՆ

*“ Եւ Հայր Սարգիս Թէոդորեան Վարդապետ և անդամ
“ Միխիթարեան միաբանութեան որ ի Վենետիկ, ունելով
“ ի ձեռին իմում օրինաւոր և լիուլի կարողութիւն ի բոլոր
“ Միաբանութենէ իմմէ, և իբրեւ գործակալ և փոխանորդ
“ Միաբանութեանս գոլով ասա ի Մատրաս, խօսեցայ և խոր-
“ հրդակցեցայ ընդ Տիկնոջ Աննայ Սամուէլի Մուրատեան
“ և ընդ Պարոնաց Հեդվարդայ և Յովհաննու Սամուէլի
“ Մուրատեան ընդ օրինաւոր ժառանգաց և կտակակատարաց
“ հանգուցեալ Աղա Սամուէլ Մկրտիչ Մուրատի, առ ի կա-
“ տարումն տալ վերջին կամաց հանգուցելոյն որ յաղագս
“ կառուցման դպրատան վանն որք և աղքատ մանկանց
“ Ազգիս Հայոց։ Եւ յետ խօսելոյ և խորհրդակցելոյ, այսօր
“ ինքնայօժար և ազատ կամաք, օրինաւոր և բացարձակ
“ կարողութեամբս քննեցի և ուսումնասիրեցի ընդ նախասացեալ
“ ժառանգաց և կտակակատարաց զամենայն հաշիւս զրանս
“ և զգործս որք վերաբերին վերոյիշեալ հատուածոյ կտակի
“ հանգուցեալ Աղայ Սամուէլ Մկրտիչ Մուրատի։

“ Վասն որոյ նախ՝ այսու յայտ առնեմ ամենեցուն որք
“ տեսանիցեն՝ թէ ես Հայր Սարգիս Թէոդորեան Վարդա-
“ պետ, գործակալ և փոխանորդ Միխիթարեան միաբանու-
“ թեանն որ ի Վենետիկ, քննեցի և ստուգեցի զամենայն
“ հաշիւս որք վերաբերին վերոյիշեալ հատուածոյ կտակի հան-
“ գուցեալ Աղայ Սամուէլ Մկրտիչ Մուրատի, և սովաւ խոս-
“ տովանիմ և վկայեմ զի բովանդակ գումար դրամագլխոյ
“ թողլոյ ի հանգուցելոյն վասն կառուցման դպրատանն որք
“ և աղքատ մանկանց Ազգիս Հայոց, է մի հարիւր ութսուն
“ և երեք հազար երկք հարիւր քսան երկք 183,323 Ասողի
“ հուն, որպէս ցուցանէ հաշուապիրն, զոր յաւելցուք զկնիկ
“ իսմա։

“ Երկրորդ, թէպէտ և հանգուցեալ Աղա Սամուէլ Մկր-

“ տիչ Մուրատեան ի կտակի իւրում կամի զի միջնորդու-
“ թեամբ Մխիթարեան միաբանութեան որ ի Վենետիկ կա-
“ ռուցի դպրատունն, սակայն բանք կտակի նորա չեն որոշ
“ և ճիշդ, այսինքն դրամական ոչ ասէ՝ թէ դրամն զոր
“ թողեալ է նա վասն կառուցման դպրատան յանձնեցի
“ Մխիթարեան միաբանութեան. բայց ես Հայր Սարգիս
“ Թէոդորեան Վարդապետս և անդամ Մխիթարեան միա-
“ բանութեան որ ի Վենետիկ, իբրեւ գործակալ և փոխա-
“ նորդ Միաբանութեանս՝ խօսեցայ և խորհրդակցեցայ ընդ
“ Տիկնոջ Աննայ Սամուէլ Մուրատի և Պարոնաց Հեղվարդ
“ և Յովհաննէս Սամուէլ Մուրատի ընդ ժառանգաց և կտա-
“ կակատարաց հանգուցեալ Աղայ Սամուէլ Մկրտիչ Մու-
“ րատի ի վերայ ամենայն առարկայից վերոգրեալ հաստատեալ
“ կտակի հանգուցելոյն, և իբրեւ քաջ խելամուտ առնելով
“ զնոսա ամենայն հանգամանաց և պարագայից իրացն՝ մեր-
“ մաբար խորհուրդ կարեւոր եւս նոցա, վստահանալով
“ ի սէրն մեր որ առ ազգս Հայոց՝ յանձնել միանգամայն
“ Միաբանութեան մերոյ զվերոյիշեալ բովանդակ դրամն
“ դպրատան, և թողուլ զամենայն ինչ մերոյ փոխառու-
“ թեան, սակս ամենայնի որ պատկանի եթէ կառուցման,
“ եթէ կառավարութեան, եթէ խնամակալութեան, եթէ
“ ապահովութեան և եթէ մշտնջենաւոր հաստատութեան
“ դպրատանն և ամենայն կալուածոյ և ստացուածոյ նորա,
“ յամենայնի և ըստ ամենայն մասանց, խոստանալով նոցա
“ հաւատարմութեամբ ի կողմանէ և յանուն բոլոր Միաբա-
“ նութեան իմոյ կառուցանել, կարգել և հաստատել զդպրա-
“ տունն, և ըստ ամենայնի կատարումն տալ վերջին կամաց
“ հանգուցեալ Աղայ Սամուէլ Մկրտիչ Մուրատի։

“ Յոյր սակս վերոյիշեալ ժառանգք և կտակակատարք
“ հանգուցելոյն շարժեալ ի փափաքանաց բարւոյ ազգին մե-
“ րոյ, ի գործ ածելով զընտրողական և զքացարձակ կարո-
“ ղութիւն իւրեանց, մտադիր հաճեցան հաւանեցան ընդ
“ խորհուրդն իմ, և բոլորովին հաւատս ընծայելով յանձնե-

“ ցին զամենայն ինչ Մխիթարեան միաբանութեան իսոյ որ
“ ի Վենետիկ ։

“ Երրորդ, այսու յայտ առնեմ ամենեցուն որ տեսանիցեն
“ թէ ես Հայր Սարգիս Թէոդորեան Վարդապետ, գործակալ
“ և փոխանորդ Մխիթարեան Միաբանութեան որ ի Վենե-
“ տիկ, յետ քննելոյ և ստուգելոյ զամենայն հաշիւս և զրանս
“ վերերորդ հատուածոյ կտակի հանգուցելոյն, և յետ քաջ
“ խորհելոյ և մանրախոյզ կշռադատելոյ զամենայն հանգա-
“ մանս զպարագայս և զկատարումն եղից իրացն, հաճեցայ
“ հաւանեցայ և այսու հաճիմ հաւանիմ ի կողմանէ և յա-
“ նուն բոլոր միաբանութեան իսոյ ընդ հատուցումն լոկ դրա-
“ մագլխոյ թողլոյ ի հանգուցելոյն վասն կառուցման դպրա-
“ տան, իբրեւ ընդ բաւական և կատարեալ հատուցումն,
“ անմարթ և անպատշաճ համարելով պահանջել շահս կամ
“ տոկոսս վասն դրամագլխոյն. և վասն այսորիկ ի կողմանէ
“ և յանուն բոլոր Միաբանութեան իսոյ այսու հրաժարիմ
“ ի պահանջելոյ այժմ և առ յապա զինչ և իցէ շահս կամ
“ տոկոսս վասն դրամագլխոյն, ազատ և զերծ կացուցանե-
“ լով զժառանգս և զկտակակատարս հանգուցեալ Աղայ Սա-
“ մուէլ Մկրտիչ Մուրատի, նոյնպէս զժառանգս և զյաջորդս
“ նոցա ի հատուցմանց անտի ։

“ Չորրորդ, այսու խոստովանիմ և յայտ առնեմ ամենե-
“ ցուն որք տեսանիցեն, թէ ես Հայր Սարգիս Թէոդորեան
“ Վարդապետ գործակալ և փոխանորդ Մխիթարեան միաբա-
“ նութեան որ ի Վենետիկ, ի կողմանէ և յանուն բոլոր Միա-
“ բանութեան իսոյ ընկալայ և ստացայ ի Տիկին Աննա Սամուէլ
“ Մուրատէ և ի Պարոնաց Հեդուարդ և Յովհաննէս Սամուէլ
“ Մուրատէ, յօրինաւոր ժառանգաց և կտակակատարաց
“ հանգուցեալ Աղայ Սամուէլ Մկրտիչ Մուրատի զվերոյ-
“ գրեալ բոլանդակ գումարն դրամագլխոյ դպրատանն, մի
“ հարիւր ութսուն երեք հազար երեք հարիւր քսան երեք,
“ 183, 323, Ասողի հուն, այսու դաշամբ զի առաջին պատե-
“ հութեամբ զբոլոր ընկալեալ գումարն դրամոյ միանգամայն
“ կամ մասն մասն ըստ յաջորդութեան առաքեցից առ Մխի-

“ Թարեան միաբանութիւնն որ ի Վենետիկ, առ ի գնել զեռին
“ ի պէտս դպրատան որբ և աղքատ մանկանց Ազգիս Հայոց,
“ ըստ բացայայտ կամաց և պատուիրանաց հանգուցեալ
“ Աղայ Սամուէլ Մկրտիչ Մուրատի։

“ Հինգերորդ, այսու յայտ առնեմ ամենեցուն որք տեսա-
“ նիցեն, թէ ես Հայր Սարգիս Թէոդորեան Վարդապետ
“ գործակալ և փոխանորդ Մխիթարեան Միաբանութեան
“ որ ի Վենետիկ, խոստանամ ի կողմանէ և յանուն բոլոր
“ Միաբանութեան իմոյ գնել և հաստատել գրովանդակ վե-
“ բոյիշեալ գրամն ի վերայ գեռնոյ ի Գաղղիա կամ Յիտա-
“ լիա, ուր յարմար և յաջողակ ինպատս որբ և աղքատ
“ մանկանց Ազգիս Հայոց համարեացի Մխիթարեան միաբա-
“ նութիւնն որ ի Վենետիկ։

“ Վեցերորդ, այսու յայտ առնեմ ամենեցուն որք տեսա-
“ նիցեն, թէ ես Հայր Սարգիս Թէոդորեան Վարդապետ
“ գործակալ և փոխանորդ Մխիթարեան միաբանութեան որ
“ ի Վենետիկ, խոստանամ ի կողմանէ և յանուն բոլոր Մխի-
“ թարանութեան իմոյ, զի ընդ ստանալ Միաբանութեանս զվե-
“ բոյիշեալ բովանդակ գումար դրամագլխոյ դպրատան կամ
“ զմասն ինչ նորին, վաղվաղակի զեռին գնեսցէ և սկիզբն
“ արասցէ գործադրութեան դպրատանն։

“ Եօթներորդ, այսու յայտ առնեմ ամենեցուն որք տեսա-
“ նիցեն, թէ ես Հայր Սարգիս Թէոդորեան Վարդապետ
“ գործակալ և փոխանորդ Մխիթարեան միաբանութեան որ
“ ի Վենետիկ, խոստանամ ի կողմանէ և յանուն բոլոր
“ Միաբանութեան իմոյ, զի ամենայն կալուածք դպրատանն
“ գնեսցի յանուն ժառանգաց և կուսակալատարաց հանգու-
“ ցեալ Աղայ Սամուէլ Մկրտիչ Մուրատի իբրև բարերարի
“ ազգիս Հայոց, և յանուն Մխիթարեան միաբանութեան որ
“ ի Վենետիկ, իբրև մշտնջենաւոր կառավարչի և խնամակա-
“ լի դպրատանն, որպէս զի մի՛ ոք կարող լիցի յապայն սեպ-
“ հականել կամ օտարացուցանել, ոչ զկալուածս և ոչ զե-
“ կամուտս նոցա յինչ և է ժամանակի և որմէ և իցէ պատ-
“ ճառաւ, ոչ կուսակալատարքն և ոչ ժառանգք նոցա, ոչ

“ Մխիթարեան Միաբանութիւնն և ոչ յաջորդք նոցա, ոչ
“ տարազգիք և ոչ Ազգն մեր գլխովին։

“ Ութերորդ, այսու յայտ առնեմ ամենեցուն որք տեսա-
“ նիցեն, թէ ես Հայր Սարգիս Թէոդորեան Վարդապետ
“ գործակալ և փոխանորդ Մխիթարեան միաբանութեան
“ որ ի Վենետիկ, խոստանամ ի կողմանէ և յանուն բոլոր
“ Միաբանութեան իմոյ, զի թիւ ուսանելի մանկանցն լիցի
“ ըստ չափու տարեկան եկամտից կալուածոյ դպրատանն,
“ այս ինքն այնչափ մանկունք ուսցին՝ որչափ տարեկան
“ եկամուտն կալուածոյ դպրատանն բաւական լիցի տարեկան
“ ծախուց նոցա։

“ Իններորդ, այսու յայտ առնեմ ամենեցուն որք տեսա-
“ նիցեն, թէ ես Հայր Սարգիս Թէոդորեան Վարդապետ
“ գործակալ և փոխանորդ Մխիթարեան միաբանութեան
“ որ ի Վենետիկ, ի կողմանէ և յանուն բոլոր Միաբանու-
“ թեան իմոյ, բոլորովին զերծ և ազատ կացուցանեմ զՏիկին
“ Աննա Սամուէլ Մուրատեան, և զՊարոնայս զՀեգվարդ և
“ զՅովհաննէս Սամուէլ Մուրատեան, զժառանգս և զկտա-
“ կակատարս հանգուցեալ Աղայ Սամուէլ Մկրտիչ Մուրա-
“ տի, նոյնպէս զժառանգս և զյաջորդս նոցա յամենայն
“ ապագայ պատասխանատուութենէ և յամենայն ազգ պա-
“ հանջողութենէ յինչ և է ժամանակի և որոյ և իցէ
“ պատճառաւ, համարելով զայս առարտուն իրաց ընդ մի-
“ մեանս յամենայնի և ըստ ամենայն մասանց իբրեւ լիով
“ կատարումն վերջին կամաց հանգուցեալ Աղայ Սամուէլ
“ Մկրտիչ Մուրատի, որք պարունակին ի վեցերորդ հատ-
“ ուած կտակի իւրում։

“ Տասներորդ, ըստ վերոգրեալ բովանդակ դաշանց և
“ պայմանաց, մեք Աննա Սամուէլ Մուրատեան և Հեգվարդ
“ Յովհաննէս Սամուէլ Մուրատեան, օրինաւոր ժառանգք
“ և կտակակատարք հանգուցեալ Աղա Սամուէլ Մկրտիչ
“ Մուրատի, այսու գրով խոստովանիմք, ընդունիմք, հաս-
“ տատեմք և յայտ առնեմք ամենեցուն որք տեսանիցեն, թէ
“ բովանդակ գործադրութիւն, կարգաւորութիւն, խնամա-

„ կալութիւն, պահպանութիւն և մշանջենաւոր հաստատու-
„ թիւն դպրատանն և ամենայն կալուածոց և ստացուածոց
„ նորա յամենայնի և ըստ ամենայն մասանց պարտի լինել և
„ մնալ ի ձեռս Մխիթարեան Միաբանութեան որ ի Վենետիկ,
„ յորշափ և ուր կայ նոյն Միաբանութիւն, այսու դաշամբ
„ զի արդարապէս ըստ պատշաճի պայմանացս վարեցի Միա-
„ բանութիւնն։

„ Եւ ի հաստատութիւն վերոյգրեալ ամենայն դաշանց և
„ պայմանաց, թէ՛ ես Հայր Սարգիս Թէոդորեան վարդապետ,
„ օրինաւոր գործակալ Մխիթարեան միաբանութեան որ ի Վե-
„ նետիկ, և թէ մեք Անանա Սամուէլ Մուրատեան և Եղուարդ
„ և Յովհաննէս Սամուէլ Մուրատեան, օրինաւոր ժառանգք
„ և կտակակատարք հանգուցեալ Աղա Սամուէլ Մկրտիչ
„ Մուրատի, ի ներկայութեան վկայից ստորագրեմք, և
„ կնքեմք, յանձնեմք միմեանց զդաշնագիրս զայս, այսօր
„ ի քսան և վեցերորդում աւուր ամսոյս մարտի, յամի Տեառն
„ հազար ութ հարիւր քսան և եօթն, ի Վատրաս քաղաքի
„ Հնդկաց։

„ Ստորագրեալ

„ ԱՆԱՆԱՅ ՍԱՄՈՒԷԼ ՄՈՒՐԱՏԵԱՆ

„ ԵԴՈՒԱՐԴ Ս. ՄՈՒՐԱՏԵԱՆ

„ ՅՈՎՀԱՆՆԷՍ Ս. ՄՈՒՐԱՏԵԱՆ

„ Ժառանգք և կտակակատարք

„ Աղա Սամուէլ Մկրտիչ Մուրատի.

ԿՆԻՔ

„ Ստորագրեալ

„ Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈՂՈՐԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ

„ Օրինաւոր և կարգեալ գործակալ Մխիթարեան
„ միաբանութեան որ ի Վենետիկ.

ԿՆԻՔ

„ Վկայեմք զի ստորագրեցին, կնքեցին և յանձնեցին մի-
„ ամանց զգաշնագիրս զոյս ինքնակալութեան մերում.

„ Ստորագրեալ

„ ԿՈՄՍ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՇԷՀՐԻՄԱՆԵԱՆ.
„ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ.
„ Պ. Պ. ՂԱԶԱՐԵԱՆ.

„ Ստորագրեմք և հաստատեմք.

„ ՍՈՒՔԻԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՍՈՄԱԼ.

„ Արքեպիսկոպոս և ընդհանրական Աբբայ Մխիթարեան
„ միաբանութեան սրբոյն Ղազարոս ի Վենետիկ.

„ Հ. ՄԿՐՏԻՉ Վ. ԱԻԳԵՐԵԱՆ.
Արոռակալ.
„ Հ. ՂՈՒԿԱՍ Վ. ԻՆՃԻՃԵԱՆ.
„ Հ. ՄԱՏԹԷՈՍ Վ. ՄԱՂԱՔԵԱՆ.
„ Հ. ՄԱՆՈՒԷԼ Վ. ՋԱԽՋԱԽԵԱՆ.
„ Հ. ՂՈՒԿԱՍ Վ. ՕՂՈՒՎԱՈՒԹԵԱՆ.

„ Հ. ՅԱՐՈՒԹԻՒՆ Վ. ԱԻԳԵՐԵԱՆ.
„ Հ. ԵՂԻԱ Վ. ԹՈՎՄԱՃԱՆԵԱՆ.
„ Հ. ՅԱԿՈՎԲՈՍ Վ. ՃԷԼԱԼԵԱՆ.
„ Հ. ՍՐԱՊԻՈՆ Վ. ՊՈՒՐԻՍԵԱՆ.
„ Հ. ՍՏԵՓԱՆՆՈՍ Վ. ՄՈՒՐԱՏԵԱՆ.
„ Հ. ԱՐՍԷՆ Վ. ԱՆԹԻՄՈՍԵԱՆ.
„ Հ. ՍԱՄՈՒԷԼ Վ. ՍԱՄՍԱՐԵԱՆ.
„ Հ. ՓԵՐՈՎԲԷ Վ. ԱԶՆԱՒՈՐԵԱՆ.
„ Հ. ԱՒԵՏԻՔ Վ. ԱՒԵՏԻՔԵԱՆ.
„ Հ. ԳԷՈՐԳ Վ. ՀԻՒՄԻՒԶԵԱՆ.
„ Հ. ԵԴՈՒԱՐԴ Վ. ՀԻՒՄԻՒԶԵԱՆ.
„ Հ. ԱՂԵՔՍԱՆԴՐ Վ. ՊԷՇԻՔԹԱՇԵԱՆ.
„ Հ. ՌԱՓԱՅԷԼ Վ. ԹՐԵԱՆՑ.
„ Հ. ՊԵՏՐՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ.
„ Հ. ՂԵՒՈՆԴ ԱՇԵԱՆ.
„ Հ. ՊՕՂՈՍ ԹԸԱԽԻԹԵԱՆ.

ԿՆԻՔ

„ *Ի Վենետիկ. ի Վանս սրբոյն Ղազարու. 14 Նոյեմբ.* 1828. „

ՄՈՒՐՀԱԿ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ

„ *Եւ Հայր Սարգիս Թէոդորեան վարդապետ և անդամ*
„ *Մխիթարեան Միաբանութեան որ ի Վենետիկ, գոլով ասա-*
„ *ի Մատրաս, այսու յայտ առնեմ ամենեցուն որոց պատկա-*
„ *նի և որք տեսանիցեն, թէ հանդուցեալ Աղա Սամուէլ*
„ *Մկրտիչ Մուրատեան Հայ վաճառականն Մատրասայ,*
„ *ի կտակի իւրում որ ի քսան և եօթն Մայիսի յամի Տեառն*
„ *հազար ութհարիւր տասն և հինգ, ի մէջ այլ հրամանաց*

“ այլոց պատկանելեաց Թողեալ է հրիտակ մի այսու բա-
“ նիւք. Վեցերորդ, ես իմ հաշուադրքումն, և այլն։ (Տես
“ յէջ 67.)

“ Արդ այս կտակ հրատարակեցաւ յօրինեաց ատի տեղւոյս
“ հաստատուն. և կտակակատարքն միանգամայն և ժա-
“ ռանգք հանգուցեալ Ղազա Սամուէլ Մկրտիչ Մուրատի,
“ Տիկին Աննայ Սամուէլ Մուրատեան, և Պարոնայք Հեդ-
“ վարդ և Յովհաննէս Սամուէլ Մուրատեան, զկնի երկուց
“ ամսոց գրեալ ծանուցին Մխիթարեան Միաբանութեանս
“ որ ի Վենետիկ զվերոյիշեալ հրիտակն և զվերջին կամս
“ հանգուցելոյն, և խնդրեցին առաքել ատա ի Մատրաս զոք
“ ի վարդապետաց Միաբանութեանս, առ ի խորհրդակցիլ
“ ընդ նոսա ի վերայ գործոնեայ միջոցաց, և ընդ հուպ կա-
“ տարել զկամս կտակագրին։ Վասն այսորիկ Մխիթարեան
“ միաբանութիւնս որ ի Վենետիկ առաքեաց անյապաղ եր-
“ կուս ի վարդապետաց իւրոց ատա ի Մատրաս, և որոց մին
“ ես ինքն էի, սակայն ոչ ինչ աւարտեցաւ, սակս չհասակա-
“ նալոյ զմիտս իրերաց. ուստի դարձան յետս ի Վենետիկ
“ գործակալքն, յետ կալոյ նոցա ատա ի Մատրաս իբրեւ ամս
“ երկուս։

“ Ապա յետ չորից ամաց անցելոց իբրեւ կամէր Պարոն
“ Յովհաննէս Սամուէլ Մուրատեան դառնալ ի Հնդիկս,
“ խնդրեաց ի Միաբանութենէս տանել զոք ի մէնջ ընդ իւր
“ ի Մատրաս իբրեւ տաներէց մօր իւրոյ, և միանգամայն
“ միջնորդ կատարումն տալոյ վերջին կամաց հանգուցեալ
“ հօր իւրոյ։ Միաբանութիւնս կատարեալ զխնդրուածս նո-
“ րա, առաքեաց վերատին զիս զՀայր Սարգիս Թէոդորեան
“ վարդապետ ի Մատրաս, հանդերձ լիուլի և բացարձակ
“ կարողութեամբ՝ զի աւարտեցից զրան հրիտակին ընդ կտա-
“ կակատարաց հանգուցելոյն որպէս և զիարդ պատշաճ դա-
“ տեցայց։

“ Վասն որոյ ես Հայր Սարգիս Թէոդորեան վարդապետ և
“ անդամ Մխիթարեան միաբանութեան որ ի Վենետիկ, ու-
“ նելով ի ձեռին իմում օրինաւոր, լիուլի և բացարձակ կա-

“ բողութիւն իբրոյր միաբանութենէ իմմէ, և իբրեւ գործա-
“ կալ և փոխանորդ միաբանութեան, յետ խօսելոյ և
“ խորհրդակցելոյ ընդ կռակակառարաց հանդուցելոյն, և
“ յետ քննելոյ և կշռելոյ զամենայն հանգամանս զպարա-
“ գայս և զվախճան վերջերորդ հատուածոյ կռակի հանդու-
“ ցելոյն և հաշուէմատեանի նորա, այսօր մտադիր, յօժարա-
“ բակամ և բացարձակ ուրախացի ընդ վերոյիշեալ կռակա-
“ կառարաց և ժառանգաց հանդուցեալ Աղա Սամուէլ
“ Մկրտիչ Մուրատի զբովանդակ հաշիւ, զրանս և զգործս
“ որք վերաբերին վերջերորդ հատուածոյ կռակի հանդուցե-
“ լոյն, և ի կողմանէ և յանուն բոլոր միաբանութեան իմոյ
“ ընկալայ և ստացայ ի կռակակառարաց հանդուցելոյն
“ ի տիկին Աննա Սամուէլ Մուրատէ, և ի Պարոնաց Եդուարդ
“ և Յովհաննէս Սամուէլ Մուրատէ զնախատացեալ հրիտակն,
“ այսինքն զգլուխս զրանց որ է մի հարիւր ութսուն և երեք
“ հազար երեք հարիւր քսան և երեք (183,323) ասպրի հուն,
“ թողով և հրաժարելով իպահանջելոյ զինչ և իցէ շահս կամ
“ տոկոսս այժմ և առ յապա, և յանձն առնելով զամենայն
“ ինչ ի վերայ մեր, և խոստանալով վաղվաղակի կատարումն
“ տալ յամենայնի և բաս ամենայն մասանց վերջին կամաց
“ հանդուցեալ Աղա Սամուէլ Մկրտիչ Մուրատի, որք պա-
“ բունակին ի վերջերորդ հատուածս կռակի նորա։

“ Եւ որդ յայտ առնեմ ամենեցուն որոց պատկանի և որք
“ տեսանիցեն, զի զոր ինչ վիճեցամ ընկալայ և ստացայ
“ ի կռակակառարաց և ի ժառանգաց հանդուցեալ Աղա
“ Սամուէլ Մկրտիչ Մուրատի, է անթերի և կատարեալ
“ հատուցումն վերայիշեալ հրիտակին. վասն որոյ յետ այսո-
“ րիկ ոչ ինչ այլ պահանջումն կամ տկնկալութիւն ունիմք
“ և կալցուք ի նախատացեալ կռակակառարաց հանդուցե-
“ լոյն, յինչ և է ժամանակի և որով և իցէ պատճառաւ. և
“ վասն այսորիկ ես Հայր Սարգիս Թէոդորեան վարդապետս,
“ որպէս օրինաւոր կարգեալ գործակալ, այսու գրով ի կող-
“ մանէ և յանուն բոլոր միաբանութեան իմոյ, ի կողմանէ և
“ յանուն յաջորդաց միաբանութեան, զամենեսեան և զիւ-

„ բաքանչիւրան ազատ և զերծ կացուցանեմ այժմ, առ յա-
„ պա և միշտ զտիկին Աննայ Սամուէլ Մուրատեան, և
„ զՊարոնայս Եդուարդ և զՅովհաննէս Սամուէլ Մուրատեան,
„ զժառանգս և զկտակակատարսն հանդուցեալ Աղա Սա-
„ մուէլ Մկրտիչ Մուրատի, նոյնպէս և զկտակակատարս,
„ զժառանգս և զյաջորդս նոցա, յամենայն պատասխանա-
„ տուութենէ, ի նեղութենէ, ի պահանջմանց և ի վիճոյ,
„ յինչ և է ժամանակի և որմէ և իցէ պատճառաւ։

„ Ի վկայութիւն վերոյ գրելոցս, ես Հայր Սարգիս Թէո-
„ դորեան վարդապետս և անդամ Մխիթարեան միաբանու-
„ թեան որ ի Վենետիկ, որպէս գործակալ և փոխանորդ
„ միաբանութեան իմոյ ստորագրեցի և կնքեցի զայս առաջի
„ վկայից։

„ Ի Մատրա ի քաղաքն և վեց աւուր ամսոյս մարտի, յամի
„ Տեառն հազար ութ հարիւր քսան և եօթն։

„ Ստորագրեալ

„ Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ

„ Օրինաւոր և կարգեալ գործակալ
„ Մխիթարեան միաբանութեան
„ որ ի Վենետիկ.

ԿՆԻՔ

„ Վկայեմք, զի ձեռնադրեաց, կնքեաց և յանձնեաց առա-
„ ջի մեր, ուր տեսք ոչ են սովորութիւն.

„ Ստորագրեալ

„ ԿՈՄՍ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՇԷՀՐԻՄԱՆԵԱՆ.

„ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ.

„ Պ. Պ. ՊԱՋԱՐԵԱՆ.

„ Ստորագրեմք և հաստատեմք

„ ՍՈՒՔԻԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՍՈՄԱԼ.

„ Արքեպիսկոպոս և ընդհանրական Աբբայ Մխիթարեան
„ միաբանութեան սրբոյն Ղազարու իւվենետիկ.

„ Հ. ՄԿՐՏԻՉ Վ. ԱԻԳԵՐԵԱՆ
Արոտակալ.
„ Հ. ՂՈՒԿԱՍ Վ. ԻՆՃԻՃԵԱՆ.
„ Հ. ՂՈՒԿԱՍ Վ. ՕՂՈՒԼՈՒՓԵԱՆ.
„ Հ. ՄԱՏԹԷՈՍ Վ. ՄԱՂԱՓԵԱՆ.
„ Հ. ՄԱՆՈՒԷԼ Վ. ՋԱԽՋԱԽԵԱՆ.
„ Հ. ՑԱՐՈՒԹԻՒՆ Վ. ԱԻԳԵՐԵԱՆ.
„ Հ. ԵՂԻԱ Վ. ԹՈՎՄԱՃԱՆԵԱՆ.
„ Հ. ՑԱԿՈՎԲՈՍ Վ. ՃԷԼԱԼԵԱՆ.
„ Հ. ՍՐԱՊԻՈՆ Վ. ՊՈՒՐԻՍԵԱՆ.
„ Հ. ՍՏԵՓԱՆՆՈՍ Վ. ՄՈՒՐԱՏԵԱՆ.
„ Հ. ԱՐԱՔԷՆ Վ. ԱՆԹԻՄՈՍԵԱՆ.
„ Հ. ՍԱՄՈՒԷԼ Վ. ՍԱՄՍԱՐԵԱՆ.
„ Հ. ՓԵՐՈՎԲԷ Վ. ԱԶՆԱՒՈՐԵԱՆ.
„ Հ. ԱԻԵՏԻՔ Վ. ԱԻԵՏԻՔԵԱՆ.
„ Հ. ԳԷՈՐԳ Վ. ՀԻՒՐՄԻՒԶԵԱՆ.
„ Հ. ԵԴՈՒԱՐԴ Վ. ՀԻՒՐՄԻՒԶԵԱՆ.
„ Հ. ԱՂԵՔՍԱՆԴՐ Վ. ՊԷՇԻՔԹԱՇԵԱՆ.
„ Հ. ՌԱՓԱՅԷԼ Վ. ԹՐԵԱՆՑ.
„ Հ. ՊԵՏՐՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ.
„ Հ. ՂԵՒՈՆԴ ԱՇԵԱՆ.
„ Հ. ՊՕՂՈՍ ԹԸՍԽԻԹԵԱՆ.

ԿՆԻՔ

„ Իւվենետիկ. Իւվանա սրբոյն Ղազարու. 14 Նոյեմբ. 1828. „

ՀԱՇՈՒԱԳԻՐ ՀՐԻՏԱԿԻՆ

« Ներքոյ գրեալս հանգուցեալ Աղա Սամուէլ Մկրտիչ Մուրատենի վասն որք և աղքատ մանկանց « Ազգիս Հայոց դպրատան շինութեան համար, թէ կտակաւ և թէ հաշուագրութեամբ թողեալ գումարոց « խէսպն այ.

1816 Ապրիլ 20, *Ջամայ իւր հաշուագրութեամբ ունեցեալ ողորմութեան քաթի բալանսն այ, ըստ իւր մահուան օրէ ռէվի երեսին, Ասողի հուն*	48,323
Էզն Ջամայ իւր կտակաւ թողեալ գումարն Ասողի հուն	150,000
Բովանդակ հուն	198,323

Ի Մասրայս. 26 մարտի. 1827.

1816 Ապրիլի 20, *Թալապ իւր թողեալ Մաղրասիս աղքատաց համար ողորմութեան գումարն Ասողի հուն*	15,000
1827 Մարտի 24, *Թալապ խսէպիս բալանսն, որ ըստ այս օրէն ձեռնադրեալ գաշնագրութեան ի մէջ մեր և Հայր Սարգսի Թէոդորեան, գործակալի Մխիթարեան միաբանութեանն որ ի Վենետիկ, հատուցինք նոյն գործակալին Ասողի հուն* . . .	183,323
Բովանդակ հուն	198,323

ԱՆՆԱՑ ՍԱՄՈՒԷԼ ՄՈՒՐԱՏԵԱՆ.
ԵԴՈՒԱՐԴ Ս. ՄՈՒՐԱՏԵԱՆ.
ՑՈՎՀԱՆՆԷՍ Ս. ՄՈՒՐԱՏԵԱՆ.

Կտակակատարք հանգուցեալ Աղա Սամուէլի Մկրտիչ Մուրատի.

ԿՆԻՐ

“ Ընդունիմ զհաշիւս զայս որպէս ուղիղ և անթերի հաստա-
“ ցումն ամենայն պահանջանաց .

“ Սորագրեալ

“ Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ

“ Օրինաւոր և կարգեալ գործակալ Մխիթարեան
“ միաբանութեան որ ի Վենետիկ .

ԿՆԻՔ

“ Սորագրեմք և հաստատեմք

“ ՍՈՒՔԻԱՍ ՍՈՄԱԼ ՎԱՐԴԱՊԵՏ

“ Արքեպիսկոպոս և ընդհանրական Աբբայ Մխիթարեան
“ միաբանութեան սրբոյն Ղազարու ի Վենետիկ .

“ Հ. ՄԿՐՏԻՉ Վ. ԱԻԳԵՐԵԱՆ
Աբբայակալ .

“ Հ. ՂՈՒԿԱՍ Վ. ԻՆՃԻՃԵԱՆ .
“ Հ. ՂՈՒԿԱՍ Վ. ՕՂՈՒԼՈՒԲԵԱՆ .
“ Հ. ՄԱՏԹԷՈՍ Վ. ՄԱՂԱԲԵԱՆ .
“ Հ. ՄԱՆՈՒԷԼ Վ. ՋԱԽՋԱԽԵԱՆ .
“ Հ. ՅԱՐՈՒԹԻՆ Վ. ԱԻԳԵՐԵԱՆ .
“ Հ. ԵՂԻԱ Վ. ԹՈՎՄԱՃԱՆԵԱՆ .
“ Հ. ՅԱԿՈՎԲՈՍ Վ. ՃԷԼԱԼԵԱՆ .
“ Հ. ՍՐԱՊԻՈՆ Վ. ՊՈՒՐԻՍԵԱՆ .
“ Հ. ՍՏԵՓԱՆՆՈՍ Վ. ՄՈՒՐԱՏԵԱՆ .
“ Հ. ԱՐԱՔԷՆ Վ. ԱՆԹԻՄՈՍԵԱՆ .
“ Հ. ՍԱՄՈՒԷԼ Վ. ՍԱՄՍԱՐԵԱՆ .

„ Հ. ՓԵՐՈՎԲԷ Վ. ԱԶՆԱՒՈՐԵԱՆ.
„ Հ. ԱՒԵՏԻՔ Վ. ԱՒԵՏԻՔԵԱՆ.
„ Հ. ԳԷՈՐԳ Վ. ՀԻՒՐՄԻՒԶԵԱՆ.
„ Հ. ԵԴՈՒԱՐԴ Վ. ՀԻՒՐՄԻՒԶԵԱՆ.
„ Հ. ԱՂԵՔՍԱՆԴՐ Վ. ՊԷՇԻՔԹԱՇԵԱՆ.
„ Հ. ՌԱՓԱՅԷԼ Վ. ԹՐԵԱՆՑ.
„ Հ. ՊԵՏՐՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ.
„ Հ. ՂԵՒՈՆԴ ԱՇԵԱՆ.
„ Հ. ՊՕՂՈՍ ԹԸԱԽԻԹԵԱՆ.

„ *Ի Վենետիկ. ի Վանս սրբոյն Ղազարու. 14 Նոյեմբ.* 1828. „

ԱՌԱՆՁԻՆ ԿԱՄ ՄՏԵՐՄԱԿԱՆ ԴԱՇՆԱԳԻՐ

„ *Ես Հայր Սարգիս Թէոդորեան վարդապետ անդամ և*
„ *գործակալ Մխիթարեան միաբանութեան որ ի Վենետիկ,*
„ *այսու յայտ առնեմ ամենեցուն որք տեսանիցեն, թէ յետ*
„ *դաշնաւորելոյ և բացարձակ աւարտելոյ ընդ տիկնոջ Աննայ*
„ *Սամուէլ Մուրատեան և Պարոնաց Եդուարդ և Յովհաննէս*
„ *Սամուէլ Մուրատ, ընդ ժառանգաց և կտակակատարաց*
„ *հանգուցեալ Աղայ Սամուէլ Մկրտիչ Մուրատ, զամենայն*
„ *բանս և զգործառնութիւնս վերաբերեալս վերջերորդ հատ-*
„ *ուածոյ կտակի հանգուցելոյն որ յաղագս կառուցման*
„ *դպրատան վանն որք և ազգաս մանկանց ազգիս Հայոց, և*
„ *յետ ընդունելոյ և առանալոյ ի վերոյիշեալ ժառանգաց և*
„ *կտակակատարաց հանգուցելոյն զբոլոր դումար հրա-*
„ *տակին կամքանս մուրհակք, այժմ բոլորովին արտաքս*
„ *վերոյիշեալ դաշանց և գործառնութեանց յայլ ինն առան-*
„ *ձին և մտերմական դաշն մտի ընդ Պարոնաց Եդուարդ և*
„ *Յովհաննէս Սամուէլ Մուրատեան. այսինքն, զի զվերոյ*
„ *ընկալեալ մուրհակն, զոր իրրեւ կատարեալ հաստատումն*
„ *հրատակին ընկալոյ և առացեալ այսր ի վերոյիշեալ ժա-*
„ *ռանգաց և կտակակատարաց հանգուցելոյն, ի միջոցի մեր*

«տարւոյ, սկսեալ յօրէ սահի, անվաճառ պահեցից, և ի մի-
«ջոցի այս միոյ տարւոյ ըստ ամենայն յաջողակ պատեհու-
«թեան իմոյ մասն մասն պատրաստ՝ այսինքն նաղտ դրամ
«ընկալայց ի Պարոնայց Եդուարդ Յովհաննէս Սամուէլ Մու-
«բատանէ, և վասն ընկալեալ մասն մասն դրամոյն նոյնչափ
«քանութեամբ կօմբանու մուրհակ իւրաքանչիւր նուազ
«դարձուցից նոցա. բայց ի լրանալ միոյ տարւոյն և ի պակա-
«սել վերոյիշեալ պայմանացս, յայնժամ զբովանդակ կօմ-
«բանու մուրհակն կամ զմնացեալ մասն նոցա վաճառեցից
«բացարձակ։

«Ի հաստատութիւն վերոյ գրելոց ձեռնագրեցի և կնքեցի
«ի ներկայութեան վկայից.

«Ի Մատրաս. ի 26 մարտի 1827.

«Սարգսեալ

«Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐՆԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ

«Օրինաւոր և կարգեալ գործակալ Մխիթարեանց
«միաբանութեան որ ի Վենետիկ.

ԿՆԻՔ

«Վկայեն նոյն վերոյիշեալ երեք անձինքն։»

ԼԻՍՏ ԵՒ ՑԱՏԿՈՒԹԻՒՆ ԿՕՄԲԱՆՈՒ ՄՈՒՐՀԱԿԱՑ ՁՈՐ ՍՏԱՑԱՑ Ի ԿՏԱԿԱԿԱՏԱՐԱՑ ՀԱՆԳՈՒՑԵԼՈՑՆ

Նոմիրը	136	2406	*ի* 1822-23	100,000
„	137	2406	*ի* 1822-23	100,000
„	138	2406	*ի* 1822-23	100,000
„	139	2406	*ի* 1822-23	100,000
„	293	2395	*ի* 1822-23	100,000
„	412		*ի* 1822-23	7,000
„	508		*ի* 1825-26	10,000
„	512		*ի* 1825-26	10,000
„	513		*ի* 1825-26	10,000
„	1262		*ի* 1825-26	10,000
„	1263		*ի* 1825-26	10,000
„	1075			50,000
			Գումարն	607,000 *պապ ռուբի*

„ *Սորագրեալ*

„ Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՎՈՐԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ.
„ ԱՆՆԱՑ Ս. ՄՈՒՐԱՏԵԱՆ.
„ ԵԴՈՒԱՐԴ Ս. ՄՈՒՐԱՏԵԱՆ.
„ ՅՈՎՀԱՆՆԷՍ Ս. ՄՈՒՐԱՏԵԱՆ. ”

ՊԱՅՄԱՆԱԻՈՐ ԳԻՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ

„ Ընկալայ ի տիկին Աննայ Սամուէլ Մուրատէ և ի Պա-
„ ռոնայ Եդուարդ և Յովհաննէս Սամուէլ Մուրատէ փոխա-
„ նակագիրս, այսինքն պարսթ, տասն և մի հազար երկու
„ հարիւր երեսուն և չորս (11234) անգղիական լիրայ ստեր-
„ լին, ի վերայ Պարոնայց Աղեքսանդր, Յովհաննէս, և Լուիզ

„ Ասֆայէլեան որ ի Լոնդրա, այսու գաշամբ՝ զի զկնի հա-
„ ուցանելոյ նոցա ըստ իմում հրամանի զվերոյիշեալ գու-
„ մարն, յայնժամ հաստատից ես ասա վերոյիշեալ տիկնոջ և
„ Պարոնաց զփոխարէն ըստ աւուրս ամէից Մատրասու ռու-
„ փիս 129,065—15 ։

„ Մատրաս. 26 մարտի 1827 .

„ Ստորագրեալ

„ Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ

„ Օրինաւոր և կարգեալ գործակալ Միխիթարեանց
„ միաբանութեանց որ ի Վենետիկ . „

Զգիրս գործակալութեան Հ. Սարգսի Թէոդորեան և զյաստատարարութիւնն որ ի միաբանից եղելոց ի վանս ընդ վերոյիշեալ գրուածն յանձնէ Հ. Սարգիս կաթուղիկոսարաց, առաջի վերոյիշեալ երից վկայիցն ։

Եւ ահա այսպիսի և այսչափ վաւերականաք և հաստատաք աւարտի բան հրամայեցին ողորմութեան որ վասն դպրատան որք և աղքատ մանկանց Աղգիս Հայոց ի 28 մարտի 1827 ։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Վասանց կորստեան վնասիցակաց կամ դրամարդոց հրիտասկիսի. — Ստրջանք կտակակատարաց ընդ հատուցումն զոր ստարին. — Եաւնակ նոցա առ Աբբայն Մխիթարեան միաբանութեան. — Թուղթ Հ. Սարգսի Վարդապետի առ նոցն. — Գնացք սորա ընդ կտակակատարսն.

•

Որպէս և յիշեցաք վերագոյն, խորհէր յառաջագոյն Հայր Սարգիս Թէոդորեան, յետ ուսարտելոյ գործոյն մատուցանել ըստ պարտուց պատշաճի մաղթանս առ Աստուած վասն հոգւոյ հանգուցեալ բարերարին, և վասն հաստատութեան և պայծառութեան տան նորին. բայց անպատեհ գնացք ժամանգացն հանեն զայն ի մտաց նորա, քանզի և գուշակէ իմն զանախորժ հետեւանս յանախորժ սկզբնաւորութենէ անտի։ Զայս իսկ ասէ անդէն և Աննայ տիկնոջ յիշանել նոցա ի միտսն ի սեննեկէ անտի՝ ուր ասարեցաւն բան հրիտակին։

Առեալ Հ. Սարգիս Թէոդորեան զմուրհակն վաճառական ընկերութեան Անդղիացւոց՝ իբրեւ ի հատուցումն հրիտակին ողորմութեան, զծրարեալս ի պահարանի կնքելոյ յերկոցունց կողմանց, ի կտակակատարաց և ի գործակալէն, դնէ զայն յերկաթի արկեղն որ ի սեննեկի իւրում, ի տան այգւոյ Աննայի տիկնոջ, պատեալ զայն ի կրկին պահարանս թղթոյ և թաշկինակի, և եղեալ ի փոքրիկ փայտեայ տուփի միում։ Բայց յետ երկուց աւուրց, սակս կարի իմն զգուշութեան իւրոյ և երկիւղածութեան ի գործն, այլ և ի պատճառս կասկածանացն արդեաք, (քանզի երկաթի արկղն այն էր Գ. Եղուարդայ Մուրատի, և ոչ ունէր բանալի, իբր զի կորուսեալ էր այն ի ճանապարհի, որպէս ասէին, յածել բեռնակրաց գարկղն

ի տուն Աննայ տիկնոջ,) տայ Հ. Սարգիս շինել փայտանաց նորին բանալի նոր, և ապա բանայ զարկղն տեսանել թէ, իցէ՞ն անդ մուրհակքն յապահովի պահեալք. և տեսանէ ինձա ազգ ինչ վնասակար մրջման Դիմակ կոչեցելոյ, որ ի տակաւ ժամն ուտէ զամենայն ինչ և ապականէ։

Բանայ և զփայտեայ տուփն, և տեսանէ ինքին բազմութիւն յոյժ ի նոյն մրջմանց, որոց մտեալ յամենայն ծալս թղթոց և թաշկինակին, սկսեալ էին ուտել զկնքամոմ պահարանի մուրհակացն. և եթէ ժամ մի ևս անցեալ էր ի վերայ, ապականէին մրջիւնք զմուրհակն առ հասարակ՝ ի վնաս և ի տագնապ անհնարին։

Հանէ անտի վաղվաղակի զծրարն և պահէ զայն յայլ յապահովագոյն տեղի, և բազում շնորհս մատուցանէ Աստուծոյ՝ որ պաշտպանէրն միշտ իրաւանց որբոց և աղքատաց աղգիս ի վնասուց և ի կորստենէ։ Գուշակելով գուշակէ և յայնմ դիպուածոյ զհակառակութիւնն և զվիշտս զորս կրելոց էր վասն հրիտակին, և զյաղթութիւնն իւր ի վախճանի, որպէս տեսցի և ի կարգի պատմութեանս։

Պատմէ Հ. Սարգիս տիկնոջն Աննայի զդէպն և ցուցանէ նմա զայն. և նորա զարմացեալ՝ ասէ. «Ոչ բարւոյ ինչ իմիք «նշան է դիպուածդ այդ։» Եւ յիրաւի. քանզի չեւ էին անցեալ աւուրք երեք յետ աւարտելոյ գործոյն, և ահա զղջանան կտակատարքն Եդուարդ և Յովհաննէս Մուրատեանք ընդ կատարումն պարտուց որբացն պաշտաման իւրեանց, գրգռեալք և ի քննողական և հեգնական բանից նախանձոտաց ոմանց. յորոց ոմն նմանեցուցանէ զնոսա ճարտար և քաջ լուղորդի, որ է երբէք զի ինուազ ջուրն հեղձանի. իբր զի այնչափ խիստ և ատամբակ էին նոքա յառաջագոյն, և յանկարծ իմն և այնպէս զիւրաւ յառատամբութիւն փոխեցան։ Եւ այլք ոմանք այլովք հեգնական բանիւք գրգռեն զնոսա, մանաւանդ նոքա՝ որոց չկամէին Մուրատեանք ծանուցանել զիրան և կամ բնաւ խորհուրդ ինչ ինուցանել հարցանել. քանզի և պատուիրելով պատուիրեալ էին

Հ. Սարգսի և Պ. Լազարովիչի չյայտնել զայն ումեք մինչեւ աւարտեցի։

Թէպէտ և եղբարքն երկոքին յայնպիսի խորհուրդս տարուբերեալք՝ իրրեւ ի դառնաշունչ հողմոց տատանէին, այլ վերնախնամ տեսչութիւնն պահպանողական աչով իւրով զամենայն ինչ կանուխ և ըստ ժամանակին տնօրինէր, ի հաստատութիւն և ի պաշտպանութիւն իրաւանց որբ և աղքատ մանկանց ազգիս, հակառակ կամաց և ի ձեռն նոցին իսկ հակառակորդաց։

Փանդի գրեն նոքա ինքին ժամանակի թուղթ պատրաստեալ յառաջագոյն առ արքեպիսկոպոսն և աբբայ Մխիթարեան միաբանութեան ի Վենետիկ, յորում ծանուցանեն թէ ահա կատարեցին կտակակատարք զարբազան պարտս պաշտաման իւրեանց, հատուցանելով զբոլոր դրամագլուխն հրիտակի դպրատան հանգուցեալ հօր իւրեանց, և յանձնելով զայն ի ձեռս օրինաւոր և կարգեալ գործակալի Մխիթարեան միաբանութեան՝ Հ. Սարգսի Թէոդորեան. որով և խոստովանին բերանով և հաստատեն ձեռնագրով իւրեանց՝ թէ չմնայ կտակակատարացն այնուհետեւ այլ ինչ գործ վասն հրիտակի դպրատանն աղքատաց, այլ Մխիթարեան միաբանութեանն Վենետկոյ՝ լրումն տալ վերջին կամաց հանգուցեալ կտակարարին, զարդիւնս վաստակոց և քրտանց նորա պտղաբեր և շահեկան առնելով յօգուտ և ի լուսաւորութիւն Ազգիս Հայոց։

Եւ այս է պատճէն թղթոյ նոցա գրելոյ ի լեզու գաղղիացի.

„ Գերապայծառ Տէր.

„ Ի Մատրաս. 26 մարտի 1827.

„ Բարձրելոյն միայնոյ գիտելի են խորհուրդք որք բովանդակին շատ կամ սակաւ յամենայն գէպս աշխարհի, „ որպէս և գաղտնիք մեծամեծ պետութեանց։ Եա ինքն հաճեցաւ որ ուրեմն զի բարեպաշտական կամք հանգուցելոյ

«և պատուական հօրն մերոյ կատարեցի այսօր. զի ահա
«աւարտեցաք ընդ գործակալի ձերում Հ. Սարգսի Թէոդո-
«բեան զգործ հուշակաւոր հրիտակին, որ երկաքանչիւր
«կողմանց այնչափ հոգոց և խնամոց եղեւ պատճառք. և հա-
«տուցաք նմա զօրութեամբ իշխանութեանն տուելոյ նմա
«ի ձէնջ, և հանրական մուրհակաւ զոր ետ նա մեզ, զգու-
«մար 640,500 ռուբլեաց Մատրասու, որ է բովանդակ
«գրամն որոշեալ կտակաւ և հաշուէգրովք հանգուցելոյն,
«ի կառուցումն Հայկական Դպրոցին։

«Յուշ առնեմք ձեզ զրանն ասացեալ ի մէոյ ի մէնջ յա-
«ռանձնական թղթին գրելոյ առ մեծարգոյ նախորդ ձեր, —
«բան հաւատարազօր կանխատեսութեան որ անդատին իսկ
«զգործնական իմն իրաց ունէր զկերպարան, և զորոյ
«զգաղանիսն բացատրէ թերեւս մեզ ոչ որոյ առաջնորդին
«պատմեալ յետ տակաւուց. — Բաժին մեր աւարտեցաւ։
«Եւ ահա աւարտեցաւ բաժինն մեր, Գերապայծառ Տէր,
«որպէս և յայնժամ իսկ աւարտեալ էր յիղձս մեր և ի դի-
«տաւորութեան մերում։ . . . Մնայ արդ և ձեզ զնոյն տա-
«նել ի կողմանէ ձերմէ։ Խորհուրդ ազնուական, որպէս ոչ
«որ ի մարդկանէ երկնեալ է ի մտի՝ անկաւ ի սիրտ առա-
«քելոյ հօրն մերոյ, այն է վերանորոգել զաղգ մի տառա-
«պեալ և արհամարհեալ ի հարստահարութենէ և ի ծառա-
«յութենէ։ . . . Վասակ գեղեցիկ քան զամենայն վաս-
«տակս որ յանձնեալ իցեն երբէք որում և իցէ միաբանու-
«թեան՝ ձեզ տնկէ է, այսինքն լինել գործի արդիւնական և
«անմիջական այսմ վերանորոգութեան։

«Արդ մերս բաժին ահա աւարտեցաւ։ Բայց Ձեր մեզ
«և այլ իմն պարտիք ի կատարել, Գեր. Տէր. այն է ազատել
«զձեզ զի մի երբէք անկցի ի մտաց ձերոց սրբազան յիշատակ
«առնն՝ որոյ առատաձեռն սիրտ և լուսաւոր բարեպաշտու-
«թիւն երկնեաց ի հեռուստ, այսինքն անդատին ի մանկութե-
«նէ իւրմէ զգործ մի՝ յորում տնտանէր նա իրրեւ ընդ հայելի
«հաւատոյ և առաքինութեան՝ և զիաւս Աստուծոյ, զիաւս
«ճշմարիտ քրիստոնէի, և զպատուական ծառայութե-

„ որդւոց իւրոց, զյիշատակ հօր՝ որ այսպիսի նշանաւոր բա-
„ բեգործութեամբ կնքեաց զվաստակս իւր։ . . .

„ Ահա ինքն իսկ անենկին, ի սմին իսկ գրասեղանի յորոյ
„ վերայ հոսեաց նա ընդ ժամանակս քառասդի միոյ դարու-
„ զքիրսն ճակատուն, երկնելով ի սրտին խորհուրդ այսչափ
„ աղնուական, զրեմք մեք առ ձեզ զտողս զայսոսիկ։ . . .
„ Սկսեալեալ սպասեմք ամենայնի առ ի ձէնջ և ի միաբա-
„ նութենէդ ձերմէ, վստահացեալք յայս խորհուրդ միսիթա-
„ բական, զի հայրն մեր ոչ ի ձեռս ապիկարս առանդեաց
„ զդիտումն իւր և յիշատակ։

„ Յընդունել ձեր զթուղթս զայս՝ հաճեսջիք, Գեր. Տէր,
„ առաքել մեզ մուրհակ հաստատողական լի և անթերի,
„ ձեռնադրեալ յամենայն անդամոց միաբանութեան ձերոյ,
„ վասն այսր հրամակի արդէն առանդելոյ ձեզ ի դէմս անձինն
„ կարդելոյ ատաստնօր ի ձերմէ կողմանէ. միանգամայն հա-
„ ճաձայնեսջիք զձեւ և զճ մուրհակին ըստ այնմ զոր նա
„ ինքն եւ մեզ, և զորոյ օրինակն յղէ նա առ ձեզ, զի այս-
„ պէս պատուիրեն օրէնք։

„ Այնու և պատուական մայրն մեր եւս ընդ մեզ մատուցա-
„ ցանէ ձեզ, որպէս և բովանդակ ուխտիդ, զմեծարանաց
„ ողջոյնս իւր։ Յիշեսջիք զմեզ յաղօթս ձեր և ծաներուք
„ զմեզ յանենեանդ մտաց,

„ Գերապայծառ Տէր,

„ Ամենախոնարհ և մտերիմ ծառայս ձեր և բարեկամս

„ ԵՂԻԱԶԱՐ Ս. ՄՈՒՐԱՏ.

„ ՅՈՎՀԱՆՆԷՍ Ս. ՄՈՒՐԱՏ.»

Ապաքէն այսու գրութեամբ և հաստատութեամբ յաստուկ
իսկ ձեռաց իւրեանց խոստովանէին և վկայէին ժառանգք և
կտակակատարք հանգուցեալ բարերարին՝ թէ. ս. Բաժինն իւ-

«բեանց աւարտեցաւ,» հաստատանելով զհրիտակն ողորմութեան. և թէ՝ «Մնայ այսուհետեւ Մխիթարեան միաբանու-«թեանն աւարտել զբաժինն իւր.» այսինքն մատակարարել միշտ որբ և աղքատ մանկանց ազգին Հայոց զժառանգութիւն իւրեանց. և թէ՝ «Հայրն իւրեանց ոչ ի ձեռս ապիկարս «ասանդեաց զդիտումն իւր և զյիշատակ։»

Զարմանք են թէ զիա՞րդ յետոյ զգՀանան ընդ բանս գրութեան իւրեանց և ընդ աւարտումն գործոյն, խորհելով և Ջանալով հանել հնարիւք և կամ բռնութեամբ զարծաթ հրիտակին ի ձեռաց գործակալի միաբանութեանն, և ուրանան զիրաւունս և զիշխանութիւն միաբանութեան յայն գործ հրիտակի դպրատանն, բողոքելով առ բարձրագոյն ատեանն Անգղիացւոց ի Մատրաս, և սուտ երդմամբ զգործակալն միաբանութեան ի բանտ արկանելով իրրեւ զյանցաւոր ոք, և զարծաթ հրիտակին խնդրելով յԱտենէն յապահովել և ինքնին ի գործ դնել զայն։

Ի նմին ժամանակի և նոյին պատեհաւ գրէ թուղթ և Հայր Սարգիս Թէոդորեան առ Աբրայն իւր ի Վենետիկ, ծանուցանելով նմա զաւարտումն բանի հրիտակի դպրատանն ողորմութեամբն Աստուծոյ, և զհանգամանս ժառանգաց և կտակակատարաց հանդուցեալ բարերարին, և զպայմանսն որք ընդ նոսա. միանգամայն և առաքելով նմա զհաւատարս դաշնագրին և մուրհակի ազատութեան առեալոյ նոցա. և այս օրինակ է թղթոյն.

«Ատուածապատիւ և Գերապայծառ Տառն մերոյ Սուքիասայ Արհիեպիսկոպոսի և ընդհանրական Աբրայի ուխտիս ծնողական աջահամբոյր։

«Ի Մատրաս. 17 ապրիլ 1727.

«Ահա ժամ բարեպատեհ յորում ի դէպ է ինձ խնդագին ձայնիւ ուեռապանել Արհիապատիւ Հօրդ և Յարգոյամեծար Հատարակութեանս զուրախութիւն մեծ, զցանկալի կատա-

բուն ասեմ բարեպաշտական կամաց հանգուցեալ Աղա Սամուէլ Մկրտիչ Մուրատի, զոր այնչափ ցանկայաք տեսանել. և կարի յիրաւունս. քանզի զի՞նչ այլ մեծ ուրախութիւն մեզ քան զհասարակաց օգուտ և զպայծառութիւն Ազգիս։

«Բայց դու ինձ նայեաց ընդ վերնախնամ Տեսչութիւնն, թէ զիարդ տնօրինեաց և ուրպէս յօգուտ ազգիս և ի փառս Հասարակութեանս տարեալ հանգոյց զքանն. արդարեւ վերին տնտեսութեան գործ, և ոչ մարդկային կամաց և հնարից. քանզի իրրեւ ակնկալութիւնք օգնականութեան յամենայն ուստեք ի դերեւ ելին, յայնժամ հաճեցաւ նա կատարել զայս զարանչելապէս։

«Քանզի որպէս յառաջագոյն գրեցի, յետ դառնալոյ Կրոնաւորին այսր՝ կամեցան նոքա զիտել զհանգամանս իւրեանց. և իրրեւ ծանեան՝ թէ զատացուածս իւրեանց գրեթէ վատնեալ էին, սասանեցան յոյժ. և մինչդեռ ընդ այն տագնապեալ կային, ահա անդէն այլ տագնապ ի վերայ նոցա հասանէր. քանզի գայ հրամանն յընդհանրական փատարանէն, որում յանձն է պահպանութիւն իրաւանց որբոց և աղքատաց, տալ զհամար հրիտակին ողորմութեան. և իրրեւ կարի շատ տագնապեաց զնոսա, վերատին կաշառեալ լուեցուցին զնա ի ժամուն, բայց թանկագին յոյժ. քանզի 10,000 հուն։ Հազիւ կարացին կուրացուցանել զաչս անօրինին։

«Այս կաշառանք թէպէտ և ծանր, սակայն շահ մեծ արար նոցա. քանզի ի միտս ելեալ և զդատացեալ խորհեցան այնուհետեւ իրաւախոհ լեալ ընդ մեզ աւարտել զքանն։ Զայս խորհուրդ իւրեանց յայտնեն Պ. Պ. Լազարեվչի, քանզի զկարծիս նորա առ մեծս ունին. և նորա արդէն հաստատեալ դառնալ ի միտս թէ անհնարին է այլապէս կատարումն լինել գործոյն, իմաստուն զխորհուրդ նոցա ասացեալ՝ յորդորէ զնոսա արդեամբք ի նոյն բերել։

«Քաջալերեալ և յորդորեալ նոցա ի բանից նորա, միջնորդ կալնուն զնա ինքն կատարումն տալ գործոյն. և իրրեւ արդիւնք վատակաց նորա՝ խոստանան նմա մինչեւ յոսանն հազար հուն, եթէ կատարեցէ նա զայն բան կամաց նոցա.

և զի ոչն էին կամք նոցա, ասել վերանալն 150,000 հօրն, և թագուլ զամենայն ինչ իկամս և ի կառավարութիւնն նորա։ Ազգաբէրն ոչն և մեծանձն մտադիր յանձն առնու զայն. բայց առանձինն ասաց ինձ, թէ զոր ինչ վիճեցամ զոսանիցէ ի նոցանէ՝ ի նոյնօրինակ բարեպաշտական գործս ունի ծախել զամենայն։

„Թէպէտև ես ի միտս իմ արդէն հաճեալ և հաւանեալ էի ընդ առաջարկութիւն նոցա, քանզի քաջ տեղեկացեալ խելամուտ էի ամենայն հանգամանաց նոցա, ապայն մեայի ասկաւին տեսանել զկատարումն ձեռնարկութեան կարծեցեալ գործակալին մերոյ Ենենխ, և զտանել զնորոգ զիր գործակալութեան ի վանաց, զոր չգտի ցարդ։ Բայց յ13 յունվարի տարւոյս, իբրեւ ընկալայ զգրեալսն Արհիապատիւ Հօրդ որ ի 1 և ի 22 անցեալ օգոստոսի, խնայայ զանշահութիւնն Ենենխեանց, զկապտ լքումն Հատարակութեանն, ընդ նմին և զկարեւոր խորհուրդն ձեր՝ կատարեալ լինել ինձ ընդ կոմկոմատարան. ապա այնուհետեւ հանարձակեալ ձեռնամուխ եղէ ի գործն։

„Ի 20 յունվարի տարւոյս Պարոն Եդուարդ Մուրատ հրաւիրեաց զիս և զՊարոն Լազարովիչ հաշել ընդ նմա ի տան այգւոյ իւրում. և յետ հաշոյն առաջի տարր նա Պարոն Լազարովիչի խօսել վասն բանի հրատակի գպրատանն, որ և խօսեցաւ այսպէս։ . . . (Տե՛ս յերես 199։ Նոյնպէս զգաստանին Հ. Սարգսի Թէոդորեան և զհաստակութիւն Պարոն Եդուարդայ, տե՛ս յերես 200։)

„Եւ, որպէս վերագոյն ասացի, քաջ տեղեակ և խելամուտ գոլով, եթէ հանգամանաց նոցա, և եթէ կամաց և զիտութեան Հատարակութեանս, յանձն առի զառաջարկութիւն նոցա. քանզի հաւատի էի և եմ այժմ առաւել ևս, թէ զկնի վերոյ տարւոյ և ոչ այսչափ կարէաք գտանել ի նոցանէ. ապա խոհեմութիւն և հարկ էր շտապել ընդ այն. իսկ եթէ ասիցէ ոք՝ թէ մարթ էր ի ժամուս ապահովել զրոխանդակն ի գանձատուն տէրութեանս, արդարեւ կարող էաք առնել զայն. բայց զի՞նչ շահ լինէր մեզ ասոմ, և զի՞նչ օգուտ ապ-

դիս. մանաւանդ թէ յամենայնի անշահութիւն և վնաս. քանզի նախ՝ որպէս և գիտէ ամենայն ոք, եթէ քանի՛ դժուարին է, չասացից թէ անհնարին, զմիանգամ ուանդեալն անդր՝ հանել անտի։ . . .

«Երկրորդ՝ զայն առնելով ապաքէն պատճառ լինէաք անհրաժեշտ քանդման և վատահամբաւութեան տանն Մուրատեանց՝ որ ի շինել և ոչ յեղծանել կարգեալ եմք։ Եւ երրորդ՝ զի պատուէր ընկալայ ի ձէնջ ի սոյգ օրուս մեր և ազգիս պարապիլ, և մի՛ հոգս անուտիս ինձ և ձեզ յաւելուլ. զորով ոչ երբէք անիրաւութ արարեալ, այլ Ջանացայ յամենայնի, որչափ մարթ էր, յօգուտ և ի փառս ազգին և մեզ զիրսն վճարել. և զայն խաղաղութեամբ և սիրով, որ ցանկալի էր Հասարակութեանս և վայել իսկ ասոյնմանի մերում։

«Արդ՝ իբրեւ հաճելոյ և հաւանելոյ ես ընդ առաջարկութիւն Պարոն Եղուարդայ, խնդրեաց նա յինէն տեսանել զվաւերականն գործակալութեանս. քննեալ նորա զայն, եհարց զՊարոն Լազարովիչ՝ եթէ բաւական էր այն. ասաց նա թէ բաւական և շատ է. ապա յանձնեաց նմա պատրաստել զդաշնագիրն և զմուրհակ ազատութեան իւրեանց։ . . .

«Ահա այսպէս ողորմութեամբն Աստուծոյ և աղօթիւք Հասարակութեանս ստորագրեցաք զրան հրիտակի գպրատանն. և ի 28 մարտի անցելոյ ընկալեալ իմ ի կուսակալատարաց զրովանդակ գումար զրամոյ ի մուրհակս վաճառական ընկերութեան՝ ստորագրեցաք և կնքեցաք զկրկին օրինակս դաշնագրացն առաջի վկայից և յանձնեցաք միմեանց, զորոց հարազատ օրինակն ծրարեալ ի թղթիս առաքեմ Արհիապատիւ Հօրդ։

«Եթէ զիարդ և ո՛րպէս իրաւախոհ եղեալ ընդ կուսակալատարն ստորագրեցաք զկրակութիւն գպրատանն, ահա զամենայն հաստուցի ի սմին. մնայ ինձ այժմ ծանուցանել Արհիապատիւ Հօրդ զայլ եւս կարեւորն։ Զրամն զոր ընկալայ ի կուսակալատարաց հանդուցեալ բարերարին՝ է յամբանուս մուրհակ, զոր և պահեմ յերկաթեայ արկեղ խնամ՝ մինչեւ բան յաշխարհակ պատեհութեան անցուցից այդր ի փառս։

«Ծրարեալ ի թղթիս առաքեմ ձեզ զսուտ ոչին օրինակս փոխանակագրաց, թուով երեքտասան, որոց գումարն է մեատասան հազար երկերիւր երեսուն և չորք լիրէ ասէրլին (11,234,) 2 շիլին և 6 փենս, ի վերայ Պարոնաց Ալեքսանդրի, Յովհաննու, և Լուիգի Ռաֆայէլեանց, որք ի Լոնդոն. զոր բան պայմանեալ ժամանակին Ջանացարուք առանալ. ապա թէ ոչ՝ վաղվաղակի ծանուցիք ինձ առ. քանզի թէպէտ և դաշն եղեալ եմ ընդ Մուրատեանս, զի զկնի վճարելոյ նոցա բան խնամ հրամանի՝ հատուցից նոցա առ, ապայն պարտ է բան օրինաց և բան կանոնի վաճառականութեան վարել։

«Այս այն գրամ է զոր սոքա յառաջագոյն անցուցին ի Լոնդոն ի ձեռս Ռաֆայէլեանց և ի պէտս դպրատանն, զոր միջնորդութեամբ նոցա կամէին սոքա կառուցանել զդպրոցն բան բանից խրեանց. բայց իբրև առարուցին ընդ իս գրանն, կամեցան համարել զայն մասն ինչ հատուցումն զառ նոսա գրանն. ես յանձն ոչ առի զայն, պատճառաւ մի՛ զուցէ խնդիր ինչ լիցի զայնմանէ. այլ գրավանդակ գումարն հրիտակին ամբողջ ընկալայ, խոստանալով նոցա ընդունել զայն գրանն բան պայմանաց փոխանակագրի, զի եթէ հատուցցի ձեզ այդր, հատուցից նոցա այր։

«Բայց որ կարի կարեւորագոյն է ինձ գրել, և Հասարակութեանս վաղվաղակի և անյապաղ ի գործ դնել, զի ընդ առանալ զգրանն զոր փոխանակագրով առաքեմ՝ գնեսցէ զնոսին ի պէտս դպրատան որ և ազգաս մանկանց ազգիս, և զմերհակ կարուածոցն հատատեսցէ յանուն կոմսիսարաց, տիկնոջ Անեայ Սամուէլ Մուրատի, և Պարոնաց Եղուարդայ և Յովհաննու Սամուէլ Մուրատի, և յանուն միաբանութեանս. և զի զօրինակ մերհակին հատատեալ յօրինաց տեղւոյդ և վկայեալ ի Հիւպատէ Անգղիոյ՝ առաքեսցէ Մուրատեանց. բայց զբուն բնագիրն առ իւր ի վանս պահեսցէ. զայս կարեւոր զգուշութեամբ արասցէ ազաչեմ։

«Նոյնպէս ծրարեալ ի թղթիս առաքեմ ձեզ զօրինակ հատատեալ գաշնագրին և մերհակի ազատութեան, և հաշուէցրին, զոր կամին սոքա զի ըստ պատշաճի տպագրեսցէ

վիրաւորութիւնս ի վերայ մեծութեան և ընտիր թղթոյ, և հաստատեալ զնոսին ի Գերապայծառ և յընդհանրական Արբոյէ ուխտս և ի համօրէն Հայոց այդր եղելոց, առաքեսջիք նոցա օրինակ մի։ Բայց կարի կարեւորն և զոր ըստ դաշանցս պարտ է վիրաւորութեանս նոցա առաքել, է մարհակ լիուլի ազատութեան, զորոյ օրինակն առաքեմ ձեզ այդր։ Նոյնպէս և զնորոգ վաւերականն գործակալութեանս ըստ կանոնի հաստատեալ առաքեսջիք ինձ այսր. և զի կրկին օրինակ արասջիք զայն, առաքեսջիք ի վերայ Յովհաննու Եկեղեցեաց։

„Կարեւոր այժմու գրամոյ փութեան կարի շատ և անասանելի է, քանզի 25 առ 100 պարտ է կորուանել. և զի այն եւս ոչ զիւրաւ գտանի, վասն այսորիկ խարհուրդ տան ինձ ունք՝ արծաթ և ոսկի գրամ առաքել այդր. բայց առ՛ առաքեցից զայն՝ ոչ գիտեմ։ Արդ եթէ Ռաֆայէլեանք զայս ծառայութիւն յանձն առնուցուն, բարւոք լինի. ապա թէ ոչ՝ պարտ է զմի ոք ի մէնջ այսր առաքել ի Վենետն, որպէս զի եւ սասի ուղղակի առաքեցից առ նա, և նորա վաճառեալ զայն՝ յաջողակ փոխանակագրով հատուցէ զարծաթն ի Վենետ. առկայն որպէս և զիւրդ յարմար և պատշաճ համարիցի հատարակութիւնն՝ այնպէս արասցէ, միայն եթէ այսպէս և եթէ այնպէս վաղվաղակի ծանուցէ ինձ զկամս իւր։

„Գիտեմ զի ցանկայք լսել զլուրս տեղւոյս, մանաւանդ թէ զկարծիս Մարտիրոսոյ որ զգործառնութենէս զայսմանէ, զհրիտակէ գրրատանն։ Ամենք ասեն՝ թէ ընդէ՞ր թողաք նոցա զվաշին հրիտակի ողորմութեան. կէսք՝ թէ մեծ փող է զոր գտաք մեք. այլք՝ թէ ունէի՞ ես իշխանութիւն այնպէս աւարտելոյ զրան հրիտակի աղքատաց։ Բայց որ կարի հիանալին է մոտ նոցա, թէ զիւրդ բացարձակ յանձնեցին նոքա զամենայն ինչ ի կամս Հաստատութեան, և որպէս հաստատեալ եռուն ի ձեռս իմ զայնչափ գումար գրամոյ։ . . . Եւ այս զրոյց այնչափ տարածեցաւ ի քաղաքիս, մինչեւ ի զարմացումն ածել և զնոսին իսկ Մարտիրոս, զՆերսարդ և զՅովհաննէս։

«Զայս և առաւել քան զայն բանս խօսին ամենեքեան բար-
քանց իւրեանց, ասկայն ելթէ այսպէս և ելթէ այնպէս, բարե-
պաշտական կամք հանդուցեալ կտակարարին կատարեցաւ,
որով և անուն Աստուծոյ փառաւորեցի միշտ ի կամս երկիւ-
ղածաց իւրոց։

«Աւելորդ համարիմ յիշեցուցանել Արհիապատիւ Հօրդ՝
թէ ո՛րպէս և զի՞նչ պարտիք գրել առ արժանապատիւ ժա-
ռանգս և կտակակատարս հանդուցեալ Աղա Սամուէլ Մու-
բատի, նոյնպէս և առ բարեացապարտ Պարոն Լազարովիչ։
Զնկարագիրն հանդուցեալ Աղա Սամուէլի Մուրատեան յայ-
լում պատեհութեան առաքեցից ձեզ, զի փոխադրեալ ի վերայ
պղնձոյ գիցի ի ճակատ յայտարարութեանն զոր ի Հայ և յԵ-
ուրոպացի լեզու ունիմք հրատարակել։

«Բազում խոնարհութեամբ և յարգանաք ողջոյն և համ-
բոյր Արհիապատիւ Աֆոյդ մատուցանեն ամենայն բարեկամք
որ ի քաղաքիս։ Բազում կարօտիւ և սիրով ողջոյն մատուցա-
նեմ համօրէն Վ. Հայց և Եղբարց որոյ կրօնիս։

«Մնամ

«Ձերումդ Արհիապատիւ Հայրութեան

«Նուաստ ծառայ

«Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈՂՈՐԵԱՆ.»

Ահա և այսու գրութեամբ գործակալն միաբանութեան
Հ. Սարգիս Թէոդորեան ցուցանելով ցուցանէ, զկարեկցու-
թիւն, զանյիշաչարութիւն և զյարգութիւն իւր առ ժառանգս
և կտակակատարս հանդուցեալ բարերարին, և կատարէ
զխոստումն իւր առ նոսա՝ իրաւախոհութեամբ և գաշնաւո-
րութեամբ իւրով. ցուցանէ զկարեկցութիւն՝ արդարացուցա-
նելով զնոսա ի չկարել նոցա հատուցանել զօրինաւոր վաշխ
դրամագլխոյ հրիտակին. և զանյիշաչարութիւն իւր՝ չյիշելով

գնարան որով տաւեալ էին նմա զմարդկանն իրրեւ իրական հաստատումն հրիտակին՝ առանց տորագրութեան իւրեանց. և զյարգութիւն իւր՝ յիշեցուցանելով առաջնորդին իւրում՝ թէ որպէսի պարտաւորուն պատասխանի պարտ էր նմա առնել թղթոյ նոցա։

Կատարէ և զխոստումն իւր առ նոսա ի գաշնագրութեան անդ, խնդրելով ի միաբանութենէն անթերի և անյապաղ կատարել զպայմանսն և զկամս նոցա, այսինքն է գնել գետին և կալուածս վասն զպրոցսն յանուն ժառանգաց և կուսակալատարաց բարերարին և միաբանութեան, և հաստատել համբրէն միաբանից զմարդկանն լիուլի ազատութեան նոցա ի պատասխանատուութենէ հրիտակին ողորմութեան, հանդերձ տպագրութեամբ ի Վենետ, և ցանկութեամբ յաւելոյ զփառս հանգուցեալ բարերարին ազգիս՝ փարագրել տալ ի վերայ պղնձոյ զնկարագիրն նորա, և հրատարակել զայն ի Հայ և յԵւրոպացի լեզուս յարեւելս և յարեւմուտս։ . . .

Եւ տակայն ի վերայ այսր ամենայնի, փոխանակ երախտեաց ապերախտս ընկալաւ ի նոցանէ. զի խնթիւ հայէին ի նա, և անդադար որոգայթս լարէին նմա, յօրէ անտի աւարտելոյ նոցա ընդ նմա զրան հրիտակին, որպէս և տեսանի յընթացս պատմութեանս. վասն զի զի ընդդէմ կամաց իւրեանց և բռնի բերան յայն աւարտումն բանի հրիտակին։

Զերեւի ինչ յաչս նոցա երախտիք նորա, այլ մանաւանդ յանցաւոր և թշնամի համարին զնա, և ՀԱՄԱՐԻՆ միշտ պատճառս գտանել վրէժս առնլոյ ի նմանէ, որպէս զիւրդ և ելն։ . . .

Այլ Հ. Սարգիս Թէոդորեան չպակասի երբէք, ոչ ի պարտուց պաշտաման իւրոյ, պահելով ամենայն զգուշութեամբ զարբազան աւանդն ի ձեռին իւրում՝ զիրաւունս ազգին, և ոչ ի պարտուց ճշմարիտ բարեկամութեան իւրոյ առ ժառանգս հանգուցեալ բարերարին, կարեկից լինելով նոցա ի նեղութեան իւրեանց, և տալով նոցա միշտ խրատս կարեւոր ի հաստատութիւն և ի պայծառութիւն տան իւրեանց. և ոչ այսչափ միայն, այլ և հարատար ինն և արդա-

բացի հնարիւք ազատել զնոսա ի ժանեալ գազանին կոչեցելոյ ինոցանէ, ի կաշառակուրծ և յանօրէն ընդհանրական փաստաբանէն Հէրպէրթ Քամիլանէ, որպէս տեսցի յառաջիկայդ։

ԳԼՈՒԽ ԺԳ.

Թէ ո՛րպէս ընդհանրական փաստաբանն Քամիլոսի տագնապիւբ զկտակակատարս Աղա Սահռէդի վասն հրխտակին. — Հնարագէտ խորհուրդն տուեալ նոցա ի Հ. Սարգսէ. — Բանք Փրիլչէլի փաստաբանին Մուրատեանց ընդ Հ. Սարգսի. — ԺԳ. բուղբ նոցա առ Սրբազն. — Խորհուրդ Պ. Սէր Սամի առ Մուրատեանս. — Պատասխանին Հ. Սարգսի առ բանս նոցա.

Այ յետ բազում՝ աւուրց սատրման բանի հրխտակին ողորմութեան, գործակալ ընդհանրական փաստաբանին Քամիլոսին՝ Զինիտամբի անուն Մարտպար յազգէ գնայ առ Պարոն Եդուարդ Մուրատ և պահանջէ ինքնին զմիւս մասն խառատեալ արծաթոյն, այսինքն է կաշառոյն՝ զորմէ վերագոյն յիշատակեցաք։ Զանոյ Պարոն Եդուարդ տալ նմա զայն, ասելով թէ ասպատեալ են նոքա զբան հրխտակին ողորմութեան ընդ օրինաւոր գործակալի միաբանութեանն՝ լիուլի հաստատմամբ նորին, վասն որոյ և չունի իրաւունս ընդհանրական փաստաբանն այնուհետեւ հարցանել և պահանջել ինչ ի կտակակատարաց հանգուցելոյն։

Զայն լուեալ Քամիլոսի ի գործակալէն իւրմէ՝ կոչէ զերկուսին եղբարսն Մուրատեանս և հարցանէ, ինոցանէ՝ թէ ընդ ո՞ւմ և ո՞րպէս ասպատեալ իցեն նոքա զբան հրխտակին ողորմութեան. միանգամայն և ապէ առնէ, զլխաւոր վերատեսչին

Բարեկարգութեան (փոլիսի) զի հարցեալ և քննեալ տեղեկացայ թէ ոչ իցէ անձն այն Մխիթարեան միաբանութեան եկեալ անդր ի Մատրաս, և թէ զինչ վախճան գալստեան նորա։ Կոչի Հ. Սարգիս Թէոդորեան ի վերատեսչէն, յանդիման լինի նմա, և հարցանի ի նմանէ. և Հայր Սարգիս Թէոդորեան առնէ նմա պատասխանի՝ թէ վասն երկուց իրաց եկեալ է ինքն ի Մատրաս. մի՝ իբրեւ տաներէց տիկնոջ Անանայ Մուրատի. և միւս, իբրեւ գործակալ վասն բանի հրիտակին ողորմութեան։ Վերատեսուչն ոչ հաստատել Հ. Սարգսի Թէոդորեան զտուեալ պատասխանին գրով ձեռին նորա, և արձակէ զնա քաղցրութեամբ, ներուումն իբրեւզբերով ի նմանէ զի աշխատ արար զնա գնալ անդր և անցուցանել ժամն ինչ։

Փամիտրնի առեալ զտեղեկութիւնն ի Մուրատեանց և ի վերատեսչէն Բարեկարգութեան, ոչ շատանայ այնու, և չզադարէ ի պահանջատեաց իւրոց ի Մուրատեանց. առաքէ վերատին զգործակալ իւր զՋինիտամբի առ Պարոն Եդուարդ Մուրատ, պահանջել ի նմանէ զմնացեալ մասն արծաթոյ կաշառոյն. և նա զլանայ դարձեալ՝ երկրորդելով զառաջին պատճառսն, թէ առարտեալ են նոքա գրան հրիտակին ընդ օրինաւոր գործակալի Մխիթարեան միաբանութեան Վենետկոյ, և չունի նա իրաւունս հարցանելոյ և պահանջելոյ ինչ ի կատակատարաց։ Յայնժամ զչարեալ Փամիտրնի ընդ վրիպումն իւր յանկարութենէն՝ մատուցանէ վաղվաղակի ի դերագոյն ատեանն Անգլիացւոց ի Մատրաս զանդատագիր ընդդէմ Մուրատեանց, ասելով զնոսա առանդել ի գանձատուն տէրութեան զարծաթ հրիտակին ողորմութեան հանդերձ տասնամեայ շահուք՝ զոր ընկալեալ էին անտի։

Զարհուրեալ Մուրատեանց ի լուր գանդատագրոյն, կոչին զՀ. Սարգիս Թէոդորեան և հարցանեն ի նմանէ խորհուրդ՝ թէ զինչ պարտ իցէ առնել և զերծանել ի ձեռաց անօրէն Փամիտրնին. որով յայտնեն նմա զդաղտնի գործն իւրեանց, զտուեալ և զխոստացեալ կաշառսն՝ հանդերձ տոկոսիք ընծայիւք։ Որոյ տայ նոցա Հ. Սարգիս զայս խնդ և ասէ.

«Կոչեցէք զգործակցին Փամփորնի զՁինիտամրի, և ցու-
«ցէք նմա որպէս թէ հաւանեալ իցէք հատուցանել զմիւս
«մասն խոստացեալ արծաթոյն, վասն որոյ թող բերցէ
«ի տեառնէ իւրմէ զիր ընդունելութեանն արծաթոյն. և յորժ-
«ամ բերցէ նա զայն, թաքուսջիք զուք արս երկուս ի սենե-
«կի ձերում յանկեան ուրեք, զի լուիցեն զխօսս ձեր ընդ
«նմա. և ապա յանկարծակի ելեալ նոցա անտի արտաքս՝
«ասացեն ցնա. Ցիրաւի ազնուական են փարք և արդար գործք
«տեառն քո Փամփորնի։ Իսկ զուք զգիր ընդունելութեանն
«պահեսջիք ի ձեռս ձեր, և զՁինիտամրին արձակեսջիք ի բաց.
«և ապա գնացեալ առ այլ ոք փոստարան պատմեցէք նմա
«զգնացս Փամփորնի ընդ ձեզ, ցուցանելով զգիր ձեռին
«նորա ի հաստատութիւն բանից ձերոց՝ հանդերձ թաքու-
«ցեալ վկայիւքն. և պատուիրեցէք նմա յօրինել ձեզ գանգա-
«տագիր մի ընդդէմ Փամփորնի, վասն կաշառակրծութեանն
«նորա, և այլն։ Գիտասջիք զի գոգարեցցի նա յոյնժամ
«ի տոխելոյ զձեզ վասն պահանջմանն հրիտակին, այլ և
«դարձուցէ արդեաք ի ձեզ զընկալեալ մասն արծաթոյն։»

Առնեն Մուրատեանք ըստ խրատու Հ. Սարգսի, և յաջողի նոցա յամենայնի. քանզի երկուցեալ Փամփորնի յանուշտ օրինաց ազգին իւրոյ՝ միջնորդ հաշտութեան ունի զնա ինքն զփոստարանն Փրինչմէն, որում պատուիրեալ էին Մուրատեանք յօրինել զգանգատ իւրեանց, առ ի լուցուցանել զնոսա, և միանգամայն պահել զպատիւ և զիրաւունս իշխանութեան իւրոյ։ Վասն որոյ գնայ փոստարանն Փրինչմէն ի տուն Պարոն Եղուարդայ Մուրատեան, և կոչեալ անդր զՀայր Սարգիս, հարցանէ ի նմանէ նախ՝ թէ ունիցի՞ զիր գործակցութեան ի միտրանութենէ իւրմէ, և ապա՝ թէ ուրատեա՞լ իցէ զբան հրիտակին, և ընկալեալ ի Մուրատեանց զարծաթն։

Ցուցանէ նմա Հ. Սարգիս զգիր գործակցութեան իւրոյ, զոր թարգմանեալ էր յառաջագոյն Յովհաննէս Մուրատ ի լեզու Անգղիացւոց և պահեալ իբրեւ ի հաստատութիւն

աւարտման բանին. զոր տեսեալ և ընթերցեալ Փրինչմէնի՝ շատանայ ընդ այն լիովին ։

Յուցանէ նմա Հ. Սարգիս և զմուրհակս վաճառական ընկերութեան. զոր գտեալ նորա մի առ մի՝ իմանայ զգումարն և տեսանէ ի նոսին զատորագրութիւն ձեռաց Մուրատեանց, որով և հաւատայ հատուցման արծաթոյն, և ասէ ցՀ. Սարգիս իրրեւ ընդ կատակս թէ ; Կարող եմ և ես ինքն սեփականել զգոսին վասն պարզ ստորագրութեանն որ ի դոսա, ոչ գոլով անցուցեալ յանուն Հ. Սարգսի ոչս առանձին գաշնագրութեանն զոր վերագոյն ծանուցաք ։

Խնդրէ ի Հ. Սարգսէ և զերրորդ օրինակ փոխանակագրոյն 11,000 լիրայից որ ի վերայ Ռոտֆայէլեանց, առ ի ցուցանել զայն Քամիսարնի ի հաստատութիւն աւարտման բանի հրիտակին խակութեամբ, հանդերձ զրով կտակակատարաց՝ որով ցուցանեն նոքա զիրաւունս Մխիթարեան միաբանութեան ի գործադրութիւն հրիտակին, միանգամայն և զհաւատարմութիւն և զհաստատութիւն նորին. որով և յայտ առնեն թէ աւանդումն բոլանդակ գործոցութեան գպրոցին ի ձեռս նորա՝ արդարութեամբ լեալ է և խոհեմութեամբ ։

Ցանի Փրինչմէն զայն ամենայն տեղեկութիւն և տայ փաստաբանին Քամիսարնի. և նա թէպէտ և հաւատայ խակապէս աւարտման բանի հրիտակին, բայց քաջ ճանաչելով և փորձ խակ գոլով անհաստատ բարուց Մուրատեանց, միանգամայն և ի վրէժ խորամանկ հնարից նոցա՝ ընդդէմ անձին իւրոյ, պայմանս պարտուց դնէ նոցա՝ հանդերձ տուգանօք, զի եթէ ի միջոցի երկուց ամաց բոլանդակ արծաթ հրիտակին ոչ անցուցի ի ձեռն Մխիթարեան միաբանութեան ի Վենետիկ, և գպրատունն Սամուէլի Մուրատայ ի միջոցի չորից ամաց ոչ կատուցի, պարտապան լիցին կտակակատարքն հատուցանել զբոլանդակ արծաթ հրիտակին՝ հանդերձ տուգանօք ։ Եւ առաքէ նախ զդաշնագիրն զայն պարտուց պայմանաց առ երիս կտակակատարսն Մուրատեանս՝ հաստատել ձեռամբ իւրեանց, և դնել ի դիւանատուն Սամեին Անդրիացւոց ի Վարդա, և ապա յետս կոչէ անտի զդանդատագիր իւր որ

ընդդէմ Մուրատեանց, և դարձուցանէ յետս առ նոսա զընկալեալ մասն կաշառոյն։

Թէպէտ և այն պայմանք խիստ և նախատական թուին Մուրատեանց, այլ չկարեն մերժել, զի մի՛ կամակատար և խարդախ երեւեցին յաչս աշխարհի ի հատուցման անդ հրիտակին. վասն որոյ ընդունին զայն, և զպատճէն պայմանացն առաքին ի Վենետիկ առ միաբանութիւնն՝ ձեռամբ Հ. Սարգսի՝ ցուցանելով զծանրութիւն պարտուց իւրեանց, և փութացուցանելով զնոսա ի գործադրութիւն իրաց զպրատանն։

Ի հաստատութիւն վերոյիշեալ պատմութեան յուսկցին առ ի ԺԳ թղթոյ Հ. Սարգսի գրելոյ ի 10 յունվարի 1828, կարեւորագոյն բանքն՝ օրինակ զայս.

„ Յետ առարելոյ մեր առ զրան հրիտակի զարտանն, և առաքելոյ այդր առ Արհիապատիս Հայրութիւնդ զհատուցեալ զաշնագիրն, իրրեւ անցանէին առաջ երեսուն և աւելի եւս, զրեաց Փամիրն ընդհանրական փաստ բան առ կամակատարսն Մուրատեանս թէ ընդէր յապաղեն նոքա տակաւին զկատարումն հրիտակին. որում՝ եռուն ոչ պատասխանի՝ թէ արդէն առարեալ իցեն զայն։ Ընդ այս պատասխանի նոցա չբաւականացեալ անդրամին կոչեաց զնոսա առ ինքն խօսել առանձինն, և հարցանել՝ թէ ո՞րպէս և ընդ ո՞ւմ առարեալ իցեն։ Ասեն ոչ, թէ ունելով առ առ իւրեանս զոմն ի Մխիթարեան հայրց, որ ունի օրինաւոր և բացարձակ իշխանութիւն իմիսրանութենէ իւրմէ առարելոյ ընդ նոսա զրան հրիտակի զպրատանն, առարեն ընդ նմա զայն։ Տհաճեալ նորա ընդ առարումն իրացն, ասէ ցնոսա քանհանոք իմն. „ Տեղեկացայց նախ զվերապատուելոյն „ ձերմէ, և ապա քննեցից զօրինաւոր գործառնութիւն ձեր „ ընդ նմա։ „ Զայս և առաւել քան զայն բանս ամբարտաւանութեան խօսեցեալ արձակէ զնոսա։

„ Ընդ այս անակնկալ հակառակութիւն անդրամին խոսեալ նոցա՝ տարակուսին թէ զինչ պարտ իցէ առնել։ . . . Ապա յետ քանի մի առուրց եկն հրամանագիր առ նա ի վերա-

տեսչէն Փոլիսի, գնալ յանդիման լինել նմա ըստ ժամադրութեանն։ Ի վաղիւ անդր գնացեալ իմ անդր՝ յանդիման եղէ նմա. և հարց ինձ նախ զվիճակէս և զվիրաւորութիւնէս, և զպատճառս զոլորտեանս այսր ի Մատրաս. և ապա զաւարտունեն զործոյս, և զդարձէս վերստին ի Վենետիկ։ Եւ ես նոյն պատասխանի, թէ զգործն իմ աւարտեցի ընդ Մուրատեանս, իսկ վասն դարձին իմոյ չկարեմ ասել թէ երբ լիցի. քանզի որպէս հրամանաւ վիրաւորութեանս եկեալ է իմ այսր, նոյնպէս ինամ հրամանի նորին՝ դառնալ անդրէն։

«Եատացեալ նորա ընդ պատասխանիս՝ արձակեաց զիս քաղաքավարութեամբ։ Ապա յետ քանի մի աւուրց վերստին գրեաց Քամիսարն առ Մուրատեանս գիր ձիգ, որով ծանուցանէր նոցա նախ՝ թէ չէ սոցա ըստ օրինաց և ըստ պարտուց կրտակատարաց աւարտեալ զպարտս իւրեանց, և ապա հրամայէր նոցա ապառնալեաք՝ վաղվաղակի տարեալ աւանդել ի գանձատուն տէրութեան զբովանդակ գումարն զրամոյ ողորմութեան. ապա թէ ոչ՝ ապառնայր սոցա յանդուգն բանիւք քանդել զնոսա։ Ընդ այն բանս անզգամին թէպէտ և խառնեցան սոքա, այլ ոչ սասանեցան. քանզի գիրն ոչ ըստ օրինի ի ձեռն օրինաւոր պաշտօնատարի տուաւ սոցա, այլ խարդախութեամբ մինչորդութեամբ չարարուեան արքանեկին իւրոյ ի ձեռն որոյ զրազումն կողոպտեալ և քանդեալ է։

«Եւ զինչ արդեաք. մինթէ և ի սոսա թափեաց զչարութիւն իւր անօրէնն. ոչ բնաւ. ազօթք որբոց և աղքատաց փրկեցին զսոսա ի ժանեաց նորին. քանզի ընդունեցաւ պատգամատարն չարութեան բանիւք բերանոյ և գրովք նորա ի լուր թագուցելոյ վկայից, և յանդիմանեալ՝ խայտառակութեամբ յետս դարձաւ։ Եւ իբրև այս ճարտարահնար պաշտպանութիւն եղեւ, ապա այնուհետեւ արհամարհեցին սոքա զհրամանն և զապառնալիս նորա։

«Իսկ անօրէնն ոչ գիտելով թէ յոտոգայթս էր ինքն, բազմաց յօրէնս ընդդէմ կրտակատարաց, պահանջել ի նոցանէ զբովանդակ գումար զրամոյ հրիտակին. քանզի որպէս յառաջագոյն ծանուցեալ եմ, նմա անկանի ըստ օրինաց

Անդրկասկայ պահանջել և պահպանել զիրաւունս ողորմութեան հրիտակաւ։ Իսկ թէ ոչ որ խրատու և հնարիւք ըմբռնեցաւ յորոգայթս անզգամն, և թէ որո՛վ պայմանօք յետս կոչեաց յասենէն զրողքն ընդդէմ Մուրատեանց, ծանուցից ձեզ յայլում պատեհի, զի երկար է յոյժ։

« Այլ իմ ամենայն հոգ մտաց և ջանք կամաց այս են միայն, ժամ մի յառաջ զրամանդակ գումարն հրիտակի գպրատանն ամբողջ և անվատանգ այդր ի վանս հասուցանել. զոր և ակնունիմ յաջողել Տէրամբ, որպէս և յաջողեցաւն ցարդ. քանզի առաւել քան զկէս գումարոյ արծաթոյն առաքեալ եմ այդր. այսինքն՝

« Յ17 ապրիլի 1827, 11,234 լիրէ ասէրլին, 13 փոխանակագրովք Մուրատեանց ի վերայ Ռաֆայէլեանց ի Լոնտոն, առաքեցի ի վանս ձեռամբ Ինիխի։

« Յ31 օգոստոսի 1827, 9583 լիրէ ասէրլին ի 41 փոխանակագիրս վաճառական ընկերութեան, ծրարեալ ի ԺԳ թղթիս առաքեցի ի վանս ձեռամբ Ինիխի։

« Ի14 սեպտեմբերի 1827, 8673 լիրէ ասէրլին 46 փոխանակագրովք վաճառական ընկերութեան, ծրարեալ ի ԺԳ թղթիս առաքեցի ի վանս ձեռամբ Ինիխի։

« Յ17 հոկտեմբերի 1827, 400 լիրէ ասէրլին ի 4 փոխանակագիրս, և այլ 300 լիրէ ասէրլին յ2 փոխանակագիրս, նոսին պատեհաւ առաքեցի ի վանս ձեռամբ Ինիխի։

« Որոց բոլանդակ գումարն 30,190 լիրէ ասէրլին. և հասուցումն նոցին յուսամ թէ եղեալ իցէ ի պայմանեալ ժամանակս, և անընդունելեացն խրատաբոլոր արարեալ բոլոր օրինաց վաճառականութեան, և զփոխանակագիրսն վաղվաղակի առ իս դարձուցեալ այդր։

« Նոյնպէս փութամ անցուցանել ի վանս և զմնացեալսն զրամոյ հրիտակին յընթացս տարւոյս, եթէ յաջողեսցի ինձ գտանել փոխանակագիրս վաճառական ընկերութեան. քանզի ոչ միայն յապահովագոյն են տրքին քան զայլ-վաճառականաց, այլ և դիւրին ի վաճառել ամենայն ուրեք։

Իսկ թէ ընդէ՞ր ոչ զնոյն խնամ զգուշութեան կալայ վասն

յառաջ յղելոյն, կրկին են այսմ պատճառք. մի՝ վասն վարվարակի հաստատանելոյ ձեզ այդր գումար ինչ դրամոյ զի գեռոյն գնեցի, և մեա՝ զի ունէի ի ձեռին իրրեւ դրաւական զդին Մուրատեանց տուեալ փոխանակագրոյն, պայմանաւ զի զկնի ընդունելոյ ձեր այդր զփոխանակագիրսն՝ հատուցից ես այսր Մուրատեանց զդին նոցին։ Եւ յաղագս այսորիկ թէպէտ և յառաջ գրեալ և ծանուցեալ եմ, բայց երկրորդեալս չէ ինչ աւելորդ։ . . .”

Թէպէտ և այսու հնարիւք զերծանին Մուրատեանք ի պահանջանաց ընդհանրական փոստարանին Հէրպէրթ Ֆամիլտոնի, այլ երկնչին ի նմանէ միշտ, ճանաչելով զոխակալութիւն նորա և զոգի անհնարին վրէժխնդրութեան. վասն որոյ ցարչամի ի Մարրաս լինի Ֆամիլտոնն՝ ակն ածեն Մուրատեանք ի նմանէ և չիշխեն յայտնել համարձակ զգիրչ մոաց իւրեանց ընդ հատուցումն հրիտակին և նեղել զՀ. Սարգիս, այլ հնարիւք ջանան միշտ հանել ի ձեռաց նորա զարծաթն զայն. մերթ զերկիւղ կորստեան նորին և զերաշխաւորութիւն իւրեանց ընդ այն պատճառելով, առաջարկեն նմա առանձել զայն ի գանձատուն տէրութեան, մինչեւ ընդ ժամանակս ժամանակս հատուցեն զարծաթն. և մերթ ընդ հաւատարիմ գործադրութիւն նորին կասկածելով, զիմեն առ այնոսիկ յորոց խորշէին երբեմն իրրեւ ի նախանձոտաց և ի չարախնդաց ոմանց, և յորոց ոչ միայն զանխուլ աւարտեալ էին զբան հրիտակին, այլ և պատուիրելով պատուիրեալ էին Հ. Սարգսի չխօսել և չհաղորդել նոցա բնաւ զայն։

Եւ պատճառք խակ ի պահարանի դնելոյ և ընդ կնքով իւրեանց տալոյ Հ. Սարգսի զմուրհակսն վաճառական ընկերութեան այն էին՝ զի մի տեսցին այլք, և մանաւանդ Պարոն Յովհաննէս Յարութիւն։ Այս առ նոսա իրրեւ առ կարեւոր և կարեկից բարեկամս իւրեանց, և իրրեւ առ խոհական և հանճարեղ խորհրդականս զիմեն, և խնդրեն ի նոցանէ խորհուրդ և հնարս՝ թէ ո՛րպէս կարասցեն հանել ի ձեռաց Հայր Սարգսի զհատուցեալ նմա արծաթ հրիտակին, և ընդ իշ-

խանութեամբ իւրեանց առնել զայն։ Մի ումն ի կարծելեալ բարեկամաց և ի քաջ խորհրդականաց անտի իւրեանց Աէթ Սամ անուն, նախ՝ իբր մանրմասար մեղադրէ զնոսա, զի զանխուլ յիւրմէ առաքեցին զքան հրիտակին. և ապա վասն օգտի հասարակաց բարեաց՝ խորհուրդ այսպիսի տայ նոցա.

“ Ընտրեցէք, ասէ, նախ ի բարեկամաց ձերոց առ անձինս
“ չորս, յորոց մին լիցի Հ. Սարգիս, և զինչք զարծաթ հրի-
“ տակին ողորմութեան յերկաթեայ արկեղ միւսմ՝ որ ունիցի
“ բանալիս չորս, և զորոց զմէն մի պահեսցէ իւրաքանչիւր
“ որ ինոցանէ. և յորժամ պէտք լինիցին հանել անտի գու-
“ մար ինչ արծաթոյ, չորեքին անձինքն ի միասին բանայցեն
“ զարկղն և ապա փակեսցեն։

“ Որոշեցէք ապա յԵրուսաղեմ եւս նոյնչափ անձինս իբրեւ գոր-
“ ծակալս, յորոց վերայ առաքեսցի ի սկզբան անդ գումար մի
“ արծաթոյ իբր 100,000 ռուբլի, և ապրի նոցա պատուէր գնե-
“ լոյ անդ երկիր յանուն Մուրատեան դպրոցին, և յանձնել
“ զայն ի ձեռս Մխիթարեան միաբանութեան Վենետկոյ, զի
“ եկամուտ նոցին կատարեսցէ նա զդպրոցն ըստ դիտաւորու-
“ թեան հանդուցեալ բարերարին. և քննեսցեն գործակալքն
“ որք յԵրուսաղեմ՝ թէ զիարդ յառաջանայ գործն ի ձեռս միա-
“ բանութեան, և ապրին նոքա ստ ի Մատրաս չորեցուն
“ ընտրեալ անձանց զայնմանէ տեղեկութիւն. եթէ հաճեա-
“ ցին նոքա ընդ յառաջադիմութիւն դպրոցին, յաւելցին
“ առաքել անդր նոյնպէս և այլ 100,000 ռուբլի, և այնպէս
“ հետզհետէ մինչեւ ցվախճան գործոյն։ Եւ եթէ ոչ հաճեա-
“ ցին նոքա ընդ յառաջադիմութիւնն, դադարեսցեն առա-
“ քել անդր այլ արծաթ, մինչեւ դարման տարցի այնմ ի ձեռն
“ գործակալաց իւրեանց յԵրուսաղեմ. ապա թէ ոչ՝ անհնարին
“ համարիմ ես, ասէ, զյաջողութիւն գործոյն և զդադարումն
“ վիճոյ և խռովութեան, ի մէջ կաթոլիկաստարաց և Մխի-
“ թարեան միաբանութեան, և գանգատանաց յաղգայնոցս,
“ այլովքն հանդերձ.”

Ընդ այս խորհուրդ և կարգաւորութիւն Պարոն Աէթ Սամի

հաճին յոյժ Մուրատեանք. քանզի և շատ համարին հանել միանգամ զարծաթն ի ձեռաց և յիշխանութենէ Հ. Սարգսի. այնուհետև զիւրին լինէր նոցա ի ձեռս իւրեանց բերել զայն, և զՄխիթարեան միաբանութիւնն խաղալիկ առնել իւրեանց և շարշարել անդադար։ Աղաչեն զՍէթ Սամ զի նա լեցի մի յընտրելոց անտի ի գործն և զլխաւոր ի մէջ նոցա. և նա զառաջինն խոնարհութեամբ ի մեն զծերութիւն իւր և զանբաւականութիւն պատճառս տուեալ հրաժարի ի պաշտամանէ անտի, բայց ապա վասն սիրոյ իւրոյ առ նոսա և վասն բարեաց հասարակաց խոնարհի յաղաչանս նոցա. այլ և յանձին ունի խօսել ընդ Հ. Սարգսի վասն առաջարկութեանն, և յուսայ հաւանեցուցանել զնա։

Գնայ նա ի գործատուն Մուրատեանց, ըստ ազգարարութեանն նոցա, խօսել ընդ Հ. Սարգսի որ ըստ զիպաց ի մեն գտանի անդ. ցուցանէ նմա թէ լուեալ ի՞նչ իւր զոհաճութիւնն որ ի մէջ Մուրատեանց և Հ. Սարգսի, և կամիցի ինքն յամենայն սրտէ բառնալ զայն ի միջոյ։ Բայց տեսեալ թէ չկարէ ինքն անդ առաջի Մուրատեանց հակառակ ինչ կամաց նոցա խօսել, առ ի համոզել զՀ. Սարգիս ըստ կարծեաց իւրոց, պատճառէ զկարճութիւն ժամանակին և զերկայնութիւն կարեւոր խօսակցութեանն, և հրաւիրէ զնա ի տուն այդուհետ իւրոյ ի վաղիւ անդր ի 11 ժամու առաւօտուն, հանդերձ Յովհաննու Յարութենիւ, որ և նա անդ գտանի։ Հաւանի ընդ այն Հ. Սարգիս, և մեկնին ի միմեանց գնալ ի տեղիս իւրեանց։

Ի վաղիւ անդր ի ժամադրեալ ժամու գնայ Հ. Սարգիս ընդ Պարոն Յովհաննու Յարութենի առ Պարոն Սէթ Սամ, հանդերձ կարեւոր գրուածովքն որ վասն բանի հրատակի գրոցին։ Ընդունի նա զնոսա սովորական քաղաքավարութեամբ, և սկսանի նախ հաւատարիմ առնել Հ. Սարգսի զխղաղասէր բարս իւր և զազգասիրութիւն, և ապա իբրեւ միտկ դարման բառնալոյ ի միջոյ զոհաճութիւն երկուց կողմանց, և վախճան տալոյ գործոյն փութով, զկարծեցեալ խռհական խորհուրդ իւր և զգեղեցիկ կարգաւորութիւնն առաջի առնէ նմա երկայնաբանութեամբ. և իբրեւ աւարտէ զայն՝ առանց ինչ ընդհա-

տելոյ, յայնժամ բացեալ Հ. Սարգսի զկոսակ հանդուցելոյն մատուցանել նմա զայն յընթերցումն. և իբրեւ ընթեռնու նա զայն, հարցանէ ցնա Հ. Սարգիս՝ եթէ գտանի անդ կարգաւորութիւնն այն։ Ասէ ցնա Սէթ Սամ թէ; Ոչ։ Ասէ ցնա Հ. Սարգիս. «Ապա որոշ իրաւամբք կարգաւորութիւնդ «այդ ունիցի տեղի ի բանի հրիտակին։»

Յաւելու Հ. Սարգիս տալ նմա ընթեռնուլ և զդաշնագիրն և զմուրհակն ընդունելութեան արծաթոյ հրիտակին, և զմուրհակն ազատութեան Մուրատեանց. և իբրեւ ընթեռնու զայնս, հարցանէ ցնա Հ. Սարգիս թէ «Ով իցէ այն որ տայ «անդ կատակատարաց մուրհակ ընդունելութեան արծա- «թոյն, և մուրհակ ազատութեան յամենայն պահանջատաց. «ոչ ապաքէն դարձակալն միրանութեան Հայր Սարգիս «Թէոդորեան. և ոչ ապաքէն այնուհետեւ միրանութիւնն «Վենետկոյ է միայն երաշխաւոր և պարտապան ընկալեալ «արծաթոյ դպրատանն և գործակրութեան նորին։ Եւ այս «ոչ ըստ կամաց և ըստ քմաց կատակատարացն Պարոն «Եղուարդայ և Յովհաննու Մուրատեանց, որք կամեցան «երբեմն և այժմ ոչ կամին, և որք յաճենցին նմա դար- «ձաթն՝ և ապա զզէացեալ յետս կոչեն զայն, այլ ըստ վեր- «ջին կամաց և ըստ զովելի ցանկութեան հանդուցեալ կոս- «կադրին Սամուէլ Մուրատի, հաւատարով նորա զայն «ի ձեռս Մխիթարեան միրանութեան, և ըստ զօրութեան «բանից հաստատեալ կոսկի նորա։

«Ապա զինչ տեղի թերահաւատութեան կայցէ կատակ- «կատարաց, և կամ որ իրաւունք իշխանութեան նոցա, հա- «նել զարծաթ հրիտակին ի ձեռաց գործակալի Մխիթարեան «միրանութեան, և կամ զայլս ունել ի գործն յայն խաս- «նել։ . . . Զարմանամ ես յոյժ, ասէ, զի դու այր ծեր և «փորձ այսպիսի իրաց՝ տեղի տաս անիրաւ կամաց նոցա։»

Ամաչեցեալ Պ. Սէթ Սամի յիրաւացի և ի համարձակ բա- նից Հ. Սարգսի, փոխէ զլեզու իւր ի կերպարանս շողոքոր- թութեան, յուսալով թերեւս այնու և առաւել եւս շահու ակնկալութեան յոգուս ազգքառաց ազգին հանգել զնա զի-

ջանել յառաջարկութիւն իւր, և բան սովորական առակա-
խօսութեան իւրում ի մէջ բերէ զառակս զայս.

“ Առն ուրումն ի խորխորատս անկեալ, ասէ, մինչ խոր-
“ տակին անդամքն, և իրրեւ անշնչացեալ մնայ անդ, ան-
“ ցանէ ընդ այն տեղի այլ ումն որոյ անուն Հ. Սարգիս Թէո-
“ դորեան կոչի. Ջանայ ամենայն հնարիւք և կարողութեամբ
“ և հանէ զնա ի խորխորատէ անտի։ Թէպէտ և զերծուցանէ
“ զայրն ի մահուանէ, բայց բաղուկք նորա մնան խորատ-
“ կեալք, ուստի կարօտի բժշկի և վիրաբուժի, զի բժշկեա-
“ ցեն և կապդուրեսցեն զնա։ Դու, ասէ, խոհեմութեամբ քով
“ և ճարտարութեամբդ վիրկեցեր և կենդանացուցեր զդրա-
“ մապուխն հրիտակի դպրատանն. արդարեւ ի խորխորատէ
“ հաներ զայն և ի խորոց անդնդոց, ի ձեռաց ասեմ Մու-
“ բատեանց . . . վասն որոյ շնորհ յոյժ ունիմք քեզ մեք և
“ ազգն մեր ողջոյն, և շնորհակալ լիցուք քեզ յաւիտեանս
“ ժամանակաց։ Արդ մնայ մեզ, ասէ, առողջացուցանել
“ զբազուկս նորա, այսինքն պահանջել զվաշխս դրամագլխոյն
“ և ամբողջացուցանել զայն. և զայս այսու հնարիւք կարեն
“ նոքա առնել զայն. վասն որոյ պարտ է քեզ, ասէ, զինչ-
“ նել առաջարկութեան իմում։”

Միծաղեալ Հ. Սարգսի ի միտս իւր ընդ խորամանկութիւն
ծերոյն, և յաւելեալ ընդ թեթեւամտութիւն Մուրատեանց,
ասէ. “ Եթէ իցեն այլք ոմանք, բաց ի Մխիթարեան միաբա-
“ նութենէն, որք ունիցին իրաւունս և իշխանութիւն պահան-
“ ջելոյ ի Մուրատեանց զվաշխ դրամագլխոյ հրիտակին ողոր-
“ մութեան, կարեն նոքա և առանց այդր կարգաւորութեան
“ պահանջել զայն ինոցանէ. վասն որոյ աւելորդ և անօգուտ
“ համարիմ ես զինչանել յառաջարկութիւն քո։ Բայց դի-
“ տաջիր և զպատճառս թողլոյ իմոյ նոցա զվաշխ դրամա-
“ գլխոյ հրիտակին. քանզի հաւատարմացուցանեն նոքա ինձ
“ երդմամբ չափ՝ թէ չկարեն հատուցանել և զվաշխն առանց
“ քանզելոյ տան իւրեանց ի ապառ. և զի միաբանութիւն իմ
“ չկամի երբէք զի պատճառաւ ողորմութեանն քանզեսցի
“ տունն բարերարի ազգին։”

Տեսեալ Սէթ Սամի զհաստատութիւն մտաց Հ. Սարգսի և լուեալ զրանաւոր պատճառսն, յուսահատ լինի ի յաջողութենէ կարգաւորութեան իւրոյ, և լռէ, և սկսանի այնուհետև զայլ ինչ իրաց խօսել ընդ Հ. Սարգսի։

Հրաժարեալ Հ. Սարգսի ի Սէթ Սամէն դառնայ ի բնակութիւն իւր ի տուն տիկնոջ Աննայի՝ հանդերձ Յովհաննու Յարութենիւ. անդ դտանէ և զՊարոն Եդուարդ Մուրատ, որ ապատէր անհամբերութեամբ լսել զելս առաջարկութեան Սէթ Սամին։ Պատմէ նմա Յովհաննէս Յարութիւն իրրեւ սկսանչալուր զամենայն խօսակցութիւնսն որ յերկուց կողմանց մի ըստ միոջէ։ . . . Եւ նորա լուեալ զձայն պահանջման վաշխի դրամագլխոյն, ի բարկութիւն սրտմտութեան շարժի ընդդէմ Սէթ Սամին, և անէծս ահագին տուեալ նմա՝ ապա ասէ ցՀ. Սարգիս.

“Հայր տուրբ կալջիր դու զմուրհակսն վաճառական ընկե-
“րութեան և պահեսջիր հաստատութեամբ ի ձեռս քո և
“ յիշխանութեանդ, որպէս և պահեցեր մինչեւ ցարդ. և ես
“ գնամ այժմ հաւանեցուցանել զեղբայրն իմ զՅովհաննէս
“ Մուրատ, և խելամուտ առնել զնա շարութեանն Սէթ
“ Սամի։”

Զայս ասացեալ մտանէ վաղվաղակի ի փալանքին, որ է դեռպակ, և գնայ առ եղբայր իւր ի տուն այրոյ նորա, և պատմէ նմա զամենայն։ Զուարթի, սրտմտի և Պ. Յովհաննէս Մուրատ ընդդէմ Սէթ Սամի, և անէծս քանի մի և նա տուեալ նմա՝ գադարի առ ժամն ի խորհրդոյն։

ԳԼՈՒԽ ԺԳ.

Զարուշահոբիւն և խարդարոբիւն Եդուարդայ Մուրատի ի տալ Հ. Մարգսի փոխանակագիրս. — Խոհեմոբիւն և ընդդիմոբիւն ընդ այն Հ. Մարգսի. — Թէ ոյսպէս դաւ գործեցին նմա Մուրատեանք առաջարկելով Պ. Լազարովիչի պահանջել ի նմանէ 5000 հուն ի վարձ աշխատոբեան իւրոյ. — Պատասխանին Հ. Մարգսի ընդ այն. — Անգամեան գնացք Պ. Լազարովիչի ընդ նմա, և ապա տարբերութիւն. — Յանդոգն և նենգաւոր խորհոբդ Մուրատեանց. — Զգուշոբիւն Հայր Մարգսի յայն. — Կատաղոբիւն Մուրատեանց ընդ զգուշոբիւնն այն, և բողոքական թուղթ նոցա առ Գեր. Ոռքիաս Սունաղ ի Վենետիկ. — Պատասխանի թղթոյ նոցա տուեալ ապա ի Հ. Մարգսէ.

Երկնչէին յոյժ Մուրատեանք, որպէս և յառաջն ասացաւ, ի վրէժխնդրութենէ Հէրպէրթ Համիլտընի ընդհանրական փաստաբանին, և մանաւանդ ի պայմանաւոր դաշանց նորա հաստատելոց ընդ նոսա, զորմէ վերագոյն յիշատակեցաք. վասն որոյ փութան ի սկզբան անդ, յամեանն օգոստոսի 1827, անցուցանել զմասն արծաթոյ հրիտակին, 100,000 ռուբլի ի Վենետիկ ի վերայ Մխիթարեան միաբանութեան ձեռամբ Հ. Մարգսի Թէոդորեան, տալով նմա փոխանակագիրս Անգղիացի վաճառականաց մանաւորայ, և առնլով ի նմանէ նոյնչափ արժէիւք ինչ, այսինքն զմուրհակ մի վաճառական ընկերութեան, ըստ առանձին և մասնական դաշինն եղելոյ ի մէջ նոցա։

Սակայն և յայնմ գործառնութեան ոչ անխարդախ վարս ցուցանէ Պ. Եդուարդ Մուրատ. զի հաշուէ զփոխանակագիրսն ըստ կամաց իւրոց, և ոչ ըստ արժէիցն, որպէս և զա-

ռաջին փոխանակագիրն իբրեւ ոչ ի վերայ Ռաֆայէլեանց ի Լոնդոն, և որպէս զվերջին փոխանակագիրս վաճառական ընկերութեան և զայլոյ ուրումն մանաւորի, զոր ասայ նմա ապա ի հոկտեմբերի նորին ամի. յորս և վերադարձաց ազգին իբրեւ 30,000 ռուբլի։ Եւ թէպէտ իմանայ և տեսանէ զայն յայտնապէս Հ. Սարգիս Թէոդորեան, այլ վասն խոհեմութեամբ և խաղաղութեամբ զիրան վճարելոյ համբերէ և լռէ, իբր չիմանալոյն և չտեսանելոյն առնելով։

Բայց Պ. Եդուարդ Մուրատ զիարգախութիւն իւր ի ծայր անիրաւութեան հասուցանել կամեցեալ, հնարի տալ Հայր Սարգսի փոխանակագիր մի 300,000 ռուբլի միանգամայն, զոր առեալ էր ի մանաւոր և յանձնչան վաճառականաց ոմանց Մատրասու, և զայն ոչ առձեռն պատրաստ դրամով, այլ ժամանակաւ հատուցմամբ, վասն որոյ և հարկաւ թանկագնոց. և ոչ սոյնպէս միայն, այլ և մատակարկ անընդունելի առնել զայն յԵւրոպ, համախտահութեամբ ընդ տեարս փոխանակագրոյն։

Զայս անարդ խորհուրդ իւր առ նա անդառն բերանով ի լսելիս ոմանց. և նոցա շարժեալ ի կարեկից մտաց, մանաւանդ թէ ի պահպանողական Աչոյ Բարձրելոյն որ պահպանէ միշտ զիրաւունս ազգաւոցս, ազդ առնեն Հ. Սարգսի։ Յայնժամ ընդդիմանայ Հ. Սարգիս կամաց Պ. Եդուարդայ, և համարձակ ասէ ցնա, թէ «Զընդունիմ ես զփոխանակագիրս զ. Անդրիացւոցն վաճառականաց։» Եւ նա թէպէտ և չտիպէ զնա ընդունել զայն, զի և կարէր իսկ ոչ, բայց ցասնուընդ նա յոյժ, և շարժէ զցասումն եղբօրն իւրոյ Պ. Յովհաննու Մուրատայ, և սկսանին այնուհետեւ խորհել ի միասին ի ծածուկ և այլ նոր հնարս և մեքենայս գտանել, առ ի հանելոյ ի ձեռաց Հ. Սարգսի զյանձնեալ արծաթ հրիտակին ազատութեան։

Գրգռեն նախ զՊ. Պօղոս Լազարովիչ պահանջել ի Հայր Սարգսէ զարծաթն զայն զ5000 հուն, զոր խոստանայ նմա երբեմն Պ. Եդուարդ իբրեւ վարձ աշխատութեան նորա ի գործ հրիտակի դպրատանն, և զոր ապա Հ. Սարգսի յանձնէ հա-

տուցանել նմա ի գրամոյ անտի հրիտակին որ ի ձեռս նորա. թէպէտ և Հ. Սարգիս նախատես լեալ՝ պայմանաւ յանձն առեալ էր զայն, որպէս և յիշատակեցաւ յառաջագոյն։ Եւ վախճան գրգռելոյ նոցա զնա պահանջել և առնուլ ի Հայր Սարգսէ զարծաթն այս էր, զի պատճառս և իրաւունս ունի-նիցին նոքա բողոքելոյ յառեան և հանելոյ ի ձեռաց նորա զարծաթ հրիտակին, ասելով թէ մատնէ նա զայն ըստ հաճոյից կամաց իւրոց, սմա և նմա տալով և ընծայելով։ Այս հնարք խորամանկութեան նոցա յայտնին ապա ի բանից բերա-բանոյ և ի գործոց նոցա, որպէս և տեսցի ի սմին կարգաւ և հաւատեաք.

Պահանջէ Պ. Լազարովիչ ի Հ. Սարգսէ զվերոյիշեալ արծա-թըն, 5000 հուն, և նա խնդրէ ի նմանէ գիր ընդունելու-թեան, յորում լցէ հաճութիւն հաւանութեան երից կտակա-կատարացն միանգամայն, և հաստատութիւն ձեռաց նոցա, ըստ պայմանին եղելոյ ի նմանէ երբեմն ընդ Պ. Եդուարդայ և ըստ խոստման նորա կատարելոյ զայն։ Գրէ Պ. Լազարովիչ զգիր ընդունելութեան ըստ խնդրոյ Հ. Սարգսի և մատուցա-նէ զայն կտակակատարացն Եդուարդայ և Յովհաննու՝ հաս-տատել զայն ձեռաք իւրեանց։ Զլանան նոքա առնել զայն ասելով՝ թէ չկամին հաղորդ լինել գործոյն։ Դառնայ Պա-ղոն Լազարովիչ առ Հ. Սարգիս և ծանուցանէ նմա զպատասխանն նոցա և զբանն։

Իսկ նա գնայ ի գործատուն նոցա և հարցանէ ցնոսա՝ թէ ընդէ՞ր չկամին հաստատել զայն մինչդեռ յառաջագոյն խոս-տացեալ էին զարծաթն, և ապա ի վերայ իւր արկեալ զհաս-տատութիւն նորին յարծաթոյ հրիտակին. և իւր զայն յանձն առեալ էր ի հաճել զկամն նոցա, բայց պայմանաւ, զոր և ընդ-ունի նա ինքն Պ. Եդուարդ և խոստանայ հաւանեցուցանել և զեղբայր իւր ի հաստատել զայն։ Պատասխանի տան նմա նոքա նախ՝ թէ «Հաճութիւնն այն հաւանութեան և հաստա-«տութիւն ձեռաց մերոց արտաքին չէր քերէ համբաւոյ մերում», «և մեռաս առ յապայն։ . . .»

Ասէ ցնոսա Հ. Սարգիս. «Ուրեմն հրաժարելովդ ձերով

“ կամեսորապէս՝ կամիք զի արասցեն այն և ՚ի ձեռս յիս ելցեն
“ ապա. զեղեցիկ արարք և ազնուական մտածութիւն։ . . ”
Ժպտեալ նոցա ընդ այս բան նորա, ասեն ցնա. “ Ի ձեռս
“ քո է արծաթն դպրատան, և դու տէր ես այնմիկ. ասացեա
“ զայն նմա ինքնին առանց հաւատութեան մերոյ։ ”

Ասէ ցնոսա Հ. Սարգիս. “ Ապա ուրեմն կարող եմ ես
“ տալ և պարգևել յարծաթոյ անտի և այլոց ոմանց՝ որոց
“ և կամիցիմ։ ”

Ասեն. “ Ոչ, միայն Պ. Լազարովչի կարող ես տալ, և ոչ
“ այլում ումեք։ ”

Ասէ ցնոսա Հ. Սարգիս. “ Եւ ընդէ՞ր այլոց չկարիցեմ տալ.
“ զի եթէ տէր եմ ես արծաթոյն, ըստ բանից ձերոց, և կա-
“ րող եմ տալ և այլ ման ինչ և այլում ումեք։ . . . ” Եւ
նոքա լուռ լինին և չկարեն այսմ առարկութեան տալ պա-
տասխանի։

Ասէ ցնոսա Հ. Սարգիս. “ Ահա ի վկայութենէ լռութեան
“ ձերոյ, մանաւանդ թէ յիսկութենէ իրին յայտ է թէ ոչ եմ
“ ես ինքն տէր արծաթոյն այնորիկ այլ պահապան արքային
“ աւանդին յանձնելոյ ի ձեռս իմ՝ և ծառայ կամակարար-
“ բացդ, առ ի կատարել զդուշութեամբ զպարտս ձեր, թէ-
“ պէտ և դուք չծանեայք ցարդ զհաւատարիմ ծառայութիւն
“ իմ՝ թէպէտ և խորհիցիք և կամիցիք այլապէս փոխարինել
“ ինձ։

Զայս և առաւել քան զայն բանս արդարացիս և խրատա-
կան խօսեցեալ առ նոսա յանդիման իսկ Պ. Լազարովչի, և
հրաժարեալ մեկնի ի նոցանէ Հ. Սարգիս։

Խօսին ընդ միմեանս եղբարքն երկոքին առանձինն և ասեն՝
թէ փառաւք հանդերձ իրրեւ փառաբան խօսեցաւ Հայր
Սարգիս ընդ մեզ։ Զայս խոստովանութիւն նոցա Լազարովչի
լուեալ ի բերանոյ նոցա պատմէ Հ. Սարգսի և ասէ ցնա՝ թէ
“ Ցոյժ բարւոք խօսեցար ընդ նոսա, և իրաւունս ունիս յամե-
“ նայնի. ես զիտեմ՝ երբ և ո՛րպէս պարտ է ինձ պահանջել
“ զիրաւունս իմ ի Աստուծոյ։ ”

Բայց խորհրդեալ նորա ապա ի պատրուակեան բանից Պա-

բան Յովհաննու Մուրատի, զրամնայ ի սիրոյ բարեկամութեան ընդ Հ. Սարգսի. և ոչ այնչափ միայն, այլ և ընդդէմ աղնուական գնացից և հաստատակաց հաւատարմութեան՝ պահէ ի ձեռին իւրում և սեպհականէ զ14,000 ռուբլին զոր Հայր Սարգիս յանձնեալ էր նմա՝ տալ զայն ի սեղան վաճառական ընկերութեան, և բերել ընդ այնր զմուրհակ ընկերութեանն ի պողարերութիւն։ Եւ զայն այնպէս խորհի և մնօրինէ նա ինքնին ըստ կամայն՝ առանց ինչ ասելոյ զՀ. Սարգիս. այլ ի ձեռն այլոց ուրումն յայտնէ նմա՝ թէ կալեալ է զայն արծաթ ի ձեռին իւրում փոխանակ վարձու աշխատութեան իւրոյ որ ի գործ հրիտակին ողորմութեան։

Լուեալ Հ. Սարգսի զանպատեհ գնացս Պ. Լազարովչի, զայս եւեթ ասէ՝ թէ «Սխալի յոյժ Պ. Լազարովիչ ի խորհուրդս իւր, և չգիտէ թէ ընդ ո՛ւմ կամի խաղալ։» Զայս միայն ասացեալ՝ մնայ համբերութեամբ կատարածին, այսինքն զգաստանալոյ Պ. Լազարովչի։ Եւ արդարեւ իսկ զգաստացեալ նորա ուր ուրեմն, գնայ առ Հ. Սարգիս, և անկեալ ի ծունկս առաջի նորա խնդրէ ինեմանէ թողութիւն անպատեհ գնացից իւրոց, և դարձուցանէ ի նա զմուրհակն 14,000 ռուբլի արժէքիւք, և այնպէս վերստին հաստատէ զմտերմութիւն իւր ընդ Հ. Սարգսի։

Տեսեալ Պարոնայցն Եդուարդայ և Յովհաննու թէ այնու հնարիւք չկարացին արկանել զՀ. Սարգիս յորոգայթս և յաղթել նմա, յայլ ինչ խորհուրդ մտարերեն. այն իսկ է գնալ յանկարծակի ի բնակարան Հ. Սարգսի, ի տուն այդ-ուր մօրն իւրեանց, հանդերձ քանի մի բեռնակրօք, և բառնալ անտի զերկաթի արկղն՝ յորում կարծէին պահեալ Հայր Սարգսի զմուրհակս վաճառական ընկերութեան։ Բաց կասկածեալ՝ թէ գուցէ չգտանիցեն յարկեղ անդ զմուրհակն, և ընդունայն լիցի խորհուրդ իւրեանց, միանգամայն և կարի յոյժ բանութեան գործ երևեցի այն յաչս աշխարհի, կասին ի ձեռնարկութենէ անտի։ Եւ յիրաւի, քանզի ոչ էր նոցա զտանել յարկեղ անդ զմուր-հակն, հանեալ գոլով նոցին անտի փան դիպուածոյն զոր պատուեցաք. զոր և լուեալ

էին յառաջագոյն ի Հ. Սարգսէ։ Վասն որոյ յայլ խորհուրդ մտարերեն, վասահ գոլով ընդ յաջողութիւն նորին, և ընդ օրինաւոր ձեռնարկութիւն իւրեանց յաչս աշխարհի. և այսպիսի ինչ էր խորհուրդն.

Պատրաստեն երկոքին եղբարքն 100,000 ռուբլի փոխանակագիր վաճառական ընկերութեան, և աղդ առնեն Հ. Սարգսի գնալ առ նոսա ի գործառուն իւրեանց ի քաղաքն՝ հանդերձ մուրհակօք վաճառական ընկերութեան, զի յանձնեսցեն նմա զփոխանակագիրսն, և նա փոխանակ այնր գործուսցէ նոցա յետս 100,000 ռուբլոյ մուրհակ մի։ Դնեն նոքա ի մտի։ զի յածել անդ Հ. Սարգսի զկնքեալ ծրար մուրհակացն, և ի բանալ հանել անտի զմին, կալցեն զբոլորն, ասելով թէ վերատին քննեալ նոցա զգիր գործակալութեան նորա, չտեսանեն զայն բաւական յընդունել զարծաթ հրամակի դպրատանն. ուստի վասն երաշխաւորութեանն որ յառնի և վասն յապահովութեան իւրեանց կամին պահել զարծաթն զայն, այսինքն է զմուրհակն, ի ձեռս իւրեանց, մինչեւ բաւական գիր գործակալութեան բերել տացէ նա ի վերանութենէ իւրմէ։

Զայս ձախողակի խորհուրդ նոցա և զընդունայն պատրաստութիւն իմանայ Հ. Սարգիս յառաջագոյն յընտանեաց իսկ նոցա և ի հաւատարիմ անձանց. և յետ երկար խորհելոյ և մանր կշռելոյ զամենայն հանգամանսն, զվիճակ իւր և զհետեւանս իրացն, որոշէ ի վախճանի չառանել ընդ իւր առ նոսա զբոլոր մուրհակսն, այլ զմին եւթ 100,000 ռուբլոյ արժէս ի փոխարէն փոխանակագրոց տուելոց նոցա։ Վասն որոյ բացեալ զպահարանն մուրհակաց և առեալ անտի զմին՝ գնայ առ. Մուրատեանս ի գործառուն նոցին։

Տեսեալ նոցա զնա՝ վաղվաղակի հարցանեն թէ ածեա՞լ իցէ ընդ իւր զբոլոր մուրհակսն ընկերութեան։ Պատասխանի տայ նոցա Հ. Սարգիս՝ թէ ոչ զբոլորն, այլ զմին եւթ՝ ի փոխարէն փոխանակագրոց նոցա, անխոհեմութիւն համարելով ածել ընդ իւր զբոլորն, զի մի՛ ինչ պատահեսցի նմա զհանա-

պարհայն, և անկանիցին մուրհակքն ի ձեռս այլոց՝ այնպիսի ստորագրութեամբ։ . . .

Մինչև աւարտեալ նորա զայն պատասխանի, զայրանան նոքա յոյժ և ընուն անհնարին բարկութեամբ։ Անդ էր տեսանել երկուս ամենի զազանս յարձակեալս ի մորոջ իւրեանց ի վերայ կորզողի կորեանց իւրեանց։ Եւ առաւել էր կատաղութիւն Պ. Յովհաննու Մուրատայ, որ և յայն ահման հասանէր՝ զի եթէ բառ մի միայն ելեալ լինէր ի բերանոյ Հայր Սարգսի, գլուխ նորին ջաղջախէր անշուշտ ի յարուցելոց և ի պատրաստեալ ձեռաց կատաղեաց, ըստ վկայելոյ նորին Պ. Եղուարդայ. «Եթէ ատակաւիկ ինչ շարժեալ էր, «ասէ, Հ. Սարգիս, ստուգիւք զնա անշուշտ։ » Զայս պատմէ նա մեր իւրում ի տան նորա, և Հ. Սարգիս լսէ ի սենեկէ իւրմէ։

Իսկ անէծք և բանք հայհոյութեանն նոցա ընդդէմ նմին անլսելի էին և անպատմելի։ Զայս եւս երկրորդէ առ մայրն փոնչելով, թէ «Այն է աշխարհս և ընդարձակ. չէ ինչ փոյթ, «զեռ եւս կայ ժամանակ վրէժխնդրութեան։ »

Իսկ Հ. Սարգիս առ այն ամենայն կատաղութիւն և հայհոյութիւնն նոցա չառնէ բնաւ պատասխանի, և ոչ բան մի ի բերանոյ իւրմէ չհանէ, այլ անխռով մտաք և կարեւոր ուշադրութեամբ զփոխանակագիրսն քննեալ, ընդունի ի ձեռաց նոցա, և փոխանակ այնց դարձուցանէ նոցա յետս զմուրհակ մի՝ բառ մտերմական դաշինն. և մեկնեալ դառնայ հանդարտութեամբ ի բնակութիւն իւր, մինչև զարմանալ յոյժ յոյժ Պարոն Յովհաննու Յարութենի, որ անդ գտանի ի ժամուն և ակամն Չալուր լինի բանից Մուրատեանց, ընդ անխռովութիւն մտաց և խոհական գնացս Հ. Սարգսի ընդ նոսա, և գոսէ զնա՝ ասելով՝ թէ արդարեւ աշակերտ Քրիստոսի իցէ. և զայս բազում անգամ յիշատակէ առաջի բազմաց։

Վրիպեալ Մուրատեանց ի հնարից անտի, և լքեալ ի անտանի յուսոյն հանելոյ ի ձեռաց Հ. Սարգսի զմուրհակս ընկերութեանն՝ առանց հատուցանելոյ ինչ ընդ այն ի փոխարէն, անհնարին զայրանան և անիծանեն զնա. և առ ի ծաղ-

կել զապիրատ խորհուրդ և զգործ իւրեանց, մանաւանդ թէ առ ի թափել առաւել եւս զդառնութիւն սրտի իւրեանց՝ զրեն թուղթ մի երկար առ աստուծոյն Մխիթարեան միաբանութեան ի Վենետիկ, դանդատելով զառնագին սրտիւ զգնացից Հ. Սարգսի ընդ նոսա, իբր զի նախատեալ իցէ նորա զառաւ իւրեանց՝ կասկածելով զառաքինութենէ իւրեանց։ Եւ այս օրինակ է թղթոյն.

„ Գերապայծառ Տէր.

„ Ի Մատրաս. 10 Հոկտ. 1827.

„ Յետ վերջնոյ նամակին զոր զրեցաք առ ձեզ՝ անհամար
„ իրք անցին առաւելս զորս ամենակարեւոր է զիտել ձեզ
„ վաղագոյն։

„ Զէ մեզ հարկ, Գերապայծառ Տէր, կրկնել ասէն զի-
„ մաստս այնր թղթոյ, զի առաջի ձեր կայ։ Զէ մեզ հարկ
„ յուշ առնել առաւելս զանբաւ հանդամանս որովք առաւել
„ եւս ի յայտ գայ այս ճշմարտութիւն, թէ Հայրն մեր իրա-
„ ւունս ունէր վառահանալոյ ի խրատան զորս առեալ էր
„ որդւոց իւրոց։ . . .

„ Քաղցէք եւեթ զպատուախանատուութիւնս մեր և զան-
„ յուզող ջատագովութիւն խրատուցն այնոցիկ ի սկզբանէ
„ մինչեւ ցկատարած, որպէսի և լեալ իցեն վէճք մեր ընդ
„ ձեզ. և համեմատեալ զնոսին ընդ գնացից մերոց յորմէ հե-
„ ռէ ժողովիս մեր ասէն հնարաւորս որպէս զամենայն
„ վատակս կարելիս, ի վերայ բերէք զայն ինչ զոր ուղիղ
„ միտք թելադրեն, և սոխպեսջիք հաւանիլ՝ ոչ միայն թէ ոչ
„ երբէք ածեալ է զմտաւ, այլ թէ ոչ երբէք կարացեալ եմք
„ անգամ զմտաւ ածել յաղագս հրիտակի հօրն մերոյ այն-
„ պէսի ինչ որ չիցէ բան ամենայնի պատշաճական։ „ Գործք
„ „ արտաքինք նեղքնոցն զաղտնեաց են յայտարարք։ „ —
„ Զայս ասացեալ՝ յաւելումք թէ մեզ քաջածանօթ է ա-

“ ուսծն այն գեղեցիկ թէ ; Բարեբարութիւն զվարձս իւր ընդ
“ իւր ունի ։ Բայց նոյնօրինակ ճշմարիտ է և այն՝ զի որով-
“ հետև նոյնացեալ իմն եմք մեք ընդ պատճառին կենաց
“ մերոց , բնական է մարդկեղէն զգացմանց՝ ոչ ունել ակն
“ ապերախտութեան և արհամարհանաց փոխանակ բարեգոր-
“ ծութեան ։ Ապա ուրեմն լուարուք մեզ ։

“ Ոչ ինչ անագան քան երիւք ամսոք զկնի ժամանելոյ մի-
“ ումն ի մէնջ ի Հնդիկս , սկսեալ էաք մեք անցուցանել
“ զզրաման հրիտակի հօրն մերոյ յԵրուսա , և անցուցաք իսկ
“ իրր 150,000 ռուփիս առ մօրեղբայրն մեր՝ ի կատարումն
“ իրացս ։ Ոչ զք յոտորաց զրդեալ էր զմեզ ի կատարել այս-
“ պէս զպարտս մեր ։ Եւ իրրեւ այն ինչ աւարտեալ էր
“ գործն , այր ումն պատրաստական ի բարերարել , որ տաս
“ առ մեզ զընդհանրական փոստարանի ունի զպաշտօն , մոտա-
“ բերեաց ի կռիւ մատչել ընդ մեզ , ապառնալով հանել ի ձե-
“ ռաց մերոց զզրաման և աւանդել զնոսին ի ձեռս համարա-
“ կալին-արքունի ։

“ Գիտէք իսկ , Գերապայծառ Տէր , թէ որպիսի՛ ինչ իրք
“ ծնանէին հարկաւ յայսպիսւոյ միջնորդութենէ ։ . . . Ի հա-
“ մար անգամ արկանել զնոսին ոչ գիւրին ինչ է . և սակայն
“ ոչ զք էր որ առնէր զհամարն զայն արժանապէս արտաքոյ
“ ասելոյ Անգղիական Գիւանին ։

“ Յայսմ պայմանի ի դէպ համարեցաք՝ ըստ բազմապատիկ
“ յորդորանաց Հ. Սարգսի ձեռամբ մօր մերոյ՝ ի գաշն մտա-
“ նել ընդ նմա , և ապատելով ընդարձակագոյն և ճշգրտագոյն
“ իշխանութեան զոր ընդունել ասէր նա ի միաբանութենէդ
“ ձերմէ յաւուրս 15 կամ 20, յանձն առնել նմա զզրաման
“ հրիտակին , զի զերծուցուք զայն ի բերանոյ գազանին որ
“ կլանել կամէր զնոյն ։ Վստահութիւն մեր վեհանձնական
“ և անկեղծ ի պատիւ և ի հաւատարմութիւն միաբանութեան
“ ձերոյ՝ իրաւացի թուեցաւ մեզ՝ քան թէ ի դէպս Դաւթի ,
“ որով մարթ էր մեզ ի միոյ կողմանէ անկանել ընդ ամբաս-
“ տանութեամբ թէր գործածութեան զրամոցն , և ի միւսմէն
“ այնպիսի ծախս առնել վասն Դաւթին որ կարող էին վնաս

„ գործել բովանդակ իսկ հրիտակին, զորոյ զօրինակն տեսա-
„ նեմք առտանօր։

„ Եւ ի կնիք պատմութեան առացուք, զի զգրաման տուաք
„ ի ձեռս Հ. Սարգսի, դաշնագիրք և մուրհակք առորագրե-
„ ցան. ամենայն ոք անդորրացաւ, բաց յընդհանրական
„ փաստաբանէն որ ոչ կատեցաւ երթէք ի խորհրդոյն չարչա-
„ րելոյ զմեզ, թէպէտ և գիտէր զի ըստ ամենայնի աւարտեալ
„ էր մեր զգործն ընդ միաբանութեան ձերում, որ և հան-
„ դերձ անժխտելի փաստիւք ցուցաւ նմա. վասն որոյ չորիւք
„ ամսոք զկնի այնր իրաւախոհութեան սկսաւնա դատ վարել
„ ընդ մեզ, պատճառս ի մէջ բերելով թէ մեք հակառակ կար-
„ գաւորութեանց կտակին գործեալ իցեմք, թէ հայրն մեր
„ կամէր զմիջնորդութիւն միաբանութեան ձերոյ, և ոչ զրա-
„ ցարձակ ստացումն և զմատակարարութիւն գրամոցն ձե-
„ ռամբ նորին։ . . . Գերագոյն Ատեանն ըստ իւրում զգու-
„ շութեան կալաւ զմեզ պատասխանատու հրիտակին, և ոչ
„ կամեցաւ ընդունել զվատահութիւն մեր ի միաբանութիւնդ,
„ բայց եթէ իբրեւ ի գործադիր մեր յայսմ մասին։

„ Յաղագս այսորիկ հարկ եղեւ մեզ ստորագրել զմուրհակ
„ մի հաստատման միասուց, զորոյ յղեմք ընդ սին զօրինակն
„ մի զի տեսցիք։ Խիստ թուեցաւ մեզ հաստատանել գործա-
„ կալին ձերում ռուբիս 640,000, և յեռ այնր ուղղակի և
„ գրականապէս պարտապանք լինել Գերագոյն ատենին
„ նոյնչափ գումարի գրամոց՝ մինչդեռ կատարումն պայմա-
„ նաց մուրհակին բոլորովին ի ձեռս ձեր էր։ Եւ սակայն,
„ վատահացեալք դարձեալ յանթերի հաւատարմութիւն միա-
„ բանութեան ձերոյ, ոչ ինչ դանդաղեցաք յանձն առնուլ
„ զայս կրկին պատասխանատուութիւն։

„ Հանդարտակիմք ասել, Գեր. Տէր, զի անհնար է տեսա-
„ նել յայտնագոյն ինչ տարացոյց մեծարանաց քան զբն-
„ ծայեալն ձեզ յայսմ։ Եւ արդ ի մի վայր ածէք զամենայն
„ անցեալն առ ի տեսանել զնոսին միանգամայն։

„ Հոյակապ բարերարութիւնն Հօր մերոյ, զորոյ թերեւս և
„ ոչ միանգամ է տեսանել զօրինակն ի միում դարու; . . .

“ վատահութիւն մեր, թողլով ի միաբանութեան ձեր զամ-
“ բողջ և զբացարձակ մատակարարութիւն այսր բարերարու-
“ թեան, թէպէտ և կատակ Հօրն մերոյ չկամի զայն բնաւ ; . . .
“ ինքնակամ և հրապարակեալ հաստատութիւն այսր վատա-
“ հութեան՝ մինչդեռ իրքն ի կրկին վտանգի կային ; . . . այս
“ ամենայն պարտ էր, որպէս կարծեմք, ազդել ի գործակալն
“ ձեր ատ այնպիսի խմատս երախտագիտութեան՝ զորս չէ
“ մարթ այլազգ սահմանել, բայց եթէ միացուցանելով զնոսին
“ ընդ վեհմեկան պարտս Աստուածպաշտութեան. և արդա-
“ բեւ պարտ էր Հ. Սարգսի զամենայն ճիգն ի գործ արկեալ
“ ոպատ հարկանել մեզ և թեթեւացուցանել զնեղութիւնս
“ մեր : Այլ մոտ զիք գնացից նորա :

“ Մին ի պայմանաց որք պահանջեցան ի մէնջ ի ժամանակի
“ գործադրութեան մուրհակին յատենի անդ, էր առանձին
“ զարծաթն որ գտանէր ի ձեռս Հ. Սարգսի ի Դրամատունն
“ Պետութեան յառաւելագոյն ապահովութիւն, մինչեւ ի ժա-
“ մանակն յորում առանգումն վճարէր յԵւրոպա, և այս ոչ-
“ ինչ ստանէր իրաւախոհութեան մերում ընդ նմա, որպէս
“ տեսէք ի վկայեալ օրինակի թղթոյ մեր դրելոյ առ մեզ
“ ի փատարանէն որ միջնորդէր ընդ մեզ և ընդ Գերագոյն
“ Ատեանն :

“ Զայս թուղթ ի ձեռին ունելով ազատեցաք մեք զՀ. Սարգիս
“ վարել ըստ պայմանին որ ըստ ինքեան չնշանակէր ինչ
“ բնաւ, ոչ ըստ վաւերականութեան դաշնագրութեանց մե-
“ ծոց ընդ նմա, և ոչ ըստ ապահովութեան արծաթոյն, որ
“ օգտէր եւս այնու, զի ի Դրամատանն Պետութեան բաւ եւս
“ միշտ պահի այն քան ի տունս սոսկականաց : Սակայն Հայր
“ Սարգիս չէաւ յանձն անսալ ազատանաց մերոց, վասն որոյ
“ առ ի գարման այնմ գժուարութեան առաջարկեցաք նմա
“ երկրորդ, առանձին զարծաթն ի ձեռս երից կամ չորից
“ խնամակալաց որք յանձն առնուին ինքնին, զօրութեամբ
“ մուրհակի դրելոյ առաջի նոտարի՝ անցուցանել առ ձեզ
“ զայն առ փոքր փոքր առանց անցուցանելոյ նորին ի մեր ձեռս

“ անգամ. քանզի արդեամբք յայնմանէ թուէր նա երկնչիլ,
“ չգիտեմ որպիսի այլանդակ ցնորից կուռակութեամբ։
“ Եւ այս առաջարկութիւնք լեալ էին առ նա ձեռամբ բա-
“ բեկամաց երկոցունց կողմանցս, որք և յայն սակս առաւել
“ ի միտ առնուին զարդարութիւն խնդրոյն մերոյ. զի գիտէին
“ թէ ոչ ի ձեռս մեր էր չառնել զայն որովհետեւ և մեզ եւս
“ այլք թելադրեալ էին զնոյն։ Իցէ՞ հնար, Գէր. Տէր, զօ-
“ բաւորագոյն լինել մեզ յայս հանգամանս օգնականութեամբ
“ ուղիղ մտաց և բանի։ Եւ սակայն զի՞նչ կարծիցէք թէ
“ արարեալ իցէ Հ. Սարգիս։ Ցամառեալ մերժեաց նա և
“ զկատարումն այս երկրորդ աղաչանացս մերոց։ . . .

“ Եւ արդարեւ խնդիրն մեր չելանէր երբէք ըստ սահման
“ աղաչանաց, թէպէտ և Հ. Սարգիս ամենեւին իսկ ի վրիպակ
“ կարծիս էր։ . . . Զէին մեզ կամք գժտել ասատանօր ընդ գոր-
“ ծակալի ձերում, յեռ շնորհելոյ ձերումդ միարանու-
“ թեան, ի նշանակ վստահութեան զպատուականագոյնն
“ ի պարգեւս մարդոյ առ մարդ, որով մարթի զօգել ընդ ու�ք
“ զհարիւրամեան բարեկամութիւն։

“ Այլ բա՛րի, տեսէք միանգամ զպայման մեր . . . և զատ
“ արարէք, եթէ չարդարանայ՞ք մեք արդեօք եթէ առանց
“ այլ եւս մոռախոհ լինելոյ բնաւ զյարաբերութեանց մերոց
“ ընդ միարանութեան ձերում, բուռն հարկանէք զայնպի-
“ սի հնարից որք բուռն ասատկութեամբ ինեզ արկանէին
“ զՀ. Սարգիս սակս իւրոյ վայրապար յամառութեան։

“ Եւ եթէ փոխարքեալ եւս էաք մեք, որպէս համարի նա,
“ եկանելոյ արծաթոյն ի ձեռաց նորին, միթէ չունէ՞ք իրա-
“ ւունս։ . . .

“ Ասեսն չընդունի բնաւ զվստահութիւն մեր ի ձերդ միա-
“ բանութիւն, իբրեւ վաւերական յաչս իւր. մեք երաշխաւոր
“ եմք վասն ձեր, և Հ. Սարգիս յամառեալ շառնաւ յանձն
“ զիջանել յաղաչանս մեր, ի գործ մի աննշան ամենեւին,
“ մինչդեռ այս աղաչանք, ըստ վերոյիշեալ պայմանագրու-
“ թեանց Ասենին կարէր լինել պատուէր ինչ հրամանի։
“ Թող զի և գնացք իսկ Հ. Սարգսի ընդ մեզ ի ժամանակի

“ հետէ բոլորովին փոխեալ էին, ոչ եւս այն էին որ ինչ յա-
“ ռաջ և անմիջապէս յետոյ քան զիրաւախոհութիւն մեր ընդ
“ նմա։ Զառնոյր նա յանձն և ցուցանել անգամ մեզ
“ զթուղթսն զոր ընդունէր ի միաբանութենէդ ձերմէ, ըստ
“ այնց մասանց որ ունէին ինչ յարաբերութիւն ընդ գործոյ
“ հրիտակին, և իշխանութիւնն, որ հատանելոց էր յաւուրս
“ 15 կամ 20, ոչ եւս հատանէր, թէպէտ և շորք ամիսք ան-
“ ցեալ էին ի վերայ։

“ Այս քաղուած իրացն պատահելոց շատ խակ է, Գերա-
“ պայծառ Տէր, ի ցուցանել ձեզ զհիմնոցին, որ են հարկաւ
“ թերութիւնք արտի և գաւման Հօրն Սարգսի։

“ Աւաղ, հանգամանք իրացն պարտ էին առաջի առնել
“ մեզ բոլորովին այլ տեսարան։

“ Սէրն, բղխեալ ի սրտէ որ ազատ է ըստ Աստուծոյ,
“ ի բաց մերժէ զոր և է յանիշտակութիւն իրաւանց Նորա.
“ չկամի նա զի կորզեալ ինամանէ երեւցի այն ինչ, զոր ինքն
“ առեալ իցէ, և զի նուէրք իւր ի զէնս դարձուցին ընդդէմ
“ անձին իւրում։

“ Եւ սակայն զայսր օրինակ տխրական առաջի արար Հայր
“ Սարգիս։

“ Այն ինչ ձգեալ զձեռն իւր յառնուլ, — և էառ խակ արդ-
“ դեամբք, — այնպիսի իմն կալաւ եղանակ խօսից զոր օրինա-
“ ւոր բողոք նախնեացն իւրոց, մինչեւ ցչորրորդ ազգ, ոչ
“ արդեօք ներէր նմա. կամի նա և չկամի վայրապար. մեր-
“ ժէ, առ ախորժ եւեթ մերժելոյ, զդուզնաքեայ խնդիրն որ
“ հանէր զմեզ ի տագնապէ, և յաւելու յանիրաւութիւնս
“ յայտնիկ այնպիսի կատարածանս նախատական վասն մեր
“ որք ոչ իւիք կարէին արդարանալ։

“ Այլ այս ամենայն չէ շատ, Գեր. Տէր. լուծումն հանգու-
“ ցի նորատեսիլ տեսարանախաղիս այսորիկ պարտի առա-
“ կումն և տարաւոր ի վերայ ածել զառաջինն ի վերայ ամենե-
“ ցուն որոց խնամաւք և գաղափարք անխառնք իցեն ի սկզբ-
“ բանց այնր նախնական և նուիրական բարոյականի, որ ոչ

՝՝ այլ ինչ հանեալ ընդ բարերարն և ընդ բարերարեալ՝ բայց
՝՝ միայն զԱստուած։

՝՝ Առիպեալք ընտրել զմի ինչ յերկոցունց ասի, այսինքն
՝՝ կամ ի գործ արկանել զզօրութիւն օրինաց ընդդէմ Հօր
՝՝ Սարգսի, և կամ այլ ինչ հնարս հնարել զի ելցուք ի դըժ-
՝՝ ուարին պայմանէ անտի յորում էաք, զերկրորդ զայս ընտ-
՝՝ րեալ կալաք։ Ամենայն ինչ եղաւ ի կարգի՝ միւս եւս ան-
՝՝ գամ, թէպէտ և դժուարութեամբ հանդերձ, և ընդհան-
՝՝ բական փաստաբանն ամենեւին իսկ հանդարտեցաւ. սակայն
՝՝ միայն միաք Հօրն Սարգսի եւեթ թոյլ առեալ յաժէին
՝՝ ի շարագուշակ վայրս։

՝՝ Թուէր իմն այնպէս՝ թէ մեք ոչ վասն այլոյ իրիք տուեալ
՝՝ էաք նմա ռուբիս 640,000, բայց եթէ զի նովիմբ պատճառս
՝՝ ասցէ յայնմ հետէ ոչ եւս վստահելոյ ի մեզ։

՝՝ Ամենայն ոք բարեկամ էր նորա, բարեկամ միտրանու-
՝՝ թեան ձերոյ, բարեկամ որոցն որք օգտելոց էին ի բարե-
՝՝ բարութենէ անտի, բայց յայրեաց և յորդեաց բարերա-
՝՝ բին։

՝՝ Այս իրք այնպէս ի խոր խոցէին զմեզ, զի դիւրագոյն է,
՝՝ Գեր. Տէր, ի միտ առնուլ զայն քան թէ բանիւ յայտ առ-
՝՝ նել։ Բաղդեցաք մեք ընդդէմ այսմ անիրաւութեան, ընդ-
՝՝ դէմ այսմ ապաշնորհութեան։ Բայց սակայն համբերել
՝՝ յանձին կալաք անդարմանելի իրացն, զի չէ մարթ բռնա-
՝՝ դատել զնիրս ուրուք յերախտագիտութիւն, զոր օրինակ և
՝՝ ոչ ի սէր։

՝՝ Երեք ամիսք անցին այսպէս խաղաղութեամբ, մինչեւ
՝՝ ի վիճել պատեհի արարաք մեք և զերկրորդ առաքումն ար-
՝՝ ծաթոյ առ միտրանութիւն ձեր։ Յայնմ ժամանակի պարտ
՝՝ էր Հ. Սարգսի ի մէջ բերել զմուրհակս ընկերութեանն
՝՝ (զոր տուեալ էին նմա, ըստ պայմանի միում՝ ի կնքեալ
՝՝ ծրարի,) որպէս զի դարձուցէ առ մեզ զմասն ինչ նորին
՝՝ համեմատութեամբ արծաթոյն զոր այն ինչ յղեալ էաք։
՝՝ Բան եղեալ էաք զի կնիքն այն որ մեր իսկ էր, յանդիման
՝՝ մեր և եթ պարտ էր լուծանել. թող զի ինքնին եւս քաջա-

“ յայտ իմն է այս . ապա թէ ոչ՝ սովորութիւնն կնքելոյ զիրս
“ ինչ ծաղրական իմն լինէր ։

“ Եւ սակայն հակառակ մերոցս դաշանց, Հ. Սարգիս
“ առանձինն լուծանել մտաբերէ զկնիքն մեր, և հանէ
“ ի ծրարէն մուրհակս որչափ ինչ հարկ էր հանել, առանց
“ մերոյս առաջիկայութեան, մի միայն պատճառս այսպի-
“ սուամ բռնական և անպատշաճ գործոյ տուեալ զայլանդակ
“ կասկածն թէ մեք խորհիցիմք գրուել զամենայն մուրհակսն
“ միանգամայն, որպէս այն թէ յուրաստ կացեալ էր մեր
“ ի պատուոյ և ի համբաւոյ մերմէ, և որպէս թէ չկայցեն
“ ի Հնդիկս օրէնք որ պատուհաս ի վերայ ածեն ապօրինա-
“ ւոր յանդգնութեանց ։

“ Այս վերջին ասութեան նախատանաց, զոր խորհէք նա
“ իբրեւ ի միակ փոխարէն բարերարութեան Հօրն մերոյ,
“ այս անճառնի և նողկալի գնացք անարժանութեան ի կար-
“ գի պատշաճից, գրգռեցին զմեզ ի զայրոյթ անհնարին ։
“ Գուն գործեցաք ամենայն հնարիւք որ ի կարի մերում էին
“ հաւանեցուցանել զՀ. Սարգիս, զի ի բաց կացցէ զէթ անա-
“ զան ուրեմն յայն եղանակ գնացիցն ընդ մեզ ի բազում
“ ժամանակաց հետէ ։ Ընդ ձեռն մեր մերոյ աշխատ եղաք
“ մեզ զաւուրս չորս համոզել զնա զի ի բաց կացցէ ի խորհուրդ
“ զոյն նախատելոյ զմեզ ։ Միով բանիւ արարաք մեք զամե-
“ նայն ինչ զոր մարթն էր առնել, և որում ակնուանել մարթ
“ էր յարանց հաստատելոց ի խորհրդածութեան և ի համբաւ-
“ բութեան, բայց ի զուր ։ . . . Հ. Սարգիս առ ոմն հարեալ
“ զմեծարանս զոր պարտ էր յիշատակի հօրն մերոյ, և զոր
“ պարտ էր ժառանգաց նորին, թափեաց ի վերայ մեր որպէս
“ եղեալ էր ի մոխ, զթունալից բաժակն նախատանաց և վա-
“ տահամբաւութեան ։ . . .

“ Ոչ միայն ի գործ եդ զխորհուրդն լուծանելոյ զկնիք
“ մեր, այլ և չմնացին նախատինք զորս չիցէ նորա ջանացեալ
“ յայնմ հետէ կատել ի վնաս համբաւոյն մերոյ ։ . . .

“ Բարի, եթէ մեք այնպէս չարագործք իցեմք, և նմին
“ իրի իսկ այնպէս թշուառակունք որպիսիս համարի զմեզ

«Հ. Սարգիս, ուր իցեն, Գեր. Տէր, սկզբունք սիրոյ, այն
«իսկ սկզբունք որ տաժեցին ի սրտի Հօրն մերոյ զխորհուրդ
«բարերարութեան նորա։ Եթէ այն սկզբունք խարսխեալ
«իցեն ի մերայ ատուածային և անսասանելի իշխանու-
«թեան, ընդէ՞ր իցէ այլոց չպահել զնոսին ի վարիլ ընդ ինքն
«որդիս նորին, ուր նա ինքն կամեցաւ վարիլ նոքօք ընդ
«որդիս սատրայ։ . . . Եթէ սկզբունքն այն չիցեն այնպիսի
«իրք, զի՞ է զի այլք կամին շահս օգտի քաղել ի նոցանէ։

«Մինթէ ամենայն ինչ յաշխարհիս յայսմիկ յանմեմ իցէ
«հաստատեալ, զի ի դէպ ժամու գրաւիցէ զք զոր ինչ կամի,
«և Հայրն մեր մոլորեալ իցէ ի հաւատսն իւր յառաքինու-
«թիւն և յառաջնորդել իւրում ինամեալ։ . . . Քանի՞ ծանր
«են, Գեր. Տէր, այսպիսի կարծիք, մանաւանդ յորժամ
«պաշտօնեայ զք Աւետարանին է որ ասէ նմին պատճառս
«իւրովք գնացիւք։ . . .

«Բայց այժմ ի դէպ է հարցանել; Ա՞ր արդեօք երեւիցի
«այդ ամբարիշտ խաւութիւն, այդ ապականութիւն սրտից
«մերոց։

«Մի թէ յարեան անդ զոր Հայրն մեր ընթացոյց յերա-
«կուն մեր։ . . .

«Մի թէ ի գաստիարակութեանն զոր ետ նա մեզ։ . . .

«Մի թէ ի խրատն զոր թելադրեաց մեզ յորժամ կա-
«լեալ զձեռաց մերոց՝ նոքօք եթող ի կոտակի իւրում զհետս
«ոգւոյն իւրոյ զթաւիրի։ . . .

«Մի թէ ի սուրբ ցաւանն անդ որով ի բաց մերժեցաք
«մեք հանապազ զամենայն զոր ինչ հակառակ մերոց
«սկզբանց։ . . .

«Մինթէ ի փութացուցիչ և յինքնաշարժ հրաւիրմանն անդ
«զոր արարաք առ նախորդն ձեր, փոքր մի յառաջ քան զմահ
«նորա, զի յղեցէ առ մեզ զմի ոք ի ձերոց միաբանից, որ-
«պէս զի միաբան խորհրդով տեսցուք ի գործ դնել զբարե-
«պաշտական կամս Հօրն մերոյ։

«Մի թէ ի վատահութեանն մերում ի միաբանութիւն ձեր,
«որ եղեւ պատուղ այսր ամենայնի։ . . .

„ Վերջապէս մի թէ յանթերի հատուցմանն անդ 640,000 ռու-
„ փեայն որք յաւուրս յայսոսիկ յարկեալս ձեր գտանին ։
„ Ահրագործք և ամբարիշտք զամենայն ինչ ի կէս գործեն,
„ Գեր. Տէր. եթէ մեք ունէաք երբէք կամս գրաւելոյ ի մեզ
„ գայս արծաթ, ապաքէն ոչ հեռացուցանէաք զայն ի մէնջ ։
„ Գիտէք իսկ զի դիւրագոյն է պահել զոր ի ձեռին կայ քան
„ թէ խլել զոր ինչ յայլոց ձեռս գտանի ։ Արդ զինչ է որ
„ ստիպեացն զմեզ ունել զճանապարհ այսչափ հակառակ ճա-
„ նապարհի անդգամաց ։

„ Եթէ մեք չերկնչէաք զանցանել զնոքօք յորժամ կարող
„ էաք առնել զայն ազատ գոլով յայդպիսի յորջորջանաց, ...
„ Գեր. Տէր, անօգուտ է ասել ինչ աւելի քան զայս ։ Գա-
„ րինք անգամ աղաղակեն բարձրաձայն զանարատութիւն
„ սրտից և զուղղութիւն մտաց մերոց ։ Եւ այս Երկինք, ուր
„ աչօք հաւատոյ տեսանեմք մեք Խստաւոր զոմն ահաւոր,
„ թշնամի երդմնազանցից, վկայէ զի անդատին յայնմ վայր-
„ կեանէ յորում ի բաց տուաք զհրիտակ Հօրն մերոյ ի կատա-
„ րումն բարեպաշտական կամաց նորա, և ոչ բոպէ մի զմտաւ
„ ածեալ եմք փող մի անգամ յարծաթոյ անտի ի գրպանս
„ մեր դարձուցանել ։

„ Թող զայն՝ յուշ ածէք միանգամ զեղեալսն. վկայ առէք
„ ի վերայ առաջարկութեանն զոր արարաք մեք հրապարա-
„ կաւ Հ. Սարգսի աւանդել զարծաթն ի ձեռս խնամակալաց,
„ որով անմատոյց մնայր այն ամենայն ումեք բաց. ի ձերմէ
„ միաբանութենէդ, և անդէն անկանի ինքնին ամբաստա-
„ նութիւն նորա և ցնդի իբրեւ զգոլորշիս առաջի ականն
„ արեւու ։

„ Գեր. Տէր, ի սմին իսկ պահու յորում փափկախոհ խիղճ
„ ձեր լուաւորէ անշուշտ զձեզ ի վերայ խնամատից մերոց
„ ի տեսիլ անիրաւութեանն որով լցան անձինք մեր, ոչ սարը-
„ ջանամք մեք ընդ այն զի վաստահացաք ի դարձակալն Մխի-
„ թարեան միաբանութեան, այլ խոստովանիմք թէ լաւ էր
„ մեզ չտեսանել զայս զարծակալ յանձին Հ. Սարգսի ։

„ Յետ այսպիսւոյ շնաշխարհիկ օրինակի բարերարութեան

„ ա՛յս իցէ առաջին օրինակ փոխարինին որում օրէն էր
„ ակնուանել ։

„ Այս խորհուրդ և եթ գժդմեցուցանեն զմարդ , և այն-
„ պիսս ազդէ իմաստս որք անտանելի են մարդկութեան ։

„ Արդարեւ իրաւունս ունէր Կիկերոն համարելոյ զապե-
„ բախտութիւնն ասելի քան զամենայն ախտս . „ Ամենեցուն
„ „ առհասարակ վնասակար է նա , ասէ . լքուցանէ զառա-
„ „ տաձեռնութիւն , վասն որոյ ապաշնորհք թշնամի են
„ „ ամենայն տառապելոց ։ „ —

„ Բա՛ւ իմէնջ , Գեր. Տէր , շփոթել զխորհուրդ Հ. Սարգսի
„ զմիոյ և եթ անձին ընդ խորհրդոյ բովանդակ կրօնաւորա-
„ կան ընկերութեան միոյ ։

„ Ոչինչ երկրայիմք զի արդ իսկ երախտագիտութիւն ձեր
„ առ Սամուէլ Մուրատ կարդայ զօրհնութիւնս երկնից ի վե-
„ րոյ ազգատոհմի նորա ։

„ Իսկ մեք վստահք ի խիղճ մտաց մերոց , ի ձեռս անձին իւ-
„ րոյ թողութիւնք զայրն որ այնչափ եղկելի է մինչեւ կարօտ լի-
„ նել ընկղմել ի սրտի իւրում զյիշատակ Առաքինութեանն
„ բարերարի , այնր՝ որ յաշխարհի ասա քան զայլ ամենայն
„ ինչ առաւել զգալի և ակներեւ պատկեր է Վերնախնամ
„ Տեսչութեան ։ . . .

„ Ուղիք գառնութեան լեզուին Հ. Սարգսի այնպէս և եթ
„ բախեցին զժառանգական պատիւ տան մերոյ , որպէս ալիք
„ ծովու որ իւրեւր մռնչեն և որոտան ընդդէմ վիմին որ խոր-
„ տակէ զնոսա ։

„ Փութացարուք , Գեր. Տէր , կատարել զպարտս ձեր , և
„ զերծուցանել զմեզ ի տագնապէ Պետութեան տեղւոյս ։
„ Յո՛ւշ լիցի ձեզ զի պատասխանատու համարին զմեզ ասա
„ յաղագս այնորիկ զի զիրաւունս մեր բովանդակ հաւատա-
„ ցաք ի միաբանութիւնդ ձեր ։

„ Օրինակն մուրհակի հատուցման վնասուց զոր առաքեմք
„ առ ձեզ ընդ սմին՝ ցուցցէ ձեզ զոր ինչ պարտն իցէ
„ առնել ։

„ Ընկալարուք այժմ զմեծարանս և զսիրալիր խնամս

„ որովք ողջունեմք զհամբոյր մխիթարութիւնդ ձեր, և
„ ձեռամք,

„ Գերապայծառ Տէր,

„ Ամենախոնարհ և ամենահնազանդ ծառայք ձեր

„ Մարդարա. 10 հոկտեմբեր. 1827.

„ ԵՂՈՒԱՐԴ Ս. ՄՈՒՐԱՏ.
„ ՅՈՎՀԱՆՆԷՍ Ս. ՄՈՒՐԱՏ. „

Այս բողոքական թղթոյ Մուրատեան եղբարց չառնէ պատասխանի Գեր. Սուքիաս Սոմալ, ճանաչելով զապիրատութիւն նոցա ի բանն հրիտակին։

Իսկ մեք առ այս բաւական համարիմք յիշատակել սոա, նախ՝ զտարդնապ նոցա որ ի սպառնալեաց ընդհանրական փաստաբանին, և զկարեկցութիւն Հ. Սարգսի առ նոսա։ (Տե՛ս ՅԱ. մասն. ի Գլուխ Ժ.)

Երկրորդ՝ զնենգութիւն նոցա, որ ի հատուցումն հրիտակի դպրոցին։ (Գլ. ԺԱ.) և զխորհուրդ նոցա ապա։ (Գլ. ԺԴ.)

Երրորդ՝ զիրաւունս նորա որով ազատեցան նոքա ի բռնութենէ փաստաբանին։ (Գլ. ԺԳ.)

Չորրորդ՝ զպատասխանին մօր նոցա որ առ թուղթ իւրեանց։ (Գլ. ԺԶ.)

Հինգերորդ՝ զվճիռ դատաւորաց Ատենին որ ընդդէմ նոցա։ (Գլ. Ի.)

Վեցերորդ՝ զխոստովանութիւն նոցին իսկ որ առաջի Հայր Սարգսի ի Մատրաս, և որ առաջի ընտանեաց իւրեանց ի Լոնդոն և ի Մատրաս։ (Գլ. ԻԹ. ԼԵ.)

Եօթներորդ՝ զվերադարձ զնացս Յովհաննու Մուրատի Լեռոյ։ (ի Բ. մասն, Գլ. Է. ԿԸ.)

Ահա այսոքիկ են պատասխանին մեր ի յանդիմանութիւն բողոքական թղթոյ Մուրատեանց և ի գիտութիւն վերծանողաց պատմութեանս, որով ծանիցեն թէ ընդ օրպիսի անձինս էր գործառնութիւն Հ. Սարգսի, և թէ քանի՞ զգուշութեամբ և նեղութեամբ պահեալ և պաշտպանեալ է զիրաւունս ազգաւոց ազգին իւրոյ։

Այսչափ ինչ առ այս շատ համարեալ՝ դարձուք ի կարգ պատմութեանս։

Լքեալ Մուրատեան եղբարց ի անուսի յուսոյ անտի իւրեանց, ոտն այնուհետեւ միւս եւս անգամ իրրեւ ի վերջին նուագ, զիսխանակագիրս և այլ 100,000 ռուբլոյ Հ. Սարգսի, և առնուն ինեմանէ յետս և զայլ մուրհակ մի վաճառական ընկերութեան ի ձեռն այլոց, այսինքն Պարոնաց Յովհաննու Յարութենի, և Աբրահամու Ազանուրի։

ԳԼՈՒԽ ԺԵ.

Երկրորդ գիր գործակալութեան հասեալ առ Հ. Սարգիս և. առ Պ. Լազարովիչ միաւիգարեայն. — Եօրինքն՝ ընդհանրական միաբանութեան՝ յաշխարհ Ֆարիսորացի. — Խնդրեալ Մուրատեանց ի Հ. Սարգսէ եռամեայ ժամանակ յետ լրանալոյ պայմանի մնալոյ մնալոյ դպրոցի. — Պատասխանի Հայր Սարգսի, և զայրոյթ Մուրատեանց. — Խորհուրդ տուեալ Մուրատեանց ի Պ. Լազարովչէ ընդդէմ Պ. Ադամեանցի, զոր նոքա յիւր վերայ կատարեն. — Խօսք Հ. Սարգսի գիրացն առ Պ. Լազարովիչ և. առ այլս. — Հրատարակուելն ի լրագիրս Մատրաստոս ի Մուրատեանց ընդդէմ Հայր Սարգսի. — Թուղթ Պ. Լազարովչի առ Գ. Մոնալեան.

Յայնմ ժամանակի, յամսեանն հոկտեմբերի 1827, ժամանէ ի Մխիթարեան միաբանութենէն և այլ երկրորդ գիր գործակալութեան Հ. Սարգսի և Պ. Լազարովչի միանգամայն, և այն՝ ի խնդրոյ Մուրատեանց, յառաւել իմն հաստատութիւն իրաւախոհութեան նոցա ընդ գործակալի միաբանութեանն, և ի յապահովութիւն նոցա թէ յայլուստ ոչ զք պահանջեսցէ զկրաւունս հրատակին ազգութեան։ Զայն գիր նորոգ գործակալութեան ցուցանէ Հ. Սարգիս խսկոյն Պ. Եդուարդայ և Յովհաննու Մուրատեանց. և նոքա ասեն ցնա՝ թէ աւելորդ է այն, աւարտեալ գոլով արդէն բանի հրատակին երիւք ամսօք յառաջ քան զհաստատութիւն նորին ի Վենետիկ. քանզի այն երկրորդ գիր գործակալութեան նորա գրի և հաստատի անդ յամսեան յունիսի 1827, և բանն աւարտի ի Մատրաս ի 28 մարտի։

Եւ ահա ինքն ժամանակի, զոր բախտին Եդուարդայ և Յովհաննու Մուրատեանց, մանաւանդ թէ զոր գժբախտութեան նոցա, մեկնի ի Հնդկաց ահագուցանողն նոցա և սատակապահանջն Հէրպէրթ Քամիրոն և գնայ յԵւրոպ, և յաջող-

դէ ի տեղի նորա ի պաշտօն ընդհանրական փառատրանի Նօրթէն անուն ոմն անգղիացի, որ ոչ քաջ ճանաչէ զՄուրատեանս, և ոչ զանցան որ ընդ Նախորդին իւրոց գիտէ, և որում բարեկամանան Մուրատեանք խորամանկութեամբ, կացուցեալ զնա իւրեանց առանձին փառատրան ի բարձրագոյն տանի անդ Անգղիացւոց ի Մատրաս, պաշտպանել նոցա ի դատս իւրեանց առ հասարակ։

Արդ իբրեւ Մուրատեան եղբարքն ազատեալք յերկիւղէ Հէրպէրթ Փամիսընի և բարեկամացեալք ընդ Նօրթէնի փառատրանի համարին թէ ընդարձակեցաւ նոցա աշխարհս, և դիւրին է առնուլ վրէժ ի Հ. Սարգսէ, ըստ բանից Պարոն Եդուարդայ զոր վերագոյն յիշատակեցաք, կամին այնուհետեւ ի տարոյ փոխանակագիրս Հ. Սարգսի և յառնլոյ ինանէ յետս զմնացեալ մուրհակս վաճառական ընկերութեան, այլ դնեն ի մոի առնուլ ինանէ՝ առանց հաստատելոյ ընդ այն փոխանակագիրս ինչ։

Բայց քանզի մերձենայ ժամանակն լրանալոյ առանձին և մոերմական գաշնագրին, և զի ըստ զօրութեան պայմանացն որ անդ, կարող էր այնուհետեւ Հ. Սարգիս վաճառել զմուրհակն այլոց ազատաբար, գրեն գիր առ Հ. Սարգիս, խնդրելով ինանէ այլ եւս երից ամսոց ժամանակ, որպէս զի ունայնացի միանգամ զօրութիւն պայմանաց գաշնագրին. այնուհետեւ դիւրին էր նոցա վերատին խնդրել զայն ինանէ և յապաղել զվաճառումն նոցին, մինչեւ զկամս իւրեանց կատարեցեն և հանիցեն զայն ի ձեռաց նորա։

Թէպէտ և մայր նոցա Աննա տիկին չհաւանի ընդ այն զառաջինն, չգիտելով զխորամանկութիւն նոցա, այլ հաւանեցուցանեն զնա ի վախճանի, տալով նմա զանազան պատճառս։

Եւ այս օրինակ է թղթոյն.

„Վերապատուելի Հայր.

„Ի Մատրաս. 18 Մարտ. 1828.

„Խժուարին և անաչառակ է մեզ յոյսս ժամանակի զոր.

„ Նել փոխանակագիրս, և տալ ձեզ զայն ի փոխարէն մնա-
„ ցեալ մուրհակաց վաճառական ընկերութեանն որք ի ձեռս
„ ձեր. որոյ վասն խնդրեմք ի ձէնջ այլ ևս երեք ամիս ժա-
„ մանակ ի հոգալ զայն։

„ Մնամք Վերապատուելի Հայրութեանդ

„ Խոնարհ ազախին և ծառայք

„ ԱՆՆԱՅ Ս. ՄՈՒՐԱՏԵԱՆ.
„ ԵԴՈՒԱՐԴ Ս. ՄՈՒՐԱՏԵԱՆ.
„ ՅՈՎՀԱՆՆԷՍ Ս. ՄՈՒՐԱՏԵԱՆ.”

„ Առ Վերապատուելի Հ. Սարգիս Վարդապետ Թէոդորեան
գործակալ Մխիթարեան միաբանութեան Վենետիկոյ.

„ Ի Ռայրաբէր.”

Խնդրեալ Հ. Սարգսի զխորհրդանիշն Մուրատեանց՝ առնէ թղթոյ նոցին բացատրական պատասխանի համառօտ բա-
նիւ և հզօր փաստիւք, մինչև կարծել նոցա՝ թէ խորհրդով փաստաբանի իցէ գրեալ նորա զայն, օրինակ զայս.

„ Ազնուամիտ տիկին Աննա և Պարոնայք Եդուարդ և
„ Յովհաննէս Սամուէլ Մուրատեան.

„ Կարծեմ ես թէ կամ մոռացեալ իցէ ձեր զպայմանս
„ մուրհակաց զաշանց մերոց, և կամ ոչինչ համարեալ
„ զայն։

„ Արդ եթէ առաջինն, աղաչեմ ստակաւիկ ինչ աշխատու-
„ թիւն յանձն առեալ վերատին ակնարկեացէք յայն. իսկ
„ եթէ երկրորդն, ապա և ասելոյդ նորոգ առաջարկութիւնն
„ ձեր. և յիրաւի. քանզի գործառնութիւնն մեր արդէն յա-
„ ռաջագոյն աւարտեալ է յամենայնի։ Ահա այս է պատա-

„ խանի իմ առ առաջարկութիւն ձեր, և ոչն լիցի՝ եթէ դար
„ ձեռք նոյն առաջարկեցի ինձ։

„ Մնամ Ազնուամիտ արութեան ձերում

„ Ի Թաւրէզ. 19 մարտ. 1828.

„ Նուաստ ծառայ և աղօթարար

„ Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈՐԻՐԵԱՆ. „

„ Առ Ազնուազարմիծար տիկին Աննա և Պարոնայք Եղուարդ
և Յովհաննէս Մուրատեան.

„ Ի Մատրաս. „

Զայրանան յոյժ Մուրատեան եղբարք ընդ այս բացատրեան պատասխանի Հ. Սարգսի. և յայն վայր հասանէ կատաղութիւն նոցա՝ մինչեւ կամի Պ. Եղուարդ առնուլ զխարազան իւր և գնալ ի բնակութիւն Հ. Սարգսի՝ խրատել զնա այնու, և հազիւ խափանէ զնա մայր նորա Աննա տիկին յանդուգն խորհրդոյն։ Յայնժամ թափեն նոքա զցասումն բարկութեան իւրեանց յանէծս անհնարին և ի բանս բազումս հայհոյութեան. և ոչ այնչափ միայն, այլ և ժպրհի Եղուարդ առել անզգամութեամբ; „ Լաւ էր եթէ հայրն մեր թողեալ էր „ զհրիտակն դայն վասն բոզանոցի միոյ, քան թէ գպրա „ տանն։ „ Եւ զայս բանս անզգամութեան ոչ մի անգամ և առաջի իւրոցն եւեթ, այլ բազում անգամ և առաջի այլոց առացեալ էր նորա՝ յորմէ յայտ է թէ՝ որքան էր պատիւ և մեծարանք նորա և եղբօրն առ յիշատակ հօրն իւրեանց։ . . .

Խորհին ապա թէ զիարդ վրէժս խնդրեսցեն ի Հ. Սարգսէ, և այնպիսի խառնեալ և զայրացեալ ոգւով նոսին ի ճաշել։ Ի սեղանի անդ լինի յիշատակութիւն և զգնայից Պ. Աբրահամ Ազատուրի ընդ նոսա. քանզի խառն էր նա ընդ նոսա յոյժ ժամանակի՝ ապա զրանալոյ նոցա տալ զիրաւունս

գեան իւրեանց՝ տիկնոջ Աղանուրի. և վասն այսորիկ բազում տրտունջ և գանգատանք լինին ի մէջ նոցա ի ձեռն ընտանեաց և բարեկամաց. և ի գժկամակել նոցա ընդ լուր անիրաւութեան իւրեանց և գանգատանաց Աղանուրէ, կամին և ինձնէ վրէժս խնդրել, բայց ոչ գիտեն, թէ զիարդ և որպիսի հնարիւք։

Յայնժամ խրատ տայ նոցա Պ. Պօղոս Լազարովիչն, որ խսեզանի անդ գտանի և ճաշէ ընդ նոսա. «Կոչեցէք զնա, «ասէ, ինձերքին սենեակ գործատանն ձերոյ, և հարցէք «նմա զգնացս իւր ընդ ձեզ. և յորժամ խոստութեամբ տայ «ցէ նա ձեզ պատասխանի, յայնժամ խրատեցէք զնա գա«ւազանաւ։» Ընդ այս յանդուգն խորհուրդ նորա ծիծաղին նոքա, և գովեն յոյժ զնախանձ ընտանասիրութեան նորա։

Մինչչեւ անցեալ ի վերոյ խրատուն քառորդ մի ժամու, լինի անդ ի մէջ նոցա յիշատակութիւն զվաճառականէ նաւու ընկերութեան Պ. Պօղոսի Լազարովիչ և Աբրահամու Աղանուրի. զանգի դարձ արարեալ նաւին ի Մանիլիայէ և վաճառեալ էր միջնորդութեամբ Պ. Եդուարդ Մուրատի, և նորա սեպհականեալ անսի 5000 ռուբլի՝ իբրև ի վարձ միջնորդութեան իւրոյ, ընդդէմ կամաց Պօղոսի Լազարովիչ։ Թէպէտ և լուէ ակամայ Պ. Լազարովիչ՝ տեսանելով զլռելեայն հաւանութիւն Աբրահամու Աղանուրի ընդ գործն, բայց ի յիշատակել Պ. Եդուարդայ զարդիւնս իւր ի գործն յայն՝ ցուցանէ Պ. Լազարովիչ զոհաճութիւն իւր ընդ միջնորդութիւնն. և ի հարցանել ցնա Եդուարդայ զպատճառ տհաճութեան նորա՝ պատասխանէ թէ «Զախորժեմ ես զյիշատակութիւն զդր«ծոյն։»

Դժկամակի Եդուարդ ընդ անակնկալ պատասխանին, և ելեալ ինքանէ ի գաւթի գործատան իւրոյ։ Իբրև անցանէ ընդ այն Պ. Լազարովիչ, կոչէ զնա Եդուարդ ինձերքին սենեակ գործատանն և հարցանէ ցնա զպատճառս արհամարհանաց պատասխանեալն. և յերկրորդել նորա զնոյն տհաճութիւն՝ զայրանայ Եդուարդ և հարկանէ զնա զաւազանաւ։ Տեսեալ Պա-

րան Լազարովչի թէ չկարէ պատասխանել նմա զօրութեամբ իւրով, խորհի վրէժ խնդրել ինքնին օրինօք. վասն որոյ եկանէ ի փողոցն և հրաւիրէ զԵդուարդ, զի եթէ այր իցէ՝ և անդ եւս հարցէ զինքն. և նա եկանէ ի փողոց անդր և հարկանէ զնա և անդ։

Լուեալ Պ. Յովհաննու Մուրատայ ի վերուստ զաղաղակ նոցա, ինչանէ խաղաղել զնոսա. բայց փոխանակ ունելոյ զձեռս եղբօր իւրոյ՝ զի մի՛ եւս հարցէ զնա, զձեռս Լազարովչի կալնու, և նորա հազիւ ինն զերծեալ ի ձեռաց նոցա զնայ առ փաստաբան իւր տալ պատրաստել գանգատագիր և մատուցանել յատեան ընդդէմ Մուրատեանց։ Բայց քանզի փաստաբան նորա պարտական էր Մուրատեանց, համոզէ զնա ասելով թէ խաղաղացի ի ժամուն ի վրդովմանէ իւրմէ, և ապա ի վաղիւ անդր երթիցէ առ նա ի խորհել զինդրոյ գանգատագրին և դիմելոյ յատեանն։ Եւ այսպէս դուքն զոր այլուամ փորէր՝ ինքն ինոյն անկաւ վաղվաղակի. զի միով ժամու յառաջ զիրատն զայն ժպիրհ և չար եւ նոցա վասն Պ. Աղանուրի, իրրեւ ինախանձայոյզ վրէժխնդրութիւն ընտանեաց իւրոց, և նոքին իսկ ընտանիքն զնոյն խորհուրդ յիւր վերայ կատարեցին արդեամբք։

Դառնայ Պ. Լազարովիչ ի քաղաքէ անտի ի բնակութիւն իւր, ի տուն այգւոյ Անեա տիկնոջ՝ լի խռովութեամբ և ոգւով վրէժխնդրութեան, և պատմէ Հ. Սարգսի զրոմանդակ անցս առուին որք անցանեն ի գործատան Մուրատեանց, թէ զիարդ զայրանան երկոքին եղբարք ընդ պատասխանին նորա, և թէ զինչ ինչ հահոյութիւնս խօսեցեալ են նոքա ընդդէմ նմա և ընդդէմ կամաց հօր իւրեանց. այլ և զրարբարոսական գնացս Եդուարդայ ընդ իւր, զձաղկին ի նմանէ ի սենեկի և ի փողոցի հրապարակս։ Զայս ամենայն պատմէ յոյժ դայրացեալ ոգւով և անհնարին ապառնալեաք վրէժխնդրութեան՝ արկանելոյ զնոսա ընդ քրէական յանցանաք. և զրդռէ զՀ. Սարգիս զի և նա առցէ վրէժս ինքնցանէ, պահանջելով ի Մուրատեանց զշահ հրիտակին ոգորմութեան։

Հանդարտեցուցանէ Հ. Սարգիս զՊ. Լազարովիչ, առաջի գնելով նմա զնախատինս և զվնաս տան քեռւոյ նորա, և մխիթարէ զնա՝ յիշեցուցանելով նմա զբան գրոյն թէ «Իմ է «վրէժխնդրութիւն, ասէ տէր։» Եւ թէ «Ամենայն որ ըստ «գործոց իւրոց գոնէ։» Եւ այլ բազում համոզակեր բանիւք հաւանեցուցանէ զնա կասել ի բողոքելոյ յատեանն. և նա անաց նմա և լռէ։

Յետ երկուց աւուրց հանդիպի Հ. Սարգիս ընտանեաց ումանց Մուրատեանց, Ովսաննայի տիկնոջ և որդւոյ նորա Յարութենի, ի գաւթի եկեղեցւոյն Լուսի անուանելոյ. որոց կացեալ անդաւոր խօսէին ընդ տիկնոջ Աննա Մուրատի և ընդ դստեր նորա տիկնոջ Ազանուրի զանցիցն անցելոց ի մէջ Եդուարդայ և Պ. Լազարովչի. և իբրեւ իրաւունս տան նոքա Եդուարդայ, ասէ ցնոսա Հ. Սարգիս; «Համարիք դուք թէ «իրաւունս ունի Պ. Եդուարդ ի գնացս իւր ընդ Պ. Լազա- «ռովչի. իսկ զի՞նչ իրաւունս ունիցի նա և եղբայր նորա Յով- «հաննէս այնչափ հայհոյութիւնս խօսելոյ ընդդէմ ինձ և «ապառնալոյ խարազանաւ թափել զատամունս իմ. մինթէ «հատուցումն ելցէ այն շնորհացն զոր արարի նոցա. և մինթէ «չկարծիցի՞ թէ վրէժխնդրութիւն և հատուցումն ի տեառնէ «լիցի ամենեցուն։ Բայց ես զայս ասեմ ձեզ, ասէ, զի պարտ «է ընտանեաց և ճշմարիտ բարեկամաց Լուր ի վերայ հրոյ «արկանել, և ոչ հուր ի վերայ հրոյ յաւելուլ։ . . .» Զայս ասացեալ դառնայ ի բնակութիւն իւր.

Ընդ այս բան նոցա՝ թէպէտ և ճշմարիտ՝ դժկամակին նոքա, իբրեւ թէ ընդդէմ նոցա ասացեալ լցէ զայն. վասն որոյ ամն ի նոցանէ, Յովհաննէս Յարութիւն որդի Ովսաննայի՝ մօր մօրաքեռն Մուրատեանց, գնայ ուղղակի անտի առ Պարոն Եդուարդ Մուրատ և պատմէ նմա հանդերձ բարդութեամբ և դրդռիչ ոգւով։ Զայրանայ Պ. Եդուարդ ընդ լուրն, և առեալ զնա ընդ իւր գնա ի տուն եղբօր իւրոյ Յովհաննու, և պատմէ նմա զայն վկայութեամբ և հաստատութեամբ նորա։

Յայնժամ բարբոքին երկոքին եղբարքն ոգւով վրէժխնդրութեան ընդդէմ Հ. Սարգսի, և որոշեն բանալ յոյսեանի և

անդարձ պատերազմ ընդդէմ նմա, դատաստանաւ հանել ի ձեռաց նորա զարծաթ գոլրատանն։ Բայց և կամին իմն քան կարգի օրինաց սկիզբն առնել մարտին. վասն որոյ նախ հրատարակեն ի լրաթղթի զիմաստնչան մուրհակացն որ ի ձեռս Հ. Սարգսի, և զարգելս չդնելոյ ուժք դնոսին, և ապա գրեն թուղթ առ Հ. Սարգիս ի ձեռն օրէնդէտ գործակալի իւրեանց Վայմաշի, և առաջարկեն նմա առանձել զարծաթն հրիտակի ողորմութեան ի գանձատուն Անդրկացւոց տէրութեան ի Մարտս, յանուն իւր և յանուն Մուրատեանց։

Ոչ ընդունի Հ. Սարգիս զայն առաջարկութիւն Մուրատեանց, պատասխանելով թէ իրաւունք նոցա աւարտեալ են գրով դաշանց և մուրհակաւ ընդունելութեան արծաթոյն և ազատութեան նոցա ի պատասխանատուութենէ, անտի հրատակին, վասն որոյ չունին իրաւունս խառնելոյ յայն։ Եւ ի հաստատութիւն գրելոցս՝ ահա թուղթ Պօղոս Լազարեանցն առ Գերապայծառ Սուքիաս Սամալ.

„ Առաւածարեալ և Գերապայծառ Տեառն Տեառն Սու-
„ քիասայ Արհիեպիսկոպոսի և ընդհանրական Արբայի
„ խոնարհական աջահամբոյր։

„ Զգրեալն ձերումդ արբութեան ի 1 անցեալ յունիսի,
„ ընկալայ ի 18 հոկտեմբերի, և զծրարեալն ինեմն զվաերա-
„ կանն և զգիր ծանուցման. բայց որովհետև գործառնու-
„ թիւնն Մուրատեան գպրացին էր արդէն աւարտեալ, վասն
„ այնորիկ չեղեւ հարկ ի գործ դնել զայն, առ ի հաստատուն
„ պահել զկանխաւ աւարտեալն։

„ Թէ և բազում անգամ խորհեցայ փոխարինել անցեալ
„ ամբարշտութեանց նոցա, այսինքն վերատին բաղդել յո-
„ բէնս վասն մեռցեալ մարդոյն, և այն ոչ ի կողմանէ մեծա-
„ պատիւ միրանութեանդ, այլ ի կողմանէ Անգին՝ իրրեւ
„ մի ոմն յազգէ անտի, բայց մոռանալով զմերութիւն բարե-
„ պաշտութի Անեաց տիկնոջ, միանգամայն և զբանդուն
„ տան նորա, ոչ կամեցայ ձեռնամուխ լինել յայն. թէ և

«օրհնեալ էր գործն, բայց ևս մեզադրելի՝ եթէ առնէի զայն,
«և այնպէս մեայր գործառնութիւնն ծածկեալ ի ներս ընդ
«քողով։

«Յորժամ աւարտեցաւ գործն, հատուցին զդրամն կոմ-
«բանաւ մերձակօք, և այն՝ երկու եղբարքն ի միասին առ-
«բաղրեալ, օրինաւոր եղանակաւ վաճառեալ և յանձնեալ
«իբրեւ ոսկի և արծաթ դրամ։

«Ունէր Վերապատուելի Հայր Սարգիս Վարդապետն
«ընդ նոսա և այլ իմն մտերմական դաշն արտաքոյ ամե-
«նայն դաշանց և պայմանաց եղելոց, և որ չառնէր և չառնէ
«եւս բնաւ ինչ խախտումն աւարտեալ գործառնութեանն,
«որպէս երեւի յօրինակն զոր ներփակեցի յայսմ. բայց
«զկնի աւարտելոյ նոցա, որովհետեւ զղջացեալ էին և
«կարծէին կարեւոր զայն մասն եւս կլանելոյ, սկսան խնթիւ
«հայել ընդ մեզ. քանզի զկնի հատուցման հրիտակին տե-
«սին զի պակասեցաւ նոցա նիւթ զեղխութեան և անտա-
«կութեան, ջանացան և հնարս հնարեցին առ ի թակար-
«դել զվարդապետն. այլ ի ձեռն իմոց ազգապարութեանց
«զոր հաղորդէի նմա ոչ կարացին հասանել չար կամաց
«իւրեանց։

«Բայց յորժամ մերձեցաւ ժամանակ աւարտման մտեր-
«մական դաշանցն, գրեցին առ Հ. Սարգիս Վարդապետն,
«որոց գրութիւնն էր դաւաճանական և ներհակ ամենայն
«պայմանաց. բայց առ արտաքս ինդիր գրութեան այն էր,
«երկրորդական իմն պայմանաք վերատին մտանել ի դաշինս
«վասն երեքամեայ ժամանակի. և զայն դիր բռնադատու-
«թեամբ եռուն ստորագրել Անանա տիկնոջն Մուրատեանի
«և ինքեանք եւս ստորագրեալ առաքեցին. և այս չէր ծանր
«ի կատարել, եթէ լինէր խորհուրդ նոցա բարի և առաջար-
«կութիւն նոցա անխարդախ։ Վասն այսորիկ և վասն այլ
«բազում պատճառաց, զորոց գրեցից ընդարձակ, հարկ
«համարեցաւ վարդապետն մերժել միանգամայն և զինդիր
«նոցա գլխովին։

«Յաղագս այսր յուսային յինէն ազգակի միջնորդու-

«Թեան, վասն զի ոչ համարձակէին խնդրել զայն. և յոր-
«ժամ ընդհակառակն զտին զիս լուռ և միանգամայն հեռի
«ի մտաց՝ և ի կարծեաց իւրեանց, յայլ ինն խորհուրդ ան-
«մրտութեան մատաբերեաց Եդուարդն։ Քանզի վասն այլ ինչ
«անիրաւ պատճառաց կապեաց ընդ իս, և իրրեւ յաղթա-
«հարեցաւ ի բանից իմոց՝ կատաղեալ եհար զիս քանոնաւ։
«Վաղվաղակի բաղդեցի ի վերին Ատեանն։ Յովհաննէս
«Մուրատ և Յովհաննէս Յարութիւն եղեն երաշխաւորք ան-
«ձին Եդուարդայ, մինչեւ ի պատրաստիլ գանգատագրոյն՝
«զոր ունիմ բերել յանդիման Ատենին։ . . .

«Զկնի դիպուածոյս պատահելոյ և խնդրոյ նոցա անընդ-
«դունելի լինելոյն, կատաղարար հրատարակեցին զԹուա-
«համար մուրհակացն յԱզգարարն (զոր ծրարեցի ի թղթ-
«թիս։) և ապա գրեցին առ Վերապատուելի Հայր
«Սարգիս Վարդապետն օրինագիտաւ. որոց երկոքին գոր-
«ծողութիւնքն ներհակք են միմեանց. թող ամենայն մա-
«տամբ ներհակ լինելն նոցա դաշանց և պայմանաց. և
«այսու եղեն ծաղր և խայտառակ առաջի ամենեցուն. և
«այժմ սոքա ունի յայտնի լինել օրինաց գործառնու-
«թիւնն հանդերձ պատճառօք իրաւախոհութեան, և այն
«ի ձեռն նոյն ասելոքաթ ճէնէռալի Պարոն Ճօրճ Նոր-
«թոնի, որոյ հարկաւորին կամ յայտնել զկացութիւն
«իւրեանց, կամ հաստատանել զվաշին, և կամ խառնել
«ի քաղաքէս։ . . .

«Վասն որոյ բարեգոյն համարեցայ վաղվաղակի ազդ
«առնել ձերումդ արքութեան, զի մի՛ գուցէ այլ ընդ այլոյ
«լսելով խառնեալքդ և կամ լքանիլքդ ի գործառնութենէն,
«Զոր ինչ մինչեւ ցայժմ ընկալեալ զայն և ի գործ եղեալ է-
«յուսամ. և վասն մեր աղօթս արարէք, մինչեւ զմեացեալ
«մասն և զտակոսին եւս հանել ի ձեռաց անարժանիցն և
«հաստատանել ի վանս։ Քանզի այժմ մաքուր եմք ի խղճէ
«թէ մեք չեմք պատճառք, այլ ինքեանք եղեն պատճառ իւ-
«րեանց չարեաց։

„ Յանձնելով զկա ի մաքրափայլ յաղօթս ձեր, մնամ խորին
„ յարգանաք

„ Ձերումդ Գերապայծառ տէրութեան

„ Ամենախոնարհ ծառայ և հաւատարիմ բարեկամ

„ Ի Մատրաս. 31 մարտ. 1828.

„ Պ. Պ. ԼԱԶԱՐՈՎԻՉ.»

ԳԼՈՒԽ ԺԶ.

Ձաւիթ Մոզրատեանց ի միաբանիլ զնայրն իշխանաց ընդ ինքեանս ընդդէմ Հ. Սարգսի. — Խորհուրդ Յովհաննէս Շէնիրեանի առ Հ. Սարգիս. — Մոզրատեանք վատաբանեն զիր գանգատանացս ընդդէմ Հ. Սարգսի. — Խորհուրդ կարգաւորելոյ զՀ. Սարգիս. — Հանգարտեալք բանիտարիզրեան նորա. — Հանգարտեալք ազգայնոց առ նա ի բանտին. — Յովսէփ Շարմիրեան. — Կօրոսի օրինագիտ. — Գրիգոր վարդապետն՝ նուիրակ Ղուղայի վանացս. — Հրատարակութիւն Մոզրատեանց ի շրագիրս Մտրատոյ, և պատասխանիք Հայր Սարգսի.

Երբեմն Մոզրատեանք զբացանական պատասխանին ի Հ. Սարգսէ, ակամայն պատրաստել գանգատագիր մի ընդդէմ նորա և մատուցանել զայն յԱտեանն։ Բայց քանզի մայր նոցա Աննա տիկին էր մի ի կտակակատարաց անտի, և հաւանութեամբ և հաստատութեամբ ձեռին նորա առաքեալ էր գործառնութիւն հրիտակին ընդ Հ. Սարգսի, վասն որոյ կարեւոր համարին զմիաբանութիւն նորին ընդ ինքեանս ի գործն ամբաստանութեան. վասն այնորիկ Ջանան շատ համոզել զնա միաբանել ընդ իւրեանս. այլ նա բացէ ի բաց մերժէ զառաջարկութիւն նոցա, յայտնի անիրաւութիւն և

անմիտ ձեռնարկութիւն ճանաչելով զայն։ Եւ իբրեւ չկարեն նոքա հաւանեցուցանել զնա յայն գործ, ոչ ուղղակի անձամբ խօսելով և համոզելով, և ոչ ի ձեռն արքանեկաց իւրեանց, յայնժամ ապիրատ խորհրդով զմայր իւրեանց կուսակից առնեն ամբաստանելոյն Հ. Սարգսի Թէոդորեան, և ընդդէմ նորա ևս տան յԱտեանն զգանգատագիր իւրեանց։

Իբրեւ լսէ մայր նոցա զայն և տեսանէ զհրամանագիրն որ յատենէն առ նա, տալ պատասխանի գանգատագրոյ նոցա, գնայ ի գործատուն որդւոց իւրոց և հարցանէ նոցա թէ զինչ իցէ այն յանդուգն և անօրինակ գնացք նոցա։ Առնէ նմա պատասխանի որդի նորա Յովհաննէս յոյժ ժպրհուելեամբ, արտաբերելով բանս անլսելի։ . . .

Լուեալ թշուառ մօրն զայնպիսի բարբառ իւրեանոյ սիրելւոյն ի նմանէ՝ ուշաթափի անդէն, և ստոփկ ցնցումն մկանանց գտանէ, ճչելով և աղաղակելով։ Զայն ողբալի աղաղակ լսէ Պ. Լազարովիչ ի գործատանէ իւրմէ. գիմէ վազվազակի ի տուն քաղաքական բարեկարգութեան, ի փոլիսն, և ազդ առնէ՝ թէ ազմուկ մեծ կայ ի տան Մուրատեանց։ Դիմեն անդր փութանակի սպասաւորք քաղաքական բարեկարգութեան, և հարցանեն Մուրատեանց զպատճառս ազմկին. և նոքա զարհուրեալ առնեն պատասխանի՝ թէ չիք ինչ ազմուկ, այլ վէճ ինչ է ի մէջ ընտանեաց իւրեանց։

Հարցանեն ապա թէ ուստի իցեն առեալ նոքա լուր այնպիսի. և նոքա ասեն, ի Պօղոս Լազարովիչէ։ Յայնժամ թողեալ նոցա զմայր իւրեանց անդ ընդարմացեալ, յարձակին ի վերայ Պ. Լազարովիչի խրատել զնա դադարանալ վասն ազդարարութեանն։ Իսկ նորա զգուշացեալ յառաջագոյն փակէ զդուռն անցիցն որ ի գործատուն իւր։ Կամին նոքա և փորձեն ի վերուստ անտի որմոյն ինչանել ի գործատուն նորա, բայց չկարեն։ Յայնժամ անտի բազում բանս հայհոյութեան արձակեն ի նա՝ հանդերձ սկզբին ապառնալեօք, և զառնան յետս պատագիլ զաղմկաւն իւրեանց։

Տատապեալ մայր նոցա հազիւ ուրեմն զդասուցեալ ի ցընցմանէ մարմնոյ՝ մտանէ ի փալանքին և զառնայ ի բնակութիւն

իւր, լալով զճանապարհայն և անէծս դառնագին սրտիւ կարդալով որդւոց իւրոց, մանաւանդ կրտսեր որդւոյն իւրում, զի հնչէր տակաւին յականջս նորա բարբառն այն սարսափելի մոայ։ . . .

Ինքին աւուր իջանէ Հ. Սարգիս ի քաղաքն յայցելութիւն ոմանց, և հանդիպի Յովհաննու Շէհրիմանի, որ խրատս տայ նմա չյամել և չշրջել ի քաղաքի անդ. «Անհնարինս զայրա-«ցեալ և իրրեւ զվագր կատաղեալ են, ասէ, երկոքին եղ-«բարք Մուրատեանք. գուցէ հանդիպեալ նոցա՝ չարիս ինչ «և վնաս կրեսցես ի նոցանէ. »։ քանզի ներկայ լեալ էր ինքն ի գործառան անդ Մուրատեանց, և ակամառս աղետալի տեսարանին, վասն այնորիկ խորհուրդ տայր նմա եկանել ի քաղաքէն։ Անսայ Հ. Սարգիս խոհական խորհրդոյ Յովհաննու Շէհրիմանի, և դառնայ փութով ի բնակութիւն իւր, չտալով տեղի գազանական կրից Մուրատեանց՝ յառաւել ինն թշուառութիւն նոցա և ի քանդումն։

Յայնմ ժամանակի գրէ Հ. Սարգիս թուղթ առ միաբանութիւն իւր օրինակ զոյս.

«Առաջնորդարանս և Գերապայծառ Տեառն մերոյ Սուքիասայ Արքեպիսկոպոսի և ընդհանրական Արբայի ծընրադրական աջահամբոյր։

«Ընկալայ ի 22 փետրուարի սարուոյս զգրեալն Արհիապատիւ Հօրդ որ ի 10 սեպտեմբերի անցելոյ։ Զարմանայ Գերապայծառ Տէրդ ընդ երեքամեայ յապաղումն գրութեանս. այլ ես առաւել եւս զարմանամ ընդ վեցամեայ յապաղումն նորին. քանզի յինն փետրուարի անցեալ ամի զրեալն մինչեւ ցսաան սեպտեմբերի չեւ է հասեալ այդր, յոր կային ծրարեալ համառօտութիւն դաշանց և պայմանաց դպրոցին։ Թէպէտ և տեղեկացայ զի թղթատար նաւն ժամանեալ է ի Վանս յելս անցեալ յուլիսի, բայց յուսամ զի փութով պատասխանի արարեալ իցէ այնմ։

«Լուրք քաղաքիս առ հասարակ տխրականք են և ոչ ուրախականք. և մանաւանդ լուր տանն Մուրատեան, որ յամենայնի աղէտալի և վիճակն ողբալի. զոր և համառօտիւ ծանոյց ձեզ Պ. Լազարովիչ։ Հասարակութիւնս մի՛ խռովեցի բնաւ. քանզի չարութիւն ոչա և անզգամութիւնք ի գլուխս իւրեանց դարձցին, որպէս և վկայեն ոչ միայն բնակիչք քաղաքիս, այլ և մայր նոցա իսկ գլխովին, որ զկնի բազում մայրական խրատու և աղաչանաց հրաժարեցաւ ի նոցանէ բանիւ և գործով, և ունի գրել ձեզ առանձինն և վկայել ճշմարտութեանն։ Այժմ իրաւունք որբոց և աղքատաց ազգիս կամ բոլորովին կշիռ պահեցի, և կամ եղեալն վճռով Աստենիս հաստատեցի, ըստ որում կամէր հասարակութիւնս։

«Զունելով այլ ինչ ի ժամուս՝ կնքեմ զգիրս և ձեռամ

«Արհիապատուութեանդ ձերում

«Ի Մարտս. 5 ապրիլ 1828.

«Ն. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈՂՈՐԵԱՆ.»

Եղբարքն երկոքին Մուրատեանք ջանան և փութան ժամ մի յառաջ մատուցանել, և մատուցանեն զգանձատուպիր իւրեանց յԱստեանն ընդդէմ Հ. Սարգսի, լցեալ զայն ամենայն զրպարտութեամբ, որչափ կուրութիւն մտաց և կրից նոցա կարող էր տեսանել և առնել... ապա կամեցին ընդ յաջողութիւն վրէժխնդրութեան իւրեանց և ցանկութեան, հանելոյ ի ձեռաց և յիշխանութենէ նորա զարծաթ հրիտակին ողորմութեան և պատասխանել նորա գանձատուպրոյ իւրեանց և ի ցրել զզրպարտութիւնն։

Վասն այսորիկ յայլ ինն ապիրատ խորհուրդ մտարկին, որ էր յանկարծ ինն ընդառնել զնա, զարհուրեցուցանել և հանել ի ձեռաց նորա զարծաթ հրիտակին։ Եւ յորժամ յաջողէր

նոցա այն, յայնժամ յեռս կոչէին զգանգատագիր իւրեանց յԱտենէ անուն, ասելով թէ նպատակ գանգատագրոյ նոցա էր յապահովել զարծաթն ողորմութեան. և զի այն եղեւ, ապա աւելորդ է գանգատագիր իւրեանց անդ. քանզի չունէին ընդ Հ. Սարգսի այլ ինչ խնդիր և կամ վէճ ի դատաստանի, բաց ի յապահովութենէ արծաթոյ հրամայեն ողորմութեան զոր յապահովեցին։

Ահա այսու խորհրդով և այսպիսի յուսով առնապարեն նոքա հանել հրամանագիր յԱտենէ ի կալանաւորել զՀ. Սարգիս իբրեւ զփախստական ի տահմանաց անուն Անդղիացւոց պետութեան ի տահմանս Գաղղիացւոց պետութեան ի Փոնթիշէրի, հանդերձ արծաթով հրամայեն ողորմութեան։

Բայց առ ի հանել զայնպիսի հրամանագիր յԱտենէ Անդղիացւոց պիտոյ են երկու վկայք, և երդումն՝ թէ արդարեւ հաւատի ելցէ փախուստն նորա անդր և վասանդն արծաթոյ հրամայեն ողորմութեան. զոսանեն նոքա և այսմ հնարս, քանզի բաւական հաստատութիւն համարին երդման իւրեանց զերբեմն ասացեալն ի մօրէն՝ թէ կամի ինքն գնալ ի Փոնթիշէրի, զի մի՝ տեսցէ զանօրէն գնացս որդւոց իւրոց որ ընդ Հայր Սարգսի ի վէճս դատաստանի, և մի՛ լուիցէ զնախատինս նոցա ի մորդկանէ։ Եւ ահա զայն բանս նորա բաւական համարին ի հաստատութիւն երդման իւրեանց՝ թէ փախիցէ անդր, ընդ նմա և Հ. Սարգիս հանդերձ արծաթովն ողորմութեան։ Եւ վկայս երկուս առ այն զոսանեն ի հնդիկ ազգաւորաց իւրեանց. և զայս խորհուրդ և զպատրաստութիւն առնեն ընդ փաստաբանին իւրեանց, յաւուր աւագ ուրբաթու։

Երկու աւուրքք յառաջ քան զխորհուրդն զայն ընդունի Հ. Սարգիս հրամանագիր յԱտենէ անուն առնել պատասխանի զանգատագրին Մուրատեանց։ Զնոյն ընդունի առանձինն և տիկին Անանա Մուրատեան, իբրեւ կուսակից ամրաստանելոյն Հ. Սարգսի։ Վասն որոյ գնայ Հ. Սարգիս ի վաղիւ անդր ի քաղաքն և տայ իշխանութիւն գործակալութեան օրէնագիտի իւրում՝ Փոլի անուն անգղիացւոյ, զի յանդիման լիցի նա Ատենին ի կողմանէ իւրմէ և ինդրեցէ զօրինակ գանգատագրին

Մուրատեանց, առ ի տալ այնմ պատասխանի։ Ապա դառնայ անտի ի բնակութիւն իւր ի տուն Աննայի տիկնոջ, և ի հինգ ժամու ընդ երեկս տեսանէ ի սենեկէ իւրմէ զի մտանէ ի պարտէզ անդր հեծեալ մի անդղիացի, և գնայ ի կողմն բնակութեան Պ. Լազարովչի, որ այն ինչ եկեալ ի քաղաքէն՝ նստէր առ դրան սենեկի իւրոյ։

Հարցանէ ցնա հեծեալն, թէ ո՞ւր իցէ Հայր Սարգիս Թէոդորեան։ Պատասխանէ Պ. Լազարովիչ, թէ նա ի սենեկի իւրում է։ Յայնժամ դառնայ յետս հապճեպով և եկանէ ի դուրս ի պարտիզէ անտի՝ անկանել յուղի։ Եկանէ Հ. Սարգիս ի սենեկէ իւրմէ և գնայ առ Պ. Լազարովիչ՝ հարցանել թէ ո՞վ իցէ հեծեալն այն, և զինչ խնդրիցէ անդ։

Ասէ նա, թէ Շէրիֆ քաղաքին իցէ, և զնա ինքն հարցանէ։ Զարմանայ Հ. Սարգիս՝ թէ ընդէ՞ր հարցանիցէ նա զանձնէն, և դառնայ ի սենեակ իւր մտայոյզ խորհրդով։ Անցանեն վայրկեանք ինչ, և դարձեալ մտանէ անդր հեծեալն՝ Շէրիֆի անուանեալ, և զկնի նորին տուղեալ արք քսան, հանդերձ սուսերօք և բրօք, և առաջնորդ նոցին երկոքին եղբարքն Մուրատեանք, Եդուարդ և Յովհաննէս, և ընդ աջմէ նոցա կապանաւոր պաշտօնեայ Ատենին։

Երկուցեալ Հ. Սարգսի զառաջինն ի յանդուգն արշանաւանէն և ի դաժան տեսլենէ դիմաց նոցա՝ փակէ զդուռն սենեկին իւրոյ, մինչեւ իմացի զվախճան գալստեան նոցա անդր։ Մտանեն նոքա ամենեքեան խուռն բազմութեամբ ի սրահ անդր տանն Աննայի տիկնոջ, բաղխեն մոլեգին ուժգնութեամբ զվանդակապերտ դուռն սենեկին Հ. Սարգսի, և խորտակեն զմի ի տախտակաց անտի դրանն։

Հարցանէ ցնոսա ինքնիշխան Հ. Սարգսի, թէ զինչ խնդրիցեն. և պատասխանէ նմա Յովհաննէս Մուրատ թէ «Կամիմք և հրամայեմք քեզ զի յանձնեսցես զմուրհակս վաճառական ընկերութեան, զարծաթ հրիտակին ողորմութեան, ի ձեռս Շէրիֆի ասենին Անգղիացւոց։»

Յայնժամ բանայ Հ. Սարգիս զդուռն սենեկին և եկանէ արտաքս ի սրահ անդր առ նոսա, ասելով.

«Այլ ինչ կարծէի ես զգալուստ ձեր այսր այդչափ բաղ-
«մութեամբ և այդպիսի պատրաստութեամբ, և վասն այնո-
«րիկ փակեցի զդուռն սենեկի իմոյ. բայց այժմ իմացեալ
«զպատճառն՝ աւասիկ եմ ես. զի՞նչ խնդրէք յինէն։»

Կրկնեալ անդրէն Յովհաննու Մուրատայ ասէ ցնա զնոյն բանս, թէ «Յանձնեալիր ի ձեռս Շէրիֆին զմուրհակն վա-
«ճառական ընկերութեան։» Եւ յաւելու; «Ապա թէ ոչ՝
«ասէ, ի մեծ բանսն երթիցես։»

Պատասխանի տայ նմա Հ. Սարգիս և ասէ; «Մուրհակքն
«այնքիկ որք ի ձեռին իմում՝ են իրաւունք աղքատաց աղ-
«գին իմոյ, և հատուցեալ էք ինձ զայնս կատակատարքդ
«պայմանաւք դաշանց և մուրհակաւք ընդունելութեան արծա-
«թոյն և գրով ազատութեան ձերոյ՝ ի կատարումն կամաց
«հանդուցեալ բարերարին. և վասն այնորիկ չկարեմ ես
«ի ձեռս այլոյ ուրուք յանձնել, աւանդապահ գոլով
«այնմ։»

Ասէ ցնա Յովհաննէս Մուրատ; «Ես իրրև բարեկամ Մխի-
«թարեան միաբանութեան խրատս տամ քեզ յանձնել զմուր-
«հակն ի ձեռս Շէրիֆի ատենին, և մի՛ գնալ ի բանս, որ
«նախատինս և վնաս բերիցէ միաբանութեան քում։»

Ասէ Հ. Սարգիս; «Ա՛հ, և բարեկամ իսկ ես դու Մխիթա-
«բեան միաբանութեանն այդպիսի գնացիւքդ. . . այլ ես ոչ
«միայն ի բանս՝ այլ և ի մահ պատրաստ եմ գնել զանձն իմ
«առ ի պաշտպանել զիրաւունս որք և աղքատ մանկանց
«ազգին իմոյ, և ի պահել զպատիւ Մխիթարեան միաբանու-
«թեանն առ հասարակ։»

Յայնժամ ասէ ցնա Յովհաննէս Մուրատ. «Զկամիմ ես
«այլ ես խօսել ընդ քեզ։»

Ասէ ցնա Հ. Սարգիս; «Յաւելանն մի՛ խօսեցիս ընդ
«իս։»

Մինչդեռ նոքա զայսոսիկ խօսէին ընդ միմեանս ի սրահի ներսն առաջի բազմութեան, եկանէ տիկին Աննա Մուրատ ի սենեկէ իւրմէ, և ասէ աղաղակաւ ցորդին իւր ցՅովհաննէս

Մուրատ ; « Ներկնչիս դու բնաւ ի Տեառնէ , զի կայծակն նո-
« նորա իջանէ ի վերայ գլխոյ քո : »

Պատասխանէ նմա որդին ; « Կայծակն նորա ի վերայ գլխոյ
« քո եկեսցէ . . . . »

Ի լուր բանից ուշաթափի դժբաղդ մայրն , և անկանի
ի ցնցումն մկանանց : Ընթանայ վաղվաղակի Հ. Սարգիս և
մատուցանէ նմա ջուր՝ զի սթափեսցի , և քաջալերէ զնա
յարդարութիւնն Աստուծոյ ապաւինիլ : Ապա ելանէ ի կատ
իւր յոժարութեամբ , և առեալ անդր զկալանաւոր Աստնին՝
զնայ ուղղակի ի բանտն , ուր և հասանէ յինն ժամու երե-
կոյին :

Տեսեալ զնա բանտապետին՝ զարմանայ , և ընթերցեալ
զհրամանագիր Աստնին՝ շարժէ զգլուխ իւր , և քաջալերէ
զՀ. Սարգիս . « Միայն ցաւ է ինձ , ասէ , զի չունիմ ատ
« ի ժամուս սենեակ պատշաճական վասն քո . » քանզի բազ-
մութիւն յոյժ էր բանտարկելոց ի ժամանակին . վասն որոյ
ասայ նմա սենեակ մի փոքրիկ յոյժ , մթին և լի պիծակօք , ուր
ոչ մահիճք էին և ոչ անկողին ի ննջել : Հարկաւորի ննջել
ի սրահին և յանցս ճանապարհի , ի վերայ լոկ տախտակեայ
նստարանի մոյ որ էր անդ :

Ի վաղիւ անդր գնացեալ կալանաւորին ի գործատուն Մու-
րատեանց պատմէ նոցա զիրան : Ասէ ցնա Պ. Եդուարդ Մու-
րատ թէ « Արժանապէս է նմա այն , թող տատակեսցի ան-
« դէն . » և երկոքին եղբարքն ասեն միանգամայն ; « Գան-
« դեսցուք մեք զվանս նորա , և ընչեսցուք յերկրէ զմիսրա-
« նութիւն նորին , որպէս զի մի լիցի և մեռցէ այնուհետեւ
« օրինաւոր պահանջող ի մէնջ : » Գայթագղի յոյժ անզղիա-
ցի կալանաւորն ընդ անդթութիւն նոցա , և պատմէ զայն
այլոց նախատանաք , իբրեւ ակամաւն և ակամայաբար :

Յետ մեկնելոյ Հ. Սարգսի ի տանէ անտի բնակութեան իւ-
րոյ և գնալոյ ի բանտն , գնան երկոքին եղբարք Մուրատեանք
ի սենեակ Պ. Լազարոմչի , և փարեալ զնովաւ համբուրեն և
հաշտին ընդ նմա , և ասեն ցնա ; « Ահա արդ ժամանակ է
« ցուցանելոյ քոյ զբնաւանախրութիւն քո , միաբանել ընդ

«մեզ և խնդրել վրէժս ի Հ. Սարգսէ։» Եւ հրաւիրեն զնա թախանձանաւք գնալ ի վաղիւ անդր ի գործատուն նոցա և խորհել և գործել ընդ նոսա։ Եւ նա թէպէտ և գնայ անդր միանգամ և երկիցս, բայց տեսեալ զանմիտ ձեռնարկս նոցա՝ հրաժարի ի նոցանէ ի տպուս, և պահէ զբարեկամութիւն իւր ընդ Հ. Սարգսի, իրաւունս տալով նմա յամենայն գործս նորին։

Ի նմին գիշերի գնան ի բանտն յայց Հ. Սարգսի Պարոնայք Աբրահամ Աղանուր, Պօղոս Լազարովիչ, և Յովհաննէս Շէհրիմեան, և միխիթարեն և քաջալերեն զնա, և ցաւին ընդ կուրութիւն Մուրատեանց։ Պատմէ նմա անդ Պ. Աղանուր թէ Մուրատեանք նախ ի տուն իւր գնացեալ խնդրեն զՀայր Սարգիս, և յամենայն տեղիս տան նորա որոնեն, իբր թէ անդ իցէ նա թաքուցեալ. մանաւանդ թէ գնա ինքն զԱղանուր կամին նախատել, զի խռով էր նա ընդ նոսա՝ վասն զլանալոյ նոցա զիրաւունս նորա, 100,000 ռուբի։ Յիշեցուցանէ նմա անդ և Պ. Լազարովիչ զբարերարութիւն իւր առ Մուրատեան եղբարսն, և զփոխարէնն զոր հատուցին նմա ընդ այն. և ասէ; «Եթէ չէր քո խափանեալ զիս յարկանելոյ զնոսա «ընդ քրէական յանցանաւք, չկարէին ոչա այժմ հրամանա«զիր հանել յԱտենէն, և զքեզ կալանաւորել։» Քանզի որք միանգամ ընդ քրէական յանցանաւք իցեն՝ չկարեն երդնուլ և հրամանագիր հանել յատենէն ի կալանաւորել զոք։

Ասէ ցնա Հ. Սարգիս; «Պարտ է միշտ բարիս առնել այ«լոց, իսկ զփոխարէնն ի Տեառնէ միայն ակնաւնել. զի նա «զիտէ հատուցանել իւրաքանչիւր ըստ գործոց իւրոց։»

Ծանօթանայ Հ. Սարգիս ի բանտի անդ Յովսեփայ Շամիրեան, որ յեօթն ամաց հետէ կայր ի բանտի վասն պարտուց։ Նորա Տեսեալ զՀ. Սարգիս հիանայ, և խնդացեալ զպատճառսն՝ քաջալերէ զնա և խոստանայ օգնել նմա ի թարգմանութիւն անդրդիական լեզուի, այլ և տայ նմա բնակութիւն ի սենեկի իւրում յետ քանի մի աւուրց՝ առաքելով զկին իւր զնալ բնակել ի քաղաքի. քան ի միասին բնակին ի բանտի

յամաց հետէ, և որդիք երկու ծնեալ էին նոցա անդ. (թէպէտ և այս հիւրընկալութիւն և օգնութիւն նորա ոչ ձրի լինի Հ. Սարգսի, հատուցանելով սորա առաւել քան զ5000 ռուբլի ի միջոցի այնր ժամանակին և ապա.) և առաւել ևս հիանայր նա ընդ անխռովութիւն մտաց Հ. Սարգսի, զի ընթրէր ախորժանօք ի նմին իսկ յառաջնում գիշերին, և ննջէր քաղցր ի քուն ի վերայ լոկ տախտակեայ նստարանի և յանցս ճանապարհի։ Եւ յիրաւի, քանզի խիղճ մտաց նորա ջինջ էր իբրև զմաքուր հայելի, և ապաւինութիւն իւր յարդարութիւնն Աստուծոյ և ի պաշտպանութիւն նորին՝ որ առ որբ և աղքատ մանկունս ազգին իւրոյ՝ մեծապէս էր և հաստատուն. վասն որոյ և չունէր այլ հոգ՝ բայց ի զգուշաւոր պահպանութենէ մուրհակաց վաճառական ընկերութեան զոր և, ի լրանալ ժամանակին, ըստ պայմանաց մտերմական դաշնին, անցուցանէ յանուն իւր առաջի վկայից, և ծրարեալ ի մոմշորի, զի մի ի քրտանց ապականեսցին, կրէ ի վերայ իւր ի ներքուստ։ Կապակցեալ միշտ ի շարութենէ Մուրատեան եղբարց, մինչև առանց զայն Համարակալի տէրութեան՝ ըստ հրամանի Աստենին և ըստ օրինաց։

Ի վաղիւ անդր կոչէ Հ. Սարգիս ի բանտն զայլ ոմն օրէնդէտ, Կարոն անուն անգղիացի, և ի բաց թողու զօրէնդէտն զՓոլի. որ զի պարտապան էր Մուրատեանց՝ զգուշանայ ինքնգութենէ նորա, և տայ գիշխանութիւն գործակալութեան դատին իւրոյ Կարոնի, առնուլ յԱտենէ զօրինակ գանձատագրոյ Մուրատեանց, և տալ պատասխանի նմին ըստ թելադրութեան իւրոյ, և ըստ իրացն ճշմարտութեան։

Ի նմին աւուր գնան ի բանտն այց առնել Հ. Սարգսի տիկին Աննա Մուրատեան և դուստր նորա տիկին Մաամի Աղա Նուր, և մխիթարեն և քաջալերեն զնա, միանգամայն և ողբան զկուրութիւն մտաց որդւոց և եղբարց իւրեանց։ Զայս տարին նոքա և յայլ քանի մի նուագս, և ճաշեցին ընդ նմա անդ ի մխիթարութիւն բանտելոյն։ Նոյնպէս տարին և այլք ոմանք ի բարեկամաց և ի ծանօթից նոցուն, և յառաջ այց առնէին նմա և քաջալերէին զնա, զոմանք զազգատիրութիւն

նորա, և մանաւորապէս նուիրակն Զուզոյու վանաց Գրիգոր Վարդապետ, որ նմանեցուցանէր զՀ. Սարգիս առաքելոցն Պետրոսի և Պօղոսի, որք ի բանս արկան յազգայնոց իւրեանց վասն բարութեան ազգի մարդկան առ հասարակ։

Տան աւուրքք յառաջ քան զմտանել Հ. Սարգսի ի բանս՝ առնեն Մուրատեան եղբարք յայտարարութիւն ի լրաթուղթս Մատրասու, հանդերձ հրամանագրով Ատենին, զի մի կարասցէ Հ. Սարգիս վաճառել զմուրհակս վաճառական ընկերութեանն զոր ունէր ի ձեռին, զի էին այնոքիկ ի ներքոյ քննութեան առնի, նշանելով անդ և զթուականս մուրհակացն։ Զնոյն յայտարարութիւն առնել տան նոքա ձեռամբ ծանօթից իւրեանց Յէրոպ, և ի լրաթուղթս Վենետկոյ, կասկածելով թէ գուցէ անդր անցուցեալ վաճառեսցին մուրհակքն։

Թէպէտ և զառաջինն ակն ածէ Հ. Սարգիս առնել պատասխանի յայտարարութեան նոցա, խնայելով ի համբաւ նոցա և պահելով զպատիւ տան հանգուցեալ բարերարին՝ Սամուէլի Մուրատայ, բայց յորժամ ապիրատութիւն նոցա ի ծայրն հասանէ, բռնագատի յարգարութենէ յայտնել զշնմարտութիւն, և խելամուտ առնել զայն հասարակաց. վասն որոյ և յերրորդում աւուր բանտարգելութեան իւրոյ առնէ յայտարարութիւն ի լրաթուղթս Մատրասու, ծանուցանելով համառօտիւ զպատճառս իրաւախոհութեան իւրոյ որ ընդ Մուրատեանս, զանկարողութիւն նոցա ի հատուցանել զրովանդակ հրամայեալն ողորմութեան՝ զոր պահանջէր ի նոցանէ խառնութեամբ ընդհանրական փատաբանն Հէրպէրթ Ֆամիտըն, և չպայմանս դաշանցն որ ի մէջ նոցա, և զգնացս իւր և զնոցայն ընդ միմեանս մինչև ցայն օր, հանդերձ յիշատակութեամբ հաւատեաց ի հատատութիւն բանից իւրոց։

Ընթերցեալ Անդղիացւոց և Հնդկաց զայն յայտարարութիւն Հ. Սարգսի ի լրաթուղթս, և իմացեալ զշնմարտութիւնն, ամենեքեան առ հասարակ մեղադրեն զՄուրատեանս և նախատեն զնոսա յոյժ. յորոց մի էր և ճօրն Մօտ ա-

նուն անգղիացի պաշտօնեայ ի դրամատանն (պանք) վճռական ընկերութեան, և մեր իմ բարեկամ և երախտապարտ Մուրատեանց։ Սորա առեալ զրաթուղթն գնայ ի գործատուն Նոցա, և ընկեցեալ զայն ի գետին՝ ասէ ցնոսա; «Մուրատեանք, կորուսէք դուք զարծաթն ձեր և զհամարաւգ միանգամայն։» Եւ զայս ասացեալ՝ հրաժարի ինքնայանէ։

Իսկ ընդհանուր սպարապետն զօրաց գաւառին Մատրաստու, որում աւուրքք ինչ յառաջ մասնաւորապէս մեծածախ սեղան առնեն Մուրատեանք, ընթերցեալ զյայտարարութիւն Հ. Սարգսի և իմացեալ զգնացս Մուրատեանց, չդարձուցանէ նոցա և ոչ իսկ զայցելութիւնն քաղաքավարական ի փոխարէն այնպիսոյ ընդունելութեան նոցա։ Բայց առաւել ևս նախատինս յաւել նոցա անմիտ և լիրբ պատասխանին իւրեանց առ յայտարարութիւնն. քանզի պատասխանեցին ի լրաթուղթս, թէ զոր ինչ յայտարարութիւն և կամիցի առնել Հ. Սարգիս Թէոդորեան՝ չէ ինչ նոցա փոյթ, շատ է զի նա այժմ ի բանտի կայ կալանաւոր։ Առնէ Հ. Սարգիս և այնց բանից նոցա զարժանն պատասխանի ի լրաթուղթս Մատրաստու, և յետ այնորիկ ընդ նոքա ի սպառ։

Գրէ Հ. Սարգիս թուղթ ի Վենետիկ առ Գեր. Սուքիաս Սամալ ծանուցանելով նմա զրամատարգելութիւն իւր, օրինակ զայս.

«Առաւածապատիւ և Գերապայծառ Տեառն մերոյ Սուքիասայ Արքեպիսկոպոսի և ընդհանրական Արքայի ծընրադրական աջահամբոյր։

«Զկարևոր ծանօթութիւնս յաղագս ապիրատ խորհրդոց Մուրատեանց և անմիտ ձեռնարկութեան նոցա որ ի սպառնալիս գանգուզի և ի յուխտեանական նախատինս ասեն իւրեանց՝ ահա ծանուցեալ է ձեզ համառօտիւ Պ. Պօղոս Լազարոսիչ, որպէս և զընդարձակագոյնն խոստացեալ է տալ ձեզ

ապա։ Զնոյն և Անանա խաթուն և աղգայինքս որք սատ առ հասարակ, բաց ի թշնամեաց արդարութեան, հանդերձեալ են գրել և վկայել ճշմարտութեանն։

„Իսկ պատճառ իմոյ այժմուս սակաւատող գրութեան է միայն հանգուցանել զմիտս Հասարակութեանս, թէ ողորմութեամբն Աստուծոյ և աղօթիւք ձերովք քաջառողջ եմ մարմնով և միխիթարեալ հոգւով, և թէ բանտարգելութիւն իմ՝ ըստ գիտակցութեան մտաց և ըստ վկայութեան ամենայն բնակչաց քաղաքիս՝ է պատիւ Հասարակութեանս և հաստատութիւն իրաւանց իւրոց, որպէս և զկնի քանի մի եօթնեկաց ունի յայտնել ճշմարտութիւնն, և իրաւունք իւր վճռով հաստատեցին յԱտենէ տեղւոյս, ըստ որում կամէր Հասարակութիւնս, և այն իրաւամբք և արդարութեամբ։

„Անանա խաթուն թէպէտ և անմխիթար է յոյժ վասն ապրատութեան որդւոց իւրոց, այլ միխիթարեալ՝ զկողմն ունելով ճշմարտութեան և արդարութեան. և ընդ այս կարի քաջ զարմացեալ են սատ ամենեքեան։ Այցելութիւն բարեկամաց և ծանօթից անպակաս են ինձ սատ ի բանտիս, և որ մեծն է ի միխիթարութիւնս՝ Պ. Յովսէփ Եամիրեան որ վասն պարտուց իւրոց կայ սատ ի բանտիս զամս եօթն, է հիւրընկալն իմ և օգնական յամենայն կարեւոր պէտս ժամանակիս։ . . .

„Մնամ միշտ

„Արհիապատութեան ձերում

„Ի բանտն Մարտաստ. 13 մայիս 1828.

„Խոնարհ ծառայ

„Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՅՐԻՄԵԱՆ.”

Գրեն Թուղթ և աղգայինք որք ի Մարտաս առ Նոյն Գերապայծառ Սաքիաս, վկայելով իրացն ճշմարտութեան, ըստ հետեւեալ օրինակիդ.

„ Գերապայծառ Տեառն Տեառն Սուքիասայ Սոմալեան
„ Արքեպիսկոպոսի և ընդհանրական Արբայի Մխիթա-
„ բեան միաբանութեան, և համօրէն մեծապատիւ Հա-
„ ստատակութեան նորին յարգանաւք ողջոյն և խորին խո-
„ նարհութիւն :

„ Կոակակատարք հանդուցեալ Պ. Սամուէլ Մկրտիչ Մու-
„ բատին, որք են տիկին կողակից նորա Աննա և որդիք
„ նորին Պարոնայք Եդուարդ և Յովհաննէս Սամուէլ Մու-
„ բատեան, զկնի բայարձակապէս ատարելոյ ընդ Վերա-
„ պատուելի Հ. Սարգիս Թէոդորեան գործակալ վարդապե-
„ տի զգործառնութիւն դպրոցին որ ի վեցերորդ հատուածս
„ Կոակի վերոյիշեալ հանդուցելոյն, և զկնի վճարելոյ ըզ-
„ գումար հրիտակին կումբանու մուրհակաւք 183,323 Ասպրի
„ հուն, կամ ռուբի Մատրասու 641,630, ստանալով ի Վե-
„ բապատուելի Հ. Սարգիս Վարդապետէն, վասն հատա-
„ ուութեան արարեալ դաշանց և միանգամայն վճարեալ
„ դրամոցն զկատարեալ ռէլիգ, ազատագիրն. յետ ատար-
„ տելոյ զամենայն գործն և այլն, որպէս ի վեր ասացաք,
„ Պարոնայք Եդուարդ և Յովհաննէս Մուբատեան առան-
„ ձին յայլ իմն մուերմական դաշն մտին ընդ Վերապատու-
„ ելի Հ. Սարգիս Թէոդորեան վարդապետին ասկս մի տարի
„ անվաճառ պահելոյ ատացեալ մուրհակն, զի ինքեանք
„ մանն առ մանն դրամն տալով նմա՝ վերատին ատացին
„ զնոյն մուրհակն ի նմանէ. զի ըստ ասից իւրեանց՝ վաճա-
„ ռումն մուրհակաց խախտելոց էր զմեծահամբաւութիւն
„ տանն Մուբատեանց. որոյ վասն մարդասիրեալ Վերա-
„ պատուելի Հ. Սարգիս վարդապետն, զինչաւ թէ կրկնակի
„ և թէ մանաւոր թախանձանաց նոցա :

„ Սոքա յընթացս այս բոլոր տարւոյ 200,000 ռուբիք միայն
„ կարացին տալ և ստանալ նոյն քանակութեամբ մուր-
„ հակս. ի լրանալ պայմանեալ ժամանակին կրկին զլմեցին
„ գրով խնդրել ժամանակ ի Հ. Սարգիս վարդապետէն երկ-
„ ամիս եւս : Բայց Վերապատուելի Հ. Սարգիսն որոմհետեւ

„ յանցելոյն զփորձն առեալ էր՝ թէ ո՛րքան անպատշաճու-
„ թեամբ վարեալ էին ընդ նմա, բարեգոյն վարկաւ դրով
„ մերժել զհնարիւք կարծեցեալ խնդիրն իւրեանց և հաւա-
„ նել տալ նոցա երեք ամիս ժամանակ միջնորդութեամբ տի-
„ կին մօր իւրեանց։ Այլ նոքա տհաճեալ ընդ այսպիսի պա-
„ տասխանին և անբաւական համարեալ զմիջնորդութիւն
„ տիկին մօր իւրեանց, զայրացեալք եռուն յանկարծակի
„ հրամարակել յԱզգարարն զթուահամար մուրհակացն, զի
„ մի՛ ոք գնեցէ զայնս ի Վ. Երապատուելի Հայր Սարգիս
„ վարդապետէն. և ապա վկայագիր մի յօրինեցին (զոր Լիֆի-
„ տուվիդ ասեն) անմիտ բանիւք լցեալ, ուր և հաստատէին
„ թէ Վ. Երապատուելի Հայր Սարգիս վարդապետն և տիկին
„ Աննա Սամուէլ Մուրատեանն հանդերձեալ են ի միասին
„ զկնի ինչ աւուրց փախչիլ ասեն ի Փունթիշէրի։ Եւ երդ-
„ ուեալ նոցա այսպիսի անհիմն և ծաղրալի թղթոյ՝ մատուցին
դատաւորաց։

„ Իսկ դատաւորքն նկատեալք այսր հանդիսաւոր երդման և
„ մեծապուռնար դրամոցն որոյ վասն վիճէին, պարտաւորեցան
„ տալ դհրաման երաշխաւորութեան առնլոյ ի Վ. Երապատուե-
„ լի Հ. Սարգիս վարդապետէն սակս մնացեալ 407,000 գրոյ
„ ռուփու, կամ ապահով կացուցանել զանձն նորա մին-
„ չեւ ի գնել զվիճն։ Հրամանս այս եկն առ Վ. Հ. Սարգիս
„ վարդապետն ի 15 ապրիլի 1828, և նա բարեգոյն համարե-
„ ցաւ մնանել ի բանտ քան թէ յանձնել զմուրհակսն դրա-
„ մոց, և բարձի թոզի առնել զկրաւունս որոց և աղքատաց
„ ազգիս։ Այժմ զայն ինչ որ հարկ է առնել ի պատիւ և
„ յապահովութիւն միաբանութեան իւրոյ, առնէ, պատաս-
„ խանելով զանդատայն նոցա։

„ Ո՛վ մեծապատիւ Հարք, թէ վասն էր այս ամենայն եղեւ,
„ թէպէտ և ինքեանք յայտնի ոչ ինչ ասեն, սակայն ի կոդ-
„ մանէ Վ. Երապատուելի Հ. Սարգիս վարդապետին ոչինչ
„ առիթ յանցաւորութեան կարեմք դատանել. անյարմար և
„ անհիմն պատճառք զոր Մուրատեանքն տան՝ ոչ սակաւ են
„ և միշտ փոփոխակեալք. ուստի հաւանական այս միայն

«Երեւի, փոշմանութիւն է՝ թէ ինքն էր զվճարումն հրամա-
«կին տարին, զոր գուցէ կարէին չառնել, և այլն։

«Արդ Վ. Երապատուելի Հ. Սարգիս վարդապետն թէ և
«ի բանտի է, այլ վիճակ իւրոյ որպիսութեան բարեգոյն հա-
«մարելի է քան զՄուրատեանցն. զի նա է տուցողն և նոքա
«հաստուցանողք. որ ըստ ամենայն օրինաց յաջողագոյն վի-
«ճակն է առաջինն. ունի բերել ընդ առաջ զամենայն իրա-
«ւունս իւր ընդ տիկնոջն Աննա Մուրատեան, որ տիկնիս
«այս զտարտուումն բանին և զհաստուցումն գրամացն ըստ
«ամենայնի կատարեալ համարելով, ոչ միարանեցաւ ընդ
«որդւոց իւրոց իբրեւ զմի ի կոտակատարացն։

«Զայս առ ժամս կարեւոր համարեցաք ծանուցանել մե-
«ծապատիւ միարանութեան ձերոյ, առ ի չլսել ո՛ և իցէ
«բարբանջանաց զոր մարթի է ումանց այլոց գրել, և մի՛ երկրն-
«չել երբէք. զմանն գրամացն զոր ունիք ի ձեռին պահելով՝
«մինչեւ զվճռահատութիւնն բանին տեսանել, թէ արդեօք
«Վ. Երապատուելի Հայր Սարգիս վարդապետի ասարտեալն
«ըստ օրինաց՝ էթէ ոչ. զոր թէ օրինաւոր դատիցին, որ-
«պէս օրինաւոր և ճշմարիտ գործառնութիւն բանին ակնե-
«բեւ ցուցանի, մեծ ջնաս և տուգանք պատճառելոց է
«Մուրատեանց այս իւրեանց անխորհուրդ և մանկական
«արարողութիւնն։

«Իսկ զանն Վ. Հ. Սարգիս վարդապետին մի՛ հոգասջիք,
«զի ոչ ինչ համարի զնեղութիւնն, այլ պատիւ մեծ և փառք
«է համարելի նմա և միարանութեան իւրոյ. զորմէ վկայեն
«առ հասարակ Ազգայինքս և օտարազգիք՝ որոց անծանօթ
«էր մինչեւ ցայժմ. պատճառաւ դիպուածոյս եկն ի ծանո-
«թութիւն բազմաց, յայտ առնելով ամենեցուն զպատուա-
«ւոր աւարտումն գործառնութեան դպրոցին և իրաւախո-
«հութեանն իւրոյ։

«Ազաչեմք զԱստուած, մինչդեռ ունին զժամանակն ի ձե-
«ռին՝ զղջումն տալ նոցա, առ ի յետս կոչել զանխոր
«հուրդ արարս իւրեանց և զերծանիլ յաւերմանէն, թէպէտ
«արդէն գանդատն և պատասխանն գրեթէ պատրաստ

„ են, այլ ոչ կարեն մնանել ի դասատուն մինչև յառաջի-
„ կայ յուլիսի ամիսն։
„ Մաղթելով ի ձէնջ աղօթս, մնամք Ձերումդ Սրբութեան
„ և Մեծապատիւ Հասարակութեանդ

„ Ի Մատրաս. 13 մայիս 1828.

„ Ամենախոնարհ ծառայք

„ ԱՆՆԱՑ Ս. ՄՈՒՐԱՏԵԱՆ.
„ Ա. Յ. ԱՂԱՆՈՒՐԵԱՆ.
„ ԿՈՄՍ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՇԷՐԻՄԱՆ.
„ Պ. Պ. ԼԱԶԱՐՈՎԻՉ.
„ ԱՆՏՈՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՈՒՋՈՒՆԵԱՆ.
„ ԳԷՈՐԳ ՅՈՎՍԷՓ ՈՒՋՈՒՆԵԱՆ.
„ ՅՈՎՍԷՓ ՆԱՋՈՐ ՇԱՄԻՐԵԱՆ. „

ԳԼՈՒԽ ԺԷ.

Թողոր յանդիմանական Մոռրատեան եղբարց առ մայրն իւրեանց Անանա ոխիկին. — Պատասխանի նորա առ որդիսն. — Թէ ո՛րպէս յանձնեաց Մոռրատեանք սի արկանել Հ. Սարգսի՝ վիճ. նա դեռ ի բանտին էր. — Հնգեքին զլոռխք ազբատասանս. նոռքեան Մոռրատեանց զՀ. Սարգսէ, և հեռքոռնի նոցին.

Տեսեալ Մոռրատեանց զի մայր իւրեանց Անանա խաթունն ասէպ այց առնէ Հ. Սարգսի ի բանտի և քաջալերէ զնա, զրեն առ նա թուղթ մի ձիգ՝ և լի սոգտանեաք, թէ քաջալերէ նա զՀ. Սարգիսն բանիւք և արդեամբք՝ որպէս զի ընդդիմացի նա նոցա և դատ վարեսցէ առ ի զրկել զժառանգս յիրաւանց իւրեանց, և այլ այսպիսի անմիտ բանք, օրինակ զայս.

« Յարգելի Մայր.

« Յետ ամենայն միջոցք ի գործ ածելոյ՝ առ ի ցուցանել
« քեզ զարդարութիւն վիճի մերոյ ընդ Պ. Սարգիս Թէոդո-
« րոսին՝ յետ յաջորդաբար խօսելոյ ընդ քեզ, գրելոյ և
« առաքելոյ առ քեզ պատգամք միջնորդութեամբն բարեկա-
« մաց մերոց, որոց և ոչ կամեցար ունկն դնել, այժմ ահա
« կրկին գրեմք քեզ, բայց վասն վերջին անգամի. և որդ
« իակ՝ ոչ թէ ակնկալութեամբ զի ցուցցուք զեզ փաստիւք
« զիրաւունս մեր. — այս անկարելի է՝ որքան շրջապա-
« տեալ լիցիս այնոքիւք որք տեսանելով ջանք նոցա անպի-
« տան՝ առ. ի բաժանել զերկուս եղբարս յաղագս ընդդէմ
« նախնդիր զդացողութիւնս իւրեանց, յաջողեցան հուակ

“ ամենայնի՝ մերթեցուցանելով զքեզ՝ բաժանել զմայրն
“ յորդւոց ի պէտս իւրեանց դիւահարն հնարից։ — Այսու
“ գրութեամբ՝ որ ճեռացէ իրրեւ շիրիմ որդիական փութոյ և
“ անձկութեան մերոյ, հոգամք միայն ընուլ զարբաղան
“ պարտս մեր առ յիշատակն հօր մերոյ և առ ամուսին իւր։

“ Մատդրութիւն քո յորդորել խնդրեմք ի վերայ երկուց
“ միայնակ նիւթոց, որք պարունակին բոլոր արդիւնք զանա-
“ զանութեան քոյ ընդ մեզ. նոյնպէս և անհերքելի պատա-
“ խանին առ իւրաքանչիւր առարկութիւնն զոր հարկիցիս
“ յառաջ բերել։

“ Հայրն մեր ոչ առէ ի կտակի իւրում՝ զի հատուցի զը-
“ բաճն ողորմութեան իւրոյ ի ձեռս ուրուք անձին. կամի
“ միայն՝ զի դպրատունն կառուցի միջնորդութեամբ միա-
“ բանութեան Վենետկոյ։ Սակայն և այսպէս ստիպեցեր
“ զմեզ՝ ընդդէմ կամաց մերոց՝ յանձնել զդրամն անդամին
“ միոյ այդր միաբանութեան։ Արդ թէպէտ և դու կտակա-
“ կատար ես ընդ մեզ, բայց մեք միայն՝ իրրեւ ժառանգք յա-
“ ւելուածոյ՝ պատասխանատու եմք, ներգործութեամբ վասն
“ իրիք սիրելանաց ի մատակարարութեան ստացուածոց հօր
“ մերոյ։ Այլ ազգ առել, զմեզ պարտաւորեցին հատուցանել
“ կրկին անգամ զայն որ կորուցի՝ առաջ մերոյ վատահու-
“ թեան ի հաւատալ անձին ուրուք։

“ Ուրեմն, եթէ մեք ըստ բաւականին պատճառ տեսանեմք
“ առ ի յետս կոչել զվատահութիւն և զհաւատն մեր եղեալ
“ յայդ անձին որ ստացաւ ի մէնջ զդրամն, եթէ հաւատի
“ առնեն մեզ օրինագէտք մեր, բարեկամք մեր, նաեւ օտա-
“ բածինք, թէ տիրապէս ապագայ վիճակն որդւոց մերոց
“ է ի ներքոյ վտանգի, պարտիմք արդեօք պաշտպանել զոր-
“ դիս մեր՝ թէ ոչ։ . . . Եթէ պարտիմք, զիարդ կարես
“ դու, առանց հակառակողոյ նրբութիւնք և խնդիրք օրինաց՝
“ թէ ի հանգամանս և ի բնութիւն ծնողի, կամ միայն
“ ի խիստ արդարութիւն, մեղադրել մեզ, անիծել զմեզ, և
“ յանդիմանել զմեզ, զի կատարեմք զպարտականութիւն մ
“ տուրբ և անհրաժեշտ։

«Յայսմ բոպէի՝ ի սատարիկ վարագի անկեալ ունիմք 21 լաք
«ռուբի։ . . . Կամեցան արդեօք Աղայ Սամուէլն զի իւր
«իսկ յաջորդք նուաճեցին ի չքաւորութիւն՝ վասն զի խոս-
«հեցաւ նա խնամ տանել այլոց մանկանց։ Եթէ իրրեւ մայր՝
«անարդար լիցիս առ մեզ, անշուշտ ոչ կարես իւիք օրինաք՝
«եթէ աստուածային և եթէ մարդկային, պարտաւորել զի և
«մեք անիրաւեցուք առ որդիս մեր։ Վասն պայմանք զորս չէ
«կարելի անցանել։ . . . Աստուած ինքն ունի օրէնս, և այ-
«նու օրինաք միայն հաղորդակցութիւնն ի մէջ իւր և ստեղ-
«ծուածոց իւրոց հիմնեալ է և հաստատեալ։

«Յետ ցուցանելոյ քեզ թէ յայս խնդիր անիրաւիս առ որ-
«դիս քո, ցուցցուք այժմ՝ զի ցորչափ Պարոն Սարգիս
«Թէոդորոսն լսոտ ինքեանն յարաբերութիւն ունի ընդ այս
«իրի, գնացքն քո առ մեզ նոյնպէս անիրաւ է։ Պ. Սարգիս
«Թէոդորոսն և կամ միաբանութիւնն իւր չունին ապաքէն
«պահանջողութիւն ինչ ի ստացուածոց հօր մերոյ։ Հրի-
«տակն զոր եթող հայրն մեր՝ է լոկ ողորմութիւն, և վասն
«այս ողորմութեանն՝ մեք պատասխանատու եմք։ Ուստի
«ի պատճառս միայն հաւատոյ մեր զդրամս ի ձեռս Պարոն
«Սարգիս Թէոդորոսին, բնութիւն բանին ոչ զանազանի։
«Ողորմութիւնն ոչ այլափոխի ի խնդիր իշխանական։

«Ուրեմն՝ եթէ յետ հաւատոյն մերոյ զդրամս ի ձեռս
«Պ. Սարգսի Թէոդորոսի, պատշաճ համարիմք ի խղճէ մերոց
«մերոց իրաց հանել կրկին ի նմանէ զհատուն մեր, և ընդ
«նմին զդրամս, զինչ հաւանական պատճառ ունի նա յան-
«գիմանել մեզ այնքան կամակորութեամբ, և այնքան ժան-
«տութ, մինչեւ արհամարհելով զյիշատակն շնորհատուին՝
«ճիգն առնել (թէպէտ և ճիգն անօգուտ) հրապարակական
«տպագրութեամբ առ ան կոխել զանուն, զպատիւն և
«զհամբաւնորդուց, զի այնու միջոցաւ՝ մնացէ ողորմութիւն
«հօրն ի ձեռս իւր։ Ի՞նչ այս երրէք գործ քահանայի, կամ միայն
«առն բարոյականի, և պատշաճ է արդեօք Այրոյն քրիստո-
«նէի։ . . . Պատշաճ է քեզ՝ յետ յամենայնեսեան առաջ անի-
«ծելոյ զորդիս քո՝ ի տուէ և ի դիշերի, յետ լցուցանելոյ

„ զամենայն հարկաւոր դրամս՝ զի զօրացին թշնամիք ընդ-
„ դէմ նոցա, նաեւ միաբան երեւիլ ի հրապարակս ընդ վա-
„ տահամբաւչին որդւոցդ։ . . . Եւ այն՝ աւա՛ղ, այս ամե-
„ նայն՝ վասն զի կամիմք պաշտպանել զապագայ ազատու-
„ թիւնն և զդարմանն կենաց մանկանց մերոց։

„ Մայր որ խափանէ զձայնն ընութեան ի տիրտ իւր, ապա-
„ քէն համարելով ի նա ամենայն պնդակուռ խառնութիւնն
„ Սպարտացւոյ մօրն. հոգին քրիստոնէականութեան մա-
„ տուցանէ զոհ մի՝ զոր միայն մատուցանել կարէ Արդարու-
„ թեան։ Ոչ գոյ յայսմ միջավայր։ Վասն արդարութեան միայն
„ պարտ է լինել, և վասն այլ ոչնչի։ Որ այլ մատածութիւն
„ յաշխարհի կարէ այնպիսի զոհ մի արդարացուցանել։

„ Զինչ կարէ անբասիր տանել զարհամարհութիւնն այնր
„ արքազան կապոյ, որոյ ահագին անքակութիւնն վճարեցաւ
„ ի հեղինակէն ընութեան, ի խառատումն իւր՝ զի պատժեցէ
„ վասն մեզաց ծնողին զյաջորդս իւր մինչեւ ցչորրորդ սե-
„ րունդ։ Յոյց մեզ ուրեմն, ո՞ւր է արդարութիւնն՝ ի յանդի-
„ մանել քո զմեզ, յորժամ հոգամք հովանի առնել զապա-
„ գայ վիճակն որդւոց մերոց՝ և թոռանց քոց, զորոց վիճակն
„ քոյով բռնադատութեամբ իսկ ընկեցաք ի վտանգի։

„ Նաւապան ասացաք, մայր. ոչ ինչ այլ առիթ շարժեաց
„ զմեզ գրել քեզ զթուղթս զայս, եթէ ոչ առ ի կատարել
„ զվերջին սահման պարտուց մերոց՝ զորս պինդ ունիմք
„ առաջի Աստուծոյ։

„ Յայսմ իրի վէճն մեր չէ ընդ քեզ, այլ ընդ Գ. Սարգիս
„ Թէոդորոսին։ Ասասի եթէ յանդիմանել եւս կամիցիս զմեզ՝
„ իրրեւ մեն ի կատակատարուց հօր մերոյ, արա՛, բայց
„ վայելուչ միջոցաւ։

„ Ի յանդիմանութիւնն քո, նա և ի վինախնդրութիւնն
„ քո, եթէ տեղի ունիցիս, մի՛ մոռանար զի մայր ես . . . մի՛
„ գնել զքեզ ի ձեռս ամբարշտից, զի յապագայ առաջինն
„ լիցին նոքա մեզադրել քեզ, յորժամ վրիպակդ իրրեւ զա-
„ բեզակն փայլեսցի յաչս քոյ։

„ Փոքանութիւնն վկայէ յամենայն երկրի և յամենայն

„ ժամանակի, զի յորժամ միջամուխ լինին օտարք և բաժա-
„ նեն զընտանիս՝ վատթար անձինք են, և վասն իւրեանց
„ անձնաւոր պիտոյից վարին։ Արդ ճրքան առաւել դիւրի-
„ մաց պարտ է լինել քեզ այս և պարզ, մինչդեռ յայսմ
„ իրի այնոքիկ որք բաժանեն զմայրն յորդւոց՝ ի բաղ-
„ մաց հետէ թշնամիք են լեալ սոցա, ի գլուխթիւն ամե-
„ նեցուն։

„ Ի Մատրաս. 9 մայիսի. 1828.

„ ԵԳՈՒԱՐԴ Ս. ՄՈՒՐԱՏԵԱՆ.
„ ՅՈՎՀԱՆՆԷՍ Ս. ՄՈՒՐԱՏԵԱՆ.”

„ Առ Աղեքսանդրի տիկին Անանայ Սամուէլ Մուրատեանց.”

Առնէ տիկինն Աննա պատասխանի վերոյիշեալ թղթոյ որդ-
ւոց իւրոց, օրինակ զայս.

„ Առ Պարոնայս Եղուարդ և Յովհաննէս Սամուէլ Մու-
„ րատեան.

„ Յինն մայիսի գրեցելոյ ձերոյ (ի կողմանէ անուանողջու-
„ թեանս վաղարկեալ) այսպէս գրեմ պատասխանին վասն վեր-
„ ջին անգամ շնորհ արարեալ փոխոյն, որով զանիրա-
„ ւութիւն ձեր կամիք իրրեւ իրաւունս խնամուս առնել
„ մեր ձերոյ։

„ Մտադրութիւն յորդորելով խնդրէք յինէն ի վերոյ եր-
„ կուց նիւթոց. թէ հայրն ձեր ոչ ասէ ի կտակի իւրում զի
„ հատուցցի դրամն ողորմութեան ի ձեռս ուրուք անձին, ա-
„ կայն և այնպէս առիպեցեր զմեզ ընդդէմ կարգաց մերոց, և
„ այլն։ Առ այս պատասխանեմ, զի գուք զդիտաւորն կա-
„ կին և զկամն հօր ձերոյ դէպ զիտելով՝ ինքնայորդոր և յո-
„ ժար կամօք դիմեալ էք առ աւարտումն։ Եւ յայնժամ
„ ընակէի ի Մօնթն. զկնի առաջադրելոյ և որոշելոյ զկամս
„ ձեր՝ եկն անդր Եղուարդն և զիս փութացուցանէր գան-

„ Նաև ի Խայաբէթ, ասելով՝ թէ Հ. Սարգիս վարդապետն
„ հարկաւոր է ի այն միջոցի ամենայն վայրկեան մերձ մեզ
„ լինել, և զպատճառն թաքուցանէր յինէն. որով յայտ է
„ թէ չեմ ես ձեզ ասիպողն, այլ խաւութիւն օրինաց ասի-
„ պեալ է՝ յարդարութիւն իրաւանց որք մանկանց, որք հա-
„ մակամ ըղձիւ փափաքէիք անիրաւել նոցա։

„ Երկրորդ՝ թէ դոքք իբրեւ ժառանգք և կտակակատարք պա-
„ տասխանատու էք սխալանաց մատակարարութեան ատաց-
„ ուածոց հօր ձերոյ։ Ես այս պատասխանեմ. ի բաց թողեալ
„ զդործառնութիւնս զայս, մնացեալ ամենայն մատակարա-
„ րութիւնք ձեր՝ էր և է ի վերայ ատացուածոց հօր ձերոյ։

„ Եւ ապա յաւելուք թէ տիրապէս ապարդայ վիճակն որդ-
„ ոց ձերոց է ի վտանգի։ Արդարեւ զարմանալի էր եթէ վի-
„ ճակն որդւոց ձերոց վասն այսր պատճառի լինէր ի վտան-
„ գի. այլ յաւէտ զարմանալի, եթէ իցէ վտանգեալ այն
„ ի թիւր շաւղաց և վարուց ձերոց, որով զքրոնաչան վաս-
„ տակս հանդուցեալ հօր ձերոյ՝ մինդ յԵւրոպա ի զեղխու-
„ թեան, և միւսդ ասա ի Մատրաս ի խաղս և ի շռայլութիւնս
„ վատնեալ, զապագայ վիճակն որդւոց ձերոց բնաւ ոչ մտա-
„ ծեցիք, և այժմ զիրաւունս որբոց և աղքատաց իւրացու-
„ ցանել ըղձալով՝ զդուշանալ կամիք որդւոց ձերոց։

„ Իսկ ի յանդիմանիլն իմ՝ իբրեւ մինն ի կտակակատարաց
„ հօր ձերոյ, թէ որով եղանակաւ վարիլ արարս է ինձ,
„ զայն ես քաջ գիտեմ, և չէ հարկ ի ձէնջ խորհրդարարիլ
„ թէ մայր եմ, որովհետեւ սուտ երդմամբ հաստատեալ էիք
„ տեղիդով ձերով՝ ուրացայք դուք զպատուէրն ատուածա-
„ յին և զպատիւն որդիական յարգանաց Մօր ձերոյ. և իմ
„ մուտանալն մայր լինելս՝ մի ծանր թուեցի ուսեալ վարուց
„ ձերոց, և այլն։

„ Մնամ

„ Ի Խայաբէթ Ամյգին. 28 մայիս 1828.

„ ԱՆՆԱՑ Ս. ՄՈՒՐԱՏԵԱՆՑ.“

Զայս պատասխանի տիկնոջ Անանայի որ առ որդիս իւր՝ յեւ-տոյ ի ձեռս բերէ Պ. Աբրահամ Աղանուրեան, և յանձնէ Հ. Սարգսի Թէոդորեան։

Զանան երկոքին եղբարք Մուրատեանք ի ձեռն սրբանե-լաց իւրեանց ահ արկանել Հայր Սարգսի և լէուցանել զնա ի հաստատութենէ մտացն, մերթ լուր տարածելով՝ թէ փոխանակ մուրհակացն որք ի ձեռս նորա՝ տացի յԱռենէն հրաման առնլոյ նոցա ի վաճառական ընկերութե-նէն այլ նորոգ մուրհակս, որովք և ոչնչացին արժէք եղե-լոցն ի ձեռս նորա, և մերթ՝ թէ Առեանն առաքեսցէ զՇէ-րիֆն ի բանտ՝ հանել բռնութեամբ զմուրհակսն ի ձեռաց նորա, և թէ երդմնեցուսցէ Շէրիֆն զամենայն բարեկամս և զծանօթս Հայր Սարգսի յայտնել և ի դուրս տալ զմուր-հակսն, եթէ զիարիցեն նոքա զտեղին և կամ առ որս ի պա-հեստի եղեալ իցեն։ Եւ այս կարծիք և կասկած այնչափ ին ի հաւատական թուի Պարոն Պօղոս Լազարովիչի, մինչև առաջարկել Հայր Սարգսի յանձնել ինքեան զմուրհակսն, զի թաքուցէ ի զանխուլ տեղւոջ ուրեք, «Եւ եթէ երդմնե-«ցուցեն զիս, ասէ, երդուայց թէ չգիտեմ ինչ զայնմանէ, «և ապա խոստովանեցայց զայն մեզս իմ ի Վենետիկ և «առից զներումն։»

Լուեալ Հ. Սարգսի զայն ամենայն, ծիծաղի նախ ընդ ան-միտ հնարս Մուրատեան եղբարց, զիտելով քաջ զանհնարու-թիւն այնպիսի իրաց. որովհետեւ արդէն տուեալ էր զանձն իւր երաշխաւոր մուրհակաց ընկերութեանն, և Առեանն բաւականացեալ էր այնու, և մնայր լսել նախ զպատասխա-նին նորա, և ապա տալ զվիճռ իւր ըստ օրինաց և արդարու-թեան։ Վասն որոյ անտի համարի զկարծիսն և զկասկած որ վասն մուրհակացն ընկերութեան. և թէպէտ զոմէ զնախանձն Պ. Լազարովչի ընդ պաշտպանութիւն իրաւանց ազգաց ազգիս, այլ չկամի արկանել զանձն նորա ի ներքոյ այնպիսի յանցանաց։

Ընթեռնու Հ. Սարգիս զգանգատագիրն Մուրատեանց, և տեսանէ անդ յամենայնի հակառակութիւն բանից, առա-

թիւն, և անմիտ գրպարտութիւն, որք և ի հինգ գլուխս բովանդակէին. և էին այսոքիկ.

Առաջին՝ թէ չունի Մխիթարեան միաբանութիւնն Վենետկոյ իշխանութիւն խառնիլ ի գործս հրիտակին ողորմութեան որ վասն գպրատանն։

Երկրորդ՝ եթէ ունիցի նա զայն իշխանութիւն, ոչ է տուեալ նորա բաւական զիր գործակալութեան Հ. Սարգսի Թէոդորեան՝ ընդունել զարծաթն զայն հրիտակի ողորմութեան։

Երրորդ՝ զանազ Հ. Սարգիս յետս դարձուցանել նոցա զ 11,000 լիրայ ասէրլինայ մուրհակն, զորոյ փոխարէնն ընկալեալ է Միաբանութիւն իւր ի Ռաֆայելեանց որ ի Լոնդոն։

Չորրորդ՝ թէ վասնեալ իցէ Հ. Սարգսի զկէս մասն արծաթոյ հրիտակին ողորմութեան, ասելով թէ անցուցեալ է զայն ի Վենետիկ. զոր անդիտանան ինքեանք և չկարեն հաւատալ բանից նորա։

Հինգերորդ՝ թէ նախատեալ և ազատնացեալ իցէ Մուրատեանց Հ. Սարգիս, և զայն հրապարակաւ, ի գայթագղութիւն բազմաց։

Ի վախճանի կնքէին նոքա զգանգատագիր իւրեանց ընդդեմանօք առ բարձրագոյն Աստուծոյ ի Մատրաս՝ զի յապահովիցէ զարծաթն հրիտակին ողորմութեան, և ի գործ դիցէ զայն ըստ զիտաւորութեան հանգուցեալ կտակագրին՝ հօր իւրեանց Աղա Սամուէլ Մկրտիչ Մուրատի։

Ասեն պատասխանի Հ. Սարգիս գանգատագրոյն Մուրատեանց գլուխ առ գլուխ և բան առ բան, հանդերձ հզօր փաստիւք և վաւերական հաւաստեօք, և բազում վկայիւք, դարձուցանելով ի գլուխս նոցա զփուրշիշ ամբաստանութեան իւրեանց։ Քանզի ցուցանէ զիրաւունս իշխանութեան Միաբանութեան իւրոյ՝ խառնելոյ ի գործն յայն հրիտակին ողորմութեան, նախ ի յայտնի և ի կրկին կրկին երկրորդեալ բանից հանդուցեալ կտակագրին, յորում գրեթէ հա-

սաստ իշխանութիւն տայ Մխիթարեան միաբանութեան վենետկոյ խառնիլ ի գործ հրիտակին ողորմութեան, գնել զեռին յԵրոպ և կառուցանել զդպրոցն, ուղղել զենթադրեալ կարծիս և զկարգաւորութիւն իւր անդ ընդ կտակակատարաց իւրոց, և ի ձեռս և ի խնամս Մխիթարեան միաբանութեան հաւատայ և յանձնէ զմշանջենաւոր խնամակալութիւնն դպրոցին իւրոյ, և ոչ այլ ումեք։

Իբր զի պարտք արքազան պաշտաման և գործառնութիւն կտակակատարաց ահմանաւոր են. այսինքն կատարումն տալ վերջին կամաց և պատուիրանաց հանգուցեալ կտակարարին, հաստատեալ զարծաթ հրիտակին ողորմութեան, և ի գործ դնել տալ զայն ըստ դիտաւորութեան բարերարին, որպէս հաստատեսցեն նոքա զհրիտակն և այլոց ոմանց յիշատակելոց ի կտակի անդ նորին։ Եւ զայն պարտին նոքա կատարել ըստ պարտուց խղճի մտաց և ըստ պատուոյ կտակակատարութեան իւրեանց, այլոքն հանդերձ։ Եւ զի իշխանութիւն նոցա յայն գործ յետ մահուան իւրեանց դադարի, և ոչ է իրրեւ ժառանգութիւն որ ի յաջորդս՝ յորդիս և ի թոռունս իւրեանց անցանէ. որպէս և տեսանի ի պաշտաման ամենայն կտակակատարաց որ ի քաղաքականացեալ ազգին Եւրոպայ։

Եւ երկրորդ՝ ի խոստովանութենէ անտի կտակակատարացն, ի հաստատութենէ զանազան գրութեանց և ի գործոց իսկ նոցա, այսինքն նամականուէր իւրեանց որ ի 25 սեպտեմբերի 1816, և ի դեկտեմբերի 1823, և գաշնագրութիւն որ ի 26 մարտի 1827. որով հրաւիրեն նոքա ինքնին զմի ոք ի Մխիթարեան միաբանութենէն գնալ առ նոսա ի Մատրաս, և յանձնեն ապա բացարձակ ի ձեռս նորին գործակալի Միաբանութեան զդրամագլուխ հրիտակին ողորմութեան, թողով զինամակալութիւն և զմատակարարութիւն դպրոցին ի ձեռս նորին Միաբանութեան, և խոստովանելով գրով յատուկ ձեռաց իւրեանց ի վախճանի՝ թէ կտակակատարքն զպարտս իւրեանց կատարեցին՝ հաստատելով զարծաթի հրիտակի դպրատանն ի ձեռս գործակալի նորին Հ. Սարգսի, և թէ մեայ այսուհետ-

ուեւ Միսրանութեանն առնել զպարտս իւր կատարումն տա-
լով բարեպաշտ կամաց հանդուցեալ կտակարարին։ . . . Այլ
թէ կատարեցին նոքա զայն ըստ պարտուց խղճի մտաց և ըստ
պատուոյ կտակակատարութեան իւրեանց, յայտնի է ի դոր-
ծոց նոցա, որով սեպհականել կամեցան ընդդէմ պատուիրա-
նաց հանդուցելոյ կտակարարին զտամանեայ օրինաւոր և
զընկալեալ շահ դրամագլխոյ հրիտակին ողորմութեան, իբրեւ
600,000 ռուբլի, և վարեցան ցոյն վայր այնպիսի գնացիւք
ի պաշտօնն յայն կտակակատարութեան իւրեանց։

Յուցանէ Հ. Սարգիս և դրաւականութիւն գրոյ գործակա-
լութեան իւրոյ ի բաւականութենէ կամաց նոցին իսկ կտակա-
կատարացն, որք այնու աւարտեցին ընդ նմա դրան հրիտա-
կին՝ հատուցանելով նմա զարծաթն առանց ինչ երկմտու-
թեան, և նոքա ընդ այն շատացեալ՝ աւելորդ համարեալ էին
ապա զերկրորդ վիր գործակալութեան նորա, որ կիւց ընդ
Պ. Փոլոսի Լազարովչի, և զոր ծանուցանէր նա նոցա մինչ-
նորդութեամբ մօր նոցա Աննա խաթունի. և զի բաւական և
օրինաւոր համարեալ էին նոքա զայն առաջին գիր գործակա-
լութեան նորա մինչեւ ցեօթնեակ մի յառաջ քան զլրումն
ժամանակի մուրհակաւն գաշինն վաճառելոյ նորա այնուհե-
տեւ զմնացեալ մուրհակաւն վաճառական ընկերութեան։
Վասն որոյ և զրով խնդրեալ էին ի նմանէ այլ եւս երից ամ-
սոց ժամանակ, ճանաչելով և կոչելով զնա յանուանէ գործա-
կալ Միսիթարեան միաբանութեան.

Յուցանէ և զյայտնի սուութիւն Մուրատեան եղբարց հան-
դերձ հաւատեաք, թէ հատուցումն 11,000 լիրայ ստէրլինի
լեալ լցէ միաբանութեան նորա ի Ռափայէլեանց ի Լոնտոն,
և նա զանայցէ նոցա դարձուցանել յետս զվոխարէնն՝ մուր-
հակս ինչ. քանզի ի նմին ժամանակի մինչդեռ առնէր նա
պատասխանի գանգատոյ նոցա, ըստ բախտի նորա, մանա-
ւանդ թէ ողորմութեամբն Աստուծոյ, ժամանէ ի ձեռս նորա
գիր ի Վենետկոյ, որով ծանուցանի նմա թէ Ռափայէլեանք
զլացան հատուցանել զ 11,000 լիրայ ստէրլինան ասելով թէ
չունին առ իւրեանս արծաթ ի կողմանէ Մուրատեան եղբարց։

Ինքին թղթի գրանէ նա և զպատճէն թղթոյ Պ. Յովհաննու Ռաֆայէլի և գյայտարարութիւն անգղիացի փաստաբանին որ ի Լոնդոն՝ ընդ մերժումն պատուիրանագրի Մխիթարեանց միաբանութեան. այսու հաւատեաք յանդիմանէ նա և զայն առութիւն նոցա։

Ի դիրեւ հանէ և զդրպարութիւն նոցա՝ թէ վասնեալ իցէ զկէս մասն արծաթոյ հրամակին ողորմութեան, յանդիմանելով զնոսա վկայութեամբ միաբանութեան իւրոյ՝ թէ այնչափ գումար արծաթոյ՝ որչափ ինչ ընդ ժամանակս ժամանակս ընկալեալ է ի նոցանէ փոխանակագրով վաճառական ընկերութեան՝ ընկալեալ է միաբանութիւն իւր զայն ամենայն անխափան և անկորուստ ըստ իւրաքանչիւր ժամանակի։ Այսուամենայնիւ միանգամայն և զաւութիւնն թէ անդիտանայցեն նոքա զառաքումն արծաթոյն ի ձեռս միաբանութեանն, ակամաւս վկայ կոչելով զԱբրահամ Աղանուր և զՅովհաննէս Յարութիւն զընտանիս նոցին, որոց ձեռաքն ծրարեալ էին փոխանակագիրքն ի պահարանս, և յանդիմանն իւրեանց ի գործատան ընդ ի ձեռն ապատաւորաց իւրեանց տուեալ էր նոցա զայն ի նամակատունն, հանդերձ հաստատութեամբ կնքոց ի տեսրակի նամակատան, նշանակեալ ի նմա և զթիւ ամենայն։ . . .

Իսկ վասն բանից զրպարութեան նոցա զնամանէ՝ թէ նախատեալ իցէ զնոսա հրապարակաւ և գայթագղութիւն տուեալ բազմաց, վկայ զնոսին իսկ զլսողսն որ ի հրապարակի անդ կոչէր թէ առաւել քան զայս բանս խօսեցեալ իցէ նա անդ, այս ինքն, «Եթէ համարիք դուք թէ իրաւունս ունի Եդուարդ Մուրատ, ի գնացս իւր ընդ Պ. Լազարովչի, «ձաղկելով զնա այնպէս, իսկ զի՞նչ իրաւունս ունիցին նա «և եղբայր նորա Յովհաննէս Մուրատ այնչափ հանդգնութիւն խօսելոյ ընդդէմ ինձ, և ապառնալոյ խարազանաւ թափել զատամունս իմ. մինթէ հատուցումն իցէ այդ «շնորհացն զոր տարել ես նոցա, և մինթէ չհամարիցի՞ թէ «վրէժխնդրութիւն և հատուցումն ի Տեառնէ լինիցի։ . . .

«Բայց ասեմ ձեզ, թէ պարտ է ընտանեաց և ճշմարիտ բա-

«ռեկամաց նոցա՝ ջուր ի վերայ հրոյ ածկանել, և ոչ հուր «ի վերայ հրոյ յաւելուլ։» Եւ եթէ դայթապղծութեան լցեն այս բանք, դատեցին զայս դատաւորք յատենի և տացեն իրաւունս։ . . . Եւ կնքէր զպատասխանին աղերսանօք առ դատաւորսն՝ լսել զդատ իւր և առնել իրաւունս ըստ անաչառ և արդար օրինաց Անգղիացւոց Ատենին։

Պատրաստութիւն պատասխանւոյն Հայր Սարգսի տեւէ իբեւ ամիս երիս՝ տակաւ թարգմանութեան հաւատոնաց ի հայէ յանգղիացի լեզու. և տակաւ հեռաւորութեան տեղւոյն յօրէնագիտէն Կօրտոնէ, որ երկիցս միայն յեօթնեկի կարէր գնալ ի բանտն, հարցանել և գրել զպատասխանին նորա։

ԳԼԽԻ ԺԸ.

Անկնա տիկին Մորբատեան պատրաստի դատ վարել ընդդէմ որդւոց իւրոց. — Հիւանդանալ նորա առ ցաւոց սրտին. — Հաշտութիւն ընդ որդիսն. — Թողոք նորա առ Հ. Սարգիս, և ապա յետս կոչուցեալ այնր բողոց. — Կտակ տիկնոջն Անկնայի՝ յօրինեալ յորդւոցն՝ հանդերձ ամբաստանութեամբ զՀ. Սարգսի. — Զիղջ տիկնոջն ընդ բանս կտակին. — Մահ նորա։

Թէպէտ և տիկինն Անկնա ինքն ժամանակի և նմին օրէնքդիտին Կօրտոնի տայր գիշխանութիւն գործակալութեան, յանդիման լինել ատենին, առնուլ զօրինակ գանգատագրոյ որդւոց իւրոց որ ընդդէմ իւր, և առնել նմին պատասխանի՝ հանդերձ պահանջմամբ իրաւանց կտակակատարութեանն իւրոյ, այսինքն պահանջել յորդւոց իւրոց զհամար կտակակատարութեանն իւրեանց, և կամելով կապել զամենայն ստացուածս ամուսնոյ իւրոյ՝ զի մի՛ վաճառեսցին, և մի՛ գրաւ-

ցեն որդիք նորա շահ անտի, բայց որդիք նորա ՉԱՆԱՆ միջ-նորդութեամբ ընտանեաց ոմանց համոզել զնա յետս կոչել զիշխանութիւնն առեալ օրէնագիտին Կորոճնի, և ապատ կացուցանել զնա ի պատասխանատուութենէ դանգատագ-րոյն։

Այլ թշուառ տիկին ընկճեալ ի տխրութենէ անտի և յանհընարին ցաւոց որտին, և ապականեալ արեանն նորա՝ վարակեցաւ անբուժելի ախտիւ քաղցկեղի։ Վասն որոյ զնայ ի բանտ առ Հ. Սարգիս և ասէ ցնա. «Ահա ամենայն ինչ որ վասն «իմ է՝ վճարեալ է։» Եւ ապա քաջալերէ զնա ասելով; «Արդարանալով արդարացիս դու և յաղթեցեալ ի դատա-«տանի, հանդերձ փառաւք և շահիւք. այլ աւա՛ղ որդւոց «իմոց. զի զի՞նչ լինիցի վիճակ նոցա ի վախճանի։ . . .»

Զայսոսիկ խօսի ընդ նմա ցաւագնեալ որտիւ, և համբուրեալ զձեռս նորա կրկին և կրկին, և առեալ նմա զհրաժարական ողջոյն դառն արտասուաք՝ որպէս թէ ոչ եւս տեսանելոց էր զնա, մեկնի անտի և և զնայ ի տուն դատեր իւրոյ տիկնոջ Աղանուրի։

Անդ ի մահիճս մահահրաւէր հիւանդութեան անկանի. և իբրեւ սատականայ հիւանդութիւնն և չմնայ յոյս ապրանաց, յորդորէ զնա դուստր իւր հաշտել ընդ որդւոց իւրոց և ներել նոցա։ Նա թէպէտ և զառաջինն չկամի լսել նմա, և զանուն նոցա անդամ յիշել, բայց ի թախանձել զնա շատ դստերն՝ զիջանի ապա և հաշտի ընդ որդւոց իւրոց։

Բայց հաշտութիւնն այն փոխանակ մխիթարութեան ցաւալից տիկնոջն՝ ցաւս յաւելու խղճի մտացնորա և արտաս թոգու համբաւոյ իւրում. քանզի որդիք նորա, Եդուարդ և Յովհաննէս Մուրատեանք բռնադատեն զնա յետս կոչել զդրամ խոստումն իւր՝ զոր տուեալ էր Հ. Սարգսի յառաջնում նուագին, պայմանաւ՝ զի եթէ դարձցի նա վերատին ի Մատրաս, տացէ նմա 100,000 ռուբի վասն աշխատութեանն և դարձին անդր ի մխիթարութիւն իւր։ Հաստատեալ էր նա զխոստումն իւր կրկին և կրկին գրութեամբ, և հաստատեալ իսկ զմասն արծաթոյն, 16,000 ռուբի, և մինչեւ ց31,000 ռուբի.

և մատանի մի տուեալ յընծայ զորոց յիշատակեցուք ապա ըստ կարգի պատմութեանս ։

Արդ զայն խոստումն տիկնոջն զխոէին որդիք Նորա Եդուարդ և Յովհաննէս, և կամէին զի յետս կոչեսցէ զայն, ասելով թէ ակամայ և այլ դիտաւորութեամբ խոստացեալ էր զայն գումար արծաթոյ ։ Թէպէտ և ընդդիմանայ տիկինն և չկամի առնել զանիրաւութիւնն զայն ընդդէմ խղճի մտաց իւրոց, այլ ի տխրել որդւոցն շատ, և ի ցուցանել նմա զկարօտութիւն իւրեանց ի ժամանակին, և մանաւանդ զզօրանալ Հ. Սարգսի արծաթովն և վիճել ընդդէմ նոցա ի դատաստանի, պահանջելով ի նոցանէ զվաշխ հրիտակի դպրատանն ի սպառազինս քանդումն իւրեանց, — մանաւանդ զի հաստատացուցին նմա, թէ Հ. Սարգիս գրաւեալ էր առ վաճառականի ոմեմն զգիր խոստման նորա, և առեալ անտի արծաթ՝ զի դատ վարեսցէ ընդ նոսա, — զայս և առաւել ևս զոյն բանս խանդաղատանս և երկեցուցիչս խօսին նոքա յտկանջս կիսակենդան մօր իւրեանց, և հաւանեցուցանեն զնա զիջանել կամաց նոցա. ուստի և գրել տայ ձեռամբ այլոց և թելադրութեամբ որդւոցն առ Հ. Ս. և յետս կոչէ զգիր խոստման իւրոյ որ առ նմա, ասելով թէ զայն ոչ կամաւ՝ այլ ակամայ տուեալ էր, վասն որոյ խնդրէր զի յետս դարձուցէ զայն, հանդերձ զարդուք իւրովք որք առ նմա ի պահեստի կային ։

Զառնէ Հ. Սարգիս թղթոյ նորին պատասխանի, խմանալով յառաջագոյն այլուստ զկամս չարութեան որդւոց նորա, և չունելով առ իւր ի զարդուց տիկնոջն և ոչ ինչ ։ Ապա յետ երկուց աւուրց, մանաւանդ թէ ի նմին իսկ աւուր, զղջացեալ յոյժ տիկնոջն ընդ առաջին գրութիւն իւր առ Հայր Սարգիս, գրել տայ և երկրորդ գիր ի ձեռն Պ. Պօղոսի Լաղարովիչ, օրինակ զայս.

„ Վերապատուելի Հ. Սարգիս Թէոդորեան վարդապետի
„ որոյ աջոյն համբոյր խոնարհութեամբ ։

„ Վերապատուելի Հայր, ի որոմէ ց՝ սեցայ որ իմ ամուսնոյ

„ Ես էն գրած գրովս անխոհեմութար և առանց մտածողու-
„ թեան վիրաւորեցի զքեզ. և այն ոչ յօժարակամ, այլ
„ թերագրութեամբ որդւոց իմոց. բայց իմ խորհուրդն ի թիւր
„ առաջարկութենէ նոցա՝ չէ բաւական իրաւունս զիս ար-
„ դարացուցանելոյ. վասն որոյ խոնարհեալ դիմեմ մաղթե-
„ լով ներողամտութիւնդ. քանզի զգիրն պարտականու-
„ թեանս 30,000 հունի արժողութեան՝ Հայրութիւնդ բրա-
„ նադատութեամբ ոչ ստացար յինէնք, այլ ես յօժարութեամբ
„ իմով եռս քեզ ի տակս երկուց պատճառաց. առաջինն,
„ եթէ զիպեսցի ինձ ո՛և իցէ եղանակս տարտախտ վիճակ
„ չբաւարութեան, որպէս ոչ թէ նշմարէի, այլ ակնարեւ
„ տեսանէի զայն ի թիւր վարուց և շաւղաց երկուց որդւոց
„ իմոց, այդ դումար լիցի յայնժամ իրրեւ նպատս յետին
„ կարօտութեանս։

„ Երկրորդ, զկնիկ մահուան իմոյ ի ձեռն Հայրութեանդ
„ ի գործ դիցի վասն միոյ մշանջենաւոր յիշատակի ի պէտս
„ հոգւոյ իմոյ։ Բայց այժմ երեկոյացեալ առաւր մերժեմ
„ զամենայն մտոտի մտածութիւնս ըստ բանի Տեառն մերոյ,
„ թէ մի հոգայցէք վասն վաղուին, և այլն. իսկ մշանջենա-
„ ւոր յիշատակն, որպէս բաղձամ անդամ բացատրեալ եմ
„ Հայրութեանդ, մի և նոյն դիտմամբ ունիմ անյապաղ
„ առաջադրութիւն ի ձեռն վերջին կամաց և կտակիս ի գործ
„ դնելոյ առաւել իմն հաստատուն եղանակս. և այն ի տա-
„ կաւ առաւս, եթէ թոյլ տացէ ինձ Տէր։

„ Մնամ

„ Վերապատուելի Հայր,

„ Մաղթող օրհնութեանդ

„ Ի Ռայսրեթայ. 16 յունվար 1828.

„ Քոյդ խոնարհ Ազատին

„ ԱՆՆԱՑ Ս. ՄՈՒՐԱՏԵԱՆՑ. „

Տեսակ Պ Պ. Եղուարդայ և Յովհաննու թէ հիւանդութիւն մեր իւրեանց օր ըստ օրէ ծանրանայ, և ի վտանգի լինի կեանք նորա, և թէ զիր խոստման նորա մնայ ի ձեռս Հայր Սարգսի, որով սա պահանջեցէ ապա զիրաւունս իւր յետ մահուան մեր իւրեանց, փութան յօրինել զկտակն նորա ըստ կամաց իւրեանց. զի որոց չէր պարտ և ոչ իսկ արժան՝ հրիտակ թողուն, և որոց պէտք էին և արժան իսկ և իրաւունք թողուլ զայն՝ զրկեն զնոսա անտի, որպէս զի անվաւեր արասցեն զպահանջումն Հայր Սարգսի, զրելով ի կտակի նորա և վկայելով կողմնակցաց նոցա՝ թէ անպատեհ իմն եղանակաւ առեալ իցէ Հայր Սարգսի զայն զիր խոստման ի ձեռաց մեր իւրեանց, և թէ կոչեալ է զայն յետս Անտոնի խաթուն, և Հայր Սարգիս պահեալ է զայն ի ձեռին իւրում անիրաւութեամբ, և զի միանգամայն մի առցէ քոյր իւրեանց տիկին Աղանուր հաւասար բաժին ի ժառանգութենէ մեր իւրոյ։

Եւ ահա վասն այսր ամենայնի յօրինեն նոքա զկտակ մեր իւրեանց. բայց զի մի անիրաւութիւն իւրեանց որ առ Հ. Սարգիս՝ յայտնապէս երևեցցի, և գուցէ այնու և իրաւունք նորին տեղի գտանիցէ յԱտենի անդ, կամին և ինչ մի՝ այսինքն 8000 ռուբի, նմա թողուլ ի կտակին, և զայն պայմանաւ՝ իբրև պատարագիս վասն հոգւոյ մեր իւրեանց։

Թէպէտ և զայս խորամանկութեամբք առնեն, այլ ոչ ածեն զմտաւ՝ թէ այն՝ հակառակութիւն բանից և գործոց էր ըստ ինքեան, անիրաւութիւն ասեմ և բարեպաշտութիւն նոցա. զի եթէ անպատեհս գործող և անիրաւ ոք էր Հ. Սարգիս, ապա ազօթք նորա և պատարագիք վասն հոգւոյ մեր իւրեանց զինչ արժիցեն։ . . . Սակայն արդարութիւնն Աստուծոյ զճշմարտութիւնն յայտնէր նոցին իսկ բերանով հակառակորդաց նորա։ Քանզի թէպէտ յօրինեն նոքա զկտակն զայն ըստ կամաց և ըստ կրից իւրեանց, և հաստատել տան զայն մեր իւրեանց ընդդէմ կամաց նորա և բռնադատութեամբ, այլ խիղճ մտաց դժբախտ տիկնոջն տանջէ զնա յոյժ, և այնչափ՝ մինչև զգիշերն զայն ողջոյն չկարէ բնաւ ննջել. և ի վարձս

անդր, յորժամ գնայ առ նա որդին իւր Յովհաննէս, ասէ ցնա մայրն ; « Զայս գիշեր չէ իմ բնաւ ի քուն մտեալ և « հանգուցեալ ։ » Եւ ի հարցանել ցնա որդւոյն զպատճառն, ասէ ցնա մայրն ; « Վասն բանիցն յիշատակելոց ի կտակի « իմում Հ. Սարգսէն. քանզի ես կամաւ և յօժարութեամբ « իմով խոստացեալ և տուեալ եմ նմա զայն զիր խոստման « իմոյ, և զայնչափ գումար արծաթոյ. վասն այնորիկ ան- « հանգիստ է յոյժ խիղճ մտաց իմոց ։ »

Լուէ յայնժամ որդին և չգիտէ ո՛րպէս հանդարտեցուցանել զանհանգստութիւն մտաց թշուառ մօրն. զի հակառակ էր կամաց իւրոց և ցանկութեան խոստովանութիւնն ճշմարտութեան ի բերանոյ նորա՝ թէ ինքն կամաւ և յօժարութեամբ իւրով տուեալ է նմա զայն ։ . . . Պատմէ զայս ճշմարտութիւն նա ինքն Յովհաննէս Մուրատ բերանով իսկ իւրով Հ. Սարգսի՝ յետ չորից ամաց ի տան այպւոյ իւրոյ, յորժամ հաշտին նոքա ընդ միմեանս, և բանայ զոր ինչ իւր նմա իբր անկեղծարար, որպէս ի տեղւոջ իւրում պատմեցուք ։

Խմացեալ և զատեր նորա տիկնոջ Աղանուրի զանհանգըստութիւն մտաց մօր իւրոյ, ասէ ցնա ; « Մա՛յրիկ, եթէ այդ- « պէս անհանգիստ է խիղճ մտաց քոց ընդ այդ՝ ես հատուցից « Հ. Սարգսի գումար ինչ արծաթոյ, և բաւականացուցից զնա. « եթէ չնորհեսցէ քեզ Տէր առողջութիւն, հատուցես ինձ « յետոյ. իսկ եթէ ոչ՝ տաց ես զայն ի բաժնէ ժառանգու- « թեան իմոյ որ ի քէն. շա՛տ է զի խիղճ մտաց քոց յայսպի- « սում ժամանակի հանգիստ լիցի ։ » Լուեալ զայն մօրն ուրախանայ՝ և ածեալ զձեռս իւր խանդաղատի զդատերբ իւրով ։

Յայնժամ խօսի տիկինն Աղանուր ընդ Պ. Յովհաննու Յարութենի, և առաքէ զնա ի բանն առ Հ. Սարգիս՝ պատմել նմա զվիճակ Աննայի տիկնոջ և զանհանգստութիւն մտաց նորա, և աղաչել զնա՝ զի բաւականացեալ ընդ 40,000 ռուփին՝ հանգուցցէ զնա ի մտատանջութենէ անտի իւրոյ ։ Պատասխանի տայ Հ. Սարգիս Պ. Յովհաննու Յարութենի, թէ « Խնդիր իմ ոչ է ի վերայ այսչափ կամ այնչափ արծաթոյ.

“ եթէ չիցեն կամք տիկնոջն Աննայի տալ ինձ և ոչինչ, չէ
“ փոյթ, զի չցանկամ ես բնաւ արծաթոյ նորա. այլ խնդիր
“ իմ է ի վերայ բանից զրպարտութեանցն որ զինէն, որպէս
“ թէ անպատեհ ինձն եղանակաւ առեալ իցէ իմ ի նմանէ
“ զգիր խոստմանն։ ”

Յայնժամ ասէ ցնա Պ. Յովհաննէս Յարութիւն; “ Զկտակ
“ տիկնոջն ես ինքն գրեալ եմ ձեռամբ իմով, ըստ թելադրու-
“ թեան որդւոց նորա, և խոստանամ հաւանեցուցանել զնո-
“ սա հանել ի կտակէ անտի զբառն զայնոսիկ զրպարտու-
“ թեանց զքէն, և նորոգ օրինակել զայն, թէ և կրկին աշ-
“ խատութիւն իցէ ինձ։ ”

Բաւական համարի Հ. Սարգիս զայն խոստումն Պարոն Յովհաննու Յարութենի, և արձակէ զնա գոհ զիւրմէ։ Դառնայ Պ. Յովհաննէս Յարութիւն ի տուն Պ. Աղանուրի առ ի պատմել տիկնոջն ուրախութեամբ զյաջողութիւն միջնորդութեան իւրոյ. այլ ուրախութիւն նորա ի տրտմութիւն փոխի վաղվաղակի. զի գտանէ զտիկինն Աննա յանզգայութեան և ի հոգեվարս, վասն որոյ և ճնայ կտակնորա այնպէս որպէս և էրն։

Եւ վախճանի նա յերկրորդում աւուրն ընդ երեկս ի տօնի Այցելութեան սրբոյ Աստուածածնին, յ2 յուլիս ի 1828։

Ասացաք վերագոյն՝ թէ տիկինն Աննա հաստատեալ էր Հայր Սարգսի զմասն խոստացեալ պարտուց իւրոց, իբրեւ 16,000 ռուբի, և աւելի մինչեւ ց31,000 ռուբի, և մասնի մի տուեալ յընծայ՝ 3500 ռուբոյ արժէքեաք։ Քանզի աւուրքն ինչ յառաջ քան զմտանել նորա ի բանտն՝ տայ նմա տիկինն 15,000 ռուբոյ դրամաթուղթ մի (պանքնոթ,) որով կամի Հ. Սարգիս գնել մուրհակ ինչ վաճառականն ընկերութեան՝ առ ընդունելոյ անտի շահս ի տարւոջն. բայց նա չգտանէ ժամանակ հոգալոյ զայնմանէ, սակս խռովութեանն յարուցելոյ ի Մուրատեան եղբարց, և թողու զդրամաթուղթն զայն առ տիկնոջն Աղանուրի ընդ այլ կարեւոր գրուածս որ ի գզրոցի իւրում կային փակեալ. և զի մի՛ ճեռացէ դրամն այն անպտուղ՝ յանձնէ նա Պ. Աբրահամ

Աղանուրի հոգալ զայն, այս ինքն է գնել մուրհակ մի և անցուցանել յանուն իւր։

Խառնակ նմա Պարոն Աղանուր առնել այնպէս, բայց յապաղէ զկատարումն գործոյն։ . . . Գիտելով զայն տիկնոջն Աննայի, իբրեւ կամի աւարտել զվէճն պահանջման փեսային յորդւոց իւրոց, վասն 100,000 ռուբլոյ իրաւանցն, հատուցանելով յիւրմէ զմասն պահանջման նորա, տանի նա զ15,000 ռուբլին յայն հաշիւ, զոր Հայր Սարգիս յանձնեալ էր Պարոն Աղանուրի՝ գնել մուրհակ յանուն իւր։ . . .

Թէպէտ ըստ իրաւանց կարող էր Հ. Սարգիս պահանջել ի Պ. Աղանուրէ՝ զյանձնեալ դրամն իւր, բայց չկամեցաւ վասն արծաթոյ վիճել, և զբարեկամութիւնն կորուանել. միանգամայն և ակն ունէր՝ զի հատուցէ նա զայն այլ եղանակաւ. որպէս և հատոյցն. զի ընծայեաց նմա և միաբանութեան նորա մատանիս և ոսկի բուժակս, և արծաթ եւս ի կարեւոր պէտս։

Իսկ զմատանին զոր տիկին Աննա ընծայեալ էր Հ. Սարգսի ամուս յառաջ, իբրեւ ի յիշատակ աւարտման բանի հրիտակի գպրատանն, և կայր ընդ զարդս տիկնոջն ի գզրոցի նորա իբրեւ ի պահեստի, ըստ թելադրութեան և գրութեան որդւոց իւրոց ի կատակի անդ իւրում թողաւ զայն իբրեւ մատն ժառանգութեան տիկնոջ Աղանուրի. բայց արդարաբէր և առատամիտ տիկին Աղանուր ընծայէ զայն ապա վերստին Հայր Սարգսի իբրեւ զիրաւունս նորին. և նորա ածեալ զայն ի վանս՝ յանձնէ ընդ այլ մատանւոյ միւսմ և ընծայից ինչ գեր. Սուքիասայ Սոմխեան, զոր ապա վաճառել տալ նա ի Վենետիկ 9000 ասարիական լիրայից ի պէտս ծախուց որմոյ պարտիզի վանացն։

Եւ ահա այնու վերոյիշեալ 16,000 ռուբլով հոգայ Հայր Սարգիս զկարեւոր ծախս իւր, զառանին և զարտաքին և զդատաստանին, զամս հինգ, մինչեւ ի ձեռս բերէ զառանցեալ արծաթ հրիտակի գպրատանն ի գանձատունէ Տէրութեան, ըստ վճռոյ բարձրագոյն ատենին։

Գրէ թուղթ ի ժամանակին յայնմիկ Հայր Արգիս ա-
գեր. Սուքիաս Սամալ իվենեարիկ, օրինակ զայս.

«Առաւածապատիւ և Գերապայծառ Տեառն մերոյ Սու-
քիասի Արքեպիսկոպոսի և ընդհանրական Արբայի ծրն-
բաղրական աջահամբոյր։

«Որպիսական է թուղթս՝ միանգամայն և տրամական.
ուրախական ասեմ, քանզի ողորմութեամբն Աստուծոյ և
ազօթիւք հաստատակութեանս քաջապէս տուեալ իմ պատա-
խանի գանգատագրոյ Մուրատեանց, զիուրշին անիրաւու-
թեան նոցա ի գլուխս իւրեանց շրջեցի, և զանօրէն ատերգ-
մընութիւն նոցա խայտառակեալ նշաւակեցի յայտ յանդի-
ման. վասն այսորիկ հրաման ել յատենէն եղանել ինձ ի բան-
տէ յ12 ամսոյս յուլիսի։ Բայց քանզի վաւերական գործա-
կալութեան էր մի օրինակ, և այն ի ձեռս ամբաստանացն
Մուրատեանց, զոր խնդրեաց Ատեանն տեսանել, և զոր
անօրէն փաստաբան նոցա չկամեցաւ ի յայտ բերել, վասն
այնորիկ հրամայեաց Ատեանն, մինչեւանդ թէ խորհուրդ
կարեւոր եւս ինձ, զոր ի ներեալ մուրհակն զ407,000 դրամ
ռուբիա, իբր ուանդ ի գանձատուն տէրութեանս դնել,
մինչեւ ցուցից Ատենին զբուն բնագիրն վաւերականի գործա-
կալութեանս. յայնժամ դարձուցէ ինձ վերստին զուանդեալ
մուրհակն։

«Ահա վասն այսորիկ գրեալ խնդրէի ես ի Հատարակու-
թենէս տալ ինձ վաղվաղակի նորոգ գիր գործակալու-
թեան. զորմէ և Արհիպատուութիւնդ ի բազում թուղթս
իւր յիշատակեալ է՝ թէ յառաջագոյն յղեալ էր ձեր զայն.
բայց ի ձեռս իմ չէ հասեալ. և զի միշտ յուսով ընդունելոյ
զայն եռու կատակատարաց զբնագիր օրինակ վաւերական
գործակալութեանս. և թէպէտ յետոյ ուրեմն տալ
ինձ այսի գիր գործակալութեան, բայց անպիտան ի գործս.
քանզի պարտ էր կամ զառաջինն հատուցեալ տալ, և
կամ զերկրորդն զայն յառաջագոյն յղել բան խնդրանացս.

և այն երկրորդն չեղեալ պիտանի, երկուց անձանց առեալ գոլով անդ իշխանութիւնն, և գործառնութիւնն ի ձեռն միոյ էր առարտեալ։

«Սակայն տեսանեմ ես զի ամենայն ինչ որ միանգամ պատահեաց՝ ոչ առանց խորհրդոյ և կամաց վերին տեսչութեանն է. և յիրաւի. քանզի շար և անիրաւ շահասիրութիւն, և մանաւանդ ապերախտութիւն նոցա եռուն տեղի և իրաւունս Աստենին արդար վրէժխնդրութեան պահանջել ի նոցանէ զօրինաւոր վաշխ դրամագլխոյ հրիտակին ողորմութեան. որպէս և նախագահ դատաւորն ինքնին յատենի անդ իւրաբ ամենեցուն ասաց թէ «Անիրաւութիւն մեծ է եղեալ «որբոց և աղքատաց. ուստի պարտ է, ասաց, պահան- «ջել ի կոտակատարաց զվաշխ դրամագլխոյն.» և այլ բազում բանս ասդտանաց և ապատնելեաց խօսեցաւ դատաւորն ընդդէմ Մուրատեանց, և զի արդէն համբաւ նոցա կորուսեալ է յաղագս շար և անօրէն գնայից իւրեանց։ Սակայն ի վերայ այսր ամենայնի Աստեանն կամի ունել զոք ոսոխ և օրինաւոր պահանջող ընդդէմ նոցա. վասն այսորիկ յայտնի ինչ նշան եւ՝ նորոգ ինչ գանգատ տալ յԱստեանն, և պահանջել զվաշխն դրամագլխոյ հրիտակին ողորմութեան։

«Եւ վասն այսորիկ չկայ մեզ հոգ անուտի և ոչ երկիւղ ի ծախուց. քանզի Աստեանն ինքնին պահանջեսցէ ի նոցանէ՝ պարտաւորեալ յարգարութենէ. բան որում ասացեալ է նա ինքն նախագահ դատաւորն յատենի անդ զայս բան, թէ «Հ. Սարգիս Թէոդորեան չունի ինչ անձնական շահ «յայսմ գործառնութեան. քանզի այս բան կայր ի պատա- «խանին նորա. բայց շահ և փոյթ մեծ է Աստենին յաղագս «իրաւանց որբոց և աղքատաց՝ որ կոտակաւ թողեալ էին «յո՛ և իցէ ազգէ որ ընդ տէրութեամբ մերոյս է։»

«Եւ տրամական ասացի. քանզի խնդմ Անոս խաթուն Մուրատեան ի բազում տխրութենէ և ի նեխտատանց զոր ապիրատ որդիք իւր եռուն նմա՝ չկարացեալ տանել հիւանդացաւ վաղվաղակի և անկաւ ի մահճա անուանելի ցաւոց.

քանզի յանկարծակի խոյլ ինչ երևեցաւ ի թիկնամէջ նորա, ըստ կարծեաց բժշկին ի տիրութենէ և յապականութենէ արեան պատճառեալ. զամիսս երկուս անհնարին ցաւոքն չարչարեալ՝ ապա յշ յուլիսի վճարեաց զթշուառ կեանս իւր, բայց բարի մահուամբ, քանզի ըստ կարգի քրիստոնէական բարեպաշտութեան աւանդեաց զհոգի իւր։

«Այլ թէ յայսմ միջոցի վերջին հիւանդութեան նորա, որդիք իւր քանի՛ հնարս խորամանկութեան գործէին՝ առ ի ծածկել զեղեռնագործութիւն իւրեանց՝ անպատմելի է. և զի չներէ ինձ ժամանակս նկարագրել ձեզ զայն, այլչափ ինչ միայն համառօտիւ ծանուցանեմ ի սմին, զի հանգուցեալ Անանա խաթուն ի կենդանութեանն իւրում խոստացեալ էր ինձ գրով 30,000 հուն, կամ 100,000 ռուբի, զորոյ զմնան արդէն հատուցեալ էր ինձ. որդիք նորա չարակամք բռնագատեցին զնա յետս կոչել զխոստումն իւր, և փոխանակ 100,000 ռուբւոյ՝ եռուն գրել ի կտակի իւրում 24,000 ռուբի, ասելով թէ չունի նա այնչափ ստացուածս. վասն այսորիկ կայ խիստ քննութիւն և արդար պահանջումն։

«Խորհուրդ կարեւոր տուաւ ինձ ի փաստաբանէս Սամէճէ, վասն ապագայ զգուշութեան բերել տալ ինձ այսր վերսին այլ ինն գիր գործակցութեան, զոր ձեռամբ նորին Սամէճի եռու յօրինել. զոր և ծրարեալ ի թղթիս առաքեցի Արհիեպիսկոպոսիս Հօրդ, զի տայիք թարգմանել ի հայ լեզու, և զայն ոչ բառական, այլ ըստ իմաստից, զի բնական երևեցի, և զորմէ չլիցի յիշատակութիւն ի թուղթս ձեր որ առ իս, իբրև թէ Հատարակութիւնս ինքնին խորհեալ և առաքեալ է ինձ զայն, վասն ապագայ զգուշութեան։ — Եւ լիցի այն հատատեալ ի համօրէն առաջնակայիցդ, և վկայեսցի յանդիպեցի Հիւպատէն և յայլ երևելի անձանց Անգլիացւոց։ Նոյնպէս խնդրեմ առաքել ինձ զառաջին վաւերականն, այսինքն զ1817 ամին, զառեալն ի հանդուցեալ Գեորգայ պոյծառ Անգլէն, հանդերձ Յայտարարութեամբն, և

զ 1824 ամին զաուեալն ի տեղապահէն և զհաստատեալն ի ձէնջ։

„ Զուենլով այլ ինչ ի ժամուս կնքեմ զմուզիս . . . և մնամ

„ Արհիսպասուութեանդ ծերուս

„ Ի Մատրաս. 20 յուլիսի 1828.

„ Ն. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՐԻՄԻՆԱՆ. „

Ի հաստատութիւն վերոյիշեալ բանից, ահա և վկայութիւն Պ. Աբրահամու Ազանուրի, փեսայի Մուրատեանց, գրով Պ. Լազարովչի.

„ Վկայեմ զի հանգուցեալ տիկին զգրանչ մայրն իմ „ Աննա Ս. Մուրատեան, ուստրք ինչ յառաջ քան զմահ „ իւր ասաց Պ. Պօղոս Լազարովչի գրել զիր ի դիմաց իւրոց „ առ երեսին եղբարս իւր Ռաֆայէլեանս, ծանուցանելով „ նոցա զաղետալի վիճակն, յոր տիկին գնա որդիք իւր. և „ ի յապաղել նորա զայն, ապա կրկին և կրկին զաուսիւ- „ բեաց նմա և ասէ, զի եթէ զատահեցէ իւր մահ՝ գրեցէ „ նա, Լազարովիչն, անխափան զաւնեալն անցս իւր, ծրա- „ բելով ի նմին և զէֆխանէիդն, և առաքեցէ զայն եղբարց „ իւրոց ի Լոնդոն, զի զիտասցեն նոքա թէ յոր վիճակ „ թշուառութեան տիկին գնա որդիք նորա, և ուրպէս եղեն „ զատճառք տկարութեան և մահու մօր իւրեանց։ Նոյնպէս „ ասաց նմա գրել և զիր մի առ Մխիթարեան միաբանու- „ թիւնն ի Վենետիկ. և ի հարցանել Պ. Պօղոս Լազարովչի՝ „ թէ զինչ գրեցէ, ասէ; „ Այսչափ ինչ միայն գրեցեա „ „ թէ Գեր. Տէր, զու և միաբանութիւնդ քո, որ ոյս- „ „ չափ բարերարութիւն և երախտիք արարիք ինձ և տուն „ „ իմոյ, որպիսին իմ փոխանակ երախտեաց և բարերարու-

„ „ թեանց ձերոց՝ զՎերապատուելի Հ. Սարգիս վարդա-
„ „ պետն ձեր արկին իրատ։ » —

„ Ի Մատրաս. 15 յունիսի 1828.

„ Ա. Յ. ԱՂԱՆՈՒՐԵԱՆ. »

Եւ թուղթն Պ. Պօղոս Լազարովիչի առ Պ. Աղեքսանդր Ռաֆայէլ ի Լոնդոն, ունի օրինակ զայս.

„ Աղնուամեծար և Մեծապատիւ Պ. Աղեքսանդր Ռա-
„ ֆայէլի Ղարամեան բազում սիրով ողջոյն մեծարա-
„ նաց։

„ Խորին տխրութեամբ և դառն արտասուօք գնեմ զգրիչս
„ իմ ի թղթիս. քանզի ստիպիմ գրել զայն ինչ զոր չէր
„ բնաւ հաւատալ կամ ի գիր անցանել, մանաւանդ յինէն.
„ բայց համարիմ այսու վճարել զկրկին պարտս իմ, առ
„ արդարութիւնն և առ կատարումն վերջին և արքազան
„ պատուիրանին ի Քրիստոս հանգուցեալ բարեպաշտուհի
„ Հեռոդ տիկնոջ Աննա Ս. Մուրատի, զոր կրկին և կրկին
„ պատուիրեաց ինձ ի կենդանութեան իւրում մինչդեռ էր
„ ի մահիճս՝ գրել զէր ի գլխաց իւրոց առ երեսին եղբարս
„ իւր, և մանաւանդ առ ձեզ, զի ինքն ստորագրեալ առա-
„ քեցէ, ծանուցանելով մի ըստ միոջէ զթշուառ վիճակ
„ իւր՝ յոր արկին զնա անխոհեմ և թիւր շաւիղք որդւոց
„ իւրոց։ Բայց ես, եթէ վասն տկարութեանն, և եթէ
„ վասն անդորր պահելոյ զնա ի ժամուն, յապաղեցի զգաս-
„ ուէր նորա, ասելով թէ զկնի քանի մի աւուրց Աստու-
„ ծով առողջացեալ, յայնժամ գրեցից. և թէ զինչ օգուտ
„ է այժմ փութալդ, զի ոչ զոյ նաև պատրաստ գնալ
„ ի Լոնդոն։

„ Եւ յորժամ ծանրացաւ տկարութիւն նորա, պատուի-
„ րեաց ինձ ասելոյն։ » Եւ ասացի քեզ գրել եղբարց իմոց։

“ “ և դու յապաղեցեր գրել զբաղձալի նամակն իմ. զկնի
“ “ մահուան իմոյ գրեացես անյապաղ և ծրարեացես զօրի-
“ “ նակ Էֆիտէվիդին, զի ծանիցեն եղբարքն իմ զզրպար-
“ “ տութիւնն զոր եղին որդիքս ի վերայ իմ, և այլն, և
“ “ այլն. և յաղագս այս տխրութեան անկեալ ի մահիճս
“ “ ցաւոց մեռանիմ։ ” —

“ Ահա զայս արքազան պատուէր նորա կատարեալ գրեմ
“ Ազնուութեան ձերում և ծանուցանեմ, զի քեռորդիք ձեր
“ զկնի աւարտելոյ ինպատ իւրեանց զգործառնութիւնն
“ հրիտակի ողորմութեան կատկեալ ի հանգուցեալ հօրէ
“ իւրեանց՝ զղջացան, որպէս տեսանէք ի պատճէն գրոյ
“ Մատրախս Հատարակութեան առ Գերապայծառ Ար-
“ քահայրն Մխիթարեան միաբանութեան, զոր ծրարեմ
“ ի թղթիս։

“ Յետ զղջանալոյ նոցա ընդ վճարումն հրիտակին ողոր-
“ մութեան, սկսան բողում հնարիւք և անխայել վարուք
“ վարել ընդ Վերապատուելի Հ. Սարգիս Թէոդորեան վար-
“ դապետին առ ի յափշտակել ի ձեռաց նորա զգրամն,
“ բայց ոչ կարացին։ Քանզի եթէ ի կարեւոր ազգարա-
“ բութենէ մտերիմ բարեկամաց միաբանութեանն, և եթէ
“ ի կարի իմն զգուշութենէ Վ. Հ. Սարգիս վարդապետին,
“ ամենայն հնարք խորհրդոց և կամաց նոցա ի դերեւ
“ ելին։

“ Եւ իբրեւ տեսին թէ ոչ կարացին հասանել կամաց իւ-
“ բեանց, և զի անարդ դիտաւորութիւն նոցա յայտնեցաւ
“ հասարակաց, յայնժամ յայլ իմն խորհուրդ ամբաստանեալ
“ մտրերեցին։ Քանզի յանկարծակի հրատարակեցին յայ-
“ տարարութեամբ խափանումն վաճառելոյ զկոմբանաւ մեր-
“ հակն, զոր իբրեւ պատրաստ գրամ՝ պէտք իւն տօրս
“ արարեալ հասուցեալ էին վասն հրիտակի ողորմութեան,
“ և ապա խղճմտանաց ինչ գանգատ եռաւն տեղւոյս բարձ-
“ բագոյն Աստենին ընդդէմ Վերապատուելի Հ. Սարգիս վար-
“ դապետին և ընդդէմ մեր իւրեանց. քանզի տիկին մայր
“ նոցա յայտնապէս տեսանելով զանմիտ խորհուրդս որդւոց

«իւրոց՝ ընդդիմանայր նոցա, և խիստ բանիւք յանդիմանէր
«զնոսա։

«Յետ այնորիկ այլ իմն Եֆիտովիդ լի անմտութեամբ և
«անտրէն զրպարտութեամբ պատրաստեցին, և յորոյ վերայ
«երկու եղբարք ի միասին յանդիմանն Ատենին ասա երդուե-
«ցան, և ի 15 ապրիլիս արկին ի բանտ զՎերապատուելի Հայր
«Սարգիս վարդապետն. և զորոյ օրինակն Ծրարեցի ի թըղ-
«թիս, ըստ որքազան պատուիրանի ի Քրիստոս Հանգու-
«ցեալ բարեպաշտուհի քեռ ձերոյ տիկին Աննա Սամուէլ
«Մուրատի։ Ահա այս անօրէն գնացք որդւոց նորա եղեն
«ասելի անմիջապէս տկարութեան և պատճառ մահուան նո-
«րա. քանզի ըստ վկայելոյ բժշկին՝ այլ եւս երեսուն ամ
«պարտ էր նմա ապրիլ։ Յաղագս այս արարմանց որդւոց
«իւրոց պարտաւորեցաւ պատասխանի առնել ընդդէմ ասու-
«թեանց և զրպարտութեանց նոցա, առ ի պաշտպանել զպա-
«տիւ իւր և զանաչառութիւն առ ճշմարտութիւնն։

«Իրրև տեսին որդիք նորա թէ ունէին խայտառակիլ ան-
«հրաժեշտ, դիմեցին առ Աթառակալն եկեղեցւոյ արքոյն
«Թովմայի, և ամենայն խորամանկ և կեղծաւորեալ հնարիւք
«հաւանեցուցին զնա պատուիրել խոտոմանահար հանգու-
«ցեալ քեռ ձերոյ՝ չտալ նմա արձակումն մինչև ոչ կոչիցէ
«յետս զպատասխանին իւր յԱտենէն ընդդէմ որդւոց իւրոց.
«և ոչ այսչափ միայն, այլ և յամենայնի լսել որդւոց իւ-
«րոց՝ զոր ինչ ասիցեն նմա։ Որպէս և արարին իսկ. քանզի
«բազում ինչ ընդդէմ կամաց և խղճի մտաց եռուն խեղճ
«մօր իւրեանց ասել և ձեռնագրել. զոր հանդուցեալն զկնի
«մերոյ ժամու խոտոմանէր առանձին, թէ որդիք իւր բռնա-
«դատութեամբ եռուն նմա զայն ասել կամ ձեռնագրել,
«որպէս և բռնադատութեամբ և ընդդէմ կամաց իւրոց
«եռուն նմա առնել կտակ ըստ հաճոյից իւրեանց, զոր
«ամենեքեան վկայեն։

«Եւ զայս ամենայն արարեալ՝ կամէին քերել յանձանց
«զեղեռնագործութիւն իւրեանց. բայց ամենայն բնակիչք
«քաղաքին առ հատուկ վկայեն՝ թէ որդիքն եղեն պատճառ

„ մահու մոր իւրեանց, որպէս յայտ է ի բանից իւրոց զոր
„ պատուիրեաց և ասաց ինձ գրել յատկապէս. „ Կամիմ,
„ „ ասաց, զի զամենայն անցս իմ լիով գրեացես եղբարց
„ „ իմոց։ Ես իրրեւ քրիստոնեայ չկամիմ գրել՝ զի վրէժխնդիր
„ „ զիր լիցին որդւոց իմոց, այլ գիտասցեն թէ յետ մահու
„ „ իմոյ ոչպէս պարտին վարել ընդ նոսա. միայն երկոքին
„ „ թոռունքն իմ որք են այժմ ի ներքոյ խնամոց նոցա,
„ „ իրրեւ հայր զդուշասցին, քանզի նոքա անմեղք են։ „ —

„ Զայս եւս պատուիրեաց ինձ գրել, զոր ի կենդանութեան
„ իւրում բազում անգամ յիշէր առաջի բազմաց, թէ „ Պա-
„ „ րոն Լուիզ եղբայրն իմ մինչդեռ էր ասա ի Մատրաս
„ „ այսպէս ասէր ինձ, թէ քոյր իմ, զկնի մահուան ամուս-
„ „ նոյ քո որդիքդ զքեզ շան պոչին կապելոց են. ահա կա-
„ „ տարեցաւ մարդասէրութիւնն եղբօր իմոյ Պ. Լուիզի։ „ —

„ Արդ որպէս խորին տխրութեամբ և դառն արտասուք
„ ներարագրեցի ձեզ զաղէտալի անցս և զցաւալից մահ ի Քրիս-
„ տոս հանգուցեալ բարեպաշտուհի քեռն ձերոյ և իմս մոյ-
„ բազրի, նոյնպէս զիտեմ և հաւատի եմ, զի ցաւ մեծ և
„ տրտմութիւն յոյժ լինելոց է ձեզ հարազատացդ. սակայն
„ ի վերայ այսր ամենայնի ելթող մեզ հանգուցեալն մխիթա-
„ րութիւն ոչ սակաւ. քանզի ըստ ամենայն հանդիսի գրիս-
„ տոնէական բարեպաշտութեան աւանդեաց զհոգի իւր
„ ի ձեռս աւանդատուին իւրոյ Աստուծոյ, յերկրորդում
„ աւուրն ամսոյս յուլիսի։

„ Յանկանելով Աստուծոյ ձերում կեանս երկարս
„ ամենայն երջանկութեամբ,

„ Մնամ Աստուծոյ ձերում

„ Ի Մատրաս. 20 յունիսի. 1828.

„ Ամենախոնարհ ծառայ

„ Պ. Պ. ԼԱԶԱՐՈՎԻՉ. „

ԳԼՈՒԽ ԺԹ.

Եղանեալ Հ. Սարգսի ի քանեմն. — Գանգատագիր նորա ընդդեմ Մուրատեանց՝ ի պահանջել զվաշխ արժարոյ հրիտակին. — Սրբագրել Մուրատեանց զգիրն ամբաստանութեան զոր առեալ էին յԱտենն զՀ. Սարգսի. — Թուղթ Պ. Պ. Լազարովի գիրացս առ առաջնորդն Մխիթարեանց.

Յետ քանի մի շաբաթս ի վերոյ անցանելոյ մահու տիկնոջ Անանայի Մուրատեան, ի 24 յուլիսի 1828, պատրաստէ Հայր Սարգիս զպատասխանին իւր առ գանգատագիր Մուրատեանց, և մատուցանէ զայն ի բանեմ անտի ի դիւան բարձրագոյն Ատենին Անգլիացւոց ի Մադրաս։ Ակնարկեալ յայն Ատենագրին՝ ասէ ցՀայր Թարգմանն, թէ և Հ. Սարգիս «Թէպտրեան Թնդանօթս պատրաստեալ է ընդդէմ Մուրատեանց՝ խորտակել զնոսա։»

Ապա զկնի եօթնեկի մի յիշատակութիւն լինի յԱտենի առաջի դատաւորաց ի փաստաբանից Մուրատեանց զինդրոյ նոցա որ ընդ Հ. Սարգսի։ Ասէ նախագահ դատաւորն, թէ պարտ է նախ՝ զի ընդհանրական փաստաբանն Եօրթն կուսակից լիցի ամբաստանելոյն, այսինքն է Հայր Սարգսի Թէոդորեան, զոլով խնդրոյն զհրիտակէ ազորմութեան. և նմա հարկ է ի պաշտօնէ իւրմէ պաշտպանել խնդրոյն ազորմութեան (թէպէտ և նա մանաւոր փաստաբան էր Մուրատեանց և բարեկամ նոցա և երախտապարտ։)

Երկրորդ՝ պարտ է, ասէ, զի Հ. Սարգիս յանձնեսցէ զմերհական վաճառականն ընկերութեան, զարժաթ հրիտակին ազորմութեան, համարակալի ընկերութեանն, ի գանձատուն տէրութեան, որպէս զի գիտասցէ Ատենն թէ, խնդիրն

է ի վերայ իրաց ինչ, և ոչ ի վերայ օդոյ, և որպէս զի կարասցէ քննել և որոշել զիրաւունսն. և եթէ կասկածիցէ, ասէ, Հ. Սարգիս Թէոդորեան՝ թէ անկանիցի արդեաք արծաթն ի ձեռս Մուրատեանց, մի՛ կարծիցէ նա զայն երբէք. զի այն ոչ լիցի բնաւ. այլ միասցէ արծաթն ի գանձատան տէրութեան՝ մինչեւ օրինաւոր գործադիր և կատարիչ կամաց կտակարարին յառաջ եկեսցէ և առասցի զայն. և եթէ ինքն Հ. Սարգիս իցէ անձն այն, քննեսցէ Աստուծն ըստ կարգի և ըստ օրինաց, և զարձուսցէ նմա զարծաթն. ուստի թող յանձնեսցէ, նա ասէ, նախ Համարակալին զմուրհակն ի միջոցի հնգետասան աւուրց և ելցէ ի բանտէն, և ապա եկեսցէ խնդիր իւր յանդիման Աստենին առաջի դատաւորաց։

Զայս բանս դատաւորին լուեալ օրէնդէսն Կորոն գնայ ի բանտ անդր և պատմէ Հ. Սարգսի թէ զայս և զայս խօսեցաւ դատաւորն, և թէ այս են օրէնք Անգղիացւոց։ Յայնժամ ասէ Հ. Սարգիս՝ թէ ինքն հպատակ է օրինաց նոցա և հրամանի դատաւորին, և թէ ոչ թէ ի հնգետասան աւուրս, այլ ի հինգ աւուրս, յանձնեսցէ ինքն զմուրհակն ի գանձատունն ի ձեռս Համարակալի վաճառական ընկերութեան։ Զոր և արարեալ այնպէս եղանէ ի բանտեն ի 22 յուլիսի 1828, կացեալ ի բանտի աւուրս հարիւր։

Եւ գրէ թուղթ առ առաջնորդն Մխիթարեանց՝ ըստ օրինակին եղելոյ յէջ 327։

Ելեալ Հ. Սարգսի Թէոդորեան ի բանտէն՝ գնայ բնակի ի քաղաքամիջի, ի վարձու կալեալ տնակ մի յորում թէպէտ ծանր և նեղացուցիչ էր նմա օդն ի ցերեկի, և անհնարին տանջէին զնա պիծակք ի գիշերի, այլ վասն մատաւորութեան գործատան օրէնդիսին իւրոյ Կորոնի, յերթեւեկել առ նա յաճախ, ընտրէ զայն տեղի, մինչեւ ի կարգի գնէ զգործ իւր ի միջոցի հնգետասան ամաց։ Ապա երթեալ բնակի արտաքոյ քաղաքին՝ կիսով ժամու հեռի տնտի, կատաք հանապարհորդելով. և անդ կացեալ ամս երրեւ երկուս՝ ապա գնայ բնակի ի տան Պ. Աղանուրի՝ ըստ հրաւիրմանց և թախան-

ձանաց նորա և տիկնոջն, քանզի և հիւանդացեալ էր նորա և անկեալ ի մահիճս աւուրս ինչ։ Դարձեալ զի և յապահովի կամէր լինել վասն արծաթոյ հրիտակին զոր գիտէր թէ ի ձեռս բերելոց է յետ սակաւ ժամանակի. յաղագս այսր ամենայնի յանձն առնու գնալ բնակել ի տան Պարոն Աղանուրի։

Մինչդեռ ի կալանաւորութեան էր Հ. Սարգիս պատրաստէ գանգատագիր խիստ ընդդէմ Մուրատեանց՝ պահանջել ի նոցանէ զօրինաւոր վաշխ հրիտակի գպրատանն՝ ըստ մնանաւոր պատուիրանաց կտակագրին. քանզի նոքա եղծին զգաշն որ ի մէջ իւրեանց և ի մէջ գործակալի Մխիթարեան միաբանութեան, և արարին ինքեան աղբատաց ազգին վայրապար ծախիւք դատաստանի և այլ իրաց կարեւորաց։ Մատուցանէ նա զգանգատ իւր յԱտեանն յետ երկուց ամսոց ելանելոյն ի բանտէն. և զոյն թէպէտ փաստաբանն նորա առաջի առնէ Ատենին, այլ նախագահ դատաւորն ասէ՝ թէ թող աւարտեսցի նախ խնդիր գանգատագրոյն Մուրատեանց, ապա յառաջ եկեսցէ գանգատագիր Հ. Սարգսի. և այնպէս ծնաց այն յետս ի ժամուն։

Յետ երից ամսոց ելանելոյ Հ. Սարգսի ի բանտէ, ազգ առնեն նմա Մուրատեանք ձեռամբ օրէնագիտին իւրեանց Վ. այվաշի՝ թէ ունին արդարութիւն ինչ առնել ի գանգատագրի իւրեանց, որոյ վասն խնդրեալ են յԱտենէն և ընկալեալ զհրաման։ Ընդ այն ազդարարութիւն նոցա թէպէտ և դառաջինն խառոմի Հ. Սարգիս սակաւիկ մի, կարծելով թէ ասցեն նմա վերատին նեղութիւն՝ առնել և այնմ պատասխանի, և կամիցին յապաղեցուցանել զորոշումն Ատենին, բայց իրրեւ ի ձեռս բերէ զօրինակ արդարեալ գանգատագրոյ նոցա, տեսանէ զի ուղղեալ են զամենայն սխալանս իւրեանց և Ընչեալ անտի դրամանգակ զրպարտութիւնսն զոր արարեալ էին զնմանէ։

Զարմանայ ընդ այն յեղամտութիւն նոցա, անդիտացեալ զպատճառսն՝ զոր յետոյ ուրեմն խնամեալ ի փաստաբանէ նոցա որում անուն էր Լ. ուիզ։ Քանզի տեսեալ Մուրատեանց

զզօրաւոր պատասխանին Հ. Սարգսի՝ հանդերձ հաւատիւք, վկայիւք և երդմամբ, զարհուրին, և ի խորհուրդ մտեալ ընդ փառասիրին իւրեանց փութան արբագրել զդանդատագիրն, զի մի՛ ծանրացին յանցանք իւրեանց առաջի Աստենին, և ընդ առգանօք անկանիցին վասն բանից դրպարտութեանցն որ զՀ. Սարգսէ. վասն այնորիկ հնարին նոքա բառնալ այնու զարակոյսն ի մտաց դատաւորաց ընդ անիրաւութիւն իւրեանց. թէպէտ և զայն ոչիրաւ առնեն, այլ ակամայ, բռնադատեալ յարդարութենէն Աստուծոյ խոստովանին զճշմարտութիւնն. ընդ որ յետոյ զղջանան նոքա, և ընդ փառասիրան իւրեանց ընդ Լսելիս՝ որ զայն խրատ առեալ էր նոցա՝ զայրանան յոյժ անհնարին կատարութեամբ, մինչեւ հաղիւ սրեմն փառասիրանն Կորոսն ի մէջ մտեալ դադարեցուցանէ զնոսա։

Յայն միջոց ժամանակի գրէ Հ. Սարգիս թուղթ համառօտ առ առաջնորդ իւր, քաջալերելով զնա պինդ առնել զիրաւունս ազգաւոց ազգին։ Այս առնէ և այնմ արբագրութեան Աւրատեանց զարժան պատասխանին, և յաւելու անդ զնորոգ տեղեկութիւնն առեալ ի Վենետկոյ, որ էր հասուցումն 11,000 լիրայից ի Ռաֆայէլեանց։

Իսկ թէ զինչ էր պատճառն զի նախ զլացան նոքա և ապա հաւուցին, յայտնի է այն իսովարական զնայից Աւրատեան եղբարցն, այլ և յիրաւանց արդարութեան, ինչպատեալ բանից ճշմարտութեան Հ. Սարգսի յառաջին պատասխանւոջ նոցա առ դանդատագիր Աւրատեանց։

Գրէ զիրացս թուղթ Գ. Գօրս Լազարոսիչ առ Գերապայծառ Սուքիաս Սոմալ ի Վենետիկ, օրինակ զոյս.

« Գերապայծառ Տէր.

« Ի Մարտս. 10 փետր. 1828.

« Զկարեւորագոյն լուրս մինչեւ ցարդ յաղագս դանդատոյ « Աւրատեանց ընդդէմ Վերապատուելի Հ. Սարգիս վար-

“ զապետի, և պատասխանեաց նորա, գրեալ եմ Արքիա-
“ պատուութեանդ ի նախընթաց թուղթս իմ։ Այժմ գրեմ
“ զայլ եւս կարեւորագոյնն, և են այսոքիկ.

“ Ի 15 անցեալ նոյեմբերի ազգ ազգին Մուրատեանք՝ թէ
“ ունին ուղղութիւն սխալանաց աւանել ի գանգատագրին
“ իւրեանց, զոր մանաւանդ առաւել իմն սխալանս պարս-
“ էր կոչել, որպէս տեսանէք զկնի։ Յետ երից աւուրց
“ տուաւ օրինակ նորա Վերապատուելի Հ. Սարգիս վար-
“ զապետին, և էին ինքեան ուղղութիւն սխալանաց այսո-
“ քիկ.

“ Նախ՝ Ընդունել էին զամենայն բանս և մինչեւ գրաւս իսկ
“ որովք գրպարտեալ և նախատեալ էին անդ յառաջին
“ գանգատագրի իւրեանց զՎերապատուելի Հայր Սարգիս
“ վարդապետն։

“ Երկրորդ՝ խոստովանեալ և ի գործատուն Ռէճիատրի
“ Ամենեքեան տուեալ էին զվաւերական գործակալութեան
“ Վերապատուելի Հ. Սարգիս վարդապետին, զոր մինչեւ
“ յայն վայր ուրանալով գաղէին։

“ Երրորդ՝ պահանջէին ընդ երդմամբ ի Վերապատուելի
“ Հ. Սարգիս վարդապետէն զամենայն գիրս պատկանեալս
“ դպրատանն զգրեալս յԱրքիեպիսկոպոսութենէդ։

“ Չորրորդ՝ գրպարտեալ չարախօսէին զմիաբանութենէդ
“ որպէս թէ անցուցեալ է ի հաշիւ առացուածոց որք և
“ աղքատ մանկանց Ազգիս գաներ և գանպտուղ ազարակս
“ իւր զոր ունի ի Պատուա։

“ Հինգերորդ՝ գրարանէին թէ ընկալեալ են ի միաբանու-
“ թենէդ գիր՝ յորում ծանուցանէ նոցա, թէ չունի Վերա-
“ պատուելի Հ. Սարգիս վարդապետն իշխանութիւն գործա-
“ կալութեան, և թէ զյառաջագոյն տուեալսն յետս է կո-
“ չեալ, և թէ նորոգ այլ վաւերական գործակալութեան
“ տուաքեալ է վասն այլ երկու անձանց։

“ Զայսոսիկ և այլ քանի մի սնոտի և յիմար բանս բար-
“ բանչանաց զօրեալ էին ի նմին, զոր անարժան համարիմ
“ երկրորդել սուտ։

«Ի 16 յունվարի տարւոյս որպէս պատահանի Վերա-
«պատուելի Հ. Սարգիս վարդապետն արքայագրութեան նոցա,
«որով բնիերանեալ պարանձեցան ի ապառ։

«Ի 24 նորին ամսոյ մնացեալ Վերապատուելի Հ. Սարգիս
«վարդապետն զհակառակ գանգատն, այսինքն Cross Bill,
«ընդդէմ Մուրատեանց, որով պահանջի ի նոցանէ վաշխ
«դրամագլխոյ հրիտակին գոլրատանն. իսկ նոքա՝ իբրեւ
«զանխուսալ եւ անգիտակ այնմ, յ30 նորին ամսոյ հանին
«հրամանագիր յԱտենէն առ Վերապատուելի Հ. Սարգիս
«վարդապետն, յանդիման լինել Ատենին ի 5 փետրուարիս,
«յաղագս քննելոյ եւ դատելոյ զառաջին գանգատն իւրեանց
«եւ զպատասխանին նորա։

«Խորհուրդ եւս փատարանն Վերապատուելի Հ. Սարգսի
«վարդապետի՝ տալ աղերսագիր առ դատաւորսն, ծանու-
«ցանելով նոցա՝ թէ զոյ այլ գանգատ տուեալ յԱտեանն
«ընդդէմ Մուրատեանց վասն պահանջանաց վաշխի, եւ
«վասն յայտ առնելոյ զբազում հշմարտութիւնս, ուստի
«պարտ է մնալ մինչեւ պատասխանի արարցին նոքա ընդ
«երդմամբ եղեալ գանգատոյ, եւ պատասխանիքն ի միասին
«յառաջ եկեսցեն բարձրագոյն Ատենին։

«Վասն որոյ ի 4 ամսոյս Վերապատուելի Հ. Սարգիս
«վարդապետն յանդիման եղեւ Ատենին հանդերձ աղերսա-
«գրով, եւ ըստ օրինի մնացեալ զայն դատաւորաց, եւ նոքա
«հրաման եռուն փատարանին մերոյ ընթեռնուլ ի լուր
«ամենեցուն, եւ յառաջ բերել զփատաս իւր։ Եւ իբրեւ դա-
«դարեաց փատարանն մեր ի խօսելոյ, եւս պատասխանի
«նախագահ դատաւորն ինքնին եւ ասէ; «Որովհետեւ գան-
«գատագիրն Մուրատեանց՝ բազում ժամանակ է յորմէ
«հետէ մոռեալ է յԱտեան, եւ պատասխանին նորա
«տուեալ, վասն որոյ ոչ հարկ համարիմք մնալ պատաս-
«խանոյ երկրորդ գանգատագրին. թող այժմ պատրաս-
«տեալքն եկեսցեն ի քննութիւն, եւ ապա միւսքն յայլում
«նստարի։» —

«Յետքն ամսոյս նստան յԱտեան դատաւորքն եւ հրաման

„ եռուն յանկարծակի յառաջ բերել զգանգատագիրն Մու-
„ բատեանց և ընթեռնուլ զայն առաջի Աստենին. և յետ
„ ընթեռնլոյ փաստաբանի նոցա՝ եցոյց նախագահ դատա-
„ ւորն՝ թէ Մուրատեանք սխալ գանգատագիր տուեալ են
„ յԱտենի. պարտ էին, ասէ, գանգատիլ ի վերայ Հայր
„ Սարգսի Թէոդորեան, և ի վերայ ընդհանրական փաստա-
„ բանին, պահպանողի իրաւանց որբոց և աղքատաց. վասն
„ որոյ հարկ է, ասէ, Մուրատեանց ուղղութիւն սխալանաց
„ առնել, փոխել զգանգատագիրն յանուն երկուց (և մինչև
„ փոխեցի և պատրաստեցի այն, լրանայ ժամանակ պա-
„ տասխանելոյ հակառակ գանգատագրին։) . . . . .
„ . . . . . .

„ Միանգամայն եթող դատաւորն ի կամս ընդհանրական
„ փաստաբանին ունել զկողմն զոր ինքն հաճեցի. այլ նա
„ ոչ կարաց իսկոյն որոշել և յայտնել զկամս իւր Աստենին.
„ վասն որոյ խնդրեաց ժամանակ աւուրս երիս։ Յինն ամ-
„ սոյս յայտնեաց Աստենի ընդհանրական փաստաբանն Նոր-
„ թըն, թէ կալցի ինքն զկողմն Հայր Սարգսի ընդդէմ
„ Մուրատեանց։

„ Իսկ զմանրամասն տեղեկութիւնս դատին մերոյ և զյաջող
„ ելս նորին աղօթիւք մեծապատիւ միաբանութեանդ ակնու-
„ նիմ գտանել, և ծանուցանել ձեզ ի գալ պատեհութեան։

„ Զուսելով այլ ինչ ի ժամուս, յանձն առնելով զիս
„ ի մաքրափայլ աղօթս ձեր, մնամ,

„ Գերապայծառ տէր,

„ Ձերումդ Արհիապատուութեան

„ Ամենախոնարհ ծառայ

„ Պ. Պ. ԼԱԶԱՐՈՎԻՉ.“

ԳԼՈՒԽ Ի.

Վերջին Պատասխանին Հ. Սարգսի առ գանգատագիր Մորատեանց. — Ազգարարութիւն նախագահի դատաւորին. — Սկիզբն դատաստանին, և իսկզբան վիճաբանութիւնքն երկոցունք. — Ընթերցումն յատնին արդարագրեալ գանգատանացն Մորատեանց. — Յաստղել վճռոյ դատաւորացն. — Հնարք Մորատեանց ի ձեռն վիճաբանին Հ. Սարգսի ի հաւնոգել զսա յեռս կոչել զպատասխանին իւր և իրաւախոհ չինել ընդ նոսա. — Վճիռ դատաստանի դատաւորացն հանդերձ իրարանչիւր կարծեաց և բանից.

Մինչդեռ մատուցանէր Հ. Սարգիս զվերջին պատասխանի իւր յԱռենին և հաստատէր զայն անդ ձեռամբ իւրով և երդմամբ յանդիման մոյ ի դատաւորաց անտի բան անդրդիսկան օրինաց, հանդիպի նախագահ դատաւորին, որում անուանն էր Սէր Ռաֆֆ Փալմէր. սորա հարցեալ նմա, թէ ի՞նչն իցէ Հայր Սարգիս Թէոդորեան, յաւելու ասել՝ թէ գիտցէ՞ անդրդիսկանէն. և ի պատասխանել Հ. Սարգսի թէ չկարէ խօսել, բայց հասկանայ չափաւորապէս, ասէ ցնա դատաւորն; «Պարտ է քեզ զգուշանալ յոյժ և քաջ խելամուտ լինել բանից զբութեան և հաստատութեան քոյ։» Զայս ասացեալ՝ սորդրել ասայ նմա զպատասխանին, և ոչ ունելոյ զնա քաղաքավարութեամբ՝ արձակէ անտի։

Ապա յետ երից ամսոց ի փետրուարի 1829, հասանէ ժամանակ առաջնոյ ատեանն Առեան կարգելոյ. քանզի չորիցս ի տարուջն կարգի Առեանն, և տեղ ամիս մի, և երբեմն աւելս ինչ ունի։ Արդ յայնմ առաջին ատեանի այնր ամի, ի 25 փետրուարի, խնդիրն Մորատեանց և Հ. Սարգսի գայ յանդիման բարձրագոյն Առենին, ուր զաւուրս երկուս վիճաբանքն երկուց կողմանց ասենարանեն ի Հասդոսմել

զիրաւունս պաշտպանելոյն իւրեանց, ամբաստանեցն և ամբաստանելոյն։

Երեք էին փաստաբանքն Մուրատեանց, և այնք յերեւելեաց անտի եղելոց յայնժամ ի Մատրաս քաղաքի. առաջինն՝ ընդհանրական փաստաբանն Նօրթըն, որ թէպէտ բան պարտուց պաշտաման իւրոյ, և բան հրամանի և օրինաց Անգլիոյ կուսակից լինէր Հ. Սարգսի, բայց և առանձինն փաստաբան և բարեկամ գոլով Մուրատեանց՝ ի նպաստ նոցա խօսէր անդ։ Երկրորդն՝ Լուիզ անուն փաստաբան, այր յանդուգն և շաղակրատ, որ յօրինէ զգանգատագիրն Մուրատեանց և խրատ տայ նոցա ապա արքայագրել զայն ի նախատինս նոցին։ Երրորդն՝ Պէթի անուն փաստաբան։

Խօսին նոքա կարգաւ ժամս իրրեւ երիս. և իրրեւ նոքա դադարեն, ելանէին խօսել փաստաբանք Հ. Սարգսի Թէոդորոսն։ Առաջինն՝ Սամէճ անուն փաստաբան, որ թէպէտ բաւական յաւելեալ խօսել, բայց բարեկամ գոլով Մուրատեանց՝ ակնածութեամբ և թուլութեամբ խօսի. և երկրորդն՝ Տիթ անուն փաստաբան, այր համբակ, ծանրալեզու և ծանրալուր, մինչեւ կրկնել տան նմա դատաւորքն զատցեալսն, և առեալ եւս երբեմն ի բերանոյ նորա, բացատրեն զրանն։

Յընթեռնուլ նոցա անդ զգանգատագիրն Մուրատեանց՝ ընթեռնուն և զարքայագրեալսն որ գրեալ էին կարմրագեղով, զրանս զրպարտութեանցն որք ընդդէմ Հ. Սարգսի։ Ասեն ցնոսա փաստաբանքն Մուրատեանց, թէ ընդէ՞ր ընթեռնուն նոքա և զարքայագրեալսն։ Ասէ նախագահ դատաւորն; Թո՛ղ ընե՛ թերցցին և այնք, զի լաւ եւս ծանուցցին Մուրատեանք։ »

Իրրեւ դադարեն նոքա ի խօսելոյ, մինչդեռ ապաստ բաղմութիւնն որ անդ լսել զվճիռն, մեկնին անտի դատաւորքն առանց ինչ որոշելոյ։ Կարծեն ոմանք՝ թէ ասկս ատրաժամելոյ աւուրն անորոշ մնայ խնդիրն. վասն որոյ ի վաղիւ անդր ժողովի անդր դարձեալ բազմութիւն ի լսել զվճիռն. և իրրեւ բազմին դատաւորքն ի տեղիս իւրեանց, ասէ նախագահ դատաւորն՝ թէ « Զկարեմք ի ժամուս որոշել ինչ « զինդրոյն զայնմանէ, զի մեծ մեզ դեռ խորհել ընդ այն.

«Վասն որոյ թողումք զորոշումն նորին յերկրորդ սահմանն, «որ ի 21 մարտի այսր ամի։»

Թէպէտ և դատաւորքն չորոշեն ինչ ի ժամուն գայնմանէ, բայց ի գիտաց նոցա գուշակեն փաստաբանքն Մուրատեանց զանցաչող եւս իրաց իւրեանց, ըստ որում և խիզճ մոտաց իւրեանց վկայէր. վասն որոյ և խրատ տան նոցա իրաւախոհ լինել վերատին ընդ Հայր Սարգսի, և յետս կոչել յատենէ անտի զգանգատագիր իւրեանց, չմնալով վճռոյ դատաւորացն։ Սմին իրի Պ. Յովհաննէս Մուրատ միջնորդ առնու զփաստաբանն Հ. Սարգսի զՍամէճ, տալով նմա ինչ ինչ ընծայս, և խոստանալով տալ այլ եւս, զի համոզեսցէ և երկեցուսցէ զՀ. Ս. իրաւախոհ լինել վերատին ընդ Մուրատեանս, որք յետս կոչեսցեն զգանգատագիր իւրեանց յՍատենէն, և նա զգատաստանին իւր, այնպէս զի մի բերցին այնոքիկ յանդիման դատաւորաց. և ինքեանք խոստանան թողուլ նմա ի ձեռս բերել վերատին զմուրհակն առանդեալս ի ձեռս Համարակալի վճռառական ընկերութեան Հնդկաց։

Յանձն առնու փաստաբանն Սամէճ կատարել զկամս Պարոն Յովհաննու Մուրատոյ. կոչէ զՀ. Սարգիս ի գործատուն իւր առանձինն, և Հանայ համոզել զնա՝ զի միաբանեսցի ընդ Մուրատեանս յետս կոչել զինդիրն յՍատենէ անտի, և չմնալ վճռոյ դատաւորացն, մերթ զանառուգութիւն յաչող ելիցն առաջի նորա դնելով, և մերթ զիշխարարար և զծանր ծախս օրինաց նմա յիշեցուցանելով, զոր հատուցէ, ասէ, միաբանութիւն քո՝ եթէ չյաջողեսցի քեզ. զոր և պարտիս յառաջագոյն ծանուցանել միաբանութեան քում և հարցանել՝ եթէ կարող իցէ և կամ յանձին կալցի հատուցանել զայն։ Զայս և առաւել քան զսոյն բանս համոզողականս և երկեցուցիչս խօսի նա ընդ նմա՝ հանդերձ վկայութեամբք և օրինակօք, բերեալ և ընթերցեալ յականջս նորա բանս ի մեծահատոր մատենից, ի գանազան և ի նմանօրինակ խնդիրս և ի դէպս։

Իմանայ Հ. Սարգիս զառագնապ Մուրատեանց և զհնարս նոցա, և առնէ այն ամենայն բանից Սամէճի պատասխանի

յերկուս գլուխս եւնթ. այս է, նախ՝ թէ չկարէ ինքն այնուհետեւ հաւատալ երբէք բանից Մուրատեանց, և չկամի բնաւ գործ ունել ընդ նոսա. և երկրորդ՝ թէ Միսաքանութիւնն իւր կամէր արդէն և պատուիրեալ իսկ էր նմա տալ հաստատել Ատենի տէրութեան զդաշնագիրն իրաւախոհութեան իւրոյ ընդ նոսա. և ահա պատեհ, ասէ, կատարելոյ զկամս և զպատուէր միսաքանութեան իմոյ, յանձնելով Մուրատեանց Ատենի յապահովել զարծաթն և ի գործ դնել զայն ըստ զիտաւորութեան հանգուցեալ կտակագրին։

Արդ՝ եթէ զղջացեալ իցեն Մուրատեանք, ասէ, ընդ յանձնարարութիւն իւրեանց Ատենին, և թերահաւատիցեն արդեօք ընդ ուղիղ գործադրութիւն նորին, իմ երբէք չէ զղջացեալ ընդ հպատակութիւն իմ հրամանի Ատենին, այլ առանդեալ է զարծաթն ողորմութեան ի ձեռս Համարակալի տէրութեան, և վստահ եմ ընդ արդարութիւն օրինացն Անգղիացւոց. վասն որոյ չկամիմ և չկարեմ հաւանել առաջարկութեան քո, և յեռս կոչել յԱտենէն զպատասխանին իմ առ գանգատագիրն Մուրատեանց, և կամ միտանել ընդ նոսա իւիք ի գործառնութիւնն յայն. արասցեն նոքա առանձինն որպէս և կամին։

Եւ երկրորդէ նա զերկոսին բանան միանգամ և երկիցս։

Եւ իրրեւ տեսանէ զի Ջանայ Սալէճ տակաւին համոզել զնա զինչանել առաջարկութեան իւրում, խորհի քաղաքավարութեամբ իմն հրաժեշտ տալ ինեմանէ, և ոչ դժկամակութեամբ նորին. քանզի ի վաղիւ անդր ունէր նա խօսել յԱտենի ի պաշտպանել զիրաւունս իւր։ Վասն այնորիկ ասէ ցնա; «Տացի ինձ ժամանակ խորհելոյ զիրացդ։»

Ասէ ցնա Սալէճ; «Վաղիւ յառաջ քան զմեռաստան ժամ «առաւօտուն պարտ է որոշել. զի յետ այնորիկ կարդեսցի «Ատեան և խնդիրն յառաջ եկեսցէ ի լսելիս դատաւորաց։»

Ասէ ցնա Հ. Սարգիս; «Եթէ միտք իմ հաւանեսցին ընդ «առաջարկութիւն քո, եկից այսր վերստին և ծանուցից քեզ «քան ժամանակին։» Եւ այսպիսի հնարիւք հրաժարի հաւանել առաջարկութեան նորա, և դառնայ ի բնակութիւն

իւր ընդ Պ. Աբրահամու Աղանուրի, զոր և Թարգման առնայ էր ի խօսել ընդ Սամէնի, և վկայ բանիցն լինել։

Ի վաղիւ անդր չգնայ Հ. Սարգիս առ Սամէն բան ժամադրութեանն, այլ անագան ուրեմն ընդ երեկս. զի Թողու յառաջ գնալ խնդրոյն յանդիման Առենին, և որոշել այնմ ի գաւառաւրաց։

Ի մեռաման ժամու առաւօտուն ի 24 մարտի 1829, Առեանն կարգի և բազմութիւն անդր ժողովի յԵրուպացւոց և ի Հընդկաց, և գրեթէ յամենայն Հայոց բնակելոց ի Մարտաս. քանզի բազումք հետաքնին էին իմանալ զելս խնդրոյն Մուրատեանց ընդ Հ. Սարգսի. և զի թէպէտ երեք աւուրբ յառաջագոյն պարտ էր ըստ կարգի յանդիման գալ խընդրոյն Առենի, բայց այլ խնդիրք ի մէջ անկեալ, և աւուրցն տարաժամեալ՝ չմեայ ժամանակ. այլ ասեն միշտ գաւառաւրքն յելանել իւրեանց Առենէն թէ վաղիւ լեցի որոշումն խնդրոյ Մուրատեանց ընդ Հ. Սարգսի։ Վասն որոյ և զիտեն ամենեքեան զօր որոշման խնդրոյն և ժողովին անդր հետաքննութեամբ սեռանել զկատարած նորին, և մանաւորապար կուսակիցք ոմանք Մուրատեանց. որք և յառաջ քան զորոշել գաւառաւրաց՝ ինքնագատ վճիռ հատանեն, և վայ զլխոյ Հ. Սարգսի կարդան՝ ասելով թէ «Զի՞նչ ունի առնել «ողորմելին. ոսկերք նորա մաշեցին ի բանտի վասն ծանր «ծախուց օրինաց։»

Մինչդեռ այնպիսիքն ըստ ըզձից և ըստ քմաց իւրեանց գատաստան առնեն Առենի անդ, և ահա քարոզն Լուսութիւն Լուսութիւն աղաղակէ. զի երեքին գաւառաւրքն յառեան մտանեն և ի սեղիս իւրեանց ելեալ բազմին։ Յայնժամ նախագահ գաւառաւրն բանս զրեան իւր և խօսի իրրեւ ժամ մի. ապա երկրորդն, և ապա երրորդն. և թէ զինչ խօսի իւրաքանչիւր ոք ի նոցանէ անդ, աւասիկ հարատարաւ թարգմանութիւն վճռական բանից նոցա՝ համառօտագրեալ անդ ի ժամուն, ի զանազան զրչաց լրագրաց քաղեալն, և հրատարակեալ ի վաղիւ անդր յամենայն լրագրաց Մարտաս.

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԱՏԵԱՆ

(Յոբինա արքարութեան)

ՍԱՀՄԱՆ ԵՐԿՐՈՒԴ. 25 ՄԱՐՏԻ 1829.

Եղուարդ Սամուէլ Մուրատ, և Յովհաննէս Սամուէլ Մուրատ, ընդդէմ Վէրապատուելի Հ. Սարգսի Թէոդորեան Վարդապետի Ատուածաբանութեան,

Փաստաբանք Ամրատանցն. Ընդհանրական փաստաբան, Նոքիքն, Լուիզ, և Պէքի. — Վարիչ դատին Օրիալ Վայվաշ.

Փաստաբանք Ամրատանելոյն, Սոմէհ, և Տիթ. — Վարիչ դատին Կոբրին.

„ Գանգատագիրս այս մատուցաւ յԱտեանս յամբաստա-
„ նեալն՝ իբրեւ ի կատակատարաց հանգուցեալ Պ. Սամուէլ
„ Մկրտչի Մուրատեան, ընդդէմ ամբաստանելոյն՝ իբրեւ
„ կարգեալ հոգաբարձուի և գործակալի Մխիթարեան միա-
„ բանութեան հայ կրօնաւորաց ի Վենետիկ. և նպատակ
„ գանգատագրին, հատուցեալ ի վախճանի, յետ անցանե-
„ լոյ ընդ բազում ուղղութիւնս և փոփոխութիւնս հետզ-
„ հետէ՝ այս է, թէ գումարն 275,100 գրայ ռուփոյ, զորմ
„ իբրեւ մնան 407,000 գրայ ռուփոյ՝ որ ի մերհակս վճռա-
„ ռական ընկերութեան, եղեալ կայ յանուն համարակալին
„ ի պահանջ դատին, և պատկանի անթերի հատուցման
„ դրամագլխոյ միոյ թողլոյ կատկաւ ի կատկագրէ ամբաս-
„ տանացն, ասկս հիմնարկելոյ գոյրատուն մի վասն որբ և
„ տղբատ մանկանց ազգին Հայոց, ի ձեռն հայ կրօնաւորաց

«. որ ի Վենետիկ, զի գնելով գետին ի կողմն ինչ Եւրոպիոյ
«. վասն այնր դիտաւորութեան, մարթասցի ըստ փոխարանաց
«. և դիտաւորութեան կոտակադրին ի գործ գնել ձեռամբ Ատե-
«. նին, ըստ օրինաց ասենի արդարութեան։ Եւ ընդ հանրական
«. վասուսաբանն յաւելցի իբրեւ մասն ամբաստանեալ, զի արաս-
«. ցէ պատասխանի գանգատագրին, որպէս զի ասացեալ դու-
«. մարն 275,100 ոքայ ռուփի յապահովութեամբ պահպանեա-
«. ցի և պաշտպանեսցի յօգուտ գործոյն ողորմութեան, և
«. կամ անկցի ընդ այլ որպիսի և իցէ կարգաւորութեամբ
«. Ատենին, եթէ կարող իցէ նա որոշել հաստատուն և գոր-
«. ծունեայ եղանակ գործադրութեան դրամագլխոյն ի կատա-
«. րումն գործոյն ողորմութեան։

«. Եւ թէ մեացորդ ասացեալ 407,000 ոքայ ռուփին ասցի
«. ամբաստանաց, կամ արկցի ընդ ապագայ կարգաւորու-
«. թեամբ Ատենին։ Եւ թէ ամբաստանեալն բոլորովին զբր-
«. կեսցի յիրաւանց խառնելոյ յամենայն ապագայ ձեռնարկ-
«. կութիւնս ասացեալ հրիտակին, կամ յառաջ բերեալ
«. հրիտակին յիշատակելոյ ի վերջ բորդ հաստատած կոտակի
«. կոտակադրին. և եթէ իբրեւ յառաջ եկեալ փոխանորդ
«. Մխիթարեան միաբանութեան, և եթէ այլ որ ինչ և իցէ
«. կարողութեան տէր։

«. Գանգատագիրն ըստ որում զառաջինն յօրինեցաւ՝ պա-
«. տունակէր զանազան ցոյցս և յառաջբերութիւնս կարի
«. իմն գունաւորեալս՝ ծանր ծանր բանիւք ազարտելով զբա-
«. ցական համբաւ, զհամեստութիւն և զանարատութիւն
«. ամբաստանելոյն, զոր նա ինքն հերքեաց պատասխանեաւն
«. իւրով։ Ամբաստանքն ոչ փորձեցին հաստատել վկայիւք
«. և ոչ զմի յամբաստանութեանց զոր արարեալ էին ընդդէմ
«. ամբաստանելոյն. այլ ընդ մտանել ի ներքս պատասխան-
«. ոյն նորա՝ ի ձեռս բերին զհրաման արքայական զգանգա-
«. տագիր իւրեանց, և այնու հրամանաւ ջնջեալ եղծին զամե-
«. նայն վնասակար նիւթս զոր յառաջ բերեալ էին ընդդէմ
«. ամբաստանելոյն։ Դատն արձանագրեցաւ, որպէս զի խե-
«. լի լեցի հարցմամբք և պատասխանեօք յանցեալ գումար-

“ ման, և յառաջ բերաւ մեծաւ եռանդեամբ և հարատարու-
“ թեամբ յերկաքանչիւր փաստաբանից ի հանդէսն որ զկնի
“ գումարմանն. և զի թողաւ վճիռն ինչպէս այսր առուր,
“ Ատեանն եհատ այսօր զվճիռն։

“ ՍԸՐ Ռ. ՓԱԼՄԸՐ, Նախագահ դատաւոր. — Երկու
“ ինչք են որք խնդրին յայսմ գանգատագրի. Նախ՝ յապա-
“ հովութիւն այսր դրամագլխոյ, որ այժմ ի ձեռս Ատենին
“ է, և վերաբերի հրամակին ողորմութեան, և գործադրու-
“ թիւն նորին ձեռամբ ատենին։ Երկրորդ՝ զի ամբաստա-
“ նեալն զրկեսցի ամենեւին յիրաւանց խառնելոյ ի գործ
“ հրամակին։

“ Վասն առաջնոյն, այսինքն վասն պահպանութեան
“ դրամագլխոյն չիք ինչ դժուարութիւն. քանզի ամենայն
“ կողմանք, այսինքն ընդհանրական փաստաբանն, ամբաս-
“ տանքն և ամբաստանեալն միաբանք են։ Իսկ վասն երկրոր-
“ դին, այսինքն վասն յայտարարութեանն յԱտենէ՝ զի
“ ամբաստանեալն Հ. Սարգիս Թէոդորեան մի՛ ևս խառնեա-
“ ցի ի գործ հրամակին, խնդրի վասն երից պատճառաց.
“ Նախ՝ թէ Միաբանութիւնն չունի այնպիսի իրաւունս՝ մին-
“ չեւ տալ և ամա կարողութիւն խառնելոյ յայս գործ։
“ Երկրորդ՝ զի եթէ Միաբանութիւնն ունիցի ևս իրաւունս,
“ այլ չէ տուեալ բաւական ինչ կարողութիւն ամբաստանե-
“ լոյն խառնիլ ի գործ ընդունելութեան արծաթոյ։ Եր-
“ րորդ՝ անպատշաճ վարք ամբաստանելոյն։ Եւ ի հաստա-
“ տութիւն այսմ պատճառի՝ ամբաստանքն յառաջ բերեն
“ զդաշն որ ընդ ինքեանս, և որով ամբաստանեալն յայտ
“ առնէ թողուլ նոցա զրովանդակ վաշխն, և ստորագրեալ
“ է մերհակ ինչ ընդունելութեան ի լիուլի հատուցումն պա-
“ հանջանաց ի նոցանէ։

“ Այս է եզական խնդրն ընդդիմադրութիւն ի կողմանէ Մաս-
“ բատեանց, որոց մարթ էր ինքնին յառաջ գալ և մատու-
“ ցանել զհատուցումն վաշխին։ Եւ ոչ ունի առաւել ինչ
“ զօրութիւն ի կողմանէ ընդհանրական փաստաբանին, յորժամ յուշ լիցի՝ զի նախորդ իւր հաւանեալ էր ընդ նոցն

“ պայմանն որ ի մէջ նոցա։ Միւս եւս ընդդիմադրութիւն
“ այն է, զի նա պնդէ լինել միայնակ կարող՝ մինչդեռ
“ այլով կարողութեամբ միաւորեալ էր ընդ Նազարովչի.
“ բայց այս միաւորեալ կարողութիւն՝ չէր առարկեալ
“ մինչեւ ցիրբ երիս ամիս զկնի աւարառելոյ գաւիններ։

“ Մի միայն ընդդիմադրութիւն, ի մէջ ամենայն գործոց
“ նենգութեան որով ամբաստանեալն մեղադրեցաւ, է չհա-
“ ւանելն նորա Պարոն Վայլաշի, և առ իւր պահելն զար-
“ ծաթն։ Ամբաստանեալն, բան կարծեաց իմոց, բոլորովին
“ արդարացեալ է յաղագս կամաւորարար չբաժանելոյն
“ յիւրմէ զարծաթն. զի եթէ առնէր նա զայն, յիւրոց իսկ
“ առացուածոց պարտական լինէր հատուցանել. և բանք
“ թղթոյ պարոն Վայլաշի էին, զի արծաթն աւանդեսցի
“ յանուն Սուրատեանց և ամբաստանելոյն, որով երաշխա-
“ ւորութիւնքն եղեալ լինէին արտաքոյ կարգութեան ամ-
“ բաստանելոյն։

“ Յո՛ւշ լիցի զի թուղթն այն չէր առաքեալ մինչեւ ցնա-
“ խընթաց օր աւարտելոյ գաւիններ, և ամբաստանեալն ոչա՞ւ
“ լինէր իւրաքանչիւր զմուրհակն, բան բացայայտ պայմանաց
“ գաւիններ։

“ Զէ՛ պարտ զարմանալ ընդ փոյթ նորա ի դդուշանալ
“ յԱտենէն. քանզի երկնչէր նա, զի եթէ դրամն աւան-
“ դեալ լինէր ի ձեռս Աւենին, ոչ եւս երանէր անսի ընդ
“ երկար ժամանակ։

“ Ամբաստանութիւնք և մեղադրութիւնք, որք այնպէս
“ յանխնայ կուտեալ էին ի վերայ ամբաստանելոյն զանգա-
“ տագրոյն յառաջնումն նեւագի, բոլորովին յետս նահան-
“ ջեցան յամբաստանացն, որք ոչ երբէք ձեռն արկին
“ հաստատել վկայիւք զառաւէր անգամ ճշմարտութեան և
“ ոչ զմիոյ ի նոցանէ. և ոչ ինչ յառաջ բերաւ, բան կար-
“ ծեաց իմոց՝ որ զրկել կարացէ զնա յիրաւունս գործա-
“ կալութեան։

“ Երկրորդն՝ թէ ամբաստանեալն չունի բաւական կարո-
“ ղութիւն ի գործել։ Արդ՝ ասացուք թէ զինչ էին կարողու-

„ թիւնք նորա ։ Առաջին հաւատոքն, է կարողութիւն
„ գործակալութեան տուեալ ի յունիսի 1817 ։ (Ընթեռնու-
„ զայն ։)

„ Անհաւասիկ միաւորեալ ինչ գիր գործակալութեան, որ
„ կարողացուցանէ զամիրատանեալն և զՀ. Սուքիաս Սոմա-
„ լեան, (որ է կարծեմ այժմու արքեպիսկոպոսն,) յընդու-
„ նել զայն դրամն, և է տորագրեալ յարքեպիսկոպոսէ այնր
„ ժամանակի և յԱբրայէ, եւս և յԱռենադարէն ։ Երկրորդ
„ գիրն գործակալութեան հաստատէ զառաջինն, և է տորա-
„ գրեալ ինոյն արքեպիսկոպոսէն և յանդամոց Մխիթարեան
„ միաբանութեան ։ Բայց յաղագս այսր կարողութեան տի-
„ բուպէս չեմ հաւանեալ՝ թէ հաստատութիւն ամենայն
„ անդամոց հարկաւոր էր ։ Երկրորդ գիրն գործակալու-
„ թեան գրեալ է ի 23 մարտի, 1824. և այս է որով զաշն
„ այն հաստատեալ էր, և է տորագրեալ ի տեղապահէն,
„ յԱռենադարէն և յայլ անդամոց Մխիթարեան միաբանու-
„ թեանն, զորով յայնժամ պարապորդ արքեպիսկոպաս-
„ բանն վանաց ։

„ Սա տայ Սարգիս վարդապետի Թէոդորեան կարողու-
„ թիւն խորհրդակցելոյ, դաշնագրելոյ, պաշտպանելոյ գիրա-
„ ւունս Միաբանութեանն, և կարդելոյ զոք փոխանորդ իւր ։
„ Այս գիր արդարև չէ ըստ օրինակի անգղիական իմն գրոյ
„ գործակալութեան յօրինեալ, բայց իրօք կարողութիւն
„ ինչ է գործելոյ ի կողմանէ Միաբանութեանն, այնպէս՝ որ-
„ պէս առաջինն, և ընդունելոյ զայս դրամ ։ Ոչիչ եղբա-
„ կցութիւնն զոր մարթ է հանել ի բանից գրոյն՝ որ տայ
„ նմա իշխանութիւն կարդելոյ զոք գործակալ, և ի թղթոցն՝
„ չդիմելոյ ի դատաստան, այս է, զի եթէ չկարէր նա ընդու-
„ նել զդրամն բարեկամական եղանակաւ, կարդեացէ զոք
„ գործակալ. կամ ի ձեռս բերցէ զայն օրինաւք Անենին
„ արդարութեան. բայց ի ձեռս բերել զայն բարեկամական
„ եղանակաւ՝ եթէ հնարաւոր էր ։

„ Ամիրատանքն քաջիկ խնդամուտ էին ամենայն կարողու-
„ թեանցն. և ըստ գրոյ գործակալութեանն որ ի 1824, հաս-

“ տատեցաւ դաշնն 26 աւուր մարտի 1827 ։ Զկնի այնր դաշին
“ այլ ինչ գիր գործակալութեան հատանէ ի Վենետկոյ գրեալ
“ յ2 յունիսի 1827, գրեթէ ըստ պայմանաց անգղիական գրոյ
“ գործակալութեան, միաւորեալ գիր ինչ կարողութեան
“ վասն Թէոդորեանին և Լազարովչի ։

“ Արդ թէպէտ և ի 26 մարտի 1827, ամբասանեալն կա-
“ րող էր ընդունել զայս գրամ, սակայն յորժամ այս միա-
“ ւորեալ կարողութիւն եհաս, մարթի խնդիր յարուցանել՝
“ թէ արդեաք նա միայնակ կարող էր. բայց այս միաւորեալ
“ կարողութիւն ի ժամանակի դաշինն չէր եղեալ ։

“ Ենթադրեալ թէ չունիցի նա կարողութիւն ընդունելոյ
“ զայս գրամ միայնակ, հարցանեմ ես՝ թէ կարելի իցէ
“ Աստենին՝ յանդիման այսր հաւատոց առնել զայնպէսի
“ անկարողացուցիչ յայտարարութիւն որպիսի խնդրի այժմ
“ յամբասանացն ։

“ Միայնակ մնացեալ խնդիրն այժմ՝ է յաղագս իշխանու-
“ թեան Միսրանութեանն. կարծեմ ես՝ թէ նա կարող է
“ խառնիլ յայս գործ, և տեսանել զգործադրութիւն դրա-
“ մին ։ Բայց Աստեանս կոչեալ է օգնել և ձեռնտու լինել
“ ի գործադրութիւն ողորմութեանն. և Աստեանս արասցէ
“ այնպէս, և ունիցի իշխանութիւն յանձնել կարդեալ գոր-
“ ծակալին Միսրանութեան (յորժամ առուգեսցի նա) զգը-
“ բաղն պատկանեալ ողորմութեան, որ այժմ ի ձեռս Աստե-
“ նին, առ ի կիր արկանել, և գնել գետին յԵրուսաղէմ ։

“ Բանք հրխառակին այսոսիկ են. (Ընթեռնու զվեցերորդ
“ հատուած հրխառակին ։)

“ Ի ՁԵՌՆ ՀԱՅ ԿՐՕՆԱՒՈՐԱՑՆ ԵՒ ԿՏԱԿԱԿԱՏԱՐԱՑՆ
“ ՊԱՐՏԻ ԳՈՐԾՍ ԱՅՍՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ ՅԱՐԴԻՒՆՆ ԳԱԼ ։

“ Հայ կրօնաւորքն են, ասէ, ի գաստիարակել և ի հրահան
“ գել զմանկունսն ։ Այս ի հետագայ մասն ինչ կատակի են
“ այս բանք. (Ընթեռնու զմիւս յօդուած կատակին, յորում
“ կատակագիրն յայտ առնէ՝ թէ գրեալ է ինքն զկարծիս իւր
“ առանձինն զեղանակէն՝ որով կամէր զի ողորմութիւն իւր
“ արդեամբք ի գործ դիցի ի Միսրանութենէն և ի կատակա-

“ կատարաց իւրոց. Այս բանք ոչ տան զգաստական ինչ կա-
“ բողութիւն կատակատարաց իւրոց միայն՝ յուղղել զկար-
“ ծիս իւր, այլ նաեւ Մխիթարեան հարց Վենետկոյ։ Արդ
“ եղական իմն է յոյժ, զի մինչդեռ խնդրի յԱտենէս մեկ-
“ նութիւն ինչ այսմ կատկի, չասի և ոչ բառ մի զայսմ
“ առանձին թղթոյ, և ոչ ծանօթութիւն ինչ առեալ լինի
“ զայնմանէ յամբաստանացն ի գանգատագրի իւրեանց։ Գու-
“ ցէ գրուածն այն բնաւ իսկ չէ եղեալ. բայց եղական իմն
“ է՝ զի յամբաստանացն ամենեւին ոչ ինչ ասացաւ ընդ այն։

“ Եւ արդ՝ առաջին մասն յօդուածոյս, այսինքն բառքն,
“ ԽՈՐՀՈՒՐԴ ԵՒ ՁԵՌՆՏՈՒՈՒԹԻՒՆ արդէն ընկալեալ են
“ զդաստղական մեկնութիւն։ Դիպուածն զոր իմէջ բերեմ՝
“ ոչ յիշատակեցաւ ի դատաստանարանին. և է դատն Վալ-
“ թանի ընդդէմ Գալէի։ (Ընթեռնու զինդիրն։) Այն խնդիր,
“ ասէ, եթէ չգոնագանիցի ի սմանէ, է ի նպատս ամբաստա-
“ նացն։ Գլուխք բանից՝ յորս կոչեմ զանոգանելի են
“ խնդիրքն, են այսոքիկ. առաջին ի ձեռն Հայ կրօնաւորացն
“ գեռին գնեացի. այլ ի Վալթօն ընդդէմ Գալէի՝ խնամա-
“ կալուքն ունէին յանձնել զդրամագլուխն ողորմութեան
“ կնոջն իգործադրութիւն։ Ի Վալթօն ընդդէմ Գալէի՝ աղ-
“ քատ ազգականքն էին նախադասելի նպատակք. իսկ յայս
“ խնդիր՝ աղքատ Հայքն ունին դատարակիլ առաջնորդու-
“ թեամբ կրօնաւորացն։ Յաղագս գանգատութեանն որ
“ ի գնացս նոցա և ոչ ոչ յայն և յայս խնդիր, անդ՝ նոքա
“ ոչ կորուսին զժամանակն. քանզի կատակագիրն վախճա-
“ նեցաւ ի յունուարի 1803, և ունկնդրութիւնն որ ի Դիւանի
“ եղեւ ի 1808։

“ Վատակարարութիւն ողորմութեանն պարտէր յառաջել
“ քան զբաշխումն նորին. քանզի գանգատագիրն ամբաս-
“ տանէր զկարգաւորութենէ մատակարարութեանն. ասա՝
“ ի տանամեայ միջոցի ոչ ինչ գործեցաւ, բայց միայն մա-
“ նական ինչ հատուցումն դրամոյ ի 1826։ Ընդ բովանդակ
“ միջոց ժամանակի կատակատարքն արարին ապաքէն և
“ ոչ ինչ ստ ի գործ գնել արդեամբք զողորմութիւնն,

“ այլ պահեցին զգրամն առանց երբէք Ջանալոյ ի կիր ար-
“ կանել զայն, գնել գետին, առ ի կատարել զցանկութիւն
“ կտակարարին։

“ Զի՞նչ իցեն պատճառք նոցա յաղագս այսր յապաղման.
“ խառնեալ վիճակն Եւրոպիոյ։ Այս պատճառանք ի գերեւ-
“ եկանեն, քանզի բոլորովին անհիմն է. զի երբ, հարցանեմ
“ ես, զուտ Եւրոպա յառաւել իմն խորին վիճակի խաղա-
“ ղութեան, կամ երբ եղեւ այնչափ ազատ և ազգային հա-
“ զորգակցութիւն ի մէջ զանազան պետութեանց Եւրոպիոյ,
“ քան յամէն 1816 յորում կտակարարն վախճանեցաւ՝ մին-
“ չեւ զ1826։

“ Ի վախճանի՝ ամբաստանքն կնքեն զդաշն ընդ ամբաստա-
“ նելոյն ինքնակամ, և զօրութեամբ այս ամենայն զրոց
“ գործակալութեան նորա։ Յուցին նոքա գնացիւքն ի-
“ բեանց՝ թէ զինչ էին կարծիք իւրեանց զդիտաւորութենէ
“ կտակարարին։

“ Նախ՝ վաղվաղակի յետ մահու կտակարարին առաքեն
“ նոքա, կտակակատարքն, թուղթ մի առ միաբանութիւնն.
“ և յետ այնորիկ՝ ամբաստանն Յովհաննէս Մուրատ գնայ
“ ի Վենետիկ. և առարեն նոքա զամենայն, մատնելով
“ ի դաշն ընդ ամբաստանելոյն ի մարտի 1827, կատարեալ
“ ծանօթութեամբ, կամ հաւատով՝ թէ նա էր գործակալ
“ միաբանութեանն. և արդեամբք յանձնեն նմա գրուխն-
“ գակ գրամագլուխն, և ոչ բնաւ ցուցանեն՝ մինչեւ ցմա-
“ տուցումն գանգատագրի իւրեանց յԱտեանն՝ թէ ամբաս-
“ տանելոյն չունէր բաւական կարողութիւն ի գործել,
“ կամ թէ միաբանութիւնն չունէր իշխանութիւն խառնել
“ ի գործն։

“ Կարելի՞ է այժմ թոյլ տալ նոցա վիճել՝ թէ տրամագ-
“ բական իշխանութիւնն նոցա է միայն, և թէ միաբանու-
“ թիւնն չունի ինչ առնել ի հրամանին։ Ես ոչ կարծեմ, և
“ զնացք նոցին լոկ Մուրատեանց բաւականք են յարդարա-
“ ցուցանել զԱտեանն՝ յանձնել զգրամագլուխն միաբանու-
“ թեանն, կամ օրինաւոր գործակալի նորին։

„ Ջանագանելով զայս խնդիր ի խնդրոյ Վալթօնի և Գալէի,
„ և կշռելով զառաջեալն լօրտ Էլգօնի ի խնդիրն Բրօնի,
„ կառավարարքն յայս խնդիր պարտ էին առնել ըստ
„ առանցին դիտելոց ի կառավարէն։ Բայց ի կողմանէ
„ ամբասանացն չիք ինչ ջանք ծախելոյ և ոչ գրանամ մի
„ (20 սանդիմ) վասն հրիտակին ողորմութեան։ Այլ միակ
„ խնդիրն է զծախուց մինչեւ ցարդ եղելոց։ Զկարեմ ես
„ տեսանել և ոչ ամենափոքրիկ անպատշաճութիւն ի գնացս
„ ամբասանելոյն. բայց զի՞նչ լեալ են գնացք ամբասա-
„ նացն։ . . .

„ Առանձին նոքա ի գաչն ընդ նմա ի մարտի 1827, կատա-
„ րեալ ծանօթութեամբ ամենայն իրաց. ընդունին ի նմանէ
„ մարհակ ապատութեան։

„ Յետոյն ապրիլի 1827, առաջին փոխանակագիրք առեալ
„ են ամբասանելոյն։

„ Յերեսուն և մի օգոստոսի նորին՝ երկրորդ փոխանա-
„ կագիրքն առեալ են նմա, և մարհակք ինչ յետս դարձ-
„ ուցեալ են։

„ Ի 18 հոկտեմբերի 1827, ամբասանեալն ասէ՝ թէ ընդ-
„ կալեալ է զմեծարեալ կարողութիւն, և երդնու նա պա-
„ տասխանեաւ իւրով, զոր պարտ է ճշմարիտ համարել,
„ թէ զկնի երկուց աւուրց ցուցեալ է զայն կարողութիւն
„ ամբասանացն, և նոքա ասացեալ են՝ թէ այն կարողու-
„ թիւն աւելորդ է, յառաջագոյն աւարտեալ զրով նոցա
„ ընդ ամբասանելոյն զինդիր հրիտակին ողորմութեան։

„ Դարձեալն նոքա մինչեւ իր ց20 աւուրս յառաջ քան
„ զ17 մարտի 1828, և ապա առաջարկեն առնել երկրորդ
„ իմն գաչնակցութիւն ընդ ամբասանելոյն, և առաջի առ-
„ նեն նմա առանձին փոխանակագիրս 70,000 արաց ռու-
„ փոյ, ասելով թէ զժուարին է յոյժ գտանել յայնմ ժամա-
„ նակի փոխանակագիր ապրութեան։ Զայս առաջարկու-
„ թիւն նոցա մերժել Թէոդորեան վարդապետն յոյժ իրա-
„ ւունս ունէր. քանզի եթէ ընդունէր նա զայն, զանձն իւր
„ պարտաւոր կացուցանէր։

«Ի 17 մարտի 1828, առաջին ամբաստանքն թուղթ մի առ
«ամբաստանեալն, խնդրելով ինամել ներուումն ժամանակի։
«Յաղագս գործակալութեանն նորա չկայր յայնժամ հակա-
«ռակութիւն։ Թուղթն Պ. Վայվաշի առաքեալ է առ ամ-
«բաստանեալն միով առուրբ յառաջ քան զլրումն պայմանի
«դաչինն, և ոչ վիճէ զգործակալութենէ. բայց կամի զի
«մուրհակքն դիցին յառանդ յանուն Մուրատեան եղբարց
«և ամբաստանելոյն, որոյ միայնակ նպատակն էր ըստ
«յայտնի նշանաց՝ շահել զժամանակն։ Զմերժելն ամբաս-
«տանելոյն արդէն վերագոյն ցուցի։ . . .

«Յետ այնորիկ ամբաստանքն մատուցանեն յԱտեան
«զգանգատագիր իւրեանց, բայց ոչ վասն հակառակութեան
«ինչ բանի գործակալութեան, այլ կարի խիստ յոյժ հաստա-
«տութեամբք և ամբաստանութեամբք նենգութեան ընդդէմ
«ամբաստանելոյն, ազարտելով զբարոյական համբաւ նորա
«որպէս զեկեղեցականի։ Իբրեւ հերքեցաւ այն պատա-
«խանեալ ամբաստանելոյն, ամբաստանքն արքայեցին
«զգանգատագիր իւրեանց, ջնջելով զամենայն ամբաստա-
«նութիւնս նենգութեանն. և ես պարտիմ հաւատալ՝ թէ
«նոքա ոչ կարէին հաստատել, և թէ չունէին հիմն կամ
«ապացոյց ի հաստատել զայնպիսի ամբաստանութիւնս։

«Յաղագս այնր մասին հայցուածոյն որով խնդրեն նոքա
«յԱտենէն ինչ յոյժարարութիւն՝ անկարող առնել զամ-
«բաստանեալն խառնիլ ի գործն, ի կարծիս եմ ես արդար-
«բար, զի Ատեանն ոչ կարէ առնել զայն։ Այս են իմ
«կարծիք, զի զրամագլուխն պարտի յապահովիլ ի ձեռն
«Ատենին, մինչև ստուգեսցի ըստ օրինաց կարգեալ գոր-
«ծակալն Մխիթարեան Հայոց. և զի ծախքն Սարգսի Թէոդո-
«բեան հաստատեսցին յամբաստանացն։

«ՍՐՐ Ռ. ՓՕՄԻՆ. — Եթէ զանգատագիրս այս յօրինեալ
«էր զառաջինն որպէս այժմս է, որ խնդրէ միայն յապահովել
«զդրամագլուխ հրամայեսցէ, և հրամարեսցէ զամբաստա-
«նեալն անկարող խառնելոյ ի գործ նորին, դիւրին լինէր
«ինձ որոշել։ Ամենեւին անօգուտ է կարծիս ինչ տալ զմեկ-

«Նութենէ կասկին. պարտիմք հայել յեղանակն որով վա-
«բեալ են Մուրատեանք։ Կարդեալ են նոքա ընդ Հայ կրօ-
«նաւորաց Վենետկոյ ի գնել գետին և հաստատել գործ
«ինչ ողորմութեան։

«Յաւալի է զի նոքա չեն եղեալ ի գործ զայն արդեամբք։
«Առեանն զինչի այնմ մասին գանգատագրին, որ խնդրէ
«ի գործ դնել զողորմութիւնն և յապահովել զդրամագլուխն.
«և յորժամ ըստ օրինաց կարդեալ գործակալն միաբանու-
«թեան եկեսցէ յառաջ, Առեանն հրամայեսցէ յանձնել նմա
«զդրամն զի ի գործ ածցի վասն ողորմութեան։

«Այս են միտք իմ վասն խնդրոյս՝ ըստ որում գանգատա-
«գիրն է այժմ։ Բայց յորժամ դամք ի խնդիր ծախուցն,
«հարկ է հայել ի գանգատագիրն՝ ըստ որում էր զառաջինն.
«քանզի այժմ կարի քիմն զանոգան է այն անտի՝ որ ինչ
«ի սկզբան անդ էր։

«Նպատակն էր գլխաւորաբար՝ արգելուլ զամբաստա-
«նեալն խառնիլ ի գործ հրիտակին, և հանել ի ձեռաց
«նորա զմուրհակն։

«Մինչեւ ցմարտ 1828, ոչ երեւի թէ ամբաստանքն ունէին
«և ոչ գուշնաքեայ ինչ կասկած զապահովութենէ դրա-
«մագլխոյն հաւատացելոյ ի ձեռս ամբաստանելոյն, և ոչ
«երեւի բնաւ՝ թէ այն դրամագլուխ ճանապարհ առնելոց էր
«ի Փոնթիշէրի կամ այլ ուրեք, որպէս ամբաստանքն ի գան-
«գատագրի իւրեանց ամբաստանեն՝ թէ դիպելոց էր։
«Իսկ ընդ գալ պատասխանւոյն՝ կարի քիմն այլազգ գոյն
«եղաւ ի վերայ այնր գանգատագրի։ Այս գժբազդ այր՝
«զկնի վատահամբաւ լինելոյ յանհիմն չարախօսութեանց ամ-
«բաստանացն՝ գայ հերքել զչարախօսութիւնն։ Յայնժամ
«նոքա ի բաց առնուն զամենայն թոյնս արկեալս ի վերայ
«նորա գանգատագրովն իւրեանց, և ջնջեալ եղծանեն զայն
«ամենայն ամբաստանութիւնս նենգութեան։

«Տեսեալ զայս ամենայն ամբաստանութիւնս, և զմտա-
«ածեալ զեղանակն որով ամբաստանեալն ածաւ առաջի
«Առենին, կարծեմ եւ՝ զինչս պարտի գտանել զծախս իւր։

“ Ապա խնդիրն է՝ թէ ուստի՞ հաստատին այնք։ Խիստ իմն
“ լինէր ասել՝ թէ հաստատին ի գրամագլխոյն պատկանելոյ
“ ողորմութեան. ես ի կարծիս եմ՝ թէ ամիրայանքն պար-
“ տին հաստատանել ամիրայանելոյն զծախս նորա։

“ ԱԼՐ ՃՕՐՃ ՌԻԿԵԹ. — Գլխաւոր նպատակ գանձատա-
“ րին էր հանել ի ձեռաց ամիրայանելոյն զմեծ ինչ գու-
“ մար գրամոց, և հրամարակել զնա ամենեքին զուրկ յիրա-
“ ւանց խառնելոյ յայս գործ։ Ողորմութիւն ինչ է այս՝ զոր
“ Ամենայն ոչ կարէ ի գործ դնել, ոչ յաղագս ապօրինաւոր
“ կամ ոչ բաւական պարզ լինելոյն, այլ քանզի պարտի
“ ի գործ դնիլ յօտար երկրի և արտաքոյ տահմանի իշխա-
“ նութեան Ամենայն։ Զոր ինչ միանգամ Ամենայն կարէ
“ առնել՝ այս է, վճռել զի դրամն հաստատի անձանց կարող
“ եղելոց ընդունել զայն։ Կարեւոր է նախ տեղեկանալ՝ թէ
“ զի՞նչ է այս Միաբանութիւն, և ո՞յք են Միխիթարեան Հարք,
“ և ո՞րպէս կարող են նոքա տալ գործակալութիւն ինչ ըն-
“ դունելոյ զայս գրամ։ Եթէ տուեալ իցեն նոքա ինչ կա-
“ րողութիւն ընդունելոյ, մեայ որոշել՝ թէ արդեօք անձն
“ այն որ ունի զայն կարողութիւն՝ ունի՞ իրաւունս թէ ոչ. և
“ այս որոշելի է յետ ստուգելոյ՝ թէ ո՞վ են Միխիթարեան
“ Հարք, և ո՞րպէս տան կարողութիւն ինչ։

“ Յաղագս ծախուցն՝ իմ կարծիք են, զի ամիրայանեալն
“ ունի իրաւունս զտանել զծախս իւր։ Ամիրայանքն քան
“ ծանօթ էին այս ամենայն կարողութեանց յառաջ քան
“ զմտանել նոցա ի զայն, և ամիրայանքն վարեալ են ընդ
“ ամիրայանելոյն իբրեւ ընդ օրինաւոր գործակալի։ Ոչ ինչ
“ արտաքոյ է նա, բան մերումն ծանօթութեան, զոր պարտ
“ իցէ համարել պարտաւելի. այլ զնորին հակառակն, արտ-
“ քոյ է նա որ ինչ միանգամ արժանի է յոյժ զոհութեան,
“ և զգաստաբար Միաբանութեանն, զոր ամիրայանացն միայ-
“ նակ նպատակն էր յաղագուն։

“ Ոչ կարծեմ ես թէ դրամագլխոյ ողորմութեան անկանիցի
“ ծախքն. այլ ուրեմն եթէ դրամագլուխն ողորմութեան ոչ
“ կրեսցէ զծախսն, ամիրայանքն պարտին։

«Իմ կարծիք են՝ զի ամբաստանքն պարտին հաստատանել
«ամբաստանելոյն զծախս նորա։

ՆԱԽԱԳԻԾ ՎՃՌԻՑՆ

«Յայտ առնեմք, զի գումարն 275,000 աքոյ ռուփոյ,
«հանդերձ յաւելեալ ի վերայ վաշխուն, մասն ասացեալ
«գումարի 470,000 աքոյ ռուփոյ, հանդերձ վաշխուն, այժմ
«եղելոյ ի պահանջ դատիս, պատկանելի է պիտոյից ողոր-
«մութեանն որ ի վերջերորդ հաստատեալ կտակի Սամուէլ
«Մկրտիչ Մուրատեանի, ի փառս խնդրոյս յիշատակելոյ
«և պատուիրելոյ ի հաստատել։ Եւ յանձն առնեմք վարժա-
«պետի օրինացն տեղեկանալ և ծանուցանել, թէ ո՞յք ցեղն
«նշանակեալք և կարդեալքն յասացեալ կտակագրէն ի կատ-
«կի իւրում իրրեւ Հայ կրօնաւորք Վենետկոյ, կամ Մխի-
«թարեան Հարք. և արդեօք կարելիցե՞ն նոքա զինչ և որպի-
«սի ժողով ընկերութեան կամ Միաբանութեան՝ կարող
«լսան օրինաց Վենետկոյ՝ առնուլ ասացուածս յաւանդ,
«վասն դիտաւորութեան գործոց ողորմութեան. և եթէ
«այսպէս, ո՛րպէս լսան օրինաց և լսան սովորութեան ընկե-
«րութեան իւրեանց կարող են տալ օրինաւոր և գործունեայ
«յեռկարս ընդունելութեան և մուրհակս ազատութեան
«վասն զինչ և իցէ դրամոյ հատուցելոյ նոցա սակս այսպիսի
«ինչ աւանդի. և վարժապետն օրինաց ազատ լիցի յառաջ
«բերել զինչ և իցէ մասնաւոր պարագայս վերաբերեալս
«առ այսպիսի քննութիւն, հանդերձ կարծեօք իւրովք
«զայնմանէ։

«Եւ առ ի լսել եւս կարողացուցանել զվարժապետն օրի-
«նաց առնել զասացեալ քննութիւնս, երկոքին կողմանքն
«յառաջ բերցեն առաջի նորա երդմամբ զամենայն յեռկարս
«դաշանց, գրուածս, թուղթս, հատատս, և հաշուեցիրս՝

“ որք ի ձեռս իւրեանց կամ յիշխանութեան են և պատկանին
“ իրաց խնդրոյս . և ասացեալ երկոքին կողմանքն քննեսցին
“ ի ներքոյ երդման հարցափորձակք , որպէս վարժապետն
“ օրինաց հրամայեսցէ ։

“ Եւ Ատեանս դարձեալ հրամայէ և վճռէ , զի վարժա-
“ պետն օրինաց որոշեսցէ զծախս ամբաստանեալ Սարգսի
“ Թէոդորեան յայս դատ մինչեւ ցթուական վճռոյս . և զի
“ յորժամ որոշեսցի այն , հաստատեսցի յամբաստանացն ասա-
“ ցեալ ամբաստանելոյն Սարգսի Թէոդորեան , կամ վարչի
“ դատի նորա ։ Եւ Ատեանս դարձեալ հրամայէ և վճռէ , զի
“ վարժապետն օրինաց նոյնպէս որոշեսցէ զծախս ամբաստա-
“ նեալ ընդհանրական փաստաբանին յայս դատ մինչեւ
“ ցթուական վճռոյս . և զի յորժամ որոշեսցի այն և գու-
“ մար նորին ստուգեսցի ի ստորեւ վճռոյս , ստորագրութեամբ
“ միոյ ի դատաւորաց Ատենիս , հաստատեսցի ի դրամագլխոյն եղե-
“ լոյ ի պահանջ դատիս , առանց ճշտատ իրաւանց ասացեալ
“ ամբաստանացն , յորժամ այս դատ յառաջ եկեսցէ վասն
“ այլ եւս կարգաւորութեանց , ի պնդել թէ գումար նորին
“ պարտի անկանել ի վերայ այնքան ասացեալ դրամագլխոյ
“ պատկանելոյ գործոյ ողորմութեան ։ Պահին այլ եւս կար-
“ գաւորութիւնք մինչեւ ասցէ վարժապետն օրինաց զիւրն
“ տեղեկութիւն ։ ”

ԳԼՈՒԽ ԻԸ.

Ազգեցութիւն վՃռոյ բարձրագոյն Ատենին ի Մոսրատեանս. — Խնդակցութիւնք բարեկամաց ընդ Հ. Սարգսի Թէոդորեան. — Հրատարակումն վՃռոյն ի լրագիրս Մատրաստոյ՝ հանդերձ հանուրոտ արձանագրութեամբ դատին. — Աշխատութիւն Հ. Սարգսի առ առաջնորդ Միսրանոցեանն. — Թուղթ Պ. Լազարովչի առ նոյն.

Սատանին Մոսրատեանք ընդ վՃիռ անգղիական Ատենին, և մանաւանդ ընդ խիստ բանն որք ասացան առ նոսա ի դատաւորաց յԱտենի անդ, և զամօթի հարկանին յոյժ յոյժ, մինչեւ չհամարձակեալ յերեսս հայել ուրուք՝ ամաչարեն եկանել արտաքս յատենէ անտի կորագլուխ և դառնացեալ ոգւով. նա զի և տեսանեն՝ զի տուաւ վՃիռն այն անվրէպ ի նմին ամսեան և ի նմին աւուր ամսոյն՝ յորում հրատարակեալ էին նոքա ամաւ միով յառաջ զանիրաւ յայտարարութիւն իւրեանց՝ ի խափանել զվաճառումն մուրհակաց։

Նոյնպէս և կուսակիցք նոցա՝ որք ժամ մի յառաջ ինքնադատ վՃիռ հատանէին և վայ գլխոյ Հ. Սարգսի Թէոդորեան կարդային, վրիպեալ ի կարծիս իւրեանց, և ի բանս յանդգնութեանն իւրեանց խայտառակեալք՝ եկանեն և նոքա անտի մի առ մի կորանոք։ Իսկ Հ. Սարգիս առանձնացեալ ի բնակութիւն իւր՝ աղօթս առ Աստուած մատուցանէ ի ժամուն, խնդրելով ինքանէ զի որ ինչ հաճոյ էր կամաց նորա և բարի ազգի իւրում՝ այն լիցի։

Մինչդեռ նա յայն խորհուրդ և ի պաղատանս կայր՝ և ահա հատանէ առ նա յատենէ անտի Պ. Պօղոս Լազարովիչ, և ասէ նմա զլուր աւետեաց յաղթութեան նորա ի դատաստանի. հատանեն անտի հետ զհետէ և այլք ոմանք ի բարեկամաց նորին, Պ. Պ. Աբրահամ Ազատեար, Յովհաննէս Եկեղեցի-

ման և Յարութիւն Յակոբ. և խնդակից լինին նմա՝ ասելով; «Որ ուրեմն արդարութիւնն Աստուծոյ պաշտպանեաց «պաշտպանողիդ իրաւանց աղքատաց իւրոց, և յաւել քեզ «փառս առաջի ազգաց օտարաց։» Զայս ասացեալ հանրու-բեն ընդ նմա, և ամենեքեան առ հասարակ գոհանան զարդա-բութենէն Աստուծոյ։

Ինքին աւուր գնայ Հ. Սարգիս առ փաստաբանն Սալէճ շնորհակալիս մատուցանել նմա վասն աշխատութեան նորա յԱռենի ի խօսել և ի պաշտպանել զիրաւունս աղքատաց ազգին իւրոյ։ Տեսեալ զնա փաստաբանին ասէ; Որպէս «եմ յոյժ ընդ յաղթութիւն քո ի դատին։» Եւ այլ ոչ եւս յիշէ բնաւ զնախընթաց աւուր առաջարկութիւն իւր, և ոչ Հ. Սարգիս առնէ ինչ յիշատակութիւն զայնմանէ, զի մի ամաչեցուցէ զնա։

Ելեալ Հ. Սարգսի անտի՝ գնայ առ վարիչ դատին իւրոյ Կօրտոն, մատուցանել և նմա շնորհակալիս ընդ աշխատու-թեան նորա ի գործն։ Յիշեցուցանէ նմա Կօրտոն, զնախընթաց աւուր առաջարկութիւն Սալէճի և ծիծաղի ընդ այն-քանի ներկայ էր նա անդ և չհաւանէր բնաւ ընդ խորհուրդ նորա, թէպէտ և չասէր ինչ յոյժն՝ ակն ածեալ ի Սալէճէ, այլ ի ծածուկ ակնարկէր նմա չգինջանել առաջարկութեան նորա, վասն զի զոլով ընդ յաղթութիւնն Հ. Սարգսի, միան-գամայն և երկնչելով՝ զի մի դադարեցի չահ իւր ի դադարել խնդրոյն։ Եւ ի զովել Կօրտոնի զարդարութիւն օրինաց իւ-բեանց և զանաչառութիւն դատաւորացն ի դատաստանի, ասէ ցնա Հ. Սարգիս թէ «Ցանկալի է ինձ և արժան իսկ «համարիմ ունել զկենդանագիր նախագահ դատաւորին՝ «Փալմերի, և գնել զայն ի դպրատանն Մուրատի իբրև «յիշատակ անաչառ առն ի խնդիրն յայն գործոյն ազգա-«մութեան։»

Ասէ ցնա Կօրտոն; «Զարձան ուն այնորիկ պարտ է կանգ-«նել ի Մուրատեան դպրատան, որոյ ազգով չափ աշխա-«տութեամբն հանեալ ի ձեռաց անիրաւաց իրաւունք որբ և «ազգատ ճանկանց ազգին իւրոյ։»

Ի վաղիւ անդր վճիռ Ատենին որ վասն խնդրոյ Մուրատեանց և Հ. Սարգսի հրատարակի յամենայն լրաթուղթս Մասրատու, զոր ընթերցեալ ամենեցուն՝ դոլին յոյժ զարդարութիւն Ատենին. զնոյն և առանձինն տպագրել տայ Պ. Պօղոս Լազարովիչ և առաքէ յԵրոպա և յայլ կողմանս։ Իսկ Հ. Սարգիս յետ այնր յաղթութեան ծանուցեալ լինի նա ամենայն Անդրիացւոց եղելոց ի Մասրատ, և Հնդկաց։

Խնացեալ Հ. Սարգսի թէ կայ պատրաստ նաև մի գնալ ի Լոնդոն, զրէ թուղթ վաղվաղակի՝ ծանուցանելով Միաբանութեան իւրում զլուր յաղթութեանն ի դատաստանի ողորմութեամբն Աստուծոյ, և առաքէ միանգամայն զվճիռ բարձրագոյն Ատենին և զպայմանս դատաւորաց որ ինքեանք զի հաստատեցէ զայն Միաբանութիւնն վաւերական վկայութիւնք և առաքեցէ առ նա փութով որչափ հնարաւոր էր։ Եւ այս օրինակ է զրոյն.

„ Ատուածապատիւ և Գերապայծառ Տեառն մերոյ Սուքիասայ Արքեպիսկոպոսի և ընդհանրական Արքայի ծընողական աջահամբոյր։

„ Ահա զյաղթութեանն տեսարանեմ ձեզ լուր, և զբարեյաջող եղելս իրացս, զոր աղօթիւք Հաւարակութեանս և աղքատաց աղդիս շնորհեաց մեզ Աստուած ի 24 մարտի տարւոյս, յաւուր նախատօնակի հրաշափառ աւետման ամենօրհնեալ կուսին։

„ Արդարեւ շնորհացն Աստուծոյ և ողորմութեան նորին միայն պարտիմք տալ զյաղթութիւնս զայս և զյաջողութիւն, և ասել ըստ մարգարէին Դաւթի; „ Մի մեզ Տէր մի՛ մեզ, „ այլ անուան քում տուր զփառս վասն ողորմութեան և „ ճշմարտութեան քոյ։ „ Քանզի եթէ որ ի սկզբանէ անտի և այսր զամենայն անցս գործոյս մանր քննեացէ, ապարէն յայտնապէս տեսանէ զանօրէնութիւն վերին տեսչութեան յամենայնի ի գործս յայս։

«Այլ թէ գանի և զորպիսի բանս խօսեցան դատաւորքն յատենի անդ լու ի լու աշխարհախառմբ բազմութեան, և թէ զինչ վճիռ նոցուն դատիս, ահա զհամառօտութիւն նոցին, ըստ ներելոյ օրինաց տեղւոյս, գտանէք ի լրաթուղթ քաղաքիս զոր ծրարեմ ի սմին։ Զհամառօտութիւն նոցին ըստ ներելոյ օրինաց տեղւոյս ասացի, քանզի են և այլ բազում բանք զոր դատաւորքն նախանձայոյզ ոգւով և ի Ջերմութեամբ խօսեցան ընդդէմ Մուրատեանց, զոր չներեն օրէնք տեղւոյս ի տիպ արձանագրեցանել. քանզի սպառ սպառ անուանարկութիւն և գլխովին քանդումն լինէր տան նոցա, թէ և արդէն իսկ քանդեալ է։

«Ի բանից անտի դատաւորաց զքանի մի եւեթ յիշատակեցից ասա, զորս բազումք ականջք իսկ իւրեանց լուեալ են ի բերանոյ նոցա. զի ասացեալ են նոքա՝ թէ «Մուրա-«տեանք անիրաւութեամբ առաջարկեալ են Մխիթարեան «գործակալին աւանդել զմուրհակն ի ձեռս Համարակալին, «յանուն կուակակատարաց և գործակալի Միաբանութեանն. «քանզի ի պատահել մահ գործակալին, մուրհակքն անցա-«նէին ի ձեռս կուակակատարացն, և Մխիթարեան միաբա-«նութիւնն միայր պարտական ազգին, տուեալ գոլով նորա «կուակակատարաց դիր լիուլի ազատութեան։» —

«Եւ թէ «Յառանձին կարծիսն՝ զոր կուակագիրն ծրա-«բեալ ասէ ի կուակի իւրում, և զորմէ կուակակատարքն «հառնեն ինչ յիշատակութիւն, բազում ինչ ի նպաստ «Մխիթարեան Միաբանութեան կարծեն լինել։» Եւ թէ «Բովանդակ արարք Մուրատեանց խարեբայի և գողոյ գործք «են։» Եւ թէ «Մուրատեանք ի բոլոր արկին զՀ. Սարգիս «Թէոդորեան, այլ նա իրրեւ ոսկի մաքուր եկ անտի,» և այլն և այլն։

«Թէպէտ և բովանդակ բանք դատաւորացն, որպէս ասացի, ի տիպ ոչ արձանացան, սակայն բերանոյ ի բերան ընդ քաղաքն ամենայն լի՛ և լի՛ ծաւալեցան։ Ոչ ոք արդեաւ է նոցա, չիք ոք որում ցաւեցէ վասն նոցա, այլ ամենեքեան առ հասարակ միաբերան ասեն՝ թէ յիրաւի պատժեցան, որ-

ժանուպէս դատապարտք եղեն յանդիմանութեանց, վասն ապիրատ գնայիցն որովք վարեցան ընդ Մխիթարեան վարդապետն, և ընդ տառապեալ և եղկելի մօր իւրեանց . . .

« Այժմ շինչեալտառքն յերկրէ՝ ոչ միայն նշաւակեալ վրիպեցան իսնոսի յուսոյ անսի իւրեանց, այլ և ահիւ մեծաւ ատգնապին վասն վաշխի դրամագլխոյ հրատակին զոր պահանջեմ ինոցանէ, և զոր Աստեանս տացէ նոցա հատուցանել անշուշտ. և այս ոչ վայրապար, այլ իրաւամբք, քանզի արժանն ձգեաց զնոսա յայս տագնապ . . .

« Բայց գլուխ չարին այն է ապաքէն, զի ներքին խռովութիւն նոցա և ատելութիւն ընդ միմեանս օր ըստ օրէ առաւելեալ տատկանան, մանաւանդ յետ մեծի յաղթութեանս. քանզի զմիմեանս պատճառեալ՝ զչարիսն ամենայն և զիլեանն ի միմեանս կրթեն . . . ասկայն հատարակ արարին զոր ինչ արարին, վասն այնորիկ և երկոքին զոյգ չարչարին ըստ գործոց իւրեանց .

« Իսկ զկորագլուխ կարկումն բանարկու արանց համախոհից Մուրատեանց՝ ոչ կարեմ պատմել, որք են քանի մի սինէքորք վարատեալ ազգիս...չար խրատուք Մուրատեանց, և զրգիռ անմիտ ձեռնարկութեան նոցա, որոց ի դէպ դայ բան իմաստնոյն Սողոմոնի՝ թէ « Օրհնեալ է միայն որով « եղեւ արդարութիւն, և ձեռագործն անիծեալ, ինքն և որ « արար զնա . » Արդարեւ վախճան գործոց նոցա օրհնեալ է, զի հատատեցան իրաւունք ազգաստաց ազգիս. բայց գործելիքն և գործք նոցա առ հատարակ անիծեալ. զի չարք են ինքեանք և գործք իւրեանց չարութեան . . .

« Նոյնպէս ոչ կարեմ պատմել չուրախութիւն բարեկամացն արդարութեան, որոց գլխաւորքն են Պ. Պ. Աբրահամ Աղանուր, Պօղոս Լազարովիչ, Յովհաննէս Եէհրիման, և այլն .

« Կարեւորագոյնն ի ժամուս այս է ի ծանուցանել Արհիապատուութեանդ. ուշ եղեալ՝ մանր քննել զրանս համառօտ վճռոյ Աստենիս զոր ծրարեմ ի թղթիս, զձեռագիրն, որ փոքր ինչ ընդարձակ է քան զտպագիրն, իսկ զընդարձակն տպահանեալ ի դիւանատանէն Աստենիս առաքեցից ի վանս .

«Ըստ խորհրդոյ Հիւպատոսիդ Անգղիացւոց հոգայեալ առաքեալքիդ ինձ այսր գլուխս, հաստատութեամբ միոյ կամ երկու Անգղիացւոց առ ծանուցելոց ։ Թէպէտ և ես ակն ունիմ զի յառաջ քան զհասանել այսր հաստատութեան, բաւականացեալ Աստուծոյ ընդ տուեալ հաստատութիւնս՝ վճարեցէ զրանն, և դարձուցէ ինձ զաւանդեալ մուրհակն, զոր վաճառեալ՝ անցուցից վաղվաղակի զարծաթն ի վանս Աստուծոյ ։

«Բազում խոնարհութեամբ և կաթողին սիրով ողջոյն մատուցանեմ յարգոյապատիւ համօրէն Հարց և եղբարց սրբոյ կրօնիս և ծնամ միշտ

«Արհիապատուութեանդ ձերում

«Ի Մատրաս. 30 ապրիլ 1828.

«Նուաստ ծառայ

«Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈՐԻՐԵԱՆ.»

Դրէ Բուղթ և Պ. Պօղոս Լազարովիչ առ Գերապայծառ Սուքիաս Սոմալ, ընդ այս յաղթութիւն, օրինակ զայս.

«Աստուածարեալ և Գերապայծառ Տեառն Տեառն Սուքիասայ Արհիեպիսկոպոսի և ընդհանրական Արբայի խոնարհական աջահամբոյր ։

«Ի հրաշափառ ուռեր ոտնի Աստուծոյ Ամենարհնեալ կուսին աւետարանեմ Արհիապատուութեան ձերում և Յարգոյապատիւ համօրէն Հարց սրբոյ ուխտիդ զամենայնիսիկ ելս գաղթն մերոյ յաղագս հրաւակին ողորմութեան ։ Քանզի ի 24 ամսոյս վճռեցաւ այն՝ բոլորովին ի նպաստս որբ և աղքատ մանկանց Ազգիս և Մեծապատիւ Հասարակութեանդ, և Վերապատուելի Հ. Սարգիս վարդապետն մեր իբրեւ ոսկի

մաքուր երեւեցաւ յաչս բարձրագոյն Ատենիս։ Իսկ . . . Մուրատեանք արժանապատիւ վերատեսութեամբ . . . ի պատուեցան։

«Մինչեւ ցարդ եղեալ ծախք օրինաց յերկուց կողմանց, զոր ոչ պակաս կարծեմ քան զ80,000 ռուբլի, այսինքն 200,000 ֆրանք, վճռեաց Ատեանն զի զբովանդակն Մուրատեանք ի քսակէ իւրեանց հատուցին, և մնացեալ դրամ հրամայեցին աւանդեալ ի դանձատանն՝ առաքեցի ձեռամբ օրինաւոր գործակալին առ Միսրանութիւնդ։

«Այսչափ ի ժամուս շատ լիցի. զմանրամասն պատմութիւնն գրեցից ապա, ծրարելով ի նմա զօրինակ վճռոյ Ատենին։

«Յանձնելով զիս ի մաքրափայլ աղօթս ձեր,

«Մնամ Ձերումդ Արհիապատուութեան

«Ի Մարաս. 25 մարտ. 1829.

«Ամենախոնարհ ծառայ
«և հաւատարիմ բարեկամ
«Պ. Պ. ԼԱԶԱՐՈՎԻՉ.»

ԳԼՈՒԽ ԻԲ.

Օրինակ նորոյ գրոյն գործակալութեան յղեալոյ առ Հ. Սարգիս ի Մխիթարեանսն ի 22 դեկտեմբերի 1828. — Պատասխանի Հ. Սարգսի առ առաջնորդն, յորում և գրի զերկիւղ Մխիթարեանցն իդուտ վարելոյ ընդդէմ Մոռատեանց. — Վասն ժապեռին օրինաց չհաւանելն բուռական գնաւորս հասեալս ի Վենետիկ. — Վկայութիւն և միջնորդութիւնք Հ. Լուսիի Փափուշչին կրօնաւորին.

Յետ առուրց ինչ, յամենայն մայիսի 1829, հասանեն նամակներ ի Վենետիկ առ Հ. Սարգիս գրեալ ի Գերապայծառ Սուքիաս Սոմալէ, հանդերձ ապագրեալ դաշնագրովքն և հին և նոր վաւերականն գրովք գործակալութեան. և այս օրինակ է թղթոյն.

« Վերապատուելի Տեառն Հ. Սարգսի վարդապետի խնդալ,

« Վենետիկ. 15 դեկտ. 1828.

« Ընկալայ զգրեալդ ի 20 յուլիսի, և ուրախ եղաք ընդ ազատիլ քո ի բանտէ, և ընդ հակառակն տրտմութիւն յոյժ եղեւ մեզ ընդ անակնկալ փոխումն Անտա տիկնոջ, զոր Տէր հանգուցէ յարքայութեանն . . . Ոչ ինչ երկրայիմք զի զթերին մայրական խնամոյ նորա լցցէ դուստր նորա բարեպաշտ տիկին Մարիա Թէրէզա, առ որ արժան էր գրել վերթարութիւն, այլ առ այժմ դու ինքն բերանով վերթարեաջիր զնա իբրեւ ի մէնջ. Ընդ հանգուցեալ Տիկին մօրն և յիշատակ նորա հանապազօր լինի ի պատարագի, վասն երկոցն և երանելոյն կենաց.

«Գալով արդ յիրս հրիտակին, բարւոք արարեալ ես ցուցանել Ատենին՝ թէ յայնմ շահ ինչ ոչ է մեր, այլ պարտք խնդրելոյ զիրաւունս որբոց աղքատաց, որում ինքն դատաւորն լիցի վրէժխնդիր. և եթէ զառկոսին եւս կամիցի պահանջել յետ իրաւախոհութեանն յամին 1827, ի մարտի 26, որ հաճոյ եղեւ մեզ, ինքն գիտէ, և արասցէ զարդարն. վասն որոյ յաւելումք յղել քեզ և զերրորդ օրինակ գրոյ գործակցութեանդ որ տուաւ քեզ յամին 1824, ի մարտի 23, որ և նորոգեցաւ յինէն յամին 1825, ի 6 նոյեմբերի։

«Բաց յայտմանէ արժան դատեցաք տալ քեզ միւս եւս գիր գործակցութեան ստորագրեալ յամենայն առաջակայից և յինէն, և վաւերացեալ ստորագրութեամբ Անդրկացւոց Հիւպատոս որ ի Վենետիկ, վասն զդուշութեան, զի դուցէ առյապայս պիտոյ լիցի սա ի հեռաւոր աշխարհիդ։

«Յաւելումք յղել և զօրինակս գործակցութեան որ տուաւն ինձ և քեզ յամին 1817, ի 15 յունիսի, հանդերձ օրինակաւ միարան թղթոյ հաստատութեանս։

«Մանաւանդ ի գրոյդ, զի Անն տիկին թողեալ է մեզ ի կտակին 24,000 ռուբի, զոր զօրութեամբ նախկին գրոյ գործակցութեանդ, զորոյ և զերրորդ օրինակն յղեմք արդ, և այժմու նորոգ գրոյ գործակցութեանդ, ունիցիս իշխանութիւն պահանջել ի կտակակատարացն, և յղել առ մեզ։

«Մնալով

«Հայրութեանդ

«Աղօթարար ծառայ

«ՍՈՒՐԻՈՒՍ ՍՈՄԱԼ,

«Արքեպիսկոպոս և Արբայ.»

«Յ. Գ. Վառերականքն խնդրեալք ի քէն ահա կատարեցան ի 22 դեկտեմբերի և յղեմք։»

ԳԻՐ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

«Յայտ առնեմ ամենեցուն զի ես Սուրբս վարդապետս
«Սամուէլս Արքեպիսկոպոս Սիւնեաց և ընդհանրական
«Արբայ և Աւագնորդ Մխիթարեան միաբանութեան արբոյն
«Ղազարու ի Վենետիկ, որ ըստ օրինաց և կանոնաց Միա-
«բանութեանս մերոյ ունիմ անսահման իշխանութիւն ի վե-
«րայ ժամանակաւոր և հոգեւոր իրաց Միաբանութեանն,
«հաստատեմ և կարգեմ և ասելին վաւերականաւ անուա-
«նեմ զՎերապատուելի Հայր Սարգիս վարդապետն թ. որ
«մի է յանդամոց Միաբանութեանս, և կայ այժմ ի Սա-
«ղաս Հնդկաց, գործակալ իմ և հաճարէն Միխիթարեան
«միաբանութեան արբոյն Ղազարու ի Վենետիկ, զի յանուն
«իմ և Միաբանութեան իմոյ կարող լիցի պահանջել, հաս-
«տատել և ընդունել ի ձեռաց կուսակալատարաց հանգու-
«ցեալ Պարոն Սամուէլի Մկրտչի Սուրատեան վաճառակա-
«նի ի Սուրատ, զհրամանն ըստ վերոգրեալ հաստատման
«կուսակի տացեալ Պարոն Սամուէլի Մկրտչի Սուրատեան,
«զոր ելիցէ վասն հիմնարկելոյ զդպրոց ի գաղխարակու-
«թիւն որ և ազգաս մանկանց յազգէն Հայոց, խորհրդով
«և ձեռամբ միանձանց Հայոց Վենետկոյ, ըստ որում յիշա-
«տակի ի նախասացեալ կուսակին, և Հայ միանձունքն յիշա-
«տակեալք ինձ՝ են վանականքն արբոյն Ղազարու, որոց
«ես եմ գլուխ և աւագնորդ, որպէս վերագոյնն ասա-
«ցաք։

«Դարձեալ տամ իշխանութիւն նմին մերոյ Գործակալիս
«խորհելոյ և խօսելոյ ընդ կուսակալատարացն վասն հիմնար-
«կութեան դպրատանն, որպէս նմին պատշաճ թուեցի, և
«առնուլ զհրամանն բովանդակ կամ զմասն ինչ նորա յա-
«նուն իմ և միաբանութեան իմոյ. ապա մուրհակ ընդունել-

«լոյ նայն գործակալն իմ և միաբանութեան իմոյ որպէս
«պատշաճ գտանցի. նոյնպէս կարողացի հաստատել յա-
«նուն իմ և Միաբանութեան իմոյ զամենայն գաչն և զամե-
«նայն իրաւախոհութիւն արարեալ յառաջագոյն ի նմին
«գործակալէն մերմէ ընդ կաթուղիկոսարան ամենեցին, կամ
«ընդ ոմանս ի նոցանէ՝ վասն ասացեալ հրիտակիս կամ
«բովանդակարար և կամ ըստ մասին, կամ վերատին իրա-
«ւախոհ լինել յանուն իմ և յանուն Միաբանութեանս ընդ
«կաթուղիկոսարանն վասն բովանդակ հրիտակին կամ մա-
«սին ինչ նորա։

«Գրաձեալ յանուն իմ և բովանդակ Միաբանութեանս
«եղցէ յԱռեանն զիրաւոր ի Մատրա նոյն վերոյասա-
«ցեալ Գործակալն մեր դատ վարել ընդ կաթուղիկոսա-
«բացն, կամ պաշտպան լինել յառենի ընդդէմ նոցին
«կաթուղիկոսարաց ի ծագել հակառակութեան իրիք վասն
«հրիտակին, կամ տոկոսաց նորա կամ մասին ինչ այնո-
«ցիկ, եթէ յառաջ և եթէ զկնի, և կարգեսցէ և կազմեսցէ
«զամենայն այնպէս՝ որպէս եթէ Առաջնորդ Միաբանու-
«թեանս անդ լինէի, որչափ ինչ կարգաւորութեան պէտք
«իցեն վասն հրիտակին։

«Եւ որպէս զի զայս ամենայն իշխանութիւն զիւրաւ կա-
«րասցէ ի գլուխ հանել ասացեալ Գործակալն մեր, տամ և
«զայս իշխանութիւն, զի կարող լիցի իւր գործակիցս ըստ
«կարեւորութեան պիտոյիցն հաստատել, և յանձնել նոցա
«զգործս իւրեանց որպէս պատշաճ համարի, և գրաձեալ
«ըստ պիտոյից ժամանակին առնուլ ի նոցանէ զիշխանու-
«թիւնն առեալ, ըստ որում հարկաւոր թուեսցի նմա։
«Վասն այնորիկ տամ և շնորհեմ իշխանութիւն գործակա-
«ցիս մերոյ և գործակցի կամ գործակցաց նորա առնելոյ
«զամենայն այնպէս՝ որպէս թէ ես անձամբ անդր գոլով, ես
«ինքն առնէի. և այսու վաւերականաւս հաստատեմ զամե-
«նայն զոր օրինաք գործիցեն ի բանիս յայսմիկ Գործակալն
«մեր և գործակիցն նորա։ Եւ ի հաստատութիւն այսր ամե-
«նայնի ես ինքն Արքեպիսկոպոս Առաջնորդս ձեռամբ իմով

„ տորոգրեմ , և կնքաւս իմով հաստատեմ զայս վաւերական
„ յայսմ աւուր քսան և երկու դեկտեմբերի , յամին հազար
„ ութ հարիւր քսան և ութ ։

„ Ի Վենետիկ , ի վանս սրբոյն Ղազարու .

„ ի 22 դեկտ . 1828 .

„ ՍՈՒՔԻԱՍ ՍՈՄԱԼ.

„ Արքեպիսկոպոս Միքենաց և ընդհանրական Արբուց
„ Մխիթարեան միաբանութեան Սրբոյն Ղազարու
„ ի Վենետիկ .

ԿՆԻՔ

„ Հ. ՄԿՐՏԻՉ Վ. ԱԻԳԵՐԵԱՆ , Արոռակալ .
„ Հ. ՂՈՒԿԱՍ Վ. ԻՆՃԻՃԵԱՆ , Առաջիկայ .
„ Հ. ՄԱՏԹԷՈՍ Վ. ՄԱՂԱՔԵԱՆ , Առաջիկայ .
„ Հ. ՄԱՆՈՒԷԼ Վ. ՋԱԽՋԱԽԵԱՆ , Առաջիկայ .
„ Հ. ՅԱԿՈՎԲՈՍ Վ. ՃԵԼԱԼԵԱՆ , Առաջիկայ .
„ Հ. ԱՐՍԷՆ ԱՆԹԻՄՈՍԵԱՆ .

„ Հանդերձ Կնքովք իբրեանց և Հաստատակաց .

„ Հ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԻԳԵՐԵԱՆ , Քարտուղար .

„ Հաստատեալ յԱնդղիացւոց Հիւպատոսէն որ ի Վեն-
„ տիկ , և յայլ երկու Անդղիացւոց ։ ”

Առնէ պատասխանի Հ. Սարգիս վերոյիշեալ թղթոց Գերապայծառ Սուրբասայ Սամալի, հանդերձ այլ կարեւոր գիտելիք և ազգաբարութեամբ, օրինակ զայս.

« Ամենապատիւ և Գերապայծառ Տեառն մերոյ Սուրբասայ Արհիեպիսկոպոսի և ընդհանրական Արբայի ծնրադրական աջահամբոյր ։

« Երկոքին նամակաձի Արհիապատուութեանդ, գրեալ ի 4 Նոյեմբերի և ի 20 դեկտեմբերի անցելոյն, հանդերձ ապագիր դաշնագրովք և հին և նոր վաւերականաւք՝ հասին այսր ի ձեռս իմ ի 19 մայիսի տարւոյս ։ Բարւոք էիք արարեալ՝ զկարեւորսն եւեթ ծանուցանել ի թուղթս. զնոյն զգուշութիւն կարեւոր է առնել և ի թուղթս որ առ այլս, թէպէտ և քարեկամք իցեն նոքա ։ . . .

« Վաղվաղակի եռու թարգմանել զնորոգ առաքեալ վաւերականն ի լեզու Անգլիացւոց. և ցուցեալ զայն վարչի դատս Կօրտոնի՝ հաճեցաւ նա ընդ այն յոյժ իբրեւ բաւական ։ Իսկ զապագիր դաշնագիրն ոչ կամեցաւ նա հրատարակել ի ժամուս, մինչեւ տեսանել զելս իրացն ի կողմանէ վարժապետի օրինաց. վասն որոյ ոչ գիտեմք՝ թէ պայմանք դաշանցս զինի վիճայս մեացին արդեօք հաստատուն ։ Զայս հաւատի գիտեմք ի վճռոյ Ատենիս, զի Մուրատեանք ասին անպատեհ վարուց իբրեանց՝ կորուսին ի սպառ զիրաւունս խառնելոյ ի գործ հրատակին, և զի Միաբանութիւնս միայն ունի իշխանութիւն պահանջելոյ զիրաւունս որոց և աղքատաց ազգիս և ի գործ դնել զայն ։

« Երկու եղեն պատճառք, վասն որոյ Ատեանն մերժեաց զՄուրատեանս խառնելոյ ի գործն ազգութեան. առաջինն՝ կամեալ յապաղումն ի կատարել զհրատակն ազգութեան. երկրորդն՝ անյիշատակութիւն կարգադրութեանն՝ զոր կատարեալ էր յոյժ անպէս ասէ ծրարեալ ի կտակի իւրում ։ Իսկ վերջին գնացք նոցա որով վարեցան ընդ քա՝ բոլորովին ասե-

լի և թշնամի ազգին զնոսա յաչս Ասենին և ամենեցուն։ Խայտառակեալք յամենայնի՝ ոչ գիտեն զինչ խօսին՝ քանզի մերթ անիծանեն փառատրանից խրեանց, որ սիրալ առաջնորդեցին նոցա, և մերթ արհամարհեն զքննութեամբ Ասենին, որպէս թէ չիցէ դատաւորաց ուղիղ հասկացեալ զմիտս հրիտակին ողորմութեան. վասն այնորիկ ասեն, թէ յորժամ անցցեն յԵւրոպ, անդ ունին վերատին յառաջ բերել զիրընդիրս. ուր առանց երկրայութեան եղծցեն զկտակն, և զհրիտակն ողորմութեան ի պէտս իւրեանց դարձուցեն։

Ա. Այս են արտաքին բանք նոցա. բայց ներքինն նոցա է յուսահատութիւն և անհնարին ոխութիւն ընդ միմեանս, պատճառելով և անիծանելով զմիմեանս թշուառանան օր ըստ օրէ. և յայն ահմանն հասեալ է թշնամութիւն նոցա, մինչև յերեսս իսկ ոչ կարեն տեսանել զմիմեանս. վասն այնորիկ իրաւարարս կացուցեալ են ի մէջի՝ առարկել զվէճ իւրեանց. ասկայն և այն անհնարին, քանզի կրտսերն պահանջէ յերիցուէն իբրեւ 500,000 ռուբի, զմեռցեալ ժառանգութիւն ի տատուածոց հօր իւրոյ. իսկ երէցն 200,000 ռուբոյ պարտապան ասէ զնա. բայց ճշմարտութեամբ՝ երկոքին եւս պարտապան են այլոց, այսինքն որք և աղքատ մանկանց Ադդիս։

Ա. Արհիւսպատուութիւնդ յամենայն թուղթս իւր ազգ առնէ ինձ՝ թէ Հատարակութիւնս չունի կամս և ոչ արծաթ դատ վարելոյ. և յիրաւի. բայց յորժամ այլք ի զուր չարախօսեն և բռնի զնա ի դատ վարեն, զինչ պարտի առնել. չառնե՞լ պատասխանի։— Ո՞չ ապաքէն լռութեամբն իւրով պարտաւոր զինքն ցուցանէ. թողալ զիրաւունս վասն տկար ինչ ծախսոց, և այն ոչ ի քսակէ իւրմէ, — արդարև գրամանդոլն կորուսանէ, մանաւանդ ի խնդիրս հրիտակի ողորմութեան, վասն որոյ ունի նա արդէն ի ձեռս իւր բաւական արծաթ ի պաշտպանել զիրաւունս աղքատաց ազգին, որոյ անտանութիւն թէպէտ և ակամայ, ասկայն յանձն է նմա, և յորդորացուցանել զինքն ի դատաստանէ յետադայեցն. և զի չէ պարտ քնաւ երկնչել՝ թէ կարող են նոքա հանել զայն ի ձեռաց Միսրանութեանս. քանզի այս զրութիւն անհնարին է։

«Բայց զիցուք թէ հնարաւոր եւս իցէ. սակայն, ըստ օրինաց ամենայն ազգաց, կարող է Միսրանութիւնս ոչ միայն զրուվանդակ ծախսն, այլ և 5 առ 100 իրրեւ վարձ աշխատութեան իւրոյ հանել յարծաթոյ անտի զոր ունի այժմ ի ձեռին իւրում. քանզի մեք ոչ ինքնակոչ գնացեալ եմք, այլ նոքա զմեզ հրաւիրեալ են, և ոչ մեք բնաւ ինչ պահանջեալ եմք ի նոցանէ, այլ նոքա կամաւ իւրեանց տուեալ են, և այնչափ որչափ հաճեալ են. և այն ոչ ի պարգեւ մեզ, այլ ի հատուցումն հրիտակի աղքատաց տղին։

«Զայս՝ առ ի հանդարտեցուցանել զմիտս ձեր յիշատակեցի առաւ. քանզի իրն ըստ ինքեան պարզ է և յայտնի ամենեցուն, մանաւանդ յորժամ ընթեռնուցուք զվճիռ բարձրագոյն Աստենիս։

«Արդ՝ վարժապետն օրինաց խնդրէ ի մէնջ հաւատս վասն ծանօթութեան իւրոյ, յորս խնդրէ ակամաստս վանացս և Միսրանութեանս, որոց զմին որոշեցաք զՅովհաննէս Եէհրիմեան. իսկ վասն երկրորդին, մինչդեռ խորհէաք, ահա բան վերին Տեսչութեան հասին այսր ի 16 յունիսի երկու Փարուչին կրօնաւորք յԻտալիոյ, յորոց մին էր Վենետկեցի, զոր և խնդրէաք իսկ. անուն նորա Հ. Գեորգ Լուիճի։ Գնացեալ իմ յայց նորա՝ հարցի, և լուայ ի նմանէ բազում բանս գովութեան զՄիսրանութենէս. և յետ քանի մի աւուրց ածի զնա առ վարիչ դասիս Կօրսոն, որ հարցեալ տեղեկացաւ ի նմանէ բազում ինչ ի նպաստ խնդրոյս. ունի հարցանել և տեղեկանալ զվանացս և վարժապետն օրինաց բան ժամանակին։ . . .

«Մեք որպէս ասացի, վկայիւք և հաւատիւք ակն ունիմք աւարտել զբանն, բայց խնդրեմ զի և դուք այսր զձերն հոգաջիք բան ժամանակին, բան որում պահանջէ վճիռ Աստենիս. իսկ զայլ կարեւորն ծանուցեալ է ձեզ Գարան Լաշարովիչ։

«Կարեւոր համարիմ ծանուցանել ձեզ և զայս, զի եթէ ոչ շատացի վարժապետն օրինաց ընդ ասոյ տուեալ ծանօթութիւնս վկայիցս, յայնժամ գրեալ առ Հիւպատն Անգղի-

ուցուց այդր՝ խնդրեացէ ինձմանէ ծանօթութիւն զվանացս և զՄիաբանութենէս ըստ բաւականին. վասն որոյ բարւոք լինի զի Միաբանութիւնս կանխեալ յառաջագոյն առաքեացէ ինձ զայն, հաստատութեամբ Փաղաքապետիդ, Պատրիարքիդ և Հիւպատոսիդ։

«Լուայ զի Սէր Ճ. Ռիկէթ երրորդ դատաւորն Անգլիս յայց եկեալ է երբեմն ի վանս մեր, և զայս ասացեալ է վարժապետին օրինաց, և զի ընթերցեալ է ինքն զհամառօտ անդգիարէն պատմութիւն Մխիթարայ։

«Մնամ

«Արհիապատուութեանդ ձերում

«Ի Մարսա. 11 յուլիս. 1828.

«Նուաստ ծառայ

«Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՎՈՒՐԵԱՆ.»

Թէպէտ և վարիչ դատին Կօրսոն աւելորդ համարի զվկայութիւնն զայն որ ի Վենետկոյ, կարծելով թէ դիւրութեամբ իրն վճարի, այսինքն վկայութեամբք եղելոցն ի Մարսա, այլ սխալի նա ի կարծիսն իւր, փորձելով զայն բազում և ընդունայն աշխատութեամբ և ծախքաւ. քանզի կոչին առաջի վարժապետի օրինաց և գնային ի նեմնել Պ. Պ. Արրոհամ Ազանուր և Պօղոս Լազարովիչ, որք թէպէտ չէին ծանօթ բոլոր Մխիթարեան միաբանութեան Վենետկոյ, այլ ծանօթ էին մասնաւորաց ոմանց, և ունէին թղթակցութիւն ընդ Գերապայծառ Սուքիասոյ Սմիրլի. նա և Հայր Լուիճի քահանային կրօնաւորն, և Յովհաննէս Եէհրխանն, որք տեսեալ էին զվանս արդոյն Ղազարու ի Վենետիկ և ծանօթ Միաբանութեանն։

Զարեքին այսոքիկ վկայք կոչին և գնային ի նեմնել, կրկին և կրկին, և ասն բաւական վկայութիւն, սակայն չբաւականանայ այնու վարժապետն օրինաց, այլ խնդրէ, առաւել քան

հաստատութիւն, մինչեւ յուսահատիլ և նորին իսկ վարչի դատին Կորոնի, և դնել ի մոի՝ թէ այլ ազգ չվճարի այն՝ բայց եթէ ի ձեռն գործակալաց, այսինքն յերկուց կողմանց երկու երկու ապա ի Մատրասէ ի Վենետիկ առաքել, զի ականատես և ականջալուր ամենայնի եղեալ՝ բերցեն անտի տեղեկութիւն առ վարժապետն օրինաց, և հաստատութիւն պայմանաց Ասենին յորոշումն խնդրոյն։ Տե՛ս թէ քանի՛ ժամանակ և ո՛րչափ ծախք պիտոյ էին առ այն։

Դադարեցուցանէ Հ. Սարգիս զվարիչ դատին զԿորոնի ի խորհրդոյ անտի, ասելով համբերել սակաւիկ ինչ՝ մինչեւ եկեսցէ ակնկալեալն ի նմանէ վկայութիւն ի Վենետկոյ. թէպէտ և յապաղէ այն շատ, զամս իրրեւ երկուս. վասն որոյ և ասդնապի Հ. Սարգիս, և գրէ կրկին և կրկին ի Վենետիկ առ Միսրանութիւնն՝ փութալ առաքել զայն վկայութիւն, հանդերձ այլ տեղեկութեամբք զհանգամանաց Մուրատեանց և զկրաց խնդրոյս, օրինակ զայս.

«Արհիապատիւ և Գերապայծառ Տեառն մերոյ Սուքիասայ Արքեպիսկոպոսի և ընդհանրական Արբայի ծերագրական աջահամբոյր։

«Որպէս ծանուցի ի նախընթաց թուղթս իմ, թէ լսեալ վճռոյ Ասենիս՝ պահանջէ ի մէնջ վարժապետն օրինաց հաստատութիւն ծանօթութեան իւրոյ, վկայս ականատես վանացս և տեղեակս կարգաց Միսրանութեանս, և թէ յաղագս այսորիկ որոշեցաք զՀ. Լուիճի քահանային կրօնաւորն, զՅովհաննէս Եէհրիման և զՊօղոս Լազարովիչ, և թէ զինչ ինչ հարցմանութիւնք եղեն վարժապետի օրինաց ընդ նոսա զպայմանաց վճռոյն։

«Արդ յետ հարցանելոյ վարժապետի օրինաց զվերոյ ասացեալ վկայսն, ծանոյց ինձ ի ձեռն վարչի դատիս Կորոնի՝ թէ չեն բաւական առեալ տեղեկութիւնք նոցա, այլ թէ պէտքն են այլ վկայք քաջածանօթք Միսրանութեանս և կարգաց նորին։ Արամ՝ եառ պատասխանի՝ թէ ասա ի Հնդիկս ըստ

խոցանէ չունիմ այլ վկայս . և եթէ խնդրէ նա առաւել ևս տեղեկութիւն, զայն ի Վենետկոյ միայն կարէ գտանել . վասն այսորիկ ևս վկայական վարժապետն օրինաց, զի ելցէ հրամանն յԱտենէս՝ բերել տալ ի Վենետկոյ ձեռամբ հմուտ և հաւատարիմ արանց տեղեկութիւն զՄիսրանութենէս ։

« Այս խնդիր առաջարկեցաւ նախագահ դատաւորին առանձինն ի սենեկի դատաստանարանին, և խնդրեցաւ ի նմանէ հրաման բերել տալ այսր հաստատութիւն ։ Թէպէտ և ընդհանրական փոստարանն Նորթըն շատ ընդդէմ եկաց առաջարկութեանն, շնորհուկս իմն առնելով Մուրատեանց՝ վասն կաշառաց և վարձուց անիրաւութեան, սակայն արհամարհեալ դատաւորին զրանս նորա՝ ասաց թէ օրէն է Ատենին տալ հրամանն, որպէս և տուեալ է բազում անգամ ։ Բայց ոչ հաճեցաւ ընդ վկայականն վարժապետին օրինաց . քանզի ոչ ասէր նա յայտնապէս թէ չեն բաւական տուեալ տեղեկութիւնքն, այլ թուի թէ կարեւոր է տալ բերել ի Վենետկոյ այլ հաստատութիւն . վասն որոյ ասաց դատաւորն ուղղել նախ զվկայականն, և ապա յառաջ բերել ի հրապարակական Ատենի՝ յանդիման երից դատաւորաց միանգամայն ։

« Եւ զի թէպէտ ասացի ես վարչի դատս՝ թէ արդէն գրեալ և խնդրեալ եմ ի վանաց զպահանջեալն յԱտենէ տեղեկութիւն, սակայն ասաց նա՝ թէ չեն ընդունելի Ատենին այնպիսի հաստատութիւնք, քանզի պարտին, ասէ, լինել հաստատեալ երդմամբ յայլոց վկայից, և այլն ։ Բայց ես կարծեմ և ակն ունիմ զի շատացի ընդ այն Ատեանն, եթէ բաւ պատշաճի և բաւ ժամանակին առաքեցին ինձ ։

« Իսկ Մուրատեանք և խորհրդակիցք նոցա համարին՝ թէ չկարեմք մեք հանել ի ձեռաց Տէրութեանս զառանդեալ մասն գրամս յլիոց ողորմութեանն . և եթէ կարասցուք ևս, լիցի այն յետ բազում ամաց և աշխատութեան և ծախուց . այսու ևեթ անուն յուսալ միխիթարին ։ . . .

« Երթևեկեալ Պ. Յովհաննու Մուրատայ առ Գոխուչին կրօնաւորն՝ շարախօսէ զինէն, որպէս թէ ես խլեմ պատ-

հաւ մաշելոյ նոցա յօրէնս և վառանելոյ անդ զինչս սրբոց և աղքատաց ազգիս, պահանջելով ի նոցանէ զվաշխն դրամագլխոյ ողորմութեան, զմիանգամ թողեալն ի մէնջ օրինաւոր դաշամբ և մուրհակաւ ապառութեան. և եթէ պարտաւորեցին նոքա յօրինացն հատուցանել զվաշխն դրամագլխոյն, պարտին նոքա այնուհետեւ քանդիլ և մուրացիկ լինել. վասն այսորիկ ընդդիմացին նոքա մինչեւ ցվերջին շունչն։

«Միամիտ կրօնաւորքն թէպէտ և լուեալ և տեղեկացեալ էին յինէն և ի բազմաց զեղս զատիս, բայց ոչ ծանօթ գոլով Անգղիացւոց լեզուին՝ յոր հրատարակեալ կայ վճիռ Առենիս, հաւատան սակաւիկ ինչ բանից չարախօսին. վասն այսորիկ եկն առ իս Հ. Լուսինի և խրատ ետ ինձ շատանալ ընդ դրամագլուխն, երկեցուցանելով յանիրաւ ծախուց օրինաց և յանասոյգ ելից էրաց։ Բայց յորժամ ցուցի ես նմա զառութիւն չարախօսին, մեկնելով զվճիռ Առենիս ի ձեռն Յովհաննու Շէհրիմանի, զարմացեալ նորա՝ ոչ կարէր հաւատալ եթէ այնչափ և այնպիսի ստախօս է Պ. Յովհաննէս Մուրատ, քանզի ասաց՝ թէ բազում երկիւղածութիւն ցուցեալ է նոքա ի բանս հրամակին ողորմութեան, և զդէպ շատ ընդ առաջին անխոհեմ գնացս իւր. և թէ ցանկայ միջնորդութեամբ դիրսն վճարել։

«Միծաղեալ Յովհաննու Շէհրիմանի ընդ բանս նորա՝ ասաց։ «Զինչ կայ, Վերապատուելի Հայր, միջնորդութեամբ և «խաղաղութեամբ վճարելոյ, քանզի զամենայն ինչ արդէն «Առենին քննեաց և վճարեաց յօգուտ և ի փառս Մխի- «թարեան միաբանութեան, ի վերա և ի նախատինս Մուրա- «տեանց։» Ապա խրատ ետ նմա չհաւատալ բանից Մուրատեանց և չխառնիլ բնաւ ի գործս նոցա։ Զնոյն խրատ թէպէտ և ետ ետուն նմա և ասացի՝ թէ ի զուր աշխատի նա, բայց տեսեալ թէ բարեմիտ կրօնաւորն յաւայր միջնորդութեամբ խրով ինչ մի վճարել, թոյլ ետու նմա։

«Գնացեալ նորա առ Յովհաննէս Մուրատ հաւանեցուցանել զնա՝ թէ ամենայն կամարտանք նորա զՄխիթարեանսն «ասեն վաշխի դրամագլխոյ հրամակին զվերին անհիմն են։

Շատացեալ նորա ընդ բանս կրօնաւորին՝ խոստանայ վախճան տալ վաղվաղակի ամենայն հակառակութեանց և վիճոյ, և վասն այսորիկ զրով ասէ ծանուցանել ինձ զմիտս իւր։

«Յետ երկուց աւուրց, յամսեան Հոկտեմբերի 1829, առա-
«քեաց ինձ Յովհաննէս Մուրատ ձեռամբ Հօրն Լուսինի զպայ-
«մանս առաջարկութեան իւրոյ և կարծեցեալ խաղաղութեան,
«յօրինեալ ի լեզու անդղիարէն, և առանց սորագրութեան,
«և պատուիրեալ նմա զգուշացուցանել զիս չցուցանել զայն
«վարչի դատիս Կօրոնի, այլ փոխարանիս միայն՝ Սամէնի,
«զոր կաշառաք կուրացուցեալ էր յառաջագոյն, իբրև ընծայ
«տուեալ նմա ինչ ինչ։ Եւ ի հարցանել ցնա կրօնաւորին
«զմիտս պայմանացն, ասացեալ է ցէնա, թէ նոյն է զոր արդէն
«ասացեալ էր նմա։ Եւ իբրև մեկնեաց նմա զայն Յովհաննէս
«Եէհրիման, զարմացաւ նա և ամաչեաց յոյժ, և բարկացաւ
«ընդ խարէութիւն նորա և ասաց՝ թէ արդարև վճարեալ է
«ի նոցանէ չարութիւն։ . . . Ապա թելադրեաց ինձ առնել
«պատասխանի առաջարկութեանն, յանդիմանելով զդնայս
«նորա. բայց ես արհամարհեալ ոչ արարի բնաւ պատասխա-
«նի բանից նորա։

«Ի վաղիւ անդր գնայ Յովհաննէս Մուրատ առ Հ. Լուսինի
«իմանալ զելս հնարից իւրոց։ Ասէ ցնա Հ. Լուսին. «Ցիրա-
«ւի, Պարոն, ես ոչ կարծէի թէ այդպէս յամօթ առնէիր
«զիս. քանզի զմինչ խօսեցար ընդ իս և խոստացար, և զմինչ
«զրով առաջարկեցեր Հ. Սարգսի Թէոդորեան։» Ընդունեալ նորա ի բանից Հ. Լուսինի, ասէ թէ պարտական ենն-
«քա պահպանել զիրաւունս որդւոց իւրեանց։ Ասէ ցնա Հայր
Լուսին համարձակ; «Ներեսջիր ինձ, Պարոն, այդ ժա-
«ռանգութիւն ոչ ձեզ և ոչ որդւոց ձերոց թողեալ է ի հան-
«գուցեալ կոստանդին, այլ որ և աղքատ մանկանց ազգին
«Հայոց, ի ձեռն Մխիթարեան միաբանութեան, որում առ-
«կանի պահպանութիւն և գործադրութիւն հրամայեալ որդ-
«մութեան։»

«Զայրացեալ Յովհաննես Մուրատայ ընդ համարձակու-
թիւն Հօրն Լուսինի, բազում ինչ յիմարութեամբ բար-

բանջի և ապառնայ։ Տեսեալ այլ Քարտուչին կրօնաւորաց զայլանգամ դէմս նորա՝ ակնարկեն Հօրն Լուիճի կարճել զգրոյցն. և ապա հրաժարեալ Յովհաննու Մուրատի ինամ-նի գնայ խոժոռութեամբ յոյժ։

«Եկն Հ. Լուիճի առ իս և պատմեաց զխօսակցութիւնն որ ընդ Յովհաննու Մուրատայ, և խրատ եւ ինձ փութալ առաքել այդր ի վանս զպատճէն պայմանացն և զգուշացուցանել զՄխարանութիւնս ի խարէութեանց նորա. քանզի Յովհան-նէս Մուրատ ասացեալ է նմա թէ առաքեալ իցէ արդէն զայն առաջարկութիւն իւր այդր ի Վենետիկ, և մնայ պատասխանուոյ նորին։ Այլ իմ նախ չհաւատալով բանիցն, և երկրորդ՝ ոչ ինչ երկուանալով ընդ անխռովութիւն մտաց Հաստատակուութեանս, վասն որոյ ոչ ինչ փոյթ կալայ յառաջագոյն առաքել ձեզ զայն, այլ յետոյ, և զայն առ յիշատակէ շարութեան և անմտութեան նոցին։ . . .

«Գրեալն յԱրհիապատիս Հօրէդ յելս անցեալ յունուարի, եհաս ի ձեռս իմ յելս օգոստոսի նորին, և անդիտանամ զպատճառս յապաղմանն։ . . . Այժմ չկամիմ ես ասել ինչ վասն գրուածոց ձերոց և հետեւանաց նոցին, մինչեւ շատից զլուր ժամանելոյ այդր վճռոյ Ատենիս. միայն առ ի հանդարտութիւն մտաց ձերոց ասեմ, թէ զամենայն ինչ ըստ հաճութեան ձերոյ և յօգուտ Հաստատութեանս արարեալ եմ և արարից միշտ։ . . .

«Մնամ

«Արհիապատութեանդ ձերում

«Ի Մարտս. 11 յունուարի. 1830.

«Ներաստ ծառայ

«Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈՂՈՐՆԵԱՆ.»

ԳԼՈՒԽ ԻԳ.

Պ. Յովհաննէս Մուրատեան շանուոյ դպրաձեռոյ հուշանկագրագրոյն զՀ. Սարգիս յիրաւախոհութիւն. — Ուղանդիսն դատ Հայր Սարգսի ընդդէմ Մուրատեանց իբրեւ կուսակրաստրաց մօրն իւրեանց Ալինայի տիկնոջ. — Իրաւունք Հ. Սարգսի ծանուցեալ ի դատաւորաց. — Պատմութիւն տոլոյ նոցա զվիճանն ի նոսա Մուրատեանց. — Վկայութիւնք այլոց զիրացս հանդերձ զանազան տեղեկութիւնքն. — Վճիռ Մուրատեանց եղբարց ընդ միմեանս.

Զկնի վերոյիշեալ վճռոյ բարձրագոյն Ատենին՝ մինչեւ ցհատատութիւն պայմանաց նորին չդադարի Պ. Յովհաննէս Մուրատեան ի հնարից իւրոց. քանզի, որպէս վերագոյն յիշեցաք, զրէ թուղթ մի անգլերէն առ Հ. Սարգիս Թէոդորեան յամենայն հոկտեմբերի 1829, և առաքէ զայն ձեռամբ Հօրն Լուիսի, յորում ցուցանէ զդժուարութիւն և զանհնարութիւն զադարելոյ վիճոյն, հատատութիւն առնլոյ պայմանայն պահանջելոյ յԱտենէն, և վնասուց ազգաւոց ապագիս որ ի ծախս օրինաց. վասն որոյ յորդորէ, համոզէ և երկեցուցանէ միանգամայն՝ զալ վերատին յիրաւախոհութիւն ընդ նոսա և զադարեցուցանել զվէճն, յետս կոչելով յԱտենէն յերկոցունց կողմանց զանդիրն.

Այսմ գրուածոյ նորա ոչ արժան համարի Հ. Սարգիս Թէոդորեան առնել պատասխանի, այլ միայն զօրինակ նորին հատատել տայ ձեռամբ Հ. Լուիսի և առաքէ առ Միխաէլեանութիւն իւր, հանդերձ կարեւոր ազդարարութեամբ. քանզի լուեալ էր թէ Պ. Յովհաննէս Մուրատեան գրեալ էր թուղթ առ Միխաէլեանութիւն իւր ի համոզել զնոսա.

Յառաջ քան զվերոյիշեալ թուղթն գրեալ առ Գերապայծառ Սուքիաս Սամոյ յամենայն յուլիսի 1829, վասն Հայր

Սարգիս Թէոդորեան զառանձին դառ իւր ընդդէմ Մուրատեան եղբարց՝ իբրեւ կուակակատարաց հանգուցեալ մօր իւրեանց տիկնոջ Աննայի. և զայն ոչ այնչափ յուսով դառնելոյ ի նոցանէ զիրաւունս իւր, զգրով խոստացեալ 100,000 ռուբին, — քանզի արդէն հրատարակեալ էին նոքա՝ թէ մայր իւրեանց չունի աւելի ստացուածս քան զ13,000 ռուբի, — որչափ առ ի յայտնել զխորամանկ հնարս և զխարդախութիւն նոցա ի կուակի մօր իւրեանց, և արդարացուցանել զանձն իւր ի զրպարտութենէ անտի նոցա, զոր եդեալ էին ի կուակի անդ։ Եւ հասանէ իսկ այնմ թէպէտ և բազում նեղութեամբ և ծախիւք դատաստանի. քանզի ամենայն վկայք միտրան վկայեն յԱտենի անդ երդմամբ՝ թէ լուեալ էին նոքա ականջօք իւրեանց ի բերանոյ Աննայի տիկնոջ զի ստացեալ էր նոցա՝ թէ ինքն կամաւ իւրով խոստացեալ էր նմա զայն գումար արծաթոյ, և թէ պարտապան համարի զանձն իւր հատուցանել նմա զայն, և թէ տէր է ինքն արծաթոյ իւրում, և որդիք իւր չունին իշխանութիւն խափանել զնա անտի։ Եւ վկայքն էին Պ. Աբրահամ Աղանուր, Պարոն Յովհաննէս Շէհրիմեան և Պ. Պօղոս Լազարովիչ։

Նոյնպէս և զխորամանդ հնարս որդւոյ նորա ի տախել զմայր իւրեանց յեւս կոչել զդրաւոր խոստումն իւր առ Հայր Սարգիս, ասելով թէ ակամայ տուեալ էր նմա զայն խոստումն, և զխարդախութիւն նոցա ի կուակի անդ մօր իւրեանց, և զյաւս խղճի մտաց նորա, և զմիջնորդութիւն ուրումն յաղգայնոց, և զխոստումն նորա 40,000 ռուբիով աւարտելոյ զրանն, զպարտս ասեմ նորա։ Զայս ամենայն վկայեն յերկուց կողմանց վկայքն միտրան և երդմամբ, մինչեւ ցուցանել դատաւորաց զհաւանութիւն իւրեանց ի նպաստ Հ. Սարգսի Թէոդորեան տալ զվճիռ իւրեանց, ասելով, թէ ի դնել նորա զոս իւր ի Մատրաս պարտապան լինի տիկնին Աննա կատարել զխոստումն իւր և հատուցանել նմա զարծաթն։

Բայց յիշատակեցին ապա յԱտենի անդ միտրանք Մուրատեանց զգաշնագիրն որ ի մէջ Յովհաննու Մուրատայ և Հ. Սարգսի Թէոդորեան հաստատեալ ի Լոնդոն ի 15 մայիս

ով 1824, թէ «Մի խօսեցի և մի գործեցէ ինչ Հ. Սարգիս «Թէոդորեան ի Մատրաս ընդ Եղուարդայ Մուրատի վասն «բանի հրիտակին ողորմութեան՝ մինչեւ գնացէ անդր «Պ. Յովհաննէս Մուրատ, և Հ. Սարգիս Թէոդորեան խոս- «տանայ պահել զպայմանն զայն, բայց պարտաւորէ զՅով- «հաննէս Մուրատ զի և նա խոստացի հատուցանել զամե- «նայն ծախս նորա, եթէ զանապարհորդութեանց իւրոց և «եթէ ցորչափ հարկ լիցի և համարեցի նա կալ ի Մատրաս «առ նոսա և կամ առանձինն բնակել։»

Ընդ այն գաշնագիր տարակուսին գատաւորքն և փոխեն զկարծիս իւրեանց՝ ասելով թէ «Զկարէ մի և նոյն անձն զո- «գուտ երկուց գաշանց միանգամայն գտանել, ըստ օրինաց «Անգղիացւոց. քանզի յառաջնում գաշին, ասեն ընդ «տիկնոջ Աննայի ենթադրի և փակի ամենայն ծախք նորա. «զի բաւական գումար արծաթոյ ընդունի նա անտի, որ «ընտ զամենայն պէտս նորա. ապա թուի նոցա՝ թէ Հայր «Սարգիս կամ տարակուսի ընդ լրումն գաշնադրին, և կամ «առ ոչինչ համարի նա զայն. որովհետեւ ամք չորք անցեալ «են ի վերայ գաշնագրին այնորիկ, և ի միջոցի անդ հնար «էր վախճանել տիկնոջն Աննայի և միթարութեան իւրում «չհասանել. և Հ. Սարգիս չյուսայր զարծաթն զայն ի ձեռս «բերել, վասն այսորիկ ի նորոգ գաշն մտեալ է ընդ Յովհան- «նու Մուրատեան, վասն որոյ և կարծեն ինքեանք՝ թէ «շատ լիցի նմա ընկալեալ 16,000 ռուբին ի տիկին Աննայէ «ի կենդանութեան նորին, և 8,000 ռուբի թողեալ նմա «ի հրիտակի իւրում. այլ և զայլ ծախս իւր առցէ նա «ի Յովհաննէ Մուրատայ՝ ըստ վերջին գաշնագրութեան «իւրեանց։»

Զայս ասեն գատաւորքն յԱտենի անդ և որոշեն զինդիրն, և դադարեցուցանեն զվէճն որ ընդդէմ կոտակակատարաց տիկնոջն Աննայի։

Թէպէտ և փատաբանեն Հ. Սարգսի Սավէճ, զորոյ զգրով և զյաջողակ կարծիսն ունէր յառաջագոյն ի ձեռին, և վարիչ գտի նորա Կորոսն՝ որ միշտ պնդէր թէ իրաւունս ունի նա

ընդունել զարծաթն զայն, յորդորէին զնա բողոքել յԵրոպ յԱտեան թագաւորին Անգղիացւոց, այլ նա չառնու յանձն՝ ասելով թէ բաւական է արդարանալն իւր ի զրպարտութենէ անոի նոցա, յայտ առնելով աշխարհի զճշմարտութիւն իրին, որոյ այն է մի միայն նպատակ, և ոչ թէ արծաթ ինոցանէ գտանել. այն զի և գիտէր յառաջագոյն զյայտարարութիւն նոցա՝ թէ մայր իւրեանց չունի առաւել քան զ13,000 ռուբլոյ ստացուածս, զոր և զայն երդմամբ հաստատեն առ ի զբրկել զՀ. Սարգիս յԿրաւացի պահանջանաց իւրոց։

Դարձեալ և ակնածէ ի դատաւորացն և չբողոքէ յԵրոպ ընդդէմ վճռոյ նոցա, զի մի ասկս առանձին շահու իւրոյ զնաս ինչ լցի հասարակաց շահուն, իրաւանց ասեմ ազգաստաց ազգին, որոց խնդիրն անաւարտ էր տակաւին յԱտենի անդ. և կամեալ զորոշմանէ դատաւորացն այնոցիկ։ . . . Վասն այսր ամենայնի չկամի անաւալ խորհրդոյ փաստաբանին և վարչի դատին իւրոյ, և չբողոքէ յԵրոպ, յԱտեան թագաւորին Անգղիացւոց։

Թողից յիշել ասա զկարծիսն հասարակաց ընդ այն վճիռ նոցա, որ և հաւանականապոյն էր արդեաք, քանզի կարծեցին բաղումք՝ թէ իբրեւ կաշառ ինչ համարեցան դատաւորքն զդումարն զայն արծաթոյ խոստացելոյ Հ. Սարգսի, զի թողցէ Մուրատեանց զվաշխ դրամագլխոյ հրամայիլն ողորմութեան, վասն որոյ և զրկեցին զնա յիրաւանց անտի իւրոց, զի պահանջեցէ այնուհետեւ զիրաւունս ազգաստաց ազգին՝ առանց ինչ խնայութեան և ակնածութեան, գիտելով զմատուցումն գանգատագրոյ նորա ընդդէմ նոցին ի պահանջել զվաշխ դրամագլխոյ հրամայիլն։

Աւուրք ինչ յառաջ քան զյանդիման լինել խնդրոյն այնոցիկ յԱտենի անդ, գրէ Յովհաննէս Մուրատ տոմսակ մի առ Հ. Սարգիս ձեռամբ վարչի դատին իւրոյ Վայվաշի, և ծանուցանէ նմա՝ թէ պատրաստ է ինքն, ըստ պայմանաց դաշինն որ իմէջ իւրեանց ի Լոնտոն՝ հատուցանել նմա զծախս ճանապարհին դառնալոյ յԵրոպ։ Զայս առնէ նա ըստ խորհրդոյ փաստաբանին իւրոյ որպէս զի մի՛ ճեռացէ Հ. Սարգսի

իրաւունք այլ ինչ պահանջելոյ ի նոցանէ, բաւ արուամ համարին ապա և դատաւորք զինդիրն զայն և որոշեն զպահանջեալն նորա. որով յայտ է թէ չկարելին նոքա այլով պատճառաւ և հնարիւք ազատել ի պահանջմանց նորա։ . . . Եւ հաստատութիւն բանիցս, ահա գրաւոր վկայութիւն Պարոն Աբրահամու Ազանուրի և Պօղոսի Լազարեանցի երդմամբք վկայեցեալ ի խնդիրս յայս.

« Առաւաժարեալ և Գերապայծառ Տեառն Տեառն Սուքիասայ Արհիեպիսկոպոսի և ընդհանրական Արբայի խոնարհական աջահամբոյր։

« Զեզեռնագործութիւնն Մարտիրոսանց և զազէտալի մահն եղելոյն մեր նոցա փոքր ի շատէ ծանուցեալ եմ Արհիապատուութեան ձերում. իսկ զրաքանչիւրն ապիրատութիւն և զանհնարին չարութիւնն անկար է ինձ ի գիր ունցուցանել, քանզի անպատմելի և անօրինակ են. բայց զմերարարքն ձեզ պարտ անձին համարիմ ծանուցանել, զի մոերիմ բարեկամ եմ Միսրանութեանդ, մանաւանդ թէ ճշմարտութեանն։

« Արդ՝ յամին 1820, յամսեանն յունուարի, հանդուցեալ տիկին Աննա Մարտա տուեալ է Վերապատուելի Հ. Սարգիս վարդապետի գիր ինչ գաղտնի և խոստմանց, զի եթէ գարձցի նա ի Մարտաս վասն հոգեւոր վարիչութեան նորա, տացէ նմա 30,000 հուն ի վարձ վաստակոց նորա։

« Եւ յամին 1824 յամսեանն սեպտեմբերի, իբրեւ գտանոյ վարդապետն ի Մարտաս, զկնի տակաւ ուրոյ հաստատի տիկինն զխոստումն իւր կրկին վաւերականաւք, և ի միջոցի երից ամաց հատուցանէ նմա 16,000 ռուբի, իբրեւ մասն հատուցման խոստացեալ պարտուցն. բայց ասի՝ ընծայէ նմա մատանիս ինչ իբրեւ ի նշան երախտագիտութեան, և վասն ապագայ ընդդիմութեան ի կողմանէ որդւոց իւրոց՝ հաստատէ զայն եւս գրով։

«Այս ամենայն խոստման պարտուց և ընծայատրութեան տիկնոջն Թէպէտ և որդիք նորա գիտակ էին, և ի սիրտս իւրեանց գժկամակ, սակայն առ արտաքս ոչ ինչ ցուցանէին. քանզի չարութիւն նոցա տակաւին առագաստեալ կայր, և զի մայր նոցա ի զգայութեան և ի կամս ազատութեան էր։ Բայց ի 1828, յամսեանն մարտի, իբրեւ յայտնեցաւ խորամանգութիւն նոցա յաղագս հրիտակին ողորմութեան, սկսան այնուհետեւ յանդուգն բանիւք համարձակ մերժել զմայր իւրեանց, և ի ձեռն չար խորհրդոց ընդդատել զնա յետս կոչել զխոստումն իւր և զտուչութիւնն, ասելով՝ Թէ սկսանց և բնի են խոստացեալք և տուեալք։

«Իսկ հանդուցեալ տիկինն արհամարհեալ մերժէր զառարկութիւն նոցա՝ ասելով Թէ չէ փոյթ նոցա, իւր կամքն են և տացուածք, ուր կամի տայ, և զոր ինչ ունիք տուեալ է, բարեւոր տուեալ է։ Եւ ոչ այսչափ միայն, այլ և լու ի լու ամենեցուն ասէր Թէ ինքն է պատճառ վնասուց և անպատուութեան վարդապետին, բերելով զնա յԵրուսղեմ, վասն այնորիկ զամենայն ծախս օրինայն նա ինքն հատուցանելոց է, և Թէ որդիք իւր անիրաւութիւն մեծ արարեալ են նմա. վասն որոյ անհնարին ցաւոք և դառն արտասուաք անիծանէր նոցա։

«Յայսոսիկ միտս և ի կամս էր հանդուցեալ տիկին մինչեւ 31 մայիսի 1828. բայց յետ այնորիկ իբրեւ յաղթեաց նմա տխրութիւնն, ի սաստիկ տրտմութենէն զգայութիւնք նորա Թուլացան և խելքն ցնորեցաւ, յայնժամ պատեհ գտեալ որդւոցն՝ ի ձեռն չար միջնորդաց զամենայն չարութիւն կամաց իւրեանց զանազան հնարիւք ի գործ եդին։ Քանզի նախ բռնադատեցին զխոստովանահայր նորա զհնդիկ քահանայն՝ ոչ տալ նմա արձակումն մինչեւ չիմացէ ի կամս որդւոցն փոխել զօրէնսդէտ նորա, և բան Թելադրութեան նոցա առնել պատասխանի զանգատագրոյ իւրեանց։ Երկրորդ՝ յետս կոչեցէ տիկին զխոստումն և զտուչութիւն իւր առ վարդապետն։

«Իբրեւ հրաժարի քահանայն խառնել ի գործն ասելով

թէ արտաքոյ է իւրում պաշտամունն, յայնժամ այլ հնարս ենենգութեան հնարին։ Նախ խնդրեալ առնեն մօրն զողորմելի վիճակ իւրեանց, և ապա ի վերայ բերեն՝ թէ վարդապետն զմուրհակ պարտականութեանդ գրաւեալ է վասն ծախուց նորոց գանձատարագրոյն ի պահանջել զքաջս հրիտակին ողորմութեան, և հաստատեն զայն վկայութեամբ բանտարկու համախոհից իւրեանց. և ահա, ասեն, զինուք մօր մորթին որդիքն։

«Զայս և առաւել քան զայն բանս սորչանաց և թախանձանաց լուեալ ընդարմացեալ մօրն՝ թողու այնուհետեւ զինքն բոլորովին ի կամս և ի կառավարութիւն որդւոց իւրոց. վասն որոյ ի 14 յունիսի 1828, գրեն նոքա գիր մի ի դիմաց մօր իւրեանց և առաքեն զայն առ վարդապետն ի բանտն, խնդրելով ինամնէ յետս դարձուցանել տիկնոջն զմուրհակս պարտականութեան նորա։ Իմացեալ վարդապետին զայն ինենգութենէ որդւոց նորա՝ չտայ նմա պատասխանի, մինչեւ առանցէ զելս իրացն։

«Ի նմին առաւր ըստ սովորութեանն հանդիպեցայ ես տիկնոջն. և ի հարցանել իմ ցնա զպատճառս գրութեան նորա, ձեռն ի վերայ բերանոյ եդեալ ասէ. «Մեղայ, մեղայ, սխա-«լեցայ, սխալեցայ, զինչ արարից. անիրաւ որդիքս բանտ-«դատեցին զիս, ինքեանք գրեցին և ուժով եառին ինձ առ-«բարել զայն. վասն որոյ ապաչեմ զքեզ, գնա ի կողմանէ «իմմէ առ վարդապետն և խնդրեա ի նմանէ ներողութիւն, «զի անդիտացայ, զի անխոհեմութեամբս ցաւեցուցի զնա. «մեղայ, ներեցէ ինձ։» —

«Ասեմ ցնա; «Մտից, այլ չէ բաւական. զի որպէս «զրով ցաւեցուցեալ ես զնա, նոյնպէս զրով պարտիս խնդ-«րել ի նմանէ ներումն։» —

«Հաւանեցաւ տիկինն և ասաց ինձ գնել ի վերայ թղթոյ զասացեալն իւր. և իբրեւ արարի, առաքեցաց նա զայն և եառ ինձ տանել առ վարդապետն. բայց ի վախճանի խնդրեաց յինէն չթողուլ առ վարդապետին զառաքելոյն զայն առ-սակ իւր. քանզի ասաց՝ թէ մի գուցէ որդիք իւր իմացեալ

զայն՝ բարկացին նմա։ Արարի ըստ հաճութեան և պատուիրանաց տիկնոջն. բայց վարդապետն էառ զպատճէն թղթոյն և հաստատեաց զայն վկայութիւք։

«Դադարեցին նոքա առուրս ինչ. ապա ի 24 յունիսի 1828, երբեմն առատկացաւ տկարութիւն տիկնոջն, ի 26 նորին ամսոյ, թելադրութեամբ որդւոյն միջնորդ կալեալ զՊարոն և զտիկին Աղանուրեան՝ առաքէ առ վարդապետն ի բանտն՝ իրաւախոհ լինել ընդ նմա, այսինքն աւարտել զ30,000 հունի պարտականութիւնն 30,000 ռուբլով, ասելով՝ թէ յիրաւի ըստ խոստմանն իւրում պարտական է նմա 30,000 հուն, բայց որովհետեւ այժմ որդիք իւր ասին՝ թէ շունի ինքն այնչափ ստացուածս, զիսն որոյ խնդրէ աւարտել զայն 30,000 ռուբլով, և չթողուլ զնա ընդ պարտականութեամբն մեռանել։

«Զառաջինն մերժէ վարդապետն զառաջարկութիւն իրաւախոհութեան նոցա, ասելով՝ թէ որդիք նորա անիրաւութեամբ արկեալ են զինքն ի բանտ և ի տարապարտ ծախս օրինաց, և թէ չգիտէ ինքն զեր իրացն և զծանրութիւն ծախուցն որք մնան նմա. վասն որոյ պահանջէ զիրաւունս իւր բովանդակ։ Բայց իբրեւ կարի շատ թախանձեն զնա և յիշեցուցանեն նմա զողորմելի վիճակ տիկնոջն, ի վախճանի խոնարհեալ ի կամս նոցա զինչանի առաջարկութեանն նորին, բայց գաշամբ՝ զի հաստատցէ նմա և զծախս մնալոյ նորա ատ և դառնալոյ այդր՝ իբրեւ 10,000 ռուբլի. որով լինէր ընդ ամենայն 40,000 ռուբլի։ Հաւանին նոքա ընդ այն պայման, և առեալ ի նմանէ զմուրհակ պարտականութեան տիկնոջն գառնան ի տուն իւրեանց առ տիկինն։

«Յետ երկուց աւուրց վերստին առաքեցան առ վարդապետն վերոյիշեալ միջնորդքն, ուր գտայ ես յայնժամ, ասել նմա՝ թէ տիկինն այժմ կամի տալ նմա 24,000 ռուբլի եւեթ ընդ ամենայն, և զայն իբրեւ մշտնջենաւոր պատարագիս ի բովանդակ կեանս նորա և Միաբանութեանն, և ոչ իբրեւ հատուցումն պարտուց իւրոց. քանզի ասէ, թէ այն մուրհակք պարտականութեան և ընծայից, յոչ կամաց և բրո-

նադատութեամբ են տուեալք, վասն որոյ անվաւէր և անպէտ են։

«Զայրացեալ վարդապետին ընդ անիրաւ առաջարկութիւնս նոցա և մանաւանդ ընդ անօրէն պրպարտութիւնն, պատասխանի ետ նոցա՝ թէ չընդունի ինքն զոյն առաջարկութիւն, և թէ անդրդիտական օրինաց մեայ ոյնուհետեւ որոշել զիրաւունս իւր. զայս ասացեալ՝ էառ ի ձեռաց միջնորդաց զաւանդեալ մուրհակն։

«Ի վաղիւ անդր դարձեալ թելադրութեամբ որդւոյն կոչէ տիկինն զՊ. Աղանուր առանձին և ազաչէ զնա գնալ վերրատին առ վարդապետն և խնդրել ի գիմաց իւրոց ներողութիւն, և հաւանեցուցանել զնա զիջանել առաջարկութեան նորա։ Գնայ Պ. Աղանուր առ վարդապետն և ծանուցանէ նմա զկամս տիկնոջն, և ասէ, թէ տիկին մինչեւ ցկէսն առուցեալ՝ անկենդան է, և թէ ոչ կարծէ կենդանի դառնալ զնա ի դարձին իւրում։

«Պատասխանի տայ նմա վարդապետն՝ թէ «Այժմ խնդիրն «ոչ զքանակութենէ դրամոյ է, այլ մանաւանդ զպատուոյ՝ «որ կարեւոր է քան զամենայն ինչ։ . . . Զանուն իմ, ասէ, «ազարտեալ է առաջի բազմաց, և զներումն խնդրէ ի ծա«ծուկ. այդ չէ՛ բաւական, այլ պարտ է նախ՝ զի բարձցէ «նա զդայթաղղութիւնն զոր անիրաւութեամբ առ երկիւ«ղի որդւոյն տուեալ է բազմաց, և ապա առաջարկեցէ «ինձ ինչ։» —

«Դառնայ Պ. Աղանուր ի տուն և դառնէ զտիկին յառաւել անզգայութեան, և զորդիս նորա պատուղեալ ի կատակագրութիւն մարն ի ձեռն Յովհաննու Յարութենի։ Այլ թէ քանի՛ և որպի՛ խորամանդութեամբ և նենգութեամբ հնարեն զայն կատակ, բան ակամաւոր և ակամայարար վկայից, անկարելի է ինձ յայս թուղթս զրոմանդակն նկարագրել. շա՛տ լիցի յիշեցուցանել զկիսակենդանութիւն և զանզգայութիւն տիկնոջն և զանհնարին չարութիւն որդւոյն ընդդէմ վարդապետին։

«Ի 1 յուլիսի 1828, կոչէ տատապեալ և տանջեալ ի խղճէ

մոաց տիկին զՅովհաննէս Յարութիւն առանձին և շատ աղաչէ զնա գնալ առ վարդապետն ի բանտն և խնդրել ի դիմաց իւրոց ներումն և մոռացումն ամենայն անցիցն անցելոց, և խոստանայ նմա 30,000 ռուբի ի հատուցումն ամենայն պահանջանաց նորա, առանց ինչ թէութեան և պարտականութեան պատարագաց։

«Գնայ Յովհաննէս Յարութիւն առ վարդապետն և առնէ զմիջնորդութիւն իւր ի կողմանէ տիկնոջն։ Պատասխանէ նմա վարդապետն զնոյն բանս, որպէս առ Պ. Աղանուր, թէ պահանջողութիւն իւր ոչ զքանակութենէ դրամոյ է, այլ պատուոյ. մինչև չբարձցէ, ասէ, տիկինն զգայթագղութիւնն գրով կամ առաջի վկայից, յետս կոչելով զզրպարտութիւնն և ներումն խնդրելով ինամանէ, ոչ զիջանի առաջարկութեան նորա, և եթէ հաճոյ լցէ նմա՝ զբովանդակն իսկ թողու. շատ է զի բարձցէ զգայթագղութիւնն և արբեցէ զխղճմտաց իւրոց ի վերջնում վայրկենի։ Հաւանի Յովհաննէս Յարութիւն ընդ պահանջ վարդապետին, և ասէ գնալ կոչել զՊ. Աղանուրն, զի ի միասին առարեցեն։

«Եւ մինչդեռ նա անդ առնէ զմիջնորդութիւն իւր, տագնապեալ յոյժ տիկնոջն՝ անդադար հարցանէ զնմանէ. իբրև հարցեալ իմանայ զուարթ նորա տիկին Աղանուր զպատճառ տագնապի նորա, խանդաղատեալ ասէ ցնա; «Մամայ, եթէ «կամիս՝ ես լցուցից զպարտս քո ի ժառանգութենէ անտի «զոր թողեալ ես ինձ կտակաւդ։» Յայնժամ արծարծեալ ոգի տիկնոջն, ունի զգուանաք իմն զծնօտ դստերն իւրոյ և ասէ; «Այո՝ զուարթ իմ, դու այժմ տացես, և ես ապա հատու- «ցից քեզ։» —

«Խնացեալ զայն որդեացն՝ տհաճին ասելով՝ թէ ընդէ՞ր քոյր նոցա յիւրմէ լցուցէ զպարտս նորա. զի եթէ կամք իցեն մեր իւրեանց տալ, թող ի տուցուածոց իւրոց տացէ ասեն. «Ասեն որոյ համարձակեալ տիկնոջ առաքէ զպարոն և զտի- կին Աղանուր շորրորդ անգամ առ վարդապետն առարել զպարտս իւր 40,000 ռուբով։

«Հանդիպին նոքա զհանապարհայն Յովհաննու Յարու-

թենի, և պատմեն նմա զվերջին կամս տիկնոջն, արգելու նա զնոսա յայտնել զայն վարդապետին, ասելով թէ ինքն բաւականացուցեալ է զնա 30,000 ռուբլով. մնայ ասէ ինչ ինչ թէ,ութիւն զոր պահանջէ վարդապետն՝ և վասն այնորիկ եկեալ է ինքն զի ի միասին գնացեալ աւարտեցեն զայն։

«Գնան նոքա երեքեան ի միասին առ վարդապետն ի բանտն, ուր գտայ և նա յայնժամ։ Խոստացան նոքա ի կողմանէ տիկնոջն հատուցանել 30,000 ռուբլի, ի հատուցումն ամենայն պահանջանաց նորա. հաւանեալ շատացաւ վարդապետն ընդ այն, բայց պայմանաք, նախ՝ զի տիկինն գրով կամ առաջի վկայից յեռս կոչեսցէ զամենայն բանս զրպարտութեան զոր առ երկիւղն ուղղեցն ասացեալ էր ընդդէմ վարդապետին։ Երկրորդ՝ նոյնպէս ասասցէ զպատճառ աւարտելոյն, այսինքն թէ ըստ ասելոյ արդեաց նորա չունելով այնչափ ասացուածս, վասն այնորիկ այնքանով աւարտեաց։

«Զառաջին պայմանն յօժարութեամբ յանձն էառ Յովհաննէս Յարութիւն, և յաւել եւս յինքեանէ յայտնել և յանձն առնուլ բառնալ ի կատակէ տիկնոջն, եթէ կայցէ անպատիւ ինչ յիշատակութիւն արարեալ զվարդապետէն, և փոխանակ այնր պատուով անդ յիշատակել զնմանէ. որով յայտ արարնա, թէ ի ձեռս և յիշխանութեան այլոց էր փոփոխութիւնն կատակի նորա։ Իսկ զերկրորդ պայմանն ոչ յանձն էառ, ասելով, թէ ինքն չէ լուեալ զայն ի տիկնոջէն. և ի վկայել Պարոն Աղանուրի, թէ ինքն բազում անգամ լուեալ է զայն ի բերանոյ տիկնոջն, ասաց Յովհաննէս Յարութիւն, զի Աղանուրն առանձին գրով վկայեսցէ այնմ. բայց յոչ հաւանել վարդապետին, և ի տարաժամել աւուրն՝ բանն ոչ աւարտեցաւ, այլ մնաց՝ զի գնացեալ ի միասին հատատեսցեն զայն ի տիկնոջէն, և ի վաղիւն եկեալ աւարտեսցեն։

«Դառնան նոքա ի տուն, գտանեն զտիկինն թմբրեալ իբր ի քուն, մեան զի զարթիցէ, բայց թմբրութիւն նորա թմբրութիւն մահու էր. քանզի ի վաղիւ անդր վախճանեցաւ տա-

ռապեալ տիկինն, և եթող զկնի իւր խռովութիւն և անպատուութիւն։

« Ապա հարկ եղեւ վարդապետին դիմել յօրէնս, ոչ այնչափ ի պահանջել զիրաւունս իւր, որչափ յանձնել ի բաց քերել զզրպարտութիւն զրպարտողացն։

« Զաւուրս հինգ պարապեցաւ Առնանն ի քննութիւն և յորոշումն խնդրոյն, յառաջ կոչելով զվկայսն և լսելով զփաստս փաստաբանից։

« Երեք էին պատճառք ընդդիմադրութեան նոցա։ Առաջին՝ թէ վարդապետն ոչ իրրեւ տաներէց տիկնոջն դարձեալ է ի Մատրաս, այլ իրրեւ գործակալ վասն բանի հրիտակին ողորմութեան։ Երկրորդ՝ թէ վարդապետն եկեալ ի Մատրաս դաշամբ և պայմանաւք, որ ընդ Յովհաննու Մուրատայ. այսինքն հաստատանել նմա միայն զծախս ճանապարհի նորա և զծախս ատատ մնալոյն։ Երրորդ՝ թէ հնարիւք իմն առեալ են մուրհակքն ի տիկնոջէն ի ժամանակի ատատիկ հիւանդութեան նորա։ Իրրեւ հերքեաց վարդապետն զամենայն ընդդիմադրութիւնս նոցա պատասխանեաւ իւրով և վկայիցն հաստատութեամբ, յայնժամ այլ հնարս հնարեցին նոքա, ասելով թէ մայր նոցա չունի այնչափ ինչս հաստատելոյ ըզպարտս իւր. վասն որոյ փութացեալ եռուն Առնանի զհամար ստացուածոց նորա, իրրեւ 13,000 ռուպոյ եւեթ ընդ ամենայն։

« Ի բովանդակ միջոցի քննութեան վկայից և վիճաբանութեան փաստաբանից, զրեթէ երկքին դատաւորքն միտքն ասէին՝ թէ զօրութեամբ առաջնոյ դաշնագրին, վարդապետն ընդ դնել զոտս իւր ի Մատրաս ունէր իրաւունս ընդունելոյ զ30,000 հուն. իսկ թէ նորա չէ պահանջեալ զայն մինչեւ յարդ, այն չնորհ է արարեալ։

« Նոյնպէս և վասն դաշնագրին որ ընդ Յովհաննու Մուրատայ ի Լոնդոն, ասէին՝ թէ այն է մտանաւոր ինչ դաշն վասն ծախուց միայն և ոչ վասն վաստակոց նորա։ Բայց ի վախճանի, չգիտեմք յինչ միտս, հակառակ ստացելոց իւրեանց վճիռ եռուն, զորոյ օրինակն տեսանէք ի լրագրու-

թեան քաղաքիս, զոր ծրարեմ ի թղթիս։ Թէպէտ և ընդ այն յոյժ զոհ է վարդապետն. քանզի որպէս յառաջն ասացի, ոչ էին նորա կամք և ոչ բնաւ ակնկալութիւն զտանել յանիրաւաց անտի զիրաւունս իւր, այլ միայն առ ի քերել յանձնէ իւրմէ զզրպարտութիւն զրպարտչացն, որպէս և յաջողեաց իսկ արդարութեամբն Աստուծոյ։

„Սակայն մեք և այլք առ հաստատակ զարմացեալ եմք ընդ այս անակնկալ և հակառակ վճիռս. վասն որոյ բաղումք զանազան խորհրդածութիւնս առնեն . . . . . .

. . . . . .

„Յանձնելով զիս ի մաքրարար յաղօթս ձեր,

„Մնամ Ձերումդ Արհիապատուութեան

„Ի Մատրաս. 23 օգոստոս. 1828.

„Ամենախոնարհ ծառայ

„Պ. Պ. ԼԱԶԱՐՈՎԻՉ.“

Եւ իբրեւ դարձան Մուրատեանք, մանաւանդ թէ լքան վրէժ խնդրել ի Հ. Սարգսէ, ոչուանին այնուհետեւ երկոքին եղբարքն ընդ միմեանս միմիայն մայրենի ժառանգութեանն. զի առ ի գրկել զՀ. Սարգիս յիրաւանց իւրոց՝ միաբանին նոքա հրատարակել՝ թէ մայր իւրեանց չունի առաւել քան զ13,000 ռուբլոյ սուացուածս. և իբրեւ զերծանին նոքա անտի, ոչուանի յայնժամ Պ. Յովհաննէս Մուրատ պահանջել յԵղուարդայ զհաշիւ սուացուածոց մօրն իւրեանց, և զրաժին ժառանգութեան իւրոյ անտի. և նա զքանչ տալ նմա հաշիւ՝ ասելով թէ մայր իւրեանց ի կենդանութեան իւրում պարգեւեալ է նմա զայս և զայս ինչ, իբրեւ 200,000 ռուբլոյ ինչս։ Եւ ի սասկանալ հակառակութեան ի մէջ նոցա, կամի Պ. Յովհաննէս Մուրատ յԱստուծոյ զիմել և իրաւունս խնդրել։

ի մէջ մեռեալ ոմանց յընտանեացն՝ խրատ տանելոյս՝ միջնորդութեամբ խրատարարաց որոշել զայն։ Հաւանին նոքա և ընտրեն զԻէր անուն անգղիացի վաճառական և զընկեր նորա որ ի Մատրաս. վասն այնորիկ հարկաւորի Պ. Եդուարդ Մուրատ գտանել իւր վիպայ՝ վիպել թէ մայր նորա ընծայեալ ինչ նմա բազում ինչ. և վասն այնորիկ խնդրի նա անարգարար հաշուել ընդ Հ. Սարգսի, և ապաչէ զի վիպեսցէ և նա առաջի խրատարարացն այնոցիկ։

Թէպէտ և ի բազում թախանձանաց և ի հրաւիրանաց նորա զնոյ Հ. Սարգիս անդր վիճանգամ և երկիցս, այլ չզիտէ նա զայնմանէ, բայց յերկուց ինչ ընծայից, և զայն եւս յԵդուարդոյ Մուրատայ լուեալ երբեմն։ Զշահին երկոքին եղբարքն ի միջնորդութենէ անոր խրատարարաց՝ բայց եթէ վատահամբաւութիւն առաջի ծառայից. զի բամբասեն նոքա զմիմեանս, և յայտնեն զանարգութիւն և զանիրաւութիւն բարուց միմեանց, որպէս լցի յիշատակութիւն զայսմանէ այլուր ի սմին։

ԳԼՈՒԽ ԻԳ.

Թաղեր Մխիթարեանն միաբանութեան առ Հ. Սարգիս յորում պատուիրի նմա ձեռնարկ չինել ի խնդրոյ Մոռրատեան հրիտակին. — Նոյն թղեր գրեալ և առ Պ. Լազարովիչ. — Պատճառք վնասակար և վտանգաւոր խորհրդոյն. — Տագնապ Հ. Սարգսի ընդ այն. — Զոռ Պ. Լազարովչի ի Մատրաս. — Վէճ Հ. Սարգսի ընդ վարչի գաղղի իշխոյ Կօրոսնի. — Թղեր Հ. Սարգսի զայսմ առնելեալ առ առաջնորդն իշխ.

Մինչդեռ ապատէ Հ. Սարգիս օր ըստ օրէ և բազում անհամբերութեամբ՝ ընդունել ի Վենետկոյ զվկայութիւնն վասն պայմանացն պահանջելոց Յունէն, տեսա հասանէ առ նա զիր ի վանաց յառաջնորդէ իւրմէ, հաստատեալ յառաջակայից նորին և ինքեալ հաստատեաց ինքով. յորում փոխա-

նակ գովելոյ զնա ընդ արիութիւն արտին ի գործն յայն հաստատակաց ազգին, և քաջալերելոյ զնա բանիւք մխիթարութեան, ընդ խղճիւ մտաց և ընդ տագտանօք արկանելն զնա խապտա, իբրեւ թէ զանպատեհ լինչ և զանվայել վիճակի իւրում գործեալ իցէ նա, և որպէս թէ ընդդէմ հրամանի և հրահանգաց Միաբանութեան իւրոյ՝ վարեալ իցէ զպաշտօն գործակալութեան իւրոյ ի խնդիրն յայն, և լքուցանեն զմիտս նորա ի խորհել և զձեռան ի գործել յառաւել լինչ օգուտ ազգին և ի պատիւ Միաբանութեան իւրոյ, թէպէտ և ի միջոցի անդ հնգից ամաց չորս զանազան գիրս գործակալութեան առեալ և առաքեալ էին առ նա հետ զհետէ, տալով նմա իշխանութիւն գիմել յԱտեան և զիրաւունս Միաբանութեան իւրոյ և ազգաստաց ազգին պաշտպանել և պահանջել ի Մուրատեանց։ . . .

Եւ որ մեծն է՝ զայն գիր, թէպէտ և այլով բառիւք՝ այլ նոյին իմաստիւք, ի կրկին օրինակս գրեն. զմին առ Հայր Սարգիս և զմիւսն առ Պ. Պօղոս Լազարովիչ, բայց զերկոսին եւս ի վերայ Պ. Լազարովչի առաքեն, որպէս զի մի՛ կարասցէ ասել Հ. Սարգիս թէ զայնպիսի գիր և հրաման չիցէ ընկալեալ ի Միաբանութենէ իւրմէ։ Եւ են պատճէնք թղթոցն այսոքիկ.

“ Վերապատուելի Տեառն Հ. Սարգսի վարդապետի ազ-
ջոյն սիրոյ ի Փրիատոս։

“ Ընկալաք զգիր քո ԺԸ, որ ի 23 օգոստոսի 1828, ընդ
“ զրոյ Պ. Լազարովչի և ընդ այլ թուղթս։ Բայց թուղթք
“ քո հետ զհետէ յաւելուն մեզ հոգ և կասկածանս, չգի-
“ տեմք՝ զիարդ. զի ակամայ դու և քեզ մեք յայս վիշտ
“ վտանգի անկաք, և յո՛ր վայր հասանելոց եմք յապայն։
“ Այլոց փոխխամութեամբ և արտուղի շաւղաք ոչ փոխ-
“ խիմք և ոչ դեղեւիմք ոչ ես և ոչ հասարակութիւնս ի ծա-
“ նուցեալ բարւոյն, որ ի սկզբանէ հաստատուն կայր ի խոր-

“ հուրդս մեր, զոր և ի քո կամդ և ի գործդ տեսանեմք
“ նոյնպէս լեալ մինչեւ ցայժմ, որպէս և արժանն իսկ պա-
“ հանջէր ի պաշտամանդ հաւատարմութենէ։ Վասն որոյ
“ ընդ որ հաճեցարդ և հաւանեցար զու միանգամ այդք
“ ի դիմաց մերոց, ընդ իրաւախոհութիւնն ասեմ, հաճեալ
“ եմք և մեք և հաւանեալ, և զնոյն հաստատեմք, և մինչեւ
“ ցայդ վայր զոմեղի գատիմք զոր ինչ և գործեցեր։

“ Ի դոյն կարգեալ էր և առաջինն դիր գործակալութեան
“ զոր տուեալ եմք վասն դորին. և վերջինա՝ զոր առաքեցաք
“ քեզ ի 22 դեկտեմբերի 1828։ Զի նոցին զօրութեամբ ցուց-
“ ցես այդր զպատիւ քո և զմեր, այսինքն զարդար և զճշմա-
“ րիտ գործակալութիւնդ, որով կատարեցեր զիրաւախոհու-
“ թիւնն, և զոր եղծանել հնարին հակառակորդք, և զի
“ դարձեալ նոցին զօրութեամբ հաստատել տացես յԱտենի
“ զիրաւախոհութիւնն մեր, եթէ հնար է, առանց ինչ բնաւ
“ ամենեւին այլոց խնդրոց և վիճմանց և գատից և պահանջ-
“ մանց շահուց։ Եւ անշուշտ համարիմք, թէ և զու յայդ
“ սակս միայն խնդրեիր զգիրսն գործակալութեան. վասն
“ որոյ և յուսամք և կամիմք և հրամայեմք, զի ընդհանուր
“ բանք ձեւոյ և օրինի այնր գրոյ գործակալութեան և ընդար-
“ ձակ իշխանութեան, չտայցեն պատճառս զգուշաւոր խոհե-
“ մութեան քում աւելի և այլապէս ինչ քան զյայտնի կամս
“ մեր գործելոյ այդր, կամ միջամուխ լինելոյ և շաղելոյ
“ ի յորդորելոյ այլոց բարենախանձից։

“ Ընդ այս ոչինչ յերկուանամք ամենեւին։ Բայց քանզի
“ այժմ ի վերջին թղթոցդ տեսանեմք յայտնի, զի որպէս
“ յամենայն խնդիրս գատաստանաց պատահէ, ի յուզելոյ և
“ ի խծրծելոյ հակառակորդաց՝ յայլ օտարոտի կողմանս և
“ յայլ կերպարանս ակամայ քարշին և շրջին իրքդ։ Ի կա-
“ կուծանօք և անյայտ եղիւք, մանաւանդ թէ յայտնապէս
“ վտանգաւոր կամ զէթ անհաճոյ եղիւք, զորս և զու քաջ
“ տեսանես և մեք չկամիմք յերկար մանրապատում առնել,
“ զի և չպարտիմք իսկ յայդմ ուժք համար տալ։ Ապա
“ ամէն իրի այժմ վերատին միարան հաւանութեամբ բոլոր

“ հասարակութեանս խորհեալ ծանուցանեմք քեզ զկամս մեր
“ և զոր պարտիսն այսուհետեւ գործել, իբրեւ մեկնութիւն
“ ածեալ զայս ի վերայ գրոյ գործակալութեանդ, առ ի փու-
“ թով զերծուցանելոյ զքեզ և զմեզ յամենայն խնդրոց և
“ ի դատաստանաց և յալէկոծ վարանմանց։

“ Արդ զոս ցուցեալ վաւերական գրովքդ յԱռենի զար-
“ դարութիւն գործակալութեանդ որով վճարեցաս իրաւա-
“ խոհութիւնն հաւանութեամբ երկրաքանչիւր կողմանց, խնա-
“ ցիս յԱռենէ այսր՝ հնար իցէ արդեաք օրինաք հատատել
“ Առենին զիրաւախոհութիւնն զայն միայն՝ որպէս և եղեալն
“ է, առանց այլոյ իրիք խնդրոյ և դատի և պահանջման։
“ Եթէ հնարաւոր է այդ, զայն միայն արասցես փութով, և
“ առ այդ եւեթ վաւեր լիցի գործակալութիւնդ. և կատարեալ
“ զգոյն, անցուցեալս առ մեզ և զմնացորդ գումարի գրամոյն,
“ և խսկոյն դարձցիս այսր։

“ Իսկ եթէ չէ օրէն և հնար հատատել զայն առ չներելոյ
“ օրինաց կամ՝ առ անապառելի խնդրոյ զոր մարթին յարու-
“ ցանել դատախազք, զոս ցուցցես միայն Առենին հանուսս
“ բանիս զպատիս ճշմարիտս և արդար գործակալութեանդ
“ յիրաւախոհութեանն՝ որ ի մերմէ կողմանէ իբրեւ օրինա-
“ ւոր եղեւ ի բարի Մուրատեանց և Ազգին, և ոչ թէ ի ծա-
“ ծուկ ինչ նենգել օրինաց տէրութեանդ, զոր և չգիտէաք
“ իսկ, և տացես բողցես զամենայն մոռիանալ դրամոցն ի ձեռս
“ Առենին, և զամենայն ինչ նոցա յանձնեսցես, ասելով թէ
“ իմ բան և խնդիր չկայ ընդ Մուրատեանս, զոր տեսէք
“ բան օրինաց ձերոց զարմանն. և տացես եւս գիր հրաժար-
“ ման և ի կիսոյ դրամոցն որ ասա առ մեզ, որպէս և յառաջ-
“ նումն մերում թղթի, ի 4 Նոյեմբերի 1828, գրեցաք առ քեզ,
“ թէ դարձուցուք զարծաթն կամ զկարուածս բան ճշգրիտ
“ հաշուոյ վճռառման փոխանակագրոյ, բաց ի ծախուց եղե-
“ լոց ի մէնջ առա և ի ձէնջ այդր, և հրաժարեալ բարա-
“ գիսս յամենայն խնդրոց և պահանջեալց և ի բազկեածս
“ և մարդեածս դատաստանաց երկարաբանեալ, որ նախ չե-
“ բեւ ինչ և ապա ի գրաբ կրկնութեան բնկենու զմի կամ

„ զմիւս կողմն, զոր չկամիմք բնաւ ոչ զմեր և ոչ զնոցա
„ միասն։

„ Զայս միայն արարեալ քո, նոյնհետայն անյուսալ առա-
„ ջին պատեհաւ մեկնեսցիս հաղորդեսցիս ի քաղաքէդ և յե-
„ բեւոյթ և յաներեւոյթ որոգայթից դորա, և դարձիս տե-
„ սամբ այսր առ մեզ։

„ Աւասիկ և Անանա խաթուէնն՝ որոյ վասն զլեաւարարար
„ առաքեցար, ի վերայ այսր խնդրոյս զուր տառապեալ՝
„ վախճանեցաւ ի մեծ ցաւ և սուգ մեզ, և չմնայ այլ ինչ
„ պատճառ մեզ թողլոյ զքեզ այդր ի վիշտս և ի տառապանս
„ անյայտս և միշտ կսկիծաւոր եղիցս իրացն. զի մի՛ և ընդ
„ քեզ նոյն անցք անցցեն՝ հաշելով և մաշելով յանառոյգս
„ և ի վնասակարս. ոչ կամիմք տաւժել զմեզ և զմերսն վասն
„ անյոյս և անկատարած խնդրոց։

„ Ահա այս են կամք իմ և բոլոր հասարակութեանս, զի
„ ընտրեալ էաք միշտ և ընտրեմք՝ կամ զիրաւամտութիւնս
„ հաստատել՝ եթէ օրէն է, կամ թէ թօրախեղ թողուլ զաւան-
„ նայն ի ձեռս Աստենին կամ Մոռատեանց. թող երբ և կա-
„ մին, որպէս զիարդ և կամին՝ նոքա արասցեն, առնել տա-
„ ցեն, մեզ չէ փոյթ այսուհետեւ. բաց զիրաւամտութենէ
„ անտի՝ զայլ որ ինչ և է բարի և յաջող կարծեցեալ էր
„ իրացդ՝ ոչ օգուտ համարիմք, ոչ կամիմք, և անվաւեր
„ առնեմք ասմին գրոյս. յամենայնէ հրաժարիմք՝ բաց
„ ի պատուոյ իրաւանց մերոց զոր ունիմք ի կտակի հանգու-
„ ցելոյն. և զամենայն արդարութիւն յանձն առնեմք յար-
„ դար դատաւորն Աստուած, որ հայրն է որբոց և աղքա-
„ տաց, և նմա և ազգին այլք տացեն պատասխանի. զի մեք
„ իրաւախոհութամբն մերով միայն համարիմք զբարին անօրի-
„ նեալ ազգին առանց վնաս հասուցանելոյ ժառանգաց բա-
„ բերին, այլ և զպարտս մեր որ ի կտակէն՝ կատարեալ
„ ըստ կարի։ Այս է ընտրութիւն Հասարակութեանս զորմէ
„ ոչ ոմեք յօտարաց համար տալ պարտական է, բայց և
„ պատրաստ է ի տալ՝ յորժամ պիտոյն լինիցի։

„ Զայս այսպէս գիտացեալ քո, զօրացիս տերամբ ի յաջող

„ և փոյթ կատարումն այսր հաստատուն և անյեղլի կամաց
„ Հաստատութեանս, և տայէ Տէր ողջամբ տեսանել զքեզ
„ այսր առ մեզ, զոր և աղօթեմք ամենեքեան։

„ Ի հաստատութիւն այսր ամենայնի վերոյ գրելոցդ կնքեմք
„ հաստատակաց կնքով և ստորագրեմք

„ ՍՈՒՔԻԱՍ ՍՈՄԱԼ

„ Արքեպիսկոպոս Սիւնեաց և շինդհանրական Աբբայ
„ Միխիթարեան վիճակաւորքեան.

ԿՆԻՔ

„ Հ. ՂՈՒԿԱՍ Վ. ԻՆՃԻՃԵԱՆ, Առաջնակայ.
„ Հ. ՄԿՐՏԻՉ Վ. ԱԻԳԵՐԵԱՆ, Աբոռակալ.
„ Հ. ՄԱՏԹԷՈՍ Վ. ՄԱՂԱՔԵԱՆ, Առաջնակայ.
„ Հ. ՄԱՆՈՒԷԼ Վ. ՋԱԽՋԱԽԵԱՆ, Առաջնակայ.
„ Հ. ՅԱԿՈՎԲՈՍ Վ. ՃԷԼԱԼԵԱՆ, Առաջնակայ.
„ Հ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԻԳԵՐԵԱՆ, Քարտուղար.
„ Հ. ԱՐԱՔԷՆ ԱՆԹԻՄՈՍԵԱՆ.

„ Ի Վենետիկ. 30 յունուար 1829.

„ Աստուածասիրի Պ. Պօղոսի սիրելւոյ մերում խնդալ ։

„ Վենետիկ. 29 յունվ. 1829.

„ Ընկալաք յ13 ամսոյս զգրեալդ յօգոստոսի 22, հանդերձ
„ երկրորդ օրինակաւ նախագրելոյդ. ընդ որս կային և վճիռ
„ դատին Ռաֆայէլեանց, պատճէնք կարեւոր թղթոց պատ-
„ կանաւորաց առ դատն Մուրատեանց, այլ և թուղթք
„ ուղղեալք առ Պ. եղբարս քո ի Պոլիս, զոր և յղեցի առ
„ Նոսա ։ . . .

„ Ի վերջին գրելոց Աղնուութեանդ հշմարտասիրի արդա-
„ բասիրի և անխոնջ աշխատասիրողի ի սէր ազգիս և Մխա-
„ բանութեանս՝ խնամամբ զյոյս բարի վասն յաջող ելից իրացն
„ ըստ օրինացն, ընդ որ ուրախ եմք, թէ և տխուր ընդ վը-
„ նասն լեալ և լինելի Մուրատեանց ։ Մխանգամայն խնամամբ
„ զխիթալի երկարութիւն դատին, և զիրական ծախսն վասն
„ սոցին իրաց, մինչեւ հարկ համարիլ ձեզ խորհուրդ տալ
„ մեզ պահել ի բռին զմասն գրամոց վճարելեաց վասն դա-
„ տին ի փախչել ասեալց ի յաղթելս մեր. և ոչ ինչ յիշէք՝
„ թէ ի պարտելս ուստի կարիցեմք հատուցանել զմեր ծախսն
„ և զնացսն ։ Յաղագս որոյ յանհնարին հոգս կամք, զի
„ երեւին իրքն յայն ճանապարհ անկեալ՝ զոր ոչն երբէք կա-
„ մեցաք, և միշտ բաղձեցաք առ Հ. Սարգիս վարդապետն
„ մեր՝ զի մի գուցէ այնպիսի ինչ լինիցի. վասն որոյ այժմ
„ վերատին գրեմք պարզապէս որպէս առ նա, նոյնպէս և
„ առ Աղնուութիւնդ աջակից և արտակից նորա, զի ի միա-
„ սին ընթերցեալ զառ ի մէնջ գրեալքս՝ ըստ այնմ առ-
„ նիջիք ։

„ Առաջին կամք մեր էր և է մի՛ բնաւ մոռանել ընդ սեմք
„ ի դատ. վասն զի արտաքոյ է այդ սահմանի կրօնիս, և խա-
„ փան նպատակի նորա. եւս առաւել՝ զի չմարթի դատ
„ առանց ծախուց, իսկ մեք ոչ կարեմք մեզէն, և ոչ կամիմք
„ օտարին ընչիւք զառ վարել ։ Որին վասն ուրախ էաք

«յամենայն սրտէ՝ ընդ իրաւախոհութիւնն, և զնոյն այժմ
«կամիմք յամենայն սրտէ. իսկ եթէ հակառակ կողմն ասըր-
«ջայաւ, և հարկեցոյց զձեզ մոռանել ի հնարս դատի, յա-
«ւելեալ ասել, թէ դարձեալ կամք մեր են՝ զի այնչափ
«փոյթ կալջիք իրաւախոհութեան, մինչ զի եթէ այն ոչ յա-
«ջողեցի՝ զայլ ձանապարհ ոչ կամիմք, և պատրաստ եմք
«հրաժարիլ յամենայնի. թող կամակատարք ասցեն հա-
«մարս Աստուծոյ և ազգին, մեզ չէ փոյթ։ Զի եթէ ին-
«քեանք յինքեանց եղծին զիրաւախոհութիւնն իւրեանց և
«ցայս վայր ստատպեցուցին զմեզ և զազգն միանգամայն,
«զինչ ոչ ունիցին առնել և յետ ի պարտութիւն մատնելոյ
«իւրեանց յԱտենէ. զի որովհետև և ի պարտելն իւրեանց
«կան և մնան յիրաւունս կամակատարութեանն, յոխ-
«տեան և յետ կանգնելոյ զպրոցին՝ ոչ ինքեանք և ոչ
«զաւակ նոցա ունին հանդչել, և ոչ զմեզ և զյաջորդս մեր
«հանգուցանել։

«Այլ ասիցէք, թէ այժմ ոչ են իրքն ի մեր ձեռս, այլ
«տէրութեան՝ որ յանեաչառ դատս մեր, և ոչ կամի ընդ
«իրաւախոհութիւն։ Ասեմք զոյ և այդմ հնար գեղեցիկ.
«թող տէրութիւնն եթէ կամի՝ վճռեսցէ և պարտաւորեսցէ
«զՄուրատեանս հատուցանել ընդ զրամագլխոյն և զշահն,
«և ըստ այնմ հաշուի արասցէ զիրաւունս իւր, այսինքն
«զատկն վճարելի տէրութեան։ Այլ զուր երկրքեան առան-
«ձին կարող էք դարձուցանել զառեալ շահն ի Մուրա-
«տեանս, զորմիլով նոցա ի կոզմանէ մերմէ և ազգին, և
«այնպէս շատանալ այնու զումարով՝ զոր նախ յանձն առին
«իրաւախոհութեամբ, և այնպէս թողուլ մեզ հիմնարկել
«զդպրոցն ազատաբար։ Ապա թէ ոչ՝ ամենայն իրաւ յան-
«նայն իրաց ձեռնարկի շինիմք մեք։

«Զայսոսիկ զրեմք՝ համարելով թէ ի հատանել զրոյս ստ-
«կաւին իրքն իցեն ի ճանապարհի օրինաց և դատին. այլ
«եղեալ թէ իրքն յաջողեալ և վճարեալ իցեն, և զրումն
«զլխոյն հանդերձ շահիւքն ի ձեռս Հ. Սարգսի վարդապե-
«տին անցեալ իցէ, ապաւին կամելով մեր զրարին ասեն

“ Մուրատեանց, միանգամայն և զհանգիստ արտից մերոց,
“ զնոյն կամս մեր ծանուցանեմք ձեզ. իբր զի այնպիսի ելս
“ տայիք իրացն, զի Մուրատեանց ներեալիք զմնան ինչ շա-
“ հուն, և ի մեզ անցուցայիք զմնացեալ գրամս՝ հանդերձ
“ ազատ գրով կրկին հաւանութեան նոցա, զի անկախ ի նո-
“ ցանէ սկսցուք և յառաջ տարցուք զիրան գպրոցին. այլազգ
“ ոչ կարեմք և ոչ կամիմք առնել ինչ։

“ Այս են կամք Միաբանութեանս, յորոյ ի հաստատու-
“ թիւն կնքեմք և տորագրեմք

“ ՍՈՒՔԻԱՍ ՍՈՄԱԼ,

“ Արքեպիսկոպոս Սիւնեաց և ընդհանրական Արքայ
“ Միաբանեաց վիճակաց.

ԿՆԻՔ

“ Հ. ՂՈՒԿԱՍ Վ. ԻՆՃԻՃԵԱՆ, Առաջնորդ.
“ Հ. ՄԿՐՏԻՉ Վ. ԱԻԳԵՐԵԱՆ, Արտաքոյ.
“ Հ. ՄԱՏԹԷՈՍ Վ. ՄԱՂԱՔԵԱՆ, Առաջնորդ.
“ Հ. ՄԱՆՈՒԷԼ Վ. ՋԱԽՋԱԽԵԱՆ, Առաջնորդ.
“ Հ. ՅԱԿՈՎԲՈՍ Վ. ՃԷԼԱԼԵԱՆ, Առաջնորդ.
“ Հ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԻԳԵՐԵԱՆ, Քարտուղար.
“ Հ. ԱՐՍԷՆ ԱՆԹԻՄՈՍԵԱՆ.

Ընթերցեալ Հ. Սարգիս զվերոյիշեալ թուղթն որ ի Միաբանութենէն առ նա և առ Պ. Պօղոս Լազարովիչ, ապշի և տարակուսի՝ թէ զի՞նչ առաւելագոյն յերոպի էցեն նոքա տեսեալ յանկարծ և բնութագտեալ ի նմանէ, մինչև ի հարատևութիւն բանից և գործոց անկանել այսպէս միանգամայն։... Եւ զայն առ Պ. Լազարովիչ գրեն և յայտնեն նմա զգայութիւն

մուց իւրեանց, ասանց մոռծելոյ զվերասակար հետեւանսն որ ի գրութենէ անտի. և զերկոսին թուղթսն ի վերայ նորա ասացն։ Որոյ ընթերցեալ զայնս, ասէ ցՀ. Սարգիս թէ «Գուշակէ ինքն ի բանից թղթոյն, զի ոչ գոյ գլուխ ի վանս «սրբոյն Ղազարու. և յիրաւի ասէ, քանզի փոխանակ գո- «վելոյ և քաջալերելոյ զքեզ զի այսպիսի գործ վճարեցեր, «զայսպիսի թուղթս գրեն առ քեզ։ . . . »

Ընդ այս բան Պ. Պօղոսի Ղազարովչի առաւել եւս ցաւի Հ. Սարգիս, բայց ոչ ցուցանէ առ արտաքս. և առ ի պահել զպատիւ և զվարկ Մխիթարեանն իւրոյ՝ ասէ ցնա, թէ քա- ղաքականութիւն Մխիթարեանն ի բանս յայնոսիկ խորին իմն է, որ ապա իմացի։ . . . Զայս ասացեալ լռեցուցանէ զնա, և փոխէ զխօսան ի վերայ այլ նիւթոյ։

Արդարեւ խորին էր քաղաքականութիւն Մխիթարեանն. զոր և իմանոյ ապա Հ. Սարգիս և ոչ բնաւ զարմանայ։ . . . Քանզի հեղինակք կարծեաց և գրուածոց նամակացն այնոցիկ լեալ էին երկու երեւելի քաղաքագէտ և իրագէտ կարծեցեալ անձինք Մխիթարեանն. Հ. Մկրտիչ վարդապետ Աւգերեան, և Հ. Արսէն վարդապետ Անթիմոսեան (Բագրատունի.) որոց մին զպատմութիւնս երկնից միայն քաջ գիտէր, զԱստուածաբանութիւն ասեմ, և միւսն զառաստելս երկրի և զբանաստեղծութիւն։ . . . Իսկ այլ անձինքն Մխիթարեանն՝ առաջակայքն, ասանց ամենեւին մոռածութեան, կամ անփութութեամբ եւեթ զբարեաց հասարակաց ազգին, ասարագրեն զթուղթն և կնքեն Հասարակութեան կընքովքն։

Թէպէտ չցուցանէ Հ. Սարգիս առ արտաքս զխռովութիւն մուց իւրոց ընդ բանս թղթոյն, բայց ի ներքուստ անհան- գիստ լինի յոյժ ընդ հետեւանսն, այնպիսի գոլով գրուա- ծոյն, և ի ձեռս այնպիսւոյ առն, ընդ որում պէտք եղեն և էին տակաւին բազում զգուշութեամբ և խորագիտութեամբ վարել. և յիրաւի, քանզի եթէ ոչ խռով էր յայնժամ Ղազա- րովիչ ընդ Մուրատեանս, և հաղորդէր նոցա զկամս Մխիթա- ռեանն, ապաքէն վճարեալ էր ամենայն ինչ միանգամայն

վան իշխանութեան Հ. Սարգսի և վան իրաւանց ազգային ազգին. և կարող էին ամբաստանել զնա վերատին և հալածել իբրեւ զանկար գործակալ, և տիրել արծաթոյ հրամակին, իբրեւ ժառանգք և կտակակատարք բարերարին։

Թողից ասել զընդունայն տկնկալութիւն Միսրանութեանն յԱնգղիացւոց Ատենէն, չկարելով այնուհետեւ Ատենին իրաւունս առնել զրկելոցն՝ եթէ չկայր որ ի կողմանէ նոցա բողոքել առ նա. որովհետեւ Միսրանութիւնն հրաժարէր ի պահանջանաց անտի իրաւանց ազգաց ազգին։ Թող և զհակառակութիւն բանից և գործոց Միսրանութեանն, որ ի վերոյիշեալ թղթին և ի գրի գործակալութեանն Հ. Սարգսի։

Վասն այսորիկ խորհէր Հ. Սարգիս թէ զիարդ կարասցէ հանել ի ձեռաց Պ. Լազարովչի զգրուածն զայն վերատակար. և յաջողի նմա այն ազատութեամբն Ատուածոյ։

Քանզի յետ քանի մի աւուրց որոշէ յանկարծ Պ. Պօղոս Լազարովիչ գնալ ի Կալկաթա՝ իր աշխարհատեսութեան ազագաւ. թէպէտ և բուն պատճառ գնալոյ նորա անդր լինի երկիւղն պահանջանաց որ ի Մուրատեանց. քանզի նոքա առ ի վրէժ խնդրել ինամանէ նոցա՝ յիշատակեն և զանուն նորա ի կտակի անդ մօր իւրեանց իբրեւ պարտապան 14,000 ռուբլոյ, հանդերձ խորհրդով և երաշխաւորութեամբ Հ. Սարգսի. և ահա յերկիւղէ այնր պահանջանաց խոյս տայ նա ի Մատրասէ գնալ ի Կալկաթա։ Զայն ճանապարհորդութիւն նորա պատճառ առեալ Հ. Սարգսի՝ խնդրէ ի նմանէ զթուղթն զայն և զայլ թուղթ մի գրեալ առ նա յառաջնորդէ Միսրանութեանն իւրոյ, յորում գտանէին բանք կարի ինձն գաղտաբերութեան. զորս և զէնս առնու նա ապա դատ վարել ընդ Միսրանութեան, վարձս աշխատութեան իւրոյ պահանջելով ի գործ հրամակին ազգութեան։ Եւ խնդրէ նա ի նմանէ զթուղթս զայնոսիկ ասկս զգուշութեան, զի մի՛ արդեօք զիպուած ինչ քեզ պատահեալ, ասէ, անկանիցին ի ձեռս թշնամեաց։ Հաւանի նա բանից, և յանձնէ նմա՝ բայց զվերջին վերատակար թուղթն միայն, ասելով թէ զառաջին թուղթն չէ կարացեալ գտանել. և այնպէս մեկնի ի Մատրասէ յելս հոկ-

տեմբերի 1829, և գնայ ի Կալկաթա. ուր կացեալ ամիս մի՝ նաւարկէ յաշխարհն Չինաց, և անտի յԵրոպայ ի Վենետիկ առ ընտանիս իւր։

Բայց Պ. Պօղոս Լազարովիչ մինչչեւ մեկնեալ ի Մատրասէ՝ մատուցեալ էր յԱտենն գանգատս երկուս ընդդէմ Մուրատեանց, պահանջելով ի նոցանէ զգին պղնձոյ նաւին զորմէ յիշատակեցաք ի պատմութեան, և զվարձ աշխատութեան իւրոյ ի գործ հրիտակին ողորմութեան. և առ երկոսին գանգատս եւս իւր հակառակ վճիռ ընկալաւ յԱտենէն հանդերձ նախատանօք և տուգանօք յերկուց կողմանց ծախուց օրինաց. և վասն այսոցիկ էքեալ և երկուցեալ ի պահանջանաց Մուրատեանց՝ խոյս տայ անտի, տանելով այլոց և Հ. Սարգսի եւս, թէ վասն աշխարհատեսութեան գնայ ի Կալկաթա, և թէ յետ երից և ոչ աւելի ամաց ունի դառնալ ի Մատրաս. թէպէտ և եղեալ էր ի մտի ոչ եւս դառնալ անդր, որպէս և տեսանի ապա յայտնապէս։

Զայնմ ժամանակի զէպ լինի տհաճութիւն ինչ և վէճ ի մէջ Հ. Սարգսի, և վարչի դատին իւրոյ Կօրոսնի. քանզի թէպէտ ըստ վճռոյ Աստենին պարտ էին Մուրատեանք հատուցանել զծախսն Հ. Սարգսի, բայց զօրինաւոր և զըստ կանոնի օրինաց ծախսն, և ոչ թէ ըստ քմաց և անիրաւ կամաց Կօրոսնի. վասն որոյ ի քննել զայն վարժապետին օրինաց, գտանէ ի հաշուի անդ նորա իբրեւ 6,000 ռուբլի աւելորդ բարգութիւն։ Զայն աւելորդ և զմերժեալ ծախսն իբրեւ չկարէ ի Մուրատեանց առնուլ, պահանջէ ի Հ. Սարգսէ. և վասն այնորիկ լինի տհաճութիւն և վէճ ի մէջ նոցա, մինչեւ պարտաւորի Հ. Սարգիս տալ աղերսագիր առ դատաւորսն ինքնին ձեռամբ իւրով ընդդէմ պահանջման Կօրոսնի, յաւելեալ անդ վիճանգամայն հարցումն թէ ուստի՝ պարտ իցէ նմա զաւելորդ ծախսն զայն հատուցանել։

Ակնարկեալ նախանգամ դատաւորին յաղերսագիր նորա, ասէ ցնա ժպտելով ինն; «Հոգացայց ես զայն ի զէպ ժամ» մուտ, մինչեւ աւարտեցի խնդիրն, և ապա որոշեցի յատե-

«Նէն՝ թէ ուստի պարտ իցէ հաստատանել զայն։ Որով կամէր ասել, թէ յորժամ դարձուցի վերատին արծաթ հրիտակին ի ձեռս Նորա, հանցէ Նա զայն յարծաթոյ անտի և հաստատէ զպարտս իւր։ Եւ այսպէս ի վարչէ դատին իւրոյ եւս նեղութիւն հատանէր Նմա, և ծանրութիւն ծախուց և անխրատ ծախուց ի վերայ Նորա ի Ժամանակի անդ կարօտութեան իւրոյ, որում օգնէր միայն բարեպաշտ տիկինն Մամիի Աղանուր, տալով Նմա ի փոխ արծաթ ի հաստատումն ծախուց Նորա, և յայլ կարեւոր պէտս իւր։

Ի յապաղել շատ Միսրանութեանն առաքել ի Մատրաս զհաստատութիւն պայմանաց Ասենին՝ զրէ Հ. Սարգիս թուղթ առ առաջնորդն իւր օրինակ զայս.

«Առաւածապատիւ և Գերապայծառ Տեառն մերոյ Սուվիսայ Արքեպիսկոպոսի և ընդհանրական Արբայի ծնրադրական աջահամբոյր։

«Հանգամանք կարեւոր գործոյս, և միհակ ստատպեալ անձինս թողուցուն արդեաք Հասարակութեանս դանդաղանաք բերել ի գործս և յամր ի գրութիւնս։ Ահա երկու ամք են զի ողորմութեամբն Աստուծոյ հաստատեցաւ Ասենիս իրաւունք աղքատաց ազգիս և Միսրանութեանս, և սա ի դարձուցանել մեզ զաւանդեալ մատն արծաթոյն ի գանձատանէ տէրութեանս խնդրեցաւ ի մէնջ հաստատութիւն քանի մի թերթեւ և պարզ պայմանաց, զոր վաղվաղակի ծանուցեալ Հասարակութեանս խնդրեցի առաքել ինձ զայն՝ վաւերական վկայիւք։ Ծանուցի ապա զհարցարանութիւն վարժապետի օրինաց որ ընդ ատի եղեալ վկայս, և զչշատանալ նորա ընդ հաստատութիւն նոցա, և զհարցուածն իմ առ նա՝ տալ ինձ վկայական, հանել յատենէս հրաման ի բերել այսի հաստատութիւն, և զչհաւանել դատաւորին ընդ վկայականն վարժապետի օրինաց՝ ասկս ոչ ըստ կանոնի առեալ զոլոյ նորա զայն։

«Ահա զայս ամենայն ծանուցեալ եմ Հասարակութեանս.

մեայ միայն ծանուցանել՝ թէ ի վերատին խնդրելն իմ ի վար. ժապետէ օրինաց այլ վկայական, ազգ. արար ինձ նա՝ երդ. մընագրով խնդրել. և ի կատարելս զայն՝ յաւելի թէ գլ. ըեալ և խնդրեալ էի ի վանաց առաքել ինձ զհաստատու. թիւն պայմանաց, զոր և մեամ ես օր ըստ օրէ ընդունել։ Այս վկայական մատուցաւ դատաւորաց ի հրապարակա. կան Ատենի, և յիշատակեցան բանք երդմնագրոյս. վասն որոյ ասացին դատաւորքն՝ թէ որովհետեւ գրեալ և խնդրեալ էի զայն ի վանացս, պարտ է մնալ և տեսանել թէ զինչ իցէ եկեալն։

«Ընդ այս որոշումն դատաւորաց ոչ հաճեցաւ վարիչ դա. տիս Կօրտոն, քանզի պնդէր նա միշտ՝ թէ այսի հաստատու. թիւնն առանց հրամանի Ատենիս չէ ընդունելի նմա, և զի այսպէս՝ ազգիւր անիծեալ չարաչահութեան նորա նուազե. ցաւ։ . . . Իսկ ես ուրախացայ սակս կարճելոյ վայրապար ծախուց, և սատ յերկար գեղերելոյս. քանզի վստահ էի թէ անխափան և ընդ հուպ ունէի գտանել այսի զխնդրեալս հաս. տատութիւն։ Սակայն անցին ամիսք և աւասիկ ամք, գոլ և ոչինչ. հասին բազում նաւք յԵւրոպիոյ և բերին բազմաց բա. զում թուղթս, և ինձ յոյժ սակաւ, և այն ևս՝ ոչ որում ակն ունէի։ Այլ որ առաւել մտայոյզ առնէ զիս՝ է անսովոր և անգիտելի յամեցումն այն սակաւ հասելոցն, կարի իմն անադանեալ յուղեւորութեան։ . . .

«Ոչ կարծեմ թէ առ գործակալին ի Լոնդոն իցեն այնք յամեալ, և ոչ ի կողմանէ տէրութեանդ կարծեմ զյամե. ցումն. քանզի հարցուածն մեր ի նմանէ թեթեւ ինչ և յօգուտ իսկ է նմա։ Իսկ ի կողմանէ Անգղիացւոց հիւպատիդ չկարծեմ թէ կայցէ ինչ դժուարութիւն։ Անցանեն երբէք ընդ միտս իմ կարծիք ինչ, թէ մի՛ գուցէ ի կողմանէ Պ. Աղէքսանդրին իցէ յամեցումն. քանզի լուայ առտ՝ զի ասացեալ իցէ նորա, թէ ինքն անձամբ կամի գնալ ի վանս և միջնորդել վասն գործոյս, ուստի լաւ սովորութեանն իբրեւմ գրեալ իցէ Հասարակու. թեանս չառնել ինչ և չգրել առ իս թուղթ մինչեւ եկեցէ ինքն ի վանս։ Թէպէտ և այսմ կարծեաց ևս դժուարիմ հաւա.

տալ, գիտելով չափ Միաբանութեանս զհանգամանս գործոյս և զբնաւորութիւն առնն ի բանս իւր և ի գործս և յայսմ դյժարամտութիւն։ Ե. յիրաւի. վանզի զինչ կայ և նորին միջնորդութեան. զպայմանս նախկին դաշանց հաստատուն պահել. — ահա այն է զոր խնդրեն Մուրատեանք, և որում ուխտիւք փափաքին, շատ համարեալ թողուլ մեզ նոցա զվաշխն դրամագլխոյ հրիտակին. զոր և Հատարակութիւնս արդէն որոշեալ և ծանուցեալ է ինձ գրով. կամ թէ զեղեալ դաշն և զպայմանս Ամենիւս հաստատել, զոր իրաւամբք ի սկզբանէ և այսր խնդրեաց և խնդրէ Հատարակութիւնս. — և ահա այն կախեալ կայ միայն զվաւերական հաստատութենէ պայմանացն զոր խնդրէ ի մէնջ Ամենայն, և որում մեամ ես անհամբերութեամբ. ուստի չկայ ինչ և այլոց միջնորդութեան։

«Ապա զկնի ամենայն կարծեացս և բանից հաստատութեան՝ մնայ կարծել, թէ կան ինձ պահեալ տակաւին նեղութիւնք և վիշտք յամխիթար տեղւոջս պանդխտութեան։ Ա՛հ, այս իցեն իրաւունք և արժանն։ . . . Այսչափ միայն ասեմ. թէպէտ և տանիմ ես համբերութեամբ ամենայնի, որպէս և տարայ ցարդ, սակայն ոչ ի պատիւ Հատարակութեանս և ոչ յօգուտ աղքատաց ազգիս դիտեմ զայն։ . . . Քանզի յամենայնումն պայմանացն հաստատութեան, զոր անխախտան և ընդհուպ ընդունել այսր խոստացայ ասա, երկուանս ինչ բերէ Ամենիս զիշխանութենէ իրաւանց Միաբանութեանս, և պատճառ լինի վայրապար ծախուց. քանզի մինչեւ ցարդ հատուցեալ եմ իբրեւ 2,000 լիրէ ստէրլին, թողեալ զառանձին ծախսն, որ գրեթէ նոյնչափ։ Բայց ես ակն ունիմ՝ զի յառաջ քան զհաստատել տեսրական գրոյս այդր, ուրախականն ի ձէնջ հասեալ այսր՝ վերիթարեսցէ զիս։

«Կարեւոր լուրք տեղւոյս այսոքիկ են։ Վէճն Կոպդնի (*) քննեցաւ և որոշեցաւ ի վարժապետէ օրինաց՝ հատուցանել Մուրատեանց 700,000 ռուբի հանդերձ ծա-

(*) Կառկառատաք Եղուարդ Ռաֆայելի։

խիւք օրինաց երկուց կողմանց. 300,000 ռուբլոյ պահանջումն 700,000 ռուբլոյ եղեւ։ Ահա այսպիսի է խառնութիւն Անգղիացւոցն օրինաց ընդ իրաւունս աղքատաց։ . . . Ապաքէն նոյն և խնդրոյս յայլոցէր, եթէ Շառարակութիւնս սակաւիկ ինչ աշխատութիւն յանձն առնոյր, և եթէ զանաչառ խառնութիւն ըստ ապիրատութեան նոցա ի գործ դնէր։

« Այսմ նոքին իսկ քաջ խելամուտ եղեալ՝ կան ի տապնապի մեծի, և յուսացեալ միայն ինքեարքամութիւն մեր՝ ջանան յամենայնի հաշտել ընդ իս և բարեկամանալ. մասնաւորաբար Եդուարդ Մուրատ. վասն որոյ գրեաց առ իս դիր յարգանաք և խոնարհութեամբ՝ հարցանել զինդրոյ ինչ որ ընդ եղբօր իւրում։ Եռու նմա պատասխանի համառօտ, զարմանալով ընդ հարցումն խնդրոյ նորա ծանուցելոյ համարէն ընտանեաց իւրոց, յորոց արժան և պարտ էր հարցանել։

« Շամարձակեալ նորա ասոի, յաւուր միում ի հանդիպելն իմ ուրուք՝ եկն ընդ առաջ կառացս, և տուեալ աջ բարեկամութեան եհարց զողջունէս որպէս յերէկն և յեռանդէն, և որպէս թէ չէր բնաւ ինչ անցեալ ի միջի մերում։ Այլ ես ըստ պարտուց կրօնիս անոխակալութեան, և առչառոյ գայթագղութիւն անդ եղելոցն, ընկալայ զողջոյն նորա, բայց ծանրութեամբ, պահեալ միշտ զմարդկային զդացողութիւնն. և այս երկիցս պատահեաց։ Ապա լուայ այլուստ, զի ասացեալ էր նորա՝ զի եթէ չէր ակն ածեալ յինէն՝ զիրկս արկեալ համբուրէր ընդ իս, և խնդրէր մեղանաց իւրոց թողութիւն, և զի խոստովանեալ էր, որպէս և յայլ նուագս, թէ ինքեանք են պատճառք ամենայն եղելոցն, արդարացուցեալ զիս յամենայնի։

« Եւ այժմ լսեմ զի ջանայ միշտ և փափաքի յոյժ հանդիպել ինձ առ ի խօսել և աւարտել զրան հրիտակին ողորմութեան, հաստատելով զառաջին դաշինս մեր և զպայմանս, և խնդրել յԱտենէս յանձնել ինձ զաւանդեալ մասն արծաթոյն։ Այլ ես խորշիմ և չկամիմ տեսանել զնա և խօսել

ինչ. ոչ առ առելութեան և քինու, որ չվայելէ կրօնիս, և մանաւանդ վիճակիս, այլ ընդունայն և անշահ զայն համարիմ՝ յառաջ քան զհասանելն այսր հաւատոց։ Իսկ յորժամ հասցէ այն ի ձեռս իմ, արարից յայնժամ զարժանն։

„ Անքնաչ զթուղթս՝ առեմ. ամենայն ինչ յօգուտ ազգաց ազգիս և ի պատիւ Միաբանութեանս կատարեցի Աստուծով, եթէ ըստ ժամանակին և ըստ պատշաճի հաւատիքն այսր առաքեցին այսր։

„ Բաղում սիրով և յարգութեամբ ողջոյն համօրէն Վ. երապատուելի Վ. Հարց և եղբարց որբոյ կրօնիս մատուցեալ։

„ Մնամ միշտ

„ Արհիապատուութեանդ ձերում

„ Ի Մատրաս. 29 սեպ. 1830.

„ Նուաստ ծառայ

„ Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈՂՈՐԵԱՆ. „

ԳԼՈՒԽ ԻԵ.

Գիր գանգատանաց Հ. Սարգսի առ առաջնորդ Մխիթարեանսն ընդ յապաղումն հաւատեացն խնդրելոց յԱտենից. — Վէճք և հակառակութիւնք Մոլրատեան եղբարց ընդ միմեանս. — Ցրտանալ Պ. Պօղոսի Լազարովիչ ի գործոյն և ի նպաստելոյ Հ. Սարգսի. — Խնդիր դատի Կոպրեանի ընդ Մոլրատեանս, և վճիռն առեալ ի դատաւորաց.

Յետ այնորիկ ի 10 Հոկտեմբերի ընկալաւ Հ. Սարգիս յառաջնորդէ ուխտին իւրոյ զիր գրեալ յ8 մայիսի, յորում ծանուցանէր նմա Սոմալեան արքայն զրաժանել ազգին յերկուս, և զհոսմէականսն առանձինն կազմել ժողովուրդ. միանգամայն և զգիւտս զրչագրաց ինչ պիտանեաց ի Հայս ի ձեռն Հ. Եփրեմայ վարդապետի Սեթեան. իսկ զկարեւոր հատատեացն որոց օր ըստ օրէ անձկանաք ապասեալ մնայր Հայր Սարգիս՝ հապէ թէ հարեւանցի իմն առնէր յիշատակութիւն։ Վասն որոյ և Հ. Սարգիս յերկարագոյն գանգատանաւք գրեաց պատասխանի, յորում յետ այլոց ինչ բանից ասէր.

« Թէպէտ և զարմանայցեն այլք ընդ անտոմար բարբառ հեծութեանս, այլ Արհիապատուութիւնդ ոչ ընտ, քանիկ փոքձ զոլով փոքձանաւորիս, որում վերին անտեսութիւնն բաժանորդ սրտար զնա երբեմն, և որում նոյն կարգեալ է այժմ զնա Տեսուչ. թէպէտ և տեսանեմ արդ զի փոքձն մոռացեալ է և Տեսչութիւնն անտես եղեալ։ . . .

« Ներեսջիք, Արհիապատիւ տէր, համարձակութեանս, մանաւանդ թէ անզգամութեանս. զի այր մի տատապեալ և վշտացեալ եմ ոգւով յոյժ. վասն այսորիկ սոխիմ այսպէս բարբառել։

«Զինչ արդեօք պատճառք այսչափ յապաղման խնդրոյս ի ձէնջ հատատութեան, զորմէ հապիւ ուրեմն ի տարուջն միանգամ առնէք յիշատակութիւն, և այն հարեւանցի և միով տողիւ հատուցեալ. զայնմանէ ասեմ՝ որում անհամբերութեամբ մնամ, և զորմէ լիով տեղեկութիւն խնդրեմ, և զորմէ կախեալ կայ կատարումն գործոյս հատարակաց, և վախճան այսչափ ամաց դառն աշխատութեանս, վասն որոյ տառապեցայ, չարչարեցայ և հաշեալ մաշեցայ առ։ . . . Եւ եթէ չիցէ անփութութիւնն պատճառ յապաղման նորին, թերեւս գուցէ այլ պատճառ թագուցեալ լինէն, որ առաւել և անհնարին ցաւ լիցի տառապելոյս և ի խոր խոցելոյս։

«Հատատի այժմ կարծիքս որ զՊ. Աղէքսանդրէ, զորմէ գրէք թէ խոստանայ ի հուպ առուրս գալ այդր, և զորմէ ես ի նախընթաց թուղթս լիով գրեցի զմիջնորդութենէ նորին. յաւելում ի սմին զայս միայն՝ թէ հնարաւոր իցէ արդեօք այլոյ ումեք, թէպէտ և կարեւոր բարեկամի, առաւել քան զհարազատս անդամս իւր՝ խնդրել զօգուտ նորա և զպատիւ, մանաւանդ առնդ այդմիկ, և յայս գործ, յոր և գիտէք՝ թէ ի սկզբանէ և այսր զիմրդ վարեցաւ։ . . . Ես զպարտս իմ արարի ազգարարութեամբս. թողում Հատարակութեանս խորհել և գիտել՝ թէ ընդ որոց և վասն որոյ է գործառնութիւն իւր։ . . .

«Գրէ Արհիապատուութիւնդ առ Պօղոս Լազարոմիչ թէ «Զինչ վիշտ եղեւ ձեզ ընդ կորուստ արծաթոյն որ ի հան-«գուցեալ Անանա խաթունէ։ Այլ այն ինչ միայն հոգ է մեզ «արդ՝ թէ յաղթութիւնն անտկնկալ խրոխտ գործեցէ թե-«բեւ զՄուրատեանս մեքենայել ինչ և կամ նոր փուրշիշ «յարուցանել ի վերայ մեր, առ վերսին առանալ զդատն զոր «կորուսին։» Այլ ինձ ապաքէն առաւել հոգ և մտնուանդ ցաւ է արդ ընդ հոգ ձեր, որ երկնչիք յիսպառ լքելոց և ի նեղուն եղելոց, և յերկմիտս էք տակաւին զիրաւանցս ան-խախտ հատատութենէ։ Եւ յիրաւի, այս միայն է ինձ հոգ, քանզի տարակուսիմ՝ մի արդեօք երկուցեալ յայսպիսի ոնոտի կասկածանաց, այլ ընդ այլոյ ինչ այդր գործիցէք

ի վեսա ազգ ասաց ազգիս և ինոխատինս Միսրանութեանս։... Տարակուսելոյ և հոգացելոյ մասց են բանքս, և ոչ համարձակութեան. վասն որոյ նեղեսցէ ինձ արհիսպասուութիւնդ։ . . .

« Ահ, սոխպէ՛ք զիս դարձեալ զաւելորդ և զանպիտան բանս անզգամացն անզգամութեամբ և ի սին երկրորդել։ Ահա քանի մի աւուրք են՝ զի ասացեալ է Եդուարդ Մուրատ առաջի Արրահամու Աղանուրի և Յովհաննու Յարութենի, թէ ամենայն վեսասկար չար և ապիրատ գործոց պատճառք ինքեանք են, այսինքն սկզբնապատճառ նոցին եղբայր իւր Յովհաննէս է, և ինքն նմին հետեւող. իսկ Հ. Սարգիսն յամենայնի անմեղ և անպարտ է. քանզի արար նա, ասէ, զպարտս իւր, պահպանելով զիրաւունս ազգաւոց ազգին և զՄիսրանութեանն իւրոյ. անիրաւութեամբ մեք արկաք զնա ի բանտ և տարապարտ չարչարեցաք զնա, դատ վարելով ընդ նմա։ Զայս ամենայն, ասէ, յորժամ գնացէ ինքն ի վանս՝ խոստովան լիցի ճշմարտութեամբ Արհիսպասուս Հօրդ և համօրէն Միսրանութեանս, խնդրելով ներողութիւն ի ձէնջ յամենեցունց։ . . .

« Եւ զայս եւս ասացեալ է նա, թէ ամենայն չարիք զոր կրեաց ցարդ և կրէ տակաւին, է վասն լսելոյ նորա բանից եղբօր իւրոյ չարի և միսրանելոյ ընդ նմա ի գործս ապիրատութեան. վասն որոյ ցաւագին սրտիւ անիծանէ զնա և զդարձ նորին յԵրուսղէմ, այլովքն հանդերձ։ . . .

« Ահա զայս և առաւել քան զսոյն բանս, որպէս և յոյլ բազում նուապս՝ բռնադատեալ յարդարութենէն խոստովանի առաջի այլոց։ Եւ ինձ թէպէտ, որպէս ասացի, աւելորդ և անախորժ է զբանս անմտութեան նոցա երկրորդել, բայց ի փարատել զնոսի հոգս մտաց ձերոց երկրորդեցի յոչ կամացս. վասն որոյ յաւելում և զայս.

« Հարցանէ միշտ Եդուարդ Մուրատ զԱղանուր՝ թէ առնո՞ւմ ես զիր ի վանացս, և յոյժ հետաքնին է զիտել՝ թէ զինչ կամք լցեն Միսրանութեանս վասն վաշխի դրամագլխոյ հրիտակին. պահանջիցե՞ն ի նոցանէ զայն՝ թէ ոչ. և ինքն

անձամբ զանձն վիրաւորեալ ասէ՝ թէ ոչ կարծէ զի Միսրա-
նութիւնն խստիւ ընդ նոսա վարիցի, և այլն. և Աղանուրի
երկեցուցեալ զնա՝ ասէ, թէ չկարէ Միսրանութիւնն թո-
ղուլ նոցա զայն, ոչ զոլով տէր իրաւանցն։ Յայնժամ ասէ
Եդուարդ՝ թէ ինքեանք աւարտեալ են զքան հրիտակին ընդ
Միսրանութեան, տալով նոցա զարծաթն. վասն որոյ չկա-
րէ այլ զք պահանջել ի նոցանէ աւելի ինչ։ Եւ ես չեմ
յայտնեալ նոցա, և ոչ իսկ Աղանուրի, զկամս Միսրանու-
թեանս որ վասն վաշխի դրամագլխոյ հրիտակին. քանզի
անօգուտ և ճեռակոր իսկ համարիմ՝ յառաջ քան զհա-
տանել հաւատացեալն այսի՝ յայտնել նոցա զայն. այլ յեր-
կիւղի պահեմ զնոսա. քանզի որպէս տեսաք ցարդ, առանց
երկիւղի չճարի ինչ ընդ նոսա, ըստ առակին՝ թէ «Զարա
«է մահ սպառնալ, զի զտենդն յանձն առնուցու։» Եւ
այս են միտք իմ, և ոչ այլ ինչ հակառակ մտաց Միսրա-
նութեանս զոր ոչ խմացեալ ձեր՝ հարցանէք թէ զինչ խմա-
նամ ես՝ շահ արծաթոյն ասելով ի գրիս։

«Վասն որոյ վերոյն խնդրեմ չյիշատակել ինչ այդ-
պիսի ի գրի ձերում. զի որպէս ազգ արարեալ եմ, ամենայն
թուղթք որ այսի՝ թարգմանին սատ ի լեզու Անգղիացւոց
և յատեանս մատուցանին. և յիշատակութիւնն նորին ոչ մի-
այն չօգտէ ինչ գործոյս առաջի Աստենին, այլ և ճեռաս է իսկ,
և անուշտ. մտաց և անշահատէր ոգւոյ միսրանութեանս սրտա
ինչ բերէ յաչս հատարակաց, որք համարին՝ թէ չէ արդարու-
թիւն և արժան Միսրանութեանս կամաւ հրաժարիլ ի պա-
հանջանաց վաշխի դրամագլխոյ հրիտակին ողորմութեան,
քանզի ասեն՝ թէ տաւել պարտապան է Միսրանութիւնս
պահանջել զիրաւունս որբոց և աղքատաց տառապելոյ ազ-
գիս, քան թէ անվոյթ լիալ՝ թողուլ զայն ի ձեռս անիրաւ և
չարաչար վատնողաց։ Եւ եթէ ասիցէ՝ թէ չկամի նա պատ-
ճառ քանզման տանն նոցա լինել, ասեն, թէ նախ տուն նո-
ցա արդէն քանդեալ իսկ է ի նոցանէ. և երկրորդ, մանա-
ւանդ թէ պատճառ լինի հատատութեան նորին, պահելով
անտի ոգեպահիկ ժառանգաց նոցա։

«Ահա այսպիսի են կարծիք հասարակաց զգործոյս և զՄխաբանութենէս։ Իսկ ես հաւանեալ եմ միշտ խոհական կարծեաց Հասարակութեանս, զոր յառաջ ծանոյց ինձ գրով, և զոր խնդրեցի չյիշատակել ի թուղթսն։

«Զկարեւոր լուր տեղւոյս տուեալ եմ ի նախընթաց թուղթսն. յաւելից ի սմին և զայս։ Անդադար հակառակութիւն Մուրատեան եղբարցն ընդ միմեանս յայն եհաս, մինչեւ պարտաւորեցին նոքա զընտանիս և զծանօթս իւրեանց տալ վկայութիւն առաջի միջնորդ դատաւորաց, ըստ դիտակցութեան մտաց զոր գիտէր ոք ինչ զտուչութեանցն եղելոց առ Եդուարդ Մուրատ ի մօրէ իւրմէ Աննա խաթունէ ի բացակայութեան Յովհաննու Մուրատայ, զոր չընդունէր նա իբր կամաւոր տուչութիւնս, այլ բռնի յափշտակութիւն և գողութիւն իսկ։

«Նոյնպէս և զքանակութիւն գրամոցն հատուցելոց յԵդուարդայ մօր իւրում՝ չհաւատայր նա իբրեւ ճշմարիտ և այնքան հատուցումն. վասն որոյ վկայից և հաստատութեան պէտք եղեն, յորս գտայ և ես յոչ կամացս։ Բայց վախճան գործոյն ոչ յօդուտ միոյն և ոչ ի պատիւ միւսոյն եղեւ, այլ ի վնաս և ի նախատինս երկոցունց միանգամայն. և յիրաւի. քանզի ի հակառակիլ յամենայնի Յովհաննու Մուրատայ, եհարց նա անմտութեամբ զԱբրահամ Աղանուր՝ թէ ամենայն գրեալքն և բանք հաշուէմատեանի նոցա իցեն ճշմարիտ և անխարդախ։ Զառաջինն չկամեցաւ Աղանուր տալ պատասխանի. և իբրեւ կարի շատ բռնադատեցաւ ինքեան, ասաց՝ թէ բազում ինչ կայ անդ ստութեամբ և խարդախութեամբ գրեալ։

«Ընդ այս համարձակ բանս նորա զարմացեալ միջնորդ դատաւորաց՝ կամեցան գիտել զայն։ Յայնժամ բացեալ Աղանուրի զհաշուէմատեանն եցոյց նոցա զայս բան. «Այսօր «ի 10 սեպտեմբերի 1817 ամի, զժամանգութիւն քեռն մերոյ «Մարիայ Թէրէզայի եղաք ի վերայ Փոմբանու մուրհակի «յանուն մեր և յանուն մքսոր Թոմմա Փէրուի իբրեւ թրատ«ուոց (խնամակալաց)։» —

«Սակայն Էութիւն այսպիսի իրաց բնաւ չէր եղեալ ցարդ։ . . . Արհամարհեաց Յովհաննէս Մուրատ զայն իրրեւ թեթեւ և չնչին ինչ բան. բայց միջնորդ դատաւորքն ծանր սացին զայն և վտանգաւոր յոյժ։ Հարցին յԱղանուրէ և զայլսն, և նա եցոյց այլ ինչ մի, ընդ որ սարսափեալ նոցա ասիշեցան յոյժ. և այն էր հաշիւ սուացուածոց հանգուցեալ վրացի Պօղոսի Օլչիանի, զոր ամօք ինչ յառաջ ի պահանջել ժառանգաց ձեռամբ սէրուէթեանց՝ տուեալ էր Պ. Եդուարդ Մուրատ համար Ատենին երդմամբ, և զարծաթն յանձնեալ էր դանձապետին. սակայն յայտ յանդիման երեւէր ի հաշուէմատեանի անդ 25,000 ռուբի մնացեալ անտի, զոր թաքուցեալ և խորեալ էր անտի Եդուարդ Մուրատ։

«Եւ իրրեւ հիացեալ դատաւորացն հայէին ընդ միմեանս ժամս ինչ, և Աղանուր կամէր այլ ինչ ցուցանել նոցա, հանեալ Եդուարդայ զհաշուէմատեանն ի ձեռաց նորա, ասէ. «Շատ է, շատ է.» և առեալ հնարիւք իմն զիւրոյ կողման դատաւորն մեկուսի, իրրեւ ինչ մի ասելոյ ազագաւ, կարճեաց զմենդիրն և խափանեաց զԱղանուր ի ցուցանելոյ նոցա և զայլ խարդախութիւնս որ ի հաշուէմատեանի նոցա կային զընչից և զիրաւանց որբոց և այրեաց ոմանց։ . . .

«Թողում յիշատակել զամօթալի վէճ նոցա ընդ միմեանս որ զչնչին ծախուց կերակրոյ եղելոց ի գործատան իւրեանց ի Մատրաս, զոր Եդուարդ անարգ ազատութեամբ եդեալ էր ի հաշիւ մօր իւրոյ, և Յովհաննէս առաւել իմն նեղասրտութեամբ չընդունէր և վիճէր ընդ այն. ընդ որ զգուեալ միոյ ի միջնորդ դատաւորացն հրաժարեաց գալ անդր, սակայն թէ չկամի ինքն դատաւոր լինել իրաց խոհակերոցի։ . . . Եւ այսպէս խայտառակութեամբ և դայթագղութեամբ վախճանեցաւ քննութիւնն, և ամօթալի լուրն ընդ քաղաքն ողջոյն սփռեցաւ. և որք արդէն յառակս նշաւակի և ի նախատինս էին ամենեցուն, այսու առաւել ևս եղեն։ Մնան նոքա որոշման և վճռոյ միջնորդ դատաւորաց։ . . .

«Ի 10 ամսոյս ընկալայ գիր ի Պօղոս Լազարովիչէ, գրեալ ի Սինկափուր. յորում ծանուցանէ միայն զվաճառ գրեանցս,

և զայն կէս գնով, սակս ցեցակեր և ապականեալ գոլոյն. իսկ զվիճակէ անձին և զվախճանէ ճանապարհորդութեան իւրոյ չծանուցանէ ինչ բնաւ, այլ և ոչ զվիճակէ իմմէ և զհանգամանաց գործոյս՝ գոնէ առ քաղաքավարութեան առնէ ինչ յիշատակութիւն։ Ով անհատատութեան մարդկային բարեկամութեան։ . . .

«Յորժամ կամէր գնալ ի Կալկաթա, ցուցանէր ինձ՝ թէ չկայր նմա հոգ՝ բաց ի միայնութենէս, և վասն այսորիկ ասաց ինձ չգրել զայն այդր՝ զի մի՛ ինչ հոգասցէք. քանզի ասաց՝ թէ յառաջ քան զհասանել լրոյն ի վանս՝ ինքն այսրէն դարձցի. և թէ չունէր ինքն այլ ինչ մտածութիւն՝ բաց ի հասարակաց գործոյս, և վասն այսորիկ նախանձայոյզ խորհրդով առեալ ընդ իւր զամենայն հաւատս դատին և զվճիռ. Այսուհետև զԹարգմանեալն ի հայ լեզու, ի տիպ արձանացուցանել անդ՝ ի հանդէս մշտայաղթ արդարութեան, և ի հարցանել զքաջ խորհրդականս տեղւոյն, և ի նոցանէ խորհուրդ խնդրել յաղագս պահանջանաց վաշխի հրիտակին ողորմութեան։

«Այսու ոգւով և այսպիսի խորհրդով հրաժարեալ մեկնեցաւ ասի. բայց յորժամ եհաս ի Կալկաթա, զամենայն ինչ մոռացաւ, զհոգն իմ և զմտածութիւն գործոյս առ հասարակ. հապա ուրեմն թողթէր ընդ իս, և այն վեր ի վերոյ և յոյժ համառօտ բանիւք։

«Եւ իրրեւ լուայ ես յայլսուստ զկարծեցեալ ծանր հիւանդութիւն նորա, հաւատացի զառաջինն, և որպէս ճշմարիտ բարեկամ ախտակցեալ զրեցի նմա զիր կարեկցութեան, միանգամայն և ուրախակցութեան ընդ առողջութիւն նորա. խրատ եւս նմա և աղաչեցի զնա հոգ տանել միայն քաջողջութեան իւրում, զոր պատուականագոյն ասացի քան զամենայն ինչ նմա և մեզ ճշմարիտ բարեկամաց։ Ի վախճան գրոյս ծանուցի նմա զվիճակ կենացս և զհանգամանս գործոյս, և վասն այնորիկ զկարեւորութիւն նորա այր, օրինակ զայս։

«— Կամի՞ս զիտել զկենցաղավարութիւնս. զօրն ողջոյն և

«զգիշերն ամենայն փակեալ կամ ի տանս, պարապեալ
«ի գիրս, ի միայնակ մխիթարութիւնս. հազիւ միանգամ
«յօթնեկի գնամ ի քաղաքն հանդիպել Յովհաննու Եէրիմա-
«նի, և զրադրիդ Յարութիւն Յակոբի, ի հարցանել նոցա
«ինչ ինչ լուրս։ . . . Մնամ մինչև այդ արարեալ զեր-
«ծուացէ զիս Տէր ասի և հանդուցէ ի հոգոցս յայցանէ։
«Երկնչիմ միայն, գուցէ պատահիցէ ինձ մահ ի տեղւոջս,
«ուր չկայ զք հաւատարիմ՝ որում կարացից յանձնել ըզ-
«թուղթս և զկարեւոր գրուածս որք կան առ իս, և հաղոր-
«դել զիշխանութիւն գործակցութեանս, որպէս զի մի՛
«ի զուր եղիցին ցայսմայր աշխատութիւնք մեր։ Վասն այ-
«սորիկ կարեւոր է յոյժ լինել քեզ առ, զոնէ առ ժամա-
«նակ մի, մինչև տեսցուք զելս իրացն։» —

«Լուարուք արդ զպատասխանին Նորա, որ ունի այս-
պէս.

«— Յաղագս կենցաղավարութեանդ տխրեցայ յոյժ. վասն
«որոյ բարեգոյն համարիմ յանձնել զամենայն ինչ օրէնքս-
«գիտիդ և մեկնել ի տեղւոջէդ. իսկ զոր գրես, թէ յոյժ
«կարեւոր է միջոց ժամանակ զլինելս իմ այդր մինչև տե-
«սանել զելս իրացն, առ այս ասեմ. Ներողամիտ լիցի
«Հայրութիւնդ ձեր, զի ես ըստ բաւականին հաշեցի զկեանս
«իմ, և մանաւանդ այժմ, զի ոչ այլ ինչ մտածեմ բաց յա-
«ռողջութենէս, և այնչափ զգուեալ եմ մինչև չկամիմ լսել
«և յիշել զանուն . . . զպրոցին. չեմ ի կարծիս զի մի մեծ
«մասն դրամացն է ի յամրի, իսկ մնացեալն բաժին զիւաց
«լիցի։» —

«Տեսէք զայնչափ հոգացելոյս և նախանձայուզի գործոյս
առն զրան և զխորհուրդ, մանաւանդ զառաջնորդական հր-
բամանն։

«Ընթերցեալ իմ զայն՝ զարմացայ յոյժ ընդ յեղյեղուկ
միտս Նորա, և վշտացայ ընդ անկարելիր սիրտ Նորին. և
ապա մխիթարեցի զանձն իմ, յիշելով զրանս առաքելոյն
Պօղոսի որ զԵմատայ և զայլոց ամենց որք թողին զնա, և որ
ի կարգին . . .

«Այլ որ առաւել վշտացոյց զիս՝ են արարք նորա անշահութեան. քանզի յորժամ մեկնէր նա առաւի՝ ասացի նմա հրաման տալ ի տուն նամակաց յանձնել ինձ զթուղթս որ յանուն նորա ուղղեն ի վանացս, քանզի զտանին ի նոսին միշտ և որ առ իս թուղթք։ Խոստացաւ ինձ նա առնել զայն. բայց յետոյ խնացոյ զի տուեալ էր նա զայլ հրաման գրագրին իւրում, և պատուիրեալ նմա հաստատանել զամենայն թուղթս ի ձեռս իւր ի Կալկաթա։

«Եւ իբրեւ եհաս գիր ի վանացս յանուն նորա, ասացի ցգրագիր նորա՝ թէ ունիմ ես հրաման ի Լազարովչէ բանալ զթուղթսն՝ որք են ինքով վանացս, տուեալ նմա զպատճառսն. և նա առաւել բարեմիտ գոլով քան զտէր իւր՝ հաւանեցաւ։ Բացեալ իմ զծրար թղթոցն առաջի նորա՝ զոմ ինեմն և առ իս թուղթ որպէս յուսայի. ապա ինքեալ վերբաստին զծրար թղթոց նորա եռաւ գրագրին՝ առաքել նմա ի Կալկաթա։

«Բայց յինն ամսոյս իբրեւ եհաս յԵւրոպիոյ Մատրաս անուն նաւն, գնացի ես ըստ սովորութեանս ի տուն նամակաց որոնել զթուղթս առ մեզ, և տեսի ի ցուցակի անդ երկու գիր եկեալ յանուն Լազարովչի. խնդրեցի տեսանել թէ ինքով վանաց էին այնք. ասաց ինձ գլխաւորն նամակատանն՝ թէ առաքեալ էր նորա զայնս ի Կալկաթա ի ձեռս Աղաբեգեան ընկերութեանն՝ ըստ պատուիրանի Լազարովչի, զոր գրեալ էր նմա ի Պինանգայ, զոր և եցոյց ինձ ի հաստատութիւն։ Ընդ այս գնացս նորա ապշեցայ յոյժ, և ի միտս առի զի յայտնապէս առ շարութեան և ամբարտաւանութեան իւրոյ արարեալ էր նորա զայն. քանզի չլուայ ես անմիտ խորհրդոյ նորա՝ յանձնել զամենայն ինչ օրէնագիտին և մեկնել ասի. և որպէս զի պակասեալ ինձ կարեւոր թղթոց այսր՝ մի՛ յաջողեցի գործս, ըստ գուշակութեան իւրոյ։...

«Տեսէ՛ք ուստի՛ և զիարդ յաւելուն ինձ օր ըստ օրէ հոգք և վիշտք։ Եւ իմ զոյսոսիկ յառաջագոյն գուշակեալ, ապ արարի ձեզ չառաքել բնաւ յանուն այլոյ գիր. բայց ապզարարութիւնս արհամարեցաւ. գոնէ այսուհետեւ զգու-

շացարուք աղաչեմ. և եթէ իցեն անդ առ իս թուղթք յանուն նորա ուղղեալք, սկսեալ յ8 օրէ Մայիսի մինչեւ ցժամանել գրոյս այդր, զօրինակ նոցին առաքեսջիք ինձ։

«Արդարեւ այր խորամանգ, անհաստատ իրանս և անհաւատարիմ ի բարեկամութիւնս. բարիքն որ ի նմանէ հոմանեան են ընդ չարիսն։ . . . Ոչ ուրանամ ես զօգնականութիւն նորա ի գործս. բայց յորժամ ի կշիռ դնեմ զբարերարութիւն և զչարութիւն նորա միանգամայն՝ արդարեւ տարակուսիմ ես յոյժ որոշել զառաւելութիւն նոցին։ . . . Շատ լիցի ի ժամուս համառօտ ասացեալս. զբովանդակ գնացից նորա և զայլոց՝ յորժամ յաջողեցի ինձ Տերամբ ի վանս դառնալ՝ ըստ ասելոյ պատմեցից, և յապա եկեղցն ի գիր արձանացուցից։ . . .

«Այսչափ ինչ սակս զգուշութեան ձեզ գրեցի, զի յորժամ եկեսցէ նա այդր ի վանս՝ գիտասջիք թէ ո՛րպէս պարտ լցէ վարել ընդ նմա, և քանի՛ արժան լցէ նմա պատիւ, և հաւատս բանիցն ընծայել. քանզի սովորութիւն է նորա զամենայն արդիւնս և գյաջողութիւն գործոյս՝ հնարից և խորագիտութեան իւրում տալ, իսկ զվնասն և զանյաջողութիւնն՝ արհամարհութեան խրատու իւրոյ և բանիցն. զորոց զհակառակն պարտ է հաւատալ։ . . .

«Յայսմ ամի յ9 հոկտեմբ. մեռաւ վարժապետն օրինաց Մբասր ՊաՀլն. ընդ կորուստ նորա ցաւին բազումք, և ես մանաւորապէս, քանզի այր հմուտ և փորձ էր յոյժ օրինաց և հանգամանաց աշխարհիս. և զի ունէր մանաւոր գութ ի վերայ իմ, զոր ըստ իւրոյ ասացեալ էր երբեմն Կորոսնի, թէ չիք ի քաղաքիս օտարականս՝ որում առաւել կարելիւ լինի ինքն որպէս ինձ, թէպէտ և չունի ծանօթութիւն ընդ իս. բայց քանին իւր Միս Կուտնիճ, որ ի 182ԿԱ ամին ի միասին նոյնոսաւ եկաք այսր, խօսեցեալ էր զինէն բանս բարութեան. և զի տեսեալ նորա ասա զամենեցուն իմ ի դասս Վարդապետաց, և զասածսն կրեալ վասն ազգա-

տաց ազգիս, մանաւոր իմն գութ և յարգութիւն ունի ինքն, ասէ, առ իս։

«Ահա դժբաղդութեամբս կորուսաք զայսպիսի այր, յառաջ քան զկատարումն գործոյս։ Ասի թէ ի տեղի նորա կարդեցի Մլուսոյր Սամէլ փաստաբանն իմ. որ թէ և չունի զնորին հմտութիւն և զփորձ, բայց յուսամ թէ լիցի իրաց մերոց նպաստաւոր, ծանօթ գոլով խնդրոյս։

«Մնամ Արհիապատուութեանդ ձերում

«Ի Մարտաս. 30 հոկտեմբեր 1830.

«Նուաստ ծառայ

«Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈՒԹՈՒՐԵԱՆ.»

Յետ աւուրց ինչ գրէ Հ. Սարգիս և այլ թուղթ առ Գերապայծառ Սուքիաս Սոմալ օրինակ զայս.

«Զլուր վճռոյ Կոպլռնեան դատին որ ընդ Մուրատեանս՝ որչափ ինչ ի սուղ ժամու լուեալ էի այլուստ՝ եռու ի նախընթաց թուղթս իմ. երկրորդեմ ի սմին զայն, հանդերձ մանրամասն և կարեւոր ծանօթութեամբ՝ լուեալ ի բաղմաց ականջալուր և հաւատարիմ արանց։

«Արդ խնդիր Կոպլռնի զկնի քննելոյ և որոշելոյ ի վարժապետէ օրինաց՝ մնայր վերատին քննութեան և վերջին վճռոյ դատաւորաց Ատենիս։ Ահա այսօր յ12 Նոյեմբերի, յետ կատարելոյ յԱտենիս հանդիսաւոր երդմանց համօրէն պաշտօնէից Ատենին՝ առ ի հաւատարիմ ծառայութիւն նորոյ թագաւորին, և արդարութեամբ վարել զպաշտօն իւրեանց, եռուն դատաւորք զվճիռն իւրեանց այսպէս.

«Տեսանեմ ես, ասէ նախագահ դատաւորն, զի Սամուէլ «Մուրատ յամենայնի արդար և ուղիղ վարեալ է ի պաշտօն «կուսակալութեան իւրոյ. բայց որդիք նորա, զոր «պարտապանս և ոչ կուսակալատարս ճանաչեմ ես, յոյժ ան«կարգութեամբ վարեալ են ի պարտս իւրեանց. անիրաւու«թեամբ պահեալ են զառացուածս Եդուարդայ Ռաֆայէլի

“ի ձեռս իւրեանց, և ի զուր վարեալ են զՊ. Կոպլրոն ի դա-
“սատանա. մերթ պատճառելով թէ ողորմութեանն պարտ
“է լինել ի Մարդաս, և մերթ սուտ համարելով զիշխանու-
“թիւն գործակալութեան Արպլբինոթեանց, և մերթ ասելով
“թէ չկամին բնաւ հանել զարծաթն ի ձեռաց իւրեանց։
“Հարցանեմ ես, ասէ. հնարաւոր իցէ ումեք արդեօք սուտ
“գործակալութիւն հնարել, և այն յանուն լօրտ Զէնարրին։
“Ահա այսպիսի են անմիտ կարծիք և յանդգնութիւն Մու-
“բատեանց, որք յամենայնի հակառակին, և առ ամենայն
“ինչ ընդդիմաբանեն։ . . . Եդուարդ Մուրատ է ինքն ին-
“քեան օրէնագէտ. կարծէ և առնէ զոր ինչ կամի։ . . .
“Չկամիմ ես առաւել ինչ խօսել, քանզի յայտնի են ամե-
“նեցուն վարք Մուրատեանց։

“Կարծեմ ես, ասէ, թէ ողորմութեանն պարտ է լինել
“Յերուսաղ, այլ թէ յոր կողմն, և ի ձեռն որոց, և կամ բա-
“ժանելի իցէ արծաթն ի մէջ ժառանգաց, թողում ես զայն
“քննութեան և որոշման լօրտ Շէնարրին։ Միայն վճռեմք,
“զի մնացեալ մասն արծաթոյն որ կայ առ Մուրատեանս՝
“յանձնեացի գանձապետի տէրութեանս, մինչև յանդիման
“բերցի Առենիս հրամանագիրն լօրտ Զէնարրի. ապա տացի
“հրաման իմէնջ՝ յանձնել զարծաթն առն առ որում դատնի-
“ցի հրամանագիրն։ Եւ եթէ չհաստատեցի արծաթն մինչև
“յելս տարւոյս, ելցէ հրաման յատենէս՝ ուժգին պահանջել
“զայն ի Մուրատեանց։ Եւ քանզի Մուրատեանք են, ասէ,
“պատճառք հակառակութեանս, վասն որոյ պարտին նոքա
“հաստատել զբովանդակ ծախսն երկուց կողմանց։” —

Յայնժամ յոտն եկաց ընդհանրական փաստաբանն ի կողմանէ Մուրատեանց և ասաց՝ թէ “Բովանդակ վէճ և հակառակութիւնն էր վասն զանազանութեան վաշխին պահանջման. վասն որոյ ազատ լիցին Մուրատեանք ի ծախուց օրինաց։” —

“Շարժեալ նախագահ դատաւորին զգլուխ իւր, ասէ.
“Ոչ. ոչ. զի մի միայն գիր Մուրատեանց, ասէ, որ առ
“Պ. Արպլբինոթն բաւական է դատապարտ կացուցանել

«զնոսա. քանզի անդ յայտնապէս ասեն՝ թէ չենն նոցա կամք
«հանել ի ձեռաց իւրեանց զարծաթն Ռաֆայէլեանց. վասն
«այսորիկ եկեալ է խնդիրն յանդիման Աստենիս, և. վասն
«այսորիկ եղեալ են ծախքն։ »—

«Ապա խօսել սկսանի երկրորդ դատաւորն օրինակ զայս.
«Զեն ինձ կամք, ասէ, խիստ ինչ բարբառ արտաբերել
«առ. այլ այսչափ միայն ասեմ, զի արարք Մուրատեանց
«յամենայնի խարդախութեամբ և նենգութեամբ են. վասն
«որոյ և ես ի կարծիս եմ հաստատանել նոցա զբոլանդակ
«ծախսն օրինաց երկուց կողմանց։ »—

«Իսկ երրորդ դատաւորն չէր ի միջի, բայց զկարծիս իւր
համաձայն ընկերաց իւրոց տուեալ էր յառաջագոյն։

«Այլ տեսա՛ք, թէ զիարդ ամենայն ինչ արդարապէս և
ըստ արժանւոյն պատահի. քանզի այսմ վճռոյ պարտ էր
աւուրքս ինչ յառաջ հրատարակիլ, բայց ի պատճառս մահ-
ուան թագաւորին Անգղիացւոց՝ թողու յայն օր, յորում
գրեթէ ամենայն աւագանին տէրութեանս, և բազումք ի քա-
ղաքացւոց առի յԱստենի անդ գտանին, և Մուրատեանք
գլխակոր և ցամաքեալ ի մէջ նոցա։

«Զկնի վճռոյս՝ աւուրս ինչ չհանդիպի Պ. Աբրահամ Ազա-
նուրն Եղուարդայ. որոյ գժուարեալ ընդ այն՝ գանգատ
ունոյց, իբրեւ թէ ուրախացեալ էր Ազանուրն ընդ կորուստ
դատի իւրեանց. և թէ լուեալ էր Պ. Եղուարդայ, զի մեք
եւս կամիմք պահանջել ի նոցանէ զվաշխ գրամագլխոյ հրի-
տակին, չգնոյ Ազանուրն վիճիթարել և քաջալերել զնա։ Որոյ
պատասխանի տայ նա թէ Եղուարդ Մուրատ յերազոնայ
ի ժամուս, բայց զկնի գուցէ ստուգեցի երազ նորա։

«Մնամ միշտ

«Արհիապատուութեանդ ձերում

«Ի Մատրաս. 23 օգոստոս. 1828.

«Նուաստ ծառայ

«Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈՂՈՐԵԱՆՑ.»

ԳԼՈՒԽ ԻԶ.

Հասանել կարեւոր վկայագրոյն տուչելոյ յԱշտարիացւոց պետութեանն վասն Մխիթարեանց Մխիթարեանաց. — Օրինակ վկայագրոյն. — Կարծիք Կօրտոնի և Մորատեանց զայնմ. — Որոշումն դատին Մորատեանց ընդ վիրեանս. — Բանք Պ. Եղուարդեայ Մորատի զեղծօրէն և զդատաւորաց. — Թուղթ Հայր Սարգսի զայսմանէ և զայլոց ինչ իրաց առ առաջնորդն.

Որ ուրեմն, զկնի երկուց ծանրագանգաղ և անվախճանելի ամաց անցանելոյ ի վերայ առաջին վճռոյ անգղիական Սենին Մատրասու, և յետ բազում անհամբերութեան և մտատանջ ալեկոծութեան, ընդունի Հայր Սարգիս վարդապետ Թէոդորեան զգրաւոր վկայութիւնն ի Վենետկոյ, ըստ խնդրեալն յՍենէն ըստ ամենայն պայմանաց եղելոց ի վճռի անդ դատաւորաց որ յ31 ամսեանն մարտի 1829 ամի Տեառն, և զայն յերիս օրինակս. որոց առաջինն յ19 Նոյեմբերի 1831 ժամանէ ի ձեռս Նորա, և երկրորդ օրինակք հասանեն ապա ուրեմն մի ըստ միոջէ յետ առաջնոյն այնորիկ, յայլ և այլ նուագս։

Առեալ Նորա զթուղթսն քաջալերի և զոհանայ յոյժ զինամոց Բարձրելոյն, որ հոգայ նմա զայն լուելի՝ ըստ ազգարար զրութեան իւրոյ և ըստ թախանձանաց. քանզի առ ի վերուստեան և հաւատարիմ առնելոյ Մխիթարեանութեան զվկայութիւնն զայն զհանգամանաց և զիշխանութենէ իւրմէ առաջի Սենին Անգղիացւոց ի Մատրաս՝ առնու զայն ի վարչութենէ իսկ անտի Վենետկոյ, և հաստատել տայ ի Հիւպատէն Անգղիացւոց որ ի Վենետիկ և յայլ երկու երեւելի տրանց յազգէ նոցին որ ի Լոնտոն։ Եւ այս պատճէն է վկայագրոյն, զորմէ են բանքս.

„ Առ Գերապայծառ Սուքիաս Սոմալ Արքեպիսկոպոս
„ և ընդհանրական Արբայ Հայոց Մխիթարեանց սրբոյն
„ Ղազարու ի Վենետիկ .

„ Տեսչութիւն կայսերական Բարձրութեան Պերճափառ Ար-
„ չիդքսին փոխարքայի՝ մեծարոյ հրովարտակաւն թ. 4507 ,
„ շնորհելով ի 16 ամսեանս մայիսի յայտ առնէ Գերապայ-
„ ծառ Արքեպիսկոպոսին .

„ Ա. թէ Հայ կրօնաւորք , կամ Մխիթարեան Հարք սրբոյն
„ Ղազարու ի Վենետիկ կացուցանեն զբարոյական ինչ մար-
„ մին կարող՝ ըստ օրինաց պետութեանս՝ առնուլ կալուածս
„ և զլուխս դրամոց ի մատակարարութիւն տակս բարեպաշ-
„ տական գործոց կամ բարեգործութեանց յօգուտ համազ-
„ գեաց իւրեանց ։

„ Բ. թէ նախատացեալ Միաբանութիւնն կարող է պաշտ-
„ պանութեամբ օրինաց գնել և ստանալ երկիրս ոչ միայն
„ յառանձին պէտս ապրուստի , այլ վասն գործոյն ողոր-
„ մութեան առ որ կարգեալ է հրիտակն Սամուէլ Մկրտիչ
„ Մուրատի ։

„ Գ. թէ այս Միաբանութիւն կարող է կարգել զմի կամ
„ զբազում գործակալս կարողս ընդունել օրինաւորապէս
„ դրամս կարգեալս ի գործս ողորմութեան , և միանգամայն
„ բաւական տալոյ յետկարս ընդունելութեան և ձեռագիրս
„ հաստատման պարտեաց ամենայն հաւատարմութեամբ և
„ վաւերական զօրութեամբ ։

„ Յայսմ օրինակի քննութեանց պարունակելոց ի յարդոյ
„ թուղթն 24 հոկտեմբերի անցելոյ և լուծեալ խնդրոց
„ ի բարձրագոյն Ատենէ արդարութեան ի Մատրաս , յուսայ
„ տեսչութիւնն , թէ ոչ եւս եղիցին այլ նպատակք . ուստի
„ կարող լիցին Մխիթարեան Հարք մնանել ի ժառանգու-
„ թիւն , և ընդունել զհրիտակն աքայ ռուփի 275,078 , անա 3,

„ հաստատեալ կտակաւ որ յշ յուլիսի 1816, ի Սամռէլ
„ Մկրտիչ Մուրատէ ։

„ Վենետիկ. 21 Մայիս. 1830.

„ ՍՊԱՒԻՐ. ”

„ Նախագահական Դիւանատուն կայսերական թագաւո-
„ րական Տեսչութեան Նահանգաց Վենետկոյ հաստատէ,
„ թէ այս պատճէն բաղդատեալ է ընդ բնագիր հրովարտա-
„ կին տուելոյ Գերապայծառ Սուքիասայ Սմալի, և գտեալ
„ է գլխովին համեմատ ։

„ Վենետիկ. Դ. յունիս. 1830.

„ Կայսերական Արքայական Ատենագրքիր
„ Տեսչութեան և Նահագահութեան

„ ԿԱՐՈԼՈՍ ՊԱՐՈՆ ԲԱՍԻՈԹԹԻՆԻ. ”

Զայս վկայական տայ Հ. Սարգիս Թարգմանել յիտալա-
կանէն յանգղիացի լեզու ձեռամբ Յովհաննու Շէրիմանի, և
ցուցանէ վարչի դատին իւրոյ Կօրտոնի, որ հաճի ընդ այն
յոյժ, ի բաց թողով զառաջին կարծիս իւր, և ասէ թէ շա-
տացի ընդ այն ատեանն ։ Միանգամայն և գովէ յոյժ զփոյթ
և զհնարաւոր Ջանս Հ. Սարգսի և Միաբանութեան նորա.
քանզի չկարծէր և չյուսայր այնպիսի վկայութիւն գտանել
ի Վենետկոյ ։

Ազգ առնէ Կօրտոն վաղվաղակի վարչի դատին Մուրա-
տեանց, Վայվաշի, թէ եկեալ է ի Վենետկոյ վաւերական
հաստատութիւն պայմանաց խնդրոյն. որում ասայ նա պա-
տասխանի՝ թէ չունի ինքն ինչ ընդդիմութիւն՝ եթէ իցէ այն
ըստ օրինաց ։

Առաքէ նմա Կօրտոն զօրինակն հաստատութեան եկելոյ

ի Վենետկոյ. և նորա ցուցեալ զայն Մուրատեանց, թէպէտ զառաջինն ցուցանեն նոքա բաւականութիւն ընդ այն, բայց ապա Յովհաննէս Մուրատ ոչ բաւական համարի զայն. քանզի ծանուցանէ գրով Եդուարդայ, ձեռամբ Վայվաշի, թէ

„ Ըստ խորհրդոյ փաստաբանին իւրեանց Պէթի, պարտին
„ ընդդիմանալ վաւերական հաստատութեանն որ ի Վենետ-
„ կոյ տէրութենէն՝ վասն երից պատճառաց. Նախ՝ զի վա-
„ ւերականն այն չէ հաստատեալ երդմամբ։

„ Երկրորդ՝ թէ ասացեալ տէրութիւնն կամի վաճառել
„ զգետին իւր Մխիթարեան Միաբանութեան, վասն այսորիկ
„ տուեալ է զայն հաստատութիւն, և վասն այսորիկ շահա-
„ սէր կուսակից է նա։

„ Եւ երրորդ՝ թէ Մխիթարեան Միաբանութիւնն է տակ
„ կրօնաւորական ընկերութիւն և ոչ ուսումնական, ոչ յազ-
„ գէն իւրմէ և ոչ ի տէրութենէն Վենետկոյ հաստատեալ։
„ Եւ ապացոյց այսմ, զի մատնորա է ի Պօլիս, կամ այլ ուր
„ ուրեք և կամիցի։... Նոյնպէս պարտին, ասէ, ընդդիմանալ
„ և ընդհանրական փաստաբանին՝ որ կամի պահանջել ի նո-
„ ցանէ զվաշխ հրիտակին ողորմութեան։ „

Ընթերցեալ Պ. Եդուարդայ Մուրատի զյայտարարութիւն եղբօր իւրոյ Յովհաննու, զառաջինն կամի տեղի տալ բանից նորա. բայց Պ. Աղանուր որ գտանի առ նմա ի ժամուէ՝ որ-համարէ զանմիտ ընդդիմութիւն նորա։ Յայնժամ հաստատեալ Եդուարդայ յառաջին միտս իւր՝ առնէ պատասխանի գրութեան եղբօր իւրոյ Յովհաննու այսպէս.

„ Ամենայն արարք մեր ի բանս հրիտակին ողորմութեան՝
„ ծանեալք մեք ի վախճանի՝ զի սխալ, անիրաւ
„ էին, ընդ որ զզջացաք, ճիւաղեցաք, և նախատեցաք այն-
„ չափ։ . . . Ապա ի դարման տանել առաւել չարեաց, թո-
„ զաք զիրաւունս մեր և աղքատաց ազգին ի կամն Ամենից։
„ Այժմ կամիս դու զի վերատին միանցուք յառաջին գործս
„ անիրաւութեան, յորում յայտնապէս տեսանեմ՝ զի ոչ
„ միայն չկայ մեզ յաջողել բնաւ, այլ առաւել եւս ճեղքել.
„ քանզի զայրացուցանեմք ընդդէմ մեզ զԱստուծն, որում

«տուեալ եմք միանգամ զամենայն իրաւունս մեր և ազգա-
«տաց ազգին։

«Թողում ասել՝ զի արդէն տուեալ եմք մեք զհաւանութիւն
«մեր գրով վարժապետի օրինաց ընդ եկեալ վաւերական
«հաստատութիւնն, թողով զամենայն ինչ ի կամս և յընտ-
«րութիւնն Ասենին. պարտիմք ուրեմն զայն հաւանու-
«թիւն մեր յետս կոչել։ . . .

«Արդ ծանուցանեմ և ես քեզ, թէ չկամիմ ես բնաւ այ-
«սուհետև ցուցանել ինչ ընդդիմութիւն ի գործս յայս հրի-
«տակին. քանզի բաւականապէս խրատեալ և միսիթարեալ
«եմ։ Զնոյն խրատս և քեզ տամ՝ եթէ կամիս լսել ինձ. ապա
«թէ ոչ, արա՛ զոր ինչ և կամիս։ Միայն ազդ առնեմ քեզ
«գրովս՝ զի զինչ միտս և ծախք օրինաց որք ծագիցին անտի՝
«չեմ ես նոցին երաշխաւոր և ոչ մի առուիոյ։»

Պատմէ Պ. Աբրահամ Աղանուր Հ. Սարգսի զվերոյիշեալ գրութիւնս որ ի մէջ Մուրատեան եղբարցն, և Հ. Սարգիս առնէ պատասխանի բերանով ընդդիմաբանութեան Յովհան-նու Մուրատայ այսպէս, թէ։ «Նախ՝ ասացեալ վաւերական «հաստատութիւն Վենետկոյ տէրութեանն ոչ է առակ վկա-«յութիւն հասարակ մարդոյ, այլ վճիռ բացարձակ փոխար-«քայի մեր, որով յայտ առնէ ամենեցուն և մանաւորա-«բար Ասենին Մատրասու՝ թէ ո՛յք են Մխիթարեան Հարքն «որք ի Վենետիկ, զինչ պաշտօն և զինչ իշխանութիւն նո-«ցա անդ. վասն որոյ անտեղի և անպատշաճ զգահանջել «ի տէրութենէ մեր երդումն ի հրովարտակի անդ իւրում։

«Երկրորդ, տէրութիւնն Վենետկոյ չունի բնաւ կարո-«ղութիւն վանատեղոյ զգեղին իւր Մխիթարեան Միաբանու-«թեան, այլ ընդ հակառակն Միաբանութիւնն ունի կարո-«ղութիւն գնելոյ զգեղին վասն բանի հրիտակին ողորմու-«թեան. ապա չկայ կողմնակցութիւն շահախնդրութեան «ի գործս ասացեալ տէրութեանն։

«Եւ երրորդ, մասն Մխիթարեան Միաբանութեանն որ «ի Պոլիս՝ ոչ բնաւ կացուցանէ այլ միաբանութիւն անդ, «այլ գործակալ և պաշտօնատար է Վենետկոյ Միաբանու-

«Թեանն, ուստի և ամենեւին անտեղի և ընդ վայր են բանք
«Պ. Յովհաննու։ Թող զի Մուրատեանք ի պատասխանիս
«իւրեանց առ հարցմունս վարժապետին օրինաց զՄխիթա-
«բեան Միաբանութենէն՝ յամենայնի զանգիտութիւն խոս-
«տովանեցան. զիարդ և ուստի այժմ զայսպիսի ինչ երա-
«զեն նոքա։»

Կամի վարիչ դատին Կօրսոն մատուցանել նախ դատաւո-
րաց զվաւերական հաստատութիւնն Վենետկոյ, և իմանալ
զհաճութիւն նոցա ընդ այն. ապա տալ զայն վարժապետին
օրինաց, ի քննել և տալ տեղեկութիւն Ատենին։ Թէպէտ և
այս ընթացք Կօրսոնի ոչ ուղիղ թուի Հ. Սարգսի, այլ նա
հաւանեցուցանէ զսա՝ ասելով թէ այն է կարգ օրինաց։ Լուէ
նա յոչ կամաց, բայց հաստատեալ ի մտի՝ թէ չէին այն
ընթացք նորին ուղիղ. որպէս և տեսանի իսկ զկնի.
քանզի իբրեւ մատուցանի այն դատաւորաց յատենին որ
յ30 մարտի 1831, զարմացեալ նախագահ դատաւորին ասէ;
«Ահա՛ նոր իմն տեսանեմք օրէնս. փոխանակ մատուցանելոյ
«զայս վարժապետին օրինաց և ինքանէ բերել տեղեկու-
«թիւն Ատենիս, ի մէնջ խնդրի հաճութիւն հաւանութեան։
«Եթէ մեր իցէ զայս առնել, ապա զի՞նչ մնայ առնել վար-
«ժապետին, և ընդէ՞ր իցեմք զնա յայս գործ որոշեալ։»

Եւ այսպէս արհամարհեալ դատաւորաց զառաջարկութիւն
Կօրսոնի՝ մերժեն զայն յԱտենէն յետ հրամանն տալոյ փաս-
տաբանին Հ. Սարգսի ընթեռնուլ անդ զվաւերական վկայու-
թիւն Վենետկոյ տէրութեանն և յետ նշանակելոյ ինչ ինչ
անտի. ապա հրամայեն զի յանձնեսցի այն վարժապետին
օրինաց՝ ի քննել զայն և տալ տեղեկութիւն Ատենին։

Թէպէտ այս գնացք Կօրսոնի, որպէս ասացաք, և որպէս
ինքն իսկ խոստովանի զկնի, սխալ էին ըստ կարգի օրինաց,
բայց ընթերցումն վաւերական հաստատութեանն յատենի
անդ յականջս դատաւորաց՝ օգուտ մեծ առնէ իրաց Հայր
Սարգսի. քանզի իմացեալ նոցա յառաջագոյն զհաստատու-
թիւն վաւերականին Վենետկոյ տէրութեանն, ասն ապա
զհաճութիւն հաւանութեան ընդ այն վարժապետի օրինաց

առանձինն. և նորա վստահացեալ՝ տայ զբացարձակ տեղեկութիւն իւր Ատենին։

Զայս իմանայ Հ. Սարգիս ի նոյն իսկ ի վարժապետէն. քանզի պատմէ նմա երբեմն մտերմաբար՝ թէ վասն նոր գոլոյ իւրոյ յայնմ պաշտաման, և վասն կարեւորութեան մեծի խնդրոյն, չկարէր ինքն առանց խորհրդոյ նախագահ դատաւորին տալ տեղեկութիւն Ատենին։ Քանզի ամօք ինչ յառաջ մեռանի առաջին վարժապետն օրինաց՝ Պաբէն անուն, և ի տեղի նորա կացուցանի Սալէհ փաստաբանն Հ. Սարգսի, որ և ծանօթ և տեղեակ էր խնդրոյ հրիտակին ողորմութեան, և ներկայ գոյանի յԱտենի անդ. յորմամ ընթերցեալ լինի վաւերական հաստատութիւնն այն Վենետկոյ տէրութեանն, և իմանայ ի շրթանց նախագահ դատաւորին գրաւականութիւն նորա ընդ այն, վասն որոյ և համարձակի հարցանել զկարծիս նորա։ Վստահացուցանէ զնա դատաւորն ընդ բաւականութիւն վկայութեանն, և ասէ ցնա քննելև ի կարգի դնել զայն, և տալ տեղեկութիւն Ատենին։

Յառաջ քան զգործառնութիւնս զայս գրէ Հայր Սարգիս թուղթ առ Գերապայծառ Սուքիաս Սոմալ ի Վենետիկ օրինակ զայս.

« Ատուածապատիւ, և այլն։

« Շնորհք Ատուծոյ, որ յետ բազում հոգոց և տատամբութեանց տուաւ ի տէրութենէ այսի խնդրեալս հաստատութիւն, զորոյ զերեսին օրինական հաստատեալս այդր և ի Վենետն վաւերական վկայիւք՝ յերիս նուագս ուրոյն ուրոյն ընկալայ։ . . . Յուսացեալ եմ ես ի Տէր ի պաշտպանն աղքատաց ազգիս, զի յաջողեսցի գործս, որով տարեալ ըստ կատարեալն յաղթութիւն՝ ցնծացուք մեք և ազգս առհասարակ։

« Կարեւոր լուր տեղւոյս և կարեւորագոյն ձեզ տալոյ այս է։ Փնտռութիւն և որոշումն վիճոյ Մուրատեանց եղբարց ընդ վիմեանս թէպէտ յետս անցեալ ամի եղեւ ի միջնորդ դատաւոր-

բաց, ապայն ի մէջ եղբարցն կայ դեռ այն անորոշ և անաւարտ. քանզի վճիռ նոցա փոխանակ աւարտելոյ զվէճն և զնոսա ի խաղաղութիւն հաստատելոյ, առաւել ևս պատճառ եղեւ անվախճան հակառակութեան և անհաշտ թշնամութեան նոցա։ Քանզի երէց եղբայրն ոչ աւելի քան զ200,000 ռուբլի խոստանայր տալ կրտսեր եղբօրն, և յորմէ կրտսերն ոչ աւելի քան զ100,000 ռուբլի պահանջէր. արդ եռուն միջնորդ դատաւորքն վճիռ՝ ընդունել նմա 700,000 ռուբլի, զոր և արտաքոյ իւրում ակնկալութեան խոստովանի ինքնին կրտսերն։

«Ընդ այս անակնկալ և անկարծելի վճիռ նոցա ապշեալ և զարհուրեալ Եդուարդայ կայ ի տաղնապի մեծի. արհամարհել զվճիռ նոցա և յԱտեանս բողոքել ոչ կարէ՝ ասկա տուգանաց 100,000 ռուբլոյ՝ եթէ չհնազանդիցի վճռոյ նոցա, ըստ պայմանացն։ . . . Իսկ հանել ի ձեռաց զայնչափ գումար դրամոյ՝ ճահ է նմա, և կամ ոչ ունի այնչափ։

«Արրահամ Աղանուրն չերթեւեկէ բնաւ առ Յովհաննէս Մուրատ. իսկ առ Եդուարդ Մուրատ երթեւեկէ երբէք երբէք ի հրաւիրանաց նորա։

«Զկնի վճռոյ միջնորդ դատաւորաց՝ գնացեալ Աղանուրի առ Եդուարդ դատանէ զնա թախծագին արտաքուստ և արտասուելոց աչօք՝ զայրացեալ յոյժ ընդդէմ եղբօր իւրում։ «Տե՛ս ասէ «զանիրաւ վճիռս դատաւորաց. զի եթէ դրամանդակ ինչս իմ «վաճառեցիս, ասէ, չկարեմ հատուցանել զպարտս իմ, այլ «տակաւին ճեամ պարտապանն նմա իբրեւ 300,000 ռուբլի։»

Յայտնէ նա յայնժամ Աղանուրի և զիորհուրդ փատաբանից և զկարծիս վարչի դատին իւրեանց՝ թէ անտարակոյս ունին հատուցանել զվաշխ հրիտակին. քանզի լուեալ են նոքա իբրեւանոյ նախագահ դատաւորին թէ պայմանք դաշանցս եղծեալ են յոլորովին։ . . .

«Գիտե՛մ, ասէ գիտե՛մ, զի այս ամենայն չարիք և թշուա-«ռութիւնք դոր կրեմ ես այժմ՝ ե՛ն ե՛ն հատուցումն անի-«բաւութեանն զոր արարի ես վարդապետին, զի փոխանակ «երախտեաց նորա՝ չարիս հատուցի նմա։» Զայս ասացեալ՝

հեղձամղձուկ լինի, և արտասուք յաչացն քամին։ Արդա-
հատեալ նմա Պ. Աղանուրի՝ ոխիկ զնա և քաջալերէ, յու-
սացուցանելով զնա ի գթութիւն Մխիթարեանս, թողուլ
կամ դարձուցանել նմա զվաշխ հրիտակին՝ եթէ պահանջեսցի
ի նոցանէ յԱտենէս։

„ Քաջալերեալ նորա ի բանից Աղանուրի՝ խոստանայ չհա-
կառակիլ և չընդդիմանալ բնաւ այնուհետև, ոչ միայն դարձ-
ուցանելոյ ինձ զաւանդեալ արծաթն, այլ և պահանջանոց
վաշխի հրիտակին, եթէ յԱտենէս կամ ի մէնջ պահանջեսցի
այն։ „ Եւ եթէ եղբայր իմ հակառակեալ ընդդիմասցի, չկա-
„ րէ, ասէ, նա միայն առնել ինչ. քանզի ինքն կողաքակ
„ ի նմանէ եղեալ՝ կուսակից մեզ լիցի յԱտենի։ „ Միայն
խնդրէ յԱղանուրէն հաստատութիւն վստահանալոյ ի բան
յուսադրութեան նորա։ Իսկ Աղանուրի հաւատարիմ արա-
րեալ նմա զխոստումն իւր, ասէ՝ թէ „ Վստահ և հաւատի
„ եմ յոյժ, զի Մխիթարեանքն չկամի բնաւ զքանդումն
„ տանն ձերոյ, քանզի տեսանեմ զի վարդապետն յետ այս-
„ չափ ի ձէնջ զրկելոյ և անիրաւելոյ՝ տակաւին ցաւի յոյժ
„ վասն ձեր։ Պատ է զի տեսցեն զձեզ զդատապարտեալ և ծա-
„ նուցեալ զխաղանդ։ „

„ — Ա՛հ, ասէ Եդուարդ, արդէն բազում անգամ՝ որ-
„ պէս և այսօր իսկ՝ խոստովանեալ եմ առաջի քո և այլոց
„ գյանցանս իմ. զի եթէ տակաւին եւս ապերախտ լիցիմ
„ բաւութեանց վարդապետին և Մխիթարեանց նորա,
„ պարտիմ ես ամենաթշուառ ոք լինել։ „ —

„ Զայս ամենայն անցս բանից եկեալ Աղանուրի պատմեաց
ինձ առանձինն։ Զեմ ես յայտնեալ ուրեք զկամս Մխիթա-
նութեանս որ վասն բանի վաշխին. վասն որոյ ասացի նմա՝
թէ „ Աւաղ զիտես դու թէ Մխիթարեանքն արտասցէ, կամ
„ կարող իցէ առնել նմա զայն չնորհ։ „ „ Տեսի զնա, ասէ,
„ յանհնարին տրտմութեան, և զրեթէ ի յուսահատութեան.
„ երկուցեալ՝ մի գուցէ վնասիցէ կենաց իւրոց, եռաւ նմա
„ զայն յոյս ես յինէն, և ոչ ի քէն, ճանաչելով իմ զանցի-
„ շաչար կամս և զբարեգթած սիրտ Մխիթարեանց։ „ —

«Զգուշացուցի ես զԱղանուրն չիասել նմա և ոչիրում այնպիսի ինչ. քանզի, ասացի, չկարեմ ես բնաւ ասել կամ խոստանալ ինչ ի ժամուս՝ մինչեւ չիմացայց զկամս և զվերջին վճիռ Աստենիս։ Եւ յիրաւի. քանզի կարի իմն զգուշութեան պէտք են մեզ իսկել զկրաց, յանձն դալով ինդիրս Աստենին յամենայն կողմանց. վասն որոյ պարտիմք մեք որոշման և վճռոյ նորին։ Զի եթէ խմացի նա թէ կայ ի միջի մերում դաշնակցութիւն ինչ ի վերս ազգաստաց, զայրացի յոյժ, համարելով զմեզ անհաւատարիմ ի պաշտամանն մերում, և գուցէ զրկեսցէ զմեզ ի բոլորձակ իշխանութենէ մատակարարութեանն, և կամ այլազգ անօրինեսցէ զգործն ազարմութեան։

«Ի՞նչ ապաքէն կրոյս Պարոն Պօղոս Լազարովիչ զկրաւունս աշխատութեան իւրոյ ի գործս յայս. վասն զի ասաց Աստենին՝ թէ չէ նորա անարատ ձեւոք աշխատեալ յայս գործ, այսինքն անկրաւեալ է ազգաստաց միջնորդութեամբ իւրով ի Թոզուլ Մուրատեանց զվաշխ զրամագլխոյ հրատելին ազարմութեան։

«Եւ ո՞չ ապաքէն նոյն անցք և ընդ իս անցին, յիրաւունս պահանջմանց իմոց ի կատակատարս տիկնոջն Մուրատայ. վասն զի կատածեաց Աստենին՝ թէ իրրեւ կաշառ ինչ խոստացեալ էր ինձ այն արծաթ՝ վասն Թոզլոյ նոցա զվաշխ հրատելին. թէպէտ և յայլ պատճառս տարեալ զրանն՝ զրկեաց զիս յիրաւանց անտի, բայց ի վերջին բանից նախագահ դատաւորին, թէ «Զեմ ես տխուր զի այս պարոն ոչ եղիս «զայս արծաթ, տ բազումք զայն կատած նորա իմանան, այսինքն իրրեւ կաշառ համարեալ նորա զայն խոստացեալ արծաթ. վասն այսոսիկ ես ոչ յայտնեցի ուսմբ զդրամ ծանուցեալ ինձ կամն Մխարանութեանս, և զիրն որ առ Պօղոս Լազարովիչ առեալ ի ձեռաց նորա հնարիւք իմն պահեցի առ իս. և վասն այսորիկ կրկին և կրկին զրեցի Մխարանութեանս զգուշանալ ընդ ուսմբ գաշն ինչ դնել և զրամ խոստումն տալ. յորոց և զգուշացեալ եղէ յամենայնի՝ որպէս յառաջ անելիքայարար։

«Արարից ես զամենայն ինչ որ յօգուտ ազգիս և Իպատիս Մխիթարեանս, պահելով միշտ զպատուէր Նորա և զերատս. բայց կարօտի ամենայն ինչ ժամանակի և զգուշութեան, և կարեւոր զգուշութեան։...

«Եղուարդ Մուրատ ի շահել զկամս իմ և զիւրել զորժոյս՝ խոստացաւ տալ ինձ զպատճէն թղթոյն զոր գրեալ էին Նոքա իրրեւ կուսակալատարք հօր իւրեանց առ Ֆամիտն ընդհանրական փատատրանն ի ժամանակի անդ յորում խնդրէր նա ի նոցանէ տեղեկութիւն զհանգամանաց Մխիթարեանս, որպէս խնդրէ այժմ ի մէնջ Աստուան. զի եթէ հակառակեցի եղբայր Նորա հաստատութեանն որ ի տէրութենէդ, այնու խոյտառակեալ ըմբերանեցի. քանզի ի գրի անդ Նոքա, և առաւելապէս Յովհաննէս Մուրատ՝ իրրեւ ակամաս վանեցս, բազում պատուով և վաւերական վկայութեամբ հաստատեն զիշխանութիւն և զընդունակութիւն Մխիթարեանս ի գործ դպրատանն։ Զպատճէն զրոյն այնորիկ շատ ջանացայ ես յառաջագոյն առնուլ, և ոչ կարացի. այժմ միջնորդութեամբ Աղանուրի յուսամ ընդունել Եղուարդայ։

«Յանցելում եօթնեկի գնացեալ Ֆոխուչին կրօնաւորաց յայց Յովհաննու Մուրատի, գտանեն զնա ուրախ յոյժ։ իրրեւ հասեալ իրաւանց իւրոց Եղուարդայ. և յորժամ զրոյց լինի զկրաց մերոց, ասէ նա՝ թէ ամենայն շարեաց և վնասուց եղելոց պատճառ եղբայր իւր է, և ոչ ինքն կամ Հ. Սարգիս Թէոդորեան։ Յետ երկուց առուց հանդիպին Նոքա Եղուարդայ. գտանեն զնա ուխտաւոր յոյժ, և ի տրտունջ զեղբօրէն իւրմէ, իրրեւ զանիրաւ պահանջողէ։... «Նա է, «ասէ, պատճառ այն ամենայն տարապարտ ծախուց օրի-«նաց, և մանաւանդ պահանջանաց վաշխի զրամապլոյ հրի-«տակին ազարմութեան, զոր անհրաժեշտ պարտիմք հա-«տուցանել։ Նա միայն, կարացայ, զի զհետ զնացի անօրէն «զործոց Նորա։ Գիտեմ, ասէ, և քաջ հաճաշեմ, զի ամե-

„ Նայն անիրաւութիւն զոր կրեմ այժմ յեղրարի իմմէ, ըստ-
„ վանդակն է հատուցումն անիրաւութեանն զոր տրարի անե-
„ մեղ Հ. Սարգսին։ ,, —

„ Ի վաղիւ անդր եկեալ Գաղուէին գահանայից առ իս
ի տուն Աղանուրեանց՝ պատմեցին ինձ զամենայն բանս Մու-
բատեան եղբարցն, զարմացեալ յոյժ ընդ յեղյեղուկ միտս
նոցա։ „ Զիարդ, ասեն, զմիմեանս պատճառեալ խոստո-
„ վանին անպատկառաբար զյանցանս իւրեանց. վասն որոյ
„ ուրախ լեր, ասացին ինձ, զի անմեղութիւն քո և համբե-
„ ռութիւնդ ի վախճանի յայտնութեամբ եցին։ ,, Եւս նոցա
պատասխանի՝ թէ առաւել ուրախ լինէի ես, թէ չէին
պատահեալ ոչ այնպիսի պատերազմունք և ոչ այնպիսի յայ-
տնութիւնք։

„ Մնամ

„ Արհիպատուութեանդ ձերում

„ Ի Մտրտա. 31 յունի. 1831.

„ Նուաստ ծառայ

„ Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՐԴԱՐԵԱՆ. ,,

Գրէ Հ. Սարգիս և այլ թուղթ առ Գերապայծառ Սամալ, յորում կարեւորագոյն բանք իպատմութիւնս այս են։

„ Հաստատութիւնն խնդրոյս, որ ի տէրութենէ այսի Վ. Ե-
նեակոյ, դեռ ոչ տուաւ վարժապետին օրինաց՝ ասկս տարա-
ձայնութեան Մուրատեան եղբարցն. քանզի Եդուարդ Մու-
բատ հաճեալ և շատացեալ ցուցանէ զինքն ընդ այն, նոյնպէս
և փառաբանք և վարիչ գտան նոցա. բայց Յովհաննէս
Մուրատ հակառակեալ ոչ հաւանի ընդ այն. և պատճառ
հակառակութեան նորա է երկիւղ պահանջման վաշխի հրի-

տակին. քանզի հարցեալ են նոքա ասա ի Մասրաս և ի Կալ-
կաթա զերեւելի վասատաբանս և զօրէնագէտս, և խնդրեալ
զկարծիս նոցա, թէ պարտաւորիցին արդեօք Յովհաննէս հա-
ստուցանել զայն թէ ոչ. որոց միաբան տուեալ են զկարծիս
իւրեանց գրով՝ թէ անհնարին է զգաստել նոցա անսի, այլ
պարտին մինչեւ ցվերջին բնիսն հաստուցանել. քանզի եղծեալ
են, ասեն, դաշինք պայմանաց որք ընդ ՄիխաքուԹեանն, և
զի յանձնեալ են յերկուց կողմանց իրաւունքն ազգաստաց
Յովհան, և Յովհան չկամի և չկարէ իսկ Թողուլ նոցա
զայն, այլ պարտական է յօրինաց պաշտպանել զիրաւունս
որոց և ազգաստաց։ . . .

«Վասն այսորիկ ջանայ նա յերկարել զվէճն, մինչեւ
ի ձեռս բերցէ զպահանջանս իւր յեղբօրէ իւրմէ Եղուարդայ,
և խոյս տուեալ ի պետութենէս՝ անցցէ ի սահմանս այլ պե-
տութեան, և կամ ըստ անմիտ յուսոյ ակնկալութեանն՝ միջ-
նորդութեամբ Պ. Աղեքսանդրի շրջեցցէ զմիտս Միխաքու-
թեանս, հանել տալ ինձ Յովհաննէս զվէճն մեր, և ի մէջ մեր
և նոցա նոր դաշն հաստատել՝ ըստ պայմանացն առաջարկե-
լոց ինձ ի ձեռն Հօրն Լուիսի, զոր ամաւ յառաջ տուաքեցի
ձեզ այդր ի գիտութիւն։

«Բայց անտի և ընդունայն են ամենայն խորհուրդք և
կարծիք նորա. քանզի Եղուարդ Մուրատ հաստատեալ է
ի մտի ընդդիմանալ անիրաւ պահանջանաց նորա, և ըստ
խորհրդոյ փասատաբանին իւրոյ արհամարհեալ զվճիռ միջ-
նորդ դատաւորացն՝ կամի զվէճն Յովհաննէս հանել և անտի
իրաւունս խնդրել։

«Իսկ ի կողմանէ ՄիխաքուԹեանս չկայ ինչ երկիւղ կաս-
կածանաց. քանզի արդէն քաջ խելամուտ և ծանօթ է խա-
րամանդ շարութեան Յովհաննու Մուրատայ, և յաղթող
և բարեյոյս ելից իրացն։ Վասն որոյ որոշեալ է վարիչ
դատս յառաջ բերել Յովհանի զտուեալ հաստատութիւնն
Վենետկոյ տէրութեանդ, և ոչինչ երկրայի ընդ հաճութիւն
Յովհանի և ընդ հրաման նորա հանելոյ ի գանձատանէ տէրու-
թեանս զաւանդեալ մասն արծաթոյն։ Իսկ մասն փաշխի հրա-

տակին ոգորմութեան՝ այն թողեալ է ի կամս Աստենց. զոր ինչ կամի արասցէ, մեզ չէ փոյթ, միայն զգուշացուք չառնել ինչ ընդդէմ կամաց Աստենց։

„ Մնամ

„ Արհամարհութեանդ ծերուսի

„ Ի Մարտս. 23 փետր. 1831.

„ Նուաստ ծառայ

„ Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՄՐԻՄԵԱՆ. "

Դարձեալ գրէ թուղթ Հայր Սարգիս առ Գերապայծառ Սուքիաս Սոմալ, օրինակ զայս.

„ Կամեցեալ Եդուարդայ խորհրդոյ թեամբ աւարտել զրանն որ ընդ երթօր իւրում Յովհաննու, խոստացաւ տալ նմա 400,000 ռուբլի, որչափ ինչ պահանջէր նա ի նմանէ զառաջինն. այլ նա յամառեալ ոչ յանձին կալաւ ընդունել զայն, վասահացեալ ի վճիռն միջնորդ դատաւորաց և ի հրապոյրս շար խրատուաց իւրոց։ Վասն որոյ պարտաւորեցաւ Եդուարդ բողոքել յԱստեան. այն զի և օրէնգէան նորա ընդհանրական փոստարանն Եօրթըն խոստանայ նմա ֆրել վաղվաղակի զվճիռ միջնորդ դատաւորացն որ ընդդէմ նորա. քանզի ասէ՝ թէ կաշառօք ի ձեռս բերեալ է Յովհաննէս Մարտս զվճիռն զայն, իբրև 50,000 ռուբլով։

„ Եւ չէ այս անհաւատ. յանգի ի վճռի անդ կան ինչ ինչ գլուխք բանից՝ որ անպատճառ և անիրաւ են բոլորովին. յորոց զմին միայն յիշատակեցից ասա, որ յայտնի է և մեզ իսկ, այսինքն են ծախքն 14,000 ռուբլոյ, զոր արարեալ ասէ Յովհաննէս Մարտս վասն բանի հրամանին, գնալով ի Վենետիկ և խօսելով ընդ մեզ։ Ըստ այսմ խնամատարութեանէ և զայլ պահանջանս նորա։ Եթէ, արդարեւ գնացի, բանն յօրէնս, քանզուն լցի երկոցունց միանգամայն։ . . .

„Տեսեալ Յովհաննու Մուրատայ և տեղեկացեալ յօրէնդրագրայ՝ թէ ընդդիմութիւն իւր չկարէր խափան լինել յառաջադիմութեան գործոյս, ակամայ կամաք խոնարհեցաւ և եթող զամենայն ինչ ի կամս Ատենին։

„Յայսմ առաջիկայ ամսեանի, որ անկանի ի 22 մարտի տարւոյս, հանդերձեալ եմք յառաջ բերել Ատենին զեկեալ հաստատութիւնն ի տէրութենէդ Վենետկոյ՝ առ ի վաւերական առնել զայն։ Զեր իրացն ծանուցից ձեզ յաջորդ թղթատարն նաւու։

„Մնամ

„Արհիապատուութեանդ ձերում

„Ի Մատրաս. 18 մարտի 1831.

„Նուաստ ծառայ

„Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈՂՈՐԵԱՆ.“

ԳԼՈՒԽ ԻԷ.

Բնութիւն վկայագրոյն ի Պ. Սամէնէ վարժապետէ օրինաց. — Հարցմունք վարժապետին օրինաց առ Հ. Սարգիս զՄիաբանութիւնն. — Հիւանդանալ Հ. Սարգսի և ապաքինիլ. — Տեղեկագիրն Սամէնի վասն զկայութիւն զվկայութիւնն տեսութեանն Վենետկոյ. — Դիմադրութիւնք Երրորդին և Յովհաննու Մուրատոյ, և պատասխանիք դատաւորաց. — Այլ և այլ առաջարկութիւնք յոգեալք յՅունին ի կողմանէ Մուրատեանց. — Մեղմիս բանք Երրորդին. — Օրհնութիւն հատուցման ժամուց դատին. — Բանք Եղուարդայ առ Հ. Սարգիս.

Զկնի ընդունայն ընթացից և ժամանակաց լինելոյ զամիսս երիս, ի 10 ապրիլի 1831, մատուցանէ վարիչ դատին Հայր Սարգսի զվաւերական հաստատութիւնն որ ի Վենետկոյ տէրութենէն առ վարժապետն օրինաց Սամէնէ։ Առեալ նորա զայն կոչէ նախ զՅովհաննէս Շէրիման, զի հաստատեցէ երդմամբ զհարազատութիւն թարգմանութեան վաւերականին յԽուալականէն յանդղիացի լեզու. և ինչ ինչ ի նմանէ հարցեալ և տեղեկացեալ զՄխիթարեան միաբանութենէն, արձակէ զնա շնորհակալութեամբ։ Այս առաքէ զպատճէն թարգմանեալ վաւերականին առ ընդդիմակացան, այսինքն առ վարիչ դատին Մուրատեանց և առ ընդհանրական փաստաբանն, հանդերձ հրամանագրով յանդիման լինել նմա և ասել իւրաքանչիւր զկարծիս իւր ընդ վաւերական հաստատութիւնն եկեալ ի Վենետկոյ։

Եւ իբրեւ յանդիման լինին նոքա ի գլուխի անդ վարժապետի օրինաց, նախ ընդհանրական փաստաբանն Հոլթն, ըստ խորամանգութեան իւրում՝ սկսանի ծաղր առնել զանդգիա-

րէն թարգմանութիւն վաւերականին՝ որպէս թէ չհասկանայ ինչ անտի. ապա ասէ՝ թէ ունի ինքն բազում ընդդիմադրութիւնս բանից առ այն, բայց մնայ մինչև ի տալ Մուրատեանց և Հ. Սարգսի զպատասխանի հարցուածոց վարժապետի օրինաց։ Իսկ ի չհակառակել ինչ վարչի դատին Մուրատեանց Վայվաշի, — քանզի և յուցանէ նա անդ զդրաւոր կարծիս Եդուարդայ և Յովհաննու Մուրատեանց յորս յայտ առնէին թէ չունին ընդդիմութիւն ինչ՝ այլ զամենայն ինչ թողեալ են ի կամս և յընտրութիւն Ատենին, — ասէ Նորթին; «Ա-
« բեմն միաբանեալ իցեն ի ծածուկ Մուրատեանք և Հ. Սար-
« գիս, և մնայ ինձ միայն մարտնչել ընդ նոսա ոչ անբանա-
« բար եմն յոխորտացեալ՝ չթողուլ բնաւ զարձուցանել Միա-
« բանութեան զաւանդեալ արծաթն։

Յետ այնորիկ առաքէ վարժապետն օրինաց քանի մի գլուխս հարցուածոց բանից առ Մուրատեանս՝ խնդրելով ի նոցանէ պատասխանի երդմամբ։ Զառաջինն Եդուարդ Մուրատ կամի առնել պատասխանի ըստ գիտութեան իւրում. բայց վաղիւ զատի նորա Վայվաշ տայ նմա խրատ, խոստովանել յամենայնի զանգիտութիւն. քանզի ասէ; « Այն պատաս-
« խանի զոր դու կամիս ըստ գիտութեան քում տալ, բոլո-
« բովին հակառակ է զանգատոյ ձերում ընդդէմ Հայր
« Սարգսի Թէոդորեան. և այնու անձամբ զանձինս խայտա-
« ռակէք, և վերստին դատապարտ կացուցանէք առաջի
« Ատենին։

Զայս ամենայն պատմէ անեղատարար Եդուարդ Մուրատ Հ. Սարգսի Թէոդորեան, և յաւելու՝ թէ եղբայր իւր

կամեցեալ է անգիտանալ և զՄիսրանութիւնն զոր հայր իւրեանց յիշէ ի կտակի իւրում . բայց տեսեալ թէ խոստովանի ինքն զայն , ակամայ և նա զնոյն հաստատեալ է ։

Իսկ ի սաղմանել զնա Հ. Սարգսի թէ որպէս խղճի մտաց արարին նորա այնոցիկ պատասխանի , մանաւանդ Յովհաննէս Մուրատ որ ակամաւն իսկ լեալ էր Մխիթարեանն ի Վենետիկ , և զրով նոա խոստովանեալ էր երբեմն ընդհանրական վարարանին Փամիտրնի զամենայն ինչ ճշմարտութեամբ , ասէ Եդուարդ Մուրատ ; « Այս՝ եթէ այն գիր նո- « ցա երեւեցի առաջի Աստենին , իրրեւ ասերդումն իսկոյտ . « ոսկեցի նա ։ »

Այս առաքէ վարժապետն օրինաց և առ Հ. Սարգիս զնոյն հարցուածս բանից , խնդրելով և ինամել պատասխանի նոցին հանդերձ երդմամբ ։

Ասէ Հ. Սարգիս պատասխանի ըստ դիտութեան իւրում . ցուցանէ անդ զամենայն կարգ և զկանոն Մխիթարեանց իւրոյ , զիրաւունս և զարտօնութիւնս նորա առեալս իշխանաց պետութեանց Վենետկոյ , հաստատեալ զայն ամենայն ի գործոց Մխիթարեանն և վկայութեամբ իսկ իւրով՝ իրրեւ ակամաւն վկայ , և մի յանդգնոց նորա ։

Պատասխանին այն Հ. Սարգսի այնպէս լիուլի և ըստ պայմանաց Ասենին լինի , մինչեւ զարմանալ՝ մանաւանդ թէ զայրանալ Նորթքնի . քանզի ասէ ցկարիշ դատի նորա ցԿօրոսն , թէ « Օրէնդէտ ոք իցէ զա զի այպպէս ճիշդ և ըստ « օրինի առեալ է պատասխանի վարժապետի օրինաց ։ » Ասէ ցնա Կորոսն , թէ « Քաջ տեղեակ է նա օրինաց Վենետ- « կոյ և տահմանագրութեան Մխիթարեանն իւրոյ . և « եթէ կամիս փարձել զնա պատրաստ է նա հաճել զկամս « քո ։ » Խոստովանի խորամանդն՝ թէ անտեղեակ է ինքն օրինաց Խորացւոց ։ Ասէ ցնա Կորոսն ; « Երեմն պարտիս հա- « ւատս ընծայել բանից վկայութեան նորա ։ »

Սակայն յետ այն ամենայն բանից և քննութեանց առ. վարժապետին օրինաց՝ հրամանագիր հանել ուստ Նորթքնի զի քննեսցի Հ. Սարգիս Թէոդորեան ինքնին բերանով խիստ ա-

ասցեալ չենութեամբ յանդիման վարժապետին օրինաց։ Վասն որոյ գնաց Հ. Սարգիս ի ժամադրեալ աւուր և ժամու առ վարժապետն օրինաց, որ ընդունի զնա քաղաքավարութեամբ, և ասէ մնալ վայր մի մինչև եկեսցէ Նորթէն։ Եւ իրրեւ անցանէ ժամ մի և չերևի նա, ասէ վարժապետն օրինաց՝ թէ գուցէ զէպք ինչ իցեն նմա զի չկարաց գալ. վասն որոյ քաղաքավարութեամբ իմն ներուսն խնդրէ ի նմանէ վասն ի զուր աշխատ լինելոյ նորա և վերատին գնալոյն անդր յայլում աւուր։

Յայնժամ պատուհ գտեալ Հ. Սարգսի, ասէ ցնա գանգատելով իմն, թէ «Զարմանամ յոյժ, զի գործառնութիւնք իմ «ի խնդիրս յայս առանց երրորդ և երրեմն չորրորդ հրամանա- «գրի չկճարին. որով և ծանրանան ծախք օրինաց ի վնաս «աղքատաց։» Ասէ ցնա վարժապետն օրինաց; «Հաւատա՛ «ինձ, Սարգիս վարդապետ, զի ցանկամ ես ժամ մի յա- «ռաջ կատարումն տալ խնդրոյն. այլ զինչ արարից, զի չէ «ամենայն ինչ ի ձեռին իմում. քանզի պարտ է ինձ տեղի «տալ բանից ընդդիմակացացն, առ ի կարող լինել տալ տեղե- «կութիւն Ասենին. ապա թէ ոչ՝ պարտաւորիմ ասել՝ թէ հաւատոյքն Մխիթարեանն չեն բաւական. այլ հարկ է «յանձնարարութիւն առաքել ի Վենետիկ, և անտի բերել «տալ օրինաւոր հաստատութիւն, որ առաւել ծանր լիցի «քեզ յաշխատութիւն և ի ծախս օրինաց՝ ի վնաս աղքատաց «աղքատ։»

Ասէ ցնա Հ. Սարգիս; «Շնորհ ունիմ զգայողութեան «ձերում, բայց զժբաղդութեամբ գործն այսպէս ընթանայ «և նեղէ զիս։» Առաւել իմն զգացեալ Սամէնի ի բանից նորա, ասէ ցնա; «Յետ ամենայն քննութեան՝ օրէն և «հարկ է ինձ քննել զքեզ և բերատով առանձինն. որպ- «ի չահել զոյն ժամանակ, ասէ, արարից զոյն քննութիւն «իմ՝ եթէ կամիցիս։» Ասէ ցնա Հ. Սարգիս թէ «Պատրաստ «և յօժար եմ առնել պատասխանի։»

Յայնժամ սկսաւ վարժապետն օրինաց Սամէնն առնել Հայր Սարգսի հարցուածս ինչ բանից, զորս նշանակեալ էր ի յիշա-

տակարանի իւրում, և որոց խնդրէր ի նմանէ պատասխանի մի առ մի բերանով, և անդէն ի գիր անցուցանէր։ Իրրև վճարի այն ի ժամս իրրև երիս, ընթեռնու յանկանչս նորա և հարցանէ թէ այն էին միտք բանից նորա. և յաւել նորա թէ այո, ասէ զգրուածն զայն հաստատել երդմամբ. և իրրև այն եւս կատարի, ասէ ցնա; «Հաճեալ և շատացեալ եմ յամենայնի ընդ պատասխանին քո, և չկարօտիմ այսուհետև այլ հաստատութեան առ ի տալ զտեղեկութիւն իմ Աստենին։»

Իսկ վասն քննութեան Նորթբնի ասէ Սամէճ; «Պարտ է նմա վերատին տալ հանել զհրամանագիր, եթէ կամիցի քննել զքեզ, բայց կարծեմ, ասէ, զի տեսեալ զքննութիւն իմ՝ զադարեսցէ այլ եւս աշխատ առնել զքեզ։» Վասն որոյ կոչեալ զգրագիր իւր՝ ասէ ցնա օրինակիլ վաղվաղակի զքննութիւն իւր և առաքել ընդդիմակցացն՝ Վայվաշի և Նորթբնի զօրինակն։ Եւ յիրաւի, ըստ կարծեաց Սամէճի կամի Նորթբն ի պահանջմանէ անտի քննութեան իւրոյ, ոչ թէ իրրև շատացեալ այնու, այլ իրրև յուսահատեալ, զի չկարէր զամագիտ լինել. վասն որոյ թողեալ նորա զայն պահանջումն՝ յայլ ինն մատարէ հնարս հակառակութեան։

Յետ առուրց ինչ անցանելոյ ի վերոյ քննութեանն և յերկար աշխատութեան, անկանի Հայր Սարգիս ի մահիճս հիւանդութեան՝ սաստիկ ինն ջերմախտութեամբ, մինչև տարակուսել բժշկին՝ թէ զինչ դարման մատուցէ նմա։ Կամի նա զառաջինն երակ հատանել. ապա երկուցեալ ի վերատնէն, ասէ նմա զեղ փախեցուցիչ, և այնու փարատի ջերմախտն ի նմանէ, բայց զաւուրս հնգետասան մնայ յանկողնի նուազեալ յոյժ։ Այն ինչ եկեալ ի մահճացն ընդունի ի վարժապետէն զպատճէն գրաւոր քննութեան նորա մատուցելոյ Յանանն առ գատաւորն, ըստ հրամանի և պայմանաց վճռոյ նոցա առաջնոյ։ Ակնարկեալ նորա յայն՝ տեսանէ զի նպաստաւոր և յաջող է նմա քննութիւնն այն վարժապետին, և քաջալերեալ զօրանայ և կարդարի ի տկարութենէ անտի իւրմէ։

ի ժամանակի անդ հիւանդութեան Հ. Սարգսի այլ առնէ նմա Պ. Եղուարդ Մուրատ, և ասիցէ զԱբրահամ Աղանուր հրաւիրել զնա թախանձանօք գնալ բնակիլ ի տան նորա, ոչ բարւոք համարելով զմիայնութիւն Հ. Սարգսի անդ. վասն որոյ գնայ բնակի նա ի տան Աղանուրի, և ճեայ անդ մինչեւ ցդարձն յԵրուսաղէմ։

Տեսեալ վարժապետին օրինաց Սահմէնի, թէ զանց արար ընդհանրական փառատրանն Նորթըն զքննութեամբ իւրով՝ զոր պահանջէր ի Հ. Սարգսէ, ասայ վաղվաղակի։ տեղեկութիւն իւր Առենին՝ յամենայնի յաջողակ Մխիթարեանն։ Եւ քանզի թողութիւն է յօրինաց Առենին, զի եթէ ունիցին հակառակորդն ասել ինչ ընդդէմ տեղեկութեան վարժապետի օրինաց, կարող են յայտ առնել զայն ի միջոցի եօթն աւուրց, ապա թէ ոչ՝ հաստատի այնուհետեւ տուեալ տեղեկութիւնն և աւարտի խնդիրն, վասն որոյ զկնի երից աւուրց հրատարակէ Նորթըն զիմաղրութիւն ինչ բանից ընդդէմ վարժապետին օրինաց, որպէս թէ չէր նմա օրէն տալ զայն տեղեկութիւն Առենին, հաստատեալ ի վերայ չնչին իմն գրոյ Վենետկոյ տէրութեանն, և ի վերայ վկայութեան Հ. Սարգսի՝ իբրեւ բաժանորդի շահու ի խնդիրն, այսինքն արծաթոյ հրատակին ողորմութեան։

Յետ հինգ աւուրց զնոյն շաւիղ կալնու և Յովհաննէս Մուրատ. թէպէտ և չցուցանէ զառաջինն հակառակութիւն ինչ ընդ այն՝ բռնադատեալ մերթ ի գնացից Եղուարդայ որ հրաժարի ամենեւին ի հակառակելոյ, և մերթ յուսացեալ ի բարեկամութիւնն Սամէնի մանաւանդ թէ ի կաշառան զոր տուեալ էր նմա, և զոր խոստացեալ էր եւս տալ՝ եթէ ըստ ցանկութեան իւրում վարէր նա ի խնդիրն յայն, այսինքն եթէ ոչ օրինաւոր և բաւական համարեալ զհաստատման Վենետկոյ տէրութեան պարտաւորէր զՀ. Սարգիս հրամանաւ Առենին յանձնարարութիւն տալ ի Վենետիկ և անտի բերել օրինաւոր և բաւական հաստատութիւն ի լրումն պայմանաց Առենին։ Եւ այնու յուսով կարծէր նա, թէ առանց ինչ հակառակութեան իւրոյ գործն ինքնին չյաջողէր։ Բայց իբրեւ

տեսանէ՝ թէ այն ամենայն մեռոյ յոյս իւր ի գերեզման էանէ, և վարժապետն օրինաց առեալ է զանզգուշութիւն Աստենին, յայտնէ զհակառակութիւն իւր՝ հրատարակեալ և ինքն ընդդիմութիւն ինչ բանից ընդդէմ վարժապետին օրինաց Սամէճի. զոր և առնու բառ առ բառ ի բանից դիմադրութեան Նորթընի, բաց ի միոյ դիմադրութենէ, որ իրրեւ անպարտելի ինչ մոռաց իւրոց երեւեալ էր։

Զան այնորիկ զաւուրս տասն յանդիման լեալ վարչի դատին Կարսոնի ի դիւան վարժապետին օրինաց՝ ցրէ զամենայն կարծեցեալ ընդդիմադրութիւնս Նորթընի։ Իսկ զպահանջումն Յովհաննու Մուրատայ արհամարհէ՝ ասելով թէ միանգամ հաւանեալ նորա ընդ վաւերականն Վենեսկոյ տէրութեան, չունի այնուհետեւ տեղի հակառակութեան. որպէս և վարժապետն օրինաց առեալ իրաւունս՝ մերժի ընդդիմադրութիւն բանից նորա առանց պատասխանւոյ։

Զկնի այնր հակառակութեան, յ8 սեպտեմբերի, որ օր նշանաւոր էր Միաբանութեանն, ասայ վարժապետն օրինաց ըստ վերջին տեղեկութիւն իւր Աստենին, առաւել ևս բացարձակ և յոյժ յաջողակ Միաբանութեանն։ Տեսեալ Նորթընի և Յովհաննու Մուրատայ թէ ոչ միայն չկարացին փոխել զմիտս վարժապետին օրինաց ի խնդիրն, այլ առաւել ևս հաստատեցին զնա ի կարծիս իւր և ի հանդգնումն ճշմարտութեան, խորհին այնուհետեւ զվերջինն փորձել փորձ հակառակութեան, այսինքն զընդդիմադրութիւնս իւրեանց յանդիման Աստենին բերել. որպէս և առնեն իսկ։ Քանզի յ12 սեպտեմբերի 1831, բերեալ նոցա զայն առաջի դատաւորաց յԱստենի անդ՝ վիճեն իրր ժամս երիս մեծաւ ջերմութեամբ. զորոց զրանս հանդերձ պատասխանաւք նշանակեցից համառօտիւ։

Առաջինն ի դիմադրութիւնս բանից ընդհանրական փաստաբանին Նորթընի այս էին՝ թէ վաւերական հաստատութիւնն Վենեսկոյ տէրութեան չէ բան տարազու հաւատոց Անգլիացւոց տէրութեան։ Որում առնէ պատասխանի նախագահ դատաւորն ինքնին՝ թէ. «Արչափ զանազան են տէ-

«բութիւնք յԵրուսաղէմ, նոյնչափ և տարազ հրամարտակաց
«նոցա. վասն որոյ չէ պարտ ասէ, արհամարհել զայն. զու-
«ցէ այնպիսի է ոճ Վենետկոյ տէրութեան։ »

Երկրորդ՝ թէ չէ հաստատեալ այն ի քաղաքապետէն Վե-
նետկոյ, այլ յԱռենադպրէ նորին։ Որում տայ պատասխա-
նի դարձեալ դատաւորն ինքնին՝ թէ «Զէ պարտ և զայն ար-
«համարհել. այսինքն, ասէ, յորժամ ասա ի Մարտաս
«ի բացեայ է քաղաքապետն, Առենադպիր նորա հաստատէ
«զամենայն հրամարտակս տէրութեան. ապայն և այնպէս
«վաւեր է։ »

Երրորդ՝ թէ վկայութիւն Հ. Սարգսի ի խնդիրն յայն չէ
վաւերական. քանզի բաժանորդ է նա, ասէ, շահու նորին,
այսինքն արծաթոյ հրամանին։ Որում ասն պատասխանի
երկրին դատաւորքն միանգամայն՝ թէ «Զանասնեմք մի-
«ի գնացս նորա շահախրութիւն ինչ, այլ զոր ինչ պարտ
«պաշտաման իւրոյ պահանջէր՝ արարեալ է նորա, և զայն
«ամենայն ուղղութեամբ, վասն որոյ և ամենայն ընդու-
«նելութեան արժանի է վկայութիւն նորա ի խնդիրս յայս,
«և իրաւամբք ընկալեալ է ի վարժապետէն օրինաց ի Սա-
«վէճէ։ »

Տեսեալ փաստաբանին Հայր Սարգսի, որ էր անդրդիպին
Տիթ, զի դատաւորքն ինքնին ցրուցին զամենայն դիմադրու-
թիւնս բանից Նորթբենի, և զի չմնաց նմա խօսել ինչ յԱռենի
անդ ըստ պարտուց պաշտաման իւրոյ, սկսանի գովել զՄխի-
թարեան միաբանութիւնն՝ յիշատակելով զգրաւորական ար-
դիւնս նորա առ ազգն Հայոց և զբարեհամբաւութիւն նորա
առ Եւրոպացի ազինս։

Զչարեալ Նորթբենի ի բանից Տիթին, ասէ հեգնօրէն; «Նե-
«բեաջիր ինձ, եղբայր, չգիտէի ես թէ այդպիսի արդիւնա-
«ւոր և բարեհամբաւ ունիք էին Մխիթարեան Հարքն, այլ
«և զհակառակն կարծէի ես մինչև ցարդ. զուցէ սխալեալ
«իցեմ։ »

«Այո՝ ասէ անդէն նախադասն դատաւորն. սխալեալ է, քա-
«ի բանից Վարդանանց և ի գնացից նոցա։ »

Իսկ փառաբանն Մուրատեանց Պէթիւ, Թէպէտ և յառաջագոյն ասացեալ էր Եղուարդայ և Յովհաննու Մուրատեանց թէ զղջացեալ է ինքն ընդ յանձնառութիւնն պաշտպանելոյ նոցա ի խնդիրս, և թէ ամաչէ խօսել ինչ ընդդէմ Մխիթարեան միաբանութեան, յիշելով զբարեաց վկայութիւնն Լօրտ Պայրընի ի գրուածս նորա զՄխարանութենէն. և թէպէտ նոյն դիմադրութիւնք բանից էին և Յովհաննու Մուրատայ զոր արդէն դատաւորքն ինքնին ցրեցին, բայց քանզի հարկ պաշտամանն իւրոյ պահանջէր խօսել ինչ ինչ, վասն որոյ և խօսի, այլ սակաւ և յոյժ վեր ի վերոյ. որով յայտ առնէր զչկամելն իւր հակառակիլ Մխարանութեան։

Գլխաւոր դիմադրութիւն բանից նորա մանաւանդ թէ Յովհաննու Մուրատայ այն էր՝ թէ վաւերական հատատութիւն տէրութեան Վենետկոյ ոչ էր հատատեալ երդմամբ։ Որում ոչ միայն չեռուն պատասխանի դատաւորքն, այլ և ոչ ունկընդրութեան անգամ արժանի արարին, քանզի յոյժ անմիտ էր։ Այսչափ միայն հարցանէ ցնա նախագահ դատաւորն՝ թէ յո՞յր կողմանէ խօսիցի նա. և յաւելն Պէթեայ թէ ի կողմանէ Յովհաննու Մուրատայ, ասէ դատաւորն; «Զարմանք «են յոյժ՝ զի մին յեղբարց միայն հակառակի։»

Իրրեւ դադարեն փառաբանքն ի խօսելոյ, ասեն դատաւորքն՝ թէ մերժեալ են յաւանէ անտի ամենայն դիմադրութիւնք բանից հակառակորդաց Մխարանութեանն առհասարակ։ Այլ վասն ծախուց օրինաց չորոշեն ինչ դատաւորքն յայնմ աւուր, քանզի մեայ տակաւին առաջարկութիւն ինչ առնելոյ փառաբանին Հ. Սարգսի. նա զի օրն տարաժամեալ էր։

Ապա ի վաղիւ անդր խնդրէ փառաբանն Հայր Սարգսի յԱտենէն նախ զհատատութիւն տեղեկագրի վարժապետին օրինաց Սամէճի, և երկրորդ՝ զվերջին տահմանագրութիւն խնդրոյն, այսինքն հրամանն դարձուցանելոյ Մխիթարեան միաբանութեան զաւանդեալ արծաթն որ առ Համարակալի տէրութեանն։

Զայս երկրորդ մասն առաջարկութեան անտեղի համարին

գատաւորքն, ասելով թէ ճանաչեն նոքա զՄխիթարեան միաբանութիւնն զի ակր է արծաթոյ հրիտակին ողորմութեան. այլ ոչ որ իցէ օրինաւոր գործակալ նորա՝ զի յանձնեսցեն նմա զարծաթն։ Եւ յասել փաստաբանին թէ յանձնեցի այն Սարգսի վարդապետի Թէոդորեան, ասեն գատաւորքն; «Մեք ոչ ճանաչեմք զՍարգիս վարդապետն Թէոդորեան. «յորժամ եկեսցէ գործակալն Միաբանութեան առաջի Աստ«ենին՝ հանդերձ վաւերական գրով գործակալութեան իւրոյ, «յայնժամ յանձնեսցուք նմա զաւանդեալ արծաթն հրիտա«կին ողորմութեան։»

Իսկ յերկրորդել փաստաբանին զնոյն բան՝ առանց ասելոյ թէ ունի Հ. Սարգիս Թէոդորեան վաւերական զիր գործակալութեան ի Միաբանութենէն, ճանաչեալ գատաւորաց ընդ կրկնութիւն բանից նորա՝ մերժեն զառաջարկութիւն նորա յԱտենէն, առանց ինչ որոշելոյ և զհատատութենէ տեղեկագրոյ վարժապետին օրինաց։ Այլ ոչ խելամտութեամբ, և ոչ ըստ կարգի օրինաց վարին գատաւորքն զայն նուագ. քանզի երկրորդ մասն առաջարկութեանն լինի ըստ վճռոյ նոցա առաջնոյ, որպէս և ինքեանք իսկ գատաւորքն խելամուտ եղեալ վրիպանացն ուղղեն զայն ապա. զոր ի տեղւոջ իւրում ծանուցուք։

Ի նմին աւուր յորում լինի առաջարկութիւն ի կողմանէ Հ. Սարգսի, յուզին յԱտենի անդ այլ և այլ առաջարկութիւնք յընդդիմակցաց նորա՝ այլ և այլ կերպարանօք և դիտաւորութեամբ, զոր և կարեւոր համարիմ յիշել առ։ Առաջինն լինի ի Նորթընէ։ Տեսեալ նորա թէ չկարաց ինչ առնանել Մխիթարեան միաբանութեան, որպէս յուսայրն յառաջ և մեծարանս ինոտեաց բարբառեալ յոխորտայր, և տեսեալ եւս՝ թէ գատաւորքն զկողմն ունին միշտ Միաբանութեանն, փոխէ այնուհետեւ զդրոշակ իւր բազմերանգ և զեզու իւր խորամանգ, և սկսանի խօսել այսպէս;

«Յիրաւի, ասէր իմ, ասէ ցնախագահ գատաւորն, մինչեւ «ցարդ խաբեալ էր իմ ի բանից Մուրատեանց, ոչ բարեաւ «ունելով կարծիս զՀայց Մխիթարեանց, և հակառակ կա-

«լով Նոցա ի խնդիրն ողորմութեան. այլ այժմ խնդամուտ
«եղեալ ճշմարտութեանն՝ կամիմ զկողմն ունել Նոցա, մա-
«նաւանդ թէ զորոց և զաղքատաց, որպէս պարտ պաշտա-
«մանն իմոյ պահանջէ։ Արդ ոչ ինչ իրաւունք են, ասէր իմ,
«Թոզուլ Մուրատեանց զվաշխ զրամադրելոյ հրիտակին ողոր-
«մութեան, որ չէ փոքր ինչ, այլ իրրեւ 600,000 ռու-
«փի. վասն այսորիկ գրեալ եմ ես կոտակատարաց ա-
«ւուրք ինչ յառաջ՝ աւանդել Նոցա զայն յԱռենիս ինք-
«նակամ։

«Մին ի Նոցանէ՝ զորոյ չկամիմ ասել զանունն, արար
«ինձ պատասխանի՝ թէ պարտաւոր է ինքն հաստատանել
«զայն, եթէ Աստուծոյ հրամայեցէ նմա։ Իսկ միւսն արար
«պատասխանի, թէ ոչ զոյ իրաւունք պահանջելոյ ի Նոցա-
«նէ վաշխ վասն զրամադրելոյ հրիտակին ողորմութեան.
«քանզի աւարտեալ են նոքա զայն իրաւախոհութեամբ ընդ
«Միաբանութեանն։ Յայտնի է, ասէր իմ, զի անտի պատ-
«ճառանք են բանք Նոցա. քանզի նոքա ինքնին եղծին զկար-
«ծեցեալ իրաւախոհութիւն իւրեանց, բերելով զինդիրն
«առաջի Աստենիս, և յանձնելով նմա զայն։ Արդ խնդրեմ
«ես ի ձէնջ հրաման կուտակցելոյ Միաբանութեանն ի պա-
«հանջել զվաշխն զրամադրելոյ հրիտակին ողորմութեան
«ի Մուրատեանց, ի Ժառանգաց և ի կոտակատարաց բա-
«բերարին։»

Խորագիտութեամբ ելմն տոյ պատասխանի նախագահ դա-
տաւորն խորամանգին Նորթբենի, թէ արդէն որոշեալ է ի վը-
ճիռն ինդրոյս հաստատել զրամադրելոյ ողորմութեան վաշխ
ըստ սովորութեան։

Ասէ Նորթբեն. «Այո, ասէր բայց այն որոշումն է վասն
«մասին միայն. իսկ ինդիր իմ է այժմ վասն բովանդակ
«զրամադրելոյն, սկսեալ ի մահուանէ կոտակագրին մինչեւ
«ցայսօր ժամանակի։»

Այսմ բանից Նորթբենի չուան պատասխանի դատաւորքն.
քանզի չէ օրէն Նոցա որոշել ինչ՝ մինչչեւ զանգատն մատու-
ցեալ ելցէ յԱռեանն, և տեղի պատասխանւոյ առնուցու

վան նորին։ Բայց փոքր ինչ յետոյ յայլ բանս առաջարկութեանն ցուցանէ նախագահ դատաւորն զմիտս իւր ընդ այն, զոր և ծանուցուք ապա։

Ի մեզմել Նորթընի զխստութիւն իւր ընդդէմ Մուրատեանց, առաջարկէ և այլ ինչ մի ըստ քմաց և ի մտանաւոր խնդրոյ Յովհաննու Մուրատոյ. քանզի խնդրէ յԱտենէն անցուցանել զաւանդեալ արծաթն ի ձեռս Միսրանութեան՝ միջնորդութեամբ Անգղիացւոց Հիւպատին, և քաղաքապետին Աւարիացւոց որք ի Վենետիկ, և ոչ միջնորդութեամբ Հ. Սարգսի Թէոդորեան։

Այսմ առաջարկութեան Նորթընի ոչ տան պատասխանի դատաւորքն, այլ միայն նախագահն նշանակէ զայն ի յիշատակարանի իւրում։ Գիւտս այս Յովհաննու Մուրատոյ իբրեւ վերջին էր ի վրէժխնդրութիւնս իւր ի Հ. Սարգսէ, և իբրեւ միայնակ պատրուակ հակառակութեան իւրոյ, որպէս զի կարող լիցի ասել այլոց՝ թէ նպատակ իւր էր հանել ի ձեռաց Հ. Սարգսի զարծաթ հրիտակին, և ահա նոքա այնմ ի վախճանի։ Զայս խորհուրդ նորա ծանուցանէ յառաջագոյն Հ. Սարգսի Պ. Եղուարդ Մուրատ, և պատմէ զկնոջ նորա ի հաւանեցուցանել և զինքն ի նոյն, և հրաժարել իւր անտի ասելով՝ թէ «Զկայ նոցա տեղի այնպիսի առաջարկութեան «յԱտենի. քանզի զիտեն դատաւորքն, ասէ, թէ անցուցեալ «է յառաջագոյն Հ. Սարգսի զկէս արծաթոյն ողորմութեան «ի Վենետիկ ամենայն հաւատարմութեամբ։»

Թէպէտ և զայս այսպէս պատմէ Հայր Սարգսի Եղուարդ Մուրատ, և ցուցանէ զինքն յամենայնի հակառակ կամաց եղբօր իւրոյ Յովհաննու, բայց իբրեւ առաջարկէ զայն Նորթընն ի դիմաց երկուց եղբարց Մուրատեանց, յասել փաստաբանին Հ. Սարգսի թէ Եղուարդ Մուրատ չէ միաբան յայնմ ընդ Յովհաննու Մուրատոյ, ասէ անդէն փաստաբանն նոյա Պէթի, թէ ունի ինքն և զհաւանութիւն Եղուարդայ Մուրատի մտանաւորապէս։ Յայնժամ յայտնի մեղմութիւն բարուց Եղուարդայ. որում ոչ անտեղեակ ինչ էր յառաջագոյն Հայր Սարգիս, այլ չիմանալոյն առնէր և առնէ զարձեալ. քանզի

միամտութեան պէտք էին նմա յայնժամ և խորագիտութեան միանգամայն, որով յաղթեաց նոցա ի վերջէ։

Ապա լինի առաջարկութիւն ի Պէթի փաստաբանէն Մուրատեանց, և խնդիր յԱռնէն, զի դարձուցի առ Մուրատեան աւելորդ մասն արծաթոյն որ ընդ դրամագլխոյ հրիտակին ողորմութեան ուանդելոյ առ Համարակալի տէրութեանն ձեռամբ Հ. Սարգսի։ Հարցանէ ցնա նախագահ դատաւորն՝ թէ որովք իրաւամբք պահանջիցեն նոքա զայն արծաթ։ Ասէ ցնա Պէթի թէ հաստուցեալ են նոքա ընդ այն ամ՛ել արծաթ Միաբանութեան. հաստատելով և ի բանից պատասխանւոյ Հ. Սարգսի, որ առ գանգատ նոցա, և ի թղթոյ Ռաֆայէլեանց առ նոսա, որոց միջնորդութեամբ անցուցեալ էր արծաթն ի Վենետիկ ի ձեռս Մխիթարեան միաբանութեան։

Ասէ ցնա նախագահ դատաւորն հեգնօրէն; «Զիկայութիւն Սարգսի թէոդորեան վարդապետի բերեալ մեզ ի հաստատութիւն բանից։ Գիտեմք մեք զի նա զամենայն ինչ ճշմարտութեամբ խոստովանեալ է ի պատասխանին իւր. բայց զի՞նչ էին բանք գանգատագրին Մուրատեանց. ստութեամբ և զրպարտութեամբ ասէին՝ թէ գողացեալ նորա զայն մասն արծաթոյ նոցա, կամէր փախչել ի Փոնթիչէրի։ Այո՝ ստութեամբ և զրպարտութեամբ ասեմ, քանզի նոքա ինքնին ջնջեցին հանին զայն ի գանգատագրէ իւրեանց։»

Պատասխանեալ փաստաբանի նոցա, ոչինչ կարէր արդարացուցանել զնոսա, այլ ընդ հակառակն հաստատէր ըզբանս դատաւորին՝ ասելով; «Այո, ասէր, յոյժ անկարգութեամբ և անիրաւութեամբ վարեցան նոքա ընդ նմա։» Յայնժամ ասէ դատաւորն; «Այն մասն արծաթոյ նոցա պահեալ է յիշխանութեան Ասենիս ի պահանջս խնդրոյ հրիտակին ողորմութեան. զուցէ պահանջեցէ ի նոցանէ Միաբանութիւնն զվաշխ դրամագլխոյն։»

Զկնի այսոցիկ առաջարկութեանց և բանից որոշեն դատաւորք զծախս օրինացն. նախ՝ զծախս ընդհանրական փաստա-

բանին Նորթընի արկանեն ի վերայ նորա, և զծախս Յովհաննու Մուրատայ ի վերայ նորին առանձինն. իսկ զծախս առաջարկութեան փաստաբանին Հ. Սարգսի Թէոդորեան, որ էր Տիթ, արկանեն ի վերայ գրամագլխոյ հրիտակին ողորմութեան. բայց ապա խորհեալ գատաւորաց ընդ միմեանս՝ ասեն ցՆորթընն; «Զէր պարտ քեզ խառնել ի խնդիրս յայս «յետ խմանալոյ քո՝ թէ ողորմութեանն պարտ է ի գործ «դնել յօտար երկրի, որտեղոյ սահմանի տէրութեան մե- «ղոյ. բայց գանդի տուեալ են քեզ ի գատախազից յայտա- «բարութիւնք յամենայն բանս խնդրոյս այսորիկ, վասն որոյ «ազատ լիցիս դու ի ծախուց անտի օրինաց. տացի այն ի գրա- «մագլխոյ հրիտակին ողորմութեան։»

Ահա այսպէս աւարտի խնդիրն յայնմ սահմանի Ատենին։ Ի նմին աւուր ընդ երեկս գնացեալ Եդուարդայ առ Հայր Սարգիս՝ ուրախակից լինի նմա մեղմեխանութք ընդ բարեյաջող ելս խնդրոյն, և ոտնհար ի վերայ ձախող ելից դիմադրութեան եղբօր իւրոյ Յովհաննու Մուրատայ։

Ասէ ցնա Հ. Սարգիս. «Ուրախ եմ ես ընդ բարեյաջողու- «թիւն իրաց աղքատաց ազգին, այլ ընդ վնաս եղբօր քոյ «Յովհաննու ցաւիմ յոյժ։» Ասէ ցնա Եդուարդ Մուրատ; «Ամենայն ինչ ի վերուստ է և արդարութեամբ. վասն որոյ «չէ պարտ ցաւիլ բնաւ ընդ այն։»

Եւ ի հարցանել Եդուարդայ ցՀ. Սարգիս զանցս Ատենին՝ պատմէ նա նմա զառաջարկութիւն Նորթընի վասն անցուցա- նելոյ զարծաթն ի Վենետիկ ձեռամբ այլոց, և ոչ ձեռամբ իւ- րով, և զհաւանութիւն նորա ընդ այն, ըստ վկայելոյ փաստա- բանին իւրեանց Պէթեայ։ Ընդ որ այլայլի Եդուարդ Մուրատ, և պատճառս ինչ կարկատէ արդարացուցանել զանձն։

ԳԼՈՒԽ ԻԸ.

Որդիք դատաւորացն զվրիպակ կարծիս իշխանաց զանիրաւոյ վարժապետին օրինաց. — Վկայութիւնք խնդրեալ ի Հանրապետական տէրութենէ վասն մեղադրելոյ զԱրքեպիսկոպոսն. — Վրիպակ Ամենասրբոյն. — Դատաստանն եղեալ ի դեկտեմբերի 1831 ամին. — Երրեակ առաջարկութիւնք փաստաբանին Մորատեանց. — Հշանաւոր բանք նախագահի դատաւորին զՄորատեանց. — Վկայութիւնք խնդրեալ վասն վաճառականի շինելոյ սոորագրութեան Մրլի հիւպատոսին Անգղիացւոյ ի Վենետիկ. — Յաջողութիւն գիտի վկայութեանցն. — Սակայն յանձն առնուն առնինախօսել վասն Հ. Սարգսի.

Թէպէտ և Հ. Սարգիս բաւականացեալ ուրախ լինէր ընդ յաջող ելս վաճառական հաստատութեան վկայագրոյն որ ի Վենետիկ, այլ ոչ նոյնպէս ընդ ելս առաջարկութեան փաստաբանի իւրոյ Յանենի անդ. քանզի ակն ունէր առնուլ միանգամայն և զվերջին վճիռ խնդրոյն, և զվախճան գործոյն տեսանել։ Եւ զի վրիպեաց յայնմանէ՝ զարմացեալ խնդրէր գիտել զպատճառն ի վարչէ դատին իւրոյ ի Կօրտոնէ. իսկ նոքա արդարացուցեալ զանձն ի գնացս իւր՝ մեղադրէր զդատաւորսն, որպէս թէ առանց ինչ խելամտութեան և իրաւանց մերժեցին զառաջարկութիւն իւր։

Եւ մինչդեռ խորհէր նա ինքն Կօրտոն՝ թէ զո՞ր շաւիղ պարտ իցէ ունել այնուհետեւ ի գործն, ընդունի ի վաղիւ անդր տոմակ մի ի փաստաբանէն Տիթէ, որով ազդ առնէր նմա՝ թէ դատաւորքն ինքնին խելամուտ եղեալ վրիպանաց իւրեանց, ասացեալ են Յանենի՝ թէ ունին վերստին որոշել ինչ ինչ վասն խնդրոյն։ Վասն որոյ ի 29 սեպտեմբերի նստեալ դատաւորաց Յանենի, ասէ նախագահ դատաւորն;

“ Առաւօտ մեք յանցեալամ առուրն ասել՝ թէ տեղեկագիր
“ վարժապետին օրինաց զինդրոյ հրիտակին ողորմութեան՝

« ընկալեալ և հաստատեալ է յաւելեալս արձակարար։ »

Ապա խնդրէ ի փաստաբանէն Հ. Սարգսի ի Տիթ զվկայականն որ ի Համարակալէ տէրութեան՝ վասն հաշուի՝ և հանդամանաց ուանդեալ մուրհակացն. և իրրեւ առնու և քննէ զայն, տեսանէ զի Համարակալն ազգ առնէր անդ Կօրոնի վարչի դատին Հ. Սարգսի՝ թէ չկարէր ինքն առանց հրամանի Ատենին ուղղել ի հաշուէմատեանի անդ իւրում զանուանս ուանդատուաց մուրհակացն, զգուշար նոցին յերկուս զանազան և ուրոյն հաշիւ պահել։

Զայսմանէ պիտոյ է ասա տալ կարգաւ տեղեկութիւն ընթերցողաց։ Արդ, առաջինն բոլանդակ մուրհակքն վիանգամանայն ուանդեցան ի ձեռս Համարակալի տէրութեան ի պահանջս խնդրոյ հրիտակին ողորմութեան, յանուն Հ. Սարգսի Թէոդորեան և Աննայի տիկնոջ Մուրատեան. քանզի դանդաղիրն Մուրատեանց ընդդէմ երկոցունց էր մատուցեալ յԱտենի. բայց ի վախճանել Աննայի տիկնոջ, ընդհանրական փաստաբանն Նորթըն կուսակից գոլով ի խնդիրսն՝ պարտ էր հանել զանուն վախճանելոյն ի հաշուէմատեանէ անտի Համարակալին, և մուծանել անդր զանուն կուսակցին Նորթընի։

Նոյնպէս խառն ի միասին պահի անդ բոլանդակ գումարն 407,000 սրայ ռուբլոյ, զոր պարտ էր՝ զկնի որոշելոյ Ատենին զխնդիրն՝ ի 24 մարտի, 1829, յերկուս զանազան անուանս և ի հաշիւս պահել զայն, այսինքն 275,100 սրայ ռուբլի յանուն Հ. Սարգսի Թէոդորեան ի հաշիւ հրիտակին ողորմութեան, և 131,900 սրայ ռուբլի յանուն և ի հաշիւ Մուրատեանց՝ իրրեւ աւելի մասն արծաթոյ նոցա մնացեալ առ Հ. Սարգսի յառաջագոյն, և ապա ընդ մուրհակսն ուանդեալ ի ձեռս Համարակալի տէրութեան, ըստ հրամանի Ատենին։

Եւ այս պաշտօն՝ ատենադպրի Ատենին անկանէր, ուղղել նախ զայն ի վճիռ խնդրոյն, և ապա տալ զպատճէն նորին Համարակալի տէրութեան, որպէս զի և նա ըստ այնմ ուղղեսցէ զայն ի հաշուէմատեանի անդ իւրում։ Եւ քանզի պակասեալ էր ատենադպրին ի պաշտամանն՝ զմոռացութիւն պատ-

ճառելով, մնայ այն առանց ուղղութեան ի վճիռն և ի հաշուէմատեանի անդ Համարակալին։ Եւ Թէպէտ ապա առնէ զայն Հ. Սարգսի վարիչ դատին Նորա Կօրսօն, բայց անտգան, և ասէ՝ թէ պարտ էր նմա աղերսագիր տալ դատաւորաց յԱտենի, և հրաման խնդրել վասն ուղղութեան Նորին. այլ Հ. Սարգիս ոչ կամի, ասելով թէ «Ատենագրիրն է արքայական, ինքն ուղղեսցէ զխնդանս իւր. ինձ զի՞ փոյթ է, «կամ զի՞նչ իրաւունք իցեն՝ վերատին անկանել ինձ ի ծախս «վայրապար. արդէն հատուցեալ եմ ատենագրին 1,000 «ռուբի, զի տացէ ինձ զուղիղ օրինակ վճռոյ խնդրոյն։» Վասն որոյ արհամարհեալ զառաջարկութիւն Նորա՝ թողու զայն այնպէս։

Բայց իբրեւ մերձենայ ժամանակ յառաջ բերելոյ զխնդիրն առաջի Ատենին, զրէ վարիչ դատին Հ. Սարգսի Ռ. Կօրսօն առ Համարակալն, և խնդրէ ի նմանէ վկայական վասն հաշուին և հանգամանաց առանցեալ մուրհակացն. և նա տայ զայն՝ բաւ որում պահեալ էր դառաջինն, հանդերձ ապդարարութեամբն զոր վերագոյն յիշեցաք։ Վասն այսորիկ ասէ նախագահ դատաւորն; «Խնդրէ փաստաբանն Հ. Սարգսի «յԱտենէն զի տացի նմա վերջին վճիռ խնդրոյն, բայց զկա«բեւորն ոչ է հոգայեալ։»

Թէպէտ և փաստաբանն Հ. Սարգսի յառաջ բերէ անդ զամենայն վերոյիշեալ անցս և պատճառս, այլ դատաւորացն արդարացուցեալ զինքեանս՝ թէ առանց կարգի օրինաց Ատենին ոչ կարեն առնել ինչ, ասեն՝ թէ պարտ է Հ. Սարգսի առնել նախ յայտարարութիւն ընդդիմակցաց իւրոց, և ապա մատուցանել աղերսագիր յԱտենին, նշանակեալ անդ զամենայն ուղղութիւնս զորս պարտ էր առնել յառաջագոյն ի վճիռ խնդրոյն. զոր և հատատէին նորա և տային Համարակալին՝ առնուլ ի նմանէ ուղիղ վկայական վասն հաշուի մուրհակացն և հանգամանաց նոցին։ Եւ յաւելին ասել՝ թէ կարող է փաստաբանն Հ. Սարգսի յառաջ բերել զայն ի հոկտեմբերի։

Պարտաւորեալ յայնժամ Հ. Սարգսի՝ առնել զայն բան

հրամանի դատաւորացն, բայց հապա ի 21 Նոյեմբերի կարէ ի ձեռս բերել զվկայական Համարակալին։ Այլ ըստ բաղդին Հ. Սարգսի յայնմ բանի՝ այր գանգաղ գոլով Ատենադպրին, չյաջողի մանաւոր նիստ դատաւորացն յԱտենի յամսեանն հոկտեմբերի. քանզի վասն տալոյ Ատենադպրին հաշիւ Ատենին, որոշեալ էր այն նիստ դատաւորացն, և վասն չլինելոյ նորա պատրաստ՝ մնայ այն ի դեկտեմբերի, յորում ակն ունէր Հ. Սարգիս վճարիլ և գործոյ իւրում։

Բայց գանգաղն այն ատենադպիր՝ որ յապաղէ այնչափ տալ զհաշիւն Ատենին, պիտակարար եւս վարի ի գործն յայն պաշտաման իւրոյ. քանզի չծանուցանէ պաշտօնէից Ատենին զնիստ դատաւորացն ըստ ժամանակին, որպէս օրէն է, հինգ աւուրբք յառաջ, այլ միով եւեթ աւուրբ միայն. վասն որոյ չկարէ Հ. Սարգիս առնել ըստ ժամանակին յայտարարութիւն ընդդիմակայաց իւրոց՝ թէ յառաջ բերցէ յԱտենի և զգիր գործակալութեան իւրոյ, և խնդրեացէ անտի զաւանդեալ արծաթ հրիտակին ողորմութեան. այլ միայն զվկայականն Համարակալի տէրութեան կարէ յառաջ բերել և զորոշումն նորին յԱտենէ խնդրել։

Խօսի նախ ապարան վարձկանն Տիթ՝ փաստարանն Հայր Սարգսի. ապա փաստարանն Մուրատեանց Պէթի, որ ըստ թելադրութեան Յովհաննու Մուրատի և ի շնորհուկս նորին թափէ զամենայն ճիգն ճարտարանութեան իւրոյ, մանաւանդ թէ ճառատանաց իւրոց, մինչեւ կերկերիլ կոկորդի նորա։

Քանզի երկրորդէ նա անդ զամենայն անցս խնդրոյն, և զպատճառս խռովութեան և մեռաւուց նորին առհասարակ յանձն Հ. Սարգսի կրթեալ՝ արդարացուցանէ զՄուրատեանս յամենայն ի գնացս նոցա և ի գործն յայն։ Բայց քանզի վերկայէին միտք նորա՝ թէ սուտ և անիրաւ էին այնք, վասն որոյ ստէպ ստէպ ներուն ի դատաւորացն խնդրէր՝ եթէ ապրպէպ և ոչ ուղիղ էին բանք իւր, և երբէք երբէք զանձն արդարացուցանէր՝ թէ պարտական է ինքն զայն խօսել. որով յայտ առնէր թէ բռնադատեալ էր ի Յովհաննէ Մուրատայ։ Աւելորդ համարիմք երկրորդել սոտ զբովանդակ անիրաւ և

զանհամ բանս նորա, այլ դիցուք միայն զնպատակս առաջարկութեանց նորա և զելս նոցին։

Առաջին նպատակ առաջարկութեան նորա էր խառնիլ Մուրատեանց ի գործ հրիտակին ողորմութեան. առ որ ասեն դատաւորքն՝ թէ «Զկայ տեղի այդմ առաջարկութեան «ի ժամուս. քանզի չիք, ասեն, այժմ պահանջող դրամոյ «հրիտակին ողորմութեան. յորժամ եկեսցէ յառաջ պա- «հանջող նորին, յայնժամ առաջարկեսջիք դուք զայդ, և «մեք արագուք զարժանն։» Եւ իրրեւ կարի շատ երկրորդէ զայն Պէթի, և թախանձէ յոյժ զդատաւորսն որոշել ինչ ի ժամուն, ասէ նախագահ դատաւորն խստութեամբ; «Զը- «կարծեմ ես թէ արժան իցէ Մուրատեանց խառնիլ երբէք «ի գործ հրիտակին ողորմութեան ի պատճառս գնացից վա- «րուց իւրեանց։»

Երկրորդ նպատակ նորա էր առնուլ Մուրատեանց ի դրամագլխոյ հրիտակին ողորմութեան զյաւաջագոյն հատուցեալ ծախս օրինացն։ Առ այս ասեն դատաւորքն; «Զոր միան- «գամ որոշեալ եմք մեք վճռով՝ անհնարին է փոխել, և ըստ «արժանի գործոց իւրեանց հատուցեալ են նոքա զայն ծախս «օրինաց։»

Երրորդ նպատակ նորա էր ազատ կացուցանել զՄուրատեանս գոնէ ի վերջին եղեալ ծախուց օրինաց, որ վասն տեղեկագրոյ վարժապետի օրինացն։ Զայսմանէ խորհին նախ դատաւորքն ընդ միմեանս, և ապա ասեն։ «Ասեսցուս ոչ զի- «տէր յառաջ՝ թէ ո՞յք իցեն Մխիթարեան Հարք կամ Մխարա- «նութիւնն, վասն որոյ յանձնեաց նա վարժապետի օրինաց «քննել զայն և տալ նմա տեղեկութիւն. բայց Մուրատեանք «որք քաջ ճանաչեին զնոսա զրով և անձամբ ի բազում ա- «մաց հետէ, ընդէ՞ր տարակուսեալ վիճեցին ի զուր. վասն «որոյ պարտին նոքա հատուցանել և զայս ծախս օրինաց «ի քառակէ իւրեանց։ Իսկ ծախք օրինաց ընդհանրական «փաստաբանին Նորթընի, և ծախք օրինաց Սարգսի թէո- «դորեան վարդապետի հատուցին ի դրամագլխոյ ողորմու- «թեան։»

Եւ ոչ առանց քննութեան և հաստատման թողին դատաւորքն զանիրաւ մեղադրութիւն Պէթի փաստաբանին Մուրատեանց, որ զՀ. Սարգսէ Թէոդորեան և զուտ գոհութիւն նոցա զՄուրատեանց, որպէս թէ Հ. Սարգիս լեալ էր պատճառք ամենայն խռովութեանց և փնտուց եղելոց ի խնդիր հրիտակին ողորմութեան, և Մուրատեանք ամենայն ուղղութեամբ վարեալ էին ի գործ կառավարութեան իւրեանց, և այլն։ Վասն այսորիկ առեալ նախագահ դատաւորին զառաջին թուղթ Մուրատեանց որ առ Մխիթարեան միաբանութիւնն՝ գրեալն ի 16 սեպտեմբերի 1816, — զի պատճէն նորին կայր ի պատասխանումն Հ. Սարգսի, — ընթեռնու զայն ինքնին ի լուր ատենակալաց և ունկնդրաց յատենի անդ, և ասէ;

«Եթէ ինչ մի արժանի գոհութեան արարեալ են Մուրա-
«տեանք ի գործս յայս կառավարութեան իւրեանց,
«այս միայն գրութիւն նոցա է. քանզի ծանուցեալ են այսու
«գրով Մխիթարեան միաբանութեան զկամս կառավարին,
«և խնդրեալ են ի նոցանէ առաքել այսր զոք ի միաբանից
«անտի՝ խորհել ընդ նոսա վասն գործադրութեան հրիտա-
«կին ողորմութեան. և ըստ խնդրոյ իւրեանց առաքեալ է
«Մխիթարեան միաբանութիւնն ոչ զմի, այլ երկուս անձինս,
«յորոց մին կարծեմ թէ իցէ այս Սարգիս Թէոդորեան
«վարդապետս։ (Վասն Պէթի փաստաբանն Մուրատեանց
«թէ Անյո՛, նա ինքն է։) Եւ զի՞նչ արարին Մուրատեանք՝
«յայնժամ. զմիմեանս պատճառեալ՝ անգործ և ունայն
«յետս արձակեցին զգործակցս միաբանութեանն։ Իսկ
«զի՞նչ ասացից զգնացից նոցա՝ որ յետ այնորիկ։ . . . Յաւէ
«ինձ վերատին յիշատակել ասս զգնացս նոցա։ . . . Ապա
«ի զուր են, Պ. Պէթի, ջատագովութիւնք քո զնոցանէ, և
«մեղադրութիւնդ զայլմէ։»

Ընդ այս բան դատաւորին պատկառեալ Պէթի, ընդ երեսս Յովհաննու Մուրատայ հայէր, և նա գլխակոր ամաչեցեալ՝ զերկիր նշմարէր։ Եթէ գիտէր դատաւորն զարՀանալն Մուրատեանց ընդ այն գրութիւն իւրեանց, ապարքէն և ոչ ընդ այն գովէր զնոսա։ (Տես յէջս 80–81.)

Տիթ վասատաբանն Հ. Սարգսի մեղադիր լինի անդ Ատենադպրին՝ զի չէր տուեալ գյայտարարութիւնն ըստ ժամանակին. որում իրաւունս տան դատաւորքն. վասն որոյ հարցանէ ցնոսա՝ թէ Երբ կարող իցէ յառաջ բերել զգիր գործակալութեան Հ. Սարգսի։ Ասէ նախագահ դատաւորն. «Երբ և կամիս։»

Յետ երկուց աւուրց, յ8 դեկտեմբերի 1831, ընդունի վարիչ դատին Հ. Սարգսի առմամբ մի յԱտենադպրէն, որով խնդրէ գիտել՝ թէ յիրաւի ունէր Հ. Սարգիս Թէոդորեան գիր գործակալութեան ի Միխիթարեան միաբանութենէն, և թէ պատրաստ էր նա մատուցանել զայն յԱտեանն։ Իբրեւ տեղեկանայ ինքնանէ, ապա ի վաղիւ անդր վերատին գրէ առմամբ առ նա, ծանուցանելով թէ զպակասութիւն իւր վասն չառնելոյն ըստ ժամանակին յայտարարութիւն՝ նախագահ դատաւորն կամի ընուլ, որոշելով այլ մանաւարնիստ յԱտենի, եթէ չիցեն կամք Հ. Սարգսի ապատել մինչեւ ցտահման Ատենին, մինչեւ ց2 փետրուարի 1832։

Տեսեալ Հ. Սարգսի զքաղաքավարութիւն նախագահ դատաւորին առ նա, կամի և ինքն փոխարինել նմա քաղաքավարութեամբ ըստ արժանւոյն. վասն որոյ տայ նմա պատասխանի՝ թէ զգայ զշնորհ նորա առ ինքն յոյժ, բայց չկամի յաւելուլ նմա աշխատութիւն, և ապատեցէ մինչեւ ցտահմանն։ Ընկալեալ Ատենադպրին զպատասխանի Հ. Սարգսի, հաճի յոյժ ընդ քաղաքավարութիւն նորա։

Ունէր Հ. Սարգիս վաւերական գիր գործակալութեան ի Միաբանութենէն իւրմէ՝ յօրինեալ զառաջինն անգղիարէն ի վասատաբանէն իւրմէ Սամէտ ըստ կանոնի և ըստ օրինաց Անգղիացւոց, և առաքեալ ի Վենետիկ թարգմանել զայն ի հայ բարբառ, և հատուցանել առ նա ի Մատրաս ըստ ժամանակին։ Կատարէ Միաբանութիւնն զխորհուրդն, և առաքէ զգիրն ըստ պատճենին որ եղաւ ի ամին, յերես 370. յորում թէպէտ վկայէ Հիւպատոն Անգղիացւոց որ ի Վենետիկ Մլատր Մլնի անուն՝ հատատութեան նորին յառաջնորդէ Միխիթարեան միաբանութեան, այլ պէտք էին անտի վկայից

և հաստատութեան Հիւպատին. քանզի գաստուրքն չճանաչէին զնա և զառաքելութիւն ձեռին նորա. վասն որոյ հարկաւորի Հ. Սարգիս թէոդորեան գտանել զոք ի Մատրա՝ զի վկայիցէ հաստատութեանն, այսինքն առաքելութեան ձեռին Մընի Հիւպատին. ուստի յանձն առնէ վարչի դատին իւրոյ Կօրտօնի որոնել և գտանել զոք անդ յԱնգղիացւոց անտի։

Որոնէ Կօրտօն շատ և ի խնդիր լինի այնմ յոյժ, բայց չկարէ գտանել զոք. և իրրև յուսահատի նա և տարակուսի ընդ ելս իրացն, յանկարծ յիշէ Հ. Սարգիս զի հինգ ամօք յառաջ լուեալ էր ինքն՝ թէ Անգղիացի ոմն ի տանէ Արպըթնոթեան վաճառական ընկերութեանն Ֆրէզէր անուն՝ գնացեալ էր ի Վենետիկ և տեսեալ զվանս սրբոյն Ղազարու, և բազում գովութիւնս խօսեցեալ զՄխիթարեան միաբանութենէն։ Գուշակէ թէ անտարակոյս ծանօթ իցէ նա Հիւպատին. վասն որոյ երթեալ գտանէ զնա և հարցանէ նախ թէ գնացեա՞լ իցէ ի Վենետիկ և տեսեա՞լ զվանս սրբոյն Ղազարու։ Իրրև ասէ նա թէ Այո՛, ապա հարցանէ թէ ճանաչի՞ցէ զՀիւպատն Մըսոր Մընի, և զձեռագիր նորա։ Այո՝ ասէ նա, զի մտերիմ բարեկամ իւր է Մընի, և ունի ընդ նմա թղթակցութիւն։

Յայնժամ ուրախացեալ և համարձակեալ Հ. Սարգսի՝ ասէ ցնա; «Ունիմ շնորհ ինչ խնդրել ի քէն. այսինքն է զի վկա-
«յեցես յԱտենի անդ առաքելութեան ձեռին Մըսոր
«Մընի։» Զկայ առնու նա փոքր ինչ, և ապա ասէ ցնա;
«Որովհետև ընդունելութիւն գտեալ է իմ ի Միաբանութենէ
«ձերմէ ի Վենետիկ, արարից ձեզ զայդ ծառայութիւն։»
Եւ ի մատուցանել Հ. Սարգսի զշնորհակալութիւն իւր ընդ յանձնառութիւնն, ասէ նա; «Ոչ միայն զայս, այլ և զոր
«ինչ ակնարկեցես ինձ՝ պատրաստ եմ յօժարութեամբ
«կատարել. վասնզի գործն գործ ողորմութեան է, և Միա-
«բանութիւն ձեր արժանի է ամենայն յարգութեան։»

Հրաժարեալ Հ. Սարգսի ինքնին բազում շնորհակալութեամբ, գնայ վաղվաղակի և պատմէ զայն վարչի դատին

իւրոյ Կորոնի. որոյ զարմացեալ ընդ այն՝ ասէ ցնա; «Ար-
«դարեւ մեռան Աստուծոյ է ի վերայ գործոյ քոյ։» Եւ
չկարացեալ հաւատալ այնմ, գնայ անդէն ընդ նմա առ Ֆրէ-
դէր, անձամբ տեղեկանայ ի նմանէ, և պատրաստէ առաջի
նորա զաղերսագիրն՝ որով պարտ էր նմա վկայել և երդնուլ
յԱտենին. զոր և կատարէ բարեացապարտ այրն ըստ ժամա-
նակին և յօժար կամաք։

Վկայէ ընդ նմա և Յովհաննէս Շէրմանն ստորագրութեան
ձեռին Արքային Միաբանութեանն, Սուքիասայ Սոմոլի, ան-
ձամբ եւս ճանաչելով զնա. և կատարեն նոքա զայն յանդի-
մանն նախագահ դատաւորին յատանձին սենեկի նորա որ
յԱտենի անդ՝ ի մատուցանել նմա Հ. Սարգսի զաղերսագիր
և զվաւերական գիր գործակալութեան իւրոյ։ Անդ ցուցանէ
գործեալ դատաւորն զյօժարամտութիւն իւր առ նա. քանզի
յառաջ քան զերդնուլ Հ. Սարգսի առաջի նորա՝ ընթեռնու
առանձինն զաղերսագիրն, և տեսեալ անդ ինչ ինչ որ ոչ էր
ըստ կանոնի օրինաց, ազդ առնէ Կորոնի ուղղել զայն վաղ-
վաղակի. և իբրեւ վճարի գործն, ասէ; «Ահա ամենայն ինչ
«կատարեցաւ. մնայ այսուհետեւ հատուցանել գործաւթն
«Սարգսի Թէոդորեան վարդապետի։» Լուեալ զայն Կոր-
ոնի՝ ասէ ցՀ. Սարգիս ուրախութեամբ; «Արդէն առեալ
«է քո զվճիռ խնդրոյն յաչազակ վանս քո։» Ընդ որ քաջա-
լերեալ և միխիթարեալ նորա՝ գոհանայ զՏեառնէ յոյժ յոյժ։

Թէպէտ և վաւերականութիւն գրոյ գործակալութեան
Հ. Սարգսի ողորմութեամբն Աստուծոյ հաստատեցաւ, այլ
կարօտէր նա առենախօս փաստաբանի միում. քանզի պակա-
սէր նմա փաստաբան Սամէհ, և յայտնի էր արդէն անբաւա-
կանութիւն միւս փաստաբանին իւրոյ Տիթի. վասն այսորիկ
խորհուրդ հարցանէ նա Կորոնի՝ խնդրել ի Սամէհէ առենա-
խօսել ի կողմանէ նորա յԱտենի անդ՝ յորժամ խնդիրն յան-
դիման լիցի։ Ասէ ցնա Կորոնն՝ թէ «Դժուարին է այն
«յոյժ. զի չէ օրէն, ասէ, վարժապետաց օրինաց վարել
«զպաշտօն փաստաբանի յԱտենին։» Ասէ ցնա Հ. Սարգիս;
«Կամիմ՝ ես փութ փութալ, գրել առ Սամէհ և հարցանել

«Նմա զայն։» Ասէ ցնա Կօրտոն; «Փարձեսջիր, բայց ես «չկարծեմ թէ յանձին կալցի նա, քանզի ընդդէմ է սովո- «րութեան։»

Գրէ Հ. Սարգիս առանձակ մի առ Սամէճ և խնդրէ ինամանէ. և նա առնէ պատասխանի հաւանութեան, միայն պարտ էր Հ. Սարգսի աղերսագիր մատուցանել առ նախագահ դատա- ւորն և խնդրել զայն ինամանէ. զոր և առնէ Հ. Սարգիս և ընդունի զհրամանն, և տարեալ զհրամանագիրն առ Սամէճ՝ խնդրէ ինամանէ առնախօսել զարժանն յԱռենի անդ ի կողմանէ իւրմէ։ Ասէ ցնա Սամէճ; «Վատահ լեր, որարից ես «զարժանն։» Եւ պատմէ նմա զհանգամանքն իւր ընդ Յով- հաննէս Մուրատ. քանզի ընծայեալ էր նա Սամէճի ինչ ինչ զարդս սեղանի, և խոստացեալ նմա ընծայել և այլ ինչ, և ոչ կատարեալ զխոստումն իւր։

Իբրեւ այն եւս ողբմութեամբն Աստուծոյ յաջողեաց Հայր Սարգսի յամենայն յունուարի 1832, ապաքաց այնուհետեւ առաջին ամսեանի Առենին, որ յ2 փետրուարի, և վերջին որոշման խնդրոյն և վճռոյ դատաւորացն։

ԳԼՈՒԽ ԻԹ.

Գնացք Մոբրատեան եղբարցն ընդ վիրանսն. — Դատ Պարոն Եղուարդայ ընդ Հնդկի ռազմեալ. — Բանք նորա առ Հայր Սարգիս վասն վաշխի հրիտակին. — Ջանք և հնարք Պարոն Յովհաննու Մոբրատայ՝ զաղ յիրաւախոհութիւն ընդ Հայր Սարգսի. — Ոչնի միջնորդ զգաղիացին Կռամֆիկ. — Բանք սորա ընդ Հ. Սարգսի վասն վաշխին, — Տեսութիւն Պարոն Յովհաննու Մոբրատայ և Հ. Սարգսի ի գործատան Կռամֆիկի. — Կարծիք Կօրոսնի ընդ պահանջուն վաշխի հրիտակին. — Պատասխանի Հ. Սարգսի.

Անտանօր ի դէպ համարիմ տալ ինչ ինչ տեղեկութիւն զանգատեհ գնացից Մուրատեանց որ ընդ Հայր Սարգսի Թէոդորեան, և զանհամբոյր բարուց նոցա ընդ միմեանս։ Արդ Պ. Եդուարդ Մուրատ ըստ արժանւոյն պարտաւորեալ միանգամայն յերկուց կողմանց իրաւարարաց՝ հատուցանել Պ. Յովհաննու Մուրատայ 400,000 ռուբի, իրրեւ խնդամուտ լինի՝ թէ հաղորդել զանձն ի պարտուց իւրոց ոչ կարէր՝ կապեալ և կաշկանդեալ գոլով յամենայն կողմանց, յայլ իմն հնարս խորամանգութեան մտարկէ։ Ջանայ նախ շահել զսիրտ Պ. Աբրահամու Ազանուրի, հատուցանելով նմա յառաջագոյն զչնչին հրիտակն թողեալ կտակաւ ի մօրէն իւրմէ. ապա միջնորդութեամբ նորա հաշտել ընդ Հ. Սարգսի Թէոդորեան, խոստովանելով նմա առանձին և հրապարակաւ զմեղանս իւր և զանիրաւութիւնն որ առ նա, և ներումն ընդ այն ինամանէ խնդրելով։

Իրրեւ տեսանէ թէ ամենայն ինչ յաջող է ըստ ցանկութեան իւրում, սկսանի զանգատել զանիրաւութենէ եղբօր իւրոյ Յովհաննու առ ինքն, որպէս թէ յափշտակեալ էր ի նմանէ

400,000 ռուբլի անիրաւութեամբ, և յայտնել զթշուառութիւն իւր. վասն որոյ ստէպ ստէպ երկրորդէ զայն Պ. Ազանուրի և ի գութ շարժէ զնա՝ դարման տանել թշուառութեան իւրում, այսինքն միջնորդել առ Հ. Սարգիս՝ զի դարձուցէ առ նա զրոմանդակ վաշխ դրամագլխոյ հրիտակին ողորմութեան, զոր անշուշտ եղեալ էր ի մոի թէ հաստատանել հարկեցին ինքեանք յակնարկել Ատենին։

Իսկ Պարոն Ազանուրի խելամուտ զոլով անյիշաչարութեան Միաբանութեանն, միանգամայն և առ ի տկարացուցանել զհակառակութիւն Պ. Յովհաննու Մուրատայ ընդդէմ Հայր Սարգսի, յուսացուցանէ զնա հանդիպել խնդրոյն. միայն թէ ցուցցէ նա այնուհետեւ զգաստութիւն և ուղղութիւն ի վարս իւր. և նա խոստանայ ծանր ծանր երդմամբ չպակասել յայն, այլ և վարձս խոստանայ նմա ընդ միջնորդութեանն 30,000 ռուբլի, և աւելի եւս։

Այսու յուսով և խոստմամբ յաճախէ նա զերթեւեկել իւր առ Հ. Սարգիս ի տուն Ազանուրի, և ցուցանէ զանձն իւր միշտ անմիաբան ընդ եղբօր իւրում Յովհաննու Մուրատայ ի բանս և ի գործս հակառակութեան ընդդէմ Հ. Սարգսի ի խնդիր հրիտակին ողորմութեան։ Այլ զոր օրինակ ըստ առակին «Ընձու անկարելի է զխայտուցն փոխել, և եթովպացւոյ զթխութիւն;» Նոյնպէս և նմա զմեղմեխ բարսն. զի թէպէտ ցուցանէր զանձն առ արտաքս ընդ առաջին գործս անմտութեան իւրոյ զղջացեալ, բայց ի ներքս՝ յորժամ թուէր նմա թէ կայր ինչ յոյս յաջողութեան, հակառակելով Հայր Սարգսի՝ եղբօրն իւրում լինէր ձեռնտու։

Եւ ահա այսպիսի յետամիտ խորհրդով և անպատեհ գնացիւք վարի նա մինչեւ յելս 1831 ամին, յորում հրատարակէ զգնալ իւր յԵւրոպ իբրեւ ի տեսութիւն աշխարհաց. բայց բուն պատճառք գնալոյ նորա անդր կրկին էին. մի՝ զի հաւատացեալ միամտութեամբ վաճառական ընկերութեան Գաղղիացւոյ ուրուն ի Պօրտօ քաղաքի իբրեւ 200,000 ռուբլոյ լեզակ և բամբակ, լսէ զանանկութիւն ընկերութեանն այնորիկ,

և կամի գնալ անդր զի ի ձեռս բերցէ ինչ ի պահանջմանաց իւրոց. Թէպէտ և յոյժ սակաւ ինչ գտանէ անտի։

Եւ երկրորդ՝ զի առեալ էր կաշառս ի ձեռաց Հնդկի ուրումն մուրհակս քանի մի տանց և ապամանելոյ մատանի մի, խոստմամբ միջնորդ լինելոյ և հատուցանելոյ զնա ի պաշտօն ինչ վաճառական ընկերութեան. և ի չկարելն կատարել զխոստումն իւր՝ խնդրէր Հնդիկն զի դարձուցէ նմա յետս զկաշառսն. և ի զլանալ նորա զայն՝ բողոքէր այրն Յանանն պահանջել զինչս իւր։ Թէպէտ և Եդուարդ խոստմանէ զերա մուրհակաց տանց նորա, և դարձուցանէ զնոսին յետս, չկարելով թաքուցանել, բայց զմատանին զլանայ. քանզի վաճառեալ էր զայն այլում. և վասն այսորիկ կամէր նա գնալ յԵւրոպ, զի ապատեցի ի պահանջմանաց Հնդկին, և ի խաղաթենէ օրինաց. բայց ի գուր։ Քանզի այն ինչ պատրաստէր ելանել ի նաւ, և ահա ի վաղիւ անդր յշ փետրուարի ընդունի հրամանագիր յԱնանէ անտի առնել պատասխանի գանգատագրոյ Հնդկին։

Տագնապի յոյժ յայնժամ. քանզի պարտաւորի կամ կամել ի ճանապարհէն՝ կորուսանելով զհատուցեալ վարձ նաւուն և կամ զայլ ոք ընդ անձին իւրում երաշխաւոր տալ։ Եղբայր նորա չառնու յանձն զերաշխաւորութիւն նորին՝ երկուցեալ ի ծախուց օրինաց և ի խայտառակութենէ Յանանին. վասն որոյ խնդրէ զայն ի Պ. Աղանուրէ. և նա թէպէտ և խոստանայ յանձն առնուլ, բայց պայմանաւ, եթէ յանձնեսցէ նմա զգին մատանւոյն, և թողցէ առ նմա դրամսն ինչ արծաթոյ ի ծախս օրինաց։ Իսկ Պ. Եդուարդ Մուրատ ոչ առնէ զայն. և Պ. Աղանուր վերջ գոլով բարուց նորա՝ զդուշանայ և հրաժարի յերաշխաւորութենէ անտի։ Ապա հարկաւորի նա տալ երաշխաւոր զվարիչ դատին իւրոյ զԱյվաշ, յանձնելով ի ձեռս նորա զգին մատանւոյն և զդրամսն ինչ արծաթոյ ի պէտս ծախուց օրինաց. և այնպէս զկրծեալ ի ձեռաց Յանանին գնա ելանէ ինաւ՝ անցանել յԵւրոպ, ի Լոնդոն։

Այլ թէ զինչ եղեն ելք խնդրոյ նորա ապա Յանանի անդ, յառաջագոյն իսկ յայտնի էր. Նախատինք և հատուցութիւն

վատահամբաւութեան նորա, հանդերձ երկուտակք ծախուք ի դատաստանի։ Քանզի վճռեն դատաւորքն հատուցանել Եդուարդայ զկին մատանւոյ Հնգկին 4,000 ռուբի. զոր նա վաճառեալ էր Պ. Յովհաննու Յարութենի 1,500 ռուբի. և զծախս օրինաց երկուց կողմանց, 12,000 ռուբի և ասելի ևս։ Եւ վճիռն այն որոշի զկնի վեց ամաց որոշման վերջին վճռոյն որ վասն խնդրոյ հրիտակին ողորմութեան։ Հատատութիւն անցիցս տեսանի ի Լրաթուղթն Մատրատու, տպագրեալ ի 10 օգոստոսի 1832։

Բայց Պ. Եդուարդայ մինչեւ մեկնեալ ի Մատրատէ գնալ Յերուսաղէմ, խօսի ընդ Հ. Սարգսի, և ազաչէ զնա զի պահանջեսցէ նախ ի նոցանէ զվաշխ դրամագլխոյ հրիտակին ողորմութեան, և ապա դարձուցէ զայն առ ինքն, կարօտ գոլով նորաարծաթոյ առաւել քան զեղբայր իւր, և կարուսեալ Յերուսաղէմ զայնչափ դրամաց արծաթոյ։ Եւ այնպիսի յուսով ակնկալութեան առնէ նա զրով յայտարարութիւն առ փառատրան իւր Նորթըն՝ թէ «Զկամիմ ես վիճել և հակառակիլ «բնաւ ընդ պահանջումն վաշխի դրամագլխոյ հրիտակին «ողորմութեան։» Եւ ցուցանէ զայն Հ. Սարգսի, և ասէ ևս նմա՝ թէ աւանդեսցէ Աստենին զվաշխ հրիտակին. թէպէտ և չառնէ նա զայն այնպէս, այլ յանձնէ զայն ընդ այլ արծաթոյ ի ձեռս եղբօր իւրոյ Յովհաննու Մուրատայ։

Իսկ Հ. Սարգիս Թէոդորեան, — որ ունէր արդէն հրաման ի Միաբանութենէ իւրմէ կարի իմն խղճահարութեամբ, շատացեալ թէ անիրաւութեամբ և անիրաւութեամբ, չպահանջել ի Մուրատեանց զվաշխ դրամագլխոյ հրիտակին, որ իրաւունք էր աղքատաց ազգին, և զի եթէ ատացեալ ևս էր զայն՝ ըստ անաչառ օրինաց Անդղիացւոց, դարձուցէ զայն յետս, իբր զի չկամի Միաբանութիւնն քանդել զտուն բարեբարին, — առնէ Պ. Եդուարդայ պատասխանի; «Եթէ թող- «ցէ Միաբանութիւնն զվաշխն, ինքն զիտէ. չկարեմ ես և «չկամիմ առնել խորութիւն ի մէջ երկուց եղբարց հարազա- «տաց։» Եւ խրատ տայ նմա ապասել առուրս ինչ մինչեւ որոշեսցէ Աստուն զինդիր հրիտակին, և տացէ զատաւորքն

զվերջին վճիռ իւրեանց. այլ չլսէ նա և չանսայ բնաւ խրատս նորին, և փութայ գնալ յԵրուսաղէմ։

Եկեսցուք արդ ի գնին գործոց Պ. Յովհաննու Մուրատի։ Տեսեալ նորա թէ ամենայն ինչ յաջողեցաւ և յաջողէր Հայր Սարգսի ի խնդիր հրիտակին ողորմութեան, և գիտելով զկամս եղբօր իւրոյ Եդուարդայ վասն բանի վաշխին, համարի թէ անհրաժեշտ հարկաւ պարտաւորեցի հատուցանել զայն. վասն որոյ թողեալ յոչ կամաց զտարապարտ հպարտութիւն մտաց իւրոց, և զհակառակութիւն խնդրոյն, սկսանի միջնորդս խնդրել հաշտութեան ընդ Հ. Սարգսի, և վերջապէս իրաւախոհութեան ընդ նմա։ Փորձէ նախ միջնորդութեամբ Եդուարդայ, յառաջ քան զմեկնել նորա ի Մատրաստ, զի հաշտեալ և բարեկամացեալ համարէր զնա ընդ Հ. Սարգսի։ Առաջարկէ նմա հատուցանել զկէս վաշխի գրամագլխոյն 200,000 ռուբլի՝ ըստ հաշուի իւրում, և հատուցեալ վերատին զառաջին դաշնագիրն և զպայմանս նորին որ ի մէջ իւրեանց եղեն երբեմն։

Առնէ պատասխանի Հ. Սարգիս՝ թէ «Ես յօժար և պատրաստ եմ խաղաղութեամբ զկրան վճարել ընդ ձեզ. բայց յառաջ քան զորոշումն կամ զվերջին վճիռ Աստենի՝ չկարեմ ինչ առնել. քանզի չգիտեմ թէ զինչ ունի որոշել Աստեանն. համարեցէ՞ վաւեր զգիր գործակալութեան իմոյ, և ծանիցէ՞ զիս օրինաւոր գործակալ Միսրանութեան։ Եթէ յաջողեցի ինձ այս՝ արարից զամենայն՝ որ յօգուտ և ի պատիւ իցէ տանն ձերոյ, վասն հանդուցեալ բարերարին. իսկ եթէ ոչ՝ զի՞նչ արժիցէ իրաւախոհութիւն մեր և աւարտումն գործոյն. վասն որոյ պարտիք սպասել հանդարտութեամբ մինչև տեսցուք զորոշումն Աստենին։»

Զայս պատասխանի Հայր Սարգսի ոչ հաւատարմութեամբ տանի առ նա Եդուարդ Մուրատ. քանզի նպատակ կամաց նորա և ցանկութեանն այլ ինչ էր, այսինքն պահանջել նախ ի նոցանէ զբոլանդակ վաշխ հրիտակին, և ապա գարձուցանել նմա զայն առանձինն ի ծածուկ. վասն որոյ այլ ընդ

այլոյ բանս և խառնութիւն ի կողմանէ Հ. Սարգսի յօդեալ պատմէ Յովհաննու Մուրատայ. և յաւելու եւս ասել նմա ; « Զկամիմ ես հակառակիլ վասն բանի պահանջման վաշխի « դրամադլխոյն. այլ հաստուցից զբովանդակն յորժամ պա- « հանջեցայց ։ »

Իրանից անտի նորա կապ՝ածի Յովհաննէս Մուրատ զանարգ դիտաւորութենէն Եդուարդայ, և առ ի հաստատել զայն՝ փորձէ զնա խորամանդութեամբ. քանզի առաջարկէ նմա ինքնակամ հաստուցանել զայն՝ մինչեւ պահանջեալ իցէ ինոցանէ Հ. Սարգիս ։

Խնացեալ Եդուարդայ զխորամանդութիւն նորա, ասէ ; « Ոչ այդպէս, այլ յորժամ պահանջեցի ի մէնջ Ատենիւ, « յայնժամ հաստուցուք ։ » Յայտնէ առաւել եւս կապ- կածի Յովհաննէս Մուրատ. զի տեսանէր թէ չկամի Եդուարդ Մուրատ զհաշտելն իւր ընդ Հ. Սարգսի. վասն որոյ լուէ ի ժամուն մինչեւ մեկնի Եդուարդ ի Մատրատէ ։

Իսկ յետ մեկնելոյ նորա անտի խորհի Յովհաննէս Մուրատ միջնորդ ունել զոք ի Փափուչին կրօնաւորաց անտի, կամ զայլ ոք ի բարեկամաց Հ. Սարգսի. և մինչդեռ նա յայնմ խորհրդի էր՝ խնանայ զայն Գաղղիացի ումն Փիէռ Կռամիէ անուն, ի Փոնթիչէրի քաղաքէ, ծանօթ նորա յառաջագոյն ի Փարիզէ, որ և ծանօթացեալ էր Հ. Սարգսի առ Աղանուրեանս յերթեւեկել իւրում անդր ընդ Եդուարդայ ։

Սա այս Կռամիէ, այր առանց սկզբանց կրօնի և հետամուտ բաղդի, տեսեալ զթշուառ վիճակ Յովհաննու Մուրատայ ի խնդիր հրիտակին ողորմութեան, և զկարօտութիւն նորա հաշտելոյ ընդ Հ. Սարգսի, մի միայն առիթ բարեբաստութեան իւրոյ զմիջնորդութիւն իւր համարի ։ Վասն որոյ գնայ յայց Աղանուրեանց ըստ սովորութեանն, և խօսս արկեալ զխնդրոյ հրիտակին՝ ասէ ցՀ. Սարգիս ; « Յովհաննէս Մուրատ « եղեալ է ի մոի բողոքել յՆերսէս առ Ատեան թագաւորին « Անգղիոյ՝ եթէ ի բարձրագոյն Ատեանն Անգղիացւոց ոչ « յաջողեցի նմա ։ »

Ասէ ցնա Հ. Սարգիս ; « Կամք իւր են. որպէս և կամի

«ասացէ. եւ զամենայն ինչ թողեալ եմ վերին Տեսչու-
«թեանն։»

Ասէ Կռամիլ; «Յիրաւի, եթէ բանն յայն վայր հասցէ,
«անշուշտ ապառապուռ քանդումն լինի ասն Մոբատեանց,
«և Մխիթարեանն միաբանութեանն ներքութիւն շատ զամ-
«բաղումն։»

Ասէ ցնա Հ. Սարգիս; «Զինչ կարեմք առնել, եթէ այն-
«են կամք Պ. Յովհաննու Մուրատայ։»

Ասէ Կռամիլ; «Ա՛ռ յուսահատութեանն եւեթ ձեռնա-
«մուխ լինի Յովհաննէս Մուրատ ի գործն։»

Ասէ ցնա յայնժամ Հ. Սարգիս; «Եւ ա՛ռ ի՞նչ լցէ արդեօք
«յուսահատութիւն նորա։»

Ասէ Կռամիլ; «Զի կարծէ թէ կամի Հ. Սարգիս պահան-
«ջել ի նոցանէ զրոմանգակ վաշխ դրամագլխոյ հրամակին
«ողորմութեան։»

Հայր Սարգիս ասէ; «Ոչ գոյ ի միջի այժմ խնդիր վասն
«վաշխի հրամակին, այլ միայն վասն դրամագլխոյ նորին.
«և այն յանձնեալ է յերկուց կողմանց բարձրագոյն Ասե-
«նին. տեսցուք նախ՝ թէ զի՞նչ որոշեցէ Ասենանն, և ապա
«զվաշխէ նորին խորհեցուք։ Բայց ի հանդարտութիւն մը-
«ասց Պ. Յովհաննէս Մուրատ այսչափ ասեմ ի ժամուս,
«թէ չեն կամք Մխիթարեանն վասն վաշխի հրամակին
«խնամութեամբ վարել ընդ նոսա, այլ ամենայն քաղցրու-
«թեամբ և խաղաղութեամբ՝ վասն հանգուցեալ հօր իւրեանց
«բարերարի ազգին։»

Զայն լուեալ Կռամիլի ի բերանոյ Հ. Սարգսի, գնաց պատ-
մէ Յովհաննու Մուրատայ՝ իբրեւ ասեսցէ ինչ բարեաց տա-
լով նմա, հանդերձ բազում գովութեամբ զՀ. Սարգսէ, չի-
նեալ յոյժ ընդ անյիշաչարութիւն նորա։

Բայց Յովհաննէս Մուրատ կասկածեալ զանյիշաչարութե-
նէն Հ. Սարգսի, միանգամայն և զհաւատարմութենէն Կռա-
մլիէ, երկնչի՝ մի՛ արդեօք ի չմիտանել իւրում ընդ Հայր
Սարգսի և ի պահանջել նորա զրոմանգակ վաշխ հրամակին
ողորմութեան՝ հակառակ ինչ ընդդէմ իւր վկայեցէ Կռա-

վիէ յԱտենին. վասն որոյ ցուցանէ նախ տհաճութիւն ընդ միջնորդութիւն նորա, ապա գրով ինդրէ ի նմանէ՝ թէ առանց դիտութեան իւրոյ խօսեցեալ էր նա ընդ Հ. Սարգսի Թէոդորեան։ Հաւանեալ Կռամիէ՝ կատարէ զկամս նորա, տալով նմա գիր։

Թէպէտ և Յովհաննէս Մուրատ զայս զգուշութիւն առնէ յայնժամ ըստ կասկածոտ մտաց իւրոց, առաւելապէս զՀայր Սարգսէ կասկածեալ և երկուցեալ, բայց խորհրդով և ըստ բաղդին իւրում առնէ զայն. քանզի այնու փրկի ապա ի փորձութենէ միջնորդին. զոր և ի տեղւոջ իւրում կարգաւ ծանուցից։

Ի վաղիւ անդր վերատին գնայ Կռամիէ առ Հայր Սարգիս ի տուն Աղանուրեանց, և դարձեալ խօսի ընդ նմա վասն բանի վաշխին. բայց տեսանէ Հայր Սարգիս զի ենենգութիւն գոյ ի շրթունս նորա. քանզի առաջարկէ Կռամիէ բաժանել զայն վաշխ ի միջի իւրեանց, այսինքն ի մէջ Հ. Սարգսի, ի մէջ Յովհաննու Մուրատայ և ի մէջ տիկնոջ Աղանուրի. իսկ Եղուարդայ չտալ ինչ բնաւ, կամ տալու ինչ. զի ունի նա, ասէ, բաւական ինչս, և ըստ անպիտան վարուցն՝ շողոքորթէ յոյժ զՀ. Սարգիս, որպէս թէ տէր էր նա յայնժամ 1,200,000 ռուբլոյ, և իշխան տնօրինելոյ զայն որպէս և կամէր. և թէ պարտ է նմա իբրեւ հօր հասարակաց տանն Մուրատեանց՝ բաղնել յընտանեաց նոցա զառիթ խռովութեան, տալով և տիկնոջ Աղանուրի բաժին ի վաշխէ անտի զրամագլխոյ հրիտակին։

Ասէ ցնա Հ. Սարգիս; «Ի քէ՞ն առաջարկես ինձ զայս՝ թէ «ի կողմանէ Յովհաննու Մուրատայ։»

Ասէ ցնա Կռամիէ; «Ի կողմանէ իմմէ. բայց հաւատի «եմ, զի հաւանի ընդ այն և Յովհաննէս Մուրատ։»

Յայնժամ ասէ Հ. Սարգիս; «Պարոն, ես մինչև ցարդ «ամենայն ուղղութեամբ և պարզութեամբ վարեալ եմ «ի գործս՝ առանց ինչ անձին շահախրութեան. վասն «որոյ վկայ է ինձ երկինք, զի չունիմ ես բնաւ ցանկութիւն «սեպհականելոյ ինչ յարծաթոյ անտի. իսկ թէ տէր համա- «բիս զիս այսչափ արծաթոյ և իշխան տնօրինելոյ զայն, սիրա-

«Իսկ դու բոլորովին ի կարծիս քո. զի ոչ միայն չեմ ես «տէր 1,200,000 ռուբլոյ, այլ և ոչ երկուց ռուբլեաց. որ- «չափ և է այս արծաթ և որչափ ես լիցի, բոլանդակն «իրաւունք են որբոց և աղքատաց ազգիս, և որբոցն «առանց ի ձեռին։ Եւ զորս իմոյ պաշտամանս այոչափ է «միայն, համոզել զհարազատսն բանիւք ի հաշտութիւն, «և ոչ արծաթով այլոց, մանաւանդ որբոց և աղքատաց, «առնել ի մէջ նոցա խաղաղութիւն. ուստի արտաքոյ և «օտար է գործ այդպիսի պարտուց պաշտամանս իմովամ, և «անվայել առաքելոյս։»

Ասէ ցնա Կռամիէ զարմացմամբ իմն; «Ուրեմն չհամարիս «դու իրաւունս և Պ. Աղանուրի գտանել ոնոյ ինչ, այլ «զբոլանդակն միանգամայն կամիս թողուլ Մուրատեանց. «չիցէ այդ ընդդէմ խղճի մտացդ։»

Ասէ ցնա Հ. Սարգիս; «Զի չունին Աղանուրեանք իրա- «ւունս առնու առնլոյ ինչ յարծաթոյ անոր, և ոչ մի ռուբլի. և «ոչ իսկ Մուրատեանց իրաւունք են թողուլ, եթէ կարող «էին նոքա հատուցանել զբոլանդակն։»

Իրրև թէ զարմացեալ խորամանգին Կռամիէ ընդ արդա- րութիւն Հ. Սարգսի, ասէ փաղաքշանօք իմն; «Ցիրաւի ար- «ժան է զքեզ պատրիարք ազգին Հայոց կացուցանել։» Սակայն ի վերայ այսր ամենայնի Ղանայ Կռամիէ միշտ և Աղանուրեանց բաժին անոր հանել. և այս Ղանք նորա վասն երկուց պատճառաց. մի՝ զի այնպէս թելադրեալ էր նմա Պ. Յովհաննէս Մուրատ, որ կարծէր՝ թէ Հ. Սարգիս խոր- հրդով Աղանուրեանց շարժէր, և թէ վասն օգտի նոցա փոյթ մեծ էր նմա. վասն որոյ հարկ համարէր և նոցա ինչ- խոստանալ։ Երկրորդ՝ խորամանգութիւն նորին իսկ միջնոր- դին՝ Կռամիէի. զի կամէր միջնորդութեամբ իւրով շահեցու- ցանել բաղմաց՝ որոց չէին իրաւունք գտանել ինչ անոր, որպէս զի ապա բաղում ինչ վարձս միջնորդութեան իւրոյ պահանջեսցէ. և ի զլանալ ուրուք ի նոցանէ զայն՝ սպառնայր յայտնել յԱտենին՝ թէ խարդախութեամբ կատարեալ է գործ հրիտակին ողորմութեան։

Զայս խորամանգ և անարգ միտս Կռամլիէի անդէն յառաջնու�ն աւուր միջնորդութեան նորա ճանաչէ Հ. Սարգիս, և ծանուցանէ զայն ապա Յովհաննու Մուրատայ, վասն որոյ ոչ տայ բնաւ տեղի միջնորդին։ Թէպէտ և նա թաքուցանէ զայն ասելով՝ թէ միջնորդութիւն իւր լոկ առ բարեկամութեան է, և ոչ վասն շահասիրութեան, բայց յիլից իրացն ցուցանէ զանարդութիւն մտաց իւրոց և զվատթարութիւն վարուցն։

Իրրեւ տեսանէ խորամանգ Գաղղիացին՝ թէ չկարաց ինչ վճարել ընդ Հ. Սարգսի ի տան Ազանուրեանց, հրաւիրէ զնա ի գործառուն իւր՝ խօսել դարձեալ վասն բանին այնորիկ։ Խնամայ Հ. Սարգիս զվիտս նորա, զի կամի հանդիպեցուցանել զնա անդ Յովհաննու Մուրատայ. այլ չիմանալոյն արարեալ՝ գնայ առ նա ի վաղիւ անդր։ Ընդունի զնա Կռամլիէ քաղաքավարութեամբ, և ցուցանէ նմա իրր մտերմաբար ըզպատասխանի թղթոյն իւրոյ առ Յովհաննէս Մուրատ. և այս էին բանքն որ ի նմին.

„ Սիրելի Կռամլիէ, ընկալայ յերեկն զգիր քո, և իմացայ
„ անտի զկարեկցութիւն Վերապատուելի Հայր Սարգսի առ
„ իս և առ համօրէն տունս մեր. վասն որոյ ուրախ եմ և
„ շնորհ յոյժ ունիմ նմա։ Յաղագս իրաւախոհութեանն մե-
„ րոյ վասն բանի հրիտակին չէք ինչ դժուարութիւն. քանզի
„ պայմանքն որ ի մէջ մեր և նորա եղեալ յառաջագոյն՝ հաս-
„ տատուն են միշտ առ մեզ. մնայ արդ միայն սիրով տեսա-
„ նել մեզ զմիմեանս, և ե՛րբ և ո՛ւր հաճոյ իցէ նմա՝ պատ-
„ րաստ եմ հաճել զկամս նորա։ „

Ապա խնդրէ Կռամլիէ ի Հայր Սարգսէ հանդիպիլ նմա և Յովհաննու Մուրատայ ի գործատան անդ իւրում։ Տայ նմա հաւանութիւն Հ. Սարգիս. և Կռամլիէ գրէ տոմսակ մի առ Յովհաննէս Մուրատ և կոչէ զնա գալ անդր։ Գնայ Յովհաննէս Մուրատ վաղվաղակի առ նոսա, և կալեալ զձեռն Հայր Սարգսի խնդրէ ի նմանէ ներողութիւն։

Ասէ ցնա Հ. Սարգիս; „ Ասասած ներեսցէ մեզ ամենե-
„ ցուն։ „

Ապա առեալ զՀ. Սարգիս տանի ի սենեակ մի առանձինն, և սկսանի խօսել ընդ նմա այսպէս; “Վերապատուելի Հայր, “ոչ կամիմ ես արգարացուցանել զիս առաջի քո, արկանե- “լով զմեղանսն ի վերայ եղբօրս կամ ի վերայ այլոց. թէ- “պէտ և նա և այլք եղեն պատճառք չարեացս, այլ ես “զրոյանդակն ի վերայ իմ առեալ խնդրեմ ի քէն ներո- “ղութիւն։ Քանզի յորժամ զմտաւ ածեմ ես զամենայն “անցս որ անցին ընդ մեզ զայս հինգ ամս, ոչ ի մարդկա- “նէ ինչ համարիմ զայն, այլ յերկնաւոր բարկութենէն, “և այն վասն մեզաց մերոց, և առ ի խրատ մեզ արդեօք։ “Եւ այս ճանաչումն ճշմարտութեան և անկեղծ խոստով- “նութեան յուսացուցանեն զիս դառնալ ի վախճանի զիտ- “զաղութիւն և զհանդարտութիւն կենաց, որոց փափաքիմ “յոյժ յոյժ։”

Ասէ ցնա Հ. Սարգիս; “Արդար և ճշմարիտ են բանքդ, “Պարոն, և անշուշտ գոցես զայնս եթէ արդեամբք ի խրն- “դիր լիցես նոցին։”

“Այո՛, ասէ Յովհաննէս Մուրատ, արդեամբք իսկ ի խրն- “դիր եմ նոցին, որպէս տեսցես. միայն ի քէն կախեալ կայ “յաջողութիւն և թշուառութիւն իմ։”

Ասէ ցնա Հ. Սարգիս; “Որպէս յառաջ՝ նոյնպէս և այժմ “ցանկացող եմ ես միշտ երջանկութեան ձերում. ոչ սրտակ- “ամացայց յայնմ ըստ կարի իմում։”

Ասէ ցնա Յովհաննէս Մուրատ; “Տեսանեմ ես արդ մի “միայն հնարս վախճան տալոյ վիճոյ և խռովութեան. այն է “հատուցանել զառաջին դաշնադիր մեր։”

Ասէ ցնա Հ. Սարգիս; “Արարից ես զամենայն որ յօգուտ “և ի միխիթարութիւն ձեր. բայց տեսցուք նախ թէ զինչ “որոշեցէ Աստուն վասն խնդրոյս։”

Ասէ ցնա Յովհաննէս Մուրատ; “Եթէ կամիս դու զայն “դաշն հատուցանել, պարտիս ընդհատել զընթացս վիճոյն “Աստուծի զաւուրս ինչ, մինչև իրաւախոհ լիցուք մեք ընդ “միմեանս։”

Ասէ ցնա Հ. Սարգիս. “Զիարդ կարացից ես զայդ առնել,

«զի ոչ է ի կարի իմում, թողեալ զոլով ձեր և իմ զամենայն
«ինչ ի կամս և յընտրութիւն Աստենին, և նորա զայն յանձն
«առեալ, և զգործն անընդհատ մինչեւ ցարդ յառաջ տա-
«բեալ. նմա մնայ որոշել զայն զինի վաղուին և տալ զվեր-
«ջին վճիռն։»

Ասէ ցնա Յովհաննէս Մուրատ; «Հնարաւոր է այդ, եթէ
«կամիցիս։»

Ասէ Հ. Սարգիս; «Ամենայն ինչ որ ի խնդիրս, և որ ի ձեռ-
«ին իմում է, հնարաւոր է ինձ, և ես արարից զայն. այլ
«այս չէ յիշխանութեան իմում, վասն որոյ և ինձ անհնա-
«բին. սակայն ունիմք մեք ժամանակ երկուց աւուրց, կա-
«րեմք խորհել և խօսել զայսմանէ. և եթէ կամիս՝ եկ ընդ
«իս երթիցուք ի տուն քեռն քո տիկնոջ Ազանուրի, ճաշեա՛
«ընդ մեզ, և խորհեացուք վասն բանիս այսորիկ։»

Զայս վասն այսորիկ ասաց նա, զի կարծեացէ զժամանակն
յայլ ինչ ընդդիմութիւն մատակարելոյ նմա։

Ասէ ցնա Յովհաննէս Մուրատ; «Զունիմ ես ինչ գժուա-
«թիւն ընդ քեռն իմում. յժարութեամբ գնամ ճաշել ընդ
«նմա, բայց գործ շատ ունիմ այսօր. չգիտեմ թէ կարացից
«ժամանել ճաշու ժամուն։ Եթէ գործատնութիւնս աւար-
«տեցի մինչեւ ցերկու ժամ աւուրս, եկից այսր՝ գնալ ընդ
«քեզ անդր. իսկ եթէ ոչ, վաղիւ ընդ առաւօտն անխափան
«եկից տեսանել զբոյր իմ և խօսել ընդ քեզ։»

Եւ ի մեկնել իւրում ասէ՝ ասէ; «Եթէ պակասեցայց
«գալ այսօր, անհնարաւորութիւնն լիցի պատճառ այնմ՝ և
«ոչ այլ ինչ. զոր և ծանուցից քեզ գրով. վասն որոյ մի՛
«օտար ինչ անցցէ ընդ միտս քո։»

Մնայ անդ Հայր Սարգիս ի գործատան Կամիլի մինչեւ
ցժամն իրր երեք. և իրրեւ չերեւի անդ Յովհաննէս Մուրատ,
և ոչ գրով ինչ ծանուցանէ նմա ըստ խոստման իւրում, ա-
ռաքէ Հ. Սարգիս զոք ի սպասաւորաց անտի գործատանն առ
Յովհաննէս Մուրատ հարցանել թէ զայր՝ նա թէ ոչ։ Տայ
նա պատասխանի թէ զբաղեալ զոլով յոյժ զգործովք կա-

բնաւորութ, չկարէ գալ. իսկ վասն խոստման վաղուի իսկ գալըստեանն չյիշէ բնաւ։

Իմանայ Հ. Սարգիս զի փոխեալ էր նա ի մտաց իւրոց, բայց կամի հաստատել զայն՝ ճնալով նմա ի վաղիւ անդր մինչեւ ցժամ տասն։ Ապա ի մեռսանն ժամուն առաքէ նա ասել ցՀ. Սարգիս թէ վաղ քաջ ընդ առաւօտն ընկալեալ է զիր ի վարչէ գաւառին իւրոյ, որ կոչէ զնա առ ինքն խորհել վասն իրաց կարեւորաց. վասն որոյ չկարաց գալ. և եթէ ցանկայ Հ. Սարգիս տեսանել զնա, գնայցէ ի գործատունն Կռամֆիէի դաղղիացւոյ։

Յայնժամ իմանայ յայտնապէս Հ. Սարգիս զանոտի կտակած մտաց Յովհաննու Մուրատայ. որ քանզի խելամուտ լեալ էր յառաջնում աւուր՝ թէ անհնարին է հաւանեցուցանել զՀ. Սարգիս յընդհատել զվիճն որ յԱտենի, և թէ յետ այնորիկ ի պահանջել նորա ի նոցանէ զվաշխն՝ առաջարկութիւն իւր իրաւախոհ լինելոյ ընդ նմա վասն այնր՝ եղծումն բերէր հակառակութեան իւրում ի Մատրաս, և բողբմանն ի Լոնտոն, վասն այսորիկ հրաժարի գնալ առ Հ. Սարգիս և խօսել ինչ առաջի այլոց, զի մի՛ յետոյ վկայ խօսակցութեան իւրոյ լիցին։

Այլ Հ. Սարգիս առ ի կարճել ի կողմանէ իւրմէ զամենայն պատճառս և զկարծեցեալ իրաւունս Յովհաննու Մուրատայ՝ կամի վերատին գնալ անդր ի տեսանել զնա և փարատել զկտակած մտաց նորա։ Գնայ դարձեալ ի գործատունն Կռամֆիէի հանդիպել նմա։ Հարցանէ Կռամֆիէ զՀ. Սարգիս իբր յանդէտս՝ թէ «Ո՞վքն Յովհաննէս Մուրատ առ քեզ ի տուն Ազատ «նուրեանց։» Ասէ Հ. Սարգիս թէ ոչ։ Յուցանէ նա զարմանս ընդ այն խորամանդութեամբ, և հարցանէ դարձեալ՝ թէ «Զինչ էր քո որոշեալ զընդհատելոյ զվիճոյն յԱտենի անդ «աւուրս ինչ։»

Ասէ Հ. Սարգիս; «Ես ոչ ունիմ ինչ որոշելոյ, զի ոչ է «այն ի ձեռին և յիշխանութեան իմում։»

Ապա հարցանէ Կռամֆիէ; «Ունիցի՞ս, ասէ, խօսել ինչ

«ընդ Յովհաննու Մուրատայ. կոչեցից զնա այսր ի գործա-
«տուն իմ։»

Ասէ ցնա Հ. Սարգիս; «Զունիմ ես ինչ ի ժամուս. այլ թէ
«հաճիցի նա գալ, թող եկեսցէ։»

Գրէ Կռամիէ վաղվաղակի և ծանուցանէ Յովհաննու Մու-
րատայ, թէ անդ առ իւր է Հ. Սարգիս, և թէ զայս և զայս
ասացեալ է նմա զիրացն։

Առնէ պատասխանի Յովհաննէս Մուրատ թէ զրաղեալ գո-
լով իւր զկարեւոր գործովք՝ չկարէ գնալ անդր։

Խմանայ անդէն Հ. Սարգիս թէ խօսս եղեալ էին նոքա
ընդ միմեանս՝ խմանալ զվիտս իւր. զի եթէ հաւանեալ էր
ինքն ընդ ցանկութիւն նորա՝ ընդհատելոյ զվէճն յԱտենին,
գնայր նա անդր խօսել ընդ նմա. ապա թէ ոչ անօգուտ
էր խօսակցութիւն նոցա. այլ պարտ էր զհակառակու-
թիւն իւր պինդ ունել, և յայն լինել ապատան, թերեւս
յաջողէր նմա ինչ ըստ բաղձին իւրում։ Քանզի նպատակ
կամաց Յովհաննու Մուրատայ էր խափանել նախ զորոշումն
և զվերջին վճիռ Ատենին որ վասն խնդրոյ հրիտակին ողոր-
մութեան, ապա ըստ քմաց իւրոց իրաւախոհ լինել ընդ
Հայր Սարգսի. թէպէտ և այն՝ որպէս ասացաւ՝ չէր յիշ-
խանութեան նորա. քանզի զոր ինչ միանգամ յանձին կա-
լեալ և սկսեալ էր Ատեանն՝ պարտ էր կատարումն տալ
այնմ։

Այլ եթէ գիցուք եւս թէ յիշխանութեան Հ. Սարգսի էր
ընդհատումն վիճոյն, անհնարին էր նմա զայն առնել. քանզի
բովանդակ աշխատութիւնք իւր և յաղթութիւն ի դերեւ ելա-
նէին. նոյնպէս և կամք Միաբանութեանն իւրոյ անկատար
մնային, որ կամի իրաւամբք զի հաստատութեամբ Ատենին
իրն վճարեսցի, այսինքն զաշն իրաւախոհութեան և պայմանք
նորին. վասն այսորիկ հաստատութեամբ գնէ ի մտի չզիջանել
բնաւ ի անօրինել այլազգ զիրն։

Զայն իմացեալ Յովհաննու Մուրատայ, յուսահատի հա-
տանել նպատակի իւրում. և ըստ օրինակի զօրավարի բազում
անգամ յաղթելոյ ի մարտի՝ սկսանի վերստին կազմել պատ-

բաստել զոկար և զխորտակեալ անօթս պատերազմի իւրոյ, այսինքն զհակառակութիւն իւր. զոր և զրով ասայ ի ձեռս փաստաբանին իւրոյ՝ մատաւել ընդդէմ Հ. Սարգսի։ Իսկ փաստաբանն նորա Պէթի թէպէտ և բազում անգամ ասացեալ էր նմա՝ թէ ի զուր է հակառակութիւն նորա ի խնդիրն յայն հրիտակին, բայց յուսով վարձու իւրոյ յանձն առնու վերատին խօսել յԱտենի անդ։

Հ. Սարգիս ի հրաժարել իւրում ի Կամիէ, ասէ ցնա զայս ինչ; «Պ. Յովհաննէս Մուրատ յուսայ նախ շահել ինչ հա-
«կառակութեամբն իւրով, ապա իրաւախոհ լինել ընդ իս։
«Այլ ի կողմանէ իմմէ առաջիր ցնա; Եթէ յաղթեցայց, և
«եթէ յաղթող գտայց, ոչ փոխիմ ես բնաւ. բարեկամ էի
«տանն նորա, եմ և եղէց միշտ յամենայն կեանս իմ, թէ-
«պէտ և զժբաղդութեամբ ոչ ծանեաւ նա զայն և ոչ ճանա-
«չէ տակաւին։»

Ասէ ցնա Կամիէ; «Ուզիզ են գնացք քո, և փառն այս-
«բիկ յաջողեսցի քեզ ամենայն։»

Ելեալ անտի Հ. Սարգսի գնայ առ վարիչ դատին իւրոյ առ Կօրսոն, և զասմէ նմա զամենայն անցսն որ անցին ընդ նա և ընդ Յովհաննէս Մուրատ. քանզի կարեւոր համարի նախադատութիւն առնել զնա այնմ, կասկածեալ՝ մի արդեօք խորամանգութեամբ այլ ընդ այլոյ ինչ մեկնեալ փաստաբան հակառակորդին իւրոյ զտեսաւորութիւն իւր ընդ Յովհաննու Մուրատայ՝ յիշատակեցէ յԱտենի անդ, և այնու տեղի ինչ գտանիցէ ընդհանրական փաստաբանն Նորթքն ճառասելոյ ընդդէմ իւր։

Ասէ ցնա Կօրսոն; «Բարւոք է գիտել ինձ զայդ. և եթէ
«կամիս՝ ես ինքն ծանուցից զանցսն յԱտենին։»

Ասէ ցնա Հ. Սարգիս; «Ոչ, այլ եթէ նոքա խորամանգու-
«թեամբ վարեցին, յայնժամ կարկեցցես դու զլեզուս նո-
«ցա՝ պատմելով զճշմարտութիւնն։»

Ասէ ցնա Կօրսոն; «Տաց և ես քեզ լուր ինչ նոր. զի հան-
«դիպեալ ինձ Նորթքնի՝ եհարց ցիս թէ կամիցի Հ. Սարգիս
«պահանջել ի Մուրատեանց զվաշխն դրամագլխոյ հրիտա-

“ կին ողորմութեան. քանզի պատրաստեալ եմ ես առաջար-
“ կել զայն գառաւորաց յԱտենի՝ յորժամ խնդիրն յառաջ
“ եկեցէ։ Եւ, ասէ, որոշ ինչ ոչ եառ նմա պատասխանի,
“ չզխոսելով յայտնապէս ինչ ի քէն. բայց յորժամ առա-
“ ջարկեցէ նա զայն յԱտենի, պարտ է ինձ գիտել զկամս
“ քո, զի ըստ այնմ տաց պատասխանի յԱտենի անդ։ ”

Ասէ ցնա Հ. Սարգիս՝ թէ “ Իմ արդէն խօսեցեալ էր զայս-
“ մանէ ընդ քեզ, և քո իրաւունս տուեալ էր՝ չլինել յայն
“ ձեռնամուխ յառաջ քան զորոշումն և զվերջին վճիռ. իբրեզ-
“ բայն յԱտենէն. ապա պարտ է մնալ այնմ։ ”

Ասէ ցնա Կօրսոն; Ուղիղ են բանքդ. և ես ի նոյն միտս էի
“ յառաջ, բայց այժմ, ասէ, խնդիրն գրեթէ աւարտեալ է.
“ և զի յառաջ չունէաք մեք փաստարան զոք բաւական
“ ի գործն, այժմ ունիմք զՆորթքն, որ ինքնակամ մատու-
“ ցանէ մեզ զօգնութիւն իւր։ ”

Ասէ ցնա Հ. Սարգիս; “ Ի բանս Նորթքնի չեմ ես վստահ,
“ և օգնականութեան նորին ոչ եմ կարօտ. գիտեմ ես թէ
“ ե՛րբ և զիա՛րդ պարտ է ինձ յայն ձեռնամուխ լինել։ Ապա-
“ ւել քան զնա ունիմ ես փոյթ զիրաւանց որբոց և աղքատ
“ մանկանց ազգիս։ ”

Ասէ ցնա Կօրսոն; “ Նորթքն իրրեւ ընդհանրական փաս-
“ տարան իրաւունս ունի պահանջել ի Մուրատեանց զվաշխ
“ հրիտակին. եթէ չկամիս դու միաբանել ընդ նմա, կուսա-
“ կից երեւեցուցանէ նա զքեզ նոցա ի դանդատարդի իւրում,
“ և յայնժամ ծանր լիցի քեզ առնել պատասխանի անհա-
“ ճոյ բանից հարցուածոց նորա. և զի կարող է նա չթողուլ
“ զառաւորաց զարձուցանել քեզ զաւանդեալ արծաթն հրի-
“ տակին ողորմութեան, վասն որոյ խրատ տամ քեզ. յոր-
“ ժամ առաջարկիցէ նա զայն յԱտենի, և հարցանիցէ զկամս
“ քո ի փաստարանէն քումմէ, տուր հաւանութիւն միաբա-
“ նութեան ընդ նմա. քանզի այն է օգուտ աղքատաց ազգիդ
“ և պատիւ քեզ և Մխիթարութեանդ։ ”

Հ. Սարգիս ասէ; Եթէ ունի ընդհանրական փաստարանն
“ Նորթքն իրաւունս, և կարող է ինքնին պահանջել ի Մու-

“ բաւականց զվաշխ հրիտակին, զի՞նչ կարօտ իցէ իմում
“ հաւանութեան. թող ասացէ զոր ինչ կարող է և զոր
“ կամի։ ”

“ Այո, ասէ Կօրտոն, կարող է նա ինքնին պահանջել զայն
“ ի նոցանէ, բայց կամի իմանալ զմիտս քո ընդ այն իրա-
“ ւունս։ ”

Ասէ ցնա Հ. Սարգիս; “ Զէ տուեալ նմա իմանալ զմիտս
“ իմ։ ”

Կօրտոն ասէ; “ Բռնադատեացէ զքեզ հրամանաւ Ատենին
“ ասել զայն։ ”

Ասէ Հ. Սարգիս; “ Ես ոչ կարծեմ թէ բանն յայն վայր
“ հասանիցէ. իսկ եթէ հասցէ, ասացից թէ դեռ չեմ որո-
“ շեալ զայն։ ”

Ասէ Կօրտոն; “ Հաւատի եմ ես զի լիցի հարցումն զայն-
“ մանէ ի վաղիւ. և ես չկարեմ այլազգ առնել անդ պատաս-
“ խանի, բայց եթէ ասել այո կամ ոչ. վասն որոյ պարտ
“ էր քեզ որոշել ինչ զայնմանէ։ ”

Ասէ ցնա Հայր Սարգիս; “ Անհնարին է ինձ այդ ի ժա-
“ մուս։ ”

Կօրտոն ասէ; “ Ուրեմն ասացից յԱտենին զի հարցցեն
“ զայն ի քէն։ ”

Ասէ ցնա Հ. Սարգիս; “ Բարի է, ես ինքն արարից պա-
“ տասխանի բանից Նորթընի։ ”

Եւ զի՞ յերկարեցից զբանս. իրրեւ ժամն երիս աշխատ եղեալ Ջանայ Կօրտոն ամենայն հնարիւք հաւանեցուցանել զՀ. Սարգիս միաբանել ընդ Նորթընի ի խնդիր պահանջման վաշխի հրիտակին ողորմութեան. մերթ զօգուտս որբոց և աղքատաց ազգին ցուցանէ, զորմէ անփոյթ լինել խիղճ մեծ համարի, և մերթ զպատիւն Հ. Սարգսի յիշեցուցանէ նմա, զոր ստացեալ էր ի պաշտպանել զիրաւունս աղքատաց ազգին, և զոր կորուսանէր արդեաք՝ հրաժարելումն ի պահանջանաց անտի վաշխի հրիտակին։ Իսկ ինքն Հ. Սարգիս հաւատի էր՝ զի ոչ փոյթ ինչ էր Կօրտոնի զօգտից աղքատաց, և ոչ զպատուոյ իւրմէ, այլ վասն շարաշահութեան իւրոյ,

և ի գրդելոյ Նորթքնի՝ որ անհնարին ոխութեամբ էր ընդ Մուրատեանս, Ջանայ խնդիր և վէճ յարուցանել ընդդէմ նոցա անդադար։

Եւ իբրեւ տեսանէ Հ. Սարգիս զի յամառեալ կայ յոյժ Կորոսն ի կամս չարութեան իւրոյ, և դժկամակի ընդ իրաւունս բանից իւրոց, կասկածեալ՝ թէ մի՛ արդեօք դաւաճանութիւն ինչ մտարերիցէ ի գործն, որ ի վաղիւ անդր յառաջ գալոց էր դատաւորաց յԱռենի անդ, ասէ ցնա; «Խորհեցայց «ես տակաւին ընդ այն, և ասացից զմիտս իմ վաղիւ։» Եւ այնու յուսով դադարեցուցեալ զնա ի ժամուն՝ դառնայ ի բնակութիւն իւր, վաստակեալ յոյժ և վրդովեալ ի շարժելոյ մաղձին. և զայն գիշերն ողջոյն անհանգիստ անցուցանէ։

ԳԼՈՒԽ Լ.

Գատաստան 10 աշուր փետրուարի 1832. — Սալիճ փաստաբան Հայր Սարգսի իսկի յՍմիւռնի, և ապա փաստաբանին Մուրատեանց Պէրի. — Բանք շնորհաւորական փաստաբանին Ներքինի. — Բանք և կարծիք և վճիռ դատաւորացն. — Ազդեցութիւն վճռոյն ի Հայր Սարգիս և ի Պ. Յովհաննէս Մուրատ. — Այց և շնորհակալութիւնք Հ. Սարգսի առ Կօրոսոն, առ Սալիճ և առ Գրիգոր. — Հրատարակուելն դատին ի լրագիրս Մատուռաց.

Ի վաղիւ անդր որ օր ասեն էր փետրուարի 1832 ամին, — օր ընդունելոյ Հ. Սարգսի զվճիռ խնդրոյ հրամայեն ողորմութեան ի բարձրագոյն Ատենէն Անգլիացւոց, և օր ծննդոց Պ. Յովհաննու Մուրատայ, — յինն ժամու առաւօտուն գնայ Հ. Սարգիս առ վարիչ դատին իւրոյ առ Կօրսոն, և ասէ նմա զորոշումն մտաց իւրոց, այսինքն զչմիտանել իւր ընդ Ներքինի ի պահանջանս վաշխի հրամայեն ողորմութեան, Ընդ որ տհաճեալ Կօրսոնի յոյժ՝ ասէ ցնա թէ ոչ բարւոք առնէ զայն։ Ապա գնայ ընդ նմա ի միասին առ փաստաբանն իւր Սալիճ. քանզի սովորութիւն է զի յաւուր յորում պարտ է գալ խնդրոյ յանդիման Ատենի՝ գնայ պաշտպանեալն առ պաշտպանն՝ խորհրդակցել կամ ասել ինչ նմա, եթէ ունիցի նոր ինչ ասելոյ՝ յառաւել ինն հաստատութիւն խընդրոյն։

Թէպէտ և Հ. Սարգիս չունէր նոր ինչ ասել նմա, բայց առ ի քաջալերել զնա՝ գնայ առ նա. մանաւանդ զի այսպիսի այցելութիւն շահեցուցանէր փաստաբանին հարիւր ռուբի. վասն որոյ ուրախութեամբ ընկալեալ զՀ. Սարգիս՝ հարցանէ թէ ունիցի նոր ինչ յիշեցուցանել նմա։

Ասէ Հ. Սարգիս ; « Ոչ ունիմ ինչ նոր ասել քեզ , այլ « միայն առ ի յարդել զքեզ եկեալ կամ ։ »

Ասէ ցնա Սամէտ ; Ոչինչ յերկուանամ զի հատուցէ քեզ « Աստուծն յայսմ աւուր զաւանդեալ մասն արծաթոյ հրի- « տակին ողորմութեան ։ »

Ասէ Հ. Սարգիս ; « Ցուսացեալ եմ ես ի Տէր ի պաշտպանն « աղքատաց և յարդարութիւն Անգղիացւոց օրինաց ։ »

Ասէ ցնա Սամէտ ; « Վատահ լեր յամենայնի , և մի երկմի- « տեսցիս բնաւ ։ Բայց Միաբանութիւն քո շատ պարտական « է քեզ ընդ այս վաստակդ ։ »

Ասէ ցնա Հ. Սարգիս ; « Մանաւանդ թէ ես եմ յամենայնի « և միշտ պարտական Միաբանութեան իմում . զի պարտ « անձին համարիմ զամենայն ծառայութիւն իմ ։ »

« Այս , ասէ Սամէտ , քեզ այդպէս անկանի ասել , բայց « պարտ է և մեզ զճշմարիտն ասել . զի երկայնմտութիւն քո և « ջանք հանին ի ձեռաց Մուրատեանց զայդ մեծ գումար « արծաթոյ , զոր անհնարին էր աղքատաց ազգիդ այլ եղա- « նակաւ ի նոցանէ հանել . »

Զկնի այսր խօսակցութեան ասէ Կօրոսն՝ թէ ընդհանրա- կան փաստաբանն Ներթլն պատրաստեալ է յայսմ աւուր առաջարկել դատաւորաց յԱտենի փան պահանջանաց վաշ- խի հրիտակին ողորմութեան ։

Ասէ անդէն Սամէտ ; « Զկարէ Ներթլն առնել ինչ առանց « հաւանութեան Սարգսի վարդապետի թէոդորեան . քան- « զի գործադրութիւն ողորմութեանն , ասէ , արտաքոյ սահ- « մանի իւրոյ տէրութեան է . և զի Մխիթարեան միաբանու- « թիւնն ծանուցեալ և հաստատեալ է յԱտենէն իրրեւ միայ- « նակ տէր իրաւանց աղքատաց ազգին Հայոց , եթէ կամիցի « Միաբանութիւնն պահանջել զայն ի Մուրատեանց՝ օրինա- « ւոր գործակալի Ներին անկանի պահանջել զայն ի նոցա- « նէ , և ոչ ընդհանրական փաստաբանին Ներթլնի ։ »

Ընդ այս բան Սամէտի իրրեւ վարժապետի օրինաց՝ պա- պանձեալ Կօրոսնի ամաչէ յոյժ ի Հ. Սարգսէ ընդ յամառու- թիւն իւր . և Հ. Սարգիս առ ի չամաչեցուցանելոյ զնա ա-

աւել ասէ զՍամէՏ թէ և Պ. Կօրոն ի նոյն կարծիս էր երբեմն։ Եւ նա ասէ ; Այո։ . . .

Ելեալ անտի Հ. Սարգիս և Կօրոն գնան ի գաւառսն բան, ուր այն ինչ հասեալ էին գաւառաւորքն, և առնեալքանքն ժողովեալ տակաւ։ Սկսանի Ատեանն ի մեռասան ժամու աւուրն։ Նախ լինին անդ քանի մի համառօտ առաջարկութիւնք վասն զանազան խնդրոց, ապա յերկուասան ժամու յառաջ գայ խնդիրն Մուրատեանց և Հ. Սարգսի վասն հրիտակին ողորմութեան։

Խօսի նախ փաստաբանն Հ. Սարգսի Մրատր ՍամէՏ ժամ մի և կէս անընդհատ, և յոյժ համարձակ և հզօր փաստիւք։ Յուցանէ զամենայն իրաւունս Մխիթարեան Մխիթարեանն ի հրիտակին ողորմութեան, և զուղիղ գնացս Հայր Սարգսի Թէոդորեան ի խնդիրն յայն ի սկզբանէ անտի մինչև ցայնժամ։ Խոստութեամբ յոյժ խօսի ընդդէմ Մուրատեանց, վասն պիտակաբար վարելոյ նոցա ի սրբազան պաշտամանն կուսակատարութեան իւրեանց, և վասն անպատեհ գնացից նոցա ընդ Հ. Սարգսի. և թէ վասն այնորիկ չունին նոքա այնուհետեւ իրաւունս խառնելոյ երբէք ի գործ հրիտակին ողորմութեան։

Ընդ այն ամենայն բանս ՍամէՏի հաւանեալ գաւառաց՝ հաստատեն զայն նշանացի՝ շարժմամբ գլխոյ, ձեռաց և ոտից։

Կամեցեալ ՍամէՏի կարկել միանգամայն և զրերան Նորթքնի՝ ասէ ցնախագահ գաւառն ; « Զգիտեմ, ոչ՛ր, թէ « զինչ ունի ընդհանրական փաստաբանն յայս խնդիր, զի « պնդէ խառնիլ ի սոյն։ »

Ասէ գաւառն ժպտելով ; « Գուցէ ունի ինչ կամի շա- « հեցուցանել ազգաց յիրաւունս իւրեանց։ »

Ապա խօսի փաստաբանն Մուրատեանց Մրատր Պէթի իրրև գաւառդ մի ժամու միայն, և այն լքեալ սրտիւ և նուազ ձայնիւ. քանզի գիտէր նա զրանն վճարեալ, բայց ի սոխակոյ Յովհաննու Մուրատոյ և ըստ թելադրութեան Նորա հարկաւորի խօսել։

Երկու ինչ իրք էին նպատակք բանից նորա. առաջին՝ ուսնայնացուցանել զդիր գործակալութեան Հ. Սարգսի վասն Անասնական Իշխանութիւն բառին որ ի նմա, որպէս թէ բոլորովին ընդդէմ եղանէր այն բանից պատասխանւոյ նորա առ հարցուածս բանից վարժապետին օրինաց. իբր զի ասացեալ էր Հ. Սարգսի անդ՝ թէ ամենայն կարեւոր գործառնութիւնք Միաբանութեան իւրոյ լինին հաստատութեամբ և քուէարկութեամբ հասարակաց. ապա ուրեմն սուտ էին ասացեալքն նորա անդ, և նա իրրեւ ստերգումն պարտ էր դատապարտիլ յԱռենէն։

Կարկէ վաղվաղակի զլեզու փաստաբանի նոցա երկրորդ դատաւորն, ասելով; «Յառաջ եւս մատոյ զկարգացումն «զրոյ գործակալութեան նորա, և տեսանես անդ զի տր«սեալ է այն Անասնական Իշխանութիւն Աբրային ի նոյն իսկ «Միաբանութենէն. ապա ի զուր է ընդ այն հակառակու«թիւնդ այդ։»

Երկրորդ նպատակն էր խառնիլ կոտակատարաց ի գործ հրիտակին, զոնէ յանցուցանել ի Վենետիկ զարծաթն. վասն որոյ մերթ աղաչէ զդատաւորն այնպէս որոշել զայն ի վճիռն իւրեանց, և մերթ ստատնայ նոցա բաղդել ի Լոնտան՝ եթէ զլանայցեն նոքա կոտակատարաց զիրաւունս նոցա կամ զչնարհն։

Թէպէտ և փաստաբանն Հ. Սարգսի Սամէճ զիտէր թէ անհնարին էր դատաւորացն զիջանել այնմ, բայց առ ի ցուցանել զխաւութիւն իւր ընդդէմ Մուրատեանց՝ ընդհատեալ զիսօս փաստաբանին նոցա՝ ասէ ցդատաւորսն; «Եթէ խառ«նեսցին կոտակատարքն իւիք ի գործ հրիտակին ողբմու«թեան, կատարումն նորին անհնարին լիցի. քանզի նոքա, «ասէ, լաւ սովորութեան իւրեանց, և ոչ բարւոք գիտաւո«րութեամբ, ոչ վիրանին ընդ գործակալի Միաբանութեանն «յանցուցանել զարծաթն ի Վենետիկ, այլ ասացեն մերթ «թէ չէ յաջողակ յայսմ պատեհի առաքել զայն, և մերթ «թէ չեն մեզ կամք յայսմ նուազի, թոզցուք ապրեմ ժա«մանակի. և այսպէս մնացէ գիտաւորութիւն կոտակարին

«անկասար յաւիտեան։ Վասն որոյ խնդրեմ ես յԱստե-
«նէն, զի զթացեալ յորբ և աղքատ մանկունս՝ մի՛ խառնեսցէ
«ցէ բնաւ զՄուրատեանս ի գործ հրիտակին ողորմութեան։
«Եւ չկարծեմ ես, ասէ, զի կարիցին նոքա ի Լոնտոն բողո-
«քել, անցեալ գոլով ժամանակին։»

Ասէ նախագահ դատաւորն; «Կարող են բողոքել անդր.
«բայց զիտացեն՝ զի Աստեանս զգուշացի առ յառաջա-
«գոյն վասն ծախուց օրինաց։»

Տեսեալ փաստաբանին Մուրատեանց, թէ չկարաց գտանել
նոցա ինչ միխիթարութիւն՝ ասէ ցդատաւորսն; «Խիստ է յոյժ
«ամենայն ինչ ընդդէմ կոտկոտարաց. վասն որոյ պարտ-
«տաւորին նոքա խնդրել զիրաւունս իւրեանց յայլուստ։»
Ա՛ռ այս ոչ ինչ տան պատասխանի դատաւորքն և ոչ բան
մի։

Ապա խօսի անդ ապարան փարձկանն, փաստաբանն Հայր
Սարգսի Տէր. որոյ բանք ոչ այլ ինչ եղեն՝ բայց եթէ կըրկ-
նութիւն բանից ինչ Սամէնի։

Յետ ամենեցուն խօսի ընդհանրական փաստաբանն Նոր-
թըն. բայց յառաջագոյն հարցանէ առանձին ցվարիչ դատին
Հ. Սարգսի ցԿօրսոն, թէ յի՞նչ միտս է Հ. Սարգիս վասն
վաշխի գրամագլխոյ հրիտակին ողորմութեան. միաբանե՞ է ընդ
նմա ի պահանջել զայն՝ թէ ոչ։

Ասէ ցնա Կօրսոն «Զէ՞ նորա զայն որոշեալ, և միաբանե-
«լոյ ընդ նմա՝ չունի բնաւ կամս։»

Բարկացեալ խորամանգին ընդ այն՝ անէծս ասէ Հայր
Սարգսի, վասն չլինելոյ նորա իւր գործի շարութեան ի վրէժ-
խընդրութիւն ընդդէմ Մուրատեանց. վասն որոյ փոխէ վերբա-
տին զդրօշակ իւր, և սկսանի այլ ընդ այլոյ ճառաստել, ոչ
յօգուտ Հ. Սարգսի և ոչ ի նպաստ Մուրատեանց, այլ նոր
ինչ և անմիտ բանս, որպէս թէ պարտ էր գործոյն ողորմու-
անդ ի Մատրաս լինել, որովհետև գտանին անդ բազում որբ
և աղքատ մանկունք Հայոց։

Իբրև արհամարհեն դատաւորքն զբանս նորա՝ ոչ ինչ տա-
լով պատասխանի, առաջարկէ նա և այլ ինչ իբրև ի յապա-

հոլովթիւն ընչից աղքատաց. այս է ձեռամբ միոյ ուրուք ի պաշտօնէից Աստենին անցուցանել ի Վենետիկ զարծաթ հրիտակին ողորմութեան։

Ընդ այս առաջարկութիւն նորա ծիծաղեալ դատաւորքն՝ ասեն ցնա; «Ուրեմն ձեռամբ քո՞վ անցուցի այն։»

Ասէ անդէն Սամէճ; «Այո, պարտիմք այսուհետև տուն «փոխառակութեան կարգել վասն այսպիսի իրաց։» Եւ Նորթընի յամօթ եղեալ լռէ։

Իրրև դադարին փաստաբանքն ի խօսելոյ, խօսել սկսանի նախագահ դատաւորն, Սէր Ռոպի Փէլմիր; «Հայեցեալ ի գր- «նաց Մուրատեանց և յարգասիս նորին, ասացի ես ի ժա- «մանակի անդ յարամ տոյի զառաջին վճիռն, զի եթէ «կայր յանդիման Աստենին գործակալ ոք այնր Մխիթարե- «թեան, հրամայէի տալ ի ձեռս նորա զգումար ասանդեալ «արծաթոյն, այսինքն հրիտակին ողորմութեան։ Այդ մա- «տանք խնդրոյն զոր կրեն տակաւին հակառակութիւն ինչ՝ «այսոքիկ են միայն։

«Ա. Թէ արդեօք զիրն գործակցութեան յառաջ բերեալ «այսօր, և որոյ բանք ըստ բաւականին ընդարձակք են, «իցէ՞ ըստ պատշաճի յօրինեալ և ըստ օրինի վաւերացեալ «առաջի Աստենին։

«Բ. Թէ արդեօք աղերսարկուն Սարգիս վարդապետ Թէո- «դորեան կարող իցէ տալ օրինաւոր մուրհակ ընդունելու- «թեան վասն արծաթոյն։

«Ես յայն կարծիս եմ՝ թէ զիրն գործակցութեան ըստ «բաւականին հաւատացաւ, և թէ Սարգիս վարդապետ «Թէոդորեան պարտի ընդունել զգումարն։ Եթէ Մուրա- «տեան Պարոնայք ցանկանային գործակից լինել վասն «վախճանի գործոյն, որ է ի գործ դնել զհրիտակն ողոր- «մութեան, պարտին ի Վենետիկ դնալ. որովհետև առ- «ատոր չկարեմք տալ զայնմանէ բնաւ ինչ տեղեկութիւն։

«Թուի ինձ դարձեալ՝ թէ Մուրատեանք չպարտին խառնիլ «ի գործ հատուցման արծաթոյն։»

Ապա խօսի երկրորդ դատաւորն Սէր Ռոպերթ այսպէս;

«Երկու կողմանք են կարգեալք ի կատարողէն ի գործադրել
«զհրամայէն ողորմութեան. դատախազք, և Մխիթարեան
«միաբանութիւնն։ Ինձ թուի՝ թէ Մուրատեանք ոչ ինչ
«փութաջան երեւեցան ի կատարումն բարեգործական դի-
«տաւորութեանց կատարողին իւրեանց. և վասն դնացից իւ-
«բեանց չէ պարտնոցա այժմ ի գործ դնել, կամ խառնել
«յայն։ Զի՛ք երկրայութիւն զի պարտ է հաստատանել զդու-
«մարն Սարգսի վարդապետի՝ որպէս օրինաւոր գործակալի
«Մխիթարեան միաբանութեան։ Գումարն զորմէ է խնդիրն՝
«աւանդեցի, և ծախք դատին եղեալք ի Սարգիս վարդապե-
«տէ Թէոդորեան և յընդհանրական փառատրանէն՝ հա-
«տուցին ի հրամայէն ողորմութեան. իսկ դատախազք
«հատուցին զիւրեանց ծախս։»

Ի վախճանի սէ նախագահ դատարանն; «Ահա կատարեաց
«Ատեանս զգործս իւր. չունի այսուհետեւ այլ ինչ յայս
«գործ ողորմութեան։»

Եւ ահա այսպէս ողորմութեամբն Աստուծոյ որոշեալ բարձ-
բագոյն Ատենին զինդիր հրամայէն ողորմութեան, ապայ ըղ-
վերջին վճիռ իւր ի նպաստ աղքատաց ազգին Հայոց. ընդ
որ խրախուցեալ Հ. Սարգսի Թէոդորեան՝ զոհանայ զՏեառնէ
յոյժ յոյժ։

Յատենի անդ դատանէր ընդ ոմանս ի Հայոց բնակելոց
ի Մատրաս, և Յովհաննէս Մուրատ. որ ստիպեալ սրտիւ
ճեպով եկեալ էրացն։ Եւ իրրեւ լուաւ զվճիռն ի բերանոյ դա-
տաւորաց բարձրագոյն Ատենին, ուժգունեալ դիմաք և ան-
հնարին սրտմութեամբ եկեալ դնայ անտի վարդապետի, ասե-
լով ոմանց անդ տա իւր եղելոց՝ թէ «Բանն չէ աւարտեալ.
«քանզի բողոքեցեալ ես ի Լոնտոն յԱտեան թագաւորին։»
Եւ դառնայ ի տուն իւր։

Իսկ Հ. Սարգսի եկեալ յԱտենէ անտի դնայ առ վարիչ դա-
տին իւրոյ առ Կօրտոն ի շնորհակալութիւն ընդ աշխատու-
թեան նորա լաւ տուողութեան։ Իսկ նա զկնի ուրախակից
լինելոյն Հ. Սարգսի՝ ասէ թէ հրատարակեցէ վարդապետի
ի լրաթուղթս քաղաքին զանցս խնդրոյն։

Ասէ ցնա Հ. Սարգիս ; « Շնորհ ունիմ զփութիդ քո ընդ
« այն , բայց խնդրեմ զի մի՛ լիցին ինձին խիստ բանք ընդդէմ
« Մուրատեանց . զի անհաճոյ է ինձ այն . շատ լիցին բանք
« դատաւորաց խօսեցեալք ընդդէմ նոցա յԱտենի անդ ի լուր
« հասարակաց ։ »

Ասէ ցնա Կիրոսն ; « Ի կողմանէ քումմէ չգրեմ ինչ ։ այլ
« յինէն կողմանէ , և այնչափ ինչ՝ որչափ հարկն արդարու-
« թեան պահանջէ , և ոչ առաւել ։ » Իսկ նա վերոյին աղա-
չէ զԿիրոսն չգրել ինչ խիստ ընդդէմ նոցա ։

Անսի գնայ Հայր Սարգիս առ վարժապետն օրինաց առ
Սալէհ , վիանդամոյն և մանաւոր փաստաբան իւր , նոյն-
պէս ի շնորհակալութիւն . որում յիրաւի արժան և իրգէպ
էր՝ վասն մեծի աշխատութեան նորա ։ Խօսի նա ընդ Հայր
Սարգսի յերկար , և ասէ ցնա ժպտելով ինն ; « Կարծէիր դու
« թերեւս եթէ յաղագս բարեկամութեան իմոյ ընդ Յովհան-
« նու Մուրատայ՝ աշխատանք ինն վարեցայց յԱտենի անդ
« ի խնդիրն իրաւանց ։ »

Ասէ ցնա Հ. Սարգիս ; « Ընդ արդարութիւն օրինաց ձերոց
« ոչ ինչ կատակիմ ես , և ընդ անաչառութիւն քո շնորհ
« ունիմ քեզ մեծապէս ։ »

Ապա յիշատակութիւն արարեալ Սալէհի և զառանձին
խնդրոյ Հայր Սարգսի , ասէ ցնա ; « Եթէ չէր քո գնացեալ
« ի բանս , զառանէիր անշուշտ զիրաւունս քո . և գանդի ոչ
« զատր առ ոմիկնոջն Մուրատի ի ժամանակի հիւանդու-
« թեան նորա , որդիքն իւր որք թշնամութեամբ էին ընդ
« քեզ՝ բռնադատեցին զմայր իւրեանց զրանալ զիրաւունս
« քո . բայց այժմ կարող ես զու ամենայն իրաւամբք առնուլ
« զայն ի դրամոյ հրիտակին ողորմութեան . քանզի թողեր
« զառանձին օգուտն քո վասն օգտի հասարակաց , և այն բա-
« զում իմաստութեամբ ։ Զի եթէ չէր գ՝ո պահպանեալ զիրա-
« ւունս աղքատաց աղգիդ , կորուսանէին զայն աղքատքն
« անտարակոյս . վասն որոյ պարտ է քեզ ընդունել զայն ան-
« սի ամենայն իրաւամբք և արդարութեամբ ։ »

Ասէ ցնա Հ. Սարգիս ; « Զիք ինչ դատարանութիւն , զի ա-

«մենայն ինչ իմ յօգուտ հասարակաց ազգիս է, վասն որոյ «չխորհիմ ես զուանձին ինչ օգուտ իմմէ։»

Հարցանէ Սամէտ, թէ քանիսն ելեալ վաչխ դրամագլխոյն ողորմութեան։ Ասէ ցնա Հ. Սարգիս Թէոդորեան; «Իբր վեց «հարիւր հազար (600,000) ռուբի։»

«Քանզեսցին ուրեմն, ասէ Սամէտ, Մարտաւանք, եթէ «պահանջեսցես զայն։»

Ասէ ցնա Հ. Սարգիս; «Վասն այսորիկ խոկ տարակու- «սեալ եմ ես ինքն՝ չգիտելով թէ զինչ արարից. եթէ պա- «հանջեցից զայն ի նոցանէ, գուցէ քանզեսցին նոքա. վասն «որոյ զիրՀ է մոտաց իմոց. և եթէ թողից նոցա զայն, «դարձեալ խիղճ է մոտաց իմոց վասն իրաւանց որբ և ազքատ «մանկանց ազգին, որոց խնամակալութիւնն յանձն է Միա- «բանութեան իմո�մ, և ինձ ի ժամուս արդեաք։»

Ասէ ցնա Սամէտ; «Խիղճ մոտաց քոց առաւել ուղիղ է քան «զիմս. արա՛ որպէս ճանաչես. քանզի չկարէ ոք յայս խնդիր «քեզ խրատ տալ, կամ ի քէն ընդ այս համար պահանջել. «այլ ի կամս և յիշխանութեան քո է ամենայն։»

Այսու եւայլ քաղաքավարութեան նոցա յիշատակել ի պատմութեանս՝ թերեւս աւելորդ և անզէպ ուանք թուիցի. բայց միայն վասն յիշատակութեան է ծանուցանել զկարծիս հասարակաց զարծաթոյ հրիտակին ողորմութեան. քանզի համարէին զայն ամենեքեան իբրեւ սեպհական ինչս ազքատաց ազգին, և զմիտաւորութիւնն իբրեւ միայնակ մատակարար

գործոյն ողորմութեան ի կտակագրէն կարգեալ և ի կտակակատարաց նորա հաստատեալ. զի այսպէս իսկ համարեցաւ բարձրագոյն Աստուծն ի վճիռս իւր՝ յանձնելով զարծաթն Գործակալի միաբանութեանն. այսպէս համարեցաւ և Յովհաննէս Մուրատ. վասն որոյ կամէր բողոքել ի Լոնդոն՝ եթէ չէր սանձ նորա ի ձեռին Հ. Սարգսի։ Հանդերձ այսու ամենայնիւ քաւ լիցի ինձ համարել թէ կարող է Միաբանութիւնն պիտակարար վարել ի պաշտամանն մատակարարութեան իւրոյ. այլ զիրաւունս և զիշխանութիւն նորա ի գործն կամիմ ցուցանել՝ որ առաւն նմա ի վերին տնօրէնութենէն յօգուտ և ի միխիթարութիւն ալքատաց ազգիս։

Յետ երից աւուրց երեւի ի լրագրի քաղաքին պատմութիւն անցիցն հանդերձ բորոյական խորհրդածութեամբ Կօրտոնի, առանց յիշատակելոյ անդ զանուն իւր, օրինակ զայս։

„Սուրհանդակ Մատրասու. 14 փետր. 1831.

„Վէճն մեծ ուր ուրեմն որոշեցաւ այսօր, զենդրոյն ամ-
„բաստանելոյն Հ. Սարգսի վարդապետի Թէոդորեան, և է՝
„զի հրատակին ողորմութեան աւանդեալ ի ձեռս ընդհանուր
„Հանրակալին, որ հասանէ ի դումար 365,938 ռուփոյ,
„5 ֆանամի և մի կաշեոյ, դարձուցի ի ձեռս նորա իբրեւ
„գործակալի օրինաւորապէս կարգելոյ ի Միխիթարեան վիա-
„բանութենէն, կամ յընկերութենէ վիանձանց Հայոց ի Վե-
„նետիկ, զօրութեամբ օրինաւոր գրոյ գործակալութեան
„առելոյ յԱրքեպիսկոպոսէ նորին, և առուգելոյ և վաստ-
„բացելոյ յանդիման Աստենին։

„Պատմութիւն յայսմ դատի եղաւ ի Սուրհանդակ Մատրա-
„սու յ30, մարտի, ի լրագրի պետութեան յ2 ապրիլի 1829.
„և դատին անդ վճիռքն դատաւորականք, որք զնաւնս
„ինչ ենդրոյն արկանելով ընդ քննութեամբ վարժապետին
„օրինաց, պատճառք եղեն առնելոյն դատակնքոյն։ Իբրեւ
„ետ վարժապետն օրինաց զկարծիս իւր, որ յետ երից ընդ-

“ դիմադրութեանց իկողմանէ Յովհաննու Մուրատոյ դա-
“ տախազին հաստատեցաւ յԱտենէն, վէճն այն զօրու-
“ թեամբ նորանոր տեղեկութեանց և ծախուց աւարտեցաւ
“ ինչպէս որ յետ վերջին ատեանի, ի 16 դեկտեմբեր ան-
“ ցեալոյ. և հրամայեաց Ատեանն զի ծախք ամբաստանե-
“ լոցն, այսինքն Սարգսի վարդապետի Թէոդորեան, և ընդ-
“ հանրական փաստաբանին Նորթընի, հատուցին ի հրամա-
“ կէն ողորմութեան, իսկ Պարոնայք Մուրատեանք հատուա-
“ ցին զծախսն ի քսակէ իւրեանց։

“ Վերոյիշեալ խնդիրն Սարգսի վարդապետի Թէոդորեան,
“ ամբաստանելոյ, և վկայութիւն ինչ երդմամբ հաստատեալ
“ ի հաւատոյ խնդրոյն, բացան և վերծանեցան։ Փաստա-
“ բանք ամբաստանելոյն մեծաւ հմտութեամբ և հարտարու-
“ թեամբ առենտրանեցին ի նպաստ նորա, յուշ առնելով
“ Ատենին զկարեւորութիւն խնդրոյն և զհամեստութիւն և
“ զուղիղ գնացս պաշտպանելոյն իւրեանց, որպէս յայտ եղեւ
“ ի բովանդակութենէ դատին առ ի կատարել զխնդիրն նորա։
“ Յետ տկար զիմակայութեան ի կողմանէ փաստաբանի ամ-
“ բաստանողին, Յովհաննու Մուրատոյ, Ատեանն ետ զհե-
“ տագայ վճիռն։ (Տե՛ս յերես 487.)

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ ԿՕՐՏՕՆԻ

“ Այսպէս եղեւ կատարած դատին, որ անմոռաց լիցի
“ ի տարեգիրս Բրիտանական իրաւապետութեան յաշխարհս
“ Հնդկաց, և որ պանծալի օրինակ ընծայէ վաղնջուց և հա-
“ յակապ ազգիս Հայոց և ամենայն աշխարհի զյատակու-
“ թեան Բրիտանական արդարութեան, և զանաչառութեան
“ և զուղղութեան դատաւորացն Բրիտանացւոց։ Հմտաւոր
“ ինչ տեսութիւն ընթացից այսր դատի ոչ անօգուտ եղիցի
“ նոցա որք ընթեռնուցուն զպատմութիւնս զայս։

“ Գանգատողին, բան առաջնոյ յօրինուածոյն՝ լի՛ էր
“ ծանր ծանր զրպարտութեամբք ընդդէմ դժբաղդ պարոնին՝

«որ տարաւ արդ այսպիսի զանձալի յաղթութիւն, և որ
«զիտակ գոլով իւրումն անմեղութեան հանդուրժեաց ամե-
«նայնի արիական քաջութեամբ, երկայնամիտ համբերու-
«թեամբ, ընծայեալ չքնաղ օրինակ անձնական առաքինու-
«թեան և քրիստոնէական վեհանձնութեան, նախատեալ՝ և
«ոչ փոխարէն նախատեաց։ Պատասխանին նորա ստիպեաց
«զդատախազն ապացուցանել զամբաստանութիւնս իւ-
«րեանց. և զի՞նչ արարին նոքա։ Խնդրեալ ընկալան հրաման
«մեղմելոյ զամբաստանական գրուածն իւրեանց, և այնու
«հրամանաւ ի բաց հանին զրոմանդակ թոյնն, (զի այսպէս
«ասացից ըստ պերճախօս բանի քաջահմուտ դատաւորի մոյ
«յայնմ ժամանակի) զոր թափեալ էին կանխաւ ի վերայ
«ամբաստանելոյն։

«Մի միայն նպատակ գործոյն էր, ընդ որ չիք երկբայու-
«թիւն, հնարել՝ զի Բրիտանականն օրէնք և Ատեան օժան-
«դակեացեն ժլատութեան և անիրաւութեան։ Այսպիսի
«խորհուրդ ի գերեւ ել. և ո՞ կարծիցէ երբէք՝ թէ անպղտոր
«հոսանք Բրիտանական արդարութեան մարթացին պղտորել
«անդէն իսկ ի բուն աղբերակն իւրեանց։ Ամենայն նպատակք
«որոց վասն սկսաւ վէճս այս՝ ծանրացան բոլորովին, և
«վէճն աւարտեցաւ ամօթով, անարդանօք և պարտութեամբ։
«Մախքն ծանուցք ի պատիժ պատուհասի՝ որ ընդ պաշտ-
«պանն և ընդ պաշտպանեալն, հասուցան ի գլուխս դա-
«տին, որոյ ելքն թողին զամբաստանեալ Սարգիս վարդա-
«պետն Թէոդորեան ինքին իսկ վիճակի յորում կայր մնայր
«նա նկատմամբ հրիտակին ողորմութեան, որպէս եթէ բնաւ
«չէր իսկ երբէք լեալ գատն այն։»

ԳԼՈՒԽ ԼԱ.

Զանք և հնարք Պ. Յովհաննու Մուրատայ ի հիւսուածգանել զվաշխ հրիտակին ողորմութեան. — Պատասխանի Հայր Սարգսի առ աղաչանս նորա, և այլ եւս զրոյցք զխնդրոյն. — Առաքարկութիւն Պ. Յովհաննու Մուրատայ՝ հիւսուածգանելոյ առուին 100,000 իրրեւ վաշխ դրամագլխոյն. — Խորհուրդ դաշնագրին իրաւախոհութեան. — Բանարարութիւն Յովհաննու Մուրատայ և Կօրոսնի ի լրագիրս. — Թուղթ Պ. Աբրահամու Աղանուրի առ առաջնորդն Մխիթարեանց.

Ընթերցեալ Պ. Յովհաննու Մուրատայ ի լրագրին Մատրատայ զխորհրդածութիւնսն, զայրանայ ոչ միայն ընդդէմ Կորոսնի՝ զոր հաւատաւոր կարծէր յօրինող նորին, այլ և ընդդէմ Հ. Սարգսի՝ իրրեւ թելադրողի բանիցն. վասն որոյ դառնացեալ ոգւով աղաղակէ առաջի բազմաց ի գործատան անդ իւրում ի Մատրաս; « Անուն Մուրատեանց խայտա-« ռակեցաւ, և տուն նոցա քանդեալ՝ հողոյ հաւասարեցաւ. « ապա չմնայ, ասէ, այսուհետեւ բայց եթէ ձգել նոցա զձեռս « իւրեանց առ Հ. Սարգիս Թէոդորեան և խնդրել ի նմանէ « ողորմութիւն։ »

Թէպէտ և այս զայրացումն և տագնապ արտի Յովհաննու Մուրատայ ոչ արդար և ի դէպ էին, այլ վերին արդարութիւնն որ հատուցանէ իւրաքանչիւր ըստ ժամանակին՝ բանադատէ զնա խօսել զայն, քանզի չորիւք ամօք յառաջ, նոյն լեզու և ի նմին տեղւոջ ասացեալ էր առաջի բազմաց՝ թէ « Քանդեսցեն Մուրատեանք զՄխիթարեան միաբանութիւնն, « և զվանս նոցա հողոյ հաւասարեսցեն։ »

Հանդարտեցուցանէ զՅովհաննէս Մուրատ Գաղղիացին Կաուլիէ որ անդ գտանի, անհնարին կարծելով թէ թելադ-

բութեամբ Հ. Սարգսի լեալ լցէ գրուածն այն Կորոնի. և այնչափ վատահ լինի նա ի կարծիս իւր, մինչեւ գրաւական դնել ընդ այնր։

Ասէ ցնա Յովհաննէս Մուրատ; «Զկարեմ ես հաւատալ «կարծեաց քոյ և հանդարտել, մինչեւ Հ. Սարգիս ինքնին «ոչ եկեցէ առ իս և հաւատարմացուցէ ինձ զայն, փարա- «տել զվասկած մոաց իմոց։»

Խոստանայ Կռամիէ, և յանձն առնու զմիջնորդութիւնն. վասն որոյ ընդ երեկս աւուրն անուգտն յոյժ գնայ առ Հայր Սարգիս ի տուն Ազանուրեանց, և պատմէ անդ առաջի այլոց գրանս Յովհաննու Մուրատայ և զթշուառ վիճակ նորա. և իրրեւ տուգէ ի Հ. Սարգսէ թէ ոչ միոյն անհաղորդ էր նա այնր գրութեան Կորոնի, այլ և յառաջագոյն խնդրեալ էր ի Կորոնէ չգրել խիստ ինչ բանս ընդդէմ Մուրատեանց, ասէ ցնա; «Այնչափ վատահ էի ես ընդ ուղղութիւն քո, մին- «չեւ գրաւական անգամ ընդ այն դնել. բայց արդ զի տեսանես, «ասէ, զթշուառ վիճակ Յովհաննու Մուրատայ, պարտ է «քեզ և վայելուչ ատոչմանիդ գնալ առ նա անձամբ և բժշկել «զվիրս նորա, և միխիթարել զնա բանիւք խաղաղութեան. «զոր գիտեմ զի ունիս կրան առնելոյ։» Եւ այնչափ թա- խանձէ նա զՀ. Սարգիս մինչեւ առնու ինքեան խոստումն հա- ւանութեան գնալոյ առ Յովհաննէս Մուրատ անձամբ ի տուն այդուհետ նորա։

Ի վաղիւ անդր գնայ Կռամիէ դարձեալ առ Հայր Սարգիս ի տուն Ազանուրեանց, նախաճաշէ ընդ նոսա, և ապա ա- ռեալ զնա ի կուսակ իւր՝ տանի առ Յովհաննէս Մուրատ ի տուն այդուհետ նորա ի 11 ժամու աւուրսն։ Տեսեալ Յովհաննու Մուրատայ զՀ. Սարգիս Թէոդորեան գնայ ընդ առաջ նորա, և տուեալ ամ խաղաղութեան ասէ ցնա; «Ահա յաղթեցեր «ի վախճանի, յաղթեցեր. և զի՞նչ այլ կամիս։»

Ասէ ցնա Հ. Սարգիս; «Ոչ ինչ մխիթարութիւն ինձ զյաղ- «թութիւնս համարիմ, եթէ ոչ զհետս եկեցէ այնորիկ խա- «ղաղութիւն, խաղաղութիւն։ Այլ չգիտեմ ես, ասէ, մին- «չեւ ցե՛րբ շարշարիցիմք տարապարտ, քանի՛ ես զկեանս

“ մեր ընդունայն մաշիցն մաք, և չիցէ փոխման տուապար-
“ նացս։ ”

Ասէ ցնա Յովհաննէս Մուրատ; “ Ամենայնն ի ձեռս քո է,
“ և ի կամսդ։ ”

Զայս ասացեալ՝ առնու զձեռանէ նորին և տանի զնա խե-
նեակ իւր առանձինն. և իրրեւ նոքին նոքա անդ, խօսել
սկսանի Յովհաննէս Մուրատ այսպէս;

“ Վերապատուելի Հայր, արդարեւ որպէս ասացի, ի ձեռս
“ քո և ի կամսդ է ամենայն, քանզի ամ և հաստատութիւն
“ ասն մերոյ։ Գիտես զու թէ զինչ արար ընդ իս եղբայրն
“ իմ Եդուարդ. քանզի չարչարեաց զիս՝ մինչեւ ետ ինձ զի-
“ բաւունս իմ, և այն ոչ բռնանդակ, այլ զկէսն միայն. իսկ
“ վասն մեացելոյն մուրհակ պարտականութեան. ո՞ գիտէ,
“ թէ առիցս զայն երբէք։ Ամենայն ակնկալութիւն իմ է
“ ի վաշխէ հրիտակին ողորմութեան. եթէ թողցի մեզ այն,
“ յապահով լիցի վիճակն մեր. իսկ եթէ պահանջեսցի ի մէնջ,
“ վճարեալ է վասն իմ ամենայն ինչ. ահա յայսմ վիճակի է
“ տունն Մուրատեան՝ Բարերարի Ազգիդ։ ”

Ասէ ցնա Հ. Սարգիս; “ Պարոն, ես յառաջ քան ցանկու-
“ թեան ձերում աւարտեցի ընդ ձեզ իրաւախոհութեամբ
“ զբան հրիտակին, թողլով ձեզ զրոխանդակ վաշխ դրամա-
“ գլխոյն։ Դուք փոխանակ երախտեացս ապերախտս հա-
“ տուցիք ինձ, անիրաւութեամբ ի դատ մտիք ընդ իս, և
“ անխոհեմութեամբ ձերով զբանն ցայս վայր հատուցիք։
“ Այժմ կարծէք զիս վրէժխնդիր առ ի չարեացն որ
“ ի ձէնջ, վասն որոյ և այսչափ տագնապեալ է։ Քաւ լիցի
“ ինձ փոխարինել ձեզ չարիս. քանզի բան առակին, յա-
“ նորէն ձեռաց ելցէ վնաս. այլ խօսեցայց միայն զիրաւու-
“ նքս, զոր բռնադատէ զիս խօսել ճշմարտութիւն։

“ Արդ զինչ իրաւունք են՝ զամս երկուսման մեռոյ զատ-
“ ճառանաք յապաղել զկատարումն բարեպաշտ կամաց հան-
“ գուցեալ հօր ձերոյ, և յետ այսչափ ամաց զդրամագլուխն
“ միայն հատուցանել. իսկ զօրինաւոր և զինքնին բերեալ
“ շահս նորին, իրրեւ 600,000 ռուբի, սեպհականել. և ոչ

„ այսու շատացեալ . այլ և զդրամագլուխն զմիանգամ հա-
„ տուցեալն չանալ ի ձեռս բերել , ի գաւ մնանելով ընդ
„ իս : Վասն այսորիկ մասն դրամագլխոյն ծախեցաւ ի ծախս
„ օրինաց , և մասն նորին անպտուղ յԵւրոպ մեաց : Եւ այս-
„ պէս զամս վեշտասան որբ և աղքատ մանկունք ազգիս
„ յիրաւանց իւրեանց զրկեցան , և Միսրանութիւնս ի զուր
„ շարշարեցաւ : Թողում ասել զկորստենէ այժմու դրամա-
„ փոխութեան . զոր եթէ ըստ ժամանակին հատուցեալ էիք ,
„ ոչ պակասէին անտի իրրեւ 200,000 ռուբի .

„ Դարձեալ՝ զի՞նչ իրաւունք են՝ բազում թախանձանօք և
„ մեծամեծ խոստմամբք հանել զիս ի վանաց , ամիսս բա-
„ զումս ընդ սհադին ոսկիսանս յուժեցուցանել , և զամս
„ եօթն զիս ասս շարշարանօք պահել , և ի վախճանի ոչ
„ միայն յիրաւանցս զրկել , այլ և զրպարտութիւնս ի վե-
„ րայ իմ դնել , մինչև պարտաւորել զիս՝ յարդարացու-
„ ցանել զանձնս՝ ընդ ձեզ գաս վարել հանդերձ ծանր ծա-
„ խիւք :

„ Ահա այսորիկ են , Պարոն , իրաւունքն զոր ծանուցանել
„ ձեզ պարտաւորէ զիս ճշմարտութիւնն . իսկ զհատուցումն
„ նոցին՝ խղճի մատցդ և պատուոյ տանն ձերոյ թողում .
„ հատուցիր որչափ և կարես և որպէս կամիս . չրռնադա-
„ տեմ զքեզ յայս բնաւ : ,,

Ասէ ցնա Յովհաննէս Մուրատ ; „ Վերապատուելի Հայր ,
„ զամն անպատեհ գնացիցս ընդ քեզ արդէն ես ինքնին
„ խոստովանեալ զյանցանս , և ներումն ընդ այն՝ որպէս հա-
„ տատամ՝ ընկալեալ եմ ի քէն : (Տե՛ս յերես 474 .)

„ Իսկ յազագս իրաւանց որբոց և աղքատաց ազգիս , Տէր
„ ինքնին գիտէ , և Աստուած ինքնին դատեսցէ և ընդ-
„ զիս ի յաւիտենական կենաց՝ եթէ ընդ միտս իմ անգամ
„ անցեալ է երբէք յափշտակել զայն : Միայն յազագսն
„ նորին տակաւիկ մի ես եմ պատճառ . այլ այսչափ ամաց
„ յազագսն և ինքատուց նորին՝ եղբայրն իմ է պատճառ
„ բոլորովին . քանզի մինչև յԵւրոպ էի , ասէ , գրեցի
„ նմա անտի՝ ուստի թող 70,000 միրայ ասէրլին ստ ի կա-

«տարուն տալ բանի հրեաների դպրատանն, և վասն այնո-
«րիկ ազգ ապարի նմա յղել ի վերայ նորա փոխանակագիր
«վաղվաղակի։ Արար նա ինձ պատասխանի՝ թէ չհատուց-
«ցէ նա զայն. ահա վասն այսորիկ եղեւ յապաղումն բանին,
«և մեզ անհնարին չարիք։

«Իսկ վասն վաշխի գրամագլխոյն արդարեւ ասեմ քեզ,
«Վերապատուելի Հայր, չունէի ես և յառաջ կամն հատու-
«ցանելոյ զայն. և այս՝ վասն երկուց պատճառաց. մի՝ զի
«եկեղեցական օրէնք ոչ պարտաւորին զոք հատուցանել
«վաշխ գրամագլխոյ ողորմութեան, որպէս ասէ սուրբն Օգս-
«տինոս, և որպէս տեղեկացայ ես յԱրքեպիսկոպոսէն Փա-
«րիզու. վասն որոյ չունէի ես և չունիմ խիղճ ընդ այն։ Եւ
«միւսն՝ զի ԼԹէ հատուցանէաք զայն, մնայր մեզ ասկաւ
«ինչ հարստութիւն. մանաւանդ այժմ, զի բազում ինչ
«ծախեալ եմք ի վէճս Ասենին, աղքատացուք բոլորովին՝
«ԼԹէ հատուցուք զայն բոլանդակ։

«Սակայն են և այլ երկու պատճառք որք պարտաւորին
«զմեզ հատուցանել զայն. առաջինն է անխոհեմութիւն մեր,
«զի յանձնեցաք զրանն օրինաց Անդղիացւոց, որ խիստ է
«յոյժ յայսպիսի խնդիրս. և երկրորդն է միտն որ յանխո-
«հեմութենէ մերմէ եղեւ ազքատաց. որում պարտիմք զար-
«մանն տանել արդարութեամբ ի կողմանէ մերմէ, և զԹու-
«թեամբ ի կողմանէ ձերմէ։

«Իսկ յաղագս առանձին իրաւանց քոց նոյնպէս կարող եմ
«ասել՝ թէ ամենեքին անպարտ եմք ես. բանզի մայրն իմ
«ասէր՝ թէ չէր ինքն պարտական հատուցանել քեզ զայն
«զառանց արծաթոյ, զի յոչ կամաց էր առեալ քեզ զայն
«զիր պարտականութեան իւրոյ։»

Ասէ ցնա Հ. Սարգիս; «Զիարդ միարանին այդ բանք նա-
«ա ընդ բանից զորոյն առելոյ ինձ յանի մի առարք յա-
«ռաջ քան զմահ իւր՝ թէ կամաւ իւրով առեալ էր ինձ զայն
«զիր պարտականութեան, և թէ յոժար է ինքն հատուցա-
«նել ինձ զայն զառանց արծաթոյ, այլ որդիք իւր բանադա-
«տեն զինքն զրանալ ինձ զայն։»

Ասէ ցնա Յովհաննէս Մարտա ; « Ունիցի՞ս դու զոյն զիր « մեր խնդ ։ »

Ասէ ցնա Հ. Սարգիս ; « Այո, ունիմ զդիրն զոյն վերցեալ « և հաստատեալ ի Պարոնայց յԱբրահամ Աղանուրէ և « ի Պօղոս Լազարովէ ։ » (Տես յերես 321.)

« Ա՛հ, ասէ Յովհաննէս Մարտա. ոյսպէս էին և ամենայն « բանք մեր միոյ ի կնոնս իւր. և ես որովհետև բացեալ « եմ զսիրտս իմ՝ քեզ իրրև հօր հոգեւորի՝ պարտիմ յայտ- « նել քեզ և զոյս ։ Արդ երկու տարուբք յառաջ քան զմահ « իւր կոչեաց նա զմի ոմն ի սպասաւորաց իւրոց և հաստատ- « նեաց 5 ռուբի, որ մնացեալ էր առ իւր ի վարձուց նո- « րա ։ Տեսեալ զնշոյժիւն խղճի մտաց նորա, ժամ պա- « տահ վարկոյ առուգել ի նմանէ զսան բանի իրաւանց գոյ. « զսան որոյ ասացի ցնա ; Ասեաց, տեսանեմ զի կարիս դու « մերթել զմեզ մաց քոց, հատուցանելով իւրաքանչիւր « զիրաւունս իւր. արդ առա՛ զնշանարիսն, խոստացեալ իցես « վարդապետին զոյն դուռնար արծաթոյ՝ թէ ոչ ։ Ասէ նա « ցնա թէ Ա՛յ որդի, ամենեսին ո՛չ ։

« Յայնժամ հատուցեալ իմ բանից նորա՝ յամենայնի՝ « ունելի հարցանել ոչ ետ։ Բայց ի վերջ ասելոյ յորժամ « գնացի ես առ նա, կոչեալ նորա զիս ասաց ; « Ե՛կ խղճ- « « մարտարար որդի իմ, ե՛կ մօտ առ իս. զսան բանի « « վարդապետին, ասէ, զոր յերկնին ինձ հարցիր՝ զդիշերն « « ողջոյն մտաստանչ և անհանգիստ եղէ. քանզի խոստա- « « նեալ զի ես ինքն կատարեալ և յօժարութենէն տուեալ եմ « « նմա զոյն զիր պարտականութեանն, և խոստացեալ « « հատուցանել նմա զոյնչափ դուռնար արծաթոյ ։ » Ա՛հա « զոյս ունելով եմ ես ոսկանչաք խմելք ի բերանոյ հանգու- « ցեալ մեր խնդ, և ընդ վերսիրութիւն մտաց և բանից նորա « ապշեալ և ցաւեալ եմ յոյժ ։ »

Ասէ ցնա Հ. Սարգիս ; « Յորժամ խնայար դու զայդ ճըշ- « մարտութիւն, ընդէ՞ր ոչ դարձան ասպար դու անխրատ- « թեամբ մեր քո, »

Ասէ ցնա Յովհաննէս Մարտա պատասխանի ; « Նախ զի

«Թշնամութեամբ էաք ընդ քեզ. և եկիցուք՝ զի անապան էր.
«քանզի կատակ նորա սրդէն գրեալ և հատատեալ էր ա-
«ռաջի վկայից։ Բայց ես, ասէ, զայս բան ինձ խիղճ
«մտաց համարեալ՝ խոստովանեցայ քահանային. յաւսամ
«զի ներեսցէ ինձ Տէր, նոյնպէս և խնդրեմ զոր խնդրեմ։»

Ասէ ցնա Հ. Սարգիս գաւառին արտիւ; «Յաւսամ և ես,
«զի ողորմութիւնն Աստուծոյ մեծ է. քան զամենայն իրա-
«ւունս մարդկան. այլ զուք յոյժ անգթութեամբ և անող-
«հութեամբ վարեցայք։ ոչ ինչ զմտաւ ածեալ զհոգւոյ
«մեր ձերոյ և զպատուոյ նորին և զձերոյդ միանգամայն.
«քանզի այն կատակ նորա նախատինք են նմա և ձեզ յաւել-
«ուեան ժամանակաց։»

Յոգւոց եհան Յովհաննէս Մուրատ և ասէ; «Այո՝ այդ-
«պէս է, և եղելոցն չիք հար։»

Զկնի այսր և այլ այսպիսի բանից՝ առաջարկէ Յովհաննէս
Մուրատ հատուցանել Հայր Սարգսի 100,000 ռուբի իբրև
վաշխ դրամագլխոյ հրամային ողորմութեան. բայց կամի
զի 50,000 ռուբի անտի անցուցցի քեռն իւրում՝ սիկնոջ
Աղանուրի ի հատուցումն ամենայն պահանջանաց նորա,
զոր ասի զժուռալ և խռովեալ էին ընդ միմեանս դամիս
վեց և աւելի. իսկ զմնացեալ 50,000 ռուբին յաւելցուլ ի դրա-
մագլուխ հրամային ողորմութեան ի հատուցումն վնասուց
նորին ի ծախս օրինաց։

Ասէ ցնա Հայր Սարգիս; «Այդպիսի առաջարկութիւն և
«անօրինութիւն լուայ ես երբեմն ի Կամբիէէ, զոր և կարծեմ
«լեալ թելադրութեամբ քով, և հերքեցի ես իրրև անտեղի
«ինչ։ Եւ յիրաւի. քանզի չգիտեմ թէ զինչ վերաբերու-
«թիւն կայցէ գործոյն ողորմութեան ընդ բանի պահանջման
«քեռնդ։ Եթէ համարիս դու զքեզ պարտական նմա, հա-
«ռաւիր դու ինքնին և ուղղեսցի, և ընդէ՞ր անուղղեսցի և
«այլով անուամբ։»

Ասէ ցնա Յովհաննէս Մուրատ; «Կարծէի ես զի և դու
«զնոյն կամիս։»

Ասէ ցնա Հ. Սարգիս; «Ոչ երբէք. ասասիկ ասա՛ է Կամ-

“ վիճ, հայրց զնա՝ եթէ այդպիսի ինչ կամեցեալ լցեմ
“ ես։ ”

Եւ ասէ ցնա Յովհաննէս Մուրատ ; “ Վերապատուելի Հայր,
“ ոչ ինչ երկմտիմ ես զհայրական սիրոյ քոյ առ իս և առ
“ համօրէն տուն մեր. և զոմն այսպիսի հաւատացեալ զիս
“ երախտագէտ որդի քեզ հոգեւոր յամենայն կեանս իմ. ա-
“ պա պարտ է քեզ ոչ միայն զվաշխն շնորհել մեզ, այլ և
“ յապահովի զմեզ կացուցանել ընդ այն ի խաւսութենէ օրի-
“ նաց Անզգիացւոց, և խաղաղութիւն իմէջ ընտանեացս տա-
“ նել։ Արդ մի միայն յապահովութիւն է մեզ՝ հաստատեալ
“ քեզ զուսանար ինչ արծաթոյ իբրեւ վաշխ գրամագլխոյ հրի-
“ տակին ողորմութեան, և խաղաղութիւն լինի ի մէջ ընտա-
“ նեացս, տալով քեզն իմեամ զիրաւունս իւր։ Եւ այս ամե-
“ նայն բարեաւք վճարեցի՝ եթէ յանձն առնուցուս զու զա-
“ ռաջարկութիւնս իմ։ ”

Եւ ասէ ցնա Հ. Սարգիս ; “ Սիրելի Պարոն, զոմն յապահո-
“ վութեան ձերոյ, և խաղաղութեան ընտանեացդ որարից
“ որ ինչ անկ իցէ պաշտամանս և պատշաճ ասոյնմանս։
“ Արդ այս առաջարկութիւն քո օտար է ինոցունց. քանզի
“ իբրեւ խնամակալ ազգաւոց աշդիս՝ առնուլ ինչ յանուն
“ իրաւանց նոցա և տալ այլում՝ ընդդէմ է պարզութեան և
“ ուղղութեան իմոյ որով վարեալ եմ ցարդ ի գործս յայս.
“ զոմն որոյ չկարեմ յանձն առնուլ զայդ։ Ոչ գոյ բանա-
“ գաւութիւն կամաց քոց. որչափ ինչ կարող ես հաստուցա-
“ նել ի վաշխ հրիտակին ողորմութեան՝ հաստատեալ ուրոյն,
“ և որչափ ինչ իրաւունս համարիս տալ քեզոնդ՝ տալիր
“ զայն ուրոյն։ ”

Յայնժամ յայտնէ Յովհաննէս Մուրատ զանտի կամեցեալ
մատց իւրոց, թէպէտ և ոչ բոլանդակապէս և իրաւամբք,
տալով ; “ Գուցէ զկնի հաստատելոյ քեզոնդ իմեամ զայն
“ զուսանար արծաթոյ, պարտաւորեցայց հաստատել զրա-
“ մանդակ վաշխ հրիտակին, և յայնժամ ծանր ինաս լեցի
“ ինձ. զոմն որոյ կամիմ յանուն վաշխի գրամոյն ողորմու-
“ թեան հաստատել քեզ զայն։ ”

Ասէ ցնա Հ. Սարգիս ; « Ասասի իցէ քեզ այդ երկիւղ կամ-
« կածանաց . յինէն, թէ այլուստ ։ »

Ասէ ցնա Յովհաննէս Մուրատ ժպտելով ; « Թէպէտ և
« ոչ ինչ երկմտիմ ես զհաւատարմութենէ քումմէ, այլ ո՛
« զիտէ, զուցէ բռնադատեցիս ի վերջէ դատիդ ի Կորսո-
« նէ, որ չար ումն է և ազգեցութիւն շատ ունի ի վերայ քո,
« և միարանեալ ընդ Նորթընի ընդհանրական փոստարա-
« նին՝ պահանջեցիս ի մէնջ դրամական վաշխ հրամայելն
« ազատութեան ։ »

Ասէ ցնա Հ. Սարգիս ; « Ինամի և ի զուր են կարծիքդ
« այդ . արդարև Կորսոն շատ յարգանաց զիս և յարգէ
« միշտ պահանջել ի ձէնջ զիրաւունս ազգաւոց . բայց ես
« ոչ լուայ և չլուայց նմա երբէք . զի եթէ կամէի ես անսալ
« նմա, զոր ոչ անսանիցի զիս ասա՝ ու քեզ այսր ։ Եւ յի-
« բաւ . քանզի չարժիմ ես միայն ի գիտակցութենէ մտաց,
« և բան խրատու և հրամանի Աստուծոյ, որք միայ-
« նակ առաջնորդք են ինձ յանձնեալք դրան իմ, և ոչ թէ
« ազդեցութեամբ և խորհրդով այլոց ։ »

Ասէ ցնա Յովհաննէս Մուրատ ; « Հաւատացեալ եմ քեզ
« բոլովին, և չունիմ ինչ երկմտութիւն ընդ բան քո, այլ
« զի՞նչ լինիցի եթէ հաճեցիս ընդունել զառաջարկութիւնս
« իմ, միայն ի հանդարտութիւն մտաց ։ »

Ասէ ցնա Հ. Սարգիս ; « Գիտեմ զի ընդունելոյն են ամե-
« նայն կամակատարքդ . քանզի չփոխին բնաւ միտք իմ հա-
« տատունք յանկեղծ խորհրդոց իւրոց, և գնացք իմ յուղիղ
« գործոց . բայց ի միխիթարութիւն քեզ՝ խոստանամ ի բան
« պատուոյ իմոյ, զի եթէ պատահեցի այնպիսի ինչ գրքի
« զոր կամիս, համարեցի այն զուտար արծաթոյ ի հա-
« շիւ վաշխի հրամայելն ազատութեան . վասն որոյ միտիս
« լեր ։ »

« Ասէ ցնա Յովհաննէս Մուրատ ; « Բարի է, չունիմ ես
« այլ կամակատ . առարկացուր զրանն ։ »

Զանձրացեալ Կամիլի ի կարգէն նոցա արտաքոյ, միտնէ,
ասէ ոչինչ հրամարեալն ։

Ասէ ցնա Յովհաննէս Մուրատ ; « Կամէի թէ ճաշէիր ընդ
« իս այսօր, բայց չուզիմ բաւական կերակուր ։ »

Ասէ Հայր Սարգիս քաղաքավարութեամբ ; « Զիր խոսիր ,
« թող եկեսցէ Պ. Կռամիէ ընդ իս ճաշել ի միասին առ Աղա-
« նուրեանս ։ » Եւ առեալ զնա ընդ իւր դառնայ ի տուն
Աղանուրեանց ։

Հարցանէ Կռամիէ զՀ. Սարգիս թէ զինչ որոշեալ իցէ ընդ
Յովհաննու Մուրատայ ։ Ասէ ցնա Հ. Սարգիս թէ « Գնա և
« ոչ ինչ » Ասէ ցնա Կռամիէ . « Ապա զինչ խօսէիք ընդ
« միմեանս ժամս շորս ։ » Ասէ Հ. Սարգիս ; « Խօսէաք զան-
« ցեալն անցեալց ի միջի մերում զամս հինգ ։ » Եւ չկամէր
Հ. Սարգիս յայտնել Կռամիէի զառաջարկութիւն Յովհան-
նու Մուրատայ . քանզի կասկածէր միշտ զհաւատարմութենէ
առնն , զոմն որոյ զգուշութեամբ խօսէր ընդ նմա ։ Թէպէտ
և զնոյն և Յովհաննէս Մուրատ ազգ առնէ նմա՝ չյայտնել
ինչ Կռամիէի , բայց զոր ինչ խօսին նոքա ընդ միմեանս ա-
ռանձինն ի նախընթաց աւուր զաւարտմանէ բանին՝ պատմել
զայն ամենայն Կռամիէ Հ. Սարգսի յիրկրորդում աւուր ։

Ի վաղիւ անդր ըստ խնդրոյ Պ. Յովհաննու Մուրատայ գը-
նայ դարձեալ Հ. Սարգիս առ նա ի տուն այդուհետև . որ
յետ փոխադարձաբար ընդունելութեանն ասէ ցնա ; « Այն պայ-
« ման որով բաւականացայ ես տալ քեզ խնամ զիրաւունս
« նորա՝ չէ բաւական վասն յապահովութեան մերոյ . քանզի
« ասաց ցիս վարիչ դատին խնոյ Վայվաշ՝ թէ յետ հաստատա-
« նելոյ ուխտիդ ինչ իրրեւ իրաւունս , չմարթի ապա յետս կո-
« չել , կամ այլազգ անօրինել . ուստի մի միայն յապահովու-
« թիւն է ձեզ՝ հաստատանել նախ Հ. Սարգսի զայն դրամսր
« արծաթոյ իրրեւ վաշխ դրամագլխոյ հրիտակին ազօրմա-
« թեան , ապա դարձուցանել նմա զայն առ տիկին Աղա-
« նուր իրրեւ հաստատումն պահանջանաց նորա յեղբարցդ
« իւրոց ։ »

Յաւելեալ էր Վայվաշ ասել թէ « Անօրինելն այնպէս՝
« չկայ Հ. Սարգսի երկիւղ բնաւ , և կամ անպատշաճութիւն
« ինչ . և եթէ հաճիցի Հ. Սարգիս , գնայցից առ նա և ասիցս

«բանիւք խնդամուտ արարից զնա և միամտեցուցից յամե-
«նայնի։» Զնոյն և ինքն Յովհաննէս Մուրատ հաստատէ, և երաշխաւոր զանձն կացուցանէ՝ հանդերձ ահագին երդմամբ՝ թէ չկայ անտի վնաս ինչ և անպատուութիւն նմա։

Ասէ ցնա Հ. Սարգիս; «Պարոն, զոր ինչ միանգամ խո-
«հեմութիւնն իմ պատշաճ ոչ դատի առնել, բանք հարիւր
«օրէնգիտաց չկարեն ինձ զայն խնդամտեցուցանել. վասն
«որոյ ի զուր է զայսմանէ այլ ևս խօսել. շատ են քեզ տր-
«ուեալս պատճառք և յանձնառութիւնս ի յապահովութիւն
«ձեր։»

Երբեւ տեսանէ Յովհաննէս Մուրատ թէ անհնարին էր Հայր Սարգսի յանձն առնուլ, յոխմանչ կամս շատանոյ դարձեալ ընդ առաջին պայմանաւոր բանս երաշխաւորութեան նորա։

Զկնի վերոյին խօսելոյ և որոշելոյ նոցա զայսմանէ, կամի Յովհաննէս Մուրատ խնդալ զմիտս Հ. Սարգսի թէ ուրչափ ինչ խնդրիցէ նա ի նոցանէ, վասն վաշխի հրիտակին ողորմութեան։

Ասէ ցնա Հ. Սարգիս; «Սիրելի Պարոն, արդէն զամենայն
«իրաւունս առաջի քո եղեալ եմ, և զընարութիւն նոցին
«ի կամս քո թողեալ. վասն որոյ չկամիմ ես արդ առաւել
«ինչ խօսել, բայց եթէ իբրեւ ճշմարիտ բարեկամ և իբրեւ
«Հայր հոգեւոր՝ որպէս արժան համարեցար զիս կոչել՝ խր-
«բատ կարեւոր և օգտակար առամ քեզ։ Խնդրեցես յԱ-
«ստուծոյ շնորհս, զի բաւականացին միտք քո խորհել զար-
«ժանն և առնել զարդարութիւն. զկոյշ լեր յանիրաւութենէ
«և ի սիրոյ արծաթոյ, զի ոչ ոմանք միացեալ է այն և ոչ
«քեզ միացէ. այլ միայ միայն պիտակցութիւն մնայ ի ներ-
«քուստ, և համբաւ արտաքուստ, եթէ բարի և եթէ չար,
«ըստ կամաց և ըստ գործոց գործելոց։»

Լուեալ Յովհաննու Մուրատայ բանից նորա քաղցրութեամբ, և վայրիկ մի ի միտս իւր խորհեալ՝ ասէ; «Երա-
«պատուելի Հայր, խրատս քո բարի է, և բանքդ ճշմարիտս
«են յոյժ. վասն որոյ շնորհս առնիմ մեծապէս. և ես, ասէ,
«յորմէ հետէ սկսայ խօսել ընդ քեզ վասն բանիս այսորիկ՝

«Խնդրեցի միշտ ՅԱստուծոյ յաջողել ինձ ի գործս որ ինչ
«հաճոյ է աստուածային կամաց իւրոց։ Եւ արդ տեսանեմ
«զի խորհուրդք մեր միաբան են ընդ միմեանս յոյժ, զոր
«ՅԱստուծոյ համարիմ և ինձանէ ազդեալ. վասն որոյ կա-
«միմ տալ քեզ 100,000 ռուբի ի վաշխն դրամագլխոյ հրի-
«տակին ողորմութեան, և վասն այլ ամենայն բանից զոր
«իրաւունս համարիս դու ընդունել ի մէնջ։ Յուսամ զի
«հաճ և գոհ ես ընդ այսչափ ինչ։ Եւ 50,000 ռուբի տալ
«քեզն իմում վասն պահանջանաց նորա ի մէնջ, և վասն
«հարազատութեան սիրոյ իմոյ առ նա։»

Ասէ ցնա Հ. Սարգիս; «Հաճեալ և գոհ եմ ընդ խոս-
«տումդ վասն բանի հրիտակին ողորմութեան՝ այլոմբն
«հանդերձ, թողեալ գոլով իմ արդէն զամենայն ի կամս
«քո, և հաւատալով քեզ այժմ՝ իբրեւ զիտակցութեամբ
«մոց վարելոյ, և իբրեւ ՅԱստուծոյ շարժելոյ. վասն որոյ
«մաղթեմ քեզ ի Տէառնէ առաւել եւս շնորհս և բարիս։
«Իսկ վասն բանի իրաւանց քեռն քո չունիմ ինչ ասել քեզ,
«զի չէ այն անկ պաշտամանս իմում. զուցէ շատացի նա
«կամ ոչ. քեզ մնայ խօսել ընդ նմա և աւարտել զրանն ող-
«ջակէր, առանց ուրուք խառնելոյ ի գործս ձեր և կապելոյ
«զայն ընդ գործոյ մերում։»

Ուրախացեալ Յովհաննու Մուրատայ ընդ հաճութիւն Հայր
Սարգսի, և հաւանեալ ընդ բանս նորա, ասէ; «Մեայ մեզ
«արդ առնել յաւելուած ինչ յառաջին գաշնագիրն մեր որ
«ընդ միմեանս, և տալ նորոգ մուրհակ ազատութեան վասն
«ամենայն պահանջանաց բանի հրիտակին ողորմութեան.
«զոր և ես ինքն յանձն առնում պատրաստել։» Բայց
խնդրէ ի Հ. Սարգսէ ասել ցվարիչ դատին իւրոյ ցԿարոն՝
մի փութալ հանել զվճիռ խնդրոյն Յանէնէն՝ մինչեւ աւար-
տեացին զրան գաշնագրին։ Խոստանայ Հ. Սարգիս հաճել
զկամն նորա. վասն որոյ գնայ առ Կարոն և ասէ նմա յապա-
զել աւուրս քանի մի եւ մի խնդրել զվճիռն Յանէնէն եւ
ի գործ դնել զայն, առեալ նմա զպատճառսն։

Հարցանել Կարոն զՀ. Սարգիս զհանգամանաց գործոյն

ընդ Յովհաննու Մուրատայ։ Ասէ ցնա Հ. Սարգիս թէ յուսայ ինքն ազատել զայն իրաւախոհութեամբ։ Զհաճի Կօրսոն ընդ լուր իրաւախոհութեանն. քանզի զազարէր այնուհետեւ վէճն որ ի մէջ նոցա, և չարաշահութիւն իւր որ անտի. վասն որոյ սկսանի գարձեալ յորդորել զՀայր Սարգիս պահանջել ի Մուրատեանց զրամանգակ վաշխ գրամագլխոյ հրիտակին ողորմութեան, յիշելով վերոյն զանուի պատճառս իւր և զկիրառեալս, և զապառնալիս ընդհանրական փոստարանին Նորթընի առաւել ևս ստանկացուցեալ։ Եւ յասել Հայր Սարգսի՝ թէ Միաբանութիւն իւր չկամի լինել պատճառ քանդման տանն Մուրատեանց՝ ասէ Կօրսոն; «Զի՞ փոյթ է «ձեզ վասն անզգամաց. թող քանդեսցին նոքա ըստ արժա- «նի գործոց իւրեանց. և զի՞նչ առաւել իցեն նոքա, ասէ, «քան զԱրքիրեանս, յորոց մին հինգ հարիւր գրապիր վարձ- «կան է այսօր. եղիցին և Մուրատեանք իբրեւ զնոսա։»

Ասէ ցնա Հ. Սարգիս; «Պարոն, որպէս վիճակ և ատե- «ճան մեր զանազանք են, նոյնպէս և զդացմունք մեր ի մի- «ութեանց. մեք ոչ միայն այդպիսի իրաց պատճառք չկամիմք «լինել, այլ և խորհելն անգամ ծանր և ատրամիելի է մեզ. «քանզի չեն նոքա լոկ կամակատարք, այլ և ժառանգք «բարերարին. զի՞արդ կարիցեմք մեք, որչափ և անգամ «իցեն նոքա, անգթութեամբ վարել ընդ նոսա։»

Պատասխանեալ Կօրսոնի չկարէ ասել պատասխանի բանից Հ. Սարգսի, այլ ասէ զժկամակութեամբ; «Որպէս հաճոյ է «քեզ արա. չկամիմ ես խառնիլ բնաւ ի գործ քո, և ոչ «խնդալ զհանգամանս իրաւախոհութեանդ, զի գիտեմ թէ «լիցի հարցափորձ խիստ գայնմանէ ի Նորթընէ. և եթէ ծա- «նիցիմ ես լինքն իրրեւ զիտակ այնմ, և ոչ ծանուցեալ «Նորթընի, ընդդէմ պաշտամանն խնամ գործեալ համարե- «ցայց առաջի Աստենին։»

Ասէ ցնա Հ. Սարգիս; «Բարի է, և ես ոչ ծանուցից քեզ «զայն։» Քանզի և Հ. Սարգիս զայն կամէր, չյայտնել ինչ անգամին։

Ի վախճանի ասէ Կօրսոն; «Յու է, ինձ միայն վասն քո,

«զի աղաչանս զպատիւն քո զոր գտեալ էիր յԱտենէն
«յառաջ։»

Ասէ ցնա Հ. Սարգիս; «Շնորհ յոյժ ունիմ զդացմանդ,
«այլ զիտասջիր զի ճշմարիտ պատիւն իմ հաստատեալ է յա-
«ներաւորութիւն խղճի մտացս. ցորչափ անարատ զիտեմ
«զայն, պատիւն իմ երբէք ոչ աղտոտի։»

Զոյս ասացեալ մեկնի ի նեմնէ։

Յաւուրսն յայնոսիկ ելնի բանամարտութիւն ինչ գրով ի մէջ Կորոնի և Յովհաննու Մուրատայ։ Քանզի, որպէս վերագոյն յիշեցաք, գայրացեալ յոյժ Յովհաննու Մուրատայ ընդ բարոյական խորհրդածութիւնն Կորոնի որ ի լրագրին՝ կամի առնել նմին պատասխանի և յանդիմանել զհամարձակութիւն նորա։ Հ. Սարգիս և այլք ունէք խրատ ասն նմա ընել և ոչ ինչ հանդիպել զայն. և նա թէպէտ և հաւանեալ բանից նոցա լաւ զասելիսն, բայց ապա լուեալ խրատուն ոգիսն ուրեմն, առնէ պատասխանի բանից գրութեան նորա։ Տեսեալ զայն Կորոնի ի լրագրին՝ համարձակի և նա, և գրէ առաւել խիստ և կծու բանիւք ընդդէմ Մուրատեանց, և մանաւանդ ընդդէմ Յովհաննու Մուրատայ. զոր ընթերցեալ նորա զարհուրի և զՀայ ընդ անխոհեմութիւն իւր, այլ անոգան և յանօրուստ։

Յետ երիցս աւուրց գնայ զարձեալ Հայր Սարգիս առ Յովհաննէս Մուրատ ըստ խնդրոյ նորին՝ տեսանել զյաւելուած առաջնոյ գաշնագրին իւրեանց, և զնորոգ մուրհակն ազատութեան զոր յանձն առնու Յովհաննէս Մուրատ յօրինել։ Ընթերցեալ Հ. Սարգսի զայն՝ գտանէ բոլորովին հակառակ մտաց և կամաց իւրոց. քանզի ցուցանէր նա ի նմին թէ պատճառ խռովութեան և յԱտենէն զիմելոյ նոցա ոչ այլ ինչ լեալ էր բայց եթէ անարատութիւն գրոյ գործակցութեան Հ. Սարգսի, և թէ մինչև էր Աստենին զայն որոշեալ՝ առաքն նմա ի Մխարանութենէն նորոգ գիր գործակցութեան, զոր քննեալ և վասեր համարեալ Աստենին՝ որոշէ զարձուցանել նմա զառաջեալ արծաթն հրամայելն, և թէ

թերի գալով վճռոյ Անանին՝ յաղագս չլինելոյ անդ խօսից ըստ կարգաւորութեանէ դպրատանն և զայլ պատկանելեաց նորին, հարկ լինի նոցա առնել զյաւելուածն զոյն յառաջին գաշնագիր իւրեանց, նոյնպէս և նորոգ մուրհակ տալ ապատութեան՝ վասն յաւելլոյ ի դրամագլուխ անդր հրիտակին ազատութեան զուտար ինչ արծաթոյ իրրեւ վաշխ։

Եկ վասն կարգաւորութեան բանի դպրատանն հատատէր վերատին զպայմանսն որք յառաջին գաշնագրին, բայց ի վերոյ պայմանէ որ վասն վաշխի գրամագլխոյն, իրրեւ հատուցեալ զայն ապա։

Այս էր նիւթ գրութեան նորա և այսպիսի յաւելուածն պատրաստեալ, զոր յուսայր թէ առանց ինչ հակառակութեան ընկալցի Հայր Սարգիս. քանզի կարծէր Յովհաննէս Մուրատ՝ թէ որպէս թողաւ ի կամս իւր հատուցումն վաշխի հրիտակին, նոյնպէս թողլ տացի նմա զդրամագլխոյն ունելոյ նեալ որպէս և կամէր. այլ ոչ գիտէր թէ մին հարկ էր՝ և միւսն անհնարին։

Թէպէտ և որոշէ Հ. Սարգիս ի մոր իւրում թէ զինչ պարտ էր լինել նիւթոյ գրութեանն, և զորպիսի գաշնագիր պարտ էր ընդունել, այլ կամի խորագիտութեամբ վարել ընդ Յովհաննու Մուրատայ, և իրաւամբք խոնարհեցուցանել զնա ի կամս իւր. վասն այնորիկ հարցանէ զնա նախ՝ թէ ո՞յն իցեն կամք նորա որ ի գրութեան անդ։

Ասէ նա ; « Այս, բայց դու կարող ես յաւելուլ անդր « կամ պակասեցուցանել ինչ անտի, եթէ պատշաճ դատես « ցիս, մանաւանդ ուզել զհայերէնն։ »

Յայնժամ խնդրէ խնամել Հ. Սարգիս գնել և արարել զայն ի սան իւրում առանձինն։ Ժողովի ընդ այն խնդիր նորա Յովհաննէս Մուրատ։ Ասէ ցնա Հ. Սարգիս ; « Գարձեալ « երկմտութիւն և կասկած։ » Ասէ նա ինչ, այլ խնդրէ միայն առնել անդ առ նմա զքնութիւնն և զորբարութիւն։

Զինչանի Հայր Սարգիս կամաց Յովհաննու Մուրատայ, և ակամբ գնել անդ զդրութիւն նորա բան առ բան, և ցուցանել նմա զանհարմարութիւն նորին, վասն որոյ և զանհնարու-

Բիւն ընդունելոյ իւր զայն։ Եւ իբրեւ տեսանէ թէ պնդէ Յովհաննէս Մուրատ պահել անդ ինչ ինչ բաւս՝ որք տային տեղի կռուակատարաց խառնիլ ի կարգաւորութիւն բանի զպրատանն, խորհի հնարիւք իմն ունայնացուցանել զբոլանդակ գրուած նորա և զիէն միանգամայն. վասն որոյ ասէ ցնա; «Ի զուր է, Պարոն, միճել մեզ վասն բառից յաւելուա-
«ծոյս, մինչդեռ չեմք հաստատեալ մ'երանին գրուն գաշնա-
«դիր մեր զառաջին, և վասն հաստատութեան նորին կա-
«բոսիմք հաւանութեան Ամենին. քանզի այն իսկ են կամք
«Միսրանութեանս՝ հաստատել զայն Ամենիւ։»

Ասէ ցնա Յովհաննէս Մուրատ; «Դիւրին է այն. խուսա-
«ցայց ես ինքն ընդ վարչի գաւին իմոյ Վայվաշի՝ առաջար-
«կել զայն Ամենին ի հաստատութիւն։»

Ասէ ցնա Հ. Սարգիս; «Յորժամ այն եղիցի, դիւրին միցի
«մեզ յայնժամ յաւելուածն։» Եւ այսու հնարիւք կարճեաց նա զքննութիւնն և զիէն. թէպէտ և հաւատի էր ընդ անհնարութիւն առաջարկութեանն յԱմենի, յառաջագոյն հարցեալ և տեղեկացեալ զոլով ի վարչէ գաւին իւրոյ ի Կարսոնէ, և ի վարժապետէն օրինաց ի Սամէճէ, որք միտրան ասէին նմա՝ թէ «Անհնարին է Ամենին զայն առնել, արտաքոյ և
«օտար զոլով այն պաշտաման իւրոյ. և զինչ արժէ, ասէին,
«Միսրանութեան գաշնագիրն այն պայմանաւոր, մինչդեռ
«ունի նա ի ձեռին իւրում զրոցարձակ վճիռ բարձրագոյն
«Ամենին։»

Ի վերջ անդր ասէ Յովհաննէս Մուրատ ցՀ. Սարգիս՝ թէ չկարէ լինել առաջարկութիւնն այն յԱմենի, քանզի և վարչի գաւին իւրոյ Վայվաշ զնոյն պատճառս ասելոյ էր զոր վերագոյն յիշեցի. վասն որոյ տարակուսեալ Յովհաննու Մուրատայ հարցանէ ցՀ. Սարգիս թէ զինչ պարտ իցէ առնել։

Ասէ ցնա Հ. Սարգիս; «Զգիտեմ և ես. քանզի ընդդէմ
«բոցայոյտ կամաց Միսրանութեան իմոյ չկարեմ ինչ առ-
«նել, որ ազդ առնէ ինձ զրով՝ թէ առանց հաստատութեան
«Ամենին չկամի ընդունել զառաջին գաշնագիրն մեր որ
«ընդ միմեանս։»

Վարդանեայ Յովհաննու Մուրատայ ժամն ինչ ի միտս իւր, ապա ասէ ցՀ. Սարգիս ; «Արեմն զարտիմք այլ նոր դաշնա-
«զիր հաստատել ի միջի մերում ։ » Եւ զայն գարձեալ ինքն յանձին կալեալ յօրինել, զոմն որոյ և խնդրէ առ այն ժամանակ ։ Հաճեալ Հ. Սարգսի և տուեալ նմա ոգեղէն՝ գառնայ ի տուն իւր ։

Ի վաղիւ անդր ընդ երեկս ընդառնի Հ. Սարգիս յանակընկալս ի վարչէ դատին Մուրատեանց ի Վայքաշէ յայտարարութիւն ինչ, որոյ ազգ առնէր նմա՝ թէ Յովհաննէս Մուրատ հանեալ է հրաման յԱռնէն՝ խափանել զգործարարութիւն վճռոյն որ զոմն խնդրոյ հրատակին ազգութեան. քանզի կամի բաղդել յԵրոպ յԱռնան թագաւորին Անգղիոյ ։

Տեսեալ Հ. Սարգսի զայն հրաման՝ զարմանայ յոյժ ընդ յեղյեղուկ միտս Պ. Յովհաննու Մուրատայ, և գնայ ի վաղիւանդր առ Կարոն խորհել զիրսն ։ Պատեհ գտեալ յայնժամ Կարոնի ասէ ցՀ. Սարգիս ; «Տեսանէր զի չէր պարտ հաւա-
«տալ բանից Մուրատեանց և խնայել ինձս երբէք. զոմն
«որոյ զդոյշ լեր չերթեւեկել և չխօսել ուրուհետեւ ընդ
«Յովհաննու Մուրատայ ։ »

Յետ հեղեռատաւոր ուրեց անցանելոյ ի վերայ վերջին վճռոյ Աստենին զխնդրոյ հրատակին ազգութեան, զրէ Պ. Աբրահամ Ազատեր թուղթ առ Գերապայծառ Սուքիաս Սոմալեան ի Վենետիկ, օրինակ զոյս.

«Առաւելապատիւ և Գերապայծառ Տեառն Տեառն Սու-
«քիասայ Արքեպիսկոպոսի և ընդհանրական Աբրայի
«ոչնահամբոյր խոնարհութեամբ ։

«Ահա ի լրումն արդարութեան և ի կատարումն ցանկու-
«թեանս ուսուցանեմ զարձեալ Արհիապատիւ Հօրդ և
«Առաւելապատիւ ուխտիդ ուրախութիւն մեծ ։ Արդ յետ
«բազմաբեռ հառաջելոյ Աստենիս զանգիկութիւնն վար-
«ժարան օրինաց, և յետ ուղղելոյ Համարակալի տեսու-

«Թեաես ի հաշուեմատեանի իւրում զհոչիւ ուանդեալ արդ-
«ծաթոյն և զանուանս ուանդաուուց, ելին խնդիրս զարդ-
«ձեալ յանդիման Ատենին ի 6 դեկտեմբերի անցելոյ. և
«Թէպէտ յաչդեաց Զեզ Ատուծով, այլ չուարտեցաւ այն
«ամենայն՝ ասկս պակասելոյ Ատենադպրին ի պաշտաման
«իւրում, զորմէ տեղեկանայք ապա։ Ատյլ Թէ զինչ և որ-
«պիսի բանք եղեն յԱտենի զինդրոյս յայն նիստ առանձին,
«տեղեկացէք զայն ի լրագրոյ քաղաքիս, զոր ծրարեցի
«ի Թղթիս առաքել ձեզ այդր այսու պատեհիւ։

«Ապա ի 10 փետրուարիս բերաւ խնդիրս յանդիման
«Ատենին, ուր յետ վիճելոյ փառաբանից յիրկուց կողմանց
«բաւ ասելոցեան, եաւեն զառաւորքն զվճիռ իւրեանց
«զարդար և զանաչառ, յամենայնի ի նպաստ որ և ազ-
«քատ մանկանց ազգիս, և ի պատիւ յարդոյամեծար Միա-
«բանութեանդ. վասն որոյ ուրախ եմ յոյժ յոյժ ընդ յա-
«ջաղութիւն իրաւանց ազգաց ազգիս, և ընդ փառաւոր
«յաղթութիւնդ ձեր։ Ակերդ համարիմ երկրորդել ի սմին
«զրանս վճռոյն. քանզի զառանէք զայն նոյնպէս ի լրագրա-
«Թերն քաղաքիս, զոր ծրարեմ ի սմին։ Իսկ զմանրամասն
«բանս զառաւորաց և փառաբանից և զհանգամանս իրաց
«հակառակորդացդ, զրոմանցսին տեղեկանայք լիով ի Թերգ-
«Թոյ Վերադարձելի Հ. Սարգսի վարդապետի մերոյ զոր
«ասցէ ձեզ ապա։

«Թաղեալ զոչ կարեւորագոյնն ի լրոց տեղւոյս, ապա-
«ցուք որ ինչ հակառորն է ձեզ ի գիտել, և մեզ հարկ է
«ծանուցանել։ Արդ յետ անցեալ ամի Եդուարդ Մուրատ
«յանկարծ հրամարակեաց Թէ ունի գնալ յԵրոսդ ի սկիզբն
«տարւոյս։ Թէպէտ և զառաջինն անհաւատ ինչ այն մեզ
«Թուէր, ասկս կարի ինն շաղելոյ նորա ի խառնամիջոցս և
«ի բազմանկնիրն գործառնութիւնս, ասկայն հաստատեաց
«նա զառաջադրութիւն իւր ի վախճանի, Թաղեալ զամենայն
«ծանրութիւն և զցաւս ի վերայ ուղղոր իւրոց Յովհաննու, և
«մեկնեցաւ ասոր յ2 փետրուարի տարւոյս։

«Վախճան գնոցդ նորա յԵրոսդ՝ Թէ և ա. հրեայքն և.

“ կերպարանաք խնամակալութիւն որդւոյ իւրոյ էր, այսինքն
“ միջնորդութեամբ բարեկամաց և ծախուք ինչ արծաթոյ
“ մուծանել զորդին իւր ի պաշտօն ինչ վաճառականն ընկե-
“ ցութեան Անդղիացւոց ի Հնդիկս, այլ ի ներքուստ և ճշմար-
“ տութեամբ այս են պատճառք ;

“ Նախ՝ զի վատնեալ էր Նորա ինչս բազում, և ի նուազել
“ ընչիցն սկսաւ ագահել և յափշտակել զընտանեացն և
“ զայլոց. ի հակառակել նմա եղբօրն և ի գտանել Նորա
“ զիրաւունս իւր զօրութեամբ վճռոյ իրաւարարաց, պակա-
“ սեաց նմա այնուհետեւ նիւթ. քանզի չափաւորութիւն
“ կենաց՝ մեռելութիւն իմն է նմա համարեալ, վասն այսորիկ
“ խոյս եւս ի տեղւոջէս, զի մոլորութիւն մտաց Նորա չկարէր
“ տանել այնմ :

“ Երկրորդ, պարտաւորեալ Նորա հատուցանել եղբօր իւ-
“ րում 600,000 ռուփի՝ զրաժին ժառանգութեան Նորա
“ 400,000 ռուփի յառաջագոյն հատոյց, և վասն մնացելոյն
“ մերհակ պարտականութեան եւ նմա՝ զկնի երկուց ամաց
“ ժամանակի հատուցանելոյ. և քանզի չկարէր, կամ պար-
“ տարար տալ՝ չկամէր այլ եւս պակասեցուցանել զնիւթ
“ խնամեչութեան իւրոյ, խոյս եւս տայր, զի մի՛ պարտաւո-
“ րեսցի հատուցանել զայն :

“ Երրորդ և գլխաւոր պատճառն է, զի տեսեալ Նորա թէ
“ ոչ միայն ի դերեւ ել անմիտ և անօրէն խորհուրդ ձեռնար-
“ կութեան իւրեանց՝ յափշտակելոյ ի ձեռաց Միսրանու-
“ թեանդ զարդար իրաւունս աղքատաց ազգիս, այլ և տուա-
“ գեաց և գիտաց անշուշտ թէ բան արժանի գործոց իւրեանց
“ անհրաժեշտ պարտք էին և զվաշխ դրամագլխոյ նորին հա-
“ տուցանել, վասն այնորիկ անապարեաց գիմել այդր առ
“ միսրանութիւնդ, և ի գթութիւն ձեր ապաւանեալ՝ դար-
“ ձուցանել ի պէտս իւր՝ եթէ ոչ զրոմանգակն, գոնէ զմեծ
“ մասն վաշխի դրամագլխոյն հրամայեն ազատութեան : Եւ
“ վասն այնորիկ եւս նա պատասխանի թղթոյ ընդհանրական
“ փաստաբանին Սոնենխա՝ թէ յօժար և պատրաստ է ինքն
“ հատուցանել զվաշխ հրամայեն ազատութեան :

«Եւ ոչ այլոյի միայն, այլ և երկու առաքեալք յառաջ
«քան զմեկնել իւր սուրբ յայտարարութիւն կամաց
«իւրոց, կամ իրաւարանական հրամարակութիւն՝ թէ զա-
«մենայն ինչ որ ի խնդիրս հրիտակի ողորմութեան՝ թողեալ
«է ինքն ի կամս և յորոշումն Աստենիս, հրաժարելով յա-
«մենայն վիճոյ և ի պահանջմանց, և թէ ինքն չէ ամե-
«նեւին համակամ և հաղորդ ընդ եղբօր իւրում յայն խրն-
«դիր. վասն որոյ եթէ եղբայր իւր Յովհաննէս Մարտաս վի-
«ճեցէ կամ բարկեցէ յԵւրոպ ընդդէմ վճռոյ Աստենիս,
«նա միայն է պատասխանատու և պարտապան հատուցանել
«զամենայն ծախս օրինաց, և ոչ ինքն։

«Զայս գրաւոր յայտարարութիւն եցոյց մեզ Եդուարդ,
«և ասաց թէ պարտ էր յերկուս օրինակս առնել զայն. ըն-
«միանալ եղբօր իւրում, զերկրորդն տալ Վայվաշի, որպէս
«զի եթէ եղբայր իւր ոչ ի վեր հանիցէ զայն, խառնելով և
«զինքն ի վէճս, Վայվաշ զիւրն ցուցցէ Աստենիս։ Եւ վասն
«առաւել եւս յապահովութեան նորին և հաւատարմութեան
«իւրոյ տա ձեզ, խոստացաւ տալ ի ձեռս Վերապատուելի
«Հ. Սարգսի և երրորդ օրինակ մի՝ ուղղեալ տա նա զայն
«առանձինն գրով, խնդրելով ի նմանէ ներումն վասն ամենայն
«անցեալն անցելոց, և աղօթս վասն ճանապարհի իւրոյ։

«Սակայն չգտաք մեք բնաւ ուղղութիւն ի գործս նորա և
«ոչ հաստատութիւն ի խոստմունս նորա, այլ յամենայնի
«խորամանգութիւն, բոլորովին մեղմեխութիւն։ Փանդի
«թէպէտ և արարեալ էր նորա այսպիսի յայտարարութիւն,
«բայց տա ի պահել զյոյս անարգ շահախրութեան իւրոյ
«յերկոսին կողմանս՝ թողեալ էր զայն թէութեամբ, այս-
«ինքն եթէ յաջողէր եղբօրն ի խնդիրս՝ թաքուցանել զյայ-
«տարարութիւն իւր. իսկ եթէ ձեզ յաջողէր յայնմ, յայտ-
«նել զայն. որպէս զի կարող լինիցի յայնժամ զիմել առ
«միապետութիւնդ և խնդրել ի Զէնջ զշնորհան։

«Զայս անմիտ խորհուրդ նորա մեք յառաջագոյն դուշա-
«կեալ իսկ էաք, բայց յելից իրացն և ի բանից Յովհաննու
«Մարտայոյ հաստատեցաք ի միտս։ Եւ ի ոչն յայտնեալս

«տակ խնդրեաց նա ի Վերապատուելի Հայր Սարգսէ զիր
«յանձնարարութեան վասն իւր առ Արքիեպիսկոպոսութիւնդ ։
«Խոստացաւ վարդապետն հաճել զկամն նորա, և զրեաց
«զայն յոյժ վայելուչ և պատշաճ ըստ իւրում բարեմաս-
«թեան և անխախտել բարուոյն. բայց տեսեալ մեր զանհաս-
«տատութիւնն ի խոստմանս իւր, անարժան համարեցաք
«տալ ի ձեռս նորա զայն զիր յանձնարարութեան, մինա-
«ւանդ վասն վերջին աւուրց անպատեհ գործոց նորա և
«անարդ վարուցն ։

«Զներկ ինձ սուղ ժամս զրոմանդակն ներարգրել ձեզ
«անցս, այլ այսչափ միայն ծանուցից, զի յաւուր երանելոյ
«նորա ի նաւն՝ հրամանագիր կայր ի վերայ նորա յԱնանկս
«անհնարին խստութեամբ, կամ զյանիշատակարան յայլոց
«ի տեարսն իւրեանց գործուցանել, և կամ թէ ոչ՝ ի բանս
«մտանել. վասն որոյ պարտաւորեցաք մեք, ես և եղբայր
«նորա, ի պահել զամենայն ինչ պատիւ տանն նոցա, մինա-
«ւանձին նորա երաշխաւոր կալ, և միւսն պարտուց նորա ։
«Թերեւս անհաւատ թուիցին ձեզ բանքս, այլ ճշմարիտ են
«և ոչրոց արժանի գործք, թէպէտ և ամենայն ինչ արդա-
«րութեամբ և ըստ արժանեաց ։

«Զայսոսիկ կարեւոր և հարկ համարեցայ ծանուցանել
«Արքիեպիսկոպոսութեանդ. զի եթէ հանդիպեսցի նա այդր,
«դիտաւորեալ ընդ ոմն և ուրեմն պարտիմք վարել, և թէ
«քանի՛ դժուարութիւնք պէտք են ձեզ ։

«Գերապայծառ Տէրութեանդ Ձերում

«Ի Մարսա. 25 փետր. 1832.

«Ամենախոնարհ ծառայ և մտերիմ բարեկամ

«ԱԲՐԱՀԱՄ Յ. ԱՂԱՆՈՒՐ. »

ԳԼՈՒԽ ԼԲ.

Յորինուելն դպրոցական իրաւախոհուրդեան ի ձեռն Պ. Յովհաննու Մուրատոյ. — Բաղդ և գրոյցք. Հ. Սարգսի ընդ նմա վասն վաշխի և վասն գործադրութեան հրամանի դպրոցին. — Յեսկար ընդունելութեան 100,000 ռուբլոյ՝ առեալ ի Հայր Սարգսէ. — Օրինակ Դպրոցական իրաւախոհուրդեան որ յ31 մարտի 1832. — Ամուսնական աւարտուելն խնդրոյն և խաղաղութեան ընդ Հ. Սարգիս և ընդ Մուրատեանսն.

Զկնի վերոյիշեալ յայտարարութեանն բարեկրոն յԵրուսաղէմ, անցին աւուրք երիք և ոչ հանդիպեցաւ Հ. Սարգիս Յովհաննու Մուրատոյ։ Առաքէ նա զԿռապէտ առ Հայր Սարգիս՝ հարցանել զպատճառն։ Եւ նա ասէ զայն։ Ի միոջէ անդր գարձեալ առաքէ Յովհաննէս Մուրատ զԿռապէտ առ Հայր Սարգիս՝ հանդերձ հաստատութեամբ որդորացուցանելոյ զանձն յայն զնացս իւր. և էր առմամբ Ամենապրին դրեալ առ Վարիչս յորում ասէր։

«Եթէ ունի Յովհաննէս Մուրատ կամս բաղդելոյ յԵրուսաղէմ, «զարմանալի է նմա փութալ. քանզի չկարեմ ես յապացել առ «Հ. Սարգսի զմիտս. խնդրոյն՝ ասելի քան զերկուս աւուրս «եւս։ Վասն այնորիկ արարեալ էր իմ զյայտարարութիւնն «զայն՝ առ ի շահել միոյն ժամանակ աւուրանոյ ընդ նմա «զրանն, և ոչ թէ միաս ունէի բաղդելոյ յԵրուսաղէմ. այլ «զկնի աւարտման բանին յետս կոչեցից զայն յայտարա- «րութիւն. վասն որոյ խնդրեմ տեսանել զնա՝ ի հաստատու- «մացուցանել նմա զուղղութիւն մտաց իմոց։»

Խնդայ յայնժամ Հ. Սարգիս զիրարամանգութիւն Ամենապրին, որ կամէր ընդ բաղդաւորն՝ ասելով անտարակոյս մեծ,

ի հաստատել անդ զրոխանգակ հաւատս խնդրոյն յերկուց կողմանց։

Հանդիպեալ Հ. Սարգսի Պ. Յովհաննու Մուրատայ, ասէ տա ցնա ժպտելով։ «Ընդէ՞ր ընդհատեցեր զերթեւեկելդ։»

Ասէ ցնա Հ. Սարգիս։ «Վասն զի փակեցեր ինձ զդրունս «տան քո։»

Սկսանի յայնժամ Յովհաննէս Մուրատ արդարացուցանել զանձն՝ երկրորդելով զվերոյիշեալ պատճառն, և երդմամբ հաստատեալով նմա զանկեղծութիւն իւր։

Ասէ ցնա Հ. Սարգիս։ «Եւ դու հաստատ ինձ Պարոն, զի «չունիմ ես բնաւ երկիւղ ի բողոքելոյ քոյ առ Ասեանն ի Լան- «տան. և եթէ ունիմ, այն վասն քո է միայն. քանզի զիտեմ «հաստատեալ թէ ի վերս քո եղիցի և ի քանդումն տանդ. «ուստի չկայ հարկաւորութիւն երդմամբ հաստատելոյ։ «Թեանդ առ իս, այլ գործոյ, և արդիւնաւոր գործոյ. արա՛ «զոր արժանն է։»

Արդարացուցեալ Յովհաննու Մուրատայ զրան Հ. Սարգսի, շնորհակալ լինի զրարութենէ նորա։

Յետ այլոց եւս քանի մի խօսից ցուցանէ Յովհաննէս Մուրատ Հ. Սարգսի զնորոդ յօրինեալ դաշնադիրն, և ասէ ցնա գնել զայն և ասել զկարծիս իւր ընդ այն համարձակ։ Ընթերցեալ Հ. Սարգսի զդաշնադիրն զայն, տեսանէ զի պահէ անդ տակաւին Յովհաննէս Մուրատ զկարծեցեալ իրաւունս իւրեանց։ Յայնժամ ասէ ցնա Հ. Սարգիս յայտնապէս։ «Կա- «րիցե՞մ ես ընդունել զդաշնադիրս զայս որ ընդդէմ է վճռոյ «բարձրագոյն Ատենին։»

Ասէ ցնա Յովհաննէս Մուրատ։ «Զի՞ փոյթ է մեզ զվճռոյ «բարձրագոյն Ատենին. վասն զի ստորեալոյ մեր զվէճս՝ հար- «կաւոր է մեզ դաշնադիր։»

Ասէ ցնա Հ. Սարգիս։ «Ոչ այդպէս, Պարոն, ներեսջիր «ինձ, վէճն մեր ընդ ձեզ վասն դրամոգլխոյ հրամանին «զորմնութեան և վասն բանի կարգաւորութեան զգրաստնին «աստուծոյ է վճռով բարձրագոյն Ատենին, և զայն արդ- «տիմք հաստատուն պահել. իսկ եթէ կայ ինչ մեզ տակաւին

“ ուստուկի, է խնդիրն որ վասն վաշխի գրամագլխոյ հրի-
“ տակին ողորմութեան, զոր խնայելով իմ ի ձեզ՝ թողի
“ ի կամս քս, և զոր խոստացար հատուցանել այնչափ որչափ
“ հաճեցար. ուստի գաշնագիրն մեր վասն այնր պարտի մի-
“ այն լինել։ Եւ եթէ չկայ մեզ փոյթ զքեզոյ Անենին, ապա
“ առ ինչ զամս հինգ զանձինս մեր ի գրուանս Անենին մաշե-
“ ցաք, և այնչափ արծաթ ընդ այն ծախեցաք։ ”

Ասէ ցնա Յովհաննէս Մուրատ; “ Անիրաւ համարիմ ես
“ զայն վճիռ Անենին. քանզի անիրաւութիւն է զրկել զկատ-
“ կատարան յիրաւանց խառնելոյ ի գործ հրիտակին ողոր-
“ մութեան, և անպայման յանձնել զարծաթն ի ձեռս Մխա-
“ բանութեանդ, որ կարող է յինչ պէտս և կամիցի ծախել
“ զարծաթն զայն։ ”

Ասէ ցնա Հայր Սարգիս; “ Պատն, եթէ արդարեւ անիրաւ
“ համարիս զոր զվճիռ Անենին, և եթէ ճշմարտութեամբ
“ արդեւ կատկածես զհաւատարմութենէ Մխարանութեանս,
“ ես ինքն խրատ տամ քեզ բաղդել յԵւրոպ, զի յաջողելով
“ յաջողեսցի քեզ այն։ Իսկ եթէ զհակառակն ճանաչես,
“ որպէս և ամենայն աշխարհ ճանաչէ, այլ միայն ի կրկին
“ շարժեալ՝ կամիս հակառակիլ, զգոյշ լեր, զուցէ քանզե-
“ լով դանդեսցիս. զի անիրաւութեամբ խրատուն զտանել ոչ
“ է մարթ, և բարկութիւն մարդոյ զարդարութիւնն Աստու-
“ ծոյ ոչ գործէ։ ”

Առ այս բան Հ. Սարգսի ոչ տայ ինչ պատասխանի Յով-
հաննէս Մուրատ, այլ միայն բան ասէր թերեւս մեր
տատանի անձամբն անդադար։ Հարցանէ ցնոսա Կռամիէ,
քանզի անդ զտանի նա ի ժամուն, թէ առ ինչ իցէ վիճաբա-
նութիւն նոցա ընդ միմեանս. և նոքա պատմեն նմա։ Ասէ;
“ Զկամիմ ես առ չնորհուկս ինչ խօսել, այլ որ ինչ արդարն
“ է։ Մխայիս դու, Պ. Մուրատ, ոչ ինչ համարելովդ զվճիռ
“ բարձրագոյն Անենին. քանզի ոչ ոք կարէ արհամարհել
“ զայն, և ոչ թագաւորն Անգլիացւոց, յոյժամ բան օրի-
“ նաց է առեալ այն արքէս և այս վճիռ։ Գործառնութիւն
“ ձեր այժմ՝ բան խնամ կարծեաց և զիւութեանս՝ է իրա-

«ասեմ լինել վասն վաշխի հրամանին ողորմութեան, զոր «արդէն արարեալ և ընդ որ հաւանեալ էք. պարտիք ըստ «այնմ և զգաստագիր ձեր առնել և տարածել զրանն. ընդէ՞ր «ի զուր ինձէք և ժամանակս մեզ մի՛ մինչև։ »

Դիմաքեալ Յովհաննես Մարտոյ ընդ անաչառութիւն բանից Կամբիզի՝ ասէ ցնա ցասմամբ; «Տեարդ ունիմ, Պա«տրոն, բարեխառնութեանդ, և արդարեմ՝ մի՛ ես խառնիցես «ի բան իմ. զի եթէ արարուածոցդ ես հաստատանիս զ«զամենայն վաշխ զրամոցդ հրամանին, հաստատից «զայն. արդէն խառատցեալ եմ տալ ընդ այն 100,000 ռուբ«լի. տայ և զմնացեալ 300,000 ռուբլին, թէպէտ և ար«քունացայց։ Սակայն չկամիմ երբէք անարգ երեալ, և «ի խղճէ մատաց տալ։ Ո՞չ ապաքէն նախատինք են մեզ «և անդեմութիւն խիղճ մատաց, վասն գործոյ ողորմութեան «այսչափ մեծ գումար արծաթոյ հատուցանել, և չունել «իրաւունս խառնելոյ յոյն գործ և գործաւորոյ իրաւանց «ազգաւոյ ազգին, զոր իրաւունք ժառանգաց և պարտք «նրրոգան պաշտանն կուսակալաստրութեան մերոյ պա«հանջէ։ Ահա այս է գործ արդարութեան Աստուծոյ, զոր «դուք անարդարանալի կարծէք, և զարհամարհող նորին սխալ «դատէք։ »

Ասէ ցնա Հ. Սարգիս; «Հանդարտեաց, Պարոն, հանդար«տեաց։ մի՛ ծանր թուեցցին քեզ անաչառ բանք Պարոն «Կամբիզի, և մի՛ քաղցրութիւնն պատճառ խառութեան քեզ «լիցի։ Աստ ինձ ազատեմ. այդու գիտակցութեամբ մատցդ «հանդարտիցես դա թէ Մխիթարութիւնս վարի յոյս գործ «արդարան ընդդեմ գիտաւորութեան հանդուցեալ հօր ձե«բոյ բարեբարի ազգիս։ »

Ասէ ցնա Յովհաննէս Մարտոյ; «Ես զայդ ոչ կարծեմ։ »

Ասէ ցնա Հայր Սարգիս; «Եթէ այդպէս է, ապա զինչ «մեայ չեզ զգուշութեան և խղճի մատաց վասն իրաւանց ազ«քատաց ազգին։ »

Ասէ ցնա Յովհաննէս Մարտոյ։ «Ես այսպէս հաստատեմ, «քանզի հանդուչեմ զՄխիթարութիւնդ հաստատիմ անձինս-

«այլ բանք իմ զգաստութեան են և զվնասս նոցա. ուստի ճա-
«նաչեն նոքա զՄխիթարութիւնդ նոյնպէս, զի առանց ինչ
«պայմանի և բացարձակ յանձնեցին նմա զարծաթ հրեշտա-
«կին ողորմութեան։»

Ասէ ցնա Հ. Սարգիս; «Ներեցի՛ս համարձակութեանս,
«Պարոն. և զինչ հաւատարմութիւն տեսին նոքա ի ձեզ
«զոմն վերչուտան ի սրբազան պաշտաման ձերում, զի հա-
«ւատային կամ գործակից զձեզ այնմ առնելին։ Ա՞յլ ապա-
«քէն զնացք ձեր են պատճառք չխառնելոյ նոցա զձեզ
«յայն, և անպայման զարծաթն ի ձեռս Մխիթարութեանս
«յանձնելոյ։ Վասն որոյ ոչ նոցա, այլ ձեզ պարտքն մեղադ-
«րել։ Եւ համարիցին այլք զդադարումն վերոյ և
«զխոզաղութեանն աւարառումն բանին՝ ձեզ ի գործ անարա-
«գութեան։ Ա՛յլ զոք կարծեմ ի միտս ունողաց, բաց ի թըշ-
«նամեաց ոմանց խաղաղութեան, յորոց զրդեալք արարէք
«ձեզ վնաս և յաւելիք նախատինս։

«Իսկ այն զոր ասես՝ թէ արդէն 100,000 ռուբլի խոստա-
«ցեալ ես տալ, և եթէ պարտաւորիցիս՝ տացես և զմնա-
«ցեալ 300,000 ռուբլին, ասեմ քեզ, Պարոն, զի սխալիս
«ի հաշիւդ։ Քանզի ոչ թէ 400,000 ռուբլի է բոլոնեզակ
«վաշխ դրամոցդ հրեշտակին, այլ 600,000 և առաւել,
«որպէս յայտնի երևի ի հաշուեմատեանէ ձերում։ Թէպէտ
«և տեղորդ էր ինձ զայս քեզ յուշ առնել, որպէսզի թո-
«ղեալ եմ վիճեցամ զայն ի կամս քո, այլ զդուշացուցանե-
«լոյ ողորմս տացի, զի մի բան հաշուիդ թերեւ ինչ զայն
«համարեալ՝ արհամարհեցես զվրդովութեամբ աւար-
«առումն բանին։»

Ասէ ցնա Յովհաննէս Մուրատ; «Զկարծեմ եւ թէ
«Աստուն այնչափ խառութեամբ պահանջեցէ ի մէնջ ըզ-
«վաշխ հրեշտակին։»

Ասէ ցնա Հ. Սարգիս; «Ամենայն խառութեամբ, մանա-
«ւանդ վասն յանդգնութեան ձերոյ, զի կամիք ընդդէմ նա-
«ս յԵրուսաղեմ բողոքել։»

Յաղթահարեալ Յովհաննու Մուրատայ ի բանից Հ. Սարգսի,

զինչանի ի խառուԹենէ անտի իւրմէ, և սկսանի ըստ սովորուԹեան զաւարտումն բանին խնդրել։

Ասէ ցնա Հայր Սարգիս վարդապետ; Պարոն, անհնարին է մեզ աւարտել զբանս՝ մինչեւ որոշեալ իցեմք ըստ նիւթ դաշնադրին, ըստ ուղիղ և քաջ ծանուցեալ վիճակի մերոյ և հանգամանաց իրացն՝ յորս կամք մեք այսր, և ըստ նպատակին՝ որում ցանկամք հասանել, ի բաց թողով զամենայն կարծեցեալ իրաւունս և զպահանջանս մեր։ »

Խնդրեալ Յովհաննու Մուրատայ զմիտս Հ. Սարգսի Թէոդորեան՝ ասէ ցնա; « Բարի է, քեզ Թողում յօրինել զդաշնադրին որպէս և գիտես։ »

Ասէ ցնա Հ. Սարգիս; « Եթէ ինձ էիր Թողեալ զայն յառաջագոյն, վաղուց եւս աւարտեալ էր բանն. կա՛ զդրիչդ և գրեա՛ զոր ասացիս։ »

Գրէ Յովհաննէս Մուրատ զասացեալն Հ. Սարգսի իրրեւ ի կէս ժամու. և իրրեւ գաղարէ Հ. Սարգիս, հարցանէ ցնա Յովհաննէս Մուրատ, « Այսպիսի՞ և այսչափ միա՞յն լիցի դաշնադիրն մեր ընդ միմեանս։ »

« Այո՛ ասէ Հ. Սարգիս. զի գործառնութիւն մեր այսպիսի և այսչափ ինչ միայն պահանջէ. մնայ յաւելուլ անդր զմնարիսանն ազատութեան, և զայն քեզ Թողում, ասէ. որչափ ընդարձակ և հատատուն կամք իցեն քեզ առնել զայն, ոչ ինչ ընդդիմանամ քեզ, միայն գիտութիւն հայիցն բաւիցն որ ի նմին՝ ուղեցիս զկնիս։ »

Ընթերցեալ Յովհաննու Մուրատայ մատդրութեամբ զգրուածն զայն, և կացեալ վայրկեանս ինչ՝ ասէ; « Ժամանակի պէտք են ինձ ի խորհել ընդ այս։ »

Ասէ ցնա Հ. Սարգիս; « Ի կողմանէ իմմէ չկայ ինչ ասելոն, խորհեսջիր որչափ և կամիցիս. միայն գիտասջիր զի բաց յայսմանէ զայլ դաշնադիր չկարեմ ես ընդունել իրրէ։ »

Զկնի քանի մի վայրկենից ասէ Յովհաննէս Մուրատ ցՀայր Սարգիս; « Վերապատուելի Հայր, տեսանեմ ես զի միտք իմ

«Ի վախճանի միաբան գոռանին ընդ մեռաց քոց միշտ. ահա «Ի գիշերի ելն ի միտս իմ յօրինելայլ գաշնագիր մի համառօտ, «և գրեալ պահեցի զայն. տես, զիարդ համաձայն է ընդ «քոյումդ։»

Ընթերցեալ զոյն Հ. Սարգսի, տեսանէ զայն յիրաւի նման իւրումն, և ասէ ցնա; «Պարոն, յորժամ մարդիկ առանց «չարաշահութեան խորհին և գործեն ինչ, համաձայն լինին «յամենայնի միմեանց։

«Այո՝ ասէ Յովհաննէս Մուրատ, այդպէս է, և ես զհա- «մաձայնութիւն մեր յայսմ ի Տեառնէ ճանաչեմ. վասն «որոյ հաճեալ և բաւականացեալ եմ ընդ զրութիւնդ այդ. «յաւելցուք ի դոյն զմարդհակն ազատութեան, և տարտա- «ցուք զրանն վաղվաղակի։»

Յետ երկուց աւուրց յաւելեալ Յովհաննու Մուրատի ի գաշ- նագիրն զմարդհակն ազատութեան, ասէ Հ. Սարգսի՝ գնել զայն և արբագրել զհայերէն բառն որք ինքին։ Տեսեալ Հայր Սարգսի թէ կարօտի զրուածն բազում ուղղութեան և ժա- մանակի, խնդրէ ի Յովհաննէ Մուրատայ առնել զայն ի բնա- կութեան իւրում առանձինն. բայց նա քանզի երկմտութեամբ վարէր յամենայնի իրրև երկրորդ բնութեամբ, կասկածէ ասել ի ձեռս նորա զգրուած իւր. վասն որոյ պարտաւորի Հ. Սարգիս առնուլ զգաղափար նորին ի տան անդ Յովհաննու Մուրատայ։

Զաւուրս երիս աշխատեալ Հ. Սարգսի հազիւ կարէ արբագ- րել և ի կարգի դնել զգրուածն Յովհաննու Մուրատայ. քանզի բազում էին ի նմա կրկնութիւնք բանից և խորթու- թիւնք բառից. թէպէտ և կարօղ էր համառօտել զայն և զկարեւորն հարազատ բառիւք նորոդ յօրինել, այլ ճանա- չելով զկասկածոտ միտս Յովհաննու Մուրատայ՝ չանայ պա- հել զրոմանդակն, և միանգամայն իմանալի և կարգաւոր առնել զրանս գրուածոյն։ Սակայն չլինի այնու վախճան աշ- խատութեան նորա, այլ դարձեալ յերկարաձգի զաւուրս քան, քանզի բան կասկածոտ մտաց իւրոց առնէ ինքին անդադար փոփոխութիւնս բառից և բանից, մինչև վատակել

և նմին իսկ Պ. Ազանուրի յորինակել զայն յատակ գրով երկոցս և երիցս ,

Այլ թէպէտ և ի 26 մարտի 1832 պատրաստ էր նորոգ դաշնագիրն, այլ չկամէր Յովհաննէս Մուրատ հաստատել զայն՝ աւելորդապաշտ իմն կարծեաց. վասն որոյ խորհէր՝ թէ առաջին դաշնագիրն ինքն ամենայն և ինքն առաջ հաստատեալ էր, և ձախող ելից պատահեալ. վասն այնորիկ կամէր զթիւ առաջն փոխել։ Եւ յանել Հ. Սարգսի զաւելչատարար՝ թէ բարեաց լեցի յ31 մարտի հաստատել զայն ; Քանզի վախճան է, ասէ, մարտիս մերոյ ; հաւանի Յովհաննէս Մուրատ ընդ խորհրդածութիւն նորա։ Եւ իբրեւ հասանէ ամանեալ օրն, 31 մարտի 1832 ամի, կոչէ Յովհաննէս Մուրատ զՀայր Սարգիս ի գործատուն իւր ի Մարաս, առ ի հաստատել զնորոգ դաշնագիր իւրեանց հրապարակաւ առաջի վկայից, և խնդրէ ի նմանէ ածել ընդ իւր զԱբրահամ Ազանուր և զՅովհաննէս Շէրիման, լինել նոցա ի վկայս ի կողմանէ իւրմէ։

Գնացեալ Հ. Սարգսի անդր բան ժամադրութեանն ի վերատան ժամու առաւ, գտանէ առ Յովհաննու Մուրատայ և այլ երկու վկայս ի կողմանէ նորա, զԱտուածատուր Յարութիւն և զԱՒետ Շէ. խոր. որոց յանդիման հատուցանէ նոցա Յովհաննէս Մուրատ Հայր Սարգսի զիրատացեալ գումար արծաթոյն 100,000 Մարատաս ռուսի, և առնու ի նմանէ յետկար ընդունելութեան առանձինն. քանզի ոչ կամի Յովհաննէս Մուրատ յիշատակել զայն արծաթ յընդհանուր մուրհակին ազատութեան՝ որ ի նորոգ դաշնագրի նոցա, զդուշացեալ բան կարծեաց իւրոց ի Նորթքնէ յընդհանրական փատաքանէ. զի եթէ զեպ լինիցի նմա քննել զդաշնագիրն, մի՛ տեսցէ անդ զգումարն զայն, և անտի նիւթ առեալ շարշարիցէ զնա՝ իբրեւ ասկա՛ւ ինչ հատուցեալ ի վաշխ գրամագլխոյ հրամային։

Այս կարծիք Յովհաննու Մուրատայ թէպէտ և ստոյգ էր, բայց տեսեալ Հ. Սարգսի զի զայն այնպէս կամի, և զի չկայր ինչ անտի ելեալ վիրաւորութեանն, այլ մանաւանդ օգուտ,

զի չյիշատակէր անդ բնաւ՝ թէ այնչափ ինչ արծաթ տուս-
ցեալ է իրաւախոհութեամբ, վասն որոյ թաղու նա զայն
ի կամս նորա, այնպէս հատուցանել և տալ նմա յեւակար ընդ-
գունելութեան։ Եւ տայ Յովհաննէս Մուրատ Հ. Սարգսի
յեւակար տուչութեան արծաթոյն այնարիկ և տա նմա, ըստ
հետեւեալ օրինակացդ։

„ Եւ ներքոյ գրեալս յայտ առնեմ, զի ըստ զօրութեան
„ դաշանցս իրաւախոհութեան և մուրհակի ազատութեան
„ այսօր հատուցեալ ի մէնջ, ընկալայ և տացայ յԱղայ
„ Յովհաննէս Սամուէլ Մուրատեանէ ի միայնակ կուսակցա-
„ տարէ հանգուցեալ Աղայ Սամուէլ Մկրտիչ Մուրատեանի
„ ի Մատրաս, ի կողմանէ իւրմէ, և ի կողմանէ Աղայ Եդուարդ
„ Սամուէլ Մուրատեանի կուսակատարակցի իւրոյ, այժմ
„ ի բացեայ եղելոյ տատի, զգումար մի հարիւր հազար (100,000)
„ Մատրաս ռուփիս։ Ի Մատրաս, յերեւան և միերբորդում
„ առեալ տեղոյս մարտի, յամի Տեառն հազար ութ հարիւր
„ երեսուն և երկու, 1832։

„ Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈՒՄՐԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ

„ Անդամ և օրինաւոր գործակալ Մխիթարեանց
„ միաբանութեան ի Վենետիկ։ „

„ Եւ ներքոյ գրեալս՝ միայնակ կուսակատար հանգուցեալ
„ Հօր իմոյ Աղայ Սամուէլ Մկրտիչ Մուրատեանի այժմ
„ ի Մատրաս, յայտ առնեմ զի ըստ զօրութեան դաշանցս
„ իրաւախոհութեան և մուրհակի ազատութեան հատուցեա-
„ լոյ ի մէնջ, այսօր ի կողմանէ իմմէ, և ի կողմանէ Աղայ
„ Եդուարդ Սամուէլ Մուրատեանի կուսակատարակցի ի-
„ մոյ, հատուցի Վերապատուելի Հայր Սարգիս Թէոդորեան
„ վարդապետի օրինաւոր գործակալի Մխիթարեան միաբա-
„ նութեան որ ի Վենետիկ, զգումար մի հարիւր հազար
„ 100 000 Մատրաս ռուփիս իբրեւ վաշխ կամ տոկոսի դրա-

„ մոգկոյ հրամակին ողջմտութեան, որ ի վերջերոյդ հաս-
„ ուած կոտակի հանգուցեալ Հօր իմոյ։

„ Ի Մարտա. 31 մարտի 1832.

„ ՅՈՎՀԱՆՆԷՍ Ս. ՄՈՒՐԱՏԵԱՆ.„

Ապա հաստատեն և սան միմեանց առաջի վկայից զնորոգ դաշնագիրն իւրեանց, որ ունի օրինակ զայս.

„ Արդ Աղայ Յովհաննէս Սամուէլ Մուրատեան՝ իրրեւ մի
„ ի կոտակատարաց հանգուցեալ Հօր իւրոյ Աղայ Սամուէլ
„ Մկրտչի Մուրատեանի, և իրրեւ միայնակ կոտակատար
„ զոլով այժմ ի Մարտա, կամեցեալ դադարեցուցանել
„ զամենայն վէճ և խռովութիւն, և միանգամայն խափանել
„ զայլ ամենայն ինչս, և զծախս օրինաց, մոգիւր և
„ ազատ կամօք հաճելով հաւանելով, և հաստատելս
„ խոստացաւ հպատակելով վճռոյ բարձրագոյն Ատենիս որ
„ ի 10 փետրուարի 1832, արգելուլ խափանել և յետս կոչել
„ զառաջադրեալ և գյայտարարեալ բոլոր իւր յԵրդոյ
„ ի Գերագահ Ատեանն Թագաւորին Անգլիոյ, և չմիջել այլ
„ եւս, ոչ ատ ի Մարտա և ոչ ի Վենետիկ և կամ այլ
„ ուրեք, վասն բանից և խնդրոյ հրամանի ողջմտութեան որ
„ ի վերջերոյդ հաստատեալ կոտակի հանգուցեալ Հօր իւրոյ Աղայ
„ Սամուէլ Մկրտչի Մուրատեանի։

„ Եւ արդ՝ Հայր Սարգիս Թէոդորեան վարդապետ, իրրեւ
„ անդամ և օրինաւոր գործակալ Մխիթարեան միաբանու-
„ թեան ի Վենետիկ, ցանկացեալ նոյնպէս դադարեցուցա-
„ նել զամենայն վէճ և խռովութիւն, և միանգամայն խա-
„ փանել զայլ ամենայն ինչս, և զծախս օրինաց, մոգիւր
„ և ազատ կամօք հաճելով հաւանելով, և հաստատելս
„ խոստացաւ զալ յիրաւախոհութիւն ընդ Աղայ Յովհան-
„ նէս Սամուէլ Մուրատեանի, միայնակ կոտակատարի
„ այժմ եղելոյ ի Մարտա, ի կողմանէ իւրմէ և ի կողմանէ
„ եղբօր իւրոյ Աղայ Եղուարդ Սամուէլ Մուրատեանի՝ վասն

„ վաշխի կամ տոկոսաց դրամագլխոյ Հրիտակի ողորմա-
„ թեան, և յետս կոչել զգանգատագիր իւր յառենէս՝ զմա-
„ տուցեալն յամսեան յունուարի 1829 վասն նոյն վաշխի
„ կամ տոկոսաց։

„ Եւ քանզի վերոյիշեալ Հ. Սարգիս Թէոդորեան վարդա-
„ պետն ունելով ի ձեռին իւրում զիր գործակալութեան
„ տուեալ և հաստատեալ յԱրքեպիսկոպոսէ և ընդհանրա-
„ կան Արքայէ Մխիթարեան միաբանութեան ի Վենետիկ որ
„ ի 22 դեկտեմբերի 1828, և որ ընկալեալ և հրատարակեալ
„ ատ յԱռենէս ի 10 փետրուարի 1832, իբրև արժանին-
„ կալ և օրինաւոր զիր գործակալութեան, և յորում ասյ
„ նմա Արքեպիսկոպոսն լիուլի և բացարձակ իշխանութիւն
„ ընդ այլ իրաց և զայս ոյսա բանիւք;

„ — Դարձեալ ասմ իշխանութիւն նմին միոյ գործակա-
„ լիս խորհելոյ և խօսելոյ ընդ կառավարատացն վասն հիմ-
„ նարկութեան դպրատանն, որպէս նմին պատշաճ թուիցի,
„ և յառնուլ զհրիտակն դրամանգակ կամ զմասն ինչ նո-
„ ցա՝ յանուն իմ և Միաբանութեան իմոյ ատցէ մուրհակ
„ ընդունելոյ նոյն գործակալն իմ և Միաբանութեան իմոյ՝
„ որպէս պատշաճ գտանցի. նոյնպէս կարգատցի հաստա-
„ տել յանուն իմ և Միաբանութեան իմոյ զամենայն գաչն
„ և զամենայն իրաւախոհութիւն տրտրեալ յառաջագոյն
„ ի նմին գործակալէն միոմէ ընդ կառավարատարն ամենե-
„ սին կամ ընդ ոմանս ի նոցանէ վասն ատացեալ հրիտակին
„ կամ բոմանդակարար և կամ ըստ մասին, կամ վերատին
„ իրաւախոհ լինել յանուն իմ և յանուն Միաբանութեանս
„ ընդ կառավարատարացն վասն բոմանդակ հրիտակին կամ
„ մասին ինչ նորա։ „ —

„ Վասն որոյ նոյն Հ. Սարգիս Թէոդորեան վարդապետն,
„ իբրև անդամ և օրինաւոր գործակալ Միխիթարեան միա-
„ բանութեան ի Վենետիկ, և նոյն Աղայ Յովհաննէս Սա-
„ մուէլ Մարտաեան, իբրև միայնակ կառավարատար հան-
„ դուցեալ Աղա Սամուէլ Մկրտիչ Մարտաեանի ի Մարդա,
„ (ի կողմանէ իւրմէ, և ի կողմանէ Աղայ Հեզասարդ Սամուէլ

“ Մարտիանի կուսակրաստարակցի իբրոյ այժմ ի բոլոյոյ
“ երկրոյ ասոի,) մուտքիւբ և ազատ կամաք, հանիսիսն և
“ միտրան հաստատեալ նոցն նիկին և մոին յիրաւասուութիւն
“ ինչ և ի վերջին ատարանն ամենայն բանից՝ իրաց և խնդ-
“ բոց՝ պատկանելոց հրիտակին ուղղութեան հանդուցեալ
“ Աղայ Սամուէլ Մկրտիչ Մարտիանի, որ ի վերոգրեալ հաս-
“ տատ կուսակի Նորա ընդհանրապէս, վասն գրամոդիսոյ
“ հրիտակի ուղղութեան, և վասն վաշխի կամ տոկոսաց
“ Նորա։

“ Արդ՝ վասն նախատացեալ պատճառաց և դիտմանց, և
“ վասն իրաւասուութեան և վերջին ատարման ամենայն
“ բանից՝ իրաց և խնդրոց վերոյիշեալ հրիտակի ուղղութ-
“ թեան, նոյն Հ. Սարգիս Թէոդորոսեան վարդապետն իրրև
“ անդամ և օրինաւոր գործակոյ Միխիթարեան միաբանու-
“ թեան ի Վենետիկ, զբաղեալ վերոյիշեալ գրոյ գործա-
“ կատարութեան իբրոյ, և յիրոյի և բոլորձակ իշխանութեամբն
“ տուեալ է նմա՝ յանուն իւր և հանօրէն Միաբանութեան
“ իբրոյ, յանուն Արքեպիսկոպոսին և ընդհանրական Ար-
“ բոյին և բոլոր անդամոց նոյն Միաբանութեան, մուտքիւբ
“ և ազատ կամաք հաճելոյս հաստատելոյս, յանձն էառ և
“ խոստացաւ Աղայ Յովհաննու Սամուէլ Մարտիանի՝ յետս
“ կոչել յԱռնէն զվերոյիշեալ գանգատագիր իւր որ ընդդէմ
“ կուսակրաստարոց հանդուցելոյն վասն վաշխի կամ տոկո-
“ սաց հրիտակի ուղղութեան։

“ Դարձեալ՝ վասն նոյն նախատացեալ պատճառաց և դիտ-
“ մանց, և վասն նոյն իրաւասուութեան և վերջին ատար-
“ ման ամենայն բանից՝ իրաց և խնդրոց նոյն հրիտակի
“ ուղղութեան և վաշխի կամ տոկոսաց նորա, նոյն Աղայ
“ Յովհաննէս Սամուէլ Մարտիան՝ իրրև միայնակ կուս-
“ կուսակրաստարոց հանդուցեալ Աղայ Սամուէլ Մկրտիչ Մարտ-
“ տիանի ի Մատրաս, մուտքիւբ և ազատ կամաք հաճելոյս
“ հաստատելոյս, յանձն էառ և խոստացաւ նոյն Հ. Սարգիս
“ Թէոդորոսեան վարդապետի՝ հրաժարիլ յամենայն ազգ
“ գանգատանաց, և թողուլ զամենայն վէճս և խռովութիւնս՝

“ յինչ և է ժամանակի, որում և իցէ պատճառաւ, և յո՛ և
“ իցէ տեղիս, յաղագս պատկանելոցն հրիտակի ողորմութեան
“ հանդուցեալ Աղայ Սամուէլ Մկրտիչ Մուրատեանի, որ
“ ի վերերորդ հատուածս կրտակի նորա։

“ Արդ՝ սիրելիք և յայտ առնեմ այս գրութիւնք, զի
“ ի նպատակ և ի փոխուն գալոյ և հատանելոյ առ արդար
“ իրաւախոհութիւն ինչ, յաղագս և ի կատարեալ ուրուանն
“ վասն ամենայն բանից՝ իրաց և ինդրոց ասացեալ հրիտակի
“ ողորմութեան ընդհանրապէս. ի նպատակ և ի փոխուն
“ գալոյ և իսկոյն խոտրուն ամենայն սիրոց և խուս-
“ թեանց, սիրոյց, և ծախուց օրինաց. ի նպատակ և
“ ի փոխուն սիրոյ հիմնարկութեան դպրոցանն վասն որ
“ և աղքատ մանկանց Աղջին Հայոց. ի նպատակ և ի փոխուն
“ պատշաճ ուրուանն ինդրոյ վաշխի կամ տոկոսաց դրա-
“ մագլխոյ նոյն հրիտակի ողորմութեան, զոր նոյն Հայր
“ Սարգիս Թէոդորոսեան վարդապետն, իբրև անդամ և
“ օրինաւոր գործակալ Մխիթարեան միաբանութեան ի Վ.ե-
“ նետիկ, ընդ նոյն Աղայ Յովհաննէս Սամուէլ Մուրատեանի,
“ իբրև միայնակ կտակատարի հանգուցեալ Աղայ Սամուէլ
“ Մկրտիչ Մուրատեանի ի Մարտս, ի կողմանէ իւրմէ և
“ ի կողմանէ Աղայ Հեղուարդ Սամուէլ Մուրատեանի կտա-
“ կատարակցի իւրոյ, ուրարեաց, և ընդ ընկալեալն շա-
“ տացաւ։

“ Վասն որոյ, նոյն Հ. Սարգիս Թէոդորոսեան վարդապետ,
“ իբրև անդամ և օրինաւոր գործակալ Մխիթարեան միա-
“ բանութեան ի Վենետիկ, յանուն ազատ և զերծ կա-
“ ցոյց՝ և ետաղ, և ազատ՝ յանուն իւր և համօրէն Մխի-
“ թարեան միաբանութեան իւրոյ, յանուն Արքեպիսկոպոսին
“ և ընդհանրական Արբոյին և բոլոր անդամոց նոյն Մխի-
“ թարեան և յաշխարհաց նոցա, միագիր և ազատ կա-
“ մաք, բոլորովին և յանուն ազատ և զերծ կացուցանէ և
“ թողու զնոյն Աղայ Հեղուարդ Սամուէլ Մուրատեան, և
“ զնոյն Աղայ Յովհաննէս Սամուէլ Մուրատեան, զժառան-
“ գս, զկտակատարս և զգործակցս նոցա, նոյնպէս և

“ զամենայն կարուածս և ասացուածս նոյն հանգուցեալ
“ Աղայ Սամուէլ Մկրտիչ Մուրատեանի, յամենայն զանգա-
“ ատեաց՝ պահանջանաց՝ հարցուածոց և համարոյ պարտուց,
“ զորս ընդդէմ նոյն Աղայ Հեղուարդայ Սամուէլ Մուրա-
“ տեանի, և նոյն Աղայ Յովհաննու Սամուէլ Մուրատեա-
“ նի, կամ ընդդէմ կարուածոց և ասացուածոց նոյն հան-
“ գուցեալ Աղայ Սամուէլ Մկրտիչ Մուրատեանի, նոյն Մխի-
“ թարեան միաբանութիւնն, յաջորդք՝ անդամք և գործա-
“ կալք նոցա ունէին յառաջագոյն, ունին այժմ, և ունիցին
“ յետ այսորիկ վասն գրամագլխոյ հրիտակի ողորմութեան որ
“ ի վերերորդ հատուածս կտակի հանգուցեալ Աղայ Սամուէլ
“ Մկրտիչ Մուրատեանի, և վասն վաշխի կամ տոկոսաց նո-
“ ցա, և վասն ամենայն պատկանելեաց նոցին ընդհանրապէս։
“ Դարձեալ վկայեն և յայտ առնեն այս գրութիւնք, զի
“ վասն նոյն վերոյասացեալ պատճառաց՝ զիտանց՝ նպա-
“ տակաց և վախճանաց՝ նոյն Աղայ Յովհաննէս Սամուէլ
“ Մուրատեան՝ իբրեւ մի ի կտակակատարաց հանգուցեալ
“ Աղայ Սամուէլ Մկրտիչ Մուրատեանի, և իբրեւ միայնակ
“ կտակակատար գրով այժմ ի Մատրաս, ի կողմանէ իւր-
“ մէ, և ի կողմանէ եղբօր իւրոյ Աղայ Հեղուարդ Սամուէլ
“ Մուրատեանի կտակակատարակցի, նոյնպէս և ի կողմանէ
“ ժառանգաց, կտակակատարաց և գործակալաց իւրեանց,
“ մտադիր և ազատ կամաք հաճեցաւ հաւանեցաւ, և հաս-
“ տատպէս խոստացաւ, և այսու բոլորովին հաճի հաւանի
“ և խոստանայ նոյն Հ. Սարգիս Թէոդորեան վարդապետի,
“ և համարիչն Մխիթարեան միաբանութեան նորա, Արքեպիս-
“ կոպոսին և ընդհանրական Արբային և բոլոր անդամոց
“ նոյն Միաբանութեան և յաջորդաց նոցա, հրաժարիլ յա-
“ մենայն ազգ զանգատանաց, և թողուլ զամենայն վէճս և
“ խռովութիւնս՝ յինչ և է ժամանակի՝ և որոմ և իցէ պատ-
“ ճառաւ և եղանակաւ, եթէ՛ ասա ի Մատրաս, և եթէ՛ յայլ
“ ամենայն ուրեք և իսկզիս, վասն նոյն հրիտակի ողորմու-
“ թեան հանգուցեալ Աղայ Սամուէլ Մկրտիչ Մուրատեանի,
“ որ ի վերերորդ հատուածս կտակի նորա, և վասն ամե-

„ Նոյն պատկանելեաց նորին ընդհանրապէս, իսկապէս և
„ հաստատութեամբ պահելով և ըստ ամենայնի մտադիր
„ լինելով բանից՝ խնդրոց և բնութեան այս գրութեանց յա-
„ մենայնի և միշտ։

„ Ի վկայութիւն և ի հաստատութիւն վերոյ գրելոցս՝ նոյն
„ Աղայ Յովհաննէս Սամուէլ Մուրատեան՝ միայնակ կռակա-
„ կատար հանգուցեալ Հօր իւրոյ Աղայ Սամուէլ Մկրտիչ
„ Մուրատեանի ի Մատրաս, ի կողմանէ իւրմէ, և ի կողմանէ
„ Աղայ Հեղուարդ Սամուէլ Մուրատեանի կռակակատա-
„ բակցի իւրոյ. և նոյն Հ. Սարգիս Թէոդորոսեան վարդա-
„ պետ՝ անդամ և օրինաւոր գործակալ Մխիթարեան միա-
„ բանութեան ի Վենետիկ, ձեռնադրեցին, կնքեցին և յանձ-
„ նեցին միմեանց զդաշնագիրս զայս և զմերձակ աշատու-
„ թեան, այսօր յերեսուն և միերորդում առաւ ամսոյ մար-
„ տի՝ յամի Տեառն հազար ութ հարիւր երեսուն և երկու
„ (1832), ի Մատրաս քաղաքի Հնդկաց։

„ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԱՄՈՒԷԼ ՄՈՒՐԱՏԵԱՆ

„ Միայնակ կռակակատար հանգուցեալ Աղայ Սամուէլ
Մկրտիչ Մուրատեանի, ի կողմանէ իւրմէ և ի կող-
մանէ կռակակատարակցի իւրոյ Հեղուարդ Սա-
մուէլ Մուրատեանի.

„ Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐՈՍԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ

Անդամ և օրինաւոր գործակալ Մխիթարեան
միաբանութեան ի Վենետիկ.

„ Վկայեմք զի ձեռնադրեցին, կնքեցին և յանձնեցին
զայս միմեանց.

„ ԿՈՄՍ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՇԷՐԻՄԱՆ.
„ Ա. Յ. ԱՂԱՆԱՍԻՐԵԱՆՑ.
„ ԱԽԵՏԻՐ Յ. ՇԻՐԽՈՒՆԵՆՑ.
„ ԱՍՏԻՒԱԾԱՏՈՒՐ ՅԱՐՈՒԹԻՒՆ. „

Իրեւ կատարի այս գործ, յորուցեալ Հ. Սարգսի մաղթել ի Տէառնէ բան պատշաճի՝ հանգիստ յաւիտենական հոգւոյ Աղայ Սամուէլ Մուրատի՝ բարերարի աղքատաց Աղգին, և օրհնութիւն ժառանգաց նորա, և մանաւորապար Պարոն Յովհաննու Մուրատի, որ ի փախճանի խաղաղութեամբ վճարէ զիրան։ Եւ նորա ոգեւոր զրան Հ. Սարգսի, և համբուրեալ ընդ նմա, ասէ; “Համարեցիս զիս այսուհետեւ հա-“ տատարիմ բարեկամ և որդի Մխիթարեան միաբանու-“ թեան, և մտերիմ եղբայր քո յաւիտեան։”

Ասէ ցնա Հ. Սարգիս; “Այդպէս համարեալ ես զոս միշտ “ի միտս մեր։”

Ապա ուրախակից լինին նոցա ամենեքեան որք անդ՝ զոմեր-յով զգնացս միաբանութեանն ընդ ժառանգս բարերարին; “Արդարեւ, ասեն, բան արժանի ձերումդ ասացանի վարե. “ցայք ընդ նոսա, որով և յայտ արարիք՝ թէ ճշմարիտ աշա-“կերտ էք Քրիստոսի անչիշաչար բարերարութեամբդ։”

Զկնի բանից այսոցիկ ասէ Հայր Սարգիս ցՅովհաննէս Մուրատ; “Գիտէս, պարոն, զի խորհրդաւոր է և պատա-“հումն գործոյս ի սմին յայսմ աւուր. քանզի ոսն է այսօր “քառասուն մանկանց Սեբաստիոյ, և հանդէս մեր նոյնպէս “վասն մանկանցն դասախարակելոց յաշակերտաց Աբրային “Մխիթարայ Սեբաստացւոյ. ահա քեզ խորհրդաւոր նմա-“նութիւն անուանց, տեղւոյ և վիճակի, և բախտի արդեաք։”

Հայեցեալ Յովհաննու Մուրատայ ընդ Հ. Սարգիս զարմացմամբ՝ ասէ; “Արդարեւ ամենայն ինչ խորհրդաւոր է, “ի գործս յայս և սատանային տեսչութեամբ։”

Հրաժարեալ Հ. Սարգսի ի Յովհաննէ Մուրատայ խաղաղութեամբ և առ Աստուած յոյժ գոհութեամբ՝ դառնայ ի բնակութիւն իւր և երգէ զաւուրն պատշաճ շարականն; “Թագաւոր երկնաւոր, որ զթիւ տրոց քոց բարեգթա-“թեամբ լցեր, զմիաբանութիւնս մեր օրհնեա։” Որ և կա-տարի պատշաճ և ի դէպ էր նմա. քանզի յոյժ հեռէ անկաւ նա ի վիճն, այն էին հանապազ իւրոյ աղօթից նորա առ Աստուած, “յաջողել տրոց և աղքատաց տատապեալ ազգին

«իւրոյ յիրաւունս նոցա, և ազատել զմիաբանութիւն իւր
«ի հոգոց և ի տառապանաց՝ յոր ի զուր շաղեցաւ.»

Վասնալ խառնվտիրաց ոմանց գիտաղաղութիւնն որ ի մէջ Միաբանութեան և ի մէջ Մուրատեանց, գԺկամակին և ըղձարին յոյժ. իսկ լցեալն դառնութեամբ Մէթ Սամն հանդիպեալ Յովհաննու Մուրատայ՝ ասէ ցնա; «Ուրախ եմ ընդ «աւարտումն բանի հրամանի ողորմութեան, բայց ի զուր «հատուցեալ ես աւելի ինչ արծաթ. և մի գԺուար թուեցի «քեզ, զի եթէ եղբայր քո Եղուարդ ասա լեալ էր, ոչ այս«պէս աւարտէր այդ բան.»

Զայս և այլք ոմանք ասեն, և ինքն իսկ Յովհաննէս Մուրատ, և յիրաւի. քանզի անարգ գիտաւորութիւն Եղուարդայ Մուրատայ յաւիշտակելոյ ինչ յաղքատաց ազգին և ի հարազատէն իւրմէ իսկ, խափան լինէր դալ նոցա յիրաւախոհութիւն և յաւարտումն բանին։ Այլ վերին տնօրէնութիւնն որ յամենայնի երեւէր ի գործն՝ յայտնի եղեւ և յայտ՝ հեռացուցանելով զիտափանիչ նորին անտ։ . . .

ԳԼՈՒԽ ԼԳ.

Կասկած ունայ Պ. Յովհաննէսոյ Մուրատայ յետ կնքելոյ դաշինսի իրտեսխոնութեան. — Զգուշութիւն նորա ի Կռաւիսի գաղղիացւոյ. — Խնդիր ապծարոյն զոր պարտէր Յովհաննէսն Մուրատ Աղանուրեանց. — Պահանջել Կռաւիսի վարձն ընդ միջնորդութեան իւրոյ. — Թշնամանալ նորա ընդդէմ Յովհաննէսոյ Մուրատայ. — Թողոր նորա առ Պ. Յովհաննէսն Մուրատ. — Բողոքել նորա յԱնգլիսի Գաղղիացւոց ի Փոլիտիշերի, մերժուսի յԱնգլիսի և մահն.

Ի վաղիւ անդր, որ մի էր ապրիլ ամսոյ, 1832, գնաց Յովհաննէս Մուրատ ճաշել ընդ Հ. Սարգսի ի տան քեռի իւրոյ ախկնոջ Աղանուրի, որոց ի չորից ամաց հետէ դադարեալ էին երթեւեկութիւնք առ միմեանս՝ սակս անիրաւութեան եղբարցն առ քոյր իւրեանց. և եղեն յայնժամ իրաւունք՝ վասն ներողամտութեան Մխիթարեանն առ նոսա։ Քանզի ըստ յառաջագոյն և անուղղակի խոստման Յովհաննէս Մուրատայ հաստատեալ քեռն իւրում զիրաւունս նորա՝ ի նմին առուր հաստատէ զայն ուղղակի, և խոստանայ քեռ իւրում 70,000 ռուբի վասն ամենայն բանի իրաւանց և պահանջանաց նորա, բայց պայմանաւ և երաշխաւորութեամբ Հ. Սարգսի։ Եւ պատճառք այսմ՝ քանզի թէպէտ գործառնութիւն հրիտակին ողորմութեան ասարտեալ էր նորոգ դաշնադրութիւն և մերձակայ ազատութեան, սակայն միշտ յերկիւղի կասկածանաց էր Յովհաննէս Մուրատ ի պահանջմանէ բանվանեղակ վաշխի հրիտակին։

Վասն որոյ յառաջ քան զհաստատել դաշնագրին, և զկնիքն այնր եւս ասէր միշտ թէ այն դաշնագիր չարժէ ինչ ի կոզմա-

նէ Միսրանութեան, եթէ կամիցի նա պահանջել ի նոցանէ զրովանդակ վաշխ հրիտակին։ Եւ զայն ոչ յիւրմէ ինչ ասէր, այլ ի վարչէ գաղին և ի փաստաբանէ իւրեանց լուեալ։ որք և ասացեալ էին նմա՝ թէ առաւել ի բարեկամութիւն Միսրանութեանն պարտի նա վստահանալ՝ քան թէ ի գաղնագիրն յայն իրաւախոհութեան։ Եւ Հայր Սարգիս առ ի բժշկել զկասկած մտաց Յովհաննու Մուրատայ թէ անհնարին է Միսրանութեանն այնպիսի ինչ առնել, ասէ թէ յայնմ է բոլոր յոյս իւր և վստահութիւն. ապա թէ ոչ՝ վճարեալ է վասն իւր ամենայն։ Եւ յիրաւի. զի եթէ կամեցեալ էր Միսրանութիւնն խաբել զարել ընդ նոսա բան արժանի գրոծոց նոցա, վճարեալ էր վասն նոցա, մանաւանդ վասն Յովհաննու Մուրատայ. քանզի այնչափ միայն մնայր նմա արծաթ՝ որչափ պարտ էին նոքա հատուցանել ի վաշխ հրիտակին ողորմութեան, և այն էր 600,000 ռուբի. որոյ կէսն ի բաժնէ միայն է, և կէսն ի բաժնէ միւսոյն. զոր արդէն որոշեալ խակ էին՝ անհրաժեշտ համարելով զհատուցումն. և զայն թողեալ էր Եղուարդայ ի ձեռս Յովհաննու ի մեկնել իւր անտի։

Եւ քանզի պարտական էր նա եղբօր իւրում՝ իբրեւ 300,000 ռուբի վասն բաժնի ժառանգութեան նորա, և զի զայն անհնարին էր նմա ընդունել անտի եթէ չէր այնպէս առարտեալ բան հրիտակին, վասն այնորիկ թողեալ Յովհաննու զամենայն կարծեցեալ իրաւունս իւր և զհակառակութիւն, խոնարհի ի կամս Հ. Սարգսի, ընդունելով զպայմանս նորոգ դաշինն. վասն այնորիկ և երկնչէր և կասկածէր միշտ, և վճարեալ ասէր վասն իւր ամենայն ինչ՝ եթէ չունիցի յոյս ինքորդութենէ Միսրանութեան, և վստահութիւն ի մտերմութիւն նորա։

Ինքին առաւ գնայ անդր ճաշել ընդ նոսա և Գաղղիացին Կռամիէ, որ ջանայր շատ յառաջ՝ զի ձեռամբ իւրով լիցի հատուցումն խոստացեալ արծաթոյն ի Յովհաննէ Մուրատայ, եթէ վասն բանի հրիտակին ողորմութեան, և եթէ վասն բանի իրաւանց ոմիկնոջ Ագամուրի, որպէս զի իրաւունս ունիցի

ինքն ի ձեռս բերել ինչ վասն վարձու միջնորդութեան իւրոյ, թողեալ զխոստումն Յովհաննու Մուրատայ առ նա ի ժամանակի տագնապի նորա։ Վասն այնորիկ խորհուրդ տայ նա Հ. Սարգսի զի ձեռամբ իւրով և փութով լիցի հատուցումն, երկեցուցանելով զնա յանհաստատ մտաց և ի խորոխ բարուց Յովհաննու Մուրատայ. այլ և զուշակելով նմա զվերջին ատելութիւնն որ ի մէջ եղբօրն և քեռ չար քան զառաջինն, այլովքն հանգերձ։ Իսկ Յովհաննէս Մուրատ չկամի ընդ զի խառնեցի յայն Կոտիէ, և զգուշացուցանէ զՀայր Սարգիս հեռի կալ ի նմանէ և ի միջնորդութենէ նորա։

Իրրև լինի հատուցումն վերոյիշեալ 100,000 ռուբոյ վասն բանի հրամակին ազատութեան, և հաստատի զաշնագիրն իրաւախոհութեան ի մէջ Յովհաննու Մուրատայ և Հայր Սարգսի, ասարսի բանն, այլ ոչ լինի հատուցումն արծաթոյ տիկնոջ Ազանուրի յայնժամ. և այս վասն երկուց պատճառաց. մի զի խառն էին քոյրն և եղբայրն ընդ միմեանս վասն իրաւանց և պահանջմանն այնորիկ. վասն որոյ կամէր Յովհաննէս Մուրատ նախ ասարսել զբան հրամակին ազատութեան ընդ Հ. Սարգսի և ապա գնալ հաշտել ընդ քեռն իւրոյմ. և միւս եւս՝ զի չեւ եւս պատրաստեալ էր մուրհակն ընդունելութեան և ազատութեան զոր պարտ էին Պարսն և Տիկին Ազանուր հատուցանել և տալ Յովհաննու Մուրատայ։

Բայց Յառաջ քան զհատուցումն նորոյ զաշնագրին կամի Յովհաննէս Մուրատ ասանդել մուրհակ մի վաճառականն ընկերութեան ի ձեռս Հ. Սարգսի ի հաւատարմութիւն բանից և ի հաստատութիւն խոստմանն իւրոյ առ քոյր իւր. այլ չընդունի զայն Հ. Սարգիս՝ ասելով թէ «Զէ լինձ այդ ի պատ«սխ, զի յետ այնչափ բանից և անդին երդմանց տարա«կուսիցիմ ընդ հաւատարմութիւն և ընդ հաստատութիւն «խոստման քո։» Զայս ասացեալ հրաժարի ընդունել ինքնմանէ զասանդն. վերադարձնէ և կամի Հ. Սարգիս վերստին փոխել զկնիք բարուց Գ. Յովհաննու Մուրատայ ի բանս մարդկութեան և կրօնի որովք պարծէր նա միշտ. յորոց թէպէտ և զառաջինն պակասեաց նա ինոտի պատճառանաւք,

բայց ապա՝ յետ հնգետասան ամաց կատարեաց զայն՝ թէպէտ և ոչ բովանդակապէս վասն այլ և այլ պատճառի, զորմէ յիշատակեցից ի տեղւոջ իւրում կարգաւ։

Գաղղիացին Կռամիէ, որ հրաւիրեալ ճաշէր անդ ընդ Նոսա՝ իբրեւ ի լրումն հատարակաց հաշտութեան և ուրախութեան բարեկամացն, մատոյց ինէր յոյժ ի վերայ սեղանոյ ճաշուն զրոլոր ժամանակն. և մինչդեռ եղեալ ի սեղանոյ շրջէին ի պարարիզի անդ, ասէ առանձին և խորամանդութեամբ ցՀ. Սարգիս ; « Ահա գործառնութիւնք քո ընդ Յովհաննու « Մուրատայ ուսարտեցան. մեզ արդ ուսարտել ընդ նմա և « զքան Ազատուրեանց. արդ ո՞րպէս պարտ իցէ առնել. միջ- « նորդեցէ՛ զու ի մէջ նոցա, թէ ես։ »

Ասէ ցնա Հ. Սարգիս ; « Ոչ ինձ անկ է և ոչ քեզ միջնոր- « դել յոյն, այլ ինքեանք տեսցեն զքանս իւրեանց. քանզի « հարազատք ենք նոքա և հաշտեալք այժմ ընդ միմեանս, վասն « որոյ չէ հարկ մեզ խառնել ի բանս նոցա։ »

Լուեալ Կռամիէի զայն պատասխանի՝ ի ապառ յուսակտուր լինի ի հատանելոյ խորամանդ և անարդ դիտաւորութեան իւրոյ. ապա թողեալ զնա՝ առնու մեկուսի զՅովհաննէս Մուրատ և ասէ ցնա ; « Ահա գործառնութիւն Հ. Սարգ- « սի ընդ քեզ ուսարտեցաւ. արդ ասա՛ նմա զի տացէ ինձ « որչափ ինչ արժան է վասն միջնորդութեանս ի գործն « յոյն։ »

Զառաջինն հրաժարի Յովհաննէս Մուրատ խառնիլ ի գործն՝ ասելով թէ « Անճարեմ ես առաջարկել Հ. Սարգսի այն- « պիսի ինչ։ » Բայց ի թախանձել զնա Կռամիէի շատ, խոստանայ խօսել ընդ Հ. Սարգսի ի պատուհ ժամու, և այնպէս գերծանի ի ձեռաց նորա։ Պատմէ զայն Հ. Սարգսի առանձինն ուրեք Յովհաննէս Մուրատ և ասէ ; « Զգիտեմ զի՞նչ արա- « ցից զերծանել ի ձեռաց նորա։ »

Ասէ ցնա Հ. Սարգիս ; « Զեմ ես ապաշնորհ զք, ճանա- « չեմ զարդիւնս նորա ի գործս յոյս, և գիտեմ զչափ և զոր- « ժամանակ պարտուց իմոց. բայց նորա ինքնին պահանջել, « և այսպէս վարիմզակի. ապ ինձ հատատել յոչ բարեաք

“ կարծիսն իմ զնմանէ . վասն որոյ խնդրեմ՝ մի՛ խառնիր բը-
“ նաւ յոյս գործ . քանզի անզգամութիւն տեսանեմ ես ի գը-
“ նացս նորա ։ ”

Ասէ ցնա Յովհաննէս Մուրատ ; “ Եւ ես ինքն ի նոյն կար-
“ ծիս եմ . բայց քանզի խոստացեալ եմ նմա խօսել ընդ
“ քեզ , ասացից նմա ի ժամուն՝ թէ չեմ գտեալ զառնհ խո-
“ սելոյ ընդ քեզ զայնմանէ . բայց ապա բացէ ի բաց հրաժա-
“ բեցայց ի խառնելոյ ի գործն ։ ”

Ասէ ցնա Հ. Սարգիս ; “ Հրաժարեալիր որպէս և գիտես ,
“ ապա թէ ոչ՝ զղջացիս յոյժ ընդ միջնորդութիւնդ ։ ”

Սակայն յետ այսչափ ազգարարութեանն և բանից զգու-
շութեանն Հ. Սարգսի , Յովհաննէս Մուրատ մերթ առ ոգի-
ութեանն , կարծելով թէ ի Հ. Սարգսէ էին պահանջանք նո-
րա , ոչ ինչ զգուշանայ ինքնանէ . և մերթ առ սնոտի երկիւ-
ղին , կասկածելով զվերատակար հետեւանաց որ կասկածոտ
մտաց իւրոց էին միայն հաւանական , կարեւոր վարկանէր
յուսացուցանել զնա միշտ թէ միխիթարեսցի նա ըստ վատա-
կոց իւրոց , բայց յետոյ . վասն որոյ համբերեցէ սակաւիկ
մի ։ Եւ այնչափ յաճախեցին այնպիսի բանք ի մէջ նոցա
առանձին մինչեւ համարձակեցաւ իորամանդն խօսել և հրա-
պարակաւ , և զրով եւս ասիպեաց զնա խնդամուտ առնել
զՀ. Սարգիս թէ պարսի հաստատանել նմա զիրաւունս իւր ,
այսինքն զվարձս միջնորդութեան իւրոյ ի գործն ։

Լուեալ Հ. Սարգիս զայն ի բերանոյ Յովհաննու Մուրատայ
և յայլոց , և ընթերցեալ զգիր նորա՝ յորում միջադրէր զնա
զի չպահեաց զխոստումն իւր , և ի վախճանի ապառնայր նմա
եթէ յապաղեսցէ սակաւին հաստատանել զպարտս իւր ըստ
խոստման իւրում առ նա , ասէ ցՅովհաննէս Մուրատ ; “ Հա-
“ ւատա՞ս դու , Պարոն , թէ խոստացեալ իցեմ ես ինչ Կառ-
“ վիէի ։ ”

Ասէ ցնա Յովհաննէս Մուրատ ; “ Ոչ կարծեմ . զի շատ
“ զգոյշ ես դու ի բանս քո ։ ”

Հ. Սարգիս ասէ ; “ Հաւատրիս թէ այս պահանջանք նորա
յինէն իցեն , և ապառնայիքն առ իս ։ ”

Ասէ ցնա Յովհաննէս Մուրատ ; « Այո , քանզի զքէն խօսի
« յանուանէ ։ »

Ասէ ցնա Հ. Սարգիս ; « Ոչ այդպէս Պարոն , այլ ի քէն և
« առ քեզ է բովանդակն . զի եթէ յինէն և առ իս էին , ընդ-
« դէմ մինչեւ ցարդ չխօսեցաւ ընդ իս բան մի , և կամ չհա-
« մարձակեցաւ գրել առ իս երկտող գիր ։ Զայս և ի հանդա-
« մանաց գործոց նորա պարտիս իմանալ . քանզի միջնորդու-
« թիւն նորա ի կողմանէ քումմէ է և ոչ յիմմէ . իսկ թէ զինէն
« խօսի նա յանուանէ , այդ խորամանդութեամբ է . քանզի
« կամի բանիւք բերանոյ քո հաստատել զիրաւունս իւր
« նախ , և ապա պահանջել զայն ուստի պարտն է . տեսցիս
« զկնի քանի մի աւուրց ։ »

Ասէ ցնա Յովհաննէս Մուրատ ; « Եթէ վերատին խօսեցի
« զայսմանէ , առաքեցից զնա առ քեզ ։ »

Ասէ ցնա Հ. Սարգիս ; « Զայս յառաջ պարտ էիր առնել ,
« և ես գիտէի թէ զիարդ պարտ էցէ վարել ընդ նմա ։ »

Յետ քանի մինչ աւուրց դէպ լինի Հայր Սարգսի գնալ առ
Յովհաննէս Մուրատ ի գործատուն նորա ։ Գտանէ անդ
զԿռամիէ զի խօսէր ընդ նմա սաստիկ ջերմութեամբ . և տես-
սեալ նորա զՀ. Սարգիս լռէ ի խօսիցն ։ Ասէ ցնա Յովհաննէս
Մուրատ ; « Աւասիկ Հ. Սարգիս . խօսեաց ընդ նմա ուղղակի
« զոր մինչ և ունիս ։ »

Պարտաւորեալ յայնժամ խորամանգին առնուլ զՀայր
Սարգիս մեկուսի , հարցանէ նմա նախ զողջունէ նորա կեղ-
ծաւորութեամբ , ապա խօս արկեալ զենդրոյ հրիտակին՝
ասէ ; « Քանի՞ աշխատ եղէ ես յիրաւախոհութեան ձերում .
« պարտ էր ձեզ ճանաչել զայն ։ »

Ասէ ցնա Հ. Սարգիս ; « Քաջ ճանաչեմ ես զմտերմութիւն
« քո առ Պարոն Յովհաննէս Մուրատ և զիրաղարկան կամս
« քո առ ամենեսեան . զոր և ոչ մառացայց յամենայն կեա-
« նս իմ ։ »

Ասէ ցնա Կռամիէ ; « Շնորհ ունիմ և ես զգայողութեան
« քում , բայց պարտ է արդեամբք կատարել մխիթարու-
« թիւնս իմոյ ։

«Այո, ասէ Հ. Սարգիս, արդիւնք հոմարին յառաքինեաց
«յիշատակութիւն բարեաց։»

Կարծելով Կամիլի թէ ոչ հասկանայ Հ. Սարգիս զմիտս իւր, երկրորդէ նմա զայն երկիցս և առաւել բացայայտ բանիւք։ Կրկնէ և Հ. Սարգիս զնոյն միտս իւր նոցին բանիւք։ Տեսեալ խորամանգին՝ թէ չկարաց հանել ինչ ի բերանոյ Հ. Սարգսի ի նպաստս իւր, դառնայ առ Յովհաննէս Մուրատ և ասէ ցնա; «Ճէգուիթ ունէ Հ. Սարգիս. վասն որոյ չկա-
«րեմ խօսել ընդ նմա։

Ասէ ցնա Յովհաննէս Մուրատ; «Ուրեմն չմնայ քեզ այ-
«ստեղեակ տեղի միջնորդութեան. քանզի զոր խօսեցար ընդ
«նմա և ծանեար զնա։»

Յայնժամ յայտնէ խորամանգն զկամս իւր Յովհաննու Մուրատայ թէ «Զունիմ ես իրաւունս պահանջելոյ ինչ
«ի Հայր Սարգսէ վարդապետէ, այլ ի քէն. քանզի ի կոչ-
«մանէ չունիմ միջնորդեալ ես, և զքեզ շահեցուցեալ
«ի պահանջս այս վաշխի գրամագլխոյն. վասն որոյ զոր ես
«պարտական հատուցանել ինձ զվարձս միջնորդութեան ի-
«մոյ։»

Տեսեալ Յովհաննու Մուրատայ զհամարձակութիւն Կամիլի՝ սկսանի զգուշանալ և խորշիլ ի նմանէ, այլ անապան. քանզի տուեալ էր նմա տեղի համարձակութեան, թէպէտ և կերպարանաւք ընդդէմ Հ. Սարգսի, այլ ճշմարտութեամբ ընդդէմ իւր։ Եւ իրրեւ տեսանէ Յովհաննէս Մուրատ թէ քաղցրութեամբ և յուսով չկարէր այնուհետեւ համոզել և դարձուցանել զնա ի պահանջատէրն, սկսանի խառնութեամբ և արհամարհանաւք վարել ընդ նմա, և ասէ եւս անապան և անխոհեմ. քանզի զայրացեալ անդգամին ընդ խառնութիւնդ՝ առաւել եւս համարձակի և լրանայ, խառնվանելով անպատկառարար՝ թէ Հ. Սարգիս չէր բնաւ խառնացեալ նմա ինչ։ Եւ ոչ այսչափ միայն, այլ և ժպրհի ասել բանս անհաւատս, թէպէտ և ոչ օտարս ի գնացից Մուրատեանց. որպէս թէ Յովհաննէս Մուրատ թելադրեալ էր նմա պահանջել վարձս միջնորդութեան իւրոյ ի Հ. Սարգսէ. և զի նիթէ զլացի

նա նմա, զատատանաւ պահանջեցէ, և ինքն վկայեցէ յԱռենի անդ։

Զայս և առաւել քան զայն վիժէ Կամիէ ի բերանոյ իւրմէ յանկնջս բազմաց։ Զոր լուեալ Յովհաննու Մուրատայ սարսաւոյ, և իմանայ զի առ վրէժխնդրութեան ջանայր անզգամն արկանել ի մէջ նոցա վերսին խառնութիւն. և զի մի այլ լուսաւ լուեալ Հ. Սարգսի և հաւատացեալ խառնեցի ընդ նմա, անճարել ազգ առնել յառաջագոյն զչարիսն հարկաւոր անզգամին, սարսափելի երդմամբք արդարացուցանելով զանձն ի զրպարտութենէ անոր թելադրութեան։ Արամ այսչափ միայն ասէ Հ. Սարգիս։ «Հնարաւոր լցէ ինձ, Պա-«ղան, հաւատալ բանից անզգամին. ապա թէ ոչ, պարտիմ, «ներկայս համարձակութեանս, նախ զքեզ յիմար ոք հա-«տալ. քանզի այդպիսի արարք զքեզ ինքն քանդէին, և «զիս առաւել ևս շահեցուցանէին։»

Թէպէտ և անզգամն Կամիէ յառաջ քան զարդարութիւն Յովհաննու Մուրատայ շատ ջանայ զայրացուցանել զՀ. Սարգիս ընդ Յովհաննու Մուրատայ, այլ ճանաչելովն նորա զանզգամութիւն անզգամին՝ արհամարհէ զբանս նորա, և ոչ կամի այնուհետև տեսանել զնա և լսել ինչ ի նմանէ։ Իրրև տեսանէ նա թէ հատաւ երթևեկութիւն իւր առ Յովհաննէս Մուրատ, և թէ խնայեալ Հ. Սարգսի զանզգամութիւն իւր արժանի անդամ չհամարի տեսանել զինքն, սկսանի այնուհետև անարդ զինուք, այսինքն նախատալից և ապառնական գրութեամբ շարժել և երկեցուցանել զնոսա. քանզի գրէ առ Յովհաննէս Մուրատ թուղթ մի երկայնաձիգ, յորում հեգու զդատութիւն մաղձին իւրոյ չարի, և ցուցանէ զծայրագոյնս անզգամութիւն իւր։

Զրոմանդակ բանս թղթոյ անզգամին Կամիէի երկրորդել առ ուերդ համարիմ, այլ ի մէջ բերից զքանի մի եւեթ իսոս։

Նախատէր զՅովհաննէս Մուրատ՝ կոչելով զնա խարերայ, ուռզակ, անարդ և անիրաւ. «Անդի յամիշտակեալ է նորա, ասէր, զիրաւունս ազգիս Հայոց, և զվարձս աշ-

խաղաղութեան իւրոյ ի գործն, և ընկալեալ զՇ. Սարգիս իբրեւ զՀամս չաստուած Հնդկաց՝ ի գնալ նորա ի տունն նորա խօսել ընդ նմա ի խաղաղութիւն։ . . .

Նախատէր և զՇ. Սարգիս՝ կոչելով զնա խորամանգ ճէգուիթ, և Մաքեաւելեան քաղաքավար. իբր զի խորամանգութեամբ թողեալ էր նորա զիրաւունս աղքատաց ազգին իւրոյ ի ձեռս Մուրատեանց։ . . .

«Կարծիցեն զու, ասէ ցՅովհաննէս Մուրատ, թէ երկուցեալ Հայր Սարգսի ի սպառնալեաց յԵւրոպ բազքէ» ընդ նեմս ի խաղաղութիւն։ . . .

«Թեան. ոչ բնաւ. այլ Մաքեաւելեան՝ աղաքաւորութեամբ» եցոյց նա քեզ զայն այնպէս, չունելով կամն պահանջել» զայն ի ձէնջ, որպէս և յառաջ ի նախկին իրաւախառութեան։ Եւ զինչ, միթէ ոչ լիցի վրէժինդրութիւն ա» ներաւութեան և խորամանգութեան ձերոյ։ . . . Այս, » եղիցի անշուշտ. քանզի ունի ընդհանրական փաստարանն» Ամենիս իրաւունս պահանջել ի ձէնջ զայն, և արդարու» թիւն Անդրիացւոցն օրինաց ասցէ ձեզ հաստատանել մին» չեւ ցվերջին ընտրեն։ Զունի Շ. Սարգիս և ոչ իսկ Մխարա» նութիւն նորա իշխանութիւն թողլոյ ձեզ զվաշխ հրամա» կին. զի ոչ նոցա, այլ աղքատաց ազգին Հայոց են իրա» ւունքն։ . . .»

Եւ կնքէր զթուղթ իւր բիրտ և յանդուգն սպառնալեաք առ Յովհաննէս Մուրատ; «Ոչ թողում, ասէ, մարսել քեզ զիրա» ւունս իմ, այլ առից վրէժ ի քէն, կամիցիս զիրաւունս» սպանուս իմով։»

Ընթերցեալ Յովհաննու Մուրատայ զթուղթն Կամիէի զայրանայ յոյժ, միանգամայն և երկնչի ի յանդգնութենէ անդգամին. վասն որոյ գնայ տագնապաւ և գաւազանաւ առ Շ. Սարգիս, և ցուցանէ նմա զթուղթն Կամիէի։ Ընթերցեալ նորա զայն, ասէ ցնա; «Եւ զո՞ զինչ խորհիս այժմ» առնել։»

Ասէ ցնա Յովհաննէս Մուրատ; «Ըստ խորհրդոյ վարչի» զատին իմոյ պարտ է ինձ նախ ի քաղաքական վարչութի-

«Նէին յապահովութիւն անձին իմում խնդրել, և ապա զար-
«ժանն առնել պատասխանի թղթոյ անդգամին։»

Ասէ ցնա Հ. Սարգիս; «Եթէ անսացեալ էր քո յառա-
«ջագոյն խրատու իմոյ, բանն ցոյս վայր ոչ հասանէր։
«Եւ արդ խրատս սամ քեզ սրհամարհել զսպառնալիս Կռա-
«ֆիէի, և չտալ բնաւ պատասխանի բանից անդգամութեան
«նորա։»

Ասէ ցնա Յովհաննէս Մուրատ; «Ապա եթէ յարձակեսցի
«նա ի վերայ իմ, թէպէտ և յաղթեցից նմա, բայց խնդիր
«Ասենին Դաղեսցի անտի։»

Ասէ ցնա Հ. Սարգիս; «Որչափ և անդգամ իցէ Կռաֆիէ,
«այլ չէ այնչափ յիմար որ. քանզի ճանաչէ զկար զօրու-
«թեան իւրոյ, և զհետևանս յանդգնութեանն. վասն որոյ
«անհնարին է նմա յայն գործ մտարերել։ Իսկ եթէ կամիս
«դու, ասէ, լսել վարշի դատիդ Վայվաշի, և ըստ խորհրդ-
«դոյ նորա առնել, ահա այն իսկ են կամք անդգամին,
«դրել առ քեզ թուղթ առաւել եւս լրութեամբ՝ որ առաւել
«ծանր լիցի քեզ, և այնպէս հասցէ նպատակի իւրում՝ որ
«է վրէժխնդրութիւն։»

Հաւանեալ Յովհաննու Մուրատայ բանից Հ. Սարգսի հան-
դարտի, այլ տանի ի ձեռին իւրում գաւազան վասն զգուշու-
թեան յերեսաց անդգամին։

Տեսեալ Կռաֆիէի թէ չկարաց այնու եւս շարժել զնոսա,
զվերջինն յանդգնութեան և անդգամութեան իւրոյ փորձէ
փորձ։ Որոնեալ գտանէ զանդգիացի ումն, որ սակաւիկ ինչ
տեղեակ էր օրինաց Անգղիացւոց, և խօսէր փոքր ինչ գաղ-
ղիարէն. առեալ զնա իւր թարգման գնայ առ Կօրոն վարիչ
գատին Հ. Սարգսի. քանզի գիտէր զի անհաճոյ էր նմա աւար-
աւարտումն խնդրոյ հրիտակին ողորմութեան վասն շարա-
շահութեան իւրոյ. վասն որոյ ի նմանէ կամի հարցանել
խորհուրդ, և զնա՝ եթէ հնար էր՝ ունել վարիչ գատին այ-
նորիկ։ Պատմէ նմա թարգմանաւ զամենայն անցս իրաւախո-
հութեան նոցա և զաշխատութիւն միջնորդութեան իւրոյ, և
խոստանայ վկայել Ասենի խորհրդոյ Հ. Սարգսի։ Իրա-

ունս արքոց և ազգաւոց ազգին Հայոց, եթէ հարցափորձ լիցի անդ։

Կորոն թէպէտ և յօժարութեամբ լսէ զբանս Կռամլիէի, զի անհաճոյ էր նմա առարուն բանին իրաւախոհութեամբ, բայց առաւել խորամանդ զոլով քան զԿռամլիէ, և առաւել տեղեակ օրինաց Անգղիացւոց քան զանգղիացի թարգման նորա, իրրև չտեսանէ ինչ հաստատութիւն ի բանս նորա, հրաժարի խառնիլ ի գործն, այլ խորհուրդ տայ նմա ծանուցանել զայն ընդհանրական փաստաբանին Նորթընի և խնդրել ի նմանէ զրով զկարծիս նորա։ Եւ նա առնէ այնպէս, և զրով տայ զինդիր իւր Նորթընի։

Զկնի քանի մի առուրց տայ նա զկարծիս իւր զրով, և ասէ թէ չունի Կռամլիէ իրաւունս պահանջելոյ ի Յովհաննէ Մուրատայ զկարգ միջնորդութեան իւրոյ ի գործն յայն իրաւախոհութեան նոցա՝ վասն չլինելոյ ի մէջ նոցա խոստումն զրով և կամ վկայիւք. իսկ վասն չհատուցանելոյ Մուրատեանց զրոլոր վաշխ հրիտակին ողորմութեան, և վասն չպահանջելոյ Հ. Սարգսի ի նոցանէ զայն, թէպէտ և ապօրինաւոր և անիրաւ են արարք նոցա, բայց ոչ Կռամլիէի, այլ ազգին Հայոց անկանի, ասէր, հարցանել և պահանջել զայն։

Ընկալեալ Կռամլիէի զայն կարծիս ի Նորթընէ՝ լքանի և կասի յընթացից չարութեան իւրոյ և յանմիտ պանհանջանացն, բայց ոչ ի բաց թողու զխորամանդութիւն և զանարգութիւն վարուց իւրոց, այլ ջանայ ի ձեռս միջնորդաց իմանալ՝ թէ ներէր արդեաք Յովհաննէս Մուրատ անզգամութեան իւրում. մանաւանդ թէ թողցէր նմա զպարտիս իւր 4,000 ռուփի, զոր ի փոխ առեալ էր ի նմանէ, և ժամանակն լրացեալ էր։ Եւ իրրև տեղեկանայ՝ թէ չթողու նմա զայն Յովհաննէս Մուրատ, խորհի խոյս տալ ի քաղաքէն՝ առ ի չհատուցանել նմա զայն, բայց այսու խորամանդութեամբ։ Աւուրբք ինչ յառաջ քան զմեկնել իւր անտի՝ ասէ ոմանց;

« Թէպէտ և Յովհաննէս Մուրատ ապերախտութեամբ վարեցաւ ընդ իս, բայց ես պահելով միշտ զառաջին բարեկամութիւնն՝ չկամիմ վնասել նմա, կամ իւիք ձեռնտու լինել։

«քանզի հաւատոյն եմ զի յետ ոչ բազում աւուրց քննեցէ,
«Նորին զՅովհաննէս Մուրատ և զՀ. Սարգիս յԱտենի անդ,
«և չրեալ զիրաւախոհութիւն նոցա՝ պահանջեցէ ի Մուրա-
«տեանց զրոխանգակ վաշխ հրիտակին ոլորմութեան. այլ զի
«մի՛ վկայ կոչեցայց ես անպատեհ զնոցից նոցա, կամիմ
«հեռանալ ասի առ ժամանակ մի մինչեւ անցցէ քննու-
«թիւնն այն յԱտենի։»

Այսպիսի խորամանգութեամբ խոյս տայ ի քաղաքէ անտի և գնայ ի Փոնթիշէրի ի տեղի իւր։ Սակայն և անդ ոչ դադարի յանդգամութենէն. քանզի մատուցանէ գանգատագիր մի յԱտեանն Գաղղիացւոց ընդդէմ Յովհաննու Մուրատայ։ Թէպէտ և ամբաստանեալն չէր անդ յանդիման, բայց քանզի ունէր անդ տուն մի՝ կամէր ամբաստանն յանիշատակել զայն անզգամութեամբ։ Խմացեալ զայն գատաւորացն՝ մերժեն ըզգանգատագիր նորա յատենէ անտի իւրեանց, և այնպէս ամենայն ուրեք յանդիմանեալ խայտառակի, մինչեւ տխրութեամբ զրաւի ի կենաց ոչ յետ բազում ինչ աւուրց։

ԳԼՈՒԽ ԼԴ.

Խնդիր հաւատոյ ժախուոցն Կորոսնի՝ վարչի դատին Հայր Սարգսի. — Նոռազնոյ սրժնէից մոռիկաց ընկերուռելոն Հնդկաստանի. — Դժուարութիւնք հանելոյ զարժար հրիտակին ի ձեռաց Հաւատակալին. — Անիրաւութիւն հայոցին Կորոսնի. — Հանել Յովհաննու Մուրատայ և Հ. Սարգսի զարժարն աշանդեալ ի գանձատուն ուերուելոն. — Յետս կոչել Հ. Սարգսի յԱնանի զգանգատագիր իւր որ վասն վաշխի հրիտակին. — Տեղեկութիւն զբովանդակ գոռնարի. սրժարոյն.

Յառաջ քան զվերոյիշեալ անցս որ անցին ընդ դաղղիացին Կամիէ, յետ երկուց աւուրց հատատելոյ նորոյ դաշնադրին ընդ Յովհաննու Մուրատայ, գնայ Հայր Սարգիս առ վարիչ դատին իւրոյ առ Կորոսն և ասէ ցնա առնուլ զպատճէն վճռոյ խնդրոյն յԱտենադարէն և ի գործ դնել զայն վաղվաղակի, զի ընկալցի զաւանդեալ արժաթ հրիտակին ողորմութեան։ Հարցանէ ցնա Կորոսն՝ թէ աւարտեա՞լ իցէ նորա զբանն ընդ Յովհաննու Մուրատայ, և ո՞րպէս։

Պատասխանէ նմա Հ. Սարգիս թէ ։ Այո, և այնպէս զի “ եթէ զամս տասն վատատկեալ էր ընդհանրական փատա- “ բանն Նորթքն ի խնդիրն, չկարէր այնչափ յօգուտ ազգա- “ տաց ազգին աւարտել՝ որչափ աւարտեաց ինքն իրաւախո- “ հութեամբն իւրով։ ”

Ասէ ցնա Կորոսն ; “ Ուրախ եմ ընդ այդ։ ” Բայց տեսա- նէ Հայր Սարգիս զի խոնարհին անկանին երեսք նորա ընդ լուրն. քանզի ցամաքէր այնուհետեւ աղբիւր շարաշահու- թեան նորա։ Ապա ասէ. “ Պիտոյ է ինձ ժամանակ առ “ ի պատրաստել զհաշիւ իմ վասն ժախուց օրինաց, զոր բան

«Վճռոյ խնդրոյն պարտ է տալ համարակալի տէրութեան։»
Թէպէտ և յառաջագոյն պատրաստեալ էր նորա զհաշիւ ծախուց իւրոց, բայց իրրեւ տեսանէ թէ չմնայ առիթ այլ եւս ինչ շահելոյ անտի, կամի յաւելուլ և բարգել ինոյն խորամանգ հնարիւք. վասն այնորիկ և յապաղէ զգործադրութիւն վճռոյն իրրեւ ամիս երիս, և չարչարէ զՇ. Սարգիս ի գուր, և լինի պատճառք այլ եւս վայրապար ծախուց։

Քան զի մինչդեռ յապաղէր նա զայն անարգ և անիրաւ զխաւարութեամբ, հրատարակէ տէրութիւնն զյայտարարութիւն ինչ՝ որով պարտ էր հատուցանել հատարակաց զմնան ինչ արծաթոյն զոր առեալ էր վաշխիւ ի 1823 ամին. չկամէր այնուհետեւ 5 առ 100 վաշխ հատուցանել, այլ 4 միայն. վասն որոյ բանայ այլ նորոգ հաշիւ ի 1829 ամին, բայց պայմանաւ զի որք միանգամ կամին թողուլ անդ զարծաթ իւրեանց վերատին՝ պարտին զառաջին 5 վաշխիւ մուրհակն դարձուցանել առ Համարակալն, և խնդրել ինեմանէ փոխել և մուծանել զայն ի նոր հաշիւ 4 առ հարիւր վաշխիւ. և այնմ փոխոխութեան պարտ էր լինել մինչեւ ցՅ30 ապրիլի 1832 ամին. յետ այնորիկ չփոխէր այլ եւս, այլ հատուցանէր զարծաթն զկնի 18 աւուր յունիսի, և զայն ի Կալկաթա։

Արդ մեծ մասն մուրհակաց հրատակին ոչ զարմութեան գոլով ի թիւս հատուցանելեացն, պարտ էր Շ. Սարգսի խորհել և հոգալ ըստ ժամանակին։ Ոչ էր նմա օգտակար առանալ զարծաթն ի Կալկաթա՝ վասն պակաս հատուցանելոյ անդ տէրութեանն, այսինքն երկու և կէս առ 100. և ոչ ի Մատրաս կարէր փոխել զայն՝ չունելով դեռ զմուրհակսն ի ձեռին իւրում։ Վասն այնորիկ խնդրէ ի համարակալէն՝ զայն մասն մուրհակաց հրատակին մուծանել ի նոր հաշիւն, իսկ զմնացեալն թողուլ առ նմա՝ մինչեւ հատուցէ անտի զծախս օրինաց՝ ըստ վճռոյ և հրամանի Աստենին. այլ համարակալն զինդրեալսն նորա ոչ կատարեաց, ասելով թէ չկարէ ինքն արտաքոյ հրամանին առնել ինչ. քանզի հրաման է, ասէ, նախ զծախս օրինաց հատուցանել, ապա տալ նմա զմնացեալ մասն արծաթոյն. իսկ փոխել զմուրհակս հրատակին և զար-

ծախն ի նոր հաշիւ մուծանել՝ յանձն առնու, եթէ նախ մինչեւ 30 ապրիլի խնդրէր Հ. Սարգիս ի նմանէ գրով զայն, և եթէ հանէր ապա հրաման յԱտենէն առ նա վասն այնր. քանզի, ասէ, մինչեւ հաստատեալ էր քեզ այն արծաթ՝ ընդ իշխանութեամբ Ատենին է, վասն որոյ պարտ է հրամանաւ նորին առնել զամենայն։

Հաւանեալ Հ. Սարգսի յոլովմոյ կամս բանից Համարակալին, գրէ առ նա ինքն գիր վասն այնր. իսկ առ ի հանելոյ հրաման յԱտենէն՝ պէտք էին նախ պատրաստել աղերսագիր առ դատաւորն, ապա մնալ հրապարակաւն Ատենի, որում կայր երկուց ամսոց ժամանակ. այլ բան բազմին նորա եղեալ՝ դէպ լինի զկնի քանի մի աւուրց առանձին նիստ դատաւորաց յԱտենի, ի 10 մայիսի, և Հ. Սարգիս մատուցանէ զաղերսագիր իւր, և առնու ի նոցանէ հրաման առ Համարակալն վասն բանին այնորիկ։ Բայց մինչեւ ցհատանել պատճենի հրամանին ի ձեռս նորա յԱտենագրէն ծախին աւուրք հնգետասան և 100 ռուբի։

Այսպէս զանգաղանաք և ծանր ծախիւք լինին ամենայն գործք Ատենին. և պատճառք այսր յապաղումն էր վարչի դատին Կարսոնի, որում յիշեցուցանէ Հ. Սարգիս և ցուցանէ զհամաձայնութիւն իւր ընդ անպատեհ գնացս նորա. այլ այր անզգամ գոյով նորա և անարդ վարուք յոյժ, անտի և անմիտ պատճառանս կարկատէ և արդարացուցանէ զինքն, և յապաղէ տակաւին զգործն։ Եւ այնպէս չարչարեալ նորա գնա մինչեւ յելս մայիսի, ապա հարկ ուրեմն ապ զանելու հաշիւ ծախուց իւրոց, և զայն եւս խարդախութեամբ. զանազի գիտէ թէ զայրացեալ Հ. Սարգսի ընդ անպատեհ գնացս իւր՝ խառնութեամբ քննէր զհաշիւ ծախուց իւրոց, և եթէ գտանէր անդ տեղի ինչ, կարող էր յանդիման լինել վարժապետի օրինաց և վճեալ հանել ասել անտի զաւելորդն։ Վասն այնորիկ խորամանդութեամբ վարեալ, ցուցանէ նմա նոքա չափաւոր ինչ զծախս իւր՝ ասանց գումար առնելոյ զայն, և ասանց նշանակելոյ ուրեք զգումար ինչ ինչ ծախուց։

Գուցէ որոշեալ նոխ Հ. Սարգսի զհաշիւ նորա՝ տեսանել զի հասանէ այն ցՅ,000 ռուբլի. Հանդարտի սակաւ մի, քան. զի կարծէր բաւ բանից նորա թէ աւելի լցէ քան զ10,000 ռուբլի։ Այս քննեալ զծախս նորա մի առ մի, և տեսեալ թէ ոչ կարի անիրաւութեամբ են՝ առաւել եւս հանդարտի, ապն ունելով թէ վարժապետն օրինաց ի քննել և ի սահմանել զնոսին պակասեցուցէ անտի այլ եւս ինչ։ Միտեղամոյն և ակնածութիւն ինչ առ Կորոսն պահեալ՝ չկամի յանդիմանն լինել վարժապետին օրինաց ի ժամանակի քննութեան հաշուի նորին, այլ իբրեւ առ քաղաքավարութեան ասէ ցնա։ «Թէպէտ և կան ինչ ինչ աւելորդ ծախք ի հաշիւդ, բայց «ընդ իս և ընդ քեզ չէ մեծ ինչ, վասն որոյ թողում զոյն «յուզութիւն մտաց քոց։»

Շնորհակալ լինի նմա Կորոսն խորամանկութեամբ, և ասէ; «Եթէ ի Պերսաստանց մեայր ինձ ընդունել զծախս իմ, շատ «առաւելութեամբ ցուցանէի նոցա զայն. բայց քանզի ի դը- «բանց աղքատաց է, չկամիմ և ոչ մի ռուբլի աւելի պա- «հանջել։»

Յայնժամ չկարացեալ Հ. Սարգսի տանել անզգամութեան նորա, ասէ; «Միշտ և առ ամենեսեան պարտ է արդարու- «թեամբ վարել. տառապեալ աղքատքն դեռ և ոչ մի ռուբլի «չեն վայելեալ յիրաւանց իւրեանց, այլք բազում ռուբլիս «վայելեցին արդէն անիրաւութեամբ։»

Խնացեալ նորա թէ առ ինքն էր յանդիմանութիւնն, այլ չիմանալոյն արարեալ՝ ասէ; «Յիրաւի ծանր են յոյժ ծախք «օրինաց Ասենին։» Քանզի զայս օրինակ խորամանկու- թեամբ վարեցաւ նա ընդ Հ. Սարգսի երբեմն, ի ժամանակի առաջին վճռոյ խնդրոյն և ի ծախս նորին. և ապա պահանջեաց և էառ ի զրամոյ աղքատաց իբրեւ 7,000 ռուբլի անիրաւութեամբ. վասն որոյ և բազում բանք անցին ի մէջ նոցա, որպէս ծանուցաւ ի վերոյ անդր։

Յետ երկուց աւուրց լսէ Հ. Սարգիս թէ քննեալ վարժապետին օրինաց զհաշիւ ծախուց Կորոսնի՝ սահմանեալ է զայն 8,000 ռուբլի։ Զարմացեալ ընդ այն, միտեղամոյն և զայրա-

ցեալ ընդ խարդախութիւն Կօլտոնի, յարուցեալ նոյն ժամանայն գնաց առ նա։ «Զարմանալի ինչ լուեալ եմ, ասէ զի «հազիւ 5,000 ռուբլի ցուցեր ինձ դու զհաշիւ ծախուցդ, և «լսեմ այժմ՝ թէ առուել քան զ8,000 ռուբլի ստանեալ «է այն ի վարժապետէն. և թէ այս ո՞րպէս՝ կամիմ իմա-«նալ։»

Ասէ ցնա խորամանդն; «Ունէիր դու իրաւունս քննել և «իմանալ զայն, զի պարտ պաշտաման քո է. բայց մի՛ կար-«ծիցես թէ ես այլ հաշիւ ցուցեալ իցեմ քեզ և այլ հաշիւ «յանդիման արարեալ վարժապետին օրինաց. եկ բաղդա-«տեցուք զայն ընդ միմեանս, եթէ դատանիցի՞ ինչ զանա-«զանութիւն։»

Յիրաւի, բաղդատեալ նոցա զայն համեմատ դատեն ըզբանս յերկոսին օրինակսն։ Սակայն զանազանութիւն և խարդախութիւն էր յայտնապէս ի ծախսն. քանզի որպէս վերագոյն յիշեցաւ, չէր նորա նշանակեալ զայն ուրեք ուրեք, այլ զանազանացին բաց թողեալ, տարով պատճառս՝ թէ զգուշաբար նոցին դեռ չէ ստուգեալ, և ցուցանելով եւս՝ թէ չնչին ինչ էին իրքն. բայց յօրինակի անդ իւրում՝ բովանդակ նշանակեալ էին և լինէին մեծամեծ գումարք, որ չորս հարիւր, որ երեք և որ երկերիւր ռուբլի. և այն ծախք վերաբերէին այլոց, փաստաբանից, ատենադպրին, և վարժապետի օրինաց. զորոց գումարն զիտէր ինքն յառաջագոյն, ունելով զհաշիւնոցա առ իւր։ Բայց խորամանդութեամբ զայն այնպէս առնէր՝ առ ի ցուցանել զծախս իւր փոքր, և կատեցուցանել զՀ. Սարգիս ի յանդիման լինելոց վարժապետին օրինաց, որպէս և հատանէ խորամանդութեան իւրում։

Ի վերայ այնր ամենայնի, նորոգ ցուցեալ հաշիւ նորա չհատանէր ց7,000 ռուբլի, այլ մնայր աւելի իրրեւ 1,000 ռուբլի, զոր չկարէր ցուցանել։ Ապա ասէ ի վախճանի՝ թէ դուցէ սխալեալ իցէ ինքն ի գումարելն. վասն որոյ ասայ Հայր Սարգսի զերկոսին օրինակսն զի քննեսցէ ի ստոյն իւրում առանձին։ Քննեալ Հ. Սարգսի զհաշիւ նորա, գտանէ ի միում գումարի զանազանութիւն 1,000 ռուբլոյ. քանզի փոխանակ

հարիւրաւոր հազարաւոր առեալ էր, և այլ քանի մի հարիւր առուի յոյլ զանազան գումարս գտանէր յաւելեալ։

Ի վաղիւ անդր մինչչեւ գնացեալ Հ. Սարգսի առ նա, և ցուցեալ զխորհուրդս նորա, կամիլ նա ինքնին ազգ առնել նմա զայն։ Այլ չկամեցեալ Հ. Սարգսի առանց յանդիմանութեան թողուլ զանզգամութիւն նորա, ասէ ցնա։ «Եթէ վասն այսր «փոքրիկ գործառնութեան որ ասա առ վարժապետին օրի- «նաց՝ այսչափ ծանր ծախք եղեն, և այսչափ նեղութիւն «ի կնքել զհաշիւս, ապա զի՞նչ լինէր եթէ զժբախտութեամբ «հարկ լինէր բողոքման գիմեցուցս ի Լոնդոն։»

Ասէ ցնա Կորոն ժպտելով։ «Սպառապուռ քանզուն «ասն Մուրատեանց։»

Ասէ ցնա Հ. Սարգիս։ «Ոչ միայն նոցա, այլ և ազգաց «ազգին անիրաւութիւն մեծ, և ինձ անհնարին նեղութիւն, «զոյց ասի ցարդ զիրաձն. ահա վասն այսորիկ իրաւախո- «հութեամբ աւարտեցի ես զքանն, գիտելով թէ չկայր մեղ- «թարութիւն ի վիճոյ անտի երբէք, այլ նեղութիւն և վնաս «մեծ. թէպէտ և ոմանց անհաճոյ արարքս՝ վասն անձանց «շահասիրութեան, բայց հասարակաց հաճոյ, և ինձ հան- «գարութիւն խղճի մտաց։»

Զայս խօսեցեալ Հ. Սարգսի հրաժարի ի Կորոնէ ասելով, և հասատեալ ի մտի չառալ նմա զընծայն որ ի Միսրանութենէն իւրմէ, զմիւսոն տուին. քանզի անարժան այնմ համարի զնա, և վասն այսորիկ ազգ արարեալ էր նա Միսրանութեան՝ թողուլ զայն ի կամս իւր, «եթէ, և «երբ պատշաճ դատիցի տալ նմա զայն,» յառաջագոյն նախատես եղեալ անարժանութեան նորա։

Զկնի այն ամենայն բանից, տառապանաց և վայրապար ծախուց օրինաց ասկս անշահ վարուցն Կորոնի, հազիւ յելս մայիսի մատուցանէ նա զվճիռ խնդրոյն Համարակալի տերութեան՝ առ ի կատարումն տալ հրամանի Ատենին։ Զաւուրս ասն պատրաստէ Համարակալն զհաշիւ իւր և զծախս օրինաց, զՄուրատեանց և զՀ. Սարգսի։

Ի 5 յունիսի 1832, գնայ Կորոն ի գանձատուն տէրու-

թեանն և առնու անուր զրաժին իւր, 7,462 ռուբի Մարտաս. և ի վաղիւ անդր ազգ առնէ Հ. Սարգսի գնալ առնա, զի ի միասին երթեալ ի գանձատունն առնուցու և նա զիւր բաժինն, զաւանգեալ մասն հրիտակին ազգմութեան, կարծելով թէ առանց իւր ոչ հատուցանէր գանձապետն զարծաթն Հայր Սարգսի. և կամ պարծանս անձին համարէր զի ձեռամբ իւրով ընկալցի նա զգումարն մեծ հրիտակին ազգմութեան։ Այլ տաղտկացեալ և զզուեալ Հ. Սարգսի յառնէ անտի՝ չկամի տալ նմա զայն պատիւ. վասն որոյ առաքէ նախ առ գանձապետն տեղեկանալ ի նմանէ՝ թէ ի՞նչ պատրաստ իցէ նա հատուցանել նմա զարծաթն, և թէ հաւրկ իցէ զի և Կօրտօն ընդ իւր գնայցէ անդր։ Ազգ առնէ նմա գանձապետն՝ թէ զկնի մեր առաքեալ պատրաստ է նա հատուցանել զարծաթն, և թէ Կօրտօնի գնալ ընդ նմա անդր չէ ինչ հարկ։

Ի վաղիւ անդր ի 6 յունիսի գնայ Պ. Յովհաննէս Մուրատ ի գանձատունն և առնու անտի զրաժին իւրեանց, այսինքն զաւելորդ մասն արծաթոյն, 182,185 Մարտաս ռուբի, զ11,000 ասէրլին հանդերձ շահուք։ Ապա յ7 յունիսի գնայ Հ. Սարգիս ի գանձատունն և ընդունի զմասն իւր, այսինքն զարծաթ հրիտակին ազգմութեան աւանդելոյ անդ, 370,000 Մարտաս ռուբի, ատրագրելով յերկուս և յերիս տեղիս ի յիշատակարանի գանձատանն՝ ի հաստատութիւն ընդունելութեան արծաթոյն այնորիկ աւանդելոյ ի ձեռս Շամիրակալին։

Իսկ ծախք օրինաց ընդհանրական փաստաբանին Նորթընի հատուցանի զկնի քանի մի աւուրց, և լինի այն 5,538 ռուբի։ Եւ այն ծախք օրինաց ասելն անիրաւ էին քան զամենայն ծախս. քանզի խորամանդն Նորթըն և ոչ մի ինչ արդիւնս ունէր ի գործն յայն հրիտակին ազգմութեան, այլ մանաւանդ խոչն և վնասակար լեալ էր երկուց կողմանց, և կրծեալ էր ի Մուրատեանց բազում ինչ խորամանդութեամբ։

Իսկ բոլոր գումարն արծաթոյ հրիտակի ազգմութեան և Մուրատեանց, զոր հատոյց գանձապետն հրամանաւ Սահեմի և Շամիրակալին՝ եղեւ 565,185 Մարտաս ռուբի, և

134,469 ռուբլի վաշխն յաւելաւ ի դրամագլուխ անդր յամս վեց, սկսեալ յառաջնոյ օրէ հոկտ. 1826 ամին, մինչեւ ցայսժամ։ Բայց արծաթն այն հրիտակին ողորմութեան և Մուրատեանց հաստատաւ դարձեալ ի մուրհակս վաճառական ընկերութեան Անգլիացւոց. յորս և նշանակեալ էր ի Շամխորկալէն կարգաւորութիւն Ատենին, և այնչափ գծեալ՝ մինչեւ չմնալ ի նոսին տեղի առարկութեան տեսրցն ի վաճառել զայս այլոց. վասն այնորիկ հարկաւորին Հ. Սարգիս և Յովհաննէս Մուրատ դարձուցանել զմուրհակն զայնոսիկ առ Շամխորկալն զի փոխեսցէ զնոսին և տացէ նոցա նոր մուրհակս՝ յիւրաքանչիւր անուն նոցա միայն, և միանգամայն զմեծաքանակն ի մանուանս կատարել՝ ի գիւրութիւն վաճառման։ Եւ քանզի այնմ փոխոխութեան պարտ էր լինել ի Կալկաթա, վասն որոյ տեւէ գործն այն ամիս երիս, մինչեւ յիսս սեպտեմբերի 1832 ամին։

Յայնմ ժամանակի, յամսեանն օգոստոսի յորում երրորդ առնման էր Ատենին, Հայր Սարգիս բան խոստմանն իւրում որ ի նորոգ գաշնագրութեան՝ յետս կոչեաց յԱտենէն զգանգատագիր իւր զոր տուեալ էր ընդդէմ Մուրատեանց՝ վասն վաշխի դրամագլխոյ հրիտակին։ Եւ ահա այն էր առնձ Մուրատեանց, զորմէ ասացաւ վերագոյն թէ ունէր զայն Հայր Սարգիս ի ձեռին իւրում։ Եւ արդարեւ եթէ չլինէր առնձն այն ի բերանս նոցա, իրրեւ զձի խառերախ չգիտէին կապել երբէք յընթացից իւրեանց, ի հակառակութենէ ասեմ և ի վիճայ վասն հրիտակին ողորմութեան։ Եւ ահա նոյն իսկ էր նպատակ մատուցանելոյն Հ. Սարգսի գանգատագիր յԱտենէն ընդդէմ Մուրատեանց վասն վաշխի հրիտակին։ Զոր ոչ իմացեալ Միսրանութեանն՝ կարծէր թէ ունի Հ. Սարգիս նորանոր հոգս յաւելուլ ինքեան, և փութայր ազդ առնել նմա զրով հատարակաց՝ զի մի լիցի ձեռնամուխ ի գործն յայն վնասակար Միսրանութեան և ժառանգաց բարերարին։ և Հայր Սարգիս ոչ կամի յայտնել նմա զվատ իւր զառաջինն, մինչեւ առնու զկատարումն զխոստմանէ իւրոյ։

Առաւեալ ի գէպ է, տալ տեղեկութիւն զրոմանդակ գրամոյ

հրամային ողորմութեան յանձնելոյ ի ձեռս Հ. Սարգսի, և զհանգամանաց նորին ընդհանրապէս։

Այդ բովանդակ արծաթ դրամագլխոյ հրամային ողորմութեան, կամ գպրատանն, զոր յանձնեն կառավարարքն հանգուցելոյն ի ձեռս գործակալի Միսրանութեանն, լինի նախ՝ 183,323 ռուբլի հուն, կամ 641,630 Մարդասու ռուբլի. յորմէ 348,649 ռուբլի, և կամ լիրայ ոսկրին 30,191 փոխանակագրով անցուցանէ Հ. Սարգիս ի Վենետիկ ի ձեռս Միսրանութեան իւրոյ։ Մնայ առ նմա 292,981 ռուբլի, բովանդակեն ի մերհակս Անգղիացւոց վաճառականն ընկերութեան Հընդկաց։ Այս ի յարուցանել Մուրատեանց վէճ ընդդէմ Հայր Սարգսի, և ի պարտուցել զնա յԱտենին, յանձնէ Համբարձումի ոսկրի անդրութեանն զոր ի ձեռին եղեալ դումարն, իբրեւ ի պահանջս խնդրոյ հրամային ողորմութեան։

Եւ քանզի արծաթն այն զոր ի մերհակս վաճառականն ընկերութեան Հնդկաց՝ պարտ էր Համբարձումի յաւելուլ անդր վաշխ ամ յամէ, բովանդակ գումար արծաթոյն մնայր ի ձեռս Համբարձումի, 383,000 Մարդասու ռուբլի, իբրեւ 90,000 ռուբլի զոր վաշխն յաւելեալ ինքն։ Հանեալ նորա հրամանաւ Աւանին 13,000 ռուբլի վասն ծախուց օրինաց, զոր վերագոյն յիշեցի, մնայ 370,000 ռուբլի, որ հասուցանի Հ. Սարգսի թէոդորեանի գանձապետի ոսկրութեանն։ Հանեալ անտի Հ. Սարգսի 20,000 ռուբլի վասն յառաջագոյն եղեալ ծախուց օրինաց, մնայ ի ձեռս նորա 350,000 Մարդասու ռուբլի։ Յաւելեալ նորա ինքն ապա և այլ 100,000 Մարդասու ռուբլի, զոր յետոյ ընդունի ի Յովհաննէ Մուրատայ իրաւախոհութեամբ վասն վաշխի դրամագլխոյ հրամային և վասն այլ ինչ հասուցմանց, մնայ ի ձեռին նորա ընդ ամենայն 450,000 Մարդասու ռուբլի։ Յաւելեալ անդր զյառաջագոյն յիշեալն ի Վենետիկ ի վասն, 348,649 Մարդասու ռուբլի, լինի բովանդակ գումար արծաթոյ հրամային ողորմութեան ի ձեռս Միսրանութեանն և գործակալին նորա Հայր Սարգսի 798,649 Մարդասու ռուբլի, որ առնէ իբրեւ 80,000 լիրայ ոսկրին, կամ իբրեւ 2,000,000 Ֆրանք Գաղղիոյ։

Ահա այսչափ ինչ միայն կարողանայ Հ. Սարգիս ի ձեռս բերել յիրաւանց անտի աղքատաց ազգին իւրոյ, զկնի վեշտասան ամաց յարգելոյ արծաթոյ նոցա առ սեղանաւորի Անգղիացւոցն վաճառական ընկերութեան Հնդկաց. և զկնի հնգետասան ամաց ոգւով չափ աշխատութեան և տառապանաց Հ. Ս. վարդապետի՝ մնայ տակաւին ի ձեռս կտակակատարացն և ժառանգաց յարծաթոյ անտի աղքատաց ազգին իրրև 600,000 ռուբի, զոր ոչ կամի Մխիթարեան միաբանութիւնն պահանջել ի նոցանէ խաւութեամբ օրինաց, որպէս զի մի՛ ասիցեն՝ թէ ի պատճառս ոգորմութեան հօրն որդիք նորա անանկոցան. թէպէտ և այլուստ առաջնցան նոքա և առաջին միշտ. քանզի անհնարին է յանդարձու վայել յիրաւունս այլոց, մանաւանդ որոց և աղքատաց ազգին։

Ի գէպ է ասել սոյն անգենկութիւն և զարծաթոյն թողլոյ Հ. Սարգսի կտակաւ ի տիկին Անանայէ Մարտեան։ Արդ առեալ էր նմա տիկինն ի կենդանութեան իւրում, և քան զբաւոր խառսմանն, 16 000 Մարտաու ռուբի. բայց ի ժամանակի խաւսութեան և վերջին հիւանդութեանն բռնադատեալ յորդւոց իւրոց՝ անիրաւի առնա, մինչև զարտաւորել զնա յԱռենի անդ զանձն արդարացուցանել. վասն որոյ ծախի յարծաթոյն առելոյ նմա 15,000 ռուբի, և մնայ նմա անտի 1,000 ռուբի, և թողեալն ի կտակի տիկնոջն 8,000 ռուբի, զոր և ծախէ ի կարեւոր պէտս իւր անդ ի Մարդաս։

Այսպէս կամի Հ. Սարգիս թէոդորեան ի ժամուն պահել և տալ զհաշիւ արծաթոյն եկելոյ ի ձեռս իւր, մինչև յաջողեցցի նմա տերամբ ի Վենետիկ հասանել, և յայնժամ թողուլ զի Մխիթարեանն տնօրինեսցէ զայն, և որոշեսցէ զիւր և զայլոց իրաւունս։ Բայց առ ի տեղեկութիւն եւեթ և ի նախազգուշութիւն կարեւոր համարի զիկուցանել ինչ մի, որպէս զի եթէ պատահեսցի նմա մահ յառաջագոյն՝ գիտասցէ Մխիթարեանն թէ զիարդ պարտ էր նմա որոշել զիրաւունս իւրաքանչիւր։

Արդ իրաւունս համարէր Հ. Սարգիս ոչ միայն հանել Մխիթարեանն ի դրամոյ հրեատակին ոգորմութեան զբոլանդակ

ծախս իւր՝ սկսեալ ի 1817 ամէն մինչեւ ցայժմամ, այլ և բան սովորութեան ամենայն աշխարհի և բան օրինաց տեղւոյն՝ առնուլ անտի զվարձս աշխատութեան իւրոյ 10 առ 100. քանզի 5 առ 100 հասարակ և առ ոսոս եղեալ գործառնութեանց է, յոչ շնք վէճ և վասնզ ընչից գործակալաց. իսկ ասդ ոչ միայն այնոքիկ, և վասնզ կենաց, ընդ ոմիսանս զամուս ութեւասան յանձելով, այլ և հոգք և տառապանք զամս շրջեքտասան, և բանտարկումն զամիս չորս։ Թո՛զ զիրաւունսն որ ի վերջին իրաւախոհութեանն՝ ընդունելով նորա 100,000 ռուբի. զոր թէպէտ յանուն վաշխի հրամայեին հատուցանել նմա Պ. Յովհաննէս Մուրատ՝ առ ի զերծանել ի խրատութենէ օրինաց Ատենին, բայց միանգամայն և իբրեւ հատուցումն առանձին իրաւանց իւրոց ի նոցանէ, որպէս երեւի և ի բանից Յովհաննու Մուրատայ առ նա ի ժամանակի իրաւախոհութեանն։ Ապա ամենայն իրաւամբք կարէր Միքայելեանն առնուլ ի դրամոյ անտի 100,000 ռուբի բան ամենայն գլխոց։

Այսչափ ինչ յաղագս հաշուի և հանգամանաց բոլանդակ արծաթոյ հրամայեին ազգութեան ընդհանրապէս։ Տացուք արդ տեղեկութիւն զայնմանէ և մասնաւորապէս՝ այսինքն վասն մասին արծաթոյն որ ի ձեռս Հ. Սարգսի յանձամ։

ԳԼՈՒԽ ԼԵ.

Դժուարութիւնք անցուցանելոյ զարծաթ հրխուակիսն ի Վենետիկ. — Խորհուրդ Հ. Սարգսի ունելոյ զոք ի միաբանակցացն ի Լոնդոն իբրեւ գործակալ և. թղթակից. — Պարտի Եղուարդ Մուրատ կամի անցանել ի Վենետիկ և. խօսել ընդ Միաբանութեանն. — Թուղթ Հ. Սարգսի առ Գերապայծառն Սոնապետն զամենայն անցիցն անցելոց մինչեւ ցայսմահ. — Պատասխանի նորին. — Առաքել Հայր Սարգսի զարծաթն ի Լոնդոն. — Տանելն յոր անկաւ ի գնալ իւրում ի նաւ. — Գանգատանք նորա զյամբոխութենէ թղթոց առաջնորդին. — Բանք Եղուարդայ Մուրատի ի դարձին իւրում ի Մատրաս.

Թէպէտ և զերծաւ Հ. Սարգիս ի հոգոց խնդրոյն, սակայն մնայր նմա և այլ հոգ մեան անցուցանելոյ զարծաթն ի Վենետիկ ի ձեռս Միաբանութեան իւրոյ յապահովութեամբ։ Ասէցէ ոք արդեօք՝ թէ զի՞նչ հոգ ընդ այն կայր նմա յայնժամ. ապաքէն մեռեալ զմուրհակն և գնեալ փոխանակագիր տէրութեան անցուցանէր զայն ի Վենետիկ ի ձեռս Միաբանութեանն։ Եւ ահա յայնմ իսկ էր դժուարութիւնն։ Քանզի և չգտանէր յայնժամ փոխանակագիր տէրութեան, որ կարեալ էր զայն յայնմ ամի՝ առ ի նուազեցուցանել զշահ արծաթոյ հատարակաց։ Թէպէտ և գտանէր փոխանակագիր Սէյլանայ տէրութեան, այլ սակաւ և թանգ. թող զկատած խարդախութեան որ կայր զայնմանէ ի Լոնդոն։ Իսկ փոխանակագիր առանձին վաճառականաց՝ ոչ միայն կատածելի, այլ և առաւել թանգ լինէր քան զփոխանակագիրս տէրութեան։

Տասն տոգ յառաջ՝ մի Մարտասու ռուպի արժէքն անդ 2½ շիլին. յետ այնորիկ պակասաց միւսանգամայն արժէքն

ռուբլոյ, և էջ 91 շիլին և 1/4 փէնա, յորում՝ ունուանէր զանազանութիւն իբրեւ 35 առ 100 կորուստ ի զրամախոխութեան. որով և յայտ է թէ քանի՛ մեծ կորուստ լեալ էր յառաջին փոխանակութեան արծաթոյ հրիտակին։ Քանզի հաշուեալ էր անդ ռուբլին 1 շիլին և 8½ փէնա, և այն խարդախութեամբ Պ. Եդուարդայ Մուրատ. քանզի այնպիսի գնով էառ նա Հայր Սարգսի զփոխանակագիրս իւրեանց ի վերայ Ռոթշայէլեանց, և այնպէս ասաց ցնա գնեալ զայլ փոխանակագիրսն ի մատնաւորաց. և խարդախեաց նա անդ 15,000 և առաւել. թէպէտ և իմացաւ զոյն Հ. Սարգիս, այլ լռեաց վասն խորդութեան։

Թէպէտ և զսանէր և այլ ինն հնար անցուցանելոյ անտի յԵւրոպ արծաթ, զոր և ի կիր առնուին յայնժամ բազումք, և զոր շահեկանագոյն քան զփոխանակագրովն համարէին, այն է ի ձոյլ ոսկի, կամ արծաթ և կամ ռուբլի առաքել. սակայն զսաւ և յայնմ դժուարութիւն, վասն այնորիկ և հոգին յաղագս չգտանելոյն ուղղակի նաւարկութեան անտի ի Վենետիկ և յաղագս չունելոյն զոք յիւրոյն ի Լոնդոն, զի ուղղեսցէ զայն ի վերայ նորա. իսկ ի վերայ այլոյ ուրուք անգղիացի վաճառականի յղելով՝ պարտ էր կորուսանել 5 առ 100 ի վարձս գործակալութեան նորին. թող զվնասանգ տնանկութեան որ անպակաս էր յայնմ ժամանակի։

Եւ երկրորդ՝ զի պակասէին անդ օր ըստ օրէ արժէք մուրհակացն, մինչեւ 93 առ 100, և այնպէս եւս չգտանէր հարցանող և գնող մուրհակաց տէրութեան. վասն այնորիկ կարծեաց Հ. Սարգիս թէ հարկ էր նմա ի վախճանի անցանել ի Կալկաթա, և անդ վաճառել զմուրհակսն. քանզի հարցեալ տեղեկացաւ գրով ի զանազան անձանց՝ թէ մի առ հարիւր պակասի անդ արժէք մուրհակաց տէրութեան, և թէ դիւրին է անդ վաճառել զնոսին և զարծաթն առաքել, վաճառաշահ գոլով քաղաքին և յաճախ նաւարկութիւնս ունելով յԵւրոպա։

Ապա մնայ Հ. Սարգսի մի միայն հնար, զոր խորհեալ էր ընդ երկար, և զոր յապահովագոյն և շահեկան տեսանէր

քան զայլ ամենայն հնարս անցուցանելոյ ի Վենետիկ զարծաթն. այսինքն էր ունել զոք յիւրոցն ի Լոնդոն, և առաքել ի ձեռս նորա ձոյլ ոսկի կամ արծաթ դահեկան Սպանիոյ, և կամ արծաթի ռուփի Մատրասու. և զայն փոքր փոքր, քանզի չգտանէր այն միանգամայն մեծ քանակութեամբ. այլ և ոչ խոհեմութիւն համարէր բազում ինչ բառնալ ի մի նաւ, թէ և յապահովագրութեամբ, այլ յիւրաքանչիւր պատեհի 10,000 լիրայ ստէրլին. զոր ստացեալ և վաճառեալ անձինն որ ի Լոնդոն՝ անցուցէ զարծաթն ի Վենետիկ. և եթէ արժէք ոսկւոյն կամ արծաթոյ յղելոյ անտի աւելի իցեն ի Վենետիկ՝ անցուցանել զայն անդր այլով նաւաւ և յապահովագրութեամբ՝ ըստ օրինաց վաճառականութեան. և եթէ չգտանէր անդ ի սահմանս Վենետկոյ պատրաստ գնտին գնելոյ ի ստացուածս դպրոցին, գնել զարծաթն ի մուրհակս Անդղիացւոց տէրութեան, զի մի՛ անպտուղ մնայցէ գրամագլուխ հրիտակին ողորմութեան, որպէս մնաց անդ զամս հինգ՝ ոսկս անփորձութեան և անտոմի երկիւղի Միաբանութեանն, զի մի՛ առացից առաւել ինչ . . . .

Ոչ ինչ յերկուսանայր Հ. Սարգիս ընդ հաւանութիւն Միաբանութեանն ընդ այն խորհուրդ իւր, տեսանելով զկարեւորութիւն մեծի գործոյն, և զդժուարութիւն այլոյզգ անօրինելոյ զայն. և ոչ կարծէր թէ մեծ ինչ համարեցի Միաբանութիւնն զծախս անձինն կամ՝ անձանց յղելոց ի Լոնդոն, կշռելով զայն ընդ վարձուց գործակալութեան այլոց. թող և զվտանգ անանկութեան, և այլն։ Եւ հաւատացեալ Հայր Սարգսի թէ ընդ հաւանել զրոյ իւրոյ ի Վենետիկ որոշեցէ Միաբանութիւնն առաքել զոք յիւրոց անտի ի Լոնդոն յամսեանն մայիսի կամ յունիսի, և ինքն ի յունուարի կամ ի փետրուարի նորին ամի, 1833, յղէր անդր զումար ինչ արծաթոյ, ուղղեալ զայն ի վերայ Պարոնաց Ռաֆայէլեանց, պայմանաւ յանձնելոյ նոցա զայն ի ձեռս անձինն և գործակալի Միաբանութեանն։

Իսկ յետ առնելոյն զկր ի գործակալէն, և տեղեկանալոյ անուան և տեղւոյ բնակութեան նորա, այնուհետեւ ուղղակի

ի վերայ նորա յղէր։ Վասն այնորիկ գրէ Հ. Սարգիս առ Մխիթարեանսն, զի տեղեկացի նախ առաքեալ անձն զարժէից ակէց և արծաթոյ ի Վենետիկ, մանաւանդ զառաջոյ Մարտաս, փորձելով զմին ի փողերանոցի. վասնզամայն և տացի իւր անդ ի Մարտաս տեղեկութիւն զոյնմանէ։ Եւ այնպէս յուսայր ի միջոցի տարւոյ մինչ անցուցանել յԵրուսղ զրոմանդակ արծաթն որ ի ձեռին իւրում, և դառնալ ի վանս վաղվաղակի Աստուծով։

Ի յուլիս և ի սեպտեմբեր ամիս 1832 թուականին հասանեն թուղթք յԵրուսղէմ, գրեալք յԵդուարդայ Մուրատէ առ այլս ոմանս ի բարեկամաց նորա, յորս ազդ առնէր եղբօր իւրում՝ թէ հարցեալ նորա խարհարդ ի Լոնդոն ի փառասանից վասն խնդրոյ հրիտակին ողորմութեան, իբրեւ տան նոքա բաղդել ընդ այն Յովան թագաւորին. վասն որոյ յորդորէ զեղբայր իւր առնել զայն։

Ընթեռնու Յովհաննէս Մուրատ զայն գիր յակամէն Հայր Սարգսի, որ տայ նմա պատասխանի՝ թէ դեռ կայ նոցա ժամանակ բաղդելոյ անդր, զի չեւ է լրացեալ վեցամեայ ժամանակն։ Ասէ ցնա Յովհաննէս Մուրատ՝ թէ ինքն չիցէ զայն, և թէ զոր ինչ արարեալ է իրաւախոհութեամբ՝ գոհ և հաճ է ընդ այն, վասն որոյ չիցէ խրատուն Եդուարդայ։ Իսկ մաերիմ բարեկամաց իւրոց ծանուցանէ Եդուարդ Մուրատ թէ ունի կամս անցանելոյ ի Վենետիկ՝ իրաւախոհ, լինել ընդ Մխիթարեանսն, և զարձուցանել ի գէտս իւր զրոմանդակ վաչխ զրամադրիցոյ հրիտակին ողորմութեան, և թէ ընդ յաջողութիւն նպատակի իւրոյ անեկիմիտ է ինքն։

Զայս խորհուրդ նորա զեկուցանէ Մխիթարեանսն նախ Պ. Աղանուր թղթով իւրով և տայ ի նմա զպատճառսն. և ապա Հ. Սարգիս՝ գրելով այսպէս; .. Թէպէտ և չիցայ նմա այժմ տեղի այսպիսի խորհրդոյ, թողեալ զոլով նոցա արդէն „ զասացեալ վաչխն, զրեթէ զրոլորն, բայց քանզի անյոգ „ է ի ցանկութիւն արծաթոյ, ասիցի արդեաք դիմել այդր „ առ Մխիթարեանս. վասն որոյ զգայուցանեմ Աբրհամ „ պատիւ Հօրդ զգուշանալ ի նմանէ, թէպէտ և ահագին

“ երդնուցու չանել ինչ բնաւ, թէպէտ և գանգատիցէ զանի-
“ բաւութենէ եղբօր իւրոյ՝ որպէս թէ անիրաւեալ իցէ նմա,
“ մի հաւատայք բանից նորա. զի համայն ստութիւն է ի բե-
“ բան նորա, և անիրաւութիւն յանձն իւր. քանզի ինքն է
“ անիրաւեալ եղբօր իւրում, և համօրէն ընտանեաց և բա-
“ բեկամաց իւրոց։

“ Միայն եթէ եկեսցէ նա այդր ի վանս, քաղաքավարու-
“ թեամբ վարեսջիք ընդ նմա՝ որպէս և ասէր իսկ էք, և
“ այնչափ միայն պատուեսջիք զնա՝ որչափ ինչ արժան է.
“ բայց խոստանալ նմա ինչ՝ ամենևին ոչ. քանզի ընդդէմ
“ է այն անարատութեան իրգի մտաց մերոց, և անիրաւու-
“ թիւն մեծ աղքատաց՝ ազգիս. թող զնոսխանձ միւս եղբօրն
“ ի ժամուս, և զկարծեցեալ իրաւունս ժառանգաց նորա
“ զկնի. ուստի և անզգաստ նեղութիւն և հոգ Միաբանու-
“ թեան։

“ Թող զայս պատճառս, զոն և այլ իրաւացի պատճառք
“ մերժելոյ մեր զանմիտ խնդիր նորա. առաջինն է վճիռն
“ Աստենիս, յորում իրաւունք աղքատաց ազգիս որոշ և
“ յայտնի են ամենեցուն, վասն որոյ չկարեմք մեք անտի ինչ
“ նմա տալ. և երկրորդ՝ նորոգ դաշնագիր մեր, որով ամե-
“ նայն ինչ վճարեալ է նոցա ընդ մեզ. վասն որոյ չկարեն
“ նոքա պահանջել և կամ հարցանել ինչ ի մէնջ յաւել-
“ տեան։”

Խնացեալ Յովհաննու Մուրատայ ի բանից թղթոց այլոց զղխաւորութիւն եղբօր իւրոյ Եղուարդայ՝ տհաճի յոյժ, և ասէ ցՀ. Սարգիս; “Զկարծեմ ես թէ ի չարտրանել ես մերում “ատ զրանս իրաւախոհութեամբ՝ առնէր և կամ կարող էր “առնել Միաբանութիւնն աշխատանօք ինչ ի շնորհս Եղուար-“դայ, անիրաւելով ընդդէմ ինձ և աղքատաց ազգին։”

Ասէ ցնա Հ. Սարգիս; “Ուղիղ են կարծիք քո, քանզի ան-“հնարին է Միաբանութեանն այնպիսի ինչ առնել։”

Բազում քաղաքավարութեամբ և մեղմաբար վարի Յով-հաննէս Մուրատ ընդ Հ. Սարգսի, և խոստմանի նա թէ “Յիշխանութեան Միաբանութեանն է ասելիս առնել նո-

“ ցա չարիս՝ պահանջելով ինոցանէ զվաշխ հրիտակին, թէ-
“ պէտ և կայցէն դաշնագիր և պայմանք հաստատեալք ի մի-
“ ջի իւրեանց։ ”

Յետ համառօտ և ուղղակի գրութեան Հայր Սարգսի առ Միաբանութիւնն, և յետ անուղղակի գրութեան ձեռամբ Պարոն Աղամուրի առ նոսա զելից խնդրոյ հրիտակին ողորմութեան և զվերջին վճռոյ Ատենին, գրէ Հ. Սարգիս առ Գերապայծառ Սուքիաս Սոմալ թուղթ մի յերկար, իբրեւ ի 60 և աւելի երեսս, որոյ ծախք մինչեւ ի Վենետիկ լինին ֆրանք 50, և ասայ ի նմա տեղեկութիւն զանցեցեալ անցելոց ի խնդիր հրիտակին ողորմութեան, պատմութիւն քան ամսոց, սկսեալ ի յունուարէ 1831 մինչեւ յելս հոկտեմբերի 1832. և սկիզբն թղթոյն այսպիսի է;

“ Տէր հայր մեր, տէր դատաւոր մեր, տէր փրկիչ մեր և
“ նա փրկեացէ զմեզ։ ” Ապաքէն ի դէպ են մեզ այժմ այս
“ բանք մարգարէին, որպէս երբեմն Իսրայէլի. քանզի որպէս
“ հայր և որպէս դատաւոր պաշպանեաց Աստուած որդւոց
“ իւրոց ազգատաց ազգիս յիրաւունս նոցա, և իբրեւ փըր-
“ կիչ փրկեաց զմեզ ի հոգոց և ի տառապանաց մերոց. վասն
“ որոյ զոհասցուք առհասարակ զՏեառնէ բոլորով սրտիւ մե-
“ բով, և պատմեսցուք զողորմութիւն նորա յազգս մեր յա-
“ տեան . . . ։ ”

Եւ ի վերջէ ասէր;

“ Ահա այսչափ և այսպիսի են անցք իրացս և հանգամանք
“ նոցին զոր կարգաւ և քաջ տեղեկացուցանել խոստացայ
“ ի սկիզբն գրոյս. և այս համառօտ և իբր հինգերորդ մասն
“ է նոցին, սկսեալ ի 1831 ամէն մինչեւ ցայժմ։ Իսկ անցք
“ առաջնոց չարից ամսոց կարի շատ և ազեռապի են յոյժ. զոր
“ թէպէտ նշանակեալ եմ ի յիշատակարանին մերոյ պատմամբ,
“ այլ ոչ կամիցայ տալ, ոչ յառաջ՝ սակս շյաւելլոյ զհոգ
“ Միաբանութեան, և ոչ այժմ՝ զի մի տատիցին վարդա-

„ պար ծախք նամակաց. այլ ածից ընդ իս ի վանս, և տաց
„ ընթեռնուլ և պահել իբրեւ յիշատակ ապա եկեղեցն, զի
„ գիտասցեն թէ զիարդ բերեալ եմ ի ձեռս զհրիտակն ողոր-
„ մութեան, և թէ ո՛րպէս պարտ է պահել զաւանդն զայն
„ արքազան որ և աղքատ մանկանց տառապեալ ազգիս։...

„ Եւ արդ զինչ ծանուցից Արհիպատիս Հօրդ և Ատուա-
„ ծատուն ուխտիս, եթէ ոչ զինդութիւն սրտի ձերոյ ի հե-
„ ռուստ ատի նկատեալ՝ ասացից հրճուանօք; Խաղաղարարքդ
„ հատատութեան ազինս Արամեան, զխաղաղութիւնն ցան-
„ կալի զոր ուխտիւք խնդրէիք տեսանել՝ ահա տեսէք և խրն-
„ դացէք, և զաղատութիւնն գեղեցիկ զոր ըղձիւք ցանկայիք
„ գտանել, ահա գտէք և ուրախ էք։

„ Եւ քո, Արհիպատիս Տէր, ահա երկք և վատակք, յորս
„ վատակեցեր ցաւօք և տառապանօք՝ ընդ ծով և ընդ ցա-
„ մաք յածելով՝ ոչ անպտուղ և ի զուր եղեն, այլ արդաս-
„ էր և յանմահ յիշատակ քեզ յաւիտեան. ընդ որ խնդամ
„ իբրեւ կցորդ, և որում խնդակից եմ իբրեւ անդամ, և
„ որով ճնամ միշտ

„ Արհիպատուութեանդ ձերում

„ Ի Մատրաս. 20 հոկտեմբեր 1832.

„ Նուաստ ծառայ

„ Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՄՐԻՄԵԱՆ.“

Առնէ պատասխանի Գերապայծառ Սուքիաս Սոմալ վե-
րոյիշեալ թղթոյ Հ. Սարգսի օրինակ զայս.

„ Վերապատուելի Տեառն Հ. Սարգիս վարդապետի
ի Տէր խնդալ.

„ Վենետիկ. 21 ապրիլի 1833.

„ Գոհութիւն ամենագութ Տեառն որ հանգոյց զմեզ և ու-
„ րախ արար յ30 մարտի նորոյ աւետարքիս տարւոյս, յո-

«բուսմ ընկալաք զառաջին օրինակ ինչ նամակի Հայրութեանդ,
«զրեալ ի 20 Հոկտեմբերի անցելոյ, հանդերձ ամենայն ծրա-
«բերովքն ի նմա։

«Եթէ ուրախացաւ բազմավիշտ Հայրութիւնդ ընդ բարե-
«բաստիկ կատարումն իրաց ազգային գպրատանն, զմտաւ ած
«քանի՛ ցնծութիւն եղեւ համագումար ուխտիս սրբոյն Ղ. ա-
«զարու ի նմին երեանեցարդ աւուր մարտի, յորում ասնա-
«խըմբէաք զյարութիւն նորա հրաշալի, զոգցես ընդ նմին
«վերակենդանացեալք ոչ ի չորեքօրեայ՝ այլ ի բազմամեայ մե-
«ռելութենէ. և ապա ընթերցաք զայն հանդիսաւ և ուրա-
«խութեամբ ի լուր ամենեցուն ի յեռագայ աւուր, որ ասն էր
«փառաւոր գալստեան փրկչին յԵրուսաղէմ, յորում ողջոյք
«զՎիսանենայն երգէին. և միանգամայն օրն էր 31 մարտի,
«որ ապեղարձն էր խորհրդաւոր այնր աւուր յորում կրն-
«քեցաւ ձեր գաշնագիր ընդ Աստուածոն։ Յիրաւի է ու-
«բեմն զարմանալն Պ. Յովհաննու Աստուածոյ. արդարեւ
«ամենայն ինչ խորհրդաւոր է ի գործս և ասուածային
«տեսչութեամբ։

«Արդ մի քան միոջէ յակն արկեալ զամենայն գրեալդ
«մանրապատում՝ տեսաք զկնճիռն խարդախութեանց և անի-
«բաւութեանց ի սկզբանէ և այր, եթէ ի կողմանէ կատակ-
«կատարացն և եթէ փաստաբանիցն. բայց յաջող ելք պատ-
«կեցին զգործն և զբազում երկայնամիտ փաստակս Հայրու-
«թեանդ, ընդ որ չնորհ ունի Վիսարանութիւն մեր ինեւ
«հանդերձ. զորոյ զարժանի տիւռուր հատուցէ նա ինքն
«բարեպարգեւ Հայրն որոյ և աղքատաց, որոց աղօթք հաս-
«ցեն քեզ ի թիկունս։

«Չնորհ ունիմ և արդարակրօրով գատաւորացդ, և ամենե-
«ցուն որք ձեռնտու եղեն ի կատարումն իրացս։ Յիրաւի
«այլազգ չէր հնար պատշաճապէս վախճան առնել անգրա-
«ւելի գատս ի պահանջս վաշխիցն, բայց եթէ իրաւախո-
«հութեամբ վայելչականաւ անուան մերոյ, որ սիրելին է
«մեզ միշտ քան զարծաթ։ Փոխ և զայն զի իրաւախոհութեամբ
«զերծ լինիմք միանգամայն և ի բիւր թախանձեցուցիչ գոր-

“ ծակցութեանց ներկայ և ապագայ ժառանգացն . վասն
“ որոյ հաճեալ եմք ընդ դաշնագիր ձեր իբր համաձայն
“ մուց մերոց և հրահանգացն վաղու եւս տուելոց առ
“ ի մէնք Հայրութեանդ ։ Լաւ են հարիւր հազար ռուբի
“ ի ձեռին խաղաղութեամբ, քան զվեց հարիւր հազար կե-
“ զակարծս և ընդ վիճիւ դատաստանի և խռովութեան, և
“ զի մի բամբասիցիմք յազգայնոց իրրեւ քանդիչք տանն
“ Մուրատեանց ։

“ Հոգ Հայրութեանդ վասն զդրամս անցուցանելոյ առ մեզ
“ ի Վենետիկ արդարեւ չէ վայրապար՝ յաղագս անհնարին
“ կորստեան գլխոյն ի սակս փոփոխութեան արժէքից փոխա-
“ նակագրացն . բարւոք է խորհեալն առ ի քէն . Ջանամք հա-
“ ուցանել վաղագոյն զոմն ի մերոցն ի Լոնդոն ։

“ Վասն տիտղոսի կանգնելի դպրատանն յանուն Պարոն
“ Սամուէլի Մկրտչի Մուրատեան՝ անհոգ լեր, զի և մեր միտք
“ այն էին և են իսկ ըստ ամենայն իրաւանց արդարութեան ։
“ Նոյնպէս զգուշացեալ եմք ամենայնիւ ի նշանակելն զգնեալ
“ կալուածն յարքունի մուրհակս, որպէս թելադրեալ էք
“ ի գրիդ ։

“ Վասն Պ. Եդուարդայ մի՛ երկնչիք, զի ըստ բաւականին
“ տեղեկացեալ եմք ի նախընթաց թղթոյ Պ. Աղանուրին, և
“ արդ եւս լիով տեղեկացաք ի նամակէ Հայրութեանդ մեզ-
“ մեր խորհրդոց նորա . թէ և եկեսցէ առ մեզ, չունի ինչ
“ կորզել . մի՝ զի ամենայն ինչ կատարեալ է ի Մատրաս
“ վերջին դաշնագրովն՝ նաեւ յանուն իւր, որով թողաւ
“ մեծագոյն մասն վաշխի հրիտակին, այսինքն աւելի քան
“ զ500,000 ռուբի ։ Եւ երկրորդ՝ զի ի դրամոց աղքատացն
“ չունիմք իշխանութիւն ոնօրինելոյ ի նպաստ նոցա որք ընդ
“ այսչափ ամս զրկեցին զորբս յիրաւանց իւրեանց այսչափ
“ մեծագումար տուժիւք, զատաստանական վայրապար ծա-

“ խուք, և վիշտամանամեայ տարապարտ աշխատութեամբ
“ և վշտօք։

“ Այսչափ ի պատասխանի թղթոյդ, յայսմ հետէ չմնայ
“ մեզ այլ ինչ՝ բայց աղօթք անպակաս, նախ զի հայցեն փոխ-
“ թոյլ և անվնաս զլուխք դրամոցն, զի և զայն զեռեղեցուք
“ ի կալուածս զեռնոյ՝ որ ոչ պակասէ, և սկիզբն լիցի զոր-
“ ծադրութեան։ Արդէն առաքեցաք ի Պօլիս զկարգաւորու-
“ թիւնս ընտրելի մանկանց։ Եւ երկրորդ՝ զի բազմաչխատ
“ Հայրութիւնդ ժամ մի յառաջ պատապարեցի առ մեզ
“ ի Հանդիպատ, և անձամբ լիցի ակամատես բարեացն արդա-
“ տեաց։

“ Ողջ լեր, ողջունեալ յամենայն ուխտէս, և ողջունելով
“ զամենեսին, և առանձին զսիրելի բարեկամս մեր զՊարոն
“ Աբրահամ Ագանուրեանց, և զայլս։

“ ՍՈՒՓԻԱՆ ՍՈՄԱԼ,

“ Արքեպիսկոպոս և Աբբայ։ ”

Յետ այնորիկ սկսանի Հ. Սարգիս հոգալ անցուցանել զարծաթն ի Վենետիկ ի ձեռս Միաբանութեան իւրոյ. վասն որոյ գրէ առ Ցաթուղղահ, փեսայ Պ. Կարապետի Մուրատեան ի Կալկաթա, տեղեկանալ ի նմանէ զգնոյ մուրհակաց վաճառական ընկերութեանն. զի թէ վաճառ նոցին անդ շահեկան իցէ քան ի Մատրաս, անդր ի Կալկաթա անցցէ վաճառել զայնս, և անտի անցուցանել զարծաթն ի Լոնտոն և ի Վենետիկ։ Եւ մինչդեռ Հայր Սարգիս յայն հոգս էր, ահա բատ բախտի աղքատաց ազգիս սկսանի տակի դահեկանն Կիւշմէօճիւր անուանեալ յաճախ և առատ երևել ի Մատրաս, որ յառաջ դուն ուրէք երևէր. փորձէ նա գնել զայն և անցուցանել ի Լոնտոն, և գտանէ շահեկանագոյն քան զփոխանակագիր տէրութեանն. վասն որոյ սկսանի վաճառել մի առ մի զմուրհակս վաճառական ընկերութեան Հնդկաց, և գնէ զտակի դահեկանն զայն, և զայլ տակեդրամ՝ Սպանիոյ՝ Տուզրօն անուանեալ, որս հետ զհետէ յամենայն պատահի նաւուց բառնոյ

յայնոսիկ և անցուցանէ ի Լոնդոն ի վերայ Պ. Աղեքսանդրի Ռաֆայէլի։

Թէպէտ և մուրհակք վաճառական ընկերութեան Հնդկաց ի սկզբան անդ 4 առ 100 զեղչմամբ վաճառին, բայց ապա 3, 2, և 1 առ 100. յիւրաքանչիւր նաւագի 60,000 ռուբի ոսկեդրամ անցուցանէ ի Լոնդոն, յերկուս փոքրիկ գզրոցս զետեղեալ և կապով և շուանաւ ամուր պատատեալ, հանդերձ յապահովագրութեամբ 4 առ 100 հատուցանելով։ Եւ զգըզրոցսն անձամբ տարեալ յանձնէր նաւապետին, որում և հատուցանէր ½ առ 100։

Ի միում նաւագի փոքր միւս նաւ և վոանգի պատահէր, և պահպանութեամբ ձեռինն Աստուծոյ զերծանէր անտի։ Քանզի պատրաստէ ոսկի գահեկանս 120,000 ռուբի միանգամայն, և զետեղեալ զայն ի 4 գզրոցս տանի ի նաւս երկուս, որք ի միում աւուր ունէին եկանել ի ճանապարհ։

Մինչ չեւ մտեալ նորա ի նաւակն, մին ի նաւուց անտի առագաստ բացեալ սկսանի նաւել. և նորա զհետ այնր մտեալ առ ի հասանել և յանձնել նմա զերկուս ի գզրոցացն, անեւրեւութանայ ի ցամաքէն. և ի սաստկանալ ալեացն սկսանի շուանաւ կապեալ նաւակն առնուլ ջուր յորդութեամբ, մինչեւ թիավարացն խոնջիլ ի դուրս պեղելով զջուրն, և յուսահատիլ ի հասանելոյ նաւուն։ Տեսեալ նոցա և զնշանն որ ի մաքսատանէն՝ դառնան, զի մի խստութեամբ պատժիցին. քանզի արդեալ է նոցա չմիսել այնպիսի նաւակաւ ի խորս ծովուն, վասնզ անհրաժեշտ ի վերայ կալով։

Դառնայ և նա յետս հարկաւ, և գնայ ի միւս նաւն՝ որ խարխս ի վեր առեալ կամէր եկանել ի ճանապարհ։ Բազում ահիւ և զողութեամբ հազիւ առնս մերձենայ ի վեր եկանէ, և կամի զկէս միոյն գրամոյն բառնալ անդր. բայց ի քաջալերել զնա նաւապետին, թէ նաւ իւր ամրակառոյց և արագաքայլ է, յանձնէ նմա զրոլորն միանգամայն, հատուցեալ նաւապետին զնաւողչեայն, և առեալ ի նմանէ գիր ընդունելութեան և դառնայ ի ցամաքն, ուր յանդիմանին և պատժին թիավարք նաւակին ի հրամանատարէ նաւահանգստին,

փոխանակ զի ի վառանգ արկին նոքա զանփորձ ոք օտարական ։

Թէպէտ և յապահովագրեալ էին ոսկեդրամքն, այլ անհանգիստ էր Հ. Սարգիս յոյժ, մինչեւ յետ ինն ամաց էառ զլուր հատանելոյ նաւին ի Լոնտոն ։ Լսէ նա միանգամայն և զշահեկան վաճառ. ոսկեդրամոցն ի Լոնտոն և փոխանակագրոցն ի Վենետիկ, և ուրախ լինի զի յամենայնի պաշտպանէ Աստուած և յաջողէ իրաւանց և գործոց աղքատաց կարօտելոյ ազգիս. վասն որոյ գոհանայ զՏեառնէ յոյժ ։

Բայց գարձեալ գրէ Թուղթ առ Գեր. Սուքիաս Սոմալ, յորում գանգատի զյամրութենէ գրութեան նորա առ նա, միանգամայն և տայ տեղեկութիւն զհանգամանաց յղեալ արծաթոյ հրիտակին հանդերձ այլովք ;

« Երկու ամ է արդ, Գերապայծառ Տէր, զի ընթացք թղթակցութեան մերոյ դանդաղ և յամր են յոյժ ։

« Ցինէն կողմանէ չյիշեմ ես բնաւ թէ պակասեալ իցեմ յայն կամաւ, բայց եթէ յապաղել զայն երբեմն ակամայ առկս դանդաղ ընթացից գործոյս, որպէս և տեսաւ ի նախընթաց թուղթս իմ ։ Իսկ ի կողմանէ ձերմէ, թէպէտ ոչ ունիմ ասել զի պակասիցեն կամք, սակայն հասարակաբար տեսեալ՝ մընայք միշտ նախ ասոտի յինէն գտանել գիր, ապա առնել նմին պատասխանի ։

« Եւ ընդէ՞ր այսպէս. միթէ ասոտի իցեն առելի ինչ ձեզ գիտելի, և ոչ ինձ այսր. ապաքէն ասոտի երկու եւեթ ինչ են ձեզ ցանկալի գիտել. լսել զողջութենէ անձին իմոյ Նուաստի, և զյաջողութենէ իրաց աղքատաց ազգիս. զոր և լսէք միշտ ի թղթոց իմոց և այլոց ։ Իսկ այսր՝ բազում և կարեւոր ինչ են ինձ ցանկալի. լսել զքաջողջութենէ պատուական անձին Արհիեպատիս Հօրդ, և անձանց Յարգոյ Հարց և եղբարց Միաբանութեանս, և զյաջողութենէ իրաց մերոց որք ի վանս և արտաքոյ. և զորս ոչ միանգամ և երկիցս ի տարուջն, այլ բազում անգամ ցանկալի է ինձ յոյժ լսել. քանզի չիք ինչ տարակայիս ի ձէնջ այլ միայն՝ բաց ի լրոյ և յու-

բախարար լրոյ Հասարակութեանս։ Թէպէտ և այս ազգարարութիւն իմ արդ անապան է յոյժ, յուսալով Տերամբ զի մինչչեւ հասեալ գրոյս այդր՝ ելից ի ճանապարհ դառնալ ի վանս. այլ ո՞ զիտէ, եթէ հարկաւորեցայց յամել, զիտասջիք զցանկութիւն սրտիս։

«Հարկաւորեցայց ասացի յամել. քանզի որպէս յառաջ ծանուցի զհանգամանաց մուրհակացս, այսինքն զարժէից և զդժուարութենէ վճառման նոցին, ի նոյն յոռի հանգամանս են այժմ տակաւին, և առաւել սրդեաք։ Եւ ես թէպէտ եղեալ էի ի մտի անցանել ասի ի Կալկաթա ի վաճառել զնոսին, այլ խափանեցայ ցարդ տակս խոչընդոտն ինչ լինելոյ, միանգամայն և ճնալով բարեխառնութեան օդոց տեղւոյն։ Յաւիմ միայն, զի եթէ ըստ յառաջագոյն ազգարարութեանս յղեալ իցէք զոք այսր ի Լոնտոն, համբերեցէ նա անդ ամիս ինչ աւելի, հանդերձ աւելորդ ծախիւք, որպէս և ես ասա. այլ զի՞նչ արասցուք. զի չէ և այս ի մէնջ։

«Սակայն ի վերայ այսր ամենայնի՝ ջանացայ ես սկիզբն առնել գործոյն ըստ յառաջագիր խորհրդոյս, անցուցանելով ի Լոնտոն զմասն ինչ արծաթոյն, զշահ զրամագլխոյն՝ զոր յանցեալ ամէն և այսր ասացեալ էի ի տէրութենէ. զոր և յերկուս նուագս և ի գումարս անցուցի անդր. մի անգամ ի 16 մարտի Ալֆրէտ անուն նաւաւ, 400 ռակեդրամ Սպանիոյ՝ Տուպլոն անուանեալ, մէն մի ռակին 35 ռուպի, որ առնէ 14,000 Մատրասու ռուպի, թող զծախս յապահովագրութեան և նաւադչէին, 440 ռուպի. զոր ասա ուրոյն հաւուցի ըստ սովորութեան։ Եւ զայս գումար արծաթոյ առաքեցի ի Լոնտոն ի վերայ Պարոն Աղեքսանդրի Ռաֆայէլի մերոյ, հանդերձ ընտելատէր նամակաւ, և պայմանաւ յանձնելոյ նորա զայն ի ձեռս անձին եկելոյ անդր ի վանաց՝ իբրև գործակալ Միաբանութեանս։ Իսկ երկրորդ անգամ՝ ահա յայսմ պատահութեան, Լորտ Ռիչիմ Պենթինկ անուն նաւաւ, 400 լիրայ ասէրլին, չորք հատոր փոխանակագիր Անգլիոյ տէրութեան, և որոց գին է 4,571 ռուպի, զոր անցուցեալ յանուն ձեր և

ծրարեալ ի թղթիս առաքեմ այդր։ Ահա այսչափ ինչ ջանացայ յայտմ ամի անցուցանել յԵրուսաղ։ . . .

„ Արհիապատուութեանդ Ձերում

„ Ի Մատրաս. 10 օգոստոսի 1833.

„ Նուաստ ծառայ

„ Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈՐՈՒԱՆ. „

„ ՅԱՒԵԼՈՒԱԾ. Ըստ խոստմանս իմում որ յառաջին և յերկրորդ օրինակ գրոյս, սամ ասա զլուրս տեղւոյս, և մասնաւորաբար զԵդուարդայ Մուրատայ։ Ահա ի 25 օգոստոսիս եհաս այսր Պ. Եդուարդ Մուրատ. ի փաղիւ անդր նա ինքն Եդուարդ յառաջեաց եկն առ մեզ ի տուն Ազանուրեանց։ Գոսաք մեք զնա փոքր ինչ նիհարացեալ, և զհերս գլխոյն ալեւորեալ, բայց ոչ խոհեմութիւն և ոչ փորձառութիւն ինչ ասացեալ յաշխարհատեսութենէ անտի իւրոյ, այլ ընդ հակառակն. չանգի զկնի վեր ի վերոյ հարցանելոյ զողջունէ միմեանց, առաջին և վերջին բանք նորա եղեն զքեռեաց իւրոց զՌաֆայէլեանց, նախատելով և անիծանելով զնոսա յոյժ։ Ի խրատել մեր զնա քաղցրութեամբ թէ չէ՛ արժան մարդոյ չարխ խօսել զընտանեաց իւրոց, զայրացեալ նորա ասաց կատաղաբար; „Նախատեալ և անարգեալ եմ „ զնոսա յանդիման իսկ իւրեանց, զնոյն արարից և առաջի ամենեցուն։ „ —

„ Պատմեաց մեզ անդ սա ինքն Եդուարդ Մուրատ թէ յաւուր միում ի լինել խօսակցութեան զինդրոյ հրիտակին ողորմութեան և զիրոյ նորին յԱռնիս, ասացեալ է նմա Պարոն Աղեքսանդր Ռաֆայէլ թէ „ Ասացի ես յառաջագոյն Մխի- „ թարեանն չառաքել զոք յիւրոցն ի Մատրաս, այլ ինձ „ յանձնել զրանն. և թէ զրեցի ձեզ, ասէ, չառնել ինչ ա- „ ռանց իմոյ միջնորդութեան. ոչ Մխիթարեանն և ոչ

«. դուք անասցէք ինձ. վասն այնորիկ այս ամենայն խռովու-
«. թիւն և չարիք պատահեցին ձեզ ։ »» Բայց այսոցիկ ամե-
նայնի պատճառ դիս ասէ, վասն որոյ և բազում մեղադ-
րութեամբ խօսի զինէն, և ընդ նախատեսութիւն իւր պան-
ծայ ։

«. Շարժեալ յայնժամ Եդուարդայ Մուրատի, մանաւանդ
թէ բռնադատեալ նորա յարդարութենէն Աստուծոյ, ասէ
ցԱղեքսանդր Ռաֆայէլ լու ի լու ամենեցուն; «. Արդարու-
«. թեամբ պարտ է խօսել. Հ. Սարգիս չունի յայս գործ բնաւ
«. ինչ յանցանս. վասն որոյ և ոչ մեղադրութեանդ է արժա-
«. նի. մեք կամաւ մերով և բազում թախանձանօք կոչեցաք
«. զնա գալ ի Մատրաս. եկայ նա առ մեզ զամս երիս ամե-
«. նայն խաղաղութեամբ և քաղաքավարութեամբ, ոչ ինչ
«. հարցանելով զհրիտակէն ողորմութեան, և ոչ մի ռուփի
«. յարծաթոյ անտի ի մէնջ պահանջելով ։

«. Իբրեւ խառութիւն եղեւ առ մեզ յընդհանրական փատա-
«. բանէ Աստենին, զիմեցաք առ Հայր Սարգիս փրկել զմեզ
«. ի խառութենէ օրինաց, աւարտել ընդ մեզ զբան հրիտակին
«. իրաւախոհութեամբ. հրաժարեաց նա զառաջինն՝ ասելով
«. թէ չկամի խառնիլ յայն գործ. և իբրեւ շատ սոխալեցաք
«. զնա և ցուցաք նմա զանհնարին չարիսն որք հասանելոց
«. էին մեզ ի Փամիսընէ, յայնժամ խոնարհեալ նորա յաղա-
«. չանս մեր յանձն առ աւարտել ընդ մեզ զբանն և ընդունել
«. զարծաթն, և զայն այնպիսի պայմանաւ՝ ընդ որ հաճե-
«. ցաք մեք, և այնչափ արծաթով՝ որչափ ինչ մեք կամեցաք
«. տալ ։

«. Ապա յետ անցանելոյ միոյ տարւոյ աւարտելոյ մեր զբանն
«. և անցուցանելոյ նորա զկէս արծաթոյն յԵւրոպ ի ձեռս
«. Միսրանութեանն իւրոյ ի Վենետիկ ամենայն զգուշու-
«. թեամբ և հաւատարմութեամբ և գիտութեամբ մերով, շար-
«. ժեալ մեր, չգիտեմ յինչ ոգւոյ, գանգատ մատուցաք
«. ընդդէմ նորա յԱստեանն և արկաք զնա ի բանտ՝ առ ի հա-
«. նել ի ձեռաց նորա զմնացեալ արծաթն հրիտակին ողոր-
«. մութեան ։

“ Ընդդիմացաւ նա մեզ, և կարի՛ իրաւամբք. քանզի ասէր
“ թէ կամաւ մերով և օրինաւոր իշխանութեամբ իւրով հաս-
“ տատեալ էր ընդ մեզ դաշն և տացեալ էր ի մէնջ զարծաթ
“ հրիտակին ողորմութեան. այնուհետեւ իբրեւ գործակալ
“ Միսրանութեան իւրոյ, և իբրեւ առանդապահ իրաւանց
“ աղքատաց ազգին չկարէր ի բաց թողուլ զարծաթն, և ոչ
“ այլ ազգ ունօրինել զայն. բայց եթէ Միսրանութիւն իւր
“ ինքնին հրաժարեցի յիրաւանց իւրոց, կամ բարձրագոյն
“ Ատեանն հրամայեցէ նմա յետս դարձուցանել զայն, յայն-
“ ժամ ազատ լիցի ինքն ի պարտուց իւրոց և ի խղճէ մեռաց.
“ մանաւանդ թէ և ուրախ լիցի՝ զի Միսրանութիւն իւր զեր-
“ ծանի ի հոգոց և ի նեղութեանց։ ” —

“ Ասէ ցնա Աղեքսանդր Ռաֆայէլ զարմացմամբ ասեն;
“ Արդարեւ այսպիսի ազգով և իրաւամբք վարեցաւ նա ընդ
“ ձեզ։ ” —

“ Ասէ ցնա Եդուարդ Մուրատ; “ Ճշմարտութեամբ և
“ երդմամբ ասեմ, զի այսպիսի ազգով և իրաւամբք վարեցաւ
“ նա ընդ մեզ։ ” —

“ Յայնժամ ասէ ցնա Աղեքսանդր Ռաֆայէլ; “ Որովհետեւ
“ հակառակորդն իսկ Հ. Սարգսի բերանով իւրով այսպէս
“ խոստովանի, ապա չունիմ ես տեղի մեղադրելոյ զնա, այլ
“ ընդ հակառակն պարտիմ գովել զնա։ ” —

“ Զայս այսպէս պատմեաց ինձ բերանով իւրով Եդուարդ
Մուրատ ի տան Աղանուրեանց։ Թէպէտ և ճշմարիտ էին ա-
սացեալքն նորա, այլ ես ոչ հաւատայի, եթէ չվկայէր բանից
նորա գրաւոր Ոմանեանցի՝ որ անդ գտեալ և ակամբարար
լեալ էր։ Հարցի ցնդուարդ Մուրատ՝ թէ զիարդ է Աղեք-
սանդր Ռաֆայէլ ընդ Միսրանութեան, և թէ զինչ վարկ
ունի նա զնմանէ։ Ասաց ինձ նա՝ թէ “ Պարտ է, բան առա-
“ կին, և տատանայի զիւր բաժին տալ։ Շամարումն մեծ և
“ սէր շատ ունի նա առ Միսրանութիւնդ, բայց կամի զի ազ-
“ գեցութիւն իւր լիցի յամենայնի ի վերայ նորա, ” —

“ Ահա և նոր իմն հոգ յաւելու երկուց եղբարց միանգա-
մայն՝ պահանջումն հրիտակի ողորմութեան Հարց Վենեաց-

ւոց, թողլոյ նոցա կոտակաւ ի Պ. Միքայէլէ Տէր Յովհաննեան։ Կարգեալ են նոքա ասա գործակալ իւրեանց զվաճառական ընկերութիւն Անդղիացւոյ ուրուսն՝ պահանջել ի Մուրատեանց զասացեալ հրխտակն ողորմութեան, իբրեւ 7,000 ռուբլի, հանդերձ քառասուն և աւելի ամաց վաշխիւն, որ լինի ընդ ամենայն 70,000 ռուբլի արդեաք։ . . .

«Պ. Աղեքսանդր Ռաֆայէլ ի խնդրոյ Գերապայծառ Բաբիկեան Եպիսկոպոսին միջնորդեաց յայսմ անձամբ և գրով, և խոստացաւ ոչա աւարտել զայն ասկաւ ինչ վաշխիւ, այլ ոչա զի ոչ գիտեն բնաւ կամաւորաբար հաստուցանել զիրաւունս այլոց, անփոյթ արարին զմիջնորդութեամբ նորա։ Եռուն գործակալի նոցա զնոյն պատճառն զոր հայր իւրեանց տուեալ էր Վեննացւոց, և պահեալ էր զայն արծաթ ի ձեռին իւրում զայնչափ ամս, այսինքն փոխանակ արծաթոյն Աղա Եղուարդայ Ռաֆայէլի զոր ընկալեալ էին Թրեստացի Մխիթարեանք ի թարգմանել և ի տպագրել զպատմութիւն Ռոլէնի, և ոչ էին արարեալ։

«Տեսցուք այժմ՝ թէ սովին պատճառաւ կարասցէ՞ն ոչա յապաղել զհաստուցումն արծաթոյն. զոր ես ոչ կարծեմ, քանզի չեն ոչա կոտակակատարք, ոչ Եղուարդայ Ռաֆայէլի և ոչ Միքայէլի Տէր Յովհաննեան, որոց կոտակակատար էր Սամուէլ Մկրտիչ Մուրատ հայր ոչա։»

ԳԼՈՒԽ ԼԶ.

Առաքումն Հայր Աղեքսանդրի Պէշիքթաշլեանի ի Լոնդոն. — Թուղթ նորա նշանաւոր առ Հ. Սարգիս. — Պատասխանի սորա առ նա. — Թուղթ Հ. Սարգսի առ Գերապայծառ Սուլտանեանի գրեալ ի 24 փետրուարի 183՛ի, հանդերձ յաւելուածով զխնդրոյն Կօրոսնի և Ցուխտիայ Շարքի. — Հաշիւ դրամոց հրատակին թողոյ կտակաւ յԱղա Յարմուհէի Մորատեանի, և առաքելոց ի Վենետիկ.

Առաքեալ ի Միսրանութենէն գնայ Հ. Աղեքսանդր Պէշիքթաշլեան ի Վենետիկ ի Լոնդոն, և գրէ անտի թուղթ առ Հ. Սարգիս ի Մատրաս, ծանուցանելով նմա զտեղի բնակութեան իւրոյ անդ, և զայլ կարեւոր գիտելիս՝ ըստ յայնմ ժամանակի ճանաչման և զգայողութեան իւրոյ, օրինակ զայս.

„ Վերապատուելի Տեառն իմոյ և Հօր Սարգսի վարդապետի խնդալ.

„ Լոնդոն. 28 յուլիսի 1833.

„ Յարդ Վերապատուութիւնդ լուեալ իցէ զգալուստս իմ
„ այսր ի թղթոյ Գերապայծառ Հօրս մերոյ, բայց և ես ըստ
„ խնդրելոյ ձերոյ գրեմ և ծանուցանեմ զտեղի բնակութեան
„ իմոյ։ Զի բնակեմ ընդ Պ. Աղեքսանդրին մերոյ, որ խնդու-
„ թեամբ ընկալաւ զիս ի գալ իմում այսր ի տան իւրում, որ
„ է Թ. 10 Great Stanhop street. ուստի կարէք զամենայն
„ յանձնելիս ձեր առ իս առաքել ի վերայ նորա։ Բայց իմ
„ և առանձին յորդոր այս է, և փափաք բազմաց յուխտս,

“ մանաւանդ կրօնակրաց ունից, զոր և խոստովանաբար գրեմ,
“ քանզի ամենեքին ճանաչեմք զէր ձեր և զիրս, զի ժամ
“ ժամ մի յառաջ փութացէք դառնալ ի վանս. քանզի ի չար
“ և յանյաջող ժամանակի հասեալ եմք։ Գերապայծառն
“ մեր հիւանդ է միշտ, որպէս և գիտէք, և առողջութեան
“ բնաւ չիք յոյս առանց մեծի հրաշից. չելանէ ի սենեկէն արտաքս, և նիհարացեալ է՝ զութանամենիւք։ Վիճակ ծերոց
“ կամ առաջակայից՝ և այն արժանի է կարեկցութեան. զի
“ մին ծեր է՝ և միւսն անխորձ, և այլ ոմն երկչոտ. վասն որոյ
“ և ամենայն գործք Միաբանութեանս ըստ այնմ ծանրաբեալ
“ յամր ընթանան։

“ Արդ ի ժամանակիս յորում ազգս բոլորովին յայլ կերպարան շրջեցաւ, և մեր վանացս բազդն յեղյեղուկ իմն թուի,
“ և պատիւ Միաբանութեանս և օգուտ ազգիս բազմաք կախի
“ արդ զդպրատանէս, որում ամենեքին ապասեն, որ որչափ
“ յամէ, նոյնչափ և նուազութիւն փառաց գործի մեզ. զի
“ համարեալ եմք յաչս այնոցիկ որ յառաջն մեծ ինչ կարծէին
“ զմեզ և սիրէին՝ արք անգործք և անպէտք, որ և յերեսս
“ մերոցն ի Պոլիս ասացեալ են. քանզի լուեալ են թէ այսչափ
“ դրամս ունիմք ի ձեռին և դեռ դանդաղիմք, որք և զման-
“ կունս իւրեանց ասա և անդ յղեն։ Ի Փարիզ վեց են թուով
“ մանկունք յաւագաց ազգիս. մին ի Հռոմ ուսանի, և միւսն
“ ի Մարսիլիա. զի աչք Պոլսեցւոց յետ աքսորանացն բացան
“ յոյժ, և այսպէս ամենեքին արտաքս ելցեն։

“ Վիեննականք ամենայն փութով պնդութեամբ զհետս են
“ որսալ զազգն, և խնդրեն չինել դպրոց ազգային ի Վիեննա,
“ որք և արդէն մանկունս ունին ոչ սակաւ. որք թէպէտ
“ չառնիցեն մեծ ինչ, սակայն անուն բազում արարին յազ-
“ գիս՝ իբրեւ արք գործունեայք և փութաջանք, և ի Պոլիս
“ դրազումն որսացան ի մեծամեծացն։

“ Այլ արդ՝ յառաջադիմութիւն այսր մերոյ դպրատան
“ յամենայն կողմանց՝ բազմաք կախի զձէնջ, չասացից թէ
“ բոլորովին. և վասն այսորիկ է զի ամենեքին ապասեն ժամ
“ մի յառաջ գալոյսեան ձերում։

„ Վասն որոյ, իմ սիրեցեալ և Վերապատուելի Հայր,
„ լուեալ զայս ամենայն այսպէս համառօտիւ, գուշակեցէք
„ դուք ինքնին զամենայն, որ չէք անփորձ ոք, և ըստ այնմ
„ փութացարուք ուրախ առնել զեղբարս ձեր, որք ակնկա-
„ լեալ հառաչանօք սպասեն։ Այս զիմիրդ և որպէս յաջո-
„ ղեսցի ձեզ, ակի, արծաթ, դրամ և փոխանակագիր, ա-
„ բասջիք զամենայն՝ զի փութով զերծջիք ի կապանացդ, և
„ զմեզ զերծուսջիք ի հոգոց. զի մեծ եւս լինի օգուտն զբա-
„ բառանս ի գալստեան ձերում՝ քան զվնաս նորին ի կա-
„ բրատեան զրամոցն։ Եւ ցանկամ, եւ ակն ունիմ տեսանել
„ զձեզ գոնեայ, որ չէ իսկ անմարթ, ի սկիզբն յաջորդ ամիս,
„ 1834, որով թերեւս և ի միասին զարձցուք ի վանս. և երա-
„ նի թէ վաղագոյն. ո՛ օր ցանկալի, երբ իցէ այն։

„ Պ. Աղեքսանդրն ընկալեալ է զշնորհալի նամակ ձեր ուրա-
„ խութեամբ սրտի. որ և սիրով մեծաւ ողջունէ զՎերապատ-
„ ուութիւնդ. և իմ անդադար աղօթիւք ցանկացեալ կենաց
„ և առողջութեան և յաջողութեան Սիրելի և Վերապատ-
„ ուեալ Հօրդ,

Մնամ

„ Ամենախոնարհ ծառայ և եղբայր

„ Հ. ԱՂԵՔՍԱՆԴՐ Վ. ՊԸՇԻՐԹԱՇԼԵԱՆ.„

Համբաւայնիցքն արդեօք այս բանք թղթոյ Հ. Աղեքսանդրի ընդ այնմ ընդունելութեան զոր արար նա Հ. Սարգսի ի Լոնտոն՝ ի դառնալ նորա ի Հնդկաց, և ընդ բանս այնր պատասխանւոյ զոր արար բողոքական թղթոյ Հ. Սարգսի՝ յամին 1855 ընդդէմ բռնաւորութեան Գերապայծառ Գէորգայ Հիւրմիւզեան, որպէս տեսանի յերրորդում հատորի պատմութեանս, յէջն 499 502։

Թողից ասել զնախատական բանից նորա խօսեցելոց զՀայր Սարգսէ առաջի ազգայնոց ի Պոլիս և ի Փարիզ։

Անդ Հ. Սարգիս Թէոդորեան պատասխանի վերոյիշեալ թղթոյ օրինակ զայս.

«Վերապատուելի Տեառն և Հօր Աղեքսանդրի վարդապետի մերոյ ողջոյն սիրոյ ի Քրիստոս.

«Զերեսին Նամականի Վերապատուութեանդ զգրեալն ի 28 յուլիսի, յ2 և 22 սեպտեմբերի անցելոյ, ընկալայ հետ զհետէ, յ9 և յ19 և ի 27 յունուարի տարւոյս, զորս ընթերցեալ՝ ուրախացայ ոչ սակաւ, թէպէտ և ոչ ամենայն որ ինոսին բանք ուրախականք էին, այլ շատ հոգած սրտի և կարի տագնապեալ մտաց։ Զներին ինձ արդ՝ ոչ սղութիւն ժամանակիս և ոչ կարեւոր զբաղանք առաջիկայ գործոյս՝ առնել պատասխանի ամենայն բանից թղթոցդ, այլ ոմանց եւեթ, և այն ի հանդարտութիւն միայն հոգած և տագնապեալ սրտի Հայրութեանդ։

«Վասն որոյ առեմ նախ՝ զի եթէ Վեննականք յաղդախրական ոգւոյ և ինախանձուէ բարեաց հասարակաց շարժեալք՝ զհետ են որսալ զազգն մեր, յաջողելով յաջողեցի նոցա. զի ոչ ընդ այն նախանձիմ. քանզի և այն է ցանկութիւն մեր և նոյն նպատակ. Ա՛ տայր զամենայն ժողովուրդս Տեառն մարգարէս։

«Այս թէ յանձնասէր ոգւոյ և ինախանձուէ չարէ զգածեալք՝ ազարտել կամին զարդիւնս և զհամբաւ Միսիթարեանս, ոչ ինչ յաջողեցի նոցա, որպէս ոչինչ յաջողեաց նոցա զամս քառասուն. զի սատանութիւն մարդոյ չկարէ կործանել զչինուածն Աստուծոյ. և զի ի բանս ազգային զպրաստանն, որպէս օգուտն ոչ հասարակաց ազգիս է, այլ մանաւորաց նորին, որոց և ազգատաց, նոյնպէս և պատիւն որ ունոի՝ ոչ Հասարակութեանս, այլ Աստուծոյ՝ որ յօրինէ մեզք. «Զի պաշտօն հարկիս այսորիկ ոչ միայն առ ի ինալ «զպակասութիւն որոցն է, այլ և առաւելուլ բազմաք զոհու«թիւն Աստուծոյ հանդիպիս պաշտամանս։» — Այս ոչինչ

նուազութիւն փառաց գործեցի մեզ ակամայ յապաղելով մեր զգործն, և կամ ոգէտ համարմամբ ապաշնորհ և յանդուգն ոմանց, որոց ոչ հաստատութիւն սիրոյ և ոչ չափ ատելութեանն գոյ։ . . .

« Յուշ լիցին քեզ անցքն որք անցին ընդ այս գործ դպրատան. քանի՛ հակառակութիւն կրեաց սա զառաջինն, և ո՛րպէս յաջողեաց ի վախճանի. քանզի աղքատաց էին իրաւունքքն, որոց պաշտպան, ինամակալ և Հայր՝ նա ինքն Աստուած է. նոյնպէս և պատիւն որ յօրինի մեօք՝ նմին իսկ Աստուծոյ է. պահեսցէ նա զայն մինչեւ ցյաւիտեան։ Ապա չկայ մեզ ընդ այն ինչ հոգալ և տագնապիլ։

« Երկրորդ, հարցանեմ ես Հայրութեանդ՝ թէ ո՞յք իցեն մեծամեծքն այն Պօլսոյ՝ զորս որսացեալ են նոքա, կամ առագորեարն այն որ ուծացի ի մէնջ, և կամ զինչ գործ մեծութեան նոցա։ Ա՞յ ապաքէն այդ այն մեծամեծքն են որք ամօթ ինչ յառաջ ասէս ազգային Միաբանութեան գնալն ի Հռոմ առաքեցին, և զկարեւոր ծախս նորին անդ հատուցանել ոչ կարացին, մինչեւ պարտաւորիլ Միաբանութեանս ի գթութենէ հատուցանել տուժել զայն յիւրմէ։

« Եւ ո՞չ ապաքէն սոյն այս աւագարեար է, որ զամս հինգ և աւելի ամենայն եռանդեամբ ատուածպաշտութեան և նախանձու կրօնիս ակտակալ է եկեղեցի մի շինել, ասկայն կատարումն նորին ցարդ ոչ եղեւ։ Եւ եթէ այս այսպէս, ապա զիա՞րդ և որո՞վ կարիցեն նոքա դպրոց ազգային ի Վենետս հաստատել. մի՞թէ բանիւ վճարիցի՞ գործ։ Յուշ լիցի քեզ եւս առակն այն տաճիկ, թէ « Զաքչաք էտէն նալչա տըր, ի՞նչ պի- « թիրէն ահմէ տիր։ » Ճարտար են միայն Պօլսեցիք աշտարակ ի Սպանիա շինել, և Վենետացիք խորհրդատէր և ժամագիրք լատին տպել։

« Այսչափ ինչ ի հանդարտութիւն տագնապեալ մտացդ շատ լիցի։

« Յաւիտ միայն ընդ հիւանդութիւն Գերապայծառ Հօր մերոյ, զի վասն այնորիկ և գործք Միաբանութեանս հիւանդագոյգ ընթանան, և յաւելցայ յոյժ ընդ կորուստ Հ. Աթոռա-

կալին մերոյ. Տէր ինքնին մխիթարեսցէ զմեզ, շնորհելով ապաղջութիւն Հօր մերոյ հաստատակաց, և հանելով այլ մշակ ի հունձս իւր։ Ապա չմնայ ինձ այլ ինչ, բայց եթէ աղօթք ունպակաս, զի հացին անվատանգ յղեալքս ամենայն ի ձեռս ձեր, և ինչ ինչ եղբայրական և կարեւոր ազդարարութիւնք զգուշութեան առ Վ. Հայրութիւնդ առանձինն, որք են այսքիկ ;

« Զամենայն գործս քո այդր խորհրդով և միջնորդութեամբ Պ. Աղեքսանդրի մերոյ արասցես, կամ միոյ յեղբարց Նորա, յորժամ երթիցէ նա յԽոտալիա. քանզի գործդ այդ ծանր է և յոյժ կարեւոր, տեղեկութեան պէտս ունի շատ, և դու իրրեւ զիս միայնակ, և ոչ քաջ տեղեակ իրաց քաղաքիդ, և ոչ ծանօթ մարդկան տեղւոյդ։

« Թէպէտ ասես դու՝ թէ եղիցին քեզ օգնական երկու պարոնայք Պոլսեցիք որք այդր, տեղեակք իրաց դրամափոխութեան, և մին ինոցանէ ծանօթ և բարեկամ մեզ, ձրի և յօժարութեամբ գործակից քեզ, և այլն, սակայն խորհուրդ իմ և ազդարարութիւնս առ քեզ այս են, (որովհետեւ հաւատաս դու՝ թէ սակաւիկ ինչ փորձ իցեմ ես,) զի անձամբդ տեսցես դու զգործ քո, և մի՛ ուրեք հաւատացես բնաւ ինչ, բաց ի Պ. Աղեքսանդրէ և կամ յեղբարց Նորա. քանզի ժամանակս չարութեան է, և զայր հաւատարիմ գործ է գտանել, մանաւանդ ի բանս արծաթոյ և անիծեալ շահաշահութեան։ Հարցանելով հարցցես խորհուրդ ինոցանէ և յայլոց վաճառականաց, այլ հաւատալ ուրեք ամենեին ոչ։

« Նոյնպէս, բազում աչալուրջ զգուշութեան պէտք են քեզ յանցուցանել զարծաթն ի Վենետիկ դրամափոխութեամբ, տեսանելով քո այժմ դյուռնախութիւն տեսչութեան, մանաւանդ թէ խարդախութեան վաճառականաց քաղաքիդ։ Զգուշացիր եւս չպահել արծաթ ի տանդ յոր բնակիս, զի բազում դողութիւնք լինին այդր քան այլ ուրեք, որպէս լսեմք ի լրաթղթոց։ Ապրախ լինիցի եւ յոյժ եթէ առ Պ. Աղեքսանդրի բնակէիր միշտ, թէպէտ և նեղութեամբ։ Սիրեցեալդ իմ Հայր,

պարտիմք համբերել և տանել ասկաւիկ ինչ նեղութեան՝ վասն բարութեան տաւտպելոյ ազգիս, և վասն պատուոյ Միթարեանութեան։ Դու ինքնին քաջ գիտես՝ թէ քանի՛ թշնամիք են մեր, և թէ զիա՛րդ ուրախանան ընդ անյաջողութիւն մեր. վասն որոյ բազում զգուշութեան և կարեւոր զգուշութեան պէտք են քեզ ի պաշտօն հարկիդ, որ հաւատացեալ է քեզ Աստուծոյ և ի մարդկանէ։ . . .

„Ապա չմնայ ինձ դարձեալ այլ ինչ ազդ տալել Վ. Երապատուելի Հայրութեանդ, բաց յառաջին ազդարարութենէս զգուշութեանդ. այո՝ սիրեցեալ իմ Վ. Հ. Աղեքսանդր, այն միայն է քեզ կարեւոր դիտելի, և երկրորդել զայն ինձ ոչինչ դանդաղելի. քանզի զգուշութեան և աշխարհի զգուշութեան պէտք են քեզ ի գործդ յայդ. մի՛ թեթեւ և դիւրին ինչ համարիր զայդ, այլ ծանր և դժուարին յոյժ։ Յուշ լիցի քեզ փորձիւ ասացեալն՝ թէ նաւն ի նաւահանգստի անդ բազում անգամ վտանգի քան ի խորս ծովու, ասէս անհոգ լինելոյ նաւապետին, և զերծ ի վտանգէ կարծելոյ նորա։ Անհոգ լինէի ես արդեաք՝ եթէ Պ. Աղեքսանդրն մինչեւ ցկատարումն գործոյդ այդր լինէր և քեզ գործակից, և կամ թէ ոչ՝ և այլ ոք ընկեր քեզ այդր ի վանացս ունէիր դու։ Ոչ թէ զնորոգ եկեալն առաւել քան զքեզ տեղեակ և փոյթ ի գործս համարիմ ես, այլ միայն ի մխիթարութիւն միայնութեան քո այդր, զորոյ զփորձն ունիմ այսր։

„Զայսմանէ ակնարկեալ եմ ես ի թուղթս իմ առ Վերապայծառն մեր, փոյթ տանել ոչամ՝ եթէ պիտոյ և հարկ լիցի, առանց ինչ հոգալոյ զաւելորդ կարծեցեալ ծախուցն։

„Զիզձ քո և զիսափաքդ վասն կարեւոր գործեաց և զարդուց փոքրիկ գահլճի վանացս գիտէի և գիտացի այժմ ի բանից թղթոյդ. զոմեմ ես զցանկութիւն քո և օգնական եղէց քեզ յայն, եթէ տացէ Տէր ինձ կենդանութիւն հասանել այդր. միայն ըստ խորհրդոյ իմոյ և ցանկութեանս փոյթ կալցիս և դու կատարելագործել զուսումն Անգղիական լեզուի այդու պատեհիւ։ Եւ ուրախ լինէի, եթէ լծակից քեզ յայսմ ունէիր զՎ. Երապատուելի Հայր Ռաֆայէլ մեր, զի յառաջ-

դիմութիւն երկուց անձանց ի մի գործ՝ օդնեն և քաջալերեն միմեանց։

„ Մաղթելով քեզ ի Տեառնէ քաջողջութիւն և անփոփոխ

„ կեանս,

„ Մնամ

„ Վերապատուելի Հայրութեանդ

„ Ի Մատրաս. 13 փետր. 1834.

„ Նուաստ ծառայ

„ Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈՂՈՐԵԱՆ. "

Գրէ Հ. Սարգիս թուղթ և առ Գերապայծառ Սուքիաս Սամալ ի 24 փետրուարի այնր ամի, յորում կարեւորագոյն բանք այսոքիկ են;

„ Մարդէն չգիայ ինձ այսուհետեւ այլ հոգ, բաց ի փութով և անվնաս հասուցանելոյ այդր զգիացեալ դրամն. առկայն ոչ կարծեմ թէ պարտ իցէ Միսրանութեանս մնալ մինչեւ հասանիցէ այն այդր, և ապա սկիզբն առնել գործադրութեան գպրոցին, ըստ որում այնպիսի ինչ ակնարկէք ի թուղթս ձեր. այլ ընդ հասանել վերոյիշեալ թղթոյ իմոյ ի ձեռս ձեր՝ որով հանգեայք ի հոգոց և ի կասկածանաց, առնելով ձեր ի ձեռին արծաթ բաւական, ոչ միայն կարէք սկիզբն առնել գործադրութեանն, այլ և յառաջացուցանել զայն։ Ընդէր յապաղէք ի գործն, մի արդեաք խափանեալ իցեն աշխոյժք ոգւոյ Միսրանութեանս. ուր իցէ եռանդն այն հաստատակաց որ հնգետասան ամաւք յառաջ, յորժամ և ոչ յոյս անգամ կայր ի ձեռս բերելոյ զարծաթն դպրատան, որով կանոնս և կարգս վասն նորին յօրինեալ սահմանելին։

„ Թողից ասել զկարի իմն եռանդն մատնաւորի ուրումն ի մէջ, Վ. Հ. Յարութենի Աւգերեան, որոյ իբրեւ յառակը-

տուր եղեալ ի յաջողութենէ Մուրատեան գպրատանն՝ առանձին ինչ գանձանակ ինքնին հատատուեաց՝ հաւաքել անդր փոքր փոքր ողորմութիւն ի տրոց հասարակաց՝ առ ի կատուցանել փոքրիկ ինչ դպրոց, զոնէ վասն չորից եւեթ մանկանց աղքատաց ազգիս։ Իսկ այժմ, ուր ողորմութեամբն Աստուծոյ ամենայն ինչ յաջողեալ է յամենայնի, ոչինչ եւանդն յուսեալ տեսանեմ։ . . .

« Եւ մի՞ արդեօք ոչ օգուտ ինչ ազգիս և ոչ պատիւ Միաբանութեանս զայս գործ համարիք, և վասն այնորիկ այսչափ անփոյթ էք զայսմանէ, և կամ գուցէ յայլ գործս կարեւորս զբաղեալք՝ չկարէք միտ դնել այսմ։ Փանդի լսեմ զի անդադար երթեւեկեն մերքն ի Հռոմ, որ ոչ առանց հարկեւցուցանող պատճառաց և ծախուց ճանապարհի լիցի։ Գիտեմ զի պատուախրեցաւ և պատուախրեցի միշտ Միաբանութիւնս ի Գահէն Հռոմայ, այլ բանիւք միայն և ոչ արդեամբք. և եթէ արդեամբք, այն է քանի մի արծաթի և կամ ոսկի մետալիւք։ . . .

« Փաւ լիցի ինձ արհամարհել զհայրախնամ սէր Սրբազանին առ մեզ, կամ զչնորհս նորա թեթեւ ինչ համարել. այլ զիսկութիւն իրաց կամիմ ցուցանել, միանգամայն և յուշ առնել Միաբանութեանս, թէ ցորչափ ի տգիտութեան անդկան ուղղափառք ազգիս, և հոլիւք նոցա հակառակորդ մեր կրիւք զդաժեալք, անհնարին է մեզ ի գործս պաշտաման մերոյ յառաջադէմ ինչ լինել, և այնու նպատակի մերում հասանել։ Հաստատութիւն բանից, ահա գնացք ուղղափառաց Գալոյ և Հոլուաց նոցա, որք զանտեղեակն իւրում իսկ լեզուի յաստիճան եպիսկոպոսութեան ամբառնան, իսկ զհմուտն գրոց և վարդապետութեան սրբոց հայցն իւրեանց յետս կալնուն։ . . .

« Ոչ թէ այսու նախանձ ինչ արկանեմ Միաբանութեանս. փանդի ոչ պատիւ և ոչ օգուտ ինչ նմա դատիճանն զայն համարիմ, այլ ի հատատել միայն զբանս, այսինքն զտգիտութիւն և զնախանձն ուղղափառաց ազգիս և հոլուաց նոցա, որով և զանհնարութիւն հատանելոյ մեր նպատակի մե-

բում, այսինքն գիւրաւ և առ հասարակ զազգն մեր լուսաւորել։ . . . Ապա յայտ է թէ չկայ մեզ այլ շաւիղ հասանելոյ նպատակի մերում՝ բաց յազգայինս դպրոցէ, զոր ի բազում ամաց հետէ ցանկայաք յաջողել, և զոր յաջողեաց Աստուած յաւուրս մեր և ի ձեռս մեր։

«Ապա պարտ է մեզ այսմ եւեթ միտ դնել և ի սոյն անդադար պարապիլ, արհամարհելով զանարդ նախանձ և զանոտի վարկ հակառակորդաց մերոց, և հաւանելով ճշմարիտ բանից ուրումն արդի իմաստասիրի թէ «Զիրաւունսն զոր զլանն մեզ երբեմն ժամանակիցք մեր՝ գիտեն յետինք հաստատել մեզ։» Սակայն պարտիմք ակն ածել ի նոցանէ յայն ինչ՝ յոր կարիցեն նոքա իրաւամբք ստգտանել զմեզ, որպէս կարծեմ յայս բանս ազգայինս դպրատան, այսինքն ի յապաղումն գործադրութեան նորին, տեսանելով թէ ունիմք մեք ի ձեռին այսչափ արծաթ յեօթն ամաց հետէ, և չառնեմք ինչ տակաւին։

«Թողից ասել և զակնածութենէն որ ի թշնամեացս որ ասա. յորոց թէպէտ չկայ մեզ ինչ երկիւղ, զէնրնկէց գոլով նոցա ի ապառ, սակայն կարող են բամբասել զմեզ, և զանշահութիւն վարուց իւրեանց յաչս անդգամաց արդարացուցանել. որով արդեաք և նուազութիւն փառաց յաղթութեան մերոյ լիցի։

«Վասն որոյ ազաչեմ զձեզ, Գերապայծառ Տէր, և ձեզք զհամօրէն Միաբանութիւնդ, փութասջիք ձեռն ի գործ արկանել և սկիզբն առնել գործոյն որ յօգուտ ազգիս և ի պատիւ Միաբանութեան։

«Այսչափ ինչ յաղագս այսորիկ շատ համարեալ՝ ասաց անգնկութիւն զհանդամանաց գործոյս որ ասա և որ ի Լոնդոն։

«Արդ թէպէտ արժէքք և վաճառ մուրհակաց տէրութեան ինոյն յոռի վիճակի են ասա և առաւել եւս, քանզի պակասեալ է այժմ գին նոցին ցմ և մինչև ցն առ 100, և խնդրողք նոցին յոյժ տակաւ, վասն պակասութեան արծաթոյ ի քաղաքս, սակայն իբրեւ տեղեկացայ ի թղթոյ Հ. Աղեքսանդրի

մերոյ ի Լոնդոնէ զանխտանգ հասանելոյ յղելոցս անդր, այս ինքն 400 Տուպլօնից Սպանիոյ, և զյաջողակ վաճառ նոցին, միանգամայն և ծանեալ զկամս Արքայապատիւ Հօրդ և հանձնէն ուխտս փութալ վճարելոյ իմ ասա զգործս և վաղվաղակի ի Վանս դառնալոյ, այլ և տեսեալ ասա զյաջողութիւն գտանելոյ ոսկեդրամ, զոր գոգցես իմն ի Ֆեառնէ յաջողեալ վասն աղքատաց ազգիս, Ցանացայ նախ վաճառել զմնան մուրհակացս որչափ ինչ կարացի, թէպէտ և 4 1/8 առ 100 զեղչմամբ, թէպէտ և այն բաղում նեղութեամբ։

Ապա փոխանակեցի զընկալեալ արծաթն ընդ ոսկեդրամոյ Սպանիոյ և Մարդասու, և այս եւս ոչ սակաւ աշխատութեամբ. զի ոսկեդրամ Սպանիոյ հազիւ ուրեմն և սակաւ գտանի ասա։ իսկ Մարդասուն ոչ հատարակաց առեալ լինի ի գանձատանէ տէրութեանս, այլ մասնաւորաց ոմանց, պաշտօնէից տէրութեանս միայն, և այն ոմոյ ոմոյ ի վարձս նոցա, և ապա ի նոցանէ անցանէ ի ձեռս հատարակաց, յորոց պարտ է փոքր փոքր հաւաքել՝ մերթ հաւատալ և մերթ առնլի ինչ գնով, եթէ պիտոյ ունիք ։

« Եւ արդ հաւաքեցի ես այսպէս 60,000 ռուբոյ ոսկեդրամ գանազան, այս են 300 Տուպլօն Սպանիոյ, արժէք նոցին ասա 10,500 ռուբի։ և 3,300 Կիրլեօնիբր Մարդասու, և արժէք նոցին ասա՝ 49,500 ռուբի. ընդ ամենայն 60,000 ռուբի։ Զեռեղեցի զայն յերկու փոքրիկ արկեղս, ընդ նշանաւ S. T. D. D. n° 1, 2, և ընդ կնքով իմով, բեռնաւորիցի ի 15 փետրուարիս ի նաւն Mary-Anna անուանեալ, որ ընդ առաջնորդութեամբ Hornsblow անուն նաւապետին, հանդերձ օրինաւոր բեռնագրով և յարմարութեամբ, և ուղղեցի ի վերայ Գ. աղէքսանդրի և ի վերայ Հ. Աղէքսանդրի մերոյ։ Առաքեցից և հետ զհետէ յամենայն պատեհի։

« Մնայ ինձ ինչ մի միայն զոր կարեւոր համարիմ ազդել Արքայապատուութեանդ, և է այս ; Հ. աղէքսանդր մեր գրեաց ինձ զառաջինն՝ առաքել ի վերայ Գ. Աղէքսանդրի զամենայն յանձնարարեալսն իմ, և ապա գրեաց ի վերայ իւր առաքել զամենայն յղեալսն. քանզի ասէ թէ .. Ցձմեռն ունիմ այլոք

«անցուցանել, մանաւանդ զի Պարոնն գուցէ ուզեւորեսցի «յԻտալիա։»—

«Ապաքէն այս լուր ոչ հաճոյ թուեցաւ ինձ. մի՝ զի կասկածիմ թէ գուցէ դժկամակութիւն ինչ իցէ ի մէջ նոցա, և միւս՝ զի եթէ մեկնեսցի անտի Պարոնն, մնասցէ Հ. Աղէքսանդրն մեր անդ միայնակ և անօգնական։

«Գիտէ Գերապայծառ տէրդ ինքնին փորձիւ՝ թէ քանի ծանր է ուսիք՝ գործ և կարեւոր գործ ի Լոնդոն վճարել, մանաւանդ այնմ որ անծանօթ է սրանց քաղաքին և բարբառոյ ազգին, և անփորձ վաճառականն իրաց, թող և զանփորձութիւն այլ և այլ իրաց։ Թէպէտ ես զՀնարաւորն ինձ զգուշութիւն ի գործս կալայ և կալայց, այսինքն առաքեցի և առաքեցից միշտ զամենայն յղելիսն իմ ի վերայ երկոցունց միանգամայն, թէպէտ և զրեցի նոցա խրատանշիւր առանձինն ըստ պատշաճի և ըստ պարտուց, որչափ ինչ արժան և ի դէպ էր ինձ ազգ առնել, և խրատս կարեւոր տալ, տակայն հարկ է Միսրանութեանս, եթէ տակաւին անդ իցէ Պարոնն, գրել Հ. Աղէքսանդրի մերում՝ զամենայն գործս իւր խորհրդով և միջնորդութեամբ նորա առնել. իսկ եթէ մեկնեալ իցէ նա անտի, ապայ զոր օգնական նման վաղվաղակի ի Լոնդոն առաքել։

«Մի՛ վարկասարակի զրանս և մի՛ վայրապար ծախսն հանիցիք աղաչեմ. զի եթէ պակասիցի ի գործս կարեւոր զգուշութիւն յապահովութեան, միաս նորին որչափ և փոքր կարծիցէք՝ շատ առաւել մեծ լիցի քան զվայրապար ծախս առաքելի անձինն, թողեալ զանհնարին ցաւսն և զվերազրութիւնն որ ի թշնամեաց՝ տակս անզգուշութեան մերոյ։... Ա՜հ, զիարդ յաւելուն ինձ օր ըստ օրէ նորոգ հոգք. Ի՞նչ լիցի ինձ զերծանիլ ի հոգոց սոսի։...

«Ի 13 յունուարի տարւոյս գրեալ արար այսր ի Լոնդոնէ որդին Եդուարդայ։... Զանամ ես անդադար վաճառել զմերկնակն, և վաճառեալ եմ ցարդ, սկսեալ ի 25 յունուարի տարւոյս, իբրեւ 150,000 ռուբի. զհետս եմ զդին նոցին փոխանակել ընդ ոսկերրանց, զի անցուցից զայն ի Լոնդոն

հետ զհետէ. յուսացեալ եմ ի տէր և յողորմութիւն նորա, զի մինչեւ յելս տարւոյս աւարտեալ զգործս՝ մեկնեցայց առ տի ի սկիզբն յաջորդ ամի։

Մնամ

„ Արհիապատուութեանդ ձերում

„ Ի Մարտս. 24 փետր. 1834.

„ Նուաստ ծառայ

„ Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. ”

„ Յ. Գ. Զելս անպատեհ գնացից վարչի դատին մերոյ Կորոնի, խոստացեալ եմ ի նախընթաց թուղթս ծանուցանել. ահա հաստատեմ զայն ի սմին հանդերձ այլ գիտելեաք։

„ Արդ՝ որպէս յառաջ ծանուցի, ընդդէմ յայտնի կարգաց և պատուիրանաց իմոց արար նա առաջարկութիւն յԱտենիս հանել ի գիւանէ անտի զքանի ինչ հաւատիս մեր, զոր-ևնալն անդր ի պահանջանաց հակառակորդաց մերոց, և նա ազգ արարի նմա՝ թէ չկամիմ հաստատել զայն ծախս օրինաց՝ վասն հակառակ հրամանի իմոյ գործելոյ նորա զայն։

„ Լուեալ նորա ամիս ինչ, ապա առաքեաց ինձ զհաշիւ ծախուց իւրոց իբրեւ 300 ռուբի։ Առաքեցի ասել նմա մինչ-նորդաւ; „ Թէպէտ և չեմ ես պարտական հաստատել քեզ „ զայս ծախս օրինաց, որպէս դու ինքն քոյզ գիտես, բայց „ քանզի մինչեւ ցարդ յամենայնի խոհեմութեամբ և համբե- „ րութեամբ վարեալ եմ ընդ քեզ, զնոյն և այժմ ի վախ- „ ճան գործոյս կամիմ. վասն որոյ հաստատեցից քեզ 100 ռու- „ բի, և այսպէս կնքեսցի հաշիւ մեր ընդ միմեանս։ ” —

„ Բարկացեալ նորա ընդ խոհական առաջարկութիւն իմ, ասէ, ցմիջնորդն; „ Խաղ առնէ զիս Գարգիս վարդապետն՝ „ այսպիսի ինչ առաջարկելով ինձ. առաւել քան զ200 ռու- „ բի ծախք են արտաքինք, և զինչ մնացէ վասն աշխատու-

«Թեան իմոյ. Երթ ասա նմա՝ թէ չկարեմ ես ընդունել զա-
«ռաջարկութիւն քո։»—

«Բայց մինչչեւ եկեալ միջնորդին և պատմեալ էր ինձ զբանս նորա, առաքէ անդգամն վաղվաղակի զհաշիւ իւր առ վարժապետն օրինաց ի հաստատել զայն, որպէս զի ապա իրաւամբք և բռնութեամբ պահանջեսցէ յինէն զարծաթն, կարծելով անմտին՝ թէ որպէս երբեմն նոյնպէս և այժմ ոչ լինէի ես յանդիման վարժապետի օրինաց ի ժամանակի քննութեան և հաստատութեան ծախուց օրինացն։

«Խնայեալ իմ զայն՝ գնացի յառաջագոյն առ վարժապետն օրինաց և պատմեցի նմա զանցս իրացն. եհարց նա ցիս թէ ունիցիմ վկայ բանից. ասացի թէ ունիմ ո՛չ մի՝ այլ երկու վկայս։ Ասէ ցիս; «Ածցես զնոսա ընդ քեզ այսր ի ժամանակի քննութեանն այնորիկ։»—

«Գնացի առ նա ըստ ժամանակին հանդերձ վկայիւք, զորս քննեալ նորա՝ ասաց թէ չունի Կօրսոն իրաւունս պահանջել ի քէն զծախս զայս. բայց պարտ է, ասէ, ըստ օրինաց Ասենին քննել և որոշել զհաշիւ ծախուց նորա յորժամ եկեսցէ նա այսր։ Եւ իբրեւ անց ժամադրեալ ժամն և չերեւեցաւ նա, սկսաւ վարժապետն օրինաց քննել և որոշել զհաշիւն, և ահա 300 ռուբլի հաշիւ նորա 150 ռուբլի որոշեցաւ. և վասն այսր եւս նշանակեաց նա ի սորուն հաշուին՝ թէ խնդիր գոլով ի մէջ իմ և ի մէջ վարչի գաւառին իմոյ Կօրսոնի, չկարէր նա պահանջել յինէն զծախսն զայն իրաւամբք օրինաց։

«Իբրեւ այս այսպէս որոշեցաւ, շնորհակալութիւն մատուցեալ իմ վարժապետի օրինաց՝ հրաժարեցայ ինքնանէ. և իբրեւ ելանէի ես անտի, ահա մտանէր անդր Կօրսոն. որոյ տեսեալ զիս անդ՝ սառեցաւ, և ապա իմացեալ զորոշումն հաշուին իւրոյ և զյայտարարութիւն վարժապետին օրինաց պապանձեցաւ։ Բայց քանզի այր արծաթասէր և անարդ էր յոյժ բարուք, զկնի քանի մի ամսոց առաքեաց առ իս անպատկառարար զհաշիւ իւր՝ խնդրել յինէն զ150 ռուբլին։ Առաքեցի ասել նմա թէ չեմ ես պարտական հատուցանել նմա զայն ծախս օրինաց, և զոչարեաց նա այնուհետեւ իսպառ ամենայնոյ

անտի իւրոց։ Բայց ոչաւր անհնարին և ինչպէս առնուլ յինէն վրէժ, այլ վէճ և նոր հակառակորդ յարուցանելով ընդդէմ ինձ։ Եւ մինչդեռ յետամիտ խորհրդով ի չարիս մտարերէր, հարաւ յանկարծոյթ ձեռանէ Տեառն և մեռաւ յանկարծակի ի 23 յուլիսի անցելոյ, յաւուր յորում եկեալ էի ես ի բանտէն հինգ ամաց յառաջ։

«Ապաքէն այսչափ խստիւ և ճշգութեամբ ոչ վարէի ես ընդ նմա, եթէ անզգամութիւն նորա և անիրաւութիւնն չէին ի ծայր հասեալ։ Քանզի իբրեւ եռեա Կօրսոն թէ խցան ազբիւրք չարաշահութեան իւրոյ, գործի չարութեան իւրոյ առ ի ձեռին զայր անազգակ և անիրաւ, զՅուսէպի Շամիրեան, որ վասնեալ զհայրենի ժառանգութիւն իւր՝ անկեալ էր ընդ պարտեաւք իբրեւ 200,000 ռուբլոյ, վասն որոյ և ի բանտ արկեալ յամին 1822, ուր եկաց զամս 8, և մեայր արդեաք մինչեւ ցմահ իւր՝ եթէ չէր հասանեալ և ասա ի Հնդիկս Իւնօյվէնք ասացեալ օրէնք Անգղիացւոց, որով զերծաւ ի խստութենէ պարտատերացն որք երդուեալ էին մաշել զսակերս նորա ի բանտի։

«Եւ թէպէտ և լուեալ էի ի բազմից զանշահութենէ նորա, այլ հանդամանք զժբախտ վիճակի իմոյ պարտաւորեցին զիս ծանօթանալ նմա, հանդերձ ծանր ծախիւք 3,000 ռուբլոյ. և այն ոչ ի վարձ աշխատութեան նորա, (քանզի աշխատութիւն նորա չնչին ինչ էր, քանի մի անգամ բերանով թարգմանութիւն արարեալ և ամենեւին ինչ գրով, վասն որոյ շատ էր 500 ռուբլի,) այլ որպէս ասացի՝ հանդամանք զժբախտ վիճակիս պարտաւորէին զիս տալ նմա այնչափ արծաթ, ընդ որ ոչ միայն շնորհակալ էր ինձ յոյժ, այլ և խոստանայր յետս դարձուցանել ինձ զայն ի յաջողել նմա։ Վասն որոյ և ապաչէր շատել ումեք թէ արծաթ ինչ ասացեալ էր յինէն ի վարձ աշխատութեան իւրոյ. քանզի ամօթ մեծ է ինձ, ասէր, վարձուք ծառայել հասարակաց ազգիս. և ես շատացի ինչ ումեք, թէպէտ և ինքն յայտնեաց և պանծանօք պատմեաց այլոց՝ թէ ամենայն ինչ զուանար արծաթոյ զտեալ էր յինէն ի միջոցի երկոց ամաց. և զայն ես ի ցուցանել այլոց՝ թէ քանի՛

մեծ ծառայութիւն էր ինձ արարեալ, և թէ ըստ այնմ ի բանտարկելութեան իւրում, և այլուստ շահեալ էր և ծախեալ առատաբար։ ... Իսկ ի զարմանալ այլոց և ի հարցանել ինձ թէ արդարեւ այնչափ գումար արծաթոյ առեալ էի ես նմա, ասէի ; «Այո, բայց ոչ իբրեւ ի վարձ աշխատութեան նորա, «այլ իբրեւ շնորհ և ողորմութիւն։ » Եւ նոքա գովէին զգթութիւն իմ։

«Իբրեւ յետ չորից ամաց ելանելոյ նորա ի բանտէն՝ վերըստին անկաւ նա ի նեղքոյ պարտուց իբրեւ 10,000 ռուբլոյ, և ետես թէ չտայր այլ ոք նմա փոխ և ոչ ռուբլի մի, անց ասէր ի Բոմբայի, ակնուանելով ի ձեռս բերել ինչ ի մայրենի ժառանգութենէ իւրմէ որ յաւանի անդ առանդեալ կայր, և զոր ինքն յառաջագոյն զրաւականեալ և վաճառեալ էր պարտատեառն իւրում. վասն որոյ ի դերեւ ելանէ ակնկալութիւնն։

«Անցանէ անտի ի Բաթաւիա հանել ինչ ի Կամպոլէ, որ էր փեսայ Գէորգ Մանուկի։ Բայց յառաջագոյն ասա ասացեալ էր՝ թէ պարտական է նմա Կամպոլն 700,000 ռուբլի. վասն որոյ ի գալ նորա այսր ի Մարրաս՝ պահանջեցէք ի նմանէ զիրաւունս իւր։ Զոյս լուր հասուցեալ էին յականջս Կամպոլի ընտանիք նորա ըստ ժամանակին. վասն որոյ ի հասանել նորա անդր արհամարհէ զնա Կամպոլն, և ոչ ընդունելութեան անդամ արժանի առնէ. և ոչ այսչափ միայն, այլ և թելադրէ կառավարատարաց Գէորգ Մանուկի պահանջել ի նմանէ զպարտն զոր պարտէր կառավարին, իբրեւ 10,000 ռուբլի։

«Տագնապեալ նորա դիմէ առ Կամպոլն՝ հնարս փրկութեան գտանել ի ձեռաց նորա։ Եւ նա խրատ տայ նմա՝ մերհակ պարտականութեան տալ կառավարատարաց տարի մի ժամանակս, և վաղվաղակի մեկնել ի Բաթաւիոյ։ Հարկաւորեալ Եւ միրի ըստ խրատուս նորին խոյս տայ անտի. միայն 3,000 ռուբլի ի ծախս համարձակին իւրոյ ի փոխս առնու ի Կամպոլէ, և զայն բաղում աղաչանաւք և միջնորդութեամբ բարեկամաց և ծանօթից։ Այսպիսի կրաւորք ունայնաձեռն եկեալ ի Բաթաւիոյ զնա ի Կալկաթա, միանգամ անդ դարձեալ ինչ միշտաս.

թեան իւրոյ գտանել. այլ հայկազունք տեղւոյն ոչինչ օգնեն նմա. և ցայն վայր հասանէ չքաւորութիւն նորա, մինչև ուսիոյ միոյ կարօտիլ։

«Ահա ինքին ժամանակի հրատարակի և անդ ի յրաթուղթս տեղւոյն լուր յաղթութեան մերոյ ի գտուսանի. և նորա զայն պատեհ առեալ ասէ ոմանց անդ ուրախութեամբ՝ թէ յաջողեալ է վասն իւր այնուհետև։ «Գանգի ունիմ, «ասէ, գտանել ի Հ. Սարգիս վարդապետէն իրրև 100,000 «ուսիի, ըստ գաշնադրութեանն որ ի մէջ մեր, ի վարձ ծա «ռայութեան իմոյ վասն բանի հրիտակին ողջմտութեան՝ «յորժամ յաջողեցի, և ահա յաջողեցաւ։» Վասն որոյ փութոյ գառնալ այսր ի Մատրաս, ուր եհաս ի 24 ապրի- լի 1832. և յետ երկուց աւուրց եկն ինձ յայց ի տուն Աղա- նուրեանց, բերեալ ընդ իւր և օրինակ մի գրաթղթոյն Կալ- կաթա, յորում կայր լուրն վճռոյ խնդրոյս. զկնի պատմե- լոյ ինձ զճանապարհորդութիւն իւր և զանյաջողութիւն գոր- ծոյն, ապա խնդրեաց ի Պ. Ա. Աղանուրէ խօսել ինչ ընդ նմա առանձինն։

«Առեալ զնա մեկուսի յիշեցուցանէ նմա զծառայութիւն իւր զոր ծառայեաց ինձ ի խնդիր հրիտակին, և ցուցանէ զվեր- ջին կարօտութիւն իւր յորում կայր. վասն որոյ և աղաչէ զնա միջնորդել առ իս՝ զի տայց ինչ նմին ի վարձս աշխատութեան իւրոյ։ Պ. Աղանուր փոխանակ յանդիմանելոյ զանմիտ ակն- կալութիւն նորա, ասէ թէ «Սարգսեան դեռ չէ ընկալեալ «զարժաթն ի գանձատանէ տէրութեանս. յորժամ ընկալցի «զայն, կարես դու ինքնին խօսել ընդ նմա վասն բանի աշ- «խատութեանդ։» —

«Առեալ զայն Շամիրի յԱղանուրէն հատատի յանկնկա- լութեան իւրում, և դարձեալ անուղղակի ակամի փորձ փորձել։ Գնայ առ Յովհաննէս Մուրատ, և նախ ներումն խնդրէ զի օգնեաց ինձ ի խնդիրն ընդդէմ Մուրատեանց, ասէ- պեալ ի վերջին կարօտութենէ իւրմէ. ապա խնդրէ ի նմանէ միջնորդ լինել առ իս՝ զի տայց ինչ նմա։ Ասէ ցնա Յովհաննէս Մուրատ; «Դու արդէն ծանօթ և բարեկամ ես վարդապե-

«. ոմն. զինչ կարօտութիւն ունիս միջնորդի. անձամբ կարես «. խօսել ընդ նմա և խնդրել ինչ ի նմանէ։ »» Զայս ասացեալ՝ հրաժարի ի միջնորդութենէ անտի։

«Յետ քանի մի աւուրց գնայ դարձեալ առ Յովհաննէս Մուրատ և ընթեռնու առաջի նորա գիր մի անգղիարէն՝ առ իս ուղղելի, յորում ցուցանէ զամենայն ծառայութիւն իւր ի խնդիր հրիտակին ողորմութեան, և զխարձան զոր պարտ էր հատուցանել նմա, 100,000 ռուբի։ Ակամայ իմն և յոյժ ձանձրութեամբ ունկն եդեալ Յովհաննու Մուրատայ անմիտ գրութեան նորա, խորհուրդ տայ նմա անձամբ գալ առ իս և բերանով ծանուցանել ինձ զիրաւունս իւր քաղցր բանիւք և խոնարհ տեսութեամբ։

«Ասէ ցնա Շամիր թէ ըստ խորհրդոյ Կօրտօնի է կալեալ իւր զայն շաւիղ։

«Ասէ ցնա Յովհաննէս Մուրատ; «Արա՛ որպէս և կամիս, «այլ գիտեմ զի զղջացիս ի վախճանի ընդ գնացս քո։ »» —

«Դադարեաց անզգամն ամիտ ինչ. բայց տխրեալ ի վերջին կարօտութենէ իւրմէ, միանգամայն և ի խրատուց Կօրտօնի համարձակեցաւ ուղղել առ իս զգիր իւր երկար՝ իբրեւ յերեսս տան, լի յիմարութեամբ։ Ընթերցի և զվախճան գրութեան նորին լուեալ էի յառաջագոյն ի Յովհաննէ Մուրատայ. վասն որոյ և ոչ արժանի վարկայ ընթեռնուլ զայն. այլ արարի նմին պատասխանի համառօտ ի հայ լեզու, ցուցանելով զի զարմացեալ եմ ընդ անամենակալ և ընդ այնպիսի երկար գրութիւն նորա, չունելով մեր բնաւ գործառնութիւն ինչ ընդ միմեանս. և առաւել եւս զարմացեալ եմ ընդ գրել նորա զայն անգղիարէն գիտելով թէ չեմ ես վարժ ի լեզու Անգղիացւոց, այլ կարօտիմ թարգմանչի։ Ապա մնայ քեզ միայն, հայագէ՛տ Պարոն, զանգղիարէն գրութիւնդ ի հայ թարգմանել՝ եթէ կարեւոր համարիս ինձ զայն հասկացուցանել, և եթէ ցանկաս յինէն պատասխանի գտանել գրութեանդ։

«Առեալ նորա զպատասխանիս, թէպէտ և իմանայ զմիտս իմ, այլ չիմանալոյն ապարեալ՝ զկնի քանի մի աւուրց վերըս-

ոչին գրեաց առ իս այլ գիր նոյնպէս անեղիսարէն, խնդրելով յինէն պատասխանի առաջին գրոյ իւրոյ։ Եւ ես նմա պատասխանի դարձեալ ըստ առաջին գրութեանս. գրեաց առ իս երրորդ անգամ, և զնոյն ընկալաւ պատասխանի։ . . .

«Ի վախճանի դրդեալ և քաջալերեալ անզգամին ի նմանեաց իւրոց՝ մասոյց Վասնի ի 28 յունուարի 1833, գանգատագիր ինչ պարզ ասացեալ ընդդէմ ինձ, պահանջելով յինէն 100,000 ռուբի. և զայն յերկուց գլխոց. մի՝ որպէս թէ խաստացեալ էի նմա, զի եթէ յաջողէր ինձ ի վէճս հրիտակին ողորմութեան, հատուցից զպարտս նորա իբր 45,000 ռուբի, և ազատեցից զնա ի բանտէն. թէպէտ և պարտիք նորա էին 200,000 ռուբի. թէպէտ և ազատեալ էր նա ի բանտէն՝ առանց հատուցանելոյ ումեք մի ռուբի, այլ զօրութեամբ և շնորհիւ Ինքնակալիս օրինաց. և միւս՝ որպէս թէ գործակալ էր նա կացուցեալ յինէն ի խնդիրն վասն վաչխի հրիտակին ողորմութեան, և վասն այնորիկ պարտէի հատուցանել նմա վարձս աշխատութեան նորա 5 առ 100։ Թէպէտ և խնդիրն այն ոչ էր եկեալ առաջի դատաւորաց, և յաւարտել իմ զայն իրաւախոհութեամբ ընդ Յովհաննու Մուրատայ՝ ինքն ի Կալկութա թափառեալ չէջէր, և ոչ եւս գիտէր թէ զիարդ և քանի՛ արծաթով էի ես զայն աւարտեալ, և ոչ զկնի գալոյ իւր առ կարաց իմանալ։ . . .

«Իրեւ ազգ եղեւ ինձ յԱսնէս, շոգայ վարձակի առ վարժապետն օրինաց Սամէճ, որ միանգամայն և պաշտօնեայ էր Ինքնակալիս օրինաց, և ծանուցի նմա զայն։ Խնդրեաց նա տեսանել զգանգատագիրն, և ընթերցեալ ասաց; «Եթէ ուստ «նէր Յովսէփ Եամիրն իրաւունս ընդունելոյ ի քէն ինչ, պարտ «էր նմա մուծանել զայն յառաջագոյն ի մուրհակս պարտուց «իւրոց, զոր երդմամբ հաստատեալ և տուեալ է Ասնէիս, «և այն ինձ անկանի, պահանջել և բռնանել պարտատերից «նորա հաւասարապէս. և եթէ արդարեւ ունիցի նա իրա- «ւունս պահանջելոյ ինչ ի քէն և թաքուցեալ իցէ զայն յԱ- «սնէս, պատուիրեցի իբր սակրդուն և արկցի վերատին «ի բանտս։ Բայց ասեմ քեզ, Սարգիս վարդապետ, զի այր

«մի թշուառ և անզգամ է նա, տեսեալ թէ ունիս դու արդ-
«ծաթ բազում ի ձեռինդ, կամի երկեցուցանել զքեզ և հա-
«նել ինչ ի քէն, այլ դու մի՛ երկնչիր, զի չկարէ ընդունել և
«աչ մի ռուբի, և ես, ասէ, գրեալ հարցիցս ցնա թէ յինչ
«ձեռնարկց իցէ։»—

«Եւ յիրաւի, ի նմին աւուր գրեաց Սալէհ առ Շամիր, ազգ առնելով նմա զյանդուգն ձեռնարկութենէն։ Նորա սասանեալ և պապանձեալ չկարաց առնել պատասխանի գրութեանն Սալէհի։ Վերստին գրեաց սա առ նա, և ոչ արար պատասխանի։ Սակայն ոչ ի բաց եթող զանզգամութիւն իւր. քանզի տեսեալ թէ ոչ երկեայ ես յանմիտ ապառնալեաց նորա, և թէ այլ վարիչ դատի՝ զՎայվաշ, և այլ փոստաբան զՆորթն կալայ ես, յայլ խորհուրդ յանդուգն ձեռնամուխ եղիւ։ Քանզի զայլ խմն գանգատագիր՝ Գանգատ յայտարարութեան անուանեալ՝ մատոյց Յովհան ընդդէմ ինձ, յորում յառաջ բերէր մի ըստ միոջէ զամենայն կարծեցեալ արդիւնս իւր և զվատակս, և հարցանէր ինձ և խնդրէր յինէն առնել նոցին պատասխանի երդմամբ. որով ակն ունէր զտանել ինչ հատուցութիւն բանից իւրոց. այլ ի դերեւ ել խորհուրդ իւր. քանզի արարի ես պատասխանի բացատական ամենայն բանից նորա, և հերքեցի զկարծեցեալ իրաւունս իւր, և ցուցի յայտնապէս՝ թէ ես ոչ ճանաչի զնա՝ բայց եթէ իբրեւ զթըշուառս ոք. և թէ զոր ինչ միանգամ տուեալ էի նմա, 3,000 ռուբի, ոչ իբրեւ ի վարձս վաստակոց նորա, այլ իբրեւ շնորհ և ողորմութիւն, մերթ ի գթութենէ շարժեալ, և մերթ յաղաչանաց նորա բռնադատեալ։

«Բայց կայր ի գանգատագրի նորա և հարցուած մի, որում ոչ արժանի համարեցայ ես առնել պատասխանի. այն էր՝ թէ զիսրդ և ոչչափ արծաթով աւարտեալ էի ես ընդ Յովհաննու Մուրատայ զվաշխ հրեսակին ողորմութեան. վասն այսորիկ կամէր բռնադատել զիս հրամանաւ դատաւորին զի տարցից և այնմ գլեալ բանին պատասխանի. և վասն այսորիկ խնդիր և վէճ յուզեցաւ առաջի երկրորդ դատաւորին Ռ. Փոմինի յառանձին սենեկի նորա ի դատարանի անդ. ուր թէպէտ փոստա-

բան նորին Պէթի շատ չանցաւ տեղի գտանել, և փոստաբանն իմ խորամանկ Նորթըն Թուլագոյնս պաշտպանեաց զիս, քանզի հետաքնին էր և նա գիտել թէ զիարդ էի աւարտեալ ես զգործն ընդ Յովհաննու Մուրատայ, այլ դատաւորն ինքնին գլխովին խոտեցաւ և հերքեաց զընդդիմութիւն նորա, ասելով թէ չէք ընտրութիւն բռնադատել զիս ընդ այն խնդիր։

«Իրրեւ ետես Շամիր թէ չյաջողեցաւ այն՝ զոր իրրեւ գըլխաւոր մատն գանգատագրի իւրոյ համարէր, լքաւ կատեցաւ ի գործոյն ի սպառ։ Բայց Սամէնի ցատուցեալ յոյժ ընդ արհամարհութիւնն որ ի նմանէ, չառնելով նորա պատասխանի թղթոց իւրոց, կոչեաց զնա հրապարակաւ յԱտեան յանդիմանն զատաւորաց տալ պատասխանի վասն անպատեհ գնացից իւրոց։ Եւ նորա պարտաւորեալ յանդիմանն եղեւ Ատենին. բայց առ ի յապաղել աւուրս քանի մի զնախատինս և զխայտառակութիւն իւր՝ խնդրեաց յԱտենէն փոխել զժամանակ յանդիմանն լինելոյն. քանզի ժամանակն հանդիպեալ էր յաւագուրբաթաւ. վասն որոյ պատճառս ետ՝ թէ պարտական է ինքն ի նմին աւուր յեկեղեցի գնալ, թէպէտ ի բոլանդակ կեանս իւր միանգամ եւեթ երթեալ էր անդր, ի մկրտութեանն. քանզի պատակ նորա եղեալ էր ի բանտի։

«Վերջապէս վճռեաց դատաւորն յԱտենի՝ ըստ պահանջելոյն Սամէնի, թէ Շամիրն պարտի վերատին ի բանտս մտանել, եթէ չանցուցէ զպահանջանան զայն ի հաշիւ պարտուց իւրոց։ Ապաց ողորմելին, թէ չկարէ ինքն զայն առնել ի ժամուն, քանզի միտք իւր շփոթեալ են, և ձեռք իւր դողդոջեն։ Ապաց ցնա դատաւորն; «Տացի քեզ ժամանակ օր մի ի կատարել զայն։» Եւ այսպէս մերժեցաւ յԱտենէն կորանոք և նախատանոք յոյժ։

«Տեսեալ անդգամին զի ամենայն ինչ հակառակ պատահեաց նմա, չանայր այնուհետեւ պատճառանոք իմն թողուլ զանմիտ ձեռնարկութիւն իւր. վասն որոյ ազերատգիր մատոյց նախագահ դատաւորին, առ ի գիտել՝ թէ ի պահանջանաց անտի իւրոց տացի նմա մատն ինչ՝ թէ բոլանդակն հատուցի

պարտատերից իւրոց. քանզի ասէր խորամանկութեամբ. եթէ զբովանդակն պարտիմ հատուցանել նոցա, ընդէ՞ր ի զուր վատակիցիմ և աղքատաց ազգին վնասիցեմ։ . . . Ապաց նախագահ դատաւորն՝ թէ կարէր նա զմնան նորին ընդունել՝ եթէ հատատեցին իրաւունք նորա։

« Եւ մինչդեռ տարակուսեալ կայր Տամիր՝ չգիտելով զինչ առնել, զի եթէ յառաջեցուցանէր զվէճն, պարտ էր նախ զցայն վայր եղեալ ծախս օրինացն հատուցանել, իրրեւ 5,000 ռուբլի. ապա զանյաջող ելս իրացն յայտնապէս տեսանէր. վասն որոյ և զգործն յապաղէր, մինչեւ այլ ինչ պատճառ հրաժարելոյ անտի գտանել. և ահա յայնմ ժամանակի մեռաւ շուտակեանն Կօրոսն. զոր և բաւական պատճառ առեալ նորա՝ եթող զանմիտ ձեռնարկութիւն իւր ի սպառ, ասելով՝ թէ գլխաւոր վկայ բանի պահանջանաց իւրոց նա ինքն Կօրոսն է միայն։

« Մնայր ինձ մերժել տալ յատենէն զգանգատագիր անրդգամին. բայց քանզի օրէնք են Ատենիս՝ մնալ ամբաստանելոյն մինչեւ ցվերջին սահմանն որ անկանի յ12 սեպտեմբերի, և եթէ մինչեւ ցայնքայր չյառաջեցուցանէ ամբաստանն զվէճ իւր ընդդէմ ամբաստանելոյն, յայնժամ կարէ նա մերժել տալ յԱտենէն զգանգատագիր նորա, վասն որոյ մնացի ես մինչեւ ցայն վայր, և ապա մերժել եառ զայն յԱտենէս։

« Այլ զինչ մխիթարութիւն ինձ ի խայտառակութենէ արդէն խայտառակելոյն. զի հատուցի ես զծախս օրինաց իմոյ կողմանն, վարձի դատի և փաստաբանի իմոյ 2,000 ռուբլի. զոր թէպէտ բան վճռոյ Ատենիս Տամիրն պարտէր հատուցանել, բայց վասն չքաւորութեան նորա հարկ եղեւ ինձ հատուցանել ի ժամուն, մինչեւ հատուցէ ինձ Տամիրն ապա, բայց ե՞րբ կարասցէ նա հատուցանել զայն, աղքատ և թշուառ գոլով միշտ։ . . . »

Սա այս թշուառ անձն որդի էր Թառին Տամիր Սուլթան ասնուն հայկազնոյ, միոյ ի գաղթեցելոց անտի ոչ ինոր Զուղայ, և գնացելոյ ապա ի Մարաս Հնդկաց իբր բաղդախնդիր,

ուր վաճառականութեամբ և հնարիմացութեամբ շահի բաւական արծաթ, և ուր սահմանս կալուածս բազում, մինչև փողոց կալուածոց նորին փողոց Շամիի կոչի մինչև ցայսօր ժամանակի, թէպէտ և ոչ մի անտի կայ այժմ ի ձեռս ժառանգաց նորին։

Սակայն ի վերայ այսր ամենայնի յիշէ նա միշտ զհայրենիս իւր և անդ դառնալ փափաքի յոյժ, վասն որոյ և խորհի ընդ այն հնարս ինչ։ Առաքէ նա ընծայ ոմն մի պատուական Հերակլ արքային վրաց, և ցուցանէ նմա զփափաք իւր այն։

Հերակլ արքայն Վրաց ընծայէ նմա փոխադարձ զԼոռի քաղաք որ ի նահանգն Գուգարաց, և հրաւիրէ զնա զնալ բնակել անդ իրրեւ ի սեպհական սեպհականութիւն։

Թէպէտ և ուրախանայ Շամիր Սուլթան ընդ այն առատաձեռն ընծայն որ ի Վրաց արքայէն, այլ ոչ շարժի նա ի տեղւոջէ իւրմէ զնալ վայելել զժառանգութիւնն զայն մեծ և հաստատուն, և յապահովել զհաստատութիւն ասն իւրոյ այնու։

Եւ ոչ միայն անիրաւութ առնէ նա զայնմանէ, այլ և թողու զայն ի քանդումն ասն իւրոյ. քանզի վառեցեալ թոռն նորա ի ժառանգութիւնն յայն՝ հատանի ի շուայլութիւն իւրում, մինչև վասնէ նա զկէսն սահմանեալոց պարսն իւրոյ ի կենդանութեան նորին, որոյ տեսեալ զայն՝ ասէ ցնա ցաւագին արտաս; «Զազիկ Զազիկ զինչ արարեր, զմի բազումն «իմ հատեր։»

Վասնէ նա և որդի նորա սա այս Յոսէփ և զմիւս կէսն սահմանեալոց պարսն իւրեանց զկնի սակաւ ժամանակի մահուան նորին, վառեցեալ ի ժառանգութիւնն յայն որ ի Վրաց արքայէն, ասելով թէ ունին զնալ ի Լոռի և վայելել անդ զսահմանեալ իւրեանց. թէպէտ և ոչ անծանօթ էին նոքա հրամարակաւ յայտարարութեանն որ ի Ռուսաց կայսերէն, և որ ունէր այսպէս; «Եթէ ի միջոցի երեսուն ամաց «ժառանգաւորն Լոռի զազգի յանդիման ոչ լցի Ռուսաց «տէրութեան, և շատացի զժառանգութիւնն այն, կորուս«ցէ նա զայն խոպան։»

Քանզի տագնապեալ երթիցն Հերակլ արքայի Վրաց յերկ-

ասց բռնակալութեան Պարսից Շահին՝ խնդրէ զօրավիգն օգնականութեան ի Ռուսաց կայսերէ, հանդերձ պայմանաւ, այս է, եթէ օգնեսցէ նմա զօրօք, զկնի մահուան իւրոյ ժառանգաւոր իւր լիցի նա. կատարի այն յամենայնի, օգնէ նա նմա, և ժառանգէ ապա զթագաւորութիւն նորա. ահա այսու իրաւամբք լինի վերայիշեալ հրովարտակաւ յայտարարութիւն։

Թէպէտ և գիտէին նոքա թէ սահմանեալ ժամանակն անցեալ էր շատ, և թէ ժառանգութիւնն այն յարքունիս Ռուսաց գնացեալ էր, սակայն կամին խարել զայրս, մինաւանդ զինքեանս իսկ, հատեալ իսպառ յամենայն ազգ շարութիւն, կողոպտելով զընտանիս իւրեանց անզթութեամբ, և աղարտելով զպատիս այրոց անառակութեամբ, մինչև բռնադատել Յովսեփայ յօրիորդէ միոյ պատկեր ընդ նմա ի բանտանդ։

Զայս ցաւալից յիշատակութիւն արարաք մեք առատոր ի խելամտութիւն ազգիս, թէ զիարդ յամենայն ժամանակ և ի տեղիս յաջողեալ է նմա Աստուած ազգութեամբն իւրով և թէ չէ նա օգտեալ անտի ոչինչ ազգութեան իւրոյ, որ է գրատան ամենայն շարեաց իւրոց անշուշտ։ . . .

«Տգիտութիւնն է յոյժ վտանգաւոր ի հիւանդութիւնս, և «աղբիւր այլ ամենից։» ասաց Պօսիէ։

Ե՛րբ, յորմէ՛մ գարու, ուսո՛ի, յորմէ՛ ազգէ, և զիարդ, ո՞րպէս ուսանիցի ազգն մեր զգիտութիւն, և բժշկիցի յանհնարին ցաւոց իւրոց առի։ . . .

Զայն հառաջանաց՝ հեծութեան արտի՝ ողոց ազաղակի, ըստ Արքայն Գրիգորի, քեզ վերընծայեմ աղբիւրդ ձշմարտութեան, գեղեցկութեան, և բարութեան, ուստ նեա ճառեալ, սիրել, և յարգել զայսոսիկ ասատուածային ատրոգութիւնս քո։

Յաւելցի առատոր և ինչ ինչ ի նամակաբերէն Հ. Ատրպետ առ Գերապայծառ Սուքիաս Սունալ, ի բացայայտութիւն ամենեցուն անցելոց ի ժամանակին։

«Յիրաւի՝ հարկ էր Հ. Աղեքսանդրի մերոյ ծանուցանել ինձ ցարդ, ի հանգարտութիւն մտաց իմոց, զառաքումն արժէից 400 տուպլոնից այդր ի Լոնտոն, զորմէ անփոյթ եղեւ նա. որպէս և ոչինչ փոյթ կալաւ հանգուցանել վաղվաղակի զմիտս իմ վասն 60,000 ռուբլի ոսկեդրամոյ յղելոյ յինէն ի Լոնտոն ի 15 փետրուարի տարւոյս։ Զէրիպելն իմ ի միխիթարութենէ ասի չկարեմ ես բացարձակ անփութութեանն Հ. Աղեքսանդրի տալ, զի կասկածիմ թէ մի արդեօք խօթացեալ լցէ անդ, կամ յայլ ինչ հոգս շաղեալ. և վասն այսորիկ ազգ արարի յառաջագոյն օգնական նմա առաքել անդր և զայլ ոք այսի։

«Ընդ լուր ուղեւորութեան մանկանց ի Պօլսոյ վասն Մուրատեան դպրոցանն և բանալոյ նորին վաղվաղակի ուրախացայ յոյժ, այլ զսկզբնաւորութիւն նորին ոչ լուեալ ցարդ զարմանամ, մանաւանդ թէ ցաւիմ, տեսեալ զանպատճառ յապաղումն նորին և զկորուստ ժամանակին։

«Զանձկանօք մնալ Հատարակութեանս փութով տեսանել զգործս պարտապարիլ առ նա, շնորհ հայրախնամ սիրոյ նորին առ իս գիտեմ. այլ զկարօտիլ նորա գործակցութեան և աշխատակցութեան իմոյ, ոչ միխիթարութիւն և ոչ պատիւ անձինս համարիմ, զի խնդութիւն իմ և փառք՝ են չկարօտիլ նորա նուաստութեանս իմում։

«Շնորհ հատարակութեանս առ իս գիտեմ դարձեալ զկատարումն խնդրոյ իմոյ և ցանկութեանս մեծի, զկանգնել նորա ասեմ արձան բարեշնորհին մերոյ մեծին Մխիթարայ. ահ, հաճեսցին երկինք տեսանել ինձ այդր զպատկերն զայն ցանկալի, և զուղերձս յարգութեան և շնորհակալութեան իմոյ անձամբս մատուցանել արժանաժառանգ յաջորդի սկզբնաւորին և խանդակաթ որդւոց նորին։

«Յաղագս անհնարին զբաղմանս և սղութեան ժամանակիս չկարացի տալ այդր յառաջագոյն զերկրորդ օրինակ նախընթաց թղթոյս, և ոչ այլ տեղեկութիւն զյեռոյ յղեալ զրամոցն ի Լոնտոն. տաց զայն այժմ ընդ սմին։

«Ի 18 յունիսի տարւոյս առաքեցի դարձեալ ի Լոնտոն

ի վերայ Պ. Աղեքսանդրի Ռաֆայէլի և ի վերայ Հ. աղեքսանդրի և այլ ևս 60,000 ռուբլոյ ոսկեդրամ Մասրասու. ապա ի 16 օգոստոսի սորին առաքեցի անդր դարձեալ այլ 60,000 ռուբլոյ ոսկեդրամ, և ապա ի 6 Հոկտեմբերի անցելոյ առաքեցի անդր դարձեալ 90,000 ռուբլոյ ոսկեդրամ։ Ահա այս էր մեացեալ մասն դրամոց դպրոցաին և վերջին առաքելին իմ զոր առաքեցի ի Լոնդոն ի վերայ նոցա՝ առ ի հատուցանել զարժէս նոցին ի ձեռս ձեր։ Զուռնիմ ևս այժմ և ոչ զկնի՝ այլ ինչ առաքել ի վերայ նոցա անդր, բայց եթէ զհաշիւն բովանդակ յղեալ դրամոց և ծախուց նոցին, զոր հատուցեալ եմ ես ասա յառաջագոյն՝ ըստ օրինաց և սովորութեան վաճառականաց։

«Եւ ահա զերծայ ևս ողորմութեամբն Աստուծոյ և աղաթիւք Հատարակութեանս ի հոգոց ասոի և ի ծանրութենէ բեռին։ Ճեամ այսուհետև լսել զուրախարար լուրսն, այսինքն զանվտանգ հասանել իրացս ի Լոնդոն և ի Վենետիկ, և զյաջողակ հատատել նոցին ի վերայ գեանոյ, ի վայելս աղքատաց ազգիս, և յարդիւնս Միաբանութեանս, որոց մանաւորիւ ակն ունիմ և ես ողորմութեամբն Աստուծոյ և աղաթիւք ձերովք։

«Տաց ուրոյն յաւարտ գրոյս զհաշիւ բովանդակ դրամոց յղելոց յինէն այդր ի Վենետիկ և ի Լոնդոն. իսկ զընդհանուր և զմանաւոր հաշիւ դրամոց դպրատանն բերիցն ընդ իս ի Վան, մանաւանդ թէ զօրինակ մի անտի կամիմ յառաջագոյն առաքել այդր յառաւել իմն զգուշութիւն։

«Անհամբերութիւն իմ ընդ ելս տարւոյս՝ զի մեկնեկայցս ասի, և ցանկութիւն իմ փութով պատապարելոյ այդր՝ օր ըստ օրէ առաւելուն. բայց երկնչիմ, զուցէ խոչընդոտն լիցին ինձ բարեկամք մեր Աղանուրեանք, որք և ցանկան ի միասին ընդ իս անցանել յԵւրոպ. թէպէտ և յառաջագոյն վաճառեցին նոքա զկահ կարասիս տանն իւրեանց, և զտունն ևս հրատարակեալ են վաճառել, բայց տիկինն յայտոսիկ աւուրս անհանգիստ է մարմնով, նեղեալ ի սովորական ցաւոց ոտից իւրոց, և ես անհանգիստ եմ մտաք ընդ ելս յառաջադրու-

թեան և ցանկութեանս իմոյ։ Չկամիմ եւս յորդորել զնոսա անցանել յԵրոպ, զի մի արդեօք չհաճեալ նոցա ընդ երկիրն, տհաճութեան իւրեանց պատճառս զիս ասիցեն. և ոչ կամիմ լքուցեալ կասեցուցանել զնոսա յառաջադրութենէ իւրեանց, երկուցեալ՝ զի մի խափան ինչ լիցիմ. թող զանմխիթար վիճակ նոցա առա, թողլով և զհոգս որդւոց նոցա ի վերայ ձեր այդր։ Կարօտիմ դարձեալ աղօթից Հաստատակութեանս, զի զերծայց առի։ »

Առաքէ Հ. Սարգիս Թէոդորեան ընդ վերոյիշեալ թղթոյ իւրոյ գրելոյ ի 20 Նոյեմբերի 1834, զհաշիւ գրամոց գպրատանն առ Գերապայծառ Սուքիաս Սոմալ ի Վենետիկ ի Վանս արբոյն Ղազարու, օրինակ զայս;

ՀԱՇԻՒ ԴՐԱՄՈՑ ԴՊՐԱՏԱՆ

ՋՈՐՍ ԵՒՈՂ, ԿՏԱԿԱՒ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ, ԱՂԱՑ ՍԱՄՈՒԷԼ, ՄԿՐՏԻՉ

ՄՈՐԻԱՏ

ՎԱՑՆ ՈՐՔ ԵՒ ԱՂՔԱՏ ՄԱՆԿԱՆՑ ԱՋԻՒՍ ՀԱՑՈՑ

ՊԱՐՏԻՔ

		Մաք. ռուբլի
1827.	*ի մարտի 26, ընկալայ ի կուսակալատարաց հանգուցելոյն, հաշ*	183,323=641,630
1832.	*ի մարտի 31, ընկալայ ի նոցանէ զարձեալ՝ իբրեւ վաշխ զրամագլխոյն*	100,000
"	*ի յունիսի 7, ընկալայ ի Համարակալէն վաշխ առանձնական զրամագլխոյ*	74,870
"	*ի զեկտեմբերի 30, ընկալայ վաշխ վերոյիշեալ զրամոյն որ ի մուրհակս տէրութեան*	12,714
1833.	*ի զեկտեմբերի 30, ընկալայ զարձեալ վաշխ ի մուրհակացն*	19,934
1834.	*ի զեկտեմբերի 30, ընկալայ զարձեալ վաշխ ի մուրհակացն*	7,985
	Բոլոր ընդհանրապէս Մաքրատու	857,133

Ի Մաքրաս Հնդկաց, 31 զեկտեմբերի 1834.

Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ
Գործակալ Մխիթարեանց.

ՊԱՀԱՆՋՔ

Առաքեցի ի Վենետիկ ի վերայ Վերապայծառ Սուքիաս Սոմալի

			Տուպլոն.	Երբայ սակրլին	Մաք. ռուբլի
1827.	*յապրիլի*	17	13	11,234	129,066
"	*յոգոստ.*	31	40	9,584	110,203
"	*ի հոկտ.*	14	46	8,673	101,223
"	"	17	6	700	8,000
1833.	*յգրուար.*	10	4	400	4,571
			109	30,591	353,063

Նախընթաց գումարն 353,063

Առաքեցի ի Լոնդոն ի վերայ Պ. Աղեքսանդր
Ռաֆայէլի և. ի վերայ Հ. Աղեքսանդրի

			Ոսկի Տուպլ.	Կիւլմէօհրեբ.	Ունկի.	Մատ. ռուբի.	
1833.	ի մարտի	16.....	400	”	347	14,000	
1834.	ի փետր.	15.....	300	3,300	1,498	60,000	
“	յապրիլի	11.....	“	4,000	1,500	60,000	
“	“	12.....	129	5,699	2,249	90,000	
“	ի յունիսի	18.....	”	4,000	1,500	60,000	434,000
“	յօգոստոսի	16.....	75	3,825	1,500	60,000	
“	ի Հոկտեմ.	6.....	”	6,000	2,250	90,000	
			904	26,824	10,844	434,000	

ԾԱԽՔ ՎԵՐՈՅԻՇԵԱԼ ԴՐԱՄՈՅՆ

Վասն ծախուց օրինաց, վարչի դատին, փաստաբանից, և այլն	35,000	
Վասն գեղչման մուրհակաց, 21/2 առ. 100	12,426	
Վասն աւելի գնոյ կիւլմէօհրեբ ոսկեդրամոյ գնելոյ ի մանեաւորաց	480	
Վասն յապահովագրութեաց ոսկեդրամոցն 2 1/2 առ. 100	10,914	70,070
Վասն նաւուղչէից ոսկեդրամոց, 11/2 առ. 100 և ծախուց արկեղաց, և այլն	2,250	
Վասն ծախուց Հայր Սարգսի Թէոդորեան անդ ի Մատրաս	9,000	
Ընդանդակն Մատրասու ռուբի		857,133

Ի Մատրաս. 31 դեկտեմբեր. 1834.

Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ

Գործակալ Մխիթարեան միաբանութեան։

Գումար դրամոցս միահամուռ լինի լիրէ ստէրլին 72,604 կամ ֆրանք 1,815,100։

Հաստատութիւն վերոյիշեալ հաշուին տեսանի ի թուղթս Գերապայծառ Սուքիասայ Սմանլի և Հ. Աղեքսանդրի Պէշիքթաշլեան որք առ Հ. Սարգիս Թէոդորեան, զորոյ զթուղթն կարեւոր համարիմք յիշատակել առ, և որ ունի օրինակ զայս.

„ Վեր. Տեառն և Հօր Սիրելւոյ Սարգսի վարդապետի սէր
„ և խնդութիւն.

„ . . . . . .

„ Յաւելուած ի գրին որ ի 29 դեկտ. անցելոյն, գրեալ
„ ի 7 փետր. տարւոյս 1835 . . . . . .

„ ի 2833.	օգոստ.	ընկալայ . . .	Լիր. սթ.	1,350.	3. 6.
„ ի 1834.	յուլիսի.	ընկալայ . . .	„	5,807.	2. 11.
„ „	օգոստ.	ընկալայ . . .	„	14,514.	8.
„ „	նոյեմ.	ընկալայ . . .	„	5,795.	2. 7.
„ „	դեկտ.	ընկալայ . . .	„	5,815.	8. 9.
„ ի 1835.	փետր.	ընկալայ . . .	„	8,730.	15. 9.
„ Գումար Բոլանդակ դրամոյն			Լ.	42,013.	1. 6.

„ Իսկ փոխադրութիւն դրամոցս ի Ֆիօրին եղեւ ամենայն
„ կերպով կարի շահաւոր, որչափ զի չէր եղեալ յառաջին
„ նուազին յամին 1827—28—29 ։

„ Այն ունիմ թէ այս գիր հասեալ ըստ ժամանակին և
„ ապահովարար ի ձեռս ձեր պերծուայէ զձեզ ի հոգացողու-
„ թենէ ։ Այլ ինչ շինայ ինձ բայց Ջերմեռանդն աղօթիւք
„ սպասել գալստեան Վերապատուելոյդ, ամենայն յաջո-
„ ղութեամբ և առողջութեամբ, որոյ ինամ ասէն ի Լոնդոն
ըստ այժմեան կամացն հաճութեան ։

„ Ողջ մինչև ի խնդութիւն իմ որ եմ,

„ Վերապատուելի Հայր,

„ Ի Լոնդոն. 19 մարտի 1835.

„ Ձեր հոգեհարազատ և ծառայ

„ Հ. ԱՂԵՔՍԱՆԴՐ Վ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ. „

ԳԼՈՒԽ ԼԷ.

Աշխատաւոր բռնդ Հայր Սարգսի առ Գերապայծառ Սուրբերեան զաշարտուելեն խնդրոյն. — Խնդիր սրանչելագոյց Թուղթոց Պօղոս անուանեալ բարգաւանին. — Վասն և տագնապ Հայր Սարգսի ի բաւական գիտութիւնն որ ընդ Մոռրատեանս և ընդ քոյրն իւրեանց ընդ տիկնին Աղաւնոր. — Հրաժեշտ Հայր Սարգսի և Աղաւնորեանցն ի Մոռրատեանց. — Գրչագիրքն. — Մեկնել նաւռն ի Մատրաստ.

Յետ այնորիկ ի 21 յունուարի 1835 ամին գրէ Հ. Սարգիս Թուղթ առ Գերապայծառ Սուքիաս Սոմալ, յորում ասէր;

«Խնդագին սրտիւ գրեմ զԹուղթս, ծանուցանելով արհիապատիւ Հօրդ զյաջողակ ելս յառաջադրութեան իմոյ և զկատարումն վերջին ցանկութեանս, զառնալոյ ասեմ ի Վանս ի գիրկս սիրելեացս ողորմութեամբն Աստուծոյ և աղօթիւք ձերովք։ Անդ յ19 ամսոյս վարձեցաք տեղի ի նաւին Լէտի Ֆլօրա անուն, ես և Պ. աղանար հանդերձ տամբ իւրով, և ի 10 փետրուարի հանդերձեալ եմք ելանել ի ճանապարհ Աստուծով։

«Որպէս յաջողութիւն բոլանդակ գործոյս ոչ ի հնարից մարդկան եղեւ, այլ ողորմութեամբն Աստուծոյ և աղօթիւք Հաստատութեանս, նոյնպէս և յաջողութիւն յառաջադրութեանս իմոյ։ Զնորին ինձ անհնարին զբաղանքս և կարճութիւն ժամանակիս գրով ցուցանել ձեզ զպատճառսն. մանաւանդ թէ աւելորդ իսկ համարիմ, յուսացեալ գոլով ի Տէր, զի զկնի քանի մի աւուրց հասանելոյ Թղթոյս ի Վանս՝ հասցէ և ես այդր վաղվաղակի, ուր զամենայն ինչ բերանով պատմեցից ձեզ. միայն զկարեւորագոյնսն եւեթ ծանուցանեմ սատ,

ի միխիթարութիւն և ի հանգարտութիւն որոյ և մուսայ ձեր-
բոց։

«Վարձեալ նաւն մեր մեծ է իրրեւ 900 խորանարդ միջո-
ցաք, հաստակառոյց և հոյակապ յոյժ. սենեակք որ ի նմին
վասն ճանապարհորդաց են 22. ունիմք մեք ի նմա սենեակս
4, այսինքն 3 ի վերնայարկի, և 1 ի ներքնայարկի. վարձք
չորից սենեկացն 8,500 ռուբլի, որ զիւրաքին է, սակս բաղ-
մութեան նաւաց եկելոց այսր յայսմ ամի. զի իրրու 10 նաւք
են ի նաւատեղւոջ քաղաքիս. ամենեքեան ի խնդիր են ճա-
նապարհորդաց։»

Գրէ և առ Հ. Աղեքսանդր Պէշիքթաշլեան ի Լոնտոն ի 24
նոյնն ամսոյ զիր՝ յորում ասէ։

«Յետ բազում ակնկալութեան և մուսայոյզ խորհրդոց ընկալայ ի 15 յունուարիս զյանկալի թուղթս քո զչորեսին միանգամայն, որովք հանգեայ, և լցայ անպատմելի խնդութեամբ ընդ լուր ողջութեանդ և յաջողութեան իրաց Հասարակութեանս. թէպէտ և ոչ անխառն էին այնոքիկ ի տրտմականերայն, որք ոչ նոր և օտար են ի կենցաղումս։

«Առնել պատասխանի գրոցս ամենայն բանից թղթոցդ չներէ ինձ ողութիւն ժամանակիս. նա և աւելորդ ինչ համարիմ, յուսացեալ ի Տէր հասանել այդր ընդ հուպ. միայն ի ժամուս այսչափ ինչ ասացից, թէ չեմ բնաւ զղջացեալ ընդ նախահոգակ և եղբայրական ազգարարութիւնս իմ առ քեզ, թէպէտ և վայրապար ինչ համարիցիս զայն, աչալուրջ և խելամուտ գոլով քո յամենայնի, որպէս և հաւատացեալս եմ՝ լսելով իմ զգնացսդ և զվատահութիւն Հասարակութեանս ի քեզ, սակայն արարի ես զայն և արարից միշտ՝ վասն առաւել զգուշութեանս ի պաշտօն հարկիս, և վասն առաւել սիրոյ իմոյ առ Միսիթարեանս առ հասարակ, և առ լծակիցդ իմ առանձինն։

«Ասացից եւս՝ թէ քաջ խմեսամ ես, զի ոչ թէ զվոհականեր

գնացս և զառաքինութիւնս քո կամիս ցուցանել ինձ երկար դրութեամբդ, այլ ի հանգուցանել զմիտս իմ և մխիթարել զիս ճգնիս, ընդ որ խնդամ մեծապէս, և շնորհս յոյժ ունիմ Աստուծոյ զի որոշեաց ինձ այդպիսի համախոհ և համակրելիք լծակից։ Ահա, Երբ գիրկ ընդ խառն համբուրեցից ընդ հոգեհարազատիդ։

«Ի 10 փետրուարի տարւոյս հանդերձեալ մեր եկանել ի ճանապարհ՝ ակն ունիմք Տերամբ ժամանել այդր ի սկիզբն մայիսի. վասն որոյ հոգասջիր մեզ այդր օթեւանս վասն քանի մի աւուրց բնակութեան ի պատշաճ և ի արտաքոյ կողմանս քաղաքիդ։»

Թէպէտ այսպէս ի 10 փետրուարի հանդերձեալ էր Հայր Սարգիս հանդերձ Ազանուրեան տամբն եկանել ինաւ և դառնալ յԵրոպա, բայց նաւապետ նաւին կանխեաց քան զժամադրութիւնն աւուրս ինչ, և ոճապարեաց եկանել ի ճանապարհ յ7 փետրուարի. վասն որոյ բազում նեղութիւնք և տագնապ հասին նմա վասն պատրաստութեան ընկերացն, և մանաւանդ վասն ընտանեաց նոցին Մուրատեանց, որք մինչեւ ցվերջին կէտ բաժանման դժբաղդ քեռն իւրեանց տիկնոջ Ազանուրի ոչ դադարեցին ի դառնացուցանելոյ զնա, որպէս տեսցի համառօտիւ յառաջիկայդ։

Բայց և Հ. Սարգիս ոչ սակաւ վիշտս կրեաց ի վերջին աւուրսն յայլմէնոր և այլանդակ թշնամւոյ, որ էր Թոմմաս Պօղոս, կարծեցեալ հայ Թարգման Անենին Մատրաստ, որոյ ագիտութեան և անպիտանութեանն ազդաւ հարկաւորեալ էր Հ. Սարգիս ծանօթանալ Յովսէփոյ Շամիրի, և տալ նմա այնչափ գումար արծաթոյ։

Սա այս Թոմմաս ոչ միայն ընկալաւ վարձս անչափ վատակոց իւրոց իբրեւ 3,000 ռուբի, ըստ հաստատելոյ վարժապետին օրինաց, այլ և պահանջէր ի Հ. Սարգսէ վարձս երթեւեկելոյ իւրոյ առ նա, մանաւանդ թէ առ Յովսէփ Շամիր ի հարցանել զտարակոյս իւր, և այն յիւրաքանչիւր նստարս 35 ռուբի, զոր մերժեաց վարժապետն օրինաց՝ անիրաւ հա-

մարելով զայն։ Սակայն ի վերայ այսր ամենայնի չկասեցաւ նա յանդգամութենէն, չարչարել զՀ. Սարգիս անիրաւ պահանջողութեամբ ի վերջին աւուրս և ի սաղնապ ժամանակի մեկնելոյ նորա անտի։

Իբրեւ երեք աւուրք միայն կային մեկնելոյ նորա ի Մատրասէ, եհան նա յանկարծ հրամանագիր ի վարժապետէն օրինաց առ Հ. Սարգիս յանդիման լինել նմա ի քննել և յորոշել զհաշիւ իւր։ Յանդիման եղեալ Հայր Սարգսի վարդապետի անդ ըստ ժամադրութեանն, ցուցանէ նմա վարժապետն օրինաց զհաշիւ նորա իբրեւ 800 ռուփի, զոր պահանջէր Թումմաս, և հարցանէ ցնա թէ արդարեւ պարտական իցէ հատուցանել զայն։

Հ. Սարգիս ասէ; «Ընդ հակառակն, նա պարտական է «հատուցանել ինձ այնչափ ինչ արծաթ և առաւել։» Եւ ցուցանէ նմա զպատասխանին զոր երեք ամսոք յառաջ տուեալ էր թղթոյ անդգամին, և յորում յայտնապէս ցուցանէր՝ թէ պարտական էր նա հատուցանել Հ. Սարգսի իբրեւ 1,000 ռուփի, և նորա տեսեալ զչքաւորութիւն նորա՝ չէր պահանջեալ ի նմանէ զայն ցարդ։

Ընթերցեալ վարժապետին զթուղթն ասէ; «Հաւատամ «ես զի ճշմարիտ են բանք քո. բայց պարտ է ինձ ըստ օրի«նաց Ատենիս քննել և որոշել զհաշիւ քո, և զոր ինչ հա«տուցես դու անդ երդմամբ՝ հատուցեալ զայն, և զոր ինչ «հերքեսցես՝ մերժել և հանել զայն ի հաշուէդ։»

Եւ իբրեւ հերքեաց Հ. Սարգիս զբազում գլուխս պահանջանաց նորա, թէպէտ և երդնոյր անդգամն առանց խղճի մբռաց հատուցեալ զայն, ապատան եղեւ ի վկայութիւն այլոց ուրուքն անդգամի նմանեաց իւրոց, որ երբեմն գրագիր էր Կարոնի։ Կոչեցեալ զնա վարժապետին՝ եհարց ցնա ասել երդմամբ թէ «Քանի՞ցս անդամ տեսեալ է քո զՀ. Սարգիս ընդ «Թումմաս Պօղոսի առ Կարոնի, վասն խնդրոյ հրիտակին «ողորմութեան։»

Ասէ նա՝ թէ «Բազում անգամ։»

Ասէ վարժապետն; «Կարի՞ցն ասել որոշակի և հատա-

«ասթեամբ թէ քանիցս անգամ տեսեալ իցես զնա ընդ
«Հ. Սարգսի անդ։»

Ասէ; «Այո, իբրեւ տասն անգամ։»

Յանդիմանեալ վարժապետին զասութիւնն՝ ասէ; «Հա-
«կառակորդն չորիցս եւեթ ասէ, և դու տասն անգամ ասես.
«Երթ, երթ, շատ են բանքդ։»

Ապա հայեցեալ ի Հ. Սարգիս ասէ; «Գիտե՞ս, Սարգիս
«վարդապետս, ունելով քո ի ձեռինդ զուսմանս ինչ մեծ արծա-
«թոյ, Ջանան ամենեքին հանել ի քէն ինչ, թէպէտ և զու-
«տարեր և առնես միշտ զպարսս քո, զգուշանալով ընչից
«ազգատաց ազգիդ - բայց սա, Թովմաս Պօղոս, այր ծեր և
«կարօտ է, վասն որոյ չէ պարտ քեզ ճշգիւ և խստութեամբ
«վարել ընդ սմա. պահանջ սորա կամիլ մի է ի ծռմէ։»

Հ. Սարգիս ասէ; «Այդ այլ խնդիր է, և շնորհ իսկ, որպէս
«և տեսեր՝ զոր արարեալ եմ նմա. բայց նա բռնի իբրեւ իրա-
«ւունս ինչ պահանջէ յինէն։»

«Ասէ վարժապետն; Զէ ինչ, ներոգամիտ լեր զի ասա-
«տեցի խնդիրն։»

Զայս ամենայն բանս լուեալ անամօթ ծերոյն՝ պապանձեցաւ
և ոչ կարաց տալ պատասխանի։

Ապա որոշեցաւ տալ նմա 240 ռուբի՝ փոխանակ 800 ռու-
բոյ զոր պահանջէր, և այն եւս իբրեւ շնորհ, մանաւանդ թէ
զմեռ տուս երդման նորա։ Եւ իբրեւ վճարեցաւ այն, ասէ
ցՀ. Սարգիս վարժապետն օրինաց Սամէճ; «Փախիր ասի,
«փախիր, զի զերծցիս ի ձեռաց ամենեցուն։»

«Այո, ասէ Հ. Սարգիս, և ահա վասն այսոքիկ փութամ
«ես ժամ մի յառաջ եկանել ասի։»

Ասէ նա դարձեալ բան առաջարկելոն խրատ, թէ; «Կար-
«ծեմ ես զի Աստուածանք չիցեն ընդ քեզ բարեկամ, և չկա-
«րեն նոքա տեսանել զքեզ, յիշելով միշտ զայնչափ արծաթն
«զոր հաներ ի ձեռաց նոցա։»

Ասէ Հ. Սարգիս; «Զեմ ես յափշտակեալ ի ձեռաց նոցա
«զիրաւունս խրատոյ, այլ զիրաւունս ազգատաց ազգիս յա-
«պահովեալ եմ արդարութեամբ. ես բարեկամ եմ նոցա

«միշտ. իսկ եթէ չիցեն նոքա ինձ բարեկամք, ինքեանք գի-
«տասցեն, չէ ինձ փոյթ. շատ է ինձ զի անխոնջ միտս ունիմ
«ես առ նոսա և առ ամենեսեան։»

Զայս ասացեալ՝ ասայ նմա ողջոյն հրաժարական և մեկնի հանդերձ ախորժեամբ, ոչ այնչափ ընդ ասյժս արծամծոյն, որչափ ընդ ծախս թանկագին ժամանակին, որ ծախեցաւ օր մի ողջոյն։

Մնայ մեզ այժմ ծանուցանել զանդադար խառնութիւնն որ ի մէջ ընտանեացն Վարդանեանց, և զաշխատութիւնս Հայր Սարգսի ի խաղաղացուցանել զնոսա։

Այդ վախճան իրաւախոհութեամբ ուարտելոյ ընդ Վարդանեանս զինդիր վաշխի հրիտակին՝ էր պահել զտուն նոցա հաստատուն, և չլինել պատճառ քանդման նորին. և մի ի պայմանաց վերջնոյ դաշին ընդ Յովհաննու Վարդայ, թէպէտ և անդիր՝ և ի նմանէ առաջարկեալ, էր հաստատել նորա զնոսն իսրամ տիկնոջ Ազանուրի զիրաւունս իւր, 70,000 ռուբլի, և այն այնչափ պարզ և որոշ, մինչև օրինաւոր և լիուլի մարհակ ազատութեան պատրաստել նորին իսկ Յովհաննու Վարդոյ, և Ազանուրեանց ցուցանել, զի ընթերցեալ և հաստատեալ նոցա զայն՝ ընդունիցին զարծաթն իրենց ի նմանէ. բայց ի յապաղել նորա զհաստատումն ասկս անհաստատութեան մոց իրոց՝ մնայ գործն անկատար մինչև ցդարձ Եղուարդայ Եւրոպիոյ ի Վասրաս, որ ըստ խառնաէր բարուց իւրոց խափանել զեղբայրն հաստատել զնոսն իրենց զիրաւունս նորա։

Իսկ Յովհաննէս Վարդան ջանայ միշտ պատճառս ինչ անիրաւութեան գտանել, մերթ ընդ քեռն իւրում ի զուր գժտելով, և մերթ զերեսս իւր ծածկելով ի Հ. Սարգսէ՝ առ ի չտեսանել և ի չլսել ի նմանէ զրանս արդարութեան։ Բայց իրրև տեսանէ թէ չկարէ արդարանալ և ոչ ի միտս իւր անգամ, զնայ ինքնին ի տուն Ազանուրեանց, և որպէս թէ նորոգէ զառաջին բարեկամութիւնն իւր ընդ Հ. Սարգսի, և զինուորեսկան տէրն ընդ Ազանուրեանս. միանգամայն և զհաստատումն իւր առ նոսա վերստին հաստատէ, հաստատելով նոցա զիրա-

ուստ նոցա հանդերձ վաշխիւն, սկսեալ ի 1 օրէ ապրիլի 1832 մինչեւ ցօր հատուցմանն։ Սակայն կասկածեալ տակաւին Եդուարդայ յապաղէ դարձեալ զհատուցումն, բայց ասէ միշտ թէ՝ «Յորժամ որոշեսցէ քոյր իմ անցանել Եւրոպ, «հատուցից նմա զարծաթն հարկաւ, թէ և հակառակեսցի և «չկամիցի տալ Եդուարդ զբաժին պարտուց իւրոց։»

Եւ իբրեւ այն եւս որոշի և նաւն իսկ վարձի, կոչէ նա զՀ. Սարգիս ի տուն իւր և ասէ ցնա; «Գիտես դու զհակա- «ռակութիւն եղբօր իմոյ Եդուարդայ ի զլանալ քեռն իմում «զիրաւունս նորա, զոր խոստացեալ եմ նմա հանդերձ երդ- «մամբ, թէ և զրովանդակն ի քսակէ իմմէ պարտիցիմ հա- «տուցանել նմա. բայց զինչ իրաւունք իցեն չհատուցանել նորա «զբաժին պարտուց իւրոց. վասն այսորիկ խորհեցայ հնարս «ինչ գտանել առ ի պահանջել ի նմանէ զայն. այսինքն «գրել քեզ առ իս գիր և հարցանել թէ ընդէր յապաղիցեմ «այսչափ ժամանակ հատուցանել քեռն իմում զիրաւունս «նորա՝ զպայմանեալն ի մէջ յիրաւախոհութեան անդ մե- «ծում ընդ միմեանս։ Եթէ այսպիսի գիր ունիցիմ ես, կա- «ցից պահանջել ի նմանէ զատատանաւ ես։»

Եւ զգիրն զայն ինքնին յօրինեալ և պատրաստեալ էր յա- ռաջագոյն. զոր և ընթերցեալ Հ. Սարգսի՝ տեսանէ զի չէր ըստ բանից բերանոյ նորա, այլ իբրեւ դաշնագիր ինչ. քան- զի առաջին հատուած նորին առեալ էր ի վերջին դաշնագրէ նոցին ընդ միմեանս. իսկ երկրորդ հատուածն այսպիսի ինչ էր;

«Բայց որովհետեւ այս աւարտումն բանին մեզմէ է և օր- «տակար նոցին կտակատարաց, և կամելով զի համայն զա- «ւակք կտակողին օգտեսցին յայսմանէ, որոյ վասն պայման- «նեցի, զի Աղա Յովհաննէս Ս. Մուրատեան հաճեսցի ի կող- «մանէ իւրմէ և ի կողմանէ Աղա Եդուարդայ Ս. Մուրատեա- «նի կտակատարակցի իւրոյ հատուցանել տիկնոջ Մարիայ «Թերեզայ Աղանուրի և առն նորա Պ. Աբրահամ Աղանուրի «զգումարն 70,000 Մատրասու ռուփի. և զայդ գումարն «այսու յայտ առնեմ զի իմովս զիրաւութեամբ այսօր հատու-

« ցեալ է Աղա Յովհաննէս Ս. Մուրատեան քեռն իւրում
« տիկնոջ Մարիայ Թերեզայ Աղանուրի և Պարոն Աբրահամ
« Աղանուրի ։ »

Թէպէտ և կարէր Հ. Սարգիս յայժամ յանդիմանել զյայտնի խորամանգութիւն նորա, այլ լռէ խորագիտութեամբ. և զայն ոչ առ երկիւղի կամ շահախրութեան, այլ վասն զբժբախտ տիկնոջ աղանուրի, առ ի փրկել զնա յանիրաւութենէ անգութ եղբարց իւրոց ։ Քանզի յետ բազում նեղութեամբ յապահովելոյ զժառանգութիւն նորա, որով եմոյծ զանուն նորա ի մուրհակ անդր ժառանգութեան իւրոյ՝ առանդելով զայն ի գանձատուն տէրութեանն, և յետ որոշելոյ նորա անցանել յԵւրոպ, պարտ էր ըստ սովորութեանն ինդրել երդմընագրով ի Համարակալէն առաքել նմա անդ զվաշխ գրամոյ իւրոյ երկիցս ի տարւոջ. ընդ որ և հաւանի Համարակալն, բայց պայմանաւ զի մի լինիցի յերդմնագրի անդ թէութիւն կամ վերարերութիւն ինչ ընդ այլում, այսինքն թէ կտակաւ իցէ այն գրամն թողեալ նմա ի հօրէ իւրմէ, և թէ եղբարք նորա խնամակալ են գրամոյն. քանզի ընդդէմ էր այն ամենայն նորոյ կարգաւորութեանն եկեալոյ յընդհանրական քաղաքապետէն որ ի Կալկաթա ։

Այսոքիկ էին ահա այլ պատճառք հակառակութեան Մուրատեանց, պահելով միշտ զանուն տիկնայրութիւն իւրեանց ի ժառանգութենէ անտի ասկս պայմանացն որ ի կտակի հօր իւրեանց, թէ « Զի եթէ անժառանգ վախճանիցի տիկին « Աղանուրն, ժառանգութիւն նորա յաւելցի ի ստացուածս « հօր իւրոյ ։ »

Զայս ընդդիմութիւն ցուցին նոքա զկնի վաճառելոյ Աղանուրեանց զամենայն ինչս իւրեանց և վարձելոյ զնաւն. որով Ճնայր տիկնոջն Աղանուրի կամ կտրել յառաջագրութենէն անցանելոյ յԵւրոպ, և տուժել զվարձ նաւին 6,500 ռուպի, և կամ թողուլ զստացուածս իւր ի ձեռս եղբարց իւրոց անիրաւաց, որոց և այն էին կամք, մանաւանդ Եդուարդայ, յափշտակել զայն առանց խղճի մտաց. որպէս և ասէր թերանալ բազում անգամ ։

Եւ ահա վասն այսր ամենայնի խորագիտութեամբ վարեալ Հ. սարգսի ընդ Յովհաննու Մուրատայ, յոպաղէ զորոշումն կամաց իւրոց ընդ առաջարկութիւն նորա մինչեւ աւարտել զամենայն գործս Աղանուրեանց յօդուտ և ի միխիթարութիւն նոցա, թէպէտ և բազում նեղութեամբ և չարչարանօք, իշխեցանել զհակառակութիւն Մուրատեանց։ Եւ ապա Գնացեալ առ Յովհաննէս Մուրատ ասէ ցնա; «Մի լցէ պայման եղեալ
« ընդ քեզ հատուցանել քեզ Աղանուրեանց 70,000 ռուբի.
« ոչ ապաքէն դու ինքնին առաջարկեցեր և խոստացար տալ
« նոցա զայն, խոստովանելով զյանցանս ձեր. և ոչ ապա-
« քէն կամեցար դու յայնժամ և շատ խակ ջանացար խառնել
« զայն պարտս ձեր ի հաշիւ վաշխի հրամային ողորմութեան
« զոր ես բացէ ի բաց մերժեցի՝ ասելով թէ չեմ ես գործա-
« կալ Աղանուրեանց, այլ Մխիթարեանց, և թէ պարտականն
« ես քեզն քում, իրաւախոհ լեր ընդ նմա երբ և սրպէս կա-
« միս, չկամիմ ես բնաւ խառնել ի գործս այլոց. և վկայ բա-
« նիցս Կռամիէն է, որ թէպէտ չէ այժմ ի միջի, այլ զրաւ-
« թիւն նորա առ քեզ՝ յայտնապէս ցուցանէ, և առաւել
« ևս՝ յիշատակարանն իմ, յորում ամենայն բանք մեր ընդ
« միմեանս նշանակեալ են ճշդիւ, նախատես և փորձ զրով
« իմ անհաստատութեան բարոց և բանից ձերոց։

« Թողից զառաջարկութիւնն որով յառաջ քան զհատու-
« տել զաչին մերոյ կամէիր աւանդել ի ձեռս իմ զիրատա-
« ցեալդ իրաւունս Աղանուրեանց՝ մինչեւ ցհաշտիլ քո ընդ
« նոսա, զոր ես ոչ կամեցայ ընդունել. զի հաւատայի և
« պարտ խակ էի հաւատալ բանից առն Պարոնի մանաւանդ
« թէ երդմանն և սարսափելի երդման ուղղափառ քրիստո-
« նէի միոյ, որպիսի զքեզ համարէի. և զի կամէի ես զպա-
« տիւդ վերանորոգել, հատուցանելով քո զիրաւունս այլոց
« ազատութեամբ և ոչ բռնի. թէպէտ և դու զայս ամենայն
« բարեկամութիւն իմ ոչ ծանեար ցարդ, այլ զհակառակն
« հատուցեր ինձ ի զանազան դէպս, որպէս և այժմ այսու-
« առաջարկութեամբդ. վասն որոյ ասացեալ եմ և ասացից
« միշտ՝ թէ Դատեսցէ Տէր ընդ իս և ընդ ձեզ, բայց զձեզ

“ ողորմութեամբն իւրով, և զիս արդարութեամբն, եթէ մե-
“ ղուցեալ ինչ իցեմ ձեզ։ ”

Պապանձեալ Յովհաննու Մուրատայ ի բանից ասոյ, չգի-տէր զինչ առնել պատասխանի. այլ կամեցեալ ըմբռնել զՀ. Սարգիս ի բանից բերանոյ նորա, հարցանէ ցնա թէ չկամիցի յայնժամ զի ընկալցին Ազանուրեանք զայն գումար արծաթոյ։

“ Այո, ասէ Հ. Սարգիս. ցանկայի ես ընդունել նոցա զի-
“ բաւուն իւրեանց ի ձէնջ, զիտելով քաջ՝ թէ վասն անարգ
“ արծաթոյ ի սկզբանէ անտի լեալ է ի միջի ընտանեացդ ան-
“ սիրելութիւն, խռովութիւն և անհնարին վնաս. վասն
“ որոյ առաւել վասն հաստատութեան տան ձերոյ ցանկայի
“ հաստատել քեզ զայն իրաւունս նոցա՝ քան թէ վասն
“ շահելոյ նոցա, հաւանեալ գոլով առաջին՝ թէ Ապրի զբր-
“ կեալն, չապրի զրկողն։ Եւ վասն հաստատութեան տան
“ ձերոյ թողաւ ձեզ ի Միսրանութենէս իրրեւ 700,000 ռու-
“ փի։ Այլ ես հարցանեմ քեզ ասել ինձ երդմամբ. ուղղա-
“ թեամբ արդի՞ իցէ առաջարկութիւնդ՝ թէ խորամանգու-
“ թեամբ։ ”

Դժկամակեալ նորա ընդ համարձակութիւն բանիցն, ասէ ցՀ. Սարգիս; “ Զկամիմ ի վերջին աւուրս մեկնելոյ ի մի-
“ մեանց դժոխել ընդ քեզ։ Բայց չգիտեմ զինչ ընդդիմա-
“ թիւն իցէ քո ընդ այս առաջարկութիւն իմ, կամ զինչ
“ կարեւորութիւն այսպիսի բանից։ ”

Ասէ ցնա Հ. Սարգիս; “ Առաջին պատճառն է դժկամակու-
“ թիւն քեռն քո, որ չկամի բնաւ սեպհականել ինչ ի դրա-
“ մոյն ողորմութեան, այլ միայն զառանձին իրաւունս իւր
“ ակն ունի զառանել ի ձէնջ, և զայն խաղաղութեամբ և ոչ
“ խռովութեամբ. զնոյն և այժմ առաքեալ է ասել քեզ բե-
“ բանով իմով. ապա ապառ ես դու, որպէս կարծեմ ես,
“ ի պարտուց այսր։ ”

“ Զիարդ լինիցի ինձ այդ, ասէ նա. զի խոստացեալ եմ
“ հանդերձ երդմամբ հաստատել նմա զայն իրաւունս նո-
“ ցա։ ”

Ասէ ցնա յայնժամ Հ. Սարգիս ; “ Այդ պատուոյ քում և “ խղճի մոացդ անկ է, այլք չեն երաշխաւոր, և ոչ ինչ խա- “ փան։ ”

Ասէ Յովհաննէս Մուրատ ; “ Եղբայրն իմ Եդուարդ է խա- “ փան, չհատուցանելումն դրամին պարտուց իւրոց, 35,000 “ ռուբի։ ”

Հ. Սարգիս ասէ ; “ Զայդ ընդդիմութիւն նորա զու յառա- “ ջագոյն գիտէիր, և ասէիր ցիս միշտ։ Երկրորդ և գլխա- “ ւոր պատճառ ընդդիմութեանս է ապերախտութիւն քո. “ քանզի այդու դրով կամիս ցուցանել մարդկան, որպէս և “ ասացեալ իսկ ես ոմանց, թէ Հ. Սարգիսն ոչ աւարտէր “ ընդ քեզ իրաւախոհութեամբ զինդիր վաշխի հրիտակին, “ կամ պարզապար իսկ ասել, չթողցր նա ձեզ 700,000 ռու- “ բի, եթէ չխոստանայիր զու Ադանուրեանց 70,000 ռուբի, “ որ ամենեքին սուտ է և ծայրագոյն ապերախտութիւն. “ քանզի եթէ կամք էին ինձ հանել և նոցա բաժին ի դրա- “ մոյ անտի, ոմ կարէր արգելուլ զիս, և կամ զինչ անպատ- “ շաճ գործէի ես. զի եթէ կարող եղէ և պատշաճ համարե- “ ցայ առնել այնչափ շնորհս որդւոց բարերարին ազգիս, “ ընդէր և ոչ մնաս ինչ դատեր նորա. սակայն ոչ արարի “ վասն պատճառացն զոր վերագոյն ասաս։ ”

Կամեցեալ նորա յայնժամ զապաշնորհ գնացս իւր արդա- բացուցանել, այլ իմն ապաշնորհութիւն ցուցանէ անդ, ա- սելով ; “ Կասկածիմ ես միշտ թէ պահանջեսջիք զուք ի մէնջ “ յաւուր միում զրամանդակ վաշխ հրիտակին. և եթէ պա- “ տահեցի այն դժբախտութեամբ, գոնէ անցուցի և այս “ գումար զրամոյ ի հաշիւ այնր. ապա թէ ոչ՝ անիրաւու- “ թիւն մեծ լիցի հատուցանել ասա և անդ, քանզելով մեր “ բոլորովին։ ”

Ասէ ցնա Հ. Սարգիս ; “ Այդ կարծիք քո և կասկած բոլո- “ բովին ընդունայն և օտար են ի մտաց Մխիթարեանս. “ զի եթէ կամք էին մեզ պահանջել ի ձէնջ զայն, ընդէր “ յետոյ և ոչ յառաջ, մինչդեռ խնդիրն առաջի Ասենիս “ կայր ամենայն ինչ մեզ յաջողակ. և եթէ բանաւոր պատ-

«Ճառաւ թողաւ ձեզ այն, այսինքն չքանդելոյ աղաղաւ զձեզ,
«նոյն պատճառ լիցի միշտ։

«Դարձեալ՝ զանհնարինն հնարաւոր համարեցուք ըստ
«կարծեացդ. պահանջեացուք ի ձէնջ զվաշխն հրիտակի ողոր-
«մութեան. յԱղանուրեանց զիաւրդ կարացուք պահանջել
«զայդ զումար արծաթոյ. քանզի ասացեն նոքա՝ թէ մեն-
«քեանք զիրաւունս իւրեանց ընկալեալ են ի Մուրատեանց,
«որպէս յայտ է և ի մուրհակէ աղաւութեան տուելոյ ի նո-
«յանէ ձեզ։»

Եւ իրրեւ չկարէ նա տալ բանիցն պատասխանի, ասէ Հայր Սարգիս; «Տեսանեմ, Պարոն, թէ քանի՛ հակասութիւնք են
«յառաջարկիդ։»

Յուսահատեալ Յովհաննու Մուրատայ յելից խորհանգութեան իւրոյ, հարկաւորի շատանալ մուրհակաւ աղաւութեանն որ յԱղանուրեանց, զոր և վերատին յօրինեալ ձեռամբ օրէնագիտին իւրոյ Վայքաշի, պատրաստեալ էր, և ասէ ցՀ. Սարգիս գնալ առ նա ի վաղիւ անդր դարձեալ, յաւարտել զրանն։

Այս ամենայն խոստացութիւնք լինին առաջի Պ. Յովհաննու Յարութենի, զոր կամաւ տարեալ էր Հ. Սարգիս ընդ իւր անդր, վկայ լինել ամենայն բանից նոցին ընդ միմեանս։

Ի վաղիւ անդր դարձեալ գնայ Հ. Սարգիս առ Յովհաննէս Մուրատ ընդ Յովհաննու Յարութենի, և գտանէ անդ զԵդուարդ Մուրատ որ արբեալ էր և բարբանջէր։ Դժկամակ ցուցանէ զանձն իւր ընդ գործս եղբօրն, որ ճեմէր ի սրահի անդ և լսէր զխօսս նոցա։ Եւ ի յամել Եդուարդայ անդ ընդ երկար, խնդրէ ի Հ. Սարգսէ վերատին գնալ առ նա ի վաղիւ անդր յաւարտել զիրս քեռնն։ Բայց անդ գտանի դարձեալ Եդուարդ Մուրատ, վասն որոյ ոչ լինին բանք զինդրոյն. և տեսեալ Յովհաննու Մուրատայ թէ չկարէր արդարացուցանել զանձն վասն անիրաւ յապաղմանն, այլ ինչ հնարս հնարի. առաքէ ի վաղիւ անդր, մինչդեռ անհնարինս զբաղեալ էին ամենեքեան և տագնապեալ ընդ չու ճանապարհորդութեանն, ասել քեռն իւրում;

“ Որովհետեւ ոչ զոյ ժամանակ հատուցանելոյ զարծաթն,
“ զկարեւորսն կամիմ ասել ի ժամս. ասորագրեալ
“ հատատեալիք զմուրհակն ազատութեան, և յանձնեսջիք
“ զայն իրրեւ առանց ի ձեռս Պ. Յովհաննու Յարութենի,
“ մինչեւ հատուցից զարծաթն յԵրուսաղեմ, ապա յանձնեցի ինձ
“ առանցեալ մուրհակն։ ”

Ազանուրեանք զառաջինն չկամին ընդունել զառաջարկութիւնն, ասելով թէ որով պատճառաւ յապաղեցաւ ցարդ հատուցումն այն, նոքին պատճառաւ յապաղեսցի զարձեալ։ Բայց ապա հաւանեալ խորհրդոյ Հ. Սարգսի՝ հաճին ընդունել զառաջարկութիւն նորա, և Յովհաննէս Յարութիւն խոստանայ Ազանուրեանց չյանձնել Մուրատեանց զմուրհակն, մինչեւ տեղեկացի թէ հատեալ իցէ արծաթն ի ձեռս տիկնոջ Ազանուրի յԵրուսաղեմ. և եթէ առանց հատուցանելոյ զարծաթն պահանջիցեն ինեմեանք զմուրհակն ազատութեան, առանցեսցէ նա զայն ի Դիւանատունն Անենին։

Այսպէս ահա վերջին մասն խորամանգ կուսակերգութեան Յովհաննու Մուրատայ որ յերից ամաց հետէ սկսեալ էր՝ ասարսի ի վերջնում առաւ մեկնելոյ Հ. Սարգսի ի Մասրատէ, և ի ժամու եկանելոյն նորա ի նաւ ընդ Ազանուրեանց։

Տացի արդ տեղեկութիւն զճանապարհորդութենէն Հայր Սարգսի յԵրուսաղեմ։ Որպէս վերագոյն ծանուցաւ, կանխեալ նաւապետին եկանել ի ճանապարհ յԺ փետրուարի, մինչեւ ցժամն երրորդ բազում նեղութեամբ և ապդեապաւ յուղարկեն զբեռինսն ի նաւ, և այն ինչ հանդերձեալ էին զնալ անդր, և ահա հասանէ ի Բոմբայէ կրտսեր եղբայրն Ազանուրի Պաղրան Աւետ, հրաւիրեալ ի նմանէ առնել զայրի քոյրն իւր զՄարիամ ի Բոմբայի առ հայր նորա. և յաւուրդ մի ժամու հապիւ կարաց պատանին տեսանել զընտանիս իւր որ ցայն վայր անծանօթ էին նմա։

Ածեալ էր նա ընդ իւր յանի մի ձեռագիր մատեան նախնեաց մերոց, զորս խնդրեալ էր Հ. Սարգսի ի Ծերունի հօրէ նորա ի Յարութիւն Սահակ Ազանուրէ, և էին այսոքիկ;

1. Պզատանի արամխասութիւն Տիմէի՝ այլոմբ հանդերձ։

2. Մոխէի Կապանկատուացւոյ պատմութիւն Աղուանից։
3. Դիոնեսիոսի Արիսպագացւոյ գործք։
4. Սարգսի մեկնութիւն կաթուղիկեայ թղթոց։
5. Ներսէսի Լամբրոնացւոյ մեկնութիւն Յովհաննու Աւետարանին։
6. Սրբոյն Եփրեմի խուրին Աստուծոյ Շամիրարբառ մեկնութիւն Աւետարանի Լամբրոնացւոյն ձեռագիր։

Եւ քանզի յուզարկեալ էին արդէն արկեղքն ի նաւ, ծրարեալ Հ. Սարգսի զգրեանն ի պատատակի միւսմ առնու ընդ իւր ի կառս ընդ այլ ծանրագին զարդս Աղանուրեանց՝ իբրեւ 100,000 ռուբլոյ, զորոց գինեամն յանձն առեալ էր նորա վասն զգուշութեան, զի մի ինչ պատահիցի, և այնպիսի հոգով գնայ ի նաւն։

Հասեալ ի ծովափն տեսանեն անդ զՅովհաննէս Մուրատ և զորդին Եդուարդայ զԱղեքսանդր, որում հարցանէ տիկինն Աղանուր թէ ո՞ւր իցէ հայր նորա Եդուարդ։ Ասէ պատանին՝ թէ ի գործատան իւրում է։ Ասէ ցնա տիկինն; «Երթ և «ասա նմա զի վերջին փայրկեան է, եկեսցէ տեսանել զիս։» Ընթացեալ նորա վազվազակի կոչէ զհայր իւր. և նորա եկեալ առ քոյրն ասէ տխրութեամբ; «Ցաւէ ինձ յոյժ, Մամիի, «ընդ առաջագրութիւնդ գնալոյ յԵւրոպ. զիտեմ զի զՀաս-«ցիս դու ընդ այդ, բայց անագան։» Եւ աղաչէ զՀ. Սարգիս խնամ տանել քեռն իւրում ըստ կարի։

Իսկ Պ. Յովհաննէս Մուրատ լուռ եւեթ կայ, և ապա զցաւ զլխոյն պատճառելով՝ ի մակոյկն անդամ չմտանէ գնալ մինչև ի նաւ անդր։ Զելանէ ի նաւն և Եդուարդ՝ զտարաժամել աւուրն պատճառելով, այլ ի նաւակի անդ ողջունեալ զուղեւորսն դառնայ յետս։ Ի հրաժարել Հ. Սարգսի ի նմանէ ասէ ցնա; «Կարծէի եւ թէ և Պ. Յովհաննէս եղբայր քո «գայր ընդ մեզ մինչև ցայսր. վասն որոյ շատացի նմա զվեր-«ՀԻն ողջոյնն. մատուցես նմա աղաչեմ զողջոյն ոիրոյ և «յարգութեան իմոյ։» Եւ նա չտայ ինչ պատասխանի։

Յինն ժամու գիշերին խարիսխ ի վեր առեալ նաւապետին և առագաստ բացեալ սկսաւ նաւարկել յաջողակ հողմով։

ԳԼՈՒԽ Լ.

Աղգարարոբիչն Հ. Սարգսի առ Պ. Աղանուր. — Հասանել նաւռոն ի Գլոխն Բարեյոռսոյ. — Թռղթ Հ. Սարգսի առ Մռրատեանս. — Աց ի կղզի սրբոյն Հեղինեայ. — Հասանել ռղեռորացն յԱնգղիա. — Թռղթք առ Հ. Աղեքսանդր Պէշիքթաշլեան և. առ Պ. Աղեքսանդր Ռաֆայէլ. — Հասանելն Հ. Սարգիս և Աղանուրեանք ի Լոնդոն. — Տեսռթիւն ընդ Հ. Աղեքսանդրի և. ապա ընդ Պ. Աղեքսանդրի Սաֆայէլի.— Թռղթ Հ. Սարգսի առ Մռրատեանս.

Մինչչեւ իակ մտեալ ի նաւն՝ խրատս կարեւորս տուեալ էր Հ. Սարգսի առ Պ. Աղանուր՝ թէ ո՛րպէս պարտ էր նմա վարել ի նաւին, ծանր կալ և սակաւ խօսել ընդ ուղեկիցսն. չտալ ումեք համարձակութիւն յարձախել ի սենեակ իւր, և չառնել մտերմութիւն ընդ ոմանս. մի՛ գոռոզութեամբ վարել ընդ նոսա, զի ազգ խրոխտ են Անգղիացիք, և մի՛ կարի խոնարհ, զի արհամարհուք են. պատուեսջիր, ասէ, զկին քո առաջի այլոց, զի յայնմ է պատիւ քո, քաղցրութեամբ և քաղաքավարութեամբ խօսելով ընդ նմա, և մի՛ խստութեամբ և բրբութեամբ. զի անհաճոյ և զզուելի են յոյժ Եւրոպացւոց այսպիսի գնացք առն։ Մի՛ ցուցաներ և մի՛ պատմեր նոցա զմեծութիւն քո, և մի՛ փառասիրութեամբ գովեր զինչս քո և զքոյինդ, զի նախանձուտ են նոքա, մանաւանդ օտար ազգաց։ Պահեսջիր, ասէ, զխրատս իմ զայսոսիկ, զի փորձիւ գիտեմ զայս ամենայն։ Սակայն ընդ հակառակն վարեցաւնա, և բուչում գժկամակութեանց եղեւ պատճառք ի ճանապարհորդութեան անդ։ . . .

Զաւուրս քառասուն և հինգ, մերթ յաջողակ և մերթ հա-

կառակ հողմով նաւարկեալ՝ ժամանեն ի Գլուխն Բարեյուսոյ ի 25 մարտի. և ելեալ ի նաւէն իջեւանին ի պանդոկի միոջ քաղաքին, ուր և զաւուրս երիս կացեալք՝ տան ի լուանալ զհանդերձն կարեւորս. անտի գրէ Հ. Սարգիս Թուզթ առ Մուրատեանն օրինակ զայս;

„ Ազնուամեծար և սիրելի Հարազատաց Ագա Եղուարդայ և Ագա Յովհաննու Մուրատեան ողջոյն շատ ի Քրիստոս.

„ Բնաւորապէս ցանկալի է ազնուական Հարազատացդ գիտել զվիճակէ սիրելի քեռն ձերոյ տիկնոջ Ազանուրի հեռացելոյ ի ձէնջ. վասն որոյ և ես պարտ անձինս համարիմ ծանուցանել ձեզ զայն գրովս։ Արդ՝ մեկնեալ մեր այսր յ7 փետրուարի, և գրեթէ յաջողակ հողմով նաւեալ՝ հասաք այսր ի Գլուխն Բարեյուսոյ ի 25 մարտի, յաւուր ուրբաթի աւուտաց Ամենարհնեալ Կուսին։

„ Զառաջին երկուս աւուրսն միայն անհանգիստ եղեւ տիկին քոյր ձեր, շարժեալ մաղձիցն ըստ սովորութեանն. յետ այնորիկ հանգիստ բոլորովին, և որպէս թէ ի տան իւրում ի ցամաքի կայր, ոչինչ համարեալ զշարժումն նաւին և զաղհատութիւն ծովուն։ Ապաքէն չկք իմ տեսեալ զնա այդր այնպէս քաջառողջ մարմնով և հանգիստ հոգւով, որպէս այսր. միայնակ տխրութիւն նորա է տագնապաւ մեկնիլն այսր. և առաւելապէս անախորժ յիշատակ անցիցն անցելոց որ ընդ նա յընտանեաց իւրոց, և որ գժբախտութեամբ ի բաղդրանէ մինչև ցվերջին կէտ բաժանման իւրոց անպակաս էին։ . . .

„ Քաջառողջ են և սիրելի մանկունք նորա, մանաւանդ Մխին, Վիրգինէն, որ օր ըստ օրէ աճի և զարգանայ։ Իսկ Պ. Ազանուրն նոյն է, որպէս էր այդր, ունելով զնոյն բնաւորութիւն։ Նաւապետ նաւս այր բարեխառն է յոյժ և քաղաքավար։

„ Այսչափ ինչ տեղեկութիւն զվիճակէ տիկին քեռն ձերոյ։

որ և ողջոյն շատ մատուցանել հարազատացդ և համօրէն տան ձերոյ և ընտանեացն։

„ Ողջոյն յարգութեան և օրհնութեան խնդ մատուցեալ բոլոր ընտանեաց ձերոց, մնամ

„ Ազնուութեան ձերում

„ Ի Գլուխ Բարեյուսոյ. 25 մարտի 1835.

„ Ն. Ծ. և Աղօթարար
„ Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՐԴՈՐԵԱՆ.
„ Վարպետ Մխիթարեան. ,,

Ի 27 մարտի ընդ երեկս դարձեալ մտանեն ի նաւ, և զաւուրս տասն նաւարկեալ հասանեն ի կղզի արրոյն Հեղինեայ, և անդ եւս խարիսխ արկեալ կան մնան աւուրս երկուս։ Ամենայն ճանապարհորդք որ ի նաւին, ելանեն ի կղզին և գնան բազում եռանդեամբ յայց գերեզմանին Նափոլէոնի։ Ի չգնալ անդր Հ. Սարգսի և Աղանուրեանց զարմանային և մեղադրէին զնոսա իբրեւ զանզգայս ոմանս՝ թէ գիտիցդ ոչ մեծ ինչ համարեցին զայն։ Որոց եւ պատասխանի Հ. Սարգիս հեգնօրէն, թէ „ Զիք ինչ հարկ ի վերայ մեր գնալ յայց գերեզմանի „ նորա, քանզի չեմք ինչ մեղուցեալ նմա. բայց ձեզ պարտ „ է գնալ, քանզի պատճառ էք մահուան նորա. հարկ է ձեզ „ գնալ անդր և խնդրել ի նմանէ թողութիւն։ . . . ,, Բայց ապա ելեալ ի կղզին շրջին և ինքեանք իբրեւ ժամ մի՝ տեսանել զշինուածս և գնել պտուղս, և ոչ գտանեն անդ ինչ պիտանի՝ բաց ի քանի մի թզոյ, զոր առեալ գտանեն ինքեանք։

Ց 8 ապրիլի ընդ երեկս մեկնին անտի, և զաւուրս հինգ նաւարկեալ՝ անցանեն առ Շամբարձման կղզեան, և ապա զաւուրս վեց նաւարկեալ՝ անցանեն ընդ հասարակածն ի 11 ապրիլի, յաւուր ոտնի հրաշափառ Յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. որ հանդիպեալ նաւի միում մեկնելոյ

ի Լոնտոնէ ի 15 մարտի, անտի տեղեկանան անվտանգ հասանելոյ Ռօյալ Ռիլիէմ նաւուն, որով յղեալ էր Հ. Սարգսի զվերջին գումար ոսկեդրամոյ հրիտակին ողորմութեան։

Ի 26 մայիսի տեսանեն զԱնգղիա ի հեռատոնէ, և ի 27 նորին եկանեն ի նաւէ անտի գրեթէ ամենայն ճանապարհորդք ի Փօրթսմըթ։ Միայն Աղանուրեանք և Հ. Սարգիս մնան ի նաւին, և չկամին գնալ ի Լոնտոն կառաք՝ սակս մեծագին զարդուց Աղանուրեանց, զորոց կասկածէին թէ գուցէ պահանջեսցի մաքս, կամ խափան ինչ լինիցի հանելոյ զնոսին ի Լոնտոն։ Գրէ Հ. Սարգիս թուղթս առ Հայր Աղեքսանդր և առ Ռաֆայէլեանս առանձինն՝ պատրաստել բնակութիւն, գալ առ նոսա ի Կոէյվզէնտ և հոգալ ընդ իւր զկարեւորացն՝ գրանէ զարդուցն։ Եւ այս պատճէնք են թղթոցն ;

« Վերապատուելի տեառն և Հօր Աղեքսանդրի վարդապետի մերոյ ողջոյն կարօտագին սիրոյ.

« Ողորմութեամբն Աստուծոյ և աղօթիւք Հաստատութեան հասեալ կամք ասա ողջամբ, և կարօտիմք յոյժ տեսութեան և օգնականութեան ձերում։ Նախ՝ պատրաստել մեզ այդր տեղի ինչ պատշաճ ի բնակութիւն վասն քանի մի աւուրց և ապա գալ ընդ առաջ մեր, հոգալ ընդ մեզ զկարեւորացն որ ի նաւիս, և առաջնորդել մեզ ի պատրաստելոյդ բնակութիւն. և եթէ կարիցես ածել ընդ քեզ զմին ի սիրելի Պարոնաց մերոց Ռաֆայէլեանց՝ բարւոք լիցի. քանզի ունի ընդ իւր տիկին Աղանուրն բազում ինչ և մեծագին զարդս ի պէտս իւր և իւրոցն, վասն որոյ կարօտի խորհրդոյ և օգնականութեան չեռեաց իւրոց, անտեղեակ զոլով օրինաց մաքսատան քաղաքիդ, թէ զիարդ կարիցէ հանել զայն ի նաւէն առանց ինչ հարկի. և եթէ չիցէ այն հնարաւոր, ուրեմն յապահովս առանդեսցէ զայն ի մաքսատունն և անտի անցուցցէ ի Վենետիկ։ Զայսմանէ, բարւոք հոգ տարեալ քո և տեղեկացեալ՝ եկեսցես առ մեզ բաս ժամանակին, հանդերձ լրմամբ

աւետեաց որ ի վանեաց և որ այսր, որովք ուրախացուս-
ցես զմեզ, և տացես մեզ մուտանալ զվիշտս ճանապարհի մե-
ծոյ։

„ Մնամ միշտ

„ Վերապատուելոյ Հայրութեանդ

„ Ի Նաւն Լէոն ֆլոտայ հանդէպ Փորթսմըթի.
„ Ի 27 Մայիսի 1835.

„ Ն. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈՊՈՐԵԱՆ.”

„ Բազմապայծառ տեառն և սիրելի Պարոնի մերոյ Ալեքսանդրի Ռաֆայէլի երանաւէտ կենաց խնդալ և ողջոյն շատ մեծարանաց։

„ Ահաւասիկ, սիրեցեալդ իմ Պարոն, մօտ եմ ի քաղաքդ, և ընդ հուսկ եկից ձօնել ձեզ անձամբս զողջոյն սիրոյ և յարգութեան իմոյ, և ընուլ զբազմամեայ կարօտութիւնս խօսելոյ ընդ ձեզ կենդանի ձայնիւ. ո՛ օր ուրախութեան։...

„ Զանցս ճանապարհորդութեան մերոյ պատմեցից ձեզ այդր բերանով, այլ ի ժամուս զողջամբ և զանվտանգ ժամանել մեր այսր պարտ անձին համարիմ ծանուցանել Ալեքսանդրեանդ, գիտելով զայս ցանկալի յոյժ խնամոս մատց մըտերմութեան ձերոյ. միանգամայն և խնդրել ի ձէնջ պատրաստել ինձ և որոց ընդ իս սիրելի ընտանեացդ բնակութիւն ի պատշաճ ուրեք տեղւոջ քաղաքիդ վասն քանի մի աւուրց։

„ Զայս հոգս աշխատութեան թէպէտ և յանձնեալ եմ առանձին գրով և Վ. Հ. Ալեքսանդրի մերոյ, զոր և ակն ունիմ գտանել այդր, բայց գիտելով չափ՝ թէ նա զամենայն ինչ խորհրդով և առաջնորդութեամբ ձեր առնէ՝ ոչ աւելորդ համարիմ և ձեզ յանձն առնել։

„ Գնադուատ ձեր սիրելին Ալեքսանդր և այր նորա Պարոն

Ազանուր ողջոյն հարազատ սիրոյ և յարգանաց մատուցանեն ձ.տդ և համբոյն տան ձերոյ Պարոն եղբարցդ։

„ Ցնոյն և իմ մատուցեալ՝ ճնամ միշտ,

„ Բազմապայծառ տէր,

„ Ձերումդ ազնուութեան

„ Ի Նաւն Լէոն Ցլօրայ հանդէպ Փօրթամբթի.
„ 27 Մայիսի. 1835.

„ Ն. Ծ. և Ազօթարար

„ Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈՒԻՐԵԱՆ. "

Ի հասանել նաւուն հանդէպ Հայթի՝ ի պատճառս հակառակ լինելոյ հողմոյն եկանեն ի նաւէ անցանել ի Հայթ, և անտի ի Լոնտոն, և յանձնեն նաւապետին զգզրոց զարդուց Ազանուրեանց, կնքելով զայն կրկին կնքով, և վստահանալով ի բանս նորա, առանց պահանջելոյ ինմանէ գրութիւն ինչ վկայութեան։

Ց 30 մայիսի ընդ առաւօտն եկեալ ի Հայթէ հասարակաց կառօք և տասն ժամս ճանապարհորդեալ ժամանեն ի Լոնտոն, և իջևանին ի պանդոկի ուրեք։ Եկեալ անտի վաղվաղակի Հ. Սարգսի գնայ ի գտանել զՀ. Ալեքսանդր՝ այլ ոչ գտանէ զնա, զի չէր իսկ ի Լոնտոն, այլ գնացեալ էր ի Մանչէսթէր ի զնին մեքենայից քաղաքին. թէպէտ և ընկալեալ էր զթուղթն Հ. Սարգսի, և խնացեալ զժամանակ հասանելոյ նոցա ի Լոնտոն, և զկարօտութիւն բնակութեան։ . . .

Գնայ ապա ի տուն Պ. Ալեքսանդրի Ռաֆայէլի, տեսանել զնա և խնդալ թէ հոգացեալ իցէ ուրեք բնակութիւն՝ ըստ խնդրոյ գրութեանն. այլ և զնա չգտանէ անդ, զի ի գեղջ էր, թէպէտ և ընկալեալ էր և նա ըստ ժամանակին զթուղթն և խնացեալ զկարօտութիւն եկաւորացն։

Ի վաղիւ անդր, յ31 մայիսի, որ օր ծննդոց էր տիկնոջ Աղանուրի, գնան յեկեղեցին տեսանել զպատարագ և գոհութիւն մատուցանել խնամոց Բարձրելոյն, որ հասոյց զնոսա ողջամբ և անվտանգ յԵրոպա, յետ նաւարկելոյ ընդ ովկիանոս զամիսս չորս։

Ապա յետ երկուց աւուրց զառնայ ուր ուրեմն Հ. Աղեքսանդր ի Մանչէսթէրէ ի Լոնդոն, և եկեալ զտանէ զեկաւորսն ի պանդոկի անդ. որոյ և առաջին բանք այս լինին ի տեսանել զՀայր Սարգիս թէ «Քանի՞ զիրացեալ ես։ . . .» Եւ ոչ այլ բանք խնդութեան և կամ հարցումն զողջութենէն և զճանապարհորդութենէ։ . . . Ընդ որ զարմացեալ Հ. Սարգսի և տխրեալ ի միտս իւր, գուշակելով անտի և զայլսն, հարցանէ միայն զողջունէ նորա և զվանականաց, և զյաջողութենէ իրաց Միաբանութեանն։ Եւ ապա գնացեալ տեսանէ զՊ. Աղեքսանդր Ռաֆայէլ ի տան եղբօր իւրոյ Յովհաննու. որ և ասէ ցնա; «Քաջութեամբ և փառաք կատարեցեր զպաշտօնդ։» Եւ յաւելու նա, թէ բազում ինչ կարեւոր ունի խորհել և խօսել ընդ նմա ապա։

Զայս ամենայն զէպս վերջինս որ ի Մատրաս և ի ճանապարհին՝ մանրամասն տեղեկութեամբք հանդերձ գրէ Հ. Սարգիս առ Գերապայծառ Սուքիաս Սոմալ ի Լոնդոնէ նամակաբն որ յ3 և ի 10 յունիսի 1835։ Յորմէ և ընդունի պատասխանի առ առաջինն օրինակ զայս;

«Վերապատուելի Տեառն Տեառն Հ. Սարգսի վարդա-
«պետի ողջոյն ի Քրիստոս.

«Վենետիկ. 14 յունիսի 1835.

«Համառօտ գրեալս առ այժմ փութամ ծանուցանել Հայ-
«րութեան քում զհասանելն ի ձեռս իմ յերեկն աւետարեր
«թղթոյդ գրելոյ այսր ի Լոնդրայէ յ3 ամսոյս որ եկից ըզ-
«սիրտս մեր ամենեցուն անպայման ուրախութեամբ, լուեալ
«զողջամբ ժամանելն ձեր հանդերձ ազնիւ տամբն Աղանու-

„ բնանց այդր ի Լոնդրա յ30 մոյխի, որ վասն անպակաս
„ էին աղօթք հասարակութեանս և հոգք, մանաւանդ յան-
„ ցանել զոգցես արդ պայմանեալ աւուրցն նաւարկութեան
„ ի Մարսէլ, զորմէ ծանուցեալ էր ձեր յառաջագոյն։

„ Արդ յետ ընթեռնլոյ իմ դողդոջ ձեռամբ և ձայնիւ ա-
„ պրտիս կայտառալոյ յուրախութենէն, ընթացաք ամենեքին
„ առ հասարակ որչափ ինչ ի վանս՝ յեկեղեցին, զի կէսք
„ աւուրքք յառաջ ի զիւղ էին գնացեալք, և անդ պաշտեցաք
„ միաբան զմեր գոհացողականն Զքեզ Աստուածն երգելով
„ ամէս հասարակաց մեծի և մեծի պարգևիս. և նոյն հե-
„ տայն գրով աւետաւորեցաք զնոյն որոց արտաքոյ էին Վա-
„ նայս։ Առ դիպաւ և Գերապայծառ Մարուշն եկեալ
„ ի Հռովմայ։

„ Զկարեմ երկարել այլ եւս զգիրս. քանզի ահա ունիմ
„ գրել և առ մերսն ի Հռովմ. և զի միայնակ եմ առ, և
„ գրագանք բազում են ի Վանս յաղագս ապնջակամելոյ մեր
„ զ՝ իւրն մեծարու ի տան աւուրց հետէ. և որք առ ի Վանս՝
„ անձինք ամենեքն, որք և առ հասարակ ոչինչ ունեն զքեզ մե-
„ ծաւ խնդակցութեամբ։

„ Մասն զխանդակաթ սիրոյ և զխնդակցութեան զիմ ողջ-
„ ոյն և զօրհնութիւն Պ. Աղանուրին և Մամի տիկնոջն և
„ համօրէն ընտանեաց նոցա ընդ աջահամբոյր յարգական
„ ողջունի սիրասուն որդեկաց իւրեանց՝ որ ի ժամուս կեան
„ տերամբ քաջառողջք և զուարթք. և գրեսցեն և նոքա ու-
„ րոյն գիր։ . . .

Նուաստ ծառայ

„ ՍՈՒՔԻԱՍ ՍՈՄԱԼ,

„ Արքեպիսկոպոս և Աբբայ։ „

Գրէ Հ. Սարգիս թուղթ և առ Մուրատեանս ի Մարտաս, օրինակ զայս ;

«Ազնուամեծար Հարազատաց Աղա Եղուարդայ և Աղա Յովհաննու Ս. Մուրատեանց խնդալ.

«Դարձեալ պարտ անձինս համարիմ և կատարումն խոստմանս, տալ ազնուամեծար հարազատացդ տեղեկութիւն զտիկին քեռէն ձերմէ և զհանգամանաց նորին։ Արդ որպէս ծանուցեալ եմ ձեզ ի նախընթաց թուղթն իմ, մեկնեցաք մեք ի հրաւանգանէն Բարեյուսոյ ի 27 մարտի։... Ահա ամիսք երկու և կէս են զի եմք ի մայրաքաղաքիս Անգղիոյ։

«Սիրելի ընտանիք ձեր Պարոնայք և տիկին Դաֆայէլեանք, և մասամբ Օկլ ընկալան զքոյր ձեր ըստ սովորական ընտանեսիրութեան իւրեանց, և առաւելապէս Պ. Աղեքսանդրն, որ և եհարց զողջունէ ձերմէ և զհանգամանաց ձերոց ընդ միմեանս, և ընդ իս մանաւորապար։

«Ասացի նմա ըստ սրտի իմում և ըստ պարտուցս, թէ առանձին ինչ խաղաղութեամբ և սիրով առարտեցաւ ի մէջ մեր. ընդ որ ուրախ եղեւ նա, և զոմեաց զիսհական գնացս մեր առ հասարակ։ Բայց յետ քանի մի առուրց յառնուլ նորա ի ձէնջ այսոր թուղթս՝ զարմացաւ և տրտմեցաւ, չտեսանելով ինոսին յիշատակութիւն ինչ զքեռէն ձեռամէ տարակայելոյ ի ձէնջ անբաւ հեռաւորութեամբ, և մանաւանդ ի չհանդիպել առտ մեզ Պ. Աղեքսին ձերոյ, որ ոչ առանց խորհրդոյ կարծի։...

«Ընդ այս գնացս ձեր խորթ և սովորական՝ ցաւեցաւ յոյժ քոյր ձեր. այլ ըստ սովորութեան իւրում և ըստ բարեոք սովորութեանն, յողորմութիւնն Աստուծոյ միայն յուսացեալ միխիթարեցաւ ինքնին։ Իսկ ես առ այս ի ժամուս ասել ինչ ոչ կամիմ, մեալով տակաւին ուղղութեան և բարեոք ելից. միայն կարեւոր և հարկ համարիմ յուշ առնել ձեզ զխախճանի իրաւախոհութեան մերոյ ընդ միմեանս՝ վասն բանի իրաւանց որբ և աղքատ մանկանց Աղգիս։

„ Թողից ասել զրանից խղճի մռայց և զպատուոյ, որոյ երաշխաւոր և պարտապան ամենայն ոք է առանձին, թէպէտ և ես յայտոսիկ եւս Ջանացայ և Ջանամ ցարդ անարատ և անաղարտելի պահել տալ զայն և այլոց. թէպէտ և այս Ջանք իմ ընդդէմ իսկ են պաշտամանս իմում և առաւելութեան փառացս . . . .

„ Ահա այսու խորհրդով և այսպիսի զգացողութեամբ

„ Մնամ միշտ

„ Ձերումդ Ազնուութեան

„ Ի Լոնտոն. 10 օգոստոսի 1855.

„ Նուաստ ծառայ և աղօթարար

„ Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ

„ Վարդապետ Մխիթարեան. „

ԳԼՈՒԽ ԼԹ.

Պատուհրիչն ուղիղն ուղղոց ի կալ վնալ Հ. Սարգսի և. Աղանուրեանց ի Լոնդոն. — Աղքատիք գործակալութեան Հ. Աղեքսանդրի. — Խորհուրդ Պ. Աղեքսանդրի Ռաֆայէլի յօգուտ աղքատաց ազգիս. — Խրատ և յորդորանք Հ. Սարգսի առ նա զիրացն. — Թուղթք Պ. Աղեքսանդրի առ Հայր Սարգիս ի Փարիզ. — Պատասխանի Հ. Սարգսի առ նա. — Վերջին թուղթք նորին առ Գերապայծառ Սոնաղեան ի Փարիզ. — Հատանիլ Հ. Սարգսի և Աղանուրեանց ի Միլան, և. ապրա ի Պատաւիոն. — Երանաւոր բանք Սոնաղեան աբբային առ Հ. Սարգիս. — Հատանիլ ուղեւորացն ի Վենետիկ.

Պատմեցի առաջ և անցքն որք անցին ընդ Հ. Սարգիս ի Լոնդոն, զամիս իրրեւ երիս կալոյ նորա անդ՝ հանդերձ տամբ Աղանուրեանց։

Արդ յետ մեռանելոյ հոգոց, տառապանաց և ողբոյ չափ աշխատութեան Հ. Սարգսի ի Հնդիկս վասն իրաւանց աղքատաց ազգիս, ի դառնալ նորա ի Մատրաս ի Լոնդոն, մինչչեւ խնացեալ Հ. Սարգսի զպատճառս ցրուութեանն որով վարեալ էր ընդ նմա Հ. Աղեքսանդրի՝ կանխեն ասել նմա զայն Ռաֆայէլեանք առ հասարակ թէ տրամեալ էր Հայր Պէշիքթաշլեանն ընդ գալուստ Հ. Սարգսի ի Լոնդոն, զի կարճէր այնու ժամանակն յամելոյ իւրոյ անդ ի Լոնդոն, ուստի չկամէր մեկնել, ախորժելով յոյժ զայն կեանս ազատութեան, և այլն։

Որոյ սայ պատասխանի Հ. Սարգիս խոհեմութեամբ՝ ի պահել զպատիւ նորա յիւրմէ կողմանէ. ի վերայ այսր ամենայնի՝ յանձնէ Հ. Սարգիս Հ. Աղեքսանդրի դառնել վասն իւր

և Ազանուբեանց բնակութիւն ի վարձու. և ի չկարել նորա գտանել զայն՝ ասէ ցՀ. Սարգիս; «Եթէ միայնակ էիր գու, «հոգայի քեզ սենեակ մի ի վերնայարկի բնակութեան իմոյ։» Գտանէ զայն ի վախճանի տիկինն Ռաֆայէլ։

Հարցանէ Հ. Սարգիս ցՀ. Ալեքսանդր զյղեալ արծաթոյն որ ի Մատրասէ, թէ անցուցեա՞լ էցէ զբովանդակն ի Վենետիկ ի ձեռս Մխիթարեանն։ Ասէ նա թէ դեռ ունի ի ձեռին իւրում իբրեւ 3,000 լիրէ ստէրլին. և ի հարցանել նորա թէ ընդէ՞ր չէր անցուցեալ և զայն անդր, ասէ ցնա՝ թէ յղեալ արծաթն դեռ անպտուղ կայ ի Վանս, վասն այնորիկ չէր փութացեալ անցուցանել անդր և զայն արծաթ։

Հ. Սարգիս ասէ; «Պարտ է անցուցանել և զայն անդր՝ «ուր պարտ էր անցուցանել ի վախճանի։» Մանաւանդ զի տեսանէր զի Հ. Ալեքսանդր տայր Պ. Ալեքսանդրի 1,000 լիրէ ստէրլին ի փոխ յանդիման իւր՝ առանց հարցանելոյ ինչ ինքեան, որպէս թէ բացարձակ տէր էր արծաթոյն այնորիկ։ Տուեալ էր նա փոխ և Ալեխսանի զանազան գումարս արծաթոյ՝ առանց նշանակելոյ զայն ի տետրակի իւրում, որպէս յետոյ յայտնեցաւ, թէպէտ և ազգ արարեալ էր նմա Հայր Սարգիս ի Մատրասէ՝ չհաւատալ ումեք զարծաթն զայն ազգքառաց ազգիս։ . . .

Ի սոխել Հ. Սարգսի զՀ. Ալեքսանդր անցուցանել և զմընացեալ արծաթն ի Վենետիկ, պատճառէր նա թէ չգտանի փոխանակագիր ի ժամուն։ Հարցանէ Հ. Սարգիս ցԱլեխսան, թէ գտանիցի՞ փոխանակագիր։ Ասէ ցնա Ալեխսան; «Ե՛րբ և «ուրշամ և խնդրիցես։» Եւ նա յանձնէ նմա գնել վասն 2,000 լիրէ ստէրլինի. զոր և գնէ նա ի վաղիւ անդր, և տայ Հ. Ալեքսանդրի անցուցանել զայն ի Վենետիկ։ Իսկ նա զմի 1,000 լիրէ ստէրլին միայն անցուցանէ անդր, և զմիւս հազարն պահէ ի ձեռս իւր։ Զոր խնայեալ Հ. Սարգսի, և կասկածեալ ընդ գնացս նորա, գրէ թուղթ ի Վենետիկ առ Հայր Յակոբոս ՃԷլալեան գործակալ Մխիթարեանն, և հարցանէ թէ քանի՞ լիրէ ստէրլին անցուցեալ էցէ յայն նուագ Հ. Ալեքսանդրն ի Վենետիկ։ Պատասխանէ նա թէ 1,000 լի-

րէ տէրլին միայն։ Յետ քանի մի աւուրց գրէ առ Հ. Սարգիս ի Լոնտոն՝ թէ անցուցեալ էր ապա Հ. Աղեքսանդր և զմիւս 1,000 լիրայից փոխանակագիրն, խնացեալ անսի գ.ննութիւն Հ. Սարգսի։ . . .

Ապա խնդրէ Հ. Սարգիս ի Հ. Աղեքսանդրէ հաշիւ բոլանդակ յղեալ արծաթոյն ի Մատրասէ ի Լոնտոն ի վերայ նորա, և նա խոստանայ տալ նմա զայն յետ քանի մի աւուրց. և ի յապաղել նորա աւուրս բազումս, տոխպէ զնա Հ. Սարգիս։ Հարկաւորեալ նորա՝ տայ նմա հաշիւ մի, յորում պակասեն 400 լիրայք, զոր չգիտէր թէ ուր ծախեալ իցէ. վասն որոյ առնու ընդ իւր զՄատթէոս Ալեխսոն առանձին ի քննել զհաշիւ իւր ընդ նմա. և յետ բազում քննութեան և անհնարութեան գտանելոյ զայն կորուստ, ասէ Ալեխսոն ցՀ. Սարգիս թէ չէր իւր տեսեալ բնաւ այնպիսի անկարգ հաշիւ, որպիսի էր Հ. Աղեքսանդրին. քանզի պարտական էր Մարթին Ալեխսոն իրրև 130 լիրայ տէրլին, զոր չէր նշանակեալ Հ. Աղեքսանդրի ի տետրակի իւրում . . . և նա փոխանակ ամաչելոյ և ցաւելոյ ընդ կորուստն՝ ասէ Հ. Սարգսի թէ բարեբախտութեամբ յառաջ քան զքննութիւնն զայն՝ առանց ինչ մտածութեան ի Մանչէսթէր գնայ ի գնութիւն քաղաքին։ . . .

Տեսեալ Հ. Սարգսի զանհնարութիւն գտանելոյ զկորուստ արծաթոյն, և զամօթ Միսրանութեան իւրոյ առաջի օտարոց, ընտ զպակասութիւնն զայն յայլ արծաթոյ զոր ունէր ի ձեռին իւրում, և ցուցանէ Ալեխսոնեանց՝ թէ գտաւ կորուստն այնր արծաթոյ։ Սակայն ի վերայ այսր ամենայնի չճանաչէ նա զեղբայրութիւնն Հ. Սարգսի, չօգնելով նմա ի շրջեցուցանել երբեմն զԱղանուրեանս առաւ և անդ ի քաղաքին, մերթ առելով թէ չունի ինքն ժամանակ, զբաղեալ գոլով ի կարեւոր գործս իւր, մերթ՝ թէ ամաչէ ինքն շրջել ընդ Աղանուրեանս, ոչ գոլով նոցա զգեցեալ բոլորովին ըստ տարբաղու Անգլիացւոց. այլ ոչ ամաչէր շրջել ընդ օտարոտիս ոմանս ի փողոցս և ի տեսարանս. զոր տեսեալ Աղանուրեանց՝ մեղադրեցին և զոյժ ապշեցան, նոյնպէս և Ռաֆայէլեանք, Հանդիրձ և այլ բազում տոգոստանք։ . . .

Յանկայ Հ. Աղեքսանդր ի Լոնտոն հոգալ վասն Մուրատեան վարժարանին և վասն Վանայ ինչ ինչ բնարանական գործիս կարեւորս. կատարէ զայն ամենայն ըստ ցանկութեան սրտի նորա Հ. Սարգիս, և հատուցանէ յառաջագոյն զգինս նոցին, թողլով զարծաթն ի ձեռս Հ. Աղեքսանդրի 600 լիրայ ստերլին, 400 վասն Մուրատեան վարժարանին, և 200 վասն վանացն. իբր զի չգոյին ի ժամուն գործիքն պատրաստ ըստ ամենայնի՝ զոր խնդրէր Հ. Աղեքսանդր. մանաւանդ զի ընդ նոսին կամէր և նա յապաղել զդարձ իւր ի Վենետիկ այլ եւս ամիս ինչ, վասն այնորիկ և մնայ անդ ի Լոնտոն և ոչ դառնայ ընդ Հ. Սարգսի ի Վենետիկ։ Որոյ տեսեալ յայտնապէս զչկամութիւն նորա դառնալոյ ի Վանս, և կամեցեալ պահել զպատիւ նորա առաջի Ռոտֆայէլեանց, դատել պատուաւոր և օգտակար պատճառս թողլոյ զնա անդր, որ էր այսպիսի ինչ;

Աւուրքն ինչ յառաջ քան զմեկնել Հ. Սարգսի ի Լոնտոնէ և դառնալ ի Վենետիկ ընդ Աղանուրեանս, հարցանէ ցնա Պ. Աղեքսանդր Ռաֆայէլ խորհուրդ մի առանձին. իբր զի ունի կամս յաւելուլ գումար ինչ արծաթոյ ի հրիտակն հանգուցեալ հօր իւրոյ Եդուարդայ Ռաֆայէլի, և յանուն իւր զդրոցն զայն կոչել՝ իբրեւ ի յիշատակ հանգուցեալ հօր իւրոյ, որպէս տեսանի ի ճակատու գրոց պատմութեան Ռոլէնի, որպէս և խորհէր նա ի սկզբանէ հետէ։ Զանայ Հ. Սարգիս հանել զայն խորհուրդ ի մտաց Պ. Աղեքսանդրի, ասելով թէ չէ այն արդարութիւն՝ հայեցեալ ի կամս կտակողին, և թէ չբերէ այն այնչափ օգուտ հասարակաց ազգիս և փառս անուան իւրում, որչափ բերէր՝ եթէ կամէր առնել առանձին ինչ դպրատուն վասն մանկանց ազքատաց ազգիս ի Պոլիս, ուր ուսանիցին մանկունք առաւել քան զհարիւր, սակաւ ծախիւք և բազում շահիւք, օգտելով բազմաց յազգէս որ անդ, և յայլ քաղաքաց եկելոց անդր. վասն այնորիկ դիցես, ասէ, գումար ինչ արծաթոյ ի վերայ գեղեցոյ յԽոտալիա, որոյ եկամուտն անցուցցի ձեռամբ Միսիթարեանս ի Պոլիս ի ձեռս անձանց իւրոց վարչաց դպրատանն ի մատակարարել զայն։

Հաճոյ թուի Պ. Աղեքսանդրի այս խորհուրդ Հ. Սարգսի. վասն որոյ և ասէ թէ խորհեալ որոշեցէ ինքն՝ թէ քանի գումար արծաթոյ ունիցի դնել յայն, զոր և յայտնեացէ ի վաղիւն։ Արդարեւ գնայ նա անվրէպ ի վաղիւ անդր առ Հայր Սարգիս և յայտնէ նմա զգումար արծաթոյն, որ լինի 10,000 ռուբլի ասէրլին։ «Այսչափ միայն, ասէ, որոշեալ է իմ դնել «ի վերայ գեանոյ, և զեկամուտս նորին մատակարարել ըստ «վերոյիշեալ խորհրդոյն. բայց յաւելից յայն ապա, եթէ «ի կենդանութեան իմում և եթէ ի կտակիս, տեսանելով զարդ«գասիսն որ անտի։»

Եւ հարցանէ զՀ. Սարգիս թէ ո՞րպէս թուիցի նմա որոշումն իւր. բաւական՞ իցէ առ այն այնչափ գումար արծաթոյ։

Ասէ ցնա Հ. Սարգիս; «Բաւական համարիմ ես որչափ «ինչ կամաւ և յօժարութեամբ առնիցէ որ ողորմութիւն։»

Խրախուսեալ Պ. Աղեքսանդրի ի բանից Հ. Սարգսի, «Ու«բեմն սկիզբն արասցուք, ասէ, գործոյն Աստուծով, և «գնեալ փոխանակագիր անցուցցուք ի Վենետիկ ի Վանս, «զի գնեցի գետին ըստ դիտաւորութեան իմում։»

«Բարի է, ասէ Հ. Սարգիս. յայտնեցէք զայս դիտաւո«րութիւն ձեր և Հ. Աղեքսանդրի Պէշիկթաշլեան, յանձնես«ջիք նմա հոգալ զփոխանակագրոցն ձեռամբ Ալեխանի, «որոյ ձեռամբ հոգացեալ էր զփոխանակագիրսն Մուրա«տեան վարժարանին։»

Յանկարծ Պ. Աղէքսանդր զի մեացէ Հ. Սարգիս ի Վանան մինչև վճարէր գործառնութիւնն։ Ասէ ցնա Հ. Սարգիս; «Ամե«նայն յօժարութեամբ մեցի ես ասա՝ եթէ չունիցի զհոգն «Աղանուրեանց, զփոխադրել նոցա Խոտլիա մինչև իցէ «ձմերան ի վերայ հասեալ. վասն որոյ պարտ է ինձ մեկնել «ասի. բայց թողից ձեզ ասա զՀ. Աղեքսանդր ի լնուլ զայս «գործ, և առեալ փոխանակագիր անցուցանել ի Վանս։»

Հաւանի Պ. Աղեքսանդրն, և խոստանայ հասուցանել զծախս Հ. Աղեքսանդրի մինչև յաւարտումն գործառնութեանն. բայց զծախս ճանապարհի նորա դառնալոյ ի Վանս ոչ առնու յանձն հասուցանել, ասելով՝ թէ վասն գործառ-

նութեան Մուրատեան դպրատան գնացեալ էր նորա անդր. և վասն այսորիկ հատուցանէ յառաջագոյն Հ. Սարգիս զծախս ճանապարհին Հ. Աղէքսանդրի, և զայն լիուլի, զի մի՛ ինչ պակասեցէ նմա։ . . .

Անհաւանիկ պատուաւոր և օգտակար պատճառ թողլոյն նորա գնա ի Լոնտոն այլ եւս ամիս մի, յորում աւարտէին երկոքին գործառնութիւնքն, կատարումն բնաբանական գործեացն, և անցուցումն փոխանակագրոց։

Եւ այսպէս մեկնի Հ. Սարգիս ի Լոնտոնէ յամսեանն օգոստոսի 1835 հանդերձ տամբ Աղանուրի, և խոստմամբ Պարոն Աղէքսանդրի, որ յետ անցուցանելոյ զարծաթն զայն ի Վանս՝ գնալոց էր անձամբ անդր առ ի գործ դնել զդիտաւորութիւն իւր մինչեւ որդութեամբ Միսրանութեան. և զհատատութիւն խոստման իւրոյ գրով ծանուցանէ նմա ի Փարիզ, օրինակ զայս;

„ Սիրելի և մտերիմ հարազատ բարեկամ իմ, Վերա-
„ պատուելի Հայր Սարգիս.

„ Ի Լոնտոն. յ8 սեպտ. 1855.

„ Ապուխնեալ յամենողորմն Աստուած, և բարեխօսու-
„ թեամբ սուրբ Աստուածնին՝ պաշտպանին մերոյ և ամե-
„ նայն սրբոց, և քաջալերեալ ի բանից սիրելի Վերապատ-
„ ուելոյդ, և վստահ ի գործունեայ աջակցութիւն ձեր, ի նը-
„ պատակ ամենահարկաւոր ի բարօրութիւն միացորդ կե-
„ նացս, ահա ըստ խոստմանս առ ձեզ կամ միամ ի նոյն
„ անդրդուելի յառաջադրութեան՝ մեկնել ատի յետ երկոց
„ ի պաշտօնէս։ Զայս ծանուցի այսօր սիրելի Հ. Աղէքսանդ-
„ րիս. և յուսամ զի յօրէ յայսմանէ անդրադ յայլ ոչ պի-
„ տեւան գործոց, պարապեսցի նա ի մին յայն հարկաւոր
„ գործ՝ մղել զիս ի գործադրութիւն դիտաւորութեանս։
„ Ընկալայ թուղթ ի Փալէսէ. շնորհ ունիմ զձէնջ վասն

“ հոգալոյ զկառս իմ , և ուրախ եմ զի նորոգի և պատրաս-
“ տի վասն հասանելոյս որպէս զի նստեալ ի նոյն յառաջ
“ ընթացայց ։ Ի փոքձ հաստատութեան մտացս ահա առա-
“ քեցի առ Հայր Յակոբոս և հետ զհետէ առաքեմ զրաղ-
“ մամեայ պահեալ ոսկեդրամս , վասն բարեմիտ դիտաւո-
“ րութեանցս ։ . . .

“ Ողջոյն ամենայն սիրելեացս որք այդր ։

“ Մնամ ձեզ

“ Նուաստ և խոնարհ եղբայր

“ ԱՂԵՔՍԱՆԴՐ ՌԱՖԱՅԷԼ ՂԱՐԱՄԵԱՆ։ ”

Գրէ դարձեալ նա ինքն Պ. Աղեքսանդր թուղթ առ Հայր Սարգիս ի Փարիզ , օրինակ զայս ;

“ Սիրելի և մտերիմ բարեկամիս Վերապատուելի
“ Հայր Սարգսի .

“ Ի Լոնտոն . ի սեպտ. 25 . 1835.

“ Գրեմ զայս երկտող զկիր յաթոռոյ պաշտօնիս , զտեալ
“ վայրկեան մի պարապոյ , ի պատասխանի թղթոյ Վերա-
“ պատուութեան ձերոյ , զոր ընկալայ երեկ զիշեր ի դարձին
“ իմում ատի ի տուն ։ Ատուծոյ ողորմութեամբ և եռան-
“ դագին աղօթիւք ձերովք կամ մնամ ի նոյն միտս հաս-
“ տատ , թէ և բազում և դժուարայաղթելի են փորձութիւն-
“ քըն որք պատեն և պաշարեն զիս . և թէ և ատ է Հ. Աղեք-
“ սանդրն մեր , այլ չէ նա Հ. Սարգիսն իմ որ զյաջողութիւն
“ նպատակիս առնէ իւր մի միայն գործ . բազում իւիք զրա-
“ զեալ է , և առ բազում ծանօթս (ոչ ասեմ բարեկամս) են
“ գործք իւր ։ Յաւուր երկուշաբաթի և յերեքշաբաթի են
“ վերջին աւուրք պաշտօնիս . խնդրեմ ի ձէնջ մատուցանել
“ առ ամենողորմն Ատուած զաղօթս ձեր , որպէս զի յայն

„ երկուս աւուրս ի բարի ելս յանդեսցին այս միամեայ անս-
„ ընդհատ տառապանք ։
„ Ողջունիւ ամենեցուն

„ Մնամ Վերապատուութեանդ ձերում

„ Անկեղծ և հաւատարիմ եղբայր ձեր

„ ԱՂԵՔՍԱՆԴՐ ՌԱՖԱՅԷԼ ՂԱՐԱՄԵԱՆ։ ”

Առեալ Հ. Սարգսի ի Փարիզ զվերոյիշեալ թուղթ Պարոն Աղեքսանդրի, ցաւի ընդ լուր դանդատանաց նորա զՀայր Աղեքսանդրէ, և առնէ պատասխանի թղթոյ նորա օրինակ զայս ;

„ Բազմապայծառ տեառն և սիրելի Պարոնի մերոյ Աղեքսանդր Ռաֆայէլի երանաւէտ կենաց խնդալ և ողջոյն շատ մեծարանաց.

„ Յաւելուլ միշտ Աստուութեանդ ի նոյն միտս հաստատութեան՝ յաւելու ինձ օր ըստ օրէ ուրախութիւն. և գոհութիւն, և աղօթք իմ առ Աստուած յաճախեն ընդ այն և ընդ կատարումն դիտաւորութեան ձերոյ. միայն սակաւիկ ինչ տխրեցայ ընդ այլ իւիք գրաղել Վ. Հ. Աղեքսանդրի մերոյ, և առ այլս ոմանս չինելոյ գործոցն. թէպէտ և տեսանեմ ես յամենայն թուղթս նորա, զի զձէնջ խօսի և ի գործս ձեր պարապել ասէ, և այն խնդութեամբ ինն և յոյժ եռանդեամբ ։ Վասն որոյ աղաչեմ զձեզ, մի՛ յօտար միտս առջիք զգնացս նորա, այլ տայջիք զայն աշխատութեան բարուց իւրոց, որ չդանդաղի բնաւ և ի գործս այլոց, և զկամս ամենեցուն հաճել. և մի՛ զյաջողութիւն նպատակիդ զփութոյ այլոց կախեալ համարիջիք, այլ զհաստատուն և զգործունեայ կամսց ձերոց, հանդերձ ողորմութեամբն Աստուծոյ և օգնականութեամբ ճշմարիտ բարեկամացդ ։

„ Այո սիրեցեալդ իմ Պարոն, այսպէս պարտիք գիտել, և

ըստ այսմ առնել, որպէս և առնէք դդ իսկ. ընդ որ յոյժ ուրախ եմ և գոհ։ Ահա այսու ուրախութեամբ և միամտութեամբ սրտի հանդերձեալ եմ եկանել ի Ճանապարհ վաղիւ գնալ ի Վենետիկ, ուր և ակնուն իմ տեսանել և զձեզ զկնի միոյ ամսոյ ինոյեմբերի. քանզի պաշտօն ձեր այդր կատարեցաւ, և ժամադրութիւնն եհաս. վասն որոյ փութացարուք եկանել այսր յառաջ քան զնոյեմբեր, զի մի՛ յաւելցին ներդութիւնք ճանապարհի ձերոյ ի խստութենէ ձմերայնոյ եղանակին։ Այսու ակնկալութեամբ չկամիմ գրել ձեզ այլ գիր յայլ ինչ տեղեաց, միայոյ բերան ի բերան խօսել ընդ ձեզ և ի միասին գործել Աստուծով։ . . .

„ Մնամ միշտ

„ Բարեպաշտաւ Տէր,

„ Ազնուութեան ձերում

„ Ի Փարիզ. 4 հոկտ. 1835.

„ Ն. Ծ. և Աղօթարար

„ Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈՐԵԱՆ. „

Գրէ Թուղթ և առ Հ. Աղեքսանդր, յուշ առնելով նմա զնպատակ յամէլոյն ի Լոնտոն՝ այսպիսի բանիւք;

„ Փութացէր ժամ մի յառաջ անցանել այսր, զի ունիցիս բաւական ժամանակ տեսանելոյ և քննելոյ զամենայն, և հոգայցես մեզ զկարեւորսն օժանդակութեամբ և շնորհիւ Պարոնին մերոյ. քանզի որպէս գիտես դու, չկարեմք մեք վասն գրատանս ասելի ինչ ծախել, և վասն դպրատանն ըստ բաւականին և առաւել ծախեալ եմք։

„ Ի 27 սեպտեմբերի անցելոյ ընկալայ դարձեալ ի Պարոնէ մերոյ գիր, յորում ցուցանէ վերստին զհաստատութիւն մը-

տաց իւրոց մեկնելոյ այսր. և յորում ցուցանէ եւս, թէ դու զբաղեալ ես զբազում իւիք, և թէ առ բազում ժամանակս են գործք քո։ Ընդ այս վերջին մասն գրութեան նորա սակաւիկ ինչ տխրեցայ։

„Գիտես դու, սիրեցեալդ իմ Հայր, զի միայնակ վախճան յամելոյ քոյ այդր էր նա ինքն և գործք նորա. այս ինքն՝ առ նմա լինել քեզ միշտ, ի յորդորել և ի հանել զնա այսր փութով։ Աղաչեմ, մի՛ վայրապար լիցի վախճան յամելոյդ և վերջին վաստակոցդ։ Գիտես զպէտս տառապեալ ազգիս, զորոյ զթշուառութիւնն տեսեր ի Պոլիս, և լսես անդադար ի թղթոց մերոցն. և պատճառ այնմ ոչ այլ ինչ՝ բայց եթէ ազգասութիւն, և գալման նորին ի մէջ՝ օժանդակութեամբ բարերար և ազգասէր արանց, և որոց թիւ սակաւ է յոյժ յաշխարհի մերում դժբաղդութեամբ։ . . .„

Յառաջ քան զվերոյիշեալ թուղթսն, ի 1 սեպտեմբերի 1835 գրէ Հ. Սարգիս ի Փարիզէ գիր առ Գերապայծառ Սուքիաս Սամալ ի Վենետիկ, յորում ասէր;

„Ահա ամիսք երեք են զի հասեալ կամ յԵւրոպ, այլ գոն բնաւ և ոչ հանգիստ, ոչ մարմնոյ և ոչ հոգւոյ։ Հապիւ երբէք ելեալ ի տանէս, և այն առ հարկի և վասն կարեւոր իրաց, գրեթէ ոչ ինչ տեսի ի բազում և յերեւելի տեղեաց Լոնդոնի. քանզի չախորժէի բնաւ տեսանել, անհանգիստ գոլով մտացս. ցանկայի միայն և ցանկամ միշտ ժամ մի յառաջ պատսպարիլ այդր առ ձեզ, զի հանգեայց և մխիթարեցայց արդեօք։ . . .

„Այո՛ Գերապայծառ Տէր, ակն ունիմ գտանել այդր հանգիստ և մխիթարութիւն ի ձէնջ. իսկ եթէ դժբաղդութեամբ վրիպեցայց և ի յուսոյ ատոր, վճարեալ է վասն իմ ամենայն ինչ։ . . . Առաւել քան զայս և յայտնապէս խօսել չկարեմ ի ժամուս, և ոչ իսկ կամիմ. քանզի գիտեմ զի չլիցի մեզ այն ինչ ի մխիթարութիւն, այլ այսչափ միայն զկա-

բնութեան ազգ առնեմ առ ի զգուշութիւն և ի զարման ներկայ և ապագայ ցաւոցս։

«Եւ այս են կարեւոր ազգարարութիւնք իմ, մանաւանդ թէ խնդիրս ի ձէնջ, զի աշխատութիւն յանձն առեալ հոգաջիք այդր յառաջագոյն ի Վենետիկ կամ ի Պատաւիոն տեղի ինչ պատշաճ և արտաքոյ ի բնակութիւն Ազգանուրեանց, մանաւանդ թէ դատեր Բարերարի ազգիս։ Եւ յառաջագոյն ասացի հոգալ ձեզ զայն այդր և անդր, քանզի չգիտեմ թէ ո՛ւր ախորժեսցեն նոքա բնակել, և զի մի՛ ստանդեալ շարչարիցին և ճեպասիցին, որպէս ի Վենետն. թէպէտ գրեալ էի յառաջագոյն և ազգ արարեալ որոց պարտ էր գրել և ազգ առնել, այլ անձնասիրութիւն չար եղծանէ զամենայն օրէնս մարդկութեան և պարտուց պաշտաման։ . . .»

Գրէ դարձեալ ի Փարիզէ յ2 հոկտեմբերի և այլ եւս վերջին զիր առ նոյն Գերապայծառ Սոմալ, յորում ասէ;

«Թէպէտ ի նախընթաց թուղթս ծանուցի Արհիապատիւ Հօրդ՝ թէ աւուրս հնգետասան միայն ունիմ մնալ ի Փարիզ, ասկայն այլ և այլ պատճառք յապաղեցին ցարդ զչոր մեր և զպանդխտութիւնս։

«Առաջինն է լուր տարածման ախտին քոլերայի յԽոտլիս ի տէրութեանն Սարտենիոյ, ընդ որ պարտիմք անցանել, և ուր պարտ է մնալ զաւուրս ինչ յարգելանոցի։ Այս լուր առնախորժ կասեցոյց զմեզ ի շրջոյ մերմէ, մնալով յաջողակ լրոյ, միանգամայն և անդիմանալով զայլ ճանապարհէ անցանելոյ այդր։

«Երկրորդն է յանձնարարութիւնն որ այսր վասն քանի մի մատենից գրատան մերոյ և գործեաց ինչ տպարանի, թող զյանձնարարութիւնն որ ի Վ. Հ. Աղեքսանդրէ վասն ինչ ինչ գործեաց, և զցանկութիւն իմ գնելոյ քանի մի կարեւոր գրեանս ի պէտս զգրատան։ . . . Թողից ասել և զծանրութիւն և զհոգ ընկերացս, որք յամենայնի և ամենայն ուրեք են։

«Ի 27 սեպտեմբերի ընկալայ այլ գիր ի Պարոնէն իբրեւ ի պատասխանի թղթոյ իմոյ, յորում թէպէտ ցուցանէ զանձն իւր ինքն միտս հաստատութեան մեկնելոյ անտի, բայց առկաւիկ ինչ ժժգոհ զՀ. Աղեքսանդրէ մերմէ, որպէս թէ չիցէ նմա այնչափ փոյթ գյաջողութենէ նպատակին իւրոյ։

«Ընդ այս ժժգոհութիւն Պարոնին տխրեցայ եւ յոյժ, ճանաչելով քաջ զրնաւորութիւն նորա. վասն որոյ գրեցի առ Հ. Աղեքսանդրն մեր եւ ազդ արարի նմա զվախճան յամելոյ իւրոյ անդ տակաւին, եւ զմիայնակ գործառնութիւնն, որ ոչ այլ ինչ էր՝ բայց եթէ Պարոնն եւ գործք նորա, այսինքն քաջալերել զնա եւ օգնել նմա։ Վասն այսորիկ գրեացէ եւ Արհիապատուութիւնդ առ Հ. Աղեքսանդրն մեր եւ ազդ արասցէ նմա, զի եթէ գժբաղդութեամբ չկարիցէ Պարոնն երանել անտի մինչեւ ցՅՅ հոկտեմբերի, մի՛ յամեսցէ ինքն անդ աւելի, զի մի՛ խափանեսցի գարձն իւր ի խառութենէ եղանակին. քանզի մնալ նորա անդ զայս ձմեռն՝ ոչ միայն առողջութեան իւրում վնասեսցէ, այլ եւ բազում ինչ իրաց։

«Բայց զայս ազդարարութիւն իմ, աղաչեմ, մի՛ ամենեցուն ի վեր հանիցէք, զի ժամանակ խոհեմութեան եւ լռութեան է այժմ, թէպէտ եւ բարեմտութեամբ եւ կարեկցութեամբ խօսեցի եւ գրեացէ զոր ինչ. եւ ես լռէի եւ չգրէի ինչ՝ եթէ չբռնադատէի ի սիրոյ եւ ի պարտուցս։... Ահա զբաղանք իմ եւ զբօսանքս ի Փարիզ։

«Ի վախճանի՝ յետ բազում մտատանջութեան եւ տեղեկութեան որոշեցաք առնել ճանապարհ ընդ ճիներբա, լսելով թէ չգոյ այժմ ի սահմանագլուխն Սարտենիոյ արդելանոց վասն կասկածանաց քոլէրայի. վասն որոյ վարձեցաք այսօր կառս երանել ի ճանապարհ ի 5 ամսոյս։ Լիցուք ի ճիներբա ՅՁ տրին, ուր կացցուք միայն աւուրս երիս՝ ի գտանել այլ կառս անցանելոյ ի Միլան, ուր եւ լիցուք մեք Աստուծով ի 14 ամսոյս, եւ ակն ունիմք գտանել անդ զսիրելիս մեր եւ զբարեկամս, ըստ յառաջագոյն ազդարարութեանս, եթէ չիցէ անդ կասկած քոլէրայի, զոր ի հարկէ տեղեկանայք։»

Ի 14 Հոկտեմբերի 1835, մեկնի Հ. Սարգիս ի Փարիզէ հանդերձ Աղանուրեան տամբն, և ի 21 նորին ժամանեն ի Միլան, ուր և հանդիպին պատանեկաց Սամուէլի և Յովհաննու Աղանուրեանց, որք առաջնորդութիւն եամբ Վ. Հ. Ռաֆայէլի Թրեանց ընդ առաջ գնան ծնողաց իւրեանց. այլ նոցա տեսեալ զորդիսն՝ փոխանակ ուրախանալոյ տխրին յոյժ, ցաւեալ ընդ ողորմելի տեսիլ նոցա. ընդ նոսին և վասն նոցին տխրի և Հ. Սարգիս։

Աւուրս ինչ կացեալ նոցա ի Միլան՝ անցանեն ի միասին ի Պատաւիոն, և գնան ուղղակի ի դպրատունն Մուրատեան ի 28 Հոկտեմբերի 1835, ուր և գտանեն զԳերապայծառ Սուրբիսս Սոմալ, որոյ եկեալ էր անդր իրրեւ ընդ առաջ նոցա՝ հանդերձ յանի մի վարդապետաւք։ Գնան անդր ընդ առաջ նոցա և Լազարովիչեանք։ Եւ յետ բազում կարօտադին սիրոյ ընդունելութեան և հարցանելոյ զողջունէ միմեանց, առէ Գերապայծառ Սուրբիսս Սոմալ ցՀ. Սարգիս առանձինն և մենամեաբար։

“Գնա՛ աղօթս արա վասն իմ, Հ. Սարգիս. բարեբախտ
“եղեր զի ի ժամանակի իմոյ արբայութեանս հանդիպեցար
“այս գործառնութիւնդ. ապա թէ ոչ՝ վճարեալ էր վասն
“քո ամենայն ինչ. զի հակառակ էին քեզ ամենեքեան յայս
“գործ դպրատանն, որպէս և տեսեր ի թուղթն յայն հատա-
“բակաց առ քեզ։ Հիւանդ էի ես յայնժամ, վասն որոյ
“չկարացի խափանել զայն. այլ խափանեցի ապա՝ յորժամ
“կամէին գրել զնայն և առ Մուրատեանս, ասելով՝ թէ պարտ
“է սպասել մինչեւ տեսցուք թէ զինչ ունէիր դու առնել
“անդ զկնի ընդունելոյ քո առաջի զայն հրաման, և այնպէս
“դադարեցուցի զնոսա։”

Ասէ ցնա Հ. Սարգիս; “Գիտեմ, Գերապայծառ Տէր. ահա
“և ես գուշակելով զայս ամենայն՝ արարի զոր պարտն էի
“առնել ըստ ճանաչմանս իմում և ըստ խղճի մտացս, այլ
“ցաւեցայ և ցաւիմ միայն ընդ հանդուցումն և ընդ անհաս-
“տատութիւն մտաց բազմաց ի Խարանութեանս, մանաւանդ
“ի յայտնել զայն օտարաց։”

Ապա տայ նմա Գերապայծառ Սուքիաս Սոմալեան զճառն զոր խօսեալ էր Հ. Մանուէլ Զախչախեան յաւուր բացման Մուրատեան վարժարանին ի Պատուիրն, զի ընթերցցի զայն՝ ի խնդութիւն սրտի նորա արդեօք։... Ընթեռնու Հ. Սարգիս զայն ճառ, և տեսանէ զի տուեալ էր անուշադիր առենախօսն զբովանդակ արդիւնս բարեացն Գերապայծառ Սուքիասայ Սոմալի միայն, իբրեւ արդիւնք աշխատութեան նորա, ուղեկցելովն ընդ Հ. Սարգսի զառաջին նուագն ի Մատրաս, թէ և զայն նուագ ոչ ինչ յաջողեցաւ, թէ և յուսահատեալ նորա անտի դարձաւ, և խօսեցաւ զայնմանէ ի վանս բազում անգամ իբրեւ զանյուսալի իրէ և զանտի ակնկալութենէ։ Իսկ զՀ. Սարգսէ յիշատակութիւն ի ճառի անդ՝ հարեւանցի իմն, և ընդ Հօր Աղեքսանդրի միանգամայն, այսպիսի բանիւք; «Իսկ «զինչ ասացից զտարակացելոցն ի մէնջ, որոց մին ի Հնդիկս «և միւսն յԱնգղիա պանդխտին։»

Ընթերցեալ Հ. Սարգսի՝ ոչ ինչ զարմանայ ընդ շողոմութիւն բանից առենախօսին, հայեցեալ ի ճշմարտութիւն իրին, ի բանսն զոր այն ինչ լսէր ի բերանոյ Գերապայծառ Սուքիասայ, կատեցուցանելով նորա զՄխիթարութիւնն ի յեռամիտ խորհրդոյ անտի գրելոյ թուղթ և առ Մուրատեանս և հրաժարելոյ ի պահանջանաց իրաւանց ազգաստաց ազգին։ Քանզի և գիտէր զի ըստ անտեղի սովորութեան վանաց չկարեն միաբանք գոլեստ ինչ տալ ընկերաց իւրեանց, մանաւանդ կըրտսերագունից հասակաւ քան զինքեանս, այլ միայն Աբրային. իբր զի չունի անդ տեղի նախանձ, և չիերէ ստուերածս ինչ համբաւոյ իւրեանց։ Այլ զարմացաւ միայն ընդ յիշողութիւն մոռաց առենախօսին, զի չյիշէր նա թէ մին ի ստորագրողաց անտի հրամանագրոյն որ առ Հ. Սարգիս ի Մատրաս՝ հրաժարել յիրաւանց հրիտակի դպրատանն, ընդ որոյ յաջողութիւնն առնէր զայն առենախօսութիւն, ինքն իսկ էր։... Այսպիսի են արդեօք օրէնք կոյր հնազանդութեան։...

Կացեալ նոցա անդ ի Պատուիրն աւուրս հինգ (Աղանուրեանց օթեւանեալ գոլով ի պանդոկի սրինք,) և կատարեալ

զպաշտօն պատարագի վասն հոգւոյ հանգուցեալ բարերարին Սամուէլ Մուրատի յ2 Նոյեմբերի, ապա ի վաղիւ անդ ամենեքին ի միասին իջանեն ի Վենետիկ քաղաք, և Աղանուրեանք իջեւանին առուրս ինչ ի պանդոկի, մինչեւ ի վարձու կալնուն տուն մի մերձ ի հրապարակ սրբոյն Զաքարիայի։

ԳԼՈՒԽ Խ.

Հրաւէր Աղանուրեանց ձաշկոյ ի վանս սրբոյն Ղազարու որ ի Վենետիկ. — Ողորմութիւն բարեմաղթութեան առ Հ. Սարգիս և. առ Աղանուրեանս. — Գնմնորդիւն և դատաստան ընդ այն. — Վերջաբան.

Ի 5 Նոյեմբերի 1835 ամի, հրաւիրին Աղանուրեանք ի Գերապայծառ Սուքիաս Սոմալէ ճաշել ի վանս սրբոյն Ղազարու. հրաւիրին անդ և Ղազարոմիչեանք, բնակելով նոցա ի Վենետիկ և ազգական դրով Մուրատեանց։ Լինի ճաշն ի սեղանատան վանացն, և ընդ համօրէն միաբանս, հանդերձ վարժարանցեօք և նորընծայիւք. և անդ ընթերցեալ լինի ի միաբանից ոմանց ողջոյնք բարեմաղթութեան առ Գերապայծառ Սուքիաս Սոմալեան, առ Հայր Սարգիս Թէոդորեան և առ Աղանուրեանս. յիշատակին անդ և Մուրատեանք։ Սկսանի նախ Հայր Մկրտիչ Աւգերեան Ամենակալ Աբբային, ապա այլք կարգաւ, և որք ունին օրինակ պայս;

ՅՈՒՅԱԿ ԲԵՐԿՐՈՒԹԵԱՆ ԱԿՄԲԻՍ Ի ՏԷՐ

Կեցցէ՛ կեցցէ՛ Ամենատէր փառաց Արքայ,
Նոր օրինակ մեզ այցելու՝ ազինս Հայկայ,
Յեռ հոգեվարժ ուխտակառոյց Մխիթարայ,
Դպրոց բացեալ եւ մանկավարժ՝ զաւակ սորայ։

Կեցցէ՛ ի Տէր բարեացսպարտ տուն Մուրատայ,
Զարմաք թռամիք յաւերժացեալ յար առ յոպայ,
Գուշակ՝ յորդոր բարերարաց յամս ապագայ,
Զի ազգատէր՝ թէ և մեռցի, միշտ անմահ կեայ։

Կեցցէ իմ Վեհ՝ ընդ Գործակից իւր միաբան,
Արդիւնարար մեծի գործոյս մինչ ի վախճան.
Պատակ եղիր դու Հայր Սարգիս տանս Արամեան,
Տէր բոլորէ զեղ զերկնայինն անապական։

Կեցցե՛ն համայն վաստակակիցք, որպէս արժան,
Ընտ վաստակոց իւրաքանչիւր անխոնջ ի Ջան,
Մեր վանականք այր ըստ առնէ երկոք քրտան,
Մեր բարեկամք ի Մատրատայ, որ արդ ստոր կան։

1835. Նոյեմբ. 8.

Հ. ՄԿՐՏԻՉ ԱԻՔԵՐԵԱՆ.

ԿՐԿԻՆ ՎԵՐԱԳԱՐՁԵԱԼ

ԻՐԱՋՄԱՎԻՇՏ ՀԵԳԿԱՑԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԵՆԷՆ

ՏԵԱՌՆ

Վ. Հ. Ս. ՎԱՐԴԱՊԵՏԻ ԹԷՈԴՈՐԵԱՆ

ՆՈՒԱԳ

Ընդ ովկիանան ալիսն հիւրագաւ,
Յարիւնեալն ի ընիկ գաւառսն ի հրաշէկ,
Այս չորիցս անգամ առ ինչ դիմագրաւ,
Ո՛ Թէոդորէ, առնես երթեւեկ։

Ոչ գոհար ականք մարգարիտ ընտիր
Քեզ ապարիզիդ է խուն նրպատակ,
Եւ ոչ բազմագանձ վաճառաց խընդիր,
Այլ յաւերժական վարձուց մբրցանակ։

Թէպէտ և երկար և տաժանաւոր,
Եղեն քեզ երկունք քան զամենայն մօր,
Անկցին ապրտմականք մոռացօնս ի խոր.

Եւ ի բազմարդիւն երկանց Քոց ի խայր,
Կարի տառել քան յարդիւնս իւր մայր,
Դու և Քոյքդ ընդ քեզ բերկրեսցին յաւայր։

Ի Ս. Ղազար 8 նոյեմբ. 1835.

Ցերախտագէտ որդի
երգեաց

Հ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍՈՐԿՈՒՃԵԱՆՑ
Տպարանապետ

Ի ԽՐԱԽՃԱՆ

ՀՈՑԱԿԱՊԱՊ ԿԱՃԱՌՈՑ

ԱՆՄԱՀ ՎԱՍՏԿԱԻՈՐԱՑ

Ի ԿԱՌՈՑՑՍ

ՄՈՒՐԱՏԵՌՆ ԴՊՐՈՑԻՆ

ՆՈՒԱԳ

Ի վեհապանծ Հրապարակիս ի Կայսուրդ
Ո՛ տայր ինձ թեւս ըզբուռն հողմոց և զձայն յորդ,
Աւետս կարդալ առ ոսիւռ Հայկեան ժողովուրդ,
Զորեքծագեան տիեզերիս ընդ որոտս։

Արի՛ք Մասեանք, թօթափե՛ք ըզթըմբիր.
Ահա ձեզ նոր Սահակ Արհի Դիտապետ
Իւրովքն Ազգիդ ի սէր անխոնջ մըտադիր,
Պերճ վաստակաց սնտ թագ կապէ գեղաւէտ։

Նոր վաղարշակ ձեզ ազգասէրըն Մեսրոպ
Ի վէհն ասէն յիւր Ազգակից կենդանի
Տայ զիմաստից յիւր Տաճարէն լոյս առատ։

Այլ դու, ո՛ Հայր, Քաջ Թեւակցաւդ Անուանի,
Դու Ախոյեանդ ինքնին սլացիր յԱյրարատ,
Դու ազդեսջիր զոր Քեւ ծագեաց Ազգիս բաղդ։

1835. *Ի Նոյեմբերի* 8.

Հ. ԳԱԲՐԻԷԼ ԱՅՎԱԶՈՎՍԿԻ ԿՄ.

Ի ԲԱՐԵՑԱՋՈՂ

ԳԱՐՁ

Վ. ՏԵԱՌՆ ՀՕՐ ՄԱՐԳՈՍԻ ԹԷՈԴՈՐԵԱՆ

Ի ՄԱՏՐԱՍԷ Ի ՎԵՇԷԺ ՔԱՂԱՔ

ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ

ՏԱՂ.

Ոչ հանդուրժեն լըռել շըրթունք իմաստնոց,
Զոյգպան քոյին տեսեալ զարարս մեծագործ,
Ա՛մ դու վեհդ իմ Թէոդորեան սերընդոց,
Ի ներբող քաջութեանց
Արարեալ անեղծանձ
Ճըգնութիւնք քոց գրոանց։

Համերց երամ յիմաստութիւն անբարբառ,
Ի Քէն և Քեզ ի գիտութիւն արդ վարժեալ,
Թոթովախօս փափուկ շըրթամբք մանկտարար
Քեզ յաւէժ ի գովեստ
Պապանձին անարուեստ
Զուարթադէմ և համեստ։

Քեզ զարթուցեալ ի խոր քընոյ թըմբրութեան
Ցաշոյէք հոգւոյն, միտք և հանճար բանական,
Եւ զարթնուցուն, և հիւսեցեն ներբողեան.
Յարգանդէ խաւարին
Ծընելոց վերատին
Անկենդան միտք, հոգին։

Բարբառեցեն անդուլ բերանք Քեզ ներբող,
Յաւերժական արձան կանգնեալ և կոթող.
Որդւոց, թոռանց ուխտ արասցեն բազմատող,
Դիւցազանցն ի դասակ
Նախնեաց քոց արդարակ
Զանձն Քոյ դասել ցանկ։

Նախնոյն մեծի և սիրելւոյն քոյ Հայկայ,
Յաբեթական քաջի թոռին Թիրասայ,
Վաղարշակի, Վրամշապհոյ, Սահակայ,
Եւ մեծին Պահլաւի
Բազմամեայ ճլգնողի
Ի նըսեմ վերապի։

Եւ Դիւցազին, և իմ, և Ձեր, և մերոյն
Մըխիթարայ. և թէ ներեն Վեհք նոցուն,
Ի շարս երկնին կենդանակաց հաստատուն,
Ընդ Հայկայ նիզակաւ,
Առ վարսիւքն երկնագրաւ
Դասեսցեն ըզԲեզ բնաւ։

Ընդ Քեզ՝ ի լանջ հայրենական սիրոյդ հուր
Եւ ազգայնոյդ վառեալ անշէջ բոցաթոյր,
Գերազանցեր քան ըզբնութիւն տարերց սոյր,
Զարհաւիրս, զբաւերած
Եւ զերկիւղ մահացուաց
Յաչս եղեալ անկասկած։

Ընդ գողգոջաւն ասպարիզին կապուտակ
Զարհուրագին հատեր անցեր դու համակ
Այս շորս անգամ ընդ այն սահմանս անբընակ.
Դու՝ որ զայս տարեր,
Լռեսցեն լեզուք մեր,
Պապանձեալ զմեզ համեր։

Մանաւանդ իմ. իմ՝ որ ըզՓոյ կերպարան
Տեսեալ և եթ հանգոյն շողեալ փայլակեան,
Մեծի արիւոյն այս շքոջանք են մեռաւան,
Յոր յաչս իմ հարկանին
Դիմաց Փոյ գեղ նեղքին,
Հրաշակերտ Փոյդ անձին։

Իմ՝ մի՛. ըզՓոյ, անցեալ ի պարս անպարտս,
Թիւնդքս տրեալ ոտից դոփիւն ի կաքաւ,
Յոսկի Ջնար մատունքս հարցին, ըզհամբաւ։
Զիդ լարից թրթռմունք՝
Հընչեցին ասա որմունք,
Զերդ յամպոց որոտմունք։

Բայց ոչ Գողթան ըզպատաւանց գումարտակ
Բամբասանքք, թըմբկօք յարուցանեմ ի գառակ,
Զարիական Ռազմին երգել յաղթանակ.
Վահագնի Արտաշիր
Միացեալ զուգակիր
Ներագել անձանձիր։

Սուրբ է կաքաւս. նահատակաց ծոխահերձ
Զայն տուք գընդից վեհ արերոյն յաղթաբերձ,
Պարագըլխոյ գուշակուհւոյն մերձ ընդ մերձ,
Ցընծ զայից ի պարուն
Բախելոց թրթռուն
Կացելոյ ի գլուխ նոցուն։

Որ ի խորոց անդընդական մաղտպուր
Զափամբ նորա կացեալ ի խումբ ընդհանուր
Ի գիսական խաղացելոց ի յաղթ ջուր,
Երկնին զօրհնութիւն
Գոմիրով Բարձրելոյն
Զանվրկանդ զօրութիւն։

Իսրայէլի նորոգ մանկանց երամոյ,
Թափեալ ի ջուրց տրգիտութեան անդընդոյ,
Յաւիտեան ուսման կացեալ երգեն Աստուծոյ,
Եւ նորոյ Մովսիսիդ
Եղելոյդ այնց առիթ,
Ազգասէրդ իմ ճշգրիտ։ . . .

Զարթիք, զարթիք, Հայկեան գրոհին խուռն մանկանց,
Եւ զարթուցէք զիմաստութիւն ընդ ձեզ պանծ.
Եկայք սլացուք մլուօք թեւոց անեսխանձ
Առ աղբերցն Եդեմին
Կարկաչանս ի նոցին
Արկցուք ձայն մեր հեշտին։

Եւ ճախրելոցն յայերս նըրբին ընդ գեղգեղ,
Մեր օրհնութիւնք ի սուրբ շըրթանց բաղմապեղ
Ելեալ դիպեալ թող հիւսեցի հանճարեղ,
Անմահին ի բարձունս
Թըռուցեալ առ գահոյս
Յամպոց յամպ ի ճայթմունս։

Անդ մայրեւոր ի մօտակայ անտառին
Ի շառաչունս ոստոց նորա զովագին.
Ուր զարքայից և Դիւցազանց Վեհ ազգին
Հընութեամբ ժամանակ
Ըզշիրիմն մամռատակ
Բորբոսեաց հատարակ։

Անդ՝ ուր բուրեն վայրք համօրէն ի նարօտ
Ըզպալատանոյ և ըզծոթրին քաղցրահոտ.
Ծաղկաթըթիթ մարմանդք ի դաշտ մարգարօտ,
Ի թըռիչսն թեւոց
Ծածանեալ մեղմ հողմոց
Վէտ ի վէտ ի ծաղկոց։

Անդ յԷշատակ յաւերժական անմոռաց
Նոր դիւցազին, ժամանակին յաղթանաց,
Ոակի անդրի մեք կանգնեսցուք նաւրբ գլծած,
Դրուագեալ արտաքոյ
Ձեռն ինուն՝ և ներքոյ
Մուզայիցն Ողխնոյ։

Եւ զառաջին քանդակեսցէ անդ ինեւ,
Մելպոմենէ մեծ Կամենայ ի պարգեւ
Դրուագս յաւէժ՝ երախտագէտ եղեալ Ֆեւ։
Մի ուռունք կոփեսցեն.
Թեւք հաւուց ի քարանէն
Գան զերկաթ դրոշմեսցեն։

Եւ գլխաւորեան Մայրն առ նրմին ամենեալ,
Շուրջ ըզնոսա և աղաղրի գունդ մանկանց,
Սամուէլեան առհմին պատկեր վիհապանած,
Կաթնարուխ յորդութիւն
Հոսեսցեն մանկրուոյն
Ի շրթունս փափկագոյն։

Օրհնեսցեն, Տէր, ըզքեզ բերանք մահացուաց,
Յաւիտենից խնամակալու մեծ Աստուած։
Դու ընտրեցեր, և ընտրեսցես միշտ յազգաց
Առաջնորդ քոյդ ապին
Ի թափել ըզնոսին
Ձեռանէ յոտխին։

Դու ըզմիթխարն ամբարշաւաճ կործանել,
Եւ ըզաստան յերկրէ քումմէ բաց վարել,
Ըզքոյ ապին յանգութ ժանեաց գլոց թափել,
Թորգոմեանն ընտրեցեր,
ԸզՊահլաւն ազգեալ
Ձերկոսին նախնիս մեր։

Ի ծաւալել խաւարումնած տգիտութեան
Յերկրին քում, Տէր, դարձեալ կրկին անպայման,
Փարատեցեր ըզմէգ նըսեմ մըթութեան,
Յոյացեալ լոյս պայծառ
Ի Մարդէն մութ խաւար,
Նախնին մեր Մխիթար։

Եւ նոքա, Տէր, ըզՄուրատեան մեծ տոհմին,
Դու շարժեցեր ըզսիրտ ըզգութ անդատին,
Անցաւորքս օժանդակել քոյդ ազին,
Առ հանել ի շաւղաց
Զաշացու տըգիտաց
Ի ծանծաղ գիտութեանց։

Այլ թըշնամին ընդ այն վեհ գործ խանդապատ.
Մինչ ի տոհման յանդուգնութեան ընդ այն բնաւ
Մխիթարեան Տունն արկանէր նա տակաւ.
Լոյս մուքուր ծագեցար
Յեթերին պարզ կամար
Մեզ լինել հաշտարար։

Ըզթերեհատ յուսոյն խրդեալ զառատան,
Զառաքինեաց զՄոլս առեալ օգնական,
Պարանեցեր կըցեր նոքաք ի կատան.
Ոակեթել ի հանդոյց
Կապեցեր ի թաքոյց,
Ի ժամուն տալոյ ցոյց։

Եվ և յայնժամ խըռովութեան ջուրց հեղեղ,
Ըզնորատունկս հըզօր ձեռին քոյ ահեղ,
Գերփել ծածկել յոլիս պըղտոր յորդագեղ,
Մըրրկեալ յեռացմանց
Շրնչելոյ ի նախանձ
Դըժխեմին բազմապանձ։

Յայնժամ դու, Տէր, վարանեցար տարակոյս
Ի ծառայից համագումար ժողովոյս,
Եւ առեր քեզ օժանդակիչ մեծ գործոյս,
Զքնարեալս այս Դիւցազն,
Որ համբաւք հընչեցին
Ի Մասեաց ցԱպենին։

Ընդ անդէն յեղբարց միջոյ անուղղք
Քեցեր թռուցեր արուսարուխ մաղթանաք
Ի վայրն հրաշեկ ի ծայր երկրին, ի բողք
Յարդարակ ատենի
Դատ վարել կորովի
Ընդ անձին ատենի։

Եւ անդ ըզտունն Ադամեանն բարեկամ
Հաւատարիմ գործոյս նոսր յամերամ,
Թեւ և թիկունք Թէոդորի Վեհն Արքամ,
Որ բազմեալ ի մեզ առ,
Սերտատեան ի դարատ,
Բարերար մեր ըզդատ։

Եւ ընդ նոսին Լազարոսիչ մեր փուրշիչ
Մի մոռացօնք Լիցի առն յակըմբիս.
Եւ մի Մամի առատասիրտ ճոխ բամբիշ
Մուրատեան պերճ զարմին.
Զորս նոսոր անդ նոսին
Ապաւէն անմեկին։

Եւ առ դարձեալ մեծ վաստակոց միշտ օգան,
Երբեմն եղեալ զընկեր նոսին Սոմալեան,
Որոյ մատանեաւ ամրացուցեր անսասան,
Ըզվախճան արարոյն
Երկոցունց տայ համբաւն
Գործակցացըն նոցուն։ . . .

Օ՜ Դու Վեհին յաջոյ ընտրեալդ անեպեր,
Դիմագրաւեալդ ի հայրենեաց իւուրբ սէր.
Եւ դու անցողդ ընդ յաղթ կոհակս անվեհեր,
Դու պատմեա մեզ ասէն
Քաջութիւն քոյ անզէն
Ըզգործեալն անդ ի Քէն։

Եւ բաւեսցէ՞ն միտք մահացուաց իմանալ,
Հայրենասէր սրտի բոցոյն հուր ծաւալ
Որչափ ազդէ, կիզու, կործան ի թաւալ
Դիմակացս է առ նա.
Թափ ելեալ ի վերայ,
Թող զոտին ի բացեայ։

Մ՚չ Քեզ, ասա, փափաքելին անտանոր
Հոգեսընուն վայրք հայրենեացդ ի տոչոր,
Եւ սուրբ բնակիչք և նոցին դէմք ալեւոր,
Որք ի սէր անձկալեոյդ,
Յոր ի յոր փոյթ ընդ փոյթ
Մընային անձանձրոյթ։

Կարկին վեցից շարչանք ամոց համառօտ,
Պանդխտութեանդ ամայութիւն դանդաղկոտ,
Ի սահմանաց ծայրն Ասիոյ Ջերմայոտ.
Ի բարկ շող արեւուն
Տապացեալ յեռանդուն
Դու անվարժդ նոցուն։

Անդ առ ափամբ պղտոր գետոյն Գանգէսի,
Ի բացեայ զով կարկաջանայն Երասխի,
Նստաէիր Դու ի սէր գրթոյդ հայրենի.
Նոր մանկանց ի սերունդ
Գրրգայիր ի ծընունդ
Ջամբելոյ ըզսընունդ։

Մահ, զինչ և այս. ի սէր որոյ ընդ յերկար,
Ընդ փականոք յարգելարանս խլժարար
Ի բանտ, ի վիշտ վասլն նոցա մենացար։
Ի հեռաւոր կապեցեր
Եւ ընդ Քեզ ըզսիրտ մեր
Ի կոճեզս վըտամբեր։

Այլ զօրութիւն երկայնամիտ սիրոյն Քոյ
Յաղթեաց նոցին, զանձնըզ թափեալ ի կապոյ։
Յունկնըդ եհատ անդ աղաղակ մանկըտոյ,
Որ յերկինս մերձ ի գահ
Վասն Քոյ առ Անմահ
Պաշտպան կայր Քեզ ի ճահ։

Անտի դարձեալ յորժամ ելեալ յեղեւին
Յաղթանակաւք ասա դառնայիր կոթողին
Ի խանդակաթ եղբայրակցաց տես քոյին,
Բազմամեայ քոյդ հոգւոք
Բարդ ի բարդ վասատակք
Որայնցն արդասեաք,

Յուզել կամէր ըզլոյծ տարերս երերուն
Ոսոխն անգութ, յարիշտակել անդ համբուն
Եւ զարդասիս այնչափ ամացդ ակաղձուն,
Եւ ըզՔեզ, ի կապուտ
Վերին ծոց յարձանուտ
Յանդրնդին խաւարչուտ։

Եւ մինչ ծըփինք չեւ ծըփային փրփրադէզ,
Մրրրկածին հողմանք ուժգին լեռնապէս,
Չեւ դիզէին ըզՔուր կապոյտն յառապարէզ,
Մերթ ի ծայր նաւն ամպոց
Մերթ ի վիհ անդընդոց
Ելեալ առնէր կոծ։

Անգէն և անդ ի ջուրց կոհակ խառնեցին
Ըգջերմաջերմ զարտօսր աղի մանկըտին
Վեր ամբառնալ ըզմեծալատաս զեղեւին,
Իբր ալեաց տարրական
Յարտասուաց խլտացան
Թոյլ մասունք լուծական

Սաղապաճեմ թռուցեալ ի վեր առագաստ
Ըզգոդ առեալ սլացաւ եհաս նաւատաստ
Մեր սիրայնովք ընկերակցօք բարեբաստ,
Մուրատեան զարմին մեծ
Ընտրականք ի Փեզ յեց
Զոյգ տատրակ, անձամբք վեց։

Նաւահանգիստ մեծին եմուտ Բրխտանեայ,
Հընչեաց Վեհիս յունկն անդէն լուրն ի բացեայ,
Եկ խայտացեալ, ցընծայր ամէր առ Նոսա.
Տեսից ես միանգամ
Թէոդոր անթարշամ
Թող մեռայց ուրաժամ։

Ընդէ՞ր, ընդէ՞ր յուրախութիւն խառնես սուգ.
Մի վեհըդ մեր, և Միսակեան մարգին շուք.
Թող ապրեցիս, ըզդաղցրութեան ծըծեա սիւդ,
Յորչափ մեզ ժամանակ
Զիւրն հարուած կապուտակ
Ոչ տայցէ ձախողակ։ . . .

Եւ ցանկալի լուրն աւետեաց, Թէոդոր,
Զի՞նչ ինչ գործեաց ի սիրտ եղբարցդ անսովոր.
Մաչին փեռուրք, թէ Փեզ տաղեմ ատանոր։
Ցընծութիւն սրտից մեր,
Ցերակուեաս վազեալ վեր,
Նոյր սրտօսրդ քամէր։

Միմեանց՝ եհաս նա՝ ասէաք առ խընդին,
Եւ գոհութիւն առաքէաք Տեառն երկնին,
Հասցէ ի մեր, և նա հասցէ կենդանի,
Յօթեւանս ի Վեհէժ,
Պարծանք Տան մեր յաւէժ,
Պըտղաժին Նորդ ուղէշ։ . . .

Զայս դուզնաքեայ բան ես առ Քեզ երգեցի,
Յաւէժութիւն Քոյդ արարոց սրխարլի,
Հասցէ ի մեր, և նա հասցէ կենդանի,
Որ ի տես տոհմակցին,
Ի ծագաց Հընդկային
Սիրատարփ ատտ եկին։

Յայսըմ հետէ երախտագէտ երամոյ
Կոյս խըմբից սիրաք հայրենասէր մանկըտուոյ,
Ի խոյզ անկցին Քեզ ի գոփեատ ի հաճոյ,
Մխուրն յաղամանդ,
Անկորուստ մեծանուանդ
Դրոշմեացեն բահաւանդ։

Եւ զոր ուտեն, և յոր վարժին ուսեալ ցանդ,
Քեզ յանգեացեն ըզբարբառոյն յեռին վանդ,
Եւ ըսիցեն միշտ Քոյդ անուան զարձագանդ,
Յորչափ ոչ պակասէ
Սերունդ մեր ի յերկրէ,
Թորգոմեան ի զարմէ։

Եւ Մուրատեան զոյդ մեծ տոհմին ազգասէր,
Եւ Քոյին տոհմ թող զբրեացի, քաջալեր
Մխիթարայ տան Մեկենասդ, անձանց մեր,
Որ ապշեալ այժմ հայիս,
Զանբարբառ ձայն լեզուիս
Խօսուն արդ տեսեալ յիս։

8 Նոյեմբ. 1835։

Հ. ՄԻՔԱՅԷԼ, ՋԷՄՊԷՐԿՃԵԱՆ.

Ի ՀԱՆԴԷՍ

ԵՐԶԱՆԻԿ ԳԱՐՁԻ

ՑԱՇԽԱՐՀԷՆ ՀՆԴԿԱՑ

Վ. ՏԵԱՌՆ ՍԱՐԳՍԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ՏԱՂ.

Դու որ Հանդրի ի ծոցէս
Մինչ ի Լիբիոյ խրոխտ ալիս
Զանհաւն վարդեալ առպարէս
Դարձար ի քոյդ հայրենիս ,

Դու ում արի նահատակ ,
Բռաորատիպ քրտնաջան .
Վեհ ճակատուդ ըղվատակ
Ի՞նչ պրսակեա անթարշամ ։

Մեծ է վրեան Ամբարտակ
Ի Պատաւնան քաղաքին
Քեզ կոթողեալ յիշատակ ,
Քոյին երկոց խայր նախկին ։

Բիւրաւորաց Թորգոմայ
Նորափեսուր որդւոց պար
Յորչափ երկին պարզեալ կայ ,
Զքեզ կարդասցեն իւրեանց Հայր ։

Քեզ Տարոնեան փողն ազգաւ՝
Զորոյ զմատանցն անմահ Տաւ
Մեզ գանձ անգին ածեր դու ,
Տարփողէ քաղցր ի բարբաւ ։

Վրեժխնդրեալն Պզատոն
Քեռ հայացեալ ի մեր լուր,
Յանկ հընչեսցէ զբո զանուն
Եւ զԱզգաւէրն Ազանուր։

Այլ զի՞, ո՛ Հայր, անյեղյե՛ղ
Այսչափ փառացդ ի լուր կաս.
Իցէ՞ ուրեմն այլ շընչեղ
Փառք անկապուտ յոր պանծաս։

Է՛ արդարեւ գերապանծ
Քան զմբրցանակս հազար բիւր,
Քեզ տենչալի փառք անանց,
Հրճուանք անճառ, արտի զիւր,

Երկնագուսան սուրբ Ուխտիս
Բազմատենչիկն առ քեզ սէր
Ի գէմն ի բանս յարգասիս
Պայծառ շողեալ քան զեթեր։

Եւ Մլխիթար հանուրցս Հայր,
Ո՛ սրխրալի տեսարան,
Այն ինչ Արիդ հասեալ գայր,
Խայտայ մարմնովն ի գամբան։

Ոգին յերկնից սաւառնէր,
Անյագ փարէր զՈրդեկաւն,
Յերկնից պրսակս ցուցանէր,
Զբարթաղէմ ածէր ձայն։

Այլ կաց սատէն յամս յամայր
Պատկեր Ուխտիս իմ մանկանց,
Զօնել զոգիս կամակար
Ի սէր Ազգիս երնկերաց։

Կոյիմբր. 8. 1835.

Հ. ԹՈՎՄԱՍ ՉԱՄՉԵԱՆ.

ԻԿՐԿԻՆ ԴԱՐՁ

Տ. Վ. Հ. ՍԱՐԳՍԻ ԹԷՈԴՈՐԵԱՆ

Ի ՀՆԴԿԱՑԻՆ ԱՓԱՆՑՆ

Ի ՄԱՏՐԱՄԷ

ՆՈԻԷՐ

Պատգամ անսուտ հանուրց գրոշմեմ.
« Առաքինեաց դաշտ ծաղկաճեմ՝
« Անկողք թռչնոց անդուռնդ լերինք,
« Նոցա շաւիղ հարդեն երկինք։ »

Ումեք թէ սուտ գուշակ թըւիմ,
Կամ ոչ լեզուս հաւատարիմ,
Ի Հերակլեան ծայր արձանաց
Սլացի հանդէպ Ովկիանաց։

Բիւրըս գիտեմ անդընդակուր,
Զոր հայրենիք ողբան տըխուր.
Ուր անդընդոց մեր ախոյան
Խընծդիւք ելից զայս բաղմական։

Կոհակակոծ ի բոյլ նաւաց
Զոք նըշմարեմ ի մահացուաց,
Գոգցեա անմահ՝ սիրտ անվեհեր
Ընդ Ովկիան իրրէ ճէմէր։

Պարայածի ըգՀիբիաւ,
Օրակըշիւ ընդ Ջեր գօտեաւ,
Ուր Նըւագօք գայր անցանէր,
Դիտեալ կըրկին զերկնից բեւեռ։

Այլ զըւարթուն հըսկօղ Նորին
Վարէր զուղղեակ մերթ ըղնաւին,
Եւ մերթ սասուէր խեռ կոհակաց,
Յաւիւնս անքոյթ մինչ ժամանեաց։

Զըքնաղ յայլ նաւ տեսիլ այսպէս
Զկղեւ, տեսաւ այր հանդէս.
Զի կէտ եղեալ նա իւր շաւղաց
Ոչ զանձին շահ, այլ զաղքատաց։

Ընդ ապաժոյժ յորդեալ քրտանց,
Զոր ընդ կապոյտ ալիս խառնեաց,
Իբրր նաւուք Սողոմոնեան
Դարձաւ ոսկւով ի Սոփերայն։

Ոչ ի կերտուած ոսն անտառին,
Ոչ հոյակապ կառաց շինին.
Վիտեմ որբոց մեծ կրթարան,
Տուն համբակաց Ակադեմեան։

Զայսբր սերմանք հարուստ ամաց
Մեծ Սամուէլ ի գիւղապանց
Ցանեալ բուռոյց յաւիւնս հեռի,
Զէր ոք կըթող հընձաց բերրի։

Մինչեւ յարեաւ Թէոդորեան
Ի Հարց խըմբէ Մըխիթարեան.
Նա լոկ յերկրի, Ասուած յերկնից,
Եղեն գործօղք այս Նոր հրաշից։

Որ ոք օրհնէ զԱՂ Անմահին,
Եւ Դիւցազնիդ պլսակ հիւսին,
Ըզվեհ Մուրատ մանկունք երգեն,
Եւ Քեզ արձան յաւէժ կանգնեն։

Եւ քոյդ նըկար ըզգօն զիմաց
Սամուէլին հանդիպակաց
Յանջընջելի մեզ յիշատակ,
Որդւոց, թոռանց կացցէ գուշակ։

Ի Վենետիկ. 1835 Նոյեմբ. 8.

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԱՍՏՈՒԱԾԱՍԷՐ·

ԱՌ ԹԷՈԴՈՐ

ԽՆԱՄԱԿԱԼ ՈՐԲՈՑ

ԵՐԳ

Տըխրամանիդ առ ընթեր
Կալով չըւոյդ ծուխածուփ,
Ողջամբ դարձիդ այժմ ընդէր
Ոչ գտանիմ այդը ի հուպ։

Թէ զՔեզ շըրթամբք ողջունել
Ոչ ներէ ինձ բաղդ դըժխեմ,
Զիք ինչ մատնա իմ արդել
Որով զողջոյնս այս դրոշմեմ։

Հասեր ողջամբ ի Վեհէժ
Ի հայրենին Քո կըղեակ,
Անմահական Քեզ ուղէշ
Ի գլուխ ածեալ մըրցանակ։

Ոյնմ որ այսոր ի Գանդէս,
Եւ հիւրամերժ ի յափանցն
Այսրէն դարձեալ ած զՔեզ
Փառաք այդուիկ գերապանծ,

Բիւր գոհութիւնս ընծայեմ
Նըմին արքտիւ բոլորով,
Որչափ առտեղք երկնաճեմ
Որքան ալիք են ի ծով։

Զուարթուն էից բանակ լուրջ,
Որ պահապանք երկնառաք
Զերկիւղածովք պարեն շուրջ,
Տեսի զլաւոիւդ առեալ բակ։

Տեսի զասուեղս ի վերուստ
Դիտեալ յուղղեակ քոյին հաշտ,
Ընկճեալ զալեաց որկրուստ,
Պոյծեալ կապոյտ ընդ Քեռ զաշտ։

Զներ և զնոտոս ընդ Զեփիւռ
Համբոյրս ի դաշն ի յանքակ,
Զառագաստիւքդ համատիւռ
Տեսի չընչեալ աջողակ։

Ահ, զի վրատնդ չիք ուրեք
Այց տէր է ինքն ապաւէն,
Զի իւրաստեղծ համայն էք
Ի նոյանէ պատկառեն։

Եւ զի՞նչ կարեմ յօրինել
Քեզ արժանի զբրուատիս,
Որում յերկնից բաժին ել
Պոյծի չըքնաղ գոլ իրիս։

Դու հայկազանց բարձրութիւն,
Շուք և պարծանք կարգիս մեր.
Հայր անտէրունչ մանկըտոյն,
Բարեաւ եկիր և ողջ լեր։

Արդէն գոչեն, Եղիցի,
Հոյլք մանկըտոյն բազմերամ.
Ըզ նոյն ի քնար տատնաղի
Քեզ երգեցեն յամայր ամ։

Իսկ որ ընդ Քեզ ուղեկից
Եւ անծանօթք Մուսայիս,
Զազնըւական ամոլից
Լըռեցէք ասա տատնաղիս.

Որ մայրօրէն մին ի հոգ
Խնամեացն ըզՔեզ ասա տընին,
Միւսն ըզնըժդեհդ և զանոք
Որպէս հրեշտակքն քոյին։

Թէպէտ չիցեմ մարգարէ,
Սակայն պատգամ ճշմարիտ
Ազգի ի սկզբան իմ յերկնէ.
Մի՛ 'նդ այն լիցի զբ երկմիտ։

Կըշիռ բարւոյն փոխադարձ
Առ ի յորոցն ի նըպաստ,
Յորդիս իւրեանց տայի վարձ
Լինել նոցա բարեբաստ։

Մանրանըկար միւսիոն
Ցըղեմ զիմոյս Քեզ սրտի,
Կարմեանն ի գիւտ գերըզգօն
Նըկարեալ զիղձս ի քարտի։

Ելս ճշմարտին արդարեւ
Յոյժ ընդ աղօտ է առ ոիպ,
Որչափ փոքրիկ քան զարեւ
Մահկանացուիս ական բիր։

Երդուայ ի քնար առանդիս՝
Զի զդարձ քոյին երդեցից.
Զերծ յերդմանէս կացո զիս,
Զար է զբրժել Մուսայից։

Ի Հռոմ. ի 23 Հոկտեմբեր ի 1835.

Հ. ԵՂՈՒԿԱՄԻ ՀԻՒՄԻՒԶԵԱՆ.

ԱՌ ՆՈՅՆ ԻՆՔՆ

ՆՈՒԱԳ

Քիրալն զոր հեղեր որբոց ի Նըպատա,
Յարդեալ Նոցա ուահ ի կրօն և յիմաստ,
Որպէս ցօղ անկեալ ի բերրի դարատա,
Բուսուցէ արդիւնս ընդ դ՝ուպ բարեբատ։

Արդէն իղձք Նոցա հոլանաշեալ քեզ,
Ընդ ովկիանան ալիս բարձրադէզ,
Եւ ընդ արփենւոյն նահանգ բոցալէզ
Հատեր անվրատանգ զերկոյն ասպարէզ։

Այժմ ի ցանկալի գալըստեան քոյին,
Քեզ կենդանութիւն ի սիրտ խնդագին,
Ահա Մըխիթարայ մաղթէ առանձին։

Այլ գայցեն աւուրք, զի ողջոյ բազմիրամ
Մաղթեսցեն քեզ կեալ յառաջս յամերամ,
Անդ պլսակ ի գլուխ ատնել անթառամ։

Հ. ԵԴՈՒԱՐԴ ՀԻՒՐՄԻԻԶԵԱՆ.

Ահա այսոքիկ են ստանաւոր բանք բարեմաղթութեան միաբանից ոմանց եղելոց ի վանս։ Եւ ԷՆ և այլ բանք բարեմաղթութեան և այլ միաբանից ոմանց ի բացեայ եղելոց անտի, զոր նամակաւ առաքեն առ Հ. Սարգիս հեռագիրէ, և զոր յիշատակեալ եմք ի սմին ըստ կարգի պատմութեան։

Թէպէտ և Հ. Սարգիս զայս ամենայն բանս նոցա ոչ ինչ համարի, յիշելով զբարեմաղթութիւն նոցա որ երբեմն, յելանել իւր ի ճանապարհ գնալ ի Հնդիկս, տե՛ս ի 164—8. էջս սրին, և զյեռամիտ խորհուրդ նոցա ապա, և զայն յետ փառաւոր յաղթութեան իւրոյ ի դատաստանի, և կատարման ցանկութեան նոցա, տե՛ս ի 395—400 էջս սրին. և զուշակելով զապերախտութիւն նոցա առ ինքն։ . . .

Զարմանայցեն ստանաւոր վերծանողք պատմութեանս, և խնդրիցեն զպատճառն, թէ ընդէր ընդ գիւցազունս դասեն զՀ. Սարգիս զանազան գրուառեօք . . . ապա արտաքսեն զնա ի վարժարանէ իւրմէ հանդերձ նախատանօք։ . . .

Երկու են այսոցիկ պատճառքն. առաջինն է արդարութիւն որ բռնադատէ զնոսա խոստովանել զճշմարտութիւն, զարժանին Հ. Սարգսի ի միաբանութեան . . . երկրորդն է անարդ նախանձն միաբանից որ շարժէ զնոսա յայն ապերախտութիւն. թողումք ասել զդուռդութենէ և զփառասիրութենէ Մեծաւորի նոցին։ . . .

ՎԵՐՋԱԲԱՆ

Ահա այսքան գժուարութեամբք և այսպիսի հանգամանաք բերեալ առանցեցաւ ի ձեռս Մխիթարեան Միաբանութեան որբազան առանցն այն հրիտակի Աղա Սամուէլի Մուրատայ, սահմանելոյ ի բուսաւորութիւն ազգիս Հայոց առ հասարակ, և մանաւանդ որբոց և աղքատաց նորին։ Ցեռանէ ապաքէն մտադիր վերծանողն մտանէս, զի ի սկզբանէ անտի գործոյն մինչեւ ցվախճան՝ զոգցես ամենայն ինչ և ամենայն ոք խոշ և խափան յարուցեալ կայ կատարման կամացն Մուրատայ. հեռաւորութիւն վայրաց, չկամութիւն կուակուատարաց, հնարք անիրաւ փաստաբանից, խարդախութիւնք մանաւորաց, լքուցիչ բանք հասարակաց, եւս և ձեռնթափ լինել Մխիթարեանց ի պահանջելոյ ըստ օրինի զիրաւունս ազգին։ Եւ սակայն Հ. Սարգիս Թէոդորեան զօրացեալ Տերամբ և քաջալերեալ սիրով ազգին, անխառար յօրինաց արդարութեան և աննկուն ի բիւրազգի տառապանաց՝ կորզէ հանէ ի բերանոյ յափշտակողաց զհաց հայկազն մանկուայն և տարեալ առանդէ ի ձեռս Միաբանութեանն, զի ջամբեսցէ նոցա արդարութեամբ և զգուշութեամբ։

Երկու ինչ իրք են առաւնար մեծապէս նկատելի. առաջին, գիտաւորութիւն Հօրն Սարգսի ի գործել անդ իւրում զայն ամենայն և ի կրելն այնչափ ինչ կիրս տաժանակոնս. և երկրորդ՝ գործադրութիւն կամաց բարերարին ի ձեռն միաբանութեան Մխիթարեանց մինչեւ ցայսօր ժամանակի։ Դիտաւորութիւն Հօրն Սարգսի գործակալի Մխիթարեան Միաբանութեան ոչ այլ ինչ զատնի լ՝ալ՝ եթէ ոչ օգուտ և բուսաւորութիւն ազգիս Հայոց, և ոչ երբէք՝ ոչ բնաւ շահ ինչ անձնական և կամ ճոխութիւն Միաբանութեանն որոյ անդամ էր տակաւին։ Զի եթէ անձին շահու և փառաց տրա-

գաւ աշխատ լինէր, ապաքէն յոյժ իսկ դիւրին ինչ էր նմա զէթ յիրաւախոհութեանն ժամանակի ոչ միայն արծաթ բազում շորթել ի կառավարատարացն, այլ և պայման անհրաժեշտ յաւելուլ ի գաշնագրին ի գիմաց նոցա՝ զի ինքն անուանեսցի մշտնջենաւոր վերատեսուչ Մուրատեան գպրոցին և ինքնին ընտրեսցէ զայլ վարժապետսն և զդասախօսակս. զոր չարար նա։

Իսկ թէ գործադրութիւն կամաց բարեբարին ուրպէս եղեւ մինչեւ ցայսօր ժամանակի՝ ոչ է մարթ սուղ բանիւ և վերի ի վերոյ պատմութեամբ առաջի առնել. ամին իրի և հարկ եղեւ յառանձինն հատորի ամփոփել զբազմարկածեան զէպսն որ անցին ընդ հրիտակն Սամուէլի Մուրատայ յօրէ անտի անցանելոյ նորին ի ձեռս Մխիթարեանց մինչեւ ցամն 1855։ Զպատմութիւն նշանաւոր անցից այսոցիկ եւս ամաց քսանից (որով ընդ ամենայն գումարին ամք իբր քառասուն ծախեալք յայս գործ ազգային) յայն տակս եւս կարեւոր համարիմք ի հմտութիւն ազգիս և ի տեղեկութիւն ապագայից, զի գիտասցեն թէ ուրքան և որպիսի՛ ինչ են իրաւունք իւրեանց, և թէ զիարդ պարտին ի ձեռս բերել զայն ազգայինք իրաւամբ և արդարութեամբ։

Թէոդորեան վարդապետն ահա այսքան տառապանօք և գժուարութեամբք կորզեաց զիրաւունս ազգին իւրոյ ի ձեռաց կառավարատարաց Սամուէլի Մուրատայ, և եւ Մխիթարեանց՝ յուսալով թէ նոքա ըստ կանոնաց արդարութեան և ըստ ազգաւէր ըղձից իւրոց արասցեն զգործադրութիւնն. զոհ է նա ընդ աշխատութիւն իւր, այլ տեսանէ զի խաբեալ էր ի յոյսն իւր։ Մաղթէ արդ լրութեան ազգին Հայոց ընտրել իւր գործակալ զոք այնպիսի որ իւրով անշահասէր ազգասիրութեամբն վառեալ իցէ, և միանգամայն առանց զիւր տառապանն կրելոյ կարողացի կորզել ի ձեռաց Մխիթարեան Միաբանութեան գոնէ զմասն բաժնի յուսաւորչական մանկուց ազգիս՝ ի բաց մերժելոյ ի վայելից իրաւանց իւրոց։

Զայս ամենայն զգաժմունս և զիրգս և զնորանոր կիրս Սարգսի վարդապետի Թէոդորեան՝ հանդերձ բազմապատիկ

հետաքնին և կարեւոր տեղեկութեամբք զիրաց և զանձանց Մխիթարեան միաբանութեան, եւս և զհնարից և զկարծեաց Պ. Յովհաննու Մուրատայ ի վերջին ամս տասն, տեսցեն ընթերցողք անժխտելի փաստիւք և հաւատեօք յերկրորդում և յերրորդում մասին պատմութեանս։

Ասանօր դաղարի պատմութիւն խնդրոյ հրիտակաց Որաֆայէլեան և Մուրատեան վարժարանաց, և հինգերորդ յիշատակ անցից կենաց Հայր Սարգսի Թէոդորեան, սկսեալ ի 1783 ամէն մինչեւ ցամն 1835. պատմութիւն յիսուն և երկու ամաց որ յայս առաջին հատորս բովանդակի։

ՎԱԽՃԱՆ ԱՌԱՔԵԼՈՅ ՀԱՏՈՐՈՅՍ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
именна. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՑԱՆԿ

ԳԼԽՈՑ ՀԱՏՈՐՈՑՍ

ՈՒՂԵՐՁ . . . . . .
ՑԱՌԱՋԱԲԱՆ . . . . . .

ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆՔ

ՑԻՇԱՏԱԿ Ա. 1
ՑԻՇԱՏԱԿ Բ. 12
ՑԻՇԱՏԱԿ Գ. 18
ՑԻՇԱՏԱԿ Դ. 48

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Մ. ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

ԳԼՈՒԽ Ա.

Վագռւմն և ծնռնդ Աղա Սաւռէլի Մռռատայ. — Երբ նորա ընդ հօրն ի Փերբուվարատին, և ապտի ի Վենետիկ. — Ոռղևռրելն ի Հնդիկս. — Փեսայանայ Աղա Եղռռարդայ, և կարգի ի նմանէ կռտակատառար. — Թռռղթք նորա առ Հ. Նիկողայոս Բռռզայեան. — Կռտակն և փոխռռմն յառռնացս 53

ԳԼՈՒԽ Բ.

Թռռղթ կռտակատառարաց Աղա Սաւռէլի առ առաջնորդն Մխիթարեանց. — Ընտրռրթիւն գործակալաց Մխաբանռրեան. — Ոռղևռրելն նորա ի Հնդիկս. — Անցանել Աղայ Յովհաննեռ Մռռատայ յԵրբուպէ. — Զկաւռրթիւն Եղռռարդայ Մռռատեան կատարելոյ զկռտակ հօրն ի մասին հրիռտակի դպրոցին. — Դարձ գործակալացն ձեռնռռնայն ի Վենետիկ 69

ԳԼՈՒԽ Գ.

Անենա տիկին՝ այրի Աղա Սաւռշեղի Մոռրատայ. — Թոռոր նորա առ որդին իւր Պ. Յովհաննէս Մոռրատ. — Պատասխանի սորա առ նա՝ գրեալ ի Հռոմ. կամ ի Միլանէ. — Թղթակցութիւնք Յովհաննէս Մոռրատայ ընդ առաջնորդի Մխիթարեանց ի 1818 ամէ մինչեւ ցամին 1820 . . . 89

ԳԼՈՒԽ Դ.

Ողեւորեալ Հ. Յարութիւն Վարդապետի Աշգերեան ի Վենետիկ. — Պարոնայք Իսնիխ և Մինչլի. — Ողորմական գրութիւնք առաջնորդին Մխիթարեանց առ Պ. Յովհաննէս Մոռրատ. — Երբ սորին ի Վենետիկ. — Նշանաւոր թուղթն առ Աբրայն Սոնիֆանենս. — Պատասխանի Աշերիքեան Հօրն առ այն 106

ԳԼՈՒԽ Ե.

Թղթակցութիւն Պ. Յովհաննէս Մոռրատայ ընդ հօր Սարգսի Թէոդորեան յառաջ քան զերկրորդ ողեւորութիւն սորին ի Հնդիկս. — Առաջարկեալ նորա Մխիթարեանց նոր իսն հնարս սկիզբն առնելոյ կատարեան կուակի հօրն. — Պատասխանի վերադարձեանն. — Դարձեալ թղթակցութեան Մխիթարեանց ընդ Պ. Յովհաննէս Մոռրատայ առ ժամանակ մի 125

ԳԼՈՒԽ Զ.

Վերջին թղթակցութիւնք Պ. Յովհաննէս Մոռրատի ընդ առաջնորդին Մխիթարեանց. — Վախճան Գ. Սոնիֆանենսի Աղոնց արքեպիսկոպոսի և աբբայի. — Հայր Սարգիս Թէոդորեան հանդերձի ողեւորեալ երկրորդ անգամ ի Հնդիկս.

ԳԼՈՒԽ Է.

Երկրորդ ուղեւորութիւն Հ. Սարգսի Թէոդորեան ի Հնդիկս. — Բերբուռաժք ուսաղբողականք յօրինեալք ի կրօնակցացն. — Երբ նորա ի Միլան և. ի Թուրին, և. անտի ի Փարիզ. — Տեսութիւնք ընդ Շահանի Զրպետեան, ընդ Զօնդրապետեան Յովհաննէսոյ վարդապետի և. ընդ Դատարանական Գրիգորի վարդապետի. — Բանք և. գրոյցք ընդ Պ. Յովհաննէսոյ Մուրատայ ի Լոնդոն. — Մուտն ի նուռ ի Փորթսմիր. — Հասանելն ի Մատրաս Հնդկաց 164

ԳԼՈՒԽ Ը.

Հիւանդանալ Հ. Սարգսի ի Մատրաս. — Լուր ընտրութեան Հ. Սուքիասի Սունալեան դաքրեպութիւն. — Փառատրանն Մինչրն, և. յաջորդ նորա Ֆառնիտրն. — Դատնականի Հայր Սարգսի առ վիրաբանութիւնն գիրաց հրատարակին. — Հատուցութիւն բանից նորա գրով Պ. Պօղոսի Լազարովիչ . . 174

ԳԼՈՒԽ Թ.

Աւժանայն զժուութիւն Մուրատեան եղբարց ընդ վիրեանս. — Կաչառել նոցա զընկերական փառատրանն զՖառնիտրն. — Խրատ և խորհուրդ Պարոնայց Ա. Աղաւնուրի և Պ. Լազարովիչի առ Մուրատեանս. — Ամօթն խորհուրդ ընկերական փառատրանին. — Պարձեալ խնդրեն Հ. Սարգիս գիր գործակցութեան վասն իւր յառաջնորդն վիրաբանութեանն. . 187

ԳԼՈՒԽ Ժ.

Մահ Ինինիսի, և խորհուրդ Մխիթարեանց՝ իրաւախոհութեանէ վճարելոյ գիրս հրատակին. — Տագնապ Մուրատեանց յերկեւոց պահանջանց ընկերական փառատրանին. — Միջնորդութիւն Պ. Պօղոսի Լազարովիչ ընդ Մուրատեանս և. ընդ

Հ. Սարգիս. — Բանագնացութիւնք սորին ընդ Պարսն Եղուարդայ Մորբատի յաղագս իրաւախոնարհութեան. — Նա խարիծ դա նագրին յօրինեալ ի Պ. Յովհաննէս. — Թուղթ Պ. Եղուարդայ առ առաջնորդն Մխիթարեանց . . . 196

ԳԼՈՒԽ ԺԱ.

Դժուարութիւնք յօրինուածոյ դա նագրին իրաւախոնարհութեան ի կողմանէ Մորբատեանց. — Այլ և այլ հնարք նոցա ի խափանել զիրան. — Օրինակ դաշնագրին իրաւախոնարհութեան. — Մուրհակ ազատութեան. — Հա ուեցիր հրամանին. — Մուրհակ մերձակաց դաշնագրի. — Պայմանաւոր գիր ընդունելութեան 210

ԳԼՈՒԽ ԺԲ.

Վտանգ կորստեան մուրհակաց կամ դրամարդոց հրամանին. — Ստրջանք կտակագրաց ընդ հատուցումն զոր պարտին. — Նամակ նոցա առ Աբբայն Մխիթարեան միաբանութեան. — Թուղթ Հ. Սարգսի Վարդապետի առ նոյն. — Գնացք սորա ընդ կտակագրութեան 235

ԳԼՈՒԽ ԺԳ.

Թէ ո՞րպէս ընդհանրական փաստաբանն Բանիտրն տագնապէր զկտակագրաց Աղա Սահակի վասն հրամանին. — Հնարագէտ խորհուրդն տուեալ նոցա ի Հ. Սարգսէ. — Բանք Փրիանչէանի փաստաբանին Մորբատեանց ընդ Հ. Սարգսի. — ԺԳ. թուղթ նոցա առ Աբբայն. — Խորհուրդ Պ. Սէր Սահի առ Մորբատեանս. — Պատասխանին Հ. Սարգսի առ բանս նոցա 248

ԳԼՈՒԽ ԺԴ.

Զարուշահոգութեան և խարդախութեան Եղուարդայ Մորբատի ի տուն Հ. Սարգսի փոխանակագրիս. — Խոնարհութեան և ընդդիմութեան ընդ այն Հ. Սարգսի. — Թէ ո՞րպէս դաշն գործեցին նոքա

Մոբրատեանք առաջարկելով Պ. Լազարովիչի պահանջել ի նմանեն 5000 հոռն ի վարձ աշխատողքեան իւրոյ. — Պատասխանին Հ. Սարգսի ընդ այն. — Անդրատեն գնացք Պ. Լազարովչի ընդ նմա, և ապա տարշաւիքն. — Յանդոզն և նենգաւոր խորհրդոյ Մոբրատեանց. — Զգոյշոբիւն Հայր Սարգսի յայն. — Կատաղոբիւն Մոբրատեանց ընդ զգոշոբիւնն այն, և բողոքական բոզոր նոցա առ Գեր. Օրբիան Սունաղ ի Վենետիկ. — Պատասխանի բղբոյ նոցա տոռեալ ապա ի Հ. Սարգսէ 261

ԳԼՈՒԽ ԺԵ.

Երկրորդ գիր գործակալոբեան հասեալ առ Հ. Սարգիս և առ Պ. Լազարովիչ վիճանգարնայն. — Նօրբնն՝ ընդհանրական փաստաբան՝ յաշորդ՝ Բանիտրնի. — Խնդրեն Մոբրատեանք ի Հ. Սարգսէ եղանեալ ժամանակ յետ ընդունելոյ գրելոյ վերնական դաշնին. — Պատասխանին Հայր Սարգսի, և գայրոյբ Մոբրատեանց. — Խորհրդոյ տոռեալ Մոբրատեանց ի Պ. Լազարովչէ ընդդեմ Պ. Անդանոբի, զոր նոքա յիբր վերայ կատարեն. — Խօսք Հ. Սարգսի գիրացն առ Պ. Լազարովիչ և առ այլս. — Հրատարակոբեն ի շրագիրս Մատրաստ ի Մոբրատեանց ընդդեմ Հայր Սարգսի. — Թոռոր Պ. Լազարովչի առ Գ. Սունաշեան . 281

ԳԼՈՒԽ ԺԶ.

Զանք Մոբրատեանց ի վիրաբանել զնայրն իբրեանց ընդ ինքեանս ընդդեմ Հ. Սարգսի. — Խորհրդոյ Յովհաննեանոբ Շեհիրմանի առ Հ. Սարգիս. — Մոբրատեանք վատոբցանեն գիր գանգատանաց ընդդեմ Հ. Սարգսի. — Խորհրդոյ կարգադրոբեան նոցա. — Հանգամանք բանտարկոբեան նոցա. — Անցնոբիւնք ազգայնոց առ նա ի բանտին. — Յովսեփ Շահիրեան. — Կօրոսն օրենգէտ. — Գրիգոր վարդապետ՝ նոբիրակ Զոբոյի վանաց. — Հրատարակոբիւն Մոբրատեանց ի շրագիրս Մատրաստ, և պատասխանիք Հայր Սարգսի 291

ԳԼՈՒԽ ԺԷ.

Թուղթ յանդիմանական Մոռրատեսի եղբարց առ վայրն իշխանաց Ալենա տիկին. — Պատասխանի նորա առ որդիսն. — Թէ որպէս չանուն Մոռրատեսին սէր արկանել Հ. Սարգսի՝ վասն զի նա ոչ ի բանսին էր. — Հնգեքին զյոռիսն ամբաստանողական Մոռրատեսից զՀ. Սարգսէ, և. հեղինակն նոցին. 308

ԳԼՈՒԽ ԺԸ.

Ալենա տիկին Մոռրատեսի պատրաստի դատ վարել ընդդէմ որդւոց իւրոց. — Հիւանդանալ նորա առ ցաւոց սրտին. — Հաղորդիւնն ընդ որդիսն. — Թուղթ նորա առ Հ. Սարգիս, և. ապա յետս կոչումն այնր թղթոյ. — Կտակ տիկնոջն Ալենայի՝ օրինեալ յորդւոցն հանդերձ ամբաստանողական զՀ. Սարգսէ. — Զիղջ տիկնոջն ընդ բանս կտակին. — Մահ նորա. 319

ԳԼՈՒԽ ԺԹ.

Եղանիլ Հ. Սարգսի ի բանտէն. — Գանգատագիր նորա ընդդէմ Մոռրատեսից՝ ի պահանջել զվաշխ արծաթոյ հրամանէն. — Սրբազրել Մոռրատեսից զգիրն ամբաստանողական զոր ուռեալ էին յԱտենսն զՀ Սարգսէ. — Թուղթ Գ. Գ. Լազարոսի գիրացս առ առաջնորդն Մխիթարեանց. . . . 335

ԳԼՈՒԽ Ի.

Վերջին Պատասխանին Հ. Սարգսի առ գանգատագիր Մոռրատեսից. — Աղքատութիւն նոխազգահ դատաւորին. — Սկիզբն դատաստանին, և. խօսել փաստաբանիցն երկոսեքն. — Ընթերցումն յատենի սրբազրեալ գանգատանացն Մոռրատեսից. — Յաղթել փոյթ դատաւորացն. — Հնարք Մոռրատեսից ի ձեռն փաստաբանին Հ. Սարգսի ի հանելոյ

զաս յետս կոչել զպատասխանիլն իշր և իրաւախոհ լինել ընդ նոսա. — Վասն դատաստանի դատաւորացն հանդերձ իշրաքանչիւր կարծեաց և բանիւք 342

ԳԼՈՒԽ ԻԱ.

Ազդեցութիւն վասն բարձրագոյն Ատենին ի Մոսրատեանս. — Խնդակցութիւնք բարեկամաց ընդ Հ. Սարգսի Թէոդորեան. — Հրատարակումն վասն յի լրագիրս Մատրաստ՝ հանդերձ հանանաւոր արձանագրութեամբ դատին. — Ատենաւոր թողեր Հ. Սարգսի առ առաջնորդ Մխիթարեանին. — Թողեր Պ. Լազարովչի առ նոյն 361

ԳԼՈՒԽ ԻԲ.

Օրինակ նորոյ գրոյն գործակալութեան յղեալոյ առ Հ. Սարգիս ի Մխիթարեանսն ի 22 դեկտեմբերի 1828. — Պատասխանի Հ. Սարգսի առ առաջնորդն, յորում և գրեն գերիշխող Մխիթարեանն ի դատ վարելոյ ընդդեմ Մոսրատեանց. — Վարժարանին օրինաց չհամարելն բաշտական գիտաստոխս հանանդս ի Վենետիկ. — Վկայութիւն և միջնորդութիւնք Հ. Լուսիի Բարոչչի կրօնաւորին 368

ԳԼՈՒԽ ԻԳ.

Պ. Յովհաննէս Մոսրատ շանուց դարձեալ հաստատեցուցանել զՀ. Սարգիս յիրաւախոհութիւն. — Ասանձին դատ Հայր Սարգսի ընդդեմ Մոսրատեանց ի բերեր կատարակատարաց վասն ի բերանց Ամենայն տիկնոջ. — Իրաւունք Հ. Սարգսի ժանուցեալ ի դատարանս. — Պատճառք տարոյ նոցա զվնասն ի նոսա Մոսրատեանց. — Վկայութիւնք այլոց գիրացս հանդերձ զանազան տեղեկութեամբք. — Վճիռ Մոսրատեան եղբարց ընդ վիճեանս 382

ԳԼՈՒԽ ԻԴ.

Թուղթ Մխիթարեան վերաբանութեան առ Հ. Սարգիս յորում դատարանի նեղ ձեռնարկ լինել ի խնդրոյ Մոսրատեան հրի-

տակին. — Նոյն բոլոր գրեալ և առ Պ. Լազարովիչ. — Պատմութիւն վնասակար և վտանգաւոր խորհրդոյն. — Տագնապ Հ. Սարգսի ընդ այն. — Զոհ Պ. Լազարովչի ի Մատրան. — Վէճ Հ. Սարգսի ընդ վարչի դատին իշխոյ Կօրսոնի. — Թուղթ Հայր Սարգսի զայսմ ամենայնի առ առաջնորդն իշխ 395

ԳԼՈՒԽ ԻԵ.

Գիր գանգատանաց Հ. Սարգսի առ առաջնորդ Մխիթարեանն ընդ յարպաղուելն հաւատոնեացն խնդրելոց յԱտենին. — Վէճք և հակառակութիւնք Մուրատեան եղբարց ընդ միմեանս. — Յրտանեալ Պ. Պօղոսի Լազարովչի ի գործոյն և ի նպաստոյ Հ. Սարգսի. — Խնդիր դատին Կոպրեանի ընդ Մուրատեան, և վճիռն տուեալ ի դատաւորաց 412

ԳԼՈՒԽ ԻԶ.

Հատանել կարեւոր վկայագրոյն տուեալոյ յԱշտարխացւոց պետութենէն վասն Մխիթարեան Մխիթարեանց. — Օրինակ վկայագրոյն. — Կարծիք Կօրսոնի և Մուրատեանց զայնմանէ. — Որոշումն դատին Մուրատեանց ընդ միմեանս. — Բանք Պ. Եղուարդայ Մուրատի զեղծարքն և զդատաւորաց. — Թուղթ Հայր Սարգսի զայսմանէ և զայլոց ինչ իրաց առ առաջնորդն 425

ԳԼՈՒԽ ԻԷ.

Բնութիւն վկայագրոյն ի Պ. Սարքիս վարժապետէ օրինաց. — Հարցմունք վարժապետին օրինաց առ Հ. Սարգիս զՄխիթարեանութենէն. — Հիւանդանալ Հ. Սարգսի և ապաքինիլ. — Տեղեկագիրն Սարքիսի մատուցեալ յԱտեանն զվկայութենէն տէրութեանն Վենետկոյ. — Դիւանագրութիւնք Ղորբնի և Յովհաննէսի Մուրատայ, և պատասխանիքն դատաւորաց. — Այլ և այլ առաջարկութիւնք յոչգեալքն յԱտենին ի կող-

ունելի Մոշրատեանց. — Մեղմեխ բանք Ներքինի. — Որոշումն հատուցման ծախուց դատի. — Բանք Եղուշարդայ առ Հ. Սարգիս. 440

ԳԼՈՒԽ ԻԸ.

Ոչողել դատաւորացն զվրիպակ կարծիս իշխանաց զտեղեկագրոյ վարժարանին օրինաց. — Վկայութիւնն խնդրեալ ի Հանրակալ տեսչութեան վասն մոշիանացն. — Վրիպակ Ամենայրիին. — Դատաստանին եղեալ ի դեկտեմբերի 1831 ամին. — Երիտասարդութիւնք վիճաբանին Մոշրատեանց. — Հանուաոր բանք նախագահ դատաւորին զՄոշրատեանց. — Վկայութենին խնդրեալ վասն վաճառականի շինելոյ առորագրութեան Մրենի հիշատակին Ամենայրացոց ի Վենետիկ. — Յաշողութեան գիտոի վկայութեանին. — Սակաւ յանձնի առնոյ առնինախօսել վասն Հ. Սարգսի. 454

ԳԼՈՒԽ ԻԹ.

Գնացք Մոշրատեանի եղբարցն ընդ միմեանս. — Դատ Պարոնի Եղուշարդայ ընդ Հնդկի ոստանի. — Բաձք նորա առ Հայր Սարգիս վասն վաչխի հրիտակին. — Ջանք և հնարք Պարոնի Յովհաննէսոյ Մոշրատայ՝ զաղ յիրաւախոնարութեան ընդ Հայր Սարգսի. — Ոչնի միջնորդ զգաղութացին Կառամիկ. — Բանք սորա ընդ Հ. Սարգսի վասն վաչխին, — Տեսութեան Պարոնի Յովհաննէսոյ Մոշրատայ և Հ. Սարգսի ի գործատանն Կառամիկի. — Կարծիք Կօրոսոնի ընդ պահանջոնին վաչխի հրիտակին. — Պատասխանի Հ. Սարգսի. 464

ԳԼՈՒԽ Լ.

Դատաստան 10 աշուր փետրուարի 1832. — Սակաւ փաստաբան Հայր Սարգսի խօսի յԱնին, և ապա փաստաբանին Մոշրատեանց Պէրի. — Բանք ընդհանրական փաստաբանին Ներքինի. — Բանք և կարծիք և վճիռ դատաւորացն.

— Ազգեցութիւն վաճառականաց ի Հայր Սարգիս և. ի Պ. Յովհաննէս Մուրատ. — Ազգ և շնորհակալութիւնք Հ. Սարգսի առ Կարոլի, առ Սալիհ և. առ Ֆրիզեր. — Հրատարակումն գրոցին ի լրագիրս Մատրասու 482

ԳԼՈՒԽ ԼԱ.

Չանք և հնարք Պ. Յովհաննէսի Մուրատայ ի հիմանէն զվաչխ հրխուակին ողորմութեան. — Պատասխանի Հայր Սարգսի առ աղաչանս նորա, և այլ եւս զրոյցք զխնդրոյն. — Առաջարկութիւն Պ. Յովհաննէսի Մուրատայ՝ հատուցանելոյ ռուբլիս 100,000 իբրեւ վաչխ դրամագլխոյն. — Խորհուրդ դաչնագրին իրաւախոհութեան. — Բանակնարութիւն Յովհաննէսի Մուրատայ և. Կարոլի ի լրագիրս. — Թուղթ Պ. Աբրահամոյ Ազանոյի առ առաջնորդն Մխիթարեանց. 494

ԳԼՈՒԽ ԼԲ.

Յորինուածն դաչնագրին իրաւախոհութեան ի ձեռն Պ. Յովհաննէսի Մուրատայ. — Բանք և զրոյցք Հ. Սարգսի ընդ նմա վասն վաչխի և. վասն գործադրութեան հրխուակի դպրոցին. — Յեռկար ընդդիմանալութեան 100,000 ռուբլոյ՝ առեալ ի Հայր Սարգսէ. — Օրինակ Դաչնագրին իրաւախոհութեան որ յ31 մարտի 1832. — Ամենանուակեալ աւարտուն խնդրոյն և. խաղաղութեան ընդ Հ. Սարգիս և. ընդ Մուրատեանսն. 515

ԳԼՈՒԽ ԼԳ.

Կասկած մեռաց Պ. Յովհաննէսի Մուրատայ յեռ կնքելոյ դաչինն իրաւախոհութեան. — Զրուցութիւն նորա ի Կառիի զաղդեցողոյ. — Խնդիր արծաթոյն զոր պարտէր Յովհաննէսն Մուրատ Ազանոյին. — Զանազանեալ Կառիին վարան ընդ մերձինդրութեան իւրոյ. — Թղթակցութիւն նորա ընդդէմ Յովհաննէսի Մուրատայ. — Թուղթ նորա առ Պ. Յովհաննէսն

Մոբրատ. — Բողոքել նորա յԱնուանն Գաղղիացոց ի Փոլիբիշկիբի, ապրժռալն յԱնենին և ապահն. 532

ԳԼՈՒԽ ԼԴ.

Խնդիր հաւանարոյ ծախուոցն Կորոսնի՝ վարչի դատին Հայր Սարգսի. — Եռագել արժէից ազնիւակաց ընկերութեանն Հնդկաստանի. — Դժուարութիւնք հանելոյ զարծաթ հրիտակին ի ձեռաց Հանարակալին. — Անիրաւութեան հաչուին Կորոսնի. — Հանել Յոմհանինոյ Մոբրատոյ և Հ. Սարգսի զարծարն աշանիկաւ ի գանձատուն ազգին. — Յետս կոչել Հ. Սարգսի յԱնենին զգանգատագիր իւր որ վասն վաչխի հրիտակին. — Տեղեկութիւն գրոնանիպակ գուշանակ արծարոյն 544

ԳԼՈՒԽ ԼԵ.

Դժուարութիւնք անցուցանելոյ զարծաթ հրիտակին ի Վենետիկ. — Խորհուրդ Հ. Սարգսի ունելոյ զոր ի միաբանակցացն ի Լոնդոն իբրեւ գործակալ և դրդակից. — Գաբրն Եղուարդ Մոբրատ կամի անցանել ի Վենետիկ և խօսել ընդ Մխիթարեանսն. — Թուղթ Հ. Սարգսի առ Գեղարդայծառ Սոնդալեան զանձնացն անցիցն անցելոց վասն ցայնժամ. — Պատասխանի նորին. — Առաքել Հայր Սարգսի զարծարն ի Լոնդոն. — Վտանգն յոր անկաւ ի գնալ իւրում ի նաւ. — Գանգատանք նորա զյամբութենէ դրդոց առաջնորդին. — Բանք Եղուարդայ Մոբրատի ի դարձին իւրում ի Մատրաս 555

ԳԼՈՒԽ ԼԶ.

Առաքումն Հայր Աղեքսանդրի Պէշիքթաշլեան ի Լոնդոն. — Թուղթ նորա նշանաւոր առ Հ. Սարգիս. — Պատասխանի նորա առ նա. — Թուղթ Հ. Սարգսի առ Գեղարդայծառ Սոնդալեան գրեալ ի 24 փետրուարի 1834, հանդերձ յաւելուածս.

ծով զխնդրոյն Կօրոսնի և. Յովսեփայ Շարքի. — Հաշիւ դրամոց հրամանի թողոյ կուսակաւ յԱղա Յաւեշի Մոռրատեան, և առաքելոց իվ. Եվեսոի 572

ԳԼՈՒԽ ԼԷ.

Օշեռաշոր թոշդ Հայր Սարգսի առ Գերապայծառ Սոնալեան զաշարանեալն խնդրոյն. — Խնդիր պահանջանաց Թոմսան Պօղոս անուշանեաց բարգմանիչն. — Վիշտ և տագնապ Հայր Սարգսի ի բառնալ զիաւոխրիչն որ ընդ Մոռրատեանս և ընդ յոգրի իշխանաց ընդ տիկինն Աղաւնոր. — Հրաժեշտ Հայր Սարգսի և Աղաւնորեանցն ի Մոռրատեանց. — Գրչագիրքն. — Մեկնել նաւռն ի Մատրան 692

ԳԼՈՒԽ ԼԸ.

Աղքատութիւն Հ. Սարգսի առ Պ. Աղաւնոր. — Հասանել նաւռն ի Պոռխան Բարեյոռանոյ. — Թոռոր Հ. Սարգսի առ Մոռրատեանս. — Աց ի կողի սրբոյն Հեղինեայ. — Հասանել ոռնեռրացն Աւիգոնիա. — Թոռորք առ Հ. Աղեքսանդր Պիշիքրաշեան և առ Պ. Աղեքսանդր Դաֆրայէլ. — Հասանելն Հ. Սարգիս և Աղաւնորեանքն ի Լոնդոն. — Տեսութիւն ընդ Հ. Աղեքսանդրի և ապա ընդ Պ. Աղեքսանդրի Դաֆրայէլի.— Թոռոր Հ. Սարգսի առ Մոռրատեանս. 616

ԳԼՈՒԽ ԼԹ.

Պատմութիւն անցիցն անցելոց ի կաղ ամսոյ Հ. Սարգսի և Աղաւնորեանց ի Լոնդոն. — Աղգասիրք գործակցութիւնն Հ. Աղեքսանդրի. — Խորհուրդ Պ. Աղեքսանդրի Դաֆրայէլի յօգուտ ազգին. — Խրատ և յորդորանք Հ. Սարգսի առ նա զիրացն. — Թոռորք Պ. Աղեքսանդրի առ Հայր Սարգիս ի Փարիզ. — Պատասխանի Հ. Սարգսի առ նա. — Վերջին թոռորք նորին առ Գերապայծառ Սոնալեան ի Փարիզ. — Հասանելն Հ. Սարգսի և Աղաւնորեանց ի Մրսլի, և.

ապա Ի Զատուաշիոն. — Նշանաւոր բանք Սոնպշեան ապրպայիսն առ Հ. Սարգիս. — Հասանիլ ողեւորացն Ի Վենետիկ. 626

ԳԼՈՒԽ Խ.

Հրաւէր Աղանոչբեանց ձաշելոյ Ի վանս սրբոյն Ղազարոս որ Ի Վենետիկ. — Ոտանաւոր բանք բարեմաղթութեան առ Հ. Սարգիս և առ Աղանոչբեանս. — Թանոչբիւն և դատաստան. տան ընդ այն. — Վերջաբան 640

ՎՐԻՊԱԿՔ ՏՊԱԳՐԻՆ

Էջ	Տող	Սխալ	Ուղիղ
179	20	հուխ	հուբ
238	34	ժառանգու	ժառանգութիւն
320	17	և և գնայ	և գնայ
353	16	կաձեմ	կարձեմ
361	13	խայտառակեալ	խայտառակեալ
409	32	Կոպդնի	Կոպրոնի
423	34	գասպարտ	գասասպարտ
431	8	վաժապեան	վարժապեան
480	4	կարոն	Կարոն
. . .	33	զոգոից	զոգոից

2013

20984

ՀՀ Ազգային գրադարան
NL0056285